ԳԻՒՑ Ա· ՔԱԿ· ԱՂԱՆԵԱՆՑԻ

Ա.

Աշխատութիւնները.

Ընդհատեալ, գ· ապ փոքրիկ 1898 . . . . . — 10
Կրօնի գաղափարք ա· ա· 1889 (սպառուած). . . . . — 15
,, բ ա· Դ· ապ· 1891 . . . . . — 25
,, գ· ա· Գ· ,, 1890· . . . . . — 25
Ցոմար եւ ասնաղոյզ Հայաստ· ս· եկ· բ· ապ· 1894 . . . . . — 50
Կարնոյ դպրթ· պատմ· տեսութիւն, 1891 . . . . . — 10
Դիւան Հայոց պատմութեան դիրք Ա·-Բ· 1780—1834 մի լուսանկար պատկերով· Սահ·-Մեսրոպ·
հրոյանակին արժանաց· 1893 . . . . . 2 —
Դիւան Հայոց պատմ· դիրք Գ· Սիմէոն կաթողիկոսի յիշատակ· կենսագրութեամբ, յաւելուածներով ծանօթ· մի վիմատիպ նկարով· Սահակ-Մեսրովպ· հրոյանակին արժան· 1894 . 7 —
Դիւան Հայոց պատմ· դիրք Դ· Ղուկաս կաթուղիկոս, յառաջաբանով, յաւելուածներով և ծանօթ· մի լուսանկար պատկ· եւ մի վիմ· նմուշով 1899 . . . . 4 —
Կարգ Աստուածպ· Հայաստան· ս· եկեղեցւոյ գ· ապ· պատկերազարդ 1899· . . — 40

Բ.

Թարգմանութիւնները.

Հաւատարմ· ասմն արդելքներու յաղթուիմ է· Գ· Հոֆմանի 1877· . . . — 40
Խաւարից գեղի լոյս· Գ· Հոֆմանի· 1877 . . . . . — 40
Դօն Քիշոտ լամանչեցի Մ· Սերվանտեսի 1878 (սպառուած)·
Գեղջ Ռօլլեռան, վէպ 1879 (սպառուած)·
Երջոջ ոսկի, առակ Լաֆիգէի բ· ապ· 1893 . . . . . — 10
Ռոբինզոն (հրատ· Թիֆլիզի տպագր· ընկ·) 1881· . . . . . — 60
Զհասեբաօնի ժառանգը, պատկ· վէպ 1882 . . . . . 1 —
Ակաէա, ա·- Սիռօեվայի 1885 . . . . . — 50
Եան Էրնստ Սմոլեար· Ն· Եանչուկի 1885 . . . . . — 20
Ընծուի մտածմունքը· պրօֆ· Մ· Բոգդանովի 1892 . . . . . — 05
Գիւղի ատրքը, Սվետապոլկ Զէնի, 1892 . . . . . — 10
Կնանքի դպրոցը, Դրիկէնսի, 1892 . . . . . 1 —
Գէպի Լթենք· Սենկեւիչի, 1896 . . . . . — 10
Մի կատր հաց· Պօռապէնկօ· 1896 . . . . . — 15

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ի 1961 թ.

ԳԻՐՔ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

9(47.925)1
Դ-52

ԳԻՐՔ Դ.

ՂՈՒԿԱՅԻ ԿԵԹՈՒՂԻԿՈՍ

(1780—1800)

ՅԱՌԱՋԱՐՈՒԹԵԱՄԲ, ՕՒՆԵԼՈՒԵՑՔՆԵՐՈՎ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Հրատարակիչ
ԳԻՒՏ ԵՒՑԳ ՓՈՀՑՆՆԵՑ ԸՂՄՆԵՆՑՆ

47394
A 3490

Մի յուռանկար պատկերով եւ մի վիմատիպ կռնդակով։

ի Հայրապետութեան Տ. Տ. Մկրտչի վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց։

Ազնուատոհմ Յակոբեանցս խ. Թումանեանցի ծախքով։

ԹԻՓԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէի
1899

Дозволено цензурою. Тифлисъ, 17 Марта 1897 г.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՅԻ

ԹՈՒՄԱՆԵՑՈՑ ԲԱՐԵՑԱՒՀՈՒԿ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ

ՄՐԹԱՆԱՒՈՐ ՋԱՒԱԿ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻՆ

իրախտագէտ սրտով

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ԳԻՒՏ Ե· ՓՁՀ· ՕՂՄՆԵՄՆՑ

Պ. ՄՏԵՓԱՆՈՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ազգին. բարեկամ

Դրեթէ դադարել էի փայփայել „Դիւան Հայոց պատմութեան“ ժողովածուիս հրատարակութեան շարունակութիւնը, խոնարհելով այն անյաղթելի արգելքի առաջ, որին նիւթական անճկութիւն են անուանում, երբ Դուք հետաքրքրուեցաք, թէ ինչու ես հրատարակութեան չեմ յանձնում այն բազմահարուստ պատմական նիւթերը, որոնց հաւաքման նուիրել եմ ինձ 25 տարուց ի վեր և սիրայօժար առաջարկեցիք Ձեր օգնութիւնը։

Ներկայ դարում Հայոց պատմութիւնը շատ քչերի սիրոյ առարկան է և առհասարակ դարաշրջանների ուսուցերի ժառանգութիւնն է կազմում, ուստի շատերին զարմանալի պիտի թուայ երբ կարդան, որ „Դիւան“-իս Զորրորդ գիրքը լոյս է տեսնում Ձեր սատարութեան շնորհիւ։

Բայց ինձ համար այս երևոյթը միանդամայն բնական է, քանի ծանօթ լինելով Ձեր նախնիքների բեղմնաւոր գործունէութեան յօդուտ Պարսկահայերի լուսաւորութեան և կրթական գործին, նախնիքների՝ որոնց արժանաւոր ճեան էք Դուք. և այն բուռն սիրոյն, որ ունիք Դուք միշտ դէպի աղգային անցեալ և ներկայ գրականութիւնն ու նորա բարգաւաճումը։

Ուստի և „Դիւան“-ի ներկայ հատորը՝ այլ բազմաթիւ բարեգործութիւնների հետ թող յաւերժական յիշատակ լինի Ձեր առաքինական զգացմունքներին և պատուական անուան, որի յարատևութեան համար մնում եմ միշտ ջերմեռանդ աղօթարար

ԳՈՒՑ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ
ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄՍ ՀՍՅԻՑ



ԿՐՏԻՉ ՅԱՌԱՋ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՄԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՆ ԵԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ՇԱՐԱԴՈՂՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ՀՋՄԻԱԾՆԻ:

Արժանապատիւ Տ. Դիւա բարեկրօն և գրասէր քահանայի Ղազանեան, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ և ժրաջան պաշտօնէի ս. Եկեղեցւոյ ողջոյն և Հայրապետական օրհնութիւն։

Երկք բազմապիսիք և վաստակք օգտաշատք գրական երկասիրութեանց եռանդուն հեղինակաց մերոց, որք գտանին այսօր յասպարիզի գրականութեան մերոյ, արդարև յոյժ մխիթարականք են, հայեցեալ ի բազմադիմի արկածս և պատահարս որք անցեալ են ղՀայրենեօքն մերովք, որ յամենայնի և յամենայն դէպս առաջինն իսկ Հայրենասէրն և ոսկետառ հեղինակութիւնք մերոց նախնեաց և Հարցն սրբոց Եկեղեցականաց զոհ գնացեալ լինէին անգութ բռնութեանց և աւերիչ մատանց քայքայողաց, չնացեալ իսպառ անհետ առնել ղԱստուածապարգև դպրութիւն մեր և լեզուն, և լուսաւոր վարդապետութիւնք առաքելաշաւիղ Հայրապետացն մերոց և վարդապետացն սրբոց, որք իւրաքանչիւրն ի նոցանէ ունիլ ունէին երկք հոգեշահ և դպրութիւնք Հայրենասէրք որք զՀայրենեացն պատմէին մեզ բանս։

Ի ճշացելոցն անտի դպրութեանց ուսանիմք և գիտեմք թէ ոյք ոմանք ի նոցանէ յորպիսի ժամանակի յոր եղանակ և զինչ աւանդեցին մեզ, ոմն զաւերուն, այլ ոմն զգերութիւն, երրորդն զկոտորածն, չորրորդն զսովն և զմահատարաժամն և սակաւք ի նոցանէ զԻւանէ Հայրապետութեան աշխարհիս մերոյ և յարաբերութեանց ժողովրդեան առ Հայրապետական Տունն և Աթոռն, և զիա՛րդ մարթ էր գրել երբ Տունն և Հայրապետն իւր, Հայրապետն և Դիւանն իւր, Աթոռն և Դահակն իւր ի յերերման և ի սասանման կային, այսօր ի Մայր Աթոռն, վազիւն ի Դուին, ոմն ի յԱնին և ոմն ի Հռոմկլայն, Շնորհալին ի Սիս և Դաւիթն յԱղթամար և այլքն ի կապանս ի Բաբելոն և ի Դամասկոս։ Եւ ոյք էին պնդք որք ի յայրս և ի ծերպս լերանց թագուցեալք ոսպիւ և խոտով շատացեալ, ազի արտասւօք խառնէին զմրուրս մեռցորդաց Հայրենի աւերմանց և այրուածոց, և այնու ի գիր արկանէին զաւերածս աշխարհին մերոյ — ասացից. Սրբազնագործ Հայրապետք, Աստուածաբան վարդապետք, սրբակրօն քահանայք և իւրաքանչիւրն ըստ իւրում կարգի ի սրբազան պաշտօնէից ս. Եկեղեցւոյ, որք իրրև Հովիւք քաջք անբաժան էին ի հօտէ իւրեանց յամենայն դէպս և ժամանակս։

Մխիթարիմք ի սիրտ տեսեալ «Դիւանն Հայոց պատմութեան» կամ ճշմարիտն իսկ Հայոց Հայրապետութեան, ի լոյս եկեալ յայժմուս ժրաջան աշխատութեամբ Երիցուիդ, որ հետաքրքիր ինձ պատմէ մեզ զանցիցն անցելոց երջանկայիշատակ նախորդացն մերոց և յարաբերութեանց նոցին ընդ իշխանութիւնս և ընդ ժողովուրդս։ Գոհ եմք զքէն, որ քաջ իսկ ծանեալ զնշանակութիւն նուիրական պաշտաման քո, զցայդ և զցերեկ աքնիս ի լոյս ածել ղմատենագրեալ նշխարս պատմութեան մերոյ, որք ցիր և ցան ծածկեալ կան ընդ գրուանօք և ընդ փոշւովք։ Երանի՛ էր թէ ամենայն Հովիւք և պաշտօնեայք այժմուս, իւրաքանչիւրն ըստ իւրում կարեաց վաստակաւորք լինէին ի գիրս և ի դպրութիւնս Հայկականս, ոչ միայն շատացեալք պաշտամամբ Հովուութեան, այլ որ առաւել զգալին և հետաքրքիր իսկ լինէին յուսանել և յուսուցանել, որով մարթ էր միայն մեզ յետնոցս բերել զնմանութիւն երանաշնորհ նախնեացն մերոց, թէ և ոչ բովանդակապէս։

Արդ՝ այսու Հայրապետական կոնդակաւս օրհնեմք զքեզ, զձեռնարկն քո և զաշխատութիւնն, մաղթեմք առ Հողին սուրբ որ լցուցիչն է ամենայն բարեաց հեղուլ ի քեզ զշնորհս իմաստութեան և գիտութեան, ևս առաւել պտղաբեր լինել քեզ յասպարիզի քահանայութեան և ի յերկս օգտակարս յամայր ամօք, ի փառս ս. Եկեղեցւոյ և ի մխիթարութիւն մեզ։ Եւ ի հանգերձելումն արժանիս առնել լսելոյ կենարար ձայնի Փրկչին որ ասէ «Եկայք առ իս ամենայն աշխատեալք և վաստակոզք և ես հանգուցից զձեզ»։ Ո՛ղջ լեր և օրհնեալ յերկինսն Հօրէն և ի Մէնջ Ամէն։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ի 5 Փետր. 1895 ամի
եւ յՀազ. թուաբ. ՌՁԽԴ
եւ ի Հայրապետ. մերում յԻ. ամի
համար 157 ի ք. Տփղիս.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Դիւան Հայոց պատմութեան» ժողովածուիս երրորդ գիրքը, որ լոյս տեսաւ 1894 թուին, մենք ուզարկել էինք «Սահակ Մեսրովպեան» մրցանակին, Ե. Իզմիրեանց կտակի գործադիր ընդհանուր յանձնաժողովը 1895 թուի յունիսին ս. Սահակ և Մեսրովպ թարգմանիչների ազնին նախագահութեամբ Ամեն. ս. Պատրիարքի կ. Պոլսոյ Տ. Մատթէոս արքեպիսկոպոսի Իզմիրլեան արժանի դատելով մեր հրատարակութիւնը մրցանակի — 45 օսմ. ոսկու պարգևի, հաճեցել էր նոյն ամսի 28-ի գրութեամբ ծանուցանել մեզ։

Մեր այդ գործի վերաբերութեամբ բազդ ունեցանք ստանալ նորին Ս. Օծութիւն Ասաուածընտիր Տ. Տ. Մկրտիչ Կաթուղիկոսից խրախուսական կոնդակ, Ամեն. Նպատիւ Տէր Մատթէոս Իզմիրլեան պատրիարքից օրհնութեան թուղթ և բազմաթիւ քաջալերական գրութիւններ մանաւանդ ան հատներից, ինչպէս նաև տեղական և արտասահմանեան թերթերը մի շարք քննադատական նուիրեցին, որոնցից հրատարակում ենք այստեղ Վեհ. Հայրապետի կոնդակը, Ամեն. Իզմիրլեանի թուղթը և մի մանաւանդ անհատի կարծիքը մեր հրատարակութեան մասին։

10 Յունուար 1895.

ՊՕՏՐԻՈՐՔՈՐԴՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
համար 15.

Արժանապատիւ սիրելիդ մեր ի Քրիստոս

Ընկալայ հաճութեամբ սոյն զերջորդ գիրք Դիւանի Պատմութեան Հայոց զերկասիրեալն Արժանապատիւ Սիրելութենէդ Ձերմէ, որ վասն շնորհ ունիմ Ձեզ։

Ծանեայ արդէն յանձին Ձերում ըզխազացումն Աստուածային Սուրբ Հոգւոյն, որով զօրացեալ ձեռն ի գործ արկեալ է Ձեր յերկասիրութիւն պիտանի և օգտակար։

Դուք, Սիրելիդ մեր ի Քրիստոս, իրրև պաշտօնեայ առաքելական սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց ոչ միայն իրրև ճրագ լուսատու առատացեալ ի մարմին փոքու բանաւոր հօտիդ՝ վաստակիք ի փրկութիւն հոգւոց ժողովրդեան ի ցեառնէ Ձեզ յանձն եղելոյ, այլ և ի լուսաւորութիւն և ի քաղաքակրթ յառաջադիմութիւն ազգիս, որոյ ապացոյց իմն է երկասիրութիւն Ձեր այգ ազգօգուտ։ Ուստի գովելով զաշխատասիրութիւն Ձեր յօգուտ ս. Եկեղեցւոյ և Ազգիս՝ քաջալեր կարդամ Ձեզ յարատևել ի նոյն ջանս և ի վաստակս անձնուիրութեան առ ի լինել սատար լուսաւորութեան հայորերոյն։

Օրհնեմ զՁեզ հայրական օրհնութեամբ, և հաչեցեմ յերկնաւոր ՔՀանայապետէն՝ որ միայն պսակիչն է հաւատարիմ պաշտօնէից եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, լցուսցէ զՁեզ ևս քան զևս շնորհօք Հոգւոյն սրբոյ և արժանի արասցէ կրկին պատուոյ երիցութեանն, զոր պատրաստեալ է Տէրն մեր վասն այնոցիկ՝ որք փառաւորեն զանուն իւր ոչ քանիւ և եթ, այլ առաւելապէս գործովք օրինակ բարի հանդիսանան ժողովրդեանն։

Ողջունելով զՁեզ ի Քրիստոս Ճիսուս
Մնամ ազօթարար
Պ Կ. Մատթէոս Արքեպիսկոպոս։

Արժանապատիւ Ց. Գիտ գրասէր եւ չանասէր քահանայ

Հայր պատուական.

Սատցայ և կարդացի «Դիւան Հայոց

պատմութեանց անուն հրատարակութիւններդ, շնորհակալութիւն նուէրներիդ համար և շնորհաւորութիւն յաջողութեանդ և յառաջադիմութեանդ համար։ Երանի՛ թէ մեր ամէն մի եկեղեցական, լինէր նա վարդապե՞տ թէ քահանայ, և կամ րարձրաս տիճան հովիւ, աշխատէին իրենց կարողութեան չափով հարստացնել մեր աղքատիկ գրական աշխարհը, որ շա՜տ յետ ճնացեր է համեմատելով նախնի գրասէր հարղ հետ։ Բայց ինչ արած եղածներով էլ գոհ լինինք և սպասենք ժամանակի ընթման, որ ինքնին փոխուին մեր րարքեր և իւրաքանչիւրս ստիպուինք մեր պարտքեր կատարել, այն, ինչ որ Աստուած, Ազգ և եկեղեցին դրած են մեզ վերայ և կը պահանջեն։

Գրքերիդ յառաջարաններից կերևի որ մեծ աշխատութեամբ և դժուարութեամբ կը հաւաքես նիւթեր, քունչ ու պուճախներից, կորած ու ցրուածներից և, րազում աքնութեամբ դասաւորելով՝ ի լոյս կը հանես, առ այդ կը մաղթեմ քեզ կար և համբերութիւն։ Բայց գիտե՞ս ինչ։ այդ բաժինի մի մասը պարոն Աղեքսանդր Երիցեանին թող, նա ծերունի է, չի կարող երկար մանգալ, թող հանգիստ նստի կաթուղիկոսաց անցեալ պատմութեանց հետ նրանց Դիւանի պատմութիւնն էլ ուսումնասիրէ։ Իսկ գու կարող ես և ժիր։ ել, առ թուղթ և գրիչդ առաջ անցիր գէպի Արարատեան աշխարհ, դէպի մեծ և փոքր Հայք, մեր աշխարհի Դիւան րացուած է, քեզ հարկ պատրաստի նիւթեր շատ կան՝ ահագին հատորներ կազմող գիւանի և դիւանագետի համար։ Եվ շրջեր Երևանի և Կարուց նահանգներ, Շիրակի, Կողբի, Իգդիրի գաւառներ, եթէ տեսնես այն տեղեր հաղարաւոր անօթի թշուառներ, որոնք ամեն ինչ թողած փախեր, ապաւիներ են ամենողորմած Կայսեր պաշտպանութեան և մարդասէր կարեկցութեան, պատմել տուր և գրի անցկացրու, նոքա պահ մի շունչ առնելով կսկսեն պատմել իրենց դարդն ու ցաւեր, մեռելն ու կենդանին, տարուածն ու թալանուածը, բրգածն ու բռնարարածն և այլ շատ աղէաներ։ Գաւառներէն գարձիր ի կեդրոն, մտիր Էջմիածնայ վանք, տես այնտեղ ինչ տեսարան կը բացուի աչքիդ առջև, հարիւրաւոր մերկ, պատառոտուն սևցած կապտած թշուառներ մեծ մասամբ կին և երեխաներ, որոնք նոր պրծած են վայրագների ձեռքիցը, թմրած ճանճերի նման կպչում են վեհարանի գռան ու պատի տակ, Հայրիկ հաց, շո՛ր պատսպարան աղաղակում։ Պատմում են որ նախորդ Հայրապետաց օրով ոչ ոք չէր համարձակւում օր ցերեկով վեհարանի պատի առկոմն անց կենալ, մի գուցէ վեհարանականների ցերեկուայ հանգիստը վրդովուի, իսկ այժմ ոչ միայն ցերեկ, այլ և գիշերներն էլ հանգիստ չը կայ վեհարանում մորմոքուող մեծ Ծերունուն, որ իւր ձայնն էլ կը խառնէ դրսի ողբի ու լացի հետ։ Ի՞նչ է սրանց անմիջական սփոփանք և մխիթարութիւն գիտե՞ս. մի քանի րուրլի փող, մի քանի կանգուն ճոթ, մի երկու օր վանքի պլանում հանգիստ և ապա Հայրիկի թըղթով երևանեան նահանգի գիւղեր. «Դէհ օրհնուածներ քաշուեցէք, գէհ սիրելի գիւղացիներ բացէք ձեր շէն դուներ և հիւրընկալեցէք». սորանց տեղաւորելուց յետոյ մի ուրիշ խմբակներ, անծայր անվերջ։ կերթան օրհնելով մարդասէր Ռուսիան, օրհնելով լաղմագութ Հայրիկի կեանքը, Հայ մեծատան քսակը, և հիւրընկալ շինականի տնակը։

Արարատեան աշխարհէն անցիր, մտիր Բագրեւանգ, դարձուր աչքերդ այդ բարեբեր և հացալից գաւառի դաշտեր, տես ինչ դրութեան մէջ են, ի՞նչ կայ. աչի՞նչ, ուերմունք և սասանմունք, խոպան և անմշակ դաշտեր, նորա մէջ աշխատող ժիր երկրագործի աւերակ գիւղերը որոնց փլատակների մէջ դեռ կը մխայ սրուած գերան, աւերակների մէջ գեռ կը կղմտայ անասէր և տիրասէր շուն որ սպասում է դեռ իւր տիրոջ դարձին և չուղեր րաժանուիլ ղինք խնամող շէն օճախէն։ Անցիր այդ տեղից, հեռացի՛ր դէպի Քաջբերունիք, դա Վասպուրական աշխարհի Վան քաղաքի հաց տուող Ս՝տանն է. Վանայ թէ հարուստ և թէ արհեստաւոր դասակարգը մայիս — յունիս ամիսներին է որ սպասում է, իւր առևտուր իւր տարուան հաց պատրաստելու համար, ով որ մի քանի թօփ

էիթ կտաւ ունի, մի քանի կարած շապիկ և կապայ ունի, կառնէ կը վաղէ Արճէշ. Արծկէ և իր տարեկան հացը կը բերէ, բայց ինչ ծնաց այս տարի, ոչինչ. երկրագործը չը կարողացաւ ցանել, եղն ու գոմէշ շատոնց Էլազասիի տաւարների հետ խառնած էին, ցանող չը կարողացաւ քաղել, ի քաղելու ոչինչ չէր ծնացեր կերցընելուց և կոխտելուց այն էլ դեռ եղայ (թարմ) ժամանակ կը տեսնես, ահա Սիփան սարի կողքին վեր կը բարձրանայ դժոխային մուխն ու բոց և վիթխարի վիշապի նման գալարուելով գէպի երկինք կը վերանայ, լայց գեռ երկինք չը հասաւ... այդ բոցն ու մուխ հաղիւ Սիփանայ կէսը կը հասնի, այգ մեծ հրգեհը Սիփանի լանջաց վրայ լայնադիր տարածուած ներքին Սիփան ասուած մեծ գիւղն է, որ բոցերի ճարակ կը լինի իւր ամէն ինչով. տուն ու տեղով, մարագ ու խոտնոցով, ախոռ և գոմանոցով, նաև փախչելու անկար ծեր ու կնանիքով։ Ի՞նչ է անում իւր դրացին, ոչինչ, այգ դրացի գիւղերի ողորմելի և անպաշտպան գիւղացիներ, անտարբեր սառն կերպով նայում են. մի զարմանար նոցա անտարբերութեան վրայ, ներանց աչքեր վարժուեր են այգ տեսարաններին, ներանց սրտեր քարացեր են այդպէս յաճախակի պատահմունքէն և նայում են այդ տեսարանի վրայ այնպէս ինչպէս հացապան իւր փուռի վրայ որ ամէն առաւօտ վառում է հաց եփելու համար, նայում և սպասում է իւր գլխի գալիքին, այսօր ուրիշ գիւղ է վազը իրանց, այգ է այն ողորմելոց ճակատագիր։

Քալէ՛, քալէ՛, մի նսեմիր, անցիր Պուլանըք՝ Հայաստանի Հացաց գաւառը, ո՛վ կը փնտռես, ոչինչ, ոչ ոք չը կայ, ոչ հայ և ոչ հայի հոտ և ոչ թոնրի ծուխը, ո՛ւր են այն մեծ և շէն գիւղեր, ուրեն այն մեծ տանուտէրների շէն տուներ, որոնց սեղանի վրայից անպակաս էր հացն ու մածունն, գառն ու խորովուն, հայն ուտում էր։ քիւրդն ուտում էր, աղքատը տանում էր, քիւրդի ձմեռուայ բաժինն էլ եռևից ուղարկուում էր, ո՛ւր են այգ մեծ աների ծեր և պատկառելի նահապետներ և նոցա պարկեշտ ընտանիք Թուով 60, 80. ո՛ւր կորան, ծով թափուեցան, թէ՛ երկնառաք կրակով այրուեցան...

Լսիր մի համառօտ նկարագիրն ասեմ քեզ Վանայ ծովի շրջակայ գաւառների և նոցա բնակչաց սարսափելի վիճակի վրայ։ Բիթլիսի և Վանի մէջ եղած գաւառներ Խիղան, Արշաունիք, Հայոց Ձոր ամբողջ աւերուած է, սպառուեցին մեծն ու փոքրը, 3 քահանաներ տիկ հանուելով՝ խոտով լեցուեցան և շրջեցնում են Քէլէներ իրենց քանակի հետ. շատերին մահմետականացրել են, չի ազատուել ոչ մի մարգ, Վանայ գիւղօրայք նոյնպէս թալանուած են և աւարի կրակի տրուած, 40 կին և մարգ խարոյկների վրայ այրուած։ Արճէշում (Քալքերունիք) այրել են 16 գիւղ, և և 4000 երեխաների, այր և կանանց մերկացրել են հանելով վրաններից շապիկներն ու ոտնաշորերն անգամ, Արճէվազում այրել են 18 գիւղ՝ 677 տուն, 800 մերկ մարդիկ թափառում են Վան և այլուր. տարել են 9000 ոչխար, քահանաներին ծառերից կապելով գնգակահար են արել, եկեղեցիք ոչնչացրել են։ Աղքակի և Յարայի կողմեր աւարեր և ոչնչացրել են բոլոր հայ գիւղերը, վերջապէս Վան նահանգի հայ գիւղերն էլ չկան, իսպառ անհետ կորան 101 գիւղեր՝ 3678 տներով՝ 20,000 սպանուած հայերով, այրուած 26 քահանաներով Թող ղգնատակհարքն, 30,000 տարուած ոչխարներով 8000 սեւատաւարներով, և 15,000 մերկ թափառականներով մի զարմանար Թուերի վրայ, Վասպուրական իւր գաւառներով 1888 Թուականին ունէր 200,000 հայ ի բաց առեալ պանդուխտներ Թէ ի Պօլիս և Թէ այլուր։ Այս ամենքի մէջ միայն Վանն է ծնացեր իբր բուռ աւերակաց մէջ...

Անցիր գէպի ներքին աշխարհներ, տես ինչ աշխատ է այդ, Ցարօն դարձն, Մուշ մշեւ, Սասուն սասանուեց, Կարին կորաւ, Բաղէշ փչացաւ, որ մէկ Թուեմ. ոչ շէն ծնաց ոչ շինական, ոչ հայ ոչ հայի հոտ, արդար մեղաւոր հաւասար են, խորութիւն չը կայ, ոչ աղքատի, ոչ հարուստի, ոչ ծերի ոչ երեխայի, ոչ մարգի և ոչ կնկայ, հերիք է որ հայ քրիստոնեայ է։ Մի ասած կայ լսե՞ր ես որ ասում են «Մէրն

զմանուկն ուրացեր էր։ Ճիշդ հիմայ է. ամէն ոք իւր գլուխ պահել կաշխատի, մի նահանգ, մի գաւառ չէ այլ վայնասուն և կոտորած որ սկսուեր է, այլ անհուն տարածութեան վրայ է, որի մի ծայր Մասեաց սառոյն է միւսը Տորոսին, մէկ կողմ Սև ծով, մէսը Միջերկրական։

Կը հաւատամ Ամենակարողի զօրութեան և գթութեան, կը հաւատամ թէ նա իսպառ չի մերժիլ զՀայն և զՀայաստան, ինքն է հարուածող և ինքն է բժշկող և ինքն էլ մի օր պիտի գոչէ Իւր ղօրութեանց Աթուէն որպէս երբեմն առ Իսրայէլ «Հաշտեալ իմ ընդ քեզ առապէլդ և խախտեալգ մինչև մխիթարեսցիս»։

Իսկ գու, Հայր խաչակիր, քահանայ ես Բարձրեալին, տարածիր բազուկներդ առ Աստուած և ծունկի եկ, Դաւթի նման գու չէ, «Ա՛ստուած, հեթանոսներ մտան քո ժառանգութեան մէջ, պղծեցին քո սուրբ տաճարը, ձգեցին քո ծառաների դիակներ գէշ երկնքի թռչուններին և քո սրբոց մարմինները երկրի գազաններին, ջուրի նման թափեցին նրանց արիւնը, չը կար մէկը որ նրանց թաղէր, մինչև ե՛րբ Տէր պիտի բարկանաս, մինչև երբ չը պիտի ո. զորմեաս»։

Ալ հերի՛ք...

Վահան։

14 դեկտեմբեր 1895։

∞

Հրատարակութեանս նախկին գրքերում մենք բացատրել ենք պատմական վաւերագրերի հրատարակութեան անհրաժեշտութիւնը մեր ազգի պատմութեան ուսումնասիրութեան համար։ Մեր ժողովուրդը քաղաքական հանգամանքների շնորհիւ ցրուած լինելով աշխարհիս ղանաղան կողմերը, ընկնելով բազմազան և ոչ սովորական պայմանների մէջ և կորցնելով ամենայն ինչ, բարեբաղդ է սակայն, որ նորա տարաբնակ մասերը մի անխղելի հանգոյցով կապուած են մնացել միմեանց հետ սրտով, հոգւով և զգացմունքով. այդ հանգոյցը եկեղեցին է, որը երկար գարերի ընթացքում պահպանել է մեր ազգայնութիւնը, կապել է իրար հետ ցրուած հայ ժողովուրդը և տուել նորան մի տեսակ ինքնուրոյնութեան դրոշմ։

Ա՛յս է պատճառը, որ երկար ժամանակ մեր պատմական կեանքը զուգընթաց է ընթացել եկեղեցական կեանքին և այսօր գրեթէ անկարելի է ազգային պատմութիւն գրել առանց եկեղեցական պատմութեան բազմաթիւ խնդիրները շօշափելու։

Սորա համար պատմական գօկումէնտների հետ մենք հաւասար նշանակութիւն ենք տուել միշտ և եկեղեցական պատմութեան վերաբերեալ վաւերագրերին, մանաւանդ վերջին դարերի նկատմամբ երբ քաղաքական կեանքի անկմամբ՝ կրկնակի գեր էր կատարում եկեղեցին։ Ուստի մեր «Պիւզանդ Հայոց պատմութեան» ժողովածուի մէջ անխարիր հրատարակում ենք ինչպէս աղբ. պատմութեան, այնպէս էլ եկեղեցական պատմութեան վերաբերեալ ամէն տեսակ գրուածքներ։

∞

«Պիւզանդ»-ի ներկայ գիրքը պարունակում է իւր մէջ Ղուկաս կաթուղիկոսի կոնդակների պատճէնները. և դորա համար մենք ձեռքի տակ ենք ունեցել՝

1. Մի մեծ մատեան գրելու թղթից (ս. Էջմ. մատ. համար 1 № 751) երեսին գրուած «Օրինակք կոնդակաց Ղուկաս սրբ. կաթուղիկոսին, քառածալ, նօտրգիր. դրեալ ի թուին Հայոց ՌՄԻԹ մինչև ցՈՄԼՔ թուին ի ս. Էջմիածին». 803 երես, որոնցից 1—116, 119—148, 153—378, 389—483, 485—530, 565—615, 708—748 երեսները գրած, մնացեալները անգիր սպիտակ թուղթ։

2. Մի տետր փոստի մեծ թղթի մեծութեան. (ս. Էջմ. մատ.) 56 երես նօտրգիր. 1780—1783 թ. կոնդակների պատճէնները։

3. Մի տետր նոյն մեծ. (ս. Էջմ. մատ.) 76 եր. նօտր. 1783—1784։

4. Մի տետր գրելու թղթից (մեր սեպհ.) նօտր. մաքուր գրչութիւն, 1791—3 թ. կոնդակների պատճէնները։

5. Մի տետր գրելու թղթից (ս. Էջմ.

մ.) եր. Ա—ՂԶ. Թերթահամարած. 1793—1795։

6. Ուր աեար գրելու Թ. (ս. Էջմ. մ.) եր. ՑՂԱ—ՆՀԴ. Թերթահամարած. 1796—1800։

7. Մի աեար գրելու Թղթից (ս. Էջմ. մ.) եր. Ն2Ա—Ն2Ր, Ն2Ր—ՇԾԸ գրած, մէջ աեղն անգիր. Թերթահամարած. 1796—1800։

Ըստ սոցանից այս գրքի խմբագրու. Թեան ժամանակ ի նկատի ենք ունեցել և բազմաթիւ իսկական կոնդակներ, որոնց և զետեղել ենք իւրեանց աեղերում։

Ինչպէս ընթերցողը աեսնում է ներկայ հրատարակութեան մէջ միանգամից պակասում է 1784—90 թուերի կոնդակները, որ չյաջողեց մեզ ձեռք բերել և շատ տեղերինն էլ ամբողջը չէ, որովհետև, ինչպէս վերևի ցուցակից էլ երևում է, այդ բոլոր աեարերը մեկմեկու շարունակութիւնը չեն կազմում. այլ դիցուք 1796—1800 թուերի համար երկու աեար կայ, ղանաղան րովանդակութեամբ, կարծէք թէ միաժամանակ պահուած են եղել երկու սևագիր աեարեր. իսկ աեղ աեղ էլ աեարերի մէջէմէջ անգիր է մնացել անբացատրելի պատճառներով։

Թէպէտ և ըստ մեր խորին համոզման անցեալում գրուած ամեն մի տող և բառ ունի իւր նշանակութիւնը մեր եկեղեցու անցեալ գարու վիճակը քաջ ճանաչելու, նոյն իսկ ժամանակակից սովորութիւններն ու ներքին կեանքն ըմբռնելու համար, սակայն և այնպէս վերի նոյն իսկ հիւսած աեարերն այնքան ընդարձակ նիւթ էին տալիս մեզ, որ մենք ծախքերից խուսափելու համար ստիպուած եղանք կէս ից աեղին բաց թողնել, ընտրութեամբ ի հայկէ յապաեում այն ամեն կոնդակները, որոնք կրկնութիւն էին, կամ լուկ շնոր հաւորութիւններ, ժամանակակից պրաւական հաշիւներ, պարզ առևտրական կոնդակներ և այլն. բայց որպէս զի անհետ չկորչին և դոքա, գրքիս մէջ իւրեանց աեղերում զետեղեցինք այդ բոլորի վերնագիրները ամրողջութեամբ։ Դեռ այս հատորը մանր գրով էլ է շարուած, որով նախկինից մեկ ու կէս անգամ աեղի նիւթ է պարունակում։

Եւ յիրաւի որ մեկը տպենք, շուարած ենք մնացել. մեկ կողմ թողնելով 25-26 տարուայ մեր գործունէութեան շրջանում ժողոված նիւթերը և հետզհետէ մեր յաճախակի ճանապարհորդութիւնների ժամանակ ձեռք բերածները, ամեն շաբաթ գրեթէ փոստով կամ անձամբ յանձնում են մեզ ամեն կողմից կոնդակներ և յիշատակարաններ, զանազան հին և նոր գրագրութեանց պատճէններ, ժողովածուներ և գրչագիրներ—հրատարակութեան տալու համար. իսկ մեր միջոցները քահանայական և ուսուցչական—հազիւ թէ իրաւունք տան մեզ տպագրութեան ծախքերի մասին մտածելու։

Ներկայումս մեր ժողոված նիւթերն այնքան են բարդուել, որ տասն և աեղի այսպիսի հատորներ կարող են կազմել։

Երկու խօսք էլ յաեղուածի մասին։ Դոցանից առաջինն է ամենից նշանաեւորը իւր պարունակութեամբ. մենք այն ստացել էինք նուէր Հ. Ցովհաննէս ա. քահ. Մըկրեանից և ինչպէս վերջնիս ծանօթութիւնից երևում է, այդ պատմական կարևոր յիշատակարանը կարապետ վարդ. Շահնազարեանցինը պիտի լինի, վասն զի գանուել է նորա թղթերի ծրարի մէջ. մեր օրինակը դժուար թէ Շահնազարեան վարդապետի ձեռքով լինի գրուած, որովհետև սխալներով լի է, հետևապէս և անհմուտ գրչի արտագրած. իսկ միւս կողմից՝ հիւսած լինելով չէր կարելի որոշ բան ասել թէ մինչև ուր է հասցրած եղել. կամ պիտի հասցնէր հեղինակը. այսքանը պարզ է, որ այնպիսի հարուստ տեղեկութիւններ է պարունակում մեր հրատարակած հատուածը, որ անշուշտ Շահնազարեանի նման մի գիտնականի գրչից կարող էր ըղխել։

Ց Ա Ն Կ

ՑԱՒՈՒԶԱՐԱՆ

Ա. ԿԵՆՈԱԳՐՈՒԹԵԱՆ ՓՈՒԱՐԷՆ

Բ. ԿՈՆԴԱԿՆԵՐ

1780—8, 1791—1800։

Գ. ՑԱՒԵԼՈՒԱԾ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Ցաւելուած. *Ճիշատակարան կ Վ. Շահնազարեանցին վերագրած։*
բ. Ցաւելուած. *Ղուկաս կաթ. առ Զաքարիա պատրիարքն։*
գ. Ցաւելուած. *Տեղագրհ Մինաս արք. եպիսկոպոսի գրութիւնը Մ՚օլարէթի խուցէս Քայի Խոսրով բէկին։*
դ. Ցաւելուած. *Ս. Էջմիածնի միաբանութեան գրութիւնը Հերակլ արքային։*
ե. Ցաւելուած. *Սիմէոն կաթողիկոսի կոնդակ կ. Պոլսի հայազգի հասարակութեան Զաքարիա պատրիարքի հաստատութեան վերաբերեալ։*

ՆԿԱՐՆԵՐ

ա. *Ղուկաս կաթողիկոսի լուսանկար պատկերը։*
բ *Ղուկաս կաթ վիմատիպ կոնդակը.*

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայ աղբիւրներ որոնց ի նկատի ենք առնեցել.

ԱՐԱՐԱՏ *ամս.* 1875. *էջ* 60—8.
» » 93—96.
» 1876. » 12—16.
ԴԻՒԱՆ Հ. ՊԱՏՄ *գիրք* Ա.—Բ.
» Գ.
ԽՈՒՐԵՆՑ. *պատմ կաթուղիկոսաց. գրչ. Մատ. ս. Էջմ.*
ՄԱՆՈՒԷԼ Վ. ԿԻՄԻԽԱՆԵՑԻ. *պատմ. կաթ. Դաւթի և Դանիէլի. գրչ.*
ՄՍԵՐԵԱՆՑ Մ. *պատմ. կաթ. Էջմիածնի. Մոսկ.* 1876.
ՑՈՒՍԻԿ Վ. *եկեղեցական պատմութիւն.*
ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ Ց. ԵՊՍ. *սաորագրու. թիւն կաթ. Էջմիածնի* 2 Հ. Վաղ. 1842.
ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ Կ. Վ. Ճիշատակարան (Դիւան Գ. Ցաւել Ա.)։
ՍԻՐԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ *Ջամբր.* Վաղ. 1875։
ՎԻՊ ՋՊԱՐՍԻՑ. *գրչ.*
ՑԷՐ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ Ց. Պատմ. Նոր. Ջուղ. *ղայու. Ն. Ջուղայ* 1880 2 Հ.։



ՄԱՆԱՆ ԿՈՒԶԻՆԱ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐԷՆ

Եւ ահաւադիկ ես ընդ ձեզ եմ ամենայն աւուրս մինչեւ ցկատարած յաշխարհիս: Ամէն:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Ա.

Ց. Ղուկաս Նարինցի:



Ղուկաս կաթուղիկոսի գրագրութեանց ժողովածուին յարմար էր կցել և մի մանրամասն ուսումնասիրուած կենսագրութիւն այգ բազմաչարչար վեհապետի, որ տասնեւինն ու կէս երկար տարիներ աչալրջութեամբ և խորագիտութեամբ կառավարեց իւր հօտը և ինչպէս ինքն է ասում «իւրով ամբողջ կուսութեամբ պահեալ» մի այնպիսի ժամանակ, երբ Հայաստան աշխարհին տիրում էին բազմաթիւ մեծ ու մանր իշխողներ, որոնց հետ գլուխ տանելու համար յիրաւի մեծ հանճար էր հարկաւոր։

Սակայն մեզ թւում է, որ վաղ է գեռ այգ անձի կենսագրութիւն գրելը, որի մասին միայն շատ վայր է վերոյ տեղեկութիւններ կան գրականութեան մէջ և եղածների մի մասն էլ աննպաստ նորան։

Մեղանից առաջ ոմանք[1]) արգէն փորձել էին պաշտպանել երջանկայիշատակ Հայրապետիս բարի անունը յարձակմունքների գէմ և ապա մենք հրատարակելով «Դիւանն»-ի Ա.—Բ. գրքում քանի մի կարեւոր կենսագրական նիւթեր Ղուկաս Հայրապետի վերաբերեալ՝ մթութեան քողի ծայրը բարձրացրինք այգ բազմաչարչար անձնաւորութեան վերայից։

Եւ թէպէտ այժմ հրատարակութեան ենք տալիս Ղուկասի կոնդակների այս հատորին ժողովածուն, սակայն կարծում ենք, որ այսքանը գեռ բաւական չէ նորա կենսագրութիւնը գրելու, վասն զի նախ՝ սորա մէջ 6—7 տարիների կոնդակներ ամենևին չկան, այնուհետև, մի քանի տարիներն ամբողջովին չեն ձեռք բերուած, ինչպէս մեզ հաղորդուած է Կ. Պոլսից՝ գտնուած է այնտեղ Զաքարիա պատրիարքի ընդարձակ կենսագրութիւնը, մի անձի, որի հետ այնքան շփումն ունեցաւ Ղուկաս վեհապետը մանաւանդ իւր կաթուղիկոսութեան առաջին տարիները և վերջապէս գիտենք, որ շատ շատերի մօտ գտնուում են բազմաթիւ գրագրութիւնները այգ անձի վերաբերեալ, իսկ վերջի մի պարոնի մօտ այսօրերս ինքներս տեսանք այգ ժամանակի կոնդակների և այլ գօկումենտների մի ստուար ժողովածու, որ ձեռք բերել չյաջողեց մեզ տակաւին։

Ուրեմն փորձել գրելու մի անձի կենսագրութիւն, որի կեանքի և ժամանակակից գործողների բոլոր հանգամանքները հանդէս չեն եկած, կրկներ մեր կողմից շատ թեթև վերաբերումն գէպի գործը։ Սակայն անկարող ենք և լռութեամբ անցնել, առանց ընթերցողներին ծանօթացնելու աշխատութեանս հերոսի հետ, գէթ որչափ կը ներեն մեզ ժամանակը և մեր ունեցած աղբիւրները։

—

[1]) Աբէլ Աբբեպ. Հայոց պատմ. անտիպ. Ճուսիկ վ. Եկ. պատմ.

Ղուկաս Կարնեցու մանկութեան և երիտասարդական կեանքից շատ քիչ և գրեթէ ոչինչ չգիտենք։ Նոյնը և նորա ծննդեան ժամանակի մասին։ «Դիւան Հ. պատմ.» Ա.—Ր. գրքում անճանօթ հեղինակը վախճանած է համարում նորան 77 տարեկան հասակում. նա վախճանուեց 1799 թուին, ուրեմն այդ հաշուով ծնուած պիտի լինի 1723 թուին. ինքը իւր կոնդակներից մէկում [1]) ասում է թէ *Քիւթիւրի ժամանակ մենք տղայ էինք. Քիւթիւր* մականուանեալ Կարնոյ Պետրոս առաջնորդը կաթուղիկոս եղաւ 1748 ին և հազիւ մի տարի մնալով աքսորուեց և բանտարկուեց. վերոյիշեալ հաշուով Պետրոս Քիւթիւրի կաթողիկոսանալու տարին Ղուկասը պիտի լինէր 24—25 տարեկան, ինչպէս ուրեմն կարող էր տղայ լինել նա այդ հասակում. եթէ ստոյգ ընդունենք այդ թիւը, այն ժամանակ նա կաթուղիկոս ընտրուելիս եղած է մօտ 57 տարեկան։

Եպիսկոպոս Յեռնադրուեցաւ Սիմէոն կաթուղիկոսից 1763 թուի յունիս 17-ին երեքշաբթի օրը ս. Գրիգոր Լուսաւորչի որգւոց և Թոռանց տօնի օրը [2]), ուրեմն Սիմէօնի անդրանիկ Յեռնադրած եպիսկոպոսներից է [3]) (վերջինս օծուեցաւ 1763 թ. ապրիլի 20 ին), 14 տարի իբրև եպիսկոպոս վարեց Զմիւռնիայի թեմի առաջնորդութիւնը, իսկ այնուհետև կանչուելով Էջմիածին՝ 3 տարի նա խորհրդական էր հանգուցեալ մեծ Հայրապետի մինչև նորա վախճանը, որից յետոյ ինքը ընտրուեցաւ կաթուղիկոս։

Այս է բոլորը, ինչ որ մենք գիտենք Ղուկասի մասին նախ քան նորա կաթուղիկոս ընտրուիլը։

Բ.

Հոկտի վիճակը Միմէոն կաթուղիկոսի վերջին տարին



Ալաստան աշխարհը ալեկոծեալ ծովի էր նմանում տասը և ութերորդ դարի վերջերին. բազմաթիւ պարսիկ իշխողներ և վրաց «Էրէկլէի պարոնին» իրար էին խառնուել և նոքա իրանց հաշիւներն ամեն անգամ վերջացնում էին Արարատեան երկրում։

Վրաց Հերակլ արքան Երևանի Հիւսէին Ալի խանից տարեկան 3000 թուման հարկ պահանջելով և ժամանակին չստանալով՝ 1778 թուին մեծ զօրքով գիմեց Երևան, բայց Համզաչիմանին հազիւ հասած Սիմէոն կաթուղիկոսի միջնորդութեամբ իւր պահանջը կատարուած տեսնելու խոստումն ընդունելով՝ յետ դարձաւ Թիֆլիզ։ Խանը գրժեց իւր խոստումը և Հերակլը 1779 թուին արգէն 12,000 զօրքով իւր Լևոն որդու հետ արշաւեց Երևանի վերայ. նա այլ ևս չանսաց Սիմէոն կաթուղիկոսի թախանձագին միջնորդութեան և երկու ամիս սարսեցրեց ամբողջ երկիրը, ամենահարուստ հայ գիւղեր գաղթեցին Իմերիա և այլ տեղեր, աւերեց և կրակի մատնեց 30 հայ եկեղեցի և շրջակայ վանքերը. իսկ հայերից շատերին գերի տարաւ Թիֆլիզ։ Սի բաւական խոշոր գումար վճրկանքով միայն կարողացան ազատուել Մալը Աթոռն ու մի քանի

---

[1]) Տես սոյն գրքի էջ 507։

[2]) Ս. Էջմ. մատ. № 433 գրչ. «Ժամանակագր. Յեռնադրութեանց Մինաս, Ծակոր, Սիմէօն և Ղուկաս կաթուղիկոսաց։»

[3]) Անշուշտ Ղուկաս վարդապետը ժամանակի աչքի ընկնող վանականներից է եղել (ժամանակակից գրողներ նորան անուանում են «անգրանիկ և շնորհածին զաւակ» Ս. Սիմէոն կաթուղիկոսի), որ Սիմէոնը երկրորդ անգամ նորան հրաւիրեց եպիսկոպոսական կոչման։

գիւղերու։ Այս մէկ կողմից։

Միւս կողմից մուղանլու թուրքերն էին ասպատակում երկիրն ու ժողովրդին տանջում. նոքա սրերով ու բերդով քը շեցին Օշականի թշուառ բնակիչներին, որոնք գնացել էին իրանց արտերը հրնձելու և կասելու, նոցանից շատերին վիրաւորեցին, գլխաւորին մահու դուռը հասցրին. այնուհետև նոցա բոլոր բերքը, ունեցած չունեցածը իւրացրին և գիւղը սեպհականացրին իրանց, վանքի այգինեը գրաւեցին, իսկ գիւղականները մերկ և քաղցած թափուեցան ս. Էջմիածին։

Շուշու խանն էլ իւր կողմից էր հունձ անում. նա անհաշիւ զօրքով պատերազմական ուղևորութիւն էր կատարում գէպի Թաւրիզ, այնտեղից Խոյ, յետոյ Գիլան և այլ կողմեր ու ամեն տեղ մանաւանդ հայաբնակ վայրերում սփռում աւեր, գերութիւն, ամայութիւն և մահ,

Այդ միջոցներին գահաժառանգութեան կատաղի կռիւ էր մղւում պարսկական զանազան խանների մէջ. 1777 թ. փետրուարի 10 ին վախճանուելով պարսից Քեարիմ խանը կտակով աւանդեց իւր եղբայր Զաքի խանին, որ իւր փոխարէն իւր աւագ եղբայր Սադեխ խանի հետ ձեռք ձեռքի տուած թագաւորեցնեն իր որդի Ալիվաթի խանին, իսկ կառավարութեան ղեկն առնեն իրանց ձեռքը. այդպէս էլ կատարեց Զաքի խանը, նա խապէս ընկճելով և նուաճելով բոլոր ըմբոստ խաներին։

Սակայն ապերախտ գտնուեցաւ Ալիվաթին և ուղեցաւ սպանել տալով նորան՝ Սադեխ խանի հովանու տակ անցնել, ուստի և Զաքի խանից ապրուստամբեցաւ Սադեխի խորթ որդի Ղանդ ազգից Ալիմուրատ խանը և մի գաւադրութեամբ սպանեցին Զաքի խանին։ Սադեխը փառաւորութեամբ մտաւ Շիրազ և ընդհանուր ցնծութեան տօն կատարեցին, այլ շուտով Սադեխը նախանձելով Ալիվաթի խանին՝ ղրկեց նորան պալատում և ինքը հռչակեց իրան պարսից արքայ. այդ տեսնելով իւր որդի Ալիմուրատը՝ սա էլ ապստամբեց իւր խորթ հօրից. հայրը իւր որդի Ալինաղի խանին, որ մի խելագար էր, մեծ զօրքով ուղարկեց Ալիմուրատի վերայ. վերջինս յաղթուեցաւ, իսկ Ալինաղին մտաւ Աւսպահան և էլ չարութիւն չմնաց որ չգործեց այնտեղ մանաւանդ հայ ազգի դէմին, բռնի յափշտակեց տղաներ և աղջիկներ, երկու մատաղամարդ հայ աղջիկ կին առաւ իրան, տառապեցրեց բոլոր հայ ժողովրդը գին և սասանեցրեց ամբողջ երկիրը,

Նուտով Ալի Մուրադ խանը, որ փախել էր Համադան, նոր 9 զօրք ժողովելով յարձակուեցաւ Ալինաղիի վերայ, փախցրեց նորան մինչև Շիրազ և տիրեց Իսպահանին և ապա բոլոր կողմերին։ Սակայն այս յաղթութիւնը արժան չնորհեց հայերին։ Խանը, այս մեծ յաղթութիւնը գլուխ բերելու համար գործ էր գրել իւր բոլոր հարստութիւնն ու աւարը և այժմ կարօտութեան մէջ էր, ժողովուրդը այնքան խեղճ էր, որ չէր կարողանում բաւականութիւն տալ նորա անյագ պահանջներին և մինչդեռ մտատանջութեան մէջ մաշւում էր խանը, չարախնդիր անձինք ոմանք չարախօսեցին Նոր Զուղայի հայ ազգաբնակութեան մասին, որ յայտնի էր այդ ժամանակ իւր հարստութեամբ և գրեթէ միակ յոյսն էր անմխիթար և ծերունի Սիմէոն հայրապետին իւր բազմաթիւ շինարար ձեռնարկութեանց մէջ, Չարախօսեցին նաև նոյն տեղի Ամենափրկչեան հռչակաւոր վանքի մասին յայտնելով, թէ անթիւ անհամար գանձեր կան այնտեղ. այս երբ լսեց խանը՝ հրամայեց մարդահարկ անել այդ տեղի ժողովուրդը, մանաւանդ եկեղեցականները, միայն Մկրտիչ վարդապետ առաջնորդից պահանջելով 500 թուման սպիտակ փող։

Երեք խաներ ցերեկով մտան Մկրտիչ Արքեպիսկոպոսի և նորա փոխանորդ Յակովբ վարդապետի մօտ և գեռ քաղցրութեամբ ու ապա խստութեամբ պահանջեցին որոշուած հարկը. ամբողջ մի աքսանութիւնն ու ժողովուրդը ահից թաքկացան և փախան. խանները երբ տեսան որ իրանց պահանջը չէ կատարուում՝ երկուսին ևս վայր ձգեցին գետնին և մինչև լոյս մահու չափ ծեծեցին և

ապա կողոպտեցին ինչ որ ձեռքները ընկաւ, այնուհետև կապեցին նոցա փայտից, դտան գետնափոր աւանդատունը. ուր պահուած էին եկեղեցու մեծագին զարդերն ու անօթները և բոլորը հաներ լով տարան 150 լիտր արծաթ, $1^1/_2$ լիտր ոսկի, ևայլն, խ.նը դորանով փող կտրեց և ուճիկ տուաւ իւր զօրքին, խնայեց միայն մասունքները ու յետ դարձրեց վանքին։

Բազմավաստակ Սիմէոն կաթուղիկոսը իւր ծանր հիւանդութիւնը մոռացած մահառիթ ցաւերով էր պաշարուած իւր սիրած հօտի այսօրինակ բազմակողմանի անդառնալի կորուստների վերայ, կորուստներ նիւթական և բարոյական. երկիրը թափուրանում էր, ժողովուրդը պանդխտում, վարուցանը դադարում և ամեն կողմ տիրում սով և սրածուլթիւն։

Սիմէոնը էլ չդիմացաւ իւր ժողովրդի տառապանքների և վայնասունների ձայնին. նորա անձը արդ կերպով քայքայւում էր և նա բաց աչքով տեսնում էր իւր կեանքի մօտալուտ վախճանը։

Գ.

Սիմէոնի վերջին կտակը



Ահուան անկողնում երանելի Հայրապետը կանչեց իւր խոստովանահօրը - ս. Էջմիածնի աւագ լուսաբեր ծերունազարդ Մարկոս Արքեպիսկոպոսին և խոստովանեւելուց յետոյ ասաց նորան. «Հայր սուրբ, աղօթիր անձանօթ ճանապարհի ուղևորութեանս համար, դէպի ուր պատրաստուել եմ չուել վաղը, որովհետև կանչում է ինձ Ամենաբաղձալի Կոչողը». և աւելացրեց, թէ իւր վերջին կամքն է ու կտակը, որ շուտով և առանց յետաձգութեան իրան յաջորդ — կաթուղիկոս ընտրեն Կարնեցի Ղուկաս արքեպիսկոպոսին, որին Ջմիւռնիոյ ատաջնորդութիւնից յետ կանչելով պահում էր իւր մօտ, ասելով միշտ, թէ նա պէտք է իւրեան և թէ «եթէ մահ պատահի իրան՝ աթոռը անայցելու չմնայ այս վնասաշատ ժամանակիս»։

Այս կտակը աւանդելուց յետոյ ընդունեց ս. Հաղորդութիւնը և հետևեալ իսկ օրը — 1780 թուի յուլիսի 20 ին, վարդավառ կիւրակի, թողեց այս անցաւոր աշխարհը։

Միաբանութիւնն ու ժողովուրդը մեծ հանդիսով տարան թաղեցին նորան ս. Գալինէի վանքում, ուր նախօրօք պատրաստել էր տուել ինքն իւր շիրմի համար մարմարիոնեայ տապանաքար։

Սիմէոնի մահից անմիջապէս յետոյ խոստովանահայրը Մարկոս Արքեպիսկոպոսը ողբալով յայտնեց ի Տէր հանգուցեալ Հայրապետի կտակը Մայր Աթոռի միաբանութեան։

Դ.

Ղուկասի ընտրութիւնն ի կաթուղիկոսութիւն



Երեքշաբթի օրը ժողով կազմեցին Մայր Աթոռի միաբանութիւնն և Երևանի հայազգի երեւելիները, ինչպէս սովորութիւն էր, նոր կաթողիկոս ընտրելու։ Ժողովականների մեծ մասը, ի նկատի ունենալով Սիմէոնի կտակը, տրամագիր էին ուղղակի Ղուկաս Արք-

եպիսկոպոսին ընտրել նորան յաջորդ, մանաւանդ որ Ղուկասը յայտնի էր Էջմիածնի բոլոր միաբանների մէջ որպէս խոհական և հանճարեղ և վարչական ընդունակութեամբ օժտուած մի անձն։ Իայց նախ քան նորա անուան յիշատակութիւնը խնդիր եկաւ սկզբունքով վրճռել այս անգամ կաթուղիկոսի ընտրութիւնը կատարել առանց Կ. Պօլսեցւոց դիտութեան, այն է ընտրութիւնը կատարելով նոցա տեղեկութիւն տալ միայն. այդ առաջարկը ժողովի մէջ տրեց դանձապետ Մկրտիչ Արքեպիսկոպոսը, պատճառաբանելով, թէ ժամանակը վրդովեալ լինելով՝ Աթոռին վտանգ է սպառնում, երկիւղ կայ որ վրաց Արքային կարող է դալ դէպի Ալրարատ [1]) և եթէ նախկին սովորութեամբ [2]) կատարուի ընտրութիւնը, Աթոռը պիտի տուժէ շատ կողմերով։ Մկրտիչ Արքեպիսկոպոսը բացի Սիմէոն կաթողիկոսին երկիւղ ազդող պատճառներից ուներ և այլ պատճառ շտապելու.—Վորդավառից երկու շաբաթ առաջ դեռ Սիմէոնի կենդանի ժամանակ մի քանի անգամ սուտ լուրեր էին տարածել թէ կաթողիկոսը վախճանուեց. և անմիջապէս մէկ կողմից մուղանլու թուրքերը փորձեցին յարձակուել Էջմիածնի վերայ և նորա կալուածները դրաւել, միւս կողմից Գանձասարի Իսրայէլ կաթուղիկոսը, որին Սիմէոնը և նորա հետ Մայր Աթոռի դրեթէ ամբողջ միաբանութիւնը աչքով չէր չունէր տեսնելու, և որն այդ միջոցին Թիֆլիզ էր նստած, վրաց դռներն էր չափչփում ու ծանր կաշառքներ խոստանալով կարողացել էր խոստում առնել նոցանից Էջմիածնայ Աթոռը ստանալու։ Այս բանը սարսափ էր ազդել ամբողջ միաբանութեան վերայ։

Միւս կողմից միաբանութեանը դըրդռել էր Գալուստ եպիսկոպոսի վարմունքը, որ Իօրչալուի թաթարներից 300 ձիաւոր էր բերել տուել որպէս թէ վանքը պաշտպանելու, բայց կասկածում էին թէ այդ նորա համար էր, որ ինքը բըռնանալով ժողովի վերայ իրան կաթուղիկոս ընտրել տայ, ուստի և միաբանե-

---

[1]) Արարատ. 1875 եր. 339. յիշատ. Մայր Մաշտոցի, գր. Եփրեմ վարդապետի (ապա կաթ.) ձեռքով։

[2]) «Այսպէս էր կաթուղիկոսի ընտրութեան կարգը ըստ նախնի սովորութեան.—Երբ կաթուղիկոսը վախճանուում է, երեք անգամ հնչեցնելով տաճարի մեծ գանգակը՝ միաբանութեամբ մանում են եկեղեցին, բաղմեցնում են սեղանի վերայ Աստուածամուխս. Գեղարդը և ս. Լուսաւորչի Աջը և երկու Արքեպիսկոպոսներ ասում են պատշաճաւոր սաղմոս. «Ցէր ապաւէն» և «Լցաք առաւօտուն». այնուհետև կարգով նստում են նոր կաթուղիկոս ընտրելու։

Աթոռայինները Երևանի երևելիների հետ թէ մեծն ու թէ փոքրը, գրուշաւոր քն նութեամբ ընտրում են մեկին կաթուղիկոսացու և կազմելով ընտրութեան համախօսականը (մահսարագիր) շրջեցնում են շըրջակայ աւաններն ու գիւղերը, քաղաքներն ու վանքերը և ապա աշխարհիս ամեն կողմ գտնուած Հայ ժողովուրդը և ովքեր հաւանութիւն էին տալիս կնքում էին այդ մահսերագիրը, վերջը ստորագրել էին տալիս օսմանեան հայերին և ամենից վերջը ուղարկում էին մահէրատար Արքեպիսկոպոսի ձեռքով Կ. Պօլիս, ուր խորհուրդ առնելով կամ վերընտրում էին ընտրածին և կամ եթէ ուրիշ արժանաւոր կար՝ նորան ընտրելով՝ հանում էին Օսմանեան աէրութիւնից հաստատութեան հրովարտակը (ֆէրմանը) և ուղարկում նորընտիր կաթուղիկոսին, որով սա իրաւունք էր ստանում իր նուիրակներն անարգել և իշխանարար ուղարկել ամեն աէրութեանց մէջ։ Այնուհետև նորընտիր կաթուղիկոսն օծւում էր ս. Էջմիածնում։ Խուրեանց.

Այլ աղբիւրներով կաթուղիկոսների ընտրութիւնն ի հնումն, ինչպէս յիշում է Աբրահամ կաթ. (եր. 13) և Ղևոնդ կաթ. իւր կտակի մէջ (1708, փետր. 20) լինում էր միայն Ջուղայի և Կ. Պօլսի ժողովրդներով։ (Տես Գաւազանագիր նախապատիւ և վերջագաս եպիսկոպոսաց.. Ամենափրկչեան վանաց Նոր Ջուղայ. Տ. Ճ. Խաչկեան աւագերիցու, Կալկաթա, 1876)։

ըից Մկրտիչ և Սահակ եպիսկոպոսներն էլ իրանց կողմից Երևանից մօտ 200 հոգի գեղարքունեցի քաջ երիտասարդներ էին ըերել նորա ոտնձգութեան առաջն առնելու համար [1]։

Սակայն կար միաբանից մէջ մէկը՝ Սահակ եպիսկոպոս Փառակեցին, որ անձնական հաշիւների պատճառով լաւ յարաբերութեան մէջ չէր Ղուկասի հետ. սա Կ. Պօլիս հազար ու մի բան էր գրել նորա մասին եւ մտքեր պղտորել և ընտրական ժողովում չատագովեց Կ. Պօլսի Զաքարիա պատրիարքին, որ աւելի աւագագոյն էր թէ տարիքով և թէ պատուով Ղուկասից, մի և նոյն ժամանակ ժողովում հրապարակով խիստ կերպով պաշտպանում էր այն միտքը, որ պէտք էր Կ. Պօլսեցւոց միջոցով կատարել հայ բաւեռական ընտրութիւնը։ Որ Սահակ եպիսկոպոսը ոչ թէ ճշմարիտ Կ. Պօլսեցւոց արտօնութիւնները էր պաշտպանում և է նպատակ ունէր ազգի շահը, այլ լոկ իւր անձնական հակակրութիւնը գէպի Ղուկասը, այդ երևում է նորանից, որ արգէն ընտրութիւնից յետոյ, երբ Զաքարիա պատրիարքը պատգամաւոր էր ուղարկել 4 կանոններ հետը՝ Ղուկասի և Էջմ. միաբանութեան մօտ՝ հրապարակով նա մեղայ գոչեց Ղուկասի առաջ իւր արարքների համար [2]։ Իսկ թէ առաջիկայում այդ Սահակ եպիսկոպոսը ինչ խայտառակ գործեր կատարեց, հրաւիրում ենք ընթերցողին կարգալ գործիս 541 երեսի և այլ կոնդակները նորա մասին։

Վէճը սուր կերպարանք է ստանում և Մելիք-Յովհաննէս Փեալ մականուանեալը ստիպւում է զայրացած և Մկրտչին վիրաւորանքներ տեղացող Սահակ եպիսկոպոսին ազատել սինօդականների յարձակումներից և տանել նորան սեւնեակը. որից յետոյ սորա համախոհ Դալուստ եպիսկոպոսը վերկենալով տեղից և առնելով գլխից վեղարը գնաց համբուրեց Ղուկաս արհու աջը և ասաց. «կեցցէ Տէր մեր սրբազան». ամենքը հետևելով նորան իրանց հաւանութիւնը տուին և Ղուկասը համարուեցաւ ընտրուած կաթուղիկոս ամենայն Հայոստանեայց,

Ընտրեալի վերաբերութեամբ անպատեհակարմամբ համարուեցաւ ընտրական նախկին կարգը կատարելով կանխապէս ստորագրել կամ կնքել տալ ընտրողական թերթը (մահսէրագիրը) և ապա ս. օծումը կատարել. առ այս միաբանութիւնը զօրեղ պատճառներ բերեց և մանաւանգ է նկատի ունէին Սիմէոն կաթուղիկոսի կտակը, ուստի և առանց երկար սպասելու՝ հետևեալ կիւրակի, օգոստոսի 2 ին, մեծ հանդիսով օծեցին Ղուկասին կաթուղիկոս։

Ե.

Զաքարիա պտարհարքի ղեկդիմու-թիւնը



Ներաւկան մահսարը պատրաստուելով բոլոր ներկայ եղող ժողովականներըլ ստորագրելուց յետոյ ժողովեցին նաև մերձակայ գաւառների հայ բնակիչների կնիքները ու օծումից մօտ քսան օր անց մահսարը ուղարկեցին Կ. Պօլիս մահսարատար Սէթ Պետրոս եպիսկոպոս Խոզարածեանցի ձեռքով, որ սա այնտեղի հայերի հաճութիւնը ստանայ և հաստատութեան ֆէրմանը հանել տայ սուլթանից։

Բայց մահսարատարից առաջ էր հասել Պօլիս Ղուկասի ընտրութեան լուրը, ուստի և թէ Զաքարիա պատրիարքը և

---

[1]) Մ. Մսերեանց, պատմ. կաթ. Էջմ. 6—7։

[2]) «Փիւնեան» Դ. էջ 195—6.

թէ տեղական հայ իշխանները չափազանց զայրացել էին Էջմիածնեցւոց վարմունքի վերայ և թէ ինչու առանց իրանց խորհրդի ու մասնակցութեան էին կատարել ընտրութիւնը, առանց ի հարկէ ծանօթ լինելու այն մեծ պատճառներին, որոնցից ստիպուած կատարուած էր տիդ բացառութիւնը։ Գրգռուած էր մանաւանդ Զաքարիա պատրիարքը, որովհետև ինքն էլ ձգտում էր այդ պատուին և երբ մահէլպատարը թէ անձամբ և թէ տարած զանազան գրութիւններով բացատրեց, թէ մայր Աթոռին շատ տեղերից վտանգ էր սպառնում թէ տիրապետողների կողմից և թէ չիս րյել կաթուղիկոսի, մանաւանդ որ միա բանութիւնը չէր կարող իրանց սիրած Սիմէոն կաթուղիկոսի կտակը չկատարել, որի վերջին կամքն էր Ղուկասին ընտրել իրան յաջորդ, այդտեղ արդէն Զաքարիայի զայրոյթը գագաթնակէտին հասաւ և որոշեց չընդունել Ղուկասին մինչև վերջ. նա տպել տալով հին տօնացոյցը՝ բաժանեց եկեղեցիներին և յետ ժողովեց Սիմէոն կաթուղիկոսի կազմուած տօնացոյցը, և կարգադրեց չհշատակել Ղուկասի անունը Ծաճկահայաստանի եկեղեցիներում, որ մօտ երկու տարի տևեց։

Մինչև անգամ սկսեց հալածել Սիմէոն կաթուղիկոսի սպասաւորներին, որովհետև Զաքարիային համբաւ էին տարել թէ «ներսնայինները» ընտրեցին Ղուկասին և քեզ մերժեցին. ուստի և նա մի քանի իշխանների հետ «մուճակ լամայ» գրեց Էջմիածին որ քննեն ներսնայինների բոլոր ինչքը և պահեստը և վեհարանից արտաքսեն նոցա խցերը, սպառնալով թէ մինչև որ այս չէք կատարի, Ղուկասի ֆէրմանը չէք ստանայ։ Մխաքանների մէջ Զաքարիան էլ ուներ իւր համախոհները, նոցանից Մուղամօլլու կոչուած Յակովբ վարդապետը ասում էր. «Աչքի չումչլիքն օտաց է կանգնէր՝ օր պէտք է փոքրաւորք թուրս ելնան». նոքա հաճութեամբ զննել տուին ամեն ինչ և դուրս եկան։ Այսպիսով Սիմէոն Հայրապետի բոլոր սպասաւորները՝ եկեղեցական և աշխարհական՝ դուրս հանուեցան վեհարանից։

Ց. Պօլսի իշխաններն ու ժողովուրդը հասկանալով Էջմիածնի միաբանից առիթ տուող պատճառները ամենք արդարացրին նորա վարմունքը և այսպիսով ժողովուրդը երկու մասի բաժանուեցաւ — ամենք Զաքարիայի և միւսները Ղուկասի կողմնակիցներ։

Այս շփոթութեան հանգամանքները հասան Ղուկասի ականջին, որ շատ ստրջացաւ այդ կոչումը ընդունելու համար. «Դիւանի» սոյն գրքում կտեսնէ ընթերցողը, որ Ղուկաս կաթուղիկոսը բազմաթիւ կոնդակներում գանգատւում է այդ մասին և հաւատացնում ամենքին, որ ինքը բացէ ի բաց մերժել է կաթողիկոսական աստիճանը, սակայն ժողովականները բազմիցս սպիպել են իրան ընդունել, ի նկատի ունենալով Սիմէանի կտակը և ժամանակակից գառն պարագաները և մինչև իսկ սպառնացել են թէ, եթէ գու չես յանձն առնի և քո այդ վարմունքից յետոյ՝ թշնամիները յարձակուին Մայր Աթոռի վերայ՝ գու կլինիս պատասխանատու գալիք չարիքների համար։

Ղուկասի ասածների ճշմարտութիւնը գտնում ենք հէնց իւր վարմունքի մէջ։ Երբ նա իմացաւ, թէ Զաքարիան և իւր համակրողները դէմ են իւր կաթուղիկոսութեան՝ նա եկեղեցում կաթուղիկոսարանը չմտաւ, այլ կանգնում էր նորա մօտ ձախ կողմը իջման սեղանի հանդէպ, ուր կանգնում էր տեղապահը (որ այդ միջոցին վախճանուած էր). այնտեղ իւր համար մի փոքր աթոռ էր գրել և աղօթում էր այնտեղ, կարգադրեց Գոհութեան և Հաւատամքին ամեն վիճակներում լիշել Սիմէոնի անունը, իսկ իրանը ոչ և մինչև անգամ վեհարանից տեղափոխւում էր միաբանից կարգը, սակայն եպիսկոպոսները հազիւ հաճեցրին այդ քայլը չանել. որոշեց եպիսկոպոսական ձեռնադրութիւն չանել մինչև որ խնդիրը կպարզուի, ուստի և Հերակլ արքայի ուղարկած Սահնի առաջնորդ Աբրահամ վարդապե-

տին յետ ուղարկեց առանց ձեռնադրութեան։ Մինչև անդամ Հայրապետական կոնդակները ընդունուած ձևով չէր գրում, այլ առանց կարմիր կնիքի. «զի որքան այսպէս պղտորեալ կայ բան մեր և ի ձախն ընթանայ, գրում է նա Պօլսեցւոց, անպատեհ է մեզ և պակասութիւն մեծ՝ այլ ևս կարմիր կնքով գիր գրել ի յայդ քաղաք»։

Այսպէս անցաւ ութն ամսից աւելի և Կ. Պօլսի իշխանները սպասում էին մի յարմար առթի Զաքարիային համոզելու, որ հաստատութեան ֆէրմանը հանէ արքունի դռնից։

Զ.

Յաջող միջադէպ



Բանի գնում՝ հերձուածը մեծանում էր և Ղուկասեան կուսակցութիւնը, երբ լսեցին մանաւանդ Ղուկասի բռնած խոհեմ ընթացքը և համբերատարութիւնը, հետզհետէ ստուարանում էր և զօրեղանում, Զաքարիային համակրողներն իսկ անցնում էին նորա կողմը։ Զաքարիան տեսաւ, որ իւր կողմը թուլանում է և ստիպուած պէտք է լինի ընդունել Ղուկասի կաթուղիկոսութիւնը, բանակցութեան մէջ սկսաւ մտնել և Տիգրանակերտի առաջնորդ Կարապետ Արքեպիսկոպոսին ուղարկեց Էջմիածին և նորա միջոցով պայմաններ առաջարկեց Ղուկասին. ցաւում ենք, որ չյաջողեց մեզ ձեռք բերել այդ առաջարկի իսկական օրինակը, իսկ Ղուկասը ինքը երկու տեղ յիշում է այդ մասին. նախ՝ Կ. Պօլիս Էջմիածնի ծայրագոյն նուիրակ Մինաս և մահսերատար Պետրոս Արքեպիսկոպոսներին ուղղած կոնդակների մէջ. «Իսկ «վասն նոր առաջադրութեանցն գրեալ «եմք... զի թէ մեք եմք կալոց ի յայսմ «աստիճանի՝ *ոչ կարեմք լինել սկիզբն «չեղեալ ըանից եւ քարո զայթակղու-«թեան և մեղադրելի յետագալից*». և 1780 թ. գեկտ. 23-ին Հաշտարխանու նուիրակ և առաջնորդ Յովսէփ Արքեպիսկոպոսին ուղղած թղթում պարզում է աւելի. «Պատրիարքն կամի կանոնս «ոմանս գնել ի վերայ մեր և *զանխո-«նարհելի իշխանութիւն ս. Աթոռոյս «արկանել ի ներքոյ կանոնի* և սո-«րագրելոց հրամանի. իսկ իշխանքն ա-«մենեքեանքն կան նմա գիմակալեալք «սակս այսր և ոչ թողուն յառաջացու-«ցանել ինչ»։ Եւ կրկին անգամ, դարձեալ առաջիններին ուղղած մի այլ կոնդակում, ասում է, որ այդ 4 պահանջներն էին՝ Սիմէոն կաթուղիկոսի փոքրաւորներին վերհարանից գուրս հանելը (որ և հանուեցան), կաթուղիկոսի ընտրութեան համար կանոններ սահմանել, կաթուղիկոսին խորհրդականներ տալ և ս. Աթոռի հաշիւներին հասու լինել ու նուիրակներին պատուէրներ տալ։

Ս. Աթոռի միաբանութիւնը ժողով կազմելով որոշում է թէ «կանոնագիրք «սրբոյ Աթոռոյս Հայրապետք լինին և ոչ «միաբանք կամ այլ ստորագրեալք... զայ-«սոսիկ Հայրապետս մեր պարտի վերա-«հաստատել իւրով կոնդակաւ և կարմիր «կնքով, զի և մեք զլուսանցան կնքես-«ցուք»։

Զաքարիան այդ առաջարկութեամբ ստիպում է Ղուկասին առաջարկել Զաքարիային որ ինքը յանձն առնէ լինել Հայոց կաթուղիկոս և այս առթիւ գրում է դարձեալ Մինաս և Պետրոս արքեպիսկոպոսներին այս նշանաւոր խօսքերը. «Եթէ այն է նախանձ դորա՝ թէ ընդ «գէր ես ոչ նստայ կաթուղիկոս, թող «եկեսցէ քարեաւ որպէս և իւրեան գը-«րեալ եմ. գիտէ Աստուած՝ զի պարզ «սրտիւ և լրջմտութեամբ գրեմ։ Երբ «և եկեսցէ, յանձնեցից ինքեան զտունս

« սուրբ զոր իւրով ամբողջ կուսութեամբ
« պահեալ եմ շնորհօքն Աստուծոյ մին-
« չեւ ցայս կէտ եւ պահեմ». և ես ա-
« ռանձնացայց յուրեք որպէս գրեցի»։

Այսպէս էր մտածում Ղուկասը և նորա այս գնացքը այն աստիճան ապշեցրեց Կ. Պօլսեցւոց գժգոհութիւնը Զաքարիայի գէմ, որ հակառակորդները, որոնք արգէն ստուար մեծամասնութիւն էին կազմում և որոնց լռելեայն օժանդակում էր գերմանական դեսպանը [1], ցանկացան ուրիշ պատրիարք ունենալ և որոշել էին ընտրել Աթանաս անունով Արքեպիսկոպոսին. սակայն Զաքարիան լսելով այս՝ խափանեց այս խորհուրդը, որի վերայ զայրանալով դեսպանը և հայ իշխանների հաճութիւնն առնելով Զաքարիային աքսորել տուեց Պրուսա 1781 մայիսի 2 ին և յունիսի 2 ին Պրուսայի առաջնորդ Յովհաննէս Համատանցի արք. եպիսկոպոսին կացուցին Կ. Պօլսի պատրիարք։

Այս դէպքից սիրտ առած իշխանները Ի. Ինից հանել տուին Ղուկասի հաստատութեան հրովարտակը և ուղարկեցին ս. Էջմիածին, որով ճանաչուեցաւ Ղուկասը օրինական կաթուղիկոս ամենայն Տանն Հայաստանեայց։

[1]) Մուրթը խնդիրներից միևն էլ գերմանական դեսպանի բռնած դիրքն է հայերի նկատմամբ։ Պերպերեանն իւր հայոց պատմութեան մէջ այսպէս է բացատրում այդ. նա ասում է թէ Զաքարիա պատրիարքը հալածանք յարոյց հռովմէական հայոց վերայ և շատերին նոցանից աքսորեց և քահանաներին արգելեց նոցա երեխաները մկրտել և թաղել. կաթոլիկ հայերն էլ իրրև թէ գերմանական դեսպանի ձեռքով յանգանք դրին Զաքարիայի վերայ, երբ թէ վերջինս ձեռք բերելով գերմանացւոց տէրութեան մի կնքեալ թուղթ՝ կնիքը քակել է և կարդացել. և սորա համար էլ հեռացրին նորան պատրիարքութիւնից. սակայն Պերպերեանի ճշմարտախօսութիւնը կասկածի ենթակայ լինելով կսպասենք ստուգել այս եղելութիւնը իրան Զաքարիա պատրիարքի նորագիւտ կենսագրութիւնից։

Ը.

Ղուկասը հանճարեղ էր եւ խոհական



Ասէր, եթէ մեր ձեռքը հասած լինէր Ղուկասի 19 1/2 տարուայ պաշտօնավարութեան բոլոր գրագրութիւնները, այն ժամանակ առաւել փաստեր կ'ունենայինք ջրել Ղուկասի հակառակորդների այն առարկութիւնները, թէ ազգը ոչինչ շահեցաւ նորա կաթողիկոսութիւնից [1], սակայն այն ստուար ժողովածուն ևս, միայն մի քանի տարուան վերաբերեալ, որ տպւում է ներկայ հատորիս մէջ, բաւական պարզ կերպով ընորոշում է Ղուկասին որպէս հանճարեղ, խոհական, գործունեայ, հաշտարար և հայ եկեղեցուն ու ազգին անձնագիր մի հովիւ։

Մեր նպատակը չէ այստեղ և մեր բազմակողմանի պարապմունքներն ևս չեն ներում մեզ Ղուկասի մանրամասն կենսագրութիւնը գրել, մանաւանդ որ ինչպէս վերը ասացինք, պակասում են և կարևոր նիւթեր, բազմաթիւ ժամանակակից անձանց գրագրութիւններ. ուստի և մենք կբաւականանանք մի քանի քաղուածքներով այս հրատարակութիւնից ներից և մեր ունեցած այլ տեղեկութիւններից։

Ցայտնի է թէ այն նշանաւոր երկպառակութիւնն և աղմուկները, որ ամբողջ հայ ազգը բաժանել էր կռուող կուսակցութիւնների կաթուղիկոսական ընտրութիւնների վերաբերմամբ և որ խաղաղացնելու համար հարկ եղաւ Կ.

[1]) Մաերեանց. պատմ. կաթ. Էջ.

Պօլսում քանի մի ժողովները գումարել, առաջն առնուեցաւ միմիայն Ղուկաս վեհապետի խոհեմութեամբ և հանճարով։

Այսպէս էլ բազմաթիւ իշխողների ու ամեն կողմից տեղացզ լեզուների ու մուզանլուների աւազակային հրոսակների արշաւանքները յաճախ առանձին վնաս չհասցրին Մայր Աթոռին և շըջակայ հայ ժողովուրդը եթէ փոքր ի շատէ շունչ առաւ այգ տւերաճութիւնից, դարձեալ նորա հեռատեսութեան և խելքի շնորհիւ էր։ Նա գիտէր ինչպէս իւր ճարտարարուեսա խօսքերով քաղցրացնել քարացրած սրտերը, և այս խոստովանում են նոյն իսկ իրան ժամանակակից և իրեն հակառակ գրողներ [1]), այնպէս էլ պատշաճաւոր ընծաներով և պատգամաւորութիւններով հաշտեցնել նոցա սրտերը ս. Էջմիածնի և հայ ժողովրդի հետ։

Բազմաթիւ գրութիւններով և կոնդակներով հրաւիրում էր շրջակայ բոլոր տէրութեանց միապետներին, նոցա նախարարներին և առաջին մարդկանց, և բոլոր ազգերի կաթողիկոսներին և եպիսկոպոսներին սիրով լինել միշտ առ մայր Աթոռը, հայ ժողովուրդն և առ ինքը։ Եւ սորան պէտք է վերագրել այն ազգեցութիւնը, որ ունէր նա թէ հայ ազգի մէջ և թէ բոլոր շրջակայ խաների վերայ։ Իբրև օրինակ մենք առաջ ենք բերում այստեղ շատերից մի դէպք՝ Ղուկաս կաթուղիկոսի բանակցութիւնը Երևանի խանի հետ Մօլլագուբսունի վանքական առուի յափշտակութեան վերաբերութեամբ։

Ֆէշխֆէթբաշի Զէյնալ բէկը ձեռք բերելով Մ՝ոլլագուբսուն գիւղը՝ սկսում է չալթուկ ցանել տալ և Աթոռապատկան առուով ջրել [2]), այնպէս որ երկու տարի մէկ մէկու վերայ վանքի շատ արտերը չորանում են. Ղուկաս կաթուղիկոսը ստիպուած է լինում գործակալ Յակոբ վարդապետին և Վանքի Միրզային ուղարկել Երևան խանի մօտ, խնդրելով, որ հրաման գրէ Մ՝օլլադուբսունցիներին իրանց համար գետից ջուր բերել և վանքի առուից ձեռք վերցնել. խանը անմիջապէս երկու անգամ մարդ է զրկում տեսնելու թէկարելի է արդեօք Մ՝օլլագուբսունի համար առու հանել, սակայն գնացողները Զէյնալից թելադրուած եկան ասին թէ անկարելի է։ Խանը աւելրել տուեց նոցա ցանքսերն և Ղուկասին լուր ղրկեց, որ եթէ կարելի լինէը նոր առու հանել Մ՝օլլագուբսունցոց համար՝ պատրաստ է 1000 թուման ինքը ծախսել դորա վերայ, բայց թուի թէ անհնար է, ուստի թող նոքա էլ օգտուին վանքի ջրից։ Ղուկասը նկատելով, որ առուն ձեռքից գնում է, ինքը գնում է և առ տեղեաւն ստուգում, որ դժուար չէր նոր առու հանել, յետոյ առաւօտը գնում խանի մօտ, բայց տեսնելով, որ ախունգրն ու ուրիշ ժողովուրդ կան մօտը՝ առանց բան խօսելու յետ է դառնում տնապատը [1])։

Խանը իսկոյն նազիր Հաջի Ջաֆարին ուղարկում է նորա մօտ և ապսպարում.

—Խալիֆայի քէֆը լաւ չտեսայ, ինչ ցաւ ունի, ասէ որ հոգանք։

Վեհը պատասխանում է թէ մի քանի խօսք ունիմ ասելու. և մինչև որ կմտածէը իւր ասելիքի մասին՝ խանը նոյն օրը ճաշից յետ ինքն եկաւ Վեհի մօտ և պատուասիրուելուց ու շատ սիրալիր խօսակցութիւնից յետոյ՝ ամենքին հեռացրեց սենեակից և առանձին ստիպեց Վեհին որ իր ասելիքն ասէ խոստանալով անշուշտ կատարել։ «Եւ « մեք, գրում է Ղուկասը Ձմիւռնիայի « նուիրակ և առաջնորդ Իսահակ արքե« պիսկոպոսին, օժանդակութեամբ շնոր« հաց սրբոյ Իչման տեղւոյս մեզմով « պատմեցաք զյանդուգն ագահութիւնն « Մ՝օլլագուբսունցւոց և զանիրաւաբար « զրկանն և զիղճալի գիւղականաց մե« րոց նեղիլն և վնասիլն և զբողոքն, « միանգամայն և զիւր դրան մարդկանց

[1]) Մսերեանց, Խուբեանց։

[2]) Ձամչ. 198—9.

[1]) Երևանի առաջնորդանիստ եկեղեցին կոչւում էր Ձորագեղի անապատ։

« խարդախագործութիւնն . և զշահ-
« արխին մեր լինելն՝ անմասն այլոց. և
« թէ՝ ոչ զանէրաւ ինչ, այլ զերաւացի
« դատաստան խնդրեմք, եթէ հատցես
« զայս վէճ բարի է. և թէ ոչ, թարց
« այն չըոյն անդանօր բնակութիւն ոչ
« լինի, *հարկ է ցրուիլ մեզ*»։

Այդ միջոցին մտնում է Զէյնալը և սկսում է արդարանալ, առարկելով, թէ որովհետև այն առուն իւր գիւղով է անցնում՝ էնքն էլ բաժին ունի նորանից։ Ղուկասն իսկոյն հանում է խանի հօր՝ Յակոբ կաթուղիկոսին տուած «ծաղկեցեալ» թուղթը, ուրի մէջ գրուած էր թէ գետի կէսը Իւչքիլիսայինն [1]) է «ըստ թագաւորաց հրամանագրութեան». հանում է նաև շահի՝ Ղազար կաթուղիկոսին տուած թուղթը, որով պատուիրուում էր որ Մօլլագուրսունցիք բաղչայի ջուր չառնեն շահարխից. այդ թուղթը կնքելով վաւերացրել էին նաև Իլրամանուսխտունտը, Մելիք Յակոբջանն և ուրիշները։ Խանը երբ տեսաւ իւր հօր թուղթը՝ խանգաղատեցաւ և հարցրեց Զէյնալին, թէ նա ևս ունի՞ որևէ փաստաթուղթ։ Զէյնալը ոչինչ չունէր. իսկ խանը իրաւունք տալով Ղուկասին՝ ասաց.

«Մօհտաբար մարգ կուղարկեմ Մօլլագուրսունի առուն տեսնելու, եթէ կարելի է հանել՝ հանել կտամ, իսկ եթէ ոչ, ես Զէյնալին ուրիշ գիւղ կտամ և Մօլլագուրսունը կաւերեմ, անհոգ կաց, խալիֆայ»։

Այս խօսակցութիւնից յետ, որ 1½ ժամ տևեց, խանը գնաց և Մօլլայ Ալուորդի Մահմատ բէկին ու ախունդներից մէկին ուղարկեց առուն զննելու. նոքա պատասխան բերին թէ հեշտ է առուն հանել։ Ուստի և խանը թալղայ գրեց բոլոր շրջակայ բնակիչներին, Մահմատ բէկին ևս վերակացու կարգելով երեք օրում ոչ միայն Մօլլագուրսունի, այլ և մերձակայ առուներն էլ հանել տուեց։ Ի հաստատութիւն տյս բանիս խանը մի հարկաւոր և պահելի թալղայ տուեց Ղուկասին առ այն, թէ առուն Մայր Աթոռին է պատկանում։

[1]) Էջմիածնինը։

Ը.

*Շա հայոց նկնդիցոյ հաւատարիմ ա-
դանդապահ էր նա պաշտպան Էջմիա-
ծնի շահերի*



Երկայ հատորիս մէջ բազմաթիւ ապացոյցներ կան Ղուկասի աւանդապահութեան Հայաստանեայց եկեղեցու երջանիկ ս. հարց գրուած կարգերին ու օրինադրութիւններին։ Մենք քըչով կբաւականանանք։

Վանեցիներին իրաւունք տալով Աղթամարի Թոմայ կաթուղիկոսի մահից յետ օծել կարապետ եպիսկոպոսին կաթողիկոս՝ գրում է. «Լուսահոգի Թոմայ կաթուղիկոսն ինքնակամ յօժարութեամբ և հաստատուն և յաւիտենական ուխտիւ և պայմանաւ ձեռագիր է տուեալ հոգելոյս հայրապետին մերոյ Տեառն Սիմէոնի... զի թէ ինքն կենդանութեան իւրում և թէ զկնի մահուանն յաջորդողն ի տեղի իւր մնասցեն ի ներքոյ հրամանի և իշխանութեան ս. Մայր Աթոռոյս Էջմիածնի և ի սմա նստող Հայրապետացն... Արդ մեք ևս ահա զգուշացեալ ի յանդուգնելի պայմանագրութեանցն Տ. Սիմէոնի ս. կաթուղիկոսին և նորոգ վախճ. Թովմայ կաթուղիկոսին... զհրաման ետուք բարձու իշխանութեամբն սրբոյ Աթոռոյս օծանել զընտրեալն նոցին և ձեր զկարապետ... վարդապետն կաթողիկոս յԱթոռոջն իւրեանց... և զկնի օծմանն ըստ գրեցելոյ պայմանին ձերոյ ուղեւորել զնա ՚ի ս. Աթոռս և առ մեզ առ ի վերահաստատել զկաթուղիկոսա-

« կան իշխանութիւնն... բայց այսու
« պայմանաւ և վճռաւ որ զգուշասցի առ-
« ՚ի կալ հաստատուն ՚ի ներքոյ իշխա-
« նութեան և հնազանդութեան ս. Ա-
« թոռոյս և Հայրապետացն սորին»։

Վրաց Հերակլ արքայի և նորա որդի Դիորգի Մերզայ արքայորդու հետ անձուկ յարաբերութեան մէջ էր Ղուկաս կաթուղիկոսը, որ սակայն մի երկու անգամ չարախօսների շնորհիւ ընդհատուեց. Հերակլը միշտ կարօտ է եղած Ղուկասի օգնութեան, ինչպէս վկայում են նոյն արքայի խորհրդական Պետրոս քահանայ Տէր Պետրոսեանի ձեռքով նորա գրած բազմաթիւ գրութիւնները, որոնց մէջ նա խնդրում է նորանից Պարսից երևելիների մօտ միջնորդել, բարեխօսել իւր համար, որ կարող լինի պահպանել իւր քաղաքականութեան կշիռն ևայլն [1]։ Այդ յարաբերութիւնն այնքան սերտ էր, որ Ղուկասը ոչ թէ միայն շարունակ զանազան առիթներով եպիսկոպոսներ էր ուղարկում ընտիր նուէրներով, որ ապսպարում էր Ամստերդամից և այլ երկիրներից և այդ նուէրները երբեմն ուսման առարկաներ էին՝ ինչպէս օրինակ 2 բառարան (հասարակ և յատուկ) է ղրկում Դիօրգի արքային, այլևնաև պատմում են, որ Էջմիածնի տպարանի մամուլներից մէկն էլ ընծայ ուղարկեց Հերակլին և տպելու թուղթն էլ ինքն էր մատակարարում։ 1783 թ. մայիսի 22-ին Կ. Պօլիս Մինաս և Իսահակ նուիրակ արքեպիսկոպոսներին մանրամասն գրում է Ղուկասը, որ իւր «ազնուագոյն սիրելին և հոգու ցանկալի... օրհնեալ Հերակլէս արքայն զտպագրատունն իւրեանց «ծեռամբ հոգևոր որդւոյն « *մերոյ պարոն Պօղոսին հաստատեալ* « *աւարտեաց*, որոյ զերախայրի և զվա « ղահաս պտուղ մէկ տպագրեալ տետրն « ... տեսեր, զոր առ մեզ էին յղեալ։ « և մեք... զգիր շնորհաւորութեան « գրեցաք»։ Նոյն Հերակլը հենց այդ իսկ միջոցին մի սիրանիշ գրով խնդրել էր թուղթ ուղարկել նորաբաց տպարանի համար, և Ղուկասը հրամայում է վերոյիշեալ նուիրակներին առնել և ուղարկել ընտիր թուղթ որովհետև գրում է «եթէ անհմուտ մարդկանց ձեռամբն առեալ լինիցի, նման *թղթոցն մերոց... անպէտ լինելոց է*»։ Ահա այս տեսակ յարաբերութեան մէջ Դիօրգի արքայորդին մի թղթով և առանձին պատգամաւորութեամբ (Եաքարօլի ձեռքով) խընդրում է Ղուկասից եպիսկոպոս ձեռնադրել Դաւիթ վարդապետին, որ սիրելի էր արքունի գրանը։ Բայց գիտէք ինչ է պատասխանում Ղուկասը.—Նա գրում է թէ բոլոր քրիստոնէից կանոն է, որ եպիսկոպոսը ձեռնադրում է յատուկ մի վիճակի և ժողովրդի վերայ, որ լինի իբրև հոգևոր փեսայ, իսկ որ վիճակուած է իրան՝ նա լինի հարսն իրան. իսկ այս Դաւիթ վարդապետը ոչ գիր ունի և ոչ մահսար (համախօսական), որ ձեռնադրելու ժամանակ եկեղեցում կարդանք ինչպէս մեր եկեղեցու կանոնն է և սովորութիւնը. ուստի և չնայելով «զի զպատուական խաթրն աղնուագ իմոյ ընդ բոլոր աշխարհի ոչ փոխանակեմ», այնուամենայնիւ այդպիսի ձեռնադրութիւնը մերժում է նա և առաջարկում որ Դաւիթը նախ թեմ գտնէ իւր համար և ապա ինքը միջնորդէ նորան ձեռնադրել։

Սոսկալի և ականջ խլացնող նզովքներով բանադրանք է գնում Ղազախու գողք գիւղացի Վէրան քեօխվի ու նորա որդի Եարալիի ու այլ մեղսակիցների վերայ մի մօտիկ չհաս ամուսնութեան առիթով, որ գաղտնի կերպով կատարուել էր անլսելի մի քահանայի ձեռքով 1794 թուին։ «Ապա զինչ անառակութիւն և « կանոնաքակութիւն է՝ զոր լսեմք « զգարշելեացգ... աղաղակում է գառը « ցասմամբ Ղուկաս Հայրապետը, մինէ « չիմացայք որ այդ չարաչար չհաս է « և ոչ ապաքէն ձեր առաջնորդ Դաւիթ « վարդապետն զգուշացուցեալ է զձեզ « սաստիւ թէ ապօրինաւոր է, մի առ « նէք... անհնազանդ գտանեցայք սահ « մանաց սրբոյ եկեղեցւոյ և կանոնից « սրբազանից Հայրապետացն և գալթակ « ղութեան պատճառ երևեցայք բազմաց»։

[1]) Արարած 1875. եր. 95. Գալ. Ձեռ.

Սանահնոյ վանքի առաջնորդ Աբրահամ վարդապետը Հրաման է գրում Ղօչի գեղի աէր Աբրահամին, որ նոյն գիւղացի Իարսեղին պակէ մի կնոջ հետ որի ալրը բացակալ էր. և եթէ, գրում է նա, առաջին մարգը վերադառնալ՝ կինը կյանձնես այն առաջին մարդուն։ Պէտք է տեսնել այժմ Ղուկաս կաթուղիկոսի շանթերը. «Արդ, ով խելագար « դու... այս զինչ է... որ զայլոց կինն « առեալ այլում իճարալով և պայմանաւ « տաս. զՅիսուսի անլուծանելի հրամանն « լուծանես և շնութեան լինիս պատ « ճառ և զքեզ Յիսուսի ծառալ և աւե « տարանի պաշտօնեալ գրես և կնքես. « ոչ լուար ի Տեառնէ, զոր Աստուած « զուգեաց մարդ մի՛ մեկնեսցէ, զգոյշ « լեր այսուհետև և զչափդ ճանաչեա՛ և « մի՛ վրէժխնդրութիւն յարուցաներ « զմեզ»։

Աղթարմանների, այդ եզուիթ պապաշտ պատերներին հալածելն ու Հայաստանեայց եկեղեցու դառներին նոցա ճանկերից պաշտպանելը Ղուկասն ուսել էր Սիմէոն մեծ Հալբապետից և մինչև իւր վերջին օրն էլ հետևեց նորա շաւղին։

Նորա բոլոր գրագրութիւններից մարգ այն եզրակացութիւնն է դուրս բերում, որ ըստ ներելոյ ժամանակի և հանգամանքներին, նա ամեն կերպ աշխատում էր ս. Էջմիածնի պատիւն ու անունը բարձր պահել. օրինակ Սիմէոն կաթուղիկոսի «Պարտավճար» երկասիրութիւնը, որի տպագրելն սկսել էր ինքը երջ. հեղինակը, Ղուկասը տպագրել աւարտելով Ատենու հետ միասին, իւր կոնդակներից մէկում (սոյն գիրք էջ. 270) գրում է.— *մենք ուզում ենք որ այսպիսի մեծ գործ Էջմիածնի տպարանից լոյս տեսնի*, կանոն է գնել տալիս, որ «կաթուղիկոսաց ապրանքը իրանց մահից յետ Էջմիածնում մնալ և ոչ թէ արքունիք տարուին»։ Եւայլն եւայլն։

Իսկ թէ նա ինչու չկարողացաւ աւելի գործ տեսնել, գոքա մասին հարկաւոր չէ պատճառները որոնել, իւր ամբողջ կեանքը, իւր գրագրութիւնքը շարունակ ողբի հոտ են բուրում, Հայաստան աշխարհը շարունակ երերեալ և տատանեալ և ինքը մենակ մէջտեղ անոք և անօգնական ու շուրջը աւեր ու ամայութիւն. բացի բազմաթիւ մանր մունը յարձակմունքները բաւական է յիշել իւր ընտրութեան առաջին տարուայ քաղաքական երկպառակութիւնները և Ժ.Ը. գարու վերջին Աղա Մահմադ խանի աշխարհաւերը ուղևորութիւնը։

Նոքա [1]) *թէ առ ժամանակ մի խռովին, յետոյ խաղաղանալ կարեն, քայց Հայաստան աշխարհիս եւ ազգի մերում յԱստուծոյ խաղաղութիւն ծագեսցի*»։

Մի ուրիշ տեղ ասում է.—«Զնախանեալ հայրապետացն ս. Աթոռոյս զտանժանելի կիրսն թողումք. մեք՝ի մերս 19 ամեայ ժամանակի հոգաբարձութեան քանիցս անգամ տեսաք շրջած. պատեալ՝ի դաժան թշնամեաց, հայեցաք եւ ոչ ոք գտաւ օգնական կամ՝ի թիկունս հասանող, այլ միայն Աստուծոյ ողորմութեամբն և տառապեալ ազգիս մերոյ դառն քրտամբքն պահպանեցաւ ս. տունս»։

Այսպէս էր ողբում Ղուկաս բազմատանջ կաթուղիկոսը և ամենուրեք յորդորում իւր նուիրակներին [2]) *աւելի քանացէք ժողովրդի սիրտը գանձել, քան բազմաթիւ արդիւնքներ*»...

Եւ տեսնելով ազգի տարաբաղդ վիճակը առանձին գրագրութեամբ Մադրասու հայերի և մանաւանդ նշանաւոր Շահամիր աղալի հետ մտածում էր ազատութեան ելք գտնել այդ խեղճ ժողովրդի համար. և այդ ազատութիւնը, ինչպէս կարող ենք տեսնել գործոյս վերջը ապուած յաւելուածից, նոքա տեսնում էին Ռուսիոյ օգոստափառ Կայսրութեան մէջ։

Ասացինք, որ Իսրայէլ ինքնընծայ և դաւաճան կաթուղիկոսին, որին հալածում էր Սիմէոն կաթուղիկոսը, հալածանքի ենթարկեց և Ղուկասը։ Միևնոյն

---

[1]) «Եւրոպ. ոուս» պատերազմի մասին է գրում. «Դիւան հ. պ.» այս հատոր եր. 569։

[2]) Սոյն հատոր եր. 371։

ժամանակ նա հալածեց և Գանձասարի Սարգիս կաթուղիկոսին, որը իւր եղբայր Յովհաննէս կաթուղիկոսի մահից լետոլ առանց Էջմիածնի ընդհանրական կաթուղիկոսի հաճութեան Ջաւատ խանի հրամանով կաթուղիկոս օծուեց Գանձակում։

Սարգիսը տեսնելով Ղուկասի հալածանքը դիմեց Թիֆլիզ Վրաց Գիւորգի թագաւորին, որ առանձին գրութեամբ խնդրեց Ղուկասից վերցնել կաթուղիկոսական կոչումն ու կարմիր կնքով կնքած գրել ու արտօնութիւնը և առաջնորդութեան պաշտօնով ուղարկել նորան Հաղբատ։ Երբ Գեորգին սպառնաց [1]) Էջմիածնի վանականներին թոյլ չտալ Իմաստակաձորով անցնել՝ Ղուկասը ստիպուեցաւ կատարել վրաց արքայի խնդիրը, կանչեց Սարգսին Թիֆլիզ, և յանդիմանելով նորան ու խոստմնագիր առնելով՝ կոնդակ տուաւ առաջնորդութեան և ուղարկեց Հաղբատ։

Իւր կաթուղիկոսութեան ամբողջ ժամանակ նա թոյլ չտուեց ոչ Սսի, ոչ Աղթամարի և ոչ Աղուանից կաթուղիկոսներին օծուել առանց ս. Էջմիածնի Հայրապետի հաւանութեան և կանխագոյն հաճութեան։

Նա կառավարչական շնորհ ունէր. նորա ժամանակ Էջմիածնի վանքը մօտ 40 Արքեպիսկոպոս ունէր. թող բազմաթիւ վարդապետներն ու սարկաւագները և $19^1/_2$ ձիգ տարիների ընթացքում մի խլրտում, մի անրաւականութիւն չար տալատուեց նորա դէմ։ Յովսէփ Արքեպիսկոպոսը, որ միշտ երազում էր կաթողիկոսութիւն, նորա մասին միշտ պատկառանքով ու ակնածութեամբ է խօսում ուրիշներին գրած թղթակցութեանց մէջ [2])։

---

[1]) Եկեղ. պատմ. Ցուսիկ. վ.

[2]) Երջ. Ղուկաս կաթուղիկոսի լվերայ յօդ. Գալ. Շերմազանեանցի։ «Արարատ» 1875 եր. 62.

Բ.

Ղուկասը շինարար էր

Ղուկասը շէր միայն հաւրիւրաւոր կոնդակներով և գրութիւններով բոլոր ազգայիններին է սէր հրաւիրում առ Մայրըն լուսոյ ս. Էջմիածին, այլ ամենը լինում էր հեռատեսութեամբ և ահա ամեն կողմից կարող հայեր ձեռն են կարկառում և բազմաթիւ նուիրակներ իրանց ժողոված նուէրները թափում շինասէր Հայրապետի գոգը. Խուբեանց և այլք նորան շահասէր և ագահ են անուանում. մենք ևս հակամէտ կլինէինք այդպէս կարծել, եթէ Ղուկասը մի շարք կարևոր և բազմածախ շինութիւններ կառուցանելուց լետոլ թողած չլինէր Մայր Աթոռի գանձարանում 300,000 հազար ոուբլու չափ պատկառելի մի գումար, եկեղեցու և աղքի ապագայ պէտքերի համար։

Շինութեանց վերայ երկար չենք կանգ առնի, կթուենք միայն գլխաւորները.

ա. 1784 թուին Ախուչեխցի և Կ. Պօլիս բնակող մահտեսի Յարութիւն ամիրալի ծախքով նորոգեց «ներքնաշաբեայ չորս կարգ քարինք բոլոր որմոց լուսանկար սրբոյ Տաճարին»։

բ. Նոյն թուին նորոգեց վանքի քանքանը բոլոր շրջանակօք։

գ. 1785-ին Կաթուղիկէ եկեղեցւոյ շուրջը ամբողջ սալայատակը՝ Սուրաթի բնակիչ Գերաքեանց Յօհաննէսյան աղայի ծախքով։

դ. Նոյն թուին Ջուղայեցի Խաչիկ աղայ Էմինիազեանի ծախքով հարաւային

ներքին պարսպի մօտ Ջուկ կոչուած մեծ գրան մօտ ցորենի և բրնձի համբարանոց կամար առ կամար կոփածու քարերով։

ե. Այս մեծ դրնից ուղղակի արևմուտք մինչև կաթուղիկոսարանի հարաւային ծայրը հիմնարկելով շինեց կրկնայարկ մի բարձր շինուածքն (բացի Ամրան կաթուղիկոսարանից, որ Աղէքսանդր կաթ. շինածն է)։

զ. Ծաճարի որմերն ու առաստաղը հանճարեղ նկարիչ Յովնաթանի ձեռքով զարգարեց բազմատեսակ գեղեցիկ նկարներով և պատկերներով։

է. 1787-ին Ջուղայեցի Մարգար Խալգարենցի ծախքով կառոյց ամառան մեծ սեղանատունը կոփածոյ քարերից, նստարաններով, հացի սեղանով, ծայրին սիւնազարդ քարակերտ կաթուղիկէով Հայրապետի բազմելու համար և այլն։

ը. 1790 ին Յովհաննէս ամիրայ Պաշալազրկեանի ծախքով ընդարձակեց Ամրան սեղանատունը հնգեակ կամարներով։

թ. 1891 ին Նիկողայոս Թօխատցու ծախքով սեղանատան վերայ շինեց վերնայարկ համբարանոց։

ժ. Սանահնայ վանքը նորոգելու առթիւ գրում է իւր մի կոնդակում. «... տրգի բազմաց վանօրէից մի է Սանահնոյ սուրբ Աստուածածնի բազմահրաշ և գերազօր ուխտն, որ շնորհիւն Աստուծոյ կառուցեալ կայ յօրհնեալ երկրորդ ձերում, որ ի բազում ամաց հետէ ամայացեալ կայր [1]), ոգևո... խնամօք արքային օրհնեցելոյ և մերովս իսկ ակնարկութեամբ վերստին շինեցաւ և նորոգեալ պայծառացաւ, յորում.. զԱբրահամ աստուածաբան վարդապետն և արհիապատիւ եպիսկոպոսն առաջնորդ եգեալ հաստատեցաք»։

Եւ այլ շատ ու շատ նոր շինութիւններ ու նորոգութիւններ կատարուեցան Ղուկասի ձեռքով. 1797-ին գրում է Ադրանա Իւենկանցի Ստեփան. նոս ամիրային, թէ վերնայարկերը շինեցի, բազում ջանիւ և ծախքով սենեկաց յետին որմն յետ գնել ետուք և մեծացուցաք, և զխախուտսն նորոգեցաք, զի զվերնայարկն ևս շինել տայցեմք. բայց երբ յաջողեցաւ մեզ առնել, վասն զի, գրում է նա, աշխարհակործան բռնաւորը յառնելով մեր կողմերը, տեսակ տեսակ վնասներ ու նեղութիւններ հասնելով մեզ, այնքան տագնապեցինք, մինչև անյոյս լինել և մեր կեանքի մասին, ուր մնաց թէ գազանների մէջ գեռ շինուածներ էլ կառուցանել. ուստի և այդպիսի բոլոր գործերը ընկած մնացին երեսի վերայ...։

[1]) Ճիշտ այնպէս, ինչպէս կայ այժմ։

Ժ.

Ղուկասը գրաւեր էր ի ոսկւոյ ձառս

Ուբեանցն ու Մսերեանցը համարում են Ղուկասին առնուսումնասէր։ Ուբեանցի առարկութիւնները ծագում են նրանից, որ սա աղգական լինելով Սիմէոն կաթուղիկոսին, գէպի նոր կաթուղիկոսը տածում էր աւելի պակաս յարգանք քան իւր աղգականը և ցանկանում էր նորի յարգը նուազեցնելով նախորդին առաւել մեծացնել. իսկ Մսերեանցը աստւլիսների վերայ էր իւր խօսքերը հիմնել։

Ղուկասի թշնամիները նորա անուսումնասէր լինելը ճգնում են ապացուցանել այն հանգամանքով, թէ Ղուկասը յաճախ կրկնում է եղել այս խօսքերը. «Այս տունը մեծ է. ինձ մարդիկ են հարկաւոր կառավարելու. իմ միաբաններս եթէ Սուրբ ես Տէրն ու Հայր գրքածը գիտենան, ինձ բաւական է, ես

փիլիսոփայ միաբան չեմ ուզում» [1]։ Սակայն ինչքան պիտի զարմանար հեղի նակն իւր տիգ խօսքերի վերայ, եթէ մի րոպէ ի նկատի ունենար Սիմէոն կաթուղիկոսի մի կոնդակ, որ տպում ենք ներկայ հատորում (տես Ե. յաւել.) և ուր այն անձը, որի ուսումնասիրութիւնը բարձրացնելու նպատակով Ղուկասին տգէտ ու անուսումնասէր է կոչում, ճիշտ միևնոյն խօսքերն է կրկնում. «Ի յարտաքին վիճական, գրում է Սիմէոն կաթ. Կ. Պօլիս, զայնպիսի անձինս կարգիցէ Առաջնորդ, որք փորձեալք իցեն ի հաւատս և ի կրօնս ըստ Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, և ի վարս պարկեշտս, զի յաւէտ է տգէտն որ ըստ հաւատոյն ուղիղ իցէ եւ ըստ վարուցն սպարկեշտ, քան զիմաստունն սնապարծ որ ըստ հաւատոյն ծռեղ իցէ եւ ըստ վարուցն անսպարկեշտ»։

Ընդհակառակն Ղուկասը և գրասէր էր և ուսումնասէր. մէկ կողմ թողնելով այն բազմաթիւ պաշտօնական գրագրութիւնները, որոնց անձնատուր էր երջ. Հայրապետը, մեր «Դիւան»-ի Ա.-Բ. գրքում քաղուածքներ բերինք, որոնցից պարզ հետևում է, որ նա ունէր և մասնաւոր գրագրութիւններ, որոնց մեծ մասը Հայ թշուառ ժողովրդի բարեկեցութեան էր վերաբերում. գրագրութիւններից պաշտօնականների նախարտակները կազմում էր Անանիայն (որ ձեռնադրութեան ժամանակ անուանեցաւ Թադէոս), իսկ մասնաւորները գրում էր ինքը իւր ձեռքով։ Արդեօք բաւական ապացոյց չէն այդ բանին նորա խօսքերը ուղղած Հնգկարնակ «Նամիը խանին»... չեզև մեզ հանգիստ ի մի կողմանէ զբաղմունք գրելեաց և ի մի կողմանէ ևս վրդովմունք»։

Նա պահպանեց և Սիմէոնի հիմնած տպարանը, ուր նորա օրօք տպուեցան

1. Սիմէոն կաթուղիկոսի Պարապվճար ստուար հատորը (որի միայն 9 ֆօրման տպուել էր Սիմէոնի ժամանակ)։

2. 1784-ին Խաչիկ իշխանի ծախքով ժամագիրքը։

3. 1787-ին Յովսէփոս,

4. 1791-ին Ջուղայեցի Յոհաննէսյան աղալի ծախքով՝ Ձեռաց շարականն։

5. Մաշտոց։

Սոքա լոյսնիներն են, իսկ ինչ որ մեզ չէ հասել կամ լիշատակութիւն չկայ կոնդակների մէջ չգիտենք. վերևից պարզ է սակայն, որ տպարանը պահպանուել է 1780 թուից մինչև 1791 թիւը։

Յայտնի է, որ Ղուկասի օրով հիմը գրուեցաւ առաջին Հայ լրագրին, որ էր Մադրասու «Ազդարար» ամսագիրը. մենք լսել ենք, որ ներկայումս Հնդկաստանի Հայաբնակ տեղերում բաւական թուով Ղուկասի գրութիւնները կան, որոնցից երևում է, իբր թէ սա է եղել Շմաւոնեան Տէր Յարութիւնին խորհուրդ տուողը մի այդպիսի հրատարակութեան ձեռնարկելու. եթէ ստոյգ է այս լուրը, որ մենք հրատարակում ենք վերապահութեամբ, այն ժամանակ Ղուկաս կաթուղիկոսի արժանիքը կրկին չափով պիտի բարձրանայ ամեն մի հայի աչքում։

ԺԱ.

Աթոռային զարդերի առարուժը



որ ծոյս ընթացքում մենք տեսանք, թէ քանի՛ բռնաւորներ Ղուկասի օրօք յաջորդակում էին հայրենական երկիրները և աւերում. դոցա մէջ ամենից ահռելին Ներքինի կոչուած աղա Մահմատ-Խանն էր, որի գործած սարսափները Թիֆլիսեցի ծերերը այժմ էլ սարսուռով են պատմում, իրանց հայրերից լսած լինելով։

[1] Ես երեանց. պատ. կթ. Էջմ. եր. 12.

Մահմատ Հասան մեծ բռնաւորի որդի աղայ Մահմատ խանը, իւր հետ ունենալով Քեռլբալի խանին մեծ զօրքով Պարսկաստանից Ատրպատական անցաւ, և անցնելով Երասխ գետը՝ պաշարեց Շուշուայ բերդը. իսկ իւր եղբայր Ալիղուլի խանին 12,000 զօրքով Նախիջևանի վերայ Երևան ուղարկեց։

Նոյն աւերածութեան, ինչ որ եկաւ Թիֆլիսի գլխին, պիտի ենթարկուէր և Մայր Աթոռն ու շրջակայքը։

Ղուկասը, որին ժամանակակից պատմիչներից մէկն անուանում է «այր խորախորհուրդ և զգոյշ», գեռ 1794 ին, երբ լսում է աղա Մահմատ խանի յաոչխաղացութիւնը, միաբանից ժողով գումարելով, էջմիածնի բոլոր մեծագին և հաղուագիւտ զգեստները, անօթները, այլ իրեղէններն ու պատուական գրքերը 21 սայլով Թիֆլիզ ուղարկեց, որոնց մէջն էր և Եփրեմ Արքեպիսկոպոսի Հընգկաստանից բերած յաղճապակեայ և ոսկեջրած ըմպանակները, պատշաճաւոր մակագրութիւններով, իսկ ինքը ծերունի Հայրապետը «երբև քաջ հովիւ հոգւոց գնելով զանձն իւր ի վերայ Հօտին և հարսին հոգևորի» [1]) մեծագին ընծաներով գնաց խանի բանակը և ս. Աթոռն ու ժողովուրդը ազատեց նորա ապագայ աւերումներից, տալով և գրաւական փրկանք իրան Խանին և նորա մարդկանց։

Ս.դա Մահմագ խանը Արցախից Թիֆլիզ արշաւեց, և կողոպտելով ամեն ինչ, յափշտակեց նաև էջմիածնի 6 սայլով կալքը և գերի տարաւ Թիֆլիզի առաջնորդ Անկոթ մականուանեալ Մարտիրոս եպիսկոպոսին. սակայն Երևանցի Հաջի Ջաֆար բէկ իշխանը [2]) գնաց նորան և ուղտի վերայ նստացնելով ուղարկեց էջմիածին։

Ղուկասը լսեց որ Մարտիրոսը ս. Աթոռի ինչքը թողած միայնակ գալիս է էջմիածին. ուստի և իսկոյն մի նամակ ուղարկեց ճանապարհին, թէ ուր են տարուած ս. էջմիածնի թանկագին զարդերն ու անօթեղէնները, որոնք գըտնուում էին նորա մօտ. Մարտիրոսը նամակը ստանալուն պէս երկիւղից վախճանուեց, իսկ Հայրապետն այնուհետև բազմաթիւ հայ և վրացի գերիներ աթոռային գրամով յետ գնեց գերիներից և ստիպուած եղաւ բազմաթիւ գրագրութիւններով խուզարկել աթոռապատկան իրերն և ում մօտ ինչ գտնում էր սուղ գնով յետ էր գնում Աթոռի համար։ Հետաքրքրական մանրամասնութիւններ կան այդ մասին գրքիս բնագրի մէջ, «Գրեցաք զթուղթ առ Դօլվաթլու խանն և առ ազնիւ սիրելին մեր պ. Մէլիք Մէջլումն և առ պ. Աւետիքն և..., գրում է նա Գեանջայու Սարգիս կաթուղիկոսին, զի երեքեանդ ի միասին առանձնաբար տեսանէք զթագն և զայլ իրսն... զի սրբազանից Հայրապետաց յիշատակք են և մեծարգոյ խանն զպատիւ ս. Աթոռոյս պահելով կամեցեալ է գարձուցանել, մեք ևս յօժարէմք աւնուլ, թէև պարտուք, միայն թէ ըստ արժողութեան իցէ գինն» և այլն։

Եւ այսպէս ծանրագնի յետ առաւ գրեթէ ամբողջ կողոպուտը։

ԺԲ

Ղուկասի կաթողիկոսութեան վերջին տարիներն ու մահը



Եզ թւում է թէ Ղուկասի վերայծանրը տպաւորութիւն գործեց Աղա Մահմագ - խանի արշաւանքն ու նորա հետևանքները. վանդի հետևեալ 3—4 տարիներում մենք չենք տեսնում նորանում այն եռանդուն գործու-

[1]) Ճիշտ ակարան ձեռ. Աւետար. ի վանս ս. Թոմայի առ. յԱգուլիս. թ.1796.

[2]) Խուբանց։

նէութիւնը, ինչոր նա ունէը մինչև այդ ժամանակ։

Հետևելով նորա վերջին գրագրութիւններին, որոնք զգալի կերպով նուազում են առաջին տարիների հետ համեմատելով, և աչքի առաջ ունենալով, որ նա վերջին տարիները գրեթէ շարունակ հիւանդ էր, գալիս ենք այն եզրակացութեան, որ այդ աշխարհաւեր պատերազմը իւր դրոշմը դրեց ե. Ղուկասի առողջութեան վերայ։

Ղուկասը էլ չէր կարողանում քայքայուած երկրին ապահովութիւն շնորհել խաների ու վրաց արքայի օգնութեան վերայ յոյսը գնելով. այդ էր անշուշտ պատճառը, որ նա ամեն կողմից յոյսը կտրած՝ գիմում է Ռուսիոյ Պաւել Ա. Կայսեր, շնորհաւորելով նորա գահակալութիւնը և խնդրելով նորա հովանաւորութիւնը, առ որ ստանում է 1798 թ. փետրուարի—ին հրովարտակը։

Իսկ վերջին տարին նա գրեթէ շարունակ հիւանդ էր և գործերը վարում էր տեղապահ Մինաս Արքեպիսկոպոսի ձեռքով։

1899 թ. աշնան նորա հիւանդութիւնը ծանրացաւ և երբ տեսաւ որ բժիշկները ոչինչ չեն օգնում, պատուիրեց դուռ վարձը տալ և արձակելով իւր խոստովանահօրը մեծ զգաստութեամբ խոստովանուեց և ս. հաղորդութիւն ընդունեց ասելով, թէ «Իմ բժշկութիւն վիրաց մնաց ի կենարար մարմին և արիւն Տեառն»։

Այնուհետև երանելին հետզհետէ սկսաւ նուաղել. երբեմն երբեմն նա ի նկատի ունենալով Արղութեան Յովսէփ Արքեպիսկոպոսի գրութիւնները, որոնցից նա գուշակում էր որ Յովսէփը ձգտում է կաթուղիկոսութեան, ասում էր ինքն իրան. «վայ քեզ Ղուկաս աբեղայ, զինչ շահեցար ի կենացդ»—երբեմն էլ թէ «ոհ ունայնութեանց աշխարհի. ես զինչ շահեցայ՝ եթէ դու զինչ շահիցիս Յովսէփ վարդապետ» [1]։

Այսպէս հետզհետէ աւելանալով նորա հոգը թէ երկրի ու Աթոռի ապագայ վիճակի մասին և թէ իւր յաջորդի, որի վերայ ընկնում էր այդպիսի մի ծանրը լուծ, իսպառ նուազեցրին նորա ոյժերը և մեկ 27-ին գիշերուայ $8^1/_2$ ժամին առ Տէր փոխուեցաւ երանելի Հայրապետը։

Երևանի իշխող Մահմադ խանը, լսելով նորա մահը՝ իսկոյն մի թիրմայ գօտի շալ ուղարկեց իրրև գիտազարդ, առանձին մխիթարական թղթով յանուն միաբանից մի տաճիկ երևելի անձի ձեռքով, որ անձամբ փութց այն հանգուցեալու դիակի վերայ, և ամսի 28-ին, Որգւոց Ուրոտման տօնի օրը մեծ հանգիստով թաղեցին նորա մարմինը ս. Գայիանեան վանքի գաւթում. աւագ լուսարար Գրիգոր եպիսկոպոսը մի ազգու դամբանականով գրուատեց երջանիկ Հայրապետի անխոնջ և անձնուէր գործունէութիւնը։ Նորա շիրիմը զարդարուեցաւ մի տապանաքարով, որ հետևեալ արձանագրութիւնն է կրում.

Ծարկ դամբարանիս է վեհին Մեծի,
Տեառն Ղուկասու կաթուղիկոսի.
Բնիկ գաւառաւ էր սա Կարնեցի,
Հանդարտակենցաղ եւ ջանիւք քարի.
Թէպէտ դիպեցաւ դառն ամանակի,
Պատեցեալ վշտօք ըստ փողոյն մեծի.
Այլ յօրէ կոչմանն եղ իսկ ի մտի,
Շքեղազարդել զգահն հրաշալի.
Որ եւ ետ ծաղկել կարի սխրալի,
Զմէջ տաճարին Միածնաիջի.
Նաեւ նորոգել ետ շուրջանակի,
Շինեալ եւ զայլ շէնս՝ որք են իսկ յայտնի.
Ապա ընկալեալ զվախճան ըարի.
Դիմեաց առ Քրիստոս յոյսն ամենայնի.
Ծորմէ ընկալցի զվարձս ըարի,
Եւ յարքայութեան նորին հրճուեսցի.
Ամփոփեցաւ յամի Տեառն 1799, ի
ղեկտ. 29,
ի տօնի Որդւոցն Որոտման։



[1]) Պատմ. կաթ. Դաւթի՝ և Դանիէլի ի Մանուէլէ վ. Կիւմիշխ. անտիպ։

ՄԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՆԵՐ

(ՔՆԵՓԱԲՔ)

—

(Ընդմ. միաբանից մի քանի գրութիւններ)



ՊԱՒԼՈՍ ԿԵՐՊԻԿՈՍԻ ՇԻՄՇԵՑՆ ՀԱՅՈՑ

Ծն. 1780 օգ. 2. | † 1799 դեկտ. 28.



1780

Թուղթ վասն վախճանման Հայրապետի ի մերձակայ քաղաքս գրելի. մինչչեւ նոր կաթուղիկոս օծեցեալ եւ ընտեալ իցէ յԱթոռս. նախ մխիթարութիւն վասն հանգուցելոյն, ապա յորդորումն վասն նորոյն, զի համեցեալ ընդ ընտրութիւնն եւ օծումն առաքեսցեն զթուղթ համահաճակաւն, առ ի կամակցութիւն մեզ՝ եւ ի միաբանութեան։

Լուսակառոյց և ի շնորհաբուղխ սրբոյ Աթոռոյս Աստուածածիջէ, և ի յոգենահրաշ Աչդոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և յամենից Աստուածակիր սրբութեանց և սուրբ նըշխարաց՝ որք դոն ի սմա։ Եւ ի սոցունց սպասաւոր և պաշտօնեայ համայն քահանայակարգ մարան եղբարցս, այսինքն յեպիսկոպոսաց, ի վարդապետաց և յաբեղայից։

Ցորոց ժամանեցեալ գիր սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, և նամակ պատպանութեան, հանդերձ Աստուածպչին ամենատաւ օրհնութեամբն՝ նախանամութեամբն և ողորմութեամբն, ի վերայ սիրելի և հոգեւոր որդւոցդ՝ և հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյս և տէրունի ժողովրդոցդ սորին, Հայկասեր՝ լուսաւորչակրօն և միաբնադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս, որք կայք զետեղեալք ի տիրանամ քաղաքդ Կարս, Բսյաղիա, և յամենայն նահանգս և ի գիւղորայս դորին, ի համայն վիճակս սրբոյն Յովհաննիսի վանիցն։

Ցորս կառուցեալ Քրիստոսահիմն սրբոց եկեղեցեաց և եկեղեցականաց դասուց, ուղղաշաւիղ Առաջնորդաց, հանճարափայլ վարդապետաց. մեղսաքաւիչ քահանայից, ուսումնասէր սարկաւագաց, և համայն եկեղեցական մանկանց, բարեպաշտօն և փառազարդ իշխանաց և դօլվաթաւորաց, իմաստնախոհ վաճառականաց, իրաւասէր Ռէյիսնեբրաց, հարազատ և հաւատարիմ դանձապետաց և երիցփոխաց, վայելչագործ Արհեստաւորաց, Արդարամատոյց Հողագործաց, և այլ առհասարակ օրհնեալ ժողովրդականացդ ամենից մեծաց և փոքերց, խնդալ ի տէր յարաղուարճ ցնծութեամբ։ Ամէն։

(Շնորհ.)

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ ծանուցումն լինի սիրելեացդ մերոց՝ ի Քրիստոս. և հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ըստ որում սահման անփոփոխելի եդեալ է յամենեցունց ցեառնէն ի վերայ ընութեանս հոգածնի՝ վճարիլ մահուամբ ի կենաց աստի, ըստ այնմ, հող էիր, և ի հող դարձցիս. վասնորոյ՝ և սրբազան հովուապետն մեր և հայրն հասարակաց՝ ըստ նոյնոյ արարչադիր անլուծանելի վճռոյն՝ վճարեաց զկեանս իւր

առօրեայ՝ և փոխեցաւ առ. բաղձալին իւր Ճիսուս, ի վայելումն անղբաւ կենացն, ի ԻՄԻԹ թուոջս մերում՝ ի Ճուլիսի Իզ, յօր Վարդավառ կիւրակէին, զարմանալեաւ հեշտութեամբ և զգաստութեամբ, և արաստուհեծ խոստովանութեամբ և հաղորդութեամբ։ Եւ այսպէս կոչեցեալ ի կոչնաւետնէն բարւոյ՝ եթող զմեզ որբս և ողորմելիս, և էարկ ի սուգ և ի արամութիւնս անփարատելիս։ Քանզի ոչ կա լուեալ իսկ էք և տեսօղք ևս լեալեն ի ձէնջ, (մանաւանդ թէ՝ շատդ տեսեալ ևս էք աչօք,) թէ որպիսի քաջութեամբ և արիութեամբ կառավարեաց զսուրբ Աթոռս, և յամենայնի նորոգեաց և զարգարեաց, մանաւանգ թէ ի յոյսպիսի ցաւագին ժամանակիս և յաւերս երկրոջս որպիսի ջանիւ պահեաց զսուրբ տունս և զմեզ անվնաս՝ օժանդակութեամբն Աստուծոյ։ Սակս որոյ՝ անմխիթար կսկիծ սիրեաց մեզ ածս ան առնելի։ Այլ զի՝ նչեմք կարօղ առնել, եթէ ոչ զԱստուծոյ միայն գոհանալ. զի նա ինքն եւ մեզ զայնպիսի քաջ և արի հովիւ, և նոյն ինքն էառ, ուրեմն ըստ Ճօքայ՝ եղիցի անուն նորա օրհնեալ։ Որպէս իւրով անհուն ողորմութեամբն ողորմեցաւ նմա, լուսաւորեցէ զՀոգի նորին՝ և հանգուսցէ՝ այցելութեամբ ի լոյս երեսաց իւրոց, և զգլուխ սիրելեացդ ողջ պահեսցէ։ Իսկ յետ վախճանի լուսահոգւոյն, ժողովեալ ի մի վայր ճեացորդք ժողովրդեան երկրիս, մեծք և փոքունք, եկին ի սուրբ Աթոռս, ընդորս և մեր ամենեցուն միաբանեալ և միակամ և միախորհուրդ եղեալ սկսաք խորհիլ զօգուտն սրբոյ Աթոռոյս, և զպաշտաձեւսն ժամանակիս. որպէս զի ի չարաշաս ժամանակիս և յաւերս և յանէր երկրոջ՝ երկարապէս մի՝ ձեռացուբ առանց հոգևոր այցելութիւ։ Քանզի՝ մինչդեռ կենդանի իսկ էր հոգևոր հովուապետն մեր՝ մարդածեմ գայլք անողորմ զմեզ գիշատեալ ջանային, ապա ո՛րքան ևս զկնի վախճանին էին առնելոց, որոց և զնշանսն իսկ ցուցին (որպէս պատմելոց է գրաբեր եղբայրդ մեր հանձարաշատ վարդապետդ)։ Եւ այլ գըլխաւոր երկիւղք ևս կային, որք մեծապէս ընդասելոց էին զսուրբ Աթոռս, և սուգ մեծ ածելոց ի վերայ մեր, զորս ոչ կարեմք գրել։ Սակս սրոյ թէպէտ սովորութիւն էր սրբոյ Աթոռոյս գրել ի մեծն Պօլիս, և նոցին խորհրդակցութեամբն ընտրել զկաթուղիկոս, բայց այս ստացեալ պատճառաք ոչ եռուն մեզ միջոց և հանգստութիւն, զի այսպէս առնէաք, Մանաւանդ զի զոր արժան և պատշաճ տեսեալ այսմ շնորհի՝ ընդրեալ կամէաք միաբանութեամբ՝ ի յաստիճան կաթողիկոսութեան, ասա ներկայ գըտանեցաւ, որ էր բնիկ միաբանն սրբոյ Աթոռոյս և նախկին նուիրակն և առաջնորդն մեծի մայրաքաղաքին Զմիւռնոյ հոգեընտիր և մաքրակենցաղ Հայրն մեր ըստ հոգւոյ աէր Ղուկաս Արքեպիսկոպոսն։ Զորս լուսահոգի Հայրապետն մեր ևս պատշաճ և արժան տեսեալ այսմ աստիճանի, մինչև ցայժմ ոչ յղեաց զսա ի յարաքին գործս, այլ այսու դիտմամբ պահեաց ասա առ ինքն, թէպէտ և չտեսէր ինչ երևելի։ Իսկ ի ժամ փրկագործ հաղորդութեանն ասացեալ էր մեզ կամակաւ ի ձեռն խոստովանահօրն, կացուցանել զսա ի յաստիճան Հայրապետութեան առնս Թորգոմայ, զի զսուրբ Աթոռս և զմեզ կառավարեսցէ՝ ի յանախրացեալ երկրոջս, և չարաշաս ժամանակիս։ Ուստի և մեր լսելով զկամակ լուսահոգւոյն՝ և ի դառն ժամանակիս՝ ի մեծ և ՛ի գլխաւոր միաստուց ևս երկնչելով և գիտելով ևս, զի և մեծին Պօլսոյ իշխանապետք և այլք գլխաւորքն ամենեքեան՝ քաց ի սմանէ զայլ ոք ոչ են կամելոց ի սոյն ժամանակիս, ապա՝ ըստ նախասանօրինութեանն Աստուծոյ և ըստ ազդեցութեան հոգւոյն սրբոյ՝ համակամ և միաբան խորհըրդով կոչեցաք զսա ի յաստիճան կաթուղիկոսութեան։ Որ թէպէտ բազմիցս հրաժարելով ընդդիմացաւ կամաց մերոց, և ոչ կամէր, այլ մեք ոչ թողաք զսա ի կամ իւր։ Ապա ի բազմաց դիմաց բացեալ առանելով վասն մեր զդրունս մեծամեծ միաստուց, որ թէ՞չ էաք օծեալ զսա փութապէս լինելոց էին անկարծիք, վասնորոյ՝ այլ ո՞չ կարացաք յերկար ժամանակս պահել զսա առանց օծութեան. թէպէտ ինքն այսմ ևս չկամեցող լեալ՝ հրաժարիւր, այլ միաբան բազմութեամբ արգելեալ զսա ի կամաց իւրոց, շնորհօք ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ և ողորմութեամբ նորին՝ ի յա-

ռաջիկայ կիւրակէին երկրորդում՝ որ էր օգոստոսի Ը, օծաք զսա ՚ի կաթողիկոսու-
թիւն բոլոր տանս Թորգոմայ, և գերագահ Աթոռոյս սրբոյ Էջմիածնի։ Որում վայելել տացէ աէր բարեաւ զգերագոյն աստիճանն իւր սուրբ, և շնորհեսցէ մեզ ընդ երկայն աւուրս, ՚ի պահպանութիւն և ՚ի պայծառութիւն սրբոյ Աթոռոյս. և ՚ի պարծանս և յուրախութիւն օրհնեալ ազգիս մերոյ։ Ուրեմն՝ աչք սիրելեացդ մերոց ՚ի լոյս եղիցի, և ՚ի յերկնաձիր պարգեւաց սրբազնագոյն շնորհաբաշխութեանն այսորիկ ձեզ եւս զմասն բարի հանցէ Աստուած իւրով ողորմութեամբն։ Եւ յետ այսմ այսպէս լինելոյ՝ հարկաւոր իմացաք գրել զայս Թուղթ առ սիրելութիւն ձեր որպէս և յամենայն տեղիս. նախ՝ առ ՚ի հոգեւոր միխթարութիւն և յուրախութիւն ձեզ. և երկրորդ՝ զի և դուք գիտացեալ զմեծութիւն օգտիցն զորս խորհեցաք և արարաք միաբան բազմութեամբ վասն լուսաւոր ծնողիս ձերոյ սրբոյ Աթոռոյս՝ լինիցիք կամակից մերոց կամաց և խորհրդոց, և ըստ օրինի և կարգի՝ գրեցէք զբազմակնիք համահաւանական և շնորհաւորական Թուղթ առ սրբազան Վեհս մեր նորոգ, որպէս ահա ինքն զձեզ անդրանիկ օրհնութեամբ շահեցաւ։ Ուրեմն այսպէս արասջիք հարազատ որդիական սիրով. և առաքեսջիք աստ (ընդ եղբօրդ մերում... խոհեմամիտ վարդապետիդ) որպէս զի՝ միշտ վայելօղք լինիցիք հոգեւոր օրհնութեան սորին, և մերոյս համախումբ միաբանութեան, և հոգեւոր շնորհաց սրբոյ Աթոռոյս։ Որք և համաձայն ընդունօղքդ և լսօղքդ և հետեւօղքդ մերոյս ընտրողութեան, եղիջի՛ք օրհնեալք Աստուծոյ և ՚ի սրբոյ Աթոռոյս ՚ի մէնջ Ամէն։ ՚Ի ՌՄԻԹ՝ ՚ի յօգոս.։

Թուղթ ՚ի կարին, ևախքան զներթալն մեծ մահսարին ի մեծն Պօլիս. յաղագս վախճանման Տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսին եւ ընտրութեան եւ օծման Տեառն Ղուկասու կաթուղիկոսին։

՚Ի Լուսակառոյց և ՚ի Տիրակերա Մեծ ծի և սրբոյ Աթոռոյս Էջմիածնէ, և ՚ի յոգնահրաշ Աջոյ լուսաւորին հոգւոց մերոց սրբոյն Գրիգորի՝ և ՚ի համայնից Աստուածակիր սրբութեանց և սուրբ նշխարաց՝ որք գան ՚ի սմա։ Եւ ՚ի սոցունց սպասաւոր և պաշտօնեայ միաբան եղբարց և ՚ի գործակալաց։ Ծորոց ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, հանդերձ ամենառատ ողորմութեամբ և նախախնամութեամբն Աստուծոյ ՚ի վերայ սիրելեացդ մերոց ՚ի Քրիստոս, օգտասէր և հարազատ որդւոցգ սրբոյ Աթոռոյս՝ ՚ի յԱստուածախնամ քաղաքդ Կարին եղեալ համօրէն սրբասէր քահանայիցդ։ Այլեւ Աստուծով զօրացեալ բարեպաշտօն և մեծահաւատ իշխանացդ. մահտեսի Կիրակոսիդ, Հաճիբաբայիդ, մահտեսի Կարապետիդ, Գայի Ճովաննէսիգ. սրբոյ Աթոռոյս վէքիլ պարոն Հայրապետիդ, մահտեսի Խաչատուրիդ, սրբոյ Աթոռոյս գանձապետ Եօզդ Պետրոսիդ՝ և այլոցդ ամենեցունց, խնդալ ՚ի Տէր յարաժամ։ Ամէն։

(Շնորհք.)

Եւ ընդ սիրոյ (և այլն որպէս ՚ի վերին Թուղթն է).

Եւ յետ այսմ այսպէս լինելոյ, սկսաք ըստ օրինի ղմահսար և զայլ Թուղթս հոգալ՝ զի հանդերձ անդրանիկ օրհնութեամբ սրբազան Վեհապետիս մերոյ յղեսցուք ՚ի մեծն Պօլիս և յայդր և յայլ տեղիս ընդ մեր վարգապետիս։ Բայց որովհետև այս ՚ի քանի մի աւուրս յետանալոց էր, վասնորոյ՝ հարկաւոր գիտացաք փութով գրել սիրելեացդ զԱստուածահաճ եղելութիւնս զայս, զի գիտասջիք զիսկութիւն բանին։ Քանզի գիտեմք, զի այլ և այլ կերպիւ լսելով՝ անկանելոց էք ՚ի տարակուսանս, վասնորոյ՝ առ ՚ի գիտել և միամիտ ձեզ զայս գրեցաք պյժմ. յետոյ ընդ մահսարքեր վարգապետին ՚ի նորոգ սրբազան Վեհապետէս մերմէ եւս գալոց է առ ձեզ Թուղթ օրհնութեան։ Բայց խնգրեմք ՚ի սիրելեացդ մերոց, զի ՚ի ճշմարիտ հարազատութիւնս ձեր որ առ սուրբ Աթոռս, հաստատուն և անշէղ ձեռասջիք, և գործակալքդ ՚ի գործս ձեր արի և ժիր կացջիք, ջանալով զօգուտն սրբոյ Աթոռոյս՝ որպէս և ջանացեալ էք, զի զվարձս բարիս առնուցուք յԱստուծոյ. և ղշնորհս սրբոյ Աթոռոյս՝ և զօրհնու-

Թիւնս սրբազան Վեհապետիս մերոյ։ Այլեւ լուսահոգի Հայրապետն մեր ջանաց Թէպէտ յղել վասն ձեր զառաջնորդ՝ որպէս եւ դուք խնդրեալ էիք, բայց ձախորդութիւնք ժամանակիս՝ մանաւանդ անձնական ակարու. Թիւնն իւր՝ ոչ Թողին նմա բանալ զչս և հոգս առնել. և աւժմ այսպէս եղև։ Վասն որոյ չեա աւուրց ինչ ՛ի խաղաղանալն փոքր մի սրբազան Վեհապետիս մերոյ՝ յղեցից է վասն ձեր զնոր Առաջնորդ. Գրեցաք ղի միամիա լինիջիք։ Ողջ լերուք ՛ի Տէր. զօրացեալք ՛ի նմն միշտ։ Ամէն։ ՛ի Ւմմիթ. ՛ի յօգոստոսի Ե։

---

†ԱՐՔԱԾԻՒ ՄԵԾԻ ՀԵՐԱԿԼԱՑ։ [1])

Թուղթ առ Հնդակն արքայն վրաց. զկնի օծման Տեառն Ղուկասու կաթուղիկոսին, նոյնպէս ծանուցանելով զմահ լուսահոգի Սիմէօն կաթուղիկոսին, եւ զօծումն իւր, հանդերձ պատճառաւն. որպէս եւ ի վերոյ գրեցաւ։

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Ղուկաս կաթուղիկոս, և ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց Առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, նաև՝ մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի։ Ցորմէ ժամանեցի Թուղթ անանցանելի օրհնութեամբն Հօր Աստուծոյ. խաղաղացուցիչ և միարար սղջունիւն-Միածնի որդւոյ, և Հոգւոյն սրբոյ։ Այլեւ՝ Աստուածհրաշ զօրութեամբ և շնորհօք կենսատու խաչին Քրիստոսի, և նորին կողմանէ և փրկագործ գեղարդեանն սրբոյ և դերահրաշ տեղւոյս իջման նորին սրբոյ՝ Առաքելականի Աթոռոյս և Աստուածամերձ և շնորհաբաշխ Աջոյ Հօրն մերոյ բազմերախտի՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։ Եւ Աստուածային փառացն հանդստարան և հրաշագործ նշխարաց և դամբարանաց սրբուհեաց կուսանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց. և այլոց ամենից Աստուածակիր սրբութեանց և սուրբ մասանց՝ որք դոն ի սուրբ Աթոռոյս, ի վերայ օրհնեցելոյդ ի Տեառնէ Աստուծոյ և զօրացելոյդ միշտ ի նմն յատկեղ սիրելւոյդ և խնամածուիդ մերոյ՝ և ընիկ բարեկամիդ և օգտասիրիդ Աթոռոյս մերոյ սրբոյ, բարեպաշտի և աստուածասիրի, քաջազօրի և արիասրտի, բարեյաղթի և Թշնամավանի վերոգրեցելոյ + եւ Աստուածախնամ տան քումմէ և ընակութեան, Տերամբ Յիսուսիս օրհնեցեալ և զօրացեալ որդւոցդ և դստերացդ և համայն ընտանեացդ. ամենից տոյգ սիրելեացդ և հարազատիցդ՝ նաև զօրապետացդ Քրիստոսասիրաց և զօրացդ համայնից։ Եւ ամենայն ընդ օրհնեալ ակերուխեամբ քով եղելոցն, և ընդ քև հովանաւորելոցն, խնդալ ի տէր մեր Քրիստոս ի յոյն բնաւից։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ Աստուածայնոյ և անդրանկի օրհնութեան և ողջունաւորութեանս, ծանուցումն լիցի յատկադոյն սիրելւոյդ մերոյ՝ և խնամածուիդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի մինչ աստ իսկ էիր օրհնեալ Արքայդ, աստեր զսրբազան Հայրապետն մեր՝ որ ի մէջ հիւանդութեան էր։ Իսկ՝ յետ չուելոյ քոյ աստի՝ նոյն հիւանդութիւնն սկսաւ օրըստօրէ առաւելուլ, որով մաշեցաւ խսպառ և հատաւ յամենայն զօրութենէ յերկար ժամանակս։ Եւ մինչ հասաք ի յուլիսի ամսոյ ԻԶ. (որ ըստ սրբոյ եկեղեցւոյս մերոյ աւանդութեան է մեզ ոօն Այլակերպութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ.) ի չորրորդ ժամու ցերեկեանն՝ յոյժ բարի մահուամբ փոխեցաւ առ աէր. մեծաւ զգաստութեամբ. և օրհնելով զԱստուածապահ թագաւորութիւնդ ձեր՝ և զթագաժառանգ որդիսդ Աստուածազօր։ Իսկ՝ նախքան զվախճանիլն՝ (զոր իմացաւ իսկ լուսահոգին.) մինչ եաես զերկիրս դեռ ևս չդաեալ զխաղաղութիւն. և զժամանակս դառն և դժնեայ, և զայն ևս՝ զի յայսպիսում կիտոջ՝ ձեալոց էր սուրբ Աթոռս յանտիրութեան. վասնորոյ՝ նախահոգաբար կտակեալ էր ի ձեռն խոստովանահօրն ի ժամ փրկական հաղորդութեանն. զի զանարժանութիւնս մեր կացուսցեն յայս աստիճան. (որում թէպէտ չէաք բաւական.) զի անտիրութիւն տանս սրբոյ մի երկարեսցի յայսպիսի ժամանակի։ Եւ զի յետ վախճանի լուսահոգւոյն՝ նկատեալ տեսին միաբանք սրբոյ Աթոռոյս, և իբրու զփորձն իսկ առին, զի անաէր ձեալն տանս սրբոյ՝

ինա՛ մեծ բերէ սմա, քան թէ օգուտ, վասնորոյ այլ ոչ կարացին երկարել զիջողն, և կամ մեծութեան ձերում՝ ծանուցանել. և կամ ըստ բնականին սովորութեան՝ գրել նախապէս ի շրջակայ քաղաքն՝ մանաւանդ ի մեծ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս վասն ընտրութեան նորոգ կաթուղիկոսի։ Այլ միաբանութեամբ ի մի վայր ժողովեալ հանգերձ երկրիս սակաւ մնացորդ քահանայիւք՝ իշխանօք և ժողովրդովք, և համակամ խորհրդով իբրու զայս սեսեալ օգուտ, սկսան կատարումն տալ կտակի լուսահոգւոյն։ Որք և բռնադատեցին իսկ զանարժանութիւնս մեր՝ առնուլ յանձն զծանրութիւն այսր մեծագունի լծոյ։ Որում՝ զիս անարժան սեսանելով իմ, և կշռելով իսկ զակարութիւնս իմ՝ (որ ոչ էի կարող տանիլ) թէպէտ և հրաժարեցայ բազմից, և աղաչեցի ի բաց կալ յինէն, այլ ոչ թողին զիս ի կամս իմ, և մեծագունս բռնադատեցին, առաջագրելով զվնասն տանս սրբոյ՝ թէ դու ես լի նեղոց այսոցիկ պատճառ՝ եթէ յանձն ոչ առնուցուս։ Եւ իմ սեսեալ զլուսահոգւոյ գիմումնն, և զառաջիկայ վտանգն, և զհամախուռն բռնադատութիւն սոցին, ոչ համարձակեցայ առանց Աստուծոյ կարծել, ուստի և ոչ կարացի ձնալ ի կամս իմ, երկուցեալ թէ գուցէ ընդդիմանալս իմ՝ լինի ընդդէմ Աստուածային կամացն, և պատճառ լինիցիմ յիրաւի վնասուց տանս սրբոյ։ Վասնորոյ ակամայ կամօք յանձն առի զնդիրս նոցին, յուսալով նախ յամենամեծ ողորմութիւն և յօգնութիւնն Աստուծոյ, և ապա ի յատուկ ինամս ձերոյ Աստուածասիրութեան. որովք կարողացայց թերևս տանիլ զբեռնս այսորիկ զծանրութիւնս դժուարակրելիս։ Իսկ միաբանք սրբոյ աթոռոյս և ժողովն որ ընդ սուսա, յաղագս պատճառացն ասացելոց ոչ կարացին գոնեայ՝ զօձուն մեր յապաղել, և կամ զլուսահոգւոյ եօթներորդ օրն թաղման անցուցանել. այլ ի նոյն իսկ աւուրն որ էր կիւրակէ և օգոստոսի Բ. զանարժանութիւնս մեր օծին ի Հայրապետութիւն տանս Հայոց։ Եւ ահա ամենից դրեցելոց այսոցիկ զլիագունն և զբացապէսն ի սիրելւոյդ մերմէ Դանիէլ խոհեմամիտ վարդապետէդ իմանալոց ես, զոր այսու օրհնութեան և աղերսական գրով մերով առաքեցաք ի սպաս մեծութեանդ՝ձերոյ. և յայդր իսկ առ մերայինսն հանդերձ թղթովք օրհնութեան. ընդ որում և միաբանք սրբոյ Աթոռոյս գրեցին ըստ սովորութեան զթուղթ բաղմակնիք առ եկեղեցիս օրհնեցելոյ քաղաքիդ յաղագս այսց անցից։ Որդ՝ խնդիր նուաստութեան մերոյ այս է յօրհնեցելոյ Արքայէդ. զի նախապէս յԱստուծոյ գիտացեալ զայս՝ որ զամենայն ինչ առնէ որպէս և կամի, խնամեսցի՛ս ապա զսուրբ աթոռս առաւել քան զառաջինն, և զյառուկ խնամս և զգթութիւնս առ մեղ ևս արկեալ ի գործ՝ օժանդակեսցես գոքօք մերում անկարութեան և նուաստութեան։ Զի զոր ինչ խնամս և զգթութիւնս ցուցեալ ես առ երանելի Հայրապետան մեր նախկինս՝ որովք բարւոքապէս կեցեալ նոցա՝ կառավարեալ են զսուրբ Աթոռս, զնոյնս և առ նուաստութիւնս մեր ցուցանել խնդրեմ, մանաւանդ ևս առաւել քան զայնս՝ յայսմ ալեկոծեալ ժամանակիս, յորում յամենայն ուսաեբէք զխոց սրտից առնումք՝ քան թէ զմխիթարութիւն։ Խնդրեմ ուրեմն լսօղ լինել աղաչանացս. և զ... վարդապետդ ժամ մի յառաջ դարձուցանել առ մեզ միաբանական՝ յորդորական և յուսադրական թղթովն մեծութեանդ, որով յիրաւի մեծագունս եմ զուարճանալոց և զգօրութիւնս սատանալոց, իբրու ի յերկնուստ առաքեալ պարգեւօք։ Եւ լսօղն աղաչանաց ամենից լուիցէ համայնից խնդրուածաց քոց՝ և կատարեսցէ ի բարին։ Ո՞ղջ լեր ի տէր՝ զօրացեալ ի նոյն միտս, ի փառս կենսատու խաչին և ի պարծանս նուաստութեան մերոյ։ Ամէն։ ի ՌՄԻԹ, ի յօգոստոսի։

Թուղթ առ կարսեցի պարոն Գէորգ, վասն մեր նուիրակ ներսէս վարդապետի եւ վէքիլ Հայրապետի ըմբռնիլոյն ի գարին, թէ ահա զիր գրեցաք առ գարնոյ իշխանսն. (որ գոյ ի տետրոջս յառաջ ի... հատարն.) եւ Փաշային եւ Փայատօղլուն եւ Գիւմրիւկչուն, դու եւս միւտարիսին եւ Ծօմանին գրել տուր առ նոսա, զի թերեւս լսիցեն եւ թողցեն։

Ծորմէ սիրով և օգնութեամբ բազմաւ. Քրիստոսական սուրբ ողջունիւ՝ և շնորհիւ սրբոյ իմման սեզոյս Քրիստոսի, ծանուցուաք լիցի աղնիւ սիրելւոյդ մերոյ՝ օգտական և սրտացաւ՝ որգւոյդ սրբոյ Աթոռոյս Տերամբ Ծիսուսիս զօրացեալ պարոն Գէորգիդ։ Զի Թուղթ սիրելութեան քոյ առ մեզ ժամանեաց ի ձեռն կարնոյ փայէկին, և ընթերցեալ ծանեաք ղսրտացաւօրէն գրեալդ ամենայն, որ ընդ արամութեանդ որ յաղագս լուսահոգւոյն՝ ծանուցեալ էիր և զբմբըռնումն կարնոյ նուիրակին և մեր վէքիլ Հայրապետին, որպէս և նոքա ևս դրեալ էին։ Որով նոր ի նորոյ արամեցաք, ածելով զնոր արամութիւնն ի վերայ առաջնոյն։ Ցիրաւի՝ և այս վաստակաւորութիւն մեծ է մեզ, որ արամութիւն ի վերայ արամութեան պատահի, զի չև ևս մոռացեալ զսուգ լուսահոգւոյն, այդ կարնոյ արամութիւն անցքն ևս եղև։ Գոհութիւն Աստուծոյ, որև նայն ինքըն եղերեսցէ ղվախճանն ի բարին։ Արդ՝ սիրելիդ իմ՝ վասն մերոյս անցից, այսինքն վասն լուսահոգւոյ մահուանն, և վասն մերս յաջորդելոյ զաթոռս սուրբ ըստ կամացն Աստուծոյ՝ (թէպէտ և անբաւական էաք.) յամենայս ծԱ գրեցաք յայդր զթուղթ, թէ առ հաստարակութիւն երկրիդ, թէ առ քեզ՝ և թէ առ այլս. և ընդ սիրելի որդւոյն մերոյ Դանիէլ վարդապետին յղեցաք յայդր, և միաբանքն ևս գրեցին զգիր բազմակնիք, որք հասեալ են ի հարկէ յայդր, և տեսեալ և իմացեալ էք։ Ընդ որում կամեցաք թէպէտ առ մուտարիս Աֆանգին և առ Ծոման աղայն գրել զթուղթ, բայց մտածեցաք՝ զի յետոյ ընդ Պօլսոյ Մահտեսանողին գրեսցուք, որ ի հարկէ յայդրէր գալոց յերթալն։ Իսկ այժմուս վասն կարնոյ անցիցն թուղթ գրեցաք ի վերայ Իբրահիմ փաշային, և Խալիլ փաշային, և Գիւմրիւկչուն. նոյնպէս և իշխանացն, զի որպէս և իցէ՝ հոգասցեն և զերծուսցեն, եթէ դեռ չիցեն զերծեալ։ Եւ որպէս գուշ գրեալ էիր, ահա մեկ սիրոյ թուղթ գրեցաք առ դօլվաթլու Միւսաարիսն և առ Ծոմայն աղայն, և վասն Ծովհաննէս վարդապետին և ուղարացն ղյանձնարարութիւնս գրեցաք։ Իսպէզ կարնոյ բանն ևս գրեցաք և շատ իրիջայ արարաք, զի իւրեանք ևս գրեսցեն Իբրահիմ փաշային և Խալիլ փաշային, կամ թէ կամին գիւմրիւկչուն ևս, զի զմեր մարդիկն թողցեն ի բաց. և զայս չեղած և չլսուած բանս մի՛ արասցեն։ Զի այս ո՛վ է տեսեալ որ կաթուղիկոսն մեռանի, ապրանքն միրի [2]) քաշեն։ Մանաւանդ թէ այն ևս իւր ապրանքըն չէ՝ Աթոռինն է։ Եւ այս առնն ևս թագաւորինն է, և սորա գեալուրն և միաբանից ապրուստն՝ թագաւորի ֆարմանով է. զայգ չեղած բանն նոքա է՞ր են առնում, որ այլոց ևս չար սովորութիւն լինի։ Մանաւանդ դոքա ինքեանք ևս չեն անտեղեակ. այլ՝ թէ յիւրեանց հօր ժամանակին և թէ յիւրեանց ժամանակին լսած կլինեն և գիտեն։ Հինն թողցուք. Լատարի դեռ չէ լրացած, որ Ե կաթուղիկոս է վախճանեալ այսինքն Ղազարն, Մինասն, Աղէքսանգրն, Ծակոբն՝ և մեր լուսահոգին։ Այս քանի կաթուղիկոսացն մեռանելովն ե՞րբ էր եղած այսպիսի բան, որ այժմ լինի։ Ո՞վ էր լսած, և յո՞ր տեղէր եղած։ Ահա այսպէս գրեցաք դոցա, դու ևս ասա և գրել տուր, գիտեմ, իւրեանց բարեկամն են, և կուլսեն։ Իսկ եթէ դոցա ևս չլսեն, ի հարկէ պիտի թագաւորին արդ առնեմք։ Ինչևիցէ չանա որքան կար քո է թերևս դոցա ձեռօքն մեկ բան հոգաս։ Եւ որպէս լինելն գրեա մեզ զի միամիտցուք։ Ողջ լեր ի տէր։ Գրեցաւ ի Ամ՛Ի՛Թ, յօգոստոսի։

Թուղթ առ Ղևոնդ կաթուղիկոսն Վրաց, զկնի օծման Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին։

Ցեառնդ Անաստասի կաթուղիկոսիդ ամենայնի Վրաց, և ծայրագոյն Պատրիարքիդ սրբոյ և գերապատուի Աթոռոյդ Մցխեթայ։

ջասցիս, և ի ձեռն սիրանիշ գրոյ՝ զանմիթարուելիւնս մեր միխիթարեսցես երբեմն. պէս։ Իսկ լիագոյն որպիսութեան մերոյ ի սիրելոյդ մերմէ... խոհեմատես վարգապետէդ իմանալոց ես, զոր առաքեցաք յայդր հանդերձ օրհնութեան թղթովք. ընդ որում և միաբանքն մեր գրեցին ըստ սովորութեան ղթուղթ բազմակնիք առ հասարակութիւն ժողովրդոց մերոց որք յայդր։ Զոր և ի սէր ճշմարիտ սիրելութեան քոյ յանձնեմ։ Ողջ լեր։ Գրեցաւ ի ՌՄՒԹ թուականին մերում ի յօգոստոսի։

ի թիֆլիս թուղթ ի միաբանից սրբոյ Աթոռոյս, վասն վախճանման լուսահոգի Սիմէօն կաթուղիկոսին, եւ յաջորդելոյ Տեառն Ղուկասու կաթուղիկոսին, նման այնմ թղթոյ՝ որ ի սկզբան տետրիս է։

Ի Լուսակառույց և ի Քրիստոսակերտ մեծի աթոռոյս Էջմիածնէ, (և այլն որպէս ի ն համարն գոյ։) Ողջ կայք բնակեալք ի Տիրախնամ և ի Տէրունի մայրաքաղաքդ Թիֆլիզ, և ի համայն օրհնեալ երկիրդ Վրաց։ Ա յսինքն ի Գօրի, և ի բոլոր վերի Վրաստունն։ Ի կախէթ, ի Քսեղ և ի Թէլաւ, ի Ղազախ, ի Բամբակուձոր, ի Բոռչալու, և այլ ամենայն շրջակայ նահանգս և ի գիւղորայս դոցին։ Ցորս կառուցեալ քրիստոսասիրեաց սրբոց եկեղեցեաց և եկեղեցականաց դասուց։ Ուրեքի եղբօրդ և պաշտօնակցիդ մերոյ Ցովհաննէս-Հանճարաշատ վարդապետիդ Առաքնորդիդ Ատուածախնամ քաղաքիդ։ Եւ այլոց ուղղաշաւիղ Առաքնորդաց, իմաստնաղարդ վարդապետաց, մեղսաքաւիչ քահանայից, ուսուցչասէր սարկաւագաց, և համօրէն եկեղեցական մանկանց։ Իրաւադատ մելիքաց, պերճապատիւ իշխանաց, ազնուազարմ ազատաց, փառազարդ գօլվաթաւորաց, իմաստնախոհ վաճառականաց, ճշմարտաբան տանուտեարց, հարազատ և հաւատարիմ գանձա" (և այլն կարգաւ)։

(Շնորհք)։

Եւ ընդ սիրոյ" (և այլն կարգաւ՝ մինչև ցգրեալդ ի ներքոյ, և ապա աստ գրեա զհետևեալն)։

Եւ զգլուխ սիրելեացդ ո՞զ պահեսցէ։ Իսկ երանելի և հոգելոյս Հովուապետն մեր մինչդեռ կենդանի էր, յառաջ քան զվախճանն իւր բարի՝ (զոր իմացաւ իսկ։) մինչ եռեսս զժամանակս լցեալ ամենայն դառնութեամբ՝ և զերկիւս խռովութեամբք և անյայտնութեամբք պէսպիսեօք. ընդորս և զայն իսկ՝ թէ յետ մահուան իւրոյ մինչ յանհրութեան ձեռացեղ Աթոռս սուրբ, ջնաստուց մեծագունից է դիպելոց ի դաժան կիրառս, վասն որոյ՝ յաւուր նաւակատեաց շաբաթու Վարդավառին ի ժամ փրկական հաղորդութեանն կատակեալ էր մեզ ի ձեռն խոստովանահօլն՝ զի զՎերժանապատիւ և զհոգեընտիր Հայրն մեր զտէր Գուկաս արքեպիսկոպոսն՝ զբնիկ և զբազմաշխատ միաբանն գահիս սրբոյ և զնախկին նուիրակն և առաջնորդն մեծի մայրաքաղաքին Ջմիւռնոյ՝ կացուցցուք փութապէս յաթոռ Հայրապետութեան տանս Հայոց, զի աթոռս սուրբ մի քնաւ երևեսցի անտէր և անայցելուս։ Զոր և ոչ այժմ միայն էր մտածեալ լուսահոգին, այլ յառաջ քան զերիս ամս, մինչ եռեսս թէ՝ երկիրս յօրէյօր խռովութեամբ լինին, և չարիքն բազմանան, և ինքն ևս ի հիւանդութենէ չբանայ զաչս, ապա նախահոգաբար զսա առ ինքն պահեալ ոչ յղեաց ի գործ ինչ, այլ ասէն առ ինքն արգելեալ մինչև ցարդ այժմ զհետն յայտնեաց՝ և այսպէս կատակեաց։ Ուստի ի վախճանել լուսահոգւոյն՝ ժողովեալ մեր ամենեցուն մի խորհուրդ վասն օգտի տանս սըրբոյ, հանդերձ ընացորդ ժողովրդովք երկրիս և իշխանօք, մինչ լուաք զկնակ լուսահոգւոյն, և զկնակածանց նորին զփորձն իսկ առաք, և տեսաք թէ՝ ոչ է ձեռից սուրբ աթոռս առանց մեծագունից ջնաստուց ի մլնալն յանհրութեան. վասնորոյ այլ չկարացաք երկարել զմիջոցն, և ըստ նախկին սովորութեանն գրել նախապէս զթուղթս ի շրջակայ տեղիս, և յայդր, մանաւանդ ի մեծ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս վասն ընտրութեան, և ոչ գոնեայ՝ զեօթներորդ օրն թաղման լուսահոգւոյն անցուցանել. զի ժամանակն և դիպուածք իւր կարի յոյժ փութացուցին զմեզ։ Ուստի՝ և մեր յԱ-

Ձ 2420

տուծոյ գիտացեալ զայս՝ առանց երկրայութեան, որ զամենայն ինչ առնէ որպէս և կամի, ըստ նախասնօրինութեան նորին և ըստ աղաչութեան հոգւոյն սրբոյ՝ կոչեցաք զսա վաղվաղակի ի պատիւ Հայրապետութեան։ Ցորմէ թէպէտ ինքն բաշխիցս հրաժարիւր՝ անկարօղ ցուցանելով զինքն սկսմ գերագունի շնորհի. այլ մեր չթողեալ զսա ի կամս իւր՝ ի նոյն իսկ ևօթներորդ օրն Թաղման լուսահոգւոյն՝ որ էր կիւրակէ՝ և օգոստոսի Ը. շնորհօք ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ և օգնութեամբ և ողորմութեամբ նորին՝ օծաք զսա ի Հայրապետութիւն տանս Հայոց՝ և գերագահ Աթոռոյս մեծի սրբոյ Էջմիածնի։ Որում վայելել տացէ՝։ (և զայլ հետևեալն գրեա անտի կարգաւ մինչև ցվերջն։)

Թուղթ առ իսրայէլ կաթուղիկոսն, որ ի Գևանջայու գնացեալ ի Թիֆլիզ, անդ ևս ի հախապատ լինէր. ևս իբրու-թէ՝ զիշխանութիւնս ածէր ի գործ։ Այլ այժմ ի նոր նստիլն Սրբազան Ղուկաս կաթուղիկոսին, այնմ չառնելով ինչ յիշումն, զգիր մի հասարակապէս գըրևաց առ նա վասն լուսահոգւոյ վախճանման ևս իւր յաջորդելոյն՝ որպէս ևս այլոցն։

Ցորմէ ճշմարիտ և. անխարդախ սիրով, նախընծայ սուրբ ողջունիւ Քրիստոսական, և եղբայրական ըղձիւ, ծանուցումն լիցի սիրելի եղբօրդ մերոյ և օգտասիրիդ սրբոյ Աթոռոյս՝ Տեառնդ Իսրայէլի սրբասէր կաթուղիկոսիդ։ Զի յանցելումն ամի մինչ առաջն իսկ էիր, տեսեր զկարուրթիւն Սրբազան Հօրն մերոյ վեհապետի, որև օրստորէ առաւելաւ՝ և անկարացոյց զնա իսպառ։ Իսկ ի հասանիլն մեր ի Ծուլիսի Ի՛. որ էր Վարդավառի կիւրակէն, բարի մտհուամբ առ տէր փոխեցաւ։ Որոյ զհոգին տէր լուսաւորեսցէ, և գլուխ սիրոյդ լիցի ողջ։ Եւ այսպէս զերծանելով լուսահոգւոյն ի կենսամաշ կենցաղոյս, էարկ զմեզ նախապէս ի ոուգ անմխիթար՝ որ եթող յորբութեան ի գառն ժամանակիս. և ապա էարկ ի մէջ մեծի ցաւոց և հոգածութեան, որ վեր է քան զկար մերոյ տկարութեան։ Քանզի մինչ ետես զինքն մերձեալ ի վախճան՝ (ղորև իմացաւ իսկ,) նախահոգաբար հոգաց ըզսուրբ Աթոռս՝ չմնալ յանտիրութեան ի գառն ժամանակիս, գիտելով՝ զի մեզ երկարապէս յանտիրութեան մեծապէս ընտիրոց է։ Վասնորոյ՝ յաւուր փրկագործ հաղորդութեան կտակեալ էր միաբանից Սրբոյ Աթոռոյս ի ձեռն խոստովանահօրն՝ կացուցանել զմեզ յայս աստիճան։ Ուստի, յետ վախճանի լուսահոգւոյն ժողովեալ ի մի վայր միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրականաց, մինչ իմացան զկտակ լուսահոգւոյն և ծանեան զդիտմունն և զփորձն իսկ առին՝ զի մեզ մեծ էր լինելոց տանս Սրբոյ. ապա միաբանութեամբ բռնադատեցին զմեզ ի յայս կարգ։ Եւ մեք թէպէտ զանբաւականութիւնըս մեր կշռելով՝ բազմիցս հրաժարեցաք. այլ զերծանիլ ոչ կարացաք. որք և օծին իսկ զանարժանութիւնս մեր ի Հայրապետութիւն ազգիս Հայոց. որպէս ահա իմանալոց ես զլիապէս հանդերձ բոլոր պարագայիւքն ի հասարակ կոնդակէն. և ի թղթոյն միաբանից։ Իսկ՝ յառաջ քան զօծանիլն մեր՝ որ չկարացին միաբանք Սրբոյ Աթոռոյս զԹուղթ գրել յայդ՝ կամ յայլ ուրեք ըստ սովորութեան. պատճառն ահա յայսմանի է. զի յոյժ շուտով եղև, որպէս ահա յայս է ի յիշել Թուղթան հանդերձ պատճառօքն։ Ժամանակի հարկն այսպէս պահանջեաց, Բայց յետ օծման մերոյ որ այսքան յետացուցաք զյայդ կողմն գրելի Թուղթան, պատճառն ճանապարհաց փակ լինիլն է՝ որպէս յայսմանի է, մանաւանդ՝ մեր կասկածն։ Այժմ ևս մինչ գրեմք, դու ՛ւ գիտեմք թէ ո՞րպէս և ո՞ր կողմն եմք յղեալոց։ Այլ սակայն՝ որովհետև գրեաք յայդր զԹուղթս, և իմացաք ևս ի յոմանց եկողաց՝ թէ դու տակաւին յայդ կողմունդ ես, վասնորոյ՝ զայս սիրանիշ Թուղթ ևս նախախոյծ սիրով առ սիրելութիւն քո գրեցաք, ի ծանուցանել ղտեղւոյս և զմեր անցս, և ի հարցանել զորպէսդ։ Ուրեմն և դու սիրելի եղբայրդ մեր, ուրև իցես՝ զգիրդ սիրանիշ ի մէնչ անպակաս արացես, գրելով ղորպիսութեանց սիրոյդ. հանդերձ այլ մե-

զապաշաճ որպիսութեամբք առ ի յիմա-
նալ մեզ։ Իսկ՝ զմեր ամենայն որպէսն ահա
սոյն գրաբեր սիրելիդ մեր Խոհեմառատ վար-
դապետդ պատմելոց է, զոր առաքեցաք յայ-
դըր Թղթովք մերովք. Ո՛ղջ լեր ի Տէր։
Ի ՌՄԻԹ. յօգոստոսի...

---

*Թոդոսիոս վանահարսկան ի վեծն Պօլիս
եւ յայն կողմունսն, ի միաբանից սըր-
բոյ Աթոռոյս եւ յերկրականացս զրն-
ցնալ, յաղագս ընդունելութեան նորոգ
Հայրապետին մերոյ ընտրեցելոյ եւ օ-
ծնցելոյ՝ տեառն Ղուկասու Սրբազան
կաթուղիկոսին։*

Ցիսուսի Քրիստոսի Հովուապետին մե-
րոյ կաթուղիկէ եւ Առաքելական սուրբ Ե-
կեղեցի Հայաստանեայց, եւ մայր ամենայն
եկեղեցեաց, Աստուածածնական եւ Լուսակա-
ոյց Աթոռ Սուրբ Էջմիածին։ Եւ ի սմա
եղեալ բոլոր միաբանք. այսինքն Արք ե-
պիսկոպոսք, եպիսկոպոսք, վարդապետք, ա-
բեղայք, եւ այլք ամենեքեան։ Այլեւ՝ յԱրե-
ւելեան երկրոյն եղեալ համայն վանորէից
եւ Անապատաց Առաջնորդք եւ Հարք, եւ ո-
րոց միաբանք. Այլեւ քաղաքական եւ գիւ-
ղական քահանայք, քեալանթարք, մէլիքք,
իշխանք, տանուտեարք, վաճառականք, բնիկք
եւ եկք, եւ այլք համայն ժողովուրդք մեծք
եւ փոքունք՝ համաձայնք եւ միաբանք սիրոյն
որ ի Քրիստոս. Ճորոց Քրիստոսասէրնդ սուրբ
ողջունիւ, հոդեկանաւ ճշմարիտ սիրով, եւ
եղբայրականաւ ստոյգ բաղձանօք, ծանու-
ցանեմք լիցի զերամեծար եւ Աւետարոյն եղ-
բայրդ մերոց ի Քրիստոս, լուսածին՝ Տարա-
ղաս եւ սրատաչաւ ղեւսակացդ ըստ Տաւա-
տոյ մօրս Հայաստանեայց սրբոյ Աթոռոյս
Էջմիածնի, եւ ցաւակից եւ օգտակոհ բարե-
կամացդ սորին։ Որք կայք զեռեղեալք ի
բոլոր տանդ Արեւմտեան, ի յԱստուածա-
ւանամ եւ ի կայսերապերճ մեծ մայրաքա-
ղաքդ Կոստանդնուպօլիս, եւ յայլ քաղաքդ,
ի գաւառայդ, ի գիւղօրայդ, եւ յայլ ա-
ռաւելն շրջակայ երկիրսդ։ Նախ զերապատիւ
եւ ծերունազարդ Հօրդ մերում բազմաշխատ
եւ քրանաջան որդւոցդ սրբոյ Աթոռոյս Ցեա-
որն Զաքարիայ Աստուածածնան վարդապե-
տիդ, եւ Արհի եպիսկոպոսիդ, եւ արժանա-
վայել պատրիարքիդ մեծի մայրաքաղաքիդ
Կոստանդնուպօլսոյ։ Ապա եւ այլոց ամենից
ուղղաշաւիղ Առաջնորդաց, արժանապատիւ
Եպիսկոպոսաց, Հանճարափայլ Վարդապե-
տաց, ճգնաւորաց Աբեղայից, եւ այլ վանա-
կանաց ամենեցունց՝ որք կան ի վանորայդ
եւ ի քաղաքդ։ Այլեւ համայնից սրբասէր
քահանայից՝ Աւագաց եւ երկրորդաց, եւ
համօրէն եկեղեցական մանկանց, եւ դպձա-
պահաց եւ եկեղեցապանաց։ Նաեւ՝ ամենից
շքեղափառ եւ ուղղադատ իշխանաց եւ տա-
ոաջնեռաց, եւ իմաստուն վաճառականաց,
եւ բոլոր Անէկից, Արուեստապետաց եւ
Արուեստաւորաց։ Եւ համայնից բնակաց եւ
եկաց՝ մեծաց եւ փոքունց։ Զի ըստ որում
տահմանեցաւ է յամենեցունց Տեղծողէն
տահման անլուծանելի ի վերայ բնութեանս
հողեղինի՝ հողադարձիլ մահուամբ ի հող.
վանորոյ՝ եւ սրբազան Հայրապետն մեր եւ
Հովուապետն արիաջան Տէր Սիմէօն սրբաս-
նեալ կաթուղիկոսն՝ լրացուցեալ ըժամա-
նակ կենաց իւրոց՝ կատարեաց զՀրաման
Տեղծողին իւրոյ, եւ փոխեցաւ սքանչելի
մահուամբ յաշխարհէ աստի ի կեանսն ան-
վախճան առ մշտաբաղձալին իւր Քրիստոս
ի ՌՄԻԹ թուոջս մերում, ի Ցուլիսի Ի.Զ,
յաւուր Վարդավառի կիւրակէին, ի չոր-
րորդ ժամուն, եւ թաղեցաւ յաւուրն Բ
շաբաթի։ Որոյ զՀոգին լուսաւորեսցէ Տէր՝
եւ հանդուսցէ այցելութեամբ ի լոյս երե-
սաց իւրոց դասելով ընդ սրբապանից-Հայ-
րապետացն, եւ միխիթարեսցէ զսիրաս սի-
րելեացդ մերոց՝ Հոգւովն սրբով. եւ զգլուխ
ձեր ո՛ղջ պահեսցէ։ Ա՛րդ՝ մեծապատիւ եղ-
բարդ մեր՝ եւ սիրեցեալք ի Քրիստոս. դի-
տէք իսկ՝ եւ ամենեցուն իսկ յայտնի է, զի
որպէս ո՛չ կարեն անդամք առանց գլխոյ
կեալ, այսպէս եւ ո՛չ տուն առանց գլխա-
ւորի եւ կառավարչի։ Եւ թէ մանաւանդ
տուն մի ոչ կարէ առանց վերակացուի բա-
ւարարապէս եւ ըստ կարդի կառավարիլ ի խա-
ղաղ ժամանակի, ո՞րքան եւս առաւել այս
ընդհանրական եւ մեծ տուն. ւ այս եւս ի
յայսպիսեմ վրդովեալ ժամանակի՝ յորում
ամենայն ոք ղՀոգս իւրոյ իսկ միայնոյ ան-

չինս ևս ոչ կարէ առնել, թող թէ զպլուց՝ և կամ այսպիսւոյ ասն, եթէ չիցէ մեծաեղն ինչ հարկիւ կարգեցեալ ի պաշտպանութիւն նմին։ Քանզի լուեալ էք ահա թէ յանցեալսն ամի զի՞նչ կրեաց երկիրս այս, զո՞րքան աւերութիւնս, և զո՞րպիսի վնասս, զորս և մինչև ցարդ կրէ դեռ ևս վասն զի՝ սակաւքն նոյն խռովութիւնն և աւերութիւնն գոյ. երկիրս ըստ մեծի մասին անմարդաբնակ. և յամենայն կողմանց աւերիչք և կեղեքիչք բաղմացեալք, որք զսահակաւ ձեացորդսն երկրիս ևս աւերեն և սպանանեն։ Ցորոց միջի սուրբ Աթոռս միայն է ձեացեալ առանց գլխաւոր վնասուց՝ շնորհօքն Աստուծոյ։ Զի որքան կենդանի էր լուսահոգին, ոմանք զպատիւն նորա պահէին, ոմանք ի սիրոյն պատկառէին, և ոմանք երկնչէին, իսկ շատք և գլխաւորք՝ իրրև զնանմիչ հասարակութեան և հոգացօղ երկրիս պատուէին և մեծարէին։ Վասն որոյ՝ ազատ ձեայր սուրբ Աթոռս ի գլխաւոր վնասուց։ Իսկ մինչ մերձ եղև լուսահոգին ի վախճանիլ՝ (զոր և իմացաւ իսկ.) իրրև եաես՝ զի յօր յօր բազմանան քան թէ պակասին չարիք և վնասք երկրիս, վասըն որոյ՝ նախահոգաբար ցաւեցեալ ի վերայ տանս սրբոյ՝ զի մի՛ ղկնի մահուան իւրոյ յանախրութեան ձեալով գիպեսցի աւերիչ վնասուց. յաւուր նաւակատեաց շաբաթու Վարդավառին ի ժամ Փրկական հաղորդութեանն կատկեալ էր մինչ ի ձեռն խոստովանահօրն՝ զի զբնիկ միաբանն սրբոյ Աթոռոյս և զնախկին նուիրակն և Առաջնորդն մայրաքաղքին Զմիւռնոյ զՑեր Ղուկաս Արքեպիսկոպոսն՝ կացուսցուք յԱթոռ. Հայրապետութեան. զի կառավարիչ լիցի Ցանս սրբոյ. և մի՛ յանախրութեան ձեալով սմին՝ դնվնաս և զաւերութիւնս կրեսցէ։ Իսկ ղկնի վախճանման լուսահոգւոյն՝ մինչ համախումբ ժողովեցաք ի մի վայր՝ բոլոր միաբանք սրբոյ Աթոռոյս՝ և ձեացորգք քահանայք՝ մեղիքք՝ իշխանք և ժողովուրդք երկրիս, և խորհուրգ ի մէջ առեալ՝ սկսաք խորհիլ ղօգուից ասնս սրբոյ. և իմացաք զկատակ լուսահոգւոյն. մեք ևս մտածեցաք և տեսաք, զի այս էր օգուտն տանս սրբոյ ի յայս ներկայիս որպէս կատկեալ էր լուսահոգին։ Քանզի թէպէտ ըստ նախկնոյ սովորութեանն մերոյ՝ պարտ էր յառաջագոյն ի ձեռն համահաւանական թղթոյ ցուցանել ձեզ գերապատուելեացգ՝ զընտրելին յայս աստիճան. և կամակցութեամբ և հաւանութեամբ ձերով կացուցանել յԱթոռ Հայրապետութեան. բայց այս կանօն ոչինչ բերէր օգուտ յայս ներկայիս, բացի տնաքակ վնասուց։ Վասնզի՝ զորոց կասկածէր լուսահոգին՝ (որ յիշեցաւ ի վերոյ.) զնոցին նըշանան տեսեալ՝ զփորձն ևս առաք, և տեսաք, զի ոչ է հնար տանս սրբոյ առանց մեծագունից վնասուց ձեալ։ Ապա թէ ոչ, հարկն պահանջէր զի զբնական սովորութիւնն առնէաք։ Մանաւանդ և այս իսկ հարկ էր զի զմաքրակենցաղ Հայրդ մեր՝ և զարժանավայել պատրիարքդ մեծի մայրաքաղաքիդ Կոստանգնուպօլսոյ՝ հրաւիրէաք նախապէս ի յայս աստիճան։ Քանզի ի յայսմ ժամանակի՝ զերկոսեան սուտ, այսինքն զգա և զսա միայն գիտեմք արժանաւորս այսմ կոչման՝ ամենայն արժանավայելուչ յատկութեամբ. որպէս և մեծարգութիւն ձեր ևս գիտէք և վկայ էք. և լաւապէս տեսեալ և վերահասու էք եղեալ երկոցունց ևս արժանաւորութեանցն։ Որք երկոքեանն ևս հաւատաբապէս աշխատաւորք են սրբոյ Աթոռոյս, և ի բնէ անտի եղբարք միմեանց. և ի միոյ հոգևոր ծնողէ ընկալեալք զկարգ սարկաւագութեան և քահանայութեան։ Ուստի ի գէպ էր յոյժ երկոցունց անուանս ևս գրել ի բաղմակնքոջ և կոչել ի յայս չնորհ, (որպէս և յայլ ժամանակս եղեալ է. և դուք ևս գիտէք.) և զորն յերկոցունց ընտրէր Աստուած հասարակացն հաւանութեամբ՝ նա էր լինելոց։ Զայս կանօն Լուսահոգին ևս գիտէր լաւապէս՝ և առնելոց էր առանց կարծեաց, եթէ ոչ էր արգելիչ լեալ ժամանակին ձախորդութիւնն։ Բայց յառաջ քան զերիս ամս մինչ եաես թէ՝ յօրէ յօր աւերիլ սկսանի երկիրս, և ինքն ես չբանայ զաչս ի հիւանդութեանց, վասն որոյ՝ արգելեալ զսա աստ ի գործոյ՝ պահեաց առ ինքն, այսու իսկ մտօք, զի յետ իւրոյ վախճանի՝ մի ձեասցէ տունս սուրբ յանախրութեան ի դառն ժամանակիս, զոր չէր ումեք բնաւ յայտնեալ մինչև ի ժամ կատակարարութեանն, յորում յայտնեալ էր զայս խոստովանահօրն։ Զոր եւ մեք մինչ

լուաք և հայեցաք ի բարի դիամուն եւ յետագայ վնասն անաքակ՝ որք ընդհուպ իսկ էին, ոչ կարացաք գոնէ զմին յերկուցըն առնել, այսինքն կամ ծանուցանել նախապէս սիրելութեան ձերում, և կամ հըրաւիրել զարժանապատիւ Հայրդ մեր ի յայս կարգ, զի բռնութիւն ժամանակիս յաղթօղ գոլով ո՛չ եա մեզ միջոց։ Քանզի՝ հար կըն զօրէնս լուծեալ ըստ ասից զօգուտն ներկայիս եա մեզ առնել։ Որք և սակս այսր հարկաւորագոյն հարկի, թէև կասկեալ ևս չլինիցեր լուսահոգին, ոչ էաք կարօղ թողուլ յանհիրութեան զառնսն զայս սուրբ ի գառն ժամանակիս, ե. լինիլ պատճառ սորին աւերմանն, ո՞ւր ինայ թէ՝ նա ինքն զերծանելով յիւր պարտականութենէն, այսպէս կասկեաց և ի յայս ներկայումս դա հեռի էր ի մէնջ և անձեռնհաս զոր եթէ ինքրէաք մեք և ինքն ևս յօժարիցեր ի գալ, ոչ կարէր փութով ժամանել ասա ի յօգնութիւն տանս սրբոյ՝ և զինաս էաք կրելոց։ իսկ եթէ ոչ յօժարիցեր, որպէս և յայլ ժամանակս արարեալ են ոմանք. զորս գիտէք։ չարագոյն էր ինասիլոց սուրբ Աթոռս կրկնապատիկ՝ վասն երկարելոյ ժամանակին։ Իսկ սա ասա ներկայ գտանեցաւ, որ արժանաւոր էր այսմ կոչման որպէս և գա։ Ուստի եթէ յապաղէաք յայս է՝ զի մեծագոյնս մեղանչէաք ընդդէմ կամացն Աստուծոյ և պատճառ լինէաք աւերոյ ինասուց տանս սրբոյ։ Վասն որոյ ի յԱստուծոյ գիտացեալ զայս առանց երկբայութեան, մեք բոլոր միաբանք սրբոյ Աթոռոյս և համայն երկրականքս ի մի վայր եկեալ և սիւնհոդոս արարեալ մեծաւ հանգիսիւ առաջի Աստուածածնէջ սրբոյ տեղւոյս, ըստ նախանօրէնութեանն Աստուծոյ և ըստ աղեցութեան Հոգւոյն սրբոյ համակամեալք և միախորհուրդ լեալք, կամեցաք և ընտրեցաք զարժանաւորն Առաքելականի շնորհի զվերոյ յիշեցեալ Հայրն մեր Սրբափայլ զՑՀէր Ղուկաս Արքեպիսկոպոսն, լինիլ մեզ և բոլոր ազգիս մերոյ և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի Հայրապետ և Հոգևոր Հովիւ, Կաթուղիկոս և Ծայրագոյն պատրիարք։ Զոր և արարաք իսկ և կարգեցաք։ Որ թէպէտ բազմիցս Հրաժարեցաւ, չառնլով յանձն, և անարժան ասելով զինքն այսմ շնորհի. այլ մեք ոչ թողաք զսա ի կամս իւր, զոր և օծաք ի կաթողիկոսութիւն տանս Հայոց ի յօգոստոսի Ը. ի յերկրորդ կիւրակէին Վարդավառի, զի չկարացաք երկարել զմիջոցն վասն վտանգիցն առաջիկայից որպէս ասացաք։ Ուստի՝ զայս համահաւանութեանս մերոյ թուղթ դրեալ և կնքեալ՝ առաքեցաք ահա ձեռամբ սիրելի եղբօր մերոյ Պետրոս վարդապետին առ Աւագագոյն եզբարտգ մեր. զի և դուք ստուգապէս և իրաւաբար յԱստուածոյ գիտելով զայս. և առ ոսս հարկանելով զներհակական և զաւերողական խորհուրդ և զընդդիմարտութիւնս, և համաձայնելով մեզ՝ լինիցիք կամակիցք մերոցս կամաց և խորհրդոց, և կնքեցէք զհամահաւանական գիրս մեր, զի լիցուք մի հօտ և մի հովիւ, որով լինիցիք պատճառք շինութեան և խաղաղութեան, եւ մի գուցէ տեղի տայցէք այլևս այլ խօսից և կարծեաց, որով լինիցիք պատճառք մեծամեծ ինասուց սրբոյ Աթոռոյս՝ և մեծ գայթակղութեան հասարակ ազգիս. քանզի արարեցեալս մեր խորհուրդ, զոր և կատարեալս իսկ է Աստուծով, բազմաւ խորհրդով և հասարակամ միաբանութեամբ, և հաստատուն կացուցմամբ։ Որք և ընդունօղք, և լսօղքըզ, և համաձայն հետևօղք մերում ընտրողութեան լիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի սրբոյ Աթոռոյս։ Ողջ լերուք։

Գրեցաւ համահաճական գիրս բազմակնիք ի ՌՄԻԹ թուղջ մերում, ի յօգոստոսի ամսոյ.. ի լուսակառոյց և ի Քրիստոսակերա Աթոռս ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին։

Թուղթ ի վեծն Պօղիս առ Յուհաննէս Ծ ութելիան ամիրայն, նմանապէս վասն վախճանման ի Քրիստոս հանգուցեալ Տէր Սիմէօն կաթողիկոսին, եւ յաջորդեալոյ զԱթոռս Տեառն Ղուկասու Կաթողիկոսին։

Ծարմէ ժամանեսցի Թուղթ՝ հանդերձ Առատաղնղ օրհնութեամբն Հօր Աստուծոյ, խաղաղարար ողջունիւն Սիածնի Որդւոյ, և ճշմարիտ սիրոյն Հոգւոյն սրբոյ. Այլև գե-

բահրաշ և հոգեպարար զօրութեամբ և շնորհօք Աստուածամիջի սրբոյ տեզուդս՝ և համայնից Աստուածակիր Սրբութեանցն որք ի սմա. ի վերայ բնականի՝ ստուգագունի և հարազատի սիրելդդ իմոյ, մաեռիմ բարեկամիդ և ճշմարիտ ցաւակցիդ, և սրբոյ Աթոռոյս հաւատարիմ և օգտակարն որդւոյդ, Տէրամբ Ցիսուսիւ զօրացեալ բարեպաշտօն և մեծահաւատ, պերճափառ և շքեզազանդ մեծի իշխանապետիդ, Մահտեսի Ցարութիւն Ամիրայիդ։ Եւ Աստուածապահ տան քումմ և բնակութեան, Տէրամբ Ցիսուսիւ զօրացեալ Որդւոցդ և դստերացդ և համայն ընտանեաց և ազգայնոցդ, ճըշմարիտ սիրելեացդ և բարեկամացդ, Տիրապարգեւ ընչից և ստացուածոցդ և ամենայն ընդ օրհնեալ յարկաւ քով եղելոցն, խընդալ ի Տէր յարաժամ. Ամէն։

(Շնորհք.)

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Անդրանկի ծանուցուածի լիցի յատկական սիրելւոյդ իմոյ և օգտասիրի՝ և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի մինչ ի վիճակէն իմմէ ի Զմիւռնոյ դարձեալ՝ եկի յայդր և պատահեցայ յատկեզ սիրելւոյդ, ծանեար յայնմ իսկ նուագի ղդիտումըն իմ, որ ո՛չ այլ ինչ էր բայց թէ՝ զի եկեալ ի լուսատու մայրս մեր սուրբ յոր դիմեալս էի, հանգեայց ի բազմաժամանակեայ աշխատութեանցս զոր կրեցի։ Իսկ եկեալ աստ, ո՛չ այնպէս զոր ախորժէի գտի, այլ զներհակն։ Քանզի՝ զսրբազան ծնողն մեր և երանելի Հայրապետն տեսանելով միշտ ի վիշտս և ի ցաւս մաշեալ՝ վասն անյաջողութեանց սրբոյ Աթոռոյս որք լինէին յամենուստ կուսէ. մեք ևս ընդ նմա մաշէաք ցաւակցաբար, և կայաք ի միասին ի հոգս և ի վարանմունս, չգտեալ եթէ զՀանգստութիւն մտաց՝ որպէս և նա։ Իսկ ապա՝ մինչ անցելոյ ամի դժնդակագոյն անցքն ևս անցին զերկրաւս և զմեօք, (որպէս յառաջագոյն գրեալ է յայդր երանելիդ և գիտէք,) ապա առաւել ևս յաւելան նմա ցաւք կենամաշք։ Ցորոց և զերկարագոյն ինձ հիւանդութիւնն գտեալ՝ մաշեցաւ այնու յերկար միջոց, և հատաւ ի զօրութենէն։ Եւ հասեալ ի սոյն ՌՄԻԹ թիւս մեր և ի յուլիսի ԻԶ՝ որ էր կիւրակէ Վարդավառին, ի չորրորդ ժամու ցերեկեանն՝ հանգեաւ առ մշտաքաղձալին իւր Քրիստոս՝ բարի մահուամբ, ջերմեռանդ և արտասուագոչ խոստովանութեամբ և հաղորդութեամբ, զարմանալի հեշտութեամբ և մեծաւ ղգաստութեամբ։ Որոյ զհոգին լուսաւորեսցէ Տէր ողորմութեամբ իւրով՝ ի լոյս երեսաց իւրոց. և ընդ սուրբ և երջանիկ Հայրապետացն գասեսցէ՛ և պսակեսցէ՛ և ղգլուխ սիրելւոյդ ո՛ղջ պահեսցէ։ Իսկ մեզ եզև սուգ անմխիթար և մեծագոյն կսկիծ. նախ՝ զի զրկեցաք յպնպիուղ քաղցրագութ և հասարակաինամ հովուապետէ, և երկրորդ զի յայսպիսի չարաշատ և գառն ժամանակի պատահեցաւ վախճանն լուսահոգւոյն, յորում յամենայն կողմանց կեղեքիչք և ընչաստատք յառնեն ի վերայ մեր։ Արդ զկնի վախճանի լուսահոգւոյն ժողովեալ ի մի վայր միաբանից սրբոյ Աթոռոյս՝ և ձեացորդ իշխանաց և ժողովրդոց երկրիս, մինչ սկսան խորհիլ զօգաւից սըրբոյ աանս, և տեսին՝ զի յերկար ժամանակս յանախրութեան ձեալով՝ ընաստուց մեծաց է դիպելոց. վասն որոյ միաբան բազմութեամբ կուտեալ ի վերայ իմ, սկսան ստիպել զանարժանութիւնս մեր՝ յանձն առնուլ զայս գործ հովուապետութեան և հոգածութեան տանս սրբոյ։ Իսկ մեք ոչ կամեցաք առնուլ յանձն, աղաչելով ի բաց լինիլ ի մէնջ, գիտելով զանկարութիւնս և զանբաւականութիւնս իմ յամենայնի։ Սակայն ո՛չ կամեցան թողուլ զիս ի կամս իմ։ Եւ զի լուսահոգին մինչ մերձ եզև ի վախճանիլ (զոր և գիտաց իսկ.) մինչ եաես զերկիրս ի նոյն խռովութեան տակաւին, և զչարութիւնս ապստամբաց և կեղեքչացն՝ որք և իշխողին իսկ ո՛չ հնազանդին. և զայն ևս՝ զի յետ իւրոյ վախճանի՝ ոչ է ձեալոց սուրբ Աթոռս առանց մեծագոյն և աւերիչ ընաստուց, ապա ի ժամ սրբոյ հաղորդութեանն կատակեալ էր ի ձեռն խոստովանահօրն, զի զանարժանութիւնս մեր կացուսցեն յայս աստիճան. զի մի անտէր տեսանելով կեղեքչացն զսուրբ տունս, անխնայապէս յաբեցեն իվերայ։ Որև զայս իսկ յայտնեալ էր, թէ մինչ տեսի զիս ի

ցաւոց յաղթեցեալ, և զերկիրս յօրէ յօր ի յաւերումն գիմեալ, արգելի զդա ասա առ. իս և ի գործս արտաքինս ո՛չ յղեցի. զի յետ իմոյ վախճանի՝ մի՛ անապցելու մըննասցէ տունս սուրբ ի բերանս գայլոց։ Եւ իբրև զսոյն կատակ լուսահոգւոյն ևս լուսանբազմութիւնք միաբանից և ժողովրդոց երկրին, և տեսին, համաձայն դիտմանն իւրեանց, ապա՝ պնդագոյնս սկսան ստիպել զմեզ ի յայս։ Քանզի և զաստացելոց լուսահոգւոյն զնշանսն ևս տեսեալ. առին զփորձն. զի յիրաւի սատակապէս էր վիասիլոց սուրբ աթոռս ի մեալն յանախրութեան։ Զի մինչ չևս էր վախճանեալ լուսահոգին, զսուտ համբաւ ինն արտաքոյ տարածեցին վիասատուքն մեր՝ թէ խալիֆայն վախճանեցաւ։ Ո՞ւստի՝ զգեօզ մի նշանաւոր որ էր մուտք սրբոյ աթոռոյս՝ յափշտակեցին ի մէնջ. և զգեօզականքն վիրաւորս և դատարկս յամենից ապրուստից իւրեանց՝ վարեցին ասա։ Զերկուս մեծամեծ այգիսն մեր ևս որք անգ էին, իբր թէ իւրացուցին, և զպահապանսն նոցա վարեցին ասա։ Զորս և լուսահոգին իմացաւ մինչ մերձ էր ի վախճանն. և հաշելով և մաշելով վախճանեցաւ։ Իսկ ապա՝ իբրև սաղգ լուսն ըզվախճանումն լուսահոգւոյն, ապա՝ թէ նոքա՝ և թէ այլք։ սկսան և ի մէջ և ի մերձակայ գեօզս մեր ևս լինիլ ձեռնամուխ, զանգս և զայգիս կողոպտել, զանդիսյս և զոչխարս ի ծածուկ և ի յայտնի յափըշտակել. և զելանօզսն յանգս և յայգիս՝ մերկացուցանել. մինչ վստահանային և ի մէջ շինուածոյն ևս մտանել, և զգողութիւնս կամ զյայտնի յափշտակութիւնս առնել. Թէպէտ մասնաւոր եւ ոմն ի ուրոշէն քանեօք ոմամբք եկեալ ասա՝ յաւուր վախճանման լուսահոգւոյն՝ իբրու ի պահպանութիւն սրբոյ տանս, զպահպանութենէ չարարեալ ինչ փոյթ՝ զբանալիս արտաքին դրանցն ժողովեալ առ ինքեանս, ընդ իշխանութեամբ իւրեանց սկսան պահել. չասելով մեզ զառիթն. և զրպարտելով ևս զմեզ թէ՝ ձեռն էք արկեալ դուք ի պեան վքաց, առաքել ձեզ զպահպանիչս։ Եւ այլով այսպիսեօք ահաբեկելով զմեզ ասէին ևս շատք, թէ ի ծածուկ՝ և թէ յայտնի, իբրթէ՝ եթէ հաշուութիւնն ի գլուխ ոչ եկեսցէ, (զոր առնել ջանային յայսմ միջոցի.) և վրացին միւս անգամ ևս գալոյ լիցի ասա, դատարկելոց եմք զայս տունս և զշինուածիւնն հատանելոց՝ զի մի եկեալ ի շինուածեան գտցէ՝ և ուժաւոր լիցի ինքեան՝ որպէս և յանցեալ ամին։ Զայս և յանցեալ տարւոջն կամեցան առնել. իսկ լուսահոգին բազմօք հնարաւորութեամբք խափանեաց. և զշինուածիւն տանս սրբոյ ո՛չ եթ վերջացուցանել։ Իսկ այժմ մինչ ո՛չ գոյր աէր տանս, առնելոց էին անկարծիք ի գալն նորին, (զորմէ ասէին թէ՝ մինչև ցծիերն օգոստոսի եթէ չլինիցի հաշուութիւն, գալոց է թարց կարծեաց։) Քանզի՝ պատկառանք սոցա և պատիւ պահել և կամ երկնչիլ ինչ մասամբ՝ ի կաթուղիկոսէ միայն է. առանց որոյ՝ այլոցն ո՛չ ոք է լսօղ, և կամ զպատիւն պահօղ։ Եւ բաց յայսց ասացելոցս ամենից՝ գոյին և այլևս մեծամեծ և անաքակ վիասք, որք լինելոց էին հաւաստեաւ, եթէ ձեայցեր սուրբ տունս յանախրութեան։ Զորս ո՛չ կարեմք գրել։ Ցաղագս որոց՝ ոչ կամեցաք լսել աղերսանաց իմոց և ի բաց կալ յինէն՝ որ բռնագաւաճինն զիս ի կոչումս յայս. այլ պնդագոյնս ստիպելով՝ յաղթեցին. և ես յաղթեցայ։ Զի ասէին թէ՝ գուք ես լինելոց պատճառ քակման տանս սրբոյ՝ եթէ չառնուցուս յանձն։ Եւ իմ հայեցեալ ի նախահոգ դիտմունս լուսահոգւոյն, և ի կատարումն իսկ ասացելոցն՝ այսինքն՝ ի վրանգն առաջիկայ՝ (որոց նշանքն երևեցան՝ և լինելոց էին անկարծիք.) և ի միաբան և համակամ խնգիրս և յաստիմունս սոցին պնդագոյն, ոչ կարացի ձեալ ի կամս իմ, և կամ առանց Աստուծոյ գիտել զայս. որև երկեայ իսկ՝ թէ գուցէ ընդգէմ լինիցի Աստուածային կամեցողութեանն՝ այսքան ընդդիմանալս իմ, և պատճառ լինիցիմ վիասուց տանս սրբոյ. և յետոյ զմեզագրութիւնս լսեցեմ ի ձէնջ։ Վասնորոյ՝ թողի զիս ի կամս սոցին, և յանձն առի զծանրութիւն Ցիրականի լծոյս, (Թէպէտ և չէի իսկ այամ բաւական.) յուսալով նախ յողորմութիւնս և յօժանդակութիւնս ամենագթածին Աստուծոյ՝ (որ զայս այսպէս կամեցեալ և նախասնօրինեալ՝ արդարև կատարեաց.) ապա և ի յաստուկ սիրելութիւն,

ի հարազատութիւն, ի սրտացաւութիւն և յօգտաջանութիւն և ի ձեռնտուութիւն, յատկեղ սիրելոյդ իմոյ՝ և ընտանեբար հոգացողի և ցաւեցողի վասն իմ, որում ցեր լիցի վարձահատոյց. և օրհնեսցէ՛ եւ զօրացուսցէ միշտ քոյայնովքդ հանգերձ։ Իսկ ապա՝ բաղմութիւնք միաբանից եւ ժողովրդոցն կոչեալ ի վերայ մեր զայս անուն, փութով իսկ ի յառաջիկայ երկրորդում կիւրակէին որ զկնի Վարդավառին՝ զանարժանութիւնս մեր օծին ի Հայրապետութիւն. զի չկարացին երկարել զմիջոցն վասն առաջիկայ վտանգին վերոյ յիշեցելոյ, որպէս ահա իմանալոց ես լիապէս ի միաբանից և յերկրացւոց մահսարէն եւ ի հասարակ թղթոյն մերմէ, մանաւանդ ի թզտաբերք վարդապետէն։ Ցորմէ եւ զբացապէսն ո՛չ գրեցելոց մերոց գիտելոց ես, Զոր եւ ի սէր սիրելութեան քոյ յանձնելով՝ խնդրեմ յամենայնի ի սէր և ի խնամս քո ունիլ. եւ օր մի յառաջ գարձուցանել ջանալ առ մեզ։ Ա՛րդ քոյնիւ սիրելիդ իմ, թէպէտ եւ աւելորդ է մեզ զանկեղծ և զյատուկ սէրդ գիտելով՝ ի նորոյ խնդրել զսէր եւ զհարազատութիւն, բայց որովհետև այս կոչուաս մեզ, մեծագունի օգնութեան և օժանդակութեան յատուկ սիրելեաց կարօտի. վասըն այն եւ ես այժմ զյատկագոյն սէր և զցաւակցութիւն և զյամենայնի ձեռնտուութիւնս խնդրեմ ի քոյնիւ սիրելոյդ։ Եւ թէ ո՛րպէս իցես այսուհետև սրտացաւօրէն հոգալոց զսուրբ Աթոռ Լուսաւոր մայրս քո և զմեզ զայն ի ճշմարտութիւն և ի յատկութիւն սիրոյդ քո որ առ մեզ՝ Թողութեամբ ապաստան, և այլ ո՛չ երկարեմ ասելն։ Նաև զնուիրակն սրբոյ աթոռոյս Մինաս Աստուածաբան վարդապետն՝ եւ զարտաքին վիճակաց նուիրակ Գալուստ խոհեմառատ վարդապետն՝ (որոց ազագաւ զվերահասատաւութիւնս գրեցաք.) յանձնեմ ի սէր սիրելութեան քո հանդերձ գործովքն իւրեանց՝ և զքեզ յԱստուածս։ Բայց եւ զայս ծանիր ազնիւ սիրելիդ իմ. զի որպէս ահա զերկարապէսն իմանալոց ես ի բազմակնիք Թղթոյն միաբանից, թէպէտ այս կոչուաս նախապէս վսյելէր սիրակից և յարգելի եղբօրն մերոյ պարոիրոք Աստուածաբան վարդապետին, բայց մինչ ժամանակն այսպէս հարկեաց. և Աստուած այսպէս կամեցեալ՝ զայս յաջողեաց, և այսքան բազմութեանս եւ առաջիկայ վտանգից հարկն զմեզ ստիպեաց յոյժ, վասն այն և մեք չկարացաք բացասել, ապա թէ ոչ՝ գիտէ Աստուած՝ զի ես էի առաջին կամեցօղն զդաս։ Այժմ՝ թէև դուք ստուգապէս յԱստուծոյ գիտելով զայս՝ հաճեցիք, և յատուկ օգնութեամբ ցաւակցեցիք մերումս տկարութեան և անօգնականութեան՝ և մխիթարեցէք զմեզ ցաւակցական և յորդորական գրով. կարացից ապա և ես տանել զծանրութիւն այս բեռնին, և հոգացից զսուրբ Աթոռս եւ զՀասարակութիւն ազգիս ըստ իւրում կարի։ Ապա թէ ոչ՝ գիտէ Աստուած՝ ես պատրաստ եմ ամենայօժար սրտիւ ընդ առաջ ելանել՝ ղո՛վ ոք եւ յղել ախորժիցիք աստ ի յայցելութիւն սրբոյ տանս ընդհանրականի։ Զի ինձ այսքան եւեթ գոյր պարտականութիւն, զի չթողուի զսա անտէր և անայցելու ի քերանս մարգագէմ գայլոց, այլ ըստ իմում կարեաց պահպանելով զերանելի նախնեացն մերոց առ մեզ հասուցեալ շինութիւնն սորին, պահէի ի նոյնութեան, և ե՛ս չլինէի սորին վնասուցն եւ աւերմանցն պատճառ։ Այժմ՝ թէ սիրելի եղբօրդ մերոյ՝ եւ ձեզ օրհնեալ իշխանացդ չլինիցի այս հաճելի, ապա որպէս՝ եւ կամիք՝ հոգացէ՛ք զհաստատոյ մայր ձեր սուրբ աթոռս եւ ես անպարտ գտայց։ Զսոյն ահա և առ հասարակութիւն օրհնեալ իշխանացդ գրեցի՝ եւ իմանալոց ես անտի և։

Ո՛ղջ լեր ի տէր, զօրացեալ ի նոյն միշտ քոյայնովքդ ամենեքումբք։ Ամէն։ ի ՌՄԻԹ. ի սեպտեմբերի Ի։

Գիտասջիր դարձեալ ազնիւ սիրելիդ իմ. զի մինչ զայսքան բանս դրեալ և պատրաստեալ էաք զՊետրոս վարդապետդ ի յղել, ժամանեաց աստ Թաթարն՝ զոր յըղեալ էիք հանդերձ բազմահնիք Թղթով առ միաբանսն սրբոյ Աթոռոյս, որոյ զպատասխանին ահա գրեցին միաբանքն ընդ Պետրոս վարդապետիդ, և մեք ես զՔուղթ մի գրեցաք վասն այնր՝ առ հասարակութիւն գրողացդ նոյնոյ Թղթոյն, որպէս տեսանելոց էք։ Վասնորոյ՝ աստ այլ ո՛չ երկրորգեմ։ Կրկին ողջ լեր ի Տէր։

Թուղթ առ Արևմտից պարոն Գէորգ եւ պարոն Աստուածապարն ի մեծն Պօլիս. ըստ մտաց վերոյգրեալ թղթոյն, նոյնպէս վասն վախճանմ՛ան Հոգելոյս Հայրապետին Սիմէօնի, եւ յաջորդելոյ նորոգ սրբազան Կաթուղիկոսին։

Թուղթ առ Ամատէրդամու ժողովուրդն, նախ զանցից տեղւոյս այսինքն զվախճանմանէ Հոգելոյս Հայրապետին մերոյ Տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսին՝ եւ յաջորդելոյ նորոգ սրբազան Ղուկաս կաթուղիկոսին։ Ապա եւ շնորհակալութիւն վասն արդեանց իւրեանց ի Զմիւռնի առ Ն-սայի վարդապետին։

Թուղթ առ ժողովուրդս Թեմից սրբոյն Յովհաննիսի վանիցն՝ որ ի Մուշ։ Վասն առաջնորդին իւրեանց Յովհաննէս վարդ., որ եկն աստ յօրինիլ եպիսկոպոս յաւուրս Հոգելոյս Հայրապետին մերոյ Տեառն Սիմէօնի. Իսկ նա վախճանեալ մնաց սա առանց ձեռնադրութեան։ Եւ մինչ նորոգ սրբազանն Տեառն Ղուկաս կաթուղիկոսն օծեցեալ նստաւ յաթոռ, խոստացաւ յետ միջոցաց ինչ ձեռնադրել։ Ուստի առ այժմ՝ դարձաւ ի վանսըն իւր ի ժողովել զպտղին, եւ զպաշտօնէիսն հոգալ. եւ երբ ժամանակ լիցի զալ ի ձեռնադրիլ. որում եւ սրբազանն խոստացաւ գրել ինքեան ըստ ժամանակին՝ զի եկեսցէ։ Վասն որոյ թուղթս այս գրեցաւ առ ժողովուրդն, ծանուցանելով զսոյն ասացեալս, հանդերձ մերս անցիւք։

Թուղթ առ իշխանն Կարնոյ ի պատասխանի թղթոյն իւրեանց, որք գրէին զգալն թաթարին ի մեծէն Պօլսոյ՝ եւ իւրեանց յղելն զնա աստ՝ ըստ հարկելոյ Պօլսեցւոցն։ Որք յղեալ զնա աստ՝ գրեալ էին միաբանիցն ս. Աթոռոյս թէ՝ եթէ յիրաւի է մահն ս. կաթողիկոսին, ապա՝ առանց մերս գիտութեան մի՛ դնիցէք կաթուղիկոս, այլ զով ոք եւ կամիք, գրեցէք մեզ, եւ միաբանութեամբ լիցի։ Զոր սոցա եւս էին գրեալ, եւ սոքա եւս գրէին սրբազանին։ Ուստի ծանոյց սոցա ի կարճոյ՝ զոր ինչ առ Պօլսեցիսն գրեալ։

... Եւ յետ վախճանմանն լուսահոգ-ւոյն՝ մինչ վասն ասացեալ վանիկիցն՝ զ-նորժանութիւնս մեր կոչեցին ի յայս պա-տիւ, գեռ չեւ եւս էին զմեզ օծեալ, ո-րիշ չարագոյն վտանգ եւս վեր երեւեցաւ։ Զի քան զվարգավառն Ր շարաթ յառաջ մինչգեռ կենդանի էր լուսահոգին, զսուտ համբաւ մի ասաի հասուցեալ էին ի Թիֆլիզ, թէ հոգեւոր աէրն վախճանեցաւ։ Ուստի Խոյսէլ անուանեալ կաթողիկոսն որ անգ է, անկեալ էր ի դրունս Վրաց եւ զծանրագոյն կաշառս խոստացեալ, թէ զիս յէջմիածին նստուցէքզ։ Եւ այսմ բանիս նո-րա հաւանութիւն էին առեալ. այլ մեծն ասացեալ էր թէ՝ ձնասցէ՝ մինչև կրկին լուիցուք անտի զհամբաւ, եւ իմացուք զըս-տուգութիւն կաթուղիկոսի մահուանն, եւ յետոյ տեսցուք։ Եւ մինչ աստ զանուանա-կոչութիւնս մեր տարին միաբանքս, այս համբաւս էհաս առ մեզ ի Թիֆլիզու, եւ յոյժ հաւաստի իմացաք որ ստոյգ է։ Ուստի միաբանք սրբոյ Աթոռոյս կամեցան փութով օ-ծանել զմեզ. եւ մեք եւս՝ որ յակամայ կամս յանձն էաք առեալ զանուանակո-չութիւնն, և չկամէաք շուտով օծանիլ, մինչ զայս մեծագոյն չարիքս տեսաք զարթու-ցեալ ի վերայ սուրբ Աթոռոյս, յօժարե-ցաք օծանիլ, զի մի՛ ի պատճառս մերս ոչ օծանիլոյն՝ սուրբ Աթոռս ի ձեռս նոցա անկցի, եւ լիցուք ծաղր՝ եւ մեղադրելի յաղ-գէս մերմէ։ Ուստի եւ օծին զմեզ փութա-նակի ի յօգ. Ր։ Քանզի եբկեաք թէ՝ գուցէ յանկարծ ընդ քանի հարիւր մարդկանց

յղեսցեն զնա ասա, եւ բռնութեամբ նըստուսցեն . . . . . ՒՄԻԹ. սեպտ.։

Թուղթ ուս Հնրսակի Հորքայն Հրուց, ի պատասխանի սիրոյ Թղթոյն զոր գրեալ էր ընդ Դանիէլ վարդապետին, եւ Տէր Ղազարին եւ Բէջանին։

Ցորհ ժամանեսցի՛ Թուղթ Ճշմարիտ սիրոյ, հոգեւոր օրհնութեան եւ Փրկչական սուրբ ողջունի, նաեւ կարօտախառն ստոյգ առնչման եւ բազձանաց. Հանդերձ պահպանողական Զօրութեամբ եւ Շնորհօք փրկագործ Խաչին Քրիստոսի, եւ նորին կողմունք եւ կենարար Արեամբն ներկեալ հրաշազարդ գեղարդեանն սրբոյ. եւ սքաչելարար Ցեղոյս սրբոյ իջմանն նորին, եւ համայնից Աստուածածկիր սրբութեանցն, որք ասաւ ի վերայ զօրացելոյդ ի Ցեառնէ Աստուծոյ՝ եւ օրհնեցեալդ միշտ ի նմանէ, Ճշմարիտ եւ ընտիդ սիրելւոյդ մերոյ՝ եւ օգտաջան բարեկամիդ սրբոյ Աթոռոյս մերոյ եւ մեր ամենեցուն, բարեպաշտի եւ Աստուածասիրի, Հաւատարիմ՝ Քրիստոսի եւ քաջ ախոյեանիգ եկեղեցւոյ նորին սրբոյ. բարեյաղթ եւ թշնամահալած Արքայիդ մեծի Հերակլայ եւ Աստուածախնամ՝ ասն քուր, եւ նովիմբ զօրացեալ թագաւորիմ որգւոցգ եւ դստերացդ. եւ համայնից ընտանեացդ, ստոյգ սիրելեացդ եւ Հաւատարիմ բարեկամացդ։ Մաերիմ խորհրդակցացդ, եւ Ցիրապարգեւ իշխանութեանդ հպատակօզ մեծամեծաց։ Հաւատարիմ պաշտօնէիցդ, եւ ամենից Քրիստոսազօր Զօրապետացդ եւ Զօրաց. եւ բնաւից ընդ հովանաւորութեամբ քով եղելոցն, հնդալ ի Ցէր մեր Քրիստոս յոյն բնաւից՝ յարաժամ։ Ամէն։

(Շնորհք.)

Եւ ընդ շնորհազեղուն օրհնութեան նամակիս, ծանուցուամ լինի Աստուածասիրութեան քումդ։ Զի սիրածիր եւ նախապարգեւ. Թուղթն սիրոյ եւ մարդասիրութեանդ զոր գրեալ էր առ մեզ մեծութիւն ձեր ընդ որգեկին մերոյ Դանիէլ վարդապետին եւ մեր գործակալ Ցէր Ղազարին՝ եւ Ողորմութեանց Բէջանին, էհաս առ մեզ։ Ցորհ զգեցաք զայնցուքիւն սիրոյ եւ առատագին խընամոց քոց որ առ սուրբ Աթոռս մեր եւ առ մեզ գիտացեալ զյոլովագոյն ուրախութիւնս եւ զարտադիւրութիւնս ստացաք, Որդւոյ՝ ըստ բանի իմաստնոյն, որպէս ջուրն ցուրտ անձին ծարաւոյ գայ ի յախորժ, այսպէս եւ մեզ ծարաւելոցս մխիթարութեան եւ ըստփոփանաց, սրտագիւրութեան եւ յուսադրութեան՝ ախորժք եւ քաղցրաճաշակք երեւեցան բանքն գեղեցիկք, որք գրեալ էին ի քաղցրասիրա եւ ի խնամաշատ Արքայէդ առ մեր նուաստութիւն։ Որ նախապէս մխիթարեալ էիր զմեզ վասն առ Աստուած փոխեցման Հօրն մերոյ հոգեծնի, յայսմանէ լով եւ զքոյդ արամութիւն որ վասն նորին՝ յաղագս սիրոյդ Ճշմարտի որ առ նոս։ Ապա եւ յայտնեալ էիր զկամսդ բարի եւ զհաւանութիւնդ ընգ մեզ կոչումն, եւ որոյ սակս զուրախութիւնդ, հանդերձ շնորհաւորութեամբ, եւ յոլովագոյն սիրով եւ յուսադրութեամբ, յորդորանօք եւ սրտագիւրութեամբ. քաջալերութիւնս տալով սրտից մերոց՝ առ ի արիապէս հոգ առնիլ հարկի պաշտամանս մերոյ յանձնեցելոյ մեզ ի Ցեառնէ, եւ ամենակերպ կառավարութեան լուսակերտի Աթոռոյս մերոյ սրբոյ, եւ հասարակութեան անտիրացելոյ ազգիս, եւ աւանդութեանց եկեղեցւոյս մերոյ Աւաքելականին։ Ընդորս եւ ծանուցեալ էիր զսոյնս ամենեսեան կամիլն եւ շնորհաւորիլն քոյայնոցդ ամենեցուն ի յԱստուածապահ ասն քում եղելոց՝ զօրացելոց Քրիստոսիս Ցերամբ. նաեւ պերճապատիս թաւառաց եւ գործակալաց քոց. եւ ամենայն իսկ բնակչաց օրհնեցելոյ քաղաքիդ՝ հանդերձ եկեղեցական դասուք ամենքումբք։ Ցուցեալ էիր եւս զյոլովութիւնս բազմաեւսակ սիրոյ եւ խնամոց մեծութեանդ զորս ի քնէ անահ ունիս առ Միածնակէզ Աթոռս մեր սուրբ. եւ առ Աթոռապինքս եւ առ ազգս մեր իսկ. զորս եւ իբրեւ զյատուկ քոյս եւ զընտանիս խնամարկելդ մինչեւ ցարդ. եւ յայսմհետէ եւս զնոյնս կամիլդ. (զորս եւ մեք իսկ գիտեմք, եւ վկայեմք Ճշմարտութեան գրեցելոցգ.) խոստանալով եւս զնոյնս ի մեր աւուրս եւ առ մե՛ս մանաւանգ գերազանցապէս ունիլ. յորդորելով եւ զմեզ նմանապէս կալ առ աներգ մեծութիւն։ Որք

ամենեքեան յիրաւի մեծագոյնս խրախացուցին զմեզ, եւ եաուն զսփոփանս եւ զբաջալերութիւնս սրտից մերոց. եւ պարտականս կացուցին զմեզ շնորհակալութեամբ օրհնելոյ զքեզ և զՅիրահատսատա Տէրութիւն եւ զիշխանութիւն, քո՝ քոյայնովքդ հանդերձ վասնորոյ մեծապէս շնորհակալեալ մեր՝ եւ գոհունակ եղեալ՝ համայն միաբանիւք Աստուածաէջ սրբոյ գահիս՝ օրհնեցաք եւ օրհնեմք զօրհնեցեալդ յԱստուծոյ զհնամաշաս եւ զբարեսէր Արքայդ՝ հանդերձ քոյայնովք ամենեքումբք: Զորս Աստուածն ամենայնի օրհնեսցէ՝ եւ զօրացուսցէ, եւ ե՛ս առաւել փառօք և պերճութեամբ բարձրացուսցէ՝ և ճոխացուսցէ: Զամենայն հոգեկան և զմարմնական թշնամիս քո՝ կոխան ոտից քոց արասցէ, և իբրև զփոշիս հոսեսցէ առաջի քոյ: Ո՛չ ևս զթագաժառանգ որգիսգ զօրացուսցէ՝ ամենայն զօրութեամբ, և ամենայն ուրեք յաղթօղս և երևելի՛ս արասցէ, առ ի լինել բարի և արժանաժառանգ գահակալիչ Աստուածապահ Տէրութեան ձերոյ յորդւոց յորդիս: Եւ զամենայն ընտանիսգ. զհարազատս, զմեծամեծս և զգործակալսդ, և զքոյսդ ամենայն առհասարակ, օրհնութեամբ մեծաւ օրհնեսցէ՛ և պահպանեսցէ՛: Եւ զփոխարէնն պղծեան սիրոյ և խնամոց զորս առ սուրբ Աթոռս և առ մեզ ունիս, բազմապատկապէս չափեսցէ՛ ի հոգի և ի մարմին քո, աստ և ի հանգերձելոյնդ: Եւ փոխանակ այսքանեաց մխիթարութեանց և ուրախութեանց ի քէն մեզ պարգևելոց, մի՛ տացէ քեզ տեսանել զտրտմութիւն. այլ ուրախութեամբ մեծաւ ուրախ արասցէ զքեզ միշտ քոյայնովքդ: Եւ յամենից տրտմութեանց պատահեցելոց՝ մխիթարեսցէ՛ զքեզ հոգին սուրբ Աստուածն: Մանաւանդ՝ զնոր տրտմութիւնդ որք սակս երկուցն փոքրկաց՝ որգւոյ քոյ և Թոռին՝ փոխեցելոցն առ Քրիստոս, փարատեսցէ ի քէն և սփոփեսցէ զսիրտ քո՝ և համայնից ընտանեացդ՝ և ըզնոսա ընդ սուրբ մանկանցն Բէթղէհէմի ընկալցի ի փառս անվախճան կենացն: Որոց սակս և խնդրեմ յօրհնեալ Արքայէդ՝ չափել ինչ քեզ զտրտմութիւնս մեծագոյնս, այլ զՅովսէն ասել բան. Տէր ետ և Տէր էառ, եղիցի անուն նորա օրհնեալ: Որպէս կարող է փոխարէն նոցին զբազմապատիկս պարգևել ձեզ որպէս և Յովսէ Խնդրեմ ապա՝ զդոյն գերազանցութիւնդ սիրոյ և խնամոց՝ աննուազելիս ունիլ առ սուրբ Աթոռս և առ մեզ ըստ խոստմանդ բարւոյ, և սիրանիշ գրովդ մխիթարութեան, փարա՛ւ լինել ամենակերպ տխրութեանց և տրտմութեանց մերոց՝ որք անպակաս են յամենայն ուստեքէ: Իսկ և՝ զոր ինչ գիտել մեզ ի հարազատէն քումմէ և մեր իսկ՝ Տէր Ղազար աւագ քահանայէն գրեալ էիր, գիտացաք. և զոր ինչ ի մէնջն է, ի դմանէ՛ դարձեալ գիտել կարես: Իսկ որ վասն կոնդակ տալոյ ումեմն՝ ասացեալ էիր Տէր Ղազարին և Եէժանին ասել մեզ, ասացին և իմացաք: Որոյ վասն գիտասցէ՛ մեծութիւն քո: Զի մեք դեռ նոր եմք յղեալ զմահսարն մեր ի մեծն Պօլիս, և գեռ գիր չունիմք անտի, և տակաւին վասն այդպիսեաց բանից չգիտեմք ինչ ուրեք, որպէս և դոքա իմացան և պատմելոց են բարեպաշտութեան քումմ: Այլև՝ ահա զսիրելին մեր Կարապետ Արքեպիսկոպոսն յղեցաք ի սպաս մեծութեան քոյ՝ այսու շնորհակալութեան թղթով. մատուցանել Աստուածսիրութեան քումմ ի մերս դիմաց զողջոյն և զօրհնութիւն Աստուածային. և ի հարցանել զողջունէ և զբարեկեցութենէ Աստուածազօր Արքայիդ և ի գտանալն գիտակ առնել մեզ ի յուբախութիւն սրտից մերոց: Նոյնպէս և համարակութեան ժողովրդոց օրհնեցելոյ քաղքիդ՝ մատուցանել զողջոյն և զօրհնութիւն: Ցորմէ և զամենայն որպէսն մեր և սրբոյ Աթոռոյս իմանալոց եսւ: Ի ղլեր ի Տէր, զօրացեալ ի նոյն միշտ և պահպանեցեալ խաչիւն սրբով: Ամէն: ՌՄԻԹ, ի հոկ.

Թուղթ երկրորդ առ Ղևոնդ կաթուղիկոսն Վրաց, ի պատասխանի թղթոյն, սէր, եւ յորդորումն ի սէր եւ ի քարեկամութիւն։

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Ղուկաս կաթուղիկոս և ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց Առաքելական եկեղեցւոյս Քրիստոսի. Նաև՝ մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի։ Ծորմէ մատուցի մխարար ողջոյնն փրկչական. և ճշմարիտ սէրն հոգեկան, հանդերձ բազմատեսնէ սիրով և բաղձանօք՝ և ստոյգ կարօտիւ եղբայրական. նաև՝

Ցեառնդ Անանիա սրբազնակատար կաթուղիկոսիդ ամենայն Վրաց. և ծայրագոյն Պատրիարքիդ Հրաշազարդ Աթոռոյդ սրբոյ Մցխիթայու. բազձալով և յատկական սիրով սիրեցելւոյ եզբօրդ մերոյ ի Քրիստոս, և վաղեմի և իսկական բարեկամիդ Ասաուածաէջ Աթոռոյս մերոյ սրբոյ։

Որոյ և ծանուցումն լիցի։ Զի քոյդ սրբազնութեան սիրածիր քարեկեղն ժամանեաց առ մեզ ընդ Դանիէլ վարդապետ որդեկին մերոյ։ Որով զառ ի Աստուածածնայս պարզևեալ անխզելի շաղկապն եղբայրութեան, (զՓրկչաւանդն ասեմ՝ զմիարարն սէր՝ զոր աւանդեաց աշակերտաց իւրոց սիրելեաց. սիրել զմիմեանս ի բոլոր սրտէ՝ ի լրումն ամենայն պատուիրանացն պահպանութեան,) ի սիրարանէ մաքուր սրտիդ եռաւորեալ վառմամբ ցոլացեալ առ մեզ տեսանք։ Ընդարձ որպէս մինչ դատանէ ոք զանսագիտ իմն բարի՝ ուրախութեամբ մեծաւ՝ ուրախ լինի առ սյն, եդեալ զամենայն զընդիմակս ուրախութեանն ի բացեայ։ Այսպէս և ի դատանելս մեր զմարդարտատիպ ղէմինդ և զմաքուր սիրոյդ քոյ զբորբոքումն առ մեզ՝ մխիթարեցաք ի յոդնատեսակ տրտմութեանց, և ստացաք մեզ զուրախութիւնս հոդեղուարճս։ Եւ ղընծայեցեալն յայդմանէ արդիւնարար անկոյդ սիրոյ, ներ սրբութեան սրտիդ անկեցելոյ, և հոգեռոգ տածողութեամբ աճեցելոյ ըղքաղցրաճաշակն պտուղ՝ վայելեցաք և գուարճացաք։ Այսինքն՝ զդոյնով ճշմարիտ սիրով ուրախանալդ ընդ կուչիլս մեր ի սայս պատ/ւ՝ ըստ օրինի ստուգ սիրակցաց. և շնորհաւորելդ զսոյն. և նպաստաւորելդ սըմին արժանահայց աղօթիւք. և խոստանալդ ունիլ ըզդոյն անջինջ և անանց. և առ ի յոյժ հաստատութիւն դմին՝ յորդորելդ զմեզ և զդոյն ունիլ առ քեզ։ Ընդ որս ցնծացեալ մեր ուրախութեամբ մեծաւ, և շնորհակալեալ զանկեղծ և զստոյդ սիրոյդ, համաձայն քոյոյ պարզ և վճիտ դիտման հաստատեցաք և զմերս դիտումն. կալ ՁՁալ այդու ճշմարիտ սիրով ընդ քեզ ի յաստոյգ եղբայրութեան։ Հայցելով և յԱստուածոյ՝ ի ճըշմարիտ աղբերէն սիրոյ պահել զմեզ ի սոյնս անշարժ, և հեռի ի յամենից աւերառիթ և սիրաքակ դիպմանց անբարեաց։ Հայցեմ ուրեմն ի ճշմարիտ եղբայրութենէդ՝ և քոյ զսոյնս խորհիլ և խնդրել յԱստուծոյ՝ որպէս և առնեսդ, և ջանալ ոչ միայն զսիրոյն անկոյ ի դալարութեան պահելն և եթ՝ սաղարթապաճոյճ տեսութեամբ, այլև զպտղաբեր առնելն, ի տալ զպտուղս քաղցրացուցիչս քոյոց սրտի և հոգւոյ։ Այսինքն՝ օգտից Միածնաէջ սրբոյ Աթոռոյս և մեր կամեցօղ լինիլ միշտ և առնօղ, որպէս և խոստանասդ ՁՁալ ի յեղբայրսիրութեանն հաւատարմութեան. որով մեծագոյնս առնես զմեզ շնորհակալս և դոհունակս զՁճշմարիտ եղբայրութենէդ։ Այլև՝ ահա զսիրելին մեր կարապետ Արքեպիսկոպոսն յղեցաք յայդր՝ հանդերձ թղթովք մերովք օրհնութեան և շնորհակալութեան, ողջունել ի մերս դիմաց զօրհնեալ Արքայ սիրեցեալն մեր ի Քրիստոս, և զսիրելի եղբայրդ մեր, և զհաստարակութիւն ժողովրդոց մերոց. և զձերդ ողջունել և զբարւոք կեցուցեանց տեղեկանալ, և գալ առ մեզ և պատմել, ի յուրախութիւն սրտից մերոց։ Ծորմէ և զամենայն որպէսն մեր և սրբոյ Աթոռոյս իմանալոց ես լիապէս։ Զորս ի սէր եղբայրութեան քոյ յանձնեմ։ Ողջ լեր ի Տէր։ Ի ՌՄԻԹ հոկտ. Ե.

Թուղթ երկրորդ սո Իսրայէլ կաթողիկոսին, որ այժմ էր ի Հախպատ, ողջունելով առնել զնա ինքեան տեղի ընակութեան, իբրու ի վերայ աւուրց ընելով զհիմն։ Ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր ընդ Դանիէլ վարդապետին։

Ծորմէ սիրով և Քրիստոսական ողջունեաւ, ծանուցումն լիցի սիրելի եղբօրդ մերոյ սրբասէր կաթուղիկոսիդ Իսրայէլի։ Զի թուղթդ սիրանիշ էհաս սո. մեզ ի ձեռն սիրելի որդւոյն մերոյ Դանիէլ վարդապետին. և ընթերցեալ իմացաք զդրեալսդ։ Գրեալ էիր նախ ըստ օրինի՝ ընդ տրտմութեանս մերոյ զտրտմութիւն, և ընդ կոչիլս մեր ի յայս պաշտօն՝ զուրախութիւն և զշնորհաւորութիւն։ Ընդ որս շնորհակալեցաք զսիրելի եղբայրութենէդ։ Բայց զի դրեալ էիր թէ՝ զեռեղեալ էմք ի Հախպատ. իսկ թէ որով դիտմամբ, չէիր յայտնեալ. զայդմանէ չիմացաք ինչ։ Թէպէտև դրեալ էիր ի Դանիէլ վարդապետէն իմանալ զվիճակատորն՝ այլև ի նմանէ ոչինչ իմացաք որքան արժանն էր իմանալ, թէպէտ և խօսեցուցաք և սս. զի ոչ լուաք ղրանս պատկանաւորս խելացս։ Եւ զի մեք այժմ ի զանազան հոգս դրովմ զբաղեալ էաք յոյժ, վասնորոյ չունեցաք ժամ եր կարօրէն ինչ դրել սիրոյդ, թողլով ձեռնհաս ժամանակի։ Այլ այժմ որովհետև զսիրելիդ մեր կարապետ Աստուածիմաստ վարդապետդ և զԱրևի եպիսկոպոսդ յղեցաք ի սպաս Աստուածազօր սիրեցելոյ մերոյ ի Քրիստոս՝ ի հարցանել զողջունէն նորին, վասնորզ՝ զհամառօտ դիրս սիրոյ ևս սո. սիրելութիւնն քո դրեցաք ընդ դմա. ի նշան կատարեալ սիրոյ մերոյ որ առ քեզ, յորմէ և զմեր որպէսն իմանալոց ես, Իսկ որ զսիրոյդ սերտութիւնն և զյամենայնի ջատագովութիւնդ սո. սուրբ Աթոռս՝ ծանուցեալ էիր, և եզրափակեալ թէ՝ միանդամայն մեր ջանքն այս է՝ թէ քեզ հաճոյ և եթ դացուք, և այլն։ Սո. այդ իմաս ի հարկէ օրէն է ճշմարիտ սիրելեաց դոլ պղպէս սո. սիրակից. և կացուցանել զնա պարտական նոյնպիսի սիրոյ։ Ուսումն՝ զդասին ո՞րքան և որով չափու և ըզանազաւ առնիցես, ի հարկէ նովին չափովն թաթաղուն շարժուն և զեղուն ընդունելոց ես։ Բա՞ է խոհեմութեան սիրոյդ. և ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԻԹ թուոջս, ի հոկտեմբերի։

Թուղթ սո Թադէոսեանց Մէհիք Մկրտումն ի Թիֆլիզ, վասն ճորտացն մերոց, զի զհարկ մի առնուցուն ի վերքան զչափին։

Թուղթ վասն ՅԷրոռնի առնելոյ սրբոյ Աթոռոյս զտուն ոք ըստ իւրեանց յօժար կամացն. որ գրեցաւ այժմ ի Թիֆլիզ։

Ծորմէ ժամանեցի Թուղթ սիրոյ ողջունի՝ օրհնութեան և շնորհաց, հանդերձ հոգեպարար շնորհիւ սրբոյ իմման տեղւոյս Քրիստոսի ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց և հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյս և բնիկ ճորտիցդ սորին, Տէր Սիմէոն խոհեմամիտ քահանայիդ, և եղբարցն քոց զօրացելոց ի Քրիստոս, Խաչատուրին, Գրիգորին և Գարրիէլին։ Եւ Աստուածապահ ան ձերում և բնակութեան, որդւոց և դասերաց, ընտանեաց և ազգականաց, սիրելեաց և բարեկամաց, ընչից և ապրանաց և ամենայն ընդ օրհնեալ յարկաւ ձերով եղելոցն, ինդալ ի Տէր յարաղուարճացընծութեամբ։ Ամէն։

(Ընորհք.)

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ դիտասջիք սիրելի և հոգևոր որդիք մեր՝ ե լուսածին որդիք և հարազատ ճորտք սրբոյ Աթոռոյս էջմիածնին։ Զի դուք որք քաոսաւն ամաւ յատաջ ճորտ էք դնեցեալ սրբոյ Աթոռոյս. զորս սրբոյ Աթոռոյս նուիրակ և Թիֆլիզու քաղաքիդ Առաջնորդ Անանիա վարդապետն դնեալ է վասն սրբոյ Աթոռոյս, ահա յայնմօրէ մինչև ցայսօր կայք ի ներքոյ իշխանութեան սրբոյ Աթոռոյս, և զծառայութիւնս ձեր առնէք

սմա. և ունիք զԹուղթս հաստատութեան ի ձեռս ձեր։ Եւ զի Տէր Մարկոս պապն ձեր ի յօսմանցւոց երկրէն է եկեալ յայդ երկիր. և ո՛չ էք լսնիկ այգ երկրացի. և ի քառասուն ամաց հետէ ես ճորտ էր սրբոյ Աթոռոյս, վասնորոյ հարկ է ձեզ Տէրունի ժողովուրդ ևս լինել սրբոյ Աթոռոյս, որպէս օրէնն պահանջէ, և գուք ևս ձեր յաժար կամօքդ կամիք, և ընդ տէրունի ժողովրդոցն մերոց՝ սրբոյ Աթոռոյս տալք զձեր արգիւնան։ Ո՞ւստի՝ որպէս յառաջ քան զայս՝ սրբոյ Աթոռոյս նուիրակ և քաղքիպ Առաջնորդ Ռեթէոս վարդապետն կարգեալ է զքեզ զՏէր Սիմէոն սիրելի որգիդ մեր ի սրբոյ Աթոռոյս Տէրունի Ջկրաշէն կոչեցեալ սուրբ եկեղեցւոյդ միաբան, (որ և այժմ լուսարար ևս ես կարգեցեալ դրմին.) նոյնպէս և մեք ահա զքեզ հաստատեցաք լինիլ միշտ ի յայգ մեր Տէրունի սուրբ եկեղեցւոյդ, և հանդերձ Աստուծով զօրացեալ եղբարդ և ամենայն ընտանեօքդ միամտութեամբ ծառայել սրբոյ Աթոռոյս՝ և Տէրունի ևս լինիլ սմա։ Եւ ոչ ո՛ք ի յԱռաջնորդաց կամ յայլոց ունի իշխանութիւն ի վերայ ձեր՝ և կամ իրաւունս ինչ հանել զձեզ ի ժառանգութենէ սրբոյ Աթոռոյս, և առնել թեմ այլոց վանից. զի որպէս գրեցաք, դուք եկամո՛ւտ էք ի յայգ երկիրդ, և յայսքան ժամանակս ճո՛րտ էք սրբոյ Աթոռոյս, և այժմ ի մեր տէրունի վիճակոյդ էք։ Զի թէպէտ ի մտանելն ձեր յայդ երկիր՝ բնակեալ էք երբեմն ի գեղջ միում ի Վրաց տուն. որոյ վասն և նոյն գիւղի թաւաքն զձեզ իւրացուցեալ են. այլ մինչ մեք գնեալ եմք զձեզ քառասուն ամաւ յառաջ, և ի գեղջէն յայնմանէ եւլեալ էք ի վաղուց, և այժմ ի մեր Տէրունի վիճակոյդ էք. վասնորոյ՝ հաստատուն Տէրունի ժողովուրդք էք սրբոյ Աթոռոյս. և ոչ ո՛ք ունի իրաւունս զձեզ իւրացուցանելոյ՝ բաց ի սրբոյ Աթոռոյս։ Ո՞ւստի և մեք այսու օրհնութեան թղթով մերով հաստատեցաք զձեզ վերստին ի սրբոյ Աթոռոյս Տէրունի Ջկրաշէն սուրբ եկեղեցւոյդ, և արարաք զձեզ հաստատնապէս Տէրունի ժողովուրդ սրբոյ Աթոռոյս։ Լերո՛ւք ուրեմն անհոգ, և միամտութեամբ ծառայեցէ՛ք լուսատու մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Որոյ զշնորհսն ընկալջի՛ք միշտ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. և օրհնեսջի՛ք յԱստուծոյ և ի մէնջ հանապազ։ Ամէն։ ի ՌՄԻԹ, ի հոկ. ն։

Թուղթ սուրբ Ստեփաննոս Հայրապետին Վրաց, վասն որպիսութեանց մկրտից. և սէրն։

Ծորմէ Քրիստոսական սուրբ ողջսնիւ, և Հոգեկան սիրով ճշմարտիւ, ծանուցանէ լեցի սիրեցելոդդ մերոյ ի Քրիստոս, և սրբոյ Աթոռոյս մերոյ բնիկ բարեկամի և օգտասիրի, Տեառնդ Ամբակումայ Աստուածաբան վարդապետիդ։ Զի քան զայս յառաջ գրեցաք զԹուղթս սիրոյ և օրհնութեան առ Աստուածազօր Արքայն և առ իւրայինսն՝ և առ հասարակութիւն ժողովրդեան մերոյ որք ի յօրհնեալ քաղաքդդ, ծանուցանելով զորպիսութեանց մերոց։ Այսինքն, զվախճանմանէ Հոգելոյս Հայրապետին մերոյ առ Քրիստոս փոխեցելոյ. և զմերս յաջորդելոյ զԹոռս սուրբ՝ Հանդերձ ներկայական ցաւովք մերովք զորս ի Տարկէ և դուս սիրելիդ մեր իմացեալ ես. վասնորոյ այլ ոչ երկրորդեմք այժմ։ Իսկ զի յայն ժամանակ էաք ի մէջ բազմատեսակ ցաւոց և զբաղանաց յոլովից. մանաւանդ և զսիրելութենէ քումմէ չունէաք տեղեկութիւն. վասնորոյ՝ ո՛չ գրեցաք յայնժամ զԹուղթ սիրոյ առ սիրելիդ մեր։ Իսկ՝ մինչև դարձաւ այտի Հոգևոր որդին մեր Դանիէլ վարդապետն, և պատմեաց մեզ զքոյդ սիրոյ սերտութիւն զոր առ սուրբ Աթոռս մեր ունիս ի քէն, վասնորոյ՝ զայս սիրանիշ Թուղթ գրեցաք առ սիրելութիւն քոյ. առ ի յարծարծուն քենական սիրոյդ որ առ սուրբ Աթոռս, և ի հաստատիլ առ մեզ ի նորոգ սէր ճշմարիտ. որպէս և առ Հոգելոյս Հայրապետն մեր ունեցեալ ես զբարեկամութիւն ճըշմարիտ և զսէր։ Ո՞ւստի՝ խնդրեմ ի սիրելութենէդ, զի զնոյն ճշմարիտ սէրն և զբարեկամութիւնն և ի մեր աւուրս ունիցիս առ սուրբ Աթոռս միածնակէ՛ և առ մեզ. օգտից սորին և մեր՝ չնացո՛ղ լիցիս միշտ և առնօղ։ որպէս և արարեալ ես յառա-

ջագոյն՝ և լուսալեմբ: Եւ զԹուղթդ սիրանիշ հանդերձ յաւուկ ցաւակցութեամբ մի՛ պակասեցուսցես: Խնդ՝ զորպիսութիւնս մեր և սրբոյ Աթոռոյս՝ ի սիրելոյդ մեմէ կարապետ Արքեպիսկոպոսէդ իմանալոց ես, զոր հանդերձ օրհնութեան Թղթովք առաքեցաք առ. օրհնեալ արքայն և առ. հասարակութիւն ժողովրդոց մերոց. մատուցանել ի մերս դիմաց զողջոյն և զօրհնութիւն Աստուածային, և ի հարցանել զողջունէդ և զբարեկեցութենէդ դոցին: Զոր և ի սէր սիրելութեան քոյ յանձնեմ: Ո՛ղջ լեր ի Տէր: Գրեցաւ ի ՌՄԻՔ. ի հոկ. Ե:

Ցոյժ սիրով՝ և շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի, ողջոյն և օրհնութիւն տամ հոգևոր որդւոյն մերոյ սիրեցելոյ ի Քրիստոս. եղբօր որդւոյն քոյ ի Տէր զօրացեալոյ մեծահաւատ և բարեպաշտօն Գարսեվան Էշիկազաւուն. զոր և յորդորեմ ի սէր ճշմարիտ և ի բարեկամութիւն ատոյդ՝ առ սուրբ Աթոռս մեր և առ մեզ. առ ի վայելել զշնորհս Միածնաէջ սրբոյ Տեղւոյս և զօրհնութիւնս մեր: Որև լեցի՛ ողջ ի Տէր, զօրացեալ ի նմին միշտ, և յանձնեցեալ ի խնամս և ի գթութիւնս նորին յարաժամ: Ամէն:

Թուղթ վասն վէրջի ձուս կարգելոյ ըզգանձապետսն սրբոյ Աթոռոյս վասն սոլին. որ այժմ զրեցաւ ի վերայ հոլոից եկեղեցեաց տեղւոյն:

Թուղթ առ ժողովուրդսն, որք ի չնրկիրն Ափխազաց, որ այժմ իմէրէթի ասի, ծանուցանելով զփոխիլն առ Քրիստոս Տեառն Սիմէօնի ս. կաթուղիկոսի եւ յաջորդելն իւր զաթոռս, եւ հետեւապէս փոքր ինչ խրատ եւ պատուէր:

Թուղթ առ Մոլոմօն Աղբայն Ափխազաց որք իմէրէթի եւ Բաշիսուղուխ կոչին, ծանուցանելով զմահ լուսահոգւոյն եւ զյաջորդիլն իւր եւ խնդիր՝ ունիլ առ սուրբ Աթոռս եւ առ ինքն եւս զնոյն սէրն՝ զորս յաւուրս լուսահոգւոյն եւ առ նա ունէր. եւ զանդ եղեալ վերազնեայսն եւս նոյնպէս խնամ՝ել որպէս եւ յայնժամ խնամէր:

+ Կայսերուհւոյն ԵԿԱՏԵՐԻՆԷԻ, եւ Աստուածազօր Որդւոյն իւրոյ՝ Թագաժառանգ եւ Կայսերազուն՝ Քրիստոսիւ զօրացեալ ծայրագոյն ՔՆԷԱԶ ՊԱՒԼ ՊԵՏՐՈՎԻՉԻՆ, եւ բարեփառ Թագուհւոյն իւրոյ Տէրամբ օրհնեցելոյ՝ ծայրագոյն ՔՆԷՔԻՆԱՅ ՄԱՐԻԱՄ ՓԻԴՐՈՎՆԱՑԻՆ, եւ տիրապարգեւ՝ նորաբողբոջ եւ թագազարմ որդւոցն իւրեանց ԱԼԷՔՍԱՆԴՐ ՊԱՒԼՈՎԻՉԻՆ, եւ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՊԱՒԼՈՎԻՉԻՆ:



Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Ղուկաս՝ որոյ շնորհիւն և կաթուղիկոս և ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց՝ աստուածաշնորհ և առաքելական եկեղեցւոյս Քրիստոսի. նաև լուսակերտի՝ Քրիստոսաիջի՝ շնորհատուի և ադինաստարատի Մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի: [3])

Ցորմէ ժամանեցի՝ Թուղթ սիրոյ Քրիստոսական ողջունի՝ և անդրանիկ օրհնու-

թեան՝ նամակ պահպանութեան, և շնորհք առաքելական. և Աստուածային բազմապատիկ օրհնութիւնն՝ և նախախնամական գըթութիւնն. հանդերձ առատաձեղ և հոգեպարար շնորհօք և զօրութեամբք սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի՝ ե. համայնից Աստուածակիր և հրաշագործ սրբութեանցն և սուրբ մասանցն որք ի սմա՝ նախ ի վերայ աստուածախնամ և բարեճոխ բոլոր երկրիդ օրհնեցելոյ աղգիդ Ռուսաց. և ի դմին եղեալ աստուածակացոյց՝ և նովիմբ զօրացեալ, խաչապսակ՝ և ամենաբարեպաշտուհի, Օգոստափառ և հիեզերակալ մեծի ինքնակալուհի + ընդ որս և համայնից խորհրդակցաց նորին. Գերապատիւ նախարարաց, մաերիմ կուսակալաց. և ամենից իսկ աստուածասէր զօրապետաց ե. զօրաց՝ նաև բնաւից տիրահաստատ քաղաքաց և գաւառաց, և ի գոստում (sic) եղեալ իրաւախոհ և արդարադատ քաղաքակալաց, գաւառապետաց և դատաւորաց, և ամենայն իսկ պերճափառ իշխանաց և տերաց. ե ամենից իշխեցելոցն՝ որք ընդ ձեռամբ գոցին։ Եւ ապա՝ ընդ աստուածապահ տէրութեամբդ դոցին զետեղեալ մերազնեայ Հայկասէր՝ Լուսաւորչակրօն և միաբանադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս. սիրելի ե հոգևոր որդւոցդ մերոց՝ և լուսածնունդ զաւակաց Աստուածածէջ սրբոյ Աթոռոյս՝ և տէրունի ժողովրդոցդ սորին, որք բնակեալ կեայք ի կայսերապերճ մայրաքաղաքդ Պետրուրբս և ի Մոսկով. նաև ի Հաշդարխան, ի Ղըզլար, ի Մ՚ոզոզ, ի Սառափան (sic) ի Բօբաղան, ի Նոր-Նախիջեւան, ի Չէրքէզ, և յայլ ամենայն հեռաւոր և ի մերձաւոր տեղիս օրհնեցելոյ երկրիդ։ Ռուս կառուցեալ Քրիստոսահիմն սրբոց եկեղեցեաց՝ և եկեղեցականաց դասուց, սիրելի որդւոյդ մերոյ՝ և քրանաջան զաւակիդ սրբոյ Աթոռոյս և ծայրագոյն նուիրակիդ սորին, և արժանավայել առաջնորդիդ համայն մերազնեայ ժողովրդոց օրհնեցելոյ երկրիդ. Ծովսէփ աստուածազան վարդապետիդ և արհի եպիսկոպոսիդ։ Նաև համայնից սրբանուէր քահանայից, ուսումնասիրաց սարկաւագաց, պատուամեծար իշխանաց, բարեճոխ մեծատանց, հանճարեղ վաճառականաց, հարազատ և հաւատարիմ գանձապետաց և երեսփոխաց, բազմահմուտ արհեստաւորաց, քըրտնաջան հողագործաց, և այլ առհասարակ միահամուռ ամենայն ժողովրդականացդ խըմբից, մեծաց և փոքրոց. արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից. խնդալ ի ՅԷր մշտազուարճ ցնծութեամբ և ուրախութեամբ։ Ամէն։

Շնորհք ընդ ձեզ և երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ ամենակալէ, և ի Յեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, և ի սրբոյ Հոգւոյն կենարարէ. իջեալ հանգիցէ՛ ի վերայ ձեր, եկեսցէ և բնակեսցի՛ առ ձեզ, իբրև զյորձանս գետոց, և որպէս զվտակս աղբերաց, յորդահոս բղխմամբ, և առատապէս ծաւալմամբ։ Ընդ որոյ հովանաւորութեամբն զօրասջի՛ք միշտ։ Ամէն։

Ա՛յլ ե՛։ օրհնեսցէ՛ զձեզ Յէր Աստուածմեր՝ և զարդարեալ պայծառացուսցէ՛ զամենեսեանդ հոգւով և մարմնով, տամբք և տեղեօք, որդւովք և դստերօք, զարմօք և զաւակօք, սիրելեօք և բարեկամօք, ընչիւք և ապրանօք, անդօք և անդաստանօք, պտղեստանօք և բուրաստանօք, առիւք և տրօք, շահօք և վաճառօք, ելիւք և մտիւք, և ամենայն գոյականօք։ Ամէն։

Եւ ընդ աստուածայնոյ և անդրանկի օրհնութեանս, ծանուցում լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ և հարազատ զաւակացդ և տէրունի ժողովրդոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի սրբազան առաքեալն Պօղոս, ի գեղեցկապէս խօսիլն զբաշխմանէ զանազան շնորհաց Հոգւոյն սրբոյ՝ (ըստ որում և ասէ՝ իւրաքանչիւր ումեք տուեալ է ի յայտնութիւն Հոգւոյն առ իւրաքանչիւր օգուտ, և այլն որ զհետ սմին). վերջապէս բերէ ի վերայ թէ՝ զայս ամենայն յայղոզէ միևնոյն Հոգի, և բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի։ Ահա յաստացելոյ աստի յայտնի երևի, զի ամենայն բաշխումն շնորհաց ի Հոգւոյն սրբոյ է. ամենայն գործ հոգևոր ի նմանէ առնորինի, և ամենայն ընտրութիւն հոգւոց նովաւ լինի. զի նա է՝ որ յայղոզէ զամենայն յամենայնի՝ ըստ նոյնոյ սրբազան առաքելոյն բանի։ Ա՛րդ աստացեալ զայս՝ ծանուցուք ապա սիրելեացդ մերոց զվերոյս անարժանութեան կոչումն ի յայս աստիճան, թէ որպիսիարար եղև. զի գիտասջիք թէ՝ և այս ոչ էր առանց աս-

տուածային աներևութեան, այլ ի նոյնոյ Հոգւոյն սրբոյ յաչդեալ և յառաջացեալ, յայնմանէ՝ որ զմաքսաւորս և զմեղաւորս արար ժառանգորդս իւրոց շնորհաց. որ և զիս գՀանդուն ակից նոցին ի յայս կոչումն կոչել հաճեցաւ՝ չգարշեցաւ ինչ յիմոյս անրաւականութենէ։ Քանզի՝ մինչ էի ես ականաբին ի գործ նուիրակութեան և առաքնորդութեան մայրաքաղաքին Զմիւռնոյ և համայն օրհնեալ վիճակացն՝ յամս երկուտասան, ի բաղմաց խուժանաց և ի պէս պէս զբազմանց գործոցն այնոցիկ ճնշեալ և վաստակեալ յոյժ, ցանկայի գիմել ի գահս սուրբ առ ի հանգչել ի ծոց սորին և գտանել զապահովութիւն կենաց. ուստի և քանիցս խնգրեցի ի յերանելի Հայրապետէն մերմէ Տէր Սիմէօն սրբազան կաթուղիկոսէն հրամայել ինձ գալ ասա. որոյ և լսելով իսկ աղաչանաց իմոց՝ առաքեաց անգ իոհանակ իմ զնորոգ նուիրակ և առաջնորդ, և ինձ հրամայեաց ելանել և գալ ի սուրբ Աթոռս. որ և եկի իսկ ասա՝ ի ՌՄԽԵ թուոջ մերում։ Եւ թէպէտ ապահովութեան ցանկայի՝ որպէս և գրեցի, սակայն՝ ոչ երբէք տեսի զապահովութիւն, և ոչ զուրախութիւն ինչ սրտի. զի յօրէ մըտանելոյն իմոյ ի սուրբ Աթոռս մինչև ցսոյն ժամանակ՝ ոչ երբէք տեսի զերանելի Հայրապետն մեր ուրախ և անզբաղ, և ոչ իսկ աղաս ի մարմնական հիւանդութենէ. զի օրըստօրէ բազմանային պէս պէս ցաւք և ձախորդութիւնք՝ վասն խռովութեանց երկրիս. որովք հաշէր և մաշէր ինքն, և մեք եւս ընդ նմա։ Եւ այնու կացութեամբ հասեալ ի յանցեալ ամն մինչ երկիրս մեր մեծագոյնս վըդովեցաւ և աւերեցաւ, և ինքն ևս զյոլով վիշտս և զցաւս կրեաց, ապա՝ դիպեցաւ մեծագոյն և երկար հիւանդութիւն իրիք. որպէս ահա գրեալ է առ ձեզ կոնդակաւ զամենայն անցսն երկրիս՝ և սրբոյ Աթոռոյս՝ և իւր։ Զոր գրեալ և պատրաստեալ էր ընդ այլ բազում թղթոց առաքել յայդր, և վասն ժամանելոյ վախճանին՝ չկարաց ինքն յղել. իսկ ահա մեք յղեցաք ընդ սոյնոյ կոնդակիս մերոյ զայն ամենայն թուղթն լուսահոգւոյն և զկոնդակն որպիսածանոյց. յորմէ իմանալոց էք զլիապէսն։ Եւ այնու երկարագոյն հիւանդութեամբն իսպառ անկեալ ի զօրութենէ, իբրև հասաք ի Ի. սրն ամսոյն յուլիսի՝ որ էր վարդավառի կիւրակէն, բարի վախճանաւ, զարմանալի զգաստութեամբ և մեծաւ հեշտութեամբ փոխեցաւ առ Քրիստոս. Թողեալ զմեզ յորբութիւն և ի սուգ անմխիթար. և զսուրբ Աթոռս անսէր և անայցելու ի գառն ժամանակիս։ Որոյ զՀոգին Ցեր լուսաւորեսցէ, և զգլուխ ձեր ողջ պահեսցէ՝ և սուրբ Հոգւովն մխիթարեսցէ՝ զձեզ զամենեսեանդ և կենդանի օրհնութիւն նորին եղիցի ի վերայ ձեր ամենեցուն։ Եւ որպէս ասացի՝ ի կենդանութեան լուսահոգւոյն ի զբազմունս և ի ցաւս եղեալ ընդ նմա և զապահովութիւն չտեսեալ իմ, զկնի մահուան նորին ևս՝ ըստ իւրոյ կատկին արկին զիս ի մէջ մեծագունի պյսորիկ հոգածութեան, որ ի վե՛ր է քան զկարն իմ։ Քանզի իբրև մերձ եզև լուսահոգին ի վախճանել՝ (զոր և իմացաւ իսկ) տեսեալ զերկիրս յօրէ օր ի խռովութիւն և ի յաւերումն դիմեալ. և զժամանակս չարացեալ. և զայն ևս իսկ, զի յետ մահուան իւրոյ վնասք աւերիչք լինելոց են Ցանս սրբոյ՝ եթէ յանահրութեան ձնասցէ. ապա յաւուր շաբաթու Վարգավառին, ի ժամ սրբոյ հաղորդութեանն, կտակեալ էր մեզ բանից սրբոյ Աթոռոյս ի ձեռն խոստովանաւորն, զի զանարժանութիւնս մեր կացուսցեն յաթոռ Հայրապետութեան. զի մի անսէր ձեալով ընտասցի Աթոռս սուրբ։ Որ և զնախկին միտն իւր իսկ յայտնեալ էր, թէ այսու մտօք պահեցի զգաս ասա, և ի գործ ինչ ո՛չ յղեցի. զի մինչ գիպեսցի ինձ մահ, մի ձնասցէ Աթոռս սուրբ անայցելու ի յերկար միջոց՝ ի յայս ընտասաշատ ժամանակիս։ Ո՛ստի՝ զկնի վախճանի լուսահոգւոյն մինչ միաբանք սրբոյ Աթոռոյս և ձնացորդք ժողովրդեան երկրիս ժողովեցան ի միասին ի խորհել զօգուտն տանս սրբոյ՝ և իմացան զկատկ լուսահոգւոյն, և ծանեան ըզգիտմունսն, և զփորձն իսկ առեալ՝ տեսին թէ յիրաւի մեծագոյն ընտասուց է հանգիպելոց սուրբ տունս, ապա սկսան միաբան բազմութեամբ բռնադատեալ զմեզ և կոչել ի յայս կարգս։ Իսկ իմ գիտեալով զանկարողութիւնս յամենայնի, և զանարժանութիւնս այսմ շնորհի, թէպէտ և բազմից

հրաժարեցայ՝ և աղաչեցի ի բաց կալ յինէն, այլ ո՛չ կարացի զերծանիլ և ի կամս իմ ձնալ, քանզի սաստկասէր բռնագատեալ դնուաւատութիւնս իմ, ասէին և զայս թէ՝ պատճառ. ես լինելոց միաբանութ և աւերմանց տանս սրբոյ՝ եթէ չառնուցուս յանձն՝ որպէս և կտակեալ է լուսահոգին։ Եւ իմ հայելով ի նախանձս դիտմունս լուսահոգւոյն, և ի չափազանցօրէն ստիպումն համախուռն բազմութեան սոցա, և ի վտանգն առաջիկայ՝ որով պիտանելոց էր տունս սուրբ. ապա՝ ո՛չ համարձակեցայ առանց Աստուածոյ կարծել զայս. այլ ըստ վերոյգրեցելոյ Բանին առաքելական, գիտացի առանց երկբայութեան, զի Հոգին սուրբ է՝ որ զայս այսպէս անօրինէ և յայղէ, և առնէ որպէս կամի Ուստի՝ և երկեայ՝ թէ գուցէ ընդդիմանալս իմ աստուածային կամացն ընդդէմ լինիցի։ ե. պատճառ լինիցիմ պիտանութեան տանս սրբոյ՝ ի չառնուլս յանձն, որով և զմեզս ստանայցեմ ինձ՝ քան թէ զօգուտ անձին, և ի յօրհնեալ ազգիս մերմէ ևս զմեղադրութիւնս լսիցեմ վերջապէս։ Վասնորոյ հետևեցայ կամաց սրտին, և յանձն առի զծանրութիւն լծոյս յանձնելով զիս շնորհաց և ողորմութեանն Աստուածոյ։ Իսկ մաքանք սրբոյ Աթոռոյս և ժողովք ժողովրդոցն որք ընդ սոսա, իբրև տեսին թէ՝ պիտանք մեծագոյնք կան առաջի՝ որպէս ասացաք, ապա՝ այլ ո՛չ կարացին երկարել զմիջոցն՝ և նախապէս գրել ի հնուաւոր տեղիս ըստ սովորութեան, և ո՛չ զոնեայ զեօթներորդ օրն թագման լուսահոգւոյն անցուցանել, այլ ի նոյն իսկ եօթներորդում աւուրն որ է՛ր կիւրակէ և օգոստոսի Ը, գնուաստութիւնս մեր օծին ի հայրապետութիւն ազգիս Հայոց՝ և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զկնի որոյ ապա գրեցաք զթուղթս ծանուցանօղս այսր եղելութեան յամենայն հեռաւոր և ի մերձաւոր տեղիս, յորոց ընկալաք և ընկալումք զթուղթս համաճաշականս և ընդունողականս և շնորհաւորականս։ Եւ այսպէս անկեալ իմ ի ներքոյ այսր ծանրագունի բեռն, յո՛չ այլ ինչ եմ ապաստան ի միայնութեանս և յանօգնականութեանս իմում ի ցաւագնաց ժամանակիս. եթէ ո՛չ նախ ի յատուկ և յամենամեծ ողորմութիւնն Աստուածոյ, և ապա ի յօժանդակութիւնս աղօթից համայն լուսածին զաւակացդ սրբոյ Աթոռոյս. որովք ապա կարողացայք կառավարել ըստ կարողութեան, զլուսատու մայրըս ձեր սուրբ Աթոռս, և զհասարակութիւն օրհնեցելոյ ազգիս Հայոց։ Այժմ զայս գրեմ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց ի Քրիստոս։ Զի որովհետև հարկ ի վերայ իմ եղաւ ահա՝ ի տնտեսել և ի կառավարել զեկեղեցի և զժողովուրդս Աստուածոյ, և ի մշակել զբանաւոր այգիս Ցեղուն զօրութեանց ըստ կարողութեան, վասնորոյ առ ի յօժանդակութիւն տկարութեանս իմոյ՝ զհնգեսին իրս խնդրեմ ի հոգևոր որդւոցդ մերոց, որովք կարացից և ես ըստ իմում կարեաց բարւոքապէս պաշտպանել զդասս։ Նախապէս՝ խնդրեմ ի ձէնջ զօժանդակութիւնս աղօթից, որովք կարացից հոգալ զհասարակութիւն Ազգիս և զհաստոյ ւայրս ձեր սուրբ Աթոռս։ Քանզի առնակերպ խուժանք կուտին և կուտեկոց են ի վերայ մեր օրըստօրէ. և կրելոց եմք ըստ բանին Պօղոսի ի յամենուստ ղվիշաս ի հեթանոսաց, վիշաս յաւազակաց, վիշաս յաղգէ, վիշաս ի սուտ եղբարզ։ Ո՛ստի ղեկընդեր Նորին՝ երանելոյ և ե՛ս առնեմ ի ձէնջ։ Այսինքն թէ՝ պատերազմակից լինիլ ինձ յաղօթս վասն ինձ առ Աստուած։ Զի ապրեցայց ի ճնշողաց ամենեցունց՝ որք յամենայն կեանս իմ ճնշեցելոց և մաշեցելոց են զիս ի վիշաս ըստ բարուցն ժանտութեանց (ընդ որս ոգորեցոց եմք մահո՛ւ չափ տաժանմամբք) և պաշտօնս ընդունելի լիցի առ Աստուած։ Նոյնպէս և զա՛յն իսկ խնդրեմ, որ ասէ. Այսուհետև ե՛ղբարք, աղօթս արարէք ի վերայ մեր. զի Բանն Ցեղուն ընթանայցէ և փառաւո՛ր լիցի յամենայն տեղիս։ Զի ապրիցուք յանօրինաց և անզգամաց մարդոց. զի ո՛չ ամենեցուն են հաւատք։ Որպէս զի՝ օժանդակեալ այսու աղօթիւք, կարացից ղհոգևոր այգիս աստուածատունկ՝ (այսինքն՝ զհասարակութիւն Ազգիս՝ և զսուրբ Աթոռ մայրս ձեր լուսատու.) բարեպէս մշակել և կառավարել։ Զի թէև ո՛չ կարասցուք յաւելուլ ինչ ի վերայ առաջնոցն բարեզարդութեանց, գոնեայ՝ և չպակասեցուսցո՛ւք ինչ. զի մի՛ զանիրաւ և զանհաւատարիմ մշակացն ըն-

կալցուք զդատաստան։ Նոյնպէս՝ վշտակցաբար աղօթել և վասն սոյնոյ պգալոյս հոգևորին, պայինքն՝ վասն հասարակութեան աղգին՝ որք հարեալ են յամենայն ուրեք անյաջողութեամբ, և վասն սրբոյ Աթոռոյ մօրս ձերոյ վշտակրի. ասելով զբանն եր ջանկին Գաւթի թէ՝ Ատուած զօրութեանց, դա՛րձ՝ հայեա՛ց յերկնից և ե՛ս, ա՛յց ա. րա այգւոյս պսպղիկ և դարման տար սմա՝ զոր անկեաց աչ քո։ Երկրո՛րդ՝ ազաչեմ սիրոյն Աստուծոյ՝ զհաւատոյ որդիսդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, պա՛րտիք ըզսէրն աստուածային ճշմարտութեամբ ունել առ միմեանս և խաղաղութեան զհետ երթալ, և յերկիւղ Տեառն կրթել զանձինս ձեր, և զամենայն ներհակսն բարեաց ի բաց մերժել ի ձէնջ։ Քանզի պա՛րտիք յօբքէնս Աստուծոյ տածիլ և ի Լուսաւորչագիր՝ սուրբ և յուզզափառ հաւատս պահել զժողովուրդդ ձեզ հաւատացեալ. զի զարիւնս գոցին ի ձէնջ պահանջելոց է Աստուած։ Իսկ ժողովրդականացդ դասք, պա՛րտիք մեծաւ երկիւղիւ և ամօթխածութեամբ հնազանդ և հպատա՛կ կալ հոգևոր հովուացդ ձերոց ըստ առաքելոյն հրամանի. քանզի և զանհնազանդսն պարտաւորէ Տէր՝ որպէս գիրք ասեն։ Ուրեմն իւրաքանչիւր ոք ի ձէնջ միշտ ջանասցէ զհաճոյս Տեառն առնել, որովք և ժառանգաւոր արքայութեան նորա գոլ։ Ցայնժամ և իմ լուեալ զբարւոք գնացս ձեր՝ ուրախութեամբ մեծաւ ուրա՛խ եղէց ի Տէր. ըստ Յովհաննու սրբոյ աւետարանչին որ ասէ՝ մեծ ևս ինչ ուրախութիւն քան զայս ո՛չ ունիմ. եթէ լսիցեմ թէ՝ իմ որդեակքն ճշմարտութեամբ գնան։ Երրո՛րդ, ի սուրբ և ի միաբանագաւան և յուզզափառ հաւատս Հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ՝ անշեղ և անխոտո՛ր մնասջիք. և զամենայն հոգևոր կարգս և աւանդութիւնս եկեղեցականս և զկանոնս Աստուածահաճոյ՝ զաւանգեալն մեզ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ և յամենից երանելի նախնեացն մերոց, հաստատուն և պնդապէս ունիցի՛ք, որոց և նախանձախնդիր լինելով՝ զո՛չ առնօզն կշտամբեսջիք, որգւոց և յեսաագայից ձերոց բարի օրինակ լիջիք, գուբ առնելով և նոցա ևս ուսուցանելով և աւանդելով։ Որպէս զի՝ միշտ հաստատուն ճաչալով ի միջի ձերում՝ այգսիկ՝ վարձատրիջիք յԱստուծոյ. և զսըրբոց Հայրապետաց և զերանելի նախնեացն մերոց ընկալջի՛ք զօրհնութիւնսն. զի օրհնութիւնք հարց հաստատեն զտունս որդւոց՝ ըստ բանի իմաստնոյն։ Զորրորդ՝ զսուրբ Աթոռ հաւատաղ մայրս ձեր միշտ ի մտի ունելով առաւել հարազատութեամբ և ըզձավառ սիրով սիրեսջիք զսա հարազատ որգիարար։ Քանզի՝ սա՛ է մայր հաւատոյ ձերոյ, և սա՛ է ձեզ ծնող լուսածին, և յաւուկ պարծանք Աղգիս Հայոց։ Ուրեմն՝ պարտիք միշտ սորին օգափցն ջանացող լինել և առնօղ որգիական ցաւակցութեամբ և սրբատացաւութեամբ։ Եւ միշտ առ ի շահել զնաւ զհետ հաւատոյ մայրս ձեր սուրբ Աթոռս և զմեզ, առաւել քան զոր շահեալ էք մինչև ցարգ. Թէ ի ձեռն բազմաեռանդ՝ հարազատութեանց, և թէ ի ձեռն հոգևորականացն որոց, տալով յիւրաքանչիւր ժամանակս առատապէս։ Հինգերո՛րդ՝ ահա զսիրելի որգիդ մեր՝ զհարազատ և զբազմաշխատ զաւակդ սրբոյ Աթոռոյս՝ և զծայրագոյն նուիրակդ և զառաջնորդ ձեր զՏէր Յովսէփ աստուածարան վարդապետդ և զԱրհի եպիսկոպոսդ հաստատեցաք վերստին ի գործ իւր, առ ի աւարտել զնացորդս նուիրակութեանն, և յաւարտ հասուցանել զրարի և զաստուածահաճոյ առաջագրութիւնսն իւր զոր առաջագրեալ ունի՝ և հոգայ, որպէս գրեալ էր հոգելոյս Տեառն մերոյ սրբազան հայրապետին ի Քրիստոս հանգուցելոյ։ Ուստի՝ պարտիք որպէս մինչև ցայժմ՝ ընկալեալ էք զգա գերագոյն սիրով և մեծարանօք (զոր գրէր միշտ շնորհակալութեամբ) նոյնպէս առաւելագոյն քան զայն ընդունել մեծաւ սիրով. լինիլ դմա յամենայնի հպատակ և հնազանդ որգիական սիրով, և ամենից հոգևոր և անմեղածին հրամանաց դոռին լսօղք գոլ և առնօղք։ Եւ զամենայն տուրս ձեր հոգեկան զոր ինչ և ասյք սրբոյ Աթոռոյս՝ մօրս ձերոյ լուսատուի, առատօրէն նուիրմամբ յանձնեսջիք ի ձեռս գործ. քանզի ի գա հասեալն մեզ և սրբոյ Աթոռոյս՝ է հասեալ, առանց կարծեաց թարց երկբայութեանցն։ Որում զոր ինչ սէր և զմեծարանս, զպատիւ և զընդունելութիւն, զհնազանդութիւն և զբարւոք ուն-

կնգրուԹիւն, ղօժանդակուԹիւն և զՀոնատուուԹիւնս ցուցանիցէք, ամենեքեան սրբոյ Աթոռոյս և մեզ լինին համարեցեալք: Ուրեմն՝ կատարելով ձեր ջՀոգևոր հրամանս մեր՝ արասջիք զմեզ ուրախագՀմս և սրտադիւրս. զի և դուք վարձատրեալք յԱստուծոյ, ընկալջիք և ջՀոգեկեցոյց շնորհս սրբոյ Աթոռոյս և ղօրհնուԹիւնս մեր յաւրաժամ. ամէն:

Գրեցաւ ի ՈՄԻԹ, Թուռջս, ի Հոկտեմբերի ամսոյ ելն. առ դրան լուսակերտի և ագինաստարասի մեծի Աթոռոյս սրբոյ էջմիածնի:

(ինքնագիր) ջայսքանս գրեցի իմով ձեռամբ

Ի հաստատուԹիւն գրեցելոյս:

Թուղթ առ Մկրտիչ կաթուղիկոսն Ափխազաց եւս ըստ ոճոյ Թղթոյ Արքային:

Ցեառնդ Մաքսիմոս սրբազնակատար կաթուղիկոսիդ և ծայրագոյն պատրիարքիդ օրհնեցելոյ աղգիդ Ափխազաց. սիրելոյ և յարգելոյ եղբօրդ մերոյ ի Քրիստոս, և օգտասիրիդ լուսանկար Աթոռոյս մերոյ սըրբոյ: Որում և գիտուԹիւն լիցի:

Ցիսուսի Քրիստոսի ծառայ ՏԷր Ղուկաս կաթուղիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարք Առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, նաև մեծի Աթոռոյս սրբոյ էջմիածնի: Ցորմէ մատուցի՛ ողջոյնն սուրբ փրկչական. և սէրն ճշմարիտ Հոգեկան, Հանդերձ եղբայրսուԹեանս մերոյ յոգնայիզ բաղձանօք և ստոյգ տենչմամբ.

Զի գիտելով մեր զսէրդ ճշմարիտ՝ զոր առ երջանիկ Հայրապետան մեր ՏԷր Սիմէօն Սրբոբազան կաթուղիկոսն ունէիր, և զերԹևեկան սիրանիշ ԹղԹոց որ ի մէջ ձեր լինէր, ընդորս և ղսէր և զբարեկամուԹիւնդ ստոյգ որ առ Միածնաչէջ Աթոռս մեր սուրբ. վանորոյդ՝ զանցից մեր և սրբոյ Աթոռոյս Հարկաւոր վարկաք ի ձեռն սյսր նախընծայ ԹղԹոյս մերոյ սիրածրի՝ ծանուցանել սիրելի եղբայրուԹեան քումմ. քանզի՝ և օրէնն բարեկամական զնոյնն պահանջէ, Հարցանել զողջունէ միմեանց, տեղեկանալ զորպիսուԹեանց, ցաւիլ վշտակցաբար ի վերայ երեսրաց, և զնոյն միմեանց խորհիլ ըստ Առաքելական խրատուն: Արդ լուեալ է քոյ ի Հարկէ, ԹԷ յանցեալ սմին զքինէ կրեաց երկիրս մեր: Եւ յայնցանէ՝ վիշաք և ձախորդուԹիւնք յոլովք զմեզ պատեցին, և յորոց Սրբազան Հայրապետն մեր բազում վշտացեալ եգիտ զանձնամաշ հիւանդուԹիւնս, որով յոյժ պակասեցաւ ի զօրուԹենէ: Եւ ի հասանիլն մեր ի Ցուլիսի ԻՋ՝ որ մեզ ասն էր ՊայծառակերպուԹեանն Քրիստոսի, բարի մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս: Որոյ զՀոգին Ցէր լուսաւորեսցէ, և գլուխ սիրելւոյդ լիցի ողջ: Թող սակս բազմաց աւերիչ պնաստաց և ձախորդուԹեանց շուրջ պատելոց զմեօք, կատակեալ էր լուսահոգին նախահոգաբար՝ կոչել զմեզ ի յայս պաշտօն, զի մի ընդ երկարս ՊասցԷ տուն սուրբ յանհրուԹեան և վնասեսցի: Ուստի՝ միաբանք սրբոյ Աթոռոյս՝ և ՊատգորդՔ ժողովրդեանն երկրիս ժողովեալ ի վայր մեր՝ կատարեցին զկտակ լուսահոգւոյն: Որում չէաք ՝ ԹԷպէտ բաւական, և բազում Հրաժարեցաք, այլ ոչ կարացաք ՊՇալ ի կամս մեր, որք և օծին իսկ զանարժանուԹիւնս մեր ի ՀայրապետուԹիւն աղգիս Հայոց՝ և սրբոյ Աթոռոյս, և կամք վարանեալ ի բազմաեսակ ցաւս, որք յամենուստ կուտին ի վերայ մեր, և կարօտիմք ցաւակցի և մխիԹարչի: Ուստի՝ գիտելով յարգելի եղբայրդ մեր զորպիսուԹիւնս և զյոլովուԹիւնս անցելոց և նեղկայից ցաւոց մերոց, ըստ ճշմարիտ սիրելուԹեանն օրինի օգնեսցես մեզ նախ արժանահայց աղօԹիւք առ Աստուած, կարողացուցանել զմեզ ի վիշաս և ի փորձուԹիւնս աշխարհի, տանել համբերուԹեամբ, և զՀաս իւր բանաւոր և զԱթոռս սուրբ՝ կառավարել ըստ կարողուԹեան: Եւ երկրորդ՝ մխիԹարել խնդրեմ՝ զանմխիԹարուս-

Թիւնա մեր ի ձեռն սիրանիշ գրոյ, և զնոյն սէրն ղոր առ Հոգելոյս Հայրապետն մեր և յաւուրս նորա առ սուրբ Աթոռս ունէիր, ի մեր աւուրս և առ մեզ ևս ունիցիս, որով և զմեզ պարտականս կացուսցես նոյնպիսի ճշմարիտ սիրոյ առ եզբայրդ մեր և պաշտօնակիցդ ի Քրիստոս. և բարեկամութիւնն ըղձալի հաստատեսցի ի մէջ մեր՝ երթեւեկութեամբ սիրանիշ թղթոց: Եւ երրորդապէս հայցեմ ի յարգելի եղբայրութենէդ քումմէ, զի որպէս յաւուրս Հոգելոյս Հայրապետին մերոյ և նորին աղերսանօքն՝ ընդ Քրիստոսաղօր Արքային հատիք այսի ղոտս մոլար Ախթարմայից սուտ կարգաւորացն և ղեկեղեցին մերազնէից ետուք իւրեանց. որոյ աղագաւ և եդիք ղկանոնս դատաւճռականս՝ այլ ոչ թողուլ նոցա մտանել ի կալուածս ձեր, (որք և յղեալ էիք զօրինակ դատաւճռին առ Հոգելոյս Հայրապետն մեր՝ ղոր եաես և շնորհակալեցաւ մեծապէս հանդերձ միաբանիւք. և զեռևս նոյն յիշատակն բարերարութեան ձերոյ պատմի աստ և յամենայն աղգս մեր հանդերձ գովութեամբ և օրհնաբանութեամբ,) զնոյն կանոնսն խնդրեմ և ես՝ ունիլ հաստատուն, և ոչ տալ մուտս ոտից նոցին մտանել ի ձերդ կալուածս, և ապականել զմիաս պարզատաց: Նմանապէս և զեկեղեցին թողուլ ի ձեռս նոցա. զի մնասցեն հաստատուն ի հաւատս Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ. որոյ աղագաւ և մեք օրհնեսցուք զԱստուածապահ Տէրութիւնդ ձեր, և զյարգելի եղբօրէդ մերմէ ևս շնորհակալիցուք: Ահա առ Աստուածազօր Արքային ևս գրեցաք զսոյն խնդիրս մեր: Խընգրեմ կատարող լինիլ խնդրուածոցս ի սէր եղբայրութեան մերոյ. և զգիրդ սիրանիշ չպակասեցուցանել ի մէնջ յատուկ սիրովդ հանդերձ: Ողջ լեր ի Տէր: Գրեցաւ ի Ռ22 Թուոջ Փրկչին ի Նոյ. Ա. և ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին:

Թուղթ առ ժողովուրդսն Զրիվոյ որք ի յերկիրն Ռուսաց ի Տորն Նախիջեւան, ի պատասխանի իւրեանց մահսանին, որք զԳովսէփ վարդապետն խընդրէին Առաջնորդ ինքեանց: Եւ վասն փոխելոյն առ Տէր Սիմէօնի ս. կաթողիկոսին եւ յաջորդելոյն իւրոյ զսուրբ Աթոռս:

Թուղթ առ իշխանսն Ղրմցի ժողովրդեանն՝ որք ի յերկրոջն Ռուսաց՝ ըստ մտաց վերոյգրեցելոյ Թղթոյն:

Թուղթ առ ընծայօղս ծորտից գրելի, որ այժմ գրեցաւ ի Թիֆլիզ առ Քաջանակենց հանգուցեալ Դաւթի եւ Մկրտումի ընտանիսն, որք ընծայեցեալ էին սրբոյ Աթոռոյս զծորտ մի Շաքարօ անուամբ, որդի Յօհաննիսի Շամախեցւոյ ումեմն:

Թուղթ ծորտաթնեան, առ այնպիսիս գրելի որ յայլոց իցէ ընծայեցեալ ի ծորտութիւն սրբոյ Աթոռոյս:

Ծորմէ ժամանեցի Թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան և շնորհաց, հանդերձ գթութեամբ և ողորմութեամբն Աստուծոյ և շնորհիւ սրբոյ իշման տեղւոյս նորին, ի վերայ սիրելի և հոգևոր որգւոյգ մերոյ և հարազատ զաւակիդ սրբոյ Աթոռ:յս՝ և նոր ճոռատացելոյգ սորին՝ մեծահաւատ և ի Տեառնէ օրհնեցեալ պարոն Շաքարօյիգ: Եւ Աստուածապահ տան քումմ, և համայն ընտանեացդ ի Տէր ղօրացելոց, և ամենայն ընդ օրհնեալ յարկաւ քով եղելոցն, խնդալ ի Տէր միշտ, Ամէն:

(Շնորհք)

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս, գիտասջի'ր սիրելի' և հոգևոր որգիգ մեր, և հարազատ զաւակ և ճոռատ սրբոյ Աթո-

ոդյս էջմիածնի։ Զի ի ներկայումս գրեալ էին մեզ հարազատ գործակալք մեր զորպէսն քոյ և ղճորտանալգ սրբոյ Աթոռոյս, որ յետ վախճանի հօրն քոյ ի աէր հանգուցեալ Շամախեցի Յօհաննիսին, ի դմն օրհնեցելոյ քաղաքէդ Թիֆլիզու Ր եղբայրք՝ որք են Քաֆանակենց Դաւիթն և Մկրտումն, առեալ են զքեզ վասն իւրեանց. որ և յետ վախճանին նոցա ևս եղեալ ես ի ներքոյ ձեռաց ընտանեաց նոցին։ Իսկ յետոյ ընտանիք նոցին, այսինքն Ր եղբարց կանայքն, և որդիք նոցա՝ այսինքն՝ Աւետանդիկն, Նիկողայոսն, և Հանգուցեալ Գրիգորն, յսելով թէ՝ ի բնէ ճորտ էք եղեալ սրբոյ Աթոռոյս, ինքեանք ևս վերստին ընծայեալ են զքեզ սրբոյ գահիս Միածնիոյի. առ ի լինել սմա հաստատուն ճորտ՝ և սմա ծառայել. և դու ևս յօժարակամ սիրով ճորտացեալ ես սմա։ Որք և թէպէտ յանցեալ տարիսն ծանուցեալ են Հոգելոյս Հայրապետին մերոյ՝ և վասն քո զհաստատութեան թուղթ խնգրեալ, բայց Լուսահոգին վասն անձեռնհաս լինելոյն՝ և սակս երկրիս ճանապարհաց փակութեանն՝ ո՛չ էր կարացեալ յղել վասն քոյ զթուղթ հաստատութեան։ Իսկ այժմ մինչ մեզ ևս գրեալ էին և իմացաք, վասնորոյ՝ զայս օրհնութեան և հաստատութեան նամակս մեր առ քեզ գրեցաք ի միամտութիւն քեզ։ Որպէսզի ունիցիս զսա ի ձեռին քում՝ նշան և կնիք հաստատութեան ի սրբոյ Աթոռոյս՝ վասն ճորտութեանդ և յատկապէս ծառայութեանդ քոյ՝ զոր առնելոց ես սմա։ Զի մի ոք իշխեսցէ այսուհետև զբան ինչ ունիլ ընդ քեզ, և կամ զիր ինչ պահանջել ի քէն արտաքոյ կանոնաց սրբոյ Աթոռոյս ճորտիցն, յորոց ո՛չ է օրէն պահանջել ինչ ումեք, որպէս է սովորութիւն ի բնէ անտի հաստատեցեալ արքունական թղթով։ Որև այսու կանոնաւ՝ ո՛չ ումեք գոյ իշխանութիւն ի քէն իր ինչ պահանջելոյ. զի դու սրբոյ Աթոռոյս ես ճորտ և յատուկ ծառայ։ Վասնորոյ՝ զամենայն ճորտական տուրսդ՝ թէ հարկ և թէ մաքս, բոլորապէս պարտիս սրբոյ Աթոռոյս հատուցանել, ձեռամբ ի սրբոյ Աթոռոյս յայդր նստօղ Աաջնորդին։ Եւ այսպէս առնելով՝ եղիցիս օրհնեալ յԱստուծոյ՝ և ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ և ի մէնջ։ ԵՒ Շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ քեզ և ընդ քոյսինսն ամենայն եղիցի հանապազ։ Ամէն։ ի ՌՄԻԹ. ի նոյ. Ի։

Թուղթ ի Պօլիս առ իշխանս ոմանս զկնի հասանելոյն անդ Պետրոս վարդապետին՝ մահսար տանօղի, յորդորումն ի սէր եւ ի հարազատութիւն առ սուրբ աթոռոս, ծանուցանելով սակաւուք եւ զորպիսութիւն օծմանն իւրոյ։

Թուղթ շնորհակալութեան ի մեծն Պօլիս առ իշխանս ոմանս, որք ուրախացեալ ընդ հայրապետութիւն սրբազան վեհին, յելոլն անդ Պետրոս վարդապետին, արարեալ էին զյոլով ջատագովութիւնս։

Թուղթ առ իշխանսն մեծին Պօլսոյ, վասն խոշնդակ գնալոյն պատրիարքին ընդ Աթոռոյս եւ ընդ սրբազանին, որ եւ ի գարին զրեալ էր չյիշել զանունն։ Եւ տակաւին չհոգային զՔարմանսն ի յետս դարձուցանել զմահսարատար Պետրոս վարդապետն. եւ այլ առ այսպիսիս քանք։

Ցորմէ ժամանեցայ՝ թուղթ ձգմարիտ սիրոյ, Քրիստոսական սուրբ ողջունի, և ամենատաս օրհնութեան Աստուածմնոյ. Հանդերձ հանրածաւալ և հոգեպարար շնորհօք և զօրութեամբ Միածնիոյի տեղոյս սրբոյ, և համայնից հրաշագործ սրբութեանցն որք ի սմա. ի վերայ ձգմարիտ և ստոյգ սիրելեացդ մերոց ի Քրիստոս, հատազատ՝ օգտաբեր և սրտացաւ որդւոցդ սրբոյ Աթոռոյս։ Քրիստոսասիրացդ՝ և զօրացելոցդ միշտ ի նոյն, բարեպաշտիցդ և մեծահաւատիցդ. Ազնուականացդ և չքեղա-

պանծիցդ. Հանճարեզացդ՝ և ճշմարտասիրացդ. Հասարակաշահիցդ՝ և օգտախոհացդ. Համային պերճապատիւ իշխանապետացդ՝ և իշխանացդ ամենեցուն Ցերամբ օրհնեցելոց. որք կայք ի յԱստուածածախնամ՝ և ի կայսերապահպան մայրաքաղաքդ Կոստանդնուպոլիս. և ձերոյնոցն համայնից, խնդալ ի Քրիստոս յոյն մեր յարազուարճ բերկրութեամբ։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ, ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց՝ և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ըստ որում համբաւ բարի պարարէ զոսկերս, եղև մեզ պյժմ ցնծութիւն որսի ի լսելս մեր զհամբաւս բարիս զօրհնեցելոցդ յԱստուծոյ։ Զի թէթէ՝ դեռ ևս զպատասխանիս դրեցելոց մերոց չընկալաք, ոչ ի հասարակութենէ և ոչ ի յատուկ անձանց, այլ դրեալ էին մեզ հարազատ որդիքն սրբոյ Աթոռոյս Մինասա և Պետրոս Աստուածիմաստ վարդապետքն զառաւոտ միաբանութեամբ և սիրով հաճիլն ձեր ընդ կսէիլս մեր ի յայս շնորհ. և որոյ ազագաւ զուարճութիւնս ձեր։ Ընդ որս թէպէտև մեք ուրախացաք. և շնորհակալութեամբ մեծաւ զհարազատս որդիսդ սրբոյ Աթոռոյս և զսիրելիսդ մեր օրհնեցաք. (զորս օրհնեսցէ Տէր և զօրացուսցէ։) Բայց ընդ ուրախութեանս այսորիկ՝ և իրու ներհակ և անհամաձայն սմին, ընկալաք և զարամութիւնս մեծագոյնս, և վերս ի վերայ վիրաց, չդիտելով զպատճառն։ Քանզի՝ դրեալ է սիրելի եղբայրդ մեր պատրիարք Աստուածաբան վարդապետդ ի կարին՝ առ քահանայսն և իշխանսն տեղւոյն թէ՝ կաթուղիկոսն եթէ ազգի ընտրութեամբ և հաւանութեամբ մեծի Պօլսոյս չլինիցի, չէ ընդունելի. ուստի ոչ ունիք հրաման սիշելոյ զանուն և թէ ոք ընգդիմասցի՝ յանուանէ ծանուցեք ինձ։ Ահա վերք սրտի, և ոչ թէ վերք միայն. այլ և բոլորովին սպանութիւն իսկ. որպէս յայտ է։ Արդ՝ սիրելիք իմ. ոչ դիտեմ թէ զինչ իրաւունս ունելով եղբայրդ մեր՝ զայս արարեալ է։ Եթէ ձերովդ խորհրդով կարծեցից, ոչ համեմատի, քանզի ահա որպէս ասացաք, ընթեռնումք զթուղթս վարդապետացն մերոց Մինասայ և Պետրոսի, որք զէնջ զշնորհակալութիւնս դրեն. Թէ դլխաւոր իշխանքըն ժողովեալ ի մի վայր, եռաւն ընթերնուլ զպատասխանին իւրեանց մահարին. և ամենեքեան միաբանութեամբ հաւանեալ և համեցեալ, ասացին Ասաուած շնորհաւոր արասցէ և այլն։ Ահա երևի այսու, զի աբաքեալն դորա ոչ է ձերովդ կամօք, այլ միայն ինքն է արարեալ, որպէս դրեն ևս մեզ ի կարնոյ թէ՝ միայն պատրիարքի կընիքն էր ի վերայ թղթոյն։ Մանաւանդ և այս երևի, զի ո՛չ միայն առանց ձերդ խորհրդոց է, այլև ծածուկ ևս է ի ձէնջ։ Արդ՝ եթէ մեք զբոլոր Արևելեանս տանս հաւանութիւնն ունելով՝ (որոց ահա զբազմակնիքն համահաճութեանն յզեալ եմք յայդր, որք են եօթն մեծամեծ թուղթք բազմակնիքք, զորս առեալ էք ի կարկէ.) տակաւին թարց հաւանութեան ազգի հրուչակէ դա զմեզ և անուանաբեկ առնէ. ապա ինքն յումմէ ունէր հաւանութիւն և կամակցութիւն՝ որ զայդ արարս։ Կամ թէ՝ մահարարքն մեր ահա կայր յայդր. եթէ ունէր ինչ իրաւամբ ասելի՝ առ ի անընդունակ առնել զմեզ. Թող յառաջ յայդր ձեզ ասէր, և հաւանեցուցանէր, զմահարն մեր ևս անընդունակ առնէր նախ, և ապա զոր ինչ առնել կամէր առնէր, և զով և կամէր՝ յիշեցուցանէր. և յայլ տեղիս ևս դրէր։ Ապա մինչ այսց և ոչ մին եզեալ է յայդր, զի՞նչ հարկ և փոյթ զդա ստիպեաց՝ որ պղպէս փութով աճապարեաց՝ եբեկ զանուն մեր նկատեցէք զայս իրաւամբ ի փառս Աստուծոյ, և տեսէք զհզօրութիւն մեր՝ և զտարաբախտութիւն սրբոյ Աթոռոյս այժմու ժամանակիս, որ ոչ միայն յօտարաց և ի թշնամեաց լինիմք ձազեցեալ և կոխան, այլ և յիւրային ընտանեաց և ի սիրելի եղբարց ի դառն ժամանակիս. և ոչ դիտեմք այժմ. Թէ զո՞ր ցասն մեր լացցուք. զառ մեօք եղեալս՝ որք իբրև զցից ոսկերաց զմեզ մաշե՞ն, Թէ զայդ զոր յանկասկած վայրէ, ի մերձաւորէ և սրընտանւոյ ընդունիմք։ Զայդ կանոնդ զոր դադրեալ է, ո՞վ ոք ոչ դիտէ, Թէ հաւանութեամբ ազգին պարտի լինիլ կաթուղիկոսն։ Բայց ահա դրեալ եմք յայդր յառաջ՝ Թէ հասարակ և Թէ յատուկ թղթովք, որ պան-

քան ցաւք ղմեզ պատեցին, մինչ ղի՝ մ՚րձ եղև սուրբ Աթոռս, կամ ամայանալ իսկ. և կամ զմեծ և զանառնելի ընտաս կրել. մանաւանդ՝ և անկանիլ ևս ի ձեռս օտարաց, սր մերձ ընդ մերձ էր, եթէ ոչ իցէր եղեալ մեր յաջորդիլ՝ որով խափանեցաւ խորհուրդ նոցին: Եւ սակս այսորիկ էր մանաւանդ բռնադատելն զմեզ միարանից սրբոյ Աթոռոյս յո՛չ յո՛չ, որով յակամայ կամըս արկին զմեզ ի ներքոյ այսր լծոյ: Ապա թէ մեք զայսցանէ անփոյթ արարեալ՝ և առաջին կանոնօքն շարժեալ այսպէս ո՛չ առնէաք, և ասացեալ ընտաքն լինէին ոտնս սրբոյ, յայնժամ ևս այլ կերպիւ լսելոց էաք զմեղադրանս. որպէս այժմ վասն այսր եղելութեան մեղադրելի կամ առնել զմեզ եղբայրդ մեր՝ և առնէ իսկ: Եւ եթէ պատճա՞ս, երանի թէ՝ կամ բնաւ ոչ էի գտանեցեալ աստ՝ ղի ղինչ և լինիցէր սրբոյ տանս ընտաս՝ աչք իմ չտեսանէին. և կամ ոչ իցէր կոչեցեալ ի վերայ մեր այս անուն. զի լաւ է անուն բարի՝ քան զմեծութիւնս բազումս, ըստ իմաստնոյն բանի: Ապա թէ ոչ, մեք զի՞նչ մեղս արարաք, որ զսուրբ Աթոռ մայրս ձեր ո՞չ արկաք ի ձեռս օտարին. և այսքան ցաւոց և ընտաս մինչև ցայժմ գիմակայեցաք առ ի պահել զշինութիւնն յիւրում կալի, թէպէտ և Աստուած է պատհօղն: Զև ևս կոչեցեալ մեր ի յայս աստիճան՝ տեսանէին ամենայն շրջակայք մեր զամենայն աղէտս և զցաւս սրբոյ Աթոռոյս և մեր. և ամենեքեան լային զմեզ. և մինչ իմացան զկոչիլն մեր ի յայս, սկսան շնորհակալիլ զմէնջ, և ամենեքեան գրել մեզ զշնորհակալութիւնս՝ թէ ոչ թողեր զսուրբ Աթոռդ անպցելու ի նեղսալի ժամանակիս՝ քանզի՝ ամենեցուն եղև յայտնի, թէ ոչ է հնար առանց գլխաւոր ընտաս զերծանիլ սրբոյ Աթոռոյս ի յայս ժամանակս. Թէ ըստ առաջին կանոնին երկարաձգեսցի ընտրութիւնն կաթուղիկոսի: Այլ սիրելի եղբայրդ մեր զնախնեաց կանոնն միայն ընթեռնելով՝ զիւս վատահամբաւէ. իսկ ղցաւոցս յիշեցելոց՝ չախորժի բնաւ տեղեկանալ և գիտել ի թղթոց մերոց ղորս դրեալ եմք յայդոյս կարծեմ և աչօք իսկ ի թուղթան մեր հայիլ ևս ոչ ախորժի. Թո՛ղ թէ ընթեռնուլ՝ կամ ունկն մատուցանել ի լսել: Եւ ցաւ զոր ասեմք և գրեմք, կարծեմ թէ՝ ծաղր երևի ոմանց: Այլ ի հարկէ յայլոց ևս էք իմացեալ սիրելիք մեր. թէ զի՞նչ անցք անցին ընդ երկիրս այո, թէ յանցեալ ամին, և թէ յայսմ ամի: Գրեալ է ձեզ յառաջ հոգելոյս Հայրապետն մեր զամենայն անցսն անցեալ ամին. և ահա յայդր է թուղթն, տեսէք, թէ զինչ ցաւք և վիշաք են գիպեցեալ երկրիս և սրբոյ Աթոռոյս: Զի երկիրս ըստ մեծի մասին ի Վրաց տուն վարեցեալ՝ աւերեցաւ, և սուրբ Աթոռս թէ ի զօրաց անտի՝ և թէ յետոյ մանաւանդ ի մերմէ և ի քաղցեալ ծնացորդաց երկրիս՝ դատարկացաւ ի գոյից, այսինքն թէ ի յուսելեաց և թէ ի խարճելեաց. որք և մինչև ցարդ զեռ ևս թէ սիրով և թէ ակամայ, ղհարկաւոր պիտոյս իւրեանց ի մէնջ խնդրեն և առնուն. քանզի ոչինչ է ծնացեալ յերկրոջս: Մինչև ցելոն ամսոյն հոկտեմբերի եկաց ձեաց խռովութիւնն երկրիս. որքան և արարին երթևեկս վասն հաշտութեան, չեղև հնար.[5]) և ծնացեալքն երկրիս ևս իսպառ աւերեցան և աղքատացան, քանզի ոչ եղև ըստ բաւականին վար և վաստակ՝ յաղագս անկայուն բնակութեանցն՝ յորոց ոչ պակսէին աւարառուք և ասպատակօղք: Զիսկ ի յելն հոկտեմբերի՝ հազիւ թէ անուն եղև հաշտութեան, և դեռ ևս ոչ կայացաւ Զի այն էր լինելոց կատարումն հաշտութեան, որ ղստահ վարեցեալ ժողովուրդն ի Վրաց տուն և ի Արցախ գաւառ, դարձուցանէին վերստին ի յայս երկիր: Այլ ոչ եռուն և ոչ դարձուցին, և ծնաց բան հաշտութեանն կարծեօք և անկատար: Իսկ խըզճալի ժողովուրդքն այնոքիկ՝ յաղագս ոչ ունելոյ բնակութիւն և ապրուստ, ըստ մեծի մասին մեռան ի սովու՝ և ի սաստիկ հիւանդութեանց: Այժմ ահա ձմեռն ժամանեաց, և ձացին խղճալիքն այն ի պանգխտութեան, և հաշտութիւնն անկատար: Այժմոյս կամք այսպէս, և զմեծ կսկծանս ևս կրեմք վասն գարնանն, թէ այլ զի՞նչ եմք կրելոց: Զի ոչ միայն այս երկիրս է այսպէս խռովեալ, այլ ամենայն շրջակայք մեր: Լուեալ էք ի հարկէ, թէ յայսմ ամի զի՞նչ էանց ընդ Թարվէզ և ընդ Խզ՝ ի Ճուշու խանէն, որքան աւերութիւն և

գերութիւն եղև, և գեռ ևս գոյնգոյն խռովութիւնն անհաշտ. և ի գարնանն ևս յոյժ չարապէս կամին բաղխիլ ընդ միմեանս՝ և աւերել։ Նոյնպէս և զերկիրն Գիլհանու աւերեցին նոյն Շուշու խանի զօրքն՝ ընդ այլոց ևս զօրաց, փախուցանելով յերկրէն զիշխող նորին, և նստելով անդ աւելի քան զչիսուն օր, յորս կրեցին անտի զբազմատեղուն հարստութիւնս այնմ երկրի, մերկացուցանելով և զսակաւաւոր ժողովուրգսն մեր որք անդ։ Զի՞նչ ապա և վասն նորոյ Շուշայու ասացից. Թերևս լուեալ իցէք և դոյն։ Զի բացի հասարակ խռովութենացն այնոցիկ որք եղեն ի յայն կողմունսն ղինի մահուան սիրողին մեծի, յայսմ ամի մի ոճն անիծեալ ի նոյն ազգէ մեռանողին, փեռեկաեալ և ապստամբեալ յայլոցն որք ի Շիրազ, նստեր ի Սպահան։ Ցանկարծակի ի վերայ յարուցեալ սրոյ Ամենափրկչի վանիցն, և զԱռաջնորդն և զմիաբանսն ամենայն արկեալ ի սաստիկ հարուածս և ի անձկութիւն անչնարինս, զամենայն ինչս նոցին առեալ է յաւարի, թէ զնկեղեցականսն, և թէ զարտաքինս, թէ զյայանիսն և թէ ըզպահեստսն ամենայն։ զորս անչնարին խոշտանգանօք պահանջեալ ի նոցունց՝ առեալ է զամենայն, և իսպառ մերկացուցեալ։ ՚) Թողում և զաւերութիւն ժողովրգոց մերոց որք անգ, որք չկարացեալ տանիլ վշտացն սաստկագունից, ըստ մեծի մասին փախուցեալ և գնացեալ են հանգէպ երեսաց։ Զայս կամիմ ասել սիրելեացգ թէ՝ մեք որ զնեղութիւնս և զցաւս երկրիս յիշեմք ի թուղթս մեր, ի հարկէ ծագր երևի ոմանց, որք առ ոչինչ համարելով զայսոսիկ՝ ղինի կանօնս ընթեռնուն։ Ցանցեալ ամին մինչգեռ ասա էր զօրն հիւսիսային, խորհեալ էին բերգականքն յետ գնալոյ նոցին, ըզսուրբ Աթոռս ըստ Զուղայու վանիցն առնել. (Թող զայն՝ որ նախ քան զգալն զօրացն խորհէին դատարկել՝ որպէս և յառաջ գրեալ եմք.) և թէ որպիսի կերպիւ զփուքք մատց նոցին իմոյց լուսահոգին հայիւ։ զայն թողումք. իմանալ կարէք ասա ի Պետրոս վարգապետէգ։ Ցայսմ ամի ևս խորհեալ էին նմանապէս ամայի առնել զսուրբ Աթոռս, եթէ եկեսցէ հիւսիսականն. յորում միջոցի և լուսահոգին վախճանեցաւ։ Ուստի ի վերայ ամայութեանն երկիւղի այն ևս յաւելաւ, որ զերեսս հաստատեալ էր օտարն այն և ապստամբ, գալ և իւրացուցանել զսուրբ Աթոռս, որպէս և ի վերոյ ասացաք։ Իսկ՝ մեք ըստ բռնադատութեան միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացուցոց յանձնառաք զայս պաշտօն. առ ի խափանել զմուտն օտարին, և ըստ կարողութեան մերոյ չգնալ՝ առ ի պահել յայլ ինաստաց. զոր և պահեցաք շնորհիւ Ցեառն, որքան և կարացաք։ Եւ զազէտս վանգից մերոց գրեալ յղեցաք յայդկոյս՝ առ ի գտանել զօգնութիւն և զմխիթարութիւն, այժմ զներհա՞կն տեսանեմք յուսոյ մերոյ, և ցաւ ի վերայ ցաւոց։ Մա՛նաւանգ՝ փոխանակ օգից սրբոյ Աթոռոյս՝ ահա յառաջանան մեծամեծ վնասք։ Վասն զի որպէս ասացաք, ի գալստենէ զօրացն Վրաց մինչև ցայժմ՝ որ է տարի մի և երեք ամիս. բացի վնասատուութենանց զօրացն՝ քաղցեալքն երկրիս ի մէնջ լցին և լնուն զպակասութիւնս իւրեանց։ Ուստի՝ որ ինչ գոյր մեզ՝ սպառեցաւ և այլ ոչ ուստեքէ կարացաք գտանել զօգնութիւնս, բաց ի Կարսայ և ի Թայալիսաւ երկրացն։ Առ որս յղեաց լուսահոգին զժողովոգս իմաստիայի, որք զցորեան, ըզգարի, զմսացուս և զայլ ուտելիս ետուն մեզ առատութեամբ և օգնեցին, և գեռ ևս տան, և օրստօրէ բերեմք և կենցաղավարիմք։ Զորս Աստուածն ամենայնի լցուսցէ բիւրապատիկ բարութեամբ. օրհնեսցէ և վարձատրեսցէ։ Քանզի՝ եթէ նոքա ոչ էին մեզ օգնական, ոչ կարէաք մեք աստ զչինութիւն պահել և ձեալ ի մերում կայի։ Զի երկու ամք են ահա, յորս շուրջանակի փակեցեալք են ամենայն ճանապարհք երկրիս։ Որքան կենդանի էր լուսահոգին, և վանիցն սաստկագին, ոչ կարաց ղձեռն հասուցանել ի նուիրակունսն, և զօգնութիւնս գտանել ի նոցունց։ Իսկ յետ վախճանմանն՝ մինչ լուեալ են նուիրակունքն կան ամենեքեան իբրու թէ խափանեալք ի գործոյ. և մեք զի գեռ այսպէս անհանգիստ կամք և ի ցաւս պաշարեալ. և շրջակայքս ամենեքեան այսպէս վրդովեալ. պատճառք՝ (յորմէ անպակաս են գումարմունք դժնեայ զօրաց. և յորոյ պատճառէ լզեալ ամենայնիւ կարօտութեամբ.) նոյնպէս և բոլոր

տունն Ազուանից. և Թարվեզ և Խոյ, բաց ի մատնաւորաց, վասն որոյ՝ ձեռնահաս եմք եղեալ յամենայն կողմանց. և յամս յերկուս փարայ չէ մաեալ յԱթոռս, ոչ ուսաեբէք ունիմք զօգնութիւն, և ոչ ոք է որ օգնէ մեզ, և ձեռն ասյ մեզ ի յայս նեղութեանս ժամանակի՝ յորում իրրու թէ ի յեհին թեղն է հասեալ սուրբ Աթոռս. բաց ի յասացեալ երկուց երկրացն Կարսայ և Խայազիտու՝ որք ուեելեօք օգնեն մեզ Զայսոսիկ գրելով՝ ոչ եթէ խնգրեմ ինչ ի սիրելեացդ իմոց, այլ կամիմ զազեաս սրբոյ Աթոռոյս և մեր ծանուցանել ձեզ։ Որպէսզի՝ գիտելով զայսոսիկ, և սրտացաւ որդիարար ի գութ և ի սէր սրբոյ ծնողիս ձերոյ շարժելով. թէ և յիս ոչ խնայիցէք, դոնեայ՝ ի լուսատու ծնողս ձեր սուրբ Աթոռս խնայեսջիք. և օր մի յառաջ զՀարկաւորսն մեր հոգացեալ և ի Պետրոս վարդապետ յանձնեալ ուղևորեսջիք առ մեզ. զի գործք սրբոյ Աթոռոյս ի վերայ երեսաց մի ձնասցեն, որպէս և մինչև ցարդ ձնացին։ Զի որպէս ասացաք, ի յեհին թեղն է հասեալ սուրբ Աթոռս, և լեալ կարօտ յամենայնի։ Իսկ եթէ ձեզ՝ և մանաւանդ սիրելի եղբօրդ մերոյ գոյ այլ ինն դիտումն, զայն ևս ծանուցէք մեզ. և ապա զսուրբ Աթոռ մայրս ձեր որպէս և կամիք՝ հոգացէք։ Զի ի կարին գրողն թէ՝ ոչ ունիք հրամանն զանունն յիշելոյ՝ հանդերձ սպառնալեօք, յայդր կամ յայլ տեղիս զի՞րդ կամի զի յիշեսցի։ Եւ եթէ այս է յիրաւի դիտումն իւր, ահա գրեալ եմ յառաջ սիրելեացդ մերոց. և այլ ևս զնոյն ասեմ, զի թէ ինքն կամի գալ, և կամ զայլ ոք յղել, ես պատրաստ եմ ելանել ընդ առաջ։ Եկեսցէ բարեաւ եկօղն, ով ոք և կամի։ Ապա թէ ոչ, դիտասջիք. զի անկրելի են ցաւքն զորս հասուցանէ մեզ սիրելի եղբայրդ մեր։ Որ բաց ի դրելոյն ի կարին ի չյիշել զանուն մեր. հասանին ևս մեզ համբաւք ի դրոյ և ի լրոյ, իբրեթէ կանոնս կամի դնել ի վերայ մեր, զի այնու վարիցուք։ Բայց մեք զայս ինչ ունիմք ասել առայն ի կարճոյ. զի ի Լուսաւորչէն մերմէ մինչև ցարդ չէ եղեալ այդպէս երբէք. զի սատրագրաւքն կաթուղիկոսին կանոնադիրք լիցին ի վերայ նորին. այլ կաթուղիկոսն է եղեալ կանոնադիր ամենեցուն, Զի թէ զաշխարհ և զազգ կարէ կառավարել, զսուն իւր զի՞րդ ոչ կարէ։ Եւ եթէ գլուխ է ընդհանրական, ի սատրագրելոց զի՞րդ իշխէ։ Այլ թէ կամի եղբայրդ մեր զմեզ առակ ինչ ակացուցանել ի մէջ աշխարհի, և յետագային տեղի անիծից, զչեղեալ բանսըն մեօք հաստատել, և առնել զմեզ ըստկիզբն սովորութեան կարի՝ և քար դայթակղութեան, զոյդ մեք ոչ կարեմք առնուլ յանձն։ Եթէ ինքն կամ այլք ախորժին պահել կանոնաւ մատանել ընդ այսու լծով, և դուք ևս տեղի տայք և կամիք. մեք ոչ եմք ներհակ կամաց նորին և ձեր. որպէս և կամիք, արարէք։ Իսկ եթէ խնայել կամիք ի հաւատոյ մայրս ձեր՝ և ի խոցեցեալս նեռաիւք բանից, մանաւանդ ի յանխոնարհելի իշխանութիւն հայրապետութեան սրբոյ Աթոռոյս՝ որ է ձեզ յատուկ պարծանք, որ ինչ յաւուրս հոգելոյս նախնեացն ձերոց չէ եղեալ, դուք ևս մի կամիք. զի յաւուրս ձեր լիցի. զի մի և դձեզ մեղադրեսցեն յետագայք ձեր։ Խնդրեմ ուրեմն վերջապէս՝ զսրբոյ Աթոռոյ մօրս ձերոյ զօգուտըն խորհելով՝ զչինութիւն և զպայծառութիւնն սորին. և զբարձրութիւն պատուոյն և փառացն պահեսջիք ի նոյնութեան՝ որպէս մինչև ցարդ լեալ է, առ ի պարծանս ձեր՝ և բոլոր աղգիս մերոյ։ Եւ զպատասխանի թղթոյս՝ հանդերձ Պետրոս վարդապետիւն մերով՝ և մեր հարկաւորօքն եթէ կամիք, օր մի յառաջ առ մեզ դարձուցանել խնդրեմ։ Եւ լսօղդ աղաչանաց մերոց՝ եղիջիք օրհնեալք՝ յԱստուծոյ և ի մէնջ, և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ։ Ամէն։ Ի ՌՄԻԹ, ի դեկ. Եւ



*թուղթ 'ի Թիֆլիզ, առ վանքի ննն-
ղեցւոյ ՏԷր Պետրոս էրէցն, զոր խընդ-
րեալ էր Ռուսաց երկրի նուիրակ եւ
Առաջնորդ Ցովսէփ վարդապետն յղել
անդ ի մէջ Տոր-նախիջեւանցւոցն, վա-
սըն ղատաստանատան նոցին, եւ այլ
պիտանաւորութեան։*

Ցորմէ սիրով և հոգևոր օրհնու-
թեամբ և զօրացուցիչ շնորհիւ սրբոյ իջ-
ման ետղւոյս Քրիստոսի, գիտասջիր հոգևոր
որդիք մեր, և շնորհընկալ զաւակ սրբոյ Ա-
թոռոյս՝ Տէր Պետրոս հանճարաշատ քահա-
նայ։ Զի ի ներկայումս գիր ընկալաք ի սի-
րելւոյն մերմէ և ի ծոցածին որգւոյն սըր-
բոյ Աթոռոյս՝ և Ռուսաց օրհնեցելոյ երկրի
ծայրագոյն նուիրակ և Առաջնորդ Ցովսէփ
Աստուածաբան վարդապետէն, որ զքեզ
խնգրեալ է երթալ անգ ի պիտանաւորու-
թիւն նոր Նախիջևանու ժողովրդեանն՝ վա-
րեցելոցն ի Ղրիմու ըստ որում և գու
կամս ունիս երթալոյ անգ՝ որպէս և գրէ
մեզ։ Որ և յայդր առ Աստուածազօր ար-
քայն ևս դրեալ վասն քոյ՝ առ ի յղել՝ որ-
պէս լուաքս վասն որոյ՝ մեք ևս պատշաճ
տեսեալ զքո երթալդ առ ի պիտանաւո-
րութիւն ժողովրդեանն այնմիկ պանդխտե-
ցելոյ, զայս օրհնութեանս մերոյ Թուղթ
գրեցաք առ սիրելի որդիդ մեր։ Որով ահ
զայս պատուիրեմ քեզ, զի թէ յիրաւի
կամս ունիս երթալոյ, երթ միամտութեամբ,
և զոր ինչ ցուցցէ քեզ անգ սիրելին մեր
Ցովսէփ Աստուածաբան վարդապետն զպաշ-
տօնս քեղավայելս, զայնս մերովս գիտու-
թեամբ և հրամանաւ գիտացեալ Թարց երկ-
բայութեան, կացցես միամտութեամբ ի
պաշտօնն յայնոսիկ, և արիաբար հոգա-
ծու լեալ նոցին, կատարեսցես զնոյնս ըստ
պատշաճի և ըստ հարկաւորութեան իւր-
եանց, զհայեցուածութիւնս մատցդ աչաց ի
հոգևոր գլուխ քո ի սուրբ Աթոռս և առ
մեզ ունելով անթարթ՝ ըստ իմաստնոյն խը-
րատուս։ Եւ ընդ հարազատութեանն շաւիղ
անխոտոր ընթանալով՝ ուշ յայն իսկ ունի
ցիս եղեալ զի մի՛ վրիպիցիս ի նպատակէն հան-
դէպ կացելոյ, ոչ յաջ և ոչ յահեակ։ Եւ ըստ
մարմնականին օգտից ակն ունելով և հոգևո-
րացն վարձուց ի Քրիստոսէ և ի սրբոյ Աթոռոյս
և ի մէնջ, նպաստ լիցիս հոգւոց բազմաց՝
առ ի գտանել զօգուտս հոգեշահս, և ի
վայելել զպատուս քաղցրաճաշակս։ Ահա և
զյատուկ գիր վկայութեան գրեալ վասն
քո, առ սահմանակալս երկրին Ռուսաց՝
(զոր ինքեանք պաշքօրթ կոչեն.) յղեցաք
ընդ սոյնդ Թղթոյ, ունիլ քեզ ի ձեռին,
զի էլինիցի քեզ սրգելիչ սք ի մատանեդ
յայն իշխանութիւն։ Զորս և ի միասին յղե-
ցաք առ կարապետ վարդապետն մեր, այ-
սինքն զսոյն Թուղթս և զրաշքօրթն, զի թէ
յիրաւի երթալոյ լիցիս, տացէ քեզ և եր-
թիցես։ Եւ թէ այսթէ, թէ ի Մօզտօքու.
թէ ի Նոր Նախիջևանու՝ գրեսցես մեզ ըզ-
քոյգ որպէսն, հանդերձ այլ մեզապատշաճ
որպիսութեամբդ։ Եւ զայլ երկարապէսն ի
սոյն գրաբեր սիրելւոյդ մերմէ պարոն Գրի-
գորեդ իմանալոց ես, որ է ճանապարհորդակից քո։ Ողջ լեր ի տէր, որ և լիցի քեզ
ուղեկից, և յարաժամ առ ի բարիս յա-
ջողիչ։ Ամէն։ Ի Ռ՝Ն. ի փետր. Գ։



*Թուղթ առ Մօզտօքու մնր գործակալ
Գեօրկին եւ մանկասարն, հարցանելով
զորպիսութեանց թղթոցն՝ որք յղեցան
յառաջ քան զայս ի Տոյ. Ա. առ նոսա՝
զի յղեսցեն նուիրակ եւ Առաջնորդ Ցով-
սէփ վարդապետն, զորոց չգրէին ինչ։
Իսկ Թուղթքն անցեալ եւ զնացեալ էին։
Եւ զի անդ զնացող կարգաւորք թէ չու-
նիցին ի մէնջ զհրամանագիր, մի՛ Թո-
ղուցուք՝ որպէս եւ տեղւոյ իշխօղին եւս
գրեցաւ։*

---

*Թուղթ առ Մօզտօքու կամաձորատ
Պօլկօվնիկ Ալէքսանդր Փէօտրօվիչ Ի-
վանօվն, սէր եւ օրհնութիւն, եւ խըն-*

դիր, թէ որպէս եւ հրամանն է կայսերուէնյն, առանց մերս կարմրակնիք թղթոյ եւ հրամանի՝ մի զոք ի ներքս թողուցուս ի կարգաւորաց մերոյ ազգի։

Ցորմէ ժամանեցի Թուղթ Նախնեայ սիրոյ՝ Անդրանիկ օրհնութեան, և քրիստոսական սուրբ ողջունի. Հանդերձ ամենատառ ողորմութեամբն Աստուծոյ՝ և գերազօր շնորհօք և զօրութեամբը սրբոյ և շնորհաբղխի Ցեղոյս իմմանն Քրիստոսի, և նորին կողմունէ սուրբ Կեղարգեանն, և շնորհաբաշխ Ոգի սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին և սքանչելարար մասանց սրբուհեաց կուսանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց և այլ բազմահաւաք սրբութեանցն որք ի սմա։ Ի վերայ օրհնեցելոյդ ի Ցեառնէ Աստուծոյ և զօրացելոյդ կենսատու սուրբ խաչիւն նորին. սիրելոյդ մերոյ՝ և օգտասիրիդ Աստուածասէր սրբոյ գահիս, բարեպաշտօն և Աստուածասէր, պերճապատիւ և փառազարդ կամենդաթիդ և պօլկոնիկիդ Աստուածախնամ և նորահաստ քաղաքիդ Մօղտօքու՝ Ալէքսանդր Ֆէօդորովիչ Իւանովիդ։ Եւ Աստուածապահ ատն քում է քնակութեան, որգւոց և գստերաց, սիրելեաց և բարեկամաց, և ամենայն ընդ օրհնեալ յարկաւ քով եղելոցն, խնդալ ի Տէր յաբաղուարճ ցնծութեամբ։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ շնորհաղեղուն օրհնութեանն Աստուածոյ լիցի սիրելոյդ մերոյ ի Քրիստոս։ Զի յանցեալ 1780 Թուոջ Փրկչին և ի յունիսի ամսոյ 26, երանելի Հայրապետն և հոգևոր ծնողն մեր Տէր Սիմէոն սրբազան Կաթուղիկոսն՝ փոխեցաւ յանցաւոր կենաց աստի ի կեանսն անանց՝ առ մշտապաղաձային իւր Քրիստոս։ Իսկ՝ համայն եպիսկոպոսունք և վարդապետք Աստուածածէջ սրբոյ Աթոռոյս մերոյ և ամենայն իշխանք և ժողովուրդք Հայաստան աշխարհիս համակամ խորհրդով՝ և ըստ կանակի երանելի և հոգելոյս Հայրապետին մերոյ՝ և մանաւանգ ի խնամոց մարդասիրին Աստուծոյ՝ կացուցին զմեզս նուաստութիւն ի յԱթոռս Հայրապետութեան ընդհանուր ազգիս Հայոց՝ և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Եւ զի ըստ հարկի պաշտամանս մերոյ՝ գրեցաք և գրեմք զթուղթս սիրոյ և օրհնութեան առ ամենայն հեռաւոր և մերձաւոր բարեկամս և սիրելիս՝ և առ օգտասէրս սրբոյ և Աստուածախիզի Աթոռոյս մերոյ։ վանորոյ՝ և զայս թուղթ օրհնութեան և նախընծայ սիրոյ առ ձերդ բարեպաշտութիւն հարկ եղև մեզ գրել, նախ առ ի ծանօթութիւն մեզ օրհնեցելոյդ ի Ցեառնէ, որ մինչև ցայժմ ունեցեալ ես զճշմարիտ սէր և զրարեկամութիւն առ լուսակերտ Աթոռս սուրբ և առ Աթոռապինսս, որոց աղագաւ և Հոգելոյս Հայրապետն մեր գրեալ իսկ է երբեմն զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան առ բարեպաշտութիւն ձեր։ Եւ երկրորդ՝ առ ի խնդրել ի քումմէ Աստուածասիրութենէ զայս ընչ. զի որպէս և ունիս իսկ ղհրաման ի յԱստուածակացոյց և յինքնակալ կայսերուէնյ մեծութենէն՝ առանց վկայական գրոյ ի սուրբ Աթոռս նստող կաթուղիկոսին չթողուլ զոք ի կարգաւորաց ազգիս մերոյ ի յօրհնեալ երկիրդ Ռուսաց մտանել. նոյնոյ բարձրագունեղի հրամանին կատարող լիցիս միշտ և առանց մերս կարմրակնիք վկայական թղթոյ՝ մի զոք ի կարգաւորաց ազգիս մերոյ ընդունիցիս և թողուցուս մտանել ի յօրհնեալ երկիրդ յայգ։ Խնդրեմ՝ ուրեմն այսպէս առնել։ Նաև ըզճշմարիտ սէրդ և բարեկամութիւնդ ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ անպակաս առնել. գրել առ մեզ զթուղթս սիրանիշս, առ ի միխթարութիւն վշտացելոցս. ունիլ զսէր և զհնամս առ ազգն մեր որք յայգր, և առ մերայինն ամենայն. և առ հոգևոր այցելուն դոցա Ծովսէփ Արքեպիսկոպոսն և սիրելի որդին մեր որպէս և Աստուածազօր և առատախնամ կայսերուէնյ մեծութեան յատուկ խնամքն և ողորմութիւնն գոյ ի վերայ ազգիս մերոյ և սրբոյ Աթոռոյս։

Որում Աստուածն ամենայնի տացէ զերկար և զխաղաղական կեանս, պահելով յարաժամ ի յամենամեծ ողորմութիւնս իւր, հանդերձ օրհնաժառանգ որդւովն, և թոռամբքն՝ և ամենայն ժառանգորդօք կայսերութեանն, բարձրացուցանելով և նս առաւել ի գերագոյն փառս և ընդ ծագս տիեզերաց տարածանելով զամենափառաւոր Ցերութիւն և զիշխանութիւնն իւրեանց։ Որոց

զմեծագոյն խնամն պահելով միշտ ի վերայ քոյ՝ և ևս գերագոյն պատուոյ արժանացուսցէ, փրկելով յամենից անբարի գիպուածոց։ Այլև՝ զսոյն գրաբեր սիրելիդ մեր Գրիգորդ, զոր հոգևոր որդին մեր Ցովսէփ Արքեպիսկոպոսն յղեալ էր առ մեզ՝ որպէս և գիտես, խնդրեմ շուտով ուղևորել առ նա, ղի մի յամեցի յպդը. զի հարկաւորէ շուտով երթալն դորա առ նա. որոյ սակս և մեք ընորհակալութեամբ օրհնելոց եմք զսիրելիդ մեր. զոր ՏԷր օրհնեսցէ միշտ։ Ողջ լեր ի Տէր, զօրացեալ ի շնորհս նորին յարաժամ՝ հանդերձ քոյոյնովքդ ամենեքումբք։ Ամէն։ գրեցաւ յամի փրկութեան մերոյ՝ 1781, ի փետրվարի, ի Քրիստոսաէջ և ի լուսակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։



Թուղթ առ Շոռ Նահիջեւանոյ. կամաւն դատ Սիմէօն Գրիգորիչ Գուրիովն. հնորհակալութիւն եւ օրհնութիւն յաղագս խնամակալութեան աղքատացն Նախիջեւանու կայսերական ողորմութեամբն եւ յանճնարարութիւն վասն նոցին, եւ յորդորումն ի սէր եւ ի քարեկամութիւն առ սուրբ Աթոռս եւ առ մեզ եւ առ ազգս մեր։

Ցորմէ ժամանեցի (ասյլն որպէս ի վերին թղթոջդ.) պերճապատիւ և փառազարդ կամենգատիդ և Ենարալիդ Նորակերտ և Տիրախնամ քաղաքիդ Նախիջևանու, մայեօր Սիմէօն Գրիգորիչ Գուրիովիդ։ Եւ Աստուածապահ. (Ասյլն։)

(Շնորհք)

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի սիրելւոյդ մերոյ ի Քրիստոս։ Զի զմեծագոյն ողորմութիւնսն և ըզխնամսն օգուտապիտս և ինքնակալուհի կայսերուհւոյն մեծի՝ զորս արարեալ է և առնէ խղճուկ և պանգուխտ ժողովրգեանն մերոյ սրբ ի նորգ նախիջևան, լսեաք յառաջագոյն մինչգեռ կենդանի իսկ էր Հոգելոյս Հայրապետն մեր և ծնողն հոգևոր՝ Տէր Սիմէօն սրբազան Կաթուղիկոսն։ Որովք ուրախացեալ նմին յոյժ՝ հանգերձ յոգնախուժմբ միաբանիւբ Աստուածածէջ սրբոյ գահիս՝ օրհնէր զՏիրահասատա թագաւորութիւն և զիշխանութիւն ինքնակալ մեծի կայսերուհւոյն՝ հանգերձ կայսերազուն որգովն, և թոռամբքն՝ և ամենայն ժառանգորգօք կայսերութեանն։ Իսկ՝ յանցեալ 1780 թուոջ Փրկչին մերոյ՝ և ի յուլիսի ամսոյ ԻԶ, երանելի Հայրապետն մեր վերոյ յիշեցեալ՝ փոխեցաւ առ Քրիստոս։ Եւ ըստ կանկի նորին և միաձայն հաւանութեամբ Աթոռոյս, և ամենայն իշխանաց և ժողովրգոց Հայաստան աշխարհիս՝ և մանաւանգ ըստ Աստուածայինն խնամոց կոչեցեալ եղաք յԱթոռ Հայրապետութեան ազգիս Հայոց, և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի. իսկ ի մտանելս մեր ի նոր թիւս Փրկչական 1781, ժամանեցին թուղթք ի հարազատ որգւոյն սրբոյ Աթոռոյս և ի սիրելւոյն մերմէ Ցովսէփ Արքեպիսկոպոսէն, և. ի խղճուկ ժողովրգոց նորակերտ քաղաքիդ Նախիջեւանու, ի ձեռն Գէֆուգաթ պարոն Գրիգորին, գրեցեալք առ Հոգելոյս Հայրապետն մեր։ Որք գրեալ էին վերստին զշնորհակալութիւնս յոլով զմեծագոյն խնամոց և ըզգթութեանց Աստուածազօր և ինքնակալ կայսերուհւոյն մեծի՝ զորս արարեալ է նոցա և առնէ. և զորքան բարութիւնս և ղողորմութիւնս գտեալ էին ի նորին մեծութենէն և յամենից գերապատիւ և քրիստոսազօր նախարարաց և իշխանաց՝ զամենայն ծանուցեալ էին յոյժ շնորհակալութեամբ։ Ընդ որս գրեալ էին և զյատուկ շնորհակալութիւնս սիրելւոյգ մերմէ, որ ըստ ողորմութեան և խնամոց ինքնակալ կայսերուհւոյն մեծի խնամակալ լինիս աղքատաց և անանկաց ազգին մերոյ որք յայգր. յաղագս ապրուստի նոցին և կեցութեան։ Եւ Ցովսէփ Արքեպիսկոպոսն գրէ ևս զյատուկ սէր և զմարգասիրութիւնսն զորս տեսեալ է ի քէն, նաև զձգմարիտ բարեկամութիւնգ և զսէրգ՝ զոր առ սուրբ Աթոռս մեր ունիս։ Եւ որս ամենեսեան շնորհակալեալ մեր՝ համայն միաբանիւբ սրբոյ Աթոռոյս՝ առաջի Աստուածածէջ Տեզուոյս սրբոյ, օրհնեցաք զՏիրապահ թագաւորութիւնն և զինքնակալ աէրութիւն մօրն ողորմութեան՝ Աս-

աուածապատակեալ կայսերուհւոյն մեծի՝ Հանգերձ թագաժառանգ որգոյն, և Թուամբքն և ամենայն ժառանգորդօք կայսերութեանն։ Զորս Ամենախնամն Աստուած պահեսցէ երկար ամօք և խաղաղական կենօք, ահարկու Ցէրութեամբ և ամենախրոխտ իշխանութեամբ, անխոնարհելի հրամանաւ և բուռն զօրութեամբ. զարգարեալ ամենայն հոգևոր և մարմնաւոր ճոխութեամբք և պայծառութեա՛բք, ի բարձրութիւն եկեղեցւոյ իւրոյ սրբոյ՝ և ի յուրախութիւն մեզ։ Եւ զքեզ զՁշմարիտ սիրելիդ մեր՝ պահեսցէ նոյն ողորմածն Աստուած ի յաւուրս խնամս և յողորմութիւնս իւր, տալով քեզ զվարձըս բարիս և բազմապատիկս՝ փոխանակ խնամոց և ողորմութեանցն՝ զորս ցուցանես աղքատացն և փոխանակ Ճշմարիտ սիրոյդ՝ զոր առ սուրբ աթոռս մեր ունիս։ Եւ արժանացուցէ զքեզ և ևս գերագոյն պատուոյ և բարձրագոյն փառաց. և փրկեսցէ յամենից ձախորգական դիպուածոց։ Խընգբեմ ապա ի յԱստուածսիրութենէ քումմէ, զի ևս առաւել խնամածու լինելով աղքատաց և առատապէղցն ազգի մերոյ՝ ունիցիս և առ Համայն մերազնեայսն զսէր և զերկնամս։ Նմանապէս և զՁշմարիտ բարեկամութիւն և զսէր առ սուրբ Աթոռս մեր և առ մեզ ունելով ի ձեռն սիրանիշ գրոյ մերիդ Թարեսցես երբեմն զցաւակրութիւնս մեր։ Եւ զՅովսէփ Արքեպիսկոպոս սիրելիդ մեր առաւել ևս ունիցիս ի սէր և ի մարդասիրութիւնս. զի և մեք առաւելապէս շնորհակալեալ զսիրելոյդ օրհնեսցուք զքեզ միշտ։ Իսկ զամենայն որպէսն մեր և սրբոյ Աթոռոյս՝ իմանալոց ես ի պ. Գրիգորէ՛ց, որ ամենայնին վերահասու եղև։ Եւ լեր ողջ և օրհնեալ և զօրացեալ ի Ցէր՝ քոյոյնովքդ հանդերձ։ Ամէն։ Գրեցաւ յԱստուածաէջ և ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։ Ցամի փրկութեան մերոյ, 1781 ի փետրվարի Գ։

Թուղթ առ Հաշտարխանու Առաքապետ և Առաջնորդ Յովսէփ վարդապետն ի պատասխանի թղթոյն, զոր զրեալ էր ի Նոր Նախիջեւանու ընդ ԴեՃուխթի Գրիգորին։ Որ էր վասն տեղեակ իրակութեանցն եւ որպիսութեանցն եւ այլ իրաց։

Թուղթ առ Իշխանսն Հայազիանու, ի պատասխանի քազմակնիք թղթոյն իւրեանց, որք զրեալ էին զմահ Առաջնորդին իւրեանց Եսայի վարդապետին, եւ զաւերութիւն վանիցն, խնդրելով առնել շինութեան նորին զհոգս, եւ կացուցանել զոք Առաջնորդ։ Որոց մխիթարութիւն եւ վասն վանիցն պատուէր ինչ եւ յուսադրութիւն։

(Ցետ մխիթարութեան վասն մահուան առաջնորդին)

. . . Իսկ յաղագս ս. վանիցդ այնպէս աւերս ՃաԼոյն, որ գրեալ էիք մեզ զի՛նչ գրելն ձեզ Ահմատ Սուլթանի որդւոյն, և ձեր զինչ պատասխանելն նմա. որք և խնդրեալ էիք առնել զհոգս իմն, և խօսիլ ընդ Սուլթանին, և զպայման իմն գնել ընդ նմա, որ այնու կանոնաւն վարիցի, և շինութիւն Ցանն այնմիկ սրբոյ՝ առցէ զկպ, առ պագոսիկ գիտասջիք։ Զի որպէս ձեր՝ նոյնպէս և մերս սիրտք մորմոքին և ցաւին վասն ամայութեան ս. Ցանն այնմիկ, ըստ որում այդպիսւոյ ձախորդութեան դիպեցաւ և առաւել ընդ այն վշտանամք, որ ոչ է իբրև զի ի հասարակ վանորէից, այլ ունելով զԴամբարան սրբոյ Առաքելոյն Թադէոսի՝ առաջին լուսաւորչին մերոյ, յանուն նորին է կառուցեալ, և է՛ մի ի չորից Աթոռոց աղգիս Հայոց, սրոց Առաջնորդքն ևս ոչ են նման այլոց եպիսկոպոսաց և Առաջնորդաց, այլ յետ Ծայրագոյն Պատրիարքին որ է կաթուղիկոսն, նոքա են գլխակալք և նախաթոռք գերապատիւք քան զամենայն Առաջնորդս։ Բայց այժմ վասն այդր մտածելով մեր և զպաշաճագոյնն

խորհելով՝ այսպէս տեսաք պատշաճ, Որպէս
ղի յղեսջիք առ մեզ ղթուղթն զայն՝ զոր
գրեալ է առ ձեզ Սուլթանի որդին, կամ՝
թէ զօրինակն առեալ առ մեզ յղեսջիք. և
դուք ևս գրեսջիք ղթուղթ մի ի վերայ
Սուլթանին, և յղեսջիք ի ձեռս մեր՝ Որոյ
դիտաւորութիւնն լիցի այսպէս թէ՝ յորքան
ժամանակաց հետէ շինեցեալ է տունն այն,
տակաւին այսպիսի նեղութիւն չէ կրեալ,
զոր յաւուրս քո և ի քէն կրէ, և մանա-
ւանդ ի յորդւոց քոց, և ոչ երբէք եղեալ
է ի նմանէ այսքան պահանջմունք, որքան
դուք առնէք. վասն այնպէս անուանի և
նշանաւոր օջաղ լինելոյն, քան զձեզ յա-
ռաջ ով ոք եղեալ է՝ պահեալ է զպատիւն,
և ջանք է արարեալ ինքն ևս՝ որ միշտ ի
շինութեան և ի պայծառութեան ճեասցէ,
որ իւրեան ևս պարծանք լինի, և անուանն
բարձրութիւն, թէ յիմ հողումս և իմ ձե-
ռաց տակին այսպէս օջաղ կայ. և իւրեան
ևս մեկ չափաւոր մաղթ՛ւ ՚ է եղեալ. իբ-
րու իւրեան մեկ մշտական հաց. և աւե-
լորդ պահանջմունք ինչ ո՛չ է ունեցեալ,
որ անդ նստօղքն չզղուին և չգրուին։ Այժմ
դու զառաջնոց առած մաղթուն չափազանց
աւելացուցեալ ևս. և բաց յայնմանէ՝ տա-
րբէնն այսքան աւելի ևս պէսպէս շինիլթան
և պահանջմունք առնէք դու և որդիքդ։
Առաջնոց նման այն չէք մտածում՝ թէ օ-
ջաղն շէն մնայ, անուան ձերոյ պարծանք
լինի, և ձեր մշտական մաղթուն առնուք,
այլ կամենում էք օրըստօրէ աւելացուցա-
նել, որ թէ Առաջնորդ, թէ միարան, ա-
մէն զղուում են և փախչում, որպէս որ
ահա եղև, և այնքան տարբէն օջաղն տա-
յացաւ, և Առաջնորդն ևս փախուցեալ
աստ՝ դառն ցաւօք և տրտմութեամբ մեռաւ։
Այս քո անուանդ ի՞նչ լայաղ էր. որքան
շէն էր՝ քեզ անուան բարձրութիւն էր, յետ
տայանալոյն այլ ի՞նչ օգուտ գոյ քեզ ըստ
ի յանուան կոտրութենէն, որ ահա այլ սև-
ագլուխ չէ գնում անգ. զի ով ոք որ զայս
լսէ՝ զզուի, ո՞վ երթայ անդ՝ և այնպէս
ցաւոյ և նեղութեան մէջ անկանի։ Թեմերն
ամէն աւերուած, և ցաւն շատացած։ Դուք
ինչ կամենում էք առնում էք, մուղայէթ
էլ չէք կենում, որ քեզչարի քիւրան և այլ
գնացող եկող ղղլբաշներն չնեղացնեն, որ
նոքա ևս բանութեամբ և ջարդով ինչ ու-
զում են անում են։ Այժմ այն տանն այլ
ուրիշ կերպ շինութեան ձար չկայ, այլ
տունն հոգևոր տիրինն է, եթէ դու հո-
գևոր տիրին խաթրիջամ կանես, և մեկ
այնպէս պայման կու գնես, որ քո բնական
մաղթուն ի՛նչ է՝ զայն առնուս, և դու
կամ՝ տղայդ աւելի պահանջմունք չառնէք,
և տիրաբար մուղայէթ կենայք տանն, որ
քեզչարի քրաեր՝ և այլ եկողք և գնացողք
չնեղացնեն, և խալիֆայն զայն լսելով՝ մեկ
սևագլուխ Առաջնորդ կարգէ, և խաթրի-
ջամ առնէ և ուղարկէ յայն տունն, ապա
թէ՝ շինութիւն կարէ ստանալ այն օջաղին։
Ապա թէ այսպէս չլինիցի, ո՛չ սևագլուխ
կարէ երթալ ի յայն օջաղն, և ո՛չ շինու-
թիւն կլինի անգ։ Մանաւանդ թէ՝ որքան
այսպէս անկանօն պահանջմունք կան, մեկ
մեկ փարայ չեմք տալ այն տան անուամբն.
զի մեք տամք որ՝ տունն շէն ՃԱյ, և ո՛չ
թէ այո և այն աւելորդաբար կեղեքեն և
ուտեն։ Եւ այլ այսպիսի բանք զինչ որ
պատշաճ տեսանիցէք, գրեցէք և յղեցէք
առ մեզ, որ մեք ևս տամք նմա, և ապա
խօսիմք, թէ սիրով՝ թէ մեղադրութեամբ՝
որ ինչ և պէ՛տքն է, և մեկ կանօն դնեմք
և բինայի կապեմք, իցէ թէ դիր ևս առ-
նումք. և ապա զով ոք դուք կամիցիք միա-
բանութեամբ, և վանիցն պատշաճ լիցի,
Առաջնորդ կարգեցուք, որ սուրբ տունն
այն շինեսցի վերստին։ Զայսպիսի իմն թուղթ
գրել ձեզ առ նա՝ վասն այն ասեմ, զի
մինչ մեք առանց այսպիսի գրոյ խօսիցիմք
և մեղադրիցեմք, նա ուրաստ կլինի, թէ
այդ ամենայն սուտ են ասացեալ քեզ, և մեզ
երես կու ձգէ թէ՝ սևագլուխ յղեա՛ անգ
և մինչ մեք չյղեսցուք, կասէ թէ՝ ահա դու
չես կամենում որ այն տունն շինուի, ապա
թէ ոչ լինէն ո՞վ է գանգատաւոր։ Վասն
այն ասեմ լինիլ այսպիսի թուղթ, որ մեք
ասեմք թէ՝ թէպէտ վանքի տէրն մե՛ք եմք,
բայց հաց տուօղն նոքա են, եթէ մեկ կա-
նոն չլինի, ո՛չ նոքա հաց կուտան, և ո՛չ
սևագլուխ կարէ խաթրիջամ լինիլ և գնալ
անգ։ Ուրեմն շուտով հոգացեալ զայսպիսի
իմն գիր, յղեսջիք առ մեզ, որ զհոգս ինչ
աբասցուք։ Բայց առ նա գրելի բան՝ մեք
զայս տեսաք պատշաճ զոր գրեցաք, եթէ

դուք այլ ևս զօրել բանս մատածեալ գրիցէք, բարի է: Ինչևիցէ՝ մեկ պսպղէս թուղթ լինիլն պատշաճ է: Եւ զինչ որ առ նա գրեսջիք, նոյն մաօքն մեկ հայերէն գիր ևս մեզ գրեսջիք, այնպէս որ ցոյց տալոյ լինի, որ մեք ևս ցոյց տամք և ասեմք թէ՝ ահա մեզ ևս այսպէս են դրեալ: Ողջ լերուք ի տէր, զօրացեալք ի Ընորհս նորին յարաժամ. Ամէն: Գրեցաւ ի ՌՄԼ. փետր. Է.

Թուղթ առ Ղրքայն վրաց Հներակիէս, մխիթարութիւն ևման մահուան որդւոյն իւրոյ Հեւոն Միրզային:

Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ և ողջունի Աստուածպնով օրհնութեան և շնորհաց, ողորմութեան և գթութեան, ըստփոփանաց և մխիթարութեան, խաղաղութեան և խնդութեան, հանդերձ հագեկեցոյց և զօրացուցիչ շնորհօք Աստուածէջ սրբոյ Աթոռոյս և համայնից կենսատու և փրկարար սրբութեանցն՝ որք ի սմաւ ի վերայ իսկական և ճշմարիտ սիրեցելոյ մերոյ ի Քրիստոս, ստոյգ բարեկամի և ցաւակցի Աստուածէջ սրբոյ Աթոռոյս մերոյ՝ և մեր. և յատուկ մխիթարչի, և այժմ ըստ բազմութեան մեզաց մերոց վշտացելոյ և արտմեցելոյ, Ախոյեանիդ եկեղեցւոյ և հաւատարիմ Զինուորիդ Քրիստոսի, Արիւթեամբ հռչակեցելոյ՝ և բարի անուամբ պերճացեալոյ, Զօրացելոյդ ի Քրիստոս, և օրհնեցելոյդ միշտ ի նմանէ, Թարեպաշտի և Աստուածասիրի Արքայիդ մեծի Հերակլայ: Եւ Աստուածապահ ամն քում, և նովիմբ զօրացեալ ընտանեացդ համայնից, Արքայազուն որգւոց, և հաւատարիմ սիրելեացդ, Արիական Զինուորացդ, և մեծիմ սպասաւորացդ ամենից, խնդալ ի ցեր մեր Քրիստոս յարաժամ ցնծութեամբ: Ամէն:

(Ընորհք)

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցուաք լիցի Աստուածասիրութեան քումդ: Զի ըստ որում խրատիմք ի սուրբ տառիցն Աստուածպնոց, խնդալ ընդ խնգացօղս, և լալ ընդ լացօղս. և դարձեալ մխիթարել զամենայն սգաւորս ըստ որում և հարկ պաշտամանս մերոյ պահանջէ. վասն որոյ՝ յերկաքանչիւրոցն հարկաց ստիպեցեալ առաջի կայ ինձ այժմ, ցաւակցիլ արտմակցիլ արտմեցելոյ Արքայիդ՝ վշտացելոյդ սրտիւ, և դարձեալ ըստ մեծոյ հարկին որ ի ձեռն Աստուածածնան մարգարէին առ Աբեսաղոնական պաշտօնեայս՝ մխիթարել զսգաւորդ կարեվէր, որ ունիս զսուգ արդարև սիրելւոյ և հատորի հոգւոյ և ստոյգ աչաց իսկ լուսոյ, և քան զամենայն ինչ որ յաշխարհի՝ ազնուականիւ: Եւ արդարև սակաւ զմեզ երկաքանչիւրն հարկ. զի որպէս խնդութիւն քո խնգութիւն էր մեզ՝ և ուրախութիւնդ՝ ուրախութիւն, որք թէ և ի բազմաթեսակ վիշս ևս լինէաք, մինչ զբարէյաջութիւն և զուրախութիւն ինչ լսէաք զօրհնեցելոյ Արքայէդ՝ մուանայաք զամենայն և ուրախանայաք, զի ուրախութիւն մեր էիր՝ և ես իսկ. և ոչ մեր միայն. այլ և բոլոր իսկ ազգի մերոյ: Նոյնպէս և այժմ կսկիծ և արտմութիւնդ պատահեցեալ ըստ բերմանց աշխարհի՝ մեր իսկ է. զի մինչ յաուկ միխթարութիւնդ սրտից մերոց եղեր վշտալի, բարձաւ ի մէնջ ամենայն ուրախութիւն, և աիբեաց մեզ կսկիծ: Զի ըստուերքացաւ լոյս աչաց մերոց, և աիբեաց մեզ մեզ և մտախուզ արտմութեան: Քանզի՝ որ զքեզդ կսկծեցոյց, նոյնն և զմեզ: Զի լուաք զկսկծալի և զաարաժամ մահըն որգւոյդ սիրելւոյ և մեր իսկ աչաց լուսոյ Լեւոն Ազքայորգւոյն ազնուոյ փոխեցելոյ առ Քրիստոս: Ուստի՝ աիբեաց մեզ կսկիծ անհնարին, և եղաք արդարև սգազգեացք և խաւարամածք, և աեղի եա ի մէնջ ուրախութիւն: Բայց զի գոծ Արարչին Աստուծոյ է՝ որ ի ձեռին ունի զամենայն, և աէր է կենաց և մահու, ոչինչ ուրիմք առ այն ասել. այլ գոյանալ միայն զնմանէ՝ և զՅօբայն իսկ ասել բան. Թէ աէր եա՝ և աէր էառ, եղիցի՛ անուն նորա օրհնեալ: Մանաւանդ՝ թէպէտ կսկծելի է ըստ այնմ, զի ի նորաբողբոջ հասակի և ի տարադէպ ժամանակի ի մէնջ պակասեցաւ. այլ զի առ Աստուած յաւելաւ, ոչ է անյուսաբար լալի իբրև զկորուսեալ ոք. (այլ զՍիրաքայ իմաստնոյն առնել զնորա, սակաւ լալ և մխիթարիլ:) Քանզի և մեք ամենեքեան ընդ նոյն ճանապարհ երթալոց

եմք. եթէ կանուխ՝ և եթէ անագան, Ըստ որում վայր պանդխտութեան է մեզ աշխարհս, և ոչ ունիմք քաղաք աստէն ձա. լոյ, այլ ըստ Առաքելոյ՝ զյինուածք յաս. տուածոյ ունիմք տաճար առանց ձեռագործի յաւիտենական յերկինս, և զընակութիւն երկնից փափագիմք զգենուլ, Վասնորոյ յետ սգակցելոյս և վշտակցելոյս սգազգեցի Արքայիդ՝ ըստ Հարկի կսկծանաց սրտի և ըստ աշխարհի արտմութեան, Հարկաւորիմ ապա զԱստուածայինն ածել քեզ ի սիշուճ ի մխիթարութիւն սրտիդ վշտացելոյ, մի՛ զերկրաւորս և եթ խորհելով զպակասին ի քէն ըստ մարմնոյ՝ յաւելուլ զկսկիծ սըրտիդ մինչև յանչափս։ Այլ յետ սգոյդ չափաւորի՝ զյաւիտենական վայելչութիւն երկնաւոր արքայութեանն բերել այժմ ի միտ, և յԱստուածոյ իսկ զնա աւանգեալ գիտելով սոյգ, և թագաւորել նովաւ անվախճան թագաւորութեամբն միխիթարել զքեզ ինքնին, և ուրախանալ իսկ ընդ երկնաւորն նորին երջանկութիւն. ի բաց մերկանալ ի քէն զսուգդ, և զգենուլ զուրախութիւն, Զորև ազերսիս մեծաւ իսկ հայցեմ յԱստուածասիրութենէ առատիմաստ և գերահանճար Արքայիդ մեծի, առնել այսպէս, և մի զքեզ անմխիթար սգով մաշել։ Ծիշելով իսկ և զնախնին քո՝ զերջանիկն թագաւորաց՝ զԱստուածահայր մարգարէն Դաւիթ, և զոր արարն նա՝ առնելով քեզ ի յօրինակ բարւոյ. որ ի ժամ առապանաց մանկանն ի ցաւս մահուն, քուրձ զգեցեալ և ի վերայ մոխրոյ նստեալ լայր, և ոչինչ ճաշակէր։ Իսկ մինչ մեռաւ մանուկն, յարեաւ իսկոյն, լուացաւ, օծաւ, էկեր և ե. արբ։ Ասելով և զպատճառն թէ՝ յայն սակս ողբայի. զի մի մեռցի. իսկ մինչ մեռաւ, զի՞ ևս լացից, զի և ես առ նա եմ գնալոց. և ոչ է նա առիս գալոց։ Արդ՝ զսոյնս առնելով և օրհնեալ Արքայդ, փարատեա ի քէն զսուգդ, և միխիթարեա զքեզ երկնաւոր միխիթարութեամբն։ Եւ որ միխիթարիչն է յամենայնի Հոգին սուրբ Աստուած, մխիթարեսցէ զսիրտ վշտացելոյ Արքայիդ և ամենից իսկ քոյոցդ օրհնեցելոց։ Թարձցէ՛ ի ձէնջ զսուգ և զտրտմութիւնս ձեր, մոռացուսցէ՛ զվիշտ. և առցէ՛ ձեզ զուրախութիւնս և զհանդուրժութիւնս մեծագոյնս։

Եւ լուսաւորեսցէ՛ զՀոգի սիրելւոյն իմոյ աղնուոյ՝ և իրախճեցելոյն ի Քրիստոս՝ Լեւոն որգեկիդ. և գասեսցէ՛ ընդ սուրբս և ընդ սիրելիս իւր, և հանգուսցէ՛ այցելութեամբ ի լոյս երեսաց իւրոց։ Եւ զպակասեալն ի ի կենաց նորին՝ բազմապատկապէս յաւելցէ՛ ի կեանս օրհնեցելոյ Արքայիդ՝ և Արքայազուն որդւոցդ Քրիստոսիս ղօրացելոյս։ Եւ առցէ՛ քեզ զնորին միխիթարութիւնն գտանել ի դոցունց առաւելապատիկ, որպէս նախահօրն Ադամայ Արեւելին միխիթարութիւն ի Սեթայ։ Եւ պահեսցէ՛ ամենաճոխ պայծառութեամբ զթագաւորութիւնդ և զթագազարմ որդիսդ. ժառանգեցուցանելով դոցա զՑերութիւն իշխանութեանդ յազգաց յազգ՝ և որգւոց որդիս, ի պայծառութիւն եկեղեցւոյ՝ և ի յուրախութիւն հաւատացելոց. Եւս առաւել՝ ազգիս մերոյ առապելոյ և մեզ։ Այլ և՝ ահա ընդ օրհնութեանս մերոյ Թզթոյ՝ առաքեցաք ի կողմանէ մերմէ ի միխիթարել զօրհնեալ Արքայդ՝ զսիրելին մեր Գալուստ խոհամամիտ վարդապետն. և առ ի գիտել զոզջունէ և զորպիսութենէ ձերմէ, և բերել մեզ համառաւ ուրախութեան ի միխիթարութիւն ցաւագնեալ սրտից մերոց սաստկագոյն կսկծեցելոց, և ի փարատումն մերոց Եւս արտմութեանցս։ Ծորմէ և զամենայն որպէսն մեր և սրբոյ Աթոռոյս իմանալոց եւս։ Ո՛ղջ լեր ի աէր, զօրացեալ միշտ ի նոյն քոյայնովքդ ամենեքուրմբք. և պահպանեցեալ խաչին սրբով։ Ամէն։ Ի ՌՄԼ. Ի փետր.։

Թուղթ մխիթարութենան առ Թագուհին Վրաց, վասն մահուան Լևոն որդւոյն, որպէս եւ առն նորին Հնդուկվայ Արքային Լեւ գրնցաւ՝ի վերոյ։

Ցորմէ ժամանեցայ Թուղթ Հայրական անանցանելի օրհնութեամբն, որդիական վուարձարար ողջունիւն, և հոգեկան սփոփիչ սիրովն և մխիթարութեամբն. և հոգևզուարձ շնորհօք և զօրութեամբք Միածնաիջի սրբոյ Տեզւոյս. և համայն Աստուածակիր սրբութեանցն որք ի սմա. ի վերայ օրհնեցելոյդ ի Տեառնէ Աստուծոյ, բարեպաշտուհւոյ և երկիւղածդրդի, Աստուածասիրի և մեծահաւատի, հոգևւորի դստերդ մերոյ սիրեցելոյ ի Քրիստոս, Աղուաստոմի և պերճապատուոյ Գերարգոյի և շքեղափառի, Դարբէջան թագուհւոյգ բարեհամբաւ և համբաւաբարոյ Տիկնաց Տիկնոջդ ամենայն Վրաց։ Եւ Աստուածախնամ տան քումդ, և նղնապարգև որդւոցդ և դստերացդ Թագաշարմից, և ամենայն իսկ քոյոյնոցդ, խնդալ ի Տէր մեր Ցիսուս ի յոյն բնաւից յարաժամ։ Ամէն։ Ընդ որում, ողորմութիւն՝ գթութիւն և խաղաղութիւն ամենասրբոյ երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ իջեալ հանգիստ ի վերայ քոյ և քոյոյնոցդ համայնից, ծաւալեսցի ի ի հոգիս և ի մարմինս ձեր, եւ լցուսցէ զքեզ ուրախութեամբ, փայլեցուսցէ գերապայծառ ճոխութեամբ, եւ զարդարեսցէ ամենայն Հոգեկան առաքինութեամբք եւ հաճոյական գործովք։ Ամէն։

Եւ ընդ շնորհաղեղուն օրհնութեան և ողջունաարութեան Թղթոյս ծանուցումն լիցի դստերդ մերոյ հոգևորի՝ օրհնեցելոյ ի Տէր։ Զի ըստ որում տուն փորձութեան է աշխարհս և հովիտ արտմութեան. վասն որոյ որք ընակիմքս յաշխարհի՝ ոչ պակասին ի մէնջ յարաժամ պէսպէս վիշտք և փորձութիւնք՝ և դառնակսկիծ պատահմունք։ Վասնորոյ ասէ երանելին Ցօբ, փորձութիւն են կեանք մարգոյ ի վերայ երկրի։ Եւ զի զանազան են փորձութիւնք աշխարհի. վասնորոյ և կսկիծքն որք ի նոցունց՝ են զանազանք և պէսպէսք։ Զի որքան սաստիկ իցէ փորձութիւնն, այնքան առաւել լինի կսկիծն որ ի նմանէ։ Որդ՝ թէպէտ բազում են կսկծեցուցիչ ցաւք և փորձութիւնք յաշխարհի. այլ տարաժամ մահն զաւակաց քան զամենայն կսկիծս առաւել ագին է ծնողաց և սաստկագոյն յոյժ։ Եւ զի այսպիսի կսկիծ դառնագոյն՝ պատահեցեալ է այժմ բարեպաշտուհի թագուհւոյդ, յազգաց տարաժամ մահուան Արքայազարմ և քաջատոհմիկ որդւոյդ սիրելւոյ՝ և մեր իսկ աչաց լուսոյ Լեւոն Մերզային՝ փոխեցելոյ առ Քրիստոս. վասնորոյ՝ հարկաւորի մեզ այժմ աղեխարշ կսկծանօք ցաւակցիլ Դստերդ մերոյ հոգևորի, Որդ ցաւալւոյ հանգուցելոյն ի Տէր, և ապա՝ մխիթարել և քեզ ի գառն արտմութեանդ։ Եւ յիրաւի հարկաւորի մեզ տրամիլ ընդ քեզ։ Զի քեզ առ հարկի ծնողականի գթոյդ եւ մայրականի ազէտիդ՝ սաստկապէս է պատահեցեալ կսկիծ, մինչ դրկեցեալ ես յայնպիսւոյ քաջասիրտ և արիացեալ՝ դեռահաս եւ գեղազէշ Արքայազուն զաւակէ, յորմէ ակնունէիր տեսանել և լսել յառաջացեալ գերագոյն փառս, երևելի քաջութեամբ, մեծագոյն հանճարեղութեամբ և արժանավայելուչ պատուով. և բերմունք ցաւալի աշխարհիս ոչ ետուն քեզ զայնս տեսանել. որոյ սակս որքան եւ կսկծիցես, ոչ կարես ասել բաւական։ Մեզ եւս առհարկի անտիրութեան և անայցելութեանս մերում, կարի սաստկապէս եղև կսկիծ՝ փոխուիլն նորին ի կենաց աստի։ Վասն զի՝ այսպիսւոյ անտիրութեանս մերում և ի դառն ժամանակիս՝ յայլ ուստեքէ չունելով մեզ աչեր եւ այցելու. եւ կամ մխիթարութիւն ինչ եւ ուրախութիւն սրտի՝ բաց ի յօրհնեցեալոյ եւ յԱստուածասիրէ Արքայէն և յօրհնաղարմ շառաւիղաց նորին, ակն ունիմք՝ որպէս զԱստուածազօր Արքայն նոյնպէս եւ զօրհնեալ շառաւիղսն իւր տեսանել յիւրաքանչիւր ժամանակս աճեցեալ եւ բարձրացեալ իբրև ղծառս հովանաւորս առ ի ղովանալ մեզ և տառապեալ ազգին մերոյ ընդ հովանեաւ նոցին՝ ի տապոյ անտիրութեան և անմխիթարութեան։ Իսկ այժմ՝ թէպէտ եւ գոյ հովանաւորութիւն օրհնեցելոյ Արքային ի վերայ ազգիս մերոյ եւ մեր, եւ Աստուածազօր որգւոցդ ևս լինելոց է յիւրաքանչիւր ժամանակս. (զորս անպակաս արասցէ ի մէնջ Տէր.) այլ մինչ հո-

դելոյս սրդիդ վաղտթատւամ՝ եղեալ տեսաք, ւնե նւս վայելեալ ղՀովտ աւուրութիւն սիւրում ժամանակի, ցաւ անհնարին եւ սուգ անմխիթար անտրացելոցս մեզ՝ կրկին յաոաչացաւ Վառնորոյ՝ եւ մեք որքան պյսու սղով վշտակցեալ քեզ կսկծիցուք, ոչ երբէք ախորժեմք ասել շատ։ Ոչ վասն զի՝ ոչ պյսու կենաօքս մերոյն յուսացեալ եմք ի Քրիստոս՝ ըստ Առաքելոյն սրբազանի. այլ զոյ մնալ խոստացեալ առեղծ եւ անարատ եւ անթառամ՝ ժառանգութիւնն որ պահեալ է յերկինս մեզ, որսմ ակնկալեալ հաւատովն ի Քրիստոս ելս եգեալ ուսիմք ի սրտի ի հովտէս տրտմութեան որ ի տեղին ուխտեալ մեզ, վասնորոյ ոչ պարտիմք իրրեւ զանյոյս որ՝ անմխիթար սգով լալ զայնուսիկ՝ որք յառօրէական կենցաղոյս յանանցն փոխին։ Զի որքան յամեմք ի մարմնի՝ օտարանամք ի Տեառնէ։ Ուստի՝ մի զնոսա լացդուք՝ որք թեթեւ աճապարմամբ վաղգոյն փութան առ Քրիստոս՝ լքեալ զերկրաւորս. այլ զմեզ իսկ ողբասցուք. որք ըստանձնեալ զբեռն կրից կենցաղոյս օրըստօրէ յաւելմամբ, ոչ դիտեմք թէ ո՞րպէս իցեմք ելանելոց ի տանէ աստի ցաւոց՝ եւ կալ առաջի Քրիստոսի։ Ցաղագս այսոցիկ ի մխիթարել զբարեպաշտուհի եւ զդաստատիտ Դուսարդ մեր հոգեւոր՝ գրեմ եւ աղերսեմ իսկ վառիլ երկնաւորն յուսով, եւ փարատել ի քէն զսուգդ եւ զտրտմութիւնդ։ Մի այսուհետեւ զայն մտածեր՝ զի ի քէն պակասեցաւ, եւ յերկրաւորս փառաց զրկեցաւ, այլ զայն իսկ բեր ի միտ, զի առ Աստուածդիմեաց, եւ երկնաւոր փառացն եղեւ արժանաւոր։ Զոր մտածելով՝ մխիթարեա զսիրտդ վշտացեալ։ Զոր մխիթարեսցէ Հոգին սուրբ Աստուած. մռայգուցանելով զզկսկիծդ, եւ ուրախացուցանելով զքեզ հանդերձ թագաժառանգ որդւովդ եւ ամենայն քոյայնովքդ։ Նւ զՀոգի նորին լուսաւորելով՝ հանգուցէ ի տեղւոջ լուսոյ եւ ի տեղւոջ հանգստեան ընդ ամենայն սուրբսս իւր. եւ ընդ նոսին պսակեսցէ եւ զպակասեալն ի կենաց նորին՝ յաւելցէ ի կեանս Աստուածաղօր մնծի Արքային՝ եւ քո եւ բարեբաղդող դաւակացդ, յաւելլով եւս օրըստօրէ զլիաս դոցին փոխանակ նմին ի մխիթարութիւն վշտացելոյ սրտիդ։ Զոր եւ ծաղկեցուսցէ պերճագոյն իշխանութեամբ եւ ՅԷ. րութեամբ յորդւոց յորդիս. առ ի յուրախութիւն մեզ։ Նաեւ՝ ահա այսու թղթովս օրհնութեան զսիրելին մեր խոհեմատաա... վարդապետն, յղեցաք ի մխիթարել զձերդ բարեպաշտութիւն ի կողմանէ մերմէ, եւ ի տեղեկանալ զորպիսութենէ եւ զբարեկեցութենէ ձերմէ. եւ զուրախարար ինչ համրաւ ընդել մեզ ի ձէնջ. զի եւ մերս տրտմաթախիծ սրտից դադարեցուք զմխիթարութիւն։ Ողջ լեր ի Ցէր, պահպանեցեալ ի շնորհս նորին համայն քոյայնովքդ։ Ամէն։ Ի ՌՄԼ. ի փետր։



Թուղթ առ Պրուսացոյն Լուսաւորող Համատանցի Ցովհաննէս վարդապետն, առ որ ղնո նւս չէր գրեցեալ թուղթ ի նորոգ արքազանէս մերմէ։ Ծանուցանելով ի կարճոյ զորպիսութենանց վախճանման Հոգելոյս Հայրապետին մերոյ եւ զիւրոյ յաջորդելոյն եւ յորդորելով ի սէր եւ ի հարազատութիւն առ սուրբ աթոռս, որպէս յաւուրս լուսահոգւոյն։

Թուղթ ի Պրուսա, առ Պօլիսցի Ցովհաննէսն եւ իւր եղբայր Մկրտիչն, եւ Պրուսացի Սիմէոնն, ի պատասխանի թղթոյն իւրեանց, հանդերձ որպիսութեամբ մերովք որպէս եւ ի վերոյ գրեալ թղթոջն գրեցաւ։ Որք եւ խընդրեալ էին զյատուկ կնդրակ գրել ի Պրուսա վասն առաջնորդութեան Համատանցի Ցովհաննէս վարդապետին, այլ այժմ չգրեցաւ։

Թուղթ ի Պօլիս, առ Ղազիանցի պատրոն Թումանն, ի պատասխանի թղթոյն, վիճատութիւն վասն գրեցեալոյն։

Թուղթ ուս Յօհաննու Աղքատի Ալիխազաց, որք այժմ ասին ըսպասպուխք եւ Իմէրէթի. արտահանեալ ի նոյն Թղթոյ՝ որ ի վերն ի տաւարն 37, 38, եւ 39 գրեալ կայ։ Գրելով դարձեալ զնոյն միտան որ անդ. եւ միխիթարութիւն եւս խառնելով յայն՝ վասն մահուան որդւոյն։ Զի առաջին գրեալն մինչ հասեալ էր ի Թիֆլիզ, տաղտուկ մահուան որդւոյ նորին եկեալ էր անդ։ Ուստի՝ զայն Թուղթն յետս յղեցին աստ մերքն, եւ նոր Թուղթ խնդրեցին խառն ընդ միխիթարութեան զոր եւ յետ միջոցաց յղեցաք այժմ։

Թուղթ շնորհակալութեան ուս օտարազգի տաւատացեալս զրելի, որք տուեալ իցեն զնուէրս ինչ սրբոյ աթոռոյս։

Թուղթ ուս մեծի Պօղոսի Եռիրակ Մինաս եւ ուս տահտարատար Պետրոս վարդապետան, ի պատասխանի ի ՌՄՂ Թուոջս եւ ի փետր. ԻԹ գրեալ Թղթոյն նոցա վասն ատենի ժամագրին տղայոցն, եւ Հալապու նուիրակութեան, եւ դրամոյ ինչ, որ էր ի Հիւլպայ, եւ այլ եւս մանր քանից։

Թուղթ ի մեծն պօղիս ուս Ջոդոպաշեցի պ. Թաչիկն, ի պատասխանի ի փետր. ԻԹ. գրեալ Թղթոյն։ Վասն հաշուոց մերոց, որք ի Բասրայ, որոյ ծնռամբն մեզ էին հասանելոց։

Թուղթ Առաջնորդական վասն Յակոբ Առաջնորդ սասնցի Կաթողիկոսարան վարդապետին։ Բաց ի տասարակ օրինակէն, միջարկեալ քանքն աստէն գրին։

Ցորմէ ժամանեցի՝ Թուղթ սիրոյ ողջունի և օրհնութեան՝ և նամակ պահպանութեան, Ընորհք Առա՛. ի վերայ սիրելի և հոգևոր որդւոդ մերոց՝ Տարագատ և լուսածննդոդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս, Հայկասէր՝ լուսա՛. Որք կայք ղետեղեալ ի Համայն Թեմս և ի վիճակս բարձրահայեաց սրբոյ Աստուածածնի վանից, ի յԱստուածախնամ քաղաքդ Տիգրանակերտ՝ և յայլ շրջակայ ղասապայս և ի գիւղորայս վիճակեցեալս դոյնոյ սրբոյ վանից։ Ցորս կառուցեալ Քրիստոսահիմն սրբոց եկեղեցեաց՝ և եկեղեցականաց դասուց, սրբասէր քահանայից, ուսումնա՛։ (և այլն)։

(Ընորհք)

* * * * * *

Հինգերորդ՝ զայս ևս պատուիրեմք յատկապէս ձեզ Համայն քահանայից և Աստուածասէր իշխանաց օրհնեցելոյ երկրիդ, զի զամայութիւնս սրբոց վանօրէից երկրիդ ձերոյ առ ի չգոյէ բնակչաց լսելով մեր՝ մորմոքիմք եւ ցաւիմք։ Ցաղագս որոյ պատուիրեցաք սիրելւոդ մերոյ Կարապետ խոհեմառատ վարդապետիդ՝ զի այրի քահանայից վիճակիդ այգորիկ՝ տացէ ղվեղարս, և արասցէ աբեղայս և վարդապետս, և դիցէ ի սուրբ վանօրայսն, զի բնակեսցին ի նոսա, և շինացուսցեն, և զլոյսն նոցին վառ պահելով՝ աղօթեսցեն վասն աշխարհի, և վասն կենաց և բարեյաջողութեան ձերոյ և փրկութեան հոգւոց ննջեցելոց ձերոց։ Վասն զի՝ թէ ոչ լիցի այսպէս՝ անհնար է վանօրէիդ այդոցիկ ղշինութիւնս ստանալ։ Զի տեսանէք ահա զժամանակիս որպիսութիւն, որ յամենայն տեղիս նուազեալ են սէրք, և վանորայքն սուրբք ըստ մեծի մասին ձեացեալ են ամայի. խաւարեալք ի լուսոյ, և լքեալք ի փառաբանութենէն Աստուծոյ։ Սակս որոյ հարկ եղև մեզ այսպէս առնել՝ որպէս ահա գրեցաք։ Որ և ոչ է իսկ նորամոյծ կանոն, այլ դոյ ևս կանոնապրեալ ի գիրս կանոնաց, զի այրի քահանայք ի մէջ ժողովրդոց մի բնակեսցին. այլ ի վանս երթեալք կրօնաւորեսցին։ Որոյ համար՝ պաքտիք եւ դուք հոգևոր որդիքդ մեր՝ լաւ լինիլ հոգևոր հրամանացս մերոց, և օժանդակել սիրելւոդ մերոյ Կարապետ վարդապետիդ և զայրի քահանայսն ի վա-

նօրպս յղել, զի զվեզար առեալ կրօնաւորեսցին, եւ պահեսցեն զվանօրայն ի շինուԹեան, եւ ազօԹեսցեն վասն ձեր։ Վեցերորդ զայս ևս վերջապէս պատուիրեմ սիրելեացդ մերոց ի Քրիստոս, զի ղորպիսուԹիւնս եւ զամայուԹիւնս Առաքելոց սուրբ վանիցն լսելով՝ ցաւեցաք կարի, որ այնպիսի անուանի եւ գեղեցիկ վանքն սուրբ՝ կայ այնպէս աւեր եւ ամայի։ Որոյ ազագաւ գրեմ ձեզ ահա, զի ընդ սիրելւոյդ մերոյ Կարապետ խոհեմազարդ վարդապետիդ խոկացեալ՝ զկատարեալ իմն հոգս արասջիք վասն շինուԹեան նորին, այնպէս զի պատշաճաւոր հնար իմն գտջիք վասն նորա, որով սուրբ տունն այն զշինուԹիւն ստասցի, լինելով ձեզ ի պարծանս եւ ի յօգուտ հոգւոցս։ Եւ զինչ հնարս եւ գտանիցէք, մեզ եւս ծանուցջիք, զի գիտասցուք. եւ զոր ինչ մեզ վայելէ յայնժամ առնել՝ մ՚եք եւս ասացուք։ Կատարօղդ հրամանաց մերոց եւ ղիջիք օրհնեալք յԱստուծոյ եւ ի մէնջ, եւ Շնորհք սրբոյ ԱԹոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԼ ի յունւիսի Ա։

Թուղթ առ Տիգրանակերտոս Ղուկաս նորոգ Կարապետ վարդապետն. վասն Առաքելոցն վանիցն սրբոյ՝ որ է մերձ քաղաքին. զի ընդ իշխանաց խորհելով հնար իմն գտցեն վասն շինուԹեան նորին. որպէս եւ ի վերդ ահա գրեցեալ է ի յԱռաջնորդական կոնդակող նորին։

Ջորմէ սիրով բազմաւ եւ հոգևոր օրհնուԹեամբ, կարօտիւ մեծաւ եւ Քրիստոսական սուրբ ողջունիւ գիտասջիր սիրելիդ մեր Կարապետ խոհեմաւստ վարդապետ։ Զի մինչ աստ էիր դու՝ պատուիրեցաք քեզ վասըն Առաքելոց սուրբ վանիցն զի ընդ օրհնեալ քահանայից եւ իշխանաց եւ նշանաւոր անձանց օրհնեցելոյ քաղաքիդ եւ վիճակիդ քոյ խոկացեալ եւ խորհեալ գտջիք զհնար իմն պատշաճաւոր՝ վասն նորին շինուԹեանն, որպէս եւ ի կոնդակոջդ ես գրեցաք զպատուէր վասն այսր։ Այժմ ահա վերստին գրեմ քեզ եւ հարկադրեմ. զի քահանայից եւ օրհնեալ իշխանաց ամենեցունց զմինչ ողջոյն եւ օրհնուԹիւն մատուցեալ՝ ասասցես նոցա կրկին զպատուէրս մեր. զի վասն սրբոյ տանն այնմիկ զկատարեալ եւ զպատշաճաւոր հոգս իմն արասցեն, ընդ քեզ խորհելով՝ եւ ինչ կերպիւ եւ իցէ՝ ըզհնարս գտանելով, զի սուրբ եւ հռչակաւոր վանքն այն շինեսցի առ ի պարծանս ինքեանց եւ ի յօգուտ հոգւոց։ Եւ գիտեմք իսկ զի պատճառ աւերուԹեան սուրբ վանիցն այնմիկ ոչ այլ ինչ է, եԹէ ոչ սյն իսկ, զի չունի վիճակ ե Թեմ։ Վասնորոյ պատուիրեմ՝ զի օրհնեալ իշխանք եւ նշանաւոր անձինք խորհեսցեն ի միասին եւ ի մերձակայ վիճակացն զպատշաճաւոր իմն վիճակ գտցեն վասն սուրբ վանիցն այնմիկ. համակամ խորհրգով եւ միաբանուԹեամբ, որպէս զի անգ նստոզք եւ քանակիչքն վայելեսցեն եւ զսուրբ վանքն շէն պահեսցեն։ Եւ յետ գտանելոյն ձերոյ զպատշաճաւոր վիճակ իմն վասն սուրբ վանիցն այնմիկ, ապա զպատշաճաւոր սևագլուխ մի ես գրեջիք վասն ԱռաջնորգուԹեան նոյն սուրբ վանիցն՝ եւ յղեսջիք անդ. եւ մեզ ևս գրեսջիք զի Առաջնորդ կարգեսցուք զնա սուրբ վանիցն այնմիկ եւ իւր վիճակին, եւ զկոնդակ յղեսցուք. զի հաստատեալ լասպէս՝ առցէ շինուԹիւն նորին զկայ։ Ուրեմն պարտիս այսպէս առնել ծանուցանել դոցա վերստին զպատուէրս մեր. եւ զնար իմն վասն այդր գտանել այսու ոճիւ որպէս գրեցաք եւ մեզ գրել. զի եւ մեզ զոր ինչ առնել վայելիցէ, արասցուք եւ հոգասցուք վասն շինուԹեան սրբոյ տանն այնմիկ։ Զպատասխանի ԹզԹոյս շուտով գրեա։ Եւ լեր ողջ ի Տէր։ Ի ՌՄԼ ի սեպտեմբերի ԺԲ։

Թուղթ առ միաբանսդաւան ժողովուրդսն Ախլցխայու, վասն յղնալ արդևանց իւրեանց. օրհնութիւն եւ շնորհակալութիւն, եւ պատուէր՝ մնալ ի հարազատութևան, եւ կալ ջնրմնռանդ եւ հաստատուն ի հաւատս սուրբ Հայաստանեայցս եկեղեցւոյ։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան և նամակ պահպանութեան. Շնորհք առաքելական, և Աստուածային բազմապատիկ օրհնութիւն՝ և նախախնամական դթութիւն, ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց, հարազատ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս՝ և Տէրունի ժողովրդոցդ սորին, Հայկասէր, Լուսաւորչակրօն և միաբնադաւան հաւատացեալոցդ ի Քրիստոս։ Որք զեռեզեալ կայք ի Տիրախնամ՝ քազաքդ Ախլցխայ։ Քահանայից, իշխանաց, և առ հասարակ օրհնեալ ժողովրդոցդ ամենից. ինդալ ի Տէր յարազուարճ ցնծութեամբ։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ Աստուածապարգև օրհնութեանս՝ ծանուցուաձ լինի սիրելեացդ մերոց ի Քրիստոս՝ և հարազատ որդւոց սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ասէ սրբազան Առաքեալն Պօղոս Թէ՝ անդասանի՝ որ ասցէ ըզպատուոյ շահեկանս և առատս՝ ընկալցի զօրհնութիւնս։ Քանզի սովորութիւն է երկրաւոր մշակաց, զի յորժամ զբարեարդիւն պատուոյ ընկալնուն յանդաստանաց իւրեանց. յայնժամ շնորհակալին և գոհանան զնոցանէ վասն առատ պտղատուսութեանցն։ Արդ՝ սիրելի և հոգևոր որդիք մեր, եթէ երկրաւոր մշակացն շնորհակալ լինիլ պարտ է զանգան անդաստանաց իւրեանց՝ յորոց ընկալնուն զարդիւնս. ո՛րչափ ևս առաւել մեք շնորհակալիլ և գոհանալ պարտիմք զհոգևոր անդաստանացդ մերոց, յորոց ընկալնումք զպատուոյ հոգեկանս, կամաւորականս և առատս։ Որք այժմ ամենայօժար սրտիւք և առատութեամբք շնորհեալ էք հաւատոյ մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս զՀինդ Թիլանի մոմ, Ա. Թիլանի և կէս մեղր, Բ. Թիլանի ձիթապտուղ, և Ա. հակն զոր յազգաս թղթաշինութեան, ի ձեռն հարազատ գործակալին սրբոյ Աթոռոյս և սիրելի որդւոյն մերոյ, երիցփոխան պարոն Թալունէ Զօրս և նա յղեալ էր ասա՝ ձեռամբ սիրելոյն մերոյ և հարազատ որդւոյն սրբոյ Աթոռոյս պարոն Մինէծնին, որ բերեալ առ մեզ հասոյց, ընդ Տէր Դաւիթ քահանային ձերոյ։ Ցորոց իմացեալ մեր զորպիսութեանց և զբարեկեցութեանց ձերոց, և զՀշմարիտ սիրոյ և գՀարազատութեանց, զորս առ սուրբ Աթոռս և առ մեզ ունիք։ Ընդ որս և զլերմեռանդութիւն ձեր ի սուրբ հաւատս Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ, և զհաստատութիւն ձեր ի նոյն և զիոյթ Աստուածսիրութեան և բարեգործութեան, մեծաւ ուրախութեամբ օրհնեցաք զԱստուած, խնդրելով ի նմանէ պահել զձեզ միշտ ի դոյնս հաստատուն և անշարժ։ Եւ ընկալեալ զհոգևսր նուէրսն ձեր, շնորհակալեցաք զսիրելի և զհոգևոր որդւոցդ մերոց, զբանաւոր անդաստանացդ, և օրհնեցաք զձեզ մեծաւ օրհնութեամբ։ Զորս օրհնեսցէ Տէր և զօրացուսցէ, և ամենայն բարութեամբ լցուսցէ, պահեսցէ միշտ ի խնամս և յողորմութիւնս իւր. և փրկեսցէ յամենայն չարէ։ Եւ տուրս ձեր սիրով և քաղցրութեամբ ընկալեալ ի հաճոյս իւր՝ զփոխարէնն նոցին բազմապատկապէս հատուսցէ ձեզ՝ աստ և ի հանդերձելումն. և զհոգիս ննջեցելոցն ձերոց լուսաւորեսցէ։ Արդ պատուիրեմ հոգևոր որդւոցդ մերոց. ի ըղդոյն սէրդ և զհարազատ որդիութիւնդ զորս ունիք առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ հաստատուն և անշեղ պահեսջիք։ Եւ ի հաւատոյդ Հշմարտութեան որպէս և էքդ իսկ հաստատուն՝ կացջիք դոյնպէս անշարժ և հաստատուն ի դոյնդ. ունելով զիոյթ գործոց բարեաց՝ և զլերմեռանդութիւն կատարեալ Աստուածպաշտութեան. սպասելով մեծաւ երկայնմտութեամբ Տեառն այցելութեան և գթութեան, և զամենայն հոգս ձեր ընկենլով ի նա. զի նա է որ հոգայ վասն ձերս Իսկ և՝ զսիրելին մեր՝ և հարազատ որդին սրբոյ Աթոռոյս պարոն Թալին՝ հա վերստին կարդեցի գործակալ սրբոյ Աթոռոյս և դանձապահ. և իրիցփոխան ի սուրբ եկեղեցւոյդ ձերում։ Զի ըստ որում փորձեցեալ է ի հաւատարմութեան իւրում, և հարազատութեամբ ծառայէ սրբոյ Աթո-


ոգյս՝ և զձեզ և զսուրբ եկեղեցիդ ձեր բարեոքապէս կառավարէ, վանորոյ՝ վերա-
տասաւաեցի զդա ի գործն հոգևոր՝ զորս յիշեցաք. զի նովին հարազատութեամբ և հաւատարմութեամբ ևս առաւել արիացեալ ի նոյն գործն՝ ծառայեսցէ սրտի մտօք հաւատոյ մերս ձերոյ սրբոյ Աթոռոյս ։ սիրոյ եկեղեցւոյդ ձերոյ զհոգսն հոգասցէ։ Վանորոյ, պարաիք և գուք յամենայն կողմանէ օժանդակել դմա՝ և լինել ձեռնտու ամենայն բանից և գործոցն։ Եւ ամենից օգտաւէտ բանից զորս տասցէ գա՝ լսող լինել՝ և ընդ ինքեան հոգ տանիլ նոցին. ի յօգուտ սրբոյ Աթոռոյս, և սուրբ եկեղեցւոյդ ձերոյ՝ և ձեր։ Որում եթէ ոք ներհակիցի և հակառակ երևիցի, մեզ և սըրբոյ Աթոռոյս լինի ներհակ, և չէ մնալոց առանց պատժոյ։ Եւ որ ինչ արդիւնք իցեն սրբոյ Աթոռոյս՝ թէ գանձանակ և թէ այլ ինչ, ամենն պարտին ձեռամբ դորին ժողովել՝ և ի սուրբ Աթոռ հասանիլ։ Եւ հնոտի շոր ևս որ ինչ վասն թղթաշինութեան ժողովիցի՝ զայն ևս դա պարտի յընդել աստ. և դուք որիբելիքդ մեր պարտիք յօժարութեամբ տալ զհնոտիս՝ որքան և կարիցէք. որ ձեզ չէ ինչ ծանրութիւն. իսկ թղթաշինութեան սրբոյ Աթոռոյս է մեծ ձեռնտուութիւն[7]) և ձեզ պատճառ բարեաց վարձուց ի Տեառնէ։ Եւ կատարօղքդ հրամանաց մերոց եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ, և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ։ Ամէն։ Ի ԻՄԼ. ի յունիսի ԹՒ.։



Թուղթ առ Էփթվիմէ վարդապետն Վրաց, որ էր Առաջնորդ Անապատին Վրաց, որ յանուն սրբոյ Կարապետին՝ ի Կախէթ. ի պատասխանի սիրոյ թղթոյն՝ զոր զրևսել էր ընդ միաբանին իւրոյ Ծումնան կրօնաւորին, եւ ընծայ սեւ յղևսել զգինի՝ եւ զայլ ինչ, որոց սակս շնորհակալութիւն, եւ սէր, որպէս եւ վայելէր։


Ծովմէ Քրիստոսականաւն սուրբ և մեծարար ողջունիւ, և Հոգեկանաւն Ճշմարիտ և անկեղծական սիրով, և կարօտիւ բազմաւ՝ և հոգեասարփ բաղձանօք, ծանուցուածիւ լիցի ցանկալւոյ և տենչալւոյ եղբօրդ մերոյ ի Քրիստոս, սիրով սաւգագունիւ սիրեցեալոյ. և ի ձեռն նոյնոյ սիրոյ՝ սրտիւ և հոգւով միացեալոյ, և Աթոռոյս մերոյ սրբոյ և Աստուածածինի՝ ստոյգ բարեկամի և օգտասիրի. և սիրավառ ըղձիւ սիրողի. Աստուածահաճոյ ճգնութեամբ հոչակեցելոյ՝ և մաքրական վարուք փայլեցելոյ, սրբասիրի և Ուռաքինազարդի. Տեառնդ Էփթվիմէ Աստուածաբան և գիտնատաստ վարդապետիդ, և արժանավայել Առաջնորդիդ բարեհըրչակ Ընտապատիդ սրբոյ և մաքուր կրօնաստանիդ՝ որ յանուն սրբոյ Կարապետին և Մկրտչին Քրիստոսի Ցօհաննու։ Զի էհաստ առ մեզ գիրդ սիրածիր՝ պատասխանին գրոյն մերոյ առաջնոյ՝ ի ձեռն սիրելւոյն մերոյ՝ և քոյոյ միաբանի՝ Ցովհաննու կրօնաւորի. հանգերձ սիրանիշ ընծայիւքդ, այսինքն, ուրախարար գինեաւն, կերպասեղէն ձեռագործիւք և քուակօքն և չոր ձկամբքն։ Զորս մեծաւ սիրով ընկալեալ մեր՝ ընթերցաք զգիրդ, և բազմիւաստ բանիդ եղաք հասու. վայելեցաք զընծայագ սիրապարգև և գանձեցաք վերստին զընծայօդգ սոցին սրբասուն՝ ի սիրարան սրտի մերոյ՝ և ի հոգիս իսկ։ Ասն զի Ճշմարիտ սիրելին՝ գանձ կենգանի է. զի ըստ բանին Սիրաքայ՝ բարեկամի հաւատարմի ոչինչ է համեմատութիւն. և ոչ է արժանի կշիռ ոսկւոյ և արծաթոյ հանդէպ բարութեան հաւատոյ նորա։ Որպէս ահա զքեզ իսկ ունիմք մեզ սիրելի Ճշմարիտ և բարեկամ հաւատարիմ. հաստատեցեալ յառաջագոյն ի սէր Ճշմարիտ

ընդ մեզ, Որև արդ ևս զնոյնն արծարծե-
լով ի ձեռն սիրանիշ գրոյդ և պարգևացդ-
պնդազոյնս յօրինեցեր։ Որպէս և բերանով
իսկ առաքեցելոյն ի քէն անձինն խոհեմա-
փայլի՝ ծանեաք զմեծութիւն սիրոյդ ճշմար-
տի՝ որ առ մեզ և առ սուրբ Աթոռս մեր։
Զի պատմեաց մեզ զամենայն՝ հանդերձ որ-
պիսութեամբք ձեր՝ և մենաստանիդ ձերոյ
սրբոյ։ Զորս զամենեսեան գիտացեալ մեր՝
զուարճացաք հոգւով և փառս մատուցաք
Աստուծոյ, տեսանելով զպատուիրեալն առ
ի նմանէ՝ արգիւնացեալ ի ծառայդ իւր
Հաւատարիմ, զհոգեկեցոյցն բան՝ թէ սիրես-
ջիք զմիմեանս՝ որպէս և ես զձեզ սիրեցի,
Որոց սակս՝ և զսիրելութենէ քումմէ մեծա-
պէս շնորհակալեալ՝ հպցեցաք և հպցեմք
ի նոյնոյ առատաբուղխ ազբերէն ճշմարիտ
սիրոյ՝ պահել աննուազելի զդոյն անկեղծ
և անխարդախ սէր եղբայրութեան. առ ի
կատարումն պատուիրանի իւրոյ՝ և ի զուար-
ճութիւն մեզ։ Մանաւանդ յայղողել քեզ
յամենայն ժամանակի՝ ունիլ զճակատ հո-
գևոր մարտիդ դոյնպէս յարտագրեալ ընդ-
դէմ հոգեվնաս թշնամւոյն [1]. և զքէն զի-
նուորութեանդ հոգևորի սրեալ միշտ, առ
ի խոցել և ի նկուն առնել զորոգայթա-
դիրն աներեակի. և ի դիմի հարկանել
յարարիչն հսկմամբ և հաստատունով հա-
ւատով (ըստ պետրոսեանն բանի) առիւծա-
տիպ ոսոխին, որ գոչէ հանապազ ընդդէմ
հոգևոր զինուորելոց. առ ի կասեցուցանել
յընթացից Աստուածահաճոյից։ Զոր ի
յերկնաթոիչ աղօթից անձինդ սրբասիրի՝ և
սրբագումար խաչակրօնից աղաւներամից
որք ընդ ձեռամբ քով՝ յաղթեցեալս և ա-
մօթալիս միշտ կացուսցէ հանդերձ իւրով
անդնդային գնդաւ, առ ի սլանալ ձեզ մը-
տօք յերկինս, և վերաթևիլ միշտ առ ինքն՝
աղօթիւք։ Եւ հաճոյական մաղթանօք ձե-
րովք՝ ողորմեացի աշխարհի, տալով խաղա-
ղութիւն ամենայն խռովութեանց, և պայ-
ծառութիւն եկեղեցեաց սրբոց, և զբարե-
յաջողութիւնս հոգեկանս և մարմնականս
ամենայն հաւատացելոց իւրոց, պահելով և
զսուրբ մենաստանդ ձեր ի հոգևոր պայծա-
ռութեան յարաժամ, ի փառս անուան իւ-
րոյ։ Եւ արդ՝ զբաւ բանիցս առնելով, խընդ-
րեմ հաստատուն ունիլ առ սուրբ Աթոռս
մեր և առ մեզ զդոյն հոգևորդ սէր, ան-
պակաս առնելով և զգիրդ սիրանիշ։ Մա-
նաւանդ և աղօթել իսկ վասն մեր միաբան
ուխտիւգ սրբաղեցիւ, որք ի պէս պէս բեր-
մանց ժամանակիս առւայտիմք և մաշիմք ի
բաղմահոգ ցաւս. որոց ըստ մասնէ տեղե-
կացաւ սիրելիդ մեր Ծովհան պարկեշտա-
սուն վարդապետդ՝ և պատմելոց է՝ հանդ-
երձ այլ ամենայն որպիսութեամբք մերովք՝
և սրբոյ Աթոռոյս։ Այլ և ծանեաք ըզ-
գրեալդ վասն սիրելի եղբօրն մերոյ Ցեսուն
Մաքսիմէի սրբազնակատար կաթուղիկոսին,
զաարագրիլն ի բնիկ վիճակէն իւրմէ և յԱ-
թոռոյ, և գալն ի սուրբ Անապատդ ձեր։
Վասնորոյ՝ ահա գրեցաք առ նա զթուղթ
սիրոյ և մխիթարութեան՝ որպէս և դու
իմանալոց ես։ Ո՞ղջ լեր ի տէր։ Գրեցաւ ի
ՌՄԼ թուոջ մերում. ի Ցուլիսի Ի։



Թուղթ առ Պօղոսէ նուիրակ Մինասայ եւ Մահսարատար Պետրոս վարդապետսն, ի պատասխանի ի Յունիսի Հ., ի Յուլիսի Բ, եւ Ը. գրեալ Թղթոցն։ Որք գրէին զարտահանիլն Զաքարիա վարդապետին. եւ վարիլն ի Պրուսա՝ իբր յառաջնորդութիւն տեղւոյն, եւ արքունական հրամանաւն քերիլն անտի ի յառաջնորդութենէ տեղւոյն՝ Համադանցի Յովհաննէս վարդապետին, եւ կացուցանիլն ի Պօլիս պատրիարք՝ յետ աքսորման Զաքարիային։ Եւ զայլ եւս հարկաւոր եւ այլեւ այլ միտս, որոց զպատասխանիսն տես ի ներքոյ։

Ցորմէ սիրով բազմաւ և կարօտիւ, քրիստոսական ողջունիւ և հոգևոր օրհնութեամբ գիտացիք սիրելիք իմ և ցաւակիցք, և քրտնաջան որդիք սրբոյ Աթոռոյս՝ Մինաս և Պետրոս Աստուածիմաստ վարդապետք։ Զի Ցուլիսի Բ գրեալ թուղթն ձեր՝ ի նոյն ամսոյ ԻԷ էհաս առ մեզ։ Ապա և Բ թուղթք ձեր ևս ի Ցունիսի Ը և ի Ցուլիսի ևս Ը գրեցեալք՝ ի ԻԸ օրն Ցուլիսի



հասին առ մեզ ի միասին, Զորս ընթերցեալ մեր՝ հասու եղաք ամենից գրեցելոցն առ ի ձէնջ։ Իսկ ի յուլիսի Ե գրեցելումն գրէք թէ, Ե թուղթ եմք գրեալ յառաջ քան զայս։ Իսկ արդ՝ մին յերկուցն ահա այս է ի հարկէ՝ զոր ի յունիսի Ը էր գրեալ, իսկ մինն դեռ ևս առ մեզ ոչ էհաս։ Իսկ՝ զոր ինչ ի յերից առ մեզ հասեալ թղթոցս ձերոց ծանեաք ընդդէն պատասխանիսն լուսաւորեալ այժմ։ Արդ գիտացաք նախ զյղելն ձեր զթուղթս մեր ի սիւրաքանչիւր տեղիսն. այսինքն. ընդ Ասորաստէմին, ընդ Ասորայուն, ընդ Ամիւռնոյն և ընդ Պրուսայուն, և զայլս. որ և զպատասխանիս նոցին զեկեալս ի Ամիւռնոյ և ի Պրուսայու և յայլոց զորս յղեալ էիք առ մեզ՝ ընկալաք, եւ յառաջ քան զայսոսիկ որ զթուղթ մի գրեալ էիք առ միւրանն, յազագս հասանելոյն յայդր րազմակնիք թղթոյն սոցա, և յիշման անուանն մերոյ, մեք այնժամ զթուղթ իմն գրեցաք ձեզ երկար բանիւք ընդ այլեւս թղթոց, յազագս ձերոց ինչ յառաջագոյն առ մեզ գրեալ բանից. եւ յղեցաք առ ձեզ։ Զորս եւ վէքիլն մեր պարոն Հայրապետն ընդ ուրուն թաթարի յղեալ էր ի Կարնոյ դէպ յայդ կոյս։ Իսկ թաթարն ի ճանապարհի թալանեցեալ, թուղթքն մեր եւս անկեալ էին ի ձեռս գողոց. զորս եկեալ պատմեալ էր ի կարին մեր վէքիլին։ Եւ զի գոյին ի թուղթսն յայնս բանք հարկաւորք. վասնորոյ, հարկաւոր գիտացաք վերստին գրեցուցանել զայնս ըստ առաջնոյ օրինակին՝ եւ յղել առ ձեզ. զորս եւ ահա յղեցաք ընդ թղթոյս, որք են. թուղթ մի ի վերայ ձեր. թուղթ մի առ Գալուստ վարդապետն, եւ թուղթ մի առ Սառայ կին ոմն ըստ ձերդ ինգրոյ որպէս ահա տեսանելոց էք։ Իսկ եւ՝ ծանուցեալ էիք թէպէտ զպատարիրքափոխութիւնն տեղւոյդ. այլ զպարագայս ինչ եւ զորպիսութիւնս չէիք գրեալ, թէ էր վասն այդպէս եղեւ, եւ ո՞րով պատճառաւ։ Բայց զի նորոգ պատարիարք սիրելի եղբայրն մեր եւ շնորհընկալ եւ հարազատ որդին սրբոյ Աթոռոյս Յովհաննէս Ասաուածածնայն վարդապետն գրեալ էր մեզ ի Պրուսայու զթուղթ ի պատասխանի թղթոյն մերոյ առ ինքն գրեցելոյ, սիրալի եւ հոգեշահ բանիւք, սրատագիւր զմեզ առնելով, մեք ընդթուղթ սիրոյ գրեցաք առ նա, ծանուցանելով զհասանիլն թղթոյն՝ հանդերձ շնորհակալութեամբ, և ջնորհաւորութիւն եւս նորոգ պատարիարքութեանն, (զոր րարեպէս վայելել տացէ տէր)։ Զոր և ահա առ ձեզ յղեցաք. մատուսջիք ուրեմն ինքեան տալով զմինչ ողջոյն բազում, հանդերձ սիրախառն կարօտիւ, Իսկ փարմանքն մեր և մահսարն որք մինչև ցարդ ինչևիցէ պատճառօք յետացան. այժմ սակս այնոյիկ ոչինչ գրէք կատարեալ. զի իմացուք թէ՝ հոգացեալ լինին թէ ոչ, եթէ մինչև ցհասանիլն առ ձեզ թղթոյս՝ տակաւին չիցէք գրեալ ինչ մեզ զայգմանէ, գրեսջիք՝ զի գիտասցուք։ Քանզի մինչև ցայժմ որ ինչ եղև՝ եղև. բաւական էր այսչափ սրսրիլն մեր, և այսչափ բիւրապատիկ վնասուք վնասիլն սրոյ Աթոռոյս. որ ահա ի յետին թեղն է հասեալ։ Զի ոչ սակաւ ցաւք և վիշաք են՝ զորս մինչև ցարդ կրեաց և կրէ սուրբ աուռնս սյս. սկսեալ ի գալստենէ Վրաց Ընքային յերկիրս յայս՝ մինչև ցարդ։ Զի յոլովութիւնք ելիցն ի վեր քան զչափն են, յազագս չափազանց դառնութեան ժամանակիս՝ և աւերութեան՝ ազգաւորութեան և յամենայնի չքաւորութեան երկրիս՝ յորոց չէ հնար փախչիլ, իսկ ւրուաքն իսպառ հատեալ և նուազեալ, որ ահա Գ տարի է զի վերջացեալ է։ Եթէ ծով լինէր ոչ կարէր տակաւին տոկալ՝ մինչ ելքն չափազանց բազմացեալ իցէ՝ և մուտքն վերջացեալ, ո՞ր մնայ թէ այսպիսի տուն։ Վատաբախտ մեք գտանեցաք. որ այսպիսւոյ ժամանակի և ժամանակաւորաց պատահեցաք։ Ցտարի լրացաւ ահա և էանց, այսքան տարւ անկանիլն պատուոյ սրբոյ Աթոռոյս. և իբրու ի շարս մոյ հասարակ վանից հաստատելոյն, այսքան տարւոյն մերոյ, և այսքան յերկարաձգիլն այս բանիս, և ամենայն բերանոյ զսոյնս խօսիլն՝ զի՞արդ է տանելի, և ո՞ր սիրտ հանգուրժէ։ Իսկ արդ ահա զայսքան պնասակրութեանց սրբոյ Աթոռոյս և զմերոց կենսամաշութեանց՝ գրեցաք սիրելի եղբօրն մերոյ և սրտացաւ որգւոյն սրբոյ Աթոռոյս նորոգ Պատրիարքին, և սրբեալցն մերոց Մահտեսի Ցարութիւն Ամբային՝ և Մահտեսի Կարապետին և պարոն

Գէորգին և Աստուածապահին այժմ ևս։ Իսկ այլ ումեք չգրեցաք Թուղթ. և ոչ համարակին և ոչ իշխանաց, համարևլով թէ՝ մինչև ցարդ թերևս հոգացեալ իցեն զԹուղթսըն մեր՝ և յղեալ։ Նա խնդիր ևս գրեցաք առ պատրիարք եղբայրն մեր և առ այլ բարեպաշտ անձինսն զորս յիշեցաք, զի թէ դեռ ևս չիցեն հոգացեալ, հոգասցեն և յղեսցեն, բաւական համարելով զայս քան զնաւան սրբոյ Աթոռոյս՝ և զմաշուէն կենաց մերոց ցարգ։ Արգ ուրեմն, տուք զԹուղթսդր յիւրաքանչիւրսն, և եթէ գեռ այնպէս կայ բանն մեր ի վերայ երեսաց, դուք ևս խօսեցարուք ընդ պատրիարքին և ընդ իշխանացն որ ինչ և պատշաճն է՝ և հոգալ տուք, որովք վերադարձցի առ մեզ Պետրոս վարդապետ։ Իսկ եթէ այլ ևս չհոգասցեն և Թողուցուն դարձեալ ի վերայ երեսաց, ապա զվերջին դիտումն դոցա իմացեալ յինքեանց գրեսջիք մեզ զի գիտասցուք։ և մեք ևս բաւ ասասցուք պյսքանով ցաւակրութեանս մերոյ, և զնաւսւց սրբոյ տանս պսմիկ, արդարև խղճալւոյ։ Շուտով գրեսջիք ուրեմն զպատասխանի Թղթոյս զի գիտասցուք։ Այլև, Մահտեսի Ցարութիւն աղնիւ Ամիրային, սիրելւոյն մերոյ, գրեցաք զշնորհակալութիւն և զսիփսիանս և այլ որ ինչ և պարտ էր։ Գրեցաք և զյանձնարարութիւնս սակս Գալուստ վարդապետին՝ ա մենիցն ևս որպէս պարտ էր։ Սիրելւոյն մերոյ ծերունազարգ Պետրոս վարդապետին ևս վասն նորա զշնորհակալութիւնս և զյանձնարարութիւնս գրեցաք։ Գուք ևս զոր ինչ պարտն է վասն նորա խօսիլ՝ խօսեսջիք, և օժանդակեսջիք յամենայնի՝ առ ի բարւոքապէս յառաջացուցանել զգործն. բաւական էր նորին ևս յայսքան ժամանակս տրորիլս։ Վասն Գազատիոյ նուիրակին ևս ահա գրեցաք պատրիարքին, և Մահտեսի Ցարութիւն Ամիրային, միամիտ առնել և ի սուրբ Աթոռս յղել. և իւրեանն ևս գրեցաք միամտութեամբ գալ ի սուրբ Աթոռս։ Գուք ևս յորդորելով և միամիտ առնելով, յօժարեցուսջիք դառնալ ասա։ Իսկ եթէ ոչ եկեսցէ, ահա գրեցաք դարձեալ պատրիարքին և մահտեսի Ցարութիւն Ամիրային զի ընդ ձեզ է միասին տեսցեն զՀաշիւն, և առնուցուն զարդիւնսն սրբոյ Աթոռոյս որ

ինչ պատճառ է առ ինքն. և ձեզ յանձնեցան Թէ գրամ, Թէ յիշատակի որոց զդաւթարն ինքն յղեալ է աստ և գոյ առ մեզ և Թէ այլ ինչ։ Գուք ևս հետևելով այսպէս առնել տաջիք և մեզ գրեսջիք։ Ուստի մեզս նուիրակ Մեսրօպ վարդապետի որպէսն ևս ծանեաք. և զպատասխանի Թղթոյն ահա գրեալ առ քեզ յղեցաք, յիշեսջիք առ ինքն։ Զգանկակսն, և զԱ. բեռն խունկն յղելն ձեր ի Ցրապիզսն, գիտացաք, և բարւոք էք արարեալ, որք գեռ ևս չհասին մեզ, երբ հասցին, գրելոց եմք զԹուղթս օրհնութեան և շնորհակալութեան առ աուղսն որպէս և գրեցաք։ Այլ և պարոն Խաչիկն ևս էր գրեալ մեզ Թէ ի Հաշտարխան եմ երթալոց, որպէս և գուք գրեալ էիք, վասն այնորիկ ոչ գրեցաք առ ինքն զԹուղթ՝ կարծելով Թէ գնացեալ իցէ, եթէ յայդր լինիցի՝ սիրով և օրհնութեամբ բաղմաւ ընդմէնջ ողջոյն տուեալ՝ ծանուսջիք այսպէս, որպէս և գրեցաք։ Այլև՝ ահա Ներսէս վարդապետ սիրելւոյն մերոյ գրեցաք, և միամտեցուցաք գալ ի սուրբ Աթոռս։ Գուք ևս միամիտ արասջիք ըստ ամենայնի, զի եկեսցէ անյապաղ. և մի ևս ձեզ ի վտարանդութեան, զի շահիլոց է աստ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Զի որովհետև ի ներքոյ մեզադրանաց հոգելոյս ծնողին մերոյ է գա, և որ իւրեան ևս է շնորհատու ծնօղ, և ինքն մեզ եղբայր, վասն սրնորոյ խղճալով և ցաւելով իսկ վասն դորա՝ զի այգու անուամբ մի ևս ասցէ աստ և անդ տարագիր. գրեցի իւրեան և յորդորեցի ելանել և գալ համբուրել զգեղեցկութեան շնորհատու ծնողին իւրոյ, գտանել զԹողութիւն, և զերծանիլ ի մեղագրութեանց։ Գիտեմ զի ինքն ևս է խղճմտանաւոր, և խղճահարի այսու։ Ուրեմն, ասասջիք և դուք զայսոսիկ՝ զի ան֊յապաղ եկեսցէ նախ առ ի զերծանիլ ի մեղադրութեանցըն, և երկրորդ չքնաւ տարագիր, այլ ասա ի ծոց լուսատու ծնողիս իւրոյ հանգչիլ, և շահիլ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝ որպէս ասացաք։ Այլև, ահա առ տեզւոյդ աւագ քահանայսն, և առ օրհնեալ իշխանապետսն և իշխանսն ևս զԹուղթս մի գրեցաք հասարակապէս, վասն ամենայն ցաւոց մերոց վերոյ ասացելոց, որոց մեծ և գլխաւորն այն

իսկ, զի ՀՐովարտական մեր պղքան յետաքուցին որոյ սակս ամենայն բանք և գործք սրբոյ Աթոռոյս Ծայրն ի վերայ երեսաց, և եհաս սուրբ տունս ի յետին աղքատութիւն։ Ազա խնդրեցաք, զի թէ գեռ ևս չէիցեն հոգացեալ ՀՐովարտականն մեր, հոգասցեն, խնայելով ի սուրբ Աթոռս և ի մեզ։ Եւ ընդ Պետրոս վարդապետիդ յղեսցեն, զի և մեք հոգ տարցուք անհուն ցուց և պակասութեանց սրբոյ Տանս։ Իսկ եթէ չկամիցին խնայել ի մեզ՝ և ի հաւատոյ մայրս իւրեանց, և այլ ևս չհոգասցեն ՀՐովարտական, և չունիցին զմիաս հոգալոյ՝ ապա ծանուսցեն մեզ պարզաբար, զի և մեք գիասացուք, և լացցուք զլալի գլուխս մեր և զանբախտութիւնս։ Ուրեմն ժողովեալ զնոսա զամենեսեան ի մի վայր՝ ընթեռնուլ առջիք զԹուղթդ մեր՝ և դուք ևս բերանով ղայդ ամենայն գրեալդ մեր ծանուսջիք ամենեցուն՝ հանդերձ պարագայիւք իւրեանց չգրեցելովք՝ զորս գիտէք իսկ։ Որպէս և գրեցաք ի Թղթի անդ՝ զերկարապէսն ի ձէնջ իմանալ։ Եւ տեսջիք թէ ի՞նչ ասեն վերջապէս, հոգալոց են, թէ ոչ, և մեզ ծանուսջիք շուտով, մանաւանդ՝ յինքեանց ևս ղպատասխանի Թղթոյն մերոյ ինգրեալ. առ մեզ յղեսջիք։ Ողջ լերուք ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԼ, յօգոստոսի Դ։

Փուսուլայ առանձին առ Մինաս եւ Պետրոս վարդապետսն ի Պօլիս։

Թուղթ առ մեծին Պօլսոյ պատրիարքը Զաքարիա վարդապետն զկնի օծման նորոգ սրբազան վեհին մերոյ Ղուկաս կաթուղիկոսին ընդ միաբանից եւ երկրացւոց մահսարացն։

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Ղուկաս՝ որոյ շնորհիւն կաթուղիկոս ամենայն Հայոց, և ծայրագոյն պատրիարք Առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, նաև մեծի և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Ցորմէ ճշմարիտ սիրով եղբայրականաւ, անահտ մտօք, կարօտիւ բազմաւ և սրտաբեկ ըղձիւ մասուսցի ողջոյնն Ցիսուսաւանդ հարազատի և վաղեմնականի եղբօրդ իմոյ գերարգելւոյ և սուրգ ցաւակցի, Տեառնդ Զաքարիայ Աստուածաբան վարդապետիդ և Արհիապանծ Եպիսկոպոսիդ, և արժանավայել պատրիարքիդ Աստուածականամ՝ մայրաքաղաքիդ մեծի Կոստանդնուպօլսոյ, և հարազատ որդւոյդ և օգտասիրիդ Աստուածաբեղ գահիս սրբոյ։ Իսկ յետ սիրալիրականի ողջունատուրութեանն, ծանիցէ գերապատիւ եղբայրութիւն քո։ Զի գիտես իսկ ահա, որ ի յերկար ժամանակս ձեալով ի գործս նուիրակութեան և առաջնորդութեանն Զմիւռնոյ և զերիս գործս կատարելով, մաշեցի զկեանս իմ ի պանդխտութեանն յայնմիկ, և ցանկայի գալ ի սուրբ Աթոռ լուսատու մայրս մեր՝ և հանգչիլ ի յոգնավիշտ աշխատութեանցս։ Ուստի՝ գրեի քանիցս սրբազան ծնողին մերոյ՝ զնոր Ա. ռաքնորդ և նուիրակ յղել՝ և զիս բերել աստ։ Որ և թէպէտ յապաղեաց յամս քանիս ի կատարել զաենչմունս իմ, սակայն վերջապէս կատարեաց, և ես շնորհակալութեամբ և ուրախութեամբ դիմեցի յայսկոյս, որ և յայդր իսկ հանդիպեցայ ի տեսանել զՇքըմարիա սիրակիցդ իմ, առ ի յարծարծումն բնականի սիրոյն մերոյ։ Եւ ապա եկի ի գահս սուրբ. և յուսայի ըստ բազձանացս գտանել ինձ զհանգիստ և զապահովութիւն։ Սակայն ներհակն պատահեաց դիտմանս. զի յօրէ յայնմանէ յորում ի սուրբ Աթոռս մտի մինչև ցարդ՝ յերկրէս մերմէ ոչ պակասեցան նորանոր վիշաք և ցաւք. որովք գրեթէ ցաւակոծ և կենամաշ եղեալ սրբազան Հայրապետին մերոյ, հինգ օր ի վերայ միմեանց չկարաց առողջութեամբ անցուցանել զկեանս իւր. այլ միշտ ի հիւանդութեան և ի հոգսալի վարանման եկաց, ցաւելով վասն անյաջողութեանց սրբոյ Աթոռոյս՝ և խղճուկ ժողովրդոցն։ Ուստի մեք ևս ընդ նմա ի ցաւս և ի հոգս զմեզ մաշելով ըստ մերում չափու, չկարացաք գտանել մեզ ղապահով կեանս, մանաւանդ, և ոչ ղհարկաւորաց ինչ սրբոյ տանս, ընդ միմեանս խօսիլ։ Եւ այսպէս հոգսալի և ցաւալի կենօք անցուցեալ զաւուրս, անկայ ի մէջ այլ ևս նորագունի և մեծագունի ցաւոյ ի մաշուիլն կենացս, զոր ոչ այլ ինչ բայց թէ պատիժ մեղաց իմոց կարծեմ՝ Աստուա-

ծոյ. զի ոչ կամեցաւ Աստուած Թողուլ զիս յապահովութեան. այլ ի չարչարանս և ի վիշաս ՛ձգել, զի ծանեայց զչափ անօրէնութեան իմոյ, զանձի ի հաւանիլն մեր յօր շաբաթու նաւակատեաց Վարգավառին, յորում միջոցի փոքր մի թեթևացեալ տեսանելով մեր զսրբազան Ցէրն մեր ակն ունէաք առողջութեան, յանկարծ ի յուրբաթ երեկոյին՝ առանց մտածելոյ և ասելոյ ուրուք ինքեան, պատուիրեաց զպատրաստուիլն տեսանել վանս իւր՝ զի ի շաբաթուն հազորգեսցի ի կենարար խորհրդոյն, որ և հազորգեցաւ իսկ ջերմեռանդ խոստովանութեամբ և յորգահոս արտասուօք: Եւ ի նոյն օրն և ի գիշերին՝ մինչև ցչորրորդ ժամն աւուր Վարդավառին, այնպէս ուրախագէմ և ղուարթագին հանգստութեամբ անցոյց, զի յամենայն կարծիս հաստատեցաւ թէ՝ առողջացաւ: Եւ գործակալաց և ամենայն մերձակայ եղելոցն զպատուէրս ասյր վանն օգտից սրբոյ տանս՝ կատակօրէն, թէպէտ չերևեցուցանէր ինչ զնշան մահու: Ապա ի չորրորդ ժամուն, փոքր մի զթալկութիւնս ցուցեալ և զմարուքն սրտի, իբրու Գ կամ Ը րոպէաչափ միջոցում, աւանգեաց զհոգին իւր առ Աստուած, զարմանալի հեշտութեամբ և զգաստութեամբ, իբրու թէ ի քուն ոք մտցէ, Թողեալ մեզ ի սաստկագոյն կսկիծս, և ըզսուրբ Աթոռս յանտիրութեան, ի գառն և յերերալի ժամանակիս: Որև թաղեցաւ յաւուրն Ե շաբաթի ի սուրբ վանն Գայիանէի, հուպ դամբարանի Ցեառն Աբրահամու Հոգելոյս Հայրապետին մշեցւոյ, ըստ կտակի և բաղձանաց իւրոց: Որոյ զհոգին Ցէր լուսաւորեսցէ և ընդ սրբոց Հայրապետացն գասակցեալ և պսակեալ՝ հանգուսցէ ի լոյս երեսաց իւրոց: Եւ զգլուխ յարգելի սիրոյդ ո՞ղջ պահեսցէ. և սուրբ Հոգւովն մխիթարեսցէ զսիրտ քո: Ապա յետ այսպիսի երջանկութեամբ փոխելոյ առ Քրիստոս լուսահոգի Հայրապետին մերոյ. կուտեցան ի վերայ իմ բազմութիւնք միաբանից Աստուածածէջ գահիս սրբոյ՝ և համայն իշխանք և ժողովուրդք երկրիս. և սկսան բռնադատել և հարկել զըստ ամենայնի տկարս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. յանձն առնուլ զտաժանելի ծանրութիւն լծոյս այսորիկ: Եւ թէպէտ կշռելով զչափ տկարութեան և անարժանութեան իմոյ՝ սկսայ հրաժարիլ և չառնուլ յանձն, բազմիցս աղաչելով և աղերսելով թողուլ ի կամս իմ, և ի բաց լինիլ յինէն. սակայն չեզև նոցա լսելի. զի ոչ կարեմք ասէին զտունս զայս յանտիրութեան թողուլ ի գառն ժամանակիս, յորում յամենայն ուսաեքէ չանան ի կեղեքել և յաւերել զսա և եւ զայս ասացելոցս նոցա զյոյժ համառօտն՝ թէպէտ անորոշապէս հասարակ թզթոջ քաղաքիդ զոր տեսանելոց ես. սակայն՝ զփոքր մի երկրապէսն որոշաբար աստէն իմաւ: Զի որպէս և գրեալ է յառաջ լուսահոգին յայդր, յետ անցանելոյ մեծագոյն մրրկին որ ի զօրացն Վրաց. բոլոր երկրականքս սկսան զամենայն պէս իւրեանց աստի լցուցանել՝ թէ կամայ՝ և թէ ակամայ. բայց ի կենդանութեան լուսահոգւոյն՝ փոքր մի ապահովեալ զպատիւն և երկնչելով ևս՝ ոչ յոյժ համարձակէինն: Իսկ ի վախճանիլ լուսահոգւոյն՝ առանց խորութեան և համարձակօրէն սկսան զմեզ գիշատել, չածելով ինչ ակն յումեքէ, և չլսելով աղերսանաց. զի իշխողին չէնազանգին գայլքն մարդախոշոյք: Քանզի գեռ ոչ գոյ հաշտութիւն, և երկիրս ըստ մեծի մասին կայ ի նոյն աւերութեանն և ամենայն չարագլուխք երկրիս իրրու ապստամբք են յիշխողէնս: Վանորոյ՝ զմեզ իրրու յորովայնս համարելով՝ անխնայապէս յառնէին ի վերայ մեր: Քանզի գեռ չէ ևս վախճանեալ լուսահոգւոյն, զսուտ համբաւ իմն տարածեալ արտաքոյ՝ թէ խալիֆայն վախճանեցաւ, իսկոյն մուզանկու կոչեցեալքն ի Ճօշական գիւղն գիմեալք սուսերօք և բրօք՝ զգիւղականսն հալածական արարին անտի, և զգլխաւորսն նոցա մինչև ցմահ վերաւորեցին, որ հազիւ ապրեցաւ: Ապա և զգիւղն գաւթեալ, զարտորայս և զամենայն վաստակս նոցա իւրացուցին և ժողովեցին: Նոյնպէս և զայգիսն մեր ևս իբրու գաւթեալ", զզահապանսն վարեցին աստ: Եւ այժմ գիւղն այն բոլորովիմբ է ի ձեռս նոցա. և գիւղականքն քաղցեալ և մերկ. աստ առ մեզ կանն: Իսկ մինչ հաւաստի իմացան զմահ լուսահոգւոյն, յայնժամ՝ նոքա՝ և այլք ևս, սկսան և ի մեզ և յայս գեօղս ևս ձեռնարկել, զայգիս և զանգս մեր կողոպտելով զանգեայս և

զոչխարս և զայլ իրս՝ բռնութեամբ յափըշտակելով, և զայլ ըստ սոցին չարիս գործելով։ Եւ բաց յայսպիսեացդ, յաւուր վախճանման լուսահոգւոյն մինչ ըստ սովորութեան՝ աղգուհի արարաք տիրողին, զոհի ի յատաջակայից իւրոց. ընդ այլ ևս քահանայ իւրոց պաշտնատարաց յղեալ էր աստ իրու ի պահպանութիւն. որք եկեալ զպահպանութենէ չարարեալ ինչ փոյթ՝ զբանալիս արտաքին գրանցն ժողովեցին առ ինքեանս՝ ձեալ ընդ իշխանութեամբ իւրեանց, չասելով զպատճառն, և զրաբանելով ևս զմեզ՝ թէ ձեռն էք արկեալ ի հիւսիսայինն. և այլ սոյնպիսեօք ահաբեկելով զԱթոռայինսս Մանաւանդ և զայս իսկ զգայէին շատք, որ ի ծածուկ՝ և որ յայտնի. իբր թէ եթէ չլինիցի հաշտութիւն, և միւսանգամ ևս այսր գիմելոյ լիցի հիւսիսականն, [9]) գատարկեացեն զսուրբ տունս և զշինութիւնն հատցեն իսպառ և թօղցեն յամայութեան, զի մի նա եկեալ գտցէ ի շինութեան։ Զոր և յանցեալ ամին իսկ կամէին առնել, թէպէտ լուսահոգին բազմաւ իմաստութեամբ և ջանիւք խափանեաց։ Բաց յայսցանէ՝ և այլ ևս դրունք մեծամեծ և տնաքակ վնասուց սկսանէին բանիլ. զորս գրել ո՞չ կարեմք։ Որոց սակս մեծագոյնս ստիպէին զնուաստութիւնս մեր առնուլ յանձն զդժուարակրելի ծանրութիւն այս լծոյ։ Որք և ունէին զպատճառ մի ևս այսքանեաց ստիպմանց իւրեանց զայս։ Զի տեսանելով լուսահոգւոյն զինքն ի վախճան մերձեալ, և զաւերութիւնն երկրիս՝ և ևս յաւելեալ՝ կեզե էքն և վնասիչքն բազմացեալք աներկիւղք գոլով սիշխողէն և անհնազանդքն նմին. վասնորոյ՝ ի ժամ հաղորդութեանն կտակեալ էր՝ ի ձեռն խոստովանահօրն՝ կացուցանել զմեզ ի յայս կարգ։ Ցայտնելով ևս թէ՝ այս երիս ամս մինչ տեսի զերկիրս մերձ յաւերումն, և զիս յաղթեցեալ ի ցաւոց, արգելեալ զդա յարտաքին գործոց պահեցի աստ առիս այսու գիտմամբ, զի մի յետ վախճանի իմոյ յանուիրութեան մնասցէ տունս սուրբ յերկար ժամանակս, և զաւերութիւնն կրեսցէ։ Զի ոչ է այս այն ժամանակ՝ յորում թէպէտ և անտէր ևս մնայր, այլ տակաւին մնայր ի շինութեան՝ մինչև նոր գահակալն յաջորդէր։ Արդ կացուցէք զդա վազվազակի ի գործ հոգաբարձութեան տանս սրբոյ՝ զի կեղեքիչքն մի երբէք տեսցեն զսա յանտիրութեան։ Առ զայն կտակօրէն ասացեալքս լուսահոգւոյն մինչ լուան բազմութիւնք միաբանից և ժողովրդոցն, և ծանեան զդիտմունն նախահոգ, և զասացեալսդ զիւրումն առեալ տեսին զնշանսն զոր ասացաք ի վերոյ, և իմացան զի ոչ է հնար թարց աւերիչ վնասուց սակ տանս սրբոյ՝ առանց ուրուք այցելուի, ապա՝ խստագոյնս բռնադատեցին զմեզ յանձն առնուլ զայս պաշտօն, գնելով առաջի մեր զամենայն վերոյ յիշեցեալ վնասն, թէ պատճառ ես լինեալոց վնասուց և աւերմանց տանս սրբոյ՝ եթէ ոչ առնուցուս յանձն։ Զի թէ լուսահոգին կենդանի էլինէր, մեք ոչ էաք կարօղ զսուսս զայս յանհնարութեան թողուլ այս վտանգաւոր ներկայիս. ո՞վ ծնայ թէ նա զայսոսիկ տեսանելով և նախանձայոյս լինելով, յիւր պարտականութենէն զերծաւ, և այսպէս կատակեաց. և դու ասա դատանեցար. եթէ ոչ արասցուք զայս զոր օգուտ ընտրեցաք, մեծագոյնս մեղանչեմք առ տուած, և պատճառ լինիմք սրբոյ տանս աւերման։ Նոյնպէս և դու՝ եթէ ոչ առնուցուս յանձն։ Եւ իմ տեսեալ զայս ամենան, և նկատեալ զասացեալսն ի սոցունց, զի յիրաւի՝ պատճառ լինէաք վնասուց սրբոյ տանս՝ այսպէս ի բաց հրաժարիլով, ապա ոչ կարացի առանց Աստուծոյ իմանալ զայս. և երկեայ ևս՝ թէ գուցէ զընդդէմ առնիցեմ նորին օրհնեալ կամացն։ Վասն որոյ՝ թողի զիս ի կամս ստիպողացն յիշեցելոց. այսինքն, բազմախումբ ժողովոյ միաբանից սրբոյ Աթոռոյս և ժողովրդոց։ Որք և կոչեցին ի վերայ մեր զայս անուն. ապա և օծին իսկ զանարժանութիւնս մեր ի Հայրապետութիւն ի յատաջիկայ երկրորդ կիւրակէին։ Ջանզի հաւաստիապէս գոյր այս երկիւղ յի թէ մինչև ցհնգետասանն օգոստոսի չլինիցեր հաշտութիւն, առանց կարծեաց դիմելոց էր սյսր հիւսիսականն. և սոցա զսուրբ տունս անտէր տեսանելով՝ դատարկելոց էին, որպէս ասացաք ի վերնն։ Վասն այսորիկ փութացեալ այսքան ճեպով զմեզ ստիպեցին և եդին ի ներքոյ այսր անասնելի բեռին։ Այժմ դիտեա յարգելի եղ-

բայր իմ՝ սիրակից ի քնէ՝ և ցաւակից իսկ։ Զի որպէս ի վերոյ ևս գրեցի, այսմ պատուոյ ես ամենևին ոչ վարկանէի զիս պատկան, ինձէն իսկ կշռելով զտկարութիւնս իմ. այլ զսիրակիցդ իմ մանաւանդ պատշաճագոյն համարելով այսմ, (որ արդարև ես իսկ,) րոլորով սրտիւ կամէի։ Բայց մինչ տեսի զայսքան մրրիկս յարուցեալ ի վերայ սրբոյ Աթոռոյս և զայսչափ բազմութիւն ի վերայ իմ կուտեալ, և զմիաբերան ստիպելն զիս յոյժ, և զայն ևս, զի եթէ չլսէի սոցա, անկարծիք լինելոց էին անագաքակ ինասք սրբոյ Աթոռոյս, վասնորոյ, յակամայ կամս յանձն առի զի մի ևս լինիցիմ պատճառ սրբոյ տանս ինասուցն և քակմանն։ Ցուսալով՝ զի նախ Աստուածածնի օժանդակ իմոյ միայնութեան անկարութեան և խզճութեան, (որ զայս այսպէս կամեցաւ և արարն) եւ ապա դու քաղցրագութ և սիրաշատ սէրգ իմ յարգելիւ։ Առանց որոց՝ անհնար է ինձ յիրաւի կարօղանալ և տանիլ այսր ծանրութեան ի յոգնավիշտ ժամանակիս, յորում ոչ ուրուք երես ժպտի։ Արդ՝ թէ և դու յԱստուծոյ համարիցիս զայս, քեզ հաճելի լիցի, որպէս և աստ եզելոցս, և ապա՝ յատուկ ցաւակցութեամբ, ճշմարիտ և անխարդախ սիրով, և յուսագրական և յորդորական գրով մխիթարեա զանմխիթարութիւնս իմ. և օժանգակեա յամենայնի, և զբան սրբոյդան Առաքելոյն կատարելով՝ թէ լալի եմ այսու, լաց զիս. և թէ ինդութիւն համարիցիս ինձ, գու ևս խնգա, ըստ օրինի ճշմարիտ սիրակցաց։ Եւ եթէ փառաւորութիւն ինձ, քո իսկ համարեա. զի ես չդնեմ ինչ օտարութիւն ի մէջ իմ և քո. այլ որ ինչ իմ է՝ քո է, և որ ինչ քո է, իմ է։ Ապա թէ առանց Աստուծոյ կարծեալ զայս, անհաճոյ ևս թուիցի քեզ, յայնժամ որպէս և կամիցիս և առնիցիս, ինձ ընդունելի է։ Զի թէ դու յօժարիցիս ի գալ, կամ թէ զայլ ոք կարօղագոյն քան զիս յղել կամիցիս աստ, ես պատրաստ եմ ընդ առաջ ելանել հնազանդութեամբ, և շնորհաւոր եղիցի ասել։ Ինձ պյսքան և եթ գոյր պարտականութիւն, որ չթողուի զսուրբ տունս ի բերանս գայլոց. և ըստ իմում տկար կարեաց՝ ի ժնասուց պահէի ժամանակ ինչ. զի մի ես եզէց ժնասուց և աւերմանց պատճառ՝ որպէս քանիցս գրեցի ի վերոյ։ Իսկ եթէ ձեզ չիցէ հաճոյ՝ որպէս կամիք հոգացէք զհաւատոյ մայրս ձեր սուրբ աթոռս եւ մեք ազատ լիցուք՝ հանդերձ շնորհակալութեամբ։ Ահա զամենայն ինչ ճշմարտութեամբ եւ անկեղծօրէն գրեցի քնականի սիրակցիդ իմոյ հարազատի՝ եւ ստոյգ ցաւակցի. որոց զորպէս կամիլդ՝ եւ որպիսարար հոգալդ զիս, ի կամս սիրոյդ թողում ապաստան։ Եւ զայլ երկարապէսն գրեցելոցս՝ եւ զբազմապէսն ոչ գրեցելոց, ի ... վարդապետէդ իմանալոց ես, որ ահա բազմակնիք թղթով միաբանիցն եւ երկրացւոց՝ եւ օրհնութեան թղթովք մերովք՝ առաքեցաւ յայդր։ Զոր եւ ի սէր սիրելութեանդ յանձնեմ յամենայնի, ընդ նմին և զսուրբ Աթոռս և զմեզ և զնուիրակդ մեր Մինաս Աստուածաբան վարդապետդ, և զնուիրակն արտաքին վիճակաց զԳալուստ հանճարաշատ վարդապետն հանդերձ գործովքն իւրեանց. և զքեզ յԱստուածծ։ Իսկ և զայս վերջապէս գրեմ սիրոյդ ցանկալեաց։ Զի սուտ ինչ պատութեանն՝ որ ի մէջ լուսահոգւոյն և քո էանց, և երթևեկութեան թղթոցն, թէպէտ և ես տեղեակ եմ մասամբ ինչ. բայց թէ զի՞նչ իցեն գրեալք նորին առ քեզ և քոյդ առ նա՝ դեռ ևս չտեղեկացայ։ Զի որքան անկեալ եմք ընդ այսու լծով, դեռ ևս չեմք տեսեալ կամ ընթերցեալ զթուղթ ինչ ամենևին. զի և ոչ ամենից մեզ հարկաւոր գիտելեաց հետևիլ կարացաք տակաւին։ Սակայն ի յարգելի եղբօրէդ զայս խնդրեմ. զոր և սիրով մեծաւ ժտեմ իսկ. զի որովհետև վախճանեցաւ լուսահոգին. դու ևս մոռասցիս զամենայն անցեալսն. և ըզսիրտդ կատարելապէս առ սուրբ Աթոռս ուղղեսցես ըստ բնականի հարազատ որդիութեանդ և սիրոյդ՝ որ առ սա. և յայսըմհետէ զոր ինչ օգուտն է սորին. զայնս խորհեսցիս ցաւակցաբար և արասցես, որ է հաճելի Աստուծոյ՝ և ուրախութիւն ամենից տեսողաց և լսողաց։ Բաւ է խոհեմութեան սիրոյդ իմոյ։ ՈՂՋ ԼԵՐ Ի ՏԵՐ։ Ի ՌՄԻԹ.։

Թուղթ առ իշխանան մեծին Պոլսոյ, ըստ մտաց դոյն վերոյգրեցեալ թղթոյդ պատրիարքին։

Թուղթ առ մեծին Պոլսոյ առաքեալ Մինաս վարդապետն, վասն վախճանման լուսահոգի Սիմէօն կաթուղիկոսին, եւ վասն ընտրութեան եւ օծման սրբազան Ղուկաս նորոգ կաթուղիկոսին, նախքան զերթալն մեծի մահսարին, որպէս զի՝ իմացին շուտով զիսկն եղելութեան, եւ մի զայլեւայլս լսելով ի տարակուսանս անկցին։

Ի Լուսակառոյց և ի Տիրակերտ մեծի Աթոռոյս Էջմիածնի, և յորոյ սպասաւուր և պաշտօնեայ միաբան եղբարց և ի գործակալաց հոգևորական սիրով, Քրիստոսական սուրբ ողջունիւ, ճշմարիտ կարօտիւ և եղբայրականաւ ըզձիւ, ծանուցումն լիցի յարգելոյ և սիրելոյ եղբօրդ մերոյ՝ Տարազատ և բազմաշխատ որգւոյդ սրբոյ Աթոռոյս և ծայրագոյն նուիրակիդ Ստեփանոսի մեծի մայրաքաղաքիդ Տեառնդ Պետրոսի Ստամբուլոյ և գիտնական վարդապետիդ և Արհիապատիւ Եպիսկոպոսիդ։ Զի լուեալ է քո բազմից, որ Սրբազան Հովուապետն մեր և Տէրն հասարակաց ի յանցելոյ ամէն սկսեալ մինչև ցարդ ի մէջ երկարագոյն տակուրութեան էր։ Իսկ ի հասանիլն մեր ի Իմաթ թիւս մեր՝ և ի յուլիսի ԻԶ. յօր Վարդավառ կիւրակէին, ի չորրորդ ժամու ցերեկեանն ըարի մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս, զարմանալեաւ հեշտութեամբ և մեծաւ զգաստութեամբ. հաղորդեցեալ գոյով յաւուրն շաբաթու յոգնահեծ հառաչմամբ և ջերմեռանգութեամբ՝ և յորդ արտասուօք Որոյ զհոգին աէր լուսաւորեսցէ, և գլուխ սիրելութեան քոյ լիցի ողջ։ Արդ՝ յետ այսպիսի բարւոք վախճանաւ վերաչուելոյ լուսահոգւոյն առ Քրիստոս կալաւ զմեզ սուգ անմխիթար, քանզի խռովութիւն և աւերութիւն երկրիս դեռ ևս կայ ի նոյնութեան՝ որպէս գրեալ է յառաջ լուսահոգին, և իմացեալ էք։ Զի թէպէտ վասն հազագուշթեան ջանան բազումք սկսեալ ի մարտի ամսոյն մինչև ցարդ, այլ գեռ ոչ եկն ի գլուխ. զի երբեմն ճշմարտեն. և երբեմն ստեն. որ թէ մինչև ցծնե ըն սոյն օգոստոս ամսոյս այլ ևս ի գլուխ ոչ եկեսցէ հաշտութիւնն, առանց կարծեաց գիմզոց է այսըր հիւսիսականն. զոր բազումք վճռելով իսկ ասեն։ Ուստի՝ ապաստամբքն երկրիս որք հաստատեալք յիշխողէն ի միւս կողմն են անցեալ, անդադար աւերեն և քակեն զսահակաւ միացորդս երկրիս՝ ընդ սլլևս սրիկայից միւսոյ կողմանն։ Եւ ասէն իսկ գողք և ստամբակքն երկրիս որք և իշխողին իսկ ոչ լսեն, զմեծամեծ ինասս և աւերս գործեն՝ ուր և հասանին։ Որք ի կենդանութեան լուսահոգւոյն՝ թէպէտ ճնշէին զսուրբ Աթոռս, պահանջելով՝ և բռնութեամբ իսկ յափշտակելով, սակայն՝ այնքան ոչ զօրէին յահէ լուսահոգւոյն, և ի բացեայ ևս շրջէին. զի զգաղութս ի նոցանէ կալնուլ և գանել տայր ստակապէս՝ որով ահաբեկ լինէին շատքն։ Իսկ զկնի վախճանին, սկսան անարգելօրէն յառնել ի վերայ մեր համարձակապէս և անհնայ գիշատել. ոչ էր ոք որ ընդդիմասցի. զի իբրև զանաէր և զանօգնականս զմեզ գտեալ, կամէին զամենայն ախորժակս կամաց իւրեանց առնել։ Եւ մեր տեսանելով զայս. և ի վերոյ ասացեալ առաջիկայ վտանգէն ևս երկնչելով, զի թէ այն ևս լինիցէր, առանց կարծեաց գատարկելոց էին սոքա զսուրբ Աթոռս՝ և ընդ նշանն շինութեան իսպառ կարելոց որպէս և յայտնի սպառնային շատքն. որպէս զի՝ մի միացեք եկողին ի վերայ։ Ապա սկսաք ժողովիլ ի մի վայր, ընդ միացորդ քահանայից, մելիքաց, իշխանաց և ժողովրդոց երկրիս, և զկորհուրդ օգաւուր առնուլ ի մէջ, որպէս զի փութով կացուցցուք զոր Տէր ասնս սրբոյ՝ զի հոգացող լիցի սմա. և աւերիչքն մի յանախրութեան զսա տեսեալ՝ աւերեսցեն։ Եւ զի լուսահոգին ևս մինչ մերձեցաւ ի վախճանիլ՝ և իմացաւ զվախճանն, սկսաւ ցաւել մեծապէս վասն տանս սրբոյ՝ տեսանելով զառաջիկայ աւիրեան աւերմանն։ Վասնորոյ իւրաքանչիւր ումեք որոց պարան էր. պատուիրեաց զրանս օգաւուրս, որ և ի ձեռն խոստովանաւորն մեզ ևս կատակեալ էր, զի զհոգեբնաիր և զսրբաս-

նեալ հայրն մեր հոգևոր ղեկր Ղուկաս Արքեպիսկոպոսն փութապէս կացուսցուք յաջորդ ինքեան յԱստիճան հայրապետութեան, զի ըզսուրբ Աթոռս կատարեսցէ, զի միաբանակոխ եաւերը լիցի ի թշնամեաց։ Որպէս զմիասն իսկ յայտնեալ էր, թէ այսու մասք պահեցի զդաւաւտ, և ի գործ ինչ ոչ յղեցի, զի յետ իմոյ վախճանի մի անտեր ձեսցէ Աթոռս սուրբ ի յանկայուն երկրորդս, և ի չարաշատ ժամանակիս։ Ուստի՝ ի լսելն մեր ըզկատակ լուսահոգւոյն, յոժարակամ սիրով և միաբանութեամբ ընտրեցաք և կոչեցաք զսա ի պաշիւ և յաստիճան Հայրապետութեան, եւ զկնի անուանակոչութեանն, մինչ ի վրանման էաք թէ երբ օծեսցուք, կամ թէ ըստ բնականի կարգին գրեսցուք և ծանուսցուք յայդր յառաջագոյն. սկսան մեծամեծ և անաքակ դրունք ձնասուց բանիլ վասն սրբոյ Աթոռոյս, այնպիսիք, զորս աստէն ոչ կարեմք գրել։ Եւ նոյն դրունք անաքակ ձնասուցն այնպէս իսկ փութացուցին զմեզ, զի ոչ կարացաք գոնեայ՝ զլուսահոգւոյ եօթներորդ օրն թաղման անցուցանել. այլ ի նոյն իսկ երկրորդում կիւրակէին Վարգավառի ի յօգոստոսի Ը, ըստ անօրէնութեան և կամեցողութեանն Աստուծոյ, և ըստ ընարութեան ե. հաւանութեան հոգեխումբ բազմութեան մերոյս ժողովոյ, օծաք զսա ի կաթուղիկոսութիւն ամենս Հայոց՝ և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Որով եացն փութապէս անգրելի դրունքն ձնասուց, և անհետ եղեն իբրև զպղպջակս անձրեւաց, զորոց ոչ կարեմք գրել ինչ ի թղթի։ Եւ յետ այսմ՝ այսպէս լինելոյ Ցեառն յաջողութեամբ, սկսաք ըստ օրինի ղմասսար բազմակնիք և զթուղթս յոլովս հոգալ, զի հանդերձ անդրանիկ օրհնութեամբ նորաօծ սրբազան Վեհիս մերոյ յղեցուք յայդր ընդ ուրուն վարդապետի, զորս և հոգամք իսկ՝ և յղելոց եմք։ Բայց տեսաք թէ՝ այսք ի քանի մի աւուրս յետանալոց են. և մահսարաբեր վարդապետն ևս ոչ փութապէս կարէ յայդր ժամանիլ. վասնորոյ՝ բարւոք թուեցաւ մեզ յառաջագոյն ի ձեռն այսր սիրանիշ գրոյ ազգ առնել սիրելի եղբայրութեան քում ղԱստուածահաճ եղելութիւնս զայս, որպէսզի՝ գիտելով ձեր զիսկն բանիս, մի՛ յպյլ և պլ մըտատանջութիւնս անկանիցիք, փանզի գիտեմք, զի նախ քան զգալն յպդր մահսարաբերին, դուք պլ և պլ կերպիւ լսելով՝ ի տարակուսանս էք անկանելոց։ Ուստի փութացեալ՝ զայսքանս ի կարճ և յոյժ շեշտակի գրեցաք սիրոյդ վասն միամտութեան. յետոյ ընդ մահսարաբերին լիագոյն եմք դրելոց, և նա ինքն եկօղն ևս՝ զբերանով ասելիսն պատմելոց է ձեզ։ Ուստի՝ ղոզջոյն սիրոյ ի դիմաց մերոց մատուսցես գերապարգելի և մաքրակենցաղ Հօրն մերոյ՝ ծոցածին և քրտնաջան որդւոյն սրբոյ Աթոռոյս և արժանավայել Պատրիարքին տեղապահ՝ Ցեառն Զաքարիայ Աստուածաբան վարդապետին և Արհի եպիսկոպոսին, և գերաշնիւ սիրելւոյն մերոյ և օգտասէր որդւոյն սրբոյ Աթոռոյս բարեպաշտն և մեծահաւատ մահտեսի Ցարութիւն մեծի իշխանապետին, և այլ ամենայն Արևելական և Արևմտական օրհնեալ և Աստուծով զօրացեալ իշխանապետացն. և դոցա ամենեցունց ևս զայս ծանուսցես, զի իմասցին. զի մի՛ և նոցա տարակուսութիւն ինչ լիցի։ Ցետոյ ընդ մահսարաբերին՝ յատուկ թուղթ օրհնութեան գալոց է իւրաքանչիւր ուրուք դոցունց, այժմ այսպէս շատով եղև որպէս գրեցաք։ Ո՛ղջ լեր ի տէր։ Գրեցաւ ի ՌՄԻԹ, ի յօգոստոսի Ե։

Այլև՝ ահա տ. Պատրիարք վարդապետն ևս գրեցաք զսոյնպիսի թուղթ մի, և ընդ թղթոյս տ. քեզ յղեցաք, շուտով հասուսցես տ. ինքն։ Կրկին ողջ լեր ի տէր։



Թուղթ առ պատարիւորն Մեծին Պօղոսոյ ի միաբանից ս. Աթոռոյս, նախքան զնրհալն մեծի մահսարին, ըստ մտաց վերոյգրեցելոյ թղթոյն։

Թուղթ առ իշխանսն Հարևոյ, հանո-ռօտաւէս ծանուցանելով դարձեալ ըզ-վախճան լուսահոգւոյն եւ զօծանիլն իւր, որպէս եւ միաբանքն գրեցին յառաջ։ Ապա եւ վասն կարնոյ գիւմրուկչու ըմ-բռնելոյն զմեր նուիրակն եւ զվէքիլն եւ ի բանտ դնելոյն՝ (մինչ լուսահոգի էին զմահ լուսահոգւի սրբազանին, յորոց եւ խընդ-րէին զառինքսնանս եղեալ ինչսն, թէ միրի է.) որպէսզի հնարս տեսցեն, եւ ազատեսցեն զնոսա։ Փաշային, Փայատ-օղլուն եւ գիւմրուկչուն եւս գրեցան թուղթք։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ և ողջունի, հանդերձ Աստուածային և Անդ-րանիկ օրհնութեամբ, և հոգեպարար շը-նորհօք և զօրութեամբք սրբոյ Հոգւոյն տեղ-ւոյս Քրիստոսի՝ և համայնից հրաշադործ սրբութեանցն որք աստ, ի վերայ բնիկ և հարազատ սիրելեացդ մերոց՝ օդտասէրն և սրտացաւ որդւոցդ սրբոյ Աթոռոյս, Ցե-ղամբ Ցիսուսիւ զօրացեալ բարեպաշտն և մեծահաւատ իշխանացդ օրհնեցեալոյ քաղա-քիդ Կարնոյ, այսինքն, մահտեսի Կիրակո-սիդ, Հաճի Բարայիդ, մահտեսի Կարապե-տիդ, Դպլի Ցովհաննիսիդ, մահտեսի Խաչա-տուրիդ, և սրբոյ Աթոռոյս դանձապետ Պետ-րոսիդ, և այլոցդ ամենից։ Որոց Աստուածա-պահ տանց և բնակութեանց, որդւոց և դստերաց, սիրելեաց և բարեկամաց, և ա-մենայն ընդ օրհնեալ յարկաւ ձերով եղե-լոցն, խնդալ ի Ցէր յարաղաւարձ ցնծու-թեամբ։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս Անդրանկի, ծանուցանեմ լիցի Հարազատ սի-րելեացդ մերոց և օդտասէր որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի սակս վախճանման երանելի Հայրապետին մերոյ, և յաղագս յաջորդելոյ նուաստութեանս մերոյ յաթոռս սուրբ՝ ըստ կտակի լուսահոգւոյն՝ և ըստ համախոհս եւ միաբան հաւանութեան ընտ-րութեան միաբանից սրբոյ Աթոռոյս և երի-րականացս՝ (որում չէաք թէպէտ արժանի. և բազմից հրաժարելով չկարացաք ազա-տիլ և ի կամս մեր ձնալ.) ահա լիապէս գրեցին ձեզ յառաջ քան զայս՝ դործակալքն սրբոյ Աթոռոյս՝ որ ի հարկէ մինչև ցժա-մանիլն առ ձեզ սոյն Թղթոյս՝ հասանելոց է յայդր և իմանալոց էք։ Մեք վասն այն ոչ դրեցաք ղթուղթ առ հասարակութիւն օրհնեցելոյ քաղաքիդ ընդ Թղթոյն միաբա-նից, զի որպէս եւ դրեալ իսկ են ի նոյն Թղթոջն կամաք ընդ մահսար բերոզ վար-դապետին դրել՝ որպէս եւ օրէնն պահան-ջէր, զոր եւ գրելոց իսկ եմք յայնժամ։ Բայց այժմ հարկն ստիպեաց զմեզ գրել զայս Թուղթ օրհնութեան առ սիրելիսդ մեր՝ վա-սըն տեղւոյդ անբարի եւ ա՛յլայլող դիպուա-ծոյ մերոյնոցն։ Քանզի դիր առաք այսմ՝ որ տեղւոյդ մաքսապետն ըմբռնեալ և ի կա-լանս է եդեալ զմեր նուիրակ Ներսէս վար-դապետն՝ և զմեր վէքիլ Հայրապետն։ Իբր թէ՝ խալիֆայն վախճանեալ է, նորին առ ձեզ եղեալ մալն միրի [10]) պիտի լինիլ։ Արդ՝ սիրելիք մեր, ահա դուք եւս դիտէք լաւա-պէս, զի ի բնէ անտի ոչ ուրեք է պատահե-ցեալ այդպիսի ինչ մարդկանցն մերոց և նուիրակացն սրբոյ Աթոռոյս. զի ո՞վ է լու-եալ զայդ թէ՝ յետ կաթուղիկոսի մահուա-նըն՝ Սրբոյ Աթոռոյս ինչքն միրի լինին։

Ցորմէհետէ ի Սամրօլ թադաւոր է նստեալ և աստ կաթուղիկոս, այդ բանդ դեռ եղած և լսուած չէ։ Հինն թողցուք, ահա ի մէջ Լ տարւոյ ե կաթուղիկոս է վախ-ճանեալ, զորս դուք ամենեքեան դիտէք. նմանապէս և ի դոցունց շատքն տեսեալ և լուեալ են։ Որք են՝ Ղազարն, Մինասն, Ա-ղէքսանդրն, Ցակորն, և մեր լուսահոգին. այս քանի կաթուղիկոսացս մեռանելովն ո՞վ էր արարեալ զայդպիսի բան, ո՞վ էր լսած, և ո՞ր տեղ էր եղած։ Զի այս տունս յա-ւուրս մեծաղոր թադաւորիս է. և նորա ֆարմանովն է շէն, զի նորին ֆարմանովն տան մեզ ազգն մեր զմեր ապրուստս։ Զի զոր ինչ և տան, ո՞չ թէ խալիֆային տան. զի նա

մարգ մի է. այլ այս օջաղիս բազմախումբ միաբանիդն տան, որք ուտեն և վայելեն, և վասն կենաց թագաւորին և աշխարհի խաղաղութեան աղօթեն։ Վասն խալիֆայի մահուանն այսքան բազմութեանս հացն ո՞վ է տեսեալ որ առնուն, ղի զայս հացս առօղջն թագաւորն է՝ որպէս ասացաք։ Կամ թէ՝ խալիֆայն վախճանեցաւ, միւս ևս նոր նստաւ, որպէս որ նա էր թագաւորի փարմանոնին, (որոյ օրինակն ահա ի ձեռս նուիրակին է.) նոյնպէս և մեք եմք լինելոց, որ ահա արդեն մեր գնաց ի ստամբօլ. միտք փարմանին ևս այն է՝ որ նոր խալիֆայն անցեալ խալիֆայի տեղն նստի, և այս Ա Թոռոյս՝ և սորին բոլոր կայիցն աիրէ. և ոչ թէ միրի առնեն, կամ այլք առնուն, ղի ապրանքն սոյս օջաղինս է, և ոչ խալիֆայինն՝ որպէս գրեցաք։ Այժմ գրելս այս է իմ ցաւակից սիրելեացդ. ղի որքան և կար ձեր է, ջանասջիք զայդ բանդ հոգալ. ղի վաս անուն է այդ վասն սրբոյ Ա Թոռոյս։ Ահա մեծ փաշային. և Խալիլ փաշային. և գիւմրուկչուն զԹուղթս գրեցաք, զորս և ահա առ ձեզ յղեցաք ընդ Թղթոյս։ Ցառուկ մարդ յղեն ծանր համարեցաք. մանաւանդ կարծեցաք թէ՝ մինչև ցգալն առ ձեզ Թղթոյս՝ հոդացեալ և զերծուցեալ իցէք։ Ապա թէ գեռ այնպէս կան ի մէջ բանտի, զայդ Թուղթսդ տալիք մեծ փաշային և այլոցն. և ըստ գրեցելոյ կերպին՝ և այլ ղոր ինչ խոհեմութիւն ձեր անօրինէ՝ խոսեսջիք։ Նուիրակի ֆարմանն ևս ցոյց առջիք։ Եւ իւրաքանչիւրոցն մեկ բան ևս՝ զինչ որ դուք պատշաճ տեսջիք, ի մեր կողմանէ ընծայապէս առջիք, և զայդ բանդ հոգասջիք. և հանջիք զնոսա ի բանտէ։ Զայս ևս ասասջիք թէ՝ նոր խալիֆայն մարդ ուղարկելոյ է եղեալ աստ, և գիր գրելոյ ձեր մեծութեանն, այս ձայնս որ լուեալ է, պէտ չէ կարացեալ մարդ հասուցանել, փութով զայս արդս գրեալ է ի սպաս ձեր։ Զայս չեզած բանս պիտի որ չառնէք, խալիֆային իւրեան կեօրէ ղուղուղն և դօստութիւնն [11]) կառնէ, որպէս որ անցեալ խալիֆային արարեալ է։ Զի նա ևս Թագաւորինն է, օտարի պէս չպիտի րռնէք. և պէտ պատկիսի բան՝ զոր ինչ պատշաճն է։ Ինչեւիցէ՝ սիրելիք իմ, մեկ օր և մեկ ժամ յառաջ՝ զայդ չեզած բանդ պիտի դաֆ առնէք, ամենայն խոհեմութեամբ և ջանիւ, ի սէր սրբոյ լուսատու ծնողիս ձերոյ և մեր։ զի այդ է սահ յատուկ հարազատութեան և սրտացաւութեան երևեցուցանելոյ ժամանակին։ Եւ յորժամ հոգացեալ զերծջիք, շուտով գրեցջէք մեղ՝ զի միամտիցուք։ Իսկ եթէ շատ ջանայցէք դուք, և հնար չլինիցի ազատութեան նոցա. յայնժամ մեկ օր և մեկ ժամ յառաջ մեղ գրեսջիք ի ձեռն յատուկ փակի, զի և մեք գրեսցուք ի մեծն Պօլիս՝ և արդ արասցուք Թագաւորին զցաւս մեր։ Սիրելիք իմ, Թերևս ասօզ լինի ոք ի ձէնջ Թէ՝ այս ի՞նչ շուտով կաթուղիկոս ընտրել և օծանել է, զոր Էջմիածնի միաբանքն ատրաբալ են։ Ահա տեսէք այդու, զի այդ որ Թագաւորի երկիր է և մայրաքաղաք, նիզամով և կանոնով, և ամենայն ոք ի չափու իւրում, յայդր որ այդպէս պնաս լինի սրբոյ Ա Թոռոյս ի պակասիլ կաթուղիկոսին. ապա յայս երկրոջս ո՞րքան էր լինելոց՝ եթէ տէր չլինէր տանս, որ և դեռ չէ իսկ բոլորովին ազատ ի պնաստուց վասն այսր փոփոխման, Թէպէտ մանաւանդ Զի լուեալ էք ահա ղորպիսութիւն այս երկրիս, որ ոչ աէր ունի այդ երկրիդ նման, ոչ կանոն, և ոչ կարգ. և ամենայն ոք կորուսեալ զչափ և զկանոն իւր, աւարօղ՝ կեզքօզ և յափշտակօղ։ Զորս զամենեսեան նախանկատելով լուսահոգի Վեհապետին մերոյ՝ այսպէս առնել կամեցաւ փութով. և միաբանքն իսկ այսու մտօք փութապէս կատարուեան եաուն լուսահոգւոյ կտակին, և զայս արարին։ Ուրեմն լաւապէս նկատելով զայսոսիկ, մի ոք լիցի մեղադիր կտակողին և կատարողացն Զպատասխանի Թըղթոյս շուտով խնդրեմ, ի միամտութիւն մեզ։ Ողջ լերուք ի Տէր։ ի Ռմ՚Ի՛Ք, յօգս՚՚



Թուդղ, զոր առեալ իսկ ընդունգնաւ եւ օծեցեալ կաթուղիկոսն գրէ յամենայն քաղաքս՝ յետ օծմանն, ծանուցանելով զորպէս եւ զգիարդ լինելն։

Թուդղ հանխնիմ օրհնութեան ի Պոլիս, ըստ վերոգրեցելոյ կոնդակին եւ ի նմանէ իսկ ըստ մեծի մասին։

Ի Զմիւռնին եւս այդ վերոգրեցեալ ոճիւղ գրեցաւ կոնդակ։

Թուդղ առ մեծին Պօղոս Առիւրեան Մինաս վարդապետն ըստ վերոյ գրեցեալ թղթոցդ մտաց. վասն վախճանման հոգելոյս Հայրապետին Սիմէօնի. եւ յաջորդելոյ Տեառն Ղուկասու կաթուղիկոսի. հանդերձ այլեւս հարկաւոր մտօք։

Ծորմէ սիրով բազմաւ, Քրիստոսական սուրբ ողջունիւ և անդրանիկ օրհնութեամբ, ծանուցանէ լիցի սիրելւոյդ մերոյ և քրտնաջան որդւոյգ սրբոյ Աթոռոյս՝ Մինաս Աստուածարան վարդապետիդ։ Զի թէ ո՞րպիսի անյաջողութեանց դիպեցաւ երկիրս՝ և սուրբ Աթոռս և ընդ նմին յանցելումն ամ՝ (զորս և տակաւին կրեմք.) և յայնցանէ թէ ո՞րպիսի երկարագոյն հիւանդութեանց դիպեցաւ սրբազան ծնողն մեր, ահա ինքն գրեթէ է յայգր յառաջագոյն՝ թէ հասարակապէս և թէ յատկապէս. զորս և գուիմացեալ ես։ Ապա նովին երկար և կենսամաշ տկարութեամբն հասեալ ի շաբաթու օրն Վարդավառի, յուրբաթ երեկոյին պատուիրեաց զպատրաստութիւնս տեսանել՝ զի հաղորգեսցի ի փրկարար խորհրդոյն՝ չունելով ինչ նշան երկիւղի մահու։ Եւ յաւուրն շաբաթու հաղորդեցաւ ջերմեռանդ խոստովանութեամբ, յորդահոս արտասուօք և մեծաւ զուարթութեամբ։ Եւ ի Վարդավառի կիւրակէին ևս՝ մինչև ցժամ չորրորդ, նովին զուարթութեամբ և ուրախ դիմօք խօսելով ընդ ամենեսին, որոց ինչ պարտն էր ասել՝ կատարար. այլ չցուցանելով երբէք զնշան վախճանման, մանաւանդ՝ զի և հաստատեցաւ իսկ ի կարծիս ամենեցուն, թէ առողջացաւ։ Իսկ ի չորրորդ ժամու նոյն Վարդավառ կիւրակէին՝ զսկաւ ինչ թալկութիւնս ցուցեալ և զմարմնի սրտի, իբրու Գ կամ Դ րոպէաչափ միջոցում, կարի հեշտութեամբ և զգաստութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած, այնպէս, իբրու թէ ի քուն ոք մտցէ։ Զոր յաւուրն Բ շարթի՝ թաղեցաք ի գաւթի սրբուհւոյն Գայիանեայ. հուպ գերեզմանի Տեառն Աբրահամու կաթուղիկոսին Մշեցւոյ։ Ապա ի մի վայր ժողովեալ մեքանից սրբոյ Աթոռոյս՝ և երկրացւոցս ընացորդաց, ստիպեցին զմեզ ի յայս կոչումն։ Իսկ մեք զանբաւականութիւնս մեր կշռելով՝ հրաժարեցաք թէպէտ բազումանգամ, այլ զերծանիլ չկարացաք։ Քանզի՝ պատեալ զմեզ յամենուստ վիշտ և նեղութիւն բազում, ահաբեկս առնէին. և յայն իսկ դիտէին ամենեքեան առ երկիւղին ներկայականի, թէ և սրբոյ տանս շինութիւնն չընասցէ ի նոյնութեան։ Վասնզի՝ մինչդեռ կենդանի էր լուսահոգին և մերձ ի վախճանիլ, զսուտ համբաւ մի տարածեցին արտաքոյ՝ որք ի բնէ ընդդիմասիրքն են մեր, թէ խալիֆայն վախճանեցաւ, այլ պահեն ի ծածուկ, և ոչ յայտնեն ումեք։ Ուստի՝ մուզանլուքն սրօք և բրօք վարեցին աստ զՁօշականցիսն, որք գնացեալ էին ի հնձել և ի կասել զարտորայս իւրեանց. (զի յանցեալ տարւոյն մինչ վճացին զգեօղն քահկեաց՝ աստ էին.) զորս և վիրաւորեցին իսկ. և զգլխաւորսն նոցին մինչև ցմահ իսկ հասուցին՝ որ հազիւ զերծաւ, և զպահապանսն այգեաց մերոց ևս ընդ նոսա վարեցին աստ։ Ապա զամենայն վաստակս նոցա, և զայգեաց մերոց զբոլոր բերսն՝ իւրացուցին և այլ ոչ ոք կարաց խօսիլ և կամ՝ ասել ինչ, զի և իշխողին իսկ ոչ հնազանդին։ Քանզի տակաւին նոյն խռովութիւնն և աւերութիւնն երկրիս գոյ, և ամենեքեան չարացեալք՝ ուտել չգան զմիմեանս, ուր և հասանին՝ աւերեն և յափշտակեն, թարց երկնչելոյ յումեքէ։ Զայս իբրև արարին նոքա, ապա և այլք ևս համարձակեցան

ձեռնամխիլ ի միաստուածութիւն մեզ։ Զորս իրրև իմացաւ լուսահոգին, կսկծեաց մեծապէս, և յայնցանէ մանաւանդ իմացաւ, զի յետ վախճանի իւրոյ ոչ է հնար առանց մեծագունից միաստուց և աւերմանց մնալ սրբոյ սանն՝ մինչ յանախիրութեան մնասցէ։ Վասնորոյ՝ ի ժամ խոստովանութեանն կը-սակեալ էր ի ձեռն խոստովանաւորն, զի զանարժանութիւնս մեր կացուսցեն ՅԱթոռ Հայրապետութեան, զի մի անաէր երևեսցի սուրբ տունս, և կոխան լիցի կեղեքչաց։ Որև զայս ևս էր յայտնեալ, թէ այսու մտօք պահեցի զդա աստ առիս, և ի գործ ինչ ոչ յղեցի։ Եւ իրրև զայս ևս իմացան ստիպողքն զմեզ, ևս առաւել պընդեցին զտիպուսն իւրեանց, և բռնադատեցին զմեզ։ Որք և ոչ կարացին նախապէս գրել յայդր՝ որպէս օրէնն էր ի քնէ։ Քանզի իբրև հաւաստի իմացան զվախճանումն լուսահոգւոյն՝ վերոյ յիշեալ աւերիչքն չարագլուխք, սկսան և յայս գեօղ՝ և ի մեզ ևս ձեռնարկել և զմիաստս տալ, զանգս և զայգիս կողոպտել, զկայուն և զգնայուն իրս՝ զոր ի ծածուկ և զոր յայտնի՝ յափըշտակել և գողանալ, թէ յարտաքուստ և թէ ի միջոյ շինութեան. և զգանեցեալսն յանդս և արտաքոյ շինութեանս թալանել և մերկացուցանել։ Որք և խրոխտային ամբարտաւանութեամբ թէ՝ եթէ հաշտութիւն ոչ լիցի, և մեզ անգամ ևս գոլոյ լիցի Բագրատունին [12]), դատարկելոց եմք զտունս զայս և զծուխն կտրելոց, զի մի երևեսցի աստ շինութիւն և ուժտու լիցի նմա, որպէս և յանցեալ ամին եղև։ Իսկ զնմանէ իբրու վճռելով ասէին թէ՝ եթէ մինչ ցծ-ելն Օգոստոսի ոչ լիցի հաշտութիւն, գալոց է առանց կարծեաց։ Եւ եթէ գայցէր, առանց երկբայութեան առնելոց էին զոր խրոխտային, քանզի և յանցեալ տարւոջն զայս կամեցան, այլ լուսահոգին մեծաւ ջանիւ և հնարաւորութեամբ խափանեաց։ Իսկ այժմ ոչ ոք կարէր խափանել՝ թէ լինիցէր. զի լաւապէս գիտես, որ սուրբ բաց ի կաթուղիկոսէ՝ այլ ոչ ումեք լսեն, կամ զպատիւն պահեն. կամ `ամաչին յումեքէ և զերկիւղ կրեն։ Եւ բաց ի սոցունց՝ յաւուր վախճանման լուսահոգւոյն՝ մինչ ծանուցաք իշխողին զվախճանումն՝ նա զոմն յառաջակայից իւրոց յղեաց աստ քանեօք ոմամբք. իբրու առ ի պահպանել։ Իսկ նա ի գալն աստ՝ զպահպանութենէ չարարեալ ինչ փոյթ՝ զբացարանս արտաքին մեծ դրանցն առ ինքն ժողովեաց՝ պահեալ ընդ իւրով իշխանութեամբ. և որքան հարցաք զպատճառն, չասաց ինչ. և այս եղև ահաբեկութիւն մեծ Աթոռապետացս։ Քանզի և զրպարտեցին ևս զմեզ, թէ գուբ ձեռն էք ձգեալ ի Բագրատունին, յզել ձեզ զպահպանիչս։ Զայս ամենայն մինչ տեսին և լուան Աթոռապետքս ամենայն և երկրացիքս, աստկապէս երկուցեալ ի միաստուց և յաւերմանց սրբոյ Աթոռոյս՝ որք երևէին յայտ յանդիման, (քանզի և այլ ևս կային տրնաքակ միաբք որք չեն գրելիք.) ապա՝ այլ ոչ թողին զմեզ ի կամս մեր. այլ կոչեցին ի վերայ մեր զայս անուն. և ոչ իսկ զօծումն գոնէ՝ յապաղել կարացեալ, և կամ զեօթներորդ օրն թաղման լուսահոգւոյն անցուցանել, վասն վտանգիցն ասացելոց, ի նոյն իսկ եօթներորդ աւուրն կիւրակէի՝ որ էր Օգոստոսի Բ. օծին ի Հայրապետութիւն զնուաստութիւնս մեր։ Որպէս ահա յառաջագոյն գրեալ են քեզ գործակից սրբոյ Աթոռոյս ի Օգոստոսի Բ՝ զման ինչ յայտցանէ։ Նոյնպէս և Պատրիարք եղբօրն մերոյ՝ որ ընդ նմին առ քեզ յղեցաւ ի վերայ Կարնոյ։ Եւ այժմ ահա իմանալոց ես զլիապէսն ի բազմակնիք թղթոյն միաբանից և երկրացւոց. և ի հասարակ կոնգակէն մերմէ, մանաւանդ ի գրաբեր... վարդապետէդ, հանդերձ լիագոյն պարագայիւքն՝ և չգրեցելովքն աստ։ Ուրոյ սակս այսքանեաց միաստաբեր պատճառաց, ոչ կաբացին նախապէս ազդումն տալ յայդր՝ որպէս ի վերոյ ասացաք. զի ոչ կարացին զմիջոցն երկարել, և թէ երկարէին, անկարծիք միաստիլոց էր սուրբ աթոռս՝ յոյժ սաստկապէս։ Վասնորոյ վստահացեալ ի սէր գոցին որ առ սուրբ Աթոռս. և յայն իսկ՝ թէ լսեն և իմանան դոքա ի հարկէ. թէ զինչ կրէ երկիրս այս և սուրբ Աթոռս, զառաջագրութիւն իւրեանց ածին ի կատարումն։ Ասելով և զայս թէ՝ եթէ նոքա ի խաղաղ երկրոջ՝ և ընդ ձեռամբ հզօր թագաւորի, և յԱրքայականիստ աեղւոջ՝ չկարացին գտանել զմիջոց, զի նախապէս աղգէին Հայրապետին

մերոյ հանգուցելոյ՝ և ապա ղծայրտգոյն նուիրակն սորա կացուցանէին Պատրիարք. մեք յանթագաւոր՝ յանտէր՝ յաւեր և ի վրդովեալ երկրի՝ զիա՞րդ կարասցուք զմիջոց գտանել և նոցա ազդել ըստ նախկնոյ օրինին։ Որք թէ բոլորապէս լսիցեն զկլեալս մեր յայս ներկայս, չեն մեղադրելոց զմեզ. այլ յայնժամ լինիմք մեղադրելիք, մինչ անտէր թողցուք զսուրբ Աթոռս՝ և դիպեսցի ընտանեաց։ Զսոյն և մեք մատածեցաք, թէ գուցէ մեղադրելի լինիցիմք յազգէս մերմէ՝ հրաժարելովս մեր յայս կոչմանէ՝ մինչ ընտանս կրիցէ սուրբ տունս. վասն այն չկամեցաք ճաւալ ի կամս մեր։ Ապա թէ չլինիցեր այս երկիւղ ոչ էի առնելոց յանձն։ Մանաւանգ, նախապէս սիրելի եղբօրդ մերոյ և քրանաչան որդւոյդ սրբոյ Աթոռոյս պատրիարք վարդապետիդ վայելէր այս պաշտօն, և ի գա էին կամք իմ, զոր անկեղծօրէն գրեմ։ Բայց մինչ այսպէս՝ բուռն գտաւ ժամանակն ե. հարկն ստիպեաց, յակամայ կամս յանձն առաք. յուսալով յողորմութիւնս և ի գթութիւնս Աստուծոյ՝ և յանձն արարեալ զմեզ շնորհաց նորին, զի օժանդակիցէ մեզ՝ ի բարեպէս յառաջացուցանել զհարկ պյսր պաշտամանն։ Արդ՝ ահա գրեալ եմք զայս առ օրհնեալ իշխանսն տեղւոյդ՝ որպէս տեսանելոց ես, նաև սիրելի եղբօրն մերոյ Պատրիարք վարդապետին ևս ուրոյն. զոր և քեզ գրեմ, զի իմասցիս, Զի որպէս գրեցաք, ի բռնութենէն ժամանակին, ի հարկելոյ, ներկայ և առաջիկայ ընտանեացն, թէ և ի յակնարկութենէն Աստուծոյ՝ այսպէս յաջողեցաւ այս գործ։ Այժմ՝ թէև դուք յԱստուծոյ համարեալ զայս եղելութիւն՝ հաճեսցին ընդ այս, և ճշմարիտ սիրով և հարազատութեամբ՝ և սիրանիշ գրով և յորդորմամբ զմեզ յուսադրեցին, և սրտադիւրս արասցեն յատուկ օգնութեամբ և ձեռնտուութեամբ, կարեմ՝ և ես ըստ իւ՞ոց կարեաց հոգալ զսուրբ Աթոռս և զհասարակութիւն ազգիս։ Ապա թէ ոչ, ղճշմարիտն ասեմ, զով ոք և յղել կամիցին, թէ զսիրելի եղբայրդ մեր Պատրիարք վարդապետդ՝ և թէ զայլ ոք, ես ընդ առաջ եմ եղանելոյ՝ և շնորհաւոր ասելոց. և ապա՝ զիմ առանձին կեանքն անդէն գտանելոց՝ որ սիրելի է ինձ քան զայս։ Ինձ այսքան գոյր պարտականութիւն, որ զերանելի նախնեացն մերոց առ մեզ հասուցեալ չինութիւնն պահէի ի նոյնութեան. և ես չլինէի պատճառ աւերմանն՝ հրաժարելովս ի բաց, և մեղագբելի լինէի։ Այժմ թէ սիրելեացդ մերոց վերոյ յիշեցելոց՝ այս չլինիցի հաճելի, ապա՝ որպէս և կամին՝ հոգացցեն զհաւատոյ մայրս իւրեանց սուրբ Աթոռս, և մեք լիցուք անպարտ և ազատ ի մեղադրութեանց։ Իսկ եթէ միաբան սիրով համակամեալք՝ հաճիցեն ընդ այս, ապա՝ զսիրելի որդիդ մեր Պետրոս վարդապետդ ըստ օրինի ե. ըստ պատշաճի գարձուսջիք առ մեզ. զոր և դուք ըստ ամենայնի ի սէր ունելով որքան յայդր է, օր մի յատաջ ուղևորել ջանասցես յայսկոյս. գրելով և զոմանց մեղապատշաճ հարկաւոր որպիսութեանց։

Թուղթ առ Ախլցխայոյ Միաբանից ի Մհաբաղատան ժողովուրդն, նոյնպէս վասն վախճանման Հոգելոյս Հայրապետին մերոյ Տեառն Սիմէօնի, եւ յաջորդելոյ նորոգ սրբազան կաթուղիկոսին Տեառն Ղուկասու, Ծ. իւրեանց եւս յուսաղրութիւնս՝ եւ սփոփանս։

Թուղթ ի միաբանից սրոյ Աթոռոյս առ Պօլսոյ Պատրիարքն եւ նուիրակն եւ իշխանսն, ի պատասխանի ժամասրին իւրեանց՝ որք գրէին առ սոսա Թէ՝ լուաք զվախճան սրբազան Հայրապետին, եթէ յիրաւի է, ւսոանց մերս ընտրութեան եւ խորհրդոյ մի ընդ ջէք զկաթուղիկոս։

Ի Էւսսակառոյց և Տիրակերտ սրբոյ և ի մեծէ Աթոռոյս Էջմիածնէ, և ի սորին սպասաւոր և պաշտօնեայ համայն միաբան եղբայրս։ Աչխինքն յեպիսկոպոսաց, ի վարդապետաց՝ և յաբեղայից՝ և յայլոց ամենեցունց. ֆրիստոսական սուրբ և միարար ողջունիս, և հոգեկան ճշմարիտ և անխաբ-

դախ սիրով, ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց ի Քրիստոս, հարազատ և օգտախոհ որգւոցգ սրբոյ Աթոռոյս Աստուածածինի. գերյարգելի ՝ Հօրդ մերոյ և արժանավայել պատրիարքիդ Աստուածախնամ մեծի մայրաքաղքիդ Կոստանդնուպոլսոյ՝ Տեառնդ Զաքարիայ Աստուածաբան վարդապետիդ և Արհի եպիսկոպոսիդ: Նաև սիրելի եղբօրդ և պաշտօնակցիդ մերոյ՝ և ծայրագոյն նուիրակիդ սրբոյ Աթոռոյս՝ Մինաս Աստուածաբան վարդապետիդ, և այլոց վայելչապատիւ եպիսկոպոսաց և իմաստնաասնչ վարդապետաց, և աւագ քահանայից որք յայդր, այլև համայնից Աստուածասէր և բարեպաշտ իշխանապետացդ և իշխանաց՝ որք կայք ի դոյն կայսերապարծ մայրաքաղաքոյդս: Զի բազմակնիք թուղթ սիրելութեան ձերոյ էհաս առ մեզ ի ծԳ ամսոյս սեպտեմբերի՝ ի խաչվերաց կիւրակէին: Զոր միաբանութեամբ ընթերցեալ մեր՝ ծանեաք զդիամունս ձեր: Որք բարւոք խորհրդով և հաւանելի դիտամբ գրէք թէ՝ լուաք զփոխին առ Քրիստոս սրբազան կաթուղիկոսին մերոյ. և ոչ գիտեմք զհաստատին: Եթէ յիրաւի լինիցի, մի և մի լիցի թարց իմացումն տալոյ մեզ և բոլոր ազգին՝ դուք ձեզէն (որով պատճառաւ և ինչ) կաթուղիկոս դնել: Որ եթէ լինիցի, այնուհետև ձեռք բարձէք ի մէնջ և յերկրացս մերոց. և չեմք լսելոց գրուածոց ձերոց՝ զինչ և գրիցէք. և չեմք ընդունելոց զթարց համահաճութեան ազգին եզեալ կաթուղիկոսն. և մեծ ազմուկ և խռովութիւնք են լինելոց. և այլն: Առ որս գիտասջիք սիրելիք մեր: Զի թէպէտ՝ բարւոք խորհրդով է գրեցեալս ձեր՝ և հաւանելի բանք են. (քանզի կաթուղիկոսն ընդհանուր ազգին է լինելոց կաթուղիկոս. վասընորոյ՝ և ընտրութիւնն գիտութեամբ ամենիցն պարտի լինել, որպէս և դուք գրէքդ:) Բայց զինչ օգուտ, որ յանագան ժամու էք գրեալ զայս, որ յետ Խգ աւուրց օծմանն նորապսակ սրբազան Վեհին մերոյ էհաս աստ: Եթէ դուք զայդ միտդ ունէիք, ընդէ՞ր յառաջագոյն ոչ գրեցիք մեզ՝ մինչդեռ կենդանի էր լուսահոգին: Եթէ ասիցէք թէ՝ ի կենդանութեանն մեր որպէս գրէաք զայդ, իցէ թէ չվախճանիցէր՝ և կամ ի՞նչ հարկ էր գրելն մեր, մինչ ի բնէ անտի է կանոն՝ առանց խորհրդոյ ազգին չառնել կաթուղիկոս: Առ այսոսիկ գիտասջիք: Թէպէտ անպատեհ էր յիրաւի ի կենդանութիւն լուսահոգւոյն զայս գրել ձեզ աստ առ մեզ, բայց թէ միամիտ լինէիք զկենդանութենէ նորին, զայդ մտածել ձեզ ի դէպ էր. իսկ՝ մինչ յառաջագոյն գիտէիք զհիւանդութիւնն նորին մեծագոյն և երկար՝ և զմերձ ի մահ լինելն, պարտ էիք զայդ յառաջ գրել: Եւ թէ ասիցէք թէ՝ մեք չգիտէաք զհիւանդութիւնն, առ այդ ասեմք թէ՝ կարի քաջ գիտէիք: Զի ինքն լուսահոգին ի կենդանութեանն քանիցս գրեր ձեզ զհիւանդութիւնն, և զայն ևս թէ՝ մերձ ի մահ եմ: Նոյնպէս և զխառնակութիւնն երկրիս չափազանցօրէն, և իւր հիւծիլն և մաշիլն նոքօք, որպէս և մեք վերահասու եմք և գիտեմք: Ապա՝ և դուք մինչ զայսոսիկ իմանայիք և գիտէիք, պարտ էր ձեզ մտածել թէ՝ ահա ի մէջ այսքան ցաւոց և հիւանդութեանց գոլով՝ ի ծերութենէն ևս յազթեցեալ է. իցէ թէ վախճանիցի ըստ սահմանի հոգածին բնութեանս. ուրեմն մեք զայս բանս գրեսցուք առ միաբանսն Էջմիածնի, զի զգուշասցին, և մի առանց մերս խորհրդոյ զկաթուղիկոս ընտրեսցեն անգ և օծցենս: Եւ եթէ այսպէս գրէիք մեզ յառաջ, մեք ևս թոյլ տայաք, և նախապէս ձեզ գրէաք: Եւ յայնժամ թէ ո՞րքան էր երկարելոց միջոցըն, յայտնի է ահա, որպէս յառաջ լինէր և տեսանէաք: Եւ որքան մնաս ևս պատասխէր սրբոյ Աթոռոյս, մեք անպարտ էաք լինելոց, և անմեզադրելի: Այլ ահա զայսոսիկ ոչ էք մտածեալ դուք, և զայս գրեալըս ձեր յիւրում ժամանակին չէք գրեալ. այլ մնացեալ էք այնքան. մինչև լուեալ էք զմահ լուսահոգւոյն. և ապա գրէք զայս յանագան ժամու, յորում սրբազան վեհս մեր օծեցեալ էր՝ որպէս ասացաք: Իսկ առ այն թէ՝ ի բնէ անտի է կանոն հաստարակաց հաւանութեամբ ընտրել, գիտասջիք: Զայդ կանոն և մեք գիտեմք լաւապէս. և մեզ և սրբոյ Աթոռոյս է մանաւանդ օգուտ մեծ՝ հաստարակաց ընտրութեամբ լինիլն. բայց զի՞նչ արասցուք, որ հարկն ժամանակին՝ լուծանէ զօրէնս նախկին. որպէս ահա յայսմ նուագի եզև: Եւ թէ ո՞րպէս, ահա զսակաւն ի բազմաց գրեալ եմք ի հաստարակ

մեծ մահարոյն մերում, յորմէ իմանալ կարէք, թէ ո՞րպիսի հարկ զմեզ ստիպեաց, որ փութապէս ընտրեցաք զսրբազան վեհս մեր և օծաք. զի սուրբ Աթոռս միասցէ յիւրում կայի և ի հաստատութեան, եւ զի անդ ոչ եմք գրեալ բացայայտօրէն զդէմսաւոր միաստն որք գիպելոց էին սրբոյ Աթոռոյս, ասէն գրեացուք փոքր մի. զի գիտասջիք թէ՝ ո՞րպիսի ինչ հարկ էր այս, որ այսպէս փութով վճարել եա մեզ զայս իրակութիւն. և անմեզադիրս արասջիք զմեզ: Քանզի՝ մինչդեռ կենդանի էր լուսահոգին, սաստկացաւ երկիւղն կրկին գալստեան վրացուցն ի յայս երկիր. զորմէ ասէին հաւաստեաւ թէ՝ ունի զպատրաստութիւնս զօրաց յոյժ. և վասն միւնորդոյացն պղերանաց՝ տակաւին հայի՝ թէ սոքա զնշան ինչ խոնարհութեան ցուցցեն, և հաշտեսցի, և թէ այս միւնէ ի ժե ըն օգոստոսի չէիւնիցի, անկարծիք գալոց է աստ վերստին: (Որև միւնէ ցայժմ չէ վերացեալ այս երկիւզս. զի թէպէտ Ախլցխայու մովսեան բազմաւ ջանիւ խափանեաց միւնէ ցարդ զգալն նորին և ջանայ վասն հաշտութեան. այլ տակաւին ոչ հաշտութիւն է եզեալ. ոչ նա զզօրսն ցըրուեալ է. և ոչ սոքա զմիամտութիւնս դրտանեն երբէք. այլ նովին երկիւղիւն կան դեռ և ի նոյն վրդովմանն:) Իսկ յայնժամ միւնէ հայէր վրացին տեսանել ի սոցունց զնշան ինչ խոնարհութեան որպէս ասացաք. սոքա զոչինչ նշան ցուցեալ ըստ նորին ակընկալութեանն ժողովէին վերստին ի մէջ բերդին և ամրանային, և մտագրէին ըզսուրբ Աթոռս եւս դատարկել. և զնշանն չինութեան կտրել. զի մի վրացին եկեալ գտցէ աստ զչինութիւն՝ և պիտոյացի նմա: Զայս միւնէ իմացաւ լուսահոգին, Թող զայլ աւերիչ և բազմատեսակ միասն՝ որք շուրջ էին պատեալ զմեօք, այս առաւել ցաւ եղև նմա: Քանզի և յանցեալ տարւոջն զայս կամեցան առնել, այլ լուսահոգին խափանեաց պէս պէս հնարիւք: Իսկ այժմ կասկածելով՝ թէ դուցէ յեա վախճանին իւրոյ այսպէս արասցեն զոր խորհին՝ կամեցաւ մեզ կացուցանել զնորապակ սրբազան վեհս մեր յԱթոռ Հայրապետութեան. զի զկնի իւր հոգացօզ լիցի սրբոյ Աթոռոյս. որպէս ինքն հոգայր. և մի անտէր տեսցեն զսուրբ տունս՝ և դատարկեսցեն: Զի թէ յիրաւի գայր աստ վրացին. անկարծիք գտաւարկելոց էին սոքա զսուրբ տունս, և ոչ ումեք էին լսելոց՝ եթէ աէր չէինիցէր տանս. զի բաց ի կաթուզիկոսէն՝ այլ ոչ ումեք զպատիւն պահեն և լսեն սոքա, մանաւանդ յայսպիսի ժամանակի: Ուստի՝ և մեք զկնի վախճանի լուսահոգւոյն՝ փութապէս արարաք զանուանակոչութիւն սրբազան վեհիս մերոյ, զի ամենեցուն լսելի լինիցի՝ թէ աէր գոյ տանս. թէպէտ ինքն չկամէր առնուլ յանձն. և յակամայ կամս յանձն առնուլ եաուբ: Եւ եթէ այսպէս հարկ չպատահիցէր՝ զպատրիարք Հայր վարդապետդ ևս էաք կոչելոց ի յայս պատիւ, որպէս և ի մահարոյն գրեալ եմք, և զորն երկոգունցըն տայր մեզ Աստուած, նա էր լինելոց մեզ հովուապետ: Բայց զի այսպէս հարկն ստիպեաց եւ սա գտանեցաւ աստ, որ արժանի էր այսմ շնորհի՝ որպէս և դա. վասն որոյ զսա կոչեցաք ի յաստիճան Հայրապետութեան: Ապա՝ մինչ տակաւին չունէաք զդիտումն օծանելոյ, և ինքն ևս կամէր երկարաձգել զմիջոցն, յանկարծ րացաւ մեզ այլևս դուռն մեծի միասոյ՝ որ քան զառաջինն չարագոյն էր: Քանզի՝ յառաջ քան զվախճանիլն լուսահոգւոյն՝ յերկրորդս մերում եղեալ չարագլուխքն՝ (որք եւ իշխողին իսկ անհնազանդ են. և միշտ ցեղք կենաց մերոց.) զսուտ համբաւն տարածեցին թէ՝ խալիֆայն վախճանեալ է, այլ ծածկեն, և ոչ ումեք յայտնեն: Որով առաւել լրացեալք սկսան զմեծամեծ միասս հասուցանել մեզ: Իսկ նոյն սուտ համբաւն՝ երկու շաբաթ յառաջ քան զվախճան լուսահոգւոյն՝ հասեալ էր ի Թիֆլիզ: Ուստի՝ Իսրայէլ անուանեալ կաթուզիկոսն որ անդ է այժմոյս, անկեալ էր ի գրունս. վրաց, և զծանրագունեզ խոստմունս արարեալ, թէ զիս յէջմիածին նստուցէք: Որում՝ հաւանեալ և հաճեցեալ էին շատք՝ և գլխաւորք. մինչև ի մեր ազգեաց ևս ոմանք պատառաքաղք: Սակայն պետն նոցա ասացեալ էր թէ՝ միասցուք մինչև լաւագոյնս իմասցուք զսաուգութիւն վախճանիւանն, և ապա տեսցուք: Իսկ մինչ չև ևս էր անցեալ Գ կամ Դ օր անուանակոչութեան սրբազան վեհիս մերոյ, այս հաւրաւ առ մեզ էհաս, զոր և ոտու-

գեալ՝ իմացաք զհաւատսին Վասնորոյ երկուցեալ մեր Թէ՝ գուցէ յանկարծ եգեալ ընդ զրաց, յղեացեն աստ և բռնութեամբ նստուսցեն զնա ի սուրբ Աթոռս, վաղվաղակի օծաք զսրբազան վեհս մեր ի յօգոստոսի Ը, չկարացեալ գոնեայ զեօթներորդ օրն թագման լուսահոգւոյն անցուցանել, (որպէս և ի մեծ մահսարոյն գրեալ եմք։) Որպէսզի՝ համբաւ օծման որբբազան վեհիս մերոյ հասցի փութով ի Թիֆլիզ, և նոքա կասեսցին ի խորհրդոց իւրեանց. որպէս և եղև՝ իսկ՝ շնորհօքն Աստուծոյ, Ընդ՝ սիրելիք մեր ի Քրիստոս. հասարակաց խորհրդով լինիլն բարւոք է յերաւի, որպէս և ի վերն գրեցաք, բայց ո՛չ յայս ժամանակս՝ յորում պյսպիսի վտանգք առաջադրեցան մեզ։ Զի Թէ մեք զբնական կանոնն պահելով յետացուցանէաք և այս վտանգս լինէին, յայնժամ գուբ կամ մեք զի՞նչ էաք առնելոց։ Ո՛չ ապաքէն մեղագրէիք զմեզ յայնժամ Թէ՝ գուբ էիք յպյդր ականատես և վերահասու այգ պնասուցգ, ընդէր Թուլասրեցիք և ոչ փութապես կացուցիք զոբ Ցէր տանգ այդմիկ՝ որ այգպէս պնաս չպատահէր գմա. և չանկանէր ի ձեռս օտարաց։ Ահա մեք զայսոսիկ մտածելով՝ զգուշան խորհեցաք սրբոյ տանս, և այսպէս արարաք, զի մի լիցուբ ի ձէնջ մեղագրելիք։ Զորև յառաջագոյն ի յօգոստ. Ե, գրեցին գործակալք սրբոյ Աթոռոյս, զի ձեզ և ծանուսցեն, և իմասջիք ամենեքեան զիսկութիւն այսր եղելութեան. և մի՛ զայլ և այլս լսելով՝ ի տարակուսանս անկանիցիք. մինչև յետոյ զմեծ մահսարն հոգացեալ՝ հանդերձ նոր օրհնութեան Թղթով սրբբազան վեհիս յղեսցուք յայդր՝ և զկատարեալն իմանայցէք։ Այլ ահա ոչ են հասեալ յայդր այն Թուղթքն մինչ զայս գրեալ էք դուբ. զի Թէ հասեալ լինէր՝ ի հարկէ իմանալով զաղէսս և զցաւս մեր և ղօծանիլն սրբազան վեհիս մերոյ այլ ոչ գրէիք զայս։ Իսկ այժմ՝ ի հարկէ հասեալ են յայդր Թուղթքն այնք և իմացեալ է.ք. և այս Թուղթս և՛ս ահա, ընդ մեծի մահսարին և ընդ օրհնութեան Թղթոց սրբազան վեհիս մերոյ՝ առ ձեզ է հասանելոց, ընդ եղբօրդ մեր մահսարարեր Պետրոս Արհի եպիսկոպոսիդ։ և իմանալոց էք զի ամպէն ի Թղթոց պյսի և գմանէ իսկ։ Ուրովք յուսամք Թէ՝ և շնորհակալ և՛ս լինիցիք ղմեզ, մինչ զօգուտն խորհեցաք հաւատոյ մերոյ ձերոյ սրբոյ Աթոռոյս և արարաք, և ոչ Թողաք զնա լինել կոխան օտար ոտից։ Որով ուրախացեալ ձեր՝ և մեղ համակամ և միարան եղեալ, փառս տացիք Աստուծոյ, որ զօգուտս հոգևոր ծնողիս ձերոյ յաջողեաց մեզ, և նոր ի նորոյ ձեզ պարգևեաց զհաւատոյ մայրս ձեր սուրբ Աթոռս, և ոչ ետ օտարաց։ Իսկ եԹէ պյլ և՛ս զնոյն բանն խորհիցիք՝ զորս գրեալ է.ք, (որում ոչ ակն ունիմք.) և անհաճոյ Թուեսցի ձեզ արարեալս մեր. ապա՝ զոր ինչ ընաս կրեսցէ սուրբ Աթոռ մայրս ձեր՝ և որքան տարաձայնութիւն և խռովութիւն լինիցի, զայնս և՛ս դուբ գիտասջիք. մեք անպարտ եմք։ Եւ պյսքան ինչ գիտացեալ՝ բաւ լիցի խոհեմութեան սիրելեացդ։ Եւ լերուբ ողջ ի տէր։ Գրեցաւ ի ՌՄԻԹ ի սեպտ.։

Թուղթ առ գնօրկին Միքայէլ Ղորդայորդին վրաց, ի պատասխանի Թղթոյն առաջնոյ զոր գրեալ էր ընդ Դանիէլ վարդապետին, սէր՝ եւ շնորհակալութիւն, եւ միխիթարութիւն վասն մահուան փոքրիկ որդւոյն՝ եւ փոքրիկ եղբօրն։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ Քրիստոսական սուրբ ողջունի, և հոգևոր օրհնութեան, հանդերձ հոգեսած շնորհօք և զօրութեամբ Աստուածածին սրբոյ Ցեղւոյս. և համայնից հրաշագործ սրբութեանցն որք ի սմա՝ ի վերայ գերազնուոյ և բաղձալւոյ սիրեցելոյդ իմոյ ի Քրիստոս, և ստոյգ սիրով ջանացողիդ և բաղձացողիդ օգտից Աստուածակերա Աթոռոյս սրբոյ։ Զօրացելոյգ ի Քրիստոս, բարեպաշտի և Աստուածասիրի, Արիասրտի և Քաջքանի, Բարեյաղթի և Թշնամասիրի, Գեօրկին Միրզայ Ընբայաղնւոյ Ընբայորգւոյգ Ցերամբ օրհնեցելոյ։ Եւ Աստուածապահ տան քում, և նովիմբ զօրացեալ որգւոյգ և դստերացդ՝ և համայ-

նից ընտանեացդ։ Հարազատ սիրելեացդ՝ և մտերիմ խորհրդակցացդ։ Հաւատարիմ պաշտօնէիցդ, և ամենից ընդ ձեռամբ քով և ընդ հովանեաւ եզելոցն, խնդալ ի աէր յարաժամ։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանն Աստուածայնոյ, ծանուցումն լիցի սիրելդ իմոյ, և օգտասիրիդ սրբոյ Ներսէս մերոյ Էջմիածնի։ Զի սիրածիր Թուղթ սիրելուս թեան քոյ էհաս առ մեզ ի ձեռն որդեկին մերոյ Դանիէլ վարդապետին։ Զոր ընթերցեալ մեր՝ իմացաք զգրեալսդ ամենայն, և զճշմարիտ սիրոյդ յորդութիւն զոր ի բնէ իսկ ունէիր առ մեզ այժմ ևս կրկին ծանեաք, որով ոչ սակաւ ուրախացաք և սրտաշահ եղաք։ Որ նախապէս մխիթարեալ էիր զմեզ վասն առ Քրիստոս փոխելոյ հոգեծին հօրն մերոյ սրբազանի, ապա և զճշմարիտ սիրով ուրախանալդ ընդ մեր կոչումն ի յայս աստիճան յայտնեալ էիր ի սիրածիր թղթի աստ, հանդերձ շնորհաւորութեամբ։ Որև յառաջագոյն իսկ յայտնեալ էիր ըզդոյն ճշմարիտ սիրոյդ առաւելութիւն, խիլայայաղարդ առնելով զբերօղն առաջին համարեալ պյսր եզելութեան. և այժմ ևս ըզԴանիէլ վարդապետ որդեակն մեր առաւելապատիկ շահելով ի սէր և ի պատիւ մեր։ Եւ զստոյգ ուրախութիւն սրտիդ ի թղթի աստ յայտնելով, դրեալ էիր մեզ զրանս սրտադիւրիչս և ուրախացուցիչս. սփոփականս և յուսադրականս. խոստանալով ևս ունիլ անչինչ զդոյն սիրոյդ առաւելութիւն առ սուրբ Աթոռս և առ մեզ։ Ընդ որս մեծապէս ուրախացեալ մեր՝ և մխիթարեալ՝ օրհնութեամբ մեծաւ օրհնեցաք զքեզ քոյայնովքդ հանդերձ։ Զոր Ցէր օրհնեսցէ և զօրացուսցէ, նախախնամեսցէ և պահպանեսցէ, և յամենայն կեանս քոյ հովանի և վերակացու լիցի քեզ։ Փրկեսցէ յամենայն փորձութեանց հոգեկանաց և մարմնականաց. և յամենայն ուրեք հասցէ քեզ ի թիկունս օգնականութեան։ Միշտ յաղթօղս արասցէ ի վերայ թշնամեաց՝։ և ևս առաւել փառօք և պերճութեամբ բարձրացուսցէ առ ի յուրախութիւն հօր քոյ և մերոյ խնամածուի մեծի Աղբային. և ի բարձրութիւն անուան և Ատուածապահ Ցէրութեան ձերոյ։ Եւ փոխանակ ուրախութեանցն և միխթարութեանցն որով զմեզ ուրախացուցեալ և միխթարեալ էիր, ամենայն ուրախութեամբք ուրախացուսցէ՝ զքեզ աէր. և մի տացէ քեզ տեսանել զտրտմութիւնս Մանաւանդ՝ զնորապատահ տրտմութիւնդ զոր ունիս վասն փոքրիկ մանկանն քոյ և փոքրիկ եղբօրն՝ փոխեցելոցն առ Քրիստոս, փարատեսցէ և ի բաց բարձցէ ի քէն. և հոգւովն սրբով միխթարեսցէ։ Որոց ազատաւ մի առաւել քան զչափն տրտմիլ խընդրեմ, այլ սփոփիլ և միխթարիլ՝ և փառատաւ Ատուածոյ նման Ցօբայ. զի նա ետ, և նա էառ, եղիցի անուն նորա օրհնեալ՝։ Որև կարօղ է փոխարէն նոցին զբազմապատիկս պարգևել ձեզ՝ որպէս և նմա։ Իսկ և խնդրեմ ի սիրառատ Աղբայորդւոյդ, զի զդոյն ճշմարիտ սիրոյդ առաւելութիւն (որպէս և խոստանասդ.) դերազանցապէս ունիցիս առ մեզ և առ սուրբ Աթոռս Ատուածածէջ, առաւել քան զոր ունէիրն յառաջ, և սիրանիշ Թղթով ուրախացուցեալ զմեզ և միխթարեսցես, զկարօտաեալքս ամենակերպ միխթարութեան. որք յամենայն ուսաեքէ զտրտմութիւնս քան թէ զուրախութիւնս սաանամք մեզ ի յոդնավիշտ ժամանակիս։ Որպէսզի՝ և առաւել շնորհակալութեամբ ճշմարիտ սիրելութենէդ. և օրհնեսցուք զքեզ միշտ։ Այլև՝ ահա զսիրելին մեր Կարապետ Արքեպիսկոպոսն յղեցաք ի յօրհնեալ քաղաքդ, առ ի մատուցանել ի մերս դիմաց զողջոյն և զօրհնութիւն Ատուածային՝ սիրեցելոյն իմոյ ի Քրիստոս մեծի Աղբային և ձեզ, և հասարակութեան ժողովրդոց մերոց որք յայդր. և զձերդ ողջունէք և բարեկեցութենէք ևս տեղեկանալ, և դալ պատմել մեզ՝ առ ի յուրախութիւն սրտից մերոց։ Ցորմէ և զամենայն որպէսն մեր և սրբոյ Աթոռոյս ևս իմանալոց ես. զորմէ յանձնեմ ի աէր սիրելութեանդ։ Ողջ լեր ի տէր, զօրացեալ ի նոյն միշտ. և պահպանեցեալ խաչիւն սրբով յարաժամ։ Ամէն։ Ի ՌՄԻԹ. ի Հոկ. Եւ

Թուղթ ի Գևանջայ, ծանուցանելով նմա զվախճանումն յուսահոգւոյն՝ եւ զ յաջորդելն իւր, եւ առաւ զՂազարեան վ-ըղծին կարգելով զանճառակն սրբոյ Աթոռոյս, եւ վասն սոցին պատուէրք։

Թուղթ վէքիլութեան եւ գործակալութեան Թիֆլիզու վանքի սկզնոցւոյ Տէր Ղազարին, որ է սկիզբն՝ Դուք կանոնքն յայլ տեղւոջ են, որպէս յուցանելոց եմ ի նմանէ։

Ցորմէ ժամանեցի Թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ եւ նամակ պահպանութեան, Շնորհք Աւաքե՛։ Ի վերայ սկրբելի եւ հոգեւոր որդւոցդ մերոց. Հարազատ եւ լուսաճնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս՝ եւ ի քէն անտի սորին յաջորդ եւ Տէրունի թեմ եւ վիճակ եղելոցդ. Հայկասէր՝ Լուսաւորչակրօն եւ միաբնագաւան օրհնեալ եւ բարեպաշտօն հաւատացելոցդ ի Քրիստոս։ Որք կայք զետեղեալք ի Յաստուածախնամ քաղաքդ Թիֆլիզ, ընդ հովանեաւ եօթնից սրբացեալ եկեղեցեացդ՝ Տէրունեաց սրբոյ Աթոռոյս. եւ այլ եւս մասնաւոր գլխաւոր եկեղեցեաց մերոց Տէրունեաց։ Որոց գլուխ կարգեալ աւագ քահանային, եւ այլոց ամենից մեղա՛. (Եւ այլն կարգաւ։)

(Շնորհք)

Եւ ընդ շնորհաղեղուն օրհնութեան նամակիս, ծանուցանեմ լինի սիրելի եւ հոգեւոր որդւոցդ մերոց եւ լուսաճնունդ զաւակացդ՝ եւ Տէրունի ժողովրդոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի Աստուածեղէն հոգւով իմասանացեալն Պաղտմոն՝ ասէ թէ՝ փորձ արծաթոյ եւ ոսկւոյ ի բովս՝ եւ այր փորձի ի բերանոյ գովչաց իւրոց։ Արդ՝ այս ահա ամեն ումեք յայտնի է. զի ոչ ոք առաքեալ օրէն եւ առանց ուրուք վկայելոյ հաւատոյ ումեք՝ որ անձանձիւթ ինչ ինքեան, եւ ինքն չիցէ զնա յառաջագոյն տեսեալ եւ փորձեալ. մինչեւ ոչ վկայեսցեն զնմանէ բազումք՝ գոլ բարի, եւ արժանաւոր սիրոյ եւ պատուոյ։ Զի ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն բան՝ որպէս Տէրն մեր ասէ։ Արդ՝ Հոգելոյս Հայրապետն եւ հոգեւոր ծնողն մեր Տէր Սիմէօն սրբազան կաթուղիկոսն՝ փոխեցեալն առ Քրիստոս, լսելով ի քրիստոսասէր ժողովրդոցդ օրհնեցելոյ քաղաքիդ՝ զբարւոք վկայութիւնս վանն հոգեւոր որդւոյդ մերոյ վանքի եկեղեցւոյ Տէր Ղազար [1.]) համեստափայլ քահանայիդ, (սրք բաղմակնիք թղթով վկայեալ էիք զարժանաւորութենէ դորին պատուոյ եւ շնորհի, եւ խնդրեալ էիք կացուցանել զդա ի վանքի սուրբ Աստուածածնի եկեղեցւոջդ աւագ քահանայ, վկայելով ևս՝ զի ի բաղում՝ ամաց հետէ նախնիք դորա ի գործս սրբոյ Աթոռոյս են լեալ՝ եւ ծառայեալ սմա,) հաւատաց ձերոյ բազմութեանդ վկայութեան, եւ ինքն ևս զհամեստութիւն բարուց դորին ետես՝ եւ հաւանեցաւ ետես եւ զնախնի սրբազան Հայրապետաց կնդակն՝ որով զնախնիսն դորա կարգեալ էին Աւագ քահանայս սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյդ՝ եւ գործակալս սրբոյ Աթոռոյս։ Ուստի՝ մինչ այսպէս ետես փորձեալ եւ վկայեալ ի յառաջնոց Հայրապետացն սրբազանից, եւ զդա ևս ի ձէնջ վկայեալ եւ գովեցեալ ըստ արժանւոյն՝ որպէս ասացաք, վասնորոյ պատուեաց զդա եւ փառաւորեաց, ոչ միայն ըստ ձերումդ խնդրոյ կարգելով զդա Աւագ քահանայ սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյդ, այլև գործակալ և վէքիլ ևս կարգեաց զդա սրբոյ Աթոռոյս։ Եւ երկակի գործովք և խիլաւիւ զդա փառաւորեալ, և այսպէս շքեղազարդ կոնդակ ևս շնորհեալ դմա, յղեաց ի յօրհնեալ քաղաքդ. զոր և մեք աստ գոլով՝ տեսաք։ Որև մինչև ցարդ ծառայեաց սրբոյ Աթոռոյս։ Եւ որովհետև յառաջագոյն այսպէս վկայեցաւ գա ի ձէնջ՝ որպէս ասացաք, և ի Հոգելոյս Հայրապետէն մերմէ ևս ընկալեալ եղև և փառաւորեցաւ, վասնորոյ այժմ մինչ Հոգելոյս Հայրապետն մեր առ Տէր փոխեցաւ և գա ըստ բարի կամաց նորին եկն ի սուրբ Աթոռս ընդ հոգեւոր որդւոյն մերոյ Դանիէլ խոհեմամիտ վարդապետին՝ բերելով զմահսարն օրհնեցելոյ քաղաքիդ, մեք ևս զդա կրկին փառաւորեցաք, և այսու օրհնութեան կոնդակաւս մերով՝ վերստին հաստատեցաք ի յերկոսին գործոն իւր, և արարաք զդա

պիժ՝ ևս մերովս հոգևոր հրամանաւ և իշխանութեամբ Ուազ քահանայ սրբոյ Աստուածածնի եկեզեցւոյդ Մերոյ Տէրունւոյ, և գործակալ և վէքիլ սրբոյ Աթոռոյս և մեզ: Ուստի՝ ու զոր ինչ կանոնս եգեալ էր ի վերոյ դորա Հոգելոյս Հայրապետն մեր ըստ կանոնաց առաջնոց Հայրապետացն՝ վասն վէքիլութեանն դորին սրբոյ Աթոռոյս՝ և Ուազ քահանայութեանն, ահա զնոյն կանոնն գրեմք և մեք՝ և յատկացուցանեմք աստէն, զորս հարկ է դմա առնել: Նախ՝ պարտ է դմա" (Լայլն դրեա կարգաւ, զոր գտցես ի տետրն շարագրութեանց, որ յաւուրս Հոգելոյս Հայրապետին Սիմէօնի գրեցեալ, ի 22, 22Ա, և 22Բ, համարսն, զսկիզբն և զվերջն:)

Արարաք վերստին վէքիլ և գործակալ սրբոյ Աթոռոյս, և Ուազ քահանայ սրբոյ Աստուածածնի եկեզեցւոյդ՝ փաշիկայ":

Քազդրութեամբ և խոնարհութեամբ ընդունել զդա վերստին, և հպատակ կալ յամենայնի": Գրեցաւ ի ՌՄԻԹ ի հոկ.:



Թուղթ շնորհակալութեան ի վերայ Թիֆլիզու քաղաքին, վինչ յղեալ էին զմահսարն ընդունողական՝ Ծորում՝ և պատուէրք՝ և վասն ժոմի նմա՝ զի տացին, որք յերկուս ամս վասն ա՛յսչափ ղուխանց չէին տուեալ:

Թուղթ ի վերայ նոյնիսկ դիտաց, Հաշտրախանու և այլոցն, վասն վախճանման Հոգելոյս Հայրապետին Տեառն Սիմէօնի, և յաջորդելոյն զաթոռս սուրբ Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսի:

Թուղթ ի Պետրոբօրք առ Յովհաննէս Աղայն, վասն անցից սրբոյ Աթոռոյս և մեր, այսինքն վախճանման Հոգելոյս Հայրապետին մերոյ Տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսի, և յաջորդելոյ զսուրբ Աթոռս Տէր Ղուկաս սրբազան կաթուղիկոսին: Եւ վասն յղելոյ ըզ-ղխուղթն լուսահոգւոյն, զորս գրևալ էր և յղել կամէր էհաս վախճանն և մնաց: Եւ վասն քանից նոյն թղթոցն, զի և յինքնէ իմացեալ զայնս՝ հոգ տարցէ գրևցելոցն: Եւ զի՝ զոր ինչ հոգալ կամիցի անդ Յովսէփ վարդապետն վասն նորապատահ ցաւոց սրբոյ Աթոռոյս, օժանդակեսցէ նմա, և միասին հոգասցեն: Եւ քանք սիրոյ ըստ պատշաճին:

Թուղթ առ Էդիազար Աղայն ի Մոսկով, ըստ նոյն մտացն՝ որպէս ի վերոյ առ որդի սորին Յովհաննէս Աղայն:

Թուղթ ի Մոսկով առ Նազարէս Աղայն, ըստ մտաց վերոյգրևալ թղթոց:

Թուղթ ի Պետրոբօրք, առ Ջուղայեցի Մարգարն և Փիլիպպոսն. ըստ մտաց վերոյգրևցելոց թղթոցն, որք նղբարք էին:

Թուղթ ի Մոզտօք, ըստ մտաց վերոյ գրևալ թղթոցն, առ գործակալսն սրբոյ Աթոռոյս Գևօրկինն և Մանկասարն: Առ որս և յղեցաք զամենայն թուղթս այնց կողմանցն, յղել ի ձեռս Յովսէփ վարդապետին ուր և իցէ:

Թուղթ առ Հաշտրախանու նուիրակ և Առաջնորդ Յովսէփ վարդապետն, յաղագս նոյն վերոյ գրևցելոյ անցիցն. այ-

սինքն՝ վախճանման լուսահոգի Հայրապետին մերոյ Տէր Սիմէօն սրբազան կաթուղիկոսին. եւ յաջորդելոյ Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, եւ յաղագս այլ իրաց որք գրին ի ներքոյ, ժանաւանդ՝ սակս թղթոց լուսահոգւոյն զորս գրեալ էր՝ եւ յղել չկարաց, մեք յղեցաք։

Թուղթ շնորհակալութեան ի մեծն Պօլիս, առ մահտեսի Ցարութիւն Ամիրայն. վասն ուրախանալոյն ընդ Հայրապետ նստիլն նորոգ սրբազանիս մերոյ Տեառն Ղուկասու կաթուղիկոսի, եւ ջատագով լինիլն առ այն, եւ այլ բազմատեսակ հարազատութեանցն,

Ցորմէ ժամանեցի թուղթ սիրոյ՝ ողջունի՝ օրհնութեան և շնորհաց, հանդերձ Աստուածային յատուկ ոգորմութեամբ և նախախնամութեամբն, և հոգեպարար շնորհօք և զօրութեամբք Աստուածէջ սըրբոյ Տեզւոյս՝ և համայնից հրաշագործ սըրբութեանցն որք ի սմա. ի վերայ իսկական և ճշմարիտ սիրելւոյդ մերոյ ի Քրիստոս. հարազատ բարեկամի. և ստոյգ ցաւակցի. և օգտական՝ հաւատարիմ և սրտացաւ որդւոյդ սրբոյ Աթոռոյս. զօրացելոյդ Տերամբ Ճիսուսիւ, բարեպաշտօն և մեծահաւատ, աշխուժական և շքեղապանծ իշխանապատուիդ մեծի՝ մահտեսի Ցարութիւն Ամիրայիդ։ Եւ Աստուածապահ տան քումդ և ընակութեան, ի Տէր զօրացեալ որգւոց, և դստերացդ և համայն ընտանեացդ, ճշմարիտ սիրելեացդ և ստոյգ բարեկամացդ, Տիրապարգև ընչից և ստացուածոցդ, և ամենայն ընդ օրհնեալ յարկաւ քով եղեալոցն ի Տէր խնդալ յարաժամ։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ շնորհազեղուն օրհնութեան նամակիս, ծանուցումն լինի սիրելւոյդ մերոյ ի Քրիստոս, և հարազատ որգւոյդ սրբոյ Աթուոյս Էջմիածնի։ Զի ըստ որում ասէ Տէրն մեր ի փրկագործ Աւետարանի իւրում թէ՝ ծառ բարի՝ պտուղ բարի առնէ. տեսանեմք այժմ զսիրելիդ մեր՝ զբանաւոր ծառդ Աստուածատունկ. զաճեցեալդ ի գնացս հոգւոյն վտակաց. և զբարձրացեալդ փառօք՝ պատուոք և ճոխութեամբք յառաջ ըերեալ զպտուղս բարիս և Աստուածահաճոյս, քաղցրացուցիչս քմաց հոգւոյ, զօրացուցիչս սրտի, և պաբաբեցուցիչս անձին, քանզի գրեալ էր մեզ հոգևոր որգին մեր և ծայրագոյն նուիրակն օրհնեցելոյ քաղաքիդ Մինաս Աստուածաբան վարդապետն զհարազատարար ցաւիլդ ընդ այսքան ձախորդութիւնս պատահեցեալս սրբոյ Աթոռոյս ի գառն ժամանակիս, և զվշտանալդ. և զբազմադիմի սիրով ուրախանալդ ընդ կոչիլս մեր ի յայս պաշտօն. և զյամենայն կողմանէ ջատագովութիւնդ, և զսրտացաւաբար հոգալդ։ Եւ թէպէտ՝ դեռ ի սիրելութենէ քումմէ գիր ոչ եմ ընկալեալ՝ առ ի մխիթարութիւն ցաւոք լցելոյս, այլ այսոքիւք բարի համբաւօքս որ զքէն՝ բաւականապէս մխիթարեցայ. ցնծացայ հոգւով և ուրախ եղէ։ Վասնորոյ՝ և շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցի զգերազնիւ հարազատ և զցաւակից սիրելիդ իմ իսկական. և առաջի Աստուածաէջ սրբոյ Տեզւոյս ըզպազատանս հանդերձ արտասուօք մատուցի առ նա. հատուցանել քեզ զփոխարէնն այգըր ճշմարիտ սիրոյ և հարազատութեան. և պարգևել քեզ զոգորմութիւնս և զշնորհս մարդասիրութեան իւրոյ։ Որ եւ լիցի ընդ քեզ յամենայն կեանս քո, եւ հասցէ քեզ միշտ ի թիկունս օգնականութեան. եւ որպէս դու զմեզ մխիթարես բազմատեսակ սիրով եւ հարազատութեամբգ, զքեզ եւս մխիթարեսցէ Տէր յամենայն վշտաց, և մի տացէ քեզ տեսանել զտրտմութիւնս անձնամաշս։ Արդ՝ ազնիւ սիրելիդ իմ. ահա զամենայն ինչ գրեալ եմ ընդ սիրելւոյ որդւոյն մերոյ Պետրոս Արքեպիսկոպոսին, և ակնագէտ եմ պատասխանեաց նոցին, առ ի յառաւել դիւրութիւն և ի մխիթարութիւն ցաւոք վարանելոյս։ Այժմ՝այս զոչինչ ունէի երկարապէս գրելոյ, միայն զհամբուրգ բարի լսելով, և բարութեանցդ պտղովք պարսրելով ի սիրտ և ի հոգի. զայս թուղթ շնորհակալութեան և կրկին օրհնութեան

առ աղնուութիւն քո գրեցի, ի լաւս առաւել ընդունիլ քեզ զօրհնութիւն և ըզշնորհս յԱստուծոյ՝ և ի սրբոյ Աթոռոյս. զի և ևս աճեցեալ և գեղազարդեցեալ հոգեկան մարմնական վայելչութեամբք, աճեցուսցես և զպտուղգ բարութեան. ի յառաւել զմայլումն արամալի սրտիս, որով և հայցեմ ի յաղնիւ սիրելութենէդ, զի ևս առաւել փութասցիս ի մխիթարել զմեզ և օժանդակել յամենայնի։ Եուսամ՝ թէ՝ մինչև ցհասանիլն առ ձեզ սոյն թղթոյս, ըզՊետրոս վարդապետն մեր լետս իցէք գարձուցեալ առ մեզ պատասխանեօք թղթոց մերոց՝ և արքունական հրովարտակօք։ Ապա թէ՝ տակաւին յայդր լինիցի, խնդրեմ շուտով հոգ տանել՝ բանից դորին, և լետս առ մեզ ուղևորել։ Զինչ այլ ևս գրեցից սիրելիս իմ, ըստ որում յամենայնի գիտեմ զճշմարիտ սէրդ և զհարազատութիւնդ որ առ մայրս քո լուսաւոր սուրբ Աթոռս, և առ մեզ՝ ի բնէ անտի, և թէ դու զօգուտն սորին և մեր ցաւակցաբար չհոգայցես՝ որպէս և մինչև ցարդ հոգացեալ ես, այլ ո՞վ է հոգալոց. զի շնորհօքն Աստուծոյ ահա դու ես այսօր ի յօրհնեալ մայրաքաղաքդ վան ամենից հոգացօղ, և գլխաւոր, և ցաւեցօղ վան հասարակութեան, ևս առաւել՝ չանացօղ օգտից սրբոյ Աթոռոյս, և մեզ յատուկ և սրտացաւ սիրելի։ Որ ի ի հարկէ ոչ ես կամելոց երբէք զվնասն և զանուանարեկութիւն և զստորանկումն սրբոյ Աթոռոյս՝ գահոյս Աստուածափոխ՝ և մօրս լուսածնի, որ է յատուկ պարծանք ազգիս Հայոց։ Զոր որպէս իբրև զմայր և զծնող խնամեալ են հոգելոյս նախնիքն ձեր, պահելով ի յարգի և ի վերոյ քան զամենայն զպատիւ սորին և զանխոնարհելի իշխանութիւնն հոգևոր. և առ ձեզ են հասուցեալ. այժմ ևս ձեզ հարկ և պարտականութիւն՝ զլուսահոգի նախնեաց ձերոց զշաւիղն պահել և ընդ նոյնս ընթանալ. և զսրբոյ Աթոռոյ մօրս ձերոյ զպատիւն ի նոյն յարգութեան և ի բարձրութեան իւրում պահել. զի նման նոցին օրհնութեանց և գովութեանց բազմաց արժանասջիք, և մի ի ձեր աւուրս զրկեսցի մայրս ձեր ի յիւրոց արժանավայելուչ պատուոց և ի յարգութեանց, և լինիցիք մեղադրելիք ի լետագայից ձերոց, զոր մի արասցէ Տէր։ Սիրելիդ իմ, ըստ որում և գիտեմ զսերտութիւն և զճշմարտութիւն անկեղծ սիրոյդ, ակն ունիմ ևս առաւել քան զառաջնոցն՝ տեսանել ի քէն զջանացողութիւնս օգտից ս. Աթոռոյս և յարգութեան պատուոյ սորին, զոր և տեսանելոց իսկ եմ Աստուծով։ Վասնորոյ խնդրեմ զդոյնս ջանալ միշտ, և մխիթարել վշտացեալս ամենակերպ տրտմութեամբ։ Ահա զլուսահոգւոյ լետին բերթի և ֆերմանի սուրբ թուղթն յղեցաք յայդր, խնդրեմ մեծաւ հարկիւ և սիրով հոգ տանիլ լաւապէս, և նման նոցին անպակասօրէն հոգալ ըզբերթն և զֆերմանն մեր, յորում և լինիցին կարնոյ և կարսոյ քաղաքաց և երկրաց անուանքն՝ որպէս էին յառաջուանն. և մի ինչ պակասեսցի յառաջնոյն, զոր յոյժ աղերսելով խնդրեմ, ի սէր և ի պատիւ մօրս քոյ լուսաւորի ս. Աթոռոյս և ի սրաագիւրութիւն մեզ։ Ի յորս և զայս ևս խնդրեմ նորապէս յաւելուլ տալ և գրեցուցանել, թէ վախճանեալ կաթուղիկոսի ինչքն մի իշխեսցէ ոք միրի մալի առնել, այլ յԷջմիածին եղեալ աղքատ միաբանիցն լիցի սյն, զի անգ վայելեսցեն, և աղօթեսցեն վասն կենաց թագաւորին և զաւակաց իւրոց։ Քան՛զի ահա լուեալ ես և գիտես զկարնոյ մաքսապետի արարսն, ևցէ թէ յայլ ժամանակս ևս արասցեն. խնդրեմ զայս ևս գրեցուցանել, զի այլ մի լիցի այնպէս։ Եւ զայլ որպէսն մեր և զհարկաւոր դիտմունս իմանալոց ես ի թղթոյ հարազատիցն մերոց Մինաս և Պետրոս վարդապետացն. որոց և խնդրեմ ցաւակցօրէն հոգածու լինիլ ի փութս Աստուծոյ և ի սէր քոյ լուսաւորի ս. Աթոռոյս և մեր. և գլրել մեզ զպատասխանիս ամենից գրեցելոցն մերոց ի յուրախութիւն և ի միամտութիւն մեզ։




Թուղթ ի մեծն Պօղիս, առ նուիրակ Մինաս՝ եւ ժահսարատար Պետրոս վարդապետն, ի պատասխանի թղթոց նոցին, զորս գրեալ էին վասն տեղւոյն անցից եւ որպիսութեանց, որ յաղագս սրբազան վճռիս մերոյ։

Ծորմէ սիրով բազմաւ եւ օրհնութեամբ, եւ զօրագուշիչ շնորհիւ սրբոյ իւղման աեղւոյս Քրիստոսի՝ ծնունդումն լիցի հարազատիդդ իմոց եւ սիրելեաց. եւ ծոցածին որդւոդդ սրբոյ Աթոռոյս՝ Մինաս եւ Պետրոս Աստուածիմաստ վարդապետացդ։ Զի հասին մեզ ի ձէնջ քանիցս անգամ թուղթք. նախ ի յումեմնէ փոքրիկ եւ ստորիշ իմն՝ ի սեպ. Թ. գրեցեալ գիտութեամբ քո։ Զկնի այնորիկ՝ ի սեպ. ծԹ. առ մեր գործակալն գրեալն քոյգ Մինասայ վարդապետիդ, եւ ի հոկ. Զ. առ մեզ գրեալդ՝ ի միասին հասին աստ ի նոյ. ծԵ։ Իսկ ապա յերկուցդ ի միասին, ի հոկ. ԻԲ. եւ ի ԼԱ. գրեցեալ թուղթքն՝ հասին առ մեզ ի նոյ. ՐՀ։ Որոց ամենիցն հասու եղէ եւ իմացայ զամենայն գրեալսն ձեր. եւ ուրախութեամբ մեծաւ ուրախացաք ընդ հաւրաղատութիւն եւ ընդ ջատագովութիւնս որոր. տացաւ որդւոցն սրբոյ Աթոռոյս զորս գրեալ էիք յանուանէ. եւ շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք զամենեսեանսն. զորս օրհնեսցէ տէր եւ զօրացուսցէ։ Եւ զոր ինչ թուղթս ինդրեալ էիք, ահա զամենայն հոգացեալ յղեցաք որպէս տեսանելոց էք, թէ զառաջինն փուսուլայով խնգրեալդ, եւ թէ զյետինն փոքր փուսուլայիւն։ Զորս հասուսջիք առ իւրաքանչիւրսն. ողջոյն եւ օրհնութիւնս տալով ղմէնջ։ Այնոցիկ որոց յառաջ էաք գրեալ՝ այժմ չգրեցաք, միայն զշնորհակալութեան թուղթն զորս խնգրեալ էիք գրեցաք այժմ, որ կրկին եղեւ նոցին թուղթ։ Իսյց Ղարայ Ալվազ օղլի Պօղոսի անունն չէիր գրեալ ի շարս արտաքին վաճառականացն, աստ ծանուցին մեզ. նմա ևս գրեցաք։ Եւ ի կարգս Մուրթավէլիացն գրեալ էիր զՕրթագեղու սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ մուրթավէլին՝ Յովհաննէս Ամիրայ ի Սուլուխանն, իսկ ի կարգս Ամիրայիցն ևս էիր գրեալ Միքայէլ եւ Յովհաննէս Ամիրայք ի Սուլուխանն։ Ասա ասաց մեզ Յովհաննէս վարդապետն թէ՝ այդ երկուքդ մի են. զի ի Սուլուխանն մէկ Յոհաննէս գոյ։ Սակայն՝ մեք մտածելով թէ գուցէ Ր. յինիցին որիշ որիշ գրեցաք։ Եթէ յիրաւի մէկ Յոհաննէս է. դուք զայն որ ի վերայ երկուց եղբարցն է՝ տուք յինքեանս, եւ զմիւսն առ ձեզ պահեցէք։ Իսկ ղՖարմանի եւ զբէրաթի սուրաթան, վասն այն ոչ յղեցաք առաջ. զի կարծեցաք թէ գոն ընդ քեզ. եւ մանաւանդ այս թէ՝ ի յարքունական քեօթիւկէն են գրեալոց ի հարկէ։ Այժմ ահա ղերկուցն ևս զօրինակորն յղեցաք առ ձեզ. եւ գրեցաք սիրելւոյն մերոյ մահտեսի Զարութիւն աղնիւ Ամիրայիս, հոգալ տալ եւ յղել։ Գրեցուցանելով անպակաս՝ որ ինչ ի յառաջնումն գրեցեալք են, հանդերձ կարնոյ եւ կարսայ անուամբքն։ Եւ վասն վախճանեալ կաթուղիկոսի ընչիցն ևս գրեցուցանել խնգրեցաք, ըստ միոյ մալի մի առնիցեն, եւայլն որ ինչ հարկըն է գրիլ։ Այլ իցէ թէ՝ մինչեւ ցգալն թղթոյս՝ զՊետրոս վարդապետն յղեալ իցես յայսկոյս, սիրելիդ մեր Մինաս վարդապետ, ապա թէ ոչ, զամենայն ինչ ըստ պատշաճի եւ ըստ օրինի հոգայեալ՝ յղեսցես զդա նոքօք. այսինքն մահսարովն, եւ ֆարմանօքն, եւ այլովքն։ Այլ եւ սիրելի որգին մեր Պօղոս վարդապետն յայսքան ժամանակս որ եկաց տարագիր ի լուսաձին ծնողէս իւրմէ սրբոյ Աթոռոյս, այժմ կամիմք՝ զի ի գիրկ ծնողիս իւրոյ դարձցի, բաւական համարեալով զայսքանամեայ տարագրութիւն, մանաւանդ՝ զի եւ պիտանի ևս է մեզ ի յայս ներկայումս։ Վասնորոյ ահա զթուղթս մի նախընծայ օրհնութեամբ գրեցաք առ ինքն, եւ հարկեցաք գալ շուտով ի սուրբ Աթոռս, տուր զթուղթն ի յինքն, եւ դու ևս ասա, զի օր մի յառաջ եկեսցէ. եւ մի ղսնոտի ինչ երկայութիւն լերցէ ի միտս իւր. զի ըստ ամենայնի շահելոց է ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ։ Հարկեա ուրեմն շուտով գալ, զի ամենայնիւ օգուտ է իւրեան, որքան շուտով եկեսցէ։ Իսկ եթէ զայլ իմն սնոտի կարծիս ի միտ լերեալ՝ չկամիցի գալ, անլուր լինելով մեր գրեցելոցն եւ ապա՝ եւ դու մի պահիցես զդա առ քեզ. այլ սլուշեա ի քէն եւ հան արտաքս,

ուր և կամի երթիցէ։ Բայց դուք և զայս իմացարուք զոր գրեմքս ի ներքոյ. զի դուք զուրախութենէն զսիրոյ և ընդունելութենէն օրհնեալ իշխանաց և ժողովրդոց տեղւոյդ գրէք զորս ցուցեալ են ձեզ վասն մեր և սրտադիւր առնէք զմեզ այսպիսի բանիւք, և առ. ոմանս ևս զթուղթս խնդրէք ոակս հարազատութեան և սիրոյն որ առ մեզ։ Իսկ պատրիարքն գրեալ է ի կարին քահանայից և իշխանաց՝ էյիշել զանուն մեր յեկեղեցւոջ. և այն բարկութեամբ և սպառնալեօք։ Առիթ զայս եգեալ թէ՝ ոչ է ընտրեցեալ հաւանութեամբ ազգի, և մեծիս Պօլսոյ, և ի հաստարակութենէ միաբանիցն այլ Ռ անձանց խօսիք է եղեալ կաթողիկոս։ ԵՒլլ կարծեմ թէ՝ զայսմանէ զուք չուներիք տեղեկութիւն, և իշխանքն ևս չէն իմացեալ, այլ ինքն ի ծածուկ գրեալ է եւ յղեալ. որպէս գրեն մեզ ի կարնոյ թէ՝ միայն պատրիարքի կնիքն էր ի վերայ թղթոյն։ Եւ ի հասանիլն առ. մեզ թղթոց ձերոց, համբաւն այն ևս ի կարնոյ առ. մեզ ժամանեաց։ Արդ՝ մեք յաղագս այսր, և սակս ոմանց առաջադրութեանց նորին, զորս լսեմք թէ՝ յառաջ ածել կամի, և ի վերայ մեր կանճնս դնել, ահա գրեցաք առ. օրհ. նեալ իշխանն զթուղթ մի, զոր ի յընթեռնուլն՝ ահա և զուք իմանալոց էք։ Ուրեմն ի ներկայութեան օրհնեալ իշխանացն ամենից ընթեռնուլ տալիք զայդ թուղթդ, և տեսլիք ի՛նչ ասեն։ Զի ահա գրեալ եմք իւրեանց, թէ ի հարկէ ի կարին այնպէս դրօղն, յայդր ևս ոչ կամի յիշեցուցանել։ Եթէ առանց իւրեանց կամացն է, ընդէ՞ր առնէ. իսկ թէ իւրեանց կամօքն է, ապա թող պարզաբար դրեսցեն մեզ զմիտս իւրեանց, և ձեզ ևս աւասցեն, և զուք գրեցէք մեզ ի իմացուր։ Եւ ապա որպէս և կամին՝ այնպէս հոգասցեն զսուրբ Աթոռս։ Իսկ վասն նոր առաջադրութեանցն ևս ահա դրեալ եմք ի նոյն թուղթն իշխանացն որպէս ասացաք, անորոշաբար։ Տեսլիք թէ՝ և առ այնս ի՛նչ ասեն։ Զի թէ մեք եմք կալոց ի յայսմ աստիճանի՝ ոչ կարեմք լինիլ ակիզբն չեղեալ բանից. և քար դայթակղութեան, և մեղադրելի յետագային։ Իսկ թէ ինքն հաճիցի այնու կանոնօք մտանել ընդ այսու լծով, և կամ զայլ ոք յղել, և իշխանքն ևս կամիցին, մեք չեմք ներհակ կամաց դոցին, այլ որպէս ե. գրեալ եմք յառաջ, և այժմ ևս դրեցաք, ընդ առաջ եմք ելանելոց եկողին։ Զուք ևս ըստ այսմ խօսեսջիք ի յընթեռնուլն դոցա զմեր թուղթըն, և զինչ և կամիցին և ասիցեն, մեզ գրեսջիք։ Իսկ և զորպիսութեանց մերոց այսպէս դիտասջիք. զի երկիրս մեր և մեք կամք տակաւին ի նոյն երերմանն՝ որպէս և էաք։ Զի մինչև ցելն ամսոյն հոկտեմբերի դեռ ոչ դայր հաշտութիւն, թէպէտ երեքևեքք բազումք եղեն սակս հաշտութեան։ Իսկ ապա, որպէս թէ անուն եղև հաշտութեան, այլ ոչ կատարեալ. զի այն էր կատարումն հաշտութեան, որ ի յերկրէս վրեցեալ ժողովուրդն յետս տային. այլ ո՛չ ետուն, զպէսպէս պատճառս դնելով՝ մինչև ձմեռն ժա՛ռանեաց. և խղճալիքն այնոքիկ ի պանդխտութեան վայրի։ Թէ ի Վիրս՝ և թէ յԱրցախ գաւառի, մեռան ըստ մեծի մասին ի սովու՝ և ի պէսպէս ցաւոց, ի պատճառս անյարկ և անապրուստ դոլոյ իւրեանց։ Ուստի՝ այլ ո՛չ դոյ սոցա յոյս՝ թէ վարեցեալքն այնոքիկ յետս դարձցին, և բան հաշտութեան այնպէս կայ յերկբայս, և ամենայն ոք պաշարեալ կայ ցաւօք, գատարկացեալ ի դործոց և ի վաստակոց. զի չեն միամիտ՝ թէ այլ ևս տեսանիցեն զխաղաղութիւն։ Քանզի՝ ո՛չ միայն ի մէջ սոցա և վրացն գոյ խռովութիւն, այլ որդի Փանահին յայսմ ամի զթա՛փիղու երկիրն աւար էառ, և զքաղաքն ևս էառ։ Ցետոյ զղօրս նորա Հանին ի քաղաքէն թէպէտ, այլ կրկին պատրաստի երթալ ի վերայ նոցա, որք և ի Խօյայ ո՛չ սակաւ զաւար և զդերի առին, և ի դարնանն լինելոց է դառնութիւն մեծ։ Նոյնպէս և զԳիւլանու երկիրն բոլոր առին յաւար նոյն ղօրքն, և զիշխողն փախուցեալ յաւուրս յոլովս նստան ի մէջ նոցա, և աւար հարուին, կողոպտելով և զխշճուկ մերազնեայսն որք անդ։ Իսկ և զՋուղայու վանքն բոլոր և զժողովուրդն մերկացուցեալ թալանեցաք Ալիմուրատխան կոչեցեալն, զոր գրեալ էին մեզ անտի դառնակսկիծ հեծեծմամբ։ Ո՛կարէ թուել և ընդ գրով արկանել զկողմանցս անհնարին ւառնութիւնն, թէպէտ որքան և գրեմք յայդր՝ ծաղր երևի ոմանց,

և ղՀին կանոնս ընթեռնուն, Ամենայն ոք գիտէ ղկանոնն Հին. բայց ժամանակն մոռացուցանէ զամենսյն. բաղձացօղն թէ կամ՝ Թող առցէ ղիւորձն որպէս գրեալ եմք. և թէ կարիցէ՝ պահեսցէ ղամենայն կանոնս անստերիւրելի, Եւ թէ յո՞րպիսի գառն կացուցեն կան մնացորդքն երկրիս. զի՞րդ կարեմ գրել։ Կարճառօտ. մինչ ամենայն բնակիչք երկրիս աստ էին, որկորն ոչ լնուին տիրողի, այժմ մինչ ժասն հազիւ է աստ, և այնք ևս մերկք՝ որպէս գրեցաք. զի՞րդ կարեն լցուցանել։ Ուստի՝ որպէս յանցեալսն մերկեցին զյովով՝ որպէս Պետրոս վարդապետդ գիտէ, այժմ հասարակապէս մերկեն, թէ զմերազնեայսն՝ և թէ զայլսն, եւթեալ ի վերայ իւրաքանչիւր ուրուք զՀարկս ծանրագոյնս, թէ վասն իւրեանց պիտոյից, և թէ վասն հիւսիսայնոյն տալոյ. յորմէ զփախուստ առին բազումք։ Թողցուք զայսպիսիս՝ որք գրելով ոչ սպառին, որոց միւն բաւական է ի մաշումն կենաց, Թող թէ բազումն որոց զգլխաւորսն միայն գրեմք։ Զայսքան ևս այն ազագաւ գրեմ, զի գիտասջիք թէ յո՞րպիսի կացուցեան եմք այժմ ևս, երկու ամք են, յորս չէ ինչ մտեալ ի սուրբ Աթոռս վասն արգելմանցն ճանապարհաց. այժմ՝ ևս ամենայն գործք մեր կան ի վերայ երեսաց յամենայն տեղիս։ Ուստի՝ ցաւելով վասն մօրս ձերոյ լուսատուի, չանասջի՛ք օր մի յառաջ եզերումն գտանել առաջադրութեանցդ. զի տեսցուք թէ զո՞ր ցաւս մեր լամք։ Այլ և զայս գիտասջիք, զի յայդր ի Վալիտայ խանումն Սողոման անուամբ այր ոմն գոյ՝ որ է Թիֆլիզեցի, զոր և մեք ճանաչեմք։ Որ ԹԸ ամաւ յառաջ նշանագրեալ է յայդր վասն իւր զգուստր Թիֆլիզեցի Թաղօյենց Պարոն Մկրտումին՝ (զոր լաւ ճանաչէք.) մինչ նա ևս յայգր է եղեալ։ Եւ մինչև ցայժմ՝ յղեալ է գա վասն նշանեցելոյն իւրոյ զխարճի, և զՀանգերձ, և զորպիսահարց թուղթս։ Իսկ յայսմ ամի զբանս Հասուցեալ է առ նոսա, իբր թէ՝ Հրամանաւ տեզւոյս պատրիարքին մեք աստ տնաւորիլոց եմք, և զայլ ոմն կին ածելոց մեզ։ Ուստի՝ դրեալ էր մեզ Մկրտումն մեծաւ թախանձանօք տեղեկանալ այսմ, և Հնար իմն առնել։ Վասնորոյ և մեր Հարկեցեալ ի նորին թախանձանացն՝ ահա գրեմք Հարազատիցդ մերոց, զի զայրն զայն առ ձեզ կոչեալ տեղեկասջիք, եթէ տակաւին չէ տնաւորեցեալ, ապա՝ ասասջիք նմա մերովս բանիւ, և դուք ևս յորդորեսջիք, և ուժ և պատշաճ գիտէք ծանուսջիք, զի նոքա ևս զնա Հարկեսցեն՝ և յղեսցեն ի Թիֆլիզ ի տիրել կնոջն. զի բաւական է յայսքան ժամանակս Թողուլն զնա այնպէս և մեզք մեծ է։ Իսկ եթէ տնաւորեցեալ իցէ ստոյգ, ծանուսջիք մեզ. զի և մեք խղճալեսցն այնոցիկ զպատասխանի ինչ տացուք։ Եւ զպատասխանի թղթոյս Հանգերձ ամենայն Հարկաւոր որպիսութեամբք փութով գրեսջիք մեզ։ Այլ և զկոնդակսն զոր գրեալ էաք ընդ Պետրոս վարդապետիդ ի յՈւռուսէլի, ի Զմիւռն, և ի վիճակն արտաքին, զայնցանէ ոչինչ գրէք բնաւ և ոչ գիտացաք թէ՝ տակաւին առ ձեզ են։ Եւ թէ առ ձեզ իցեն, դո՞ւք ոչ Հասուցանէք ի տեղիս իւրեանց, թէ գոյ արգելոզ, զայսմանէ ևս գրեսջիք մեզ, Հանգերձ ամենայն Հարկաւոր որպիսութեամբք օր մի յառաջ։ Եւ լերուք ողջ ի Տէր, զօրացեալք ի շնորՀս նորին միշտ. Ամէն։ Ի ՌՄԻԹ, ի Դեկտ. Ե։



Թուղթ երրորդ ի մծբն Պօլիս առ նուիրակ Մինաս եւ մահսարատար Պետրոս վարդապետսն, ի պատասխանի ի նոյ. ԺԷ գրեալ թղթոյն իւրեանց. դարձեալ վասն ընդդիմութեանց պատրիարք կոչեցեալ Զաքարիա պետին՝ որպէս եւ վերոյ գրեցեալդ է. որ էՀաս աստ ի ղեկ. ԺԳ.

Ցորմէ սիրով և օրՀնութեամբ բազմաւ և կարօտիւ և զօրացուցիչ շնորհիւ սրբոյ իմման տեզւոյս Քրիստոսի գիտասջիք սիրելիք իմ Հարազատք. և սրտացաւք ծուցածին և օգտաջան որգիք սրբոյ Աթոռոյս՝ Մինաս և Պետրոս Աստուածծարան վարգապետք։ Զի ի նոյ. ԺԷ. գրեալ թուղթն ձեր է. Հաս առ մեզ ի ղեկ. ԺԳ. և զամենայն գրեալսն ձեր իմացաք։ Արդ՝ զթուղթան ղորս խնգրեալ էիք ի Տէր. Զ և ի ԻՒ. և ի ԼԱ

գրեալ Թղթովքն ձերովք, զայնս ամենայնսն ըստ ձերդ խնդրոյ և դիտման հոգացեալ՝ հանդերձ պատասխանեօք ամենից գրեցելոց ձերոց, յղեցաք յայգկոյս ի դեկ. ամսոյս Ե. որոց ի հասանիլն առ ձեզ իմանալոց էք։ Ընդ որս և յղեցաք զօրինական բերա. Թին և հաւաստի ֆարմանաւն, առ ի հոգալ զՔարմանսն՝ որպէս գրեալ էիք. և մահտեսի Ցարութիւն Ամիրայ սիրելւոյն մերոյ ազնուոյ և սա գրեցաք հարկիս գնդիր հոգալ տալ զամենայն անպակաս։ Գրեալ էիք զգերազանցութենէ սիրոյ՝ զըստացաւութենէ և զչատագովութենէ օրհնեալ և աստուծով զօրացեալ իշխանապետաց և իշխանաց՝ և այլ ամենայն Արևելական և Արևմտական յայդս եղեալ հարազատ որդւոցն սրբոյ Աթոռոյս, որք յամենայն զօրութենէ չանան վասն օգտից սորին և մեր. զորոց և մեք շնորհակալիւով մեծապէս, օրհնօղ լինիմք ամենից հանապազ. որք և եղեցին օրհնեալք և վարձատրեցեալք յԱստուծոյ. և զօրացեալք միշտ շնորհիւ և ողորմութեամբ Նորին։ Զի՝նչ կարծիս ունիլ պարտիմք զհարազատութենէ գոցին և զսիրոյ. զի որպէս հոգելոյս հարք և նախնիք գոցին ըստ ծնօղսսէր զաւակաց խնամեալ են զլուսատու ծնօղս իւրեանց, և զպատիւն պահեալ ըստ արժանւոյն իւրոյ և վայելման. և զօգուտն միշտ խորհեալ և արարեալ. և զորգիական պարտս իւրեանց վճարեալ յաւուրս իւրեանց. նոյնպէս և դոքա զիւրեանց որգիական պարտսն վճարելով և ընդ շաւիղս հարց իւրեանց ընթանալով արարեալ են զայսոսիկ, և առնեն, և առնելոց են յաւուրս իւրեանց. որոց Աստուած լիցի վարձահատոյց։ Այլ սակայն այսքան ինչ գոյ այժմ, զի ըստ բանին Ցոբայ զորս ես սիրէի՝ յարեան ի վերայ իմ և որ առաւել պարտ էր ցուցանել զփոյթ սիրոյ առիս, ինքն կասեալ յայնմանէ՝ կասեցուցանել չանայ և զայլսն։ Զի թէպէտ՝ զսէր հարազատ որդւոցն սրբոյ Աթոռոյս իբրև զգետ յորգեալ տեսանեմք առ մեզ յամենայն ուստեքէ՝ որպէս և այսի՝ զոր դուք գրէք, այլ պատրիարք եղբայրդ մեր որ սիրակից է լեալ մեզ ի բնէ՝ ցամաքեցուցեալ այժմ զհոսանս սիրոյն եղբայրականի, չանայ և արգելս տալ գետօրէն ընթացից սիրոյ հարազատիցն սրբոյ Աթոռոյս՝ և սիրոզացն զմեզ։ Որպէս ահա խնդրեցաք ի Կարին զյիշումն անուան մերոյ՝ և չյիշեն. զոր գրեալ եմք ի հինգն ամսոյս դեկ. և յայդր ևս մինչև ցայժմ չյիշեցուցանէ։ Լուսահոգի Ցակոբ Պատրիարքն սր չէր ցնծալ յաթոռոջս, այնքան պահեաց զպատիւն սրբոյ Աթոռոյս և հոգելոյս Հայրապետին մերոյ ի նոր յաջորդիլն, մինչ զի՝ չև ևս ընկալեալ ի նմանէ զթուղթս՝ (զորս թղթատարն կորուսեալ ի ճանապարհի՝ դատարկ էր եկեալ յայդր.) ի Վարագայ խաչի կիւրակէին յիշեալ էր զանունն։ Որ և գրէ լուսահոգւոյն թէ՝ շլացան աչք մեր գիտելով ի ճանապարհս, և ի քէն ոչ ընկալաք զթուղթ, ապա՝ մեք ի Վարագայ խաչի կիւրակէին զճրիսաոս պատարագեալ զպատուական անունդ յիշեցաք, և այլն. որոյ գիրն գեռ ևս գոյ։ Իսկ գա՝ ոչ թէ յԱթոռոջս կեցեալ միայն, այլև կաթամբ սորին սնեալ, և զօրքան երախտիս և զգիտաս ի սմանէ ընկալեալ՝ և յայդ կէտ հասեալ. ունելով և առ մեզ ի բնէ զսէր եղբայրութեան, որպէս և յառաջ եմք գրեալ իւրեան. այժմ այդքան խոչընդոտ ընթացիւք առ ոսն արկանէ զպատիւն ս. Աթոռոյս և ոտնահար առնէ զմեզ. զանուն մեր չյիշեցուցանելով, և յետսհարելով զբազումս ի սիրոյ մերմէ. և զվնասս մեծագոյնս հասուցանելով սրբոյ Աթոռոյս՝ որ ահա յամենայն տեղիս խափանեալ կան գործք սորին. և ոչ յուստեքէ մտանէ աստ փող մի՝ որպէս և յառաջ եմք գրեալ. և ի վերայ այսոցիկ չանալով և զկանոնս դնել ի վերայ մեր. և զանխոնարհելի իշխանութիւնն սրբոյ Աթոռոյս արկանել ի ներքոյ ստորագրելոց իւրոց։ Որ բաց ի յոչ ունելոյն զիրաւունս այսպիսի արարմանց իւրոց, հատեալ է ևս զլար խղճմտանացն իսպառ. և ոչ յիշէ զամենարդար դատողութիւն արդարադատին Աստուծոյ, որ բարձրեալն է և ահաւոր՝ և դատէ զերկիր. որոյ առաջի ոչ կարեն իրաւացի երևիլ ամենայն ստութիւնք և կեղծաւորութիւնք. զի զստուգութիւն խնդրէ, և հատուցանէ ամենայն ումք զհատուցումն ըստ գործոց։ Զայս միայն առեալ ի մտան՝ ցուցանէ ամենայն ուրուք՝ իբրու զիրաւունս գտեալ մեծ, թէ առանց ընտրութեան ազգի է օծեցեալ։

Ալ մեք ահա դրեալ եմք յառաջ ընդ Պետրոս վարդապետիդ և յետոյ ևս ի գեկտ. Ն. առ օրհնեալ իշխանն. զի ոչ միայն դա գիտէ զայգ իրաւունսդ, այլ և մեք, և ամենայն ոք։ Սակայն՝ ոչ եա թոյլ ժամանակն զկանոնս որոնել. զի յամենայն կողմանց շրջապատեցին զմեզ ցաւք ի պատճառս դառնութեանց ժամանակիս և երկրիս։ Որք էին բազմադիմի վնասքն՝ որք յամենայն աւուր ի յելուզակաց և ի կեղեքչաց պատահէին սրբոյ տանս՝ որպէս և յառաջ դրեալ եմք. և երկիւղ դատարկելոյն և անշէնացնելոյն սոցա զսուրբ Աթոռս, զոր անկարծիք առնելոց էին՝ եթէ յիրաւի գայր վրացին, և սուրբ տունս անտեր իցէր մնացեալ։ Զորս տեսանելով և դիտելով լուսահոգւոյն և նախահոգ լինելով՝ կտակեալ էր կացուցանել զմեզ ի յայս աստիճան, առ ի չմնալ Ցանս սրբոյ յանարիւրութեան ի յայսպիսի ժամանակի։ Եւ յետ վախճանի լուսահոգւոյն մինչ կոչեցին ի վերայ մեր զայս անուն՝ (թէպէտ և չկամէաք մեք.) ահա էհաս մեզ և լուրն դալոյ Իսրայէլին. որ ի մէջ վեցից կամ եօթնից աւուրց դալոց էր անկարծիք, եթէ ոչ էին զմեզ օծեալ վաղվաղակի՝ որով խափանեցաւ խորհուրդ նորին և համախոհեցն իւրոց, զոր աշխարհ ամենայն իմացաւ Արդ՝ մեք զայսոսիկ տեսանելով և լսելով՝ եթէ ոչ էաք առեալ յանձն զայս պաշտօն, և դլխաւոր մնաս իմն հանդիպեալ էր սրբոյ տանս, և կամ ապստամբն այն եկեալ և նստեալ էր աստ, յայնժամ յամենայն ուստեքէ մեզ մեղադիր էին լինելոց. մանաւանդ դա իսկ՝ որ այժմ զմեզ մեղադրելի ցուցանէ ի մէջ ազգի և ոտնակոխ առնէ, յայնժամ քարկոծելի էր առնելոց զմեզ թէ՝ որովհետև բազմութիւնք միաբանից և երկրացւոց զքեզ ընտրեցին, և լուսահոգին եւս վասն քոյ կտակեալ էր, դու զի՞նչ մտածեցիր, և յումմէ՞ կրեցեր զկասկած, որ չառիր յանձն. և թողեր ըզտունդ զայդ հասանիլ ի այդ կէտ։ Իսկ այժմ, մինչ զայսոսիկ նկատելով՝ և զլուսահոգւոյ կտակն եւս վարկպարզի չտեսանելով և չքմահելով՝ յանձն առի և անկայ ի դուբս յայս, մեղադրելի եղէ և մեղապարտ։ Մեք զվախճանն նկատելով զայս յանձն առաք, զի անտէր չմնասցէ Տունս սուրբ. և ի յապագայ փորձութեանց պահել մարթասցուք ըստ կարողութեան, զոր և պահեցաք իսկ շնորհօք և ողորմութեամբըն Աստուծոյ և պահեմք, այնու կանոնաւ և կարգաւ, որպէս և յառաջն էր, անպակաս ի յամէնից բարեկարդութեանցն՝ և աղաստ ի վնասուցն։ Զի ոչ երեւեցաւ բնաւ թէ՝ Ցանս պյսորիկ Ցէրն պակասեալ է, և ոչ ոք կարաց ի բաց առնուլ ի սմանէ ըղծածկոյնն կամ ի վեր առնուլ զխուփն զի տեսցէ զներքինն. թէպէտ և անուպայիցն բաղձանք ի յայնս էր. որպէս և Պետրոս վարդապետդ գիտէ. այլ ամենայն ինչ մնաց յիւրում կարդի, և քօշ հարսինս անարատի ի յերեսս իւրս։ Ահա այսք պտուղք յանձն առնելոյս մերոյ զայս ծանրութիւն լծոյ, որովք թէ մեղուցեա՞լ ինչ եմք, ցուցցեն։ Այժմ գա զայդոսիկ առնելով՝ կամի քօշհերձ առնել զհարսնս անարատ, վերացուցանել զառագաստն և երևեցուցանել զմերկութիւնն, և ի փառաց իւրոց կացուցանել ապաշուք և գպատիւ փեսայի սորին արկանել առ ոտն։ Ահա դորին առ սա հարազատ որդիութեանն նշանք։ Արդ՝ մեք զվերոյգրեցեալ իրաւունսն ունելով՝ յանձն առաք զայս պաշտօն, զորս իմանալով ամենայն ոք՝ որ ունի զխիղճ յստակ, ոչ լինի մեզ մեղադիր որպէս դա՝ թէ առանց ազգի էս։ Քանզի յիրաւունս համաթուի այս՝ քան թէ ի մեզ, որպէս և Աստուծոյ է այստ. և պտուղքն թէ զի՞նչ յայտնի են՝ որք են յամենայնի օգուտք. իսկ վնաս և ոչ միս։ Դա զի՞նչ իրաւունս ունելով զայդոսիկ առնէս։ Երևի ահա իրաւունք և ոչ մի. իսկ պտուղքըն բազմալնասք՝ յոգունք յայժ. զորս ըստ մասին ցուցաք ահաս Ուրեմն՝ որպէս դրեալ եմք յառաջ օրհնեալ իշխանացդ, և յետոյ ևս ի դեկա. ամսոյս Ե. զոր ձս տեսեալ են ի հարկէ. ղայսոսիկ եւս ծանուցեք դոցա, ողջոյն և օրհնութիւնս մատուցանելով ամենեցուն ղմէնջ։ Որպէս ղի՛ իմասցին լաւապէս ղարարմունս և ղպտուղս արարանցմեր և դորա և իրաւունս արասցեն յԱստուածակոյս կողմանէ՝ և ի փառս Աստուծոյ. և տեսցեն, եթէ մեղուցեալ ինչ իցեմք մեք. և ունիցի դա ղզօրեղ իմն իրաւունս, որոց վասն և կալս մեր ի սոյն պաշտօն անհաճոյ լինիցի դոցա, ապա թող

գրեսցեն մեզ պարզապէս. ղի և մեք իմաստուք, և յանձն առուք և հնազանդելով կամաց գոցին՝ յետս կացցուք՝ և գացուք մեզ ղկեանս ինչ առանձին. և յայնժամ՝ թէ զգա իցեն յղելոց աստ՝ և թէ ղայլ ոք, ինքեանք գիտասցեն։ Իսկ եթէ ո՛չ ե. աւեսցին մեզ մեղք ինչ և, ո՛չ գացի դմա զօրեղ իրաւունք, յայնժամ գիտասցեն յայտնապէս, զի ո՛չ այլ ինչ իրաւունս ունի գա, այլ յանիրաւ նախանձու և յանզուսպ բերանոց ոմանց գրգեցեալ զայգոսիկ առնէ։ Եթէ այն է նախանձ գորա՝ թէ ընդէ՞ր ես ո՛չ նսեայ կաթողիկոս, թող եկեսցէ բարեաւ որպէս և իւրեանն գրեալ եմ, գիտէ Աստուած՝ զի պարզ սրտիւ և լրջմտութեամբ գրեմ։ Երբ և եկեսցէ, յանձնեցից ինքեան զաուունս սուրբ։ զոր իւրով ամբողջ կուսութեամբն պահեալ եմ՝ շնորհօքն Աստուծոյ մինչև ցայս կէտ, և պահեմ, և ես առանձնացայց յուրեք որպէս գրեցի. զի սեւագլուխ եմ՝ չէ ինձ պակաս կաւոր մի հացըն։ Թող ինքն սրտաշաւղ լինի այսու, ինձ հոգ չէ որպէս և իցեմ։ Եւ մի իմովս պատճառաւ պղտքան ի ներքոյ ոտից առնուցու զսուրբ Աթոռս և զսորին հոգեւոր իշխանութիւնն։ Զի ղհրամանն արքունի ոչ թէ գա՝ այլ ով ոք և իցէ, որ ունիցի զայն ի ձեռին, առնել կարէ զոր ինչ և կամիցի։ Ուստի՝ ոչինչ է դմա պարծանք սպգպիսի իշխանութեամբ ըմբռստանալն, թող զնիղճն քրիստոնէութեան և մանաւանդ կարգաւորութեան ածցէ ի գործ, որով կարիցէ ըստանալ զպարծանս, առաջի Աստուծոյ և մարգկան։ Ահա որպէս և գրեցի, ծանուցանեմ զայս ամենայն իշխանապետաց և իշխանացն օրհնեցելոց, զի գիտասցեն, և իրաւունս արասցեն. և թէ յիս ոչ խնայեն՝ գոնէ՝ ի հաւատոյ մայրս իւրեանց ս. Աթոռըս խնայեսցեն. և մի այգքան զբանգ զայգ թողուցուն ի վերայ երեսաց, որ է ամենայնիւ միտս մեծ և քակտումն ոանս սրբոյ։ Եւ եթէ կամին գարձուցանել զՊետրոս վարդապետ՝ թող օր մի յառաջ գարձուսցեն հանդերձ հարկաւորօքն մերովք որպէս գըրեալ եմք իւրեանց յառաջ Զպատասխանի Թղթոյս օր մի յառաջ գրեսջիք առ մեզ։ Ողջ լերուք ի Տէր։ Ի ՌՄԻԹ. գեկ. ժԵ։


Թուղթ ի հաշտարխան հրկրորդ առ նուիրակ եւ Առաջնորդ Ցովսէփ վարդապետն, ծանուցանելով զյղելն յառաջ քան զայս եւս զթուղթ առ ինքն ի նոյ" Ա. (որպէս ցուցեալ է ի վերն ի համարն 144.) եւ այժմ եւս կրկին հարկ՝ հոգ տանիլ այնց ամենից զրեցելոցն, թէ լուսահոգւոյն եւ թէ իւր։

Ցորմէ սիրով իսկականաւ կարօտիւ բազմաւ, հոգևւոր օրհնութեամբ և զօրացուցիչ շնորհիւ սրբոյ իշման տեղւոյս Քրիստոսի, գիտասջիր սիրելի որդիդ մեր որբեցեալգ իմ ի Քրիստոս. ի բնէ իսկ հարազատ և քրանաջան զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Ցովսէփ Աստուածաբան վարդապետս։ Զի յառաջ քան զայս ի նոյ. ամսոյս Ա. զԹուղթս յղեցաք առ քեզ. որք էին յաղագս փոխելոյն առ Քրիստոս հոգելոյս Հայրապետին մերոյ, և սակս մերս յաջորգելոյ զԱթոռս սուրբ ըստ կաւակի լուսահոգւոյն՝ և ըստ թախանձանաց միաբանից սրբոյ Աթոռոյս և երկբացուցոս։ Որք և փութով իսկ կացուցին զմեզ ի յայս աստիճան՝ յաղագս բազմավրդով սասանմանց երկրիս և մեծամեծ պնասուցն՝ որք հանդիպելոց էին սրբոյ Աթոռոյս, որպէս գրեալ եմք քեզ յայնժամ։ Եւ ընդ Թղթոցն այնոցիկ՝ մեծ պահարանով Թուղթ մի եւս յղեցաք, որ էր լուսահոգւոյնն։ Զի որպէս և գրեալ եմք յայնժամ, գրեալ էր լուսահոգին զամենայն Թուղթսն ղորս խնգրեալ էիր դու. և զամենն հդեալ ի պահարանի՝ ունէր ի պատրաստի զի ի հանդիպիլն գնացողի ուրուք հաւատարմի ի Թիֆլիզ՝ յգեսցէ անդ՝ զի հասուսցեն առ քեզ։ Իսկ չև ևս յղեալ զայն, էհաս վախճանն, և պահարանն այն մեաց աստ։ Եւ զի պատուիրեալ էր զկնի վախճանի իւրոյ յղել զայն. վասն այն և մեք ընդ մեր Թղթոցն յղեցաք։ Զի մինչև յայնժամ՝ ոչ գոյր ճանապարհ և դնացօղ ոք հաւատարիմ, վասն այն այնքան յետացուցաք աստ՝ որպէս և յայնժամ գրեալ եմք։ Բայց զի՝ տակաւին ի Մօղաոք ժամանելն այն Թղթոցն չիմացաք, վասն այնորիկ անկանիմք յայլևայլ կարծիս, թէ

գուցէ ոչ հասանիցին առ քեզ։ Ուստի՝ այժմ զայս Թուղթս եւս համառօտ գրեալ՝ յղեցաք ի Բաքուր առ պ. Եղիազարն՝ հասուցանել առ քեզ, (զի այժմ հազիւ կարացաք յայն կողմունսն եւս զԹուղթս գրել. այն եւս ոչ ուղղակի ճանապարհաւ որ գեռ աչ գայ, այլ ի վերայ Վրաստանու՝ որ յատուկ մարգով, յատկապէս վասն այս Թղթոյս՝ քան թէ այլոցն.) որպէս զի՝ ծանիցիս զյղեալն մեր զայն Թուղթսն. և թէ տակաւին ոչ իցեն առ քեզ հասեալ ի խըղճիր եցես, թերևս գտանել կարիցես։ Մեք զայնս յղեցաք ի Թիֆլիզ առ Տէր Աբրահամ ըստ քոյգ գրեցելոյ, որ գրես յղել առ նա՝ զի նա քեզ հասուսցէ։ Զորս մեր Գալուստ վարգապետն տարաւ անգ. զոր յղեաք առ Հերակլ Ալբայն ըստ խնդրոյ մեր խանին ի բերել զժողովուրդսն՝ զորս աստի վարեալ տարան. որ ոչ ետ, և գատարկ գարձաւ։ Եւ Տէր Աբրահամ յղելոց էր զայնս ի Մօղոսք՝ առ մեր գործակալ Գեօրկին և Մանկասարն, զի և նոքա առ քեզ հասուսցեն, որպէս և գրեալ էաք նոցա։ Արդ՝ թէ սչ իցեն հասեալ առ քեզ. հարց զնոսա։ Իսկ թէ առ նոսա եւս չիցեն հասեալ, մեզ ծանո շուտով։ Ս՚ր գրեալ Թուղթքն էին ի վերայ քոյ, և Ներսէս, Եղիազար, և Ծովհաննէս Աղայիցն, պ. Մարգարին և Փիլիպպոսին։ Կոնդակ մի հասարակ ի վերայ երկրին, մի եւս յատուկ առ Ղրմցիան, և նոցին իշխանացն եւս յատուկ։ Իսկ լուսահոգւոյ գրեալքն էին քո ամենայն խնգրեալքն։ Իսկ երկրորդ հարկաւորութիւն սոյն Թղթոյս է սյս, զի յղելոյն առ քեզ զայն Թուղթսն՝ փոքր մի բացեալ զայրէր ի ցաւոց, հետախոյզ եղաք Թղթոց և մուսավատայից լուսահոգւոյն առ ի գտանել և ի գիտել ղբազում ինչ՝ զորս հարկէր մեզ գիտել։ Եւ ի յորոնելն մեր զայնս, ընթերցաք և զամենայն Թուղթսն քո րոլորապէս՝ զորս գրեալ ես առ լուսահոգին, և զնորին առ քեզ գրեալսն՝ Թէ յառաջ և Թէ յետոյ՝ զորս մեք յղեցաք առ քեզ։ Եւ տեսաք ի յետին Թուղթսն զյոյժ հարկաւոր և զնիւթաւոր բանս գրեալ առ քեզ։ Վասնորոյ՝ ահա այժմ գրեմ սիրելի որգւոյգ հարկաւորապէս՝ զի զայն ամենայն զորս գրեալ է քեզ լուսահոգին առնել և հոգալ, հոգ տարցիս ամենիցն բարւոքապէս, և հանցես ի գլուխ իրրու ի մէնջ եւս իմանալով պատուիրեալ քեզ զայնս։ Մանաւանդ վասն Իսրայէլին կինջ րառիւ բան է գրեալ քեզ, և զպատուէրս յոլովս գրեալ առ այն՝ պատրուակաւ։ Լաւ վերահասու լեր այնմ, և զգուշացիր ամենայն մոխ վայրացդ, զի մի զբազումս խմորելով՝ ի բուն պետն եւս ըզբանս հասուսցեն. և վերստին առաջինն լիցի, և ջանք լուսահոգւոյն ի գերեւս ելցէ։ Ահա այս քեզ զգուշութիւն մեծ։ Զի որպէս զսուտ իմն տոմսիկ հանեալ ի վեր՝ զառ հայրենեօքդ եղեալսն ասէին գոլ բոլորապէս նստարանին Ցուսեայ որդւոյն, (զոր և այժմ հաստատեն յոյժ, և ջանս ի յաւնըս ունին եղեալ։) Նոյնպէս և այժմ նա զԳարգարացւոցն կողմանց վիպաբանութիւնսըն այլ ընդ այլով մեկնելով, զհոնս և ըզՄասքութս՝ և որք անդր քանզ Ռէ մինչեւ ցրուն իսկ բեւեռն՝ ասէ գոլ ի հաշիւս բաժնից տածողի սերնգոցն Առանայ։ Զոր և ժանգակիւն հանդերձ՝ ի նոյն յիշեալ նստարանըն կապել բաղձայ. Թէպէտ աներևոյթ և է չքմեղս առ մեզ ամենայնիւ. այլ է կասկած՝ Թէ յանկարծ լիցի զոր ինչ ախորժեսն։[14]) Քանզի և զնստարանն իւրեանց հռչակէ լեալ ի բնէ, իսկ նստիլն անդ Թէպէտ առերես այն Թէ՝ իցէ օրինօք նախկին եւցոն անդ, այլ զոր ունին զանպատկանն ինքեան, (որպէս և Թռչնոյ ումեմն անպատկան կոչումըն) ոչ ինքն կամի Թողուլ ի բաց, և ոչ օժանդակն՝ որ էածն անդ, Թէպէտ տակաւին զանխուլ։ Գրեցի ի գիտել քեզ։ Իսկ Աբեղայն Մովսէս՝ որ յերուսաղէմ եկեալ յայդր՝ այսր գարձաւ ի Սաղիմ, դիմեալ է յայդր վերստին անուամբ նուիրակութեան ի վերայ Ուռումելոյ։ Երկուք եւս որիշ. մինն յառաջ, եւ մինն ընդ նմա։ Ըստ նոցա զկարծիս առեալ Պօլսոյ նուիրակ Մինաս պետին Թէ՝ այլով դիտմամբ իցեն դիմեալ յայդր, գրեալ էր մեզ շուտով գրել քեզ լինիլ զգոյշ։ Եւ մեք յայնժամ գրեցաք քեզ, եւ զԹուղթ Մինաս վարդապետին եւս յղեցաք առ քեզ ի տեսանել և հոգալ. որպէս և հոգացեալ իցես, գրեսցես մեզ։ Եւ վասն Հասանմանսուրցի մահատեսի Յակոբին եւս գրեցաք քեզ յղել ասա. որ ասա կին ունի, եւ լսեմք Թէ՝ յայդր

եւս կին է առեալ. գրեցաք որ Թողուլ տացես և յղեսցես աստ, եղբարք եւս գոն դմա Ր՝ մահտեսի Մովսէս եւ Աւետիք ա-նուամբ. որք յայս մեր գեղջս եւս կացեալ են՝ եւ ճանաչես լաւապէս: Այնմ՝ եւս հոգս արարեալ՝ գրեսցես մեզ զորպէսն հանդերձ ամենայն որպիսութեամբք քո՝ և կողմանցդ. եւ զորս գրեալ էիր ի մարտի Զ. եւ ի ծԳ, եւ ի մայիսի Ի. առ. լուսահոգին՝ զորս մեք ընթերցաք, զնոցին որպէս եղերիկն եւս գը-րեսցես, եւ մի պակասեցուսցես զԹուղթսդ: Իսկ այժմոյս մեք եւ սուրբ Աթոռս թէպէտ եմք ի հանդարտութեան սակաւ մի՝ որով՝ հետև ձմեռն է. այլ ոչ եմք յոյժ անհոգ-րայ ի կրկին խռովութենէ. զի ոչ գոյ կա-տարեալ հաշտութիւն. թէպէտ և առ երես խաբեն զիրեարս: Իսկ Թարվիզու կող-մունքն եւ տունն պարսից ի վրդովման կան յոյժ. եւ գՋուղայու վանքն կողոպ-տեալ են իսպառ: Առ որս գրեցաք այժմ զմխիթարութիւն, և չգտանելով այս կող-մամբս ճանապարհ, ընդ այս թղթոյս ի Բաքու յղեցաք հասուցանել ի Գիլան, թերևս անտի յղել կարասցեն ի Սպահան, թէպէտ եւ զԳիլանու երկիրն առին յաւար, զոր ի հարկէ լուեալ ես, չգիտեմք թէ՝ անգ եւս ո՛վ մնաց: Իսկ եւ զմահսարսն մեր յղեցաք յառաջագոյն ի Պօլիս ըստ սովորութեան, որպէս և քեզ գրեալ եմք յառաջ: Այժմուս գիր առաք անտի՝ զոր գրեն մեզ Մինաս վարդապետն մեր և այլ հարազատք, որ սուգ մեծ է եղեալ հասարակութեան քա-ղաքին վասն մահուան լուսահոգւոյն. եւ ապա ուրախացեալ ամենեցուն ընդ կոչումն նոր մեր՝ կամին ըստ օրինի գրել զթուղթս համահաճականս: Իսկ պատրիարք եղբայրն մեր քանեօք ոմամբք պատառաքաղիւք որք լսեն նմա, զայլ ինն խորհելով ընդ դէմ ա-ռաջնոցն կանոնաց, կամի ղկանոնս ոմանս գնել ի վերայ մեր. եւ զանխոնարհելի իշ-խանութիւնն սրբոյ Աթոռոյս արկանել ի ներքոյ կանոնի՝ եւ ստորադրելոց հրամանի: Իսկ իշխանքն ամենեքեանքն կան նմա գի-մակայեալք սակս այսր. և ոչ թողուն յա-ռաջացուցանել ինչ, թէպէտ նա ջանայ եւ մեք գրեցաք անգ ղոր ինչ պատշաճն էր: Որ և չէ իսկ յառաջանալոց. քանզի յոյժ են զօրեղք՝ որք ճշմարտութեան են վրէժ-խնդիրք: Գրեցի զի գիտասցես: ՈՂՋ լեր ի աէր: Գրեցաւ ի ՌՄԻԹ, ի դեկ. ԻԳ:

Թուղթ ի Շիքլիզ ի վերայ մեր ջե-ղունի վիճակացն, վասն վէքիլութեան Կարապետ վարդապետին, մինչ զա-ռաջնորդ Յովաննէս վարդապետն խնդ-րեաց սրբազանն գալ աստ, եւ զնա վէ-քիլ արար:



1781



Ի ՈՒՂԹ-ԼՏՈՒՆՈՐ

Նախիջեւանու Գումբեռնաթի Ենարալ՝ Պօռօշիկ եւ կաւալեր Վասիլ Ալէքսէիչ Զէրթկովիդ, ծանուցանելով զվախճան Տօքեցոյս Հայրապետին մերոյ Տեառն Սիմէօնի, եւ զիւր յաջորդին յաթոռ Հայրապետութեան՝ Ցիշեցուցանելով եւ զգրելն առ ինքն լուսահոգւոյն զյանձնարարութիւնս վասն Նախիջեւանցւոցն, եւ նոր եւս ինքն զյանձնարարութիւնս գրելով, եւ զսէր՝ եւ զօրհնութիւնս՝ որպէս վայել էր։

Ցորմէ ժամանեցի Թուղթ նորապար գեւ սիրոյ, նախընծայ ողջունի Քրիստոսականի, եւ Անդրանիկ օրհնութեան հանդերձ ամենառատ ողորմութեամբ Մարդասիրին Աստուծոյ, եւ հոգեպարար Շնորհօք եւ զօրութեամբք սրբոյ Ցեղւոյս իմմանն Միածնի. եւ նորին պատուական Արեամբ ներկեալ Գեղարդեանն սրբոյ։ Ալլեւ՝ Հրաշագործ Աջոյ լուսատուին հոգւոց մերոց սրբոյն Գրիգորի, եւ Աստուածային փառացն հանգըստարան յոդնաղօր Մասանց եւ Գամբարանաց Սրբուհեաց կուսանացն Հռիփսիմեանց եւ Գայիանեանց եւ պլ ամենայն Աստուածակիր սրբութեանցն որք աստ ի վերայ սիրեցելոյդ մերու, դերազնուոյ, եւ Աստուածաէջ Գահիս մերոյ սրբոյ օգտասէր բարեկամի, Քրիստոսասիրի՝ եւ զօրացելոյ միշտ ի նոյն, բարեպաշտի եւ Մեծահաւատի, Աստուածազօր եւ ինքնակալ Կայսերուհւոյն մեծի Հաւատարմի. եւ Տիրախնամ երկրիդ Ազովու եւ բարեճոխ քաղաքիդ Եկատերինենալաւու Գերապատիւ եւ պերճափառ Գումբեռնաթի, Ենարալ՝ Պօռօշիկ եւ կաւալեր Վասիլ Ալէքսէիչ Զէրթկովիդ։ Եւ Աստուածապահ տան քում եւ բնակութեան, եւ նովիմբ զօրացեալ որդւոցդ եւ դստերացդ՝ եւ համայն ընտանեաց եւ ազգայնոցդ, ճշմարիտ սիրելեացդ եւ բարեկամացդ, եւ ամենից հարազատաց քոց՝ եւ հպատակելոց քեզ. եւ այլոց ամենեցունց որոց քո են, խնդալ ի Տէր ցնծուն կենօք։ Ամէն։

(Շնորհք։)

Եւ ընդ սիրառաք ողջունաարութեան՝ եւ օրհնութեանս Աստուածայնոյ, ծանուցումն լիցի քումդ Աստուածասիրութեան։ Զի ըստ որում վճիռ է անլուծանելի յամենեցունց արարչէն ի վերայ բնութեանս հողածնի՝ լուծանիլ մահուամբ ի հող, վասընորոյ՝ ըստ նոյնոյ արաբչագիր վճռոյն երանելի Հայրապետն մեր եւ ծնօղն հոգեծին Տէր Սիմէօն սրբազան կաթողիկոսն, լըցեալ ժամանակաց կենաց իւրոց փոխեցաւ յանցաւորէս ի կեանսն անանց. զոր Հանդուսցէ Քրիստոս այցելութեամբ ի լոյս երեսաց իւրոց. եւ դլուխ պատուականութեան ձերոյ լիցի ողջ Իսկ՝ զկնի վախճանի լուսահոգւոյն՝ ըստ համակամ հաւանութեան բնաւից եպիսկոպոսաց եւ վարդապետաց Աստուածաէջ Աթոռոյս մերոյ՝ եւ համայն ժողովրդոց Հայաստան աշխարհիս, եւ

ըստ կամակի Հոգեվոյս Հայրապետին մերոյ՝ և մանաւանդ՝ ըստ Աստուածայինն խնամոց, կացուցեալ եղաք յաթոռ Հայրապետութեան ազգիս Հայոց և սրբոյ Աթոռոյս Միածնահիջի: Եւ զկնի միջոցաց ինչ, գիր առաք ի սիրելւոյն մերմէ՝ և ի ծոցածին որդւոյն սրբոյ Աթոռոյս մերոյ՝ և ի յաստուածախնամ երկրորդ օրհնեալ ազգիդ Ռուսաց զետեղեալ համօրէն հայկասեր ժողովրդոցն մերոց այցելու Ցովսէփ Արք եպիսկոպոսէն, նաև ի ժողովրդոց նորակերտ քաղաքին Նոր Նախիջեւանու, ի ձեռն սիրելւոյն մերոյ ԳէՖուգաթ պարոն Գրիգորին: Որք գըրեալ էին նախապէս զանչափ շնորհակալութիւնս և գոհարանութիւնս ղմեծագոյն և զառաւագոյն խնամոց և գթութեանց Ա. մենարարեպաշտուհւոյ Մօրն ողորմութեան մեծի ինքնակալ կայսերուհւոյն, զոյս առարեալ է դոցա: Որում Աստուածն ամենայնի հաստուսցէ զվարձս անհուն րարեաց, և տացէ զերկարութիւնս կենաց. և հանգերձ թագաժառանգ և ծիրանածին որդւովն իւրով և թոռամբքն, և ամենայն ժառանգորդօք կայսերութեան պահեսցէ ի խնամս և ի գթութիւնս իւր յարաժամ և զամենափառաւոր իշխանութիւն Տէրութեան իւրեանց ընդ ոլորս Տիեզերաց ծաւալելով արասցէ յամօթս և ահարկուս ի վերայ ամենից թշնամեաց իւրեանց, ի պարծանս խաչին կենսատուի, և ի մխիթարութիւն վըշաոք պաշարելոցս: Իսկ ապա դրեալ էին և զշնորհակալութիւնս յոլովս զբարեպաշտութենէ քսմմէ: Որ յօթէ մատնելոյն դոցա ի Տիրանամ երկիրդ յայդ մինչև ցարդ, ըզպէսպէս խնամս՝ զմարդասիրութիւնս և զբարերարութիւնս ցուցեալ եւ դոցա և ցուցանեա: Ընդ որս և ծանուցեալ էին զառաւելութիւն սիրոյդ ճշմարտի, զոր առ Միածնաէջ Աթոռս սսըրք ունիս: Որք ե յաւուրս Հոգեվոյս Հայրապետին մերոյ և՛ գրէին զընոյն շնորհակալութիւնս՝ քանիցս անգամ: Որոց սակ՝ և Հոգեվոյս Հայրապետն մեր գրեաց յանցելումն ամի զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան առ Աստուածասիրութիւն ձեր: Իսկ այժմ ի լընկալնուլս մեր նորապէս զշնորհակալութիւնս զձէնջ, հարկաւորեցաք և մեք ի ձեռն այսր օրհնութեանս մերոյ նամակի շնորհակալիլ զքումմէ բարեպաշտութենէդ, և օրհնել զքեզ քոյանովքդ հանդերձ՝ օրհնութեամբ մեծաւ: Զորս օրհնեսցէ և զօրացուսցէ Տէր, վարձատրեսցէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. փրկեսցէ յամենայն անբարի դիպուածոց. և հեղցէ ի քեզ առատապէս զխնամս և զգթութիւնս մարդասիրութեան իւրոյ. և ես առաւել փառօք և ճոխութեամբ բարձրացուսցէ, և ամենայն հոգեկան առաքինութեամբք զարդարեսցէ: Իսկ արդ՝ խնդիր մերայս է ի քումմէ Աստուածսիրութենէդ. զի զոյն բարեգոյն խնամագ զորս մինչև ցայժմ ցուցեալ ես դոցա, և՛ առաւելապէս ցուցցես, և միշտ ունիցիս առ գոսա. լինելով յամենայնի միխիթարիչ և կազդուրիչ պանծնութեան դոցա: Եւ որ ինչ օգուտն է դոցա և հարկաւոր առ ի շինութիւն նորոյ քաղաքին դոցա ե ի բարւոք կառավարութիւն ինքեանց, խնդրեմ այնմ ամենայնի լինել ջանացօզ, և օժանդակել դոցա յամենայն այդպիսի իրս, և աիրաբար հոգ տանիլ: Եւ և՛ զսէր և զբարեկամութիւն ճըշմարիտ առ սուրբ Աթոռս մեր և առ մեզ ունելով՝ միխիթարել զվշտակրութիւնս մեր սիրանիշ թղթով. և զշնորհածին որդին սրբոյ Աթոռոյս և զսիրելին մեր Ցովսէփ Արք եպիսկոպոսդ ի սէր և ի խնամս քո ունելով օժանդակել դմա յամենայն իրս, որով ոչ սակաւ եմք լինելոց շնորհակալ զքումմէ սիրելութենէդ: Իսկ զամենայն որպէսն մեր և սրբոյ Աթոռոյս՝ ի սիրելւոյդ մերմէ ԳէՖուդաթ պարոն Գրիգորեգ իմանալոց ես: Ողջ լեր ի Տէր. զօրացեալ ի Շնորհս Նորին յարաժամ: Ամէն: Գրեցաւ յամի փրկութեան մերոյ 1781 ի փետրվարի և ի լուսակերտ Աթոռս ամենայն հայոց ի ս. Էջմիածին:



թուղթ ի նոր ևսխիչևսան, ատ զքեզ-խաւոր իշխանն Մագիստրաթին նոցա, (այսինքն դատարանին,) կապիտան պարոն Ծուխաննէսն, մինչ իւրեանք թուղթ էին գրեալ հասարակութեամբ ընդ ղէՓուղաթ Գրիգորին, սէր եւ օրհնութիւն. շնորհակալութիւն վասն հոգալոյն զհասարակութիւնն վշտակցարար, եւ յորդորումն ի նոյն։

Ծորմէ ժամանեցի թուղթ սիրոյ՝ ողջունի, Անդրանիկ օրհնութեան և Ընորհաց հանդերձ ամենատես ողորմութեամբն Աստուծոյ և Ընորհիւ սրբոյ իմման տեղւոյս նորին, ի վերայ սիրելւոյդ մերոյ՝ և հարազատ որդւոյդ որբոյ Աթոռոյս, պերճապատիւ հանճարեղ և նախապատիւ իշխանիդ նորահաստատ Մագիստրաթիդ՝ որ ի Ցիրախնամ և նորակերտ քաղաքդ Նոր Նախիջևան, Քրիստոսասէր՝ և ի նոյն զօրացեալ, բարեպաշտօն և մեծահաւատ կապիտան պարոն Ծուխաննիսիգ։ Եւ Աստուածապահ տան քումդ և բնակութեան, որդւոց եւ դստերաց, ընտանեաց և ազգականաց, սիրելեաց և բարեկամաց, ընչից և ապրանաց և ամենայն ընդ օրհնեալ յարկաւ քով եղելոցն, խնդալ ի Ցեր յարատևարճ ցնծութեամբ և ուրախութեամբ։ Ամէն։

(Ընորհք։)

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցանեմ լիցի սիրելւոյդ մերոյ ի Քրիստոս, և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի թէ որպէս եղև փոխումն առ Քրիստոս Հոգելոյս Հայրապետին մերոյ Ցեր Սիմէօն սրբազան կաթուղիկոսին և յաջորգիլս մեր յԱթոռ Հայրապետութեան ըստ կտակի Լուսաւորչւոյն և ըստ համակամ հաճութեան Աթոռապնոցս և երկրականացս, գրեալ եմք յառաջ քան զայս հասարակապէս ի յօրհնեալ երկիրդ յայգ, և յաւակապէս և ի վերայ ձեր. որք ի հարկէ մինչև ցարդ հասին յայդր՝ և իմացայք։ Իսկ ի նոր ՌՄԱ թուոջս և ի Ծունվարի ԻԳ, ժամանեցին առ մեզ թուղթք սիրելւոյն մերոյ՝ և նուիրակին և Առաջնորդին օրհնեցելոյ երկրիդ Ծովսէփ Աղք Եպիսկոպոսին՝ և ձեր օրհնեալ իշխանացդ՝ գրեցեալք առ լուսահոգին ի ձեռն գէՓուգաթ Պարոն Գրիգորին։ Զորս ընթերցեալ մեր՝ իմացաք զորպէսն ձեր. ընդ վշտանալիսն ձեր վշտացաք յոյժ, ընդ ուրախանալիսն ուրախացաք՝ և գոհութեամբ փառս մատուցաք Աստուծոյ, և օրհնեցաք զնդիրստոսապսակ կոյսերուհին հանդերձ կոյսերազմ որգւովն իւրով և թուոմբքն և ամենայն ժառանգորդօք կոյսերութեան։ Զորս Ամենաթագաւորն Աստուած պահեսցէ՝ յարաժամ ի գերագոյն զօրութեան և ի յաջողութեան՝ և ի գերազանցագոյն պերճութեան ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Իսկ արդ՝ ահա գրեցաք զպատասխանի թղթոյ օրհնեալ իշխանացդ. յորմէ երկարօրէն ի-մանալոց ես զմիտս գրեցելոց մերոց։ ԵՒ զլեհագոյնն որպէսութեան մերոյ Պարոն Գրիգորդ պատմելոց է՝ որ վերահասու եղև ամենայնի. զգիր մի ևս առ ձեր գումբեւնաթն գրեցաք, և զգիր մի ևս առ տեղւոյդ կամինդատն՝ որպէս տեսանելոց ես։ Իսկ զայս համառօտ օրհնութեանս մերոյ թուղթ ևս առ ազնիւ սիրելիդ մեր գրեցաք, նախ առի շնորհակալութիւն յաղագս յատուկ սիրոյդ և հաւատարմութեանդ՝ զոր առ լուսատու Մայրս քո սուրբ Աթոռս ունիս, երկրորդ՝ յաղագս ցաւակցաբար և վշտակցօրէն հոգալոյդ ղհասարակութիւն պանդուխտ ժողովրդեանդ՝ եղբայրակցաց քոց և ընկերաց, և իւրաքանչիւրոց ցաւոցն ցաւակից և խընամատար լինելոյդ ըստ Առաքելական խրատուն թէ՝ եթէ վշտանայ ինչ մի անգամն, վշտանան ամենայն անդամքն ընդ նմա։ Ոբովք յիրաւի վարձատրելի ես յԱստուծոյ՝ և արժանի ես օրհնութեանց բազմաց։ Ընգորս և մեր շնորհակալեալ մեծապէս՝ օրհնեցաք զքեզ և օրհնեմք՝ հանդերձ քոյոնովքդ։ Ցեր լիցի քեզ վարձահատոյց փոխանակ հարազատութեանդդ որ առ սուրբ Աթոռս։ Եւ որպէս դու կարեկից լինիս վշտաց բազմաց՝ և հոգաս վասն ամենեցուն ողորմածն Աստուած լիցի քեզ հոգածու յամենայն կեանս քո. և հասցէ՝ քեզ միշտ ի թիկունս օգնականութեան, և կարեկից լիցի քեզ յամենայն վիշտս քո. և պահեսցէ՝ միշտ անփորձ ի չարէն Արդ՝ գրեմ ազնիւ սիրելւոյդ իմոյ, զի ի դոյն օգտաբար և

Աստուածահաճոյ բարեգործութիւնով հաստատուն ճնասցես, առ ի լեռս առաւել վարձատրիլ յԱստուծոյ. և զգիրգ սիրանիշ անպակաս արարեալ՝ ի յաւուկ սիրոյ ե. ի հարազատութեանց որ առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ մի՛ վերջասցիս. և սիրելոյդ մերոյ Ծովսէփ Արք եպիսկոպոսիդ ձեռնտու լիցիս յամենայնի, առ ի բարեպէս կազգել և սահմանապրել զամենայն ինչ ըստ կարգի և ըստ օրինի ի յԱստուածախնամ՝ քահղաքդ առ ի յօգուտ և ի շինութիւն ձեզ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ: Որովք ընկալցիս զվարձս բարիս յԱստուծոյ, զՇնորհս, ի սրբոյ Աթոռոյս՝ և զօրհնութիւնս ի մէնջ յաւուրժամս: Ամէն, Ի ՌՈՄ, ի փետր.

Թուղթ ի նոր Նախջեւան, առ սրբոյ Աթոռոյս զանձապետ Դէֆուլաթ եւ Մագիստրաթի Դատ ւսւոր Պարոն Մկըրտիչն, ըստ մտաց վերոյգրեալ թղթոյդ:

ՕՐԻՆԱԿ ԲԱՑԲՕՐԹԻ, այսինքն վկայական կամ հրամայականի թղթոյ, զոր տայ կաթողիկոսն սրբոյ Աթոռոյս կարգաւորաց մերոյ աղգի, թէ վարգապետաց և թէ քահանայից, որով կարիցեն մատնել ի յերկիրն Ռուսաց:

Ցիսուսի Քրիստոսի Ծառայ Տէր Ղուկաս կաթողիկոս, և Ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց՝ Առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, նա և Լուսակերտի Աթոռոյս մեծի ս. Էջմիածնի՝ որ ի դաշտս Արարատեան: Ողջոյն սիրով և օրհնութեամբ յաստմաս, Քրիստոսական ողջունիւ, և. Հոգեպարար շնորհօք սրբոյ իմման Տեղւոյս նորին, Ծանուցումն լիցի Սահմանակալ Ազնուական Պարոն Կամենգաթացդ օրհնեցելոյ աղգիդ Ռուսաց լայնատարած մեծի կայսերութեանն: Զի զսոյն գրաբեր (Տէր Պետրոս Պետրոսեան քահանայս) որ է ի մերս Հայոց աղգէ, և օրինօք մերս եկեղեցւոյ, տյսու վըկայական գրով մերով առանց ընգգիմագարձութեան ի ներս ընկալեալ՝ ուղևորեսջիք ձերով բաշքօրթիւն առ Ռուսաց երկրի Հայոց Առաջնորդ Ծովսէփ Արք Եպիսկոպոսն: Եւ լերուք ողջ ի տէր, զօրացեալք ի Շնորհըն նորին յարաժամ: Ամէն: Գրեցաւ ի թուոջ փրկչին՝ 1781, ի փետր. Ժ. յԱստուածակերտ և ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածինն:



Թուղթ ի Բասրա, ի Բուշնո ևս ի Բաղդատ, վասն անցից եւ որպիսութեանց սրբոյ Աթոռոյս, որպէս եւ յայլ ուրեք ի վերոյն, այսինքն վասն վախճանման Հոգելոյս Հայրապետին Տեառն Սիմէօնի եւ յաջորդելոյ նորոգ սրբազան Հայրապետին Տեառն Ղուկասու:

Թուղթ վէքիլութեան եւ մութավէլութեան ի Բասրա, յաղագս Բեթղէհէմեան Ծովհաննիսին, չինիլ սրբոյ Աթոռոյս վէքիլ եւ Մութավէլի, եւ հոգալ զամենայն անդ պատահեալ գանսն մերս:

Թուղթ միխիթարութեան առ Արքայորդին վրաց Դեսրկի, յաղագս մահուան եղբօրն իւրոյ Լեւոն Միրզային, որպէս եւ հօրն իւրոյ Հերակլ Արքային եւ Մօրըն եւս գրեցաւ ի վերն՝ ի համարն 66:

Ծորմէ ժամանեսցի Թուղթ մշանջենական օրհնութեամբն Հօր Աստուծոյ, խաղաղարար ողջունիւ Միածնի որդւոյ, և ուրախարար սիրովն Հոգւոյն սրբոյ: Այլև՝ օգնականութեամբ և շնորհօք Աստուածածէջ սրբոյ գահիս, և ամենից փրկարար սուրբ նշանաց և սրբութեանցս համայնից՝ որք գոն ի սմա: Ի վերայ օրհնաժառանգ և բա-

րեր ընձիւղ ուստդ օրհնութեան սիրելւոյ մերոյ ճշմարտի վշացեալոյ այժմ ի սիրա և ի հոգի ըստ մեղաց մերոց, ֆաջաղարմ և Արիայեան, Արքայազնւոյ Արքայորդւոյդ Գեօրգին Միրզայիդ ի Տէր ղօրացեալ. և սրբոյ Աթոռոյս մերոյ ստուգ բարեկամի. եւ Աստուածով պահպանեցեալ Տան քումդ, և նովիմբ ղօրացեալ Որդւոյդ և համայն ընտանեացդ և ամենից հաւատարմաց քոց և ըստոյդ սիրելեաց, և մտերիմ սպասաւորացդ բնաւից՝ և ամենայն քոյոցն, խնդալ միշտ ի յոյն մեր Քրիստոս յարաժամ ուրախութեամբ. Ամէն. Շնորհք, սէր, ողորմութիւն և խաղաղութիւն Ամենասրբոյ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, իջեալ հանդիցէ ի վերայ քոյ և քոյոցնոցդ. և լցուսցէ զձեզ ամենայն հոգևոր և մարմնաւոր խնդութեամբ, միխիթարութեամբ և ցնծութեամբ. Ամէն. Եւ ընդ օրհնառաք սիրոյ և ողջունաարութեան շնորհաձիր նամակիս, ծանուցուաք լիցի սիրեցելոյդ մերոյ ի Քրիստոս՝ օրհնեցելոյ Արքայորդւոյդ. Զի լուաք ղգոհունագէպ կսկիծն ձեր՝ զբարձիչն ուրախութեան, զստուերացուցիչն աչաց՝ և զկսկծեցուցիչն սրտից զանրարի լուրն մահուան քաղցրիկ եղբօրն քոյ և իմոյ իսկ ազնիւ սիրելւոյ և հոգեւորի որդւոյ Լևոն Միրզայինն. Որով արդարև կսկիծ անհնարին տիրեաց մեզ, և ցաւ անբուժելի դիպեցաւ սրտից մերոց. և ստուեր տրտմութեան զմեզ շրջապատեալ խաւարամած արար զմեզ, և աղօտացոյց ղլոյս մեր. Զի մինչ արեգակնապէս փայլեալքդ փարատօղքդ զմեզ և ըզմառախուղ տրտմութեան ի դիմաց մերոց այժմ ընդ ամպով տխրութեան և կսկծանաց ծածկեցեալք աղօտացուցիք զլոյս ուրախութեան ձերոյ, զիա՛րդ մեզ անախորութեան և անմխիթարութեան ստուերաւ պատելոցս յաւէտ, և վայելողացս մինչև ցարդ զնշոյլս ճառագայթից ձերդ ցաւակցական սիրոյ և խնա՛ռից՝ այժմ իցէ լոյս ուրախութեան կամ զմխիթարիչդ մեր տեսանելով ցաւալիս որպէս ոչ բազմանան մեզ ցաւք ի վերայ ցաւոց, և հեծութիւնք ի վերայ հեծութեանց. բայց զի ոչ այլ ուստեք ածեալ եղև մեզ այս կսկիծ, և ոչ այլ ընչ պատճառաւ եթէ ոչ ի ձեռանէ ամենակալին, և վասն մերոց մեղաց, վասն որոյ՝ աչ յայլուստ կարեմք գտանել զիա՛ րատուն սմին, եթէ ոչ դարձեալ ի Տեառնէ. զի Նա է որ հարկանէ, և Նա է որ բժշկէ: Ուստի՝ ցաւագնեալ սրտիւ դիմեալ առ Նա, հայցեմք յամենառատ գթութենէ նորին, զի ի մեզս մեր չհայելով նախապէս տացէ զփարատումն կսկծանաց մխիթարչացդ մերոց՝ միխիթարելով զձեզ ի կենամաշ տրտմութեանց այսի, զի և մեզ ճշմարիտ ցաւակցացս ձերոց լիցի միխիթարութիւն և ուրախութիւն ի ձերոցդ միխիթարութեանց: Որ և իւրով անհուն ողորմութեամբն՝ որպէս տրտմեցոյց նոյնպէս և միխիթարեսցէ զվշտացեալ սիրտս ձեր. փարատեսցէ զսուգ և զտրտմութիւնս ձեր, լցուսցէ զձեզ ամենայն ուրախութեամբ և մոռացուսցէ զամենայն վիշտս ձեր: Եւ զհոգի եղբօրն քո սիրելւոյ և իմոյ իսկ ըստ հոգւոյ որդւոյ լուսաւորեսցէ լուսովն անանց, հանգուսցէ յարքայութեան իւրում, և դասակցեսցէ սըրբոց և սիրելեաց իւրոց: Եւ զքեզ՝ զհարազատ եղբայրդ նորին հանդերձ Աստուածասէր Արքայ Հաբդ և աղէխարշ ցաւօք լըցեալ բարեփառ թագուհի մարդ՝ և ամենայն եղբարքդ՝ պահեսցէ երկար ամօք և խաղաղական կենօք, բարգաւաճեալ ճոխութեամբ և պերճագոյն իշխանութեամբ. զարգարեալ ամենայն հոգևոր առաքինութեամբ և Արիական քաջութեամբ, ծաղկափթիթ զաւակօք և բարերընձիւղ շառաւիղօք, ի միխիթարութիւն սրտից հօրն ձերոյ և մերոյ յաստուկ և ցաւակից սիրելւոյ՝ Աստուածազօր Արքային մեծի և դստերն մերոյ հոգեւորի և մօր քո՝ բարեպաշտուհի թագուհուին և ի յուրախութիւն մեզ: Եւ զնա ցեալն ի կենաց նորին յաւելցէ ի կեանս ձեր, պահելով միշտ անվնաս ի չարէ. խընդրեմ այժմ ի Քրիստոսազօր Արքայորդւոյդ՝ մի առաւել քան զչափն տրտմիլ և վշտանալ զքեզ. այլ զայս իսկ մտածելով թէ թէպէտ ի գեռարոզքդ հասակի և ի տարաժամ կիտոջ աստի փոխեցաւ, այլ ի Քրիստոս յաւելաւ, և անանցն արքայութեան եղև ժառանգաւոր տուր զմխիթարութիւն սրտիդ վշտացելոյ: Զի որք հաճելիք լինին Աստուծոյ՝ վաղագոյն կոչէ առ ինքն թեթեւս ի կրից երկրականաց, զի մի ծանրարեռնեալք այնու գացին անհաճոյք,

ըստ այնմ, փորձեաց զնոսա Աստուածն՝ և եգիտ իւր արժանիս։ Ուրեմն՝ մխիթարեալ այսոքիւք, դոհացիր զԱստուծոյ և փառս մատո նմա. զի որպէս կամեցաւ, նոյնպէս և արար. եղիցին կամք իւր օրհնեալ։ Որ և պահեսցէ զձեզ զորդիդ ըստ իւրոց կամաց և հաճոյից. ի կեանս յայս երկրաւոր ճոխութեամբ բարձրացուցանելով՝ և յեթ աստեացս՝ անանց պսակին և յաւիտենական երանութեան առնելով արժանաւորս. ի փառս և ի դովեստ անուան իւրոյ սրբոյ։ Իսկ և ահա զսիրելին մեր Գալուստ Հանճարաշատ վարդապետն առաքեցի այսու օրհնութեան թղթով առ բարեպաշտութիւն ձեր. առ ի մխիթարել զձեզ ի դիմաց մերոց, և ղհամբաւ ուրախութեան ի ձէնջ բերել մեզ. առ ի փարատումն մերոց եւս արտմութեանց, և ի մխիթարութիւն սըրտից ցաւօք լցելոց։ Ծորմէ և զամենսյն որպէսն մեր իմանալոց ես, Ողջ լեր ի տէր, զօրացեալ ի նոյն քայլնովքդ հանդերձ, և պահպանեցեալ խաչիւն սրբով։ Ամէն։ Ի ՌՈՄ, ի փետր.

Թուղթ ի Պօլիս առ Ջուղայեցի պատրոն Յաչիկն Պօղոսեան, վասն փօլիցայիցն՝ զորս տայր անդ եւ տալոց եւս էր նուիրակ Մ՚ինաս վարդապետին հատուցանել ի սուրբ Աթոռս։

Թուղթ առ ս. Երուսաղէմի Պատրիարք Ծովակիմ վարդապետն, վասն որպիսութեանց մերոց, այսինքն վախճանման Հոգելոյս Հայրապետին Սիմէօնի, եւ յաջորդելոյ նորոգ Հայրապետիս մերոյ Տեառն Ղուկասու կաթողիկոսի հանդերձ սիրահաստատ բանիւք պատշաճաւորօք։

Թուղթ ի Թիֆլիզ, առ Սահակաշէն [15]) սուրբ Աստուածածնին եկեղեցւոյ ժողովուրդն, վասն նոյն եկեղեցւոյն, որ էր ի ընէ Տէրունի սրբոյ Աթոռոյս եւ այժմ կամէին ոմանք առնել հախպատու թեմ. որոյ աղագաւ սաստ եւ պատուէր,

Ծորմէ ժամանեսցի...


Եւ ընդ ամենառատ օրհնութեանն Աստուածայնոյ՝ ծանուցանեմ լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց, և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ասէ իմաստանացեալն յԱստուծոյ Սողոմոն թէ՝ մի փոխեր զսահմանս՝ զոր եդին հարք քո։ Եւ դարձեալ թէ՝ որ քակէ զցանկ՝ հարցէ զնա օձ։ Արդ՝ գիտէք դուք ամենեքեան, զի ուխտն տարի աւելի է, որ այդ Սահակաշէն կոչեցեալ եկեղեցիդ ձեր Տէրունի է սրբոյ Աթոռոյս։ Եւ դորին չինօզ Արեդինենց հանդուցեալ Սահակն, և իւր նախնիքն՝ յաուկ Տէրունի ժողովուրդ են եղեալ սըրբոյ Աթոռոյս, և ի կողմանէ սորին կարգեցեալ յայդ սուրբ եկեղեցւոջդ հաւատարիմ երիցփոխ։ Որք և Տէրունի են արարեալ սրբոյ Աթոռոյս զայդ եկեղեցիդ՝ և կայ ձայ այնու կանոնաւ և սահմանաւ մինչև ցարդ։ Իսկ այժմ լսեմ թէ ոմանք չարաբարոյ անձինք՝ բարեաւաեացք և չարայոզք, կամելով լինել ցանկաքակը, և փոփոխիչք նախնեաց սահմանադրութեանց՝ չանան խորքալել և յեղաշրջել զմիաս սիրելոյն մերոյ և հարազատ որդւոյն սրբոյ Աթոռոյս բժիշկ Պարոն Ծովհաննիսին ի ծերութեան ժամու. որպէս զի հետեւեսցի չար կամացն իւրեանց, և զյաւիտենական սահմանս զոր եդեալ են հարքն իւր՝ փոխեսցէ, և զսուրբ եկեղեցիդ զայդ հանեալ ի սրբոյ Աթոռոյս՝ արասցէ այլ վանից թեմ։ Այլ ես չուսնելով զայսպիսի կարծիս անհարազատութեան զսիրելոյն մերմէ Պարոն Ծովհաննիսէն, ակն ունիմ, զի ի սրբոյ Աթոռոյս ապստամբիլն, և ի սորին շընորհաց զրկիլն ոչ կամիցին, թէ ինքն Պարոն Ծովհաննէսն, և թէ կողակիցն իւր։ Զոր օրհնելով օրհնեսցէ Տէր, և պահեսցէ միշտ ի ճշմարիտ հարազատութեան առ սուրբ Աթոռս՝ ընդ հոգելոյս նախնեացն իւրեանց՝ և արժանացուսցէ վարձուց բարեաց աստ և ի հանդերձելոցն, և պահեսցէ անփորձս ի չարէ։ Իսկ եթէ դոցա եւս կամք

լից՝ հետևիլ չարաբարոյին կամաց և յե-
զաշրջել զմիաս իւրեանց, յայտ է թէ առ-
նախանձու է՝ և յազգս սատանայական
դրդմանց իրիք. կամ թէ ի ցնորմանէ խե-
լացս, որ պատահի բազմաց այդպիսեաց ան-
ցելոց զաւուրըք։ Որոց խօսքն՝ և ասու-
թիւնքն չեն ընդունելիք վասն ցնորմանց խե-
լացն. մանաւանդ զի ոչ ի ժամանակս իւր և
յինքենէ է հաստատեցեալ եկեղեցիդ այդ Տէ-
րունի վիճակ սրբոյ Աթոռոյս, այլ ի հօրէն
դորա, և յառաջ քան զուարթուն ամն՝ որ-
պէս ասացաք։ Թէև ինքն ևս իցէր արարեալ
Տէրունի տակաւին ոչ կարէր քակել զիւր ա-
րարեալն զի մինչ ուխտէ ոք զուխտս ա-
ռաջի Աստուծոյ, ոչ կարէ ստել ուխտին՝ և
ուխտազանց դատանիլ. քանզի լաւ է ոչ ուխ-
տել քան ուխտել և ոչ առնել։ Զոր և
Աստուածային դիրն ամրափակէ ասելով Ա՛յր
ոք այր՝ եթէ ուխտիցէ ուխտ Տեառն կամ
երդնուցու երդուիմն սահմանաւ. կամ սահ-
մանիցէ ինչ վասն անձին իւրոյ. մի արաս-
ցէ ապախա զբան իւր այլ զամենայն ինչ՝
որ ելանիցէ ի բերանոյ իւրմէ արասցէ։ Եւ
այլուր ևս՝ զդուշացուցանէ թէ որ ինչ
ելանէ ընդ շրթունս քո զդո շ լինիջիր և
արասցես որպէս ուխտեցեր Աստուծոյ քում՝
զտուրսն զոր խոստացար բերանով քով.
քանզի պահանջելով պահանջէ Տէր Աս-
տուած քո ի քէն, և լինիցի քեզ ի մեզս։
Արդ՝ եթէ այսպէս որպէս ցուցաք. ոչ կարէ
ոք զիւր ուխտեալն և զսահմանեալն քա-
կել՝ ըստ որում և պատուիրէ Աստուած.
զի՞րդ ապա զՀօրն իւրոյ և զնախնեաց
սահմանեալն քակել կարէ։ Ցորմէ ահա հրա-
ժարեցուցանէ առ լեթալն Աստուածեղէն
հոգւոյն. ասելով թէ՝ Մի փոխեր զսահմա-
նսրս յաւիտենականս՝ զոր եդին հարք քո։
Եւ թէ՝ որ քակէ զցանկ հայրենի, հարցէ
զնա օձն անապատի, որ է սատանայ։ Ու-
րեմն՝ թէ և հաւանեցեալ ես իցեն քժիշկ
պարոն Ցովհաննէսն և կինն իւր յորդոր-
մանց չարայոյզ անձանց, ե. կամիցին յե-
զաշրջել զմիաս իւրեանց, և. քակել զՀայ-
րենի սահմանն, չեն ընդունելի խօսք դոցա,
և. ունայն են, թէ Աստուածային օրինօք,
և թէ մարմնաւոր դատաստանօք։ Ապա թէ
ոչ լինին ունկդիրք չարաց. և կան ի միտս
իւրեանց հաստատուն և անշեղ. և ոչ կա-
մին զբնիկ ժառանգութիւն սրբոյ Աթոռոյս
հանել ի սմանէ, լիցին օրհնեալք յամենա-
սրբոյ Երրորդութենէն՝ և յամենայն սրբոց
նորա՝ և ի միջի. և զշնորհս սրբոյ Աթո-
ռոյս ընկալցին ըստ հոգւոյ և ըստ մարմ-
նոյ։ Սակայն՝ այնոքիկ չարայոյզ անձինքն՝
որք զպղծ վատ և անկարդ բանդ խորհեալ
են, և կամին զսիրտ պ. Ցովհաննիսին յե-
զաշրջել և խարբաւել, ըմպելոց են զմրցուրն
դառնութեան եթէ ոչ զղջացին և դառ-
նայցեն ի չար խորհրդոց իւրեանց, այլ մնաս-
ցեն ի նոյնն յամառեալ։ Զոր ահա կան-
խաւ դրեցի այժմ ի զգուշութիւն այնպի-
սեացն, որք թէ ոչ զգուշացին, արիւն իւ-
րեանց ի գլուխս իւրեանց։ Իսկ ձեզ սիրելի
և հոգևոր որդւոցդ մերոց՝ և յաւուկ և
Տէրունի ժողովրդոցդ սրբոյ Աթոռոյս օրհ-
նեցելոցդ ի Տեառնէ այս լիցի պատուէր, զի
որպէս մինչև ցարդ բարեմտութեամբ և միա-
միտ սրտիւ ծառայեալ էք հաւատոյ մօրս
ձերոյ սրբոյ Աթոռոյս՝ գոլով սմա Տէրու-
նի ժողովուրդք, այլ եւս զնոյն բարեմտու-
թիւնն անշեղ պահեսջիք ի ձեզ. և նոյն-
պէս Տէրունի ժողովուրդ դիտացեալ ձեզ
սրբոյ Աթոռոյս՝ որպէս մինչեւ ցարդ ՝լեալ
էք, և զսուրբ եկեղեցիդ ձեր եւս նոյնպէս
Տէրունի եւ սեպհական վիճակ դիտացեալ
սմա՝ որպէս և է իսկ ի քնէ, ամենայնիւ
հարազատութեամբ և հաւատարմութեամբ
և միամիտ սրտիւ ծառայեսջիք սրբոյ Աթո-
ռոյս՝ Մօրս ձերոյ լուսատուի, որպէս և ծա-
ռայեալ էք մինչեւ ցայժմ։ Որք և կատա-
րելով զՀրամանս մեր Հոգևոր, եղիջիք
օրհնեալք և վարձատրեցեալք ի Տեառնէ.
և զշնորհս սրբոյ Աթոռոյս և զօրհնու-
թիւնս մեր ևս ընկալջիք յարաժամ։ Ամէն։
Գրեցաւ ի ՌՄԼ, ի մայիսի։

Թուղթ ի Թիֆլիզ, ի Մահակաշէն և-
կեղեցին, առ վերոյ յիշեալ ըժիշկ Յով-
հաննէսեան եւ կինն իւր՝ վասն վերոյգրե-
ցեալ մտացն դարձեալ. զի մի՛ շեղես-
ցին զմիտս իւրեանց ի սիրոյ սրբոյ
Աթոռոյս։

Թուղթ առ Ազուլեաց տան ժողովուրդ-
սըն՝ որք ի մեծն Պօլիս եւ ի շրջակայսն,
մինչ իւրեանց վանից ժողովարար Ո-
կսկան վարդապետն անդ վախճանեալ էր.
եւ Առաջնորդն իւրեանց Թօմաս վար-
դապետն յղէր անդ զիւր միաբան Ստե-
փան վարդապետն, ի ժողովել եւ ըն-
դունել զնորին ժողուեալ արդիւնսն եւ ըզ-
կայսն։ Ցանձնարարութիւն, զի օժան-
դակեսցին նմա յայսմ, եւ այլ եւս զի՞նչ
արդիւնք եւ իցեն վանիցն, նմա յանձ-
նեսցեն, ի ընդունել ի վանսն։

Թուղթ առ այնպիսիս գրելի, որք հա-
ւատով մեծաւ խնդրեալ իցեն զթուղթ
օրհնութեան յաղագս դիտման ինչ իւ-
րոյանց. եւ զընծայս ինչ եւս յղեալ ի-
ցեն։



Թուղթ ի Կիւմիշխանայ միսիթարութիւն
վասն տաժանմանցն՝ որք հասեալ էին
նոցա ի հարութենէ Աիսիթարմայիցն՝ եւ
ի վիճոյն որ ընդ նոսա։ Որոյ սակս եւ
օրհնութիւն նոցին՝ յորդորումն ի յայն։

Ցորիկ ժամանեցի թուղթ սիրոյ ողջունի՝ և Անդրանիկ օրհնութեան, և նմակ պահպանութեան, Ընորհք Առաքելական, հանդերձ Աստուածային բաշխապատիկ օրհնութեամբն և նախախնամութեամբն, դթութեամբն և ողորմութեամբն. և սրբոյ Աստուածածնիջի Տեղւոյս հոգեպարար և զօրացուցիչ շնորհքն և զօրութեամբն, ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց, հարազատ և լուսածնունդ զաւակացդ սըրբոյ Աթոռոյս՝ հայկասէր՝ լուսաւորչակրօն՝ միարնադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս, Որք զետեղեալ կայք ի յԱստուածապանամ դիւղաքաղաքդ Գիւմիշխանայ կոչեցեալ։ Սիրելւոյդ մերոյ և Առաջնորդիդ ձերոյ՝ Յակոբ Հանճարաշատ վարդապետիդ։ Այլ և համայն սրբասէր Քահանայիցդ, Աստուծով զօրացեալ իշխանացդ և առհասարակ օրհնեալ ժողովրդոցդ ամենից, խնդալ ի տէր յարաղուարճ ցնծութեամբ և ուրախութեամբ։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցուաք լեցի սիրելեացդ մերոց ի Քրիստոս, և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի սրբազան Առաքեալն Քրիստոսի Պօղոս, դոլով վշտացեալ ընդ վիշտս հոգևոր անդամոց Քրիստոսի, և կրելով ըզծանրագոյն հոգս եկեղեցեացն՝ որք կուտէին ի վերայ իւր՝ չտալով երբէք ղՀանդիստ, ասէր. Ո՞ հիւանդանայ՝ և ես ոչ հիւանդանամ, ո՞ գայթակղի, և ես ոչ տապանամ։ Զի որպէս ջերմեռանդութիւն հաւատացելոցն ի հաւատն սուրբ՝ և փոյթ սիրոյն նոցա որ առ Քրիստոս՝ խնդութիւն մեծ էր նմա, ըստ որում և ասէր, բազում համարձակութիւն է ինձ առ ձեզ, բազում պարծանք են ինձ վասն ձեր. լի եմ մխիթարութեամբ, առաւելեալ եմ ուրախութեամբ. այսպէս և Հոգևոր վիշտն նոցին և նեղիլն ի հրէից և ի հեթանոսաց վասն հաւատոյ և ոմանց եւս հիւանդանալն ի յԱստ հոգւոյ առողջութենէ, և գայթակղիլն ի հաւատս վիշտ և ցաւ լինէին նմա մեծապէս ըստ որում և ցուցանէր՝ ո՞ հիւանդանայ և ես ոչ, և այլն։ Արդ՝ որպէս առաքելոյն սրրագանի, նոյնպէս և մեզ վճակեցելոցս ի սոյն պաշտօն Հոգևոր Հովուապետութեան՝ առգիպի՝ և մանաւանդ Տարկաւորի իսկ՝ ընդ կրկնակի կիրս Հոգեւոր անդամոգ Քրիստոսի, այսինքն ուրախանալ ընդ ուրախականս և տրտմիլ ընդ տրտմականս։ Եւ փութալ իսկ մանաւանդ ղվշացեալսն միխիթարել Հոգեւոր միխիթարութեամբ, և զջերմեռանդն յորդորել ի յլև եւս արիանալ. և վասն ակարացելոցն

ի հաւասս աղօթել առ աէր՝ասլ նոցա ըղ-
լուսաւորութիւն մտաց, առ ի հետևիլ
անդրէն ընդ լուսաւոր շաւիղս ամրիծ հա-
ւատոյ՝ և գտանել զառողջութիւնս հոգե-
ւորս։ Ուրդ՝ յաղագս սոյնոյ փութոյ՝ հար-
կաւորեցաք այժմ գրել առ սիրելի որդիսդ
մեր և հոգևոր անդամսդ Քրիստոսի՝ զայս
նամակ օրհնութեան մերոյ։ Քանզի յան-
ցեալ տարւոջն մինչդեռ կենդանի էր Հո-
գելոյս Հայրապետն մեր, թուղթն ձեր է-
հաս աստ, զոր գրեալ էիք յաղագս տաժանման-
ցըն մեծաց՝ զորս կրեալ էիք ի յԱխթարմա-
սից՝ ի փառս ամրիծ հաւատոյ Հայաստա-
նեացս սուրբ եկեղեցւոյ։ Եւ թէպէտ կա-
մեցաւ լուսահոգին գրել առ ձեզ յայն-
ժամ զմխիթարութիւն և զսքաադիւրու-
թիւն, բայց զի ի հիւանդութենէն ոչ
երաց զաչս, որ և ժամանեաց իսկ վախճան
երանելոյն, վասնորոյ՝ այլ ոչ գրեցաւ առ
ձեզ մխիթարութիւն ինչ յայնժամ։ Իսկ
ապա՝ մինչ մեք անկաք ի ներքոյ ծանրու-
թեան լծոյս անտանելոյ, թէպէտ տեսեալ
էաք զթուղթն ձեր, և գիտէաք զձեր վիշա-
սըն եւ զցաւսն, և կամէաք մխիթարել զձեզ
հոգևոր մխիթարութեամբ, սակայն՝ անձեռն-
հաս եղաք մինչև ցարդ, յաղագս զանա-
զան և տաժանելի ցաւոց և զբաղմանցն և
պէսպէս անյաջողութեանցն՝ որք շուրջ պա-
տեցին զմեօք։ Զորս եւ դուք լուեալ էք ի
հարկէ և գիտէք իսկ։ Բայց այժմ՝ որովհե-
տեւ գրեալ էր մեզ սիրելին մեր եւ Ա-
ռաջնորդն ձեր Ցակոր խոհեմառատ վար-
դապետն զորպիսութիւնս ձեր, թէ զորքան
տաժանմունս էք կրեալ, ջանիւ մեծաւ վի-
ճելով ընդ թիւրեալսն ի լուսաւոր շաւ-
ղաց ամրիծ հաւատոյ Հայաստանեացս սըր-
բոյ եկեղեցւոյ՝ Ախթարմայիցն անուղղայից,
ոչ սակաւ վնասուց դիպելով վասն այգր,
վասնորու՝ թէպէտ և այգքան երկար ժա
մանակաւ վշտանալդ ձեր յաղագս այգր՝
ցաւ եղև մեզ, այլ մեծապէս ցնծացեալ ու-
րախացաք ընդ բարեգոյն ջանդ ձեր և ընդ
ջատագովութիւնդ սրբոյ հաւատոյս մերոյ։
Ուստի՝ և օրհնութեամբ մեծաւ զձեզ օրհ-
նեցաք, և հայցեցաք յԱստուծոյ՝ և ա-
ռաւել տալ ձեզ զայդպիսի բարեգոյն ա-
րիութիւն, և զօրացուցանել զջատագովդ
ճշմարտութեան, առ ի կորագլուխ առնել
միշտ գՀերետեալն յուղղութենէն։ Որք և
արժանի վարկաք ի ձեռն այսր օրհնութե-
նըս մերու և ես օրհնել զարժանիսդ օրհնու-
թեան՝ զջատագովդ սուրբ և անբիծ հա-
ւատոյս մերոյ։ և միխիթարել զձեզ ի վըշ-
տացն զորս ի յերկար ժամանակս կրեալ
էք վասն այգրն։ Եւդ ուրեմն օրհնեսցէ ըզ-
ձեզ Տէր և զօրացուսցէ, կաղդուրացուսցէ,
կարողացուսցէ և հաստատիմն արասցէ զձեզ
զամենայնս ի սուրբ և յուղղափառ հաւա-
ւարս անարատ հարսինս սրբոյ հայաստա-
նեացս եկեղեցւոյ։ Զամենայն վիշտս զորս
կրեալ էք վասն սրբոյ հաւատոյ համարես-
ցէ ի փառս իւր, միխիթարեսցէ զձեզ երկ-
նաւոր միխիթարութեամբն, և վարձատրեսցէ
ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Այլ ձեզ օգ-
նական յամենայն ներգութիւնս ձեր, և ա-
րիացուսցէ միշտ ի մարտս հոգևոր պատե-
րազմի։ առ ի լինիլ ձեզ և ևս առաւել ար-
ժանաւորս վարձուց բարեաց, և ժառան-
գաւորս երկնից արքայութեան։ Եւ որք ի
յախթարմայութեան աղանդոյ դարձեալ են
ի ճշմարիտ հաւատս և ի դաւանութիւնս
մեր, տացէ նոցա աէր և ևս առաւել լինիլ
ճանաչօղս և ջատագովս ճշմարտութեան իբրև
զձեզ։ Հաստատունս առնելով և արմա-
տացուցանելով ի սոյնս, յօդելով յանգա-
վըս եկեղեցւոյ, և ի բաց սրբելով իսպառ
ի մտաց գոցին զխմորն չար աղանդոյնն։ Իսկ
որք գեռ ևս կան յամառեալք ի հոգևնասս
աղանդն ախթարմայութեան, տացէ և նոցա
զղջումն և զդարձ յայնմանէ, և լուսաւոր
արասցէ զաչս մտաց նոցա՝ առ ի ճանաչել
զճշմարտութիւն, և նմին հետևիլ, և ա-
ռողջանալ ի հաւատս։ Այլ արդ՝ պատուի-
րեմ ձեզ ամենեցուն՝ որք կայքգ հաստա-
տուն ի միաբնակաան և յուղղափառ հա-
ւատս սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեաց. և
ջատագովքդ էք ճշմարտութեան. զի ի սոյնս
կացջիք անշարժ և անշեղ, և զդոյն լաաս-
դովութիւնդ առաւել ևս ունիցիք, զբար-
ւոք պատերազմն պատերազմելով, ղընթացան
կատարելով և զհաւատն պահելով, զի
արժանի լինիջիք ընդունիլ զարդարութեան
պսակ։ Եւ քան զամենայն ինչ հարկաւոր և
նախընտրելի զայսոսիկ իմանալով, առաւել
ունիցիք ղփոյթ այսոցիկ, կրթելով զանձինս
ձեր յԱստուածպաշտութիւն և ի հաւատս

ճշմարտութեան։ Զի ըստ սրբազան Առաքելոյն բանի, մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է. իսկ Աստուածպաշտութիւն՝ առ ամենայն ինչ օգտակար է, և զաւետիս կեանց ունի՝ զարդիս՝ և զհանգերձելոցն։ Ուրեմն՝ այսոցիկ կալեալ զիմոյթ, և փափագելով կենացն անձկալեաց՝ առ ի ժառանգել սոքօք, ի բաց լինիցիք յամենեցունց՝ որք զհակառակն խորհին այսոցիկ։ Որք ի ճշմարտութենէ անտի գարձուցեալ զլսելիս՝ յառասպելս կործանին, որք մոլորեալք և հեսաեալք ի ճշմարտութեան ճանապարհէ և յսուտիղ հաւատոյ՝ զանան և զայլս մոլորեցուցանել, որոց և բանքն իբրև զքաղցկեղ ճարակ գտանեն, և խոտորեցուցանեն զբազումս։ Ծորոց հրաժարիլ և ի բաց փախչիլ աղաչեմ սիրոյն Աստուծոյ, որպէս և էքգ իսկ ի բացեայ և հեռի ի նոցունց։ Եւ սիրելւոյդ մերոյ և ձերդ Առաջնորդի Ծակու խոհեմառատ վարդապետիդ հոգևոր խրատուցն ևս՝ որք յաղագս այսոցիկ և օգտից հոգւոց ձերոց, լսող լինիցիք յօժարութեամբ, և նոյնպէս աշխատիցիք ընդ դմա յաղագս օգտից սրբոյ հաւատոյս մերոյ՝ որպէս և մինչև ցարդ աշխատեալ էք, և մի թուլասջիք ի հոգեշահ և ի բազմափորձ ջանից և առաջադրութեանց այգոցիկ պլ ջանասջիք ի գլուխ հանել, և ի դոյն փոյթսըզգ հոգևոր՝ կացջիք հաստատուն։ Ցիշելով զերախտիս հօրն մերոյ և լուսատուին հոգւոց սրբոյն Գրիգորի, որ ի խաւարէ կռապաշտութեան էած ի լոյս Աստուածգիտութեան զազգս մեր. և հայելով ի լուսածին ծնօղս ձեր սուրբ Աթոռս, որոյ հոգեւոր կաթամբն և շնորհօքն սնեալ էք և աճեցեալ։ Եւ մի ումեք ի ձէնջ լիցի երբեք մոռանալ զսոսա, և զաւանդեալն առ ի սոցունց զհաւատն ճշմարտութեան՝ փոխանակել ընդ մոլորաշաւիղ ախթարմայութեանն։ Ծորմէ պահեսցէ զձեզ Տէր սուրբս և անարատս, և հաստատունս ի վերայ հիմանն ճշմարտութեան և ի ծոց մօրս ձերոյ լուսատուի սրբոյ Աթոռոյս։ Իսկ և՝ ղորդիական հարազատութիւն և զսէր ճշմարիտ առ սուրբ Աթոռ մայրս ձեր լուսատու և առ մեզ ունելով միշտ անպակաս լիջիք ի յաւուրս հաւատարմութենէն։ Զորոգ և ունիմ զշնորհակալութիւնս մեծագոյնս, որք յօրէ լսելոյն ձերոյ զկոչիլս մեր ի սոյս շնորհս, սիրով մեծաւ զմեզ յարգելով՝ և զյաւուրս հարազատութեանս ցուցանելով, և ի սահանայայորդոր առիթս արգելման չհայելով՝ միշեալ էք զանուն մեր յեկեղեցւոջ։ Որոյ փոխարէն՝ ընկալջիք ի Տեառնէ զվարձս բարիս և բազմապատիկս։ Արդ՝ զայդպիսի յաւուրս հարազատութեանս յարաժամ ի ձէնջ խնդրելով՝ պատուիրեմ մի կալ ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ հեռի. այլ երբեմն ըստ հանդիպման և ըստ ձեռնտուութեան՝ գալ ոմանց ի ձէնջ ի սուրբ Աթոռս ի յուխտ և յերկրպագութիւն, առ ի տեսանել աչօք զՔրիստոսասէջ սուրբ տեղիս, և վայելել հոգեւորապէս զշնորհս սորա և զ օրհնութիւնս մեր։ Եւ զորպիսութեանց ձերոց ևս գրել մեզ երբեմն, զի գիտելով զբարեկեցութիւնս ձեր հոգեւորս՝ ուրախասցուք հոգւով. զի ուրախութիւն մեր դուք էք ի Տէր։ Եւ կատարօղդ հոգևոր հրամանացս մերոց՝ եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ. և շնորհք սրբոյ և Աստուածափջի Աթոռոյս ընդ ձեզ լիցի յամենայն ժամ։ Ամէն։ Ի ՌՄԼ. ի յունիսի։

Թուղթ առ Գիւտ Հաշխանայոյ Ղոաջնորդ Ծակոը վարդապետն՝ որ ի վերոյ յիշեցաւ ի պատասխանի Թղթոյն. ըստ մտաց վերոյգրեցելոյ Թղթոյն։

Թուղթ առ Ախլցխացի տէր Եղիայն, շնորհակալութիւն եւ օրհնութիւն վասն մոմին զոր ի յՕգրօպակերտու յղեալ էր, եւ վասն հարազատութեանցն։

Թուղթ ի Թիֆլիզ, առ Տօքտօր Ծակոբըն, որ էր քժիշկ ոմն՝ ինկլիզ, նոր գնացեալ անդ։ (Որ եւ յառաջագոյն աստ եւս էր հանդիպեալ։) Որ եւ այժմ դարձեալ էր ի դաւանութիւն սրբոյ եկեղեցւոյս մերոյ, եւ զբէր թէ փափագ

ունիմ զալ եւ յայդը ընակիլ, եթէ կամիցիս՝ սկից. ապա թէ ոչ, սրթայց յայլուր. որում զրնցաւ պատասխանիդ որ ի նորքոյ։

Ցորմէ ժամանեցի Թուղթ Հայրական օրհնութեան, որդիական ողջունի՝ եւ հոգեկան սիրոյ, հանդերձ հոգեպարար Ընորհօք եւ զօրութեամբ սրբոյ իմման տեզուոյս Քրիստոսի եւ համայնից հրաշագործ սրբութեանցն որք ի սմա։ Ի վերայ օրհնեցելոյդ ի Ցեառնէ Աստուծոյ՝ եւ զօրացելոյդ ի Ընորհս Նորին, բարեպաշտի՝ Աստուածասիրի եւ մեծահաւատի, իմաստնոյ եւ գերահանճար խոհականի, երկիւղածի Աստուծոյ՝ եւ նախանձաւորի բարեաց, սիրոզի ճշմարտութեան եւ հետեւողի ուզղութեան. եւ վառեցելոյ իսկ երկնաւորաւն կատարեալ եւ ճշմարիտ սիրով. սիրելւոյդ Մերոյ ի Քրիստոս՝ ազնուոյ եւ ցանկալւոյ. եւ բազձացողիդ բազմատենչ ըղձիւ՝ լուսատու մօրս հաւատոյ Հայաստանեաց՝ Աստուածածնէ՛ն եւ լուսակերտ Աթոռոյս սըրբոյ եւ մեծի՝ Ցօքսօր պարոն Ցակոբիդ խընդալ յարաժամ ի Ցէր մեր Քրիստոս ի յոյսն քնաւից՝ ամենայն ուրախութեամբ։ Ամէն։

(Ընորհք)։


Եւ ընդ Աստուածապարգեւ օրհնութեանս՝ ծանուցումն լիցի բարեիղձ եւ հոգեսենչ սիրելւոյդ Մերոյ ի Քրիստոս։ Զի էհաս առ մեզ Թուղթ սիրելութեան քոյ, որով իմացաք նախ զճանաչելն քո ղճշմարտութիւն, ոչ ի մարդկային ինչ յորդորմանէ, եւ կամ ըստ Ցեառն բանի՝ ոչ մարմնոյ եւ արեան յայտնեալ ինչ զայդ քեզ, այլ հօրն երկնաւորի եւ բարերարի, որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն՝ եւ ի դիտութիւն ճշմարտութեան եկեսցեն։ Որ եւ այժմ տալով քեզ զհոգին իմաստութեան եւ յայտնութեան՝ դիտութեամբն իւրով, լուսաւոր արար զաչս սրտի քո՝ առ ի ճանաչելն ճշմարտութեան։ Ուստի եւ ծանուցեալ քո զուղղութիւն եւ զճշմարտութիւն սրբոյ հաւատոյ եւ գաւանութեան հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ՝ գաւանեալ ես այժմ րզսոյնս, որպէս եւ գրեալ էիր մեզ։ Զոր եւ սիրելին մեր եւ առաջնորդն օրհնեցելոյ քաղքիդ կարապետ Աստուածիմաստ վարդապետն եւս գրեալ էր մեզ։ Որով եղեւ մեզ ուրախութիւն եւ ցնծութիւն ոչ սակաւ, եւ ի ձայն օրհնութեան փառաւորեցաք զամենողորմն Աստուած, որ ըստ իւրում ողորմութեան առաջնորդեաց քեզ ի ճանապարհ ուղիղ որով մարթասցիս վերաչուել ի քաղաքն բնակութեան սրբոց եւ սիրելեաց աստուան իւրոյ՝ յարքայութիւն վերին. ի յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս։ Որե՛ ընդ ուղղելդ զմիտս քո ի յողջամիտ վարդապետութիւն սրբոյ հաւատոյս մերոյ՝ որով եւ ի հազորդիլդ ի փրկական մարմնոյ եւ յարենէ իւրմէ, եւ յառողջանալդ հոգւով եւս քեզ զմարմնական առողջութիւն, ի բացայայտութիւն եւ ի նշանակ առողջութեանդ հոգւոյն։ Վասնորոյ՝ զծուներ պաղատանաց կրկնելով նմա՝ հայցեմ, զի պահեսցէ աստղատ զդէմ լուսաւորութիւնս մտաց քոց՝ ղոր շնորհեաց քեզ. որպէս զի ի հաւատոդ ճշմարտութեան զորս ուսարդ եւ ընկալար՝ կայցես արմատացեալ եւ հաստատեալ, եւ անշարժ ի յուսոյ աւետարանին. զայն խորհելով այսուհետեւ՝ որ ինչ ճշմարտութեամբ է՝ որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ արդարութեամբ, որ ինչ սքանչութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համրաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ՝ եւ որ ինչ գովութեամբ ի փառս անուան իւրոյ սրբոյ՝ եւ ի յուրախութիւն սրտի իմոյ եւ ի զուարճութիւն հոգւոյ՝ սիրոդիս զքեզ Աստուածպսնուն ճըշմարիտ եւ կատարեալ սիրով. եւ աղօթողիս վասն քոյ միշտ։ Իսկ որ զճշմարիտ տեսնէ եւ զփափագ սրտի քոյ ևս ծանուցեալ էիր, որ կամիս գալ ի սուրբ Աթոռս եւ առ մեզ՝ եւ կալ ընդ աստէն՝ առ ի շահել զհոգիդ. յայտնելով ևս զպարագայսն հարկաւորս՝ արգարև զարժանիսն խորհելոյ՝ առ ի շահեցեալ քան թէ վիրաւոր զքրիստոսազօր Արքայն առնել, զայս դիտասջիր առ այդ։ Զի յառաջմէ իսկ գիտեմք որ ունիս զիզձս րաղձումս սակս աստ գալոյ՝ որպէս քանիցս դրէիր ևս, և մեք ևս սպասէաք, զի թերևս ի դիպոզ ինչ ժամանակի յաջողեսցի քեզ գալ աստ, զի զմիաբանս տեսեալ ուրախասցուք։ Այժմ մինչ զներքին իղձս և զփափագս հոգւոյդ ևս յայտնելով՝ եղեր մեզ ընտանի հաւատոյ, և հետեւող հայաս-

տանեաց սրբոյ և ուղղագաւանի եկեղեցւոյ, ի հարկէ և առաւել բազմացեալ է հոգևոր իղձ աստ գալստեանդ՝ որպէս և յայտնեալ իսկ էիր։ Ու արդարև բարւոք յոյժ լինէր յամենայն կողմանէ՝ աստ գալդ, և մեզ և՛ էր ախորժելի որպէս աստացաք. և պիտանութիւնդ մեզ դու իսկ քոյ գիտես։ Լաւ լինէր ուրեմն՝ եթէ յայլոցէր, և գայիր. և չլինիցէր ինչ այնպիսի՝ որով ի քէն և կամ ի մէնջ լինիցէր օրհնեալ Արքայն որտամեայ՝ որպէս և դու գրես. և կամ այլ ինն ինչ իր չերեւիցէր խոչընդակ պատճառ դիտմանն։ Բայց արդ՝ ահա նախապէս այդ իսկ է ընդդէմ ու խոչընդակ այդ բարւոյ առաջադրութեան, զի օրհնեալ Արքայն դժուարանալոց է՝ թէ ի քէն՝ և թէ ի մէնջ. որ յայտնի իսկ է։ Եւ երկրորդ՝ այս և դպ սիրելիդ իմ, զոր ծանուցանեն քեզ բարւոք վարկանիմ՝ և պարտ իսկ։ Քանզի՝ յայդր որքան և իցէ՝ ըստ ուրում քազաք է Քրիստոնէախումբ. և օրհնեալ Արքայն և զքեզ այդպէս սիրէ և մեծարէ վասն պիտանութեանդ, որքան և ինասցես՝ շահիլոց ես, որպէս և մինչև ցարդ շահեցեալ ես։ Իսկ աստ՝ որովհետև իշխանութիւն տաճկաց է. և սուրբ Աթոռս մեր որքան և իցէ՝ վանք, և կացարան Ա-բեզայից, որոց կացութիւնքն և կենցաղավարութիւնքն ամենեւին օտար են ի կացութեանց աշխարհայնոց, մանաւանդ այնոցիկ՝ որք ի մայրաքազաքս և յաշատ տեղիս են ծնեալ և սնեալ, և փափկութեամբ կենցաղավարեալ, վասնորոյ կասկածիմ թէ՝ աստ լաւապէս ոչ շահիցիս՝ որպէս և արժան քո է. Թէպէտ և ջանայցեմք և մեք ի շահել ըստ քոյդ արժանւոյ։ Ուստի բարւոք վարկաք զայսոսիկ քեզ այժմէն ծանուցանել, ըստ որում և դու խնդրեալ էիր գրել քեզ զկամս մեր։ Եւ ահա կամք մեր հաճին թէպէտ դալ քեզ աստ՝ սակս քոյդ փափագանաց և մեզ պիտանութեան՝ որպէս աստացաք. բայց վերոյասացեալ բանքն գոն խոչնգակ այդմ դիտմանն, որպէս և ցուցաք։ Ուրեմն՝ դու զայսոսիկ բարւոք պէս մտածեալ՝ զինչ եւ վարկանիցիս օգտակար՝ զայն արասցես, անմեզադրելի զմեզ առնելով։ Եւ ի մնալդ յայդր՝ երբ և պիտոյասցիս մեզ, խնդրել կարեմք զքեզ յօրհնեալ Արքայէն, և բերել աստ՝ սակս մեզ պիտոյութեան ժամանակ ինչ. եթէ մեզ և պահով ժամանակ՝ անարգել յաջողումն՝ և ուրախ սիրտ տացէ Աստուածն։ Բայց սակայն՝ զգիրդ սիրանիշ անպակաս առնելով՝ կացցես հաստատուն և անշարժ ի սէրդ անխարդախ՝ որ առ մեզ և առ սուրբ Աթոռս Լուսաւորչուս. և ի հաւատդ ճշմարտութեան, զոր ընկալար, առնելով և զպատշաճն դմին առանց ձանձրանալոյ՝ ըստ բանի Առաքելոյն սրրազանի. զի ի ժամանակի իւրում հընձեսցես առանց լքանելոյ, Որում լիցի տէր օժանդակ, առաջադրելով քեզ յամենայն ժամանակի զհաճոյսն իւր և զօգուտն քո. խորհիլ միշտ զնոյնս և առնել. և անպատում պարգևեացն իւրոց գտանիլ հաղորդ, զոր խոստացաւ սրբոց և սիրելեաց իւրոց։ Որ և լեր ողջ ի տէր. զօրացեալ ի շնորհս և ի գթութիւնս նորին յարաժամ։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԼ թուոջ մարտի, ի Ճուլիսի, ի Քրիստոսահիմն և ի լուսակերտ Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։



Թուղթ առ Ախալցխայու Երիցփոխան ընդ հասարակ Թղթոյն, շնորհակալութիւն վասն յղեալ իրացն, եւ վերահաստատութիւն երիցփոխութեան, եւ սրբոյ Աթոռոյս գործակալութեան։ Ընդ հասարակ Թղթոյն՝ որ գրեցաւ ի վերոյ ի համարսն 84, 85։

Թուղթ առ Ախալցխայու երիցփոխն եւ առ այլ եւս երկուս իշխանս, զի զհաշիւն տէր Սահակին առնուցուն՝ որ կոնդակաւ զնացեալ էր վասն եկեղեցւոյն ի ժողով։ Եւ թէ այլ իմն կերպիւ տացէ զհաշիւն, յղեսցեն աստ։



Թուղթ առ Մաքսիմէ կաթողիկոսն Ախազազ, որ ի վիճակէն իւրմէ եւ յԱթոռոյ տարագրեալ՝ զնացեալ էր ի կա-

խէթի, եւ կայր յԱնապատին վրաց՝ որ յառնուն սրբոյ Կարապետին։ Սէր եւ միխիթարութիւն։

Ցեառնդ Մաքսիմեայ սրբազնակատար կաթողիկոսիդ, եւ Տայրագոյն Պատրիարգիդ ամենայն Ափխազաց, սիրելւոյ եւ յարգելւոյ եղբօրդ մերոյ ի Քրիստոս, եւ նոյնպէս Աթոռոյս մերոյ սրբոյ ստոյգ բարեկամի եւ օգտասիրի։ Որում եւ գիտութիւն լիցի։

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Ղուկաս կաթողիկոս եւ Տայրագոյն Պատրիարք Առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի. նաեւ՝ մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի, Ծորմէ մատուռի ողջոյնն սուրբ Քրիստոսական եւ Հոգեւորականն ճշմարիտ սէր՝ հանդերձ ստոյգ տենչմամբ եղբայրութեանս մերոյ եւ մեծաւ կարօտիւ եւ բաղձանօք,

Զի մինչ փոխեցաւ առ Քրիստոս Գերերջանիկ Հայրապետն մեր՝ եւ իմ իսկ Տ. գեղին ծնօղն՝ Տէր Սիմէօն սրբազան կաթուղիկոսն եւ ըստ կտակի նորին՝ եւ ըստ միաբան հաւանութեան Աթոռայնոցս եւ երկրականաց՝ կոչեցեալ եղաք ի յայս աստիճան, (որում չէաք թէպէտ արժանի.) ապա յետ անցուցանելոյ մեր ղպէսպէս եւ զծանրագոյն զբաղմունս՝ որք ըստ Տարկի կոչմանս մերոյ կուտեցան յամենուստ ի վերայ մեր՝ չտալով մեզ բանալ զաչս, զկնի միջոցաց յոլովից կարացաք հազիւ թէ գրել առ սիրելութիւն քո զգիր որպիսա. յայտ եւ սիրանիշ։ Զի գիտէաք զճշմարիտ սէր եղբայրութեան քոյ՝ զոր ընդ հոգելոյս ծնողին մերոյ ունէիր. եւ զերթեւեկն թըղթոց ձերոց առ միմեանս։ Ուստի՝ կամեցեալ մեր՝ զերջանիկ վախճան նորին յաշխարհէ ծանուցանել սիրեցելոյդ առ ի նմանէ՝ եւ ի մէնջ իսկ, հանդերձ մերս անցիւք եւ որպիսութեամբք, գրեցաք զասացեալն թուղթ ըղձալով ունիլ քեզ առ մեզ եւս զնոյն սիրոյ ճշմարտութիւն, զոր առ նա ունէիր։ Ծորում գրելով եւ վասն մերոյնոցն որք անդրէն ի քում վիճակի կան՝ զինգիրս ինչ եւ զյանձնարարութիւնս։ Եւ մինչ առ մեզ ունելով տակաւին, կամէաք ուղարկել առ սրբութիւն ձեր, լուաք զհամրաւ տարագրութեան քոյ ի բնիկ վիճակէդ եւ յԱթոռոյդ, եւ գալգ յայդ կողմունսդ։ Վասնորոյ՝ մեծ տրտմութիւն առ դիպեցաւ մեզ, եւ վշտացաք յոյժ յիրաւի. եւ պլ անպատեհ վարկուցեալ զԹուղթն զայն յղել՝ սպասեաք զրարի իմն համրաւ ի քոյգ կողմանէ լսել եւ միխիթարիլ։ Իսկ այժմ, ընկալաք զԹուղթ սիրոյ ի նախածանօթ սիրելւոյն մերմէ Էփթվիմէ Աստուածեմաստ եւ ճգնասուն վարդապետէն՝ ընդ Ծովհաննու վարդապետի իւրոյ Միարանի, ծանեաք ի գրոյ անտի եւ ի լանից եկողին զգալուստան ձեր ի յԱնապատդ սուրբ՝ որ յառնուն սրբոյ կարապետին եւ Մկրտչին Քրիստոսի Ծօհաննու։ Ուստի՝ թէպէտ ընդ հեռանալդ ի բնիկ վիճակէգ եւ յԱթոռոյդ, եւ ընդ անտերունչ ձնալն քեզ յանձնեցելոյ հօտին Քրիստոսեան՝ տրտմեցաք. որպէս եւ ի վեր անդ ծանուցաք, բայց զի ի տաժանելի ցաւոց եւ ի դառնութեանց աշխարհի փախուցեալ՝ ի յանքոյթ վայրգ հոգեհանգիստ եկեալ դիմեցեր. պարապեալ ի յաղօթս հոգեկեցուցս անխոնջ տքնութեամբ՝ ընդ աղօթկերացն բազմութիւնս որք յայդր, առ այգ միխիթարեցաք սրտիւ։ Զի յիրաւի միխիթարութիւն է մեծ եւ հոգեւոր՝ յԱստուածայինն միայն պարապիլ, եւ զօգտից հոգւոյ միայն խոկալով՝ յԱստուածահաճոյ աղօթս յաճախել, թեթեւացեալ ի ծանրութեանց անցաւոր աշխարհիս, եւ անանցանելի փառաց արքայութեանն վերնոյ յաւէտ փափագեալ։ Եւ զի քեզ միխիթարութիւն է այս՝ որպէս ասացաք, վասնորոյ՝ եւ մեք առ այս միխիթարեալ՝ հարկաւոր վարկաք այժմ ի ձեռն այսր սիրանիշ թղթոյ մերոյ ածել ի յիշումն հոգով իմաստնացելոյդ զբան Ցեառն մերոյ զոր ասէ՝ ընդիս ղհաղագուրթիւն ուսնիցիք, յաշխարհի ատս զնեղութիւն ունիցիք։ Որ ահա արդարև՝ երևի այս ի հանգունատիպ աշակերտացն Քրիստոսի՝ եւ իւրոյ իսկ ինքեան։ Զի թէպէտ՝ ըստ որում եւ հարկն մարմնոյ պահանջէ՝ նեղութիւնք սրտի եւ ամբոխութիւնք մտաց ի յայդպիսի դիպուածոց աշխարհի առ դիպին բազմաց որպէս եւ արդ քեզ, բայց գոանել իւրովի ղայգպիսի միխիթարութիւնս հոգեկանս, եւ իբրու երկնաւորաւն խաղաղութեամբ խա-

զաղտցուցանել ասաէն իսկ զՀոդին, (թէպէտ և խռովութիւնք մարմնականք կայցեն շուրջ,) ոակաւուց ոմանց է։ Իսկ դու յաակացար այդու ի լաղմաց, համարեալ առ ոչինչ զխռովութիւն մարմնոյ՝ սաացար քեզ զխաղաղութիւն Հոգւոյ, երևեցուցեալ քեզ զորինական ծայրագոյն խոնարհութեան և համբերութեան Փրկչին մերոյ Քրիստոսի, որ եա զքիկունս իւր ի հարուածս՝ և զծնօաս իւր յապաակս, ե. չդարձոյց զերեսս իւր յամօթոյ. ըստ Եսայեան յայանարարեալ և կանխասաց վկայութեանն։ Իսկ զի ըստ բանին Երեմիայ՝ բարերարէ Աստուածդ ի վերայ համբերողաց իւրոց. և այնոցիկ՝ որք խնդրենն զնա, և համբերին նմա ճշմարտութեամբ, և ըստ Եսայեայ դարձեալ, մերձ է որ արդարացուցանէ զհամբերօղս իւր՝ և օդնական է նոցա. վասնորոյ՝ զկամաւորդ նեղութիւն համբերութեամբ սանիլ խնդրեմ, ակնկալեալ մեծաւ յուսով առ ի նմանէ վարձուցն՝ Աստուծոյ թէ աստ և թէ ի հանդերձելումն. յիշելով և զբան սրբազան Առաքելոյն թէ՝ առ ժամայն յաճախութիւն թեթեւ նեղութեան մերոյ՝ ի յաւիտենական առաւելութիւն, զմեծութիւն փառացն գործէ ի մեզ։ Զի երևելիքս առ ժամանակ մի են, և աներեւոյթքն յաւիտենականքն։ Որ և նոյն ինքն համբերողապետն Քրիստոս, աճեցուսցէ ի հեաեւողդ իւր ճշմարտութեամբ զիւրայինն համբերութիւն, տալով եւս ըստ փորձութեանցդ և զելս. և ընդ մարմնականդ վշտաց՝ զմխիթարութիւնս և զուրախութիւնս հոգեկանս և մարմնականս հանդերձ սրտադիւրութեամբ և միխթարելով զքեզ յամենայն նեղութիւնս և ի վիշաբս։ Որպէս զի՝ որպէս առաւելն ի քեզ չարչարանք իւր, առաւել լիցի և միխթարութիւն Հոգւոյ և մարմնոյ և որպէս կամաւորդ համբերութեամբ կցորդեցար չարչարանացն, լիցին և հաղորդ փառացն՝ ի հանդերձեալ արքայութեանն։ Եւ արդ առարտ բանիցս տալով, և զառաւելն միխթարութիւն յԱստուծոյ խնդրելով շնորհել քեզ, հայցեմ ի յարգելի եղբայրութենէդ հաստատիլ ընդ մեզ ի սէր ճշմարիտ. և դրել երբեմն զգիր սիրանիչ՝ հանդերձ որպիսութեամբք քովք զորս դիտել ըզձամբ։ Եւ ունիլ զմեզ անմոռաց ի սրտի, մանաւանգ և օդնել իսկ մերումս տկարութեան՝ երկնաթռիչդ աղօթիւք։ Քանզի ըստ պօղոսեանն բանի՝ վիշաք ամենակերպք զմեզ պաշարեալ՝ անհանգիստ առնեն զմեզ յաբաժամ. որոց մանաւորապէս հասու եղև սիրելիդ մեր Ծովհաննէս պարկեշաաւարոյ վարդապետդ դրաւեր. զորս և պատմելոց է ձերում պաատուականութեան՝ հանդերձ ամենայն որպիսութեամբք մեր և սրբոյ Աթոռոյս։ Ողջ լեր ի տէր, օդնեցեալ ի նմանէ յարաժամ, և բախացեալ ի սիրտ և ի հոգի։ Ամէն։ Գրեցաւ յամի փրկութեան մերոյ ՌՉՀԱ, ի Ծուլիսի ամսոյ ԻԱ. առ դրան Լուսաւորչի և Աստուածածնի Աթոռոյս ամենայն Հայոց սրբոյ Էջմիածնի։

Թոռդ ի առ Աղբայն վրաց Հերակլիւս, յաղագս Սանահնոյ Առաջնորդ Աբրահամ վարդապետին, զոր Թարգ Եպիսկոպոս ձեռնադրելոյ՝ Առաջնորդութեամբ միայն վերադարձոյց ի վիճակն իւր. խոստանալով յետոյ ի ձեռնհաս ժամանակի ձեռնադրել եպիսկոպոս։ (Որպէս ցուցաւ ի վերոյ ի հատարն 88։) Զորս եւ սմա ծանոյց, ըստ որում եւ սա զգրեալ էր վասն նորին զթուղթ յանձնարարութեան։

Ծորմէ ժամանեցի Թուղթ Քրիստոսական սուրբ ողջունի... Լայլն։

Եւ ընդ ամենատատ օրհնութեանն Աստուածայնոյ ծանուցումն լիցի բարեպաշտութեան քումմ։ Զի յառաջ քան զայս որ դրեալ էր առ մեզ մեծութիւն ձեր զթուղթ՝ յաղագս Սաղիմացի Աբրահամ վարդապետին՝ առնել զնա եպիսկոպոս՝ և Առաջնորդ կարգել Սանահնոյ սուրբ վանիցն, էհաս առ մեզ ձեռամբ նորին, հանդերձ նոյն մեծահոչակ սուրբ վանից թեմի և վիճակի ժողովրդոց լազմակնիք մահաբաւն, որք ևս արարեալ էին զնոյն խնդիր։ Բայց քաջապէս դիտակ է օրհնեալ Արքայդ մերոյ որպիսութեան, որ ի պատճառս անիրաւ նա-

խանձու ոմանց բարեսիրաց անձանց՝ այսքան ժամանակս՝ (որ ահա սարի մի եղև,) տակաւին ոչ յղեցին մեզ ի մեծէն Պօլսոյ ղհամահաճական մահսար՝ և զարքունական հրովարտակս։ Զի թէպէտ՝ բոլոր բազմութիւն հասարակութեան ընկալեալ ունին զմեզ՝ և յամենայն եկեղեցիս յիշեն, և երթևեկք թղթոց ի նոցունց առ մեզ՝ և ի մէնջ առ նոսա լինին, և կապակցեալ են ի մեզ սիրով մեծաւ ամենեքեան, սակայն՝ պատրիարքն մեծին Պօլսոյ ընդ մեզ խոչդակին ընթանալով, սնոտի և ոչինչ պատճառանօք յօրէցօր ձգելով զհոդալն և ղյղելն առ մեզ թղթոց մերոց վերայիշեցելոց, մինչև ցայժմ ոչ արար։ Իսկ բոլոր իշխանք մեր որք անդ, խաբկելով ի բանից նորին՝ իբր թէ՝ այսօր և վաղն հոգալոց է և յղելոց, իբրեւ իմացեալ են թէ՝ այլ ևս է յետաձգելոց, որով և մեծապէս վնասիլոց է Աթոռս մեր սուրբ որպէս մինչև ցարդ վնասեցաւ և վնասի, վասնորոյ՝ այժմ հանեալ զնա ի պատրիարքութենէ հրամանաւ Արքունի, և վարեալ յայլուր՝ կացուցեալ են զայլ ոմն Պատրիարք Պօլսոյ։ Եւ զի բազմակնիքն մեր և հրովարտակն արքունի այսպէս յերկարաձգեալ՝ չէպար ի Պօլսոյ որպէս ասացաք, վասնորոյ՝ անհամեստ վարկուցեալ մեր՝ յառաջ քան զընդունիլն զայն թուղթն՝ զձեռնադրութիւնն՝ կամ զայլ դործս Հայրապետականս առնել, մինչև ցայժմ ոչ զոք տակաւին ձեռնադրեցաք եպիսկոպոս։ Այսու մտօք և զԱրրահամ վարդապետն ևս աստ արգելաք յայսքան աւուրս, որպէս զի ի յընդունիլն մեր զասացեալ թուղթն ձեռնադրեսցուք՝ և վերադարձուսցուք յայդր։ Իսկ այժմ տակաւին ոչ ընկալեալ մեր զայն թուղթն, զպատրիարքն ևս փոխեցին՝ որպէս դրեցաք, և քաղաքացիքն դեռ ևս այնուհետև պաշարեալ. և տակաւին ոչ հասանի մեզ թուղթ կամ համբաւ թէ՝ հոդա՞ն զթուղթն մեր՝ թէ ոչ։ Որով իցէ թէ՝ այլ ևս յետանայցեն այն թուղթն ի բաղում աւուրս, և մեք զԱրրահամ վարդապետդ թէ այլ ևս պահէաք աստ, շատ էր յետանալոց։ Իսկ որովհետև դու օրհնեալ Արքայդ գրեալ էիր թէ՝ կարդեա զդա Առաջնորդ վանիցն՝ զի մի մնասցէ վանքն այն ամայի, և թէ՝ որպէս մեք կամիմք զշինութիւն վանորէից տեղւոյն, նոյն գունակ և դու պարտիս կամիլ, վասնորոյ մեք ևս մտածեցաք, զի այժմոյս դորա աստ յետանալն անշահ էր, զի այս է ժամանակ հոգս առնելոյ շինութեան սուրբ տանն այնմիկ որքան ձմռան եղանակն չէ մերձենալու։ Իսկ եթէ այս քանի ամաս ևս անցանիցէր, այլ ոչ կարէր դա յայսմ՝ ամ ուռնել զհոգս շինութեան այն սուրբ տանն և այլ ևս մըննայր ամայիս։ Սակս որոյ խղճալով մեր սուրբ տանն այնմիկ՝ այսպէս պատշաճ տեսեալ առարաք, զի կարդեցաք զդա Առաջնորդ սուրբ վանիցն, և տուեալ զկոնդակ Առաջնորդութեան՝ յղեցաք յայդր։ և պատուիրեցաք, զի որքան ջերմային է եղանակն, շինութիւն արասցէ ի սուրբ վանն, և զմիաբանս ժողովեալ անդ՝ արկցէ ի կարդ շինութեան, վառեսցէ զլոյսն, և ժամակարդութիւն հաստատեսցէ։ և զպաղին վանիցն և զայլ ապրուստս վանն բնակչացն ժողովեսցէ։ և նըստեալ անդ պահեսցէ ի շինութեան։ Եւ յորժամ թուղթքն մեր եկեսցեն, և մեզ ժամանակ լիցի ձեռնադրութեան, ապա և ինքն եկեալ աստ՝ ձեռնադրեսցի։ և վերադարձցի ի վանքն իւր։ Ահա այսու կերպիւ դարձուցաք զդա յայդր խնայելով ի սուրբ տունն յայն՝ որպէս ասացաք։ Վասնորոյ և քեզ Աստուածասէր օրհնեալ Արքայիդ ևս դրեցաք՝ զի գիտասցես։ Եւ ունիցիս ղհնամս ի վերայ սուրբ վանիցն այնմիկ և ի վերայ դորա, զի դիւրապէս կարասցէ արկանել ի կարդս շինութեան, ուր փառաւորեսցի Աստուած, եւ աղօթեսցեն վան կենաց և բարեյաջողութեան օրհնեալ Արքայիդ, և թադաւորիդդ քոց Քրիստոսիւ զօրացելոց։ Որով հանդերձ լեր ողջ ի Տէր, զօրացեալ ի նոյն միշտ, եւ պահպանեցեալ խաչիւն սրբով։ Ամէն։ Ի ՌՈՄ։ Թուոջ մերում՝, ի յուլիսի ԻԶ։

Թուղթ առ Սահակայ Հոդոյթնահաց Բէժանն, ի պատասխանի թղթոյն, վասըն վերոյգրեալ քանից իւրեանց Առաջնորդ Աբրահամ վարդապետին՝ այլ եւս նոյն ղիտմամբ. զի նա եւս էր գրեալ վասն նորա։

Թուղթ ի նոր Նախիջեւան, որ է ի յերկրորդն Ռուսաց առ իշխանսն տեղւոյն եւ Դատաւորն Մագիստրաթին, այսինքն դատարանին քաղաքական, ի պատասխանի թղթոյն իւրեանց՝ զոր գրեալ էին ընդ Գրիգորին, զոր Յովսէփ վարդապետն էր յղեալ անտի։ Ծանուցանելով զյառաջ քան զայս գրելն առ ինքեանս զթուղթս ի նոյ" Ա։ Եւ այժմ եւս շնորհաւորութիւնն քաղաքին նորոյ, եւ վխիթարութիւն, հանդերձ փոքր ինչ պատուիրմամբք։ Եւ այլ առ սոյնս քանք։

Ծորմէ ժամանեցի թուղթ սիրոյ՝ ողջունի՝ օրհնութեան և շնորհաց, հանդերձ ամենառատ ողորմութեամբն Աստուծոյ՝ և հոգեպարար Ընօրհօք և զօրութեամբք սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի՝ և համայնից Աստուածակիր սրբութեանցն որք ի սմա, ի վերայ քնիկ և նախածանօթ սիրելեացդ ի-մոց հարազատ և լուսածնունդ որդւոցդ սրբոյ Աթոռոյս. օրհնեցելոյ քաղաքիդ նոր նախիջեւանու Աստուածաղօր իշխանացդ, հանճարեղ և քաբեխոհ Դատաւորաց նորահաստատ Մագիստրաթիդ որ ի դմա, ա-սինքն Կապիտան Պարոն Յովհաննիսիդ, սրբոյ Աթոռոյս Գանձապետ պարոն Մկրտչիդ, Պարոն Մարտիրոսիդ, Պարոն Յակոբիդ, Պարոն Մահտեսի Վարդանիդ։ Այլև՝ համօրէն բարեպաշտօն և Աստուածասէր իշխանացդ գլխաւորաց. Այսինքն՝ Մահտեսի Դանիէլիդ, Պօղոսճիկ մահտեսի Կարապետիդ, մահտեսի Եղիազարիդ, Պարոն Ծառուկիդ, Պարոն Մարդարիդ, Պարոն Գասպարիդ, Պարոն Վարդանիդ, Պարոն Յակոբիդ, Պարոն Յարութիւնիդ, Պարոն Զօրիդ, մահտեսի Աստուածատուր Աղայիդ, մահտեսի Մերկեա-նիդ, և այլ ամենայն Աստուածասէր իշխանացդ ի տէր զօրացելոց և ձերայնոցն համայնից. խնդալ ի Տէր յարաժամ. Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց ի Քրիստոս, և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յանցելումն ամի ի յուլիսի ամսոյ ԻԶ՝ և ի Վարդավառի կիւրակէին, մինչ Երանելի Հայրապետս մեր և Տնօղն Հոգեւոր՝ Տէր Սիմէօն սրբազան կաթուղիկոսն փոխեցաւ առ Քրիստոս. և մեք ըստ կտակի լուսահոգւոյն և ըստ համաձայն հաւանութեան միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացւոցս, և ըստ խնամոց և ողորմութեան Աստուծոյ կոչեցեալ եղաք ի յայս աստիճան. տեսաք զմեծ պահարանով-իճ թուղթ՝ շինեցեալ և պաարաստեցեալ ի լուսահոգւոյն, որպէս ղի՝ յղեսցէ յայդ երկիր՝ առ հարազատ որդին սրբոյ Աթոռոյս և սիրելին մեր՝ և Տայրադոյն նուիրակն և Առաջնորդն օրհնեցելոյ երկրիդ՝ Յովսէփ Արք Եպիսկոպոսն։ Զոր և վասն փութով ժամանելով վախճանի երանելոյն՝ չէր կարացեալ յղել, և կատարեալ իսկ էր, զի թէ ինքն չկարիցէ յղել՝ յետ վախճանի իւրոյ անխափան յղեսցեն Ուստի՝ և մեք ի յաջորդիլս մեր՝ յաղագս երկիւղի ճանապարհացն չկարացաք փութով յղել. զի մեծ խոոովութիւն դոյր ի մէջ վրաց իշխողին՝ եւ այս երկրացւոցս։ Իսկ ապա՝ մինչ հաշտութիւն եղեւ՝ եւ բացան ճանապարհքն, գրեցաք և մեք զթուղթս նորոյ օրհնութեան հանդերձ մերովս անցիւք եւ որպիսութեամբք, որք էին՝ հասարակապէս կոնդակ մի ի վերայ բոլոր երկրիդ. և առ-ոմանս յատուկ անձինս եւս ուրոյն ուրոյն թուղթք կոնդակ մի եւս յատկապէս ի վերայ նորոյ քաղաքիդ ձերոյ օրհնելոյ՝ հասարակապէս. և յատուկ թուղթ մի եւս ի վերայ Աստուածաղօր իշխանացդ։ Զորս զամենայնն ուրոյն պահարան արարեալ, ընդ լուսահոգւոյ պահարանին յղեցաք յայդկոյս ի նոյ. Եւ Իսկ ապա ի նոր թուղջ՝ եւ ի յունվարի ամսոյ ԻԳ, ժամանեցին առ մեզ թուղթք սիրելոյն մերոյ Յովսէփ Աստուածաբան վարդապետին եւ ձեր՝ ղորս գրեալ էիք առ լուսահոգին, ի ձեռն սիրելոյն մերոյ Գէֆու-

թաթ Պարոն Գրիգորին, որ մինչ եկեալ էր ի Մօղոօք, իմացեալ էր անգ որ ի նմ. Ա յլեալ Թուղթքն մեր եւ լուսահոգւոյն անցեալ են անաի եւ գնացեալ ի Հաշտարխան, որ ի գալն իւրում պատմեաց մեզ եւ մեր ընթերցեալ զԹուղթն ձեր՝ իմացաք զձեր գրեալն, մանաւանդ զ լիովին որպիսութիւնսըն ձեր իսկ ի բերանոյ Գրիգորին լուեալ՝ թէպէտ վասն անցելոց վշաց եւ փորձութեանցն ղորս կրեալ էք, տրտմեցաք, այլ զի զմեծ ողորմութիւնս եւ զառատագոյն խնամս գտեալ էք դուք ի խնամաշատ և յառատագութ Մօրէն ողորմութեան ի Քրիստոսապսակեալ և յինքնակալ կայսերուհւոյն մեծէ, որովք հասեալ էք և հասանելոց եւս էք առաւելապէս՝ մեծագոյն բարութեան՝ ապահովութեան և երջանիկ կացութեան վասն որոյ ուրախացեալ ցնծացաք ի հոգի և ի մարմին. եւ փառատեցան ի մէնջ ամենայն վիշաք եւ տրտմութիւնքն զորս ունէաք մինչեւ ցարդ վասն ձեր՝ յազագս զրկիլոյն ձերոյ ի հայրենեաց ձերոց և յերկնանման եկեղեցեացն եւ սակս պէսպէս նեղութեանցն զորս կրեալ էք։ Ուստի՝ և ի ձայն օրհնութեան փառաւորեցաք զամենողորմն Աստուած որ ընդ բազմութեան վշտացն խրատականաց զորս էած ի վերայ ձեր, ետ եւս ձեզ միխիթարութիւնս և զուարախութիւնս՝ և զբաւրեկեցութիւնս մշտնջենականս։ Եւ զինամաշատ կայսերուհւոյն մեծէ ես շնորհակալել մեծապէս՝ համայն միաբանիւք Աստուածէջ Աթոռոյս օրհնեցաք, հանդերձ թագաժառանգ և կայսերազուն Որգւովն և Թոռամբքն՝ և ամենայն ժառանգորդօք կայսերութեանն։ Զորս Ամենաթագաւորն Քրիստոս օրհնեսցէ օրհնութեամբ մեծաւ, պահելով երկար ամօք և խաղաղական կենօք. և զամենախրոխտ իշխանութիւն Տէրութեանն իւրեանց և եւս առաւել ճոխացուսցէ և բարձրացուսցէ, և ընդ ծագս տիեզերաց տարածեսցէ, և միշտ յաղթող և ահարկու պահեսցէ ի վերայ թշնամեաց իւրեանց. ի պարծանս խաչին սրբոյ՝ և ի միխիթարութիւն նեղելոցս յամենայնի։ Եւ զձեզ ես նոյն Ամենողորմն Աստուած միխիթարելով՝ մոռացուսցէ զամենայն անցեալ վիշտն ձեր. ուրախ արասցէ զձեզ փոխանակ աւուրցն յորս խոնարհ արար զձեզ. և ամոցն յորս տեսիք զչարչարանս, յայլոզելով ձեզ զշինութիւն նորոյ Քազաքիգ և եկեզեցեաց ձերոց. սփոփելով զձեզ յամենայնի ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. և տալով ձեզ զբարւոք կեցութիւնս և զապահովութիւնս՝ առ ի միխիթարութիւն և յուրախութիւն մեզ։ Իսկ արգ՝ սիրելիք մեր ի Քրիստոս, աՀա որպէս ասացաք, թէ լուսահոգին և թէ մեք՝ գրեալ եմք զԹուղթս յոլովս ի յօրինեալ երկիրդ յայդ՝ և յատուկ եւս առ ձեզ, որք ի Հարկէ Հասին յայգր մինչեւ ցարդ. և վերահասու եղէք գրեցելոցն ի նոսա։ Բայց որ խնգրեալ էիք գրել զԹուղթս օրհնութեան և շնորհակալութեան ի վերայ Աստուածապսակեալ և ողորմաշատ կայսերուհւոյն մեծի, և պայծառափայլ Քնէազ Գրիգոր Ալէքսանդրիչ Պօտէմկինին, և ձերոյ Գուվերնաթին, և այլոց եւս բազմաց՝ սիրելին մեր Յովսէփ Աստուածաբան վարգապետն էր խնդրեալ գրել զԹուղթս, առ այդոսիկ գիտասջիք։ Զի մինչ այժմ ընկալեալ զԹուղթս ձեր՝ ղոր ինչ գրեալ էիք իմացաք, հետախոյզ եղաք գրեցելոց լուսահոգւոյն որոց օրինակքն դոն աստ լիապէս. և տեսաք. զի զայն ամենայն Թուղթսն զորս այժմ Յովսէփ վարդապետն և դուք խընդրէք, գրեալ է լուսահոգին ըստ խնդրոյ սիրելոյն մերոյ Յովսէփ Արք եպիսկոպոսին։ Միայն Աստուածպօր կայսերուհւոյն մեծի ոչ է գրեալ Թէպէտ, բայց և վասն նորին մեծութեանն եւս գրեալ է ի Թղթոջ մեծի իշխանին Գրիգորի Թէ՝ Թէպէտ պատշաճէր սակս այլ քանեաց մեծագունից խնամոց ինքնակալ մեծի կայսերուհւոյն որ առ մեզ և առ ազգս մեր՝ եւս առաւել առ խղճալի և պանդուխտ ժողովուրգսն մերոյ որք ի նորն նախիջեւան՝ մատուցանել խոնարհաբար շնորհակալութիւնս առ նորին մեծութիւն, բայց գիտելով զնորին կայսերական ղբազմունսն, ոչ համարձակեցաք տալ ղձանձրութիւնս պատուական գլխոյ նորին։ Այլ գիտելով ղքեզ Առաջին նախարար և պատկեր իսկ մեծի ինքնակալութեան կայսերուհւոյն և սիրօղ ազգիս մերոյ և մեզ քոյին պայծառութեանդ մատուցաք զնուաստութեանս մերոյ շնորհակալութիւն։ Ուստի՝ հայցեմ, զի ի դէպ ժամանակի զդոյն մեր խոնարհական շնորհակալութիւնդ մատուս-

ցեւ նորին բարձրութեան ի չերևիլ մեղ անշնորհակալուս. և հայցեսցես ևս առաւել ունիլ ի վերայ մեր և ազգիս մերոյ զնոյն բարեգոյն խնա՛ն. առ ի առաւել կացուցանել զմեզ պարտականս օրհնելոյ զՅիրահաստատ իշխանութիւն իւր։ Եւ զայլս ըստ սմին աղերսանս գրեալ է լուսահոգին առ Առաւածով զօրացեալ իշխանն մեծ Գրիգոր զորս իմացեալ էք ի տարկէ մինչև ցարգ։ Եւ որովհետև այսպէս գրեալ էր լուսահոգին ուրպէս ցուցաք. վասնորոյ՝ այժմ մեք չտեսաք պատշաճ առ մեծութիւն ինքնակալ կայսերուհւոյն զնոյն շնորհակալութիւնս մատուցանել ուրոյն, և ոչ այլոցն ամենից՝ որոց Յովսէփ Աստուածաբան վարդապետն ինգրեալ էր գրել։ Զի ահա հասեալ են յայդը դրեալքն լուսահոգւոյն. զորս մինչ մատուցէ Յովսէփ վարդապետ սիրելին մեր առ իւրաքանչիւրսն. և ծանուսցէ զփոխիլն առ Քրիստոս Հոգեղոյս Հայրապետին մերոյ, և զմերս յաջորդիլն. յայնժամ՝ զոր ինչ ինքն և գուք պատշաճ տեսջիք գրել ումեք, մեզ գրեսջիք վերստին, և մեք յայնժամ գրեսցուք ըստ պատշաճին՝ ումմ և կամիցիք։ Զոր Յովսէփ վարդապետ սիրելոյն մերոյ ևս գրեցաք ահաւ։ Բայց Գումբեռնաթին ձերոյ Տերամբ զօրացեալ Վասիլ Ալէքսէիչ Չերթկովին՝ թէպետ գրեալ էր լուսահոգին զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան և վասն ձեր յանձնարարութեան, սակայն՝ որովհետև մերձակայ է ձեզ և յատուկ իշխող ձեր է և ձեզ միշտ պիտանի. վասնորոյ՝ պատշաճ տեսաք մեք ևս գրել նմա այժմ նոյնպէս շնորհակալութիւնս և զօրհնութիւնս և զյանձնարարութիւնս վասն ձեր. զոր և ահա գրեցաք հանգերձ մերովս որպիսութեամբք։ Գիր մի ևս ըստ նոյն ոճոյ՝ առ օրհնեցելոյ քաղաքիդ ձերոյ կամէնդատ Սիմէոն Գրիգորիչ Գուրիսին գրեցաք, զորս ահա տեսանելոց էք նոյնպէս և առ հասարակութիւն օրհնեցելոյ քաղաքիդ ևս ոչ գրեցաք այժմ զկոնդակ օրհնութեան. զի ոչ ևս գոյր նորապէս ինչ գրելի։ Զի զերկուս կոնդակս ի վերայ հասարակութեանգ ձերոյ, և զերկուս թուղթս ի վերայ օրհնեալ իշխանացդ՝ լուսահոգին էր գրեալ յառաջ և յետոյ։ Մեք ևս զկոնդակ մի ի վերայ հասարակութեանդ՝ և զթուղթ մի առ օրհնեալ իշխանսդ գրեցաք ընդ այն թղթոցն։ Վասնորոյ՝ այժմ չունելով զնոր ինչ գրելի, միայն զայս թուղթ ի վերայ օրհնեալ իշխանացդ գրեալ զպատրոն Գրիգորդ գարձուցաք յետս։ Յորժամ այս ևս առ ձեզ հասցի, և վերստին գրիցէք մեզ զորպէսն ձեր՝ և զշինութիւն օրհնեցելոյ քաղաքիդ և եկեղեցեացդ՝ առ ի յուրախութիւն մեզ. յայնժամ ևս դրելոց եմք հասարակապէս և յատկապէս զթուղթս օրհնութեան առ սիրելիսդ մեր ի միաբանութիւն ձեր։ Ինչ թէ և ի ձենջ ուխտաւորք եկեսցեն ի սուրբ Աթոռս յայսմհետէ՝ որովհետև ծանօթ եղև ճանապարհացն պարոն Գրիգորդ, զի միաբարիցուք միաբանքս։ Որպէս և դմա ասացեալ եմք։ Բայց զփոքր ինչ սրբալոյս Միռոն էր խընդրեալ վասն ձեր սիրելին մեր Յովսէփ Աստուածաբան վարդապետն. վասնորոյ՝ ահա դմէկ հօխայաչափ չղեցաք առ գա, բաշխել ձեզ, առ ի հոգևոր միաբանութիւն և յուրախութիւն ձեզ։ Բայց գուք օրհնեալքդ ի Տեառնէ՝ որք մինչև ցայժմ սիրով և համեստութեամբ և ունկնգրութեամբ միմեանց կառավարեալ էք զհասարակութիւն տառապակիր և խղճալի ժողովրդեանգ, և ամենայն ցաւոց գոցին բարձօք լինելով վշտացեալ էք պէսպէս կերպիւ վասն օգտի հասարակութեանն, առ այգ ունիմք զշնորհակալութիւնս յոլովս զսիրելեացդ մերոց, և օրհնեմք զձեզ. որք եղիկք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա օրհնեալ։ Այժմ և ես պատուիրեմ օրհնեցելոցդ ի Տեառնէ, զի ըստ դմին օրինակի ճաշով միշտ ընդ միմեանս սիրով և միաբանութեամբ, և գոլ լսող միմեանց, և եղբայրաբար խորհելով զօգուտս իւրեանց և զբարեկեցութիւնս հասարակին, ճաշջիք խաղաղութեամբ և հանդարտութեամբ և թարց նախանձու և խռովութեան։ Եւ ընդ այսպիսի համեստ կացութիւնս ձեր՝ յիրաւի հաճի Աստուած, և զամենայն ինչ յաջողէ ձեզ բարեպէս, և զշինութիւնս ստանայք գուք, որ և մեզ ոչ սակաւ ուրախութիւն է լինելոց և օրհնելոց եմք զձեզ միշտ։ Իսկ և՝ գրեալ էր սիրելիդ մեր Յովսէփ Աստուածաբան վարդապետ զվերահասու լինիլն եկեղեցական և վանքական անօթից ձերոց և այլ իրացն ամենից, և ձերովդ խորհրդով

արկանել զպիտանագոյնսն ի Դաւթար՝ և իւրով կնքովն գնել առ ձեզ յաւանդ՝ առ ի պիտանաւորութիւն նորակերտ եկեղեցեացն ձերոց. իսկ ղՆագոյն ղգեստսն և ղՀանգերձեղենսն տալն ի պէտս ողորմելի աղքատացն ձերոց՝ ձերովդ հաւանութեամբ: Նոյնպէս և զարդիւնս գանձանակացն սրբոյ Երուսաղէմի և սրբոյ Կարապետին՝ և այլ վանորէիցն ժողովելն և տալն ի կառավարութիւնս հասարակականս, ման աղքատաց, անանկաց, որբոց, և ի պէտս եկեղեցաշինութեանցն, բաց ի սրբոյ Աթոռոյս արգեանցն: Վասնորոյ մեզ ևս հաճոյ թուեցաւ զսրբոյ Աթոռոյս արդիւնսն ևս՝ որ լինի իրրև Ը՛ծ թուման ըստ իւր գրեցելոյն տալ ի պէտս եկեղեցաշինութեան յայդր: Վասնորոյ՝ ահա գրեցաք դմա՝ և ձեզ սիրելեացգ իմոց ևս գրեմ, զի զարգիւնսն սրբոյ Աթոռոյս՝ որքան և գասանի ի միջի ձերում ներկայապէս, արկջիք ի ծախս շինութեան միոյ յատուկ եկեղեցւոյ, որ թէ և բոլոր ծախուցն չբաւականասցի թող մասն լիցի միոյն եկեղեցւոյ ծախուցն, առ ի լինիլ յատուկ ինն սիշատակ սրբոյ Աթոռոյս ի մէջ ձերս: Զի թէպէտ՝ յաղագս բազմաձկերպ խառնուածութեանցն երկրիս՝ պակասութիւնք յոլով սրբոյ Աթոռոյս յամենայն կողմանէ, բայց զի դուք լուսածին որդիքգ սորին այդքան վշտացեալ էք և ի մէջ ցաւոց անկեալ, վասնորոյ պատշաճ է լուսատու ծնողիս ձերոյ այժմ օգնել որգւոցգ իւրոց՝ այգքանօք միայն գոնէ՝ որով ոչինչ պակասի սմա: Իսկ յորժամ ըստ խնամոց և ողորմութեան Աստուծոյ՝ և բարի ակնակալութեամբ և օգնութեամբ Առատախնամ Մօրն ողորմութեան ինքնակալուհի կայսերուհւոյն մեծի՝ սասնայցէք գուք զբարւոք շինութիւնս յամենայն կողմանէ, յայնժամ կարէք և գուք զՀաւատոյ Մայրս ձեր շահել՝ որպէս և յամենայն ժամ շահեալ էք. զի ոչինչ խարութիւն է ի մէջ մօրն և որգւոցն՝ շահել զիրեարս գոյիւք իւրեանց: Սա ի ձեզ յամենայն ժամ ղՀոգևւորն սերմանէր, և ի ձէնջ զմարմնաւորն հնձէր. այժմ ընդ Հոգևւորին և զմարմնաւոր պարգևս ընծայէ ձեզ՝ տեսանելով զձեզ ի պակասութեան: Իսկ՝ երբ զառաջին փարթամութիւն ձեր գոջիք որդիքգ, առաւել քան զառաջինն կարէք զսա շահել մարմնաւորք, և զՀոգևւոր շնորհս ի սմանէ ընդունել: Եւ զայլ երկարապէտն՝ նա և զամենայն որպէսն մեր սուրբ Աթոռոյս և երկրիս՝ իմանալոց էք ի պարոն Գրիգորէգ, որ ամենայնի վերահասու եղև՝ և պատմելոց է ձեզ: Եւ լերուք յանձնեցեալք ի շնորհս և յողորմութիւնս Ցեառն Աստուծոյ՝ պահեցեալք ի խնամս և ի գթութիւնս նորա. և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի յարաժամ ընդ ձեզ և ընդ ձերսյինսն ամենեսեան: Ամէն: Ի ՌՄԼ. ի փետր. Գ:

Թուղթ ի Բասրա, առ Իմամիազնան Մահտեսի Ցարութիւն Աղայն: Ի պատասխանի ի ՌՄԻԹ եւ ի փետր. Ժ առ լուսահոգին գրեալ թղթոյն: Վասն զանազանից հարկաւոր ղիտաւորութեանց անդ եղեալ քանից մերոց:

Թուղթ ի Բասրա, առ սրբոյ Աթոռոյս վէքիլ եւ գործակալ Բեթղէհէմեան Պարոն Ցովհաննէսն, ի պատասխանի թղթոյն զոր ի ՌՄԻԹ, եւ ի փետր. Ժ. գրեալ էր: Վասն փօլիցային՝ եւ այլ հարկաւոր իրակութեանց սրբոյ Աթոռոյս որք անդ:

Թուղթ ի Բուշեռ, առ սրբոյ Աթոռոյս վէքիլ եւ գործակալ Պարոն Աւէտն տէր Մարզարեան, ի պատասխանի ի ՌՄԻԸ, ի նոյ. ԺԹ, եւ ի ղեկ. ԺԱ, գրեալ թղթոյն, վասն որպիսութեանց մերոց, եւ փօլիցային, եւ այլ քանից որ անդ:

Ի Բուշեռ, Ցարութիւնի որդի Պարոն Աբրահամին:

Թուղթ ի Բաղդատ առ Մարզար Ա-ղան Թալղարենց, ի պատասխանի թղթոց իւրոց ոմանց առ Լուսահոգի Հայրապետն գրեցելոց, հանդերձ նո-րանցիւք մերովք, եւ այլն նման վերոյ գրեալ թղթոցդ։

Թուղթ առ Հնդկաց նուիրակ Գրիգոր վարդապետն, ի պատասխանի ի ՌՄԻՔ Թուղջն եւ ի դեկտ. ԻԲ, ի կալկաթու գրեալ թղթոյն. վասն իրակուլեանց փո-լիցայից՝ եւ այլ հարկաւոր իրաց։

Թուղթ ի մեծն Պօլիս, առ նուիրակ Մինաս վարդապետն ի պատասխանի ի ՌՄՔ Թուղջս եւ ի դեկտ. ԻԲ գրեալ թղթոյն, վասն տեղւոյ տեղւոյ տարածայ-նութեանցն, եւ այլոց իրակուլեանց։

Եւ այս փուսուկայ առ Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն, վասն Բասրայու փոլիցայիցն զորս առնոյր անդ։

Թուղթ ի Վան առ Ջուղայեցի Տէր Յովհաննիսեան Տիրացու Ստեփաննոսն, վասն փոլիցայիցն՝ զոր արարեալ էր ի վերայ նորա Ջուղայեցի Պօղոսեան Պա-րոն Թաչիկն ի Պօլսոյ՝ տալ մեզ։

Թուղթ ի մեծն Պօլիս, առ նուիրակ Մինաս վարդապետն, եւ մահսարատար Պետրոս վարդապետն, մինչ եկն աստ Տիգրանակերտու Առաջնորդ կարապետ վարդապետն՝ որ առաքեալ էր անտի ի Պատրիարքէն առ միաբանսն սրբոյ Աթոռոյս քազմակնիք մահսարով՝ զի հաստատեսցեն զչորեսին կանոնս ի սուրբ Աթոռոջս, որք ի ներքոյ յիշին։

Ցորմէ սիրով բաղմաւ եւ կարօտիւ Քրիստոսական ողջունիւ եւ Հոգեւոր օրհնու-թեամբ եւ զօրացուցիչ շնորհիւ Աստուա-ծաէջ սրբոյ Տեղւոյս, ծանուցուի լեցի սի-րելեացդ իմոց հարազատից՝ եւ յատուկ ցա-ւակցաց, եւ շնորհածին որգւոցդ սրբոյ Ա-թոռոյս՝ Մինաս եւ Պետրոս Աստուածաբան վարդապետացդ։ Զի Տիգրանակերտու Ա-ռաջնորդ կարապետ վարդապետն որ առա-քեցեալ էր այսր գալ աստ թղթովք, եկն էհաս ի սուրբ Աթոռս ի Մարտի ամսոյ ԻԲ։ Որ ունէր ընդ ինքեան զբազմակնիք թուղթ մի Ալթի ջուխաթի անուամբ. յորում էին կնիքք քահանայից՝ եւ այլ եկեղեցականաց. եւ համայնից հին եւ նոր գործակալաց ե-կեղեցեաց. զթուղթ մի եւս արտահանեցեալ ի կանոնական թղթոց Տէր Ազէքսանդրի եւ Տէր Յակորայ սրբազան կաթողիկոսացն, որ ունէր ի վերայ իւր ղկնիքս իշխանաց եւ քանի մի սեւագլխաց։ Ընդ որոց գրեալ էր եւ Պատրիարքն զթուղթ մի առ միաբանսն սրբոյ Աթոռոյս, որպէս վայել էր իւրեանց։ Զորս ի միասին հասոյց աստ կարապետ վար-դապետն։ Ուստի՝ եւ մեք կոչեալ առ մեզ զմիաբանսն ամենայն, ընթեռնուլ ետուք ա-ռաջի նոցա, եւ ամենեքեանք լուան եւ իմա-ցան։ Ապա սկսաք խօսիլ՝ որ ինչ մեզ վայել էր մեղմաբար։ Որ եւ ասացաք իսկ ճշմարտու-թեամբ թէ՝ այնպէս իմացարուք, թէ ես ոչ եմ կաթողիկոս, այլ նոյն Ղուկաս եպիսկոպոսն եմ, որպէս էի յառաջ։ Երթայք ուրեմն՝ միաբանու-թեամբ խորհեցարուք զգուշան սրբոյ Աթո-ռոյս եւ զոր ինչ դուք ամենեքեանք պատշաճ տե-սանիցէք, ինձ եւս հաճելի եւ ընդունելի է։ Եթէ կամիցիք խնդրել զայլ ոք յաղագս այսմ՝ աստիճանի, գրեցէք միաբանութեամբ եւ խնդրեցէք, ես եւս կնքեցից զթուղթն։ Ապա թէ ոչ, զոր ինչ եւ գիտէք ձեզ օ-գուտ, խորհեցարուք ի միասին։ Զայս եր-կիցս անգամ արարաք այսպէս, ժողովեալ առ մեզ զմիաբանսն։ Իսկ դասքն երկոքին, հանգերձ դաստգլխովքն իւրեանց Եսայի՝ եւ Յովհաննէս վարդապետաքն պատասխանեցին մեզ համաբերան ի ներկայութեան կարա-պետ վարդապետին թէ՝ մեք ղքեզ որպէս

միանգամ ընարեալ և կացուցեալ եմք ի յայդ աստիճան, նոյնպէս և այժմ ընդունիմք մեծաւ հնազանդութեամբ. և ոչ է ի մեզ այլ և այլ բան՝ կամ պատասխանիւ Իսկ եթէ գտանիցին ոմանք ի մէնջ, որք զներհակն խորհելով միաբան կամակցութեանս մերոյ՝ գրեալ իցեն ի մեծն Պօլիս զբանս պլպլուրեան և վրդովեալ զնոսա, որոյ սակս և գրեն մեզ նոքա զայդ կանոնագ հաստատել, պնպիսի խառնակիչ անձինքն տացեն զպատասխանիս առաջի Քրիստոսի։ Այլ սակայն ոչ են կամք մեր համաձայն ընդ նոցին կամաց. այլ զոր ինչ կամեցաք միաբանութեամբ և արարաք, այլ և նոյն կամիմք և ընդունիմք։ Որ և ժամօրհնօղ Սահակ վարդապետն ի նոյն ներկայութեան կոչեաց զմեզ, թէ ես գալով վիրաւոր և սրտնեղեալ, գրեցի յիրաւի զբանս վրդովականս ի մեծն Պօլիս, այլ այժմ ղղջացեալ եմ յայնմանէ. զի սխալեցայ։ Մանաւանդ թէ՝ գրեալքն իմ ոչ էին ի քոյդ կոզմանէ՝ իբր թէ չընդունիցիմ զքեզ ի Հայրապետ, այլ զվիրաւորութենէ իմմէ և զայնմանէ յորմէ վիրաւորեալ էի, գրեցի զոր ինչ և կամեցայ։ Զայսոսիկ այսպէս ացին ի ներկայութեան վարագետ վարդապետին որպէս գրեցաք։ Իսկ վասն Ր կանոնացն զորս խնդրեալ էին դոքա, ահա գրեցին միաբանութեամբ զԹուղթ մի առ դոսա և կնքեցին. որոյ զօրինակն մեք առեալ՝ յղեցաք առ ձեզ ընդ Թզթոյս՝ զի տեսջիք։ Եւ ահա որպէս և տեսանէք ի դմա, մինն ի խնդրոց դոցին որ էր վասն փոքրաւորաց լուսահոգւոյն՝ զի ելանիցեն ի ներսէս, ի գլուխ եկն։ Քանզի և ինքեանք յառաջադոյն գոլով զղջացեալք ի բազմաժամանակեայ և ի տաժանելի դործոց իւրեանց, բազում անդամ աղաչէին զմեզ Թողուլ զինքեանս՝ ելանել ի կարգս հասարակութեան. Թէպէտ մեք ոչ կամեաք և ոչ Թողուաք մինչեւ ցարդ։ Իսկ այժմ մինչ դոքա այնպէս հարկեալ էին ի Թզթոյն բազմականքով՝ հանել զնոսա ի ներսէս, ապա մեք և նա մեցաք. և ելին նոքա ի կարգս հասարակութեան ըստ բաղձանաց իւրեանց, վերահասութեամբ չորից գլխաւոր եպիսկոպոսաց, որպէս ահա տեսաք ի յօրինակոյդ Թզթոյն միաբանից։ Իսկ վասն միւս երից խընդրոցն, այսինքն ընտրութեան կաթուղիկոսի, կացուցանելոյ զխորհրդականս և հասու լինելոյ հաշուոցն սրբոյ Աթոռոյս, և պատուէրը տալոյ նուիրակաց, ահա տեսանէք նոյնպէս ի նոյն օրինակօջն, Թէ զի՞նչ է գրեցեալ։ Զի Թէպէտ չեն իսպառ օտար միաք՝ և բնաւ չեղեալք ի սուրբ Աթոռոջս, այլ սովորականք են մեզ՝ և եղեալք յառաջագոյն. սակայն՝ որովհետև բանս մեր այսպէս կայ ի վերայ երեսաց, և հրաման մեր յայդր անընդունակ, վասնորոյ ոչ եզև այժմ զայնս գրել և կանոնել։ Զի այսպէս եղև խօսակցութիւն հասարակութեան միաբանից սրբոյ Աթոռոյս Թէ՝ կանոնադիրք սրբոյ Աթոռոյս Հայրապետք լինին, և ոչ միաբանք կամ այլ ստորագրեալք։ Արդ Թէպէտ բարի է դրեալն Պօլսեցւոց, և սովորութիւն մեր ի բնէ, բայց զայսոսիկ Հայրապետս մեր պարտի վերահասատել իւրով կոնդակաւ և կարմիր կնքով, զի եւ մեք ղուսանցն կնքեսցուք։ Որպէս ահա և Ազէքսանդր կաթողիկոսն մեր հոգելոյս գրեալ է զկանոն՝ զորքան յիշեն ի Թուղթս իւրեանց. և եպիսկոպոսունքն ևս կնքեալ են։ Նոյնպէս և հոգելոյս Յակոբ կաթողիկոսն իւրով կնքովն միայն՝ գրեալ է անդ զկանոն։ Իսկ այսք կանոնք՝ Թէ առանց Հայրապետական կնքոյ լինիցին, ի հարկէ անվաւեր լինին։ Իսկ մինչ զԹուղթն սորին օրհնութեան զոր գրեալ է անդ՝ ոչ ընթեռնուն ահա և ոչ ընդունին, զի՛րդ ապա այժմ զկանոն գրեսցէ՝ մինչ բանն իւր անընդունակ լինի անդ։ Որք և յիրաւի իսկ ասեն։ Զի զօրհնութեան Թուղթն մեր չընթեռնուն յայդր, զանուն մեր՝ չյիշեն, ի մէջ Թզթոցն կաթողիկոս անուան եւս արժանի չառնելով՝ ընտրեալդ ձեր գրեն, մեղադրեն եւս Թէ՝ ընդէր է եդեալ զկարմիր կնիքն ի ճակատն Թզթոյն. և ի մէնջ կանօն խնդրեն, որ է անհնթեթ իմն։ Սակս որոյ՝ այսպէս եղև վճիռ հասարակութեան միաբանից սրբոյ Աթոռոյս, զի նախ դոքա միաբանեսցին սիրով ի կամս ընդ ինքեանց՝ յիշելով զանուն մեր, և ընդունելով զմեզ և զբանս մեր. և զՔարմանսն և զմահսարն մեր հոդացեալ՝ աստ յղեսցեն, ապա և ասացեալ կանոնքն հանդերձ այլ եւս հարկաւոր կանոնօք գրեսցին աստ կոնդակաւ

մերով և կնքով՝ և ինքեանք եւս զնոյնն կնքեսցեն, եւ երկու օրինակ զպյն արա-
րեալ զմին առա թողցեն, և զմիւսն յղես-
ցեն յայդր՝ առ ի միամտութիւն դոցա որ-
պէս խնդրեն։ Եւ թէպէտ կպյին բանք բա-
զումք ի դրեալն դոցա՝ պահանջօղք պա-
տասխանւոյ, այլ զի զնազդութենէ և զսի-
րոյ հարաք բուռն, վստորոյ ոչ մեք և
ոչ միաբանք մեր կամեցաք դրել ինչ առ պյնս.
այլ զոր ինչ պատշաճն է դոցա առնել զպյն
միայն խնդրեցին. զի և ինքեանք զոր ինչ
իւրեանց պատշաճի՝ արասցեն զկնի՝ որպէս
ասացաւ։ Այլև՝ յառաջ քան զայս ի փեար.
սկիզբն, որդի Արքային Հերակլեայ Լեւոն մեր-
ղպյն վախճանեցաւ ուստի՝ ամենպյն շրջակայ
իշխօղք և երևելի անձինք փութացան ի
միխիթարել զԱրքայն՝ որպէս օրէնն է։ Ապա
որոյ՝ և մեզ հարկ եղև դրել առ նա ըզ-
թուղթ միխիթարութեան, զոր և գրեցաք։
և ի ձեռն Գալուստ վարդապետին յղեցաք
առ նա որ գեռ եւս չէ դարձեալ անտի,
և վասն այն ոչ գոյ կնիք նորին ի վերայ
միաբանից թղթոյն։ Գրեցի, զի մի զպյլ ինչ
կարծիս վասն պյնր առնիցէք։ Այլ արդ ա-
հա և ինքն կարապետ վարդապետն գրեաց
զթուղթս առ Պատրիարքն և առ որս պատ-
շաճ էր. և զբազմակնիք թուղթն միաբանից
մերոց առեալ յղեաց առ Պատրիարքն։ Իսկ
զթուղթ Պատրիարքին յղեաց առ վանցի
Ասլան Աղայ՝ տալ նմա. և զթուղթն Աս-
լանին ահա մեք ի ձեռս ձեր յղեցաք՝ զի
տալիք նմա։ Արդ ուրեմն ի հասանիլն յայդր
սղն թղթոցս, ջնասլիք և լուք փութով
հոգալ տալով զհարկաւորսն մեր. և օր մի
յառաջ մեզ ծանուցանել՝ հանգերձ այլ մե-
ղապատշաճ որպիսութեամբք։ Իսկ մեք բաց
յայս թղթոյ՝ այլ որիշ թուղթ ոչ գրեցաք
այժմ ի քաղաքդ, ոչ հասարակ, և ոչ յա-
ուկ՝ առ յատկագոյն սիրելիսն մեր։ Ուստի
դուք յատուկ սիրով և օրհնութեամբ ողջ-
ջունեսջիք զամենայն հարազատս և զսրտա-
ցաւ սիրելիսն մեր՝ ի դիմաց մերոց. և ծա-
նուսջիք զեղելութիւնքս զորս գրեցաք, հայ-
ցելով յամենիցն զնորագոյն սէր և զհարա-
զատութիւն. և զայն եւս՝ զի մի ձնասցէ
սիրտ իւրեանց զմեզ՝ վասն գիր չգրելոյս
մերոյ այժմ առ ինքեանս։ Զի որքան այս-
պէս պղտորեալ կայ յայդր բանն մեր՝ և ի
ձախն ընթանայ, անպատեհ է մեզ և պա-
կասութիւն մեծ՝ այլ եւս կարմիր կնքով գիր
գրել ի յայդ քաղաքս։ Իսկ՝ մինչ ի շարժո-
զէն ամենից յԱստուծոյ՝ շարժեսցին սիրտք
հասարակութեան դոցա առ ի բարին, և
կատարեալ սիրով և միաբանութեամբ կա-
պակցեսցին ի մեզ, յայնժամ և մեք թէ հա-
սարակ և թէ յատուկ թղթովք օրհնու-
թեան շահելոց եմք զամենեսեան և ղյա-
ուկ սիրելիսն մեր եւս յանուանէ՝ որպէս
գրեցաք։ Այսպէս ծանուսջիք ամենեցուն
ղմէնջ հարցանողաց՝ զի գիտասցեն։



*Թուղթ ի մեծն Պօլիս, առ սրբոյ Ա-
թոռոյս նուիրակ Մինաս եւ մահսարա-
տար Պետրոս վարդապետան. ի պա-
տասխանի ի մայիսի Բ գրեալ թղթոյն
նոցա։ Առ որս չէր հասեալ տակաւին
թուղթն, որ ի մարտի ելն ընդ միա-
բանից մահսարին գրեցաւ, ի գալն աստ
կարապետ վարդապետին Եամթեցւոյ,
առաքեցելոյ աստ ի պատրիարքէն։ (Որոյ
օրինակն ահա ի վերդ է։) Ոչ այլ ինչ
այժմ, քայց այս թէ՝ մեր թղթոց պա-
տասխանեացն սպասեմք։ Եւ վասն փո-
լիցայիցն՝ որ ի ձեռն Յաչիկին, եւ այլ-
եւս քանից ոմանց, որք ի ստորեւ տե-
սանին։*

---


*Թուղթ առ մեծին Պօլսոյ վիճակաց
նուիրակ Գալուստ վարդապետն, որ
այժմ զգեօղորայան Ղզնիմիտու նուիրա-
կէր միխիթարութիւն վասն անյաջողու-
թեանցն, եւ յուսադրութիւն, արի լի-
նիլ, եւ համբերել եւս յաւուրս ինչ, մին-
չեւ ժամանակ լիցի, եւ գրեսցէ զգը-
րեանսն զորս խնդրեալ էր։*

Փուսուլայ առ Մինաս վարդապետն ի Պօլիս։

Վերոյգրեալ Թուղթքն ի ձեռս աւազակաց էին անկեալ ի ճանապարհին՝ յայնկոյս Կարնոյ, որք կողոպտեալ էին զտանօղ Թաղարն։ Ուստի՝ նորապէս գըրեալ յղեցաք։ Ի ներքոյ որոց որ ինչ գրեցան նոր՝ ահա այդք են որք գրին ի ներքոյ։

Ի Թղթոյ Գալուստ վարդապետին որ ընդ սոսա գրեցեալ յառաջ՝ եւ կորուսեալ, այժմ եւս կրկին գրեցաւ, որ է ի վերդ ի 233 համարն։

Թուղթ առ Իզնիմիտու Առաջնորդ Պետրոս վարդապետն, (որ երբեմն Անդրիանուպօլսոյ էր առաջնորդ.) Շնորհակալութիւն վասն առ սուրբ Աթոռս հարազատութեանցն, եւ սիրոյն որ առ ինքն. եւ զարտաքին վիճակաց նուիրակ Գալուստ վարդապետն շահելոյն՝ եւ ձեռընտու լինելոյն նմա։ Որոյ սակս եւ կրկին յանձնարարութիւն. եւ յորդորութիւն ի յառաւելութիւն սիրոյ եւ հարազատութեան։



Թուղթ ի Թիֆլիզ, առ ժողովուրդն Ջկրաշէն կոչեցեալ սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյն, զոր վերստին ի հիմանէ շինել կամէր Տնտուսեցի Մահտեսի Յովհաննիսի որդի Մահտեսի Յակոբջանն, այսու պայմանաւ, զի լիցի եկեղեցին ինքեան իբրեւ զմարմնաւոր մուլք եւ ըստացուած. (որպէս զոյր անդ այսպիսի վատ սովորութիւն.) եւ մի յիշեսցի ի պատարագոյն անուն իւր յանուանէ, այլ որպէս հասարակն է, թէ՝ շինողաց սուրբ եկեղեցւոյս։ Որում ղժկամակ եղեն Թիֆլիզցիքն յառաջ, ըստ որում՝ սովորութիւն էր ինքեանց, եւ չկամէին խափանել։ Ապա նոյն եկեղեցւոյ ժողովուրդքն ընդ այն հաճեալ բազմակնիք Թղթով հաստատեալ էին, զի այնպէս լիցի՝ որպէս եւ նա կամի. ըստ որում եւ կանօն իսկ էր ի քնէ. եւ Հոգելոյս Սիմէօն սրբազան կաթողիկոսն եւս գրեալ էր ի քաղաքն յայն զկանոնական Թուղթ վասն սոյն մտաց, զի ազատ լիցի եկեղեցին. եւ չառնիցէ ոք զնա մարմնաւոր ժառանգութիւն ինքեան։ Եւ զնոյն մահսարն՝ Արքայն եւս կնքեալ էր. եւ քերեալ աստ սրբազան վեհին եւս կնքեցուցին. զի հաստատուն լիցի. եւ մահտեսի Յակոբջանն այնու պայմանաւ շինեսցէ զեկեղեցին։ Յաղագս որոյ՝ եւ զայս կոնդակս զրեաց սրբազանն ի վերայ ժողովրդոց նոյն եկեղեցւոյն, (որ էր Տէրունի սրբոյ Աթոռոյս։) Որպէս զի հաստատուն մնասցեն յուխտին իւրեանց՝ զոր բազմակնիք Թղթով հաստատեալ են։ Եւ այլ պատուէր առ սոյն միտ։

Յորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունի եւ օրհնութեան՝ և նամակ պահպանութեան, շնորհք Առաքելական, և Աստուածային բաղմապատիկ օրհնութիւն եւ նախախնամական գթութիւն, ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ և հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյս և Տէրունի ժողովրդոցդ սորին, որք վիճակեցեալ էք սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյդ Ջկրաշէն կոչեցելոյ՝ և սրբոյ Աթոռոյս յատուկ թեմի և Տէրունւոյ՝ որ ի յԱստուածախնամ քաղաքդ Թիֆլիզ։ Սրբասէր քահանայից, բարեպաշտօն իշխանաց, և առ հասարակ օրհնեալ ժողովրդոցդ ամենից, խնդալ ի Տէր յարաժամ։ Ամէն։


(Շնորհք)

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցուաք լիցի սիրելի և հո-

գևոր որգւոցգ մերոց, հարազատ և լուսա-
ծնունդ զաւակացդ և Ցերուսի ժողովրդոցգ
սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Զի իմաստունն
Սողոմոն գրէ ի հոգեշունչ և իմաստալի
րանս իւր թէ՝ մի փոխեր զսահմանս յա-
ւիտենականս՝ զոր եգին հարք քո: Այդ ի
ընէ անտի՝ ի նախնեաց սրբոց և ի Հայրա-
պետաց երանելեաց կանոնեցեալ է՝ զի եկե-
ղեցի սուրբ՝ որ է տուն Աստուծոյ, և տեղի
փառաբանութեան նորին, և քաւարան մե-
ղաց մարգկան, լիցի աղաւթ յամենայն մարմ-
նաւոր իշխողութենէ և չասիցի ուժեք ժա-
ռանգութիւն. զի Աստուծոյ է ժառանգու-
թիւն. և ազատ մայր հաւատացելոցն եւ զի
ընդդէմ այսմ կանոնի՝ ի քաղաքիդ ձերում
վերերեւեալ է վտանգաւոր իմն սովորութիւն
յետամտական, զի շինօզքն եկեղեցեացդ այն
պէս տիրեն եկեղեցւոյ իրրեւ մարմնաւոր
ժառանգութեան և ապրանաց և ղանուանս
իւրեանց բացարձակ և որոշակի յիշեցու
ցանեն ի սուրբ պատարագն, վասնորոյ՝ և
հոգելոյս Հայրապետն մեր Ցեր Սիմէոն կա-
թողիկոսն՝ ի ՌՄՒՐ թուոջն մերում գը
րեալ է ի յօրհնեալ քաղաքդ զթուղթ կա-
նոնական և հոգևոր խրատու՝ զի մի այս-
պէս լիցի, այլ աղաւթ մնասցեն եկեղեցիքն
ի մարմնաւորաբար իշխողութենէ շինողաց.
և շինօզքն բաւականասցին միայն հասարակ
յիշմամբ որ ի սուրբ պատարագոջն: Որպէս
ահա գոյ ի միջի ձերում կանոնն լուսա-
հոգւոյն, և գիտէք ամենեքեան: Եւ զի
այսպէս փակեցեալ է կանոնիւք աղաւթ մնալ
սրբոյ եկեղեցւոյ ի մարմնաւորաբար իշխո-
ղութենէ շինողաց՝ որպէս ասացաք, վասն
որոյ՝ հոգելոյս Մահտեսի Յովհաննէսն ներս-
նուսեցի՝ մինչ կամեցեալ էր զսուրբ եկե-
ղեցիդ ձեր նորապէս շինել ի հիմանէ, հա-
ճեցեալ էր ըստ վերոյիշեալ կանոնացս
շինել, որպէս զի՝ մի ասիցի ինքն աէր եկե-
ղեցւոյդ այգմիկ սրբոյ, և մի որոշակի յի-
շեսցի անուն իւր ի սուրբ պատարագոջն,
այլ հասարակապէս միայն, որպէս և ըստ
բնականի կանոնին յիշի ի սուրբ պատար-
գոջն թէ՝ Ազաչեսցուք և խնդրեսցուք և
վասն հոգւոցն հանգուցելոց. ևս առաւել՝
վասն հանգուցեալ բաւնապետացն մերոց
և շինողաց սուրբ եկեղեցւոյս: Իսկ այսմ
Աստուածահաճ կամեցողութեան լուսահոգի
մահտեսի Յովհաննիսին ոմանք ընդդիմակ
երևելով և անկանոն սովորութեան քաղա-
քիդ ջատագովելով. խափանեցեալ էր բարի
առաջագրութիւն նորին, և շինութիւն եկե-
ղեցւոյդ մնացեալ էր անկատար: Իսկ ապա՝
յետ վախճանի նորին միչ կամեցեալ էր
որդի նորին Աստուածով զօրացեալ Մահտեսի
Յակոբջանն՝ սրբոյ և հոգևոր որդին մեր
և հարազատ զաւակն սրբոյ Աթոռոյս՝ ըզ-
բարի իղձս լուսահոգի հօրն իւրոյ լցուցա-
նել. և շինել զսուրբ եկեղեցիդ ձեր՝ այնու
կանոնօք և դիտմամբք՝ որ ասացաւ՝ դուք
հոգևոր որգիքդ մեր և ս շարժեցեալք ի Աս-
տուծոյ ի նոյն բարի կամս և ի դիտումնս՝
հաճեցեալ էք ըստ բնականի կանոնին վե-
րոյ յիշեցելոյ շինել զսուրբ եկեղեցիդ ձեր,
և էյիշել անուն նորա որոշապէս ի սուրբ
պատարագոջն: Որոյ աղագաւ և զգիր ուխտի
և պայմանի գրեալ և կնքեալ տուեալ էք
մահտեսի Յակոբջանին, որպէս զի մի ևս
այսուհետև զներհակն կամիցի ոք ի ձէնջ
ընդդէմ դորին բարի և Աստուածահաճ կա-
մացն և դիտմանն. այլ զոր ինչ ինքն կամի՝
այնպէս լիցի. այսինքն զի եկեղեցւոյն մի
այնպէս իշխեսցէ որպէս մարմնաւոր ժառան-
գութեան և անուանն ևս անորոշապէս յի-
շեսցի և ոչ որոշակի: Որք և Աստուածա-
ղոր Արքային ևս կնքեցուցեալ էիք զնոյն
գիրն ձերոյ ուխտի եւ պայմանի. որ և գը-
րեալ իսկ էր զՀաճութիւն և զՀաւանութիւն
ի յայնս: Զոր և մեք եւս տեսաք, և Աս-
տուածաշարժ կամաց և դիտմանց ձերոց
հասու եղաք և ուրախացաք. և շնորհա-
կալութեամբ բազմաւ օրհնեցաք զՔրիստոս
աղօր Արքայն՝ և զձեզ զամենեսեանսն:
Զորս նոյնինքն Ցերն մեր Քրիստոս օրհնեսցէ
և զօրացուսցէ, և ղվարձս բարիս և բազ-
մապատիկս պարգևեսցէ ձեզ՝ աստ և ի հան-
դերձելումն: Եւ մեք ևս զնոյն թուղթն պայ-
մանի ձերոյ կնքեցաք, և հաստատեցաք
զուխտն ձեր՝ կալ և մնալ ի ձեզ հաստատուն
համաձայն նախնեացն սրբոց կանոնաց: Վասն
որոյ և զայս օրհնութեանս մերոյ թուղթ՝
գրեցաք այժմ առ ձեզ. նախ՝ առ ի ծա-
նուցանել ձեզ զուրախանալս մեր առ այդ՝
և զյորհակալիս ղձէնջ, որք ճշմարտու-
թեան եղէք սիրօղք և բարւոյ ցանկացօղք,
ուղղութեան հետևօղք և առնօղք, և նախ-

նեացն սրբոց կանոնաց կատարօղք։ Զորոգդ ունիմք արդարև զշնորհակալութիւնս յոլովը։ և օրհնութեամբ մեծաւ օրհնեմք զձեզ միշտ։ Որք և եղիջիք օրհնեալք և ղօրացեալք ի Տեառնէ։ Եւ երկրորդ առ ի պատուիրել ձեզ՝ զի հաստատուն կացցէք յուխտիդ ձերում զոր ուխտեցիք։ Որ և պատուիրեմ իսկ ահա հայրականաւ սիրով. զի որպէս սիրով և բարեհաճ կամօք ուխտեալ և պայմանեալ էք զայդ ուխտդ Աստուածհաճոյ՝ չլինիլ սմեռք ի ձէնջ այսուհետև ներհակ բարի կամաց սիրելի որդւոյդ մերոյ Մահտեսի Ցակորջանիդ՝ որպէս ասացաւ ի վերոյ. նոյնպէս և կատարօղք լինիջիք դմին ըստ Աստուածհայր Մարդարէին խրատու թէ ուխտս դիք և կատարեցէք չմոռանալով և ղխրատն որդւոյ նորին իմաստնոյ Աստուածեզէն Հոդուոյն առլցեղոյ, թէ մի փոխեր զսահմանս յաւիտենականս՝ զոր եդին հարք քո։ Ուրեմն՝ մի և այսուհետև արծածեսցի ի ձեզ մոլեկան իղձն այն, թէ եկեղեցի շինողաց անունն բացարձակ և որոշակի յիշեսցի։ Քանզի այդ սրոշակի յիշումդ անուանց շինողաց եկեղեցւոյ այնպէս է որպէս փողով և բարբառով ոզորմութիւն առնել ուրուք. որ ոչ ունի վարձս ի յԱստուածոյ։ Ցորմէ Տէրն մեր ըզդուշացուցանէ ի սուրբ Աւետարանին թէ՝ Զդոյշ լերուք ողորմութեան ձերում՝ մի առնել ի ցոյց մարդկան. գուցէ և վարձս ոչ ընդունիցիք ի հօրէն ձերմէ որ յերկինս է։ Ալ յորժամ առնիցես զողորմութիւն, ասէ, մի հարկանէր փող առաջի քո՝ որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս և ի հրապարակս որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ. այն իսկ են վարձք նոցա։ Տեսէք ուրեմն զառ ի Տեառնէ ասացեալս, թէ զի՞րդ անվարձ մնան այնոքիկ, սրք զաներևոյթապէս ընդունիլն յԱստուծոյ զվարձս և զշնորհս հոգևորս առ ոչինչ համարեալ՝ երևելի փառաւորութեան միայն ցանկան։ Որպիսի է և այդ ահա, որ յայդր ոմանք ի շինողաց եկեղեցւոյ՝ երևելի և որոշակի յիշման անուանց իւրեանց և առ ի մարդկանէ փառաւորութեանցն առաւել ցանկան, քան թէ աներևոյթ և փրկարար շնորհաց սրբոյ Պատարագին։ Արդ ուրեմն՝ մի ոք երևելեօքս խարելով, յաներևոյթ շնորհացն զրկեսցի. զի երևելիքս առ ժամանակ մի են, իսկ աներևոյթքն յաւիտենականք՝ ըստ բանի երանելւոյն Պօղոսի։ Լերուք ուրեմն ամենեքեան բարեաց ջատագովք, և ուղղութեան հետևօղք (որպէս և հետևեալ իսկ էք.) և բարի կամեցողութեամբ և օգտարար բանիւք՝ օժանդակք և ձեռնտուք սիրելւոյդ մերում մահտեսի Ցակոբջանիդ. զի յաջողութեամբ և ուրախութեամբ աւարտեսցէ ղշինութիւն սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ. առ ի հոգևոր ուրախութիւն և ի մխիթարութիւն ձեզ. և ի ղուարձութիւն մեզ։ Եւ կատարօղքդ հոգեւոր հրամանացս մերոց, եզիջիք օրհնեալք յԱմենասրբոյ Երրորդութենէն՝ և յամենայն սրբոց նորա՝ և ի մէնջ. և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ։ Ամէն։


Ի ՈՄՐ. յօդոստ.։



Թուղթ առ Իսրայէլ կաթողիկոսն, ի պատասխանի զրոյն, որ գալ կամէր աստ եւ մեք ւսյժմ արգելաք։ Եւ այլ պատասխանիք իբրու սիրոյ քանիցն։

Ցորմէ սիրով իսկականաւ, և քրիստոսական սուրբ ոգւովնիւ, ծանուցումն լիցի սիրելւոյ եղբօրդ մերոյ ի Քրիստոս՝ Տեառնդ Իսրայէլի կոհեմաւիայլ և սրբասէր կաթողիկոսիդ։ Զի յօդոստոսի ծԶ դրեալ թուղթըդ մեզ էհաս, և իմացաք զդրեալսդ։ Ստանէաք և ղսէրդ՝ որ առ սուրբ Աթոռս և առ մեզ որպէս և յառաջ իսկ էր։ Իսկ զի դըրեալ էիր թէ՝ ոչ ունիմ զկարծիս և զերկբայութիւնս ինչ թէ արդեօք սիրիցիմ ի ձէնջ, և կամ ընդունի սէրդ ունիցիս առ իս, և այլն։ Առ այդ գիտասցես, զի թէ զհարաշատութիւնսդ և զսէրդ չիցեմք աեսեալ և լուեալ, կարելի է քեզ զայդ կարծել։ Իսկ՝ մինչ քանիցս դրեալ ես առ մեզ զդիր սիրանիշ և սրաաշահ, և ամէն եկօղք մեր յայդրուստ՝ զսէրդ, զշահեցողութիւնդ և զմարդասիրութիւնդ քո պատմեալ են մեզ, և դիտեմք լաւապէս՝ թէ զո՞րքան, և զո՞րպիսի սէր առ մեզ ունիս, ապա զի՞ա՞րդ կարծելի է քեզ՝ թէ մեք պակասեալ իցեմք ի սիրոյ, զոր մ՚՞ արասցէ Տէր։ Զի

թէև չլինիցին այսոքիկ պատճառքս առ ի սիրացուցանել զքեզ, ոչ ահա խրատիմք ի ցեառնէ, թէ՝ Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, եւ սրբազան Առաքեալն Պօղոս ևս ուսուցանէ՝ առեալ զչար, զհետ երթալ բարեաց. և եղբայրսիրութեամբ առ միմեանս գոլ գթածք, և այլն որ զհետ: Ապա՝ որպէս զքոյգ սէր ցուցանես առ մեզ հաստատուն, նոյնպէս և զմերն գոգացես: Իսկ որ ընդ սիրելւոյն մերոյ Պարոն Միրզայ Մինասայէլին գրեալ առ քեզ զԹուղթ՝ գրեալ էաք ի նմա թէ՝ ըստ խնդրոյ Միրզայ Մինասայէլին գրեցաք. գու յայնմանէ որիշ կարծիս առեալ՝ գրես թէ՝ մինէ նո՛ր ճանապարհ զմիմեանս, և յառաջագոյն ոչ էաք կապակցեալ սիրով, և այլն: Գիտեմ. յառաջագոյն եմք ծանուցեալ զմիմեանս, և կապակցեալ սիրով ճշմարիտ, և այժմ ևս ի նոյնն կամ. և ոչ եմ փոփոխեցեալ, զի զբարիս իմ ևս գիտես, որ ոչ գիտեմ զայգպիսի յեղափոխումն: Ոակայն՝ այս էր պատճառ այնպէս գրիլոյն, զի մեք չունէաք ըզհարկաւոր բան ինչ՝ որոյ պատճառաւն գրէաք առ քեզ զԹուղթ: Իսկ Միրզայ Մինասայէլն Թուղթ խնդրեաց ի մէնջ ի վերայ քոյ, և մինչ ասացաք թէ՝ հարկաւոր պատճառ չունիմք գրելոյ թէև ունիցիմք ևս՝ ժամանակ չունիմք. (որպէս և այժմ ևս) նա ըստիպեաց թէ՝ առանց գրոյ ոչ երթամ: Ուստի և մեք զայն սիրոյ Թուղթն գրեալ առ քեզ՝ զայն բանն ևս եդաք, թէ ի խընդրոյ Միրզայ Մինասայէլին գրեցաք. որպէս զի՝ գու ևս գիտասցես թէ մեզ յայնժամ հարկաւոր միաք և պատճառ ինչ ոչ գոյր գրելոյ առ քեզ զԹուղթ այլ նորին ստիպմամբն գրեցաք: Ուրեմն՝ լեր և առ այս անկարծիք, որ չունի ևս զտեզի ինչ կարծեաց: Իսկ առ այն՝ գոր գրեալ էիր թէ՝ ի սեպհ. գալոց եմ, լուր: Զի թէպէտ բարւոք լինի, և մխիթարիմք միմեամբք ի գալդ. բայց զի որպէս և գիտես, թէ յաղագս աւերուածոց երկրիս, և թէ յաղագս այլ և այլ անբարի պատճառաց՝ չունիմք գեռ ևս մեք և սուրբ Աթոռս զկատարեալ իմն հանգըստութիւն, վասնորոյ և զուրախ սիրտ ևս չունիմք: Մանաւանդ բազմազան և ծանրագոյն հոգալիք ևս պատեալք զմեօք, չատն մեզ երբէք բանալ զաչս: Արդ՝ յայնժամ լինի գալդ բարւոք, մինչ մեք զապահովուածիւնս և զուրախ սիրտ ունիցիմք. կարիցիմք ժամանակ գտանել և ընդ միմեանս խօսիլ, և զիրերաս մխիթարել: Իսկ մինչ այսպէս զբաղեալ և պաշարեալ կամք, որ և զմեզ ևս շահել չկարեմք, զի՞րդ դու սիրելի եղբայրդ մեր աստ շահիս և մխիթարիս այժմ զմեզ այսպէս տեսանելով: Զի փոխանակ ուրախութեան և մխիթարութեան՝ քեզ ևս ցաւ և տրամութիւն է լինելոց: Ապա՝ բարւոք է այժմ չգալդ և մի եկեսցես. այլ ձա ժամանակ ինչ ևս, և յորժամ զպատշաճաւոր իմն ժամանակ գըտցուք մեք գրելոց եմք քեզ՝ զի եկեսցես: Զայս ևս այսպէս գիտացեալ ըստ այսմ արասցես: Այլ և ահա մեկ պահարանով Թուղթ յղեցաք առ քեզ ընդ Թլթոյս, որ պարտի հասանիլ առ Թիֆլիզու Առաջնորդ Կարապետ վարդապետն մեր՝ շուտով և օր մի յառաջ յղեա առ նա ընդ հաւատարիմ գնացողաց, եւ զգիրդ սիրանիշ՝ հանգերձ յատուկ սիրովդ անպակաս արասցես: Ողջ լեր ի Տէր. գրեցաւ ի ՌՄԼ. ի յօգոստոսի ԻԷ:



Թուղթ ի կնդրկ Ղուկ. առ անդ եղեալ Ազուլեցիսն, առ ի սրտաշահ առնել: Զի յառաջ մինչ Թուղթ գրեաց անդ նորոգ Սրբազան վեհս մեր, Նախիջեւանցւոց՝ Աստապատցւոց եւ Ղազանչեցւոց անունն գրեցաւ ի Թղթոջն. իսկ նոցին անունն ոչ գրեցաւ. որոյսակս եւ նոքա խոցեցեալք էին. վասնորոյ՝ այժմ գրեաց նոցա սրբազանն զբանս շահեցողականս:

Թուղթ առ Թօխաթցիսն, որք Գ ժամսարաւ յառաջ եւ յետոյ այժմ՝ զնեալի վարդապետն Առաջնորդ խնդրէին ինքեանց: Այսպէս թէ՝ եթէ ձեզ պիտոյ է, ապա մեզ եւ Աթոռոյս ո՞րքան, ժա-

նաւանդ յայսմ ժամանակի։ Եւ վերջապէս այս թէ՝ որքան մեզ ըէրաթ եւ ֆէրման չէ եկեալ. սա ոչ կարէ աստի ելանել, եւ երբ եկեսցէ, յայնժամ տեսցուք, եւ զոր ինչ օգուտն իցէ սրբոյ Աթոռոյս՝ եւ ձեզ՝ զայն արասցուք։

Թուղթ առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Մինաս վարդապետն, ի մեծն Պօլիս, վասն քստացի հանգուցեալ Մահտեսի Սիմէօնի քեռւոյ որդւոց դաւոյն, որք դաւի առնէին թէ՝ ինչք նորին մեզ պարտին հասանիլ. զորս եւ առնուլ կամէին ի նուիրակաց սրբոյ Աթոռոյս, ինքեանք՝ (որք էին Բ եղբարք ի յԻսմայիլ քաղաքի, Յարութիւն եւ Անանիա անուամբ.) եւ երեքին քորք իւրեանց։ Գրեաց սմա հոգ տանիլ անդ, ըերել տալ անդ զնոսա, եւ զդաւին կտրել, ի ձեռն Պատրիարքին եւ իշխանացն։ Վասն սոյն քանիս այլ եւս թուղթք գոն գրեցեալք յառաջ կոյս՝ ի 307, 308, 309, 310, 311, 312։ Տես անդ։

Փուսուլայ առ Մինաս վարդապետն, վասն վերոյգրեցեալ քանիցդ։

Թուղթ առ Թիֆլիզու Առաջնորդ Կարապետ վարդապետն եւ առ սրբոյ Աթոռոյս վէքիլ Տէր Ղազարն, վասն զեանջեցի Սիմէօն վարդապետին, որ կամէր շինել զվանսն Յօհաննու օծնեցոյն՝ Հայրապետին մերոյ սրբոյ։ Այլ էր նա ընդ մէջ թեմիցն Հախպատու եւ Սանահնու, եւ զի ի վաղուց էր աւերեցեալ, զաւթեալ էին զթեմսն նորա Հախպատ եւ Սանահին, զորս եւ ի կոնդակս նոցին արձանացուցեալ էին քազումք ի Հայրապետաց եւ ի Թագաւորաց։ Իսկ այժմ, մինչ ասացեալ Սիմէօն վարդապետն եւ գիւղական անձինք ոմանք՝ կամէին շինել զայն, Արքայորդին Գեօրկին Միրզայ՝ օժանդակէր նոցա, որ եւ գրեալ էր սրբազանին կոնդակ տալ նմա՝ եւ կացուցանել Առաջնորդ նոյն վանիցն, եւ շրջակայից նորին՝ նմին վիճակ կարծեցեալոց։ Այլ զի թէ լինիցէր այսպէս՝ աղմուկ շփոթի էր լինելոց Հախպատու եւ Սանահնու թեմիցն եւ ժողովրդոցն, վասնորոյ՝ գրեաց սոցա այժմ ծանուցանել զայս Արքայորդւոյն, եւ ժողովել զհնազոյն արս կողմանցն, եւ հարցանել, զի թէ թուղթ կամ հաւաստի վկայութիւն ինչ ելցէ՝ թէ ի ժօտակայ ժամանակի շէն իցէ լեալ վանքն այն եւ ունիցի զթեմ՝, որում այժմ տիրեսցէ, եւ Հախպատցւոց եւ Սանահնեցւոց աղմուկ չըլինիցի, ծանուսցեն, զի յայնժամ զկոնդակ տացէ վասն չինութեան նորին, իսկ թէ ոչ երեւեսցի վկայութիւն ինչ, զայն եւս ծանուսցեն։

Ցորմէ սիրով բազմաւ և Քրիստոսական սուրբ ողջունիւ, գիտասջիք սիրելիք մեր՝ և հարազատ որդիք սրբոյ Աթոռոյս՝ օրհնեցեալոյ քաղաքիդ Թիֆլիզու Առաջնորդ Կարապետ Աստուածիմաստ վարդապետ, և սրբոյ Աթոռոյս հաւատարիմ գործակալ՝ Տէր Ղազար Հանճարաշատ Քահանայ։ Զի էհաս առ մեզ թուղթն՝ զոր դու Կարապետ վարդապետ սիրելիդ մեր դրեալ էիր ընդ Սիմէօն վարդապետին Գեանջեցւոյ, Թէ կամի սա շինել զվանքն սրբոյն Յօհաննու Օձնեցւոյն. որ և խնգրեալ իսկ էիր օգնել նմա՝ զի շինեսցէ։ Եւ զնոյն խնդիր՝ սիրելին մեր ի Քրիստոս օրհնեալ և ի տէր զօրացեալ Գեօրկին Միրզայ Արքայորդին ևս գրեալ էր մեզ, զի կոնդակ տացուք նմա, և Առաջնորդ կարգեսցուք նոյն վանիցն և


իւր վիճակացն ղի շինեսցէ ղաչն, և անգ նստցի։ Եւ ի գիւղականաց նոյն վանիցն ևս ունէր զթուղթ մի ի վերայ մերմ՝ պնու մաօք։ Մեք ևս ի գալն նորին առ. մեզ՝ սիրով ընկալաք և շահեցաք։ Ի սյց վասն խնդրոյն՝ զոր Արքայորգին, և դու՝ և գիւղականք վանիցն գրեալ էիք մեզ, ինացաք ստակուսեալ։ Քանզի օրէն է, ղի յորժամ ոք երթիցէ առ Հայրապետն ի վանից ուրուք՝ կարգիլն նմա Առաջնորդ տանի ընդ իւր զինագոյն կոնդակս նոյն վանիցն, որպէս զի՝ և Հայրապետին տեսեալ զայնս, և զորպիսութիւնս այնր վանից և իւր վիճակացն գիտացեալ յայնցանէ, տացէ և ինքն ըստ ոճոյ նոցին զկոնդակ։ և կարգեսցէ Առաջնորդ զառ ինքն եկեալ վարդապետին։ Արդ՝ մինչ գա առ մեզ եկեալ՝ մատոյց մեզ զթուղթսն ձեր, և բերանով ևս ասաց զինդիրսն, հարցաք մեք թէ՝ ունի՞ս զհին կոնդակս ի յայն վանից։ դա պատասխանեաց թէ՝ ոչ ունիմ։ զի ի վաղուց է աւերեցեալ։ և կոնդակ ևս ղոր ինչ ունեցեալ է, ստրեալ են լեզկիքն։ Այսպէս պատասխանեաց գա։ Իսկ մեք որովհետև՝ թէ ի լրոյ՝ և թէ ըղկոնդակս ոմանս երբեմն տեսանելով, այնպէս գիտեմք թէ՝ շէն վանք ի յայդ միջոցս զգ հախպատ է լեալ և Սանահին, և թեմք իւրաքանչիւրոցն կից միաձանց և միշտ կուիւ ի մէջ դոցա. իսկ վանք սրբոյն Ցովհաննու Օձնեցւոյն՝ թէ շէ՞ն է լեալ արդեօք թէ ոչ [10]) կամ թէ ունեցեա՞լ է զվիճակ ի մէջ այդ երկուց վանիցդ վիճակացն՝ թէ ոչ, չգիտեաք, վասնորոյ՝ հարցաք դմա թէ ունի՞ այդ վանքդ զվիճակ՝ թէ ոչ։ Պատասխանեաց գա թէ՝ ունի, ահա գրեցեալ է ի մէջ թղթին։ Իսկ ի թղթոջն գրեն գեղականք վանիցն թէ՝ ղորպիսութիւնս և զանուանս թեմից և վիճակաց վանիցս՝ սեւ ի փուսուլայգ։ Իսկ փուսուլայ ոչ գոյր ի մէջ թղթին. այլ միայն ի ներքոյ։ թղթոյն՝ որիշ խամ և աղճատ գրով քանի մի գիւղորէից անուանք կային գրեցեալք. ի սկիզբն որոց գրեցեալ այս ինչ թէ՝ այս է սորա եղեալ գիւղորայքն։ Իրրև հարցաք թէ՝ որ՞պէս, որ փուսուլայ խոստանան ի թղթոջս, և չգըտնեն. ասաց թէ՝ ահա այդ է բան փուսուլային, զոր ի ներքոյ գրեալ են. զի թէպէտ այնպէս խոստացան, այլ որիշ չգրեցին, պատպէս գրեցին։ Իսկ իրրև չկարացաք մեք յայտնանէ զպարզ բան ինչ իմացեալ, ասացաք դմա թէ՝ ահա որովհետև չէ յայտնի մեզ թէ՝ յորում ժամանակի է շէն եղեալ այդ վանքդ, և այդ թեմիդ տիրեալ. վասնորոյ՝ հարկաւորիմք մեք զթուղթ գրել ի քաղաքն և զվկայութիւնս խնդրել անտի։ Որպէս զի՝ եթէ վկայեսցեն անտի թէ՝ արդարև՝ այս ինչ գիւղորպք ի բնէ այն վանից են վիճակ, և վանքն այն աիրեալ է նոցա, ապա և մեք քեզ զկոնդակ տացուք. և զգիւղորայսն զայնոսիկ գրեսցուք ի մէջ կոնդակին։ Զի իցէ թէ՝ մեք առանց այսպիսւոյ վկայութեան քեզ զկոնդակ տացուք, և անդ շփոթ իմն ծնանիցի, զի ահա գուցէ ղհին կոնդակ ունիս, և ոչ զհաստատուն իմն վկայութիւն։ Արդ՝ գու կամ մնա աստ, մինչև մեք հարցցուք անտի զորպիսութիւնս այգ վանիցդ, և ղբան ինչ ստուգեսցուք, և ապա զքեզ ուղևորեսցուք. կամ թէ կամս երթալ՝ երթ, և յորժամ յղիցեն անտի զվկայութիւն վասն վանիցդ, թէ ունի այս ինչ թեմ, դու ևս եկ յայնժամ. և մեք տացուք քեզ զկոնդակ. և կարգեսցուք Առաջնորդ վանիցն այնմիկ և յղեսցուք անդ։ Իրրև զայս ասացաք գա պատասխանեաց թէ՝ մինչև ես ոչ երթայց, ոչ լինիւ։ Ասացաք ընդ էր։ Պատասխանեաց թէ՝ սեպհական թեմք վանիցն այնմիկ այժմ ընդ իշխանութեամբ հախպատու և Սանահնու են. իսկ այդ գիւղորայքդ որք գրեցեալք են ի թղթիդ, ոչ են թեմք այն վանիցն, այլ երկու անապատք կան, որք ի մօտակայ ժամանակի ևս շէն են եղեալ, նոցա են թեմ և վիճակ։ Որք ամենեքեան այժմ աւերեն, և միայն մի գեօղ է նոր շինեցեալ. որոյ գեօղականքն ասացին թէ՝ թող այս գիւղքայքս այժմ ի վերայ այս վանիցս գրեսցին և յորժամ այն Ը Անապատքն շինեսցին, տիրեսցեն իւրեանց գիւղորէիցն, և այս վանքս յայնժամ զիւր սեպհական թեմսըն խնդրեսցէ։ Արդ՝ ես այժմ եթէ ոչ երթայց, այսց բանիցս անդ ոչ է լինելոց որ հոգացօղ։ Զայսոսիկ իբրև լուաք մեք ի դմանէ, կրկին անկաք ի տարակոյս։ Որոյ աղագաւ և հարկաւորեցաք այժմ զայս թուղթս գրել առ. ձեզ ընդ դմա, զի և ինքն եկն ահա յայդր։ Եւ այս ինչ է ձեզ

առնելի այժմ, զոր ահա գրեմ։ Արդ՝ ի հասանիլն առ ձեզ Թղթոյս, որոնեսջիք դուք ի քաղաքդ զՀնագոյն կոնդակ՝ ուր և գըլուցին, և զՀնագոյն անձինս ևս հարցջիք, և տեղեկասջիք որպիսութենանց այսց բանիցս Մանաւանդ՝ ահա գրեցաք զպատասխանի Թղթոյ սիրեցելոյն ի Քէնջ՝ Աստուծով զոբացեալ Գիւորկին Միրզայ Արքայորդւոյն, որում և գրեցաք Թէ՝ կարապետ վարդապետան և աբեր Ղազարն քեզ ծանուցանելոց են զորպէսն բանիցս Արդ՝ ի հարցանելն նորա ցձեզ, ծանուսջիք նմա զտարակոյսսն որ՝ որպէս ի վերոյ գրեցաք Զի արդարև՝ վաղիւն նորա ի նախանձ բարի վասն շինութեան բազմաժամանակեայ աւեր տանն այնմիկ՝ մեծ ուրախութիւն եղև մեզ, և օրհնեցաք օրհնութեամբ մեծաւ զինքն՝ և զիւրսն ամենեսեանն զթագաժառանգ ոստն օրհնութենէն Բայց որովհետև այսպիսի տարակուսանք գոն ի միջի, ոչ ինքեան վայելէ զանհաստատ բանս խնդրել ի մէնջ, և ոչ մեզ վայել է զանհաստատ թուղթս տալ ումեք։ Քանզի որպէս ի վերոյ ասացաք, լուեալ եմք մեք, որ Հախպատեցիք և Սանահնեցիք միշտ կռուին ընդ միմեանս վասն այն Թեմիցն՝ զորս այժմ ասեն Թէ՝ այն վանիցն է։ Մանաւանդ զԱնահնու կոնդակն լսատեսեալ եմք մեք, յորս ի վազ աւուրց հետէ՝ բազում Հայրապետք և Թագաւորք փակեն նզովիւք Թէ՝ Լօռի և այս ինչ և այն ինչ Թեմք՝ Սանահնու վանիցն լինին ի վիճակ Այսու օրինակաւ գիտեմ, զի Հախպատու վանիցն ևս լինին կոնդակք վասն իւրեան Թեմիցն, որպէս և լուեալ իսկ եմ, Թէ գոն։ Իսկ եկեղեցական օրինաց և կանոնաց կարի յոյժ ընդդէմ է զՀոգևոր յիշատակս և զժառանգութիւնս վանից կամ եկեղեցւոյ ուրուք Հանել ի նմանէ, և կամ՝ ընգգէմ կանոնաց առաջնոց գործել ինչ։ ե. կամ գՀաստատեալ բան ինչ ի ձեռն Հայրապետական և Թագաւորական Թղթոց՝ քակել և աղարտել։ Զորս և գա ինքն ևս գիտեմ՝ զի ոչ կամի, և ոչ առնէ, ըստ որում և ինքն որգի է Թագաւորի, և վրէժխնդիր արգարութեանն։ Մանաւանդ՝ որգուոցգ և զաւակաց տէր, որ ոչ ախորժի զըզնզովիւք փակեալսն առաջնոցն քակել, որ է մեզ մեծագոյն։ Բայց սակայն՝ որովհետև շարժեցեալ ի յիղձ բարի՝ կամի զբազմաժամանակեայ աւեր տունն զայն արկանել ի կարգ շինութեան, յոյժ բարի է զոր խորհի, պարտի ապա զայնպէ՛ս ի՛մ Հաստատուն բանս առնել՝ որ ինքեան և մեզ մի լինիցի մեղք, և ի յետագային ևս անմեզադրելի և անրասիր լիցուք։ Ուրեմն՝ ժողովեսցէ զամենայն Հնագոյն արս՝ որք ի քաղաքիդ՝ կամ ի Թեմսդ գտանին, յորից Թեմիցն ևս, զսինքն սրբոյ Աթոռոյս, և Հախպատու և Սանահնու, Թէ վարդապետք իցեն, Թէ Աւագ քահանայք քաղաքիդ և Թէ այլ քահանայք, և աշխարհական գլխաւոր իշխանք, և Հնագոյն և բանագէտ անձինք Ւրերել տացէ և զԱռաջնորգն Հախպատու Սանահնու և Հազարծնոյ. և զամենեսեան ի միվայր գումարեալ քննեսցէ արդարութեամբ Թէ վանքն այն յորո՞ւմ ժամանակի է լեալ շէն. և Թեմ ունեցե՞լ է՝ Թէ ոչ։ կամ Թէ՝ ինքնագլո՞ւխ վանք է եղեալ, Թէ ի ներքոյ իշխանութեան Հախպատու կամ Սանահնու։ Եւ կամ Թէ գտանի՝ ուրեք յայդր ի Թուղթս ինչ կամ ի կոնդակս յիշեցեալ անուն այն վանիցն Հանդերձ որպիսութեամբ իւրով Թէ որպիսի իցէ լեալ։ Զսյս ամենայն բարւոքապէս և արգարութեամբ քննել տացէ ղօրացեալն Աստուծով՝ սիրեցեալն մեր ի Քրիստոս Գեօրկին Միրզայ Արքայորդին։ Եւ ւրուք ևս որպէս ի վերոյ գրեցաք, Հետևիջիք ըստ ամենայնի՝ Թերևս զբան ինչ Հաստատուն գաջիք։ Եւ մինչ գտանիցի Հաստատուն իմն վկայութիւն. Թող գրեսցեն մեզ բազմութեամբ՝ որք գիտակքն լինին՝ կամ որք լսեցենն ի գիտողացն, Թէ Առաջնորգքն յիշեցեալք, Թէ քազաքիդ Աւագ քահանայքն և գլխաւոր իշխանքն, և Թէ այլ քահանայք և բանագէտ անձինք երից Թեմիցն. և կընքեսցեն ամենեքեան, և առ մեզ յղեսցեն. զի և մեք ունելով զայն մեզ վկայութիւն, արասցուք զոր ինչ արժանն է, առ ի շինութիւն սրբոյ տանն այնմիկ։ Իսկ եթէ ոչ դըացի Հաստատուն իմն վկայութիւն վասն սրբոյ վանիցն այնմիկ, և չունիցի՝ զեմ և զվիճակ սեպհական. ապա՝ Թող խնայեսցէ օրհնեալ Արքայորդին յինքն և ի մեղ։ որպէս զի՝ մի արասցուք զբանն ինչ ընգդէմ առաջնոցն կանոնաց և սահմանադրութենանց՝ և լիցուք մեզադրելիք

Իսկ Թէզայլ իմն կերպ Հնարս կարէ գտա-

նել վասն չինուԹեան տանն այնմիկ, որ էիցէ ներհակ առաջնոցն սահմանադրուԹեանց, ասասցէ ձեզ. և դուք ևս զպատաշաճն ընտրելով՝ նոյնպէս խորհրդով և միաբանուԹեամբ երից Թեմից Առաջնորդաց, Աւագ Քահանայից, իշխանաց և ժողովրդոց, (որպէս ղի՝ մի յետոյ գժտուԹիւն ինչ ծնցի,) գրեսջիք մեզ նոյնպէս համահաւան միաբանուԹեամբ և բազմակնիք Թղթով հանգերձ ամենայն որպիսուԹեամբք՝ որք այցմ կողմանէ. ղի գիտասցուք և արասցուք զլս. պատշաճինն։ Եւ այսպէս գիտացեալ լերուք ողջ ի տէր. Գրեցաւ ի ՌՄՂ. ի նոյ. Թ։

Զայս ևս գիտասջիք, յորժամ հասցի առ ձեզ Թուղթգ մեր, նախապէս ընդ Սիմեօն վարդապետիգ առեսջ տաջիք առ Արքայորդին. և զամենայն գրեալն ի դմա՝ ծանուսջիք նմա լիապէս։ Որպէս ղի յառաջ ինքն գիտասցէ և սպա՝ Թէ հրամայեսցէ սիւնհոդոս լինիլ որպէս. և գրեցաք գուք ևս հետևիջիք, և առնել տաջիք, և մեզ գրեսջիք զորպէսն՝ ղինչ և լինիցի։ Եւ մինչ հասատատուն վկայուԹիւն գացի վասն այն վանիցն, յայնժամ և Սիմեօն վարդապետդ գալոց է ի հարկէ, ղի կարգեսցի Առաջնորդ։ Իսկ ԵԹէ չկամիցի Արքայորդին հետևիլ և սիւնհոդոս առնել, դուք որքան հնար է, ի խնդիր լինիցիք Թղթոց հնագունից. և ըզբազմամեայ անձինս ևս հարցջիք, և ԵԹէ զբան ինչ հաստատուն իմանայցէք՝ մեզ գրեսջիք։ Կրկին ողջ լերուք ի տէր։ Իսկ ԵԹէ ոչ գացի հաստատուն իմ վկայուԹիւն, զայն ևս ծանուսջիք։



Թուղթ առ Ղազարոս Ժողովուրդական, պատուէր, զի մի զոք ի կարգաւորաց ազգիս մերոյ առանց հրամանի եւ վկայական Թղթոյ իւրոյ Թողուցուն ի յերկիրն յայն մտանել, որպէս կայսերական հրամանն է, եւ Հոգևլոյս Հայրապետն մեր եւս քանիցս գրեալ է առ ինքեանս վասն այսր զկնդրակ։


Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունէք և օրհնուԹեան՝ և նամակ պահպանուԹեան, Ընորհք Առաքելական ի վերայ սիրելի և հոգևոր որգւոցգ մերոց՝ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս՝ և Տէրունի ժողովրգոցդ սորին, Հայկասէր՝ լուսա՝, որք կայք զեռեզեալք ի Տիրանամ քաղաքդ Ղզլաբ սրբասէր քահանայից, բարեպաշտոն իշխանաց, և առհասարակ օրհնեալ ժողովրգոցդ ամենից, խնդալ ի Տէր յարազուարճ ցնծուԹեամբ։ Ամէն։

(Ընորհք)

Եւ ընդ Աստուածային ամենառատ օրհնուԹեանս ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որգւոցգ մերոց, և Տարազատ զաւակացդ Տէրունի ժողովրգոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ըստ որում յարաւչէն մերմէ Աստուծոյ բնաւորեալ է այս ի մարդկային բնուԹեանս՝ հետևիլ օգտակարաց, և խորշիլ ի վնասակարաց, յորոց և հեռանալ իսկ. առ որ և Աստուածային տառք յորգորեն զմեզ միշտ, որպէս ասէ Առաքեալն սրբազան, Զամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք. յամենայն իրաց չարաց ի բաց կացէք. վասնորոյ՝ Հոգևլոյս Հայրապետն մեր սրբազան, մինչ բազմիցս փորձեալ և իմացեալ՝ եռես զգչխաւոր և զմեծագոյն վնասն որք ի խաբեբայ ժողովարարաց լինին. զգուշացաւ մեծաւ զգուշուԹեամբ. և ջանաց որքան հնար է արգելուլ զանսանձ և զվնասակար շրջիլն խաբեբայից և ինքնագլուխ և վայրաշրջիկ անձանց, զի Թերևս և վնասքն որ առ ի նոցունց՝ սակաւասցին և խափանեսցին։ Այսու մտօք մանաւանդ՝ գրեաց ըզԹուղթ աղաչանաց առ խնամաշատ և առատագութ Աստուածազօր և ինքնակալ կայսերուհին մեծ, և խնդրեաց զպնպիսի ինն հրաման, զի առանց հոգևոր հրամանի և վկայական Թղթոյ Հայրապետաց սրբոյ Աթոռոյս՝ մի ոք ի կարգաւորաց ազգիս մերոյ մտցէ յայդ երկիր։ Վասն զի՝ մինչ զբազում տեղիս եռես ապականեալ և խաբեբայուԹեանց այնպիսի շատաշրջիկ անձանց և զկոլով բարեկարգուԹիւնս եղծեալ առ ի նոցունց, զգուշացաւ, Թէ գուցէ ի յայդ երկիր և յիշխանուԹիւն ևս ներամացեն այնպիսիք. և զնոյն եղծումն բարեկարգուԹեան յայդր ևս արկցեն. և լինիցին խոչ և առիԹ գայԹակղուԹեան բազմաց ի հեռաւոր երկրօջդ յայդմիկ, և մեծ ամօԹ և պակասու-

թիւն լիցի ազգիս մերոյ ի մէջ զանազան աղ-
գացդ քրիստոնէից՝ որք կան յօրհնեալ երկ-
րոջդ յայդմիկ։ Քանզի՝ ի բազում տեղիս
եղեն այսպիսի բանք։ Զի շատք ի շատաշըր-
ջիկ սևագլխաց, կամ թէ ի խաբեբայ ան
ձանց՝ որք կարգաւոր ևս ոչ էին այլ սուա
քահանայ կամ վարգապետ ձևացեալք գնա-
ցեալ ի յանկիւն տեղիս, և յեցեալք ի յիշ-
խօղս նոցին կամ զրնակիչս տեղւոյն այնմիկ
խաբեալք արարին ըստ հաճոյից իւրեանց
զինչ և կամեցան, ե զբաղում կարգս և զա-
ւանգուխիւնս եղծին և ապականեցին։ Ե-
րոց զոմանս զորս ի ձեռն կարացին բերել
երանելի Հայրապետացն մեր, ուղղեցին, և զատ
ի նոցունց սերմանեալ չարիսն մաքրեցին.
իսկ՝ զորս ոչ կարացին ի ձեռն բերել սակս
անձեռնհասուխեան տեղեացն, ձնացին թարց
ուղղուխեան, և մոլորեցուցին զրաղումս ի
յուղիղ ճանապարհէ, և կան մինչև ցարգ։
Արդ՝ սակս այսոցիկ որպէս ասացաք, զգու-
շացաւ երանելի Հայրապետն մեր Հոգելոյս,
զի մի այնպիսի անբարի անձինք կեղծաւո
րական ձեռվ մագեն յայդր՝ և զսերմն ինչ
չարուխեան սերմանեսցեն ի ձեզ։ Վասնորոյ՝
ամրափակաց զդրունս և զմուտս երկրիդ՝
անխոնարհելի և անդառնալի հրամանօք ա-
գռոսափառ և ինքնակալ մեծի կայսերուհ-
ւոյն, զի մի ոք ի կարգաւորաց ազգի մերոյ
մտցէ յայգ երկիր առանց վկայական գրոյ
Հայրապետաց սրբոյ Աթոռոյս։ Որպէս զի՝
որք ոչ են խաբեբայք կամ ինքնագլուխ
շրջողք, սյլ են արդարև ճշմարիտ կարգա-
ւորք, և կամ վասն վանից ուրուք ժողո-
վարարք առաքեցեալք ի յԱռաջնորդաց իւ-
րեանց թղթով նոցին. այնպիսիքն ունելով
զգիր վկայական ի Հայրապետաց սրբոյ Ա-
թոռոյս կամ զկոնդակ ժողովրդեան վասն
աղքատ վանորէիցն սրբոց յորոց առաքեցեալ
են, սիրով և պատուով ընկալեալ լիցին
յայդր, և զկամաւոր ողորմութիւնս յօրհ-
նեալ ազգդ մերմէ ժողովեալ՝ դարձցին ի
տեղիս իւրեանց՝ և առ Առաջնորդն՝ որք
յղեալ են զինքեանս։ Իսկ որք խաբեբայք
իցեն կամ ինքնագլուխ շրջագայողք, առ որս
ոչ գտանիցի վկայական Թուղթ կամ կոնդակ
ի Հայրապետաց սրբոյ Աթոռոյս, այնպիսիքն
դիւրապէս ճանաչիցին, և մի լիցին յայդր
ընկալեալք ի ձէնջ, այլ ի բաց վարիցին
յայսկոյս, և չմտանիցեն յայդ երկիր։ Ըդ-
այսու դիտմամբ, որպէս ասացաք, Հոգելոյս
Հայրապետն մեր զսյս արար, զի մի ղհոտ
իւր գառնուխեան յայգր ևս վեր երևե-
ցուսցեն այնպիսի խաբեբայք մտանելովն ի-
րեանց յայգր որպէս և այլ տեղիս, զոր
ասացաք ի վերոյ։ Որոց սակս ոչ սակաւ են
աշխատեալ և զգլխացաւուխիւնս կրեալ
յառաջագոյն նախնի Հայրապետքն մեր սրբա-
զանք մանաւանդ Հոգելոյս Հայրապետն մեր՝
Նորոգ փոխեցեալն առ Քրիստոս։ Եւ զի ղայ-
սոսիկ գիտացեալ և փորձեալ ունէր բազ-
մից, ապա ըստ Առաքելական խրատուն՝
զբարին և զընգունելին Աստուծոյ և մարգ-
կան արար և կանոնեաց անխոնարհելի հրա-
մանաւ Աստուածազօր և ինքնակալ մեծի կայ-
սերուհւոյն։ Զոր և ինքն քանիցս անգամ
գրեաց յայդ երկիր՝ պնդապէս պահել զայս
կանոն ըստ Աստուածազօր կայսերուհւոյն
հրամանի. յորմէ օգուտ բազում յառաջ
գայ, իսկ վնաս և ոչ մի։ Եւ յատկապէս
ձեզ ևս գրեալ է զայս պատուէր քանիցս
անգամ. մանաւանդ ի ՌՄԻԴ թուականն և ի
նոյ. Գ. յորում և յաճախապէս ցուցեալ
է զբազմադիմի վնասն՝ որք ի յայնպիսի խա-
բեբայից և կամ յինքնագլուխ շրջողաց լի-
նին. և զօգուտն՝ որ ի յարգելմանէ նոցին։
Եւ ի ՌՄԻԵ, և ի յԱպրիլի ԻԹ ևս՝ համա-
ռօտապէս գրեալ է ձեզ դարձեալ զնոյն
պատուէր, զոր ի հարկէ ունիք առ ձեզ։
Իսկ այժմ մեք ևս հարկ գիտացաք գրել սի-
րելեացդ մերոց վասն այսր, որ և գրեմ հա
և պատուիրեմ ձեզ հայրական սիրով։ Զի
որպէս հրամանն է Աստուածազօր կայսե-
րուհւոյն և քանիցս անգամ ևս գրեալ է
ձեզ Հոգելոյս Հայրապետն մեր՝ պարտիք մա
րապէս պահել զայն կանոնն, և մի ոք ի
կարգաւորաց ազգիս մերոյ Թողուցուք մտա-
նել ի մէջ ձեր և կամ յայդ երկիրդ ա-
ռանց մերոյ վկայական Թղթոյն՝ կամ կոն-
դակին։ Նոյնպէս և եթէ աշխարհական ժո-
ղովարար կամ մահեսի՝ առանց մերոյ Թըզ-
թոյ յայդր եկեսցէ առնել զժողովս, մի
ընգունեցէք, և մի ասյցէք այնպիսեացն ըզ-
առւրս ողորմութեան։ Զի շատքն ի նոցանէ
խաբեբայ լինին, կամ անհաւատք, և շա-
ռաթք, որք սուտ ժողովարար ձևացեալ, և
զսուտ կոնդակ և գիր հնարեալ, կամ թէ


զուտ մասունս և զխաչս ձևացուցեալ՝ շըրջին ի բազում տեղիս. և ժողովեալ զդրամս յոլով ի ժողովրդոց մերոց՝ անառակութեամբ մխեն աստ և անդ. զորոց զբազումսն տեսեալ եմք: Որոց ոզորմութիւն տալն զմեզ ծնանի մանաւանդ՝ քան թէ զվարձս: Ուստի՝ որպէս մեք տեսեալ եմք և փորձեալ՝ և դիտեմք զինեան որ ի նոցունց և սակս զդուշանալոյ յայնպիսեաց, դրեմք ձեզ զայս հոգևոր խրատ՝ դուք ևս ի միտ լսելով և դիտելով զի արդարև՝ չար է ընդունիլն զայնպիսի խաբեբայն, և լինիլ այնու պատճառ մեզաց քան թէ վարձուց, խորշեցարուք և ի բաց կացէք ի նոցանէ ըստ Առաքելական խրատուն. Իսկ՝ միչ եկեսցեն առ ձեզ վանուլէից ժողովարար վարդապետք իւրեանց Առաջնորդաց թըղթովին՝ և մերով կնդակաւ և վկայութեամբ նղնպէս և աղքատ ժողովարարք՝ փորձանաւորք կամ դերեսեարք, որք ի միտ զկոնդակ ունիցին, զայնպիսին սիրով և քաղցրութեամբ ընկալջիք, և ըստ արժանեաց իւրեանց շահելով տաջիք նոցա զկամաւոր ոզորմութիւնս ի փառս Աստուծոյ, առ ի շինութիւն և ի պայծառութիւն աղքատացեալ վանորէից մերոց, և կամ ի յօդնութիւն և յազատութիւն փորձանաւորաց և գերեաց, զի եւ դուք ընկալջիք փոխարէն նոցին զբազմապատիկ ոզորմութիւնս ի յԱստուծոյ: Ահա զերկոսեանն ևս ցուցաք ձեզ, զընդունելին՝ և զոչ ընդունելին՝ զրարին և չարն: Ուրեմն և դուք ևս ըստ այնմ ասացելոյ կերպի՝ փորձելով և ընտրելով զեկեալսն առ ձեզ, զբարին ընկալարուք, և ի չարացն հրաժարեցարուք. կատարելով զՀրաման սրբազան Առաքելոյն թէ՝ Զամենայն ինչ փորձեցէք, զրարին ընկալարուք. և յամենայն իրաց չարաց ի բաց կացէք: Եւ ևս՝ զոր ինչ վանս այսպիսեաց բանից և այլ հոգևոր օգտից գրեսցէ և պատուիրեսցէ ձեզ սիրելի որդին մեր՝ և արժանավայել Առաջնորդն ձեր և ծայրագոյն նուիրակն սրբոյ Աթոռոյս Ցովսէփ Աստուածարան վարդապետն և Արքեպիսկոպոսն, զամենայն կատարեսջիք սիրով և որդիական հնազանդութեամբ, առ ի յօգուտ ձեզ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ: Եւ զճշմարիտ սէր և զհարազատութիւնս ձեր որդիական առ սուրբ Աթոռս Մեր ցուցանել ունիցիք միշտ: Եւ կատարողդ հոգևոր հրամանացս մերոց՝ եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ. և Շնորհք արդոյ Աթոռոյս ընդ ձեզ եղիցի հանապազ: Ամէն: Գրեցաւ ի Թուոջ Փրկչին մերոյ՝ 1781. եւ ի մերում Թուոջ ՌՄԼ. ի դեկտ. և ի սուրբ Աթոռս Էջմիածին:



Թուղթ ի Ղզլար, առ գործակատար սրբոյ Աթոռոյս պարոն Նուրիջանն եւ իւր հօրեղբայր պարոն Դանիէլն վասն վերոյգրեալ կոնդակիդ պատուէր՝ ընթեռնուլ տալ յեկեղեցւոջն եւ գրեցելոցն ի նմա՝ իւրեանք եւս հետեւիլ եւ հոգ տանիլ:

Թուղթ առ Ղզլարու Աւագ էրեց Տէր Մարգարն, յամենեւին նման վերոյ գրեալ թղթոյդ, եւ նովին ժամօք:

Թուղթ առ Միաբանս եւ ժողովուրդս վիճակաց սրբոյ վանից Առաքելոյն Թադէոսի. վասն վէքիլ կացուցանելոյ ըզՊետրոս վարդապետն նոյնոյ վանիցն ժամանակ ինչ, մինչեւ զպատշաճաւորն ինքեանք համահաճական մտնարարս խնդրեսցեն յԱռաջնորդութիւն. եւ ինքն կացուսցէ զնա Առաջնորդ վանիցն եւ ինքեանց:



Թուղթ առ առդրէ Հրոռւսաղէմի պատրիարք Ցովակիմ վարդապետն, յաղագս բանից զոր Սահակ զեատային, որ անդ ի նոցունց զգողութիւնս արարեալ՝ եկեալ էր աստ ի մեր գեօղս. Թէ կալեալ զնա աստ՝ առաք զգողունիսն. (որոց

եւ դաւթալոյն յղեցուս, թէ որքան ինչ ակն ի մեզն.) առ ի՛ եւ կամիս՝ հաստուցուք։

** Քրիստոսի Աստուծոյ մերոյ վասն մեր մարմնացելոյ՝ կենսաձիր եւ լուսատու, յոգնահրաշ եւ գերասքանչ, փրկարար եւ Ընծորհաբաշխ գերեզմանին սրբոյ, այլեւ՝ Աստուածաբարձ եւ հրաշազարդ սրբոյ Գողգոթային, եւ այլ ամենայն Տնօրինական Տեղեացն սրբոց, բազմատեսիլ ըղձիւ. ջերմեռանդ հաւատով՝ յուսով եւ սիրով, եւ գեռնամած դիմօք, մատուցանեմ՝ զերկրպագութիւնս արժանավայելուչս։ Ծորոց եւ խնդրեմ զթողութիւն մեղաց իմոց, եւ ողջունութիւն ամենակար եւ յոգնավիշտ անձին իմոյ։ Նաեւ՝ սրբազան Առաքելոյն Յակոբայ որգւոյն Զեբեդեայ յոգնահրաշ եւ սքանչելազարդ սրբոյ գլխադրին, բազմարաղձ տենչմամբ եւ ըղձակաթ սիրով ղհամբոյրս մատուցանեմ. մաղթելով բարեխօսել առ Տէր վասն քաւութեան մեղաց իմոց եւ օգնական լինիլ տկարութեան յամենայնի վշտացելոյս։

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ՂՈՒԿԱՍ՝ որոյ եւ Ընծորհիւն կաթողիկոս. եւ Ծայրագոյն Պատրիարք Ամենայն Հայոց Առաքելական եկեղեցւոյս Քրիստոսի, նաեւ՝ Տիեզերականի Աթոռոյս մեծի սրբոյ Էջմիածնին։ Որ եւ ահա նախապէս՝ *** եւ ապա՝ յարգելւոյ եւ քաղձալւոյ եղբօրդ իմոյ սիրեցելոյ ի Քրիստոս, շնորհընկալ եւ օգտահոգ որգւոյդ սրբոյ Աթոռոյս, Ծովակիմայ Աստուածաբանվարդապետիդ եւ Արհի Եպիսկոպոսիդ եւ Արժանավայել պատրիարքիդ Աստուածակոխ քաղաքիդ սրբոյ Երուսաղէմի, կարօտիւ բազմաւ եւ սիրով իսկականաւ՝ ընծայեմ զփրկչական սուրբ ողջոյնս Զկնի սիրոյ՝ զայս ինչ ծանուցանեմ սիրելի եղբօրդ մերոյ։ Զի ի սոյն ՌՄԼ թուոջս՝ եւ ի Մարտի ամսոյ ԻԵ, գրեցաք զթուղթ նախընծայ սիրոյ եւ ոգջունի առ եղբայրութիւն քո. եւ ծանուցաք զորպէսն մեր։ Այսինքն զփոխումն առ Քրիստոս Հոգելոյս Հայրապետին մերոյ, եւ զյաջորդելն նուաստութեանս մերոյ. եւ զամենայն անցսն՝ որք ընդ երկիրս մեր եւ ընդ սուրբ Աթոռս անցին։ Զոր եւ ի մեծն Պօլիս յղեցաք առ քեզ հասուցանել. եւ իմացաք եւս՝ որ առ քեզ են յղեալ. եւ դեռ եւս չընկալաք զպատասխանին։ Իսկ այժմ՝ ընկալաք զգիր ի կարնոյ. զոր գրեալ էին առ մեզ Ե. անձինք դլխաւորք, յաղագս փուչ եւ չեզած Ցահակ գեատայի գողութեան, որ ի յԱթոռոյդ սրբոյ զգողութիւնս արարեալ՝ եկեալ է մինչեւ ցաստ, եւ էր ի դեղս մեր մերձակայ։ Որք եւ զԹուղթն քո զոր գրեալ էիր առ սիրելին մեր Հաճիրաբայն, յղեալ էին առ մեզ։ Որով իմացաք, զի այնպէս ես կարծեալ դու՝ թէ նա ի կարին իցէ կամ յայն կողմունս։ Եւ նուիրակն ձեր Պետրոս վարդապետն որ ի կարին, գրեալ էր մեզ ընդ նոսին զնոյն անցսն։ Ցորոց իմացայք զամենայն որպէսն եղելութեանն, եւ նոյն ժամայն՝ չէ ևս ի վեր հնչեցեալ համրաւայն, եւ դեռ չլուեալ ինչ ուիքք, իսկոյն եւ յանկարծակի մարդ յղեալ հանդերձ Բ. վարդապետօք ի տունն՝ յորում էր գող գեատայն այն, որպէս զի՝ մի իմասցի զձայն ինչ եւ կորիցէ, կամ զգողունսն թագուսցէ, շրջապատեալ ետուք զտունն զայն, եւ մեծաւ խուզմամբ որոնել։ Որք եւ արարին այնպէս. եւ զինչ որ գտին ի տանն կամ թէ ի վերայ իւր, զամենայն ժողովեալ բերին առ մեզ, զոր եւ առաջի եպիսկոպոսաց արկանել ետուք ի դաւթար։ Ընդ որս եւ զգողն աճին առաջի մեր. եւ մեք հրամայեցաք դնել ի փռնատունն ի շղթայս։ Եւ ապա ըերեալ առ մեզ, նախապէս մեղմօրէն հարցաք, զի թէ այլ եւս ունիցի ինչ գաղթեալ, կամ՝ թէ ումք տուեալ ի պահեստ, եւ կամ վաճառեալ, ասացէ։ Զի ասացաք թէ՝ նոցին գրեցելոց նշանն ահա երևեցաւ՝ որ է Ք ժամացոյցն, զոմանցեալն ևս բեր ի յայտ, զի մի զպատիժս կրեսցես. ապա թէ ոչ մեռանելոց ես ի ներքոյ գանից։ Իսկ նա խոստովան եղև թէ՝ գոյ այլ ես կապոցով մով ճոթեղէն՝ պահեցեալ ի տանն մերում։ Եւ մեք զնոյն Ք վարդապետն եդաք ընդ նմա, որք գնացեալ անդ՝ ինդրեալ էին զխոստացեալն, և նա հանեալ էր ի կարասէ միջէ։ Զի եդեալ ի յատակն կարասին, լցեալ էր զկարասն գարեաւ և մերձ դինւոյ կարասի եդեալ զայն կարասն ևս, և խփեալ։ Զոր ևս բերին առ մեզ։ Դարձեալ հարցաք յորդորելով թէ ասա, զոր ինչ այլ ևս ունիս ի պահեստի, կամ յաւանդ եդեալ, և կամ վաճառեալ։ Իսկ

նա սաստկապէս երգուելով և լալով՝ ոչինչ այլ ևս երևեցոյց, ասելով թէ՝ այդոքիկ են ահա՝ թէ գողացեալքս, և թէ ինձ. և ծե. Հալապի աթլաս և Գ գէղի ևս ի կարս ծախեալ եմ, եւ թէպէտ քանի մի կաոր աւշճայք, գերմէնուա, և այլ ինչ ևս ծախեալ եմ ի կարս՝ երկիցս գնալով անգ. այլ այնքիկ իմ էին. և ոչ գողունի. որոց և ըղգրամն մխեալ եմ ի հարկաւոր պէս իմ։ Բաց յայդցանէ այլ ոչինչ գոյ ինձ մօա կամ այլոց. իրև տեսաք թէ ճշմարիտ չեղև, սկսաք խոշտանգել և նեղել յոյժ ի բազում աւուրս. և զիայակն ևս յետացուցաք, զի թերևս կարասցուք այլ ևս գտանել ինչ։ Այլ չեղև Հնար։ Զի գառն արաստուօք և երգմամբ ճշծաւ ասաց թէ՝ այլ ոչ եմ տեղեակ իրի իմիք բաց յայդցանէ։ Ապա՝ իրև տեսաք թէ՝ այլ ոչինչ երևի, կոչեցաք զնա առաջի եպիսկոպոսաց. և ըզգողունեան ամենայն եղեալ առաջի նորա, ասացաք թէ՝ որոշեա, տեսցուք թէ զինչ է գողացեալգ ի հանգերձատանէն սրբոյ Երուսաղէմի, և կամ յայլոց տեղեաց։ Եւ զայս վասն այն արարաք, զի քոյգ գրեալքն քանի մի իրք էին, որ գրես թէ՝ մեր չուխայի մազղէն բացեալ են, և արշըն մօա աթլաղ են գողացեալ. և այլ մանր մժուր զաաեր։ Թարճիմանի օգայն բացեալ՝ Բ սըհաթ և Ա զարտաւայ քիւրք գողացեալ են։ Այս էին գրեալքն քո։ Իսկ ի ձէջ այս իրացս զարտաւայ քիւրքն չերևեցաւ, և շատ նեղեցաք թէ՝ ասա, զինչ ես արարեալ, երգուաւ, և ելաց թէ՝ ես քիւրք չեմ գողացեալ. և բնաւ չեմ խապար։ Սակայն՝ միւս իրքն՝ յոյժ աւելի էին քան զքո գրեալսն։ Զորս և որոշեաց գողն առաջի մեր և եպիսկոպոսաց։ Եւ երևեցաւ մօա աթլասն ԻԸ Հալապի և կէս, ժե Հալապի ևս այն է՝ զոր ի կարս է տարեալ ասաի և ծախեալ։ Բայց որիշ գունով աթլասք և այլևս իրք ևս որոշեցան, զորս ի ձեր չուխայի մազղայէն է հանեալ։ Եւ ընդ Թարճիմանի Բ ժամացուցին եցոյց այլևս բազում ինչ զորս ի նորին օգայէն է հանեալ։ Զորս ուրոյն ուրոյն գրեցուցաք ի գաւթարի և կնքեցուցաք Գ գլխաւոր եպիսկոպոսաց. և ի ԹղԹոյս եգեալ ահա առ քեզ յղեցաք, զի տեսցես։ Իսկ զԺե Հալապի աթլասն եւ Գ գէղին զորս առեալ ծախեալ էր ի կարս ընդ այլ իրաց, որպէս ի վերոյ գրեցաք. (զոր եւ ի կարսայ ևս գրեալ էին մեզ,) ըստ ախմարութեանն և յիմարութեանն՝ (որ չէ առած և ծախած.) աթլասի Հալապին Ա ոսկւով եր առեալ. և Գ գէղին Ի զուռուշի էր ծախեալ, որք լինին ի միասին ԿԱ. զոհ և ժ փարայ։ Զոր ևս ի պատրաստի գտեալ ի ձեռին՝ առաք. զի նոր էր եկեալ ի կարսայ յայնմ երեկոյին յորում ըմբռնել եաուք. և ահա զայն գրածն ևս ընդ այլ իրացն դրեցաք ի գաւթարըն՝ որպէս տեսանելոց ես։ Իսկ ի միջոյ իրացն այնոցիկ քանի մի իրս ևս որոշեալ ասաց թէ՝ սոքա իմ են. յորոց զոմանս ի Խասրպ են բաշխեալ ինձ. և զոմանս ես իմ գրամովս եմ առեալ վասն մօրս։ Ոորս էր Ա ըղյ սանգր հին ամանով. յորոյ վերայ գոյին փոքր ինչ մանր մարգարիտք. Զորս ասաց թէ՝ Խաչիկ Ազգն է տուեալ ինձ ի կողմանէ իւր չրազ Ծովհաննիսին՝ որ մեռաւ։ Ընդ որում և այլ քանի մի մանր իրք էին, զորս ասաց թէ իմ են։ Ունէր ևս ի ձեռին Ա մինալու սըհաթ բանեցուցած. զոր ասաց թէ իմ է. և չեմ գողացեալ. և ձեր գրածն ևս երկու սըհաթ էր՝ որք ելին ահա. և գրեցաք ի գաւթարն։ Ունի և Ա ձի, և Ա Թուանկ իւր պարագայիւքն։ Այսոքիկ էին առ սա գտանեցեալքն. և այլ ոչինչ։ Թէպէտ բազում նեղութիւնս հասուցաք, և տակաւին ի բանտի է, տեսցուք թէ՝ այլևս զի նչ եմք առնելոց։ Իսկ որ գրես թէ՝ ժամ. օրհնողն օգայն բացուեցաւ, Դ՚ զուռուշառեալ են և գողացեալ։ Սա երգնու թէ՝ ես այնմ չեմ մասնակից. զի զայն Գէորգ և Վարդան տղայքն գողացան. (Գէորգն այն է՝ զոր և գու գրես, թէ ընդ նմա բանալի էին ուշաուրմիշ արարեալ։) Որք ասէ յայս ինչ տեղւոջ կիսեալ էին. որոյ համբաւն ի վեր հնչեցաւ. և պատրիարքին ևս ասացին՝ մինչ ես անգ էի։ Այն Դ՚ զուռուշի գողն նորա են, և ոչ ես։ Այս ևս այսպէս։ Մընաց այժմ զայս ասել սիրոյդ թէ՝ ահա ի սէր սրբոց Ցեղեացգ Ցնօրինականաց որքան կարացաք՝ աշխատեցաք. և ի գողոյն յայնմանէ եղեալն այդոքիկ են ահա՝ զորս արկաք ի գաւթար, և առ մեզ ի պատրաստի են։ Ուրեմն՝ ուր է կամիս գրես մեզ զի հասուսցուք առ նա զսոսին հասուցանել ի սուրբ Աթոռգ և առ քեզ։ Այլ և՝ յերկ-

րոջս մերում ի քեալարայ գեղջն Հանգուցեալ Երիցփոխան Ցաբուխիւնի որդիք գոն՝ Ծովհաննէս և Ոսկան, Որք ղհինգ Թուման փող՝ (որ է Հե ղուռուշ.) յանուն սրբոյ Ա. Թոռոյդ բերեալ եաուն մեզ. և խնդրեցին հասուցանել յայդր և առ. քեզ, և ի քէն զԹուղթ օրհնութեան և միամտութեան բերել սալ առ ինքեանս։ Ուրեմն գրեա առ. սոսա զԹուղթ միամտութեան և օրհնութեան, և յղեա ի ձեռս մեր, զի ասցուք իւրեանց՝ և միամտիցին, և զայս Հե ղուռուշս ևս ում որ կամիս, գրեա զի հասուսցուք առ. նա ընդ վերոյգրեալ գողունի իրացն։ Եւ զգիրդ սիրանիշ պակաս մի առնիցես, հանդերձ յատուկ սիրելութեամբ, և առ. սուրբ Ա֊թոռս անկեղծ և ստոյգ հարազատ որդիական սրտացաւութեամբ և օգտասիրութեամբ։ Եւ զորպիսութեանց և զբարեկեցութեանց սրբոյ Ա֊թոռոյդ և քո գրեսցես մեզ՝ զի գիտասցուք և ուրախասցուք։ Իսկ մեք և սուրբ Ա֊թոռս և երկիրս այժմ քան զանցեալն կերպիւ մի ապահովութեան կամք՝ ողորմութեամբն Աստուծոյ. Ընդլովալ ևս այցելութեան և խաղաղութեան ի Ցեառնէ։ Եւ որ ինչ պօլսոյն են անցք՝ լուեալ ես ահա եւ գիտես։ Զհրովարտակն մեր հոգացեալ յղեալ էին զօրինական, սակայն՝ մահսարատարն մեր դեռ ևս առ մեզ ոչ էհաս հրովարտակօքն։ Եւ այսքան ինչ գիտացեալ զմերոց օրպիսութեանց, եւս ողջ լեր ի Ցէր։ Ի ՌՄԼ. ի գեկ. ԻԹ։




Թոռդք առ Հիսանան Նարեցի, վասն քանից վերոյգրեալ զող Սահակ զեատային, նոյնպէս՝ որպէս եւ պատրիարքին սրբոյ Երուսաղէմի գրեցաւ ի պատասխանի իւրեանց Թղթոյն։

Թուղթ առ մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն, մինչ եկն ի նմանէ գիր, թէ զՊետրոս վարդապետն հանդերձ ֆրմանօք եւ մահսարօք ի հոկ. ԻԹ ուղեւորեցաք ղէպ ի սուրբ Ա֊թոռդ։

ՓԱՂՈՒԱԾՔ։

Վասն պ. Խաչիկի ԴՈՒ զուռշին՝ զոր խոստացեալ է տալ վասն ապեցման Աաենի ժամագրքին, եւ յետ մերոյ տարեյ առնու՝ գու գրես թէ՝ կամիմ ես՝ զի ղերկու հազարն առցուք, և յետ երկուց ամաց առցուք իւրեան։ Որ և հարցեալ էիր, թէ՝ որպէս կամիս։ Ահա ասեմ քեզ, զի զՀկ փարայ եւս մի առնուցուս պին ԴՈՒ-էնն։ Այլ թող ձայ. և յետոյ որպէս գրեցիր քեզ, այնպէս արասցես։ Մի կարծիցես այսու՝ թէ ոչ եմք ապեղոց զԱաենի ժամագիրքն. զի ահա տեսեալ եմք զպատրաստութիւնն և տեսանեմք. և ի գալ թզթոյն զոր յղեալ ես ընդ Պետրոս վարդապետին վասն ապման նորին, սկսանելոց եմք ի ապել. և զանուն սիրելւոյն մերոյ պ. Խաչիկին դնելոց եմք ի նմա ըստ իւր բաղձանացն, հանդերձ առնուամբք ընտանեաց իւրոց, և որպիսի օրինակաւ խնգրեալ է ապել՝ այսինքն աղօթիւք ճաշոցին, եւ նոր Ցօնացուցին յուսահոգւոյն, այնպէս եմք ապելոց։ Սակայն զդրանն մի առնուցուս. այլ թող ձնասցէ առ ով և է. մինչեւ ղոր ինչ գրեսցուք քեզ՝ այնպէս արասցես։ ...


Իսկ եւ սպագիր սիրացու Պօղոսն որ ի Թիֆլիզ է, ԶՁ ղուռուշի փօլիցայագիր էր խնդրեաց ի վերայ քոյ՝ ի ձեռն մեր կատարեսթ վարդապետին որ անգ է. եւ մեք յազագս հարկին պահանջելոյ՝ եաուբ։



Թոռդք առ Աղոռոհիոս ժողովոդքսն ի պատասխանի իւրեանց Թղթոյն, որք գԺԼ ղուռուշ զանձանակաղրամ էին յղեալ ձեռամբ տէր Մարտիրոսին։ Շընորհակալութիւն։ Եւ վասն երկուց քահանայիցն իւրեանց պատուէր՝ սիրով եւ եղբայրաբար վարիլ ընդ միմեանս խաղաղութեամբ։ Եւ պատուէր դարձեալ յԱխթարմայից հեռի կալ. ընդ որս եւ չառնել խնամութիւն. եւ զպարոն Անտուածատուրն կարգեաց Աթոռակալ. եւ ի կողմանէ սրբոյ Աթոռոյս վէքիլ։

Թուղթ ի Զմիւռնին, առ Աբրահամ Աստուածատուր Աղային, վասն Փիլիպպոս վարդապետին Առաջնորդին եւ նուիրակին իւրեանց։


Փուսուլայ առ մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն, վասն Բայազիտու փաշայի խնդրոյն՝ զոր գրեաց առ պատրիարքն, եւ յղեաց առ փաշային՝ զի ինքն յղեսցէ։ Զոր եւ սմա գրեալ ծանոյց, զի մինչեւ ցհասանիլն անդ այն թղթոյն, ինքն զայն ծանուսցէ Պատրիարքին. զի յառաջագոյն իմացեալ լիցի, եւ թէ կարելի իցէ՝ հոգ տարցէ ի հասանիլն առ ինքն թղթոյն։



Թուղթ առ մեծին Պօլսոյ Պատրիարք Յովհաննէս վարդապետն, վասն Բայազտոյ Ինաղ փաշայի խնդրոյն, որ ահա ի հանդէպ գրեալ կայ ի փուսուլայոջ Մինաս վարդապետին։ Ինդիրն՝ հետեւիլ եւ հոգ տանիլ։

Ցորմէ սիրով իսկականաւ, Քրիստոսական սուրբ ողջունիւ՝ եւ բազմատենչ կարօտիւ, ծանուցուաձ լիցի սիրելւոյն եւ յարգելւոյ եղբօրդ մերոյ, Ընորհընկալ եւ օգտակար ոգւոյդ սրբոյ Աթոռոյս, Տեառնդ Յովհաննիսի Աստուածաբանութեան վարդապետիդ եւ Արհւոյ Եպիսկոպոսիդ, եւ Արժանավայել Պատրիարքիդ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ, Զի սիրելի որդին մեր եւ հարազատ զաւակն սրբոյ Աթոռոյս Պետրոս խոհեմազարդ վարդապետն եկն էհաս ի սուրբ Աթոռս ի փետր. ամսոյս ՚ի բերելով զհրովարտակն Արքունի՝ զբազմակնիք Թուղթն օրհնեցելոյ քաղաքիդ՝ հանգերձ սիրածիր եւ զուարճաբար Թղթովք սիրեցելոյ եղբօրդ մերոյ եւ Աստուածազօր իշխանացն օրհնեցելոյս։ Որովք եղեւ մեզ ցնծութիւն եւ ուրախութիւն մեծ՝ հանդերձ բոլոր Միաբանիւք սրբոյ Աթոռոյս։ Ուստի՝ եւ շնորհակալեցաք զսիրելի եղբօրդ մերմէ՝ եւ զօրհնեալ իշխանացն եւ զժողովրդոցն ամենեցունց՝ զհարազատ որգւոցն սրբոյ Աթոռոյս. եւ օրհնեցաք զամենեսեանն. որք ամենեքեան եղիցին օրհնեալք յԱստուածոյ՝ եւ ի մէնջ։ Իսկ մեք եւս ձեռնարկեալ գրեմք ահա շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ զպատասխանիս իւրաքանչիւրոցն. Թէ հատարակապէս՝ եւ Թէ յատկապէս. զորս եւ յետաւուրց ինչ յղելոց եմք։ Սակայն՝ ի սոյն ներկայիս յաղագս հարկաւորութեան իրիք զայս համառօտ Թուղթս մեր հարկաւոր համարեցաք գրել սիրոյդ. որում եւ հոգ տանիլ խնդրեմ՝ քանզի՝ շատ է պատահեալ այսպիսի ինչ (զոր ասելոց եմք) յայս կողմունքս. որոց սակս եւ գրեալ են յայդր Առաջինքն մեր երանելիք, եւ յայդր հոգացեալ են։ Վասնորոյ եւ ես այժմ զսոյն զոր ասելոց եմ, գրեմ՝ սիրոյդ, որ է այս։ Զի յայս կողմունքս գոյ ազգ մի քրտաց՝ որում կասկանլու ասեն. որք ի Բայազտոյ փաշային ապստամբեալք՝ ի սահմանամերձ տեղիսն կարսայ շրջագային, զի քեօչարիք են։ Որոց ի յոյժ զզուեցուցանելն զբարեկամն սրբոյ Աթոռոյս եւ մեր՝ զՊօլվաթլու Ինաղ փաշային Բայազիտու, քանի մի ամսով յառաջ զօրս էր յղեալ ի վերայ նոցա. զի Թամբեհ արասցեն, եւ ծանուսցեն ինքեանց զչափս իւրեանց։ Իսկ նոցա զայս իմացեալ յառաջագոյն՝ մեալ էին ի գիւղորայսն Կարսայ՝ որք մերձ են Արփաչայ կոչեցեալ գետոյն։ Ուստի՝ մինչ գնացեալ էին զօրքն ի վերայ նոցա՝ եւ դարձեալ, ի բերելն ի նոցունց զառ եւ զապուր ինչ, հանդիպեալ էր՝ զի եւ յապրանաց գեօզականացն Կարսայ խառն ընդ նոսին բերեալ էին ի Բայազիտ։ Զոր իբրեւ իմացեալ էր զօլվաթլու փաշային, բարկացեալ էր յոյժ ի վերայ զօրագլխացն, եւ յերեսէ ձգեալ. եւ գիր գրեալ ի Կարս առ որդիսն Իբրահիմ Աֆանտուն Թէ՝ ապրանաց աեարքն եկեալ սպրանացն իւրեանց։ Եւ չեւ եւս հասեալ փաշային մարգոյն ի Կարս, ապրանաց աեարքն եկեալ բազմութեամբ առ փաշային՝ ինդրեալ էին շնորհել ինքեանց զապրանսն իւրեանց՝ զբերեալսն գօրացն։ Եւ գօլվաթլու փաշային ընկալեալ զնոսա սիրով եւ մեծարանօք, եւ պահեալ ժամանակ ինչ առ ինքն,

պնքան՝ մինչեւ ղամենայն կողպտեալ ինչսն նոցա հանեալ ի քրտացն՝ տուգանօք եւ ա-ւելորգօք. տուեալ էր նոցա զինչսն իւրեանց. եւ ուրախութեամբ գարձուցեալ ի տեղիս իւրեանց։ Եւ զի այսպիսի եղելութիւնք անցին, յիշեալ Դօլվաթլու փաշայն կարծելով թէ՝ գուցէ ի թշնամեաց ոք այլ եւս կերպիւ ստայօդ բանս գբեսցէ յայգր ի գուռն Արքունի, եւ զվատաբանութիւնս ինչ արասցեն յայգր զինքենէ, վասնորոյ՝ գրեալ էր մեզ ծանուցանել զայսոսիկ եղբայրութեան քումդ, զի գիտացեալ լիցիս զստոյգ եղելութենէն. Եւ եթէ յայգր խօսք եւ զրոյց ինչ ի գուռն Արքունի յայսմ կողմանէ անցցէ, գու զուզդիշն ասասցես, եւ զոր ինչ օգուտն է՝ զայն խօսիցիս։ Վասնորոյ գրեմ սիրելի եղբօրդ մերոյ, զի մուզայէթ լիցիս այսմ՝ բարւոքապէս. Եւ ի լինիլն յայգր այսմ առարկութեան, գու որքան կարես՝ ըստ ամենայնի զօգուտն յիշեալ Դօլվաթլու փաշային ջանա եւ զբարին խօսեաց զստոյգ եղելութիւնն ծանուցանելով, եւ ստաբանից ստոցն խափանումն տալով։ Մանաւանդ՝ շնորհակալ լինելով ըստ ամենայնի զբարերարութեանցն՝ զոր առնէ համայն երկրականաց իւրոց, որք միշտ շնորհակալ լինին ղնմանոց մեծութեան նորա։ Զի յիրաւի այնքան է ապահովացուցեալ զերկիրն յամենայն կողմանէ, մինչ զի՝ բազումք աստի եւ անտի անգ դիմեն ի ներքոյ իշխանութեան նորա։ Զի չէ եղեալ երբէք այսպէս խաղաղ եւ ապահով երկիրն Ռայազիտու՝ որպէս այժմ է, զոր եւ մեք իմանամք, եւ մերայինքն եւս գրեն շնորհակալութեամբ։ Մանաւանդ մեզ եւ սրբոյ Աթոռոյս մերոյ եւս յոյժ բարերար է, եւ ի բնէ իսկ բարեկամ ի հարց եւ ի նախնեաց հետէ։ Եւ ունի ընդ մեզ զմեծագոյն սէր, եւ կամեցօղ է միշտ օգտից մերոց եւ առնօղ. զորմէ ունիմք զշնորհակալութիւնս յոյժ յոլովս. որումէ տացէ տէր զխաղաղական կեանս՝ հանդերձ իւրայնովքն պահելով անվնաս։ Արդ ուրեմն՝ այսպիսւոյ բարերարի եւ խնամածուի հասարակութեան՝ եւ մեզ իսկ յատուկ, պիտոյ է՝ զի նոյն վերոյ ասացեալ լաւութիւնսն արասցես. որոյ սակս եւ ինքն շնորհակալ է լինելոց. եւ մեզ եւս բարերարութիւն մեծ համարեցեալ լինիս։ Եւ այսպէս գիտացեալ՝ լեր ողջ ի Տէր։ Գրեցաւ ի Ռումա ի փետր. ԺԲ։



Թուղթ առ մեծին Պօլսոյ Պատրիարք Յովհաննէս վարդապետն. ի պատասխանի Լղձոյն իւրոյ՝ զոր զրեալ էր ընդ մահասարատաւր Պետրոս վարդապետին։ Շնորհակալութիւն վասն հոգալոյն եւ յղելոյն զՔարմանսն, եւ խնդիր՝ զի ըզկարնոյ եւ զկարսայ Քարմանսն եւս հոգասցէ. ըստ օրինակի Քարմանացն, զորս Զաքարիա վարդապետն հոգացեալ եւ յղեալ էր առ Հոգելոյս Հայրապետն մեր։ Եւ վասն կանոնացն զոր Պօլսեցիքն գրեալ էին մինաքանից սրբոյ Աթոռոյս հաստատել՝ խնդրեալ էր ի դիմաց նոցին՝ իւրով հրամանաւ եւ կարմիր կնքով զայնս հաստատել։ Գրեաց Լէ՝ այժմ ծերնհաս չէի. յետոյ հոգալոց եմ։ Եւ զի դժուարանային Սաղիմացիքն եւ Պօլսեցիքն Լէ ընդէ՞ր ասէք առանց մերոյ հրամանի մի մտանել նուիրակացն Սաղիմայ ի յերկիրն Ռուսաց, գրեաց Լէ՝ ոչինչ գոյ յայնմանէ մնաս, բաց ի յօգտից. նցոյց եւ զպատճառն, որ չէր անդէպ, եւ զօրինակ հրամանագրին եւս յղեաց Լէ՝ այսու ծեւով կամիմք ունիլ նուիրակացն Սաղիմայ ի մէնջ գհրաման. յայսմանէ զի՞նչ պակասութիւն գոյ եւ մնաս։ Եւ այլ եւս քանք, որք տեսանին ի ներքոյ։

Ցորմէ ճշմարիտ եւ անխարդախ սիրով ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ. եւ Քրիստոսական սուրբ եւ մարար ողջունիւ, եւ ստոյգ բազձմամբ եւ կարօտիւ, ծանուցուաք լիցի յարգելոյ եւ տենչալոյ եղբօրդ իմոյ ի Քրիստոս սիրեցելոյ. եւ աննենդ սիրով կապակցելոյ իսկ ընդ իս ի սիրտ եւ ի հոգի, յատուկ սրտացաւի՝ եւ իսկական բարեկամի. եւ Աստուածահէն սրբոյ Աթոռոյս

շնորհընկալ՝ հարազատ և օգտաջան որդւոյդ, Տեառնդ Յովհաննիսի Աստուածարան վարդապետիդ, և Անհի Եպիսկոպոսիդ. և արժանավայել Պատրիարքիդ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ։ Զի հասին առ մեզ բազմակնիք և համահաճական թուղթքն օրհնեցելոյ քաղաքիդ, հանգերձ Արքունական ըէրաթիւն և ֆարմանաւն. և յատուկ թզթովք սիրեցելոյ եղբօրդ մերոյ և օրհնեալ իշխանացն, ի ձեռն սիրելի որդւոյն մերոյ Պետրոս հանճարաշատ վարդապետին. որ ի փետ. ամսոյ Ը. եկեալ եմուտ ի սուրբ Աթոռս։ Ուստի եղև մեզ ուրախութիւն մեծ, և հանգերձ Միաբանիւք սրբոյ Աթոռոյս ղուարճացեալ և բերկրեցեալ յոյժ՝ արասլաք զմեծահանդէս ուրախութիւնս։ Եւ ընթերցեալ զսիրանիշ գրեանն ձեր՝ ծանեաք զմեծութիւն և զշքմարտութիւն սիրոյն ձերոյ և զմաքուր օգտախոհութիւնն ձեր և զջատագովութիւնն յամենայնի՝ որք առ սուրբ Աթոռս և առ մեզ։ Զորոց զերկրապէսն ևս պատմեաց մեզ շնորհակալութեամբ բազմաւ Պետրոս խոհեմամիտ վարդապետն. հանգերձ յատուկ սիրով և մարդասիրութեամբն՝ զորս առեալ էր ի ձէնջ ամենեցունց. և սիրելին մեր՝ և ծայրագոյն նուիրակն օրհնեցելոյ քաղաքիդ Մինաս Աստուածարան վարդապետն ևս գրեալ էր զամենայնն պարագայիւք, յոյժ մեծագոյն շնորհակալութեամբ։ Ընդ որս ամենեսեան մեր ևս մեծապէս շնորհակալեալ՝ և գոհունակ եղեալ զսիրելի և զյարգելի եղբօրէդ մերմէ՝ և զօրհնեալ իշխանաց և զժողովրդոցն ամենեցունց, հայցեցաք յԱստուծոյ տալ ամենեցուն ձեզ զրազմապատիկ վարձս՝ ըստ գործոց սիրոյ ձերոյ և յամենայնի օգտասիրութեանց և բարի ջանացողութեանց՝ զորս մինչև ցարդ ցուցեալ էք առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ և ցուցանէք։ Վասնորոյ և ըզ թուղթ օրհնութեան և շնորհակալութեան գրեցաք ահա ի վերայ օրհնեցելոյ քաղաքիդ հասարակապէս, և յղեցաք առ նուիրակն մեր, որպէս տեսանելոց եւս։ Զոր ընթերնուլ տալիք ի յեկեղեցին՝ առ ի միամտութիւն ամենեցուն։ Իսկ՝ զորքան տաժանմունս, և զմեծ ջատագովութիւնս և զյատուկ սրտացաւութիւնս վասն մեր ցուցեալ էիր սիրելի եղբայրդ մեր, և զամենայն ինչ բարեպէս ուզղեալ. և զբերաթն մեր և զըֆերմանն ըստ կարգի և ըստ օրինի հոգացեալ անթերի՝ հանգերձ այլ ամենայն հոգալեօք մերովք, զայնս ամենայնս ևս ի գրոց քոց և Մինասայ վարդապետին՝ և ի բերանոյ Պետրոս վարդապետին՝ իմացաք. և յոյժ առաւել շնորհակալեցաք զՀարազատ և զսքրատացաւ եղբայրութենէդ քումմէ, որում աչք լիցի վարձահատոյց. և զփոխարէնն այդքանէդ գերագունի սիրոյ քոյ որ առ մեզ, և ծնօղատէր որդիութեանդ և ամենակերպ հարազատութեանդ որ առ սուրբ Աթոռս, բազմապատկապէս չափեսցէ՛ քեզ աստէն ի սոյն կեանս՝ և ի հանգերձելուսն։ Եւ այլ ևս աճեցուցեալ ի քեզ զդոյնպիսի ճշմարիտ սէր և հաւատարմութիւն առ լուսատու ծնօղն քո սուրբ Աթոռս՝ և առ ցաւակիր եղբայրս քո, ևս առաւել արասցէ զքեզ վարձատէր լի յերկակի կեանս քոյ։ Իմացաք ևս զքոյդ որպիսութիւն ի թզթոց քո և Մինասայ սպարգապետին, և ի Պետրոս վարդապետէն այսինքն զարիաբար ունիլդ զփոյթ հովուութեանդ հոգևորի, սիրով մեծաւ կառավարելդ զամենեսեանսն. և յարարքոն տըքնուքեամբ տանիլդ զհոգ՝ առ ի սրբել և ի մաքրել զկոզմունդ ի հոգեղէնաս աղանդոյն ախտարմայից. զորս և ջանալդ իսկ ի յուղղել. և ուզղելդ ևս զբազումս։ Եւ այլ ամենայն իրաց բարեաց և բարեկարգութեանց տանիլդ զհոգ և զփոյթ մեծ։ Որովք և մեք զուարճացաք հոգեպէս. և հայցեցաք յԱստուծոյ օժանդակել քեզ միշտ ի յայգպիսի բարի և յիւրահաճոյ գործառնութիւնս, առ ի հովուել արիապէս զՀօտ իւր քեզ հաստատեալ. և ի սրբել զեկեղեցի իւր ի յաղանդոյ և ի խմորոյ մոլորաշաւիղ ախտարմայից չարաց. առնել զամենայն ինչ ըստ իւրոց հաճոյից և բարեսէր կամաց, և արժանաւորիլ վարձուց բարեաց ի Քրիստոսէ գալստեանն իւրում։ Իսկ՝ առ ոմանս բանս գրեցեալս ի սիրոյդ՝ լուր այժմ։ Վասն կարնոյ Առաջնորդութեանն գրես թէ Զաքարիա վարդապետն երբեմն տուեալ է սբրոյ Աթոռոյդ, և երբեմն յետս առեալ, և յիւր կոզմանց վէքիլ եդեալ։ Եւ թէ՝ եթէ կամիս ի կոզմանէ սրբոյ Աթոռոյդ Առաջնորդ գնել՝ ըստ կանոնի միւս երկրաց բէրաթիւ նստող Առաջնորդաց, գրեա, որ ըզ-

բէրաթն հանեմ յանուն քո՝ և կամ անդ նստողին՝ ով ոք և իցէ, և յղեմ առ քեզ. և զմասրաֆին ըստ կանոնի այլ երկրաց Առաջնորդաց նուիրակն մեզ տացէ. և այլն։ Առ այն դիտացեալ յարդելի եղբայր. բարւոք դրեալ զերկոսին եղանակն լաս, այսինքն՝ երբեմն տալն սիրելի եղբօրն մերոյ Զաքարիա վարդապետին սրբոյ Աթոռոյս զվիճակն զայն և երբեմն առնուլն. ապա՝ զառաջին եղանակն թողեալ ի բաց՝ զյետնոյն հարկանել զբուռն։ Վասնորոյ՝ և ես ասեմ սիրեցելոյդ թէ՝ վայել է հարազատութեան քում և ծնողասէր որդիութեան, որ առ սուրբ աթոռ Մայրս քո, զառաջին եղանակն ընտրել՝ քան զվերջինն։ Հայեաց և տես թէ՝ զառաջինն մինչ նա արար, ե՞րբ էր և ինքն ղիա՞րդ. և դու լաս զնոյն արա. ըստ որում և դու չես պակաս հարազատութեամբ առ Մայրս քո լուսատուն։ Քանզի զյետինն եղանակն, այսինքն չառնուլն, աշխարհ ամենայն դիտաց թէ՝ ո՞րպէս եղև, և վասն է՞ր և ե՞րբ։ Վասնորոյ խնդրեմ ի ցանկալւոյդ զի մի զյետինն, այլ զառաջինն ընտրեացես, և արասցես և դու. ըստ որում զառաջնոյն ունիս զժամանակ և զնմանութիւն ամենայնիւ՝ զոր և յուսամ իսկ՝ զի այլ ևս առաւելուցուս, և պայծառափայլ զան զայն արասցես։ Ապա թէ ոչ ի մէնջ անդ առաջնորդ նստիլն ըստ այլ երկրաց կանոնի և լինիլն բէրաթին և մասրաֆին՝ զինչ օգուտ քերէ սրբոյ Աթոռոյս, և կամ ո՞ր անուանապայծառութիւն է սմա կամ մեզ։ Գրես թէ՝ որովհետև նախորդ իմ յետս է առեալ, վասն այսորիկ և ես ոչ կամիմ ի լեզուս անկանիլ. զի մի ասիցեն թէ՝ ընդդէմ առաջնոյն սրար. և այլն։ Զայդ և ի յիս տես, եղբա՛յր ցանկալի. քանզի և ես անկեալ եմ ա՛ստ և անկանելոց եմ ևս՝ ի լեզուս բազմութեան թէ՝ զոր ինչ յաւուրս նախանցեալ Կաթողիկոսին ստացաւ սուրբ Աթոռն և վայելեաց, յաւուրս այս նոր Կաթողիկոսին և սորին պատճառաւն հանեալ եղև ի յԱթոռոյն։ Ահա այս մեզ նախատինք մեծ, քան զքոյդ կարծեալն վասն քոյ։ Քանզի՝ թէ դու ևս տայցես սրբոյ Աթոռոյս զվիճակն զայն, չլինիս մեղադրելի, ըստ որում ունիս զնա օրինակ՝ որ ետ. և ղկեբպ յետս առնելոյն դիտեն ամենեքեան, որպէս ասացաք։ Իսկ թէ մեք չունիցիմք զայն յաւուրս մեր և չվայելիցեմք, որպէս վայելեաց նախորդն մեր Հոդելոյս, տես, թէ՝ ո՞րքան է մեզ պակասութիւն. և զոր առնարդանս զկնի մեր կարդան։ Խնայեա՛ ուրեմն նախ ի պատիւ լուսատու ծնողիս քոյ, և ապա ի ցաւակցութիւնս մեր. զի մի՛ լիցուք տեղի անարգանաց. և տար այդմ ևս գՀոգ, նոյնով ճշմարիտ և կատարեալ սիրովդ և հարազատութեամբդ. ի սէր մեր՝ և սրբոյ Աթոռոյս։ Եւ Հոդա՛ զբէրաթն կարնոյ՝ ըստ օրինակի առաջնոյն. զորոյ օրինակն ահա յղեցաք առ նուիրակն մեր։ Ըստ նմին օրինակի դրեցո զայն յանուն մեր՝ և յղեա առ մեզ. և զմասրաֆին ի նուիրակէն առ, որ ինչ վայել է, և հարկ է, և ոչ ըստ այլ երկրաց Առաջնորդաց մասրաֆատուութեան որպէս դրես։ Ընդ նմին յղեցաք և օրինակն կարսայ և Ախլցխայու ֆէրմանին, զի մի է երկուց երկրաց ֆէրմանն. յորում Ղարս և Զըլաբր այալաթի գրեն, որպէս տեսանելոց ես։ Զայն ևս նորոգել տուր՝ և յղեա ընդ մեսոյն. և զնորին ևս խարշն ի նուիրակէն առ ըստ վայելմանն, և ոչ ըստ այլ երկրաց, որպէս և վասն կարնոյ դրեսցաք։ Որոյ աղագաւ ևս ահա դրեցաք նուիրակին զի տացէ։ Իսկ որ դրես թէ՝ ցաւք և բանք վասն հերձուածողաց և այլ իրաց և նստօղ փաշայից՝ անպակաս են ի կարնոյ. և նոքա ոչ յայլուր դիմեն, եթէ ոչ ի Պօլիսս, և ասա նստօղն Հոգայ. եթէ ըստ իմ դրեցելոյս լիցի, զսյնս ես Հոդալոց եմ որպէս զմեռս երկրացն. և դու ծնալոց ես առանց դլխացաւութեան. և այլն։ Առ այդ ևս դիտեաս։ Եթէ նոքա ի Պօլիսդ դիմեն, և ցաւոցն նոցա յայդր տարեալ լինին Հոգք, ի ձեռն յայդր նստօղ Պատրիարքին, ապա մեք ո՞ւր դիմեմք, և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի Հոդալեացն և ցաւոցն ո՞ւր տարեալ լինին Հոգք, և ի ձեռն ո՞ւմ։ Ո՞չ ապաքէն, որպէս նոքա նոյնպէս և մեք դիմեմք յայդր. և զցաւսն մեր և սրբոյ Աթոռոյս ևս տեղւոյդ Պատրիարքն և օրհնեալ իշխանապետքն և իշխանքն Հոդան. որպէս ահա այժմ և դու ընդ օրհնեալ իշխանապետաց և իշխանաց մերոց յայսմ ներկայիս դատանեցելոց յայդր՝ զմերսն Հոդացեր, որք ի Ցեառնէ՝ եղիկիք վարձատրեալք։ Ապա՝


որպէս ղմեր ցաւան գրեմք, և Հոգաս, նոյնպէս և նոցա մինչ պատահիցի ինչ, ծանուցանելոց են մեզ, և մեք գրելոց եմք սիրոյգ և գու Հոգալոց ես իբրև զՀոդալիս սրբոյ Աթոռոյս և ոչ նոցա. ըստ որում մեր է լինելոց յատուկ Ուրեմն՝ և այգ ոչինչ կարէ լինել արգելառիթ վերստին տալոյդ սբրոյ Աթոռոյս զկարին Վանորոյ՝ մի արգելցես զայն ի ստանէ, ըստ որում որգի ես սմին Հարազատ. որպէս և ի վերոյ խնգրեցաք, զոր և վերստին խնգրեմ կատարել անյապաղ, վասն սիրոյ և պատուոյ սրբոյ Աթոռոյս և մերս Եւ որ վասն յառաջագոյն առ մեր միաբանն գրեալ խնգրոց տեղեկանացդ գրեալ էիր սահմանել՝ և գրով և կնքով հաստատել և առ քեզ յղել. այժմ գոլով յոյժ ղբազեալ և անձեռնհաս, հազիւ զայժմոյս յղեալ գրեանն Հոգացաք և յղեցաք. իսկ զայն ընդ սոսա Հոգալ և յղել ոչ կարացաք այժմ Ցետ սուղ ինչ միջոցի զայն ևս Հոգալոց եմ և յղելոց անպատճառ Ա յսպէս գիտասցես և եթէ օրհնեալ իշխանքն խնդիր լիցին վասն այնր, նոցա ևս զսոյն գրեալս ծանուսցես, զի գիտասցեն Իսկ վասն Հաշտարեանու նուիրակ և առաջնորդ Ցովսէփ վարդապետին մերոյ, որ գրես թէ զնուիրակն սրբոյ Երուսաղէմի անպատիւ է արարեալ. և երկուց Պատրիարքացն և իշխանաց՝ արհամարհանս է գրեալ. և այլն Առ այգոսիկ ևս գիտասցէ եղբայրդ մեր յարգելիւ Քանզի լուեալ իսկ էք ահա, որ մինգամ շնորհեալ է կայսրուհին Ուսւսաց զՀրովարտակ, ըստ խնգրանաց Հոդելոյս Հայրապետին մերոյ. որպէս զի առանց գիտութեան և վկայական գրոյ ի սուրբ Էջմիածին նստօղ կաթուղիկոսին, մի մտցէ ի յերկիրն յայն կարգաւոր ոք Զոր վասն այնորիկ խնգրեաց և ետ առնել նոյն Հոգելոյս Հայրապետն մեր. զի որպէս յամենայն օրհնեալ երկիրդ Օսմանցւոց կամ յայլ տեղիս բազմացեալ են շատաշրջիկ սևագլուխք և երիցունք, կամ յայլևայլ կաթողիկոսաց ձեռնադրեցեալ եպիսկոպոսունք, որք յարժանաւորս և յանարժանս չՀայելով՝ ձեռնադրեն զրաղումս ի յանկիւն տեղիս, որք լինին ըստ ինքեանց շատ շրջիկք և ապականիչք կարգաց և ուղղութեանց Եւ կամ ի Լիբանանու անտառէն ելեալ Հերձուածօղ կարգաւոր կամ եպիսկոպոս անուանեալք ոմանք. կամ թէև այստեղեաց ելեալ ախթարմայ կարգաւոր կոչեցեալք. որք յամենայն տեղիս շրջելով զպէսպէս վտառութեան ձայնս Հանեն ի վերս զորպիսիս ոմանս. և դու իսկ ի Հնուիկս տեսեր և առ ի նոցունց սերմանեալ գայթակղութեանց եղեր Հասուս Ո՛ր թողցուք ապա և զայն, որ յայլ և յայլ կաթողիկոսաց վիճակաց գնացեալքն անդ զայնպիսի գայթակղութիւնս սերմանեցին անդ. և զայնպիսի անկարգութիւնս արձանացուցին, մինչ զի իրրու անհնարին էր եղեալ վերացուցանել զայն անտի Որք ձևացուցեալ զինքեանս յաչս ազգին այնմիկ իբրև զմեծ ինչ ոք, և անհլսելի յումեքէ, զպատիւ Աթոռոյ և զկաթողիկոսի թողեալ էին զկնի Կալով ըստ Հաճոյից իւրեանց և առնելով ըստ կամացն. և անարգել և Համարձակ մուտ և ելս առնելով անդ. զժողովուրդսն մեր որք անդ ընդ օտար իշխ շաւիղս առաջնորդելով. և ի որբոյ Աթոռոյս և ի Հայրապետէ սորին օտարացուցանելով Եւ այլ այսպիսի անկարգութիւնք շատ, զորս մի առ մի գրելն յոյժ երկարութիւն բերէ Զորս իբրև ետես Հոգելոյս Հայրապետն մեր՝ բազբեաց առ կայսերուհին նոցա. և զճշմարտութիւն իրին ծանուցեալ. եցոյց և զանկարգութիւնն յառաջացեալ. և խընդրեաց բառնալ զայն ի Ցերութենէ իւրմէ. և ի ներքոյ կանոնի արկանել Հրամանաւ իւրով Որոյ ի լսելն զայսոսիկ, մեծագոյն Հետազօտութեամբ Հետևեալ էր երկարաձիգ միջոցաւ, և ինքեամբ իսկ վերահասու լեալ իրացն ճշմարտութեան, գրեալ էր ապա զՀրովարտակ, և եգեալ կանոնս մշտնջենական, զի մի՛ առանց ի սուրբ Աթոռս ընդոծոզ կաթողիկոսաց գիտութեան և վկայական գրոյ՝ մտցէ ոք ի կարգաւորաց ազգիս մերոյ ի Ցերութիւն իւր Որոյ և զօրինական տարածեալ է ի յամենայն կողմունս աերութեան իւրոյ, առ կուսակալս և սահմանակալս երկրի իւրոյ՝ և առ վերակացուս ճանապարհաց, որք ըստ իւրեանց բնիկ սովորութեանն մինչ Հարցանեն զգնացողի ուրուք զոմն և զուստին, և իմանան թէ՝ կարգաւոր է ի Հայոց ազգէն. ապա՝ ըստ նորոյ Հրամանին ի խնգիր լինին թէ՝ գիտութեամբ կաթողիկոսին ձերո՞յ է գալդ, և ունի՞ս ի

նմանէ զվկայութիւն։ Եւ այսպէս քննելով՝ զունօղն ընգունին ի ներքս, և զչունօղն ո՛չ ընգունին. Արդ՝ մինչ կանօնս այս՝ ըստ այսմ կերպի կանօնեցեալ է հաստատապէս և տարածեալ յամենայն իշխանութիւնն յայն. վասնորոյ ի յերթալն սրբոյ Երուսաղէմի նուիրակ կարապետ վարդապետին ի յերկիրն յայն, նախ տեսեալ էին զնա յայլ ուրեք, և զվկայութիւն խնդրեալ կաթողիկոսի։ Իսկ նա ցուցեալ էր նոցա զթուղթս ի յերկուց Պատրիարքացն և ի նուիրակէդ մերմէ Մինաս վարգապետէդ, յորս տեսեալ էին գրեցեալ այսքան ինչ բանս թէ՝ սակս խառնակութեանց կողմանցն Ուրարտոյ ո՛չ կարաց դա գնալ յԱթոռն, և ի կաթողիկոսէն զվկայութիւն առնուլ. մեք դրեալ եմք հոգևոր տիրին, և գրեալց է վասն դորա յայդր զվկայութիւն. ուրեմն՝ ընկալ ջիք զդա, և այլն։ Զայս տեսանելով՝ թուլատրեալ էին նմա. և նա գնացեալ էր ի Հաշտարխան։ Իսկ յայնմ միջոցի՝ Յովսէփ վարդապետն գոլով ի կողմունսն Մոսկովու, և անգ ոչ լինելով գործակալքն տեղւոյն արդելեալ էին զնա ի նուիրակութենէն՝ սակս ո՛չ ունելոյն աստէն զվկայութիւն։ Իսկ նա՝ այնքան ոչ համբերելով, մինչև գրիցեն զրան ինչ առ Յովսէփ վարդապետն զի ղՀոգս ինչ առնիցէ. արարեալ էր ի Հաշտարխան զանօրինակ անհամութիւնս, զորս մեզ ոչ վայել է գրել։ Զոր իմացեալ Յովսէփ վարդապետին, թէպէտ սրտնեղեալ էր ոչ այնքան սակս թարց վկայութեան դնալոյն որքան յաղագս արարեալ անհամութեանցն. այլ յետոյ ի սէր և ի պատիւ սրբոց Տնօրինականաց տեղեացն Քրիստոսի, գրեալ էր Հաշտարխանցւոցն՝ և այլ ժողովրդոց կողմանցն ընդունիլ զնա, և առատապէս տալ. զնուիրակութիւնն ի սէր սրբոյ Երուսաղէմի։ Որք և տան ասա, և առնէ զնուիրակութիւնն ըստ օրինի։ Եւ մեզ ևս դրեալ էր Յովսէփ վարդապետն զնոյն անցս, խնդրելով՝ ի սէր սրբոյ Երուսաղէմի գրել ժողովրդեանն, զի ընկալցին զնա սիրով մեծաւ, և՝ տացեն զլիաձեռն արդիւնս։ Զոր ե. մեք գրեցաք և յղեցաք։ Արդ՝ սիրելի եղբայր, եթէ կարապետ վարդապետն ունիցէր զկտոր մի վկայական թուղթ ի ձեռին իւրում ի գրնալն անդ, ո՛չ արգելօղքն արգելուին, ո՛չ նա ղպյն անհամութիւնն առնէր. ո՛չ Յովսէփ վարդապետն այնպէս սրտնեղէր՝ և ասէր ինչ կամ գրէր, (որոց շատն թուի թէ՝ աւելորդարանութիւնք իցեն զորս լուեալ էք գնմանէ.) և ոչ դուք այդպէս խաթրամայ լինէիք գնմանէ։ Վասնզի՝ մինչ հասարակաց եղև կանօնն, որպէս զի՝ միոյ գիտութեամբ և միով հրամանաւ լիցի մտանելն անդ կարգաւորաց ազգիս մերոյ, պիտոյ էր ապա դոցա ևս՝ ունիլ աստի զվկայութիւն միւս։ Այլ ո՛չ գիտեմ թէ՝ ինչ մտօք ո՛չ խնդրեն աստի զվկայութիւն։ Եթէ ասեն, նուիրակին զահմեթ է՝ և ծախուցն առաւելութիւն ի սուրբ Էջմիածին հանդիպելն և երթալն անտի, (թէպետ և չէ այնպէս.) մեք ո՛չ ասեմք թէ հարկիւ աստ պարտի գալ նուիրակն՝ և աստի երթալ։ Այլ՝ թէ ձեռնտու լիցի իւրևան այս կողմամբս գնալն, թող աստ ևս հանդիպեսցի, և զվկայականն իւր առեալ երթիցէ։ Իսկ թէ ձեռնտու չլինիցի աստ գալն, մի եկեսցէ. այլ ի Պօլիսդ նստցի յաւուրս ինչ, և իւր Պատրիարքն դրեսցէ մեզ՝ թէ այս ինչ անուամբ վարդապետ նուիրակ յղեցաք ի կողմն Հաշտարխանու, զվկայական յղես առ նա. զոր և նուիրակն ով ոք և իցէ ի Պօլսոյդ յղեսցէ առ մեզ. և մեք յայնժամ յղեսցուք զվկայականն յայդր առ ինքն, զոր և նա առեալ երթիցէ ի գործն իւր միամտութեամբ։ Ահա թէ զսյլ ինչ սիրոյ ներհակ մտածմունս ո՛չ ունին, այս է ոճն, և բարւոք կերպ, և ամենևին անվնաս։ Ահա զօրինակն վկայականին ևս զոր տալոց եմք, յղեցի, զի տեսցես, և գիտասցես թէ՝ ոչինչ վնասակար է այդ սրբոյ Երուսաղէմի, ոչ պատուոյն, և ո՛չ արդեանցն, այլ պատիւ և յաւելուածն մեծ նմին և շահ արդեանցն։ Զի վասն սրբոյ Երուսաղէմի միթէ մեք եմք կամեցօղ օգտից, և զսիրտ չցաւեցուցանեմք. կամ ըստ իւրոյ արժանւոյն պատուել և մեծարել չդիտեմք. քաւ լիցի. այդպիսի կարծիք հեռի են ի մէնջ։

Կարապետ վարդապետի անցից և դըժուարութեանց պատճառն է՝ նախ առանց տեղւոյս վկայականին երթալն անդ արտաքոյ սովորութեան և կանոնաց երկրին՝ և ապա այնքան անհամ արարքն. որոց սակս և մեր յովսէփ վարդապետն զայն անհամութիւնն արարեալ է նախապէս, (որում մեք և՛ս ոչ

հաւանեցաք, և գրեցաք եւս նմա ղրանս՝ որ ինչ և վայել էր.) և ապա բուռն հա- րեալ ղսիրոյ՝ ահա ժողովել տայ կարապետ վարդապետին զնուիրակութիւնն որպէս և գրեցաք: Արդ՝ թէ սէր լիցի ի միջի որպէս ասացաք, և ըստ Առաքելոյն սրբազանի՝ զնոյն միմեանց խորհիլ, և ի պատիւ զմի- մեամբք ելանել. և մանաւանդ՝ ցաւիլ ի վե- րայ միմեանց, և պատիւս ըստ իւրաքանչիւր արժանեաց տալ միմեանց. և զկարծիս օ տարութեան ամենևին չբերել ի մէջ, ամե- նայն ինչ սիրով յաջողի, և բարեպէս ուղղի. և երկոքին սուրբ Աթոռքն ևս ըստ իւրա- քանչիւր արժանավայելուչ պատուոց՝ պա- տուին և փառաւորին, իշխանք և ժողո- վուրդք մեր ամենեքեանք որք տեսանեն և լսեն՝ ուրախանան և հրճուին, որովք և Աս- տուած փառաւորի: Իսկ եթէ սէր՝ և ըստ իւրաքանչիւր արժանեաց պատուադրութիւն ո՛չ լիցի միմեանց, և օտարութեան մտածումն լինիցի. ի հարկէ ներհակն է լինելոց վերոյ ասացելոցն. և ոչինչ յաջողի սիրով: Այլ ի մերս կողմանէ բաց ի սիրոյ՝ զոչինչ ներհա- կանս սիրոյ ցուցանիցեմք: Եւ որ ինչ ի Հաշտարարանու կողմն եղեալն է, այնր ևս մեծ պատճառն կարապետ վարդապետի վկա- յական չունիլն է աստի. որպէս ցուցաք: Եւ այլք ևս եթէ են, թողցուք: Միայն ըզ- զմովսէս պետն ուղարկելն նոցա յայնկոյս, այն ևս թէ որո՞վ կերպիւ, և ի՞նչ մտօք, շատ զարմացոյց զմեզ: Եւ թէ զինչ մտա- ծեցին ի յառնելն զայն, ոչ գիտեմ, այլ և թողում ևս: Միայն զայս ասեմ թէ՝ ահա այդպիսիքդ են առիթք խանգարման սիրոյ. թէպէտ մեք զմեզ սիրոյ պարտականս վարկանիմք, և ի նոյնս եմք ձեալոց միշտ, ցեառն յաջողութեամբ: Բայց մտածելն նոցա զայն, և զնա յղելն, թէ որքան անհամեստ, թողում յոյսդ լսել, զի անպատշաճ ևս վարկանիմ ինձ ասել, կամ գրել աստէն: Գրես թէ՝ Ցովսէփ վարդապետն անարգա- նաց բանս է գրեալ Պատրիարքին և տեղ- ւոյս իշխանացն, իբր թէ քեզ հարազատու- թիւն առնելով. և այլն: Ցայս գրեցելոյ քոյ երևի թէ՝ լուեալ իցէ նա զաղաղակդ վերո- դովմունսն, և զմեր անցսն եւ զայնս աւե- լորդօք թերևս՝ ըստ որում հեռաւոր է տե- ղեաւ, վասն այն իբրու ի յայրմանէ սրտին՝ անխոհեմարար գրեալ է ինչ յայգր՝ որպէս գրես. որ է հետի ի մերոց ընթացից. որ յայտնի եղև ձեզ ահա յայս երկուս ամս, թէ որպիսի կերպիւ առ ամենեսին վարե- ցաք: Ուստի՝ և գրեցաք նմա առ այնս՝ որ ինչ վայել էր: Ուրեմն որպէս մեք զոչինչ օտարացուցիչ որոշմունս դնեմք ի միջի, նոյն- պէս և օրհնեալ իշխանքն մի դիցեն, այլ զամենն իսկ իւրեանցն գիտասցեն թէ զԱ- թոռն և թէ զՑեառն Աթոռոց, և խնա- մատար լիցին իւրաքանչիւրոցն՝ ըստ իւրա- քանչիւր պատուոյ եւ յատկութեան՝ որպէս եւ լեալ իսկ են միչեւ ցարգ: Որոց փո- խարէն՝ ընկալցին զվարձս բարիս ի Ցեառնէ: Զորս եւ դու սիրելի եղբայրդ մեր՝ ի ձեռն յորգորանաց ի մի եւ ի նոյն սէր յարգա- րեսցես. եւ ի մի միաբանութիւն զամենե- սեան ուղղեսցես, չանալով արտահանել յա մենից մտաց եւ ի բերանոց զայդպիսի եր- կուական կարծիս եւ զձայնս, եւ սերմա- նել յամենեսին զխաղաղութիւն. զի արժա- նասցիս վարձուց բարեաց ի Ցեառնէ: Եւ վասն սրբոյ Երուսաղէմի նուիրակին որ ինչ անցեալն է անցեալ է ահա. դու վասն յե- տագայ նուիրակաց որք ձեալոց են անգ, խօսեաց ընդ սիրելեացն իմոց օրհնեալ եւ Աստուածազօր իշխանապետացն եւ իշխա- նացն. եւ ծանո՛ ամենեցուն զդիտումնս մեր՝ որ բարի է, եւ ոչինչ վնաս գոյ յայնմանէ սրբոյ Երուսաղէմի, որպէս եւ գրեցաք, եւ հաւանեցո զամենեսին այսպէս լինիլ այսու- հետեւ, զի ով ոք եւ գնալոց եղէ ի սրբոյն Սաղիմայ նուիրակ ի Հաշտարեանու կող- մունսն, մերով վկայական թղթովն երթեցէ որպէս գրեցաք. զի անարգել թողուցուն մտանել անգ. եւ մերքն եւս առանց խրիք քրիստիանաց ընկալցին եւ տացեն զտուրս առատութեամբ եւ ուրախութեամբ: Եւ որ- պէս առնելդ զայս ամենայն վերոյգրեալքս եւ զի՞արդ հոգալդ զսոսին, գրեսցես մեզ՝ զի գիտասցուք: Այլ եւ՝ շնորհակալեցաք զսիրոյդ, որ զՀաշիւն Գաղատիոյ նուիրակ Ցովհաննէս վարդապետին տեսեալ էիր ընդ ձեր նուիրակ Մինաս վարդապետին եւ Պետ- րոս վարդապետին, եւ զորպէսն մեզ գրեալ: Որում հաւանեցաք: Եւ զոր ինչ եւս ի կող- մանէ նորին գրեալ էիր, ընդ այնս եւս հա- ճեցաք: Եւ ահա գրեցաք ի վերայ նորա ըղ-

թուղթ մի օրհնութեան եւ միամտութեան իւր ղապղ. և յղեցաք առնուիրակն մեր Մինաս Ա-ռաւաւածախմաստ վարդապետն. որպէսզի՝ զոմանս ձնացորդս եւս որք ձնացեալ են առ նա առնուցու, և ապա զթուղթն տացէ ինքեան: Որք են քանի մի կտոր արծաթեզէն յիշատակիք, որոց առուղացն ազագաւ ղօրհնութեան թուղթս էր խնդրեալ յաւուրս հոգելոյս Հայրապետին մերոյ և նա գրեալ յղեաց: Եւ դրամ ևս է առեալ աստի թամասուկով. նոյնպէս և զգրեանս ևս է առեալ ի գրքատանէն թամասուկով և ղապղով: Եւ մեք յառաջ քան զայս գրեալ եմք ղայսոսիկ Մինաս վարդապետին, և զթամասուկն նորին ևս յղեալ ի ձեռս նորա. և գիտէ լաւապէս, զորս պատմեցոյ է սիրոյդ: Ուրեմն և գու յարգելի եղբայրդ իմ հարկեսցես նմա տալ զասացեալ իրսն ցՄինաս վարդապետն. և առնուլ ի նմանէ և զթամասուկն իւր՝ և զմեր յղեալ միամտական ղապղն: Այնուհետև ուր և կամիցի գնալ և կամ յորում տեզւոջ և ախորժիցի մնալ՝ ինքն գիտասցէ, ուր և լինիցի սիրելի որգի է մեր: Եւ վասն սիրելի եղբօրն մերոյ Եսայի Աստուածխմաստ վարդապետին, որ գրեալ էիր կամ յղել ի յԱռաջնորգութիւն Թոխաթու՝ ընդ խնդրոյ նոցին, և կամ ի մեծդ Պօլիս յղել նուիրակ. առ այգ ևս լուր: Զի ահա նա՝ զկնի գալոյ Պետրոս վարդապետին ի սուրբ Աթոռս գրեաց առ քեզ զՀրաժարական թուղթ. և հրաժարեցաւ յերկուցն ևս, թէ ի յԱռաջնորգութենէն Թոխաթու և թէ ի տեզուոյդ նուիրակութենէն. որ ի հարկէ մինչև ցարդ առ քեզ է հասեալ և իմացեալ ես: Իսկ որ գրեալ էիր թէ՝ եթէ Եսայի վարդապետն չլինիցի, զայլ ոմն պատշաճաւոր յղեա՝ աստ ի նուիրակութիւն, ահա մեք ևս ի նոյն դիտման կամք, որ և յետ թեթեւանալոյ մերոյ ի ծանրութենէդ թղթագրութեանց՝ զոր ունիմք այժմ, պատրաստելոց եմք զմի ոմն պատշաճաւոր, և յղելոց եմք յայգր ի նուիրակութիւն: Նաև՝ որ գրեալ էիր զմեզ շալ յղել վասն քեթեթիպին. մեք մտածեցաք Թերևս աստի յղեալն մեր՝ ըստ պատշաճին չլինիցի: Վասնորոյ գրեցաք նուիրակին մերոյ զի յայգր հոգասցէ. զոր և ընծայեսջիք նմա ի մերս դիմաց: Այլ և ահա ի նշան սիրոյ, և ի շնորհածին ծնոզէս քումմէ ի սրբոյ Աթոռոյս՝ քեզ պարգև հոգևոր և օրհնութիւն, և ընծայ Մայրական առ որդիդ իւր շնորհընկալ, առաքեցաք ահա ընդ թղթոյս զմեզ ազնիւ մատանի, Ա չէչակզու փիլոն և զմեզ խալիչայ: Զորս ընկալեալ սիրով վայելեսցես բարեաւ. ունելով յարաժամ ի մտի զՄայրս քո շնորհատու՝ և մեզ: Եւ ի ձեռն սիրանիշ և սիրափարար գրոյ և ճշմարիտ սիրոյ եղբայրականի՝ զանմխիթարութիւնս մեր միխիթարեսցես: Ողջ լեր ի տէր: Գրեցաւ ի ՌՄԼԱ թուոջն ի մարտի ելն:



Օրինակ քաշքօրթի (ըստ լեզուի Ռուսաց) վկայականի կամ հրամայականի զրոյ, զոր Գաղոդիկոսունք սրբոյ Աթոռոյս յատկապէս տան նուիրակաց սրբոյ Երուսաղէմի, առ ի մտանել այսու յերկիրն Ռուսաց: Ծորում եւ յորդորումն մերազնէից, սիրով ընդունիլ զնոսա. եւ տալ զտուրս առաւտս՝ ի սէր սրբոյ Երուսաղէմի:

Ցիսուսի Քրիստոսի ծառայ ՑԷր Ռուկաս կաթողիկոս. և Ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց՝ Առաքելականի Եկեղեցւոյս Քրիստոսի, նաև լուսակերտի Աթոռոյս Մեծի սրբոյ Էջմիածնի՝ որ ի Դաշտս Արարատեան: Ծորմէ սիրով և օրհնութեամբ բազմաց, Քրիստոսական ողջունիւ և հոգեպարար Ընծորհիւ սրբոյ իշման տեզւոյս նորին, ծանուցումն լիցի սահմանակալ Ազնուական Պարոն կամէնգաթացգ օրհնեցելոյ Ազգիդ Ռուսաց լայնատարած մեծի կայսերութեանն: Զի սոյն գրաբեր (ֆիլան) վարդապետս՝ որ է ի բնակչաց մեր Հայոց ազգիս վանորէիցն սրբոյ՝ որք գոն ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և միաբան սրբոց Ծակոթանց Առաքեալոց հրաշազարդ Աթոռոյն՝ որ անդ առաքեցեալ է ի նորին պատրիարք (այս անուն) Աստուածխմաստ վարդապետէն և յԱրքեպիսկոպոսէն ի նուիրակութիւն համայն մերազնեայ ժողովրդոցն՝ որք գոն ի յօրհնեալ երկրորդ Ռուսաց, առ ի ժողովել ի նոցունց նուիրակութիւնս և զտուրս կամա-

Սկիզբն Առաջնորդական կոնդակին գարնոյ, որ տրեցաւ Ղազար վարդապետին, մինչ ուղարկիւր յԱռաջնորդութիւն տեղւոյն։

Թուղթ ժողովարարութեան վասն Թարվիզու եկեղեցւոյն, որ ի շարժմանէ փլեալ էր։

Թուղթ իբրու Առաջնորդութեան, որ տրեցաւ ղողեցի Սիմէօն վարդապետին, մինչ ըստ հրամանի Հերակլայ Աղքայի որդի Գեօրկին Միրզային, որում՝ ըզթեմս յուզէր, եւ ոչ զոյր այժմ. իսկ Աղքայորդին զշրջակայսն տալ կամէր նմա. գրեցուցանելով եւ աստ թէ՝ այսինչ եւ այնինչ գիւղք թեմք են նմա։

Ծորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, և նամակ պահպանութեան. Շնորհք Առաքելական, և Աստուածային բազմապատիկ օրհնութիւնն և նախախնամական դթութիւնն ի վերայ սրբոյն Ծօհաննու Օձնեցւոյ վաղեմաշէն սուրբ վանիցն՝ և սրբոց Անապատի նորին Հոռոմայրի Անապատ կոչեցելոյ ներկայ թեմից և վիճակաց, և ի դոսին բնակեալ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ և հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյս. Հայկասեր՝ լուսաւորչակրօն և Միաբանադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս Քահանայից, իշխանաց. և ամենից օրհնեալ ժողովրդոց, մեծաց և փոքերց. արանց և կանանց, ծերոց և տղայոց. երիտասարդաց և կուսից. խնդալ ի Տէր միշտ Ամէն։

(Շնորհք)։

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ դիտասջիք սիրելի և հոգևոր որդիք մեր. և լուսաւոնունդ զաւակունք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի որովհետև ի վաղուց հետէ կայր սովորութեամբ դոյն չքնաղակերտ և գեղեցիկ վանքն սրբոյն Ծովհաննու Օձնեցւոյ՝

ւորս, զորս սովորաբար տան նոքա յանուն սրբոց Տնօրինականաց Տեղեացն Քրիստոսի, առ ի պայծառութիւն յիշեալ վանորէիցն մերոց սրբոց՝ որք անդ։ Վասնորոյ՝ և մեք զսոյն վկայականս մեր ետուք դմա, զի չլինիցիք գմին արդելիչք։ Ուրեմն՝ ի գալն դորա, և ի հանդիպիլն ձեզ, պատու վկայական թղթով մերով, առանց ընդդիմադարձութեան ի ներքս ընկալեալ՝ ուզարկեսջիք ձերով բաշքօրթիւն ի մէջ ժողովրդոցն մերոց որք դոն ի յօրհնեալ երկրորդ ձերում, և առ նոցին Առաջնորդ (այս անուն) Արք Եպիսկոպոսն։ Եւ լերուք ողջ ի Տէր՝ զօրացեալք ի Շնորհս նորին յարաժամ։ Ամէն։

Եւ ձեզ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ և լուսաւծնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի համայն Հայկասեր՝ լուսաւորչակրօն և Միաբանադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս՝ որք կայք ի յօրհնեալ երկրորդ Ռուսաց մանաւանդ Ծայրագոյն նուիրակիդ մերոյ և դոցին Արժանավայել Առաջնորդ (այս անուն) Արք Եպիսկոպոսիդ պատուիրեմ, զի զհոգևոր որդիդ մեր (այս անուն) հանճարաշաստ վարդապետդ սիրով մեծաւ ընկալջիք, և ըստ արժանւոյ սրբոյ կարգին շահեսջիք և միխթարեսջիք, և ըստ սովորութեանն ձերոյ բարւոյ տուք օրհնեալ ժողովուրդքդ զնուիրակութիւնս՝ և զայլ առաքս զուարթս և զառատս ամենայօժար սրտիւք և լիաձեռնութեամբք տայջիք դմա. յանուն և ի սէր սրբոց Տնօրինականաց տեղեացն Քրիստոսի՝ և ի շինութիւն և ի պայծառութիւն հիմհրաշ Աթոռոյ սրբոց Ծակոբեանց Առաքելոցն՝ և պլ վանորէից մերոց սրբոց՝ որք անդ, առ ի յերդունիլ ձեզ զշնորհս և զօրհնութիւնս ի նոցունց, և վարձատրիլ ևս յԱստուծոյ՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Եւ կատարօղքդ հոգևոր հրամանացս մերոց՝ եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ, և Շնորհք սրբոյ և Աստուածածինի Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ։ Ամէն։ Գրեցաւ ի Թուրոլ փրկչին՝ 1782. ի մարտի 30. ի լուսանկար և յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

Հայրապետին մերոյ Երանելւոյ նոյնպէս և Անապատն իւր. վասնորոյ սիրելի որդին մեր՝ և հարազատ զաւակն Սրբոյ Աթոռոյս Սիմէոն խոհեմամիտ վարդապետն՝ շարժեցեալ ի յիղձ բարի և ի աներկուածն հոգւոյս, կամեցեալ էր արկանել զշինուածիւն ի դուն սուրբ վանքդ և նստիլ յայդր. և պայծառացուցանել հոգեպէս և մարմնապէս։ Ուստի՝ ծանուցեալ էր զբարի աներկմտութեան իւր Աստուածազօր և ամենաբարեպաշտ Գեօրկին Միրզայ Արքայորդւոյն՝ սիրեցելոյն մերոյ ի Քրիստոս։ Եւ նորա տեսեալ զբարի իղձս նորին և զչերմեռանդութիւն, հրամայեալ էր նմա շինել զդուն սուրբ վանքդ և նստել ի դմա։ Ուստի՝ և մեզ գրեալ էր զհնդիրս կարդել զնա Առաջնորդ սրբոյ վանիցդ։ Որ և եկն առ մեզ թղթովք նորին՝ և ձեր. որք և խնդրեալ էիք ի մէնջ կարդել զդա Առաջնորդ և հոգևոր հովիւ սրբոյ վանիցդ՝ և ձեզ։ Վասնորոյ՝ և մեք ահա ըստ խընդրոյ Աստուծով զօրացեալ Արքայորդւոյն, և ըստ ձերոցդ թախանձանաց, կարգեցաք ըզ Հոգևոր որդիդ մեր զՍիմէոն հանճարաշատ վարդապետդ՝ Հոգևոր հովիւ և Առաջնորդ Սրբոյ Վանիցդ՝ և ձեզ. առ ի շինել զդա, և նստել ի դմա, ժողովել զՄիաբանս, և արկանել ի կարգ շինուածեան. և զձեզ ևս հովուել։ Վասնորոյ և դուք պարտիք յամենայն կողմանէ լինել դմա օժանդակ՝ առ ի շինուածն սուրբ վանիցդ. և օգնել դմա ամենիւք պիտոյիւք ըստ կարողութեան ձերոյ։ Եւ լինել լսողք Հոգևոր և անմեղածին հրամանաց և քարոզութեանց և խրատուց դորա, առ ի յօգուտ հոգւոց ձերոց, և ի շինուածիւն վանիցդ սրբոյ և Անապատին։ Պարաիք ուրեմն մեծաւ սիրով և ջանիւ փոյթ ունել վասն շինուածեանց դոցին. և զնուէրս մարմնական շնորհել դմա առատութեամբ, թէ զԱռաջնորդական և զվանքական հասս և զիրաւունս և թէ զյատուկ տուրս՝ առ ի յօդնութիւն շինուածեան սուրբ վանիցդ՝ և Անապատին։ Եւ մանաւանդ ջանասիրք, զի որպէս սուրբ վանիցդ լեալ է փոքր ի շինուածիւն. նոյնպէս և Անապատին լիցի. և անդ ևս նստցին կարդաւորք և այլ մարդք. արկցեն ի կարդ շինուածեան, և վաստատեսցեն ղայսն. և հաստատեսցեն անդ ևս զժամակարգութիւն. և ազօթեսցեն վասն աշխարհի և վասն փրկութեան հոգւոց ձերոց՝ և ձեր համայն ննջեցելոցն։ Ուրեմն ջանասիրք գայն ևս արկանել ի կարգս շինուածեան, որպէս զսուրբ վանքդ գայդ շինացուցեալ էք։ Որպէս զի արժանասիրք վարձուց բարեաց ի Տեառնէ։ Եւ ի պաշտամանցըն և ի սուրբ Պատարագացն, յաղօթիցն և ի սաղմոսերգութեանցն, որք ի նոսա մատչիցին, ձեզ և համայն ննջեցելոցն մեծ մասն և բաժին եղիցի։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԼՃ. ի յԱպրիլի։

Թուղթ առ Ազուանից Ջրամանեանց

Մահտեսի Կարապետն. ի պատասխանի թղթոյն շնորհաւորականի՝ զոր ընդ մահասարատար Պետրոս վարդապետին յղեալ էր։ Շնորհակալութիւն վասն հարազատութեանցն մեծագունից, որ ըստ ի չատագովութեանցն գերագունից, ըզըէրաթն եւս ծաղկեցուցեալ էր՝ տալով զծախսն ԻՌ դրշ. եւ վասն աղերսն որ ի պարսպոջս, եւ առուցն նորին տուեալ էր զԴԾ դրշ. զի նորոգել տացէ։

Թուղթ ի Մեծն Պօլիս, առ Մուրադեան Յակովբ Ամիրայն, ի պատասխանի շնորհաւորական թղթոյն, նոյնպէս օրհնութիւն եւ շնորհակալութիւն։ Եւ յորդորումն եւս, լինիլ Մուրթավէլի վախուլ տանցն մերոց։

Թուղթ ի Պօլիս առ Մահտեսի Յարութիւն ամիրայն. մինչ Զաքարիա վարդապետն արտաքսեցեալ ի Պատրիարքութենէ՝ լեալ էր Պրուսայու Առաջնորդ. իսկ Պրուսայու Առաջնորդ Յովհաննէս վարդապետն լեալ էր Պատրիարք ի Պօլիս հրամանաւ Աղքունի։ Վասն իւրոցն փորձութեանց ինչ դիպելոց՝ սփոփանք։ Եւ վասն Պատրիարքափոխութեան։ Եւ

վան Ֆերմանացն եւ մահսարին՝ հոգալ տալ նորոյ պատրիարքին. եւ յանձնարարուԼիւն Մինաս, Պետրոս եւ Գալուստ վարդապետացն. եւ զի՝ զՆ՚՚ դատիոյ նուիրակն կամ յղեացեն աստ, եւ կամ զհաշիւն առցեն, եւ այլ առ այսոսիկ քանք եւ խնդիրք։

Թուղթ ի մեծն Պօլիս, առ իշխանսն եւ իշխանապետսն, վասն վերոյգրեալ թղթոյդ քանիցն, զորս ի խորագրի վերոյգրեցելոյդ ի համարն 297.

Թուղթ առ Մեծին՝ Պօլսոյ նուիրակ Մինաս՝ եւ մահսարատար Պետրոս վարդապետն։ Առ որս հասեալ էին թուղթքըն, որք ի յօգոստոսի Դ գրեցան։ Որք այժմ գրեալ էին զթուղթս ի յօգոս. ԻԹ, եւ ի սեպտ. Գ, ի Ի, եւ ի ԻԳ։ Եւ զարքունական թղթոց օրինակսն յղեալ էին, զոր պատրիարքն եւ իշխանքն համակամութեամբ հոգացեալ, եւ զամենայն տարաձայնուԼիւնսն ի քաց քարձեալ գրեալ էին զթուղթս սիրոյ եւ սփոփանաց առ սրբազանն, եւ զՊետրոս վարդապետն նոքօք յղելոց էին աստ։

Փուսուլայ առ Մինաս վարդապետն.

Թուղթ վկայութեան ի վիաքանից սրբոյ Աթոռոյս, վասն Բստացի Մահտեսի Սիմէօնին, որ եկեալ վիաքան եղեւ սրբոյ Աթոռոյս՝ քանի ամօք յառաջ, եւ ի ՌՄԻԹ թուոջն. եւ ի յուլիսի ի վախճանեցաւ։ Որոյ քեռւոյ որդիքն այժմ զնորին ինչսն պահանջէին, գրելով թէ՝ նա յուխտ էր եկեալ յԱթոռդ, եւ դառնալոց էր աստ. եւ զվիաքան լինիլն չասէին։ Վասնորոյ գրեցաւ վկայուԼիւնս այս, զոր յղեցաք ի Պօլիս՝ զի պատասխանեսցեն նոցա։

Թուղթ առ Բստացի հանգուցեալ մահտեսի Սիմէօնի քեռւոյ որդիսն, Ցարութիւնն եւ Անանիայն, ի պատասխանի թղթոյ նոցին, որք գրէին թէ՝ զՀօրաքեռ որդւոյն մերոյ մահտեսի Սիմէօնի ինչսն պահանջեմք, (որպէս եւ ի վերոյ գրեալ վկայական թղթոյդ խորագրոջն յիշեցաւ)։ Առ որս ի ղէպ պատասխանի՝ որ ինչ վայել էր, որպէս տեսանի ահա ի ներքոյ։

Թուղթ վասն ճորտութեան ի Թիֆլիզ. յաղագս Պօղոսի ումեմն ի քնէ այս երկրացւոյ, որոյ հօր անունն է Սաղաթիէլ։

Թուղթ ի Պետրպօլք, առ Ջուղայեցի Մանիչարենց Աստուածատուրի որդի պարոն Մարգարն՝ եւ պարոն Փիլիպպոսն, ի պատասխանի թղթոյն իւրեանց ի ՌՀՀ թուոջ փրկչին ի հոկտ. Ա գրեցելոյ։ Որ եւ ընծայեալ էր սրբոյ Աթոռոյս Ա ականակուռ Արծիւ. Բ կնիք պղովատեայ. մինն սրբոյ Աթոռոյս եւ միւսն Հայրապետաց սորին. ի յիշատակ ինքեանց։ Առ որս շնորհակալուԼիւն եւ օրհնուԼիւն որպէս վայել էր։

Թուղթ ի նոր Նախիջեւան, առ կապիտան եւ դատաւոր պարոն Յովհաննէսն Աբրահամեան։ ՇնորհակալուԼիւն վասն սիրոյն եւ հարազատութեանն՝ որ առ սուրբ Աթոռս՝ եւ առ զահակալն սորին. եւ առ իւրեանց նուիրակ եւ Առաջնորդ Յովսէփ Արք Եպիսկոպոսն։ Եւ տալոյն զտուրս ինչ սրբոյ Աթոռոյս։ Ըստ որոյ

օրինակի եւ մտաց. զրեցաւ եւս անծանց Դի անից թուղթ օրհնութեան եւ շնորհակալութեան։

Թուղթ առ Հաւհաննու Անտոնիէ Եպիսկոպոսն Ռուսաց. սէր եւ շնորհակալութիւն վասն առ սուրբ Աթոռս սիրոյն, եւ սիրելոյն զՅովսէփ վարդապետն։

Ծորմէ յոգնատենչ բազձանօք, եղբայրականաւ սաղդ ըզձիւ, և ճշմարիտ սիրով ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ, մատուսցի Քրիստոսականն սուրբ ողջոյն, սիրելւոյ և յարգելւոյ եղբօրդ մերոյ. Ճշմարիտ բարեկամիդ. և սիրողիդ իսկ Քրիստոսաէջ Աթոռս մեր սուրբ. առ լցելոյդ Աստուածեղէն Հանճարով, և հռչակեցելոյդ բարի անուամբ և Տաճաւով Տեառնդ Աստօնի Արհի Եպիսկոպո՛իգ. Արժանաժառանգ Այցելուիգ և Հոգեկոչ վերատեսչիգ Տիրանամ քաղաքիգ Հաշտարխանու՝ և ամենից քեզ հաւատացեալ բանաւոր հօտիդ Քրիստոսեան։ Որում և գիտութիւն լիցի։ Զի լուեալ իսկ է եղբայրութիւն ձեր ահա, որ անցեալ 1780 Թուողջ փրկչին և ի Յուլիսի ԻԶ. երջանիկ Հայրապետն մեր և Հոգեծին ծնողն Տէր Սիմէօն սրբազան Կաթողիկոսն փոխեցաւ առ Քրիստոս։ Որոյ զՀոգին լուսաւորեսցէ Տէր. և Հանգուսցէ յարքայութեան իւրում ընդ գասս սրբոց Հայրապետաց. և գլուխ սիրելութեան ձերոյ ողջ լիցի։ Իսկ՝ զկնի վախճանի լուսահոգւոյն, միակամ Հաւանութեամբ միարանից սրբոյ Աթոռոյս՝ և ազգի մերոյ, կոչեցեալ եղաք ի կայս պաշտօն, չունելով թէպէտ այսմ բաւականութիւն ըստ մերում տկարութեան։ Եւ զի ի յերկար ժամանակս տուն Արարատեան եկաց ի խռովութեան, զոր գիտեմ զի լուեալ իսկ էք. որով և մեք կայաք անհանգիստք ի յերկար միջոցս՝ պաշարեցեալք ամենակերպ ցաւովք. վասնորոյ ոչ լինէաք ձեռնհաս ի գրել զթուղթս ուր և հարկն էր գրել մեզ։ Ուստի՝ և առ յարգելի եղբայրդ մեր չկարացաք մինչև ցարգ գրել ըզթուղթ սիրայայտ որպիսածանոյց և որպիսահարց, որև հարկաւոր իսկ էր յիրաւի։ Քանզի՝ գիտեմք զճշմարիտ և զանխարդախ սէրն սիրելութեան. և զստոյգ բարեկամութիւնն՝ զոր ունէիր առ Հոգելոյս Հայրապետն մեր՝ և առ Միածնաէջ Աթոռս սուրբ. և լուսահոգին յոյժ շնորհակալութիւնս ունէր զքէն՝ սակս այդպիսւոյ ճշմարտագունի սիրոյ և բարեկամութեան, որոյ աղագաւ և զթուղթ շնորհակալութեան գրեաց իսկ առ քեզ. ի 1777 Թուողջ փրկչին, և յամսեանն Հոկտեմբերի։ Ուստի և մեզ հարկ էր թէպէտ կանխաւ զգիր սիրանիշ առ օգտասէրդ սրբոյ Աթոռոյս գրել՝ որպէս և վայել էր իսկ, չթողլով զբարեկամդ Հայրենի՝ ըստ իմաստնոյն բանի. բայց որպէս ասացաք, անձեռնհաս գտանեցաք յոյժ, վասն ասացեալ պատճառացն։ Իսկ այժմ գիր ընկալաք ի սիրելի որդւոյն մերմէ և ի ծայրագոյն նուիրակէն և Առաջնորդէն համայն մխազնէից որք յայդկոյս Յովսէփ Արքեպիսկոպոսէն, որ վերստին գրեալ էր ըզշնորհակալութիւնս յոյժ յոլովս զբերատատ եղբայրութենէդ (որպէս և յաւուրս Հոգելոյս Հայրապետին մերոյ). ծանուցանելով դարձեալ զսիրոյդ յորդութիւն և զճշմարտութիւն, զոր առ Աստուածաէջ Աթոռս մեր սուրբ ունիս. նաև զսիրելդ իսկ զինքն. և յամենայնի մխիթարելդ ի ձեռն ստոյգ բարեկամութեան։ Նոյնպէս և բարւոք ակնարկութեամբ սիրելդ և խնամելդ զհամայն մերազնեայսն որք յայդոյս՝ վասնորոյ՝ և մեր առ սոյսիկ ամենեսեան ցնծացեալ՝ և բերկրեցեալ ի սիրտ և ի հոգի, և շնորհակալեալ իսկ մեծապէս զյարգելի եղբօրէդ, գլեցաք այժմ զայս սիրանիշս մեր թուղթ առ բարեկամդ ճշմարիտ, առ ի շնորհակալութիւն այգքանեաց քոց բարեշնորհութեանց. և առ ի խնդիր զի առ և մեզ՝ և յաւուրս մեր առ Միածնաէջ Աթոռս սուրբ և առ մերսյինսն զնոյն ճշմարտութիւն սիրոյ ունիցիս։ Քանզի սիրասի շնորհս ունիմք յոյժ զյարգելի սիրոյդ, վասն ամենից ասացեալ բարութեանցն ի քէն արարելոց, որոց զփոխարէնն բիւրապատիկ առաւելութեամբ Տառուսցէ քեզ Քրիստոս յերկակի կեանսդ, պահելով և ղօտդ իւր քեզ յանձնեցեալ ընդ հովուիդ գոցին սրբազնեալ՝ ազատս յամենից ներհակական կրից։ Առնանդ՝ զթեառատ մայրն ողորմութեան՝

(յորմէ միշտ մեծագոյն ողորմութեամբ սիրեցեալ և խնամեցեալ լինին Միածնաէջ սուրբ Աթոռս մեր վշտակիր և գահակալն սորին և համայն ազգս մեր առատապէս,) ընդունել և զօգուտսինէ. զամենաբարեպաշտուհի և զԱստուածապսակեալ մեծ կայսերուհին եկատերինէ. հանդերձ կայսերազուն և թագաժառանգ որդւովն իւրով և թոռամբքն և ամենայն ժառանգորդօք Աստուածապահ կայսերութեան պահեսցէ նոյն ողորմած և ամենախնամ Տէրն մեր՝ երկար և խաղաղական կենօք. մշտական ուրախութեամբ՝ և ամենակերպ ցնծութեամբ. ահարկու իշխանութեամբ՝ և ամենափառաւոր պերճութեամբ բարձրացուցանելով և ընդարձակելով զտէրութիւն գոյին ընդ ծագս տիեզերաց ի բարձրութիւն եկեղեցւոյ և ի պարծանս համայն հաւատացելոց իւրոց: Արդ՝ այժմ խնդրեմ ի յարգելի եղբօրէդ, զի զգոյն ճշմարտութիւն սիրոյ և զստոյգ բարեկամութիւն առաւել ևս ունելով այժմ առ մեզ և առ սուրբ Աթոռս, ունիցիս և զսէր ճշմարիտ առ որդին մեր Յովսէփ Արք Եպիսկոպոսն՝ որպէս և ունեցեալ իսկ ես. և զգուշ հայրական և զխնամս առ համայն մերազնեայսն, որք յայդր: Որպէսզի ես առաւել կացուսցես զմեզ պարտականս ճշմարիտ սիրոյ առ եղբայրութիւն քո. որպէս և քեզ առ մեզ ունիլ խնդրեմք զնոյնն ի միասին կատարօղք գոցուք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ զի

ծնօզն մեր և երանելի Հայրապետն՝ Տէր Սիմէօն սրբազան կաթողիկոսն՝ յանցեալ 1780 թուոջն և ի Ծուլիսի ԻԶ քարի մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս։ Որում ողորմեսցի Տէր. և լուսաւորեսցէ շնորհի նորին՝ դասելով ընդ սուրբ Հայրապետացն. եւ գլուխ սիրելութեան ձերոյ ողջ լիցի։ Իսկ ապա՝ համակամ միաբանութեամբ համայն միաբանից սրբոյ Աթոռոյս՝ և աղգի մերոյ՝ կոչեցեալ եղաք ի յայս աստիճան. գոլով թէպէտ անկարօդ այսմ մեծի պաշտօնատարութեանն, այլ ի Ընորհս Տեառն յուսալով՝ որ տայ զօրութիւն լքեալ ձեռաց. և հասանի միշտ ի թիկունս օգնականութեան տկարացս։ Եւ թէպէտ արժան էր մինչև ցայժմ ի ձեռն սիրանիշ թզթոյ զնախընծայ օրհնութիւնս առաքել առ բարեպաշտութիւն ձեր, ըստ որում գիտեմք զսէրդ ճշմարիտ, զոր ունէիր առ Հոգելոյս Հայրապետն մեր. զոր և մշտապէս իսկ ունիս առ լուսակերտ Աթոռս մեր սուրբ, և առ համայն միաբանեայն որք յայդր, և առ հոգևոր վերատեսուչն գոցին Ծովսէփ Արք Եպիսկոպոսն, որոց սակս և Հոգելոյս Հայրապետն մեր ոչ սակաւս ունէր զքէն շնորհակալութիւնս. որպէս և գրեաց իսկ առ Աստուածասիրութիւն ձեր զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան՝ ի 1777 ամի Փրկչին և ի մարտի ԺԵ։ Բայց սակայն լուեալ էք ահա, թէ որպիսի գառն ազէտք դիպեցան երկրացս մերոց յայս քանի ամս. որք և արդ իսկ չգտանեմք դեռ ևս զվանգատութիւն. զի վրդովեալք կան ամենայն գաւառք կողմանցս։ Եւ մինչ յայսպիսում ժամանակի եզև փոխուիլն յաշխարհէ Հոգելոյս Հայրապետին մերոյ՝ և յաջորդելն մեր նուաստութեանս, վասնորոյ զրաղեալ և պաշարեալ ամենակերպ ցաւովք՝ ոչ գտանէաք զձեռնհաս ժամանակ՝ գրել ըստ հարկի և ըստ պատշաճի զթուղթս օրհնութեան՝ ուր հարկաւորն իսկ էր։ Սակս այսը պատճառի՝ և առ քդդ բարեպաշտութիւն մինչև ցարդ անձեռնհաս գտաք գրել զթուղթ օրհնութեան. թէպէտ և հարկաւոր էր փութով գրել։ Իսկ այժմ՝ սակաւ ինչ առեալ մեր զշունչ (թէպէտ և ոչ բոլորովիմբ գտեալ զապահովութիւն.) ընկալաք զթուղթ ի սիրելի որդւոյն մերմէ՝ և ի ծայրագոյն նուիրակէն և Առաջնորդէն համայն մերազնէից որք գոն ի յօրհնեալ երկրոջդ՝ Ծովսէփ Արք եպիսկոպոսէ, որ որպէս յառաջ նոյնպէս և այժմ վերստին գրեալ էր մեզ զշնորհակալութիւնս յոլով զսիրելութենէ ձերմէ, թէ զորպիսի ճշմարիտ սէր և ջոգտասիրութիւն, զբարեկամութիւն և զնանամս ունիք առ Քրիստոսասէջ աթոռս մեր սուրբ. և առ ինքն իսկ, և առ համայն մերայինսն, որք յայդր։ Ուստի՝ և մեր անչափ գոհունակութեամբ շնորհակալեալ զձերմէ Աստուածասիրութենէ, օրհնեցաք զքեզ օրհնութեամբ մեծաւ, հանգերձ քոյոյնովքդ ամենեքեամբք։ Զոր տէր օրհնեսցէ միշտ. և ամենազօր Աջովն իւրով զօրացուսցէ, նախանձամեսցէ և պահպանեսցէ. և փրկեսցէ յամենից ձախորդական դիպուածոց։ Եւ առաւելագոյն փառօք և պերճութեամբ զքեզ ճոխացուցեալ՝ զարդարեսցէ և ամենիւք հոգեկան առաքինութեամբք առ ի յարժանանալ նօքօք երկնաւոր փառացն ևս՝ զոր պատրաստեալ է սիրողաց իւրոց. իսկ արդ՝ խնդրեմ ի յԱստուածասիրութենէ քումմէ. զի զդոյն սիրոյ ճշմարտութիւն և զանխարդախ բարեկամութիւն առաւել ևս ունիցիս առ Քրիստոսասէջ Աթոռս սուրբ ի մեր աւուրս ևս՝ որպէս և ունէիր ցարդ, և առ մեզ ևս զնոյնս ունելով մի առնիցես պակաս զգիրգ սիրանիշ՝ առ ի մխիթարութիւն յամենայնի վշտացեալսյս։ Եւ սիրելի որդւոյն մերոյ Ծովսէփ Արք Եպիսկոպոսին ևս զնոյն սէր և զնանամս ցուցանելով առաւելութեամբ զոր մինչև ցայժմ ցուցեալ ես՝ լիցիս ևս ձեռնտու ամենից քեզ պատշաճ բանից նորին՝ ի սէր մեր և սրբոյ Աթոռոյս, օգնական լինելով յամենայնի։ Եւ ի վերայ համայն մերազնէից որք գոն ընդ ձեռամբ քով՝ ունիլ խնդրեմ զնանամս բարեգոյնս՝ որպէս և ունիսգ իսկ։ Որպէս զի՝ ևս առաւել շնորհակալութեամբ պարտականս վարկցուք զմեզ օրհնելոյ յարաժամ զձերդ բարեպաշտութիւն. որ և ի Տեառնէ եղիցիս օրհնեալ համայն քոյոյնովքդ։ Դարձեալ՝ խնդրեմ յԱստուածասիրութենէ քումմէ զայս ինչ ևս։ Զի գիտես ահա և զգերազանց մեծութիւն խնամոց՝ սիրոյ և գթութեանց մեծի եւ ինքնակալուհւոյ Օգոստինէի Մօրն ողորմութեան Աստուածապսակեալ կայսերուհւոյն՝ զոր ունի առ. ազգս մեր՝ եւ առ Քրիստոսասէջ Աթոռս

սուրբ եւ առ գահակալն սորին։ Որ եւ նոյնով առատագոյն խնամովքն իւրովք՝ շնորհեալ է գհրովարտակ ողորմութեան ըստ խնդրոյ եւ աղերսանաց Հոգելոյս Հայրապետին մերոյ վերոյիշեցելոյ. յայտնելով ի նմա զբազմութիւն սիրոյ եւ խնամոց իւրոց՝ զոր ունի առ սուրբ Աթոռս եւ առ աղգս մեր. եւ ամենից խնդրանաց Հոգելոյս Հայրապետին մերոյ տալով ղկատարումն։ Զորոյ օրինակն տեսեալ ես ի հարկէ։ Իսկ մեք առնելով զայն ի սուրբ Աթոռոջս եւ առ մեզ՝ յարաժամ յիշեմք զերախտիս եւ զխնամս Քրիստոսազօր եւ ինքնակալ մեծի կայսերուհւոյն՝ եւ առաջի Աստուածածնէջ սրբոյ Ցեղւոյս համայն միաբանիւք աղօթիմք հանապազ վասն կենաց և բարեյաջողութեան նորին, և Աստուածապարգև՝ կայսերազուն և թագաժառանգ Որդւոյն իւրոյ և Թոռանցն՝ և ամենայն ժառանգորդաց Աստուածապահ կայսերութեանն։ Զորս ամենաթագաւորն Քրիստոս օրհնեսցէ օրհնութեամբ մեծաւ, և զերկարութիւնս կենաց հանդերձ ամենիւք հոգեկան ու մարմնական ուրախութեամբք՝ և գերազանց պայծառութեամբք պարգեւեսցէ։ Եւ բարձրացուսցէ զեղջիւր թագաւորութեան իւրեանց՝ առնելով ահարկու ընդգէմ թշնամեաց, և տարածանելով ընդ ծագս տիեզերաց։ Ի փառս անուան իւրոյ՝ և ի պարծանս հաւատացելոց իւրոցն։ Արդ՝ ի նոյն ողորմութեան հրովարտակին՝ (որպէս և գիտես ա՛ծ.) ընդ այլ ողորմութեանցն որք շնորհեցեալք են մեզ ի յԱստուածածազօր կայսերուհւոյն ըստ խնդրոյ հոգելոյս Հայրապետին մերոյ, այս հրաման ևս է գրեցեալ՝ զի առանց գիտութեան և վկայական թղթոյ Հայրապետաց սրբոյ Աթոռոյս՝ մի ոք ի կարգաւորաց ազգիս մերոյ մտցէ ի յամենայն իշխանութիւնս Աստուածապահ Տէրութեանն իւրոյ։ Ուստի՝ և ի բարեպաշտութենէ ձերմէ խնդրեմ, զի որպէս հրամանն է Աստուածապահակեալ կայսերուհւոյն մեծի առանց մերոյ վկայական թղթոյ՝ մի ոք ի կարգաւորաց ազգի մերոյ թողուցուս մտանել յայդ երկիրս։ Որով ևս շնորհակալ լինելոց եմք զսիրելութենէդ և օրհնելոց զքեզ։ Որ և լիցիս ողջ ի Տէր, զօրացեալ ի շնորհս նորին յարաժամ։ Ամէն։ Գրեցաւ յամի փրկութեան մերոյ 1781. ի դեկտ. ի լուսակերտ Աթոռս ամենայն Հայոց ի Էջմիածին՝ որ ի դաշտս Արարատեան։

Թուղթ առ Մօզաօքուն կամէնցոյն պարոն Ալէքսանդր Փէտօրովիչ Իվանովն, խնդիր, պահել զհրամանն կայսերուհւոյն, եւ առանց վկայական թղթոյ Հայրապետատաց սրբոյ Աթոռոյս՝ մի զոք ի կարգաւորաց ազգիս մերոյ թողուլ մտանել յերկիրն յայն։

Թուղթ առ թարգման պարոն Ստեփաննոսն ի Հաշտարխան, վասն թարգմանութեան թղթոցս վերոյգրեցելոց, եւ այլ եւս թղթոց՝ որք յայսմհետէ գրեցին անդ, զի լաւապէս թարգմանեսցէ. եւ այլ եւս պատուէր ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս։

Թուղթ առ Ներսէս Աղայն ի Մոսկով, յորդորումն ի սէր առ սուրբ Աթոռս, եւ մխիթարութիւն վասն մահուան կնոջ որդւոյն իւրոյ Աստուածատուրին։

Թուղթ ի Պետրպօլք առ Յովհաննէս Աղայն, ըստ մտաց եւ ըստ նմանութեան վերոյ գրեալ թղթոյդ. նոյնպէս յիշելով զառաջին գրեալսն՝ եւ զսէր եւ զհարազատութիւնս հայցելով, յանճնարարութեամբ Յովսէփ վարդապետին։

Թուղթ առ Ջուղայեցի Պօղոսեան պարոն Թաչիկն՝ ի յերկիրն Ռուսաց, թէ ահա գրեցաք վասն քոյ զյանճնարարութիւնս առ իշխանսն տեղւոյդ։ Եւ վասն գող Սահակին։

Թուղթ ի վերայ նոր Նախիջեւանու, շնորհաւորութիւն վասն նորոգ հոգեւոր Դատարանին. եւ օրհնութիւն։ Եւ հաւանութիւն պայմանին իւրեանց՝ զոր պայմանեալ էին Ծովսէփ վարդապետին, զի զսրբազանի օգնութիւն արարեալ դրամն սակս եկեղեցաշինութեան՝ ի նոր արդեանց սրբոյ Աթոռոյս վեր առնուցուն ի քանի ժամանակս՝ մինչեւ լրասցի, զի զհին արդիւնսն տուեալ էին նուիրակ եւ Առաջնորդ Ծովսէփ վարդապետին։


Յորմէ ժամանեցի Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, և նամակ պահպանութեան, Շնորհք Առաքելական, և Աստուածային բազմապաիկ օրհնութիւն՝ և նախանձամական դթութիւն հանդերձ հաւատով և հանրասփիւռ շնորհօք և զօրութեամբք սրբոյ Տեզուոյս Քրիստոսիմիջի, և նորին կողմունս Գեղարդեանն սրբոյ և հրաշագործի. և Շնորհաբաշխ Աջոյ Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. և սքանչելւորսր Մասանց և Դամբարանաց սրբուհեաց կուսանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց և ամենից Աստուածակիր սրբութեանցն՝ ի սուրբ Աթոռոջս մերում եղելոց։ Ի վերայ սիրելի և հոգեւոր որդւոցդ մերոց՝ հարազատ և լուսաճնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս՝ և Տէրունի ժողովրդոցդ սորին, Հայկասէր լուսաւորչակրն՝ և միաբանադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս, որք զետեղեալ կայք ի նորակերտ և յԱստուածախնամ քաղաքդ նոր Նախիջևան, և ի շրջակայ գիւղորայս դորին։ Ցորս կառուցեալ Քրիստոսահիմն սրբոց եկեղեցեաց՝ և եկեղեցականաց դասուց։ Նախ՝ նորահաստատ Հոգեւոր Դատարանիդ մերոյ. և ի դմին կարդեալ ճշմարտայոյզ Դատաւորացդ հոգեւորաց. Սիմէօն արժանապատիւ վարդապետիդ, և Տէր Ծովհաննէս և Տէր Ղազար Աւագ քահանայիցդ։ Ընդ որս և այլ ամենայն սրբասէր դասուցըդ, վարդապետաց և քահանայից, և սարկաւագաց, և համօրէն եկեղեցական մանկանց։ Ապա և Մարմնաւոր Դատաւորիդ մերոյ Մադիսարաթ կոչեցելոյ. և ի դմին կարդեցեալ իրաւասէր և ուղղադատ Դատաւորացդ մարմնաւորաց. զօրացելոցդ Աստուծով՝ և յատկացելոցդ արժանավայելուչ պատուով։ Նա և համայն Աստուածասէր իշխանացդ. հարազատ և հաւատարիմ Գանձապետացդ և իրից-փոխանացդ. իմաստնախոհ վաճառականացդ, վայելչագործ արուեստաւորացդ, քրանջեան հողագործաց։ Եւ այլ առհասարակ ամենայն ժողովրդականացդ խմբից, մեծաց և փոքերց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, խնդալ ի տէր յարքաղաւարձ ցնծութեամբ և ուրախութեամբ։ Ամէն։

(Շնորհք)։

Եւ ընդ շնորհաղեղուն օրհնութեան և ողջունաբերութեան նամակիս մերոյ սիրալիոյ՝ ծանուցումն լիցի սիրելի ե. հոգեւոր որդւոցդ մերոց՝ և լուսաճնունդ զաւակացդ՝ և Տէրունի ժողովրդոցդ սրբոյ Էջմիածնի։ Զի ըստ որում բերկրութիւն Մօրն որդւովք է, վասնորոյ՝ ի տեսանելն Մօրն զղաւակունսն իւր զուարճալիս և բերկրալիս, բարեշուիղս և բարեզարդս, յայնժամ առաւել զուարճանայ և հրճուի՝ բերկրի և խնդայ ընդ բարեփայլութիւնս զաւակացն. թէև ինքն ունիցի ևս զցաւս և զնեղութիւնս յայլուսս։ Արդ՝ ըստ այսմ օրինակի սրբոյ Աթոռոյ Մօրս ձերոյ լուսաւուի՝ և մեզ՝ և համայն մանկանց սորին՝ եղև այժմ զուարճութիւն և բերկրութիւն մեծ. մինչ վըշտակիր որդիքդ սորին դտեալ զապահովութիւն և ցնծալից կեանս՝ կայք պարապեալ ի շինութիւն Աստուածախնամ քաղաքիդ՝ և եկեղեցեաց, և ի բարեկարդութիւնս հոգևորս և մարմնաւորս։ Քանզի՝ ընկալաք զերկոսին Թուղթսն ձեր, զորս ի ՌՄԼ Թուղթ մերում՝ անցելում՝ ի փետր. ԻԳ և ի մայիսի Լ դրեալ էիք առ մեզ։ Ցորոց առաջնում ցուցեալ էիք զմեծագոյն աղբարմութիւնս ձեր՝ որ յազգս վսեմաճանաչ Հոգելոյս Հայրապետին մերոյ, և ձախորդութեանցն մեծագունից՝ որք դիպեցեալք էին սրբոյ Աթոռոյս և մեզ և երկրիս մերոյ՝ և մեք դրեալ էաք ձեզ. որոց սակս և զմխիթարութիւնս սրտագիւրիչս դրեալ էիք մեզ ցաւակցաբար։ Ցուցեալ էիք ապա և զխնդութիւնսն ձեր հոգեպէս՝ որ յազգս կոչման մերոյս նուաստութեան ի յայս աստիճան, դրելով և զշնորհաւորութիւնս, և

գրանս հարազատականս և սիրայօժար որք ամենեքեան ուրախացուցին զմեզ յիրաւի, և շնորհակալութեամբ մեծաւ զձեզ օրհնեցաք, որք և ի ցեառնէ եղիջիք օրհնեալք և վարձաարեալք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Իսկ յերկրորդ թղթոջն ձերում՝ գրեալ էիք զհասանիլն առ ձեզ թղթոցն մերոց՝ զորս ընդ սիրելի որգւոյն մերոյ Դէֆուեթաթ Դրիգորին գրեալ էաք Յանուցանելով և զշինութիւն քազաքիդ ձերոյ օրհնեցելոյ. և օծանելն զհմունս դորա՝ զմէկ եկեղեցի սիրելի որգւոյն մերոյ և Յայրագոյն նուիրակին և առաջնորդին բոլոր երկրիդ օրհնեցելոյ՝ Յովսէփ Աստուածաբան վարդապետին և Արհի Եպիսկոպոսին. և զերկու եկեղեցի ևս հիմնարկելն. և զՀոգևոր Դասարան ևս հաստատելն յայդր. և ըստ յառաջագոյն առ ինքն գրեցեալ հրամանի Հոգելոյս Հայրապետին մերոյ՝ զկանոնս և զօրէնս բարեկարգութեան յայդր սահմանելն. որովք ամենեքումբք և ուրախացուցանելն զձեզ զամենայնան, և փարատելն ի ձէնջ զամենայն տրտմութիւնս ձեր։ Զորս և ինքն իսկ ևս գրեալ էր մեզ լիապէս, հանդերձ սիրով և հարազատութեամբք ձերովք մեծագունիւք զորս ունիք առ Մայրս ձեր լուսատու սուրբ Աթոռս, և առ Հայրութիւնս մեր Հոգևոր, և յատուկ շահեցողութեամբք և մարդասիրութեամբք և մխիթարութեամբք զորս սեպեալ էր ի ձէնջ։ Որ և զայն ևս էր ծանուցեալ մեզ՝ որպէս և դուք, որ այժմ չառնլով ի յարգանաց սրբոյ Աթոռոյս զշնորհեալն մեր ի յօգնութիւն շինութեան եկեղեցեացդ ձերոց, իբրու ցաւելով վասն սորին ի պակասաւոր ժամանակիս՝ խորհեալ էք ի յօրստօրէ նոր ժողովել արդեանցն մերոց վեր առնուլ զայն՝ մինչև ցլրումն նորին։ Որ է յայտնիչ յաւուկ սրտացաւութեանն։ Ընդ որ և մեք հաճեցաք և հաւանեցաք։ Եւ ընդ այդպիսի բարեզարդ հրճուանս և բերկրութիւնս լուսածին որդւոցդ իւրոց՝ բերկրեցաւ յիրաւի Մայրս ձեր լուսատու և Շնորհաձիր. մեօք հանդերձ՝ և ամենայն ժառանգաւորօք իւրովք։ Որք և ի ձայն օրհնութեան զամենաքաղցր և զբարեգութ Արարիչն մեր և զՏէր օրհնեցաք, գոհանալով զանբաւ գթութեանց նորին զորս արար ձեզ. ածելով ի վայրդ անքոյդ և ապահով, և տալով ձեզ տեսանել զայդպիսի հոգեզուարճ ուրախութիւնս և զքնծութիւնս, փոխանակ վշտաց և չարչարանացն զորս կրեցիք յառաջ։ Եւ զպատճառն դոյն բարութեանց՝ ի ձեռն որոյ եզեն ձեզ այդ ամենայն, գիանամառատ և զթաշատ Մայրն ողորմութեան՝ զինքնակալուհի և զօգոստինէ կայսերուհին մեծ, և զթագազարմ որդին իւր և զթոռունսն՝ և զամենայն ժառանգորդս կայսերութեանն՝ օրհնեցաք համայն Միաբանիւք սրբոյ գահիս։ Որոց տացէ Տէր զերկար և զխաղաղական կեանս՝ հանդերձ ամենիւք բարեյաջողութեամբք, և բարձրացուսցէ զեղջիւր Տէրութեան և իշխանութեան դոցին, և ծաւալեսցէ ընդ աիեզերս. և արասցէ միշտ ահարկու ի վերայ թշնամեաց խաչին սրբոյ։ Օրհնեցաք և զնորահերս քազաքդ ձեր՝ և զԴատաւորանդ Հոգևոր և մարմնաւոր, հանդերձ Դատաւորօքդ պատշաճաբար ընտրեցեալովք օրք ի դոսին. և ամենայն ընդ դոքօք եղեալ Հոգևոր և մարմնաւոր դասուդդ Աստուածասիրօք։ Զոյս զամենեսեանն օրհնեցէ Տէր. շնորհաւոր արասցէ ձեզ զքաղաքդ ձեր և զեկեղեցիդ. և զԴատաւորանդ Հոգևոր և մարմնաւոր։ Արդիւնաւորեսցէ և զամենայն օրէնս բարեկարգութեանց ձերոց. և տացէ ձեզ ամենեցուն վայելել զգոսա՝ խնդութեամբ մեծաւ և ուրախութեամբ, յազգէ յազգ՝ և յորգւոց յորդիս։ Առաջադրեսցէ ձեզ յամենայն ժամ՝ զբարիս առնել զՀաճոյս բարեսէր կամաց նորա. կալ միշտ ըստ հաճոյից նորա. գնալ յամենայն ճանապարհս նորա իրաւամբք և արդարութեամբք. և արժանանալ ողորմութեան իւրոյ։ Արդ այժմ՝ զայս պատուիրեմ Հոգևոր որգւոցդ մերոց։ Զի հասարակապէս մեծք և փոքունք ամենեքեանքն ունելով զփոյթ բարւոյ՝ վառիջիք ի նախանձ բարի, որպէս գի՝ որ ինչ բարեկարգութիւնք ի միջի ձերում սահմանեցան, կացցեն կայունք և անշարժք. և նոքիմբք վարիջիք. առ ի մեալ ձեզ հանապազ ի բարեզարդութեան, որ արդար է՝ և զարդարութիւն սիրէ, և զուզզութիւն տեսանեն երեսք նորա։ Զոր մանաւանդ ձեզ Հոգևոր Դատաւորացդ պատուիրեմ գի արասջիք և յարդարեսջիք զամենայն ինչ ըստ պատշաճի

և ըստ օրինի, որպէս կարգեցեալ է՝ և վայել է իսկ։ Որոց Հոգին սուրբ առաջնոր-
դեսցէ ամենայն ճշմարտութեամբ, առնել զամենայն ինչ ըստ հաճոյից իւրոց։ Իսկ արդ՝ որպէս այժմ եղեն մեզ անրաւ ուրա-
խութիւնք՝ մինչ զամենայն վերոյասացեալ բարեզարդութիւնսն ձեր լուաք և իմացաք, պարտիք յարաժամ առնել զմեզ ուրախս և զուարճալիս՝ բարի ընթացիւք ձերովք։ Եւ զնդյն մեծութիւն և զճշմարտութիւն սիրոյն ձերոյ որդիականի՝ զոր ունիք առ Մայրս ձեր լուսատու և առ մեզ՝ հաստատուն և աճեցուն պահեսջիք։ Եւ զնոյն հպատակու-
թիւն և զորդիական հնազանդութիւն և զսէր զոր ունիք առ սիրելի որդին մեր և նուի-
րակն և Առաջնորդն համայն երկրիդ օրհ-
նեցեալ Ցովսէփ Աստուածարան վարդապետն, պահեսջիք ի նոյնութեան՝ և ևս աճեցու-
սջիք։ Եւ զորպիսութեանց ձերոց ևս գրես-
ջիք մեզ միշտ, առ ի գիտել և յուրախա-
նալ մեզ. անպակաս առնելով զսիրանիշ և զհարազատական թուղթն ձեր։ Եւ կատա-
րօզդ Հոգևոր հրամանացս մերոց՝ եզիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ. և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ։ Ամէն։ Ի ՌՈՄԼԱ թուոջս, ի յունվարի ելն։



*Թուղթ ի Շնոր. Հայհիճնեան, առ սրբոյ Աթոռոյս զանձապահ եւ վէքիլ եւ Մա-
զիստրաթի Դատաւոր պարոն Մկրտիչն, շնորհակալութիւն վասն հարազատու-
թեանցն. եւ արարեալ օգնութեանն, որ զղրկեաց ինչ տուեալ էր՝ որպէս եւ այլ հիշխանքն, եւ վասն վերոյ գրեալ հասա-
րակ թղթոյն, եւ պատուէրքն։*



1782



ՈՒՂԹ ԼՌ զօրապետն ամենայն Ռուսաց, ընդհանրական սպարապետ, մեծ նախարար եւ գաւառապետ գրաֆ Պետր Ալէքսանդրո վիչ Ռումանցովն, վասն անցից եւ որպիսութեանց սրբոյ Աթոռոյս. սկսինքն վախճանման լուսա հոգւոյն, եւ յաջորդելոյն իւրոյ, եւ զձա. խորդութեանց։ Եւ շնորհակալութիւն զբարերարութեանցն՝ որ զբազում մե. րազնեայս ազատեալ էր ի սպանմանէ ի մեծ պատերազմին եւ զայլ բազում բարութիւնս արարեալ Եւ խնդիր՝ միշտ ունիլ զնոյն խնամս առ մերսն, ուր եւ դիպիցի։

Ցորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ՝ օրհ. նութեան՝ եւ քրիստոսական սուրբ ողջունի, հանգերձ արագահաս օգնականութեամբք եւ շնորհօք կենսատու խաչի նորին սրբոյ, եւ փրկարար Արեամբն նորին ներկեալ Գեղարդեանն հրաշագործի. եւ գերասքանչ սրբոյ Ցեղւոյս նորին իջման. եւ Շնորհածաւալ Ա. ջոյ բազմերախտի Հօրն մերոյ սրբոյն Գրի. գորի լուսաւորչին. եւ սքանչելարար Մասանց եւ դամբարանաց սրբուհեաց կուսանացն Հռիփսիմեանց եւ Գայիանեանց, եւ ամենայն յոգնահրաշ սրբութեանցն որք աստ։ Ի վե. րոյ գերազնիւ սիրելւոյդ մերոյ ի Քրիստոս. եւ լուսակերտի Աթոռոյս մերոյ սրբոյ եւ մեզ եւ վշտակիր ազգի մերոյ օգտաստէր բարեկամի եւ խնամոզի. Օգոստինէ եւ ինքնակալուհի կայսերուհւոյն մեծի քաջազօր Քինուորիգ եւ մեծի հաւատարմի. Աստուածասէր՝ եւ նո. վիմբ զօրացեալ, բարեպաշտօն եւ մեծահա. ւատ, արիաջան եւ բարեյաղթ, ընդհանրա. կան սպարապետ՝ ֆրեմմաշալ եւ գրաֆ Պետր Ալէքսանդրովիչ Ռումանցովիդ։ Եւ Աստուա. ծապահ ատն քում եւ քնակութեան, նովիմբ զօրացեալ Որգւոցգ եւ գաւերացգ, ճշմարիտ սիրելեացդ եւ բարեկամացդ. եւ ամենից հա. ւատարմաց քոց եւ հարազատից, եւ ընդ ձեռամբ քով հնազանդելոցն համայնից. խընդալ ի տէր յարաժամ Ամէն։


(Շնորհք)

Եւ ընդ շնորհազեղուն օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցուաք լիցի Աստուա. ծասիրութեան քում։ Զի զբարերարութեանց քոց մեծագունից՝ եւ զճշմարիտ սիրոյ եւ խնամոց քոց՝ զորս առ առաւելեալ ազգն մեր եւ առ Միածնաէջ Աթոռս սուրբ եւ առ գահակալն սորին ունիս, լսեաք ի վաղուց իսկ։ Քանզի գոլով մեր ներկայ ի սուրբ Աթոռոջս՝ առ Հոգելոյս Հայրապետան մեր եւ

Աստուածային երանութեանցն արժանաւոր Տէր Սիմէոն դերերչանիկ կաթողիկոսն, յո. լովք ի մերազնէից գային և պատմէին նմա դոհաբանութեամբ բազմաւ զմեծագոյն մար. դասիրութիւնսդ և զյաւուկ խնամսդ զոր ցուցեալ ես ի մեծ պատևրազմին, աղատե. լով զբազումս ի սպանմանէ. և զբարու. թիւնս յոլով առնելով նոցա, նոյնպէս և զճշմարիտ սէր և զբարեկամութիւնդ զոր ունիս առ. լուսահերա Աթոռս սուրբ և առ. Գահակալն սորին՝ և առ. մերազնեայսն որք յայդկոյս, հոգևոր Այցելուն դոցին Ցովսեփ Արք Եպիսկոպոսն գրեր քանիցս մեծաւ շնորհակալութեամբ առ. նոյն երանելին, եւ նա եւս ընդ այնս մեծապէս շնորհակալեալ՝ և յոյժ ուրախացեալ օրհներ յարաժամ գարժանիդ Աստուածայնոյ օրհնութեան. և դոհացօղ լինէր արշ զբարերարութեանց քոց. Իսկ յորժամ ըստ բարի կամեցողու. թեան Արարչին ամենեցունց փոխեցաւ երա. նելին յանցաւոր կենաց աստի ի մշանջե. նականն զուարճութիւն, և մերս նուաստու. թեան էհաս վիճակ պաշտամանս այսորիկ. (անբաւական դոլով մեր թէպէտ սմին.) է. հաս դարձեալ քանիցս անդամ դիր առ. մեզ ի սիրելի որդւոյն մերմէ ի նոյնոյ Ցովսեփայ Արք Եպիսկոպոսէն, յորս դարձեալ դրեալ էր գնդյն շնորհակալութիւնն զքէն՝ յոյժ դոհունակութեամբ, ծանուցանելով և զայն իսկ, որ երկիցս ընկալեալ ես զինքն սիրով մեծաւ՝ ի գալն ի Մոսկովու ի նոր նախիջևան, և ի դառնալն անդ վերստին, ցուցանելով զմեծագոյն մարդասիրութիւնս և զշահեցողութիւնս։ Ընդ որս ամենեսևանան մեր ևս մեծապէս շնորհակալեալ՝ համայն միաբանիւք սրբոյ դահիս օրհնեցաք զքեզ. և աղօթեցաք վասն կենաց և բարեյաջողու. թեան քոյ. Տէր օրհնեսցէ զքեզ քոյսյ. նովքդ ամենեքումբք՝ և զօրացուսցէ, և յամենից ինաստկար դիպուածոց փրկեսցէ. օդնական լիցի քեզ յամենայն կեանս քո, տալով յարաժամ՝ զյաջողութիւնս բարիս, և զթշնամիս խաչին սրոյ առաջի քոյ նը. կուն առնելով միշտ։ Եւ զփոխարէնն այդ. քան երախտեաց քոց՝ և սիրոյ և բարեկա. մութեան, բազմապատկապէս հատուսցէ քեզ ըստ հոդւոյդ և ըստ մարմնոյդ։ Եւ առա. ւաւելնամ Մօրն ողորմութեան մեծի և ինք. նակալուհւոյ կայսերուհւոյն և թագազարմ և ծիրանածին Որդւոյն իւրոյ և թոռանցն՝ և ամենայն ժառանգորդաց կայսերութեան պարգեւեսցէ զերկարութիւնս կենաց՝ հան. դերձ խաղաղութեամբ. և զիւրապարգև Տէ. րութիւն իշխանութեան դոցին առաւել եւս բարձրացուսցէ, ահարկու առնելով ընդ ամենայն տեղիս՝ ի պարծանս մեզ առապե. լոցս, որք աղօթողք եմք վասն դոցին բարե. յաջողութեան միշտ, և օրհնօղք Աստուա. ծապահ Տէրութեան իւրեանց. յորմէ ի բնէ անտի ընկալեալ եմք զողորմութիւնս, մա. նաւանդ յաւուրց Հոդելոյս Հայրապետին մերոյ մինչև ցարդ, և եւս ակն ունիմք ըն. դունելոյ, Արդ՝ վասն ամենից վերոյ ասա. ցեալ երախտեաց և բարերարութեանց՝ ըզ. շնորհակալութիւնս մեր ի ձեռն այսր օրհ. նաւաք թղթոյ առ բարեպաշտութիւն ձեր մատուցանելով՝ խնդրեմ և աղաչեմ ունիլ դաբձեալ զնոյնս առ Աթոռս մեր սուրբ, և առ մեզ, և առ որդին մեր Ցովսեփ Արք Եպիսկոպոսն, և առ մերազնեայսն ամենայն որք յայդկոյս։ Մանաւանդ առ համայն իսկ ազդ մեր խղճալի՝ եթէ պատահեսցի ևս ձեզ ի յայլ տեղիս գտանիլ։ Որովք կացու. ցանելոց ես զմեզ միշտ օրհնօղս ձեզ, և ա. ղօթօղս վասն մշտական բարեյաջողութեան ձերոյ։ Խնդրեմ ևս դարձեալ՝ զանմխիթա. րութիւնս մեր մխիթարել երբեմն ի ձեռն սիրանիշ գրոյ, որք յաղագս մշտական վըր. դովմանց կոչմանցս այսոցիկ՝ մանաւանդ տանս Արարատեան՝ (զոր և բարեպաշտու. թիւն ձեր լուեալ է ի հարկէ.) ոչ երբեք դատանեմք զպատհով կեանս։ Եւ լսողիդ ա. ղերսանացս լուիցէ միշտ Տէր։ Որով և լիցիս ողջ եւ զօրացեալ յարաժամ հանդերձ քո. յսյնովքդ։ Ամէն, Գրեցաւ յամ փրկութեան մերոյ 1782. ի յունվարի ելն. ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին՝ որ ի դաշտս Արարատեան։

Թուղթ առ վէգիրն կայսերն Ռոսաց, Առաջին նախարար զրաՔ Նիկիտա Իվանիչ Պանինն. ըստ մտաց վերադրեալ Թղթոյդ. նոյնպէս շնորհակալութիւն վասն արարեալ բարերարութեանցն եւ երախտեացն. եւ յաջորդելոյ իւրոյ, եւ այլն նոյնպէս որպէս ի վերոյ։

Թուղթ առ երկրորդն Արքայութեանն Ռուսաց, Գրիգոր Ալէքսանդրիչ Պոտէմկինն. շնորհակալութիւն նոյնպէս՝ (որպէս եւ ի վերոյ առ վէգիրն.) վասն առ ազգս մեր, մանաւանդ առ Ղրմցիսն, եւ առ սուրբ Աթոռս, եւ առ Ցովսէփ վարդապետն արարեալ բարերարութեանցն. Եւ զորպիսութեանց մերոց եւս։



Թուղթ առ Հաշտարխանու եւ Ռուսաց ըոլոր երկրի նուիրակ եւ Առաջնորդ Ցովսէփ վարդապետն. ի պատասխանի ի 1780 թուոջ փրկչին եւ ի հոկտ. ԾԵ առ լուսահոգին զրեալ Թղթոյն, եւ ի 1781, եւ ի փետր. ԻԹ. ի մայիսի ԻԶ. ի յօգոստ. Զ եւ առ նորոգ սրբազանն զրեալ Թղթոցն, վասն բազմաց եւ զանազանից դիտմանց եւ խնդրեալ Թղթոցն որք ի վերոյ են եւ յայլուր։

Ցորժ յատկական սիրով, ճշմարիտ կարօտիւ, հոգեւոր օրհնութեամբ, եւ զօրացուցիչ շնորհիւ սրբոյ իման տեղւոյս Քրիստոսի, ծանուցուաձն լիցի սիրելի եւ հոգեւոր որդւոյդ մերոյ՝ հարազատ եւ քրտնաջան զաւակիդ սրբոյ Աթոռոյս՝ Ցովսէփ Աստուածաբան վարդապետիդ։ Զի հասին առ մեզ ի 1780 թուոջ Փրկչին եւ ի հոկ. ԾԵ ի Մոսկովու առ լուսահոգին գրեալ թուղթգ. եւ ի 1781, ի փետ. ԻԳ, եւ մայիսի ԻԶ ի նոր Նախիջեւանու եւ ի յօգոստոսի Զ եւ ի ԾՐ ի Մոսկովու առ մեզ գրեալ թուղթքդ. Հանդերձ նախիջեւանցւոց երկիցս առ մեզ գրեալ Թղթովքն, եւ օրինակօք այլ եւ այլ Թղթոց՝ ղորս յղեալ էիր ընդ նոսա։ Որոց ամենից ղդիտմունսն ծանեաք, Ցորս գրեցեալ բանիցդ զպատասխանիսն լուր ի միասին։ Արդ՝ Թէպէտ ոչ ի միասին, այլ առաջին Թուղթքն քանի մի միջոցաւ յառաջ հասին. սակայն՝ մեք գոլով ղրաղեալ ի զանազան ցաւս, մանաւանդ ի յայլ եւ այլ հարկաւոր Թղթագրութիւնս, ղքոյդ խնդրեալսն փութով գրել անձեռնհաս եղաք։ Իսկ ի յանցեալ նոյեմբերին ձեռնարկեցաք ի գրել, զոր հազիւ Թէ այժմ աւարտեցաք որ է յունվարի, ընդ այսեաս բազմաց Թղթոց հարկաւորեցելոց ի յայսքան միջոցի ի յայլեւայլ տեղիս։ Արդ՝ գրեմ նախ զկսկիծդ՝ որ սակս մահուան լուսահոգւոյն, ապա եւ զխնգուԹիւն սրտիդ որ վասն մեր յաջորդելոյ խոստանալով զնոյն հարազատութիւնն զորս ցուցեալ էիր լուսահոգւոյն ցուցանել եւ մեզ, ընդ որս եւ մեք շնորհակալեցաք զսիրելի որգւոյդ, եւ յանձնարարաք շնորհացն Աստուծոյ. օժանդակել քեզ յամենայն գործս քո. ի յեւս յառաջադիմութիւն քեզ ըստ ամենայնի։ Իսկ՝ Թէ ի Մոսկովու՝ եւ Թէ ի Նախիջեւանու, զոր ինչ Թուղթս եւ խընդրեալ էիր, զամենայն ահա գրեալ յղեցաք. առանց Թերութեան, բայց ի Մօզոսքու կամենեմաթի Թղթոյն. զի զայն մեք յառաջ ընդ Գրիգորին գրեալ էաք այնու մտօք ամենեւիմբ՝ զոր դու խնդրեալ էիր։ Ցետոյ մինչ ի Մոսկովու ի յօգոստոսի Զ գրեալ Թուղթդ եւս յայսքանի օրս էհաս, զնոր խնգրեալգ եւս գրեցաք ի վերոյ Ռուսաց մեծամեծացն՝ եւ Եպիսկոպոսաց, եւ ահա յղեցաք։ Որք ամենեքեան եղեն ի միասին Թուղթք Աճ։ Սակայն՝ դու գրեալ էիր ի յօգոստ. Զ գրեալ Թղթոդդ Թէ՝ ղՔրիստեանն եւ լուսահոգւոյն իշխանքն ոչ տեսին պատշաճ զի տացուք Ռուսաց. դու նոր գրեա նոցա ղԹուղթս այնու բանիւք՝ զորս գրեալ էր լուսահոգին, զի տացուք նոցա։ Ցետոյ ի նոյն օգոստ. Ծ-Ր գրեալ փոքրիկ Թղթոդդ գրես Թէ՝ ես գիտուաձն ունիմ, զի տաց ըղԹուղթսն լուսահոգւոյն գլխաւորացն Ռուսաց։ Ուստի՝ եւ մեք կարծելով Թէ՝ կամ տուեալ իցես, կամ ոչ իցես տուեալ. ոչ կարացաք գրել ի նոսա Թէ՝ լուսահոգին առ ձեզ Թուղթ է գրեալ՝ կամ ոչ է գրեալ. այլ զնոյն բանսն համառօտ յիշելով, գրե-

ցաք թէ շնորհակալ լինէր զձէնջ եւ օրհնէր, եւ այլն, որպէս ահա տեսանելոց ես. զի բաց յղեցաք առ քեզ, տեսանել՝ եւ թարգմանել տալ. եւ ապա թէ կամիցիս՝ կնքել. եւ այնպէս տալ ինքեանց: Որոց ըզ թիւսն ընդ այնց ամենից որք ի պետապօլիս եւ ի Մոսկով զփրկչականն եդաք ըստ գրեցելոյդ. իսկ յայլսն զՅայոցս: Բայց սակայն՝ եթէ տուեալ ես զգրեանսն լուսահոգւոյն ցմեծամեծան Ուսւսաց, բարւոք ես արարեալ, իսկ եթէ դեռ եւս ոչ, ինձ տալդ բարւոք թուի, եւ ընդ մեր թզմոցդ տացես ցիւրաքանչիւրսն, եւ զորպէսն մեզ գրեսցես: Բայց որ ասես արանջանօք, թէ Ո անգամ մարդ յզեցի յայգր, ուզած դրերս չառի. եւայլն: Առաջինն մինչ եկն՝ լուսահոգին անձեռնհաս էր եւ ի հիւանդութեան. կամեցաւ յետոյ դրել. այն մեծ փորձանքն մինչ յարեան ի վերայ երկրիս, ձնաց արգելեալ: Վերջապէս մինչ կրկին խնդրեցեր, եւ ըսկըսաւ գրել, եւ գրեալ աւարտեաց, ինքն վախճանեցաւ, եւ մեք յղեցաք ըստ կամին, որ ահա այդպէս եղեւ: Իսկ Գրիգորն մինչ եկն առ մեզ, թէպէտ եւ պիտոյ էր մեզ գիր գրել նոցա՝ որոց գրեալ էր լուսահոգին. սակայն տառապեաք անհնար ցաւօք, եւ չունէաք ժամանակ: Մանաւանդ՝ զի գրեցաք քեզ յառաջ՝ եւ յայնժամ եւս ընդ Գրիգորին. թէ ուր եւ պիտոյ իցէ մեզ գրել գիր, ազդեսցես՝ զի դրեսցուք: Վասն որոյ՝ այնր պատասխանոյն սպասելով՝ չգրեցաք յայնժամ նոցա, մտածելով թէ՝ թերեւս իցեն այլ եւս հարկաւոր գրելիք, եւ կրկնագրութիւն լիցի յետոյ: Իսկ այժմ մինչ գրեալ եւ խնդրեալ էիր, ահա գրեալ յզեցաք՝ որպէս ասացաք ի վերոյ եւս: Զտեսրակդ ի նախիջեւանու յղեալ՝ քանիցս ընթեռնուլով ունիմք առ մեզ ի պահեստի: Զշնորհաւորութիւնս գրեցաք Մոսկովու եկեզեցւոյն՝ որպէս խնդրեալ էիր: Նոյնպէս եւ նոր նախիջեւանու, ոչ հոգեւոր Դատարանին միայն, այլեւ մարմնաւորին ըստ գրեցելոյդ ոճոյ. եւ այլ շինուածոցն որպէս տեսանելոց ես: Իմացաք եւ զամենայն բարեկարգութիւնդ, զորս արարեալ ես ի նոր նախիջեւան. եւ զաշխատիդ յոյնս յոյժ. եւ առնելդ անդ՝ զոր ինչ եւ պարան է լեալ. եւ ըստ հրամանաց լուսահոգւոյն յառաջագոյն առ քեզ գրեցելոց՝ զկանոնս պատշաճաւորս սակս նոցին կառավարութեան ի հոգեւոր Դատարանէդն սահմանելդ, եւ հոգ տանիլդ բարւոքապէս շինուածոցն եկեղեցացդ, եւ նոցին արգեանց եւ անօթիցն եւ Դ խանութ վասն սրբոյ Աթոռոյս շինել տալդ. եւ քանիցս եւս տեղի առնուլդ զի ծ վասն մեր՝ եւ ծ վասն տեզուոյ Առաջնորդարանին շինիցին: Ընդ որս եւ զայլ ամենայն ծանրագոյն հոգսդ, եւ զմիայնութիւնդ, եւ աքնիլդ յոյժ ի յանխոնջ աշխատութիւնս ի յօգուտ սրբոյդ Աթոռոյս եւ ժողովրդոց մերոց. եւ զայլն ամենայն: Ընդ որս եւ ուրախացեալ եզաք յոյժ շնորհակալ՝ Ցէր լիցի վարձահատոյց սիրելի որդւոյդ մերոյ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ: Եւ զհասանիլն առ քեզ Թզմոցն մերոց որ ի վերայ Բաքուայ եւ ընդ Գրիգորին, իմացաք. եւ զոր ինչ խորհրդով նախիջեւանու գլխաւորացն վասն արդեանց սրբոյ Աթոռոյս կանոնեալ էիք, (զոր շնորհեալ էաք եկեզեցացն.) հաւանելի եզեն մեզ. եւ գրեցաք ահա ի նոցին կոնդակն եւս: Իսկ զերկու հարիւր Թուման զոր ընդ գրեցելոյ քոյ տուեալ էր Աւետիքն Եսայուն, մեզ հասոյց բոլորապէս՝ սազ դրամ՝ որպէս աստ առնուն եւ տան. եւ մեք զայգ գրեալ եւ տուք Պարոն Եսայուն, որ բերեալ քեզ տացէ: Սակայն որ զհին արդիւնսն նոր նախիջեւանու երկու Թուման ոսկի շինեալ տուեալ ես Աւետիքին յղել աստ, դեռ եւս չառեսաք: Իսկ սրբոյ Աթոռոյս կնիքն եւ Արծուոյ օրինակն զորս ընդ պարոն Եսայուդու եւ Աւետիքն յղեալ էիք՝ հասին: Եւ որքան վասնել էր՝ գրեցաք Մարգարին եւ Փիլիպպոսին զշնորհակալութիւնս: Ցեսաք եւ զնոր նախիջեւանու հոգեւոր Դատարանի կնքոյ օրինակն. եւ հաւանեցաք: Եւ որ ի հաշտարխան եւս կամիս նոյնպէս զհոգեւոր դատարան սահմանել, բարւոք է, եւ արասցես իսկ: Պետրոսօլքու աէր Յովաննիսին եւս գիր գրեցաք սիրով՝ որպէս վայել էր, ոչինչ յիշելով զառաջնոցն: Աւետիքն ինքն ոչ էր եկեալ ասա ի Մոզտօքու՝ որպէս գրեալ էիր. այլ զօրինակն մահսարին յղեալ էր. զոր աեսեալ մեր յոյժ հաւանեցաք ամենից գիտմանդ՝ որք ի նմա. և շնորհակալութեամբ օրհնեցաք զսիրելի որդիդ մեր.

որում աէր լիցի վարձահատոյց, Սակայն՝ ղորպէսն Հասանմանսուրցի Ցակորին որ գրեալ էիր, Թէ ողջ է, և կին չէ արա-րեալ. և Աւետիքին ևս Տարկեալ էիր գը-րել զորպէսն Նորին Մկրտիչ և Իսահակ վարդապետացն, գրեալ էր, և մեք ևս տե-սաք։ Ոակայն չէ ևս ատկաւին յայտ, Թէ այժմ ո՞ւր է այրն այն, և կամ ե՞րբ է երևելոց։ Իսկ կին Նորին աստ ի նոյն տագ-նապն կայ զոր գրեալ եմք քեզ յառաջ. և բողոքն միշտ յականջս մեր Հնչելով՝ աշխատ առնէ զմեզ յոյժ։ Թուլատրելի չէ՝ ըստ որում գիտես ղորպէսն երկրիս, գլըր-րութիւնն տաճկաց, և զայլս ըստ սմին, զի գուցէ Թէ՝ ի գերեւս ելցէ աշխատու-Թիւնն մեր՝ որ ցայժմ արգելեցաք յայսպի-սեաց։ Եւ այսպէս արգելուլն ևս՝ լինի միշտ ցաւեցուցիչ։ Ուրեմն՝ լաւապէս հետևեալ՝ գրեա զնորին ստոյգ որպէսն։ Ահա Ղզլարու գործակալացն և աէր Մարգարին ևս գրե-ցաք գրել մեզ. և գու ևս գրեա՛, և նոցա ևս հարկ արա՝ զստոյգն գրել մեզ, Թէ ո՛ւր է նա, կամ Թէ մեռեա՞լ է՝ Թէ կենդանի, Եւ Թէ կենդանի է, հնար է րերելզ զնա ի ձեռն, յորմ աստ փութով Որգի նորին Մարգիսն գիր էր գրեալ Սահակ վարդա-պետին, և խոստացեալ էր գալ աստ գկնի սրոյ խաչին, ահա նա ևս ոչ եկն։ Թիֆ-լիզու Տէր Պետրոսին ըստ խնդրոյգ գրեալ էաք յառաջ հրամանն գալ յայգր և առ քեզ, և եկեալ իսկ է, որ և գրեալ էր առ մեզ զԹուղթ ի Մօղաօքուս Զոր կար-գեսցես ի յիւրապատշաճ գործս, որպէս և ունիս զգիտասճ, և մեզ գրեալ էիր, որ է օգտակարագոյն։ Իսկ և՝ յետ կարգաւորե-լոյգ զնոր Նախիջևան՝ ի կատարին եսալաւ երթալզ, և սլլ ևս նոցին բանիցն Հոգ առնիլզ. քեզ ոռճիկ կարգիլն, և սակս այնր յաւելլոյ՝ գրելն գումրեցւոյն Թին և սլլոց առ մեծ իշխանն, և նմանապէս՝ Հոգեւոր դատարանի դատաւոր Սիմէոն վարդապետին ևս կարգիլն ռոճիկ. և այլն ամենայն։ Ապա և զերթալզ ի Մոսկով վասն օծման եկե-ղեցւոյն նորակերտի. և զի՛նչ ևս անգ անօ-րինելզ։ Ընդ որս ամենեսեանն ուրախա-ցաք՝ և շնորհակալեցաք զսիրելի որգւոյգն Տէր լիցի օգնական քեզ յամենայն այդպի-սիս. և վարձահատոյց։ Գրեալ էիր և զկա-միզ երթալ կրկին ի Պետրպօլք, ուր Թէ գնացի՞ր յիրաւի, և կամ զի՞նչ անգ ևս առնելզ, և կամ ե՞րբ դառնալզ դէպ ի Հաշտարխան, մեզ գրեսցես։ Իմացաք և զանցս և զամենայն որպէսն Սաղիմայ նուի-րակին՝ որպէս գրեալ էիր. և քեզ զի՛նչ գրելն վասն նորա Ցովակիմ և Զաքարիա և Մինաս վարդապետացն, և այլոյն Արդ մեք ահա զկոնդակ մի գրեցաք ի վերայ Հաշ-տարեանուս, նոր նախիջևանուս, Ղզլարու, Մօղաօքու և շրջակայից իւրեանց. զի յայս անգամս ևս ի սէր սրբոց Ցնօրինականաց Տեզեցաց Քրիստոսի և սրբոց Ցակորեանց Առաքելոց Աթոռոյն ընկալցին զնա սիրով և տացեն զտուրսն իւրեանց կամաւոր։ Իսկ եԹէ սլլեւս նոյնպէս առանց մերոյ գիտու-Թեան եկեսցեն՝ մի՛ ընկալցին, որպէս ահա տեսանելոց ես։ Ուրեմն ընԹեռնուլ առ ի յիշեալ տեղիսն. և այսպէս ծանո՛ ամենե-ցուն։ Իսկ վասն Սաղիմայ Մովսէս վարդա-պետի յայգր գալոյն և զվասն է՛րն. և արգելանիլն ի Մոսկով և քո զինչ անօրի-նելզ իշխանացն խորհրդակցութեամբ. և սիրելւոյն մերոյ Եղիազար Ազնիւ Ազայի զինչ գրելն առ Պատրիարք Ցովակիմ վար-գապետան (որոյ և զօրինակն զոր յղեալ էր Վարդան վարդապետն՝ տեսաք և Հաւանե-ցաք) և քո եւս զինչ գրելզ առ նա վասն Խաչին և սլլոն. զամենայնն իմացաք. զորս և բարւոք էք արարեալ իսկ։ ԵԹէ ցմեզ Հարցանէին, առաջադրելոց էաք մեք իւ-եանց զօգուտն իւրեանց սլլ ահա չեն Հարցեալ, և զոր ինչ կամիցեալ են ան-Հիմն մտօք, արարեալ են։ Եւ գուք բար-ւոք էք անօրինեալ յայգր՝ և ըստ պատշա-ճի. զի լաց ի մեծագոյն ամօԹոյ և պակա-սուԹեանց, որ լինելոց էր յայգմանէ ին-քեանց և ազգի մերոյ՝ զոչինչ շահս էին տեսանելոց։ Իսկ մեք այժմ ոչինչ գրեցաք Ցովակիմ Պատրիարքին վասն այգր՝ կամ նուիրակին. զի սպասեմք նոցին գրոց՝ զի և մեք զոր ինչ պատշաճն է գրեսցուք։ Զի մինչեւ ցարդ սակս ծիմանցն Պօլսոյ գեռ եւս չէգրեցին նոքա մեզ զԹուղթեսն Ալլ մեք գրեալ եմք երկիցս, և սպասեմք պատաս-խանեացն։ Այժմ ըստ ոճոյ կոնդակիգ այգ-միկ Թոգ նուիրակն զիւր գործն յաջողե-ցուսցէ և գու օժանդակ լեր յամենայնի,

զի սուրբ Երուսաղէմ եւս մեր է։ Ճետոյ տեսցուք թէ զինչ գրեն նոքա մեզ. և մեք զոր ինչ պատշաճին է՝ գրելոց եմք։ Իսկ ըստ քոյգ խնդրոյ, որ գրեալ է Աստուածազօր և գթառատ կայսերուհին զնոր հրովարտակ ի վերայ Պօլսոյ գեսպանին՝ զի ըստ առաջնոյ հրամանին իւրոյ շնորհեցելոյ Հոգելուսի մերոյ՝ մի՝ թողուցու զոք ի կարգաւորաց ազգի մերոյ առանց մերոյ գիտութեան և հոգեւոր հրամանաց մատանել յայդ երկիր, (որոյ և զօրինակն եւս յղեալ էիր ե. տե սաք.) առ այգ եւս ուրախացեալ օրհնեցաք զԱստուածապահ տէրութիւն իւր՝ հանգերձ օրհնեալ և բարեբարմատ ոստովքն իւրովք։ Եւ որ գրեն թէ յամենայն սահմանըս եւս զնոյնս գրելոց են, ծանուսցես ըզգրելն։ Դու եւս, որ գիր ես գրեալ նոյն գեսպանին վասն այսր մասց իմացաք։ Եւ ըստ գրեցելոյգ ծանուսցես մեզ զգնալն անգ նորոգ գեսպանին և գրեւցես մեզ զանունն և զպատիւն, զի և մեք գրեսցուք առ նա զթուղթ՝ և ծանօթասցուք։ Եւ զօրինակն նոր հրովարտակին ի Պօլիս եւս յղելգ իւմացաք։ Վասն գոյն րանից. և Սաղիմացւոցն զոր ինչ գրեալ ես Մինաս վարդապետին, Ահա և նոյնպէս և Մինաս վարդապետն զգիր գրեալ է առ քեզ՝ յղեալ էր ի ձեռս մեր առ քեզ յղել. զոր և ահա յղեցաք. և տեսանելոց ես։ Իսկ՝ որ գրես հոգ տանիլ թերակատար գործոց լուսահոգւոյն և կատարել. ե ղհաստատեալսն և եւս հաստատել. և այլն։ Մեք եւս ի գոյն միտս կամք վառեալ միշտ և զգոյնս չնամք, Սակայն՝ մինչեւ ցարդ որովհետեւ չէքացաք զաչս ի տաժանմանց, վասն այն և ոչ միոյ բանի տակաւին կրցաք առնել զհոգս։ Զի ոչ միայն տեղւոյս ցաւքն զմեզ մաշեն, այլ և տարաձայնութիւնքն, որք ի Պօլիս։ Որք այժմ հազիւ զՔարմանն ե զմահսարն մեր հոգացեալ՝ գարձուցեալ են գՊետրոս վարդապետն, և եկեալ է ի կարին։ Եւ ահա այժմ զգիր պատրաստել տամք, և հանդերձեալ եմք տալ զԱաենի ժամագիրքն, ըստ խնդրոյ Զուղայեցի Պօղոսեան Պարոն Խաչիկին՝ որ ի Պօլիս լիներ. և այժմ եւ կեալ է յայդ կօղմունսդ, որ է ընկեր Էմինիազեան մահտեսի Ճարութիւնի Աղպիւրին՝ որ է ի Բասրա, որք երկուքն եւս հարազաք են սրբոյ Աթոռոյս և մեզ միշտ պիտանիք։ Որոյ սակս և մեք զյանձնարարուԹիւնս գրեցաք Աղնիւ Եղիազար՝ և Աղնիւ Ճովհաննէս Աղպիւրն. զի մուղայէթ լիցեն յամենայն կողմանէ ըստ որում մեր է յատկապէս, փեղ սիրելի որդւոյգ մերոյ եւս գրեմ ահա, զի և դու մուղայէթ լիցիս գմա ըստ ամենայնի և ակնածու և վախԹարիչ, որքան յայդ կողմունսդ է, որու և զօրպիսուԹիւնն մեզ գրեսցես։ Ահա և նմա գիր գրեցաք, տացես ինքեան։ Իսկ նախքան զապուճ Աաենւոյն՝ ունիմք զդիտումն զյուսահոգւոյ Պարտավճարի մնացորդն տալոյ։ Բայց որ զԽալգարենց Պարոն Գրիգորի տապագրութեան գրոյ օրինակն յղեալ էիր, և գրեալ Թէ՝ ի պեարպօլք հասատեալոց է զապագրատուն. եԹէ յայգր ոչ տպէք ըզՊարտավճարն, յղեսջիք զի աստ տպել տացւ. և այլն. Ցապագրատուն ըստ մերում լեզուի գոյ և յայլ տեղիս. Թէ յայնս ապեալ է Թէ յայգր, զի՞նչ է զանազանութիւն։ Սակայն որպէս էր ջանք լուսահոգւոյն նոյնպէս և մեր ամենեցուն այն է ջանք և դիտումն, զի ի սրբոյ Աթոռոյս ելցէ այսպիսի ինչ, առ ի գովեստ և ի բարձրութիւն սմին՝ և անուան լուսահոգւոյն որ զապագրատունս գայս հաստատեաց. զայսու ևրպէս զանց առեալ յայլ տեղիս արկցուք։ Նոյնպէս և վասն ԹզԹատանն՝ և Թերակատար ՄնացեալՀ գործոցն իմա. զի ամենայն ինչ յաջողելոց է Աստուծով և յառաջանալոց. եԹէ տացէ մեզ Աստուած զժամանակ՝ և զհաղող կեանս։ Իսկ զյիշեցուցանելդ յայդր զանուն լուսահոգւոյն գիտացաք։ Բայց որ գրես ի յԱաենի ժամագիրքն գնել զնոյն յիշատակն և տպեցուցանել. գեռ եւս ահա ոչ տպի Աաենին. ի տպիլն տեսցուք։ Սակայն որ զպատմութիւնս վասն լուսահոգւոյն կարգել և ի կարգս Ա յսմասուրաց տպեցուցանել գրես. այժմ մեք ե՞րբ կարեմք տպել զԱյսմասուրս՝ զի զայդ եւս արասցուք. եԹէ յաջողեսցի Աստուած այնպէս հաստատել զպապագրատունս՝ զի զայնպիսի մեծ գործս եւս յառաջացուսցէ, և մեզ ժամանակ լիցի այնմ հեռւել՝ յայնժամ է տեսանելի։ Իսկ վասն սպասաւորաց լուսահոգւոյն որ զյանձնարարութիւնս գրես, ունիմք ըստ ամենայնի ի սէր և ի խնամս մեր. զոր և ինքեանք

գիտեմ զի գրեն քեզ՝ որք և ըստ իւրա-
քանչիւր պաշաշճաւորութեան օժանդակք
են մեզ ի գործն մեր այժմ եւս որպէս և
յառաջն էին թէեւ ի կարգս հասարակու-
թեան են, առ ի խոցումն անզուսպ բերա-
նոց. որ և այն իսկ է ուրախութիւն և ա-
պահովութիւն ինքեանց և ամօթահարու-
թիւն թշնամեաց իւրեանց։ Ներ ուրեմն յա-
ճնայնի միամիտ զսոցունց. և որ ի կարծիս
մի առներ. զի մեր են յաւուրս։ Զոմանս
գրեանս որ գրեալ էիր յղել ընդ Պարոն
Եսայուն, ահա զքոյդ Լամբրոնացւոյ խոր
հրդոյ մեկնիչն ի միջոյ իրաց քոց հանել
եաւաք և յղեցաք. իսկ պատմագիրս չկա-
բացաք յղել. զի չունէաք ժամ հեաւիլ և
ղյղելոյ պաշաճան գտանել և յղել։ Զայս
գրեանքս բոլորապէս յանձնեցաք Պարոն Ե-
սայուն բերել և առ քեզ հասուցանել.
որովհետև ինքն եւս գալոց էր։ Բայց որ
զՑէր Սահիանի տղայն խնդրեալ էիր յղել
ընդ Եսայուն. ասացաք. չկարաց բերել.
նախ վասն ցրտութեան և ձեան ձմեան ե-
զանակիս. զի իցէ թէ չկարիցէր գիմանալ
և երկրորդ զի որովհետև նոյն երէցն փա-
խստական է ի Թիֆլիզու և այժմ Եսային
ի վերայ Թիֆլիզու էր գալոց, երկեաւ տա-
նիլ անգ զտղայն, և անցուցանել յայդր.
զի թարց կարծեաց վնաս էր լինելոց ին
քեան ի յիմանալն վրացւոցն. որպէս ահա
և ինքն ասելոց է։ Իսկ և զոր ինչ գրեալ
էիր Արքային Հեբակլայ Հանդերձ միութա-
րութեամբ վասն որգւոյն՝ և զմիտն գրե-
ցելոց զմեզ ծանուցեալ, իմացաք և հաւա-
նեցաք։

Փոխանակ առ Յովսէփ վարդապետն,
վասն խնդրելոյն աստի զոմն սեւա-
զլուխ, եւ զգալոյն իւրոյ եւ երկարելոյ
ժամանակին. եւ առ սոյնս յոլով քանք.
եւ զի զՆրուսաղէմի միաբան Մովսէս
պետն անդ մի պահեսցէ։

Ի Ցէր Ղուկաս վշտակիր կաթողիկոսէ, զայս եւս առանձին ծանիր սիրելի որդիդ մեր Յովսէփ Աստուածաբան վարդապետ։ Գիտեմ զի ունիս ի մտի. և գիտես լաւ-պէս զչնիկ և զճշմարիտ սէրն իմ զոր ու-նեմ առ քեզ։ Ունիմ և ես ի մտի զքոյդ ջերմագին սէր՝ զոր ունէիր դու առ իս։ Եւ այնու ստոյգ ուրով իմ և քո. ի գնալն իմ ի Զմիւռնին, ես կամէի զքեզ տանիլ ընդ իս և գու ջերմեռանդ ըղձիւ բաղձայիր գալ. Թէպէտ Հոգելոյս Յնոցն մեր ոչ կամեցաւ Սակայն և այն՝ չէր առանց Աստուծոյ, որ լուսահոգին զքեզ յայնժամ արգելեալ, արար սպասաւոր ինքեան և աշակերտ, և օրհնածին որդի. բարձրացոյց կարգօք սրբազ-նագունիւք, ճոխացոյց արժանավայելուչ վի-ճակօք, և արար պատուական և երևելի ի մէջ բազմաց, Որ թէ չէիցեր յայնժամ զքեզ արգելեալ, ի հարկէ ոչ էին լինելոց աս-ցեալքս. այլ ոչ էր ուրեմն առանց Աս-տուածոյ որպէս ասացաք։ Եւ թէպէտ յԱս-տուածոյ եղեւ արգելանիլդ յայնժամ, սակայն զճշմարտութիւն սիրոյն մերոյ որ առ մի-մեանս էր յայնմ նուագի, չէ դնելի ի մո-ռացօնս։ Ունիմ ի մտի զյորդ արտասուսն քո՝ զոր գալով ընդ իս մինչև ցգիւղն Ալի-բէկլու, հեզուիր յերկիր։ Գիտեմ զի և գու ունիս ի միտս քո՝ թէ որպէս և ես սերտաւոր ըղձիւ զքեզ խնդրէի, և ի յար-գելանիլդ՝ լայր վասն քոյ։ Արդ զնոյն ճըշ-մարիտ սէր տակաւին ունիմ առ քեզ տաւ-գութեամբ. հաւատամ զի և դու ունիս առ մեզ։ Եւ զի յատկութիւն սիրոյն ճըշ-մարտի պէն է՝ ոչ բանիւք և լեզուօք միայն լինիլ՝ այլ արդեամբք և ճշմարտութեամբք ըստ սրբոյն Յօհաննու, վասնորոյ զարդիւնս հայրականի սիրոյն իմոյ ճշմարտի, որ առ քեզդ է, բացայայտեցից թարց ծածկելոյ, որ ընդգէմ է ճշմարտութեան սիրոյ սակս օգտի քոյ և սրբոյ Աթոռոյս։ Արդ գրես դու ի թըղ-թոջդ որ ի փետրվարի ԻԳ վասն կանոնաց և կառավարմանց կողմանցդ թէ՝ մինչեւ ես ոչ եկից ի սուրբ Աթոռդ և առ քեզ, որ ընդ միմեանս վասն այսպիսեաց խօսեսցուք. ամենայն ինչ ըստ մասին անկատար է. զի գալս և ընդ քեզ խօսիլս, և վասն կող-մանցս կանոն դնելն մեր լինելոց է երբեւ փոքրիկ ժողովք իմն վասն տեղւոյս. և զինչ և սահմանեսցի, կայուն է մնալոց։ Ցետոյ գրես և հարկես ի նոյն թուղթն և ի մայիսի ԻԶ

գրեցելուան եւս թէ զԴանիէլ վարդապետն յղեա. և ի յետին Բ Թուոլդ որք ի յօգոստոսի Զ և ի ԺԲ. զԵփրեմ վարդապետն խնդրես յղել. ծանուցանելով եւս ինչ գիտմամբ խնգրելդ։ Առ որս նախապէս զայս ասեմ թէ՝ եթէ ըստ քոյդ գրեցելոյ՝ ամենայն ինչ ըստ մասին անկատար է՝ եթէ գու չգայցես. ապա ւրու չեւ եւս եկեալ և մեք անտեղեակ ամենից որպիսութեանց կողմանցգ, որո՛վ կերպիւ յղեսցուք զոք յայդկոյո և կամ զի՞նչ գրեսցուք ժողովրգեանն թէ՝ ըստս ոմն ո՛յր աղագաւ յղեցաք Զի եկօղն ով ոք է իցէ, կամ ինքնագլուխ պարտի լինիլ, և կամ ըստ քոյգ գրեցելոյ կերպիւ Արդ՝ թէ ինքնագլուխ որպէս առաքեցից, մինչ գու գրես ահա թէ՝ զկնի գարձին իմոյ ի Մոսկովու՝ գալոց եմ ի սուրբ Աթոռգ. և յայնժամ խոկալոց եմք, եթէ իմ գառնալս իցէ օգուտ, կամ թէ զայլ ոք առաքելգ զայն ես առնելոցս Եւ գարձեալ թէ՝ զո և առաքելոց իցես, ես միայն պարտիմ հաւանիլ. որ կարօղ իցէ ղեգեալն պահպանել. և այլն։ Ահա ըստ այսց գրեցելոց քոց, այնքան ոչ պարտիմք յղել յայգր զոք ինքնագլուխ, մինչեւ գու եկեսցես աստ. և զմիտգ պարղեսցես, թէ գառնալո՞ց ես յետս՝ թէ ո՛չ։ Եւ թէ գառնալոյ չլինիցիս, ում և հաւանիցես յայնժամ, ապա թէ յղեսցուք մեք։ Արդ՝ քեզ ահա գեռ եւս ո՛չ դոյ նշան գալոյ. զի ըստ գրեցելոց քոց, այժմ ի Պետրպօլգ իցես գնացեալ Թերեւս, ուստի ոչ լինի վաղվաղակի գառնալ։ Եւ ի դառնալդ եւս ի Հաշտարխան, ղՀոգևւոր գատարան ես սահմանելոց անդ որպէս գրես. և զայլ Հարկաւոր Հոգալիսգ Հոգալոց. որք ի մէկ տարի՝ կամ յայլ աւելի ժամանակս՝ հազիւ թէ վճարին և ի գլուխ ելանեն. և թէ ո՞րքան եւս ի ճանապարհի ես յամելոց ի գալդ, զայն եւս գու մտածեա։ Ապա՝ այլ մեք զի՞նչ արասցուք, որ գրես թէ գործոցն մերոց պիտոյս լինի ի գուրս Զի ի Հարկէ (որպէս ասացաք) պարտիմք ոչ յղել զոք ինքնագլուխ, մինչեւ գու եկեսցես, և զդառնալդ կամ չդառնալդ պարզեսցես. (որպէս յայլուր եւս գրես թէ՝ մինչ գամ ի ի սուրբ Աթոռդ՝ զվերադառնալս յայգր եմ տեսանելոց.) ապա թէ և մեք քոյով հաւանութեամբ զայլ ոք յղեսցուք։ Ցայտնի եղեւ ահա, զի անմարթ է յղելն մեր յայգր զոք ինքնագլուխ, մինչեւ դու ոչ եկեսցես։ Իսկ թէ ըստ քոյդ մտացդ յղեսցուք յայգր զոք, և ոչ ինքնագլուխ, որպէս զԴանիէլ վարդապետն և կամ ղԵփրեմ վարդապետն խնդրես, գիտեա և առ այն։ Զի դու գրես վասն Դանիէլ վարդապետին թէ՝ վասն այսր խնդրեմ, զի ինձ փոխանորդ կարգեալ՝ եկից։ Առադրելով եւս վասն նորա զյոյս իմն կարծողական թէ՝ իցէ թէ ի դէպ ժամանակի և նա վիճակեսցի։ Այժմ գայ և համաձայ կողմանցս որպիսութեանցն։ Այս ի փետրվարի ԻԳ գրեցելումդ։ Ցետոյ ի մայիսի ԻԶ գրեցելում թուոլգ եւս կրկին խնդրես զնա՝ յղել Մեռնաւ և կոնդակաւ յանուն քո։ Եւ ասես թէ՝ ի Հաշտարխան երբ դառնալս չգիտեմ, եթէ յամեցից, նա արասցէ ղնուիրակութիւնն. իսկ թէ փութով դարձայց ի Հաշտարխան, ես արարից զսկիզբն նուիրակութեան, և եկից ի սուրբ Աթոռգ։ Վասն նուիրակութեանն այսպէս։ Ապա և վասն Առաջնորգութեան գրես թէ՝ Առաջնորդութիւն չէ կարելի. զի ժողովուրդըն աղաղակեն թէ՝ ժամանակ ինչ համբերեա. զի Հազիւ կարգեալ եղաք ի շարս քրիստոնէիւ։ Ցետոյ ի յօգոստոսի Զ և ի ԺԲ մինչ ղԵփրեմ վարդապետն խնդրես, գրես և վասն նորա թէ՝ շուտով յղեա զի Թերեւս կարացից ժամանակ գտանել և և գալ յայգր, և ժամանակ ինչ ձեալ։ Եթէ այսպէս լիցի, միամիտ եմ լինելոց ըզվիճակէս՝ ո՛րքան և ծնայցեմ յայգր. և ընդ նմա կարօղ ես ղնուիրակութեան կոնդակ և զմեռոն յղել առ մեզ։ Արդ՝ ահա յայսց գրեցելոց քոց յայտնի եղև, զի եւկօղն թէ Դանիէլն իցէ, թէ Եփրեմն, և թէ այլ ոք, ոչ պարտի ունիլ զանուն Առաջնորգութեան, որպէս ահա գրես թէ՝ չէ՛ կարելի։ Նոյնպէս և ոչ նուիրակութեան. ըստ որում գրես թէ՝ առ իս յղեա զկոնգակն և զմեռոնն, և ես սկիզբն արարեալ եկից յայգր։ Մնայ ապա եկողին այն միայն, որ գրես թէ՝ ինձ փոխանորդ կարգեցից և եկից։ Եւ գարձեալ թէ՝ մինչ Հանդերձեալ եմ զՀոգևւոր դատարան սահմանել ի Հաշտարխան, հարկ է մէկ վարդապետ միշտ անկնտիլ. զի ոչ կարեմ՝ մինչդեռ նոր է,

առանց վարդապետի ձգել և գալ։ Որովք և վասն քոյ ղայս երեւեցուցանես, զի Թէ գայցես եւս աստ, տակաւին անուն նուիրակութեան և. Առաջնորդութեան ընդ քեզ պարտի մնալ. և յայդր մնացօղն ով ոք և իցէ, քեզ փոխանորդ լինիլ. ունելով զկարծողական յայս մի, զոր գրես Թէ, իցէ Թէ ի դէպ ժամանակի և նա վիճակեսցի։ Արդ՝ դու ըստ սոյն մտացս լուսահոգւոյն ևս էիր գրեալ վասն Դանիէլ վարդապետին. և լուսահոգին՝ զի կամէր դալ քեզ ի սուրբ Աթոռս, և յայդր պատշաճաւոր անձին ումեք գտանիլ. ի ձեռն ումեմն յորդորեաց զնա գալ յայդր առ քեզ։ Ցայնժամ, մինչ ղբոյդ խնդրեալ Թուղթսն գրեցուցանէր լուսահոգին, զոր պատրաստեաց և ոչ կարաց սըզել՝ մեք յղեցաք։ Իսկ նա հրաժարեցաւ, և ոչ կամեցաւ գալ։ Զայս ասելով Թէ՝ ես մինչ ասա մնացից, ի հարկէ ի քանի գործս ինձ պատկանաւորս երթալոց եմ ըստ ժամանակին։ Իսկ Թէ գնացից անդ՝ ընկերքն իմ ասա իւրաքանչիւրքն զերկուս և զերիս գործս կատարելոց են, և Եպիսկոպոսութեան աստիճանի ևս հասանիլոց են, և ես մնալոց եմ անդ յերկար ժամանակս ի յասաիճանի սպասաւորութեան, յետահարեցեալ ի յընկերացս եւ կարծողական յոյն այն եւս՝ զոր ասէք Թէ՝ ի դէպ ժամանակի և դու վիճակիս, կամ լինիցի, կամ ոչ լինիցի, և ես լինիցիմ ուզորմիի և յետին։ Ուրեմն լաւ է ինձ ի մասնաւոր վիճակս ինքնագլուխ երթալ և փութով դառնալ, քան Թէ անդ երթալ այդու անուամբ և մնալ երկար։ Եւ Թէ ի մասնաւոր վիճակս եւս չմղիցէք, անգործ մնալս աստէն լաւ է վասն իմ, քան Թէ այդ՝ զոր զիս հրաւիրէք։ Զայսոսիկ ասացեալ ի բաց եկաց յայնժամ. և լուսահոգին ևս Թէպէտ սրանեղեցաւ, այլ ոչ բռնադատեաց զնա. դիտացեալ Թէ՝ բռնութեամբ յղելն ոչինչ օգտէ։ Իսկ մեք եւս՝ (որովհետև գրեալ ես ահա և մեզ երկիցս.) Թէպէտ և բազմիցս զնա յորդորեցաք յուսադրելով՝ զի յղեսցուք, որպէս և լուսահոգին կամէր, այլ նա մեզ եւս զնոյն պատասխանին տալով, և զնոյն պատճառն առաջադրելով ի բաց հրաժարեցաւ. և մեք եւս չբռնադատեցաք, որպէս և ոչ լուսահոգին. զի քեզ ևս լինելոց էր անօգուտ բռնութեամբ լինիլն։ Եւ որպէս Դանիէլի պատասխանին եղև՝ յետ և յառաջ. Եփրեմին եւս այսպէս իմաս։ Զի որպէս նա, նոյնպէս և սա հրաժարեցաւ։ Այլ սակայն՝ այսպէս գիտեա. զի ոչ Թէ սոքա միայն, այլ ով ոք և իցէ, ոչ երբէք ախորժի դալ յայդր՝ այդու անուամբ և կերպիւ։ Լեալ է Թէպէտ յառաջագոյն, որ աստի ըզմեռն և զկոնդակ տուեալ ումեմն՝ այլոյ անուամբ յղեալ են առ նա, զի նուիրակն նա լիցի առ որ առաքեն, և տանօղն իբրու պասաւոր. որպէս լուսահոգի Կարապետ կաթողիկոսն ղլուսահոգի Ջամախեցին յղեալ է ի Սպահան առ Աղաւնի Աստուածատուր վարդապետն։ Բայց դու եւս գիտես լաւպէս, որ ոչ ժամանակս այս այն ժամանակն է, և ոչ այն միամտութիւնն գոյ ի յայժմուս եղեալսն։ Դու զրես Թէ՝ կարնեցի Կարապետն լաւ է, ահա նա ևս ի Թիֆլիզ է. և այլն։ Նա քանիցս մեզ գրէ Թէ՝ զիս աստի հան։ Իսկ արդ՝ Թէ հանիցեմք զնա անտի և յղել կամիցիմք, ի՞նչ անուամբ յղեսցուք։ Եթէ զնա ևս այնու անուամբ՝ որով զմիւսսն խնդրես, ի հարկէ նա ևս զոյնս ասէ։ Ապա այլ մեք զի՞նչ արասցուք, որ գրես Թէ՝ գիա վասն այսր զհնարս։ Զի գրեցեալքն ի քէն որք ի վերն յիշեցան, խրտուցանեն զբազումս ի յայդ վիճակէ. Թէ և իցեն եւս ոմանց բաղձանք առ յայդս։ Զի զյաւտուկ օգուտ ինչ ինքեանց ոչ տեսանեն յայդըմ, և զոր ասաէն ակն ունին գտանել, խորհին Թէ՝ այս եւս կորնչիւր Թողեալ զայլոցն, զեփրեմինն միայն ասասցուք։ Զի Թէ դու այնու մտօք խնդրես զի շահիցի, ըստ որում որդի է Հոգելոյս ծնողին մերոյ, ապա վասն է՞ր ոչ մտածես, որ Աբեղայութեան կարգաւ և փոխանորդութեան անուամբ յայդըր մնալով՝ յետահարի ի յընկերաց իւրոց, յայսքան ժամանակս լուսահոգւոյն ծառայեալ, այժմ եւս Թէ կարգիցի վերստին ի պաշտօն սպասաւորութեան, զի՞րդ ոչ է խղճալի։ Այլ Թէ կամիս՝ զի ի սեր և ի պատիւ Հոգելոյս ծնողին մերոյ՝ և ի փոխարէն վաստակոցն զոր ունէր առ նա՝ շահիցի, ընդէ՞ր ոչ զբաւրօքն իսկ խնդրես ի մէնջ վասն նորին, ձեռնադրել Եպիսկոպոս, և կարգել Առաջնորդ և նուիրակ բոլորի երկրիդ և յղել յայդր մեռոնաւ և կոնդակաւ։ Որպէս զի՝ դու եւս ժամանակ ինչ մնալով յայդր,

առնիցես զսա գիտակ ամենից որպիսութեանց աեզւոյգ, և համացուսցես յամենայնի, և ապա՝ գու եկեսցես ի լուսատու Մայրս քո սուրբ Աթոռս։ Ահա թէ կամիս զսա շահել որպէս և մեք կամիմք՝ (ըստ որում որդի է Հոգելոյս Ծնողին մերոյ.) այս է կերպն շահելոյ, քան թէ այն միաք ղոր դու գրես։ Ցորմէ օգուտ այս լինի, զի որպէս և դու գրես, որովհետեւ սեփականօղն սրբոյ Աթոռոյս ղերկիրդ զայդ՝ էր Հոգելոյս Ծնօղն մեր, և դու որդի գոլով նորին և աշակերտ՝ այդքան աշխատեցար յայդր, (զոր ի փառս իւր համարեսցէ տէր.) և զայդպիսի կարգս բարուքեան եւ զպայծառութիւն անուան սրբոյ Աթոռոյս յայդր յաճախեցեր. սա եւս որդի գոլով նոյն Հոգելոյս Ծնօղին մերոյ՝ ոչ զայլ ինչ չնայայ, եթէ ոչ այս միայն, զի հաստատեալքն լուսահոգւոյն եւ քոյ՝ ձեռացեն ի կայի իւրեանց։ Զորս թէ ոչ յաւելացուսցէ իբրեւ զքեզ, ջանալոց է ի հարկէ՝ զի չպակասեցուսցէ եւս։ Իսկ թէ այլք լինիցին, ո գիտէ թէ որպիսի կերպիւ շարժին. որպէս և գու գրես, թէ գիտես զբարս սեւագլխաց. մի կորիցէ աշխատանք սուրբ Հօրն մերոյ. եւայլն։ Ահա որ գրես թէ՝ գիտ վասն այսր զՆնար, ես այսպէս բարւոք գիտեմ եւ օգտակար. թէ գործոյն սրբոյ Աթոռոյս՝ որ մի այլ եւս յետասցի, որպէս գրես եւ դու թէ՝ գործոցն մերոց ձիաս լինի ի զուր. թէ ամենից հաստատելոյն յայդր եւ բարեկարգուեթեանն՝ որք ի կայի իւրեանց ձնան։ Թէ եկողին, որ ուրախութեամբ գայ եւ շահի։ Եւ թէ քեզ՝ որ յայսչափ ժամանակս այդ միայն վիճակաւդ ձնացեր գեգերեալ ի հեռաւոր եւ յանկիւն վայրոջէ յաղմիկ, յետահարեցեալ եւ դու ի քոց ընկերաց։ Քանզի՝ ահա որպէս յայտնի է Աստուծոյ եւ ամենայն մարդկան, ուսիս դու զպատշաճաւորութիւն այլոց եւս մեծագոյն վիճակից։ Զի թէպէտ եւ վիճակդ այդ չէ փոքր, եւ փառքն ոչ սակաւ, այլ զինչ օգուտ՝ որ հեռաւոր է, եւ յեզր տեղւոջ գտանեցեալ։ Քեզ հարկաւոր է յեա այդքան աշխատութեանցդ՝ ի յայլ մեծագոյն քաղաքս եւս երթալ. տեսանել զժողովուրդս եւ զիշխանս՝ եւ ճանաչիլ ի նոցունց, եւ յայնոսիկ տեղին եւս աշխատիլ վասն սրբոյ Աթոռոյս. եւ զանուն բարի ժառանգել, որպէս եւ յայդրս։ Զայսոսիկ ի հարկէ դու եւս մտածես, որպէս եւ գրէիր լուսահոգւոյն թէ՝ ի Պօլիս եւ ի Զմիւռնի զո՞վ կամիս առաքել։ Իսկ նա՝ թէպէտ եւ բազձայր աստ գտանել քեզ զի յղիցէ ի մի յերկուցն. այլ մինչ եւ տես զգործդ եւ զառաջադրութիւնդ ամենայն թերակատար, մանաւանդ՝ թէ կամիցէր եւս զքեզ րերել՝ (թողլով զտեզւոյդ գործն թերակատար.) զի յղիցէ ի յայն վիճակն. մինչեւ ցհասանիլն առ քեզ թղթոյն իւրոյ, եւ քոյ աստ գալն, տարի մի աւելի լինէր եւ գործոցն այնոցիկ ժամանակն անցանէր։ Վասն որոյ՝ ի հասանիլ ժամանակաց գործոցն այնոցիկ՝ զՄինաս եւ զՓիլիպպոս վարդապետն յղեցաք։ Ըստ նոյն սարասի եւ այժմ իմա. զի ահա աւարտեալ է Մինաս վարդապետն զքաղաքն Պօլսոյ. եւ գրէ մեզ թէ՝ զկնի Զատկին կամիմ գալ։ Նոյնպէս եւ Փիլիպպոս վարդապետն զկնի Զատկին գալոց է։ Արդ՝ թէ դու աստ լինէիր գտանեցեալ, ի հարկէ երթալոց էիր ի միոյն ի նոցունց։ Այլ մինչ ոչ ես աստ, եւ դեռ եւս չես գալոց՝ որպէս գրեալդ ցուցանեն, ապա՝ մինչ ահա հարկն պահանջէ, պարտիմք փութով զմարդ յղել ի յայն վիճակն, որպիսիք եւ իցեն։ Եւ փութով ասեմ յղել, զի որպէս այդ վիճակդ է՝ որ ոչ կարես թողուլ եւ գալ՝ մինչեւ ուրիշն չիցէ եկեալ յայդր, որպէս դու եւս գրես. նոյնպէս եւ Զմիւռնին է, որպէս եւ գիտես Մանաւանդ եւ Պօլիս եւս, զոր վասն այսորիկ իսկ որոշեաց ի թեմէն լուսահոգին. զի միշտ նուիրակն մեր անդ անպակաս դացի։ Արդ՝ սակս այսր պատճառի յղել պարտիմք փութով զնորան, զի հինքըն չեւ եւս ելեալք՝ նոքա մտցեն ի վիճակն, ապա թէ հինքն ելեալ եկեսցեն աստ։ Բայց դու գրես թէ՝ եթէ ես ի Պօլիս լինէի, այնք ոչ լինէին, եւ ես յայն հասեալ ուր նա, զայնս առնէի եւ անգ, զոր ինչ այժմ աստ եւ այլ բազում ինչ առնիմ հո ի թուղթս քո։ Բարւոք գրես զայդ ամենայն սիրելեացդ իմ. եւ ըստ իմոյ սրտի, այլ այժմ գու ո՞ւր ես նստեալ. եւ անգ ո՞րպիսի անձինք յառաջանան ի յայն։ Գիտես եւ զայն մանաւանդ զի ամենայն ինչ մեր եւ սրբոյ Աթոռոյս անգ առնուն զվճռուածն, եւ զհաստատութիւն եւ զկայ. մինչ խորթ որդիք բարձրանան անգ ի պատիւ,

զամենայն բանսն մեր ընդ ձախն կամին շրջել, Որովք հաշէր եւ մաշէր լուսահոգին. որպէս և մեք այժմ, որ ահա տարի եւ կէսն էանց՝ զՀարկաւորսն մեր հազիւ թէ հոգացին, եւ գեռ եւս մեզ չէասին։ Նոյնպէս եւ որքան բանք սրբոյ Աթոռոյս անգ ընդ ձախն ընթանան միշտ ի սագրելոյ խորթ որգւոցն Ո՞վ է անգ վասն մեր՝ որպէս գու յայդր. որ զամենայն ինչ ուղղել մարթասցի ըստ կարգի, և զայնպիսիս գործեսցէ անգ՝ զորպիսիս գու յայդր։ Զայսոսիկ մտածեա գոնէ, և ցեղեր ճեալդ մի շատ սիրեր, զի ժողովուրդք՝ ուր և իցեն, զայն սիրեն, և զայն ընտրեն, զոր ինքեանս ներկայ տեսանեն, և զփորձն առնուն. ի հեռաւորն զ՛ինչ հային, թէ և բազմիցս լսիցեն զնմանէ զմեծամեծս։ Արդ՝ ահա որպէս ասացի ի վերոյ, զարդիւնս սիրոյն իմոյ ճշմարտի զոր ունիմ առ քեզ ի բնէ և սիրեմ մանաւանդ յաղագս Հոգելոյս Ծնողին մերոյ եւ լսախտեաց, բացայայտեցի քեզ պարզապէս. դու եւս մտածեա՛ ուրեմն զայս ամենայն զոր գրեցի. և ընտրեա՛ զօգտակարագոյնն, և զոր ինչ ընտրիցես, գրեա ինձ փութով. և օր մի յառաջ։ Բաւ է որքան առտյս։ Եւ զայս եւս գիտեա, զի վասն Երուսաղէմայ Մովսէսին որ գրես թէ՝ խղճուկ անձն է, և կացուցանելոց ես՝ աստ ի քահանայութիւն, և այլն։ Գիտեա՛ ստոյգ, զի այն ո՛չ է խղճուկ. այլ կեղծաւորեալ ձևով կամ զարմատս իւր հաստատել յայդր, և ըմծծեաւ ինն ծնուցանել սրբոյ Աթոռոյս, երբ և գտանել կարիցէ զյաջող ժամն։ Մանաւանգ՝ օրհնեալ իշխանքդ տյդոքիկ որք զայգպիսի ջատագովութիւնս առնեն սրբոյ Աթոռոյս, կարէ նա զդոսա ի դէպ ժամանակի դիւրաւ և փութով յայդմանէ գարձուցանել ի ձեռն կանանց իւրեանց, ըստ որում քահանայ լինի նոցա և խոստովանող։ Տայր Մտածեա զբանն Զօրաբաբէլի՝ թէ քան զամենայն ինչ յաղթող են կանայք։ Ուրեմն՝ օր մի յառաջ զդա այսի հանելդ է բարւոքն և օգտակարն, բայց սիրով և մեղմաբար՝ զորս և արասցես իսկ, և անցուցցես ընդ սահմանս երկրիդ յարտաքս։ Եւ զպատասխանի թղթոյս փութով գրեսցես. կրկին ողջ լեր ի Տէր։




Պռոտուղայ առաձին առ Մինծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն, վասն ուրացող Մուվսիսին, որ այժմ զղջումն ցուցանէր. եւ հնարէր գտանել զկերպ իմն, որով վստահացեալ ելցէ ի Պօլսոյ. զոր եւ գրեալ էին ինքն եւ այլ ոմն։

Զայս եւս առաձին ծանիր սիրելիդ իմ Մինաս Աստուածաբան վարդապետ։ Զի սիրելին մեր Խանուամ օղլի մահտեսի Միրիջան Ամիրայ Ամիրային մեզ կիր էր գրեալ մեզ առաձնորէն, յաղագս Մովսէս պետին, որ ի յազգմանէ չարին անկեալ է ի փորձութիւնս. և ցուցեալ էր զղղջումն ինամանէ։ Եւ նա ինքն եւս գրեալ էր զգիր զղջման։ Եւ խնդիր այս էր ի մէջ երկուցն եւս, զի յղեսցուք զգիր իմն ընդհանրական, վասն ներողութեան և հաստատութեան։ Իսկ մեք յայսմ կողմանէ ոչինչ գրեցաք մահտեսի Միրիջան Ամիրային. կրելով (որքան և իցէ) զկասկածս, չէաձալ այնպիսի գրոյ մերոյ ի քաղաքորդ, այլ քեզ գրել պարտ վարկաք, որ վերջապէս բերելոց ես ընդ քեզ։ Թայց՝ նոյն մահտեսի Միրիջանն, և իւրեանց մահտեսի Ծովհաննէս և Եփրեմ Ամիրայքն, գրեալ էին մեզ զթուղթ շնորհաւորութեան. և մեք զպատասխանի նորին ի վերայ երիցն գրեալ՝ գրեցաք եւս յատուկ մահտեսի Միրիջան Ամիրային զփուսուլայ մի առաձին՝ և փոքրիկ և եգաք յայնմ թզթոջ և զմռեցաք։ Ցորում յայտնեցաք միայն զՀասանիլն առ մեզ երկուց թզթոցն եւս. և գրեցաք թէ ահա յայդմ կողմանէ զբանս գրեցաք առ նուիրակն մեր՝ ասել քեզ. տե՛ս զնա առաձնին, և հարց, և նա ասելոց է քեզ զորինչ գրեալ եմք իւրեան. և յայնժամ՝ զոր ինչ և կամիցիք, դու և ինքն մեզ գրեսջիք խորհրդաբար։ Ուրեմն՝ դու զնոյն Խանուամ օղլոյ գիրն մի յղեր առ ինքեանս. այլ նախապէս զմահտեսի Միրիջան Ամիրայն տես ի ծածուկ. կամ գու երթ առ նա, և կամ զնա առ քեզ կոչեա՛ առաձնին. և տուր նմա զպահարանն իւրեանց թզթոյն. զի ինքն բացցէ առաջի քոյ՝ և զայն փոքրիկ փուսուլայն ի միջոյն հանցէ, որ ինքն միայն իմացի. ապա՝

զհաստարակ գիրն տարեալ՝ ընդ այլ երկուցըն ընթերցցին, այսինքն՝ ընդ մահաբոյ Յովհաննէս և Եփրեմ Ամրապիցն։ Եւ այս վասն այն այսպէս. զի ի ներքոյ կնքոյն մերոյ աեսցէ զայն փուսուլայն. և քանն որ ի նմա, հաւաստմասցի։ ըստ որում ո՛չ եմք եգեալ ի վերայ փուսուլայրն զկնիք յազագս այլ և այլ կարծեաց, որպէս և ո՛չ ի վերայ այսմ։ Իսկ զբանն՝ զոր սիրելոյն մերոյ մահաբոյ Միրիջան Ամրային ասել պարաիս, ահա այս ինչ է։ Զի որ զընդհանրական գիր խնգրէ՝ որպէս ասացաք ի վերոյ, ահա ինքն ևս գիաէ որ՝ կասկածելի է մեծապէս՝ յղելն մեր զայնպիսի գիր յայդ քաղաք, և չէ կարելի. զայնպիսի գիր ընգէր խնգրէ. միթէ կարծի՞ս ունի թէ՝ անընդունակ լիցի զղջումն. գիաէ ահա լաւապէս զսուրբ գիրս. ո՛վ որ զըղջացաւ, և ոչ եգիա զներումն։ Ինքն ևս՝ թէ որպէս զհինն էարկ գրովն զղջման, կաատրեսցէ և զշինուածն արդեամբք, յօդի վերսահն յանգամս Քրիստոսի, և մուծանի ընդ ոչխարաց նորին ի փարախն հոգևորս։ Ահա՝ թէ վասն այսր խնդրէ զգիր, չունի պէաս։ Գրեալ է ահա, յորժամ հոչակեսցես, յայնժամ կեցցես. և դարձեալ թէ՝ եթէ դարձցիս այսրէն պատսպարեցից զքեզ և այլն։ Եւ թէ՝ ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա. և զկնի իմ գան. և այլն, և զայլ բազում այսպիսիս գիաէ և ինքն լաւապէս։ Իսկ՝ թէ վասն վկայութեան խնգրէ զայնպիսի գիր, ո՞ւր պարտի ցուցանել զվկայութիւնն զայն. թէ յայնպիսի վայրս՝ ուր ձեռն է գոցա, զիա՞րդ կարէ ցուցանել. և կամ մեք ո՞րպէս վըստահանամբ տալ։ Իսկ թէ յայլ կողմունսն՝ ուր մեք անձեռնհաս, ահա ինքն ևս գիտէ, որ այն եւս չէ մեզ կարելի, զի այնպէս գայ՝ իբրու թէ մեք հրամայեմք երթալ անգ՝ ուստի արգելուլն է մեզ հարկ։ Իսկ թէ (սրպէս գրէ թէ՝ վասն հաստատութեան) կամ՝ զի հրամայիցեմք այնու հաստատիլ վերսահն ի գործ քահանայութեան և եպիսկոպոսութեան, ահա գիտէ և ինքն լաւապէս, զի այդ դժուարին է։ Մանաւանդ և բազմաց եւս տկարաց յորդի այնու ճանապարհ կորստեան, որպէս լայն և ընդարձակ գուռն։ Այլ թէ ստուգիւ երթալ կամի զհետ Քրիստոսի, փափագելով խոստացելոցն ի նմանէ բարեաց՝ յարքայութեան երկնից, ապա մի զայնս դիտեսցէ թէ՝ միւսանգամ փառաւորեսցի նոքիմբք յերկրի, այլ երկնաւոր փառացն ցանկացեալ՝ որ յաւիտենական է և անանցանելի, զայն իսկ միայն դիտեսցէ, զի կեցուսցէ զհոգիս։ Ո՛չ ահա բազումք ի սրբոց փախչելով յերկրաւոր փառաց, համաւ հրաժարեցան և առանձնացան յանապատս. որպէս սուրբ Լուսաւորիչն մեր և սուրբն Յոհան Օձնեցին. և այլք։ Գիտէ և զայս մանաւանգ. զի որպէս ի մէջ ծնիցելոցն ի ձեռն վերսահն ծննդեան աւազանին սրբոյ՝ չիք խտիր. ոչ հրէի՝ և ոչ հեթանոսի. ոչ ծառայի և ոչ ազատի. ոչ արուի և ոչ իգի այլ ամենեքեան մի են ի Քրիստոս Յիսուս. նոյնպէս և ի մէջ ճշմարիտ հաւատացելոցն ի Քրիստոս և ի դարձողացն առ նա բոլորով սրտիւ, առ ի ժառանգութիւն արքայութեան երկնից՝ չիք խտիր. ոչ կարգաւորի և ոչ աշխարհականի. ոչ արուի և ոչ իգի. ոչ առաքինութեամբ պանծացելոցն և ոչ՝ մեղուցեալոց թէպէտ, այլ ճշմարիտ զըղջմամբ և ապաշխարութեամբ առ Քրիստոս դարձելոց. զի վասն ամենեցուն նոցին բաց է դուռն արքայութեան երկնից։ Եւ ամենեքին իսկ ժառանգելոց են զնա։ Իսկ ապա մինչ զայսոսիկ լսիցէ. և խնդրիցէ թէ՝ ո՞ր վայր և որո՛վ կերպիւ. զայդ ոչ այժմ գրեմ. այլ թէ ցուցցէ ստուգապէս թէ՝ զոր ինչ և կամիցիմք և ասիցեմք ի յօգուտ հոգւոյն, հետևի՝ և առնէ, յայնժամ ցուցցուք և մեք, զոր պարտն է։ Ճիրաւի գրէ թէ՝ վիրաւորք զբժիշկ խնդրեն. սակայն՝ մինչդեռ սլաքն ի մէջ վիրին իցէ, ոչինչ կարէ առնել բժիշկն. թէև բազում անգամ գիցէ զդեղն ի վերայ վիրին։ Այլ խնդրեմք ի ճշմարիտ և յերկնաւոր բժշկապետէն Քրիստոսէ, զի որպէս ետ զգալ զանհնարինն ցաւ և զկսկիծ վիրին, տացէ և զայնպիսի փոյթ, զի ինքեամբ իսկ ի բաց հանցէ զըզսլաքն, զի յայնժամ դիւրապէս կարիցէ ընդունիլ զսպեզանին առողջարար. որով առողջացեալ գտցէ վերսահն զկեանս։ Արդ՝ դու զայս ամենայն խօսեաց ընդ սիրելոյն մերոյ Մահաբոյ Միրիջան Ամրային, և նա ընդ նմա, զի իմասցի զասացեալքս։ Եւ ե-

Թէ ինչ դարձեալ ի վերայ նոյն զղջմանն և ցուցցէ այլ ևս զճշմարտադոյն զղջումն ըստ ասացելոյ կերպին. և կամեցելոց մերոց ամենիմր հեաւիլ խոստացի, ծանուսջիք մեզ սրկին ողջ լեր ի աէր։ (Ի ՌՄԱՆ ի մարաի ելն)։



(Դարձեալ վասն վերոյգրեալ բանիդ փուսուկայ առ Մինաս վարդապետն)։

Զայս եւս դարձեալ առանձին դիտեա, սիրելիդ իմ Մինաս Ասաուածծարան վարդապետ։ Զոր ինչ դրեցաք ի միւս փուսուկային, ահա խօսելոց ես ընդ մահտեսի Միրիջանին. և փուսուկայն ևս եթէ խնդրեսցէ ցուցանել, ցոյց առը մահտեսի Միրիջանին, և առ դարձեալ. և ընդ քեզ պահեա։ Բայց թէ չիցէ կացեալ ի վերայ նոյն զղջմանն. կամ թէ՝ ի լսելն գրանն միւս փուսուկային՝ այլ ևս չախորժիցի՛ ասել ինչ՝ կամ խնդրել, դու ևս զքեզ հեռի պահեա. և մեզ դրեա գորպէնն։ Իսկ թէ տեսցես ի նմա զկատարեալ զղջումն. մանաւանդ և զայն իսկ, զի բոլորովիմբ թողեալ զկամս իւր՝ հետևիլ կամիցի մերոց կամաց. և զդեզ և զՏնար խնդրեսցէ և ո՞ր դիմել հարցցէ. ապա՝ դու զայս զոր դրելոց եմք, իբրու քեզէն առաջադրեա և ասա թէ՝ եթէ կամիցի ըստ այսմ կերպի լինիլ, ես դրեցից հոգևոր աէրն. և խնդրեցից հաճիլ՝ և այսպէս լինիլ հրամայեալ։ Եւ գրել զոր խոստացաք, է այսինչ։ Զի որպէս և ի միւսումն դրեալ եմք, անհնար է դմա այլ ևս պաշտել զկարդ քահանայութեան կամ եպիսկոպոսութեանն։ Զի թէ որ զկարդն թողեալ ամուսնացի, այլ ևս չկարէ քահանայանալ, քանի՞ եւս այդպիսին. դիակ և ինքն լաւապէս։ Ապա զայս միայն կարեմք հրամայել՝ ներելով դմա. զի զվեզարն և զփիլոնն ունելով ի վերայ իւր, (ըստ որում Անապատական կրօնաւորաց է ձև, և ապաշխարոզաց իսկ.) կանդնեսցի ի դաս յեկեղեցւոջ. և ընդ քահանայն ազօթեսցէ։ Բայց՝ նախ զապաշխարանս յանձնառեալ՝ զբոլոր կամիցիմբ, և յո՞րքան ժամանակս և որով կերպիւ և ասիցեմբ, ապաշխարեսցէ. և ապա ի ւրանալ ապաշխարութեան, ըստ ասացելոյն ի վերոյ՝ առեալ զվեզար և զփիլոն, կանդնեսցի ի դաս քահանայից. և ընդ նոսա աղօթեսցէ։ Այլ ի ձեռն պլոց հաղորդեսցի. և ի կատարուսն եօթնից խորհրդոց սրբոյ եկեղեցւոյ մի՝ մերձեսցի։ Իսկ՝ թէ յո՞ր դիմել հարցցէ՛. դեպ ի հիւսիս առ մերան դիմել՝ վտանկ է. քանզի՝ եզր է. մանաւանդ նախատինք է իւրեան և մեզ առաջի օտարազնեայ հաւատացելոցն. եւս առաւել, ինչ թէ ի պաշտօն կարգին հպատցի անդ իւրովի. և լեցի դպրթակղութիւն մերոցն. մեք ի ճշմարիտ կարգաւորաց մերոց զդուշացեալ՝ արգելումբ յանդ մտանելոյ առանց մեզ. զի չհանիցեն ի վեր զդպրթակղութիւն ինչ. դա՝ թէ զայնպիսի ինչ առնիցէ անդ՝ ո՛րքան է լինելոցն Իսկ այլ կողմ մեզ ձեռնհաս՝ ահա ոչ դայ թէ յարևմուտս դիտեսցէ դիմել, ահա ելանէ ի մէնջ. և այլ ցմեզ հարցանելն ի՞նչ օգուտ Իսկ աստ, դիտես ահա՝ զի վտանկ է։ Ապա բաց ի Տփխիսոյ՝ զայլ պաշտաճաւոր տեղիս ոչ դըտանեմբ դմա. որ և մեզ մերձակայ է։ Ուր դիմել կարէ ընդ Տայս ծպտեալ կերպիւ։ Եւ անդէն ընդ առաջնորդին որ ի մէնջ՝ նստիլ եղբայրաբար և կենցաղավարիլ, մինչ անցցեն հարուստ ինչ ժամոցք. և բանն անհետացի։ Ապա աստ ևս կարէ դալ յայնժամ, թէ կամիցի. և կալ նոյն կերպիւն՝ որպէս։ դրեցաք։ Սակայն ի ժամանելն անդ, և ի կարգիլն ի կերպն ասացեալ, մեք ևս թէ գրով և թէ բանիւ սրատաշահ եմք առնելոց զինքն, և գալոց է ուրախութեամբ։ Այսպէս խօսեսցես դու իրրև քեզէն, յայն ժամ մինչ ինքն յայլերս խոնարհեսցի՝ և ղՏնար խնդրեսցէ։ Քանզի՝ սլաքն զոր ասացաք ի միւսումն. է կամքն այն՝ որ նախապէս այդու կերպիւ զոր ունի, արար զդաողորմելի, երկեցուցանելով յառօրեայ վըտարանդութենէ. (որ փութով էր անցանելոց. և յայնժամ՝ թէ աստ ևս դիմէր, յոյժ բարւոք էր յառաջանալոց քան զբազումս)։ Այժմ ևս ահա այդու կերպիւ առնէ ողորմելի, որ բաղձալ սայ մեծագունից պատուոց և փառաց, թէպէտ հոգևորաց։ Այլ չէ այն իւրեան օգուտ, եթէ ոչ վնաս, որպէս և ինքն դիտէ։ Ապա՝ զգիւտն հոգւոյն միայն որոնելով զոա կերպին ասացելոյ՝ յոյժ

օգուտ առնէ ինքեան և լինի արգոյ առաջի Աստուծոյ և սրբոց իւրոց, Ահա՝ յետ ա-ղերսին խնդրելոյն զՆար՝ զայսոսիկ խոս-տեցեալ ի ձեռն մահտեսի Միրիջանին, և որպէս և առնելոց իցէ, գրեսջիք մեզ, զու և ինքեանք: Ներ և ես կրկին ողջ ի տէր: (ի ՌՄԼԱ. ի մարտի ԵՂՆ):

Թուղթ առ մեծին Պօլսոյ Նուիրակ Մինաս վարդապետն, ի պատասխանի թղթոցն ամենից՝ զորս զկնի ելանելոյն անտի Պետրոս պետին մահսարատարի գրեալ էր մինչեւ ցարդ: Բայնժամ՝ մինչ զպատասխանիս ամենից ընդունողական եւ շնորհաւորական թղթոցն Պօլսոյ գրեալ յղեցաք ի մարտի ելն: Բաղազս բազմաց այլ եւ այլ դիտմանց՝ որք տեսանին ի ներքոյ:

Փուսուլայ առ մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն, վասն քանից ինչ ոմանց՝ որք ցուցանին ի ներքոյ:

Թուղթ առ Հաշտարխանու նուիրակ եւ Առաջնորդ Բովսէփ վարդապետն. ի պատասխանի ի հոկտ. Ի ի Մոսկովու, եւ ի յունուարի ԻԸ ի Պետրպօլքու գրեալ թղթոցն. ի զանազան միտս: Զոր Թիֆլիզեցի տէր Աբրահամն տարաւ աստի:

Թուղթ առ Հաշտարխանու նուիրակ եւ առաջնորդ Բովսէփ վարդապետն դարձեալ վասն Գանձասարու գանձանակական արդեանցն. զի հասուցանել տացէ անդ առ Բովհաննէս կաթողիկոսն: Զոր ի վերայգրեալ թղթոջդ մտացեալ ի գրել, այժմ գրեցաք:

Թուղթ առ մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն. ի պատասխանի ի մարտի ԻԴ եւ յապրիլի Է գրեցեալ թղթոց նորին՝ լիագոյն. որոց մասամբ ինչ պատասխանի եւս ի մայիսի ԺԲ գրուցաւ. (որոյ օրինակն ահա ի վերդ է ի համարն 357. 358. 359:) Այլ եւ՝ ի պատասխանի յետ այնոցիկ գրեալ միւսոյ թղթոյ նորին եւս, զոր ի մայիսի Ե էր գրեալ. վասն այլեւայլ դիտմանց՝ որք տեսանին ի ներքոյ:

Փուսուլայ առ Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն:

Թուղթ առ մեծին Պօլսոյ պատրիարքն եւ իշխանսն. վասն Մշու սուրբ Կարապետի վանիցն. որոյ միաբանքն եւ Մախսուտ փաշայն խնդրէին յղել անդ զԱրապկերցի Յարութիւն վարդապետն Առաջնորդ եւ զԱստուածատուր վարդապետն հանել յԱռաջնորդութենէն: Իսկ՝ զի զԱստուածատուր վարդապետն սոքա էին կարգեալ Առաջնորդ. վասնորոյ գրեցաց սոցա զերկիցս գրելն նոցա զայս առ ինքն. եւ զթուղթսն նոցին եւս յղեաց առ սոսա՝ զի իմասցին զորպէսն վանիցն, եւ արասցեն զհոգս իմն. զոր եւ ինքեան ծանուսցեն:

Առ նուիրակ Մինաս վարդապետն եւս գոյ վասն այսր քանի թուղթ, որոյ օրինակն է յառաջ կոյս ի համարն գ. 461. 462. 463.

Թուղթ առ Զմիւռնոյ նուիրակ եւ Առաջնորդ Փիլիպպոս վարդապետն, զի, զիրս ոմանս հարկաւորս առեալ ընդ իւր գեր-

ցէ. որովհետեւ աւարտեալ էր զգործն եւ զալոց էր։

Թուղթ առ մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն. զի զվերոյգրեալ թուղթդ, որ առ Փիլիպպոս վարդապետն, հասուցէ առ նա, մինչչեւ է ելեալ նա ի վիճակէն։


Փուսուլայ առ Մինաս վարդապետն։

Փուսուլայ առ Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն. որոյ հասարակ թուղթն է յառաջ կոյս. Ի ՌՄԼԱ ի սեպտ. ԻԴ։

Թուղթ առ Հաշտարխանու եւ Ռուսաց երկրի նուիրակ եւ առաջնորդ Ցովսէփ վարդապետն, ի պատասխանի թղթոցն իւրոց ի մայիսէն մինչեւ ցարդ գրեցեալոց, որ է սկիզբն նոր թուականիս մերոյ ՌՄԼԲ ամի. վասն այլեւայլ դիտմանց, մանաւանդ վասն իւր, թէ որովհետեւ ամենայն արարեալքդ ղեռ չեն առեալ գլուխն. եւ ի յելանելդ այտի՝ մնալոց են անկատար. յորոց եւ վնաս մեծ յառաջանալոց է որպէս զրես, վասընորոյ մնալդ է հարկաւոր յայդր ժամանակ ինչ եւս. եւ զնուիրակութեան միոյ գործ եւս կատարեալ. որոյ սակս եւ յղելոց եմք զմեռոն եւ զկոնդակ։ Իսկ ի Պօլիս՝ յղեցաք նուիրակ զԱհարակ վարդապետն։

ԲԱՂՈՒԱԾՔ. Իսկ վասն Եփրեմ եւ Դանիէլ վարդապետացն որ գրեալ էիր. զի զմին ի նոցունց, ըստ առաջնոյ դիտմանգ յղեցուք, եւ այլեւ վասն այգր քեզ յառաջագոյն գրեալ եմք, որ ոչ յօժարեցան յայնժամ մինչ ասացեալ եզև ինքեանց այգ բան։ Իսկ այժմոյս՝ երկուքն եւս կան ի գործս նուիրակութեան. նփրեմն ի Թաւրէզ, եւ Դանիէլն ի Կարին։ Եւ զի այժմ զայս Թուղթս շապով գրեալ յղեցաք, վասն որոյ զինդրեալսըդ այժմ յղել չկարացաք, այսինքն գՑօնացոյցն, զԹուղթն օրհնութեան առ. Թիֆլիղեցի Գուրգինբէկի որդի պարոն Ցովսէփն, եւ այլն եթէ են։ Զորս յետոյ եմք յղելոց, կամ թէ՝ ընդ սրբալոյս Մեռոն բերողին, որպէս գրեցաք։ Այլեւ՝ զկանոնագ զորս յազագս նախիջեւանու հոգեւոր դատարանին յօրինեալ՝ այժմ զնոյնն օրինակեալ եւ յղեալ էիր առ. մեզ՝ տեսաք. բայց յազագս յոյժ զբազեցեալ գոլոյն մերոյ այժմոյս՝ գեռ եւս ոչ ընթերցաք, յետոյ մինչ տեսցուք, եթէ իցէ յայնմ կողմանէ բան, քեզ գրեցիկ յետ այսորիկ։ Եւ առ. գրեալդ թէ՝ Պետրոսքու եկեղեցին ըստ իւր բաւականին չունի զմուտս, եւայլն. նոյնպէս եւ առ խնդիրդ՝ որ յազագս յատուկ սիրելոյն մերոյ ազնիւ Ցովհաննէս ազային, յետոյ եմ գրելոց քեզ, զոր ինչ ի դէպն է քանզի այժմ յոյժ էաք զբազեալ՝ եւ ամենեւին անպարապ։ Պարապմանն ահա մերձ է ելանել ի տպագրութենէն. քանզի ծ տետր յառաջագոյն էր տպեցեալ յատուրս լուսահոգւոյն. Թ տետր եւս այժմ տպեցաւ. գոյ եւս քանի մի տետրասփ տպելի, իբրու Գ, կամ Գ, այն եւս մինչեւ ցբարեկենգանան ելանելոց է ի տպագրութենէն, եւ աւարտելոց է բոլոր գիրքն։ Որոյ գիրքն ազնացուցինն է, այլ քան զնա փոքր ինչ հասս է լինելոց՝ ըստ որում նոր թղթովն տպեցաւ։ Որոյ ի լրանալն, եւ ի կազմիլն, յղելոց եմք վասն քոյ որքան եւ յայլոցիցի։ Ցետ աւարտման սորին, մինչ մացուք յազուհացն, Աստուծով սկսանելոց եմք ի տպել զԱաենի ժամագիրքն, քանզի եւ նորին ամենայն պարագայքն են ի պատրաստի։ Սիրելւոյն մերոյ Պարոն Խաչիկին զմենջ ողջոյն եւ օրհնութիւն ընծայելով՝ այսպէս ծանուսցես. որոյ եւ զորպիսութեանցն գրեսցես։ Եւ մինչ այն եւս Աստուծով ելցէ ի տպագրութենէն, տեսանելոց ես։ Պօլսոյ Տեսպանին ընդ Խսահակ վարդապետին կամեցաք գիր գրել, ոչ ժամանեաց. զկնի աւուրց ինչ գրելոց եմք՝ մինչեւ ի գէպն է. եւ յղելոց։ Եւ յայնժամ եւս ծանուցանելոց եմք քեզ՝ զոր ինչ եւ գրեալ իցեմք։ Այլ ի նոր տպարանդ զոր հաստատել կամիս

ի Նորն նախիյեւան, եթէ զպատշաճական ինչ և պատեհաւոր և որ կարի քաջ ի գէպն իցէ տպեցման, ապէր տայցես ոչինչ է ան. դէպ։ Սակայն վասն Ընդհանրականին որ Հարցեալ էիր ինչ, գիտասցես. զի Ընդհան. րականն ըստ որում չունի ինչ ուժաւոր հա կառակասէր մտաց, ապեցուցանելդ ոչինչ բերէ ինձաս։ Իսկ զայլ և այլ թուղթսն որ գկնի, թէպէտ ըստ մերոյ գիտելոյ և դիմանց անվնասք են, այլ զի զէն առնուն թշնամիք, և ընդ թիւրս շազփազփարանեն. լով շաղակրատեն. և գհոգելից բանսն սըրբոյն անարգամեծարս թուեցուցանեն յաչս մերային ուղղասիրաց, վասնորոյ չտպելն է բարւոք, զի բանն ի յարգի ձեասցէ. որեւ մի ապեսցուսցես։ Քանզի և այն բառ՝ զոր բառնալ կամ թողուլ տարակուսիս, երկուքն ես են առիթք չարութեան թշնամեացն։ Զի որպէս թողուլն տեղի է նոցա խօսից, բառնալն՝ իրրու կրկին և երեքկին, զի առաւել տայ հաստատութիւն չարացն կարծեաց, և տարակուսութիւն՝ մանաւանդ և գայթակղութիւն իսկ մտաց մերային ուղղափառաց, վասնորոյ՝ չտպէն է բարւոք այդպիսեաց բանից, զի յարգի և ի պատուի ձեասցեն բանք նախնեացն մերոց սրբոց։ Այլեւ՝ մինչ զայսքան գրեցաք, եկն էհաս ի սուրբ Աթոռս սիրելին մեր Տօքտօր Պարոն Ցակոբն. և մատոյց մեզ զդիր Պայծառափայլ իշխանին մեծի, և զնշանն սիրաձիր զականակուռ ազնիւ խաչ. նաեւ զթուղթս սիրելեացն մերոց՝ Ազնիւ Ցովհաննէս Ազային, և Մանիչարենց Մարգարին և Փիլիպպոսին և զքոյդ եւս ի սեպտ. ԻԴ գրեալ գիրդ հասոյց մեզ էհաս նաեւ՝ ի նոյ. ԻԶ ի Ղզլարու դրեալդ ընդ Մանուչարին. զոր քանի աւուրբ յառաջ աստ սըզեալ Տօքտռն, ինքն՝ եւս յետոյ եկն եւ զոր ինչ ի բերան ասելին էր՝ զամենայն ծանոյց եւ իմացաք։ Մեք եւս գրեցաք շնորհակալութեամբ զպատասխանի մեծի իշխանին. և զմերոցն։ Եւ զոր ինչ վայել էր՝ ընդ իւրն խօսեցեալ՝ և ըստ արժանոյն շահեալ՝ ուզեւորեցաք աստի, տուեալ նմա և զայս թուղթ։ Որում թէ գէպ լիցի զքեզ տեսանել, գիտելոց ես զի՞նչ խօսիլն մեր ըստ հարկի և ըստ ձեռնտուութեան ներկայիս։ Եւ գրեցաք եւս մեծի իշխանին, զի վասն հարկաւորութեանց եւս օգաից մերոց զոր ինչ գու և պարոն Ցովհաննէս Ազայն և Պարոն Տօքտօրն ծանուցանիցէք, լուիցէ քաղցրութեամբ և հոգ տարցի։ Ուրեմն՝ շրջահայեաց նոքօք լիջիր՝ զըստ պատշաճինն ընտրել, եւ զգիարգն՝ յօրէ յօր մեզ ազգել, հանդերձ այլովք հարկաւորօք։ Այժմ զայսքանս հաղիւ գրեալ ի պատասխանի աստէն յիշեալ թղթոյդ ամենից, յետոյ ի գիպոզ ժամու՝ եթէ այլ եւս իցէ ինչ հարկաւոր գրել քեզ առ ձեացեալ բանսգ որ ի թուղթսգ վերոյ յիշեալ, դրելոց եմք։ Քանզի այժմ շատ էաք զբաղեցեալ, մանաւանդ և Տօքտռն (ըստ որում եւ հարկն պահանջէր՝) փութով եկ աստի. որպէս և պատմելոց է իսկ քեզ՝ եթէ պատահիցի։ Այլեւ որ վասն Իսրայէլին իրրու հարցեալ էիր, մէ զի՞նչ մակագրէք, ասէին, մեք ի գրելն մեր առ նա զթուղթ՝ կաթողիկոս գրեմք, ըստ որում երկիցս եւ երիցս եկն առ հոգելոյս Հայրապետն մեր. որ եւ արձակեաց զնա յառաջին գալն, և սիրով ընկալաւ, եւ ի գրելն առ նա զթուղթ՝ կաթողիկոս գրեր. թարց վիճակի յիշման։ Մեք եւս ըստ նոյն ոճոյ գրեմք գեռ եւս՝ որովհետեւ ունի զօծումն, և լուսահոգին եւս այնպէս ընկալաւ։ Իսկ գու որպէս կամ՝ այնպէս դրեա։ Եւ լեր ողջ ի Տէր։ Ի ՌՈՒԻ, ի Ցունվարի ԻԷ։




Թուղթ առ Իշխողսդն Աղքայութենանն Ռուսաց Գրիգոր Ալէքսանդրիչ Պոտէմկինն, ի պատասխանի Թղթոյն, եւ վասն Տօքտօռ Եակուբին որ այնու եկն անտի, եւ խաչին՝ զոր եբեր։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ Հայրական օրհնութեան . . . Լայլն։

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի քումգ բարեպաշտութեան։ Զի Թուղթգ սիրածիր և բախարար՝ գրեցեալ ի 1782 ամի փրկչին, և յօգոստոսի 20, ժամանեաց առ մեզս նուաստութիւն ի ձեռն սիրելւոյն մերոյ և ձերգ հարազատի՝ Տօքտօռ Եակուբինն։ Զոր ընթերցեալ մեր, և զգերազանցութիւն ուրոյ և խնամոց ձերոց և զբարիկամեցողութիւնսգ

որ առ աղգս մեր խզճալի, առ սուրբ Աթոռս մեր և առ մեզ գիտացեալ որոց եւ զչիալիրն ի գրոց սիրելի որգւոյն մերոյ Յովսեփ Արք Եպիսկոպոսին և Հարազատիցն Ցերուսաղեմ Երիցագարեան Յովհաննիսին և Աստուածատրեան Մարգարին՝ ծանուցեալ, մանաւանդ՝ և ի նոյն Հարազատէն ձերմէ Տօքտօր Եակուբէն լուեալ, ի ձեռն որոց և զգեղեցիկ պարգեւսն գերապայծառութեան ձերոյ զկանակուռ խաչն ազնիւ ընկալեալ՝ բերկրեցաք ի սիրտ եւ ի հոգի. եւ զփառս հանգերձ գոհութեամբ մատուցաք բարեխնամոցին Աստուծոյ, որ քաղցրացուցանէ օրըստօրէ սիրտ ինքնակալուհի կայսերուհւոյն մեծի եւ ձերգ գերապայծառութեան՝ առ ազգս տառապեալ, առ Աթոռս սուրբ՝ և առ մեզ: Եւ առաջի Աստուածէջ Տեզ ողջս սրբոյ զպազատանս առ նա մատուցեալ, ունելով բարեխօս գՀայրն մեր բազմերախտ գլուսաւորիչն Գրիգոր՝ զանուանակիցն քո և օգնականն իսկ յամենայն կեանս քո, հայցեցաք և հայցեմք, հատուցանել զփոխարէնն այդքան սիրոյ և խնամոց ինքնակալուհւոյ Մօրն ողորմութեան Մեծի կայսերուհւոյն և կայսերազարմ որգւոյն իւրոյ և Թոռանցն և ամենայն ժառանգորդացն, եւս և ձերում գերապայծառութեան, յերկակի կեանս ձեր: Զորս օրհնելով օրհնեսցէ, կարողացուսցէ առաւել եւս՝ և ղօրացուսցէ տալով ձեզ ըստ սրտից ձերոց, և կատարելով զամենայն խորհուրդս ձեր ի բարին: Արդ՝ չունելով ինչ առ ժամս ընդ երկարս առ բարեպաշտութիւն ձեր գրել, զայս գար ձեալ հայցեմ՝ զի զդոյն խնամոցգ ձերոց առաւելութիւն՝ անդադար և անեզրանալի ունիջիք առ տառապեալ ազգս, և առ Աթոռս լուսակերտ՝ և առ մեզ, և առ որդին մեր Յովսէփ Արք Եպիսկոպոսն: Եւ գոր ինչ յաղագս մերոց հարկաւորութեան և օգտից ծանուսցեն մեծութեան ձերում՝ Յովսէփ Արք Եպիսկոպոս որդին մեր. և Հարազատքն ձեր՝ Տօքտօր Եակուբն և Ազազարեան Յովհաննէսն, խնդրեմ քաղցրութեամբ լսել և հոգ տանիլ: Եւ զայլ երկարապէսն՝ ի սոյն գր բարեր սիրելւոյդ մերմէ Տօքտօր Եակուբեգ իմաւ ունդ լեր ի Տեր, ղօրացեալ խաչիւն սրբով: Ամէն: Գրեցաւ ի լուսակերտ Աթոռս ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին, յամի փրկութեան մերոյ 1783, ի Յունվարի 17:



Թուղթ առ սնծին Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն, յանձնարարութիւն վասն նոր նուիրակ Սահակ վարդապետին, զոր այժմ յղեաց անդ, եւ զհին նուիրակ Մինաս վարդապետն ինդրեաց զալ աստ:

Թուղթ առ Պօլսոյ նորոգ Պատրիարք Համադանցի եւ սուրբ Երուսաղէմի միաբան Յովհաննէս վարդապետն ի պատասխանի սիրոյ թղթոյն՝ զոր ի Պրուսայու գրեալ էր, տակաւին Առաջնորդ գոլով անդ, իբրու պատասխանի գրոյ Սրբազանին՝ զոր յառաջ գրեաց առ նա: (Որոյ օրինակն է ի վերն՝ ի հատարն 71): Շնորհակալութիւն վասն առ սուրբ Աթոռս եւ առ ինքն սիրոյն եւ հարազատութեանցն, եւ շնորհատրութիւն նորոգ Պատրիարքութեան. եւ վասն անյաջողութեանց եւ յամենայնի պակասատրութեանց սրբոյ Աթոռոյս՝ որ էր վասն աւերութեանց երկրիս. մանաւանդ՝ սակս այսչափ ժամանակս յետանալոյ ֆեյլյանացն: Որոց սակս եւ խնդիր՝ զի թէ դեռ եւս չիցէ հոգացեալ՝ հոգասցէ եւ ընդ Պետրոս վարդապետին յղեսցէ աստ: Եւ յանձնարարութիւն վասն Մինաս եւ Պետրոս եւ Գալուստ վարդապետացն: Եւ զի զԳաղատիոյ նուիրակն կամ աստ յղեսցեն, կամ՝ զհաշիւն առցեն. որպէս եւ մահտեսի Յարութիւն Ամիրային եւս զրեցաւ ի վերն ի 297 հատարն:

Թուղթ ի Գեւանդեայ առ Մէլիք Գասպարն, սէր եւ օրհնութիւն եւ շնորհակալութիւն վասն ժոմին զոր յղեալ էին անտի

յարղեանց զանճանակին Աթոռոյս. եւ քաղաքին եւս գրեցաւ հասարակ թուղթ։

Թուղթ առ թոխաթցի Մահտեսի Աղամալի որդի Նազարն նախ մխիթարութիւն վասն մահուան եղբօրն իւրոյ Ամլիկին, եւ ապա յորդորումն ի տալ ըզսլարտս Մահտեսի Աղամջանին։

Թուղթ ի Զմիւռնի, առ Աբրոյեան Աստուածատուր աղայն, սէր եւ օրհնութիւն, եւ յորդորումն ի սէր եւ ի հաւատարմութիւն սրբոյ Աթոռոյս եւ յանձնարարութիւն վասն Փիլիպպոս վարդապետին։

Թուղթ առ Զմիւռնոյ նուիրակ եւ առաջնորդ Փիլիպպոս վարդապետն, ի պատասխանի ի յունիսի Թ եւ ի ԻԴ եւ ի յուլիսի Ը գրեալ երից թղթոցն, վասն վերոյգրեալ թղթոցդ. եւ փոլիցայից, եւ այլեւս բանից ի նմանէ գրեցելոց, որք տեսանին ի ներքոյ։

Փուսուլայ առ Փիլիպպոս վարդապետն։

Թուղթ վէքիլութեան. քայց այնպիսեաց, որոց զհաշիւն անցեալ վէքիլութեան տեսեալ, կամիցին վերստին եւս կացուցանել վէքիլ սրբոյ Աթոռոյս։ Որ գրեցաւ այժմ ի Կարին՝ վասն Հայրապետին։

Թուղթ առ Հաշտարխանու, նոր Նախիջեւանու, Ղզլարու եւ Մօզտօքու ժողովուրդն վասն սուրբ Երուսաղէմի նուիրակ Կարապետ վարդապետին, որ առանց վկայական թղթոյ Հայրապետաց սրբոյ Աթոռոյս՝ գնացեալ էր անդ։ Պատուէր, թէ ի պատիւ սրբոյ Երուսաղէմի յայս մի անգամս խնայեցաք. այսուհետեւ եթէ ոչ ունիցին ի մէնջ զվկայական, մի ընդունիցէք։ Եւ թէ զոր ինչ Յովսէփ վարդապետն ի շահ սրբոյ Երուսաղէմի վասն արդեանց նորին առաջադրեալ է՝ այնպէս արասջիք։

Յորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, և նամակ պահպանութեան. Ընդ-հք Առաքելական ի վերայ սիրելի և հոգևոր որգւոցդ Մերոց՝ հարազատ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս և Տէրունի ժողովրդոցդ սորին, զետեղեալ ի Աստուածախնամ քաղաքդ ի Հաշտարխան, ի Նոր նախիջևան, ի Ղզլար, և ի Մօզտօք։ Ցորս կառուցեալ Քրիստոսահիմն սրբոց եկեղեցեաց՝ և եկեղեցականաց դասուց, սրբանուէր քահանայից, բարեպաշտօն իշխանաց, իմաստնախոհ վաճառականաց հարազատ և հաւատարիմ գանձապետաց և երիցփոխաց, վայելչագործ արհեստաւորաց և այլ առ հասարակ օրհնեալ ժողովրդականացդ խմրից մեծաց և փոքրոց, ենդալ ի Տէր յարազուարճ ցնծութեամբ։ Ամէն։

(Ընդ-հք)

Եւ ընդ սիրոյ՝ եւ Աստուածային ամենատես օրհնութեանս, ծանուցուաձ լինի սիրելեացդ Մերոց ի Քրիստոս, և հարազատ որգւոցդ՝ և Տէրունի ժողովրդոցդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի։ Զի մինչ կարծիք գողոց և աւազակաց իցեն յուրեք, մանաւանդ թէ՝ և ինասք մեծամեծք ի նոցունց յառաջացեալք իցեն բազմից. յայնժամ ամենազգաստ սրբութեամբ և արթնութեամբ պահպանէք տէր գաւառի ուղղութ զգաւառ իւր, և հովիւ ըզհօտ իւր, և տէր տան միոյ զտուն իւր. որպէս ղի՝ մի յանկասկածս մտցեն գողք եւ աւազակք, և գործեսցեն զինասս։ Ըստ Աւետարանական բանի Տեառն մերոյ թէ՝ եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գողդայ հսկէր, և չէայր թոյլ ական հատանել ըզտան իւրոյ։ Արդ ըստ այսմ օրինակի, հոգեւոյս Հայրապետական մեր սրբազան՝ ըստ ուրում էր Տէր և հոգաբարձու ազգիս Հա-


յոց, և Դիտապետ իսկ՝ և հոգևոր Հովուապետ սմին՝ կացուցեալ ի յԱսաուծոյ. մինչ բաղում անգամ եաես աղաւթեալ զվիճակս իւր, և փեռեկտեալ ղՀօտս իւր ի հոգեվնաս գողոց և յաւազակաց, այսինքն ի սուտ և ի խաբերայ՝ յինքնագլուխ և ի շատ. շրջիկ կարգաւորաց, (որոց շատն և կարգաւոր իսկ ոչ լինին, այլ գոհհիկ աշխարհականք, սուտ վարդապետ կամ քահանայ ձևացեալք)։ Վասնորոյ՝ զգուշացաւ մեծաւ զգուշութեամբ. և ջանաց որքան հնար է, պահպանել ի վնասուց նոցին վիճակս և ղՀօտս իւր հոգեւոր, ղյանձնեցեալս ինքեան յԱսուծոյ. սանձել և արգելուլ զայնպիսին ի չարութենէ նոցա, և զառ ի նոցունց սերմանեալ չարիսն մաքրել՝ և սրբել ի բաց։ Որ ե. արար իսկ մեծաջան և բարեգոյն հեռւմամբք որքան և եղեւ ձեռնհաս, և զբազումս ի յայնպիսեաց ապականչաց ի ձեռն բերեալ՝ ըմբերանեաց, և ըստ արժանեաց իւրեանց գատապարտեաց. և զոմանս ի նոցունց ուղղեաց իսկ ի բարի վարս՝ և ի պարկեշտ ընթացս. և զառ ի նոցունց սերմանեալ չարութիւնն ուր սերմանեալ էին մաքրեաց՝ և ջնջեաց ի բաց, Ի սոյն բարեգոյն նախանձ վառեցեալք էին և առաջին Հայրապետքն մեր սրբազանք, որք եւս յաւուրս իւրեանց ղբազումս այնպիսի չարալլուկ անձինս սանձեցին և գրեցին զթուղթս պատուիրականս ուր և հարկն պահանջէր, զգուշանալ ի յայնպիսի ծակամուտս և մոլեկան անձանց։ Քանզի յոյժ բաղմացեալք այնպիսի անուղղայ անձանց՝ զբազում տեղիս էին ապականեալ. և զյոլով ոճիրս չարութեան վեր երեւեցուցեալ։ Եւ այժմ եւս ի յայնպիսի տեղիս՝ յորս մեք ոչ եմք ձեռնհասք, գտանին այնպիսիք բազումք. և առնեն ըստ հաճոյից իւրեանց՝ զոր ինչ և կամին։ Ըորոց ոմանք լինին աշխարհական երիցունք. որք տեսանելով զժողովուրդսն իւրեանց սակաւաւորս՝ կամ աղքատս. իսկ ինքեանք մոլիք՝ և ախտաւորք, և նոցին չափաւոր արօքն չբաւականացօղք, թողուն զժողովուրդս իւրեանց անտէր և անայցելուս, և ինքեանք վասն ախտի իւրեանց ելեալ, շրջին ընդ բաղում տեղիս. ասելով զինքեանս փորձանաւորս՝ կամ պարտաւէրս, և կամ զայլ պատճառս ցուցանելով, ծողովեն զբազում գրամս, և մսխեն անառակութեամբ և ցնդութեամբ. տալով զգայթակղութիւնս բազմաց, և զամօթս մեծագոյնս ածելով ազգիս մերոյ առաջի պլուց աղգաց։ Ըորոց թէ ոմանք այրի եւս լինին, ոչ բնաւ դառնան ի տեղիս իւրեանց. այլ նոյնպիսի վատթար կենցաղավարութեամբ շրջին ուր կամին՝ մինչեւ ցվախճան կենաց իւրեանց։ Իսկ ոմանք գոլով սեւագլուխք՝ ոչ ախորժին լնուկիլ ուրեք ի վնաս ինչ, կամ Քաղ ընդ ձեռամբ և ընդ իշխանութեամբ մեծաւորի ուրուք, այլ պատճառաւ ինչ ելեալ ի վանէ միոջէ, նոյնպէս ինքնագլուխ շրջին. ժողովեն զգրամս յայլ տեղեաց մերմէ. և նոյնպէս անառակութեամբ մսխեն։ Եւ յայսպիսեացս ոմանք եւս գնացեալ առ մատնաւոր վիճակաց կաթողիկոսունն, մանաւանդ՝ առ արտաքսեցեալ և վարեցեալ կաթողիկոսունս այնդ վիճակաց և կամ ի դիւաբնակ անտառն Լիւանանու առ աղթարմայ սուտ կաթողիկոս կոչեցեալն, ձեռնագրին ի նոցանէ անվաւեր և ապօրինաւոր ձեռնադրութեամբ սուտ եպիսկոպոս, և առանձ սանձի և արգելանաց շրջին ուր և կամին. զո և գտանեն՝ ձեռնադրեն առանց խորութեան քահանայս կամ աւետեայս. ոչ զքահանայսն ի խնդրոյ ժողովրդոց, և ոչ զաւետեայսն ի վերայ վանից ուրուք. այլ ըստ ինքեանց սանձարձակ և վայրաշրջիկ լինին նոքա եւս, և ապականեն զբազում տեղիս անկարգութեամբ։ Եւ բազում յայնպիսի եպիսկոպոս կոչեցելոց, գնացեալ ի յայնպիսի անկիւն և ի հեռաւոր տեղիս՝ յորս մեք ոչ եմք ձեռնհաս, յենուն ի յիշեօղսն նոյն տեղեացն, կամ թէ՝ զբնակիչս նոցին եւս խաբեն, և ինքնագլուխ սուտ Առաջնորդ ձեւացեալք նստին ի մէջ նոցա. և լոյծ կենօք կեան ըստ հաճոյից իւրեանց, ինքնագլուխ փոխեն զօրէնս և զսահմանագրութիւնս եկեղեցւոյ. ինքեանք ախտաւորք գոլով՝ ախտաւորաց եւս չլինին սանձօղք. ոչ ճանաչեն ամենեւին զկաթողիկոս, և ոչ ի սաստ և յերկիւղէ նորա պատկառին և սանձին. այլ զի՞նչ և ախորժեն՝ առնեն. և զբազում կարգս բարուքեան եղծանեն։ Մանաւանդ՝ որք ի յանտառէն Լիբանանու ընդ սուտ եպիսկոպոսութեան անունն առնուն, մինչ խոտորեալք են ի յաղանդն ախթարտայուքեան, ուր եւ Հանդիպին՝ զնոյն ա-

ղանգն սերմանեն և ուսուցանեն, և ղրաղ-
մաց Հոգիս ապականեն։ Եւ ղորս իբր քա-
հանայ կամ աբեղայ ձեռնադրեն, նոքա եւս
զնոցին աղանդն կամ յաուաջագոյն ունին՝
եւ կամ նոր ստանան. և նման ձեռնագրո
ղացն իւրեանց՝ ուր եւ շրջին՝ զմոլար ա.
զանգն իւրեանց սերմանեն։ Բայց յայցանէ
ումանք դատարկակեաց անձինք՝ որք զցոփու-
թեամբ կեալն սիրելով՝ չեն գտեալ զդուռն
ինչ ապրուստից իբրեւ տեսանեն թէ՝ այլ
ոչ ունին ապրելոյ ճար, ընթանան ի հե-
ռաւոր տեղիս, և սուտ քահանայ կամ վար-
դապետ ձևացեալք, առնեն զմկրտութիւնս,
զպսակս, զձեռնադրութիւնս, եւ զայլս այս-
պիսիս։ Եւ յետոյ մինչ ստութիւն նոցա
յայտնի, ծաղր եւ ծանակ լինին ազգս մեր
եւ եկեղեցիս առաջի օտար ազգաց։ Ո՜հ,
զո՞ր գրեսցուք. զի շատք են այսպիսիք,
ղորս եւ մի մի Թուեալն՝ ձանձրութիւն բերէ։
Բայց սակայն այս ս.մենայն վերոյ գրեցեալ
քըս՝ մինչ ընդ բազում տեղիս շրջին որպէս
ասացաք. գտանին ի յոմանս տեղիս անձինք
շրջահայեացք, որք որոնեն եւ հարցանեն
զով լինիլն նոցին՝ եւ զուստի գալն։ Եւ մինչ
յայսպիսի քննողաց բազում անդամ յայտնի
լինի խաբէութիւն նոցին եւ խայտառակին,
վասնորոյ՝ բազումք ի նոցանէ հնարեն զսուտ
գիր, եւ զսուտ կոնդակ, ծաղկեալ և զար-
դարուն. և ձևանան ժողովարար վանից ու
րուք, կամ թէ փորձանաւոր և գերեսէր ա-
սեն զինքեանս որպէս զի մի ճանաչիցի խա.
բերայ գոլն իւրեանց։ (Զոր և աշխարհա.
կանք՝ կամ խաբեբայ սուտ մահեսիք եւս
առնեն շատ անգամ)։ Մանաւանդ՝ հնարեն
զսուտ մասունս և զխաչս, և առեալ շրջին
տեղւոջէ ի տեղի. ժողովեն զդրամս. և ա-
նառակութեամբ մսխեն՝ որպէս ասացաք։
Որոց ողորմութիւն տալն զմեղս ծնանի մի-
րաւի՝ քան թէ զվարձս։ Արդ՝ յաղագս այ-
սոցիկ որպէս ասացաք բազումք ի նախնի
Հայրապետացն մերոց երանելեաց՝ աշխատե-
ցան, և ջանացին արգելուլ և սանձել
զոր և արարին իսկ՝ որքան և եղեն ձեռնհաս։
Հասաւ։ Իսկ՝ նորոգ Հանգուցեալ Հոգելոյս
Հայրապետն մեր՝ յոյժ առաւել ջանացեալ
նովին բարի ջանիւք, զբազումս ի յայնպի-
սի խարեբայից ի ձեռն բերեալ դատապար-
տեաց, և ի բազում տեղիս ղկանոնս և զը-
պատուէրս գրեաց, մի ընդունիլ զայնպիսիսն
առանց իւրոյ կոնդակի և վկայական գրոյ։
Բայց զի այլ և այլ իշխանութիւնք են այ-
լասեռ ազգաց, որոց իշխողաց շատքն եւս
ինքնագլուխք են, և ոչ լսեն ումեք. վասն-
որոյ ի յայնպիսի տեղիս առաւել բազմա-
նան այնպիսիքն, որք և զժողովուրդսն այն-
պէս յեղաշրջեն, զի անլուր լինին հոգեւոր
հրամանաց, մանաւանդ՝ թէ և լսեն եւս չկա-
րեն ի բաց հանել զնոսա ի միջոյ իւրեանց։
Զայսոսիկ տեսանելով երանելի հայրապե-
տին մերոյ՝ վասն այգր երկրի եւս զգուշա-
ցաւ, մինչ հեռաւոր է, և ընդարձակ իշխա-
նութիւն մի մեծագոյն. որպէս զի՝ մի ոք ի
յայնպիսի խաբեբայից յայդր մտեալ՝ զնոյն
ոճիրսն չարութեան յայգր ևս յառաջացուս-
ցէ՝ որպէս և յայլ տեղիս. և լինիցի ամօթ
և նախատինք ազգիս մերոյ առաջի բազմա-
խումբ ազգացդ քրիստոնէից։ Ուստի գրեաց
զմուղթ աղերսանաց առ խնամաշատ Մայրն
ողորմութեան՝ Աստուածածնօր և ինքնակալ
կայսերուհին մեծ և ընդ այլեւս խնդրոց իւ-
րոց հարկաւորաց խնգրեաց զայն ևս՝ զի
առանց իւրոյ վկայական թղթոյն՝ մի ոք ի
կարգաւորաց ազգիս մերոյ մտցէ ի կալուածս
տէրութեան և իշխանութեանն իւրոյ։ Որ
և հրամայեաց իսկ լինիլ այսպէս, և շնոր-
հեաց զհրովարտակ ողորմութեան, որպէս
և գիտէք իսկ ահա։ Որում Աստուածն ամե-
նայնի տացէ զկեանս երկարս և խաղաղա-
կանս, պահելով ապահով անդորրութեամբ
և ամենակերպ բարեյաջողութեամբ՝ հանգերձ
թագաժառանգ որդւովն իւրով և թոռամբ-
քըն, ընդարձակելով զտէրութիւն իշխանու.
թեան իւրեանց ընդ ծագս տիեզերաց, առ
ի բարձրութիւն եկեղեցւոյ՝ և ի պարծանս
հաւատացելոց։ Որ և այնու անխոնարհելի
հրամանաւ Աստուածածնօր կայսերուհւոյն
ամրացոյց Հոգելոյս Հայրապետն մեր զամե
նայն մուտս երկրիդ. որպէս և քանիցս ան
գամ ձեղ եւս գրեաց զպատուէրն և զկանոն
վանն այսր. զի առանց իւրոյ վկայական
թղթոյն և կոնդակին՝ մի ընդունիցէք ղոք
ի կարգաւորաց ազգիս մերոյ։ Որպէս զի՝
որք արդարև ստոյգ կարգաւորք են, և ա-
ռաջնորդաց վանից ուրուք առաքեցեալք ի
ժողովարարութիւն վասն վանից թղթով
նոցին, կամ թէ յիրաւի փորձանաւորք են

և գերեաւարքը, այնպիսիքն ունելով զկոնդակ ժողովարարութեան կամ զթուղթ վկայութեան ի հայրապետաց սրբոյ Աթոռոյս, առանց արգելման ընկալեալ լիցին ի ձէնջ, և ըստ արժանեաց իւրեանց սիրեսցին, և ըստ վայելման տեղեացն յորոց եկեալ են պատուեսցին և մեծարեսցին, և զկամաւոր ողորմութիւնս ի ձէնջ ժողովեալ առ ի շինութիւն աղքատացեալ վանորէից մերոց, ի յօդնութիւն փորձանաւորաց և ի յազատութիւն գերեաց, դարձցին յետս ի տեղիս իւրեանց: Իսկ որք խաբեբայք լինիցին, այնպիսիքն ոչ ունենալով զկոնդակ կամ զթուղթ վկայական ի հայրապետաց սրբոյ Աթոռոյս՝ դիւրապէս ճանաչիցին, և մի լիցին ի ձէնջ ընկալեալք այլ վարեսցին արտաքս ի յայդ երկրէ: Արդ՝ զայս կանօն մինչ այսպէս սահմանեաց լուսահոգին Աստուածաղօր կայսեր. րուհէոյն հրամանաւ, ոչ վասն ոմանց կամ բազմաց սահմանեաց և վասն ոմանց ոչ, այլ հասարակապէս վասն ամենեցուն սահմանեաց: Որպէս զի մի դուռն միայն լիցի մասանելոյ յայդր և ոչ այլ և այլ ընդ որս ստանել կարիցեն հոգեվնաս գողք և աւազակք ի յայդ երկիր: Այլ մի լիցի. և միշ գիտութեամբ և հրամանաւ. զի որոշեսցին դիւրապէս սուտն և իրաւն, խաբեբայն և ճշմարիտն. հարազատն և անհարազատն, զի բարեկարգութիւնն զկայ առցէ. պատուելին պատուեսցի, և անարգելին անարգեսցի: Ուրեմն՝ որ ոչ մտանէ ընդ աչսպիսի դուռնն՝ որ բացայայտիչ է ճշմարտութեան և խաչատառակիչ ստութեան, այլ ընդ այլ ելանէ, նա գող է և աւազակ՝ ըստ Տէրունական բանին: Բայց այժմ լսեմք թէ՝ կարապետ վարդապետ ոմն եկեալ ի սուրբ Երուսաղէմ՝ մտեալ է յայդ երկիր յաղագս նուիրակութեան: Եւ թէպէտ յանձնարարութեան թղթովք եկեալ նա յայդր, զի ունեցեալ է զթուղթս ի պատրիարքէն իւրմէ և ի սրբոյ Աթոռոյս ծայրագոյն նուիրակ Մինասն Աստուածաբան վարդապետէն որ ի Կոստանդնուպօլիս, առ սիրելի որդին մեր և ծայրադոյն նուիրակն և. Առաջնորդն ձեր Յովսէփ Աստուածաբան վարդապետն, որովք մտեալ է յայդ երկիր, սակայն՝ ըստ որում հասարակաց է կանոնն որպէս ասացաք, հարկ էր դմա ի հոգելոյս Հայրապետէն մերմէ եւ ունել զդիր վկայական, որոյ յաւուրս անցեալ է դա ընդ Կոստանդնուպօլիս՝ և եկեալ յայդրս: Զի թէպէտ խառնակութիւն գոյր յանմամ ի տանս Աբրահամեան որոյ սակս գրեալ են Յովսէփ վարդապետին թէ՝ վասն խառնակութեանցն ոչ կարաց դա դնալ ի սուրբ Էջմիածին, գի Թուղթ առեալ ի սրբազանէն. այլ հնար էր դմա նստիլ ի Կոստանդնուպօլիս, և ձեռն մեր նուիրակ Մինասն վարդապետին զթուղթ խնդրել ի լուսահոգւոյն՝ և այնու գալ, ահա զայս չէ արարեալ: Իսկ զայս ևս են գրեալ Յովսէփ վարդապետին թէ՝ ահա գրեցին առ սրբազան Հոգեւորն տէրն զթուղթ երկու պատրիարքունքն, (այսինքն՝ սուրբ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ.) գի վասն դորա զյանձնարարութիւնս գրեացէ քեզ: Սակայն զնշան այսց գրեցելոցս նոցին՝ մեք մինչև ցարդ ոչ տեսաք աստ. զի ոչ են գրեալ նոքա վասն դորա զթուղթ առ լուսահոգին. և զկնի լուսահոգւոյն՝ առ մեզ ևս չեն գրեալ: Եւ թէ ինչ մտաք առնեն այսպէս՝ մեք ոչ դիտեմք: Զայս միայն դիտեմք, զի ոչինչ պակասութիւն է սրբոյ Երուսաղէմի և նուաստութիւն պատուոյ՝ թղթով մերով գալ յայդր նորին նուիրակացն. այլ և առաւել պատիւ և բարձրութիւն՝ և յատկութիւն մեծ: Մանաւանդ և շահ իսկ նմին ի կողմանէ արդեանցն: Զի Ի նուիրակունք յառաջ քան զայս եկին այսի ի յայս կողմունքս. մինն ի նոցունց միայն սակաւ ինչ արդիւնս հասուցեալ ի սուրբ Երուսաղէմ. իսկ զայլսն՝ կերին և. փչացուցին երկոքեանն ևս՝ որպէս և կամեցան. և այլ չդարձան յերուսաղէմ. մինն մեռաւ, և միւսն դեռ ես ի յայս կողմունքս է: Արդ՝ եթէ թղթով և գիտութեամբ հայրապետաց որոյ Աթոռոյս լինիցէր մուտն և ելն նուիրակացն սրբոյ Երուսաղէմի՝ որք գան յայդր, գիա՞րդ կարէին նոքա փչացուցանել զայնքան արդիւնսն նորին յանդիմանս աչաց մերոց: Ո՞չ ապաքէն վրէժխնդիր լինէր լուսահոգին, և չղէր զնոսա ի սուրբ Երուսաղէմ, կամ թէ զարդիւնսն առնոյր՝ և անդ հասուցանէր: Ա.. նոքա զայս ոչ մասածեն: Սակայն մեք սրբոյ Երուսաղէմի օգտիցն եմք կամեցօղք, ոչ ինասուցն. զի մեր է այն և. և մեք ևս սիրեմք զսուրբ Տեղիսն Տնօրէնութեանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ և զգե-

րահռչակ Աթոռ սրբոց Յակոբեանց Առաքելոցն, մեք ևս մեծարեմք զնոսա և պատուեմք, ոչ ըստ պատուոյ հասարակ վանուրէից, այլ ըստ իւրեանց արժանավայելուչ պաշտօնց և յատկութեանցն՝ որպէս և վայել է իսկ։ Եւ մեք եւս ցաւիմք ընդ պակասութիւնս և ընդ աղքատութիւնս նոցին՝ և ուրախանամք ընդ շինութիւնսն և ընդ պայծառութիւնսն։ Զի թէ հասարակ ամենայն ազգիս մերոյ այսպէս վայել է գոլ առ Տնօրինական սուրբ Տեղիսն Քրիստոսի, և այսպէս սիրով և ցաւակցութեամբ հայիլ ի նոսա. ո՛րչափ ևս առաւել մեզ վայել է ըզսոսին առնել՝ որք Տէր և դլուխ եմք օրհնեալ ազգիս Հայոց՝ ըստ խնամոց և ողորմութեանցն Աստուծոյ. և հոգաբարձու և վերակացու իսկ ամենայն վանորէից և եկեզեցեաց. և դիտեմք զպատիւս և զյատկութիւնս իւրաքանչիւրոցն, մանաւանդ սուրբ Տնօրինական Տեղեացն Քրիստոսի, որոց պատիւն յատուկ է և դեր ի վերոյ՝ քան զպատիւս այլ վանորէից և եկեղեցեաց՝ որպէս և յայտ իսկ է։ Վասնորոյ մեք ևս պարտիմք յորդորօղ լինիլ ազգիս մերոյ՝ առ ի ողորմիլ նմա. և տալ զտուրս առատութեամբ՝ առ ի շինութիւն և ի պայծառութիւն նմին. որպէս արարեալ իսկ եմք բազմիցս։ Ուստի՝ մինչ զերկուց նուիրակաց նորին զմեծադոյն անհարազատութիւնսն տեսաք, որք ակնեբև զրկեցին զսուրբ տունն զայն, վասնորոյ՝ ոչ կամիմք մեք թոյլ տալ անհարազատ նուիրակաց նորին, զի զՏէրունի վիճակիդ մերոյ արուիւնսն այնպէս մխեցեն և փչացուսցեն ընդ վայր՝ որպէս երկուքն սյնոքիկ առարին՝ և տեսաք։ Այլ զայս դրեմ ձեզ ահա՝ և պատուիրեմ հարկիւ մեծաւ։ Զի որովհետեւ կարապետ վարդապետն այդ որպիսի կերպիւ և իցէ եկեալ դատեցաւ ի յայդ երկիր՝ առանց թղթոյ Հայրապետին սրբոյ Աթոռոյս, վասնորոյ՝ յայս միանդամ ի պատիւ սրբոց տնօրինական Տեղեացն Քրիստոսի խնայեցաք ի դա. և հրամայեմք ձեզ ահա, զի զտուրս և զողորմութիւնս տալիք դմա առատութեամբ ի սէր սրբոյ Երուսաղէմի՝ որպէս և տուեալ էք մինչեւ ցարդ. և զդա ևս ըստ արժանւոյն իւրոյ և ըստ որում վայել է պատուոյ Տնօրինական սուրբ տեղեացն Քրիստոսի, շահեսջիք և մխիթարեսջիք։ Իսկ յետ այսորիկ, եթէ այլ եւս եկեսցէ ոք ի սրբոյ Երուսաղէմ առանց մերոյ վկայական թղթոյ, մի ընդունիցէք ամենևին։ Իսկ թէ լինիցի ի ձեռս նոցա ի մէնջ վկայական դիր՝ ընկալջիք սիրով և պատուով։ Որով լինի երկու օգտութիւն մեծ։ Նախ՝ զի կանոնն հաստատեցեալ է Աստուածազօր կայսերուէնյն հրամանաւ, ձեայ հաստատուն. զի թէ վասն դոցա քակեսցուք, այլք ևս օրինակ առնուն և քակեն։ Եւ ապա համարձակ մտանեն յայդր խաբերայք, եւ րագմակերպ չարիքն որք առ ի նոցունց սերմանեցեալ են ի բազում տեղիս որպէս ցուցաք ի վերոյ՝ յայդր ևս սերմանին, և բերեն ամօթ մեծ ազգիդ մերոյ։ ԵՒ կորնչին ընդ վայր այսքան ամեայ աշխատանք Հոգելոյս Հայրապետին մերոյ՝ որ աշխատեցաւ ի վերայ այդ երկրիդ, և Աստուածազօր մեծի կայսերուէնյն բարձրադոյն և անխոնարհելի հրամանին ևս՝ լինի ընդդիմութիւն մեծի։ Բարւոք է ապա զայս ամենայն ինքնաս մտածել, և առանց մերոյ վկայական թղթոյ մի ընդունիլ դնոսա, զի թղթով մերով դալն նոցին յոյդր՝ ոչինչ է պակասութիւն սրբոյ Երուսաղէմի որպէս ասացաք, այլ պատիւ և բարձրութիւն մեծ։ Իսկ երկրորդ օգտութիւնն է այս, զի որպէս մուտն նոցին թղթով մերով լինի, նոյնպէս և ելանելն լինելոց է դիտութեամբ նուիրակին մերոյ և Առաջնորդին օրհնեցելոյ երկրիդ։ Վասնորոյ՝ այլ ոչ կարեն նոքա զարդիւնս սրբոյ Երուսաղէմի մուխել և փչացուցանել։ Ուստի՝ և զայս ինչ պատուիրեմ առ սյս, զի սիրելի որդին մեր ե. ծայրագոյն նուիրակն և Առաջնորդն ձեր Յովսէփ Արք Եպիսկոպոսն՝ զոր ինչ ի շահ և ի յօգուտ սրբոյ Երուսաղէմի առաջադրեալ է վասն արգեանց նորին, այնպէս արասջիք։ Որպէս զի՝ հոգևոր տուրքն ձեր ամբողջապէս հասցին ի սուրբ Երուսաղէմ, առ ի շինութիւն և ի պայծառութիւն հրաշազարդ Աթոռոյ սրբոց Յակոբեանց Առաքելոցն, և համայն եկեղեցեաց մերոց սրբոց՝ որք են ի սուրբ Տեղիս Տնօրէնութեանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և ի յօգուտ հոգւոց ձերոց որք մեծաւ հաւատով և սիրով ընծայէք և տալք յանուն նոցին զկամաւոր տուրս ձեր։ Որ և կարապետ վարդապետիդ ևս միամտութիւն և անհո-

գուբիւն մեծ է, մանաւանդ ի պարծանք իսկ, մինչ իւր աշխատութեամբ ժողովեալն՝ անվնաս հասցի ի սուրբ երուսաղէմ։ Ուրեմն՝ զայս ամենայն այսպէս արասջիք որպէս գրեցաք, յորոց օգուտք հոգեշահք բազումք յառաջանան, իսկ վնաս և ոչ մի։ Եւ կատարօղքդ հոգևոր հրամանացս մերոց՝ եղիջիք օրհնեալք՝ յԱստուծոյ և ի մէնջ. և Շնորհք սրբոյ և մեծի Աթոռոյս ընդ ձեզ լիցի յաւրաժամ։ Ամէն։ Գրեցաւ ի 1781 թուականն, փրկչին մերոյ, և ի մերում ՌՕԱ. թուականն, ի դեկտ. ելն. առ. դրան գերագահ և հանրաիշխող մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի։



Թուղթ շնորհակալութեան ի Մոսկով, առ որդիսն Ղազար Աղային, առ Աղայ Մինասն՝ եւ Աղայ Յովակիմն, յաղագս առ սուրբ Աթոռս սիրահարութեանցն։ Ողք եւ զյատուկ ծախսն Յովսէփ վարպետին կրեալ էին, որքան լեալ էր անդ։ Եւ վերստին յանձնարարութիւն։

Թուղթ ի Մոսկով, շնորհաւորութիւն վասըն նորակերտ եկեղեցւոյ տեղւոյն, զոր շինեալ էր Ազնիւ Ղազար աղային։

Յորմէ ժամանեցի Թուղթ սիրոյ ողջունի և օրհնութեան և նամակ պահպանութեան. Շնորհք առաքելական. և Աստուածային բազմապատիկ օրհնութիւն և նախահնամական գթութիւն հանդերձ հանրասփիւռ և հոգեւած Շնորհօք և զօրութեամբք կենսատու խաչին Քրիստոսի և նորին կողմունս գեղարդեանն սրբոյ և լուսակերտ ս. Տեղւոյս նորին իչման. և Շնորհաբաշխ Աչդ լուսատուին հոգոց մերոց ս. Գրիգորի. և Շնորհատու մատանց և գամբարանաց ս. կուսանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց. և այլ ամենայն հրաշագործ և փրկարար սրբութեանց և ս. Մասանցն՝ որք ի սմա՝ ի վերայ Աստուածանման և կայսերապերճ մեծի մայրաքաղաքիդ Մոսկովու. և Աստուածասահման պայծառափայլ և արեգակնատիպ Զարդու պերճութեան դորին՝ և բոլորի իսկ օրհնեցելոյ երկրիդ, Քրիստոսապսակեալ՝ և ի նոյն զօրացեալ, Ամենաբարեպաշտուհի և խնամաշատ մօրն ողորմութեան, ինքնակալուհւոյ և օգոստինէի մեծի կայսերուհւոյն Եկատերինեայ, ընդ որս և ամենից հաւատարիմ խորհրդակցաց իւրոց, գերապանծ նախարարաց, մեծիմ կուսակալաց և համայնից արիաջան զօրապետաց և զօրաց։ Այլ և՝ բազմահանճար եւ իրաւասէր քաղաքակալաց, գաւառապետաց, դատաւորաց, և ամենայն իսկ շքեզափառ իշխանաց և տերաց. և բնաւից Քրիստոսասէր իշխեցելոց՝ ընդ Աստուածապահ տէրութեամբ նորին հովանաւորելոց։ Եւ ապա ի գոյնում կայսերազարդ մայրաքաղաքդ վեհեղեալ մերազնեայ Հայկասէր՝ լուսաւորչական և միաբնադաւան հաւատացելոդդ ի Քրիստոս, սիրելի և հոգեւոր որգւոցդ մերոց՝ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս՝ և տէրունի ժողովրգոցդ սօրին։ Եւ ի դմին կառուցեալ նորակերտ սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ՝ որ յանուն սրբոյ Խաչի վերացման. և համայնից եկեղեցական դասուց. մեղսաքաւիչ քահանայից, ուսուցմնասէր սարկաւագաց, աղնուամեծար և պերճափառ իշխանաց, գոյիւք զեղուն մեծատանց. իմաստնահոն վաճառականաց, հարազատ և հաւատարիմ դանձապետաց եւ երիցփոխաց, վայելչագործ արուեստաւորաց, և այլ առ հասարակ ժողովրդականացդ խմբից, մեծաց և փոքունց. արանց և կանանց, ծերոց եւ աղայոց. երիտասարդաց եւ կուսից, ինդալ ի ՅԷր յարազուարճ ցնծութեամբ։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ շնորհազեղուն օրհնութեան սիրածիր նամակիս մերոյ՝ ծանուցում լիցի սիրելի եւ հոգեւոր որդւոցդ մերոց, հարազատ զաւակացդ եւ Ցէրունի ժողովրգոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի սրբազան Առաքեալն Պօղոս, յարաժամ ըղձալով շինութեան եւ բարեզարդ պայծառութեան եկեղեցեացն Քրիստոսի, գրէ առ Փիլիպպեցին. Արգ՝ եթէ միխիթարութիւն ինչ իցէ՞ ի Քրիստոս, եթէ սփոփութիւն սիրոյ, եթէ հաղորդութիւն հոգւոյ, եթէ գթութիւն եւ ողորմութիւն, լցէք զխնդութիւնս իմ։ Զի որպէս վշաջք եւ հոգւոք եկեղեցեացն վշանալով

մեծապէս՝ ասէր, ո՞ հիւանդանայ՝ և ես ոչ հիւանդանամ. ո՞ գայթակղի և ես ոչ տապանամ, այսպէս և բարեվայելուչ ընթացիւք նոցին խրախացեալ հոգեպէս՝ ասէր, իբրեւ լուսոյ զՀաւատան ձեր՝ որ ՚ի աւր Ճիսուս, և զսէրն՝ որ ընդ ամենայն սուրբս, ոչ գադարիմ ի գոհանալոյ վասն ձեր՝ յիշել զձեզ յաղօթս եւ դարձեալ թէ գոհանալ պարտիմք զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր եղբարք՝ ի ևս քան զեւս աճեն Հաւատքն ձեր։ Եւ յայլ ուր թէ՝ ինչ կարեմք գոհութիւն մատուցանել Աստուծոյ վասն ձեր, ի վերայ ամենայն խնդութեանն՝ ղոր խընգամք վասն ձեր առաջի Աստուծոյ մերոյ։ Զայսպիսի խնգութիւն և միխիթարութիւն և ի Փիլիպպեցւոցն տեսանել յուսալով՝ գրէ Հարցմամբ, եթէ միխիթարութիւն ինչ իցէ ի Քրիստոս. եթէ սփոփութիւն սիրոյ. եթէ հաղորդութիւն Հոգւոյ. եթէ գթութիւն և ողորմութիւն, լցէք զխնդութիւնս իմ։ Արդ՝ և մեք ըստ ասացելոցս օրինակաց գոլով վըշտացեալ զանազան հոգւօք և վշտօք եկեղեցեաց ամենից՝ յանձնեցելոց մեզ յԱստուծոյ, ցանկամք միշտ առ ի սոցունց միխիթարութեան և սփոփութեան, առ ի լնուլ զխընգութիւնս մեր՝ որ արդարև պակասեալ է յայժմու ժամանակիս։ Քանզի՝ թէ ի մերձակայից՝ և թէ ի հեռակայից, ոչ լուսաբեր լսեմք զայնպիսի ինչ որ լինիցի մեզ առիթ միխիթարութեան և ուրախութեան, ըստ որում ամենայն գլուխ ի ցաւս է, և ամենայն սիրտ ի տրտմութեան։ Զի ոչ ուրեք գոյ հանգստութիւն. մանաւանգ՝ ի մեր կողմունքըս։ Վասնորոյ՝ ի վերայ բազմատեսակ ցաւոց սրբոյ Աթոռոյս զորս միշտ կրեմք, յաւելանին և ցաւք և հոգք վշտակիր ազգի մերոյ՝ որք ի բազում ուրեք ի ցաւս անատնելիս են։ ԵՒ խուժանն ի վերայ մեր կուտի ըստ Առաքելական բանին. որով հիւանդանամք յիրաւի, և տապիմք, և տագնապիմք։ Ուսաի՝ յանկողնոյ հիւանդութեան աստի զակն ի վեր առեալ՝ պյսր անդր տարուբերիմք, յուզելով իբրու և ի խնդիր լինելով, եթէ իցէ արդեօք միխիթարութիւն և սփոփութիւն ինչ, որով զցաւս զխնդութիւնս մեր՝ յորմէ պակասեցեալ եմք։ Զորս ի բազում ուսաեք չգտանելով մեր այժմ, ի յօրհնեցելոցդ յԱստուծոյ գտաք յիրաւի, որք ի հիւանդութեանց աստի զմեզ թեթևացուցին, ի վշտաց մերոց միխիթարեցին. և զխնդութիւնս մեր լցին։ Քանզի՝ դրեալ էր մեզ սիրելի որդին մեր և ծայրագոյն նուիրակն և Առաջնորդն օրհնեցելոյ երկրիդ Ցովսէփ Աստուածաբան վարդապետն և Արք եպիսկոպոսն՝ զշինուած և զաւարտուած եկեղեցւոյն տեզւոյդ։ Եւ զիւր գալն վերստին յայդր ըստ խնդրոյ ձերոյ՝ ի յօծանել զդպին։ Զոր օրհնեցեալն յԱստուծոյ և զօրացեալն նովիմբ հոչակեալն բարեպաշտութեամբ, և զարգարեալն հոգեկան և մարմնական պայծառութեամբ, սիրելին մեր ի Քրիստոս, և օգտակեալն որդին սրբոյ Աթոռոյս պ. Եզիազար աղնիւ աղայն՝ չինեալ է յանուն սրբոյ խաչին վերացման, յաղագս հոգւոյ ի Քրիստոս հանգուցեալ որդւոյն իւրոյ Խաչիկին. աշխատակցութեամբ Աստուածապարգև որգւոցն իւրոց ազնուազարմից՝ աղայ Մինասին և աղայ Ցովակիմին։ Որովք սիրաւի ուրախացաք մեք. ցնծացաք հոգւով և միխիթարեցաք։ Քանզի՝ զառիթան խնդութեան՝ զասացեալսն առ ի յԱռաքելոյն սրբազանէ՝ ահա գտաք ի ձեզ։ Այսինքն միխիթարութիւն ի Քրիստոս։ Զի որք ունիմք զսուգ անմխիթար յաղագս ամայութեան բազմաց երկնանման աւճարաց Քրիստոսի՝ որք են ի սեպուհ երկիրս ձեր, ընկալաք զմխիթարութիւն այժմ, մինչ լուսաք զշինուածն նորակերտ տաճարիդ չքնաղատեսի՝ յանուն կենսատու խաչին Քրիստոսի. ընդունելով և զսփոփանս սրտից ի միարան եւ ի միակամ սիրոյ ամենեցունգ, թէ չինողացդ դորին՝ և թէ կամակցացդ ամենից։ Որք ըստ նոյնոյ սրբոյ Առաքելոյն բանի՝ զնոյն խորհելով, զնոյն սէր յանձին ունելով, համաշունչք գոլով և միախորհուրդք. և միարանութիւն և ղՀաղորդութիւն Հոգւոյն յօդիւ խաղաղութեան ի ձեզ հաստատուն պահելով յառաջացուցիք զգործդ զայդ զմեծ և զվարձաբերիւ։ Որ եղեւ ձեզ ուրախութիւն մըշտանջենական, եւ առիթ գթութեան և ողորմութեան մեծի ի յԱստուածոյ առ Հոգի Հանգուցեալ աղայ Խաչիկին, որգւոյ ամենաբարեպաշտ և մեծահաւատ եղիազար Աղնիւ Աղային, ի յիշատակ որոյ կառոյց դա զտաճարդ երկնանման։ Որովք ամենիւք լցաւ իրաւի խնդութիւն մեր. և միխիթարեցաք ի

սիրտ և ի հոգի. տեսանելով զի Լաս քան զեաս աճեն հաւատք ձեր և սէր առ Աստուած։

Վասնորոյ՝ գոհացողական օրհնութեամբ փառաւորեցաք զանօրինօքն ամենից բարեաց Աստուած. որ զամենայն յամենայնի յաջողելով յաջողեաց և ձեզ ունիլ զայդպիսի չքնաղ և զուարճալի ցաճար փառաց բնակութեան իւրոյ. և ձեզ տեղի Աղօթից, քաւարան մեղաց, և հաշտարան ինքեան ընդ մարդկան։ Ցորմէ և ինդրեցաք՝ եւ խընդրեմք իսկ մեծապաղատ հայցմամբ, զի ըզհոգեւոր եւ զմեծավարձ յիշատակդ զայգ մեծ՝ ընկալցի ի հաճոյս իւր, եւ համարեսցէ ի փառս իւր։ Զոր եւ շնորհաւոր արասցէ ձեզ ամենեցուն, եւ տացէ ձեզ ուրախութեամբ սրտից եւ խնդութեամբ բաղմաս, խաղաղութեամբ եւ ապահով կենօք վայելել զդոյն, յայգէ յայգ՝ եւ յօրէ ցօր. դիս, մինչեւ ցկատարած աշխարհի։ Եւ ըստ բարի և՝ մեծայոյս ակնկալութեան գերազնիւ սիրելւոյդ մերոյ պ. Եզիազար աղսիգ ըզփոխարէնն սյդր մեծավարձ յիշատակի՝ բիւրապատիկ առաւելութեամբ չափեսցէ ի հոգի որդւոյ դորին հանգուցելոյ աղայ Խաչիկին. հարկեցեալ ի ծնօղական գթոյն եւ ի սիրոյն մեծէ որ առ նա ըստ անուան նորին եւ ի յիշատակ նմին՝ շինեաց զցաճարդ երկնատիպ։ Զոր և արժանացուսցէ մաից երկնաւոր առագաստին, լուսազարդ վայելչութեամբ պսակելով ընդ պարս սրբոց եւ սիրելեաց իւրոց։ Ընդ նմին լուսաւորեսցէ եւ զհոգիս ամենից ննջեցելոց դորին, ծնողաց իւրոց՝ եւ ամենայն ազգայնոց եւ հանգուսցէ յարքայութեան իւրում ընդ սուրբս իւր։ Եւ զինքն՝ եւ զԱստուածազօր որդին իւր զաղայ Յովհաննէս ազնիւ սիրելին մեր ի Քրիստոս, և զաղայ Մինասն, եւ զաղայ Յովակիմ, եւ զամենայն կենդանի ընտանիսն եւ զազգսյինն՝ վարձատրեսցէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, փոխանակ աշխատութեանցն մեծագունից՝ զոր կրեցին ի վերայ եկեղեցւոյդ սրբոյ։ Պահեսցէ երկար ամօք և խաղաղական կենօք՝ ազատելով յամենայն հոգեկան եւ մարմնական փորձութեանց։ Ցացէ դոցա՝ (որք սիրեցին զվայելչութիւն Ցան իւրոյ եւ զտեղի յարկի փառաց իւրոց՝ եւ մեծաջան վաստակօք եւ սիրով յօրինեցին) բնակիլ ընդ հովանեաւ դորա զամենայն աւուրս կենաց իւրեանց. և յայգէց յայգս՝ եւ յօրէցօր յօրդիս. տեսանել միշտ զվայելչութիւն դորա. ուրախութեամբ վայելել զդա. և ընդունիլ յարաժամ զհոգեպարար շնորհս դորա։ Եւ յետ աստեացս՝ արժանանալ գերագոյն և մշտնջենաւոր վայելչութեանց երկնաւոր առագաստին. պարիլ ընդ դասս երջանկաց, եւ ընդ նոսին վարձատրիլ։ Եւ յամենայն օրհնութեանց եւ ի շնորհաբաշխութեանցն որք ի սուրբ եկեղեցւոջդ յայգմիկ կատարիցին մինչեւ ցվախճան աշխարհի. հանցէ դոցա Աստուած զմասն մեծ և զբաժին առատ. ինքեանց՝ և համայն կենդանեաց եւ ննջեցելոց իւրեանց։ Որք եւ լինիցին դոցա օժանդակք եւ պահպանիչ յամենայն կեանս իւրեանց. և պահեսցէ հոգւոց իւրեանց ի յելսն ի կենացաղոյս։ Մանաւանդ փառատեսցէ Աստուած զսուգ և զարտմութիւն եւ զկսկիծ սրտի ազնիւ սիրելւոյն մերոյ պ. Եղիազար աղսիգ զորս ունի ի կողմանէ լուսահոգի որգւոյն իւրոյ աղայ Խաչիկին. զոր և մխիթարեսցէ Հոգւովն սրբով՝ հանդերձ ամենիւք իւրայնովքն։ Եւ փոխանակ մարմնական մխիթարութեանցն եւ սրբատաշահութեանցն զորս ակն ունէր ի հոգելոյս որգւոյն տեսանել, տեսցէ այժմ և վայելեսցէ զհոգեւոր մխիթարութիւնս ի հոգեւոր յիշատակէդ իւրմէ, ընդունելով յարաժամ զշնորհս դորին հոգեշահս, թէ աստէն, և թէ յետ ելից ի կենացաղոյս։ Եւ աղայ Ցսվակիմ որգին մեր հոգեւոր որ կուռն ջանիւ և աշխատութեամբ մեծաւ յատկապէս հոգաբարձու է լեալ կերտման սրբոյ եկեղեցւոյդ՝ և ամենայն կերպիւ ղգա շքեղացուցեալ. ընկալցի ի Քրիստոսէ զվարձս բազմապատիկս ըստ վաստակոց իւրոց յերկակի կեանս իւր։ Շքեղասցի և պայծառասցի աստէն հոգեկան առաքինութեամբք, հաւատով, յուսով, սիրով՝ և ամենայն բարեգործութեամբք, նաև մարմնական բարեճոխութեամբ. իմաստութեամբ, խոհեմութեամբ, եւ յամենայնի յառաջադիմութեամբ։ Եւ անգէն ի հանդերձեալ կեանսն անանցանելի եւ ամենավայելուչ շքեղութեամբ և պայծառութեամբ արքայութեանն երկնից, եւ լուսազարդ պսակաւ սրբոց և սիրելեացն Աստուծոյ։ Նոյնպէս՝ եւ նոցա ամենեցուն՝ որք բանիւք եւ

գործովք սատարք և օժանդակք՝ կամակիցք և գործակիցք եղեն շինուածեան սրբոյ եկեղեցւոյդ, զվարձս բարիս և բազմապատկապէս հատուսցէ Տէր. և զմասն բարի ի Ընորհաց և յօրհնութենանց սրբոյ եկեղեցւոյդ պարգեւեսցէ նոցա՝ աստ և ի հանդերձեալսն Զորս և ձեզ ամենից օրհնեալ ժողովրդոցդ տացէ ընդունիլ միշտ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, վայելել աստէն ի կեանս ձեր՝ համայն զարմօք և զաւակօք ձերովք մինչև ցկատարած կենցաղոյս, և յետ աստեացս՝ օժանդակիլ նոքօք, և արժանանալ մտից արքայութենանն երկնից։ Որ և օրհնեսցէ զձեզ զամենեսեանսն առհասարակ, զշինօզսդ սրբոյ եկեղեցեացդ և զվայելօզսդ համայն, պահելով ի ծոց դորին յարաժամ, անսիրձս և անսասանս յամենայն չարէ։ Եւ հեղցէ առ ձեզ առատապէս զԸնորս ողորմութեան և դթութեան իւրոյ. և միշտ զարւարունս և աճեցունս պահեսցէ հաւատով, յուսով, սիրով, համակամ սրտիւ միաբանութեամբ, խաղաղութեամբ և խնդութեամբ, և ամենայն իւրաքանչիւր գործովք բարութեան։ Նաև՝ շինութեամբք և պերճութեամբք. ճոխութեամբք և փարթամութեամբք, հանդստութեամբք և ապահովութեամբք, ամենիւք բախարար բարօրութեամբք։ Պահեսցէ հանապազ ի վերայ ձեր զխնամս և զդթութիւնս Աստուածապսակեալ և առատախնամ Մօրն ողորմութեան, ինքնակալուհւոյ Օդոստինէի մեծի կայսերուհւոյն Եկատարինեայ, որպէս և պահեալ է մինչև ցարդ. որովք դաեալ է ձեզ զապահով և զհանդիստ կեանս և զկացութիւնս։ Որոց տացէ նոյն Ամենողորմն Աստուած՝ զերկար և զխաղաղական կեանս. և զփոխարէնն այդքանեաց մեծադունից խնամոց և երախտեացն՝ զորս ցուցեալ են ձեզ միշտ և ցուցանեն, բազմապատկապէս հատուսցէ դոցա յերկակի կեանս իւրեանց։ Եւ առաւել ես դերադոյն փառօք և պերճութեամբ բարձրացուցէ զիւրապարգեւ Տէրութիւն իշխանութեան դոցին, և ընդ աղդս ամենայն սփռեսցէ, կորացուցանելով առաջի սրոյ ւոցին հանապազ զիշնամիս Խաչին սրբոյ, ի փառս ամենասուրբ անուան իւրոյ. ի բարձրութիւն եկեղեցւոյ՝ և ի յուրախութիւն ամենայն հաւատացելոց, մանաւանդ՝ մեզ տառապելոց, որոց սակս և դուք աղօթեսջիք հանապազ առ բարեգութն Տէր, զի անվրդով խաղաղութեամբ պահեցէ միշտ զամենադեղեցիկ և զհանրականամ Տէրութիւնս դոցին. ի ներքոյ հովանաւորութեան որոյ՝ և դուք զովասջիք և բարեկեացք լինիցիք, որպէս և եղեալ էք մինչև ցարդ։ Եւ ի վերայ այսր ամենայնի՝ փառաւորեսջիք զնախախնամօդն ամենայնի՝ զպարգեւիչն ամենայն բարութենանց զմարդասէրն Աստուած, որ ողորմելով ձեզ նախապէս՝ յայդպիսի ապահով վայրս տարեալ էած ի ներքոյ զուարճալի հովանաւորութեան դոցին. և այժմ ևս յաջողեաց ձեզ ունիլ զայդպիսի էքնաղ և վայելչատես Ցաճար փառաց անուան իւրոյ սրբոյ, որպէս զի՝ ընդ մարմնական բարեկեցութենանց ձերոց՝ ունիցիք և զհոգևոր մխիթարութիւն։ Որ և իւրով աննուազելի դթութեամբն՝ յարաժամ լիցի ձեզ մխիթարիչ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. պահելով անտրտում ուրախութեամբ և ամենազուարճ ցնծութեամբ. աճեցեալ սիրով, և զարդարեալ ամենայն առաքինութեամբ, առ ի յուրախութիւն և ի մխիթարութիւն մեզ։ Արդ՝ որքան մինչև ցարդ, ևս առաւել յայսմհետէ աճեցուսջիք զճշմարիտ սէր որդիութեան ձերոյ առ Մայրս ձեր լուսատու Ա֊թոռս սուրբ և Միածնաէջ, մինչ այսպիսւոյ ամենաչքնաղ ծնողի էքնաղատես դուստր լուսոյ պարգեւեցաւ. ի յԱստուծոյ ձեզ լուսածնունդ զաւակացդ սորին, ի հոգևոր դաստիարակութիւն և ի տածողութիւն ձեզ։ Զի որպէս բերկրութիւն Մօրս լուսատուի յաւելաւ այժմ ընդ յաւելուածն Դստերդ իւրոյ լուսոյ, և ձեր հարազատ զաւակացդ սորին բերկրութիւնն և սէրն որդիական որ առ սա այսպէս կրկին աճեսցի նոյն և առ Հայրութիւնս մեր Հոգևոր՝ և առ սորայինսն համայն, և առ. ի սմանէ առաքեցեալն առ ձեզ՝ որդիդ մեր սիրելի և Ա֊յցելուդ ձեր բարեջան Ցովսէփ Ալբ Եպիսկոպոսդ, նոր եղանակ իմն հարազատութեամբ ի հոգևոր որդիութենէ ձերմէ ցուցցի։ Որովք և վերոյդրեալն մեր՝ աւ ի յերանելւոյն Պօղոսէ ասացեալ բան, մխիթարութիւն ի Քրիստոս, և սփոփութիւն սիրոյ, և հաղորդութիւն Հոգւոյ, և դթութիւն և ողորմութիւնն՝

համայնիւք հետևեցելովք սոցին ի ձէնջ ե-
րևեսցի։ Ցորոց և յայնժամ՝ անմիխիթարու-
թեանն մերոյ նուաղեցեալ խնդութիւն՝ կըր-
կին ևս լցցի, և պարդևիչն ամենից խըն-
գութեանց ամենատեղեն Հայր՝ ընդ որդ-
ւոյն Միածնի և ընդ սուրբ Հոգւոյն փա-
ռաւորեսցի։ Եւ ի փոխարէն նոցին նախա-
ինամողական գթութիւն նորին և ողորմու
թիւն, և Աղօթք և օրհնութիւն սրբոյ լու-
սաւորչին մերոյ և ամենայն սրբոց՝ և մեր
իսկ, ընդ զօրացուցիչ Շնորհաց սրբոյ Ա
Թոռւոյս յարաժամ ի հոգիս և ի մարմինս
ձեր ծաւալեսցի։ Ամէն։ Գրեցաւ յամի փըր-
կութեան մերոյ՝ 1781. և մերում Թուոջ՝
ՌՄԼ. ի Դեկտ. ամսոյ. Առ Դուան լուսա-
ծաւալ և հանրաճշտող Աթոռոյս Մեծի
սրբոյ Էջմիածնի։

*Թուղթ ի Մոսկով, առ ազգին Հոգիա-
զար աղայն, նոյնպէս շնորհաւորութիւն
շինման նոր եկեղեցւոյն, զոր յաղագս
հոգւոյ հանգուցեալ որդւոյն իւրոյ աղայ
Յակիմին շինեալ էր՝ յանուն վերացման
սուրբ խաչին։ Որպէս եւ ի վերոյ գը-
րեալ կոնդակոջն գրեցաւ։ Եւ վասն հա-
րազատութեանցն յամենայնի, եւ զՕով-
սէփ վարդապետն ընդունելոյն սիրով
շնորհակալութիւն յոյժ։ Եւ զի զհոգե-
բաժինն իւր տուեալ էր ի կենդանու-
թեանն, գրեցաւ շնորհակալութիւն եւ
միամտութիւն։*

---

*Թուղթ առ Մոսկովու Ենարալ Ամշէֆ
Քնէազ Վասիլ Միխայէլիչ Դօրգօլուկն* [1]*).
շնորհակալութիւն վասն սիրոյն եւ ըս-
տեղեալութեանն որ առ ազգս մեր, զոր
եւ ցուցեալ էր Օովսէփ վարդապետին.
Եւ սէր, եւ խնդիր՝ զի առ սուրբ Աթոռն
եւ առինքն ունիցի զբարեկամութիւն։*

Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ ճըշ-
մարտի, սուրբ ողջունի Քրիստոսականի՝ և

[1]) Դօլգօրուկով (՞)

հոգեւոր օրհնութեան. Հանգերձ յոդնա-
հրաշ ղօրութեամբ և շնորհօք կենսատու
խաչին Քրիստոսի. և նորին փրկարար, Ա-
ետմրն ներկեալ յոդնաղօր գեղարդեանն
սրբոյ, և գերասքանչ սրբոյ Ցեղւոյս նորին
իջմանն. և Շնորհարաշխ Աջոյ Հօրն մերոյ
սրբոյն Գրիգորի լուսաւորչին, և հրաշագործ
Մաստանց եւ դամբարանաց սրբուհեաց կու-
սանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց, եւ
այլ ամենայն Աստուածակիր սրբութեանցն՝
որք աստ ի վերայ օրհնեցելոյդ նովիմբ
միջա, սիրեցելոյդ մերոյ Ազնուականի, և
Միածնաէջ Աթոռոյս սրբոյ և մեր օգտասէր
բարեկամի. և առատախնամ Մօրն ողորմու-
թեան մեծի և ինքնակալուհւոյ կայսերուհ-
ւոյն եկատերինեայ հաւատարմիդ. բարեպաշ-
ոն և Աստուածասէր, բարձրապատիւ և
գերափառ Ենարալիդ Աստուածախնամ եւ
կայսերապերճ մայրաքաղաքիդ Մոսկովու,
Անշէֆ քնէազ Վասիլ Միխայէլիչ Դօրգօլու-
կիդ։ Եւ Աստուածապահման քումդ և բը-
նակութեան, նովիմբ ղօրացեալ որպէսդ
գտեր ացդ, ճշմարիտ սիրելեացդ և բարե-
կամացդ, և համայնից հարազատիցդ և ընդ
ձեռամբ քով եղելոցն. և ամենից իսկ քոյա-
նոցն խնդալ ի տէր յարաժամ։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ Շնորհազեղուն օրհնութեանն
Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի քումդ բա-
րեպաշտութեան։ Զի լսելով մեր զգերազան-
ցութիւն սիրոյն ճշմարտի՝ զոր Աստուած-
սիրութիւն ձեր ունիք առ Միածնաէջ Ա-
Թոռս մեր սուրբ՝ և առ գահակալս սորին՝
և առ ազգս մեր իսկ. զոր և ի ձեռն մեծա-
գունից մարդասիրութեանց և խնամոց ցու-
ցանէք միշտ առ մերայինսն համայն որք յայդր
բնակին, և այժմ եւս առ սիրելի որդին մեր
և հոգեւոր այցելուն գոցա Օովսէփ Ուրք
եպիսկոպոսն զնոյնս ցուցեալ էք. որպէս գը-
րեալ էր մեզ շնորհակալութեամբ բազմաւ,
վասնորոյ ի ձեռն այսր օրհնատաք Թղթոյ
շնորհակալիւ զ·իրելութենէ ձերմէ պարտ և
արժան իսկ վարկաք։ Քանզի՝ արդարև շը-
նորհակալ եմք զսիրոյ և զխնամոց Աստուա-
ծասիրութեան ձերոյ՝ զոր ցուցանէքդ առ
Աթոռս մեր սուրբ և առ մերայինսն. որք և
խնդրեմք իսկ յամենախնամ գթութեանց
մարդասիրին Աստուծոյ՝ հատուցանել ձեզ

զփոխարէն դոցին ըստ Հոդւոյ և ըստ մարմնոյ. և աննուազելի առնել ի ձէնջ զգուշութիւն, զի և ըստ իւրոյ անհուն գթութեանն՝ ծաւալեսցէ առ ձեզ միշտ զշնորհս ողորմութեան իւրոյ. և օրհնեսցէ, և զօրացուսցէ և. փրկեսցէ յամենից անարատ դիպուածոց։ Եւ զի լուեալ է ի Տիրոջէ Աստուածասիրութիւն ձեր զանցիցն որ առ մեզ, այսինքն զփոխուիլն առ Քրիստոս գերերջանիկ Հայրապետին մերոյ Ցեառն Սիմէոնի՝ երանութեանց մեծաց արժանաւորի, և զյաջորդելն նուաստութեանս մերոյ. և թէ գիշէ ձախորդակի դիպուածք յայսոսիկ միջոցի ընդ երկիրս Արարատեան և ընդ Աթոռս մեր սուրբ և ընդ մեզ անցին, վասնորոյ՝ գոլով կարօտ մխիթարութեան, և տակաւին ի նոյնպիսի ի անչաջող բերմունս՝ (ըստ որում անպակաս են վրդովմունք ի յայս կողմունս.) Հայցեմ ի ձերմէ բարեպաշտութենէ ի ձեռն այդպիսի խնամոց և ճշմարիտ սիրոյ զմեզ մխիթարել. որպէս արդ ոչ սակաւ մխիթարութիւնս ստացաք ի լսելն մեր զայսոսիկ ի ձէնջ։ Որ և. զմերայինն ամենայն դոյն խնամոքդ առաւել ևս խնամել, և Ծովսէփ Արքեպիսկոպոս որդւոյդ մերոյ զնոյն մարդասիրութիւնն և ևս ցուցանել աղաչեմ։ Որովք և կացուցանել իսկ զմեզ պարտականս առաւել ևս շնորհակալելոյ և օրհնելոյ ընձեզ։ Որք յարաժամ իսկ օրհնողք եմք ձեզ և աղգիդ ձերոյ օրհնեցելոյ. մանաւանդ Աստուածազօր և ինքնակալ Կայսերուհւոյն յորոց զյատկագոյն խնամս և զգթութիւնս ի բնէ անտի՝ մանաւանդ յաւուրց Հոդելոյս Հայրապետին մերոյ մինչև ցարդ ընկալեալ իսկ եմք՝ և ևս ակն ունիմք ընդունելոյ։ Որոց Աստուածն ամենայնի լիցի վարձահաւաց. օրհնելով զիւրապարգև Ցերութիւն իշխանութեան դոցին, և ևս առաւել բարձրացուցանելով և ընդ ծադս տիեզերաց աստղածանելով, ի յուրախութիւն մեզ ատուպելոցս։ Խնդրեմ՝ եւս դարձեալ՝ զանմխիթարութիւնս մեր մխիթարել երբեմն ի ձեռն սիրանիշ գրոյ։ Ողջ լեր ի տէր, զօրացեալ ի նոյն միշտ համայն քոյանովքդ։ Ամէն։ Գրեցաւ յամի փրկութեան մերոյ 1782 ի յունվարի . ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի տուրբ Էջմիածին՝ որ ի դաշտս Արարատեան։


Թուղթ ի Մոսկով, առ Պլատոն Արքեպիսկոպոսն Ռուսաց, վերատեսուչն տեղւոյն, շնորհակալութիւն վասն սիրոյն, որ առ տուրբ Աթոռս՝ եւ առ զահակալսն սորին՝ եւ առ ազգն մեր. եւ առ Ծովսէփ վարդապետն։ Ծանուցանելով եւ զփոխիլն լուսահոգի Հայրապետին մերոյ առ Աստուած. եւ զիւր յաջորդելն։ Եւ խնդիր զնոյն սէր առ ինքն եւս ունիլ, եւ ցուցանելով զնոյն մարդասիրութիւնսն։

Ծորմէ ճշմարիտ և անխարդախ սիրոյն Հոդեկան, բազմաւ կարօտիւ՝ եւ ստոյգ տենչմամբ, մաուսցի Քրիստոսականն ողջոյն՝ դերարդելոյ և ըղձալւոյ եղբօրդ մերոյ՝ սիրեցելոյ ի Քրիստոս. բարեկամիդ ճշմարտի եւ սիրոդիդ օգտից Միածնաիջի Աթոռոյս մերոյ սրբոյ և վշտակիր ազգի, Ցեառնդ Պղատոնի Արհիապանծ Եպիսկոպոսիդ, եւ արժանավայելուչ վերադիտողիդ Կայսերապերճ մայրաքաղաքիդ մեծի Մոսկովու եւ Կալուգոյ. եւ սրբաղնադունեզի Սինօթին օրհնեցելոյ ազդիդ Ռուսաց՝ արժանաժառանգ դահակալիդ. եւ սրբանուէր Արքիմանդրիտիս սրբոյ երորդուԹեան հրաշազարդ վանից՝ սրբոյն Սարգսի սքանչելագործին։ Որում եւ դիտութիւն լիցի։ Զի Թէ զի՞նչ էանց ընդ տունս Արարատեան. եւ ընդ Աթոռս մեր սուրբ և ընդ մեզ, դիտեմ՝ զի լուեալ իսկ էք. քանզի միջոցք անցին ահա յոլովք, յորմէհետէ ձախորդութիւնքն այնոքիկ ընդ երկիրս մեր և ընդ մեզ անցին և արդ եւս չէն պակաս նոյնպիսիք, որովք կամք պաշարեցեալք։ Եւ յանցանելն ընդ մեզ վշտացն այնոցիկ ասացելոց, երանելի Հայրապետն մեր Ցէր Սիմէօն սրբազան կաթողիկոսն դիպեցեալ երկար իմն հիւանդութեան փոխեցաւ առ Ցէր. եւ մերս նուաստութիւն կոչեցեալ եղեւ ի յայս պատիւ. Թէպէտ և չէաք իսկ սմին բաւական։ Իսկ առ կենդանութեամբ նոյն Հոդելոյս Հայրապետին մերոյ՝ լսեաք և իմացեալ զգերազանցութիւն սիրոյ յարգելի եղբայրութեան ձերոյ առ նա՝ եւ զնուիրեն առ ձեզ. տեսանէաք և զերթեւեկս սիրանիշ Թղթոց ձերոց առ միմեանս։ Իմանայաք եւ

ղճշմարիա սէրն եւ զնանման ձեր որ առ Միածնաէջ Աթոռս սուրբ՝ եւ առ մերազնեայսն ամենայն որք յայդր եւ առ հոգեւոր այցելուն դոցա և նուիրակն մեր Ցովսէփ Արք.եպիսկոպոսն։ Որում մանաւանդ ցուցեալ էիր զմեծադոյն սէր եւ զընդունելութիւնս, ղշահեցուցութիւնս և զմխիթարութիւնս և զբաղումս եւս ի յոյնս յորդորեալ, թէ բանիւ յայդր եւ թէ գրով ի կայսերապերճն Պետրպօլիք, յանձն առնելով զնա սրբազան արք եպիսկոպոսաց եւ գերապատիւ իշխանացն մեծաց որք անդ։ Ցորոց գաեալ էր նա զմեծամեծ օգուտս ինքեան եւ սրբոյ աթոռոյս եւ ազգի մերոյ. մանաւանդ վշտաբեր ժողովրդոյն նոր նախիջեւանու։ Ընդ որս ամենեսեան հոգեկոյս Հայրապետն մեր շնորհակալ լինէր յոյժ ղձերմէ եղբայրութենէ. և դոհունակութեամբ պատմէր ամենեցուն, որ ահա այժմ եւս պատմին ի սուրբ Աթոռոջս համայն բարերարութիւնք ձեր և սիրոյ ճշմարտութիւն, և եւս պատմիցոց են։ Վասնորոյ և մեզ պիտոյ էր թէպէտ ի յաջորդելն մերում գրել զդիր սիրանիշ և որպիսայայս առ յարդելի եղբայրդ մեր՝ (ըստ որում սիրոյ ես միշտ օգտից Աթոռոյս մերոյ սրբոյ, և զսորին որպիսութեանց դիտել ցանկաս.) բայց ոչ եղաք մինչև ցարդ ձեռնհաս. ի պատճառն խուժանացն սաստկագունից, որք ի վերայ մեր կուտեցան ցայժմ, զորոց ազդեալ իցէ ձեզ Թերեւս որդին մեր Ցովսէփ Արք Եպիսկոպոսն (մինչ եկեալ է յայդր վերստին ի յօծանել զնորաշէն եկեղեցին մերազնէից տեղւոյդ.) կամ թէ ազդիցէ։ Իսկ այժմ՝ մինչ քանիցս ընկալաք զթուղթս ի նոյն Ցովսէփայ Արք Եպիսկոպոսէ որդւոյն մերմէ՝ յորս ամենեսեան գրէ զնոյն շնորհակալութիւնն՝ (որպէս և առ հոգեկոյս Հայրապետն մեր.) հանդերձ այլ եւս նորոգ սիրով և բարի ակնարկութեամբք քովք՝ զորս ցուցանես նմա՝ և ամենից իսկ մերայնոցն, վասնորոյ՝ հարկաւորեցաք մեք այժմ ի ձեռն այսր սիրածիր թղթոյ նախ զշնորհակալութիւնս մատուցանել քումդ սրբազնութեան յաղագս այդպիսւոյ բազմապատիկ սիրոյ և բարեկամութեան ձերոյ, որք լեալ են առ մեզ և լինին. և երկրորդ ի խնդրել ի քումմէ յարդելի եղբայրութենէ՝ զի և առ մեզ ունիցիս զնոյնս որպէս և առ հոգեկոյս Հայրապետն մեր և յաւուրս մեր եւս առ սուրբ Աթոռս՝ ե. առ մերայինսն, և առ Ցովսէփ Արք Եպիսկոպոսն առ ի միխիթարութիւն յոգնավիշտ անձին իմոյ։ Արդ վասն միւնչեւ ցարդ ցուցեալ սիրոյդ և բարերարութեանցդ և խնամոցդ, որ առ մերայինսն՝ ունիմք արդարեւ ըզշնորհակալութիւնս յոյժ յոլովս զձերմէ սիրելութենէ, հանդերձ բոլոր միաբանիւք սբրոյ Աթոռոյս. և չունելով ինչ հատուցանել քեզ ի փոխարէն այդոցիկ ի յԱստուծոյ միայն հայցեմք, զբազմապատիկն այդոցիկ բարութեանց առ ի քէն եղելոց՝ չափել ի հոդիդ քո. և առաւելապատիկ երջանկութեամբ առաւել ևս զքեզ պայծառ և երեւելի առնել յաշխարհիս յայսմիկ և ի հանդերձելումն։ Եւ պահել միշտ ի բարօրութեան և ի հոգեզուարճ խնդութեան՝ հանդերձ ամենայն քեզ յանձնեցեալ հօտիւդ Տիրական։ Որև զգթառատ մայրն ողորմութեան զյաւուկ խնամարկուն սրբոյ Աթոռոյս և մեր՝ և ամենայն ազգիս մերոյ, յորմէ ընկալաք եմք միւնչեւ ցարդ զխնամս մեծագոյնս և զողորմութիւն՝ և եւս ակն ունիմք ընդունելոյ զինքնակալուհի և զՕգոստինէ մեծ կայսերուհին Եկատերինէ, և զաստուածապարգեւ Որդին իւր և զթոռունան և զամենայն ժառանգորդս կայսերութեան պահեսցէ երկար ամօք և խաղաղական կենօք, ահարկու իշխանութեամբ և ամենափառաւոր Տէրութեամբս. օրհնելով զիւրապարգեւ Տէրութիւն դոցին, և եւս առաւել բարձրացուցանելով՝ առ ի ցնծութիւն մեզ տառապելոցս։ Իսկ արդ զի կարօտ եմք մխիթարութեան յամենայնի, վասնորոյ խնդրեմ մխիթարել զցաւակիր եղբայրս ձեր ի ձեռն ճշմարիտ եղբայրականի և սիրանիշ թղթոյ. և առ սուրբ Աթոռս մեր և առ մերայինսն ամենայն զնոյն խնամադ ցուցանել, մարդասիրելով յամենայնի և զՑովսէփ Արք Եպիսկոպոս որդին մեր՝ որպէս մինչեւ ցարդ։ Որովք կացուսցես զմեզ առաւել եւս շնորհակալս զձէնջ և պարտականս մշտական սիրոյ։ Ողջ լեր ամենայն խաղաղութեամբ, պերճացեալ յարաժամ Հոգւոյն Ամէն։ Գրեցաւ յամի փրկութեան մերոյ 1782 ի Ցունուարի ի լուսա-

կերա Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

Ողջոյն սամ կարօտիւ բազմաւ և ուրով ամենասուրբ Հոգւոյն Համայն ընդ ձեռամբ քով եղեալ Սրբազան մեծապատուոց, շնորհազարդ Արհի եպիսկոպոսաց. Աստուածարան վարդապետաց, և ամենից կարգաւորաց։ Զորոց սիրոյն և գմարդասիրուԹեանցն զորս ցուցեալ են և ցուցանեն առ որդին մեր Յովսէփ Արք եպիսկոպոսն ունիմ գՀնորհս եւ հաս զնոյնս Հայցեմ առնա՝ և առ մեզ, և առ Աթոռս Միածնաէջ և առ մերայինսն ամենայն ցուցանել միշտ Զորս և ինքեանք ի ցեառնէ ընկալցին։



Թուղթ առ գաբրիէլ արք եպիսկոպոսն

Պետրպօլքու, նոյնպէս վասն անցից սրբոյ Աթոռոյս, եւ սէր՝ եւ շնորհակալուԹիւն վասն առ սուրբ Աթոռս սիրոյն, եւ ունելոյն ի սէր զՅովսէփ վարդապետն, որպէս եւ Պլատոնին գրեցաւ։


Թուղթ առ Ինօքէնդի Արք եպիսկոպոսն Պսկովսկու, եւ գահակալն սինօդին Ռուսաց ըստ ժտաց վերոյգրեալ թղթոցդ։ Նոյնպէս զորպիսուԹեանց մերոց, եւ շնորհակալուԹիւն եւ յորդորումն ի սէր։

Թուղթ առ Սամուէլ Արք եպիսկոպոսն Ռոստովու ի Մոսկով. որ եւ սէր գահակալ Սինօդին, նոյնպէս զմերոց որպիսուԹեանց. եւ շնորհակալուԹիւն վասն առ սուրբ Աթոռս եւ առ մերայիսն ունեցեալ սիրոյն. խնդիր ի նոյնս մնալ։

Թուղթ առ Տիգրանակերտու Առաջնորդ գարապետ վարդապետն, ի պատասխանի ի ղեկտ. ԺԵ գրեալ թղթոյն։ Վասն Աթախու վանիցն, եւ մեր նուիրակին, եւ զմերոց որպիսուԹեանց եւս գրելով։

Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն, ի պատասխանի, ծանուցանելով զհասանիլն աստ Հնգից թղթոց իւրոց, եւ զգալն Պետրոս վարդապետին. եւ ոմանց գրեցելոց իւրոց զպատասխանիս ինչ համառօտս գրելով. եւ խոստանալով գրել յետոյ զլիապէսն, հանդերձ համայն պատասխանեօք Պետրոս վարդապետի ընդեալ թղթոցն, եւ իւր խնդրեալ թղթովքն։

Թուղթ ի Բասրա, առ Էմինիազեան նորոգ հանգուցեալ մահտեսի Յարութիւն աղայի որդի Ստեփաննոս Աղայն, միխիթարուԹիւն վասն մահուան հօրն։ Եւ վասն Շօռլթեցի հանգուցեալ Ղազարի կայիցն ըանս գրեաց առ Բեթղէհէմեան պարոն Յովհաննէսն որ է անդ գործակալ սրբոյ Աթոռոյս, սմա եւս գրեաց՝ զի հոգ տարցէ այնմ, որպէս եւ լուսահոգի Հայրն ջանայր հոգալ՝ եւ թերի մնաց։ Եւ այլ ըանք սրտաղիւրուԹեան վասն ազատիլոյն ի Շիրազու, եւ այլ առ սոյնս ըանք։



Թուղթ ի Բասրա. առ սրբոյ Աթոռոյս վէքիլ եւ գործակալ Բէթղէհէմեան պարոն Յովհաննէսն. յիշելով զառաջին թուղթն, որ գրեցաւ անդ ի ՌՄԼ. ի մարտի ԺԵ եւ վասն մահուան Մահտեսի Յարութիւն աղային սմա եւս միխիթարուԹիւն։ Եւ վասն ընչից Շօռլթեցի Ղազարին, զի ջանասցեն սրբոյ Աթոռոյս հասուցանել տալ. կամ զսրին քաժինն անդ հանել՝ եւ հասուցա-

նել աստ։ Եւ վասն նուիրակին եւս բանք. որպէս եւ ի թղթոջն, որ ի վերոյ։

Ցորմէ ժամանեցի . . . և այլն։

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտասջիր սիրելիդ մեր՝ և օգտաջան որգի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յանցեալ ՈՄԼ թուոջ մերում և ի մարտի ԻԵ, գրեցաք զթուղթս ի յայդ կողմունսդ, ընդ որս և առ. սիրելիդ մեր. և առ. Հոգելոյս Մահաեսի Ցարուեթիւն Աղային. և ծանուցաք զանցսն և զորպիսութիւնն սրբոյ Աթոռոյս. և զփոխիլն առ Քրիստոս Հոգելոյս Հայրապետին մերոյ. և զմեր յաջորդիլն։ Որք և հասեալ իսկ են առ ձեզ որպէս և իմացեալ եմք։ Սակայն ի ձէնջ ոչ ընկալաք մինչև ցարդ զթուղթս։ Եւ զոր ինչ յառաջագոյն գրեալ էիք առ Հոգելոյս Հայրապետեան մեր. գու և լուսահոգի Մահաեսի Ցարուեթիւն Աղային՝ յաղագս արդեանց սրբոյ Աթոռոյս՝ և այլ հարկաւոր բանից և գործոց սորին որք յայդ կողմունսդ են. զայն թուղթսն ձեր մեք տեսաք և ընթերցաք. և զոր ինչ հարկ էր և ի դէպ վասն այնոցիկ գրել ձեզ յայնժամ գրեցաք. յորոց զոր ինչ հոգալին էր, ի հարկէ մինչև ցարդ հոգացեալ էք. կամ հոգալոց էք։ Իսկ յայնժամ՝ թէպէտ խոստացաք գրել ի կողմունսն հնդկաց և յայդր զթուղթս. սակայն ահա և գուք լուեալ էք ի հարկէ, թէ ո՞րպիսի ձախորդութիւնք պատեցին զմեզ մինչեւ ցարդ, յաղագս պնասակար շարժմանց և արարմանց խորհրդոց սրբոյ Աթոռոյս. որոց սակս մինչեւ ցարդ վրդովեալք կային մեծն Պօլիս և այլք տեղիք. զորս ի հարկէ գրեալ են ձեզ ի Պօլսոյ։ Եւ մեք յաղագս այսոցիկ կայաք վրանեալք և պաշարեալք. մանաւանգ և անհանգիստ ի թղթագրութիւնս յորոց ոչ բանայաք երբէք զաչս, զի և յայդր կողմունսդ գրեսցուք զթուղթս։ Իսկ այժմ հաստի թէ վերջացաւ վէճն որ ի Պօլիս, և եղեւ խաղաղութիւն. և մանաւանդ մեր դարձաւ ի մեծէն Պօլսոյ, բերելով զԸրբուն նական հրովարտակսն որք վասն մեր, և զայժ բազում թուղթս. որովք կամք այժմ ղրազեալք. և գրեմք զպատասխանիս նոցին յամենայն տեղիս՝ ըստ որում և հարկ էր վասնորոյ այժմ եւս տակաւին ոչ եղաք ձեռնհաս գրել զթուղթս ինչ ի հնդկաց կողմունսն։ Բայց ի մեծէն Պօլսոյ գրեալ էին մեզ զփոխիլն առ Քրիստոս լուսահոգի Մահաեսի Ցարուեթիւն Աղային. որ եղեւ մեծ կսկիծ և ցաւ։ Զի յայնի էր ամա՝ թէ որքան պիտանի էր և օգտակար հասարակութեան, մանաւանգ սրբոյ Աթոռոյս մերոյ. զոր ամա գու իսկ լաւապէս գիտես։ Որոյ զհոգին Ցէր լուսաւորեսցէ. և զվարձս բարիս ըստ բազմեզանակ հարազատութեանն իւրոց, որ առ սուրբ Աթոռս՝ հաստուսցէ նմա ի յանանց կեանսն. և հանգուսցէ զնա յարքայութեան իւրում ընդ սուրբս իւր։ Եւ զորգի նորին Սահփանոս Ազային և զամենայն ընտանիսն՝ հոգւովն սրբով մխիթարեսցէ. և պահեսցէ անփորձս ի չարէ։ Եւ գլուխ սիրելւոյդ մերոյ եւս ողջ լիցի. և զքեզ եւս մխիթարեսցէ Ցէր. և փարատեսցէ ի ձէնջ յամենեցունց զամենայն արամութիւնս ձեր։ Ահա առ Պարոն Սահփանոս Ազային եւս գրեցաք զթուղթ օրհնութեան և մխիթարութեան՝ որպէս տեսանելոց ես։ Իսկ վասն Շօռօթեցի հանգուցեալ Ղազարի ընչիցն այսպէս գիտացես սիրելիդ մեր։ Զի ահա զայն իսկ գիտես, որ հոգելոյս Հայրապետեան մեր քանիցս անգամ գրեաց յայդր լուսահոգի Մահաեսի Ցարուեթիւն ազային, թէ որովհետեւ անյիշատակ է նա՝ ինչք նորին ի սուրբ Աթոռս պարտին հասանիլ։ Եւ նա գրէր ղպատասխանին, եւ խոստանայր գրել յետոյ զվիճն որպիսութիւն։ Իսկ յանցեալ ՈՄԻԹ թուոջն զթուղթս էր գրեալ առ հոգելոյս Հայրապետեան մեր. և զհանգուցեալ Ղազարի կտակագրի օրինակն յղեալ. ընդ որում գոյր եւ ի քէն թուղթ. որք յետ վախճանի Հոգելոյս Հայրապետին մերոյ առ մեզ հասին. եւ մեք ընթերցեալ հասու եղաք գըրեցելոցն ի նոսա, եւ իմացաք որ՝ Ղազարն ղլուսահոգի Մահաեսի Ցարուեթիւն Ազան է կարգեալ իւրեան բանակատար։ Եւ ինքն Մահաեսի Ցարուեթիւն Ազգն խոստացեալ էր ի նոյն ասացեալ թղթոջն թէ՝ երբ որ վճիռն հասցի, ես ղբաժինն սրբոյ Աթոռոյդ հասուցանելոց եմ ձեզ։ Եւ մեք գրեցաք ղշնորհակալութիւն ի նոյն վերոյիշեալ թղթոջն մերում, զոր գրեցաք առ լուսահոգին

ի ՌՄՆ, և ի մարտի ծԹ։ Զոր ի հարկէ և գու տեսեալ եւս։ Իսկ որպէս յառաջ Զաքարիա վարդապետն մինչդեռ պատրիարք էր ի Պոլիս, սուա վարիս էր ձևացուցեալ ղՄկրտիչ ոմն, որ ոչ էր ընաւ վարիս. որպէս լուաք ի բազմաց հաւաստի գիտողաց, և նորա անուամբն զսուտ թուղթ շինեալ՝ յղեալ էր յայդր, այնու գիտմամբ, որ զայն ինչան քաշէ այտի առ. ինքն, և առնիցէ ըստ կամացն, նոյնպէս և այժմ նոր պատրիարք Ցովհաննէս վարդապետն կամի զայն բանն փոխել, և ինքն այլ իմն կերպիւ հնարս հնարել և մէկ կերպ թուղթ շինել և յղել յայդր, որպէս դի՛ զայն ինչան առ. ինքն քարշեսցէ. և ըստ կամաց իւրոց զինչ և կամիցի՝ առնիցէ, թէպէտ ըստ երևելոյն մէկ կերպ բան է սահմանեալ թէ՝ Ե բաժին պիտի առնեմ, որ մէկն սրբոյ Էջմիածնի լինի, մէկն սրբոյ Երուսաղէմի, մէկն ինձ, և երկուքն Լմայ և Կոստղու Անապատացն։ Այլ ես զայս ասեմ թէ՝ որպէս Զաքարիա պատրիարքի արարեալն սուտ էր, որ այն Մկրտիչն վարիս չէր, և նա եւս մեռաւ ամենևին անզաւակ և անյիշատակ՝ որ ոչ ոք կայ նմա մերձաւոր և ազգական՝ թէ և ստոյգ վարիս լինէր. նոյնպէս և այս նոր պատրիարքի կամեցեալն եւս է սուտ. զի երկուքն եւս՝ այսինքն թէ հին պատրիարքի և թէ նոր պատրիարքի կամքն միևնոյն է։ Զի որպէս նա կամէր կերպիւ մի առ. ինքն քարշել զայն ինչն, նոյնպէս և սա։ Եւ զայսոսիկ առնելով՝ թէ հինն և թէ նորն, կամին զինքեանս գլուխ ազգի ցուցանել, և իշխող հաստատութեան, ոտնակոխ առնել կամելով զպատիւն սրբոյ Աթոռոյս՝ և Հայրապետական իշխանութեանն սուրա, և որպէս թէ զկաթողիկոսական իշխանութիւնն ի ներքոյ հրամանաց արկանել. ինքեանք գոլով անհաստատ և փոփոխական, որ ահա մինն հանեցեալ ի պատրիարքութենէն՝ միւսն էառ զտեղին. և սկսանի զառաջնոյ արարեալն եղծանել որ վասն այդ ընչիցդ էր՝ և ինքն ղայլ բան հնարել, այն եւս անհիմն. իսկ՝ զսրբոյ Աթոռոյս և զսորին Հայրապետի բացարձակ իշխանութիւնն կամին խափանել՝ և ի ներքոյ հրամանաց իւրեանց կացուցանել։ Որք և վասն այսր դիտման իսկ էր, որ յայս երկուս ամս զմեզ և զսուրբ Աթոռս անհանգիստ արարին մինչեւ ցարդ։ Այսպիսի խղճմտանաց տէր են ահա. և զայդ բանգ եւս նոյն խղճմտանօքն տնօրինեն։ Ապա թէ խղճահարութիւն լինիցէր ի նոսա, գիտէին ահա՝ թէ Հոգելոյս Հայրապետն մեր զինչ է գրեալ յայդր վասն այն ընչիցն. զի՞րդ իշխէին ապա զայնպիսի սուտ բանս հնարել և գրել յայդր ընգդէմ նորին գրեցելոյն։ Ահա նշան ինքնագլխութեան, որ զայնպիսի ինչ կամին առնել և առնեն, որ ոչ է իրեանց գործ. մանաւանդ և ներհակ եւս՝ կաթողիկոսի աբարեցելոյ։ Լուեալ են և ըզնոյն հանգուցեալ Ղազարի կտակի որպէսն, ահա և զայն եւս կամին եղծանել՝ որպէս և զհրամանն կաթողիկոսին։ ԵՒ զիւրեանց կամեցեալն յառաջացուցանել։ Այսպիսի է նոցին խղճմտանքն։ Լուեալ եմ և զայս ևս, որ ով ոք զնոցին շինեալ թուղթն կնքեալ է, կամ վասն այդ բանիդ գրեալ է յայդր կամ յայգ կողմունգ ձեզ կամ այլոց թէ այգ ինչքդ պարտին աստ հասանիլ, նոցա ամենեցուն բաժին են խոստացեալ. և ամենեքեան նոքա՝ նոյն ախտաւոր մտօքն ախտացեալ՝ հետևեալ են նոցա. և զսուտ թուղթըն նոցա՝ կնքեալ. և զբանս վկայութեան վասն այնմիկ գրեալ յայդր. և յայտնապէս փոխանակեալ զճշմարտութիւնն ընդ ստութեան։ Իսկ նոր պատրիարքն որ հին պատրիարքի արարեալն եղծանելով՝ ինքն զնոր կերպ հնարէ (որպէս ի վերոյ ասացաք,) որ տանի զայն ինչն այտի. նա եւս այսու վստահութեամբ առնէ, իբր թէ՝ ի հնգբստան, թէ ի Բասրա, թէ յայլ տեղիս եղեալ իշխանքն ինձ բարեկամք են և սիրելիք. ես նոցա կու գրեմ և տեղս բերել կուտամ։ Ահա տես թէ ո՞ւր հաստնի բանն. որ իւր բարեկամ իշխանօք զիւր հրամանն յառաջացուցանէ, իսկ զհրամանն Հայրապետին և զկաթակ մեռելոյն եղծանել ջանայ։ Ուրեմն քեզ սիրելի որգւոյդ իմոյ զայս գրեմ այժմ. զի Աստուծով զօրացեալ պարոն Ստեփաննոս Աղային եւս զայս գրեալս մեր ծանուսցես, որում և մեք համառօտ գրեալ եմք. և ի միասին հոգ տալոյիք բանիդ այգմիկ. և այն իսկ լիցի ձեր ջանքն, որ չթողուցուք ընգ վայր կորնչիլ այդ ընչիցդ՝ մանաւանդ ընդ այլ ամենայն օրհնեալ և Աստուածաղօր իշխանացն տեղւոյդ եւս խօսե-

ցեալ իրաւունս արասջիք վասն Աստուածոյ եթէ արժա՞ն է արդեօք լսել այնպիսեաց սուտ թղթոց և բանից՝ զշմարտութիւնն թո-ղուլ, եւս առաւել ընտրեցէք և ղայս արգար իրաւամբք և ուղիղ մտօք, եթէ վայելէ՞ արգեօք որ միոյ եպիսկոպոսի իշխանութիւնն ի վերայ բոլոր աղգի միոյ անցանիցէ, և հրամանն յառաջանայցէ, իսկ գերարարձր իշխանութիւն սրբոյ Աթոռոյս և ի սմանէ-սոզ ընդհանրական կաթողիկոսին ի խոնարհ անկցի և հրամանն եղծանիցի։ Արդ՝ թէ և նոքա կամ պլլը զայսպիսիս խորհին, առ ի խոնարհեցուցանել զեղբիւրն հոգեւոր իշխանութեան սրբոյ Աթոռոյս և Հայրապետի սորին, գուք զօրացեալքդ Աստուծով՝ որք ի հաց և ի նախնեաց հետէ հարազատք էք լեալ սրբոյ Աթոռոյս, և զպատիւն և զիշխանութիւնն սորին և ի սմա նստօղ Հայրապետին պահեալ էք ի վերոյ և ի յարգի, այժմ զի՞րդ էք թուլատրելոց անկանիլ ի ստոր և ի խոնարհ։ Ո՞չ ապաքէն այսօր գուք էք ի տեղի լուսահոգի նախնեացն ձերոց (զորս պահեսցէ աէր անփորձ և անսասան կենօք.) ապա որպէս նոքա յիւրեանց ժամանակին պահեալ են զպատիւն սրբոյ Աթոռոյս և Հայրապետի սորին՝ (որոց ըզհոգիսն աէր լուսաւորեսցէ.) նոյնպէս եւ գուք ի ձեր ժամանակս պարտիք զնոյն զայրկեթն ունիլ, և նոյն սիրովն վառիլ առ սուրբ Աթոռս և առ մեզ. և ոչ կամիլ բնաւ զի պատիւն սորին և մեր անկցի ի խոնարհ։ Արդ ուրեմն զոր ինչ վասն այգ բանիգ գըրեալ են յայգր ի Պօլսոյ՝ և կամ գրելոց են, անօգուտ համարեցարուք. ըստ որում ախտաւոր մտօք են՝ որպէս ասացաք։ Իսկ զոր ինչ մեք այժմ գրեմք ձեզ ճշմարտութեամբ և արգարութեամբ՝ այսմ հետևեցարուք, և ըստ այսմ հոգալ ջանացարուք։ Արդ՝ հոգելոյս Հայրապետն մեր զոր ինչ գրեալ էր յայգր յառաջագոյն՝ որպէս ասացաք ի վերոյ, մեք եւս զնոյն գրեմք այժմ սիրելեացդ մերոց, զի այդպիսի անյիշատակ և նշանաւոր ննջեցելոյ ինչքն՝ ի սուրբ Աթոռս պարտին հասանիլ։ Բայց ըստ որում նոյն ի Քրիստոս հանգուցեալ Ղազարն իւրով ձեռագիր կտակաւն աէր է կացուցեալ ընչիցն իւրոց ղլուսահոգի Մահտեսի Ցարութիւն Ազայն. զի որպէս և կամիցէ՝ այնպէս տնօրինեսցէ ի յօգուտ հոգւոյն իւրոյ. ապա ունէր իշխանութիւն մահտեսի Ցարութիւն Ազայն, ըստ հրամանի կտակագրին, զի պլլոց վանորէից և եկեղեցեաց եւս՝ որոյ ինքն կամիցէր, հանիցէր ի նմանէ զբաժին՝ որպէս և տեսանիցէր պատշաճ, իսկ մինչ նա եւս առ ցէր փոխեցաւ, ահա Աստուծով զօրացեալ որդին իւր կայ ի տեղւոջ նորին, (զոր աէր պահեսցէ անփորձ.) այժմ նոյն կտակագրի և ընչից իշխանութիւնն գործին է՝ արդար իրաւամբ, Ուրեմն՝ գուք և օրհնեալ իշխանք քաղաքիդ նախ զայն ջանացարուք, զի հանիցիք զայն ինչսն ի ձեռաց Ինկլիզաց. զորս և պարոն Սահմանոս Ազայն ունիցի առ ինքն. և նախապէս մեզ գրեսցիք զորքանութիւնն, և զայն եւս թէ՝ որոց վանորէից կամ տեղեաց կամիք գուք հանել զբաժին յայսմանէ, և ո՞րքան։ Որպէս զի՝ մի լիցի առանց մերոյ գիտութեան։ զի մեք եւս գիտեմք զպատշաճն և զարժանն իւրաքանչիւր տեղեաց։ Եւ յորժամ զգրեալն ձեր գիտասցուք, մեք եւս գրելոց եմք ձեզ զոր ինչ պարտն և պատշաճն իցէ յայնժամ, զի և գուք այնպէս արասջիք, հասուցանելով գսրբոյ Աթոռոյս բաժինն մեզ՝ ըստ իւրոյ պատուոյն և արժանւոյն, և զայլոցն առ ինքեանս՝ ըստ իւրեանց պատշաճին։ Արդ՝ որ ասացեալ են ձեզ տեղւոյդ Ինկլիզքն թէ՝ ձեր ազգի գլխաւորի և իշխանաց թղթովն պիտի յանձնեմք ձեզ և կամ ում պարտն է, զկայսն Ղազարին, զայս լուեալ են ի հարկէ ոմանք, որ ազգի գլխաւոր ձևանալով՝ գրեն յայգր զինչ և կամին։ Այլ գուք հարազատ որգիքդ սրբոյ Աթոռոյս՝ կարէք ծանուցանել դոցա ողջմտութեամբ զճշմարտութիւն բանին, որք և ինքեանք իսկ չեն անտեղեակ, զի գիտեն ի հարկէ ի պատմութեանց և ի գրեանց իւրեանց զսրբոյ Աթոռոյս և զսորին գահակալի պատիւն և զծուխիւնն։ Եւորս թէ պատշաճ իցէ վասն այսր բանի գրել մեզ զթուղթ, և հարկն ստիպիցէ, ծանուսջիք մեզ զի գրեսցուք. գրելով եւս թէ ո՞ւմ պարտի գրել. և զանունն, և զպատիւն, զի և մեք ըստ այնմ գրեսցուք։ Որպէս զի՝ որովս բանիւ և ձերդ խորհրդով լինիցի՝ որինչ լինելոցէ

կայքն հանգուցեալ Ղազարին, և ոչ յայլոց ձեռս անկցի՝ որք հեռի են ի տեղւոյդ, և չեն իշխողք ձեզ հոգևոր կամ մարմնաւոր. և զԼապարն ևս չգիտեն ընաւ: Զի տեզւոյդ օրհնեալ իշխանացդ միայն վայել է այդ բարիդ հետևիլ, որովհետև տեզւոյդ բանն է. և մեզ՝ որ շնորհօքն Աստուծոյ հոգևորապէս իշխեմք ձեզ և օրհնեալ ազգիս մերոյ: Ուրեմն գուք հոգացէք զայդ բանդ որպէս գրեցաք, զի հոգացողութիւնն դորին ձեր է, և ձեր բանն է այդ. զոր յայժ բարւոք առնէք՝ թէ ձեր ձեռօքդ և մերս գիտութեամբ հոգայցէք, քան թէ յայլոց ձեռս արկանիցէք զայդ ինչդ՝ որպէս ախորժեն նոքա: Որովք՝ շահէք նախ զհոգի հանգուցելոյն, և զհրամանն կտակին առնէք անեղծանելի, զպատիւն սրբոյ Աթոռոյս և իւրոյ գահակալին պահէք սիւրում պայծառութեանն՝ և ոչ արկանէք ի ներքոյ հրամանաց ստորադրելոց իւրոց, և զրարի ջանն լուսահոգի մահտեսի Ծարութիւն Ազային հանէք ի գլուխ, որ այնքան ջանաց վասն այդ բանիդ, և դուք ևս արժանանայք վարձուց բարեաց Աստուծոյ՝ նաև շնորհաց սրբոյ Աթոռոյս և օրհնութեան մերոյ: Իսկ թէ յայն տեղն հասցի բանն՝ որ նոցա իցէք հասուցանելոց զայն ինչն. ապա՝ զսրբոյ Աթոռոյս բաժինն ըստ իւրոյ պատշաճին և վայելմանն վեր առեալ լիապէս, դուք հասուսջիք մեզ ձեռովդ իշխանութեամբ. և մի արկանիցէք ի ձեռս նոցա: Թաւ է որքան առ այս: Եւ որպէս և առնելոյ լինիցիք, շուտով ծանուսջիք մեզ: Եւ զպատասխանի թղթոյս շուտով գրեսցես մեզ՝ հանդերձ այլ մեզապատշաճ որպիսութեամբդ: Մանաւանդ՝ զնուիրակէն մերմէ Գրիգոր վարդապետէն ևս գրեսցես. թէ այժմ ո՞ւր է, և ո՞րպէս գայ. զի շատ ժամանակ է՝ որ ի նմանէ զթուղթ ոչ ընկալաք, և չգիտեմք ևս թէ ո՞ւր է: Որ թէ եկեալ իցէ յայդր, և կամ եկեսցէ, յամենայն կողմանէ օժանդակ և ձեռնտու լիցիս, և շահեսցես և մխիթարեսցես: Ահա և առինքն զթուղթ մի գրեալ՝ առ քեզ յզեցաք. զոր հասուսցես առինքն: Այլև գրեալ էր մեզ այժմ ի Պոլսոյ Մինաս վարդապետն թէ՝ Մարգար Աղայն վասն իւր տալեացն դրեալ էր մահտեսի Գալստանին՝ զի տացէ մեզ. և նա ասաց թէ՝ յետ քանի աւուրց լինի թէ առմ: Արդ՝ թէ տացէ, լաւ է. և թէ ոչ, ձեզ դրելոցէ Մինաս վարդապետն. դուք տեղդ հոգ տարեալ առջիք զայն ի պարոն Մարգար Աղայէն, և մեզ դրեսջիք: Եւ դուք ըստ հարազատութեան քումդ ընկալցիս զվարձս յԱստուծոյ. զԸնորհս ի սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս ի մէջ Ամէն: Ի ՌՄԼԱ. ի փետրվար: Այլև՝ ահա առ սիրելին մեր պարոն Մարգար Աղայն ևս գրեցաք զթուղթ մխիթարութեան վասն մահուան ամուսնոյն իւրոյ. և զտալեաց բանն ևս յիշեցաք, զի թէ մահտեսի Գալստանն ի Պօլիս չտայցէ զայն, և Մինաս վարդապետն գրեսցէ ձեզ յայդր, ինքն տեղդ տացէ քեզ զտալիսն իւր մեզ, որէ ԱՃՂԻ Թուման, զի ՋԾԸ Թումանն մեզ հասուցեալ յառաջ: Եւ որպէս և լինիցի՝ գրեսցես մեզ: Կրկին ողջ լեր ի տէր: Ծազմաւ սիրով՝ և շնորհիւ սրբոյ հոգւոյն տեղւոյս Քրիստոսի, ողջոյն և օրհնութիւն տամ համայն աստուածով զօրացեալ և բարեպաշտօն իշխանացն տեղւոյդ: Ծորոց յամենեցուն և խնդրեմ իսկ, զի ամենեքեան ջատագովք լիցին հանգուցեալ Ղազարի ընչից բանին. առ ի հանել ի յինկլիզացն. և ըստ գրեցելոյս մերոյ ի թղթոջն՝ և ըստ հրամանի կտակագրին առնել: Եւ արդար իրաւամբ և ուղիղ դատողութեամբ, զպատիւն սրբոյ Աթոռոյս և սորին գահակալին պահել ի վերոյ և յիւրում արժանավայելուչ բարձրութեանն. որպէս և լուսահոգի հարքն և նախնիք իւրեանց պահեալ են և ոչ կամիլ բնաւ, զի անկցի ի ներքոյ հրամանաց ստորադրելոց իւրոց: Որք և այսպէս առնելով՝ եղիցին օրհնեալք և զօրացեալք ի Ցեառնէ, և յանձնեցեալք ի խնամս և ի գթութիւնս նորին յարժամ, ընդունելով և զշնորհս ի սրբոյ Աթոռոյս՝ և զօրհնութիւնս ի մէնջ հանապազ: Ամէն:

Թուղթ առ Հնդկաց Առաքելական Գրիգոր վարդապետն, յիշելով զառաջին գիրն՝ որ գրեցաւ առ նա յանցեալ ամին ի մարտի ԺԵ եւ թէ՝ ի վաղուց հետէ ի քէն ոչ է եկեալ գիր, եւ ուր լինիլդ եւս չգիտեմք։ Ծանոյց եւ զՂազարի ընչից քանն, թէ զի՞նչ գրեաց այժմ առ Բեթղէհէմեան Յովհաննէսն՝ եւ Ստեփաննոս աղայն։ Եւ պատուէր զի թէ ինքն անդ հանդիպեսցի, իմասցի զերկարապէսն ի գրոյ Յովհաննիսին. (որ ահա ի վերդ է.) եւ հոգ տարցէ այնմ ինքն եւս։

Թուղթ ի Բաղդատ, առ Խալդարեան պարոն Մարգար Աղայն, ծանուցանելով զգրելն առ ինքն զթուղթ յանցեալ ամին ի Մարտի ԺԵ, եւ մխիթարութիւն վասն մահուան ամուսնոյն իւրոյ՝ որ էր դուստր Էմինազեան մահտեսի Յարութիւն Աղային։ Եւ վասն իւր տալեացն թէ՝ գրեալ ես նորապէս մահտեսի Գալստանին, եւ նա ասացեալ է թէ լինի թէ տամ, եթէ ոչ տացէ, Մինաս վարդապետն գրելոց է ծեզ յայդր՝ դու տեղդ տացես Բեթղէհէմեան պարոն Յովհաննիսին։ Եւ յորդորումն եւս ի սէր եւ ի հարազատութիւն։

Թուղթ առ Մեծին Պոլսոյ նուիրակ Մինաս վարդապետն վասն վերոյգրեալ թղթոցդ Բասրայու թէ ահա յղեցաք նոյնպէս եւ Հալապու որք զոն յառաջ կոյս ի 485, 486, 465, եւ ի 657 համարսն. եւ նաեւ քանի թղթոց յԱտրանապ զըրեցելոց՝ թէ ահա յղեցաք, որպէս եւ խոստացաւ իսկ ի փետր. ԺԱ. յղել յետոյ. որպէս ահա գոյ ի վերն ի համարն 423 եւ ի 424։ Ծանուցանելով եւ զյղելն զնոյն ասացեալ թուղթն ի փետր. ԺԱ. եւ զայլ թուղթսն եւս յետոյ յղել խոստանալով որպէս եւ յայնժամ։

Թուղթ շնորհակալութեան առ այնպիսի իշխանս գրելի, որք միջակ իցեն պատուով եւ այնոցիկ, որք գրեալ իցեն զբանս շնորհաւորութեան առ նորոգ կաթողիկոսն։ Որ այժմ գրեցաւ ի Մեծն Պոլիս առ սառաքլար Քեահիասի Մարգար Ամիրայն յետ գալոյն անտի մահասարատար Պետրոս վարդապետին, եւ քերելոյն զմահասարսն եւ զՔարմանան։ Որում միամտութիւն եւս վասն Ա՛ռողուշին, զոր յԱտրանապու յղեալ էին յաղագս հոգւոյ մահտեսի Աղէքսանդրին որ ծեռամբ սորին հասեալ էր առ Մինաս վարդապետն, որպէս ահա ի վերդ ի թղթոջ նորին յիշի։

Թուղթ շնորհակալութեան ղարձեալ ըստ մտաց վերնոյդ թղթոյ առ զրօղս զշնորհաւորութիւն առ նորոգ կաթողիկոսն։ Որ գրեցաւ առ այժմ ի Պոլիս առ Հովուեանց Պօղոս Ամիրայն։

Թուղթ առ Զմիւռնոյ Քահանայսն եւ իշխանսն, վասն Փիլիպպոս վարդապետին ի պատասխանի երից մահասարացն իւրեանց զնմանէ՝ թէ տար, խոստանալով քերել։ Եւ պատուէր. համբերել մինչեւ ցքերելոյ ժամանակն, որպէս եւ յառաջ գրեալ էր Աստուածատուր Աղային։ (Տես ի 271 համարն)

Թուղթ առ Զմիւռնոյ նուիրակ եւ Առաջնորդ Փիլիպպոս վարդապետն. ծանուցանելով պարզապէս զերիցս մահասարն յղելն աստ Զմիւռնացւոցն վասն

իւր, թէ զսա տար, եւ զնեայի վարդապետն յղեա։ Պատուէր, զի ի յաւարտին զործոյն՝ ելցէ եւ եկեսցէ ի սուրբ Ամոռս։

Թուղթ ի Հալապ, առ սրբոյ Ամոռոյս նոր զանճապետ Արեւելցի Ոսկանեան պարոն Մինասն, մինչ նոր զանճանակ էին հաստատեալ անդ յանուն սրբոյ Ամոռոյս ի ՌՄՂ թուղջն մերում՝ եւ ի մայիսի ամսեանն, յետ լինելոյն իւրեանց վիճակ սրբոյ Ամոռոյս՝ եւ բաժանելոյն ի Սսոյ, որ այժմ ահա Դամ է։ Եւ զի զնոյն յիշեալ Արեւելցի Մինասն էին եղեալ զանճապետ սրբոյ Ամոռոյս, վասնորոյ՝ զրեցաւ օրհնութիւն եւ հաստատութիւն, եւ յորդորումն եւս՝ արիութեամբ եւ տարազատութեամբ ծառայել սրբոյ Ամոռոյս։

Թուղթ օրհնութեան եւ շնորհակալութեան ի Բերիա քաղաքն, որ է Հալապ, ի պատասխանի իւրեանց քազմակնիք թղթոյն։ Որք ամաւ յառաջ վիճակ եղեալք սրբոյ Ամոռոյս, այժմ եւս զանճանակ էին հաստատեալ յանուն սորին եւ մեծաւ պատրաստանօք խնդրէին ընդունել զինքեանս ի վիճակ եւ ի ծառայութիւն սրբոյ Ամոռոյս, եւ գրել առ ինքեանս զԹուղթ օրհնութեան որպէս խնդրէին, յորում եւ շնորհակալութիւն վասն զանճանակին, եւ հաստատութիւն զանճապետին։ Եւ պատուէր՝ կալ արի ընդդէմ ախթարմայից, եւ զգուշանալ ի նոցին խմորոյ, եւ կալ ուղիղ ի հաւատս։ Եւ այլ պատուէր ի սոյնս։ Գոն եւս ընդ սմա գրեցեալ Թուղթք յառաջկոյս, ի 565, եւ ի 657 համարն, եւ ի վերդ ի միւս կողմն Թղթոյս։


Ցորմէ ժամանեսցի . . . Եայլն։

Եւ ընդ շնորհազեղուն նամակիս ծանուցումն լիցի սիրելի եւ հոգեւոր որդւոցդ մերոց՝ եւ լուսածնունդ զաւակացդ սրբոյ Ամոռոյս Էջմիածնի, Զի բազմակնիք Թուղթն ձեր՝ դրեցեալն ի յանցեալ ՌՄՂ Թուղջն եւ ի նոյ. ժ էհաս առ մեզ ի սկիզբն փետրվարի, ի նոր ՌՄԼԱ Թուղջս, եւ իմացաք զդրեալսն ձեր ի նոսա, եւ զճշմարիտ հաւատաւոր Թեամբ սիրավառութիւն սրտից ձերոց՝ որ առ լուսատու Մայրս ձեր սուրբ Ամոռոս։ Որք համակամ յօժարութեամբ եւ միարանութեամբ՝ եւ յստակագոյն խորհըրդով՝ կամեցեալ էք ի վաղուց իսկ գառնալ ի ներքոյ հոգեւոր իշխանութեան հաւատոյ Մօրս ձերոյ սրբոյ Ամոռոյս, եւ միանալ ընդ սա վերստին յորմէ անջատեցեալ եւ հեռացեալ էիք ըստ ժամանակի րերմանց՝ եւ ըստ աշխարհային պատահմանց եւ կալ ընդհոգեւոր հովուութեամբ Գահակալաց սորին։ Եւ զի Աստուած է պատճառ ամենայն բարեաց, որ առնէ զամենայն յամենայնի որպէս եւ կամի. որ եւ իրրեւ զսահանս ջրոց՝ ունի ի ձեռին զսիրտս մարդկան. եւ ընդ որ կոյս կամի հայեցուցանել՝ դարձուցանէ ըստ նոսա, ըստ հոգելից բանի իմաստնոյն. վասն որոյ՝ եւ զդոյն առաջադրութիւնդ ձեր բարի՝ ոչ յայլուստա իմանամք, եթէ ոչ յԱստուածոյ շարժեալ. զի նա է որ շարժէ զամենեսեան առ ի բարին. եւ յաջողէ զամենայն բարի առաջադրութիւնս։ Որ եւ զձերդ բարի եւ իւրաշարժ մտադրութիւն եւ զառաջադրութիւն յաջողեաց ձեզ՝ եւ ի կատարումն էած։ Որպէս ահա յառաջ քան զչորս ամս կատարեցեալ իսկ է խորհուրդ ձեր բարի. եւ թադաւորական հրովարտակաւ եւ լեալ յիշխողութենէ Կիլիկեցւոցն՝ առեալ էք ի վերայ ձեր զանուն լուսատու ծնողիս ձերոյ սրբոյ Ամոռոյս Էջմիածնի, եւ ձերով իսկ ինքնայօժար կամօք մտեալ էք ընդ հոգեւոր իշխանութեամբ սորա։ Որպէս եւ յառաջ դրեալ էիք երկիցս առ Հոգելոյս Հայրապետն մեր՝ զորս եւ մեք տեսաք. եւ այժմ եւս մեզ դրէք լիապէս։ Որ եւ այս եւս չէ լեալ առանց Աստուածայինն տեսչութեան, որ նախկին Առաջնորդն ձեր իւրովի հրա-

ժարեցեալ և հեռացեալ է ի ձէնջ, և կար
դեցեալ է ձեզ նորոգ առաջնորդ սիրելի
որդիդ մեր և հարազատ զաւակդ սրբոյ Ա-
թոռոյս Մինաս խոհեմազարդ վարդապետդ,
որ է ի վիճակէ սրբոյ Աթոռոյս և ի յորդ-
ւոց սորին՝ ըստ որում և ձերդ է լեալ
բաղձանք: Եւ զի այսպէս յԱստուծոյ շար-
ժեցեալ առաջադրութիւնդ ձեր բարի, նո-
վիմբ և յաջողեցեալ իսկ է՝ և ելեալ ի
գլուխ. վասնորոյ՝ և մեր ուրախացեալ ընդ
այդ և բերկրեցեալ մեծապէս ի սիրտ և ի
հոգի, փառաւորեցաք նախ զանհաս գթու-
թիւն և զամենառատ մարդասիրութիւն նա-
խախնամողին Աստուծոյ, և ի ձայն օրհնու-
թեան գոհացաք զնմանէ, որ զգրուեալ և
զպաժանեալ որդիսդ սրբոյ Աթոռոյս հար-
սինս իւրոյ անարատի ժողովեաց դարձեալ
ընդ թեւօք սորին. և բերկրեցոյց ղհաւատոյ
Մայրս ձեր որդւովքդ սորին շնորհածնիւք.
և դարձոյց զձեզ անդրէն ի հայրենի ժա
ռանգութիւնս ձեր հոգեւոր՝ յորմէ տարա-
գրեցեալ էիք: Ապա և զհոգեւոր որդիսդ
մեր շնորհակալութեամբ մեծաւ օրհնեցաք,
որք պատուելով և մեծարելով զծնօղս ձեր
շնորհատու՝ զՄայրս հաւատոյ հպատական-
եայս, հեռացայք յայնցանէ որք զընդդէմն
խորհին սմին. որովք երկեցայք որդիք հնա-
զանդք՝ և երկիւղածք ի Տեառնէ. ըստ ո-
րում և Սիրաք ասէ, որ երկնչի ի Տեառնէ՝
պատուէ զծնօղս իւր: Որք եւ սիրեցիք ըզ-
վայելչութիւն Տանս Աստուծոյ՝ և զՏեղիս
յարկի փառաց նորա. և փափագեցայք նըս-
տիլ ընդ հովանեաւ սորա. և վայելել ըզ-
քաղցր պատուղս շնորհաց և օրհնութեանց
սորա: Եւ ըստ յաջողմանն Աստուծոյ՝ հրա-
շակերտողին զսա, հասիք իսկ ահա դոյն ձեր
հոգեշարժ բաղձանաց. և լցաւ իղձն ձեր
բանի, և վայելելոցէք այսուհետև զկաթն
մաքուր շնորհաց սորին. և քաղցր պատուղ,
օրհնութեանցն: Քանզի՝ որպէս դուք որդիա
կան սիրով ի գիրկ ծնողիս ձերոյ սրբոյ դի-
մեցիք, նոյնպէս և սա մայրական գթով առ-
ընկալաւ զձեզ ի գիրկ սիրոյ իւրոյ և ի ծոց
խնամոցն. առաւել խրախացեալ այժմ հե-
ռացեալ որդւովքդ զորս նոր եդիտ, քան
համայն ծննդովք իւրովք լուսազարդիւք որք
յամենայն ժամ են ընդ ինքեան. և հանա-
պաղ վայելեն զքաղցրութիւն Մայրականի սի-
րոյն իւրոյ: Ընդ որս այժմ և զձեզ համա-
խառնեալ՝ երգէ ուրախութեամբ, ահա ես
և մանկունք իմ՝ զորս ետս ինձ Աստուած:
Առ որ և մեք զօրհնութիւնս և զփառս եր-
դելով միշտ՝ դոհացողական ձայնիւ, հայ-
ցեմք յամենառատ գթութենէնց նորին, զի
որպէս խնամելով զձեզ՝ դարձոյց վերստին
ի ծոց Մօրս ձերոյ լուսատուի, նոյնպէս՝ պա-
հելով ի վերայ ձեր, յարաժամ զնոյն խնամ-
սըն, անբաժանելի պահեսցէ ի սմանէ: Որ-
պէս զի յարաժամ վայելելով գշնորհս սո-
րին որում փափագէիքն, զուարճացեալ լի-
ջիք հոգւով: Զորս նոյն ինքն ամենողորմն
Տէր հանապազ պահեսցէ զուարճալիս և ու-
րախալիս, զարդարեցեալս շնորհօք, և փայ-
լեցեալս ճշմարիտ և ուղղափառ հաւատով,
հաստատեցեալս աներկբայ յուսով՝ և աճե-
ցեալս ջերմեռանդ սիրովք: Առաջադրելով և
ձեզ միշտ զհաճոյս իւր, և յաջողելով յա-
րաժամ ի բարութիւնս՝ և ի գործս հաճո-
յականս. ի փառս անուան իւրոյ սրբոյ:
Նաև՝ առ այն և ընդ շնորհակալեցաք զհարա-
զատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս և զսիրելեացդ
մերոց ի Քրիստոս, որք բարեյօժար կամօք
ձերովք՝ և ըստ յորդորանաց սիրելի որդ-
ւոյն մերոյ և Առաջնորդին ձերոյ Մինասի ի-
մաստանատաւ վարդապետին՝ և նոյնով հա-
րազատ որդիական սիրովն ձերով զոր ու-
նիք առ հաւատոյ Մայրս ձեր սուրբ Ա-
թոռս, հաստատեալ էք յանուն սորին զգան-
ձանակ ի սուրբ եկեղեցւոջդ ձերում: Եւ
զհոգեւոր որդին մեր զԱրևելցի պարոն Մի-
նասն եւս կացուցեալ էք դանձապետ սըր-
բոյ Աթոռոյս. զոր և գրեալ էիք մեզ վասն
որոյ՝ և մեք շնորհակալութեամբ բազմաւ
զձեզ օրհնեցաք: Զորս Տէր օրհնեսցէ և զօ-
րացուսցէ. փրկեսցէ յամենայն փորձութենէնց՝
և ընկալցի միշտ ի խնամս գթութեան եւ
ողորմութեան իւրոյ: Եւ փոխարէն այդքան
գերագոյն սիրոյ և ճշմարիտ հարազատու-
թեան զորս ցուցեալ էք և ցուցանէք առ
Մայրս ձեր լուսատու, պարգեւեսցէ ձեզ
զվարձս բարիս և բազմապատկապէս՝ ըստ
հոգւոյ և ըստ մարմնոյ: Եւ զոր ինչ
կամաւորաբար արկանէք ի դանձանակն սորա,
ընկալցի ի փառս և ի հաճոյս իւր. և ընդ
միոյն զհազարապատիկս և զբիւրապատիկս
հատուսցէ ձեզ աստ և ի հանդերձելումն,

և զՀոգիս ննջեցելոցն ձերոց լուսաւորեսցէ, և Տանգուսցէ յարքայութեան իւրում ընդ սուրբս իւր։ Եւ որպէս դուք համահաւանութեամբ պատշաճ էիք տեառեալ գործոյ գանձապետութեան զսիրելի և զՀոգևոր որգին մեր՝ զԱրևելցի պարոն Մինասն, և կացուցեալ իսկ ի նոյն, նոյնպէս՝ և մեք տեսաք զնա պատշաճ այգմ Հոգևոր և վարձատրելի գործոյ, ղորև կարգեցաք իսկ ահա գանձապետ սրբոյ Աթոռոյս։ Որում և պատուիրեմք, զի արի և ժիր լիցի ի Հոգևոր գործն իւր։ և Տարապատութեամբ ծառայեսցէ լուսատու ծնողիս իւրոյ սրբոյ Աթոռոյս. զի լիցի արժանաւոր վարձուց բարեաց յԱստուծոյ. և ընկալցի զշնորՀս սորին և զօրՀնութիւնս մեր։ Այլև՝ որ գրեալ էիք զշնորՀակալութիւնս զսիրելի որգւոյդ մերմէ և զԱռաջնորդէդ ձերմէ զՄինաս բարեբարոյ վարդապետէդ, զարիութեանց դորին յամենայնի, և զջատագովութեանցն սուրբ՝ և ուզղափառ և միաբնագաւան Տաւատոյ Տայաստանեայցս սբրոյ եկեղեցւոյ, և զբարւոք քաղաքավարութեանցն և կառավարութեանցն յամենայնի առայդ ևս ուրախացաք շատ. մինչ գտեալէք զայդպիսի բարի Տովիւ ըստ սրտի ձերումն։ Որում այլևս յաւելցէ Աստուած զայդպիսի արիութիւնս և զընթացս բարութեան առ ի բարւոքապէս զձեզ կառավարել. և առնել զձեզ միշտ ՀոգեշնորՀս։ Զոր և ահա մեք ևս մերովս Հոգևոր Տրամանաւ կարգեցաք ձեզ Առաջնորդ և Հոգևոր Տովիւ, առ ի Տովուել զձեզ Աստուածային օրինօք, և աւանդութեամբք սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, և կանոնօք Տարցն սրբոցն։ Որում և գուք պարտիք առաւել ևս ցուցանել այսուՀետև զՀնազանդութիւնս, և լինել գմա Տլու և Տպատակ, և գոլ լսօղք և առաւել առնօղք ամենից Հոգևոր և անմեղածին Տրամանաց դորին. ըստ Առաքելական բանին որ ասէ՝ ունկնդիր լերուք Առաջնորդաց ձերոց՝ և Տպատակ կացէք նոցա։ Որոյ ի քարոզչէն ձեզ զԱստուածային օրէնսն, և ի ծանուցանելն ձեզ զՀաճոյսն նորին և զօգուտն ձեր, պարտիք մտադրութեամբ լսել՝ և ի միտ առնուլ և կատարել։ Եւ ի զգուշացուցանելն զձեզ ի վնասակարացն Հոգւոց, մանաւանդ՝ ի Հոգեվնաս աղանդոցն ախթարմայից՝ և ի Հաւորդութենէ նոցին և յընկերակցութենէ, պարտիք և գուք Տրաժարիլ և Տեռանալ յայնպիսեաց. խորՀիլ ի վաթար ընթացից, և յանուղղայ գործոց. և ս առաւել՝ ի յընկերակցութենէ և ի միաբանութենէ Ախթարմայիցն չարաց, և ի յապականարար ազանդոյ նոցինն։ Եւ լինիլ միշտ՝ Տեռևօղք ճշմարտութեան՝ և խոտիչք ստութեան. սիրօղք մաքուր վարուց, և առեցօղք վատթարութեան. բարեաց նախանձաւորք. և ի չարութենանց Տեռիք. ջատագովք Տաւատոյս մերոյ սրբոյ, և օրինաց՝ և եկեղեցւոյ և արՀամարՀօղք սոցին թշնամեացն՝ և ապականչացն Հոգւոց։ Որք ըստ բանի սրբոյն Յովհաննու՝ Առ ի մէնջ. զի եթէ ի մէնջ էին, ապա առ մեզ ևնային։ Յորոց զգուշանալ և Տեռի կալ Հոգևոր որգւոցդ մերոց պատուիրեմ և աղաչեմ, իբրև Տոտեալ ոՀգամոց. զի մի ապականութիւնն նոցին և ի ձեզ փոխանցեսցի։ Որպէս զի գտանիցիք ամենայնիւ Տաճոյք Աստուծոյ, փայլեցեալք ուղիղ Տաւատովք և մաքուր գործովք, ի փրկութիւն Հոգւոց ձերոց՝ և ի յուրախութիւն մեզ։ Իսկ՝ որ յաղագս նուիրակի և սրբալոյս Մեռոնի գրէք թէ՝ մարթ էր այժմ խնդրել, այլ վասն այս ինչ պատճառաց թողաք, յետ միոյ տարւոյ զԱռաջնորդս մեր յղելոց եմք ի սուրբ Աթոռդ, ի յղելն մեր զսա՝ խնգրելոց եմք յայնժամ կրկին մ՝ահասարիւ և յետոյ ի ստորև մահսարին գրէք թէ թէպէտ մեք այսպէս գրեցաք, բայց թէ մեզ մօտակայ նուիրակի ուրուք Տրամայեսցես գտ՝ աստ, մեզ ևս Տաճելի է, և կամք քո է, և պյլն։ Առ այս գիտասջիք. զի մինչ ահա ջերմեռանդ սիրով և յստակ սրտիւ կապեալ էք զձեզ ի Տաւատոյ մայրս ձեր սուրբ Աթոռս, ոչ է Հոգ՝ թէ շուտով չգայցէ յայգր ի մէնջ նուիրակ. զի որպէս դուք գրէք և ուխտէք թէ այսուՀետև կայ և ՏՏայ մեզ ի Հուր և ի սուր մաշիլ, ի ծով անկանիլ, և ոչ մեկնիլ ի վիճակութենէ բարձր Գահիդ սրբոյ Էջ՝ մինչեւ, նոյնպէս և մեք միամիտ զձենջ ամենայնիւ, և ոչ ունիմք զկարծիս ինչ։ Ուստի՝ թէ և փութով չգայցէ յայգր նուիրակն մեր՝ ոչինչ է Հոգ և կամ կասկած։ Ապա՝ որպէս առաջին խորՀուրդն է ձեր

(որում հաւանեցաք.) իբրև յղեցէք ասա զսիրելի որդիդ մեր և զԱռաջնորդ ձեր՝ ի յընդունիլ զաստիճանն մեծ, և կամ երր և կամիցիք, և գրեցէք մեզ կրկին մահսարաւ որպէս խոստանայք, յայնժամ և մեք յղեցոց եմք։ Բայց դուք հոգևոր որդիքդ մեր՝ զդպն ճշմարիտ հարազատութիւն և զկատարեալ սէր որդիական՝ զորս ունիք առ. լուսաւոր Մայրս ձեր սուրբ Աթոռս և առ. մեզ, հաստատուն և պնդապէս ունիցիք, և անշարժ մնասջիք ի դպնս։ Որպէս զի՛ ղոր սկսայքն առնել ըստ Աստուածայինն ազդմանն, և ըստ ձերդ ընիկ յօժարութեանն, զոր և արարիք իսկ։ հաստատիմն և պնդակատարեցջ լիցի և ի կատար հասցի, առ ի չլինիլ յայն նախատէցջ, թէ սկսան շինել՝ և ոչ կարացին, ըստ Աւետարանական բանին։ Զորս պահեսցէ Տէր մշտակայունս և անշարժս ի ծոց Մօրս ձերոյ լուսաւորի, և անմեկնելիս ի սմանէ յարաժամ ըստ ձերդ բարի ըղձից և փափագմանն։ Որ և պահեսցէ զձեզ անփորձս և անարատս՝ մինչև ցկէս կոչմանն ձերոյ յաշխարհէ աստի, և Շնորհք և ողորմութիւն նորին ընդ հոգւոց և ընդ մարմնոց. ձերոց եղիցի միշտ։ Եւ լսելով և կատարելովն ձեր զամենայն հոգևոր հրամանս մեր զգրեալս ասացէն, եղիջիք վարձաւորեալք ի Տեառնէ Աստուծոյ, և օրհնեալք միշտ ի նմանէ՝ և յամենայն սրբոց նորա՝ և ի մէնջ, և Շնորհք սրբոյ Աթոռոյս Միածնաիջի եղիցի ընդ ձեզ հանապազ։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԼԱ. ի փետրվարի։



Թոռդէ օրհնութեան, գրնէի առ այգաւիսիս, որք ի յԱխթարմայութենէ դառնայցեն ի դաւանութիւնս սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց։ Որ այժմ գրեցաւ ի Գեօրի առ Սահակի որդի Ստեփանն, որ էր երեւելի եւ նշանաւոր ոմն. եւ յոյժ ներհակ մերոյ հաւատոյ եւ եկեղեցւոյ։ Իսկ այժմ դարձեալ էր ի դաւանութիւնս մեր. եւ ջատագով լինելով հաւատոյս մերոյ՝ յոյժ մաքառէր ընդ Ախթարմայս եւ ներհակէր։

Եւ ընդ չնորհաղեղուն օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի բարեիղձ և հոգեառնչ սիրելոյդ մերոյ ի Քրիստոս՝ և ծնօղասէր որգւոդդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի։ Զի գրեալ էր մեզ ի Թիֆլիզու՝ սիրելին մեր՝ և հարազատ որդին սրբոյ Աթոռոյս՝ առաջնորդ Կարապետ Աստուածամասա վարդապետն՝ զվերադարձումն քո ի ճշմարիտ և յուղղափառ և ի միաբնադաւան հաւատս սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայցս։ Զոր հաւաստապէս և առանց կարծեաց՝ ի բարեդութ և յամենախնամ հօրէն երկնաւորէ իմանամք քեզ աղաչել և առաջադրեալ, որ զամենայն մարդիկ կամ զի կեցցեն, և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն։ Ըստ որում և ասէ Տէրն մեր Քրիստոս թէ՝ ոչ ոք գայ առիս՝ եթէ ոչ Հայրն իմ երկնաւոր ձգեսցէ զնա առիս։ Որ և այժմ տալով քեզ զՀոգին իմաստութեան և գիտութեան՝ յայտնութեամբն իւրով, լուսաւոր արար զաչս սրտի քո՝ առ ի ճանաչումն ճշմարտութեանն։ Ուստի՝ և ծանուցեալ քո զուղղութիւն և ճշմարտութիւն Միաբնաւանն՝ սուրբ և ուղղափառ Հաւատոյ, և Դաւանութեան Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ՝ (յորմէ ոստուցեալ էիր ըստ սատրելոյ չարին՝ և մոլեշաւիղ խաբողացն,) այժըմ դաւանեալ ես զայնմ ջերմեռանդ ըզձիւ և բաղձանօք՝ և կատարեալ սիրով։ Ուստի՝ եղև ուրախութիւն մեծ և ցնծութիւն հոգւոյ ընդ դարձումն որդւոյդ սարտուցելոյ՝ ի սահմանս Մօրս քո Հայաստանեացս սրբոյ Եկեղեցւոյ՝ և ի ժառանգութիւն քոյոյ Հայրենի ուղիղ հաւատոյ, և ընդ գիւտ միոյ ոչխարիդ մոլորելոյ, առաւել քան ի վերայ իննսուն և ինն ոչխարաց մերոյ բանաւորաց՝ որք չեն մոլորեալք, ըստ Աւետարանական բանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Վասնորոյ՝ և ի ձայն օրհնութեան փառաւորեցաք զամենողորմն Աստուած, որ ըստ իւրում ողորմութեանն Առաջնորդեաց քեզ ի ճանապարհ ուղիղ որով մարթասցիս վերաչուել ի քաղաք բնակութեան սրբոց և սիրելեաց անուան իւրոյ յարքայութիւնն վերին, ի յեկեղեցիս անդրանկաց գրելոց ի յերկինս։ Առ որ և զծուներ պաղատանաց կրկնելով՝ հայցեմ, զի պահեսցէ անաղօտ զդպն լուսա-

ւորութիւնդ մտաց քոց՝ զոր շնորհեաց քեզ։ Որպէս զի ի հաւատոյ ճշմարտութեան յոր գարձարդ վերստին կայցես արմատացեալ և հաստատեալ, և անշարժ ի յուսոյ Աւետարանին։ Զայն խորհելով այսուհետև որինչ ճշմարտութեամբ է՝ սրինչ պարկեշտութեամբ. որինչ արդարութեամբ, որինչ սիրով, որինչ համբաւ բարեաց, որինչ քաջութեամբ և որինչ գովութեամբ. ըստ Առաքելական բանին։ Եւ տացէ քեզ նոյն պարգևատուն բարեաց զայնպիսի հոգի արիութեան և զօրութեան, զի միշտ ջատագով լինելով սղնոյ սրբոյ հաւատոյս մերոյ ճըշմարտի՝ յոր հաստատեցարդ վերստին, կարօղանայցես առաջնորդել և այլոց մոլորեալ մտաց ընդ դոյն շաւիղս ուղղութեան ընդ որ եկիր գու, և լինիլ նոցա ևս պատճառ փրկութեան, և ածել զնոսա ևս ըստ քեզ ի յուղղութիւն։ Որում և պատուիրեմ իսկ հայրական սիրով, զի զնոյն հոգի արութեան ստասցիս այսուհետև. և ի կոչումդ սուրբ յոր կոչեցար ի յԱստուծոյ այսինքն ի միարնադաւան հաւատոգ սուրբ և ուղղափառ, կացցես հաստատուն և անշարժ, առնելով ևս՝ զոր ինչ պատշաճն է գմին, և լինելով սիրօղ մաքուր վարուց և բարեաց գործոց. և անուանօղ իսկ զնոսին առանց ձանձրանալոյ՝ ըստ բանի սրբազան Առաքելոյն, զի ի ժամանակի իւրում հնձեսցես առանց լքանելոյ։ Որում լիցի Տէր օժանդակ, առաջնորդելով քեզ ամենայն ճշմարտութեամբ. և առաջադրելով քեզ յամենայն ժամանակի զՀաճոյն իւր՝ և զօգուտն քո, խորհիլ միշտ զնոյնս և առնել, և անպատում բարեաց իւրոց գտանիլ հաղորդ։ Որ և օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ հանդերձ քոյոյնովքդ ամենեքումբք. պահեսցէ միշտ ի խնամս և յողորմութիւնս իւր. փրկեսցէ յամենայն փորձութեանց հոգեկան և մարմնական. և տացէ ամենայն բանից և գործոց քոց զյաջողմունս բարիս։ Պատուիրեմ ևս դարձեալ՝ սիրելւոյդ մերոյ ի Քրիստոս, զի զՀարազատութիւն ճշմարիտ և զսէր կատարեալ ունիցիս յարաժամ առ սուրբ Աթոռս և առ մեզ. և զգիրդ սիրանիշ հանդերձ յատուկ հաւատարմութեամբք մի առնիցիս պակաս։ Որովք ընկալցիս միշտ զօրհնութիւնս յԱստուծոյ և ի մէնջ. և Շնորհք սրբոյ Աթոռոյս Քրիստոսաիջի ընդ քեզ լիցի յարաժամ։ Ամէն։ Ի ՌՄԼԱ. ի մարտի։

Թուղթ շնորհակալութեան առ հասարակ անձինս գրելի յաղագս հարազատութեանց եւ ի պատասխանի սիրանիշ գրոց. մանաւանդ՝ մինչ զշնորհաւորութիւնս ի ցեղն գրեալ առ նոր օծեցեալ կաթողիկոսն։ Որ այժմ գրեցաւ ի Պոլիս առ Զարաղցի Բ Գէորգեանսն, եւ մահտեսի Մինասն։

Թուղթ ի Պոլիս, առ Ազուլեցի Տրծանենց Մահտեսի Կարապետի ընկեր Մարտիրոսն, սակաւ ինչ ի վերոյգրեալ բանիցդ, նոյնպէս ըստ կերպի շնորհակալութեան։ Եւ ապա միամտութիւն վասն իւր հոգեւոր որդի Ծովհաննէս տղային, զոր ընդ Պետրոս վարդապետին յղեալ էր ի մնալ աստ։

Թուղթ ժողովարարութեան վասն զերեւտեարց։

Թուղթ շնորհակալութեան վասն զանձանակաց հասեալ արդեանց, թեթեւ օրինակ։

Թուղթ առ Դիւլբէնտջի եւ Ալաճաջի Անանաֆան, որք ի Պոլիս, նոյնպէս շնորհակալութիւն զանձանակական հասեալ արդեանց։

Թուղթ առ Հացագործաց Անանաֆն, նոյնպէս շնորհակալութիւն վասն հասուցեալ արդեանց զանձանակին։

Թուղթ առ ի Ղումղափու եղեալ Սափրիչեան. նոյնպէս շնորհակալութիւն վասն հասուցեալ արդեանց զանձանակի։

Թուղթ շնորհակալութեան եւ միաժտութեան, ի վերայ զանձապետաց գրելի. որք զարդիւնսն զանձանակին հասուցեալ իցեն ի սուրբ Աթոռս, եւ առ ժողովուրդն գրիցի թուղթ օրհնութեան։

Թուղթ շնորհակալութեան, դարձեալ ի վերայ զանձապետաց գրելի, որք ի ձեռն նուիրակաց հասուցեալ իցեն սրբոյ Աթոռոյս զարդիւնսն զանձանակին։

Թուղթ շնսրհակալութեան դարձեալ առ Օրթազեղու սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ զանձապետաց խոջայ Արսէնն, շնորհակալութիւն վասն հասուցեալ արդեանցն։ Եւ պատուէր՝ զի ի պատրաստի եղեալ արդիւնսն եւս տացէ Մինաս վարդապետին, եւ գրեսցէ ինքեան։

Թուղթ շնորհակալութեան դարձեալ, առ Իւսկիւտարու սուրբ Թաչ եկեղեցւոյ հին եւ նոր զանձապետսն. վասն հասուցեալ արդեանց զանձանակին, որպէս եւ վերոյգրեալքն են։

Թուղթ շնորհակալութեան դարձեալ, առ Թասզիւղի զանձապետ Ծովհաննէս Ամիրայն, որ էր ի զարմէ Հովուեանց, վասն հասուցեալ արդեանց զանձանակին դարձեալ։

Թուղթ շնորհակալութեան դարձեալ, առ Ղալաթիոյ զանձապետսն վասն հասեալ արդեանց զանձանակին։

Թուղթ առ Ղումղափուի սուրբ Աստուածածնին եկեղեցւոյ զանձապետ Ծակօր Ամիրայն, նոյնպէս շնորհակալութիւն, եւ ի պատասխանի թղթոյն։ Եւ զի զոր ինչ արդիւնս ունիցի ի պատրաստի, տացէ Մինաս վարդապետին։

Թուղթ առ Պալաթու սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ Գանձապետ Սահակ Ամիրայն, եւ առ մահտեսի Համբարձումն, եւ որդին իւր մահտեսի Ծովհաննէսն՝ որք ի Սուլթան Սէլիմն։ Նոյնպէս շնորհակալութիւն վասն զանձանակի արդեանցն հասուցելոց։ Եւ վասն Գրիգոր տղային՝ ընտանւոյ իւրեանց աստ եկելոյ՝ միաժտութիւն։ Էր այս պատասխանի երից թղթոց նոցին։

Թուղթ ի Մեծն պօլիս առ Սախայ օղլի Մահտեսի Մարտիրոս եւ Գրիգոր Ամիրայսն, ի պատասխանի թղթոյն իւրեանց շնորհաւորականի, շնորհակալութիւն եւ օրհնութիւն բազում, վասն յոյժ հարազատութեանցն։ Եւ վասն յղեալ ընծային եւս շնորհակալութիւն։ Եւ մահտեսի Մարտիրոսին յորդորումն, յանձն առնուլ զգործ զանձապետութեան սրբոյ Աթոռոյս ի սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն որ ի Ղումղափու։

Թուղթ առ Օրթազեղու սուրբ Աստուածածնին եկեղեցւոյ Մուխաղէլի Ծովհաննէս, եւ սուրբ Երուսաղէմի զանձապետ Միքայէլ Ամիրայսն, ի պատասխանի շնորհաւորական թղթոյն իւրեանց, նոյնպէս ըստ մտաց վերոյգրեալ թղթոցն, որք ի 441, եւ ի 443 համարսն գրեցան։

Թուղթ՝ Առ Շնորհք կոչեցեալ Մկրտիչ Ամիրայն, ի Պօլիս, նոյնպէս ըստ վերոյգրեցելոյ թղթոյդ՝ ի պատասխանի

շնորհաւորական թղթոյն, հանդերձ շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ։

Թուղթ առ Ղեւմղափուի սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ Միւթաւէլի Առաքել Ամիրայն եւ իւր եղբայր Յովհաննէս Ամիրայն. ի պատասխանի թղթոյն իւրեանց, նոյնպէս շնորհակալութիւն։ Եւ Առաքելին յատուկ եւս շնորհակալութիւն, վասն աշխատելոյն. ի հանումն ֆէրմանացն, եւ յանձնարարութիւն եւս վասն մերայնոցն։

Թուղթ առ սրբոյ Երուսաղէմի պատրիարք Յովակիմ վարդապետն, ի պատասխանի շնորհաւորական գրոյն՝ զոր գրեալ էր առ սրբազանն։ Շնորհակալութիւն առ այն։ Եւ յիշեցաւ եւս այն թուղթն, որ վասն գող Սահակին գրեցաւ առ ինքն ի ղեկտ. Ի՛Դ. որէ ի համարն 241, 261, 262, 263։ Եւ զի գանգատ էր գրեալ զՀաշտարխանու նուիրակ եւ Առաջնորդ Յովսէփ վարդապետէն. թէ զնուիրակն մեր ի գործոյն արգելեալ է։ Գրեաց առայս զոր ինչ վայել էր, թէ անհամութիւնն յառաջ ի նմանէ է եղեալ. մանաւանդ այն իսկ, որ ընդդէմ սովորութեան երկրին այնմիկ՝ առանց վկայականի սրբոյ Աթոռոյս Հայրապետին՝ մտեալ է անդ։ Որպէս եւ առ Պօլսոյ պատրիարքն եւս գրեցաւ այս երկար. որոյ թղթոյ օրինակնէ յառաջ կոյս, ի համարն 25, 276, 277. 278. 279 280, եւ այլն՝ որ զկնի նոցին)։

Թուղթ ի Կախէթի, առ Գեանջեցի Աղդար Սարգիսն, վասն Մանազկերտցի կորուսեալ Ալիբէկին։ Զի համբաւ էր հասեալ առ Բայազտոյ փաշային, իբր թէ՝ սա տեսեալ իցէ զնա ի Ռուսաց երկրոջն։ Ուստի՝ փաշային գրեալ էր սրբազանին գրել նմա, զի թէ յիրաւի տեսեալ իցէ զԱլիբէկ, թէ հնար իցէ իւր գալն եկեսցէ եւ պատմեսցէ փաշային, եւ թէ ոչ կարիցէ գալ զորպէսն գրեսցէ։ Որ եւ գրեաց սրբազանն։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածածնոյ՝ գիտասջիր սիրելիդ մեր՝ եւ հարազատ որդի սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, Զի ի Բայազիտու կողմանցն՝ ի Իւլանլուխու մհալէն եւ ի կօփ գեղջէն մէկ Ալօ անունամբ աղայ՝ քանի ժիջոցաւ յառաջ եկեալ է յայդ կողմդ, և քեզ նօքեար եղեալ։ Եւ դու զայն աղայն ընդ քեզ վերառեալ գնացեալ ես ի կողմունսն Ռուսէթու՝ վաճառականեան աղագաւ։ Եւ անդ ի տեղւոջ միւմ, գու և այն Ալօ անունամբ աղայն տեսեալ էք զՄանազկերտցի Ալիբէկն, Որ ի վաղ ժամանակաց հետէ գերի է գնացեալ ի յայն կողմունսն. և չէր յայտնի՝ թէ կայ կենդանի, թէ ոչ. իսկ այժմ տեսեալ է զձեզ և այն քեզ հետ եղեալ Ալօ աղային ծանօթութիւն է առեալ. և նա եւս զնա ճանաչեալ է։ Ապա՝ Ալիբէկն զիւր որպիսութիւնն ձեզ ասացեալ է և քեզ գրեալ է առեալ զամէնն. Թէ ի՞նչ տեղ է, և որպէս, որ գուք զայն գիրն ըմբռէք և ուղարկէք առ իւր ընտանիսն, որ իւր սատղութիւնն իմանան և միամին։ Եւ գուք յորժամ դարձեալ էք անտի, ի Տաղստանու կողմն լաղկիք թալանեալ են զձեր կարասանն՝ և. զձեզ և Ալիբէկի գրել առաջ Թուղթն եւս թալանին հետ գնացեալ և կորուսեալ է։ Իսկ դուք յորժամ եկեալ էք ի Կախէթ, այն Ալօ աղայն գնացեալ է այսի իւր երկիրն. և զայս պատմութիւնս անդ արարեալ է։ Զոր մինչ լուեալ է Բայազիտու Խաղ փաշայն՝ որ է նոյն Ալիբէկի փեսային, գրեալ էր առ մեզ զԹուղթ վասն այս բանիս, և խնգրեալ էր զի Թուղթ գրեսցուք առ քեզ և զայն բանիս որպիսութիւնն ի քէն հարցցուք և իմացցուք։ Եւ մեք վասն խաթեր փաշային՝ որ բարեկամ է մեզ և սրբոյ Աթոռոյս, զայս սիրոյ և

օրհնութեան Թուղթս մեր գրեցաք ահա ի վերայ քոյ։ Որով ահա զայս հարցանեմ ի քէն. զի թէ յիրաւի է այս բանս՝ որպէս՝ որ լուեալ է փաշային և մեզ գրեալ. ապա՝ գու թէ կարե՞ս գալ՝ եկեսցես առ մեզ. և մեք ղքեզ յղեսցուք առ փաշային, որ գնացեալ բերանով պատմեսցես նմա զամենայն որպէսն Ալիբէկին, թէ որպէս ես աեսեալ զնա, և զի՞նչ լուար ի նմանէ. և այժմ ի՞նչ աեղ է զի իմացի փաշային և միամեսցի։ Իսկ թէ դու ոչ կարիցես գալ ապա՝ զամենայն որպէսն Ալիբէկին գրեա մեզ մի ըստ միոջէ, և թէ հայերէն գիւղ չլինեցի աեղւդ, վրացերէն գրել առուր պարզ և լիովին զամենայն որպէսն նորին. զի և մեք իմացուք և գրեսցուք փաշային։ Ահա ինքն փաշայն ևս քեզ մէկ հայերէն գիր էր գրեալ վասն այս բանիս, և մեք ընդ այս գրոյս առ. քեզ յղեցաք։ Կարդա և իմացի՛ր զորպէսն. կամ ե՛կ և քո բերանովդ փաշային պատմեա, և կամ գրեա մեզ որպէս գրեցաք։ Եւ վասն այս ամենին Աստուածազօր արքային ևս էր գիր գրեալ փաշային, զոր ահա այս գրաբեր պարոն Աբրահամն տարաւ առ. Արքայն։ Ի հարկէ Արքայն ևս է զքեզ հարցանելոց. դու զոր ինչ գիտես՝ ասա զճշմարիտն։ Եւ թէ գալոյ լինիս, այդ Աբրահամիդ հետ եկ, թէ ոչ, գրեա մեզ զամենայն գիտացեալդ ստուգիւ։ Եւ այսպէս առնելով՝ եղիցիս օրհնեալ յԱստուծոյ և ի մէնջ և Ընտրհ.ք ս. Աթոռոյս ընդ քեզ լեցի յարաժամ Ամէն. ի ՌՄԼԱ. ի մարտի ժե.

Թուղթ առ Ջուղայու վանից Առաջնորդ Միքրտիչ վարդապետն, վասն Ցակոր վարդապետին իւրեանց Միաբանի զոր յղեալ էին ի ձեռնադրիլ եպիսկոպոս, որ և ձեռնադրեցեալ՝ դարձաւ աստի։

Թուղթ ի Հալապ. առ Արևելցի Պարոն Ստեփանն, որ է Նոնսուսեցւոց չքաղն. վասն հասարակ մահտարին՝ զոր յղեալ էին այժմ անտի, և խնդրեալ զկոնդակ օրհնութեան, ծանուցանելով զլինելն իւրեանց վիճակ սրբոյ Աթոռոյս՝ և հրաժարիլն ի Սսեցւոց յառաջ քան զչորս ամս. (որպէս և առ Հովհաննէս Հայրապետն մեր ևս դրեալ էին երկիցս)։ Առ որս դրեցաւ այժմ կոնդակ օրհնութեան։ Ցորում և շնորհակալութիւն վասն նոր զանձանակիլին՝ զոր հաստատեալ էին յանուն սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաւ ի վերոյ ի համարն 485։ Զոր և սմա ևս ծանոյց, շնորհակալ լինելով ղհարազատութեանցն զոր առ սուրբ Աթոռս. և պատուիրելով ի նոյնն մնալ միշտ. և օտիցն սորին լինել կամեցօղ և առնօղ։

Թուղթ ճորտութեան ի Թիֆլիզ, որ դրեցաւ վասն Բաղդասարի որդի Ղազարին և Սիմօնին, որ նոր ճորտք եղեն սրբոյ Աթոռոյս։

Թուղթ ժողովարարութեան, յատկապէս վասն օտարազգի քրիստոնէի տալոյ, յաղագս պարտուց, և ըստ խնդրոյ այլոց։ Որ տրեցաւ այժմ վրացի բահանայի միոյ Զաքարիա անուամբ, որ էր բահանայ Գեօրկին Մ՛իրզայինն՝ որդւոյ Արքային Հերակլայ։ Որ խնդրեալ էր տալ նմա զնամակ շրջաբերական։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, և նամակ պահպանութեան. Ընտրհք Առաքելական, և Աստուածային բազմապատիկ օրհնութիւնն և նախանձնամական դթութիւնն ի վերայ սիրելի և հոգևոր որգւոցդ մերոց՝ հարազատ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս, Հայկասեր՝ լուսաւորչակրօն՝ և Միաբնադաւանն Հաւատացելոցդ ի Քրիստոս, որք գտեղեալ կայք ի մայրաքաղաքս, ի քաղաքս, ի գաւառս, ի զաստապայս և ի գիւղօրայս, ուր և հանդիպեսցի դոյն ունօղդ ի ձեռին զայս օրհնութեան նամակս մեր։ Ցորս կա-

ուցեալ Քրիստոսահիմն սրբոց եկեղեցեաց՝ եկեղեցականաց դասուց, Առաջնորդաց, քահանայից, իշխանաց, դօլվաթաւորաց, մեծատանց, վաճառականաց խմբից, մնծաց և փոքրոց, արանց և կանանց, ծերոց և ազայոց, երիտասարդաց և կուսից, խնդալ ի Տէր միշտ. Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց ի Քրիստոս, և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմոն ասէ թէ՝ Անձին իւրում գործէ բարիս ողորմածն, քանզի՝ զսրինչ ողորմութիւնս և առնիցէ մարդ ողորմելեաց, թէ զկարօտութիւնս նոցա լցուցանելով, թէ ի վտանգի իմք օգնելով, թէ ի պարտուց ապատելով, ինքն ևս զնոյնս գտանէ ի յԱստուծոյ, և յամենայն նեղութեանց ե. ի վշտաց փրկի և ազատի։ Զի ըստ բանին Պօղոսի, գորինչ և սերմանէ ոք զնոյն և հնձեսցէ։ Արդ՝ ի բազմաց վշտաւորաց մի է այդ գրաբեր Զաքարիա անուամբ քահանայդ, որ է ազգաւ վրացի. և դրան քահանայ որդւոյ Աստուածազօր Արքային վրաց Հերակլայ Գեօրկին Միրզային։ Որ և յոյժ սիրէ զդա՝ ըստ որում իւր է յատուկ։ Եւ զի դա ըստ պատահմանց աշխարհի անկեալ է ի նեղըզոյ ծանր պարտուց, և չէ գտեալ յուստեքէ զօգնութիւնս ի վճարել զայն, վանորոյ՝ նոյն Աստուծով զօրացեալ Գեօրկին Միրզայ Արքայորդին խնդրեալ էր ի մէնջ ի ձեռն ազերսական թղթոյ՝ շնորհել դմա զնամակ շրջաբերական, զի գոցէ այնու զօգնութիւնս պարտուց իւրոց։ Եւ որովհետև սիրելիք են մեզ յոյժ յիշեալ Աստուածազօր Արքայն, և նովիմբ պահպանեցեալ որդին իւր Արքայազուն, և սրբոյ Աթոռոյս մերոյ և մեզ միշտ բարերարք, և սիրօղք՝ և օգտարարք և մերազնեայ ժողովրդոց ևս խնամածուք, վանորոյ մեք ևս հարկեցեալ ի մեծագոյն սիրոյ նոցին որ առ մեզ և վանս դերարգոյ պատուոյ և խաթեր նոյնոյ Քրիստոսազօր Արքայորդւոյն լուաք խընդրանացն, և շնորհեցաք դմա զսոյս նամակս օրհնութեան մերոյ՝ զի առեալ եկեսցէ առ Աստուածասիրութիւն ձեր, և խնդրեսցէ ի ձէնջ զկամաւոր տուրս ողորմութեան՝ վանս ազատեցման իւրոյ ի պարտուցն։ Վանորոյ և դուք սիրելիք մեր, պարտիք ի սէրն Քրիստոսի, և վասն յուսոյ արքայութեան, զկամաւոր և զլիաձեռն ողորմութիւնս շնորհել գմա առատութեամբ, զի տարեալ վճարեսցէ այնու զպարտս իւր և զերծցի ի վշտաւորութենէն։ Եւ որպէս ուրք ողորմելով դմա՝ ազատէք ի պարտուցն, ազատարարն Քրիստոս ևս զձեզ ի հոգեկան և ի մարմնական պարտուց զերծուսցէ, և յամենայն վշտաց փրկեսցէ և ազատեսցէ։ Եւ կատարելով զՀոգևոր Հրամանս մեր՝ եղիջիք օրհնեալք՝ յԱստուծոյ և ի մէնջ. և Շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ։ Ամէն։ Մինչև ցերկուս ամս լիցի ընդունելի սոյն նամակս մեր. և հրամայեալս ի մէնջ որ ի սմա։ Գրեցաւ ի ՌՄԼԱ, ի մարտի։

Թուղթ վասն ժողովարարութեան մոմի, սլ գրի մլշտ ի Թիֆլիզ, յամենայն ամի։

Թուղթ առ Աւաղ բահանայն Թիֆլիզու, յանձնալաւութիւն և սլատուէր վասն մոմի ժողովարարի։

Թուղթ առ Կարսայ Առտջնորդ Յովհաննէս վարդապետն, և առ Պարոն Գէորգն. վասն Կաղզվանու Սղբարմայիցն, մինչ եւնևալ էր անտի զնոցունց ի զանգատ Տէր Խաչատուր էրէցն, և տեղւոյ բայրախտարն ևս գրեալ էր զԹուղթ թէ՝ եթէ կամիս՝ սոցա թամբեհ առնեմ։ Պատուէր զի զկատարեալն ի նոյն Տէր Խաչատուրէն իմասցին, և դհոգս լմն արարեալ՝ գրեսցեն ինքեան։

Յորմէ սիրով բազմաւ և հոգևոր օրհնութեամբ գիտասջիք սիրելիք մեր և հարազատ որդիք սրբոյ Աթոռոյս Յովհաննէս խոհեմառատ վարդապետ՝ և Պարոն Գէորգ

Զի հասին առ մեզ անկնաս՝ մեր Թոմասն, և տղայն՝ հանգերձ բեռնակրօքն մերովք, և ի տեղւոյդ յղեալ սիսեռովն, բակլայիւն, զէլթունիւն՝ և տախտակօքն։ Ցորոց իմացաք զորպէսն ձեր և զտեղւոյդ, և զմտուցումն ընծայիցն մերոց փաշային, և Ա-ֆանտու որգւոցն, և այլոցն հանգերձ այլ ամենայն հարազատութեամբ ձերովք և շնորհակալեցաք։ Իսկ այժմ հարկաւորապէս զայս գրեմ ձեզ։ Զի պղ գրաբեր Ցէր Խաչատուր էրէցդ ի Կաղզվանու էր եկեալ առ մեզ յաղագս անգ եղեալ ախթարմայից ոմանց՝ որք են ծե տուն. և զչիք քահանայ մի ևս ունին ախթարմայ՝ անունն Ցովհաննէս։ Որք յայնապէս առնելով զախթարմայութիւնն՝ համարձակեալ են ևս անզգամարար այնքան, մինչ զի՝ զսուրբ հաւատս մեր Միաբնագաւանն, և զհայրապետսն մեր ուղղափառ, և զեկեղեցիս և զաւանգուդութիւնս մեր յայնապէս հայհոյեալ են ի մէջ բազմութեան. և զյօլովս գայթակղեցուցեալ։ Ուստի լուսաւորչագաւան ժողովուրդքն մեր որք անգ, վրէժխնդիր լինելով նոցա, գանգատեալ են տեղւոյ վօյվատային։ Եւ նա ըմբռնեալ զնոսա, սակաւ ինչ տուգանս է առեալ՝ և թոյլ տուեալ։ Եւ նայն վօյվատային՝ և ուղղագաւան ժողովուրդքն մեր գրեալ էին մեզ նոցին որպէսն, և վօյվատային զայս ևս էր գրեալ թէ՝ եթէ կամիս, սոցա թամբեհ առնեմ։ Իսկ մեք գիտելով զի միայն նմա գրելն մեր ոչինչ օգուտ առնէ. զի ի հարկէ զտուգանս է առնելոց և թուլատրելոց՝ որպէս և արարեալ ևս է. վասնորոյ՝ ձեզ սիրելեացդ ի մոց զայս գրելով այժմ, ահա զզգոն Ցէր Խաչատուրդ ևս որ անտի էր եկեալ՝ առ ձեզ յղեցի։ Որպէս զի՝ ղլեապէն որպիսութեան չար ախթարմայիցն տեղւոյն ի գմաննէ իմասջիք. և բարւօքապէս խորհելով ի միասին, գոջիք զկերպ իմն օգտաւոր, թէ որպէս արժան է առնել՝ որ լկտիքն այնոքիկ սանձահարեսցին. և այլոց ևս չարօրինակ չլինիցին։ Մեք այսպէս մտածեմք թէ՝ դու սիրելիդ մեր Ցովհաննէս վարդապետդ երթիցես անդ. և չարացն այնոցիկ լինիցիս վրէժխնդիր, և նախ ջանասցես ամենայն կերպիւ՝ դարձուցանել ի յուղղութիւն և հաստատել ի սուրբ հաւատս մեր։ Եւ թէ այսպէս սիրով չլինիցի ապա՝ սաստկապէս թամբեհ առնել, և տուգանօք մաշել, և զչիք ախթարմայ քահանայն հանել ի միջոյ նոցա, և յղել ի սուրբ Աթոռս և առ մեզ։ Եւ ի բերանոց չարացն այնոցիկ ևս գիր առնուլ սաստկապէս, զի այլ ևս մի թողուցուն ի մէջ ինքեանց զախթարմայ չիք կարգաւոր. և զանուն և զնշան փոանկուԹեան կամ ախթարմայութեան այլ մի երևեցուցեն։ Արդ՝ եթէ գիտէք թէ՝ դոյ հնար այսմ դիւրապէս յառաջանալոյ ըստ այսց կերպից ղրկս ասացաք, և դու սիրելիդ մեր Ցովհաննէս վարդապետդ եթէ կարես գնալ անգ ի մէջ նոցա՝ և զայսոսիկ յառաջացուցանել, ապա՝ շուտով ծանուսջիք մեզ։ զի և մեք փաշային և Աֆանաու որգւոցն գիր գրեսցուք վասն այսր, զի ընդ քեզ զմարդ դիցեն, և զթուղթ տացեն, զի անդ զայսոսիկ յառաջացուսցես. և տեղւոյ վօյվատային և մեր ուղղադաւան ժողովրդոցն ևս ըստ այնմ ոճոյ գրեսցուք զգիրս, կամ թէ՝ որպէս պատշաճէ առ իւրաքանչիւրսն ի նոցանէ գրել, և կամ այլ ևս ո՞ւմ գրել վասն բանիս զգիր, զայն ևս ծանուսջիք։ Իսկ եթէ դու չկարիցես գնալ, կամ գիտիցէք թէ՝ այսպեսեօք ևս ոչինչ յառաջանայ անգ բարւոքապէս ապա դուք ընդ միմեանս բարւոքապէս խորհելով զդիւրաձեռն և զօգտաւոր հնար իմ գոջիք, որպէս զի՝ կամ ուղղելոյ հնար լիցի նոցա, կամ գոնէ սաստիկ թամբեհ իմն առնելոյ և ի բերանոցն գիր առնելոյ, և զայն չիք քահանայն անտի հանելոյ, որ այլ ևս մի կարասցեն զայնպիսի յայտնի լրբութիւնս առնել, և մերայնոցն ևս չար օրինակ և գայթակղութիւն լինիլ։ Եւ զինչ կերպիւ, որ գտանիցէք ղՀնարս, մեզ ծանուսջիք, զի և մեք ըստ այնմ հոգ տարցուք։ Զի յետ այսքան եղելութեանց, մինչ ձայնն ևս մեզ էհաս. և իւրեանք ևս գիտեն որ մեք իմացաք, եթէ այսպիսի կերպիւ իւիք հնար իմն չլինիցի, շատ են լրբանալոց. և բազումք ևս գնալոց են զՀառ նոցա մոլորութեանցն։ Ուրեմն ինչ կերպիւ և է, մեկ հնարք գտեալ գրեսջիք մեզ զի և մեք զհոգ տարցուք։ Եւ որովհետև գու սիրելիդ մեր Ցովհաննէս վարդապետդ դրեալ էիր մեզ թէ՝ գալոց եմ ի սուրբ Աթոռդ. և մեք ըստ քոյ գրեցելոյդ

սպասէաք և սպասեմք գալստեանդ և ակն ունէաք թէ ընդ մեր աղայոցն գայցես, վասն այն զՑէր Խաչատուրդ ասա արգելեցաք ի քանի մի աւուրս, զի ի գալդ ասա մեք զայս բանս ընդ քեզ խօսէաք. և ում պատշաճ իցէր գիր գրելոյ՝ գրէաք. և զդա ընդ քեզ եդեալ յղէաք զի և դու գնացեալ տանիցէիր այսմ զՀոգւ Իսկ՝ մինչ ահա յաղագս անցիցն կարասյ՝ (որ փաշային ղքանի մի ախթարմայս է ըմրոնեալ.) դու երկիւղ կրելով՝ ոչ ես գնացեալ ի քաղաքն և այժմ մինչ փաշային թողեալ է զնոսա ի բաց՝ դու գնացեալ ես անգ, զի զկնի այնորիկ ապա եկեսցես ի սուրբ Աթոռս ուստի՝ մեք մտածեցաք թէ՝ թերևս յամեսցիս, և այդ քահանայդ շատ յետասցի աստ, վասնորոյ՝ զայս գիրս ի վերայ երկուցդ գրեալ յղեցաք զդա առ ձեզ՝ որպէս և ի վերոյ գրեցաք: Ուրեմն՝ հարկաւոր գիտեալով զգրեալքս, հոգ տարջիք բարւոքապէս՝ և մեզ գրեսջիք, որպէս և պատշաճ տեսանիցէք: Այլև՝ ահա նորապէս յղեցաք զուզարսըն մեր և զՋորիան, զի զփողով առեալ ցորեանն բերցեն՝ որքան ջուրն չէ առատացեալ: Եւ ընդ նոսին եկօղ Թուանկէզոն հետ և պահարանով գիր յղեցաք, որ պարտի հասանիլ ի մեծն Պօլիս առ նուիրակն Մեր Մինաս Աստուածաբան վարդապետն: Զոր դու՝ սիրելիդ իմ պարոն Գէորգ. պարտիս մեկ օր յառաջ հասուցանել ի կարին առ մեր վէքիլ պարոն Հայրապետն, զի յղեսցէ շուտով ի Մեծն Պօլիս առ Մինաս վարդապետն զի հարկաւոր գրեանք են: Եւ թէ ի Կարնոյ կամ Պօլոյ Թուղթ եկեսցէ վասն մեր ի ձեռս քո, շուտով հասուսցես մեզ: Եւ զամենից մեզապատշաճ որպիսութեանց Աս գրեսցես մեզ, իսկ և՝ դու զայս Աս յայտ կապէս ծանիր սիրելիդ իմ պարոն Գէորգ: Զի մեր տզայքն որք այսի եկին, պատմեցին մեզ զմահ գեռահաս և նորաբողբոջ գաւառն քոյ. և որոյ աղագաւ ղքոյդ տրտմութիւնն և զտխրութիւն: Ուստի՝ մեզ Աս եղև արբատ՛ութիւն մեծ՝ որ այդպիսի կսկծոյ ես պատհեալ: Այլ սակայն՝ զինչ կարօղ եմք առնել. զի գործ ամենակալին Աստուծոյ է: Որև իւրով ողորմութեամբն միխթարեսցէ զվիշտ՝ առցեալ սիրտ քո և ամենից ընտանեացդ, և զՀոգի նորին խառնեսցէ ի յերամս արդարոցն, և հանգուսցէ ի լոյս երեսաց իւրոց: Եւ պահեսցէ զձեզ յամենայնի անփորձըս և անսասանս, ուրախալիս՝ և զուարճալիս. ի փառս ամենասուրբ անուան իւրոյ: Գրեմ սիրելւոյդ՝ զի աւելորդաբար մի տըրտմիցիս. այլ գոհացող լիցիս զԱստուծոյ, զի նա ետ, և նա էառ. եղիցի անուն նորա օրհնեալ: Իսկ զոր ինչ ի վերոյ գրեցաք, թէ վասն ախթարմայիցն և թէ այլ երեսց. վասն ամենիցն արարեալ զՀոգս՝ որպէս վայել է, զպատասխանի թղթոյս շուտով գըրեսջիք մեզ: Եւ այսպէս գիտացեալ՝ լերուք ողջ ի տէր: Գրեցաւ ի ԻՄԼԱ. ի Մարտի:

Թուղթ շնորհակալութեան առ մեծ իշխանս գրելի. որ գրեալ լիցին զշնորհաւորութիւնս առ նորոգ կաթողիկոսն, և յամենայնի զջատագովութիւնս և զհարազատութիւնս իցեն ցուցեալ: Որ այժմ գրեցաւ ի Պօլիս առ հանգուցեալ Պետրոս Ամիրայի որդի Մկրտիչ Ամիրայն:

Թուղթ շնորհակալութեան դարձեալ ըստ մտաց վերոյգրեալ թղթոյգ, առ նորոգ կաթողիկոսն: Աւրտհանեալ ի դոյն թղթոյդ վերոյդրեցելոյ: Որ գրեցաւ առ Ղազար Ամիրայն ի Պօլիս:

Թուղթ առ Տառապհանայի Ստեփաննոս Ամիրայն, ի Պօլիս, այլ և, նոյն մտօք՝ որպէս վերոյգրեալք է:

Թուղթ շնորհակալութեան վասն զանձանակաց հասեալ արդեանց
Առ Ղատի գիւղի ժողովուրդսն է:

Թուղթ շնորհակալութեան գարձեալ՝ վասն զանձանակի հասեալ արդեանց, առ ժո-

ղովուրդն Իւսկիւտարու սուրբ Խաչ եկեղեցւոյն։

Թուղթ շնորհակալութեան, դարձեալ վասն դանձանակի հասեալ արդեանց. առ ժողովուրդն Իւսկիւտարու սուրբ Կարապետ եկեղեցւոյ։

Թուղթ շնորհակալութեան դարձեալ վասն հասեալ արդեանց դանձանակի։ Առ ժողովուրդն Օրթագեղու։

Թուղթ շնորհակալութեան՝ դարձեալ վասն դանձանակի հասեալ արդեանց։ Առ Խաչ գիւղի ժողովուրդն։

Թուղթ շնորհակալութեան, դարձեալ վասն հասեալ արդեանց դանձանակի։ Առ ժողովուրդն Պալաճու սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն։

Թուղթ շնորհակալութեան վասն հասեալ արդեանց դանձանակի, առ Սամաթիայու սուրբ Գէորգ եկեղեցւոյ ժողովուրդն։

Թուղթ շնորհակալութեան դարձեալ, վասն հասեալ արդեանց դանձանակի։ Առ Ղալաթայու սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյ ժողովուրդն։

Թուղթ շնորհակալութեան, դարձեալ դանձանակի։ Առ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ ժողովուրդն, որք ի Ղումղափու,

---

Թուղթ շնորհակալութեան, առ Խանում օղլի մահտեսի Միրիչան, մահտեսի Յովհաննէս՝ եւ Եփրեմ Ամիրայեան, ի պատասխանի շնորհաւորական թղթոյն իւրեանց։

Թուղթ վուսուլայակերպ առ մեծին Պօլսոյ Նուխրակ Մինաս վարդապետն, թէ ահա դրեցաք Մուրատեան Յակոբ Ամիրային, (որպէս ահա դրեալ դոյ ի վերն, ի համարն..) լինիլ Մուխամէլի վախտալ տանցն սրբոյ Աթոռոյս որք յայդր, հասու լինիլ սրպխուխթեանց, եւ առնուլ գհան նոցին ըստ ժամանակին։ Եթէ յանձն առնուցու, ասա եւ դու նմա պայսոսիկ. զի գհին Մուխամէլի տիրացու Մանուէլի հաշիւն լաւապէս առնուցու. եւ զամենայն վախտալն մեր՝ թէ որք գոն այժմ, եւ թէ՝ որք անյայտացեալք են յանհոգութենէ, բերցէ ի ձեռն եւ սրբան ոանտաք գոն նոցա (որք են վախտալնամայք) արկցէ զամենս ի դաւթար։ Եւ զայն ի արարեալ, զմիննայդեսցեն ի սուրբ Աթոռս, կնքով իւր՝ եւ նուխրակին. եւ լզմիւան նոյնպէս կնքեալ նուխրակն, թողցէ անդ առ ինքն։ Նոր եկետազայ նուխրակը՝ ով որ եւ երթիցէ, տեսցեն զայն, վերահասու լիցին եւ կնքեսցեն, Եւ այլ ես որ ինչ այսուհեւ յաւելցի վախտալ, ի նոյն ի դաւթարսն գրեսցին. թէ անդ՝ եւ աստ։ Զայս ամենայն ինքն Մինաս վարդապետն գրեալ էր աստ և մեք այսպէս գրեցաք, զի ընդ Մուրատեան Յակոբ Ամիրային խօսեսցի և այսպէս առնել տացէ,

---

Փուսուլայ առ Մինաս վարդապետն ի Պօլիս, վասն նոյն վերոյ ասացեալ վախտալ տանցն մերոց՝ որ անգ։

Թուղթ առ սրբոյ Երուսաղէմի վէրին Տիրացու Սարգիսն ի Պօլիս. պատասխանի շնորհաւորական գրոյն, սէր և օրհնութիւն։

թուղթ ի վերայ մեծին Պօղոսի. շնորհակալութիւն եւ օրհնութիւն, մինչ զՓարնանան եւ զրազմակնիք թուղթս ընդունելութեան եւ շնորհաւորութեան յղեալ էին ընդ Պետրոս վարդապետին։ Ընդ որս եւ զկանոնս պատուհասուորս, որպէս վայել է հայրապետի զկնի օծմանն զրնել զկանօնս առ ազգս Հայոց։ Յօրտանակելով եւս զկնի այսորիկ զկանոնս Ամոռաշահս եւ ազգաօգուտս զրնել եւ յղել։ (Ընդ որում եւ խնդրեալ էին նոքա)։

Ծորմէ ժամանակի թուղթ սիրոյ ողջունի և օրհնութեան։ Եւ նամակ պահպանութեան, խաղաղութեան և խնդութեան։ Հանդերձ բազմապատիկ օրհնութեամբն Հօր Աստուծոյ. նախախնամողական գթութեամբն Միածնի Որդւոյ. և ամենամեծ ողորմութեամբն Հոգւոյն սրբոյ։ Նաև՝ փրկարար ըղձութեամբ սրբոյ խաչին Քրիստոսեան. արագահաս օդնականութեամբն՝ նորին կողմանէս և կենարար Արեամբն ներկեալ սրբոյ դեղարդեան. համասփիւռ և հոգետած Շնորհօքն առաքելական. առատաձիր պարդևօքն շնորհաւոր սրբոյ տեղւոյս՝ Միածնի իջման. և յոդնաջան ձրիւք Քրիստոսաշօշափ աջոյն սրբոյ լուսաւորչական և հոդեպարար շնորհաբաշխութեամբք համայնից իսկ բաղմահրաշ սրբութեանց և սքանչելագործ նշխարաց սրբոց՝ որք ասա կան ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց, հարազատ և հաւատարիմ զաւակացդ սրբոյ Աթոռոյս. հայկասէր լուսաւորչակրօն՝ և միաբնադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս։ Որք կալք զեռեղեալք ի Յաստուածախնամ և յարքայապերճ մայրաքաղաքդ մեծ՝ ի Կոստանդնուպօլիս, և ի դորին մեւձակայ և առընթեր եղեալ շէնսդ տիրապահ։ Ծորս կաւուցեալ Քրիստոսահիմն եկեղեցեաց սրբոց՝ և եկեղեցականաց դասուց։ Նախ՝ սիրելի և յարդելի եղբօրդ մերոյ՝ և շնորհնակալ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Տեառնդ Յովհաննիսի աստուածարան վարդապետիդ և արհի եպիսկոպոսիդ, արժանաժառանդ և վայելչապաւիս պաարիարքիդ և հոգեւոր այցելուիդ դոյնոյ աստուածապահ մայրաքաղաքիդ մեծի։ Ապա և այլոց համայնից ճշմարտավէպ վարդապետաց. և սրբանուէր քահանայից ամենեցուն աւագաց և երկրորդաց. ուսուցչատեսչ սարկաւագաց, և ընտից եկեղեցական մանկանց։ Այլեւ՝ շքեղապանծ և պերճափառ իշխանապետաց և իշխանաց. նորահաս տառաջնեռաց, բարեճոխ և փառազարդ դասլաթաւորաց և մեծատանց, հարազատ և հաւատարիմ դանձապետաց՝ և եկեղեցական իշխանաց. արևելական և արեւմտական իմաստնախոհ վաճառականաց. միևնոյն ունօղ կշռոյ՝ հացադործ վարպետաց. բազմահմուտ արուեստապետաց և վայելչադործ արուեստաւորաց։ Եւ այլ առհասարակ ժողովրդականաց խմբից, մեծաց և փոքերց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, խնդալ իտէր յարաղուարճ ցնծութեամբ և ուրախութեամբ։ Ամէն։

(Շնորհք)

Օրհնութիւն Հօր, պահպանութիւն Որդւոյ, և նախախնամութիւն ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ՝ եղիցի ի վերայ ձեր հանապազ, և օրստօրէ լցուսցէ զձեզ փառօք։

Եւ ընդ շնորհաղեղուն օրհնութեան և սիրոյ սղջունատաք նամակիս, ծանուցանեմ լիցի սիրելեացդ մերոց ի Քրիստոս, հարազատ և օգտաչան որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, Զի ամենարարին և պատճառն ամենից բարեաց Աստուած՝ որ արարողն է ամենայնի, և մշտնջենաւոր՝ և յաւիտենական, ըստ որում ինքն է միայն յառաջ քան զժամանակ՝ և արարիչ ժամանակաց մանաւանդ՝ և գիտող իսկ և քննիչ ամենից դաղտնեաց և անեւևութիւց. վասն այնորիկ յամենեցունց՝ որք ի ժամանակի են եղեալք, լռեցոյց գգիտութիւնս ժամուց և ժամանակաց ըստ այմ, որ ասի ի դիրս դործոց. ոչ է ձեզ դիտել զժամս և զժամանակս՝ զոր Հայր եդ յիւրում իշխանութեան։ Եւ զի զդիտութիւնս ժամանակաց լռեցոյց Աստուած յարարածոց աստի, վասն այնորիկ և լինելոցք յիւրաքանչիւր ժամանակի, են անդիտելիք ի մէնջ յամենեցունց. որպէս և Սողոմոն վասն այսորիկ ասէ, զամենայն յաւիտեանն ետ Աստուած ի սիրտս որդւոց մարդկան. որպէս զի՛ մի գացէ՛ մարդ զարարածն, զոր արար Աստուած ի սկզբանէ մինչև ցկատարած։

Այսինքն, զյաւիտեանն ամենայն այնպէս սահմանեաց Աստուած որդւոց մարդկան, և այնպիսի զգաղմամբ եհից զաչս

սրտից նոցա. զի մի՛ գտանել և գիտել կարասցեն զայն ամենայն, զորինչ ինքն նախասահմանեալ և անօրինեալ է յիւրաքանչիւր յաւիտեանն՝ ի սկզբանէ մինչև ցկատարած։ Քանզի՝ զգիտուԹիւնս ամենից նախասահմանելոցն իւրոց՝ ինքեան միայն եԹող Աստուած, առ ի յայտնել զնիւրաքանչիւրն ի նոցանէ՝ յիւրաքանչիւր ժամանակի։ Որպէս և յայտնեալ է իսկզբանէ մինչև ցարդ զյոգունս և զանԹիւս, մանաւանդ զմեծամեծս և զանպատումս. և ևս յայտնելոց է մինչև ցկատարած։ Ընդորս հիացեալ Ցօրայ ասէր, որ առնէ զմեծամեծս՝ և զանքննինս՝ զփառաւորս՝ և զհրաշակերտս՝ որոց ոչ գոյ Թիւ։ Եւ ԹէՀ զինչ իցեն պատճառք՝ զի լըռեցոյց Աստուած ի յորդւոց մարդկան զգիտուԹիւնս ապագայ ժամանակաց՝ և լինելեացն որք ի նոսա, Ասեմ առ այս ԹՀ՝ զզօրեղագոյն և զմեծագոյն պատճառսն այսորիկ՝ առ որս դժուարահասք են միտք մարդկան, նոյն ինքն նախասահմանողն Աստուած միայն գիտէ։ Իսկ որքան առ հասուն տակաւ մտաց մարդկան եկեալ է ի ծանօԹուԹիւն, է այս։ Զի ԹՀ գիացի մարդս ԹՀ՝ յիրակուԹենէ իմեքՀ՝ (յոր ձեռնամուխ լինիլ՝ և առնել հարկաւորի.) ծըռնանելոց է ինքեան վիշտ իմն և ցաւ մարմնական, ոչ երբէք ձեռնամուխ լինէր ի յայն, եԹէ կարիցէր գտանել ղՀնարն Հրաժարիլոց յայնմանէ։ Զոր և ոչ իսկ առնէր, ԹէպԷտ և օգուտք ևս իցէին յառաջանալոց ի նըմանէ՝ ինքեան, կամ այլոց։ Ուստի՝ իրակուԹիւնն այն ժէ այլևս արարեցեալ լինէր ի նմանէ. և օգուտն ևս որ յայնմանէ լինելոց էր, այլ ոչ յառաջանայր։ Եւ ըստ այսմ, բազում իրակուԹիւնք օգտաւորք և բաղմաշահք՝ ինչային լռեալք և անգործք, նոյնպէս եԹէ՝ գիտիցէր ևս մարդս ԹՀ՝ յիրէ՝ և կամ յիրակուԹենէ իմեքՀ՝ բարեդիպուկ իմն պատահումն Հանգիպելոց է ինքեան յայս ինչ ժամանակի, լինէին և յայնմանէ վնասք մեծագոյնք՝ ինքեան և այլոց։ Զի նախապէս՝ անկանէր ինքն ի մեծագոյն նախս ՀպարտուԹեան։ Եւ ըստ իւրոց արժանեաց վարկանէր զպատշաճն բարւոյն այնմիկ ինքեան մանաւանդ՝ քան ԹՀ Աստուածային ողորմուԹենէ և ի շնորՀս։ Ուստի՝ և խափանէր զայն ի նմանէ Աստուած՝ (որ Հակառակն կայ ամբարտաւանից՝ և տայ ղշնորՀս խոնարՀաց։) և այլ ոչ տայր նմա զայն՝ զոր տալոցն էր։ Երկրորդ՝ զի չՀամբերէր ևս մինչև ցժամանակն, յորում տալոց էր ինքեան զբարին զայն Աստուած, այլ վաղվաղէր, և անկանէր յորոգայԹս, որպէս և ասէ Ոզոմոն, որոգայԹ է առն վաղվաղել և Սիրաք, որ վաղվաղկոտ է ասէ, ԹեԹեւասիրտ է, և փոքրկասցի։) Ա՛տանաւանգ՝ և առ ի Հանդիպիլ փուԹապէս այնմիկ բարւոյ, գործէր զանպատեհս մեծամեծս, ընդդէմ Աստուածայինն կամացս, վասնորոյ՝ և յայնմիկ ևս բարեկեցեալ նմա Աստուած, արգելոյր ի նմանէ՝ զոր տալն կամէր։ Եւ որինչ ևս շՀք և օգուտք Հասարակաց լինելոց էին յայնմանէ, այլ ոչ ևս լինէին, Եւ ահա յայտ եղև յասացելոցս ԹՀ՝ յերկաքանչիւրոցն ևս, այսինքն ԹՀ յայնմանէ՝ որ վասն օգտից անձնականաց՝ փախչիցէր մարդս ի Հասարակօգուտ իրակուԹենէ գիտելով զապագայ ցաւսն անձականս և ԹՀ յայնմանէ որ գիտելով զապագայ Հանգիպելոց բարիսն՝ և անդէպ բաղձանօք բաղձալով այնց՝ զանպատեհս գործիցէր, յառաջանալոց էին ինչք մեծագոյնք, իւրեանց՝ և այլոց։ Որք ԹՀ լինիցէին իրաւի այսպէս, ոչ աշխարհաշինուԹիւնն առնոյր զկայ, և ոչ ԹՀ՝ Ամենարարի կամաց Արարչին սորին Աստուծոյ բարեՀաճոյ գործք յառաջանային ի սմա։ Այլ զի՝ նոյն Արարիչն և նախախնամողն ամենայնի՝ որ ստեղծ զաշխարՀս և զամենայն որ ի սմա և խնամ տանի առատաձեռն իւրոց՝ առ ի բարւոքապէս կեալ՝ և կենցաղավարիլ և ինալ աշխարհի ի սիրահաճ բարեկարգուԹեան և ի շինուԹեան և բնակչացն ի սմա՝ ի բարւոքագոյն կեցուԹեան. վասնորոյ մինչ նախահայեաց և ամենատես նկատմամբն իւրով գիտէր Աստուած ԹՀ՝ եԹէ լինիցի մարդոյն նախագիտուԹիւն, ոչինչ օգտուԹիւնք անտի լինին՝ որպէս ցուցին ոչ նոյնոյ ինքեան մարդոյն՝ և ոչ աշխարհի ապա՝ լռեցոյց առ ի սոցունց զգիտուԹիւնս ապագայ ժամանակաց՝ և իրակուԹեանցն որք ի նոսա։ Որպէս զի՝ որ ինչ և լինելոց իցէ մարդոյն յամենարարի անարկուԹենէ բարերար կամաց Ամենակալ ՏէրուԹեան իւրոյ՝ յանկասկածս իմն լինիցի, յորմէ յառաջասցին բա-

րութիւնք, և խափանեսցին ինձանք և չկարիցէ մարդ գիտել զլինելոցն։ Որպէս և եղեալ իսկ է ահա։ Ըստ որում և ասէ իմաստունն ոչ ոք է՝ որ գիտէ՝ եթէ զինչ է որ լինելոց է. վասն զի որպէս լինիցէ ով պատմեցէ նմա։ Արդ՝ ըստ այսց ասացելոցս րանից՝ տեսանելի է և մեր կոչելն ըստ ամենաբարի ակնարկութեան Աստուծոյ ի յայս շնորհ՝ Բանզի յանկասկածս իմն եկն և գիպեցաւ, որպէս կամեցեալ էր Աստուած, էգիտելով մեր՝ որ ինչ լինելոցն էր։ Վասն զի՝ ո՞ւմ էր յայտնի, և ով էր՝ որ գիտէր, Թէ յայն ինչ ժամանակի՝ և յայնպիսի բազմավանկ և կասկածաւոր ժամու՝ հասանելոյ իցէ վախճան կենաց Հոգելոյս Հայրապետին մերոյ՝ և մեր իսկ Հոգևոր ծնողի, Տեառն Սիմէօնի գերերջանիկ կաթողիկոսին (զոր Տանգուսցէ Տէր ի փառս իւր ի լոյս երեսաց իւրոց ընդ գասս Հայրապետացն սրբոց.) և յաղագս բռնութեան ժամանակին՝ և վտանգիցն մեծագունից յորոց կասկածեաքն՝ (որք և յայտնի իսկ են եղեալ ձեզ.) Հոգելոյս Հայրապետան մեր առնելոց իցէ վասն մեր զկտակ՝ առ ի կոչել զմեզ ի յայս շնորհ, և համայն բազմութիւնք միաբանից և ժողովրդոց առ գլուխ անեցելոց՝ բռնագատելոց իցեն զնուաստութիւնս մեր մեծապէս՝ և արկանելոց ի վերայ մեր ծանրութիւն բեռինս այսմիկ գժուարկրելւոյ։ Արգարև Թէ յառաջագոյն գիտիցէաք զլինելոցս զայս՝ որ եղև, այսինքըն՝ զանկանիլս մեր ի ներքոյ լծոյս այսպիսիկ ծանրագունի. (որք տեսանէաք իսկ աչօք մերովք, Թէ զո՞րքան գժուարութիւնս և զմաշուճն կենաց կրէր յայսմանէ Հոգելոյս Հայրապետն մեր։) Մանաւանդ՝ Թէ գիտիցէաք զայնս Թէ՝ չեն պատահելոցք տանս սրբոյ ինձանք մեծագոյք՝ յորոց ունէաքն զկասկած և զերկիւղ բազում յոյժ. (յորոց մանաւանդ ստիպեցեալք կարի սաստկապէս յակամայ կամս և առ Հարկի՝ են Թարկեցաք զկամս մեր կամաց ստիպողացն մեզ և առաք ի վրայ մեր զայս ծանրութիւն) Եւս առաւել՝ Թէ զայն եւս գիտիցէաք Թէ՝ յաղագս սոյնոյ կոչմանս մերոյ ի յայս շնորհ՝ լինելոց են այսքան տարաձայնութիւնք եւ այսքան պղտորութիւնք մտաց պարզութեանց, եւ այսքան երկրաձիգ վրդովմունք ի յօրհնեցելումդ մայրաքաղաքիդ, յորոց եւ այսքան կենամաշուխութիւնք մեզ եւ ցաւք սրտից ի յայս երկուս ամս. մանաւանդ եւ ինձանք ծանրագոյնք եւ արգեանց նուաղութիւնք հասատոյ Մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս, ոչ առնուաք յանձն ամենեւին զգժուարութիւնս զայս՝ եւ զմեծագոյնս պաշտօն, այլ հրաժարէաք մանաւանդ՝ եւ փախչէաք յայսմանէ զոր ստուգութեամբ իսկ ասեմ առաջի Աստուծոյ, եւ ոչ ստեմ. ըստ բանի երանելոյն Պօղոսի։ Բայց գի՝ (ըստ վերոյ ասացելոցն քանից,) Ամենատնօրինողն Աստուած՝ լուեցուցեալ եւ թագուցեալ էր ի մէնջ զգիտութիւնս եղելութեանցս այսոցիկ զորս ասացաք, (որպէս եւ յամենից իսկ որգւոց մարգկան թագուցեալ է զգիտութիւնս ապագայից) վասնորոյ ոչ կարացաք ղայսոսիկ գիտել. եւ ինքն որպէս եւ կամեցեալ էր եւ տնօրինեալ ըստ իւրոյ ամենաբարի ակնարկութեան, յանկասկածս իմն եւ ի յեղակարծումն ժամու, էած՝ եւ կացոյց զմեզ ի ներքոյ անտանելոյ ծանրութեան պաշտամանս այսորիկ մեծագոյնի։ Ո՛չ ըստ մերոց ինչ բաւականութեանց եւ արժանեաց՝ յորոց թավուր եմք յոյժ, այլ ըստ իւրում ամենաբաւական ողորմութեան, եւ անճառ մարգասիրութեան՝ եւ շնորհաց. որովք կացոյց զՀովիւս ի մարգարէս՝ եւ զձկնորս ի Առաքեալս։ Որ առատն է ի տուրս բարեաց. եւ հաւասարապէս բաշխէ ամենեցուն պարգեւ եւ զձիրս։ Որ հասարակորգս իսկ արար եւ առնէ զյետինս այգեգործ մշակաց՝ ընդ առաջնոցն։ Որ եւ ըստ նոյնոյ ամենառատ գթութեան իւրոյ եւ շնորհաց, ոչ գարշեցաւ յիմ անարժանութենէն կոչել ի գործ պաշտպանութեան այգւոյս իւրոյ Հոգեւորի, այսինքն ի Հոգեւոր վերակացութիւն, ի Հովուապետութիւն, ի ծայրագոյն պատրիարքութիւն եւ ի կաթողիկոսութիւն օրհնել ազգիս Հայոց, եւ ի յատուկ Հոգածութիւն տանս իւրոյ սրբոյ, լուսակերտի եւ երկնաբատակի Աթոռոյս մեծի Էջմիածնին։ Ցորմէ եւ իմ չկարելով իսպառ Հրաժարիլ եւ ի բաց կալ, երկուցեալ Թէ գուցէ զընդգէմն գործիցեմ Աստուածայինն կամաց, հնազանդեցայ ապա կամաց նորին բարեսիրաց, եւ ետու զանձն

իմ ի սպասաւորութիւն՝ եւ ի գործ պաշ-
ամանս այսորիկ սրբոյ՝ յոր կոչեաց զա-
նարժանութիւնս իմ։ Զայս մտածելով
և աներկբայապէս իսկ հաւատալով թէ
ըստ որում ամենայն տուրբ քարիք և
ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ
են իջեալ առ ի նմանէ ի Հօրէն լուսոյ,
ապա առանց նորին կամաց և ակնարկու-
թեանց՝ ոչ երբէք լինիլ կարէ այսպիսին ինչ,
և թէ լինիցի եւս՝ ոչ կարէ առնուլ զհաս-
տատութիւն եւ ղկայ, ըստ իմաստնոյն բանի
թէ՝ հիմն խախուտ մի հաստատեսցի։ Ապա
որպէս նոյնոյ Հօրն երկնաւորի Միածինն
Որդի ասէ ի յաւետարանն իւր սուրբ, ոչ
ոք կարէ առնուլ յանձնէ և ոչինչ. եթէ
ոչ իցէ տուեալ նմա ի վերուստ։ Զայսո-
սիկ մտածելով իմ և այսոքիւք յուսովք զիս
հաստատելով, հաւատացի իսկապէս թէ՝ ոչ
է այս առանց Աստուածայինն կամաց, զի
որպէս կամեցաւ, նոյնպէս և արար. որոյ
կամք եղիցի օրհնեալ։ Որեւ՝ մինչ զսիրտ
ամենայն մարգկան այնպէս ունի ի ձեռին
որպէս ղսահանս ջրոց։ (ըստ բանի իմաստ-
նոյն.) և ընդ որ կոյս կամի հայեցուցանել՝
գարձուցանէ զնոսա. ապա՝ որպէս յառաջ-
գոյն ազգեաց ի սիրտս միաբանից սրբոյ
Աթոռոյս և ժողովրդոյն աստ նեռկայ եղե-
լոց՝ կոչել զմեզ նուաստութիւն ի յայս
բարձրագոյն շնորհ, նոյնպէս զկնի այնորիկ
ի սիրտս ձեր եւս ազգեաց՝ համակամ և միա-
բան լինիլ սոցին. և զկոչեցեալս ի յազգ-
մանէ իւրմէ ի հոգևոր հովուապետութիւն
օրհնեալ ազգիս հայոց, ընդունել սիրով մե-
ծաւ և հնազանդութեամբ որդիական օք. և
միաբանիլ ձեր եւս ամենեցուն ի մի միաբա-
նութիւն ճշմարիտ՝ և ի սէր կատարեալ և
բառնալ ի միջոյ զամենայն ներհակն սիրոյ
և միաբանութեան, զխռովութիւնսն ամենայն
և զտարաձայնութիւնսն՝ որք գոյին յայգր
ի միջի ձերում՝ յաղագս մեր։ Որք ոչ այլ ինչ
էին յիրաւի, եթէ ոչ տարաբախտութեանս մե-
րոյ արժանահաս դիպուածք կենդանագիրք, մա-
նաւանդ և պատիժք իսկ մեզաց իմոց։ Որ և
ստուգիւ այսպէս հաւատամ թէ՝ զիս զբազ-
մամեղս խրատել կամեցաւ Աստուած նոքօք
ոչ առ առելութեան, այլ առ սիրոյն իւ-
րոյ մեծի և խնամոյն՝ որ առ յետինս ի ըս-
պասաւորաց իւրոց։ Ըստ որում յատուկ է
ամենաբարի բնութեան իւրոյ՝ և անճառ
գթութեան որ առ երկիւղածս իւր սակաւիկ
ինչ խրատու հայրականօք խրատել ղոր-
կամի՝ և սիրէ։ և ապա՝ տալ նոցա գտա-
նել զմեծ զբարութիւնս։ Զի ո՞ր որդի է՝
ղոր ոչ խրատիցէ հայրն ըստ բանին Պօ-
ղոսի։ Ո՞չ ահա ունիմք օրինակ ղհայրն համ-
բերութեան զերանելին Յօբ, որ ղայնքան
անպարտելի փորձանսն կրեաց նախապէս և
յետոյ մեծապէս մխիթարեցաւ յԱստուծոյ։
Ո՞չ ահա և վասն Յօնանու խռովեցաւ ծով՝
անհնարին խռովութեամբ և յընկղմիլն նո-
րին ի ծովն եղև խաղաղութիւն մեծ։ Որ և
թէպէտ կլանեցաւ եւս ի կիտէն մեծէ, այլ
մնաց անդէն ամբողջ և յետոյ եթուք զնա
կրկան ի ցամաք հրամանաւ Աստուծոյ պահ-
պանողին զնա. որ և փառաւորեաց զնա մե-
ծապէս։ Առ այս ասէ ահա երանելին Պօղոս
թէ ամենայն խրատ առ ժամանակն ոչ ու-
րախութեան թուի, այլ տրտմութեան, բայց
յետոյ՝ պտուղ խաղաղութեան նովաւ կըր-
թելոցն հատուցանէ յարդարութիւն։ Որ-
պէս ահա և զմեզ զկնկծեցուցիչք եղեն այնք
դիպուածք առ ժամանակ մի, որք յիրաւի
ոչ ածէին մեզ ղուրախութիւնս՝ այլ զտրտ-
մութիւնս մեծագոյնս, մինչ տեսանէք զխա-
ղաղութիւն նուաղեալ, և զխռովութիւն
բազմացեալ. որովք գուբ ի միաբանութեանց
փեռեկտեալ և վրդովեալ. և սուրբ Աթոռս
և մեք ամենակերպ անյաջողութեամբ հա-
րեալ։ Այլ յետոյ՝ ահա մեզ կրթելոցս և
ճնշելոցս այնու առ ժամանակեայ խրատիւ-
քըն։ հատոյց աէր ամենարդար հատուց-
մամն իւրով զպատուղն խաղաղութեան։ Քարի
է ուրեմն՝ (ըստ ասից հոգեհանճար իմաստ-
նոյն,) վախճան բանից՝ քան զսկիզբն նոցա։
Քանզի սկիզբն ամենից իրակութեանց ան-
կատար է, և վախճանն կատարուն։ Ի ըս-
կզբան իրակութեանց կրեն (որքան և իցէ)
սկզբնաւորօղք նոցին զձանրութիւնս և ըղ-
վիշտս. այլ ի կատարմանն նոցին, թեթե-
ւանան յայնց. և ընդունին փոխանակ վըշ-
տացն զմխիթարութիւնս և զուրախութիւնս։
Որպէս ահա և մեք թեթեւացաք այժմ՝ ի
վշտացուցիչ և ի տրտմեցուցիչ դիպուածոցն
յայնցանէ. և եղաք արդարև միխիթարեցեալք
և ուրախացեալք, զուարճացեալք հոգւով
և խնդացեալք սրտիւք։ Վասն զի ամենայնի

ժամ է և ժամանակ ըստ բանի իմաստնոյն։ Որպէս յայնժամ ժամանակ էր տրամելոյ, այնպէս և այժմ ժամանակ է ուրախանալոյ։ Ոակայն՝ երկաքանչիւրքն եւս բարիք։ Վասնզի՝ զամենայն ինչ արար Աստուած բարի ի ժամանակի իւրում. ըստ նոյնոյ իմաստնոյն բանի։ Զի թէ չիցէր այն տրտմութիւն յայնժամ, այժմ չլինէր այս ուրախութիւն։ Եթէ չլինիցէր յայնժամ սուգ ինչ միջոցաւ պաղել ոմանց ի սիրոյ, այժմ չլինէր րովանդակից ձեր ամենեցուն մեծապէս ջերմանալ՝ եւ վառիլ քան զառաջինն ի ներքադոյն սէր եւ ի հարազատութիւն առ սուրբ Աթոռս մայրս ձեր լուսատուս. եւ առ հայրութիւնս մեր հոգեւոր։ Զորս զամենայնսն իմացայք և ծանեաք, և եղաք սրտաշահք։ Քանզի հասին առ մեզ բազմակնիք թուղթքն ձեր համահաճականք, ընդունողականք և սիրայօտականք. հանդերձ յատուկ թղթովք սիրելի եղբօրդ մերոյ պատրիարք աստուածապան վարդապետիդ և օրհնեալ իշխանապետացդ՝ և իշխանացդ. նա և՝ նոմոսիւք մեծաղօր և ինքնակալ արքային արքայից. զորս սիրավառ ըղձիւ հոգացեալ և յղեալ էիք ընդ բազմակնքացն ձերոց թղթոց՝ ի ձեռն հոգեւոր որդւոյն մերոյ՝ և ծոցածին ղաւակին սրբոյ աթոռոյս Պետրոս հանճարաշատ վարդապետին, որ և էհաս աստ ի փետր. Բ, ի բարւոք ժամու՝ և յուրախութեանն պատուհու։ Ուստի եղև մեզ ուրախութիւն մեծ ի վերայ ուրախութեանն։ Որք և. սիրով մեծաւ առընկալեալ զնոսին, այսինքն զնոմոսսն Արքունի, և զթուղթսն ձեր համահաճական և. զյատուկս. մեծաւ հանդիսիւ և ուրախութեամբ ընթերցաք, ծանեաք գՀամայն դրեալսն ի նոսա՝ զօգտակարագոյնսն յիրաւի։ Մանաւանդ՝ զմիարանիլն ձեր ամենեցուն միով սիրով՝ եղբայրութեան, և լինիլն համակամք և միախորհուրդք։ Զտեղի տալն խռովութեան, և զհաստատիլ խաղաղութեան, և զհանգարտիլն իսկ ամենից մտաց։ Իմացեալք նաև՝ զՀամայն բանսն ձեր զուարճարարս, այսինքն զհարազատականսն՝, զհնազանդականսն՝ ըստ որդիականի հնազանդութեան։ Զհնորհաւորականսն մերոյս կոչման ի յայս ներքադոյն աստիճան։ Զհաւհեցողականսն ըզմխիթարականսն և զսփոփականսն, որովք շահեալ և մխիթարեալ էիք զմեզ վասն անցելոց իրակութեանցն վշաացուցչաց։ Զգ-սրատացաւականսն, զմտերմականսն, եւ ըզյուսադրականսն. որովք ցուցեալ էիք զցաւագին սրտից ձերոց հարազատ որդիաբար, վասն Մօրս ձերոյ լուսատուի եւ բազմաբախտի, եւ հայրութեանս մերում հոգեւորի։ Որովք եւ յուսադրեալ էիք զմեզ վառիլ այսուհետեւ ի ճշմարիտ եւ ի գերադոյն սէր եւ ի հարազատութիւն ի բարի չանացողութիւն եւ յօգտաբարութիւն առ սուրբ Աթոռ Մայրս ձեր՝ եւ առ մեզ։ Զորս զամենայնսն՝ հարազատ եւ քրտաջան որդին սրբոյ Աթոռոյս եւ սիրելին մեր, եւ ծայրագոյն նուիրակն օրհնեցելոյ քաղաքիս Մծնաս Աստուածաբան վարդապետն եւս՝ գրեալ էր մեզ յոյժ շնորհակալութեամբ։ Նոյնպէս՝ եւ հոգեւոր որդին մեր Պետրոս խոհեմատատ վարդապետն եւս պատմեաց զամենայն բերան առ բերան՝ մեծաւ գոհունակութեամբ. հանդերձ յատուկ սիրով եւ շահեցողութեամբք եւ մարդասիրութեամբք՝ զորս աեսեալ էր ի ձէնջ ամենեցունց։ Ընդորս ամենեսեան շնորհակալեալ մեր զՀարատատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ և զսիրելեացդ մերոց ի Քրիստոս, որպէս զսիրելի եւ զյարգելի եղբօրէդ մերմէ՝ զՊաարիսրբ Աստուածարան վարդապետէդ եւ զամենից իսկ շնորհընկալ որդւոցդ սրբոյ Աթոռոյս եւ մեր՝ զվարդապետացդ ուղղապատմից, եւ քահանայիցդ սրբասիրաց։ Եւ զԱստուծով զօրացեալ իշխանապետացդ՝ և զիշխանացդ ամենեցունց. և զՀամօրէն օրհնեալ և զքրիստոսասէր ժողովրդոցդ։ Եւ մեծաւ օրհնութեամբ օրհնեցաք զձեզ զամենեսեան առաջի սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի, Հայցելով ի նմանէ՝ վարձատրել զձեզ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝ փոխանակ այդքան սիրոյ ձերոյ և հարազատութեան, սրտացաւութեան և օգտարարութեանն։ Որ և նոյն ինքն վարձատրիչն ամենայնի, վարձատրեսցէ զձեզ զամենեսեան բարի վարձուք յերկակի կեանս ձեր։ Զորս և օրհնեսցէ և զօրացուսցէ պահեսցէ հանապազ ի խնամս իւր՝ և փրկեսցէ յամենայն չարէ, ի փորձութեանց հոգեկանաց և ի մարմնականաց, և ի թշնամեաց աներեւութից՝ և յերևելեացս։ Եւ որպէս դուք զմեզ մխիթարեալ էիք և սփոփեալ, մխիթարեսցէ և նա զձեզ յամենայն վիշտս

և ի արամութիւնս ձեր. և արասցէ միշտ ուրախս և զուարճալիս: Եւ փոխանակ օգտասիրութեանցդ ձերոց և բարի ջանից, որք յարաժամ զօգուտն սրբոյ աթոռոյս և ըզմեզ՝ կամիք և առնէք լինելով մեզ օգնականք և ձեռնտուք յամենայնի. լիցի ընդ ձեզ յամենայն ժամ ի բարութիւնս: Եւ եւս օրհնեսցէ զմիաբանութիւնս ձեր և զհամակամութիւնս առ ի բարիս. պահեսցէ զձեզ զամենեսեան ի սէր եղբայրութեան, առնելով իսկ համաշունչս և համամիտս, օժանդակս միմեանց և կարեկիցս: Արասցէ ևս զձեզ ածեցունս և առատացեալս միշտ՝ ի հանճարս ձեր՝ և ի խոհականութիւնս. ի յիմաստս՝ և ի գիտութիւնս, ի յընթացս բարութեան և յօգտակարութիւնս: Մանաւանգ՝ արասցէ զձեզ զամենեսեանսն, լցեալս ամենապատիկ բարութեամբք, և ուռճացեալս լիութեամբ, յառաջացեալս բարեյաջողութեամբ, և պերճացեալս բարի անուամբք. պայծառացեալ սուրբ հաւատովք, փայլեցուցեալս մաքուր վարուք, ծաղկեցեալս աստուածպաշտութեամբք, և զարգարեցեալս հոգեկան առաքինութեամբք ի փառս Ամենասուրբ անուան իւրոյ՝ և ի յուրախութիւն մեզ ասպ այժմ, ինայ մեզ զայս ասել սիրելի և հոգեւոր որգւոցգ մերոց՝ և լուսածնունդ զաւակացդ Մօրս հաւատոյ՝ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Զի որովհետև՝ (որպէս ի վերոյ ևս ասացաք) կոչեաց մեզ Տէր ի պաշտպանութիւն իւրատունկ Այգւոյս հոգեւորի այսինքն սրբոյ և Առաքելական եկեղեցւոյս Հայաստանեայց. նաև՝ իւրակերտի Աթոռոյս սրբոյ և մեծի. վասնորոյ գոյ ի վերայ մեր հարկ և պարտականութիւն, ի մշակել և ի պաշտպանել զսա ըստ կարողութեան մերոյ: Ուստի՝ ըստ որում և խոստացեալ էիք մեզ հանդերձ յուսադրութեամբք լինիլ մեզ օժանդակք յամենայնի՝ և ձեռնտուք, առ ի բարւոքապէս և յաջողաբար տանիլ զԿոգ այսմ պաշտպանութեան հոգեւորի, խնդրեմ ապա և ես ի սիրելեաց իմոց և ի հոգեւոր որդւոց՝ զՆգեսին իրս, առ ի յօժանդակութիւն տակարութեանս իմոյ. Որք են այսոքիկ. Նա խաւալէն՝ խնդրեմ ի ձենջ զօժանդակութիւնս Աղօթից, որովք կարացից հոգալ զՏարկաւորութիւն Ազգիս օրհնեցելոյ՝ և զՀաստատոյ Մայրս ձեր զսուրբ Աթոռս Ֆանզի՝ ամենակերպ խուժանք կուտին՝ և կուտելոց են ի վերայ մեր օրստօրէ, և կրելոց եմք ի յամենուստ զվիշաս: Ուստի՝ զինդիր երանելւոյն Պօղոսի զոր խնգրէր ի հաւատացելոց. խնգրեմ և ես ի հաւատացեալդ Ցեառն ի յատուկ ցաւակցացդ իմոց: Այսինքն է՝ պատերազմակից լինել ինձ յաղօթըս վասն իմ առ Աստուած՝ Զի ապրեցայց յապստամբաց ամենեցունց՝ որք շուրջ պատեն զինև. և որք յուրեք յուրեք երևելոց են ընդ դիմակայօղք ճշմարտութեան, որք ամենեքեան մաշելոց են զիս ի վիշաս յամենայն կեանս իմ. ընդ որս և մեք ոգորելոց եմք մահու չափ տաժանմամբք: Պարտիք ապա՝ օժանդակել մեզ յայսոսիկ աղօթիւք, զի ապրեցեալք յայնպիսեաց՝ կարասցուք զՀոգեւոր Այգիս Աստուածատունկ այսինքն՝ զՀաստարակութիւն Ազգիս մերոյ՝. և զսուրբ Աթոռ Մայրս ձեր լուսատու, բարեպէս մշակել և կառավարել: Որպէս զի՝ թէ չկարիցուք յաւելուլ ինչ ի վերայ տառաջնոցն բարեզարդութեանց, գոնեայ՝ և չպակասեցուսցուք ինչ. զի մի զանխրաւ և զանհատատարիմ մշակացն ընկալցուք զդատաստանն: Նոյնպէս վշտակցաբար աղօթել խնդրեմ և վասն սոյնոյ Այգւոյս Հոգեւորի. այսինքն Հաստարակութեան ազգիս մերոյ՝ որք հարեալք են յամենայն ուրեք անկայզուզութեամբք, որպէս և ձեզ իսկ յայտնի է, Եւ վասն սրբոյ Աթոռոյս Մօրս ձերոյ վըշտակրի՝ որ ահա ի յերկար ժամանակս կըրեաց և կրէ զձախորդութիւնս մեծամեծս: Որոց վասն ասել և զրան երջանկին Դաւթի թէ՝ Աստուած զօրութեանց, դարձ՝ հայեաց յերկինից և տես, այց արա այգւոյս այսմիկ, և դարմանս տար սմա՝ զոր անկեաց Աչ քո: Շրկզրորդ՝ պարտիք ի սուրբ՝ և յուզղափառ՝ և ի Միաբնագաւան Հաւատս ձեր և .Աստուածպաշտութիւնս որ ի Հայս՝ ի Որդի և ի Սուրբ Հոգին՝ ըստ Հայոց սուրբ եկեղեցւոյ՝ Հաստատուն և անշարժ լինիլ՝ և ի սոյնս կալ միշտ հեռի և անխառն մնալով յամենայն օտար վարդապետութեանց, որք ոչ են ըստ ուղիղ մտաց և ըստ լուսաւոր վարդապետութեանց նախնեացն մերոց երանելեացն: Մանաւանդ՝ զգայշ և հեռի լինելով յամենայն եղբայր անուանեցելոց՝ որք զտատհական

գնայցեն, և ոչ ըստ ողջամիտ վարդապետութեան Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ։ Եւ եթէ ոք ի ձէնջ հետիցի ի յուղիղ հաւատոյ, խոստովանիջիք զայնպիսին բազմից, ղի դարձցի յուղղութիւն։ Իսկ թէ յամառեսցի՝ և ոչ լսիցէ, հեռի կացջիք յայնպիսւոյն, զոր և որոշեսջիք ի միաբանութենէ ձերմէ՝ որպէս և առնէքդ իսկ. որոց Ցէր լիցի վարձահատոյց։ Քանզի՝ փետեալ անդամ հատանիլ պարտի փուճով ի մարմնոյն, ղի մի և յայլսն փոխեսցի ապականութիւն նորին։ Ընկրկողն՝ աղաչեմ սիրովն Աստուծոյ ղհաւատոյ որդիսդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ղի ընդ սուրբ և ուղղափառ հաւատոց ձերոց՝ ստասջիք ևս զգործս սուրբս՝ ուղիղս՝ բարիս և Աստուածահաճոյս, զորս և ունիջիք միշտ, քանզի երկոքեանցդ՝ այսինքն ուղղափառ հաւատովք և բարի գործովք զԱստուած պաշտելն է ընդունելի Աստուծոյ։ Վասնորոյ, և պատուիրեմ ձեզ ամենեցուն, զսէրն Աստուածային ճշմարտութեամբ ունիլ առ միմեանս, և խաղաղութեան ղՀետ երթալ, և յերկիւղ Ցեառն կրթել զանձինս ձեր։ Ի բաց մերժել զստութիւն, և խօսիլ ըզճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, և պահել ի ձեզ զմիաբանութիւն Հոգւոյն յօրէնս խաղաղութեանն։ Ունիլ ըզգութիւն և զսէր ճշմարիտ եղբայրութեան ե. հաւատոյ ընտանութեան և ընկերութեան՝ առ միմեանս. և մոռանալ զամենայն խռովարիթ անցսն, և այլ ոչ ևս յիշել զայն ամենայն. այլ բոլորովիմբ բառնալ ի միջոյ ձերմէ և ի մտաց իսկ՝ զայն ամենայն դիպուածսն։ Որպէս զի՝ ի բառնիլ պատճառացն խռովութեան, բարձցին և պատճառելիքն նոցին խռովութիւնքն անբարիք։ Եւ այսպիսեօք բառնալ ի միջոյ զամենայն ներհակսն բարեաց։ Որք վերակացուք և հոգեւոր հովիւքդ էք հօտիցդ Ցիրականաց, մանաւանդ՝ սիրելի եղբայրդ մեր և Աշխելուդ գոցին Հոգեւոր Պատրիարք Աստուածաբան վարդապետդ պարտիք ի յօրէնս Աստուծոյ առաջել զժողովուրդսդ ձեզ հաւատացեալ. զորս և ի լուսաւորչագիր՝ սուրբ և յուղղափառ հաւատս պահել միշտ։ Դու յարգելի եղբայրդ մեր՝ զսոյնս միշտ պատուիրելով քահանայից, և արիացուցանելով ի պաշտօնըս իւրեանց՝ յարարքն հակմամբ քանասցես պահպանել զՀօտդ Ցեառն։ Եւ դուք քահանայքդ, պարտիք բազմօք հնազանդութեամբք ունկնդիր լինիլ վերատեսչիդ ձերոյ Հոգևորի և զամենայն հրամայեալսն ձեզ՝ առնել երկիւղածութեամբ, և պահպանութեան Հոգեւոր հօտիցդ ձերոյ՝ բարւոքապէս ունիլ զփոյթ, խրատելով միշտ և ջանալով ուղղել զամենեսեան առ ի բարիս։ Իսկ դուք ժողովրդականացդ դասք, պարտիք մեծաւ երկիւղիւ և ամօթխածութեամբ հնազանդ և հպատակ կալ սիրեցելոյ եզբօրդ մերոյ և արժանավայել վերագիտողիդ ձերոյ պատրիարք Աստուածաբան վարդապետիդ և քահանայիցդ ձերոց. և լսողք գոլ ամենից Հոգևոր և անմեղածին խրատուց դոցին՝ և առնօղք, ըստ Առաքելոյն հրամանի թէ հնազանդ լերուք Առաջնորդաց ձերոց և ենթակայ եղերուք՝ զի՝ զգաստացեալքն ի մեզ՝ տացեն հաշիւ։ Զոր ոչ ուրախութեամբ այլ հառաչանաւք արասցեն. զի այս ոչ ունիմ, զի լսիցեմ թէ՝ իմ որդեակքն ճշմարտութեամբ գնան։ Ողորմութիւն՝ պարտիք ղորդիական սէրս, ղհաւատարմութիւնս և զհարազատութիւնս որպէս մինչև ցայժմ ունեցեալ են յուսահոգի նախնիքն ձեր առ սուրբ Աթոռս և առ ի սմա նստօղ սրբազան Հայրապետսն, այնպէս և դուք հարազատ որդիքդ՝ ունիլ առ սա և առ մեզ։ Զորս և միշտ ի մտի ունելով՝ ըղձավառ սիրով սիրել։ Մանաւանդ՝ ոչ ըստ առաջինն միայն, այլ գեր քան զառաջինան առաւելուլ առ հաւատոյ մայրս ձեր զգերագոյն հարազատութիւնս. և միշտ օգտիցն սորին ջանացօղ լինիլ և առնօղ. և որ ինչ միասք են սորա, զայնս առ ի խափանել ջանալ՝ որդիական ցաւակցութեամբ և սրտացաւութեամբ։ Նաև առաւել ջանալ միշտ առ ի շահել զլուսաւոր ծնօղս ձեր և զմեզ՝ առաւել քան զսր շահեալ էք մինչեւ ցարգ։ Թէ ի ձեռն բազմատեսակ հարազատութեանց, և թէ ի ձեռն հոգեւորական տրոց, տալով

յիւրաքանչիւր ժամանակս առատապէս։ Քանզի՝ յայտնի է ձեզ ահա, թէ ո՞րքան անյաջողութիւնք, և ո՞րչափ արդեանց նուազութիւնք հասին սրբոյ Աթոռոյս, մինչեւ էհաս ի կարի յոյժ ազքատութիւնս և ի չքաւորութիւնս։ Ուրեմն թէպէտ ամենայն ազքատաց տալն և նեղելոց օգնելն լարի է, և լաւ, բայց՝ սրբոյ Աթոռոյս՝ որ է գլուխ ամենայն եկեղեցեաց՝ և կարի ազքատ, և նեղութեամբք և վշտօք պաշարեալ. սմա տալն և օգնելն առաւել ընդունելի լինի առաջի Աստուծոյ։ Վասն զի գիտէք մանաւանգ և զայս իսկ, զի յայլ ուսեալքէ օգնական և ապաւէն ոչ գոյ մեզ. բաց ի յԱստուծոյ և ի ձէնջ։ Վասնորոյ զսուրբ Աթոռս և զմեզ՝ յԱստուած և ի ձեզ յանձնեմ, և զձեզ Աստուծոյ։ Եւ զի գիտեմք որ ժամանակս այս վշտալի գոլով՝ զձեզ եւս ոչ թողու անվիշտ և թարց նեղութեանց. այլ սակայն՝ զինչ կարեմք առնել. բայց թէ՝ նախ յԱստուած ապաւինիլ և նմա յանձնել ըզմեզ. և երկրորդ՝ ջանալ ամենայնիւ կարողութեամբ զՀաւատոյ գլուխս և զշնորհածին մայրս մեր սուրբ Էջմիածին՝ ողջ եւ հաստատ պահել, զի և հոգեւոր անդամք և որդիքգ սորին ողջ և հաստատ մնայցեք։ Քանզի՝ սա ծնանի զմեզ որդիս Աստուծոյ. և զարգարեալ հաւատով առնէ քրիստոնեայս։ Վասնորոյ մեք հայկածին ազգս ամենայն պարտական եմք, զի ըստ կարեաց մերոց ի յօգուտ և ի շինութիւն սորին ջանասցուք և զնոյնս կամեսցուք. և տրօք և ողորմութեամբք ձերովք՝ զսա շէն և պայծառ պահեսցուք ի ժամանակս մեր և ձեր. զի մի ամաչեսցուք առաջի Աստուծոյ եւ մարդկան՝ մեք և դուք։ Հիմազերծուղ՝ խնդրեմ եւ զայս ի լուսածին զաւակացդ սրբոյ Աթոռոյս. զի յամենայն ժամ ի միջի ձերում հաստատուն ունիցիք զտուրսն նուիրակութեան, զխոստմանսն. զկտակարարութիւնն. զՀոգեբաժնատուութիւնսն. եւ զայլ նուէրս՝ որք յանուն սրբոյ Աթոռոյս նահատմանեցեալք են ի ձեզ։ Եւս առաւել՝ զգանձանակսն սրբոյ Աթոռոյս՝ թէ որք յեկեղեցիսն են, և թէ որք ի մէջ էնանփից. ջանալով միշտ արդիւնաւորս առնել՝ մի՛ խնայիցէք արկանել ի նոսա իւրաքանչիւր շարաթս զմէն մի փոզսն։ Զոր թէ առաւելեմք ևս այցէք, առաւել լինիք վարձատրելիք, զի որ սերմանէ առատութեամբ՝ առատութեամբ և հնձեսցէ։ Նոյնպէս և նուիրակունք սրբոյ Աթոռոյս որք լինիցին ի միջի ձերում, հինչ ժամանակի և իցէ. ընկալէջիք զնոսա սիրով մեծաւ և պատուեսջիք. և լինիջիք իւրեանց օգնական. և նուիրակական գործոցն ևս ձեռնտու յամենայնի։ Յալով նոցա առատապէս զտուրսն նուիրակութեան և զայլս արդիւնսն, ի սէր հաւատոյ մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս և ի շինութիւն սորին։ Որպէս ահա զՀարազատ և զծայրագոյն նուիրակդ սրբոյ Աթոռոյս զՄինաս Աստուածաբան վարդապետդ որ ներկայապէս է ի միջի ձերում՝ շահեալ էք ամենայնի՝ և շահէք ընդ որս Տէր լիցի ձեզ վարձահատոյց։ Զոր և այժմ ևս շահեսջիք բարւոքապէս որում արժանի իսկ է. մխիթարելով և սփոփելով միշտ և լինելով ևս յամենայնի օժանդակ և ձեռընտու իւրեան և գործոյն։ Արդ՝ ահա զՀնգեսինս զայսոսիկ զինգիրս մեր և զՀոգեւոր պատուէրս գրեցի այժմ առ Հոգեւոր որդիս մեր և սիրեցեալսգ իսկ ի Քրիստոս, չունելով այլևս ժամ բարեյաջող և ձեռընտհատութիւն, զի այլևս գՀարկաւորս զորս գրել կամիմ առ Աստուածսիրութիւնն ձեր՝ գրեցից, որք եւ Հարկաւոր իսկ են։ Ուստի զկնի այսորիկ՝ ի գտանելն մեր զսակաւ ինչ ապահովութիւնս եւ զձեռնհաս ժամանակ, գրելոց եմք այլ եւս յայդր եւ առ ձեզ զկանոնս եւ զսահմանադրութիւնս ոմանս Աթոռաշահս եւ Ազդօգուտս զորս եւ տեսանելոց էք յայնժամ մինչ յղեսցուք։ Իսկ այժմ զոր ինչ ըստ ներկայիս Հարկի եւ ձեռնհատութեան գրեցի յայսմիկ թղթոջ եւ խնդրեցի ի ձէնջ, խնդրեմ եւս վերստին՝ լսոզ լինիլ այսմ ամենայնի, եւ կատարօզ։ Ոյք եւ կատարելով զամենայն հրամանս մեր Հոգեւոր եղիջիք օրհնեալք յԱստուծոյ, և ամենայն սրբոց նուա և ի մէնջ. ընդունելով և զբաժմապատիկ վարձս ի Տեառնէ ըստ Հոգւոյ եւ ըստ մարմնոյ։ Եւ ի Շնորհաց սրբոյ և Աստուածածնի Տեղւոյս ընկալջիք ըզմասն մեծ և զբաժին առատ աստ և ի հանգերձելումն, Ամէն։ Ի ՌՄՂԱ. ի Մարտի ելն։

թուղթ ի վհծձ Պօլիս առ Խաւս գևղացի վահտեսի Ցարուխիւն ամիրայն. ի պատասխանի շնորհաւորական թղթոյն սէր եւ օրհնուխիւն եւ շնորհակալուխիւն յոյժ. զի սա առաւել էր ջանացող օգտից սրբոյ Աթոռոյս. որ եւ ի հանելն զՁէրմանան յոյժ առաւել էր աշխատեալ։ Եւ խնդիր էր արարեալ՝ հաստատել զվանօնան զորս խնդրեալ էին. խոստացաւ յետոյ հաստատել։ Եւ զԳաղատիոյ նուիրակի հաշիւն առեալ ըստ զրեցելոյն առ ինքն եւ պատրիարքն, խնդրէր ներել վասն՝ չգալոյն։ Ներեաց։ Գրեալ էր եւ զգանգատս զՀաշտարխանու նուիրակ եւ Առաջնորդ Ծովսէփ վարդապետէն որ զՍաղիմայ նուիրակն փոքր ինչ ճնշեալ էր վասն վկայական չունելոյն աստի, եւ անհամ շարժմանցն։ Վասնորոյ՝ զրեցան եւ սմա նոյն զանք, որք ի վերդ առ Սաղիմայ պատրիարքն եւս զրեցան։ Եւ այլ եւս զանք՝ տեսա. նին ահա ի ներքոյ։

Ծորմէ ժամանեսցի. . . Լայլն։

Որք վերսին այժմ եւս բացայայտեցան եւ ճշգրտեցան ի գալն այսի Հարազատ որգւոյն մերոյ Պետրոս խոհեմառատ վարգապետին։ Քանզի ի փետր. Ը եկեալ էհաս նա ի սուրբ Աթոռս. բերելով զԸրբուհնական նոմոսն [17]) եւ զազգմակնիք թուղթն օրհնեցելոյ քաղաքիդ. ընդ յատուկ թղթոց եզբօրն մերոյ պատրիարք Աստուածծաբան վարգապետին՝ եւ ձեր ամենեցուն։ Զորս ընկալաք սիրով մեծաւ և ուրախուխեամբ. և մեծահանդէս ցնծուխեամբ ընթեռնուլ եառաք. եւ իմացաք զամենայն գրեալսն ի նոսա. մանաւանգ՝ զհամակամ սիրով միաբանիլն ձեր ամենեցուն. և բառնալն ի միջոյ զամենայն առիթսն խռովուխեան՝ և զնոսին իսկ զխռովուխիւնսն. եւ նովին միաբանուխեամբ խորհիլն զօգաիցն սրբոյ Աթոռոյս եւ մեր. եւ առնել իսկ զնոյնս։ Զորս զամենեսեանսն՝ սիրելի որգին մեր Պետրոս խոհեմառատ վարգապետն եւս պատմեաց մեզ շնորհակալուխեամբ մեծաւ. հանգերձ յատուկ մարդասիրուխեամբքն՝ զորս տեսեալ էր ի ձէնջ ամենեցունց։ Նոյնպէս և ծայրագոյն նուիրակն օրհնեցելոյ քաղաքիդ և սիրելին մեր Մինասն աստուածծաբան վարդապետն գրեալ էր մեզ զայնս ամենեսեսեան՝ յոյժ շնորհակալուխեամբ։ Որովք և մեր հրճուեցեալ մեծապէս։ Համայն միաբանիւք սրբոյ Աթոռոյս օրհնեցաք զձեզ զամենեսեսեանսն՝ բազմօք շնորհակալուխեամբք. եւ գրեցաք ահա զիուզիք օրհնուխեան և շնորհակալուխեան ի վերայ Աստուածախնամ՝ քաղաքիդ հասարակապէս յոլովս և զոմանս ինչ խնդիրս եւ զպատուէրս հարկաւորս. որպէս տեսանելոց ես։ Ցիրաւի՝ թէպէտ թանձրուխիւն ամպոյն խռովուխեան կացեալ հանդէպ արեւոյն խաղաղուխեան էած զտուէր ինչ. այլ այժմ, զարդիւնարար անձրեւն սիրոյ եւ հարազատուխեան ամենեցուն ցօղեալ տեսաք ի մեզ. վայելելով վերսին զնոյն արեւուն քաղցրուխիւն։ Ի յոր՝ քոյդ յատուկ եւ մեծագոյն ջանիւք աքնիլդ եւ աշխատիլդ. և զամենայն ինչ որպէս պարան է՝ տնօրինելդ իսկ և յառաջացուցանելդ, ի վաղուց իսկ հետէ գիտացաք եւ գիտեմք...։

Իսկ՝ առ ոմանս խնդիրս քո հարկաւորս՝ զորս գրեալ էիր ի թղթ ած քումդ այսպէս գիտացես։ Նախապէս խնգրեալ էիր ի մէնջ՝ նախաղեկոյդ կանոնացն տալ զհաստատուխիւն։ Կամիմք և մեք հաստատել. քանզի հարկաւորք են յիրաւի՝ եւ օրինաւորք. սակայն՝ այժմ գոլով մեր յոյժ զբաղեցեալ թղթագրուխեամբք, մանաւանդ եւ այլ բազմատեսակ ցաւովք, չեզաք ձեռնհաս զի այժմ զնոյնս կանոնեսցուք և հաստատեսցուք։ Այլ զոր ինչ այժմ էին հարկաւորք գրելոյ, զայնս միայն գրեալ ղեցաք յայսմ նուագի։ Իսկ յետ այսորիկ։ Հոգալոց եմք Աստուծով զայն եւս, եւ յղելոց։ Որպէս ահա առ յարգելի եղբայրն մեր պատրիարք աստուածծաբան վարդապետն եւս գրեցաք զայս, և ի յաւարտս հասարակ կոնդակին եւս կերպիւ ինչ յիշեցաք։ Ծրկրորդ՝ խընգրեալ էիր եւս հասարակաբար խնամատար լինիլ վշտակիր ազգիս մերոյ և ի ձեռին ունիլ զբնաւան եւայլն։ Արդ ոչ է այնպիսի ինչ զի վստահաբար պարծիցուք թէ՝ կաբեմք, խոստանալով եւս աներկբայապէս՝ թէ առնելոց եմք։ Քանզի ամենայն ինչ պգպիսիք Աստուծով յառաջանան, եւ ոչ ի մարգկային ինչ կամաց եւ ի կարողուխեանց։ Ապա՝ առ ի բարւոքապէս տանիլ այդպիսեաց

զփոյթ, առ Աստուած ունիմք ըլլայս. առ որ և աղօթեմք իսկ՝ յաջողել բարուքեաց Աղօթեա՛ ուրեմն եւ գու՝ զի յաջողեսցի մեզ առնել՝ զոր կամիմք մեք, և գու խնդրես։ Ընդորոյզ՝ խնգրեալ էիր պատուիրել նուիրակաց, հաշա լինիլ ընդ առաջնորգաց և ընդ միւս նուիրակաց. և իմ և քո չարկանել ի մէջ. հաւատար հպիւլի սուրբ Աթոռոյն. և ոչ միայն ի առուրս ժողովրգոյն հայոյիլ, այլ առաւել զպին չանալ, զի ունիցին զսիրաս առուղացն. եւայլն։ Առ այսոսիկ և այս գիտեա՛։ Զի այգ ոչ է նորանոր ինչ կամ լեալ երբեք և յետոյ անհետացեալ, զի այժմ նոր սկսանիցուք առնել. այլ սրբոյ Հայրապետացն մերոց նախանցելոց՝ միշտ այն է լեալ նուիրակացն սրբոյ Աթոռոյս պատուէր. զի ընդ ամենեսեան սիրով վարիցին. ընդ առաջնորդս, և ընդ նուիրակունս, տալով պատիւս ըստ իւրաքանչիւր արժանեաց. մի երբէք զառիթս ինչ գայթակղութեան տացեն միմեանց։ Մանաւանդ զսիրաս ժողովրդոց առաւել չանալ գանձել սրբոյ Աթոռոյս, քան զբազմութիւնն արդեանց։ Եւ զի այսու շաւղօք են ընթացեալ երանելի Հայրապետքն մեր նախկինք, և այժմ ևս նոյն է սովորութիւն. վասնորոյ հարկ է և մեզ անսաստերիւրելի մնալ ի նոցին շաւղաց. քանզի՝ ընտանի սովորութիւն է այս գահակալաց սրբոյ Աթոռոյս. և ոչ օտար իմն։ Բայց տեսանեմք, զոր ինչ մեզ է արժան և անկ, արարեալ եմք և առնեմք. իսկ այլք ոչ թէ միայն զիւրեանցն արժան ոչ առնեն. այլեւ անդր քան զարժանն մտարերեն և առնեն, եւ յայնմանէ յառաջանայ իմ և քոյն՝ զոր ասես։ Քանզի՝ զնան այնպիսի անդրադիտութեան, ոչ միայն ընդ մի չափել ժամենայն, այլ եւ գերազանց սակ համարել զինքեանս, և եղծանել զբարեկարգութիւնն ընդ։ Եւ այլ ոչ եւս կամին զայն մտածել թէ ոչ ամենայն ինչ ընդ մի չափ անցանէ, այլ գոյ իւրաքանչիւրոց առանձին իմն չափ։ Այլ սակայն՝ զոր ինչ մեզ է անկ որպէս ասացաք, մեք արարեալ եմք, և առնեմք, Ընդորոյզ գրեալ էիր զանցան նուիրակին սրբոյ Երուսաղէմի. . . . . ։ Վասնորոյ՝ պիտոյ էր նուիրակին Սաղիմայ՝ ունիլ ասաի վկայական։ Իսկ զի չէ ունեցեալ. և Յովսէփ վարդապետն յայնմ միջոցի ի Մոսկով է գտանեցեալ. վասնորոյ՝ արգելեալ են զնա ի գործոյն՝ մինչեւ Յովսէփ վարդապետին ծանուցցեն։ Իսկ նա անհամրեր լեալ, ցուցեալ էր զանհամութիւնս մեծագոյնս։ Զորս լսելով վարդապետին և վիրաւորելով, արարեալ էր և նա զանհամութիւնս։ Սակայն՝ զպահիս սրբոց Աստուածակոչ տեղեացն պահելով՝ և զվնասն նոցին չկամելով, դրեալ էր անտի զի ձեռնարկեսցէ ի գործն որ և ձեռնարկեալ իսկ էր. և ոչ է անկեալ յանկեան միում անգործ, որպէս ծանուցեալ են սիրելւոյդ, և դու գրեալ ես մեզ։ Իսկ ապա՝ զնոյն անցսն դրեալ էին մեզ ինքն Յովսէփ վարդապետն՝ և այլք։ Զորս ի դիտեն մեր՝ գրեցաք և առ ժողովուրդսն զկոնդակ, զի սիրով ընկալցին զկարապետ վարդապետն. և առաստութեամբ տացեն նմա զտուրս նուիրակութեան։ Զորս և յղեցաք անդ և նա հաստատեցեալ ի գործն՝ ժողովէ զնուիրատուութիւնն։ Այլ սակայն՝ թէ լինիցէր ի ձեռս կարապետ վարդապետին կտոր մի վկայական գիր ի սրբոյ Աթոռոյս, ամենևին ոչ էին լինելոց այսոքիկ։ Գրեալ ես սիրելիդ իմ թէ՝ Սաղիմայ պատրիարքն և Զաքարիա պատրիարքն գրեալ էին և Հոգելոյս Հայրապետն՝ գրել Յովսէփ վարդապետին և հիւսիսայնոցն՝ պատուով ընգունիլ զնուիրակն Սաղիմայ. ի հարկէ գրեալ է նմա Հոգելոյս Հայրապետն. և գոյ կարծիք թէ՝ և ոչ ի հրամանս լուսահոգւոյն ունկն մատուցեալ է Յովսէփ վարդապետն. զի լսեմք թէ՝ պատասխանի է գրեալ առ լուսահոգին, յորում զայս ինչ և զայն ինչ բանս ընդ դէմ սրբոյ Երուսաղէմի, եւայլն։ Առ այսոսիկ գիտեա՛։ Զի առ Հոգելոյս Հայրապետն գրելն պատրիարքացն զԹուղէ՝ կարծեմ թէ՝ ընծայեալ է այնպէս։ Եւ նշանն այս է, զի ոչ երեւին աստ Թուղէքն այնոքիկ. մանաւանդ և յաւուրս լուսահոգւոյն այդ բանգ բնաւ ոչ յիշեցաւ աստ թէ՝ ի Սաղիմայ նուիրակ է գնացեալ դէպ ի Հաշտարխան։ Ուստի՝ և ոչ զրանս ինչ վասն այդր գրեալ է լուսահոգին առ Յովսէփ վարդապետն. և ոչ նա զպատասխանի ինչ այնպիսի զոր լուեալ էր, գրեալ է ասա։ Ահա այսոքիւք իմոյ հաւատաւ և տես, զի շատքն յայդպիսեաց բանից զորս ասն ձեզ լսել՝ որք խզել կամին

զսիրոյն և զխաղաղութեանն լար, աւելորդք են։ Եւ այն թէ՝ երկոտասան թղթով տեառ է շարագրեալ վասն սրբոյ Երուսաղէմի, եւ այլն. գայդ մեք բնաւ չեմք լուեալ, և աւելորդ կարծեմք և զայդ. և չունիմք եւս կարծիք՝ թէ մինչեւ ցայդ վայր համարձակեսցի նմա։ Իսկ թէ իցէ, և դիտասցուք զՀաւատն, խափանելոց եմք Ապրիլ ԻԹ.

Թուղթ ի Գևանկայ, առ Գևորգ Աղարաքն վասն պարտուցն զոր պարտ էր Միրզայ Սէֆոն։ Զի մինչ նա աստ էր՝ եւ արքար [18]) ետ, Միրզայ Սէֆին նմա օգնութիւն առնելով՝ դրամ էր տուեալ զարտք, զի զարքարն տուեալ զերծցի. Զոր եւ տուեալ՝ զերծեալ էր։ Իսկ այժմ փախուցեալ ի Գեանջայ՝ այլ ոչ կամէր տալ, վասնորոյ՝ այս թուղթ ըստ խընդրոյ Միրզայ Սէֆոն զրեցաւ առ նա։

Ծորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունի՝ օրհնութեան և շնորհաց. ի վերայ սիրելւոյդ մերոյ՝ և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս, Քրիստոսասէր և մեծահաւատ պարոն Աղարարիդ, Եւ Աստուածապահ տան քում և բնակութեան. որդւոց և դստերաց. սիրելեաց և բարեկամաց. ընչից եւ ապրանաց, և ամենայն ընդ օրհնեալ յարկաւ եղելոցն։ Ամէն,

(Շնորհք)

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուծոյ՝ ծանուցուաք լիցի սիրելւոդդ իմոյ՝ և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի աստուածային դիրք ուսուցանեն մեզ, զերախտիս երախտաւորաց չմոռանալ և եւրանելի առաքեալն Պօղոս ասէ թէ՝ Հաւատացեալք ամենեցուն զպարտս. և մի ումեք պարտապան դտանիցիք։ Արդ՝ զայսոսիկ դորուսուցանեն մեզ դիրք սուրբք. ոչ թէ վասն Հաւատակցի միայն ասեն, իբր թէ՝ զքո Հաւատակցի երախտիսն մի մոռանար, և զայլոցն մոռացիր. կամ թէ՝ այն որ Հաւատակից է քեզ՝ զսոցընն պարտն վճարեա, եւ զայլոցն մի վճարեր, քաւ լիցի, այլ վասն ամենայն մարդոյ ասեն այսպէս։ Քանզի ամենարդար դատաւոր է Աստուած. և ոչ է ակնառութիւն առաջի նորա։ Վասն զի՝ ինչ ազդ և իցէ. և որով հաւատով և իցէ երախտաւորն՝ կամ փոխատուն. պարտական է այն անձն՝ որ ի նմանէ զերախտիս և զբարերարութիւնս իցէ տեսեալ՝ կամ զփոխ առեալ, չմոռանալ զնորին երախտիսն, և փոխն տալ։ Զի որ զմարդկան երախտիս մոռանայ, նա՝ և զԱստուծոյ երախտիսն եւս մոռանայ։ Նոյնպէս՝ որ փոխ առնու, և ոչ տայ, զծագոյն մեղս ընդունի՝ և պարտաւոր լինի առաջի Աստուծոյ, որպէս ահա ասէ երջանիկ մարգարէն Դաւիթ թէ՝ փոխ առնու մեղաւորն՝ և ոչ հատուցանէ. այլ սր արդարն է՝ ողորմի եւ տայ։ Արդ դու սիրելիդ մեր մինչ էիր աստ, և այն փորձութիւնքն եկին ի վերայ քո. այսինքն արքար տալդ և նեղութիւնդ. յայնմ միջոցին դու եւս տեսանէիր որ՝ ոչ ոք հասանէր յօգնութիւն ումեք. զի ամենայն ոք՝ իւր անձնական յաւուկ ցաւովն պաշարեցեալ էր։ Իսկ հարազատն Դօլվաթլու խանին մերոյ՝ և մեր եւ սրբոյ Աթոռոյս բարեկամ Միրզայ Սէֆին, տեսանելով զքեզ ի մէջ վտանգից և վշտաց, և անօգնական. քեզ ողորմութիւն է արարեալ, և յօգնութիւն հասեալ. և փոշ է ուսեալ քեզ. որ զքո սրբազան աւուրսն ես, և ի ծեծէ և ի տանջանաց զերծեալ։ Արդ՝ այս ահա մեծ ողորմութիւն է՝ զոր քեզ արարեալ է. և մեծ երախտիք է քեզ՝ և բարերարութիւն։ Զի ի հարկէ, թէ նա զայն բարերարութիւն ոչ առնիցէր քեզ, դու խըղճալի էիր լրծոյց, և զրազում չարչարանս կրելոց։ Իսկ արդ՝ նա որ քեզ հաւատակից ոչ է. և ոչ թէ ի քո ազգէն. ի յիւր օրինացն խրատեցեալ դոլով թէ՝ վտանգաւորին պարտ է օգնութիւն առնել, քեզ մեծ օգնութիւն է արարեալ և ազատեալ. ապա՝ քո խղճմտանք ընդէր ոչ տանջի. և կամ դու ի մերս քրիստոսական օրինաց չե՞ս խրատեցեալ. որ ապերախտ երևիս առ երախտաւորն քո. և զպարտն զոր առեալ ես. ոչ կամիս հատուցանել։ Մի՞թէ և զայն ոչ դիտես թէ՝ եթէ Աստուած չէր շարժեալ զսիրտն նորա առ ի յողորմիլ քեզ. նա եւս չէր քեզ ողորմելոց։ Ապա՝ լաւ իմացիր. զի այն ողորմութիւնն ի յԱստուծոյ էր՝ որ ի ձեռն նորին եղև քեզ։ Զոր թէ դու ոչ իմացիս, և զառեալ փոխդ ոչ հատուցես, ոչ թէ առ նա միայն լինիս ապերախտ, այլ՝

առ. Աստուած եւս, Ուսաի՝ և Աստուած լինելոց է վրէժխնդիր. եթէ դու պդպէս աղերսեալ երևեսցիս, և այդ պարտքդ մնասցէ ի վերայ քո: Եւ այլ եւս արկանելոց է ի մէջ ազնիսեայ փորձութեան, որ օգնական եւս չգանիցի քեզ: Հաւաստի իմացիր: Զի որպէս ասացաք, արդար դատաւոր է Աստուած. և ակնառութիւն ոչ գոյ առաջի նորա: Մանաւանդ ուրեմն զօրն զայն նեղութեան՝ զոր աստ ունէիր. եւ մի ի լայնութեան աւուրսգ զայն մոռանար: Խրատ տայ իմաստունն Սիրաք թէ՝ յաւուր բարութեանց՝ մի լինիր անյիշող չարեաց: Զի պարտ է մարդոյս՝ ի նեղութեան աւուրն՝ զլայնութեամբ կենցաղավարին իւր մտածել, փառս տալ Աստուծոյ և մխիթարիլ. և ի լայնութեան ժամանակի զկրեալ նեղութիւնն իւր մտածել: և երկնչիլ յԱստուծոյ: Ապա դու եւս զերկիւղն Աստուծոյ բեր ի միտ, և զայդ պարտսդ վճարեա: Խնայեա ի քրիստոնէական հաւատդ և ի հոգիդ, որպէս ահա ես խնայելով ի հաւատգ քո սուրբ և ի հոգիդ, զայս խրատս հայրական գրեցի քեզ: քանզի ծանոյց մեզ բարեկամն մեր Միրղայ Սէֆին զբանն այդ պարտուցգ. և խնգրեաց ի մէնջ գրել քեզ, մեք եւս քեզ խնայելով գրեցաք, զի մի՛ մնասցես պարտական առաջի Աստուծոյ: Ուրեմն՝ խնայեա եւ գու ի քեզ. և զհոգիդ քո մի թողուր պարտական. այլ հատո զպարտսդ եւ զերծիր: Նա քեզ մեկ հարիւր թումանն է տուեալ. դու զերեսուն թումանն աստ հասուցեալ ես իւրեան, մնացեալ է եօթանասուն թումանն պարտք ի վերայ քոյ: Ետրեմ ահա հոգեւոր խրատիւք՝ եւ հայրական պատուիրմամբք, զի զայգ եօթանասուն թումանդ եւս վճարեսցես, եւ ազատեսցես զհոգիդ: Եթէ մի անգամ տալ ո՛չ կարիցես, երկու կամ երեք բաժին արա, մեկ բաժինն այժմ տուր, մնացելոյն համար եւս գիր գրեա իւրեան եւ միամիտ արա՝ ե. ժամանակ եւս ցոյց տուր, թէ յայսինչ ժամանակի կուտամ, որ նա եւս միամտեսցի, բայց՝ ժամանակն եւս շատ երկար չի ցոյց տաս: Եւ երբ որ այն պայմանեալ ժամանակդ եւս լրացի, զմնացեալսն եւս տուր եւ զերծիր ի պարտականութենէ և ի խղճմտանաց: Պարտիս ուրեմն լսօղ լինիլ հոգեւոր խրատուս մերոյ՝ եւ այսպէս առնել, եւ զպատասխանի թղթոյս եւս մեզ գրեսցես շուտով: Եւ կատարելով զհրամանս մեր հոգեւոր՝ եղիցիս օրհնեալ յԱստուծոյ և ի մէնջ, եւ Շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ քեզ լիցի հանապազ: Ամէն. ի ՌՄԼԱ, ի ԱՊրիլի ԻԹ:

Թուղթ ի Թիֆլիզ առ Մկռիք Ախուտիքն, շնորհակալութիւն վասն հարազատութեանցն, մանաւանդ՝ վասն ջանից՝ որ հանդերձ բազմութեամբ քաղաքին ջանայր ընդդէմ Ախթարմայից՝ առ ի դարձուցանել զնոսա, եւ կամ՝ նկուն առնել: Որում եւ Արքայն լինէր ջատագով, տալով զասաստիկ թուղթ՝ եւ զվերակացուս՝ ի դարձուցանել զնոսա: Որում եւ յորդորումն՝ եւս լինիլ ի նոյնն արի: Եւ յանձնարարութիւն եւս վասն Կարապետ վարդապետին՝ Առաջնորդին տեղւոյն, զոր նուիրակ եւս կարգեաց սրբոյ Աթոռոյս:

. . Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ... և այլն:

Եւ ընդ շնորհազեղուն օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի սիրելւոյդ մերոյ՝ եւ հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Զի ի վազուց հետէ, թէպէտ մեք ի պատճառս յոլովատեսակ զբաղանաց մերոց անձեռնհաս եղաք ի ձեռն օրհնաձիր գրոյ զորպիսութեանց սիրելւոյդ հարցանել. եւ ի քէն եւս զսիրանիշ Թուղթ ոչ ընկալաք, սակայն սիրելին մեր՝ և Աւագնորդն օրհնեցելոյ քազաքիդ Կարապետ Աստուածմատոս վարդապետն՝ գրէ մեզ միշտ զքոյդ որպիսութեանդ, և զսիրոյ և զհարազատութեանդ ճշմարտից՝ զորս ունիս յարաժամ առ Մայրս քո լուսատու սուրբ Աթոռոս և առ մեզ, և զյատուկ մարդասիրութեանդ՝ զորս ինքեան ցուցանես միշտ: Մանաւանդ՝ զջատագովութեանդ բարեաց՝ զորս առնես վասն սրբոյ Հաւատոյս մերոյ, մաքառելով ընգգէմ մոլեշաւիղ Ախթարմայիցն. և չանալով սանձել տալ զլեռութիւնս նոցա՝ և ի յուզղութիւն ածել: Որպէս ահա այժմ բոլոր միաբանագաւառն օրհնեալ ժողովրդովք քազաքիդ արձ էք ա-

րարեալ Աստուածազօր Արքային վասն այսր, և նա վրէժխնդիր լինելով ճշմարտութեան շնորհեալ է վերստին (որպէս և յառաջ) զսաստիկ հրամանագիր, զի դարձցին մոլեալքն այնոքիկ ի գաւանութիւնս մեր. կարգելով և զհաւատարիմ վերակացուս ի վերայ իրացն՝ առ ի յառաջացուցանել ըզհրամանն բարւոյ. Որոյ սակս՝ շնորհակալ եղաք ղձէնջ ամենեցունց և օրհնեցաք, և տհա առ օրհնեալ Արքային և զշնորհակալութիւնս գրեցաք. և խնգրեցաք զի միշտ այնպէս վրէժխնդիր լինելով ճշմարտութեան, մաքրեսցէ զօրհնեալ երկիրն իւր ի չաղանդոյ նոցին. Վասնորոյ՝ և քեզ սիրելւոյդ իմոյ գրեմ, զի որպէս սկսեալ էք, նոյնպէս ի կատարումն հասուսջիք, չթուլանալով ի չայգմ բարի առաջադրութենէ, և չանալով ի յուղղութիւն ածել զնոսա, զի միարտատեսելք օրստօրէ, լիցին այլոց և գայթակղութեան առիթք. Այլև ահա ըզսիրելին մեր՝ և զԱռաջնորդն օրհնեցելոյ քաղաքիդ զկարապետ հանճարաշատ վարդապետն՝ նուիրակ և կարգեցաք օրհնեցելոյ երկրիդ, զի ընդ Առաջնորդական գործոցն՝ հոգասցէ և զնուիրակութիւնն. Խնդրեմ ուրեմն ի հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս և ի սիրելւոյդ մերմէ, զի չամենայն կողմանէ օժանդակ և ձեռնտու լիցիս իւրեան և գործոյն, զի չոլորութեամբ և արգիւնաւորութեամբ չառաջացուսցէ. Գիտես ահա, զի վասն վրդովմանցն մեծագունից, որք անցին ընդ երկիրս մեր և ընդ Աթոռս, չեղև ձեռնհասութիւն զի նուիրակ գայցէ չայգ երկիր. վասնորոյ՝ մեկ նուիրակութիւն էանց Պարտիք ուրեմն այնպէս ջանալ, զի արդիւնաւոր լիցի գործն դորին ի լցուցանել զանցեալն և, որպէս ահա և ի կոնդակոջն գրեալ եմք. Որպէս զի՝ անհուն պակասութեանց սրբոյ Ցանս՝ լիցի ձեռնտուութիւն իմն. Եւ այսպէս առնելով անպակաս ձեռացես և ի չատուկ հաւատարմութենանց, մխիթարելով և զմեզ սիրանիշ թղթովգ. Որով ընկալցիս զվարձս Հաստուծոյ՝ զՇնորհսն ի սրբոյ Աթոռոյս, և զօրհնութիւնս ի մէնջ. Ամէն. Ի ՌՄԱՆ, ի մայիսի Ի։

Բաղմաւ սիրով՝ և շնորհիւ սրբոյ Իմանն տեղւոյս Քրիստոսի, ողջոյն և օրհնութիւն տամ սիրելւոյն իմոյ և եղբօրն քոյ ի Ցէր զօրացելոյ՝ Պարոն Իւանէ Միրշքեար րաշտուն. Որ և լիցի չանձնեցեալ ի խնամս և ի գթութիւնս Ցեառն Աստուծոյ՝ և օրհնեցեալ ի նմանէ միշտ. Ամէն։

Դարձեալ զայս ևս գիտացես աղնիւ սիրելիդ իմ, զի թէպէտ՝ յառաջ ևս գրեցի զչանձնարարութիւնս վասն կարապետ Աստուածախմաստ վարդապետին՝ օժանդակ լինել գործոյն նուիրակութեան, այլ զի այժմ ևս զսոյն թուղթս գրէաք, կրկին խնդրեմ լաւապէս օժանգակել նուիրակութեան գործոյ դորին. Քանզի որպէս ի կոնդակոջն ևս գրեալ եմք մեք ի քազաքացիսդ խնայելով՝ առ ի չլինիլ ձեզ կրկին ծանրութիւն, ուրոյն նուիրակ ոչ յղեցաք, այլ զգա արարաք նուիրակ Ուրեմն՝ և դոքա ի լուսատու Մայրս իւրեանց սուրբ Աթոռս խնայելով առատութեամբ տացեն զնուիրակութիւնն ըստ սովորութեան ամենայն քաղաքաց, գլուխ գլուխ՝ ի բաց թողնլով զպատուական առարկութիւնսն և զքացախեալ պատմութիւնսն զորս սովորութիւն են արարեալ ոմանք ասել թէ՝ յառաջ այսպէս և այնպէս էր. որք ոչ են նշան հարազատ որդիութեան։ Որոյ աղագաւ՝ գրեմ սիրելւոյդ, զի այսպէս կամիցիս և դու, և գլուխ գլուխ ժողովեալ տաջիք զնուիրակութիւնն։ Զի մի՝ անսման գտանիցիք այլոց, այլ արդիւնաւոր որգիք երևիջիք սրբոյ Աթոռոյս։ Եւ դու ևս զայս կամելով և առաւել տալով վարձուց բարեաց լիցիս ժառանգաւոր։ Ողջ լեր ի Ցէր։

Թուղթ ի Թիֆլիզ, առ Նազարբէկենց պարոն Յովսէփին, յաղագս ախթարմաւից քանին, եւ նուիրակութեան կարապետ վարդապետին՝ ըստ մտաց վերոյ զրեալ թղթոյդ։

Թուղթ առ Յովհաննէս կաթողիկոսն Աղուանից, ի պատասխանի թղթոյն՝ զոր յանցեալ նոյեմբ. էր զրեալ. այլ այժմ էր յղեալ՝ զի յաշնանն ըերողն ի ծիւնէ արգելեալ՝ դարձեալ էր յետս, եւ այժմ յղեալ էր։ Վասն Հաշտարխանու զանձանակի արդեանցն, որ ի վերայ Յովսէփ վարդապետին գիր էր խնդրեալ,

թէ ահա գրեցի նմա աստի, եւ զանծաւպետիդ եւս ըստ խնդրոյդ, դու երբ եւ գրեսցես, հասուցանելոց են քեզ, եւ այլ բանք ըստ նորին բանիցն:

Ցորհ սիրով ձգմարտիւ, ՔՀիստոսական սուրբ և միարար ողջունիւ, և սպագ կարօտիւ, ծանուցուածն լինի սիրեցելոյ եղբօրդ մերոյ՝ և նախածանօթ բարեկամի, Տեառնդ Ցովհաննիսի սրբափայլ կաթողիկոսիդ ամենեան Աղուանից՝ և սրբոյ և հրաշալի Աթոռոյդ Գանձասարու: Զի էհաս առ մեզ գիր քո սիրանիշ՝ զոր գրեալ էիր յանցեալ նոյեմբերին. և ծանեաք զպատճառ յայսչափ ժամանակ յետանալոյն ի յարգելմանէ ձեռնս: Ընդ որում՝ հասին մեզ և գրեանքն կողմանցն Շամախու և Բաքուայ. և պարոն Եզիազարի յղեալ զաֆրանն եւս ձեռամբ Մովսէս և Գաբրիէլ աղայոցն. և իմացաք ըզգրեալսդ ամենայն. զբանդ սիրայայ՝ եւ որպիսածանոյց: Մանաւանդ զբարեկեցութենէ սիրելի եղբայրութեան քումմ. և զնորոգութենէ ասենեաց սրբոյ տաճարիդ. որովք ոչ սակաւ ուրախացաք. և խնդրեցաք յԱստուծոյ ազատել զսուրբ տունդ իւր և զեղեմբայրդ մեր ի յամենից անբարի դիպուածոց: Արդ՝ ի կողմունսն Բաքուայ և Շամախու չգրեցաք այժմ զթուղթս, զի յառաջ քան զգալն այսց թղթոցս՝ զթուղթս առաք յայնց կողմանցն քանիցս անգամ, յորս և յայտնեալ էին զորպէսն սոյն թղթոցս, և եղեալ զար եւս գրեալ էր մեզ վասն սոյն զաֆրանիս՝ զոր յղեալ էիր: Որոց ամենիցն պիտոյ էին պատասխանիք. այլ մեք այժմ չկարելով հասուցանել՝ սակս զբաղմանց մերոց, յետոյ ի ձեռնհաս ժամանակի գրելոց եմք, զի այժմ պաշարեալ էաք զբաղմամբք երթևեկաց. որպէս և ջրաբերդ տեսին, և դոքա եւս մի օր հազիւ կարացին ճեալ ասա: Իսկ՝ որ ի վերոյ Հաշատրեանու Առաջնորդ և նուիրակ Ցովսէփ վարդապետին և ձեր գանձապահ Միխայէլին զթուղթս էիր խնդրեալ վասն գանձանակի արդեանցն սրբոյ Տանգ, և խոստմանց, զի հասուսցին առ ձեզ: Առայգ գիտացէ եղբայրութիւն քո: Զի նարգեանս հարկաւոր թուղթք էին եկեալ ի Ցովսէփ վարդապետէն՝ որոց զպատասխանին գրէաք, և տանօղն կայր ասաի ի պատրաստի, որ յայս քանի օրս ելանելոց էր: Ուստի՝ ի նոյն թղթոջն Ցովսէփ վարդապետին գրելոց եմք հարկիս վասն այդր. եւ զգիր մի եւս ի վերոյ գանձապետ Միխայէլին գրեալ՝ առ Ցովսէփ վարդապետեան եմք յղելոց. զի որքան արդիւնք իցեն առ նմա ի պատրաստի՝ հասուսցեն առ քեզ. և ումմ և գրիցես՝ նմա յանձնեսցեն, Ուրեմն՝ և դու սիրելի եղբայրդ մեր գրեա Ցովսէփ վարդապետին և ձեր գանձապետին և ումմ և հասանիլ կամիս ծանոյ նոցա. զի և նոքա ձեռամբ նորին ի սուրբ Աթոռդ և առ քեզ հասուսցեն: Եւ զմեր և զսրբոյ Աթոռոյս որպէսն ի գրաբերաց գիտացեալ՝ զգիրդ սիրանիշ և որպիսայայա մի առնիցիս պակաս: Ողջ լեր ի Տէր: Գրեցաւ ի ՌՄԼԱ. ի մայիսի ելն:

Թուղթ ի Թիֆլիզ առ Մելիք Աւետիքն, շնորհակալութիւն վասն սիրոյն և հարազատութեանն՝ զոր ցուցեալ էր գրով ի ձեռն տէր Ներսէհամին, եւ վասն նորին գրեալ էր պյանձնարարութիւնս. զիյուխտ էր եկեալ աստ: Եւ վասն մեր ճորտիցն որք անդ՝ գրեցաւ սմա յանձնարարութիւն:


Թուղթ առ Գեօրեցի Մանուչարեան Ստեփաննոսն, որ ի յմխիթարմայութենէ դարձեալ էր ի դաւանութիւնս մեր: Առ որ գրեցաւ թուղթ օրհնութեան յառաջ, որ դոյ ի վերն ի համարն 490, որոյ զպատասխանին նա այժմ գրեալ էր. և կայր ի Թիֆլիզ առ արքայն, և ջանայր զհաստատութիւնսն որք ի մէնջ հեստեալ էին, զարձուցանել: Որում օրհնութիւն և շնորհակալութիւն, և պատուէր՝ կալ միշտ ի նոյն:
Եւ այլ առ սոյնս բանք:

Թուղթ մխիթարութեան ի Մոսկով, առ Եղիազար աղայի որդիսն, աղայ Մինասն՝ և աղայ Յովակիմն: Վասն մահուան հօրն իւրեանց նոյն վերոյիշեալ Եղիազար աղային, Որոց մեծ եղբայր Ցովհաննէս աղային եւս ուրոյն գրեցաւ, որոյ օրինակն դոյ յառաջկոյս՝ ի 764 համարն:

Թուղթ շնորհակալութեան առ Կէյվայու ժողովուրդն։ Որք յորդորմամբ Նուիրակ Գալուստ վարդապետին զգանձանակ էին հաստատեալ յանուն սրբոյ Ներսէսի, և զառաջին սլտուլ գանձանակին եւս այժմ յղեալ էին աստ, ի ձեռն դանձապետ մահ տեսի Սերօբին, որ եկեալ էր յուխտ։

Թուղթ Առաջնորդութեան, որ տրեցաւ Մշու սուրբ Յովհաննիսի վանից առաջնորդ Յովհաննէս վարդապետին, որ եկեալ ձեռնադրեցաւ եպիսկոպոս։

Թուղթ առաջնորդական նման վերոյգրեցելոյդ, որ տուաւ Սօսրու սուրբ Գէորգեայ վանից Առաջնորդ Ցարութիւն վարդապետին, որ եկեալ ձեռնադրեցաւ եպիսկոպոս։



Թուղթ ի Թիֆլիզ առ Աբգան Հերսկլ ի պատասխանի Թղթոյն՝ զոր գրեալ էր քան զայս յառաջ։ Եւ զի վասն Արկուտւոյ եկեղեցւոյն եւ վասն Մօղնու սուրբ Գէորգեայ վանիցն յղեալ էր զողորմութիւնս ինչ, գրեաց զշնորհակալութիւնս։ Եւ զայն եւս՝ զի Մօրվիրապայ վանիցն եւ սուրբ Յակոբայ Անապատին եւս բաժին հանցէ յայնմանէ։ Եւ դարձեալ շնորհակալութիւն, որ զԱխթարմայան անարգեալ էր վասն լրբութեանցն, եւ տուեալ էր այժմ եւս զԹուղթ՝ որպէս եւ յառաջ, սի յերեսուն ամաց եւ այսր հետեալքն ի մէնջ, դարձցին ի դաւանութիւնս մեր. կամ թէ ոչ, տացեն զծանր տուգանս, եւ զմուհասիլս եւս եղեալ էր՝ ի վերայ նոցա՝ այսպէս առնել տալ։

Յորմէ ժամանեցի... և այլն։

Եւ ընդ շնորհաղեղուն օրհնութեան ծանուցումն լիցի քումդ Աստուածասիրութեան։ Զի յառաջ քան զայս՝ ընդ հարազատի քում Եսայի բէկին որ գրեալ էիր առ մեզ զգիր սիրանիշ, բերեալ հասոյց առ մեզ, Զոր ընկալեալ սիրով՝ ընթերցաք, և զմիտս գրեցելոյդ ի նմա՝ ծանեաք։ Եւ ի պատասխանի նմին՝ թէպէտ յառաջ քան զայս ըղձացեալ էրն թուղթ մի համառօտ գրեալ առաքեցեալ առ մեծութիւն քո, սակայն՝ զի զյաւուկ խնամս էիր ցուցեալ մեզ թղթով, պիտոյ էր յաւուկ առ օրհնութիւն և շնորհակալութիւն գրել առ քոյդ բարեպաշտութիւն։ Սակս որոյ՝ այժմ զայս օրհնաձիրս մեր նամակ գրեալ առ Աստուածասէրն Աբքայդ՝ յայտնեմք կրկին շնորհակալութեամբ զքոյդ յաւուկ ողորմութիւն զոր արարեալ էիր։ Քանզի՝ որ զքաւասուն թուման գրամս շնորհեալ էիր Արկուտւոյ եկեղեցւոյն, և զուարն թուման գրամս եւս Մօղնու սուրբ Գէորգեայ վանիցն՝ վասն շինելոյ զխաչկալն նորին, որոյ ե. զբաւարն յղեալ էին առ մեզ ընդ նոյն թղթոյն, զի առցուք ի հարազատէն ձերմէ և ի սիրելւոյն մերմէ՝ Զաքարիայ Սահփանէն, և ապցուք յիւրաքանչիւր տեղիսն։ Առ այս՝ յոյժ շնորհակալեալ մեր զողորմաշատ և զգթառատ Արքայէգ մեծէ, օրհնեցաք զքեզ համայն թագաժառանգ զարմիւքդ։ Զորս օրհնեսցէ Տէր և զօրացուսցէ և ամենազօր Աջովն իւրով պահպանեսցէ միշտ ի յամենից անբարի դիպուածոց, Լիցի ընդ ձեզ յամենայն ժամ և հասցէ ձեզ հանապազ ի թիկունս օգնականութեան։ Արասցէ հարկու ի վերայ թշնամեաց, և զյամենայնի բարեյաջողութիւնս շնորհեսցէ ձեզ հանդերձ երկարութեամբ կենաց։ Եւ զնուէրս և զողորմութիւնս քո զորս շնորհեալ ես յանուն սրբոց եկեղեցեաց՝ զորս յիշեցաք, ընկալցի ի հաճոյս իւր, և զփոխարէնն հատուսցէ բազմապատկապէս քեզ՝ և քոյոցն համայնից՝ ի յանանց կեանսն, լցուցանելով և աստէն իսկ երկնաձիր պարգեւօք և շնորհօք, և զարդարելով առաւել եւս՝ հոգեկան առաքինութեամբք։ Իսկ մըղ՝ ահա որպէս հրամայեալ ես՝ առնելոց եմք ի Սահփանէն ըզյիշեալ գրոմսն, և զխաչկալն սրբոյ վանիցն սրբոյն Գէորգեայ՝ շինեցուցանելոց եմք ըստ բարի բաղձանաց սրտի քոյ։ Սակայն որ գրեալ էիր թէ՝ զՆրկուտւոյ եկեղեցւոյ զանօթսն և զգեստսն որովհետև տարեալ են անօրէնք, զքաւասուն թուժանն նմա շնորհեցաք և այլն։ Առ այդ, գիտասցէ օրհնեալ սրբազդ, զի թէ՝ ոչ իցեն լաւապէս ծանուցեալ մեծութեան քումմ։ Քանի

ղի՝ ոչ միայն զնոյն եկեղեցւոյ զգեստն և զանօթն են տարեալ, այլ և զսրբոյն Խորվիրապայ վանից զգեստն և զանօթն են տարեալ և խսպառ կողոպտեալ։ Ուր է տեղի չարչարանաց սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ, ուր եկաց ի Վիրապի ի մէջ Թուխաւոր զեռնոց՝ յամս հնգետասան, որ և է իսկ նոյն Արկուռւի տեղի Առաջնորգարանն։ Որ մինչև ցարդ կայ ամայի, իսկ այժմ որովհետև խնամօք Աստուածածնոր և խաղաղասէր Արքայի գտեալ է երկիրս ղխաղաղութիւնս, կամի վերստին արկանել ի նա զշինութիւն, որ և առաքեցաք իսկ այժմ զկարգաւորս և զայլ միաբանս. զի արկցեն անդ զշինութիւն. և զլոյսն վառեսցեն, և աղօթեսցեն վանն աշխարհի և վանն կենաց օրհնեալ Արքայիդ՝ և թագաժառանգ զաւակաց քոց. որպէս ահա պատմեցոց է մեծութեանդ հարազատն ձեր Սահփանն, նոյնպէս և սբրոյն Յակորայ Մծրնայ Հայրապետի Անապատն ևս է կողոպտեցեալ, որ է առընթեր նոյն Արկուռւի գեղջն և կեցութիւն միաբանից նորին ևս ի յայնմ գեղջէ լինի։ Արդ՝ այս է այժմ միտք գրեցելոցս առ Քրիստոսազօր Արքայդ, զի թէ յիրաւի չեն ծանուցեալ մեծութեան ձերում զայսոսիկ, և այժմ կամիցիս՝ զի նոյն ողորմութիւն արասրեալն ի քէն քառասուն Թուման երից լիցի այսինքն Խորվիրապու վանից, և սուրբ Յակորայ Անապատին, և Արկուռւոյ եկեղեցւոյն ապա ծանուսցես մեզ զկամդ. և մեք ի վերայ երից ըժամանեսցուք, որ և լաւական իսկ է երից՝ առ ի հոգալ վասն նոցին ըղգեստս և զանօթս։ Իսկ թէ՝ որպէս յառաջ հրամայեալ ես, այժմ եւս այնպէս կամիցիս, զի միայն Արկուռւոյ եկեղեցւոյն լիցի կամք մեծութեանդ է. զայն եւս ապա՝ ծանուսցես մեզ, զի առցուք միայն նոյն եկեղեցւոյն։ Ահա զայսոսիկ Ոսեփանն եւս արդ առնելոց է մեծութեան ձերում։ Այլ եւ շնորհակալ եմ մեծապէս՝ զամենաբարեպաշտ և զուղղասէր օրհնեալ Արքայէգդ, որ վրէժխնդիր լինելով ճշմարտութեան և ջանալով ի հերքել զաղանդն Ախթարմայութեան ի յԱստուածախնամ երկրէգ քումմէ, շնորհեալ ես այժմ եւս կրկին զգիր սաստիկ հրամանի զի ի յեկեղեցւոյս մերմէ փեռեկաեալքն և խոտորեալքն ի մոլեկան աղանդն յայն Ախթարմայութեան, դարձցին վերստին ի դաւանութիւնս մերոյ եկեղեցւոյ, որպէս և յառաջ յաւուրս Հոգելոյս Հայրապետին մերոյ՝ և ի գալն յայդր տեղապահ Մկրտիչ վարդապետին եւս արարեալ էիր այսպէս, և շնորհեալ զայդպիսի աղդու հրամանագիր, որ և այժմ ըստ նոյնոյ կերպի զաստիկ հրամանագիր շնորհելով, կարգեալ ես եւս զգըլխաւոր ե. զՀարազատ անձինն՝ վերակացուս այդմ իրի, առ ի յառաջացուցանել զդէպքարեգործ հրամանիդ մեծութեան ձերոյ։ Վասնորոյ՝ շնորհակալութեամբ մեծաւ օրհնեցաք համայն միաբանիւք զԱստուածածազօր Արքայդ, և զթագաժառանգ ոստդ օրհնութեան. և խնդրեցաք յԱստուածոյ՝ պահել միշտ զձեզ անաղօտս և պայծառս, ծաղկեալս բարեպաշտութեամբ, և ջատագովս միշտ ճշմարտութեան, ի պայծառութիւն հաւատոյ, ի բարձրութիւն եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, և ի յուրախութիւն մեզ։ Իսկ և՝ յայտնի է ահա Աստուածածազօր արքայիդ զի ի վաղուց հետէ է՝ որ նուիրակ ոչ եկն ի սրբոյ Աթոռոյս ի յօրհնեալ երկիրդ քո՝ ի պատճառս անձեռընհասութեան։ Իսկ այժմ, ահա զսիրելին մեր և զԱռաջնորդն օրհնեցելոյ քաղաքիդ քոյ զՊարապետ վարդապետն կարգեցաք նուիրակ բոլոր երկրիդ. զի ընդ առաջնորդական գործոյն՝ հոգասցէ և զնուիրակութիւնն, խնդրեմ զյատուկ խնամդ ունիլ ի վերայ մեր. ահա իբր օրհնութիւն ի Միածնաէջ սրբոյ Աթոռոյս և ի մէնջ առաքեցաք դարձեալ ընդ դմա վասն Աստուածասէր Արքայիդ՝ Ի բեռն գինի, զոր սիրով ընկալեալ՝ վայելեսցես ընդ սեղանակիցսդ. յիշելով զսուրբ Աթոռս մեր և զմեզ ի բարիս։ Յորմէ ընդունելով զմարմնաւոր զմայլումն, զմայլեսցիս եւս հոգեպէս՝ զուարճացուցիչ և հոգեպարար շնորհիւ Աստուածածէջ սրբոյ Ցեղուոյս։ Որ և եղիցի հանապազ ընդ քեզ և ընդ քոյսինսն ամենեսեան, ողջ ի ցեր, զօրացեալ ի նոյն միշտ հանդերձ քոյսինովքդ։ Ամէն։ Ի ՌՄԼԱ թուոջ մերում, ի մայիս Ի։

(Փուսուլայ։)

Այլ եւ՝ առ չլինիլ թղթոյս մերոյ դադարկ՝ եւ ի նշան սիրոյ, առաքեցաք ահա վեծուլենան քում զմէկ ժամացոյց ի ծնոն սիրելոյն մերոյ Ստեփանին. զի վայելեսցես քարեաւ. եւ ունիցիս զսուրբ Աթոռս մեր եւ զմեզ յար ի յիշման, ընաւ ահա իբր օրհնութիւն՝ (ի վերդ է ի մէջ նղնգածելին զրնա, եւ ապա զայս թէ՝) կրկին լեր ողջ եւ զօրացեալ ի Տէր։

Թուղթ օրհնութեան առ կին ոմն Լալիթարս անուն ի Թիֆլիզ, որ զփլեալ եկեղեցի մի՝ որ Քարափի եկեղեցի կոչի, շինեալ եւ նորոգեալ՝ ընծայեալ էր ի վիճակ սրբոյ Աթոռոյս, որպէս եւ յառաջ իսկ լեալ էր։

Ծորմէ ժամանեսցի Աստուածային օրհնութիւն և նախախնամական դթութիւն Հանդերձ առատաձեռն ողորմութեամբ նորին և շնորհօք սրբոյ և Միածնիջոյ տեղւոյս. ի վերայ հոգևոր և բարեպաշտուհի դստերդ մերոյ՝ և ծնողասէր զաւակիդ սրբոյ Աթոռոյս, երկիւղազարդի և բարեսիրի, Տէրամր օրհնեցեալ Լալիթարսիդ։ Եւ հոգեւոր որդոցն մերոյ և Թոռանց քոց դեռաբոզքոջից՝ Զօհրաբին և Պետրոսին։ Եւ Աստուածապահ ասն քում, և համայն ընտանեացդ և ազգականացդ՝ և բարեկամացդ՝ և ամենից՝ որոց քոյ են, խնդալ ի Տէր յարազուարճ ցընծութեամբ, Ամէն։

(Ընորհք)


Եւ ընդ ամենառատ օրհնութեանն Աստուածայնոյ՝ դիտասջիր հոգևոր դուստր մեր և լուսածին զաւակ սրբոյ Աթոռոյս էջմիածնի։ Զի դու օրհնեցեալդ ի Տեառնէ ունելով ի վաղուց բարի իղձս եկեղեցաշինութեան ի լինիլ յիշատակ հոգւոյդ քում՝ և համայն ննջեցելոց քոց՝ առաջի Աստուծոյ, տեսեալ ես ապա զՔարափի եկեղեցի կոչեցեալ սուրբ Գէորգայ եկեղեցին զբնիկ Տէրունի վիճակն և թեմ սրբոյ Աթոռոյս զի փլեալ է ինքնին. վասնորոյ մեծաւ հաւատով և ջերմեռանդ սիրով սկսեալ ես զնա շինեցուցանել քոյով արդեամբքն. զոր և շինեցուցեալ ես իսկ նորապէս՝ վայելչադոյն քան զառաջինն և հաստեցեալ ի կատար։ Եւ զի ի բնէ Տէրունի վիճակ էր սրբոյ Աթոռոյս եկեղեցիդ այդ՝ որպէս ասացաք, վասնորոյ և դու զքո նորապէս շինեալդ ևս քոյով արդեամբք ընծայեալ ես ի վիճակ սրբոյ Աթոռոյս, ի լինիլ յիշատակ հոգւոյդ քում, և ծնողացն քոց, և կենակցին քոյ ի Տէր հանգուցելոյ՝ Պետրոսին. և ամենայն ննջեցելոցդ։ Եւ յաղագս հաստատութեան յիշատակարարութեանդ քոյ դրեցուցեալ ես ևս զգիր յիշատակի, զոր և կնքեցուցեալ Առաջնորդին օրհնեցելոյ քազքիդ կարապետ Աստուածահմաստ վարդապետին. և Աւետ քահանային մերոյ վիճակի, առաքեալ էիր առ մեզ։ Եւ նոյն Առաջնորդ կարապետ վարդապետ սիրելին մեր և հարազատ գործակալն սրբոյ Աթոռոյս Տէր Ղազարն ևս դրեալ էին մեզ զամենայն վերոյգրեալ բանսն, այսինքն զքոյդ հաւատալով մեծաւ ընծայելդ ի վիճակ սրբոյ Աթոռոյս զչինեցեալդ ի քէն նորապէս՝ զՔարափի եկեղեցիդ, որպէս և յառաջ էր իսկ սմա վիճակ։ Եւ մեր դիտացեալ զայսոսիկ, և զյիշատակագիրն քո ևս ընկալեալ՝ համայն Միաբանիւք սրբոյ Աթոռոյս օրհնեցաք զքեզ և զքոյսինսն ամենեսեան՝ առաջի Աստուածածէջ սրբոյ տեղւոյս, և զանուն քո՝ և ծնողացդ, և առն քոյ Պետրոսին, և զամենայն ննջեցեալսդ՝ յիշեցաք ի փրկարար սուրբ Պատարագին. և հայցեցաք վասն ձեր զքաւութիւնս և զողորմութիւնս ի Տեառնէ։ Այդ ուրեմն ընկալցի Տէր ի հաճոյս իւր զհոգևոր յիշատակդ քո. իբրև զպատարագն Աբէլի զնոյի և զԱբրահամու. և զվարձս բարիս և բաղմապատկապէս հատուսցէ քեզ ըստ յոդնաջան աշխատութեանց քոց՝ աստ և ի հանդերձեալսն։ Եւ որքան աղօթք Պաշտօնք Պատարագք և Ընորհաբաշխութիւնք ի սուրբ եկեղեցւոդդ յայդմիկ կատարիցին, յայնցանէ զմասն մեծ և ղբաժին առատ՝ հանցէ քեզ Տէր, և ծնողաց քոց, և առն քոյ, և ամենայն ննջեցելոցդ և կենդանեացդ։ Եւ զի հաւատով մեծաւ ընծայեալ ես սրբոյ Աթոռոյս զաշխատութիւնդ քո՝ չափեսցէ Աստուած զիոխարէնն առատապէս ի հոդի քո՝ և համայն ննջեցելոցդ, պահելով և զթո-

ունագ քո և զամենայն ընտանիագ ի խնամս իւր. և յօրհնութեանց և ի Շնորհաց սըրբոյ Աթոռոյս ես՝ պարգևեսցէ ձեզ զմանն և զբաժին փրկելով աստէն յամենայն չարէ, և յետ աստեացս, ընդ համայն ննջեցելոցն քոց արժանացուցանելով մտից երկնաւոր առագաստին, և դասակցութեան սրբոց իւրոց։ Արդ՝ ահա ի միամտութիւն հոգևոր դաւերդ մերոյ գրեցաք զայս օրհնութեան նամակս մեր, զի միամտացիս թէ՝ սրբոյ Աթոռոյս է վիճակ և ժառանգութիւն սուրբ Եկեղեցիդ այդ՝ որպէս և յառաջն էր. և ո՛չ է լինելոց մարմնաւոր ժառանգութիւն ուրուք ընտանւոյ քոյ՝ և կամ այլոց. զի ազատ եկեղեցին Քրիստոսի ո՛չ անկանի ընդ մարմնաւոր իշխանութեամբ։ Ուրեմն առ այս և միամիտ լեր հոգևոր դուստրդ մեր։ Որում Տէր հաստուսցէ զվարձս ըստ վաստակոցդ բարեաց. և զՇնորհս սըրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս Մեր և ս ընկալցիս միշտ ամէն։ Ի ՌՈՒԱ, ի Մայիսի Ի։

Թուղթ առ Արքայն վրաց Հերակլէս, վասն Հաղարծինու վանից Առաջնորդ Մանուէլ՝ եւ իւր Միաբան Աւետիս վարդապետացն. որոց զթեմն իսպառ խլեալ էին Հախպատցիք. եւ կային քաղցեալ վանորոյ՝ եկեալ աստ՝ բողոքեցին։ Որոյ սակս խնդիր գրեցաւ Արքային, զի ըզհնար իմն գտցէ վասն նոցա։

Ծորմէ ճշմարիտ և անխարդախ սիրով Քրիստոսական սուրբ ողջունիւ և հոգևոր օրհնութեամբ։ Նաև հոգեզուարճ Շնորհօք և Արագահաս օգնականութեամբք Աստուածածնէջ սրբոյ Ցեղոյս և համայնից հրաշագործ սրբութեանցն՝ որք ի սմա Ծանուցուն լիցի օրհնեցելոյգ ի Տեառնէ Աստուծոյ՝ և Զօրացելոյգ նովաւ, բարեպաշտի և Մեծահաւատի, Հանճարեղի և իմաստնախոհի, Քաջազօրի և Արիաջանի, բարեյաղթի և Թշնամավանի Մեծի Արքայիդ Հերակլիայ, Զի լաւագոյն իսկ տեղեակ է Մեծութիւն ձեր որպիսութեանց Հաղարծինու վանիցն՝ որ գոյ ի Ղազախ. և Թէ զի՞նչ վէճ յառաջագոյն Թեմից նորին լեալ է, և վերջապէս ո՛րպիսի վճիռ՝ քոյով գիտութեամբ, և կոնդակաւ Հոգելոյս Հայրապետին մերոյ, որպէս ղի, որքան չէն վանորայքն ի շինուածեան, ղՂազախու երկրի մերազնեայ ժողովրդոց հոգևոր արդիւնսն ի միասին վայելեսցեն Հախպատու և Հաղարծինու Միաբանքն. իսկ՝ յորժամ շինեսցին, յայնժամ՝ իւրաքանչիւր վանք՝ իւրոյ Թեմին տիրեսցէ։ Իսկ այժմ, նոյն Հաղարծինու Առաջնորդ Մանուէլ Եպիսկոպոսն, և իւր Միաբան Աւետիք վարդապետն եկին առ մեզ, և լալով յայտնեցին զաղէտս իւրեանց Թէ՝ զկէսն Ղազախու երկրի մեք ունէաք ի ձեռս մեր. և զՀոգևոր արդիւնսն վայելելով՝ ապրէաք. իսկ այժմ՝ զայն ևս առեալ ի ձեռաց մերոց. և ձեացաք քաղցեալք և ողորմելիք, վասնորոյ և առ քեզ դիմեցաք, գանել մեզ ըզհնար իմն ապրուստի։ Եւ մեր հայելով ի խղճութիւնս նոցին՝ և ի ծերական ալիսն. տագնապեցեալ եղաք ի խղճէ. և խնայեցաք ի ծերութիւնս գոցին և ի խղճութիւնս։ Եւ կամելով զդուռն իմն ապրուստի և կեցութեան հնարել վասն դոցա, ահա գրեցաք զայս աղերսական թուղթս մեր առ մեծութիւն քո. և այլ ոչ ումեք զբանս ինչ վասն այսր գրեցաք ի օրհնեալ քաղաքդ. այլ քեզ Աստուածազօր Արքայիդ միայն գրեցաք զայս գիր աղերսանացս։ Որով զայս և եթ հայցեմ ի քումմէ բարեպաշտութենէ, զի վասն Աստուծոյ՝ և ի սէր մեր, գուս ևս գթասցես ի ծերունիդ յայդոսիկ. և զհնար իմն կեցութեան գտցե՛ս վասն դոցա, և ծանուսցես մեզ՝ ֆանզի՝ ի հարկէ դոքա ի մանկութենէ եւրեանց ի մէջ վանից են լեալ, և թեմ՝ և վիճակ՝ և հաց են ուենցեալ, որովք կենցաղավարեալ են մինչև ցարգ, և ժամանեալ ի հասակն ծերութեան։ Այժմ ի հարկէ՝ մինչ այլ ոչ եւս ունիցին զնոյն հաց, ողորմելի են լինելոց՝ որպէս և լեալ իսկ են։ Խնդրեմ ուրեմն յԱստուածազօր և յիրաւասէր Արքայէդ, բարւոք մատծեալ զայս ասացեալս, և առնել դոցա զայցելութիւն իմն։ Զի ամենայն վանորայք և եկեղեցիք քո են. և յամենեսին ի նոսա քնակիչքն փառաբանիչք Աստուծոյ են, և աղօթողք վասն կենաց և բարեյաջողութեան քո և թագաւորի որդւոց և ամենայն ընտանեաց քոց։ Ուրեմն և

քոյ յամենեսին ի նոսա միով խնամով և գթով ակնարկելդ ըստ իւրաքանչիւր արժանեաց, առաւել հաճելի է Աստուծոյ։ Որ և եղիցի ընդ քեզ միշտ, յայղոցեսցե քեզ յամենայն ժամ ի բարութիւնս, ըստ իրաւանց և ըստ հաճոյից իւրոց. ունչ լեր ի Ցեր, զօրացեալ ի նոյն միշտ քոյոյնովքգ ամենե քուվքը։ Ամէն։ Ի ՌՄԱՆ թուոջ մերում ի Մայիսի ԻԹ։



Թուղթ առ որդի Արքային վրաց Գեօրգիոն Միրզայն, շնորհակալութիւն վասն յղեալ ընծայիցն։

Ճորմէ ժամանեսցի թուղթ հայրական օրհնութեան, որգիական ողջունի և հոգեկան ճշմարիտ սիրոյ. ի վերայ իսկական և յատուկ սիրով սիրեցելոյգ իմոյ ի Քրիստոս. և սիրոգի միշտ օգոից Աստուածաէջ որբոյ Աթոռոյս և մեր, զորս և առնոգի իսկ։ Քրիստոսասիրի՝ և զօրացելոյ միշտ ի նոյն. բարեպաշտի և մեծահաւատի. քաջ պարմի և բարեառնմի, արիաջանի և թշնամանվանի, արքայազնուդ արքայորգուդգ Ցերմոր օրհնեցելոյ և նովիմր զարգացեալ թագազարմ որգուդգ և դստերացգ բարեբաղդութիւնից, և համայն ընտանեացդ։ Ճշմարիտ սիրելեացդ և հաւատարիմ բարեկամացդ և խորհրգակցացգ և ընաւից հարազատ պաշտօնէիցգ և սպասաւորացդ, և ամենից ընդ հովանաւորութեամբ քով եղելոցն, խնգալ ի տէր յարաժամ։ Ամէն։

(Ընորհք),


Եւ ընդ ամենառատ օրհնութեանն Աստուածայնոյ՝ ծանուցուաի լինի սիրեցելոյդ իմոյ ի Ցեր։ Զի սիրածիր թուղթն քո է. հաս առ մեզ՝ ձեռամբ հարազատ ծառային քոյ Շաքարոյին։ Զոր մեծագոյն սիրով առ ընկալեալ մեր՝ ընթերցաք զբանդ սրատդիւրիչ և զուարճաբար. որովք և ցնծացաք արդար է հոգեպէս տեսանելով յայն իսկ եղեալ բարեպաշտութեան քում զմեծագոյն ջան՝ բնիկ սիրովդ յատկականաւ և ստուգադունիւ, զի առնիցես զմեզ միշտ սրատաշահս և բերկրեցեալ։ որպէս և առնես իսկ։ Որ և՝ առ յաճախութեան դոյն յատկագունի սիրոյ, ոչ զհարևանցի բանս միայն սիրայայտ էիր գրեալ, այլ որպէս վայել է ճըշմարիտ սիրելւոյ։ Մանաւանդ՝ սրտացաւի և օգտախոհի, զայնս էիր խորհեալ, և խոկացեալ և գրեալ յատուկ փուսուլայիւ, որք օգտակարագոյնք են մեզ և հարկաւորք առ ի խոկալ։ Նոյնպէս և յազագս դոյն յատկական սիրոյդ յորդութեան որ առ մեզ՝ ուրախացեալ էիր ընդ գալն նոմոսացն մերոց Արքայականաց, որոյ սակս և զշնորհաւորութիւնս էիր գրեալ. որպէս վայել է ճըշմարիտ բարեկամաց, լինիլ ուրախութեանց բարեկամին՝ ուրախակից, և վշացն՝ վշատակից։ Որովք արդարև (ըստ որում և գրես) թէպէտ և հեռի գոմք ի միմեանց։ այլ իբրու առընթեր և ներկայ գոլով առ մեզ ցաւակրութիւն, միխիթարեցեր զմեզ յոյժ որպէս և միշտ լինէիր մեզ միխիթար։ Ընդ որս և մեր շնորհակալեալ մեծապէս զքումմէ բարեպաշտութենէ, օրհնեցաք զքեզ օրհնութեամբ բազմաւ՝ առաջի Աստուածածէջ սքոյ աեզոյս. և հայցեցաք ի նմին ամենաբարոյ Ցեառնէ մերմէ, հաստատել քեզ փոխարէն դոցին զվարձս բարիս և բազմապատիկս։ Որ և նոյն ինքն բաբեխնամօզն Ցէր՝ վարձաարեսցե զքեզ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ. զօրացուսցե զօրութեամբ մեծաւ, և օրհնեսցե, փրկեսցե յամենայն չարէ և պահեսցե միշտ ուրախ և ցնծուն կենօքս։ Լինի ընդ քեզ յարաժամ և արասցե աշխարհս ի վերայ ամենից թշնամեաց և հակառակորգաց ձերոց։ Բարձրացուցանելով օրըստօրէ գերագոյն փառօք և ճոխութեամբ, առաւելագոյն հանճարով և խոհականութեամբ, երևելի քաջութեամբ և արիութեամբ ահարկու իշխանութեամբ և բարեհռչակ անուամբ, զարգարելով ևս հոգեկան առաքինութեամբ և իւրահաճ գործովք եւ բարեպաշտութեամբք։ Այլ եւ՝ որ ի նշան ճշմարտի սիրոյդ որ առ մեզ յղեալ էիր ընդ նոյն հաւատարմին քո Շաքարոյին վասն մեր Ա լաւ ձի, երկու բեռն անուշահամ գինի, Ա եղջերու և Ա եղն, և զվայրի հաւս, բերեալ առ մեզ հասոյց։ Զորս մեծաւ սիրով և շնորհակալութեամբ ընկալեալ մեր՝ օրհնեցաք զօրհնեալգ Աստուածդ։ Ճորմէ և խնդրեցաք, զի միշտ պահեսցէ զքեզ լի և զեղուն ամենայն հոգեւոր եւ մարմնաւոր բարութեամբ և լցուսցէ յարա-

ժամ երկնաձիր պարգեւօք՝ եւ շնորհօք, առնելով զքեզ յամենայնի զուարճալի եւ խընդալից հանդերձ քոյոյնովքդ համայնիւք՝ որպէս դու զմեզ առնես։ Մնաց մեզ այժմ զայս խնդրել ի քումմէ Աստուածասիրութենէդ զդոյն սերտութիւն եւ զճշմարտութիւն սիրոյ հանապազ ունելով առ սուրբ Աթոռս մեր եւ առ մեզ մխիթարեսցես զմեզ միշտ այսպիսի սփոփարար եւ սիրարծարծ թղթովքով՝ եւ յատուկ օգտասիրութեամբ. Իսկ եւ այս գիտութիւն լիցի օրհնեալ Արքայսեր գոյգ։ Զի երբեմն որ յաղագս գերեսեարց կամ աղքատաց գրէք մեզ՝ տալ զկոնդակս ժողովրդեան, որքան ոչ էին եկեալ փարմանքն մեր՝ ոչ տայաք. որպէս եւ գիտէք։ Իսկ՝ յետ գալոյ փարմանացն, եւտուք քանեսց անձանց ըստ ձերդ գրեցելոյ, որպէս գիտէք եւ զայնս եւս։ Սակայն որովհետեւ ի սոյն ժամանակս բազումք են հարեալք անկայծողութեամբք յամենայն տեղիս, եւ անկեալք յաղքատութիւնս կամ յայլ փորձութիւնս, վասնորոյ՝ գան յամենուստ եւ կուգեն ի վերայ մեր. եւ զկնդակս խնդրեն։ Իսկ մեք թէ ամենեցունց տացուք զկոնդակ, անցանէ ի վեր քան զչափն, որով եւ տուղքն ողորմութեան զզուին՝ եւ ոչ տան։ Եւ թէ չտացուք, մինչ լսեցեն թէ ձեր թղթովք. առ մեզ եկօղքն առնուն. նոքա եւս գալոց են յայգր առ բարեպաշտութիւն ձեր. եւ զգլխացաւութիւնս են տալոց ձեզ. եւ դուք յայնժամ թէ կամաւ եւ թէ ակամայ՝ տալոց էք նոցա զթուղթս. իսկ մեք՝ թէ ամենայն ի ձէնջ թուղթ բերողաց տացուք նոյնպէս անցանէ քան զչափն, որպէս ասացաք վասն որոյ գրեմ սիրեցելոյդ իմոյ. զի թէ երբեմն վասն յոյժ հարկաւորութեան գրեսջիք մեզ տալ զկոնդակ. եւ մեք տացուք, ոչինչ քան մահանք լինին ի տեսողաց, Իսկ վասն բազմաց՝ կամ մի գրէք առ մեզ եւ կամ թէ գրիցէք եւ մեք չտացուք, խնդրեմ մի լինիլ խաթրամաց. այլ խնայել ի պատիւ սուրբ Աթոռոյս եւ մեր. մի գուցէ անընդունակ լիցի կոնդակն մեր, որ է պակասութիւն մեծ։ Եւ զայլ երկարապէսն ի հոգեւոր որդւոյդ մերմէ Շաբարոյէ իմացեալ իցես։ Ողջ լեր ի տէր ղօրացեալ ի նոյն միշտ։ Ամէն։ Ի ՌՄԼԱ թուոջ մերում, ի մայիսի ԻԷ։

Թուղթ ի Թիփլիզ՝ առ Իսրայէլ կաթողիկոսն, ի պատասխանի թղթոյն իւրոյ զոր գրեալ էր ընդ Տէր Աբրահամին։

Ճորմէ ճշմարիտ սիրով, Քրիստոսական ողջունիւ, եւ կարօտիւ ծանուցումն լիցի սիրեցելոյ եղբօրդ եւ իսկական բարեկամի, Տեառնդ Իսրայիլի սրբասէր կաթողիկոսիդ։ Զի ի մայիսի ԾԶ ընդ սիրելւոյ մերոյ Տերունազարդ Տէր Աբրահամ Աւագ քահանայիդ գրեալ թուղթդ էհաս առ մեզ, եւ իմացաք զդրեալսդ. Հանդերձ նոյնութեամբ անկեղծականի սիրոյդ՝ որ էրն առ մեզ՝ եւ է իսկ։ Եւ գոյն Տէր Աբրահամ սիրելիդ մեր եւս պատմեաց մեզ զորպէսն քո. որ եւ կատարեաց զուխտ իւր. եւ շահեցեալ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ ըստ իւրոյ արժանւոյն, ահա վերադարձաւ յայգր. յորմէ իմանալոց ես զամենայն որպէսն մեր եւ սրբոյ Աթոռոյս։ Իսկ՝ զի սիրելի եղբայրդ մեր ունէիր յառաջագոյն զիղձ՝ գալ ի սուրբ Աթոռս եւ առ մեզ. զոր եւ գրեալ էիր մեզ յառաջագոյն։ Եւ մեք յայնժամ գոլով շրջապատեցեալ ձախորդութեամբք եւ ի մէջ մեծաց զբաղանաց, գրեցաք սիրոյդ ընդ այնքան, մինչեւ մեք գրեսցուք քեզ ի գալ։ Այլ որովհետեւ ցուցեալ ես այժմ եւս ի թղթոջդ զկարի աենչանագ՝ զորս ունիս վասն գալոյ՝ ապա գրեմ սիրոյդ՝ զի երբ եւ կամիցիս՝ եկեսցես ի սուրբ Աթոռս եւ առ մեզ՝ զի տեսութեամբ միմեանց լցուսցուք զիղձս մեր. Թէպէտ այժմ եւս կամք ի մէջ զբաղանաց մեծաց։ Իսկ որ գրեալ էիր թէ՝ գիտեմ զանչափութիւն տիրոյդ որ առ իս. բայց բազումք այնք են, որք ջանան յեղաշրջել առ ի յատեղութիւն, եւ այլն։ Առ այգ գիտասցես. զի ճշմարտութեան սիրոյն մերոյ ահա գու իսկ վկայես. և ո՛չ կարօտի վերստին ծանուցանելոյ զորպէսն սիրոյն մերոյ։ Բայց զայսքան ինչ ի կարճոյ ասեմ. զի որպէս տեսեր զիս ի սկզբանն՝ մինչ եւկիր ի սուրբ Աթոռս, եւ յետ այնուրիկ ևս կրկին. այժմ եւս նոյն սաուգութիւն սիրոյ ունելով առ քեզ՝ ոչինչ եմք պակասեցուցեալ։ Զի ոչ ունիմք ղայնպիսի բարս՝ զի ի բանս և ի խօսս մեր և ի սիրելութիւնս ընդ ուսք՝ յետաշրջիկ եւ փուփոխական գտանիցիմք. և ո՛չ այնպէս՝ զի դիւրալուր

լիցուք ամենայն ուժք, և ղոր ինչ ասիցեն՝ հաւատասցուք՝ և արասցուք ղրան ինչ ըստ պլոց ախորժակաց։ Իսկ թէ պլք լսել գիտեն պլոց, և նոցին խօսիլք յպլևպլ կերպ փոխարկիլ, ինքեանք դիտասցենն Իսկ և՝ որովհետև ի վաղուց էր՝ զի չլինէաք ձեռնհաս յղել զնուիրակ և զըրբալոյս Մեռոն ի յօրհնեալ քաղաքդ՝ և յայդ կողմունդ. վասնորոյ յառաջ քան ղպլս յղեցաք զկոնդակ և զրբալոյս Մեռոն առ սիրելին մեր և Առաջնորդն օրհնեցելոյ քազքիդ կարապետ Աստուածծիմաստ վարդապետն, զի ընդ Առաջնորդական գործոյն՝ հոգասցէ և զգործ նուիրակութեանն։ Քանզի՝ չկամեցաք զնուիրակն որիշ յղել. որպէս զի՝ մի լիցի քաղաքացւոցդ կրկին ծանրութիւն։ վասնորոյ՝ այսպէս արարաք։ Զոր սակս անձեռնհասութեան՝ չկարացաք յայնժամ ծանուցանել սիրոյդ. այժմ զի զպատասխանիս թղթոյդ դրէաք, զայն և՛ս ծանուցաք եղբայրութեան քումՙ զի դիտասցես։ Եւ ի սիրոյ եղբայրութեան և յատուկ սիրելութեան ձայով անպակասՙ զսիրանիշ դիրդ և՛ս մի պակասեցուսցես։ Ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԱՆ, ի Յունիսի ԺԶ։



Թուղթ առ Լօռու ըերդի եւ իւր մերձակայից ժողովուրդսն. որք էին Զաւախէթցիք, Բիւրականցիք եւ Ապարանցիք. որք խնդրէին աղերսանօք եւ բազմակնիք թղթով՝ առնել զինքեանս Տէրունի սրբոյ Աթոռոյս. զի չկամէին լինիլ թեմ Սանահնոյ՝ (որոյ վիճակ էր Լօռի.) եւ ոչ հնազանդել. այլ սրբոյ Աթոռոյս կամէին լինիլ Տէրունի վիճակ։ Որոյ աղագաւ եւ զԱւագ քահանայն իւրեանց զԱխալքեաւակցի Տէր Աբրահամն յղեալ էին աստ։ Որեւ եղեւ ըստ հայցուածոց նոցա. եւ Տէր Աբրահամն եւս կարգեցաւ գործակալ սրբոյ Աթոռոյս։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան՝ և նամակ պատպանութեան. Ընդհանրական. և Աստուածային բազմապատիկ օրհնութիւնն և նախանձամական դթութիւնն. ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ և հարազատ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս՝ և Տէրունի ժողովրդոցդ սորին, Հայկասէր՝ Լուսաւորչակրօն և Միաբանադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս, համայն Զաւախէթցի, Բիւրականցի և Ապարանցի՝ և այլ եկամուտ օրհնեալ և Քրիստոսասէր ժողովրդոցդ, որք զետեղեալ կայք ի յԱստուածախնամ քերդ Լօռու, և մերձակայս դորին։ Քահանայից, Իշխանաց, Մելիքաց, Դօլվաթաւորաց, մեծատանց, երիցփոխաց, տանուտեարց, հողադործաց, աղքատաց։ Եւ այլ առհասարակ ժողովրդականացդ մնծաց փոքունց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, խնդալ ի Տէր յարաժամ։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ ամենատաս օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցուաք լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ հարազատ և ծնօղ սէր զաւակացդ և Տէրունի ժողովրդոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, Զի բազմակնիք թուղթն ձեր էհաս առ մեզ ձեռամբ հոգևոր որդւոյն մերոյ Տէր Աբրահամ խոհեմամիտ քահանային։ Զոր ընթերցեալ մեր՝ հասու եղաք դիտմանցն ձերոց։ Որք մեծաւ աղէտիւ դրեալ էիք թէ՝ որովհետև մեք ի բնէ անտի սրբոյ Աթոռոյդ եմք վիճակ և ժառանգութիւն, վասնորոյ՝ ո՛չ կամիմք եղբէք, ո՛չ կարեմք՝ և ո՛չ առնումք յանձն հատանել զմեզ ի լինելոյ վիճակ սրբոյ Աթոռոյդ, և լինիլ այլ վանից վիճակ։ Զի ո՛չ է հնար երբէք՝ լինիլ այսպէս. և ո՛չ օք կարէ անջատել զմեզ ի դմանէ. քանզի զմահն մեր կամիմք. և ամենայն կերպ աղքատութեան և նեղութեան կարեմք ժուժել, քայց այլուժ՝ վանից վիճակ լինիլ ո՛չ կարեմք։ Այս և բազմօք աղերսանօք խընդրեալ էիք ի մէնջ թէ՝ մի՛ կամիցիս տալ զմեզ այլոյ վանից, թէեւ ցրուեցաք, թէեւ աղքատացաք, սակայն՝ սրբոյ Աթոռոյդ եմք բնական վիճակ. ո՛չ պարտիս զմեզ ի ձեռաց թողուլ. այլ պահել ի ներքոյ ձեռաց ձերոց, օրհնութեան թղթով զմեզ մխիթարել, և ձեր Աթոռային Առաջնորդի զմեզ յանձնել. որ ի կողմանէ ձերմէ զմեզ հովիցէ։ Արդ՝ զոյն աղէտալի խնդիրս ձեր մինչ ընթերցաք, մորմոքեցաք յիրաւի ի վե-


րայ հօտիդդ մերոց բանաւորաց. և աղէկի-
զական բանք ձեր կակծեցուցին զսիրտ մեր-
քանզի՝ գրեցելովք ձերովք այսոքիւք՝ զհա-
րազատ որգւոյ ցուցիք յիրաւի զյատկու-
թիւնն. Վասն զի՝ որպէս հարազատ որդին
մինչ ըստ պատահմանց աշխարհի հեռացեալ
ի մարմնաւոր ծնողացն, և ի հեռաւորու-
թիւնս անկեալ, ոչինչ ի ցանկալի իրաց և ի
վայելչութենան աշխարհի այնքան ըղձալի ե-
րեւի նմա՝ մինչ զի՝ զծնօղսն մոռացուսցէն.
զի զոչինչ առաւել ցանկալի քան զծնօղսն
վարկանի. վասնորոյ՝ և բաղձայ յաւէտ՝
դառնալ անդրէն առ ծնօղսն: Այսպէս և
հոգեւոր որդիքդ սրբոյ Աթոռոյս և մեր,
թէպէտ ըստ բերմանց ժամանակի հեռա-
ցեալ էք տեղեաւ, պայ զլուսատու ծնօղս
ձեր սուրբ Աթոռս առաւել ունելով ձեզ
ըղձալի քան զամենայն ինչ. ո՛չ կամիք հե-
ռանալ և անջատիլ ի սմանէ սրտիւ և
զպլա ճանաչել. այլ զսյն իսկ բաղձայք,
զի սրտիւ և հոգւով կապակցեալ մնայցէք
ի սա՝ և անբաժան ի սմանէ: Եւ զի այս-
պէս՝ սէր հոգեւոր որդիութենան ձերոյ ձկտի
առ ծնօղս ձեր լուսատու և առ մեզ, և ո՛չ
կամիք ի մէնջ բաժանիլ, վասնորոյ և նե-
րիւն մեր ի խղճէ մտաց, մանաւանդ եւ
փղձկուեաւ սրտի՝ (որ ի մորմոքեցուցիչ բա-
նից ձերոց մեզ եղեւ,) ո՛չ թուլատրէ մեզ
թողուլ զձեզ ի ձեռաց, ի սրբոյ Աթոռոյս
բաժանել՝ և տալ որիշ վանից: Զի ո՛ե-
տես երբէք և լուաւ թէ՝ մինչ զաւակունքն
առ ծնօղսն դիմեցին, ծնօղքն զնոսա ի բաց
վարեսցեն յինքեանց, և տացեն ի ծառա-
յութիւն այլոց: Եւ զի այս ո՛չ լինի երբէք՝
որպէս յայտ է. ապա և մեզ ո՛չ վայել էր
յիրաւի՝ չլսօղ լինիլ աղերսանաց ձերոց և
չընդունիլ զձեզ անդրէն ի գիրկ մօրս ձերոյ
լուսատուի՝ յոր դիմեալքդ էք: Վասնորոյ՝
ահա լսելով բազմաթախանձ աղերսանաց ձե-
րոց, ընկալայ զձեզ անդրէն ի վիճակս սըր-
բոյ Աթոռոյս, որպէս և էիք իսկ ի քնէ տե-
րունի վիճակ սորին և ժառվուրդք: Որք և
յայսմհետէ եւս տէրունի էք սրբոյ Աթո-
ռոյս: և սա է ձեզ յատուկ վանք և առաջ-
նորդարան. և մեք եմք ձեզ հոգեւոր առաջ-
նորդ և հովիւ: Որք և ահա այժմ գրեցաք
առ սիրելին մեր՝ և հարազատ որդին սրբոյ
Աթոռոյս՝ և առաջնորդն օրհնեցելոյ քազա-
քին Թիֆլիզու՝ և ամենայն տէրունեաքն մե-
րոց յայդ կողմ՝ կարապետ Աստուածիմաստ
վարդապետն և Արհի եպիսկոպոսն. զի զձեզ
եւս ընդ այլ տէրունի վիճակացն մերոց ի
մերս կողմանէ հովուեսցէ, և լիցի ձեզ հո-
գեւորապէս խրատիչ, և ծանուցանօղ ձեզ
զօրէնս և զպատուիրանս Աստուածային, և
կառավարօղ ձեզ ըստ աւանդութեանց սրբոյ
եկեղեցւոյ և ըստ կանոնաց Հարցն սրբոց:
Ուրեմն՝ և դուք պարտիք սիրով մեծաւ ըն-
դունիլ զնա ձեզ հոգեւոր հովիւ և առաջ-
նորդ. և լինիլ լսօղ և կատարօղ ամենից հո-
գեւոր և անմեղածին հրամանաց նորին եւ
ոչ ոք ի ձէնջ ներհակ և հակառակ եղեցին
նմա ի յանդիմանելն և ի յուղղելն զան-
հնազանդսն օրինացն Աստուծոյ: Որում զոր
ինչ հնազանդութիւնս՝ և զորդիական սէր
և զհարազատութիւնս ցուցանիցէք, այն ա-
մենայն մեզ և սրբոյ Աթոռոյս լինի համա-
րեալ և օրհ՛ուէթենց մեծաց լինիք արժա-
նաւորք: Եւ զամենայն առաջնորդական եւ
վանական հասս և զհրաւունս ձեր ևս՝ որ
ինչ օրէն է և սովորութիւն ի քնէ անտի,
նոյն առաջնորդ կարապետ վարդապետին
յանձնեսջիք. քանզի առ նա հասեալն՝ մեզ
և սրբոյ Աթոռոյս է հասեալ: Եւ ով ոք ի
կողմանէ սրբոյ Աթոռոյս եւ մեր՝ Առաջնորդ
եցէ ի Թիֆլիզ, յինչ ժամանակի և իցէ, նա
պարտի զձեզ հովուել. բայց ի նմանէ՝ որիշ
առաջնորդ ոչ ունի ի վերայ ձեր իշխանու-
թիւն. քանզի՝ դուք սրբոյ Աթոռոյս էք ձէ-
րունի վիճակ և ժողովուրդք. յատուկ վանքն
և առաջնորդարանն ձեր սուրբ Աթոռս է՝
և Առաջնորդն ձեր մեք, որպէս ի վերոյ ևս
գրեցաք: Նաև՝ պատմեաց մեզ սիրելի որդին
մեր Ձեր Աբրահամ խոհեմառատ քահանայն,
որ ունիք զբազձանս շինել զեկեղեցի ի մէջ
քերդիդ՝ որովհետև ոչ գոյ Վասնորոյ՝ եւ
մեր ընդ այդ ուրախացեալ՝ ահա պատուի-
րեմք հոգեւոր որգւոցդ մերոց, զի որպէս
մատդրեալ էք, ջանասջիք ի գլուխ տանիլ.
շինել վասն ձեր զեկեղեցի՝ զի լինիցի ձեզ
հոգեւոր մխիթարութիւն, և առանց եկե-
ղեցւոյ մի մնայցէք: Այլեւ՝ ահա զսիրելի որ-
դիդ մեր զտէր Աբրահամ հանճարաշատ քա-
հանայդ՝ կարգեցաք ձեզ աւագ քահանայ,
և ի մէջ ձերում գործակալ սրբոյ Աթոռոյս
և մեր, այսու օրհնութեան նամակաւս մե-

րով։ Որոյ դործ և պաշտօնն այս է։ Զի որովհետև Առաջնորդն միշտ յայդը ոչ պատահի, վասնորոյ դա պարտի ձեր հասին՝ չհասին, և ամենայն եկեղեցական օրինացն և հոդևոր կարգացն վերահասու եւ մուղայէթ և կարգաւորող լինիլ։ Եւ կալ ի ներքոյ ձեռաց Առաջնորդին և որդիական հնազանդութեամբ լսել ամենից ասացելոցն ի նմանէ, և հրամանաւ նորին շարժիլ։ Եւ զքահանայսդ և զամենայն ժողովուրդդ յԱստուածակոյս կողմանէ կառավարելով ի ճշմարիտ հաւատս, ի յուղիղ դաւանութիւնս, եւ ի մաքուր կրօնս սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց պահել, և զդուշացուցանել զձեզ հեռի և ի բաց լինիլ ի հեսահեցելոցն ի մէնջ, ի չար և ի մոլորաշաւիղ ախթարմայիցն, եւ յայլ պատրչաց և ապականչաց կրօնիս մերոյ սրբոյ։ Եւ լինիլ ևս վրէժխնդիր ամենայն անկարգութեանց և պահել զամենեսեան զձեզ ի կարգի և ի կանոնի։ Եւ եթէ մեծ բան ինչ պատահիցի, զայն գրել և ծանուցանել Առաջնորդին և նա զոր ինչ վճիռ տացէ և գրեսցէ ինքեան՝ այնպէս առնել, և զհրամայեալն ի նմանէ կատարել։ Եւ ընդ այսպիսի հոգացողութեանց՝ նա և սրբոյ Աթոռոյս արդեանցն եւս մուղայէթ լինիլ, այսինքն դանձանակի, հոգեբաժնի, կտակի, խոստմանց, պաղտոյ՝ Աթոռատասի, և այլ ամենայն առաջնորդական և վանքական հասից և իրաւանց։ Զորս հաւատարմաբար հաւաքել, և ամբողջապէս հասուցանել սիրելւոյն մերոյ առաջնորդ Կարապետ Աստուածիմաստ վարդապետին. քանզի՝ ի նա հասեալն՝ մեզ եւ սրբոյ Աթոռոյս է հասեալ՝ որպէս դրեցաք։ Ահա այսոքիկ են գործք և պաշտօնք սիրելի որդւոյդ մերոյ և. հաւատարիմ գործակալիդ սրբոյ Աթոռոյս՝ տէր Աբրահամ աւագ քահանայիդ, որոց պարտի արիաբար և տարաղատօրէն հոգացօղ լինիլ, և արժանաւորիլ վարձուց բարեաց և օրհնութեանց։ Եւ դուք սիրելի և հոգեւոր որդիքդ մեր եւս պարտիք զդա ձեզ աւագ քահանայ ընդունիլ, և մեզ և սրբոյ Աթոռոյս գործակալ և վէքիլ դիտել, և ամենից օգտաւոր ասացելոցն դորին ևս լսօղ լինիլ և առնօղ. և օժանդակ ևս լինիլ դմա յամենայն բանս և ի գործս իւր։ Եւ չերթևիլ դմա ումեք ի ձէնջ ներհակ և անունկնդիր։ Եւ կատարօղքդ հոգեւոր հրամանացս մերոց՝ եղիցիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ, և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ։ Ամէն։ Ի ՌՄՂԱ. ի յունիսի Ի։



Թուղթ առ արքայն Հերակլ, մխիթարութիւն վասն մահուան կնոջ որդւոյն իւրոյ Գեօրկին Միրզային։

Առ թագուհին եւ առ Որդին եւս գոն թուղթք մխիթարութեան վասն նոյն աննչեցելոյն, ի վերոյ։



Թուղթ նորոգութեան գործակալաց, որ գրեցաւ ի յերկիրն Ախխազաց՝ վասն Գեօրեցի փոքր տէր Սահակին, որ յաւուրս Հոգելոյս Հայրապետին տեառն Սիմէօնի եւ ի նմանէ իսկ՝ կարգեցեալ էր գործակալ ի վերայ ժողովրդոց նոյնոյ երկրին։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, նամակ պահպանութեան, շնորհք առաքելական, և Աստուածային բազմապատիկ օրհնութիւնն և նախանամական դթութիւնն, ի վերայ սիրելի և հոգեւոր որդւոցդ մերոց, հարազատ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս և ազգիս ժողովրդոցդ սորին, ի յԱստուածախնամ երկրորդ Իմէրէթու ըստեղեալ հայմօրէն հայկասէր՝ լուսաւորչակրօն և միաբնադաւան հաւատացելոցդ ի ջրիստոս, սրբոյ անուանէր քահանայիցդ, բարեպաշտօն իշխանացդ և առհասարակ օրհնեալ ժողովրդոցդ ամենից, խնդալ ի տէր յարազուարճ ցնծութեամբ։ Ամէն։

(Շնորհք)

Եւ ընդ Աստուածային ամենատես օրհնութեանս ծանուցանեմ լիցի սիրելի եւ հոգեւոր որդւոցդ մերոց, ծնօղաստէր զաւակացդ և ազգիս ժողովրդոցդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի։ Զի լսելով մեր զբարի համբաւս և զրարուք գործունէութիւնս հոգեւոր որդւոյն մերոյ տէր Սահակ արիաչան քահանային, մանաւանդ՝ զյառաջադիմութիւնան հաւատոյ՝ զընդիմակայութիւնան ընդդէմ չարափառաց,

յայժ բարւոք թուեցաւ մեզ բերել ի սուրբ Աթոռս, և վերսին ի նոյն հոգեշահ ջանացուրթիւնն իւր և եւս աւրինացուցանել զի եւս առաւել լիցի ջատագով ճշմարտութեան, և պահպանող զձեզ ի հոգեվնաս ազանգոյն ախթարմայութեանն Ուստի՝ և բերեալ զնա ի սուրբ Աթոռս և առ մեզ, գրաւաք յիրաւի նոյնպէս՝ որպէս լուեալն էաք վանորոյ՝ որպէս հոգելոյս հայրապետն մեր և եւս գիտելով զգորին հաւատարմութիւնն և ղհոգեւոր արիութիւնն՝ կարգեալ էր ի վերայ ձեր գործակալ և վէքիլ ի կոզմանէ սրբոյ Աթոռոյս, նոյնպէս եւ մեք ահա կարգեցաք վերսին զսիրելի որդիդ մեր եւ հարազատ զաւակդ սրբոյ Աթոռոյս զաէր Սահակ պարկեշտասուն քահանայդ ի մերս կողմանէ վէքիլ եւ գործակալ սրբոյ Աթոռոյս ի վերայ ձեր։ Զի ըստ որում հեռաւոր էք աեղեաւ, եւ նուիրակն սրբոյ Աթոռոյս ոչ միշտ պատահի լսել կողմունսգ. եւ ի մերս կողմանէ ի Թիֆլիզ նստող առաջնորդն եւս է ի ձէնջ հեռի, վասնորոյ՝ գա պարտի ի մերս կողմանէ հոգեւորապէս կառավարող եւ հոգացող լինիլ ձեզ աէրունի ժողովրդոցդ մերոց. եւ ձեր հասին՝ չհասին, եւ ամենայն եկեղեցական օրինացն եւ հոգեւոր կարգացն վերահասու եւ մուզայէթ եւ կարգաւորող լինիլ, եւ պահել զձեզ ի կարգի եւ ի կանոնի։ Եւ եթէ մեծ բան ինչ պատահիցի, զայն գրել եւ ծանուցանել Առաջնորդին՝ եւ կամ մեզ. եւ զոր ինչ վճիռ ասցուք այնմ մեք եւ կամ առաջնորդն, այնպէս առնել։ Մանաւանդ՝ խրատել եւ ուսուցանել զձեզ միշտ Աստուածային բանիւք, եւ պահել զձեզ զամենեսեանն ի ճշմարիտ հաւատս, ի յուղիղ դաւանութիւնս եւ ի մաքուր կրօնս Հայաստանեացս սուրբ եկեղեցւոյ։ Զգուշացուցանել զձեզ յամենայն ժամ ի չար եւ ի հոգեվնաս աղանդոյն ախթարմայից՝ ի հետեցելոցն ի ճշմարտութենէ, եւ յապականելոցն յամենայնի նոյնպէս եւ ի յայլ պարբերաց չարափառաց, եւ պահել զձեզ ամենայնիւ հեռի ի նոցունց։ Եւ եւս, սրբոյ Աթոռոյս արգեանցն եւս մուղեէթ լինիլ, այսինքն գանձանակի, հոգեւորժնի, աթոռատեսի, պազոյ, կանկի, խոստմանց, եւ այլ ամենայն առաջնորդաւկան եւ վանքական հասից եւ իրաւանց։ Զորս եւ հաւատարմաբար հաւաքել, եւ հասուցանել ի Թիֆլիզ առ նուիրակ եւ առաջնորդ կարապետ աստուածիմաստ վարդապետն և արհի եպիսկոպոսն, եւ մեզ գրել եւ ծանուցանել զի եւ մեք օրհնութեան թղթով շահեսցուք զձեզ։ Ուրեմն՝ եւ քեզ սիրելի եւ հոգեւոր որդւոյդ մերոյ եւ հարազատ գործակալիդ սրբոյ Աթոռոյս աէր Սահակ արիաջան քահանայիդ պատուիրեմ, զի արիաբար հոգացօղ լիցիս ամենից վերոյգրեցեալ գործոցդ հոգեշահից, ըստ Աստուածային օրինացն կառավարելով զաէրունի ժողովուրդդ մեր՝ որպէս գրեցաք. եւ սրբոյ Աթոռոյս Մօրս քո լուսատուի՝ հաւատարմաբար ծառայելով։ Եւ որքան քահանայք պիտոյ լիցին գոցա, բերցես յայլուստ՝ ուստի եւ իցէ, զձշմարտատեսեան եւ զուղղահաւատ քահանայս՝ զի հովուեսցեն զգոսա։ Քայց՝ որովհետեւ սակաւաւորք են ժողովուրդքդ մեր եւ տուրք դոցա ոչ բաւականանան հովուող քահանայիցն, վասնորոյ՝ ըստ որում եւ կանոնեալ է հոգելոյս հայրապետաց մեր, նոյնպէս եւ մեք ահա գրեմք եւ պատուիրեմք, զի ուստի եւ եկեալ իցեն ի մէջ գոցա քահանայքն, նոցին ընկերք քահանայքն որք կան ի տեղիս իւրեանց և զբնիկ ժողովուրդն իւրեանց հովուեն, ի քահանայականարդեանցն իւրեանց հանցեն արդարութեամբ զբաժինս այնց քահանայիցն՝ որք գան ի մէջ դոցա. եւ տացեն ի տունս նոցին. որպէս զի՝ եւ նոքա միաժամութեամբ զդոսա հովուեսցեն։ Վասն զի եւս գոյն լիցի կանոն. զի որքան եւ ընտացես դուի մէջ դոցին՝ ի յերկիրդ Իմերէթու, ծերունի հօրեղբայրն քո աէր Իսահակ ճշմարտասէր քահանայն զքոյդ ժողովուրդն հովուեսցէ. եւ զարդիւնդ քահանայական առեալ ի նոցունց՝ տացէ ի տուն քո. եւ դու միաժամութեամբ եւ արիութեամբ զայդ Տէրունի ժողովուրդսըդ մեր կառավարեայ։ Եւ դուք հոգեւոր որդիքդ մեր եւ աէրունի ժողովուրդքդ սրբոյ Աթոռոյս, պարտիք զսիրելի որդիդ մեր աէր Սահակ հանճարաշատ քահանայդ մեզ վէքիլ եւ գործակալ գիտել, եւ ամենից օգտաւոր եւ հոգեշահ խրատուց դորին լսօղ լինիլ եւ առնօղ, որով եւ հոգեւոր հրամանացս մերոց գոլ կատարօղ։ Որք եւ կատարելով ղհրամանս մեր հոգեւոր՝ եղիջիք օրհնեալք յԱստուծոյ եւ ի մէնջ. եւ շնորհք սրբոյ

Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ. Ամէն. Ի ՌՄԼԱ. ի յունիսի Ի։



Թուղթ ի Հաշտարխան, առ Դանիճասարու զանճասլաստ ալարան Միխայէլն զի զարդիւնան զանճանակին եւ զխոստմունս՝ թէ ինչն յանուն Դանճասարու յղնացէ անդ։

Թուղթ առ Ջուչու, Չամախու, Նուխու, Դարբանտու, Բաքուայ, և բոլոր երկրին Ջրուանու. զի զսրբոյ Աթոռոյս գանձանակաց արդիւնսն յղեսցեն՝ ի սուրբ Աթոռս, ձեռամբ սոյն թղթատար Յակոբ վարդապետին, որ յատկասէս վասն այսր առարեցաւ։

Թուղթ առ Յովհաննէս կաթողիկոսն Աղուանից, վասն Յակոբ վարդապետին՝ որ առաքեցաւ այժմ յայն կողմունսն՝ ի հաւաքել զարդիւնսն սրբոյ Աթոռոյս՝ թէ դԳանձանակացն, և թէ զայլ խոստմունք կամ ղկտակ. և բերել աստ։ Որպէս զի՝ ձեռնտսւ լիցի նմա՝ յամենայն կողմանէ։

Թուղթ առ ժողովուրդսն Բայազիտու, վասն առաջնորդութեան վանից սրբոյ Առաքելոյն Թադէոսի, մինչ Ջուղայեցի Ստեփաննոս վարդապետն յառաջադրեցաւ լինիանց՝ խնդրել առաջնորդ, և նորա չկամեցան և նա գնաց ի Նուիրակութիւն Ուռումէլսւ։ Այժմ կրկին խնդրելով զԱռաջնորդ զԿարապետ Առաջնորդն ասէին հանել անտի և առ լինքեանս ունել։ Այլ զի ի նմանէ կամք չունէին, մանաւանդ ես պիտանի էր, վասն որոյ գրեցաւ թէ նա Կարսեցւոցն ես է ղիտոյ, գուք զայլ առաջնորդ վասն ձեր ընտրեցէք. զովոք և կամիք, և վերստին մեզ ծանուցէք, զի կարգեսցուք ձեզ Առաջնորդ։

Թուղթ գործակալութեան, առ Գեօրու և վրաց տանու ժողովուրդսն, վասն ծերունի Տէր Մահակին դեօրեցւոյ. և մխս վրոր Տէր Մահակին եղբօրորդւոյ նորին, զի ի միասին արասցեն զսրբոյ Աթոռոյս գործակալութիւնն. Եւ զի՝ կառավարող լիցին նոցա բարեպէս ի ճշմարիտ հաւատս, ի յստոյգ դաւանութիւնս և ի մաքուր կրօնս Հայաստանեայս սուրբ եկեղեցւոյ, և զղուշացուսցեն յԱնթաբամայից և յայլ պատրաստ հեռի ոտ, և չվաբիլ ի նոցունց։



Թուղթ առ Դարէջան Թագուհին վրաց՝ կինն Հերակլայ արքային. մխիթարութիւն վասն մահուան կնոջ որդւոյն իւրոյ Գեօրգին Միրզային։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ Հայրական օրհնութեան, որպիսական ողջունի և հոգեկան սիրոյ, հանդերձ առատաձեղ դթութեամբ և ողորմութեամբ Նորին և երկնաձիր մխիթարութեամբ։ Նաև՝ հոգետած շնորհօք և զօրութեամբք Աստուածածէջ սըրբոյ Ցեղոյս և համայնից յոդնահրաշ սըրբութեանցն՝ որք ի սմա։ Ի վերայ Աստուածասիրի և բարեպաշտուհւոյ, մեծահաւասի և բարեհռչակի, ի Տեառնէ Աստուծոյ օրհնեցելոյ՝ և թագազարմ ընտանեօքդ համայնիւք պահպանեցելոյ նովիմբ, դստերդ մերոյ հոգևորի՝ և սիրեցելոյ ի Քրիստոս, գերապատուոյ և շքեղապանծի, պերճափառի և համեստափայլի Դարէջան թագուհւոյդ ամենայն վրաց։ Եւ աստուածապահ տան քումդ, և նովիմբ զօրացեալ որդւոցդ և դստերացըդ արքայազնէից, և ամենայն իսկ քոյոնոցդ, հնդալ ի Տէր միշտ։ Ամէն։

Շնորհք և խաղաղութիւն, սէր և քաղցրութիւն ի միայնոյ պատճառէն ամենայն բարեաց ՅԱմենասրբոյ Երրորդութենէն, ի հօրէ՝ և յորդւոյ և ի հոգւոյն սրբոյ. իջեալ հանդիպեսջ ի վերայ քոյ՝ և ամենից քոյոցնոցդ, և ծաւալեալ ի ձեզ առատապէս լցուսցէ ամենայն բարեօք հոգեկանօք և մարմնականօք, մխիթարութեամբ և սփոփանօք զաւրարելով և ամենայն հաճոյական գործովք։ Ամէն։

Եւ ընդ օրհնառաք ողջունաարութեան և սիրոյ շնորհապարդև նամակիս, ծանուցանեմ լիցի հոգևոր դստերդ մերոյ Ցերամբ

օրհնեցեալդ։ Զի լուայ զանբարի և զարամա-
ութիւնդ դիպուածեան նորագոյն, զմահ բարե-
պաշտուհի ամուսնոյն Որդւոյ քո Քրիստոսիւ
զօրացելոյ Գեօրկին Միրզային, և որոյ սակս
զտրամուԹիւնդ ձեր և զմեծագոյն վիշտ
սրտի։ Եւ արդարև, որպէս ձեզ նոյնպէս և
մեզ եղև այգ մեծագոյն ցաւ և կսկիծ։ Զի
Թէպէտ հասարակաց է մահն մեր ամենե-
ցուն, որոյ վասն ոչ պարտիմք աւելորդաբար
տրտմիլ, և ոչ զանմխիԹար սուգ առնուլ
յաղագս փոխեցելոցն առ Տէր իբրև զանյոյս
ոք. քան զի ի յանցաւոր կենաց աստի ի
մշանջենականն փոխին հանգիստ. որումն և
մեք ամենեքեանքն յուսով մեծաւ աներկմամբ
և ակն ունիմք հասանիլ այնմ, ըստ ան ուտա
խոստման Տեառն մերոյ ԹԷ՝ եԹէ ոք զիս
պաշտեսցէ՝ զկնի իմ եկեսցէ. և ուր եմն եմ
անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ Բայց սա
կայն ի դէպ և պատշաճէ ուղիւալ վասն այն
պիսեաց առ Տէր փոխեցելոց, որք դեռ ևս
պիտանիք իցեն աշխարհի, և չիցեն սակա-
ւին լցեալ զչափ աւուրց լիութեան։ Որպէս
ահա այժմ վասն փոխեցելոյն այնմիկ առ
Քրիստոս՝ Տիկնոջն բարեպաշտուհւոյ և Աս-
տուածասիրի՝ ձերումդ բարեպաշտութեան առ
դիպեցեալ է սուգ և կսկիծ. ոչ վասն այնր
միայն՝ զի ի կենաց աստի պակասեցաւ, այլ
և՝ զի չէ ևս էր հասեալ ի չափ աւուրց
լիութեան. և տակաւին այն ունէր վայելել
զաստեացս վայելչութիւն, զուարճանալ Ար
քայորգւովն Տերամբ զօրացելով, Թագազարմ
զաւակօքն իւրովք։ Բայց որովհետև այս
ըստ մարդկային կամաց և մտածմանց է, և
ոչ որպէս Տեառն են կամք, վասնորոյ փա-
ռաբս տալի է կամաց նորին, և գոհանալի
իսկ ընդ նմանէ. զի որպէս կամի՝ նոյնպէս և
առնէ. և ոչ ոք կայ հակառակ կամաց նորա։
Պիտոյ է և մեզ ուրեմն՝ հայցել վասն հոգ-
ւոյ նորին զայցելութիւնն ի Տեառնէ և խընդ-
րել ևս վասն ձեր զմխիԹարութիւնս սըր-
տից՝ և զերկարութիւնս կենաց։ Արդ ուրեմն՝
լուսաւորեսցէ Տէր զհոգի նորին. և շնոր-
հեսցէ զԹողութիւն ամենից մարդկօրէն սխա-
լանացն. դատեսցէ ընդ սուրբս իւր, և ընդ
նոսին պահեսցէ։ Եւ հոգւովն սրբով զտրտ-
մեալ սիրտս ձեր մխիԹարեսցէ. և զսուգ և
զտրտմութիւնս ձեր ի ձէնջ փարատեսցէ։
Տացէ ձեզ զուարթութիւնս մեծագոյնս՝ փո-
խանակ այդր տրտմութեան. և հանդերձ ա-
մենայն Թագաժառանգ ընտանեօքդ պահեսցէ
երկար ամօք և խաղաղական կենօք։ Արդ՝
գրեմ հոգևոր դստերդ մերոյ Թողուլ այ-
սուհետև զտրտմութիւնդ, տալ փառս Աս-
տուծոյ և գոհանալ ընմանէ, ուրախ լինիլ՝
և մխիԹարիլ ի սգոյդ, և մխիԹարել ևս
զարքայազարմ որդիդ և զամենայն ընտա-
նիսդ. զի և մեր լսելով զուրախութիւնս ձեր՝
լիցուք զուարճացեալք։ Այլև՝ ահա զ՚իրելի
որդին մեր Մարտիրոս խոհեմամիտ վարդա-
պետն առաքեցաք այսու օրհնութեան Թըղ-
Թով մերով առ աստուածսիրութիւն ձեր,
ի մխիԹարել զձեզ ի մերս կողմանէ. և զղ-
ջայն և զօրհնութիւնս ի մէնջ՝ բերանով ևս
մատուցանել։ Ողջ լեր ի տէր ի խաղաղու-
Թեան քայլնովքդ ամենեքումբք։ Ամէն։ Գր-
բեցաւ ի ՌՄԼԱ Թուոջ մերում, ի յունիսի
Լ, և ի լուսակերտ Աթոռս ամենայն Հայոց
ի սուրբ Էջմիածին։

Թուղթ առ Զմիւռնոյ նուիրակ և առաջ-
նորդ Փիլիպպոս վարդապետն, ի պատաս-
խանի երկուց Թղթոց նորին ի յունվարի
ԺԹ և ի մարտի ԾՁ դրեցելոյ։ Միամտու-
Թիւն վասն արարեալ փօլիցային նորոյ,
և վասն ընծային ևս՝ որ դեռ չէր հասեալ։
Եւ զի դեռ զՄանիսայ չէր նուիրակեալ.
իսկ ի մարտի ԾԷ սմա գրեցաւ աւարտումն
տալ բանիցն և ւալ. և Եսայի վարդապե-
տըն յղեցաւ անդ ի նուիրակութիւն և յա-
ւագնորդութիւն, վասնորոյ դրեցաւ սմա
զի մի շտապիցէ, այլ զՄանիսա ևս աւար-
տեալ ապա ելցէ և եկեսցէ։ Եւ Եսայի
վարդապետին ևս գրեցաւ յառաջ քան զայս՝
մի շուտով երթալ, այլ կամկար, մինչև
նա զմնացորդսն աւարտիցէ՝ որև այժմ
սմա ծանուցաւ։

Թուղթ առ մեծին Պօլսոյ նուիրակ Մի-
նաս վարդապետն. վասն Մշու սուրբ
Կարապետի վանից առաջնորդութեանն։
Զի տեղւոյ Մախսուտ փաշայն՝ եւ միա-
բանք վանիցն գրեալ էին զխնդիր վասն
Աստուածատուր վարդապետին որ էր

անդ Առաջնորդ՝ հանել յԱռաջնորդու-
թինէն. եւ զԱրապակերցի Ծարուխիւն
վարդապետն որ յանցեալ ամին եկեալ
էր աստ՝ օրհնիլ եպիսկոպոս, եւ Առաջ-
նորդ կացուցանել վանիցն՝ եւ յղել առնդ:
Զսոյն խնդիրս փաշայն յառաջ եւս էր
գրեալ: Իսկ այժմ թուղթն այնոքիկ
յղեցան առ սա՝ ցուցանել պատրիարքին
եւ իշխանացն. եւ նոցա եւս գրեցաւ. զի
տեսեալ զթուղթսն, եւ հասու լեալ որ-
պիսութենանց վանիցն՝ հոգ տանիցեն նմա:
(Ոյոյ օրինակն է ի վերոյ 367, 368,
369 համարսն:) Ուստի եւ սմա գրեցաւ,
խօսիլ ընդ նոսա ըստ նոյն գրեցելոյ
ոճի, եւ որպէս եւ հոգայցեն, եւ զով եւ
կամիցին կարգել առաջնորդ՝ ծանուցա-
նել ինքեանս:

Ծորմէ . . . և այլն:

Իսկ այժմ՝ թէպէտ և զբազեալ էաք
ծանրագունիւք զբազմամբք՝ և չունէաք ժամ,
սակայն՝ հարկն պատահեցելոյ իրականու-
թեանն ներկայիս ստիպեաց զմեզ յայժ,
գրել առ սիրելի եղբայրն մեր Պատրիարք
Զաքարիա Աստուածաբան վարդապետն և
առ օրհնեալ իշխանապետսն և իշխանսն
զթուղթ մի՝ առ ի հոգ տանիլ նմին: Եւ
է ասացեալս՝ յաղագս Մշոյ սուրբ Կարա-
պետի վանիցն: Քանզի ահա յայտնի է որ-
պիսութիւն նորին՝ որ իբրու ի յետին կէտն
է հասեալ. և թէ այնպէս ձեռացէ այլ եւս
ի սակաւ ինչ ժամանակս՝ իսպառ վերջանա
լոց է շինութիւն սրբոյ Ցանն այնմիկ հըր-
էշակաւորի: Քանի Առաջնորդք նստան և փո-
խեցան՝ որոց չունիմք տեղեկութիւն: Ապա՝
մինչ Պատրիարք եղբայրն մեր և օրհնեալ
իշխանապետքն և իշխանքն զԱստուածատուր
վարդապետն Արքունական ֆէրմանով կա-
ցուցին Առաջնորդ տեղւոյն. ոմն ի միաբա
նից նոցին՝ Արապկերցի Ծարուխիւն վար-
դապետն որ եւեալ էր անտի՝ եկն ի սուրբ
Աթոռս յանցեալ Հոկտ. և ասաց մեզ թէ՝
եկեալ եմ ի միաբանութիւն սրբոյ Աթո-
ռոյս. և ձեալ կամիմ աստ: Եւ մեր ընկա-
լեալ զնա սիրով ի կարգս միաբանիցն, խուզ
եատուք և ի գաս կանգնեցուցաք. և կայ
մինչև ցարդ ի նոյն կարգի: Ապա ի գար-
նան աւուրսն գրեալ էր մեզ Մահտուտ փա-
շայն զգիր մի, թէ Աստուածատուր վարդա-
պետն ո՛չ կարէ զայս տունս կառավարել և
Առաջնորդութիւն առնել. զսա հան յԱ-
ռաջնորդութենէն, և զՅարութիւն վարդա-
պետն ձեռնագրեա եպիսկոպոս. և կացո՛ ի
տեղի Ծանն վարդապետին՝ և յղեա աստ՝
որ Առաջնորդութիւն արասցէ այս վանիցս:
և գրեա Պատրիարքին, որ զֆարման յղես-
ցէ վասն գորա: Եւ մեք գրեցաք նմա թէ՝
դու ահա լաւապէս գիտես, որ Աստուածա-
տուր վարդապետն ֆարմանով է կարգեցեալ
այդ վանիցդ Առաջնորդ, և մեք չեմք արա-
րեալ զդա Առաջնորդ՝ որ այժմ հանցուք-
մանաւանդ՝ և չեմք իսկ լաւապէս տեղեակ
ամենայն անցից և որպիսութենանց վանիցդ
այդմիկ, և քանիցս Առաջնորդ նստելոյն և
փոխելոյն: Ապա՝ եթէ կամիս, զայդ զոր մեզ
ես գրեալ՝ գրեա՛ առ Ստամբօլու Պատրիար-
քըն և առ իշխանսն, զի նոքա հոգասցեն.
որք զդա կարգեալ են Առաջնորդ: Զայս
այսպէս գրեալ յայնժամ՝ յղեցաք առ նոսա:
Իսկ այժմ, կրկին գրեալ էր մեզ փաշայն
զթուղթ՝ ո՛չ ըստ առաջնոյ ոճին, այլ թէ՝
միաբանք վանիցն և երկրականքն եկեալ բո-
զոքեցին առ մեզ թէ՝ Աստուածատուր վար-
դապետն ո՛չ կարէ Առաջնորդութիւն առնել.
և տունն յօրէ օր աւերի, մեք ահա գրեմք
խալիֆային զայս ցաւս մեր. դու ևս գրեա,
որ զհոհեմ անձն ոք կարգևացէ յԱռաջ-
նորդութիւն վանիցս, և զսա հանցէ յԱ-
ռաջնորդութենէն. զի այս տունս մի՛ աւե-
րեսցի: Մեք ևս ի թախանձանաց սոցին
հարկեցեալ՝ գրեմք քեզ ահա, զի զԱս-
տուածատուր վարդապետն հանցես յԱռաջ-
նորդութենէն. և ըստ վայելման այս վա-
նից՝ զհոհեմ և զկառավարիչ սևագլուխ
ոմն կարգեսցես Առաջնորդ սմին, զի կարի-
ցէ զսա պահել ի շինութեան և զֆարման
ևս վասն նորա բերել տացես: Իսկ մեք
զբանքն բազմակնիք թղթով զնոյն բանսն
գրեալ էինք. Հանել զԱստուածատուր վար-
դապետն. և յանուանէ զՅարութիւն վար-
դապետն էին խնգրեալ Առաջնորդ, զի ե-
պիսկոպոս ձեռնադրեսցուք և յղեսցուք: Զի
նա կարէ ասեն զայս տունս կառավարել.
ապա թէ ոչ, լուա՛ զձեռդ ի շինութենէ
տանս այսմիկ, մեք ահա ծանուցաք, զի ի
վերջոյ զմեզ անբասիրս արասցես: Իսկ մեք

մինչ ընթերցաք զայսոսիկ՝ մտածեցաք թէ՝ եթէ ըստ առաջնոյ պատասխանւոյն զոր առ. փաշային գրեցաք, այժմ ևս զնդպիսի իմն պատասխանիս գրեսցուք, գուցէ մեծագոյն իմն վնաս լինիցի սրբոյ Տանն այնմիկ յիրա. ւի և մեզ խղճմտանք լիցի, վասնորոյ՝ այս պէս տեսաք պատշաճ, զի գրեսցուք զայս առ. սիրելի եղբայրն մեր Պատրիարք վար. գապետն՝ և առ. օրհնեալ իշխանապետս և իշխանն, զի գիտասցեն, և որպէս կամի. ցին՝ հոգ տարցեն այն սուրբ վանիցն։ Որ և ահա գրեցաք զԹուղթ մի առ գոսա, ծանուցանելով զայս ամենայն վերոյ գրեալքս, և զմախսուտ փաշայի առաջին և երկրորդ Թուղթսն, և զմեռանիլ մահսարն ևս առ քեզ յղեցաք ահա, զի ցուցցես Պատրիարք վարդապետին և իշխանացն. և դարձեալ առ մեզ յղեսցես։ Ուրեմն տուր զԹուղթդ մեր ի դոստ, և զայգ Թուղթսգ ևս ցոյց տուր, և քեզ ևս զորինչ պատշաճի՝ այն. պէս խօսեաց. և որպէս և հոգալոց իցեն՝ մեզ ծանո։ Մեք ո՛չ զԱստուածատուր վար. դապետի որպէսն գիտեմք։ (զոր և տեսեալ ևս ոչ եմք.) և ո՛չ զՑարութիւն վարդա. պետինն լաւապէս, թէպէտ և առ մեզ է։ Ուստի՝ և ոչ ասեմք դոցա թէ զՑարութիւն վարդապետն՝ կամ թէ զայս ոմն սևագլուխ կարգեցէք Առաջնորդ սրբոյ Կարապետին։ Այլ զայս ասեմք միայն թէ՝ այն սուրբ տանն հոգ տարցեն կատարելապէս, զի մի վերջացի չինութիւնն. Իսկ զով ոք որ կա. միցեն Առաջնորդ կացուցանել. կամ թէ՝ զնոյն Աստուածատուր վարդապետն Թողուլ կամիցին անդրէն յԱռաջնորդութեանն, այն ի կամս իւրեանց է։ Միայն թէ՝ սրբոյ տանն այնմիկ զհոգս իմն արասցեն՝ որպէս գրեցաք. և զոր ինչ առնելոյ լիցին, մեզ ևս ծանուս. ցեն, և դու ևս գրեսցես. զի և մեք գի. տասցուք, և թէ իցէ ինչ մեղապաշաճ բան՝ զայն ևս մեք արասցուք։ Կարի շեշտիւ գրեցաւ վասն զբաղեալ գոլոյս մերոյ յոյժ։ Ջպատասխանի Թզթոյս շուտով գրեա։ Եւ լեր ողջ ի Տէր։ Ի ՌՄԼԱ. ի Ցուլիսի Ի։

Փուսուլայ առ Մինաս վարդապետն։

Եւ զոյս առանձին ծանիր սիրելիդ իմ Մինաս աստուածատուրեան վարդապետ։ Ցան. ցեալ Թզթոջն զոր ի յուլիսի ԺՒ առ քեզ յղեցաք, գրեալ եմք զպատճառ Թուղթ չգրելոյն մերոյ առ պատրիարքն, ահա անտի իմանալոց ես։ Իսկ որպէս գրեալ եմք անդ, Թէպէտ ոչ կամէաք գրել՝ մինչև առցուք լինքենէ զԹուղթ, բայց ի պահիլն այս հաւ. կիս՝ որ յաղագս բանից սրբոյ Կարապետի վանիցն, այդպէս բարւոք Թուեցաւ մեզ՝ ընդ իշխանացն ի մասին գրել՝ որպէս և գրե. ցաք ահա։ Իսկ զայս կերպ ցուցանելով Թէ սչ եմք անհաշտ, և ոչ յիշոզ անցելոցն այլ ահա գրեցաք ըստ պահանջման հաւ. կին զհարկաւոր գրելիս։ Իսկ Թէ ասիցի ի նմանէ՝ կամ յոմանց՝ Թէ ընդէ՞ր նախապէս զշնորհաւորութիւնս ոչ գրէ պատրիարքու. Թեանն. և ապա զայսպիսի բանս, կամ Թէ՝ ընդհէր յատուկ գիր չէ գրեալ նմա։ Դու յայնժամ ասել կարես ի քէն Թէ՝ զան. ցեալսն որ ինչ անցին՝ Թողցուք. բայց սմա պարտէր նախ զշնորհաւորութիւնս գրել կա. Թողիկոսութեան նորին, զի և նա զշնորհա. ւորութիւնս գրիցէր այժմ պատրիարքութեան սորին։ Իսկ յատուկ գիր՝ նա քանիցս գրեալ է սմա յառաջ, և չէ ընկալեալ զպատաս. խանիս. անգամ մի ևս Թող սա գրեսցէ, տեսէք յայնժամ Թէ՝ գրէ նա զպատասխա. նի հանդերձ շնորհաւորութեամբ և սրաս. շահ բանիւք, Թէ ոչ։ Այսպէս ասա աստ. զան քեզ ինչ յաղագս այսր. տես զինչ ա. սեն, և գրեա մեզ։ Եւ որպէս գրեալ եմք յառաջ, հետևեսջիք գրեցուցանել առ մեզ զԹուղթ։ Ոմն ուխտաւոր եկն այտի, յորմէ իմացաք, զի հրաւիրեալ են զքեզ. և վերս. տին ասրեալ ի յԱստուածամայր եկեղեցին, և կաս անդ ի գործս քո։ Ջայսմանէ ևս գրեսցես մեզ։ Ցատուկ և յաւակից սիրե. լեացն իմոց Գէորգին և պ. Աստուածապա. հին ողջոյն և օրհնութիւն տամ։ Որովք հանդերձ լեր կրկին ողջ ի Տէր։

Թուղթ մխիթարութեան առ որդին Հեռակալ Գիւորկին Միրզայն, վասն մահուան կնոջն իւրոյ։ Հօրն ու մօրն ևս գրեցաւ։ Որոց օրինակքն են, ի 594, 595 եւ ի 783—784։

Թուղթ առ Նախիջեւանու եւ Շուշու քերդի ժողովուրդն։ Վասն առաջնորդութեան վանիցն իւրեանց՝ Ծորնջակու սրբոյ Գաւրապետին։ Զի Նախիջեւանցիք մահսար էին գրեալ եւ մարդ յղեալ աստ թէ՝ լուաք որ մեզ առաջնորդ ես կարգեալ եւ շատ ուրախացաք։ Եւ ահա խնդրեմք՝ որ յղեսցես, զի մեր կամեցեալն ևս Ծօհան վարդապետն էր։ Իբրու այսպէս երեւէր՝ թէ Ծօհան վարդապետն առանց իւրեան խնդրոյն եւ մահսարին՝ աստ կարզեցեալ իցէ առաջնորդ։ Որոց փոքր մի յանդիմանութիւն թէ՝ մեք առանց ձերդ խնդրոյ զիարդ կացուցանէաք առաջնորդ, դեռ եւս ի ճէնջ չընկալեալ զգիր։ Կամ դուք որպէս հաւատացիք եւ գրեցիք. եւս ի Շուշի, մինչ ի մէնջ զգիր ոչ ունէիք։ Եւ ապա պատուէր, զի զով եւ կամին ինքեանք, համակամութեամբ մահսար արարեալ՝ խնդրեսցեն իւրեանց առաջնորդ, եւ յղեսցեն աստ զի եւ ինքն զնա առաջնորդ կարգեալ՝ յղեսցէ անդ կոնդակաւ։

Ծորմէ ժամանեսցի... և այլն։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիասջիք սիրելիք մեր՝ և հարազատ որդիք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի բազմակնիք թուղթն ձեր էհաս առ մեզ, ձեռամբ հոգևոր որգւոցն մերոց՝ Տէր Մարկոսին և Մարգարին և Կարապետին. հանդերձ Դոլ. վաթու խանի գրովն. և այն թղթովն՝ զոր ի Շուշի զետեղեալ ժողովուրդքն գրեալ էին առ ձեզ Նախիջևանիցիսգ։ Զորս ընթերցեալ մեր՝ իմացաք զգրեալսն ի նոսա, զի էր վասն Առաջնորդութեան սուրբ վանիցդ ձերոց։ Եւ նախ ասեմ թէ՝ ի կոզմանէ Առաջնորդին ձերոյ հանգուցեալ կարտպետ վարդապետին՝ գլուխ սիրելեացդ մերոց լիցի ողջ։ ԵՒս հոգին նորին լուսաւորեսցէ Տէր և հանգուցէ ընդ սուրբս իւր յարքայութեան իւրում և հոգովն սրբով միխիթարեսցէ զսիրտս ձեր ամենեցուն։ Իսկ ապա՝ առ Նախիջևանու քանակիչսգ յատակապէս զայս ասեմ։ Զի ի գրեցելոցն ձերոց՝ երկու բան զմեզ զարմացոյց յոյժ։ Նախ այն, որ գրեալ էք առ ժողովուրդսն Շուշու թէ՝ հոգևոր տէրին գրեցաք, թէ մեր Առաջնորդն վախճանեցաւ, և այս սուրբ տունս անտէր է, մեք զԱնանիա վարդապետն տեզապահ եմք կարգեալ և զՏէր Մարկոսն վէքիլ։ Եւ հոգևոր տիրի հրամանն այսպէս էր եզած թէ՝ պիտի որ՝ զկազեցի Ծօհան վարդապետն Առաջնորդ կարգեմ ձեզ, և այլն, որպէս ահա Շուշեցւոց առ ձեզ գրեալ թուղթն՝ զսոյն միտքս ձեր յայտնէ։ Եւ առ մեզ ևս գրէք թէ՝ լսեցինք որ մեր սուրբ վանիցն հովիւ ես կարգեալ և զմեզ ուրախացուցեալ. մեր կամքն և խորհուրդն էլ՝ Ծօհան վարդապետն էր, հրամանոցդ հաճոյ է, մեզ ևս է հաճոյ և ընդունելի և այլն։ Առ այս բանս ձեր մեք յիրաւի շատ զարմացաք. և ո՛չ գիտեմք թէ՝ այս ինչ սուտ և խաբեբայական զրոյց է՞ որ գրեալ էք առ մեզ և առ Շուշեցիան։ Դուք ե՞րբ էք գրեալ առ մեզ զԹուղթ վասն մահուան Առաջնորդին ձերոյ. և զորպէսն վանիցն ձերոց ծանուցեալ մեզ. և մեք ե՞րբ ենք կարգեալ Առաջնորդ զԾօհան վարդապետն. և ի՞նչ նշանաւ՝ իմացայք այդ բանիդ ստոյգ լինել՝ որ այսպէս հաւաստաբար գրէք մեզ և Շուշեցւոցն։ Առաջնորդ կարգելն մի՞թէ այդպէս դիւրին բան իմէ, որ առանց ժողովրդեան խնդրոյ և բազմակնիք թղթոյ՝ մեք կարգեմք և ուղարկեմք։ Այդ թէմիդ ժողովուրդն դուք էք, դուք ե՞րբ էք գրեալ թէ՝ զԾօհան վարդապետն Առաջնորդ կարգեա՛, որ մեք ևս այնպէս շուտով կարգեցաք, որ դուք իմացաք և մեզ գրեցիք։ Եւ կամ դիցուք թէ զհարևանցի իմն համբաւ լսեցիք. դուք ընդէ՞ր զնոհեմութիւն ձեր ո՛չ արկիք ի գործ թէ՝ մեք որ հոգևոր տիրին չեմք գրեալ, և չեմք խընդրեալ. նա որպէս Առաջնորդ կու կարգէ մեզ. զի Առաջնորդն ըստ ժողովրդեան խընդրոյն պարտի կարգիլ։ Եւ կամ զայս ևս

ընդէր ո՞չ մտածեցիք թէ՝ հոգևոր սէրն որ մեզ չէ գրեալ թէ՝ ձեզ Առաջնորդ եմ կարգեալ, մեք իւրեան ո՞րպէս գրեմք զայս բանս. իցէ թէ՝ սուտ լինիցի այս մեր լուեալն, Արդ՝ զայսոհիկ պարտ էր ձեզ խոհեմութեամբ մտածել, այլ ահա չէք մտածեալ։ Դուք անգամ մի չէի՞ք փորձեալ այդ ձեր չիք Մկրտիչ չերիցու սուան, որ այնքան հաւատացիք սուտ բանից դորին, մինչ զի մեզ ևս գրեցիք։ Մեք ի Յօհան վարդապետէն կարծեցաք՝ թէ ձեզ գրեալ իցէ յինքենէ կամ այդ չերիցուդ ասացեալ, և մեզադրեցաք. իսկ սա Եպիսկոպոսական կարգսն սահակապէս երդուեալ մեզ հաւատացոյց, որ յինքենէ չէ ելեալ այդ սուտդ։ Ապա իմացաք որ՝ այդ չերէցդ է հնարեալ զայդ սուտդ և ասացեալ. որպէս յեկո զգոն իմացաք, որ ի դմանէ է ելեալ այդ բանդ որ և ըստ ժամանակի առնելոց է դա ըստ արժանեաց իւրոց, զի դիտացէ՝ թէ ի վերայ կաթողիկոսի սուտ բան յօրինելն և ասելն ո՞րպէս է։ Իսկ մեք ի կողմանէ այդ վանիցդ և Առաջնորդ կարդելոյ ումեք զբան ինչ ո՛չ եմք գրեալ բնաւ, և ո՛չ ասացեալ. միայն թէ՝ այդ չերիցուդ և Պ. Մելիք Սահփանին ասացեալ եմք թէ՝ Կարապետ վարդապետն որ վախճանեալ է՝ (որպէս ահա դուք պատմէք.) այն թեմի ժողովուրդն վասն էր որ զրեն մեզ և ո՛չ ծանուցանեն. կամ թէ այն սուրբ Տանն մեկ վէքիլ կարգեն՝ որ ժամանակ ինչ հոգացեալ զցաւս տանն, մինչև իւրեանք համահաւանութեամբ և միակամ սրտիւ ընտրեսցեն զումն արժանաւոր անձն յաղագս Առաջնորդութեան. զովոր որ կամին, թէ անդ գտանիցի, թէ աստ լինիցի և թէ ուր և իցէ՝ որ իւրեանց հաճելի և խնդրելի իցէ. և մեզ գրեսցեն բազմակնիք թղթով և խնդրեսցեն կարգել ինքեանց Առաջնորդ զկամեցեալն իւրեանց, և մեք կարդեսցուք զնա իւրեանց Առաջնորդ։ Այս է մեր ասացեալն, և քան զայս աւելի այլ ոչինչ. ոչ Յօհան վարդապետի անուն եմք յիշեալ, և ոչ այլոյ ուրուք։ Այս այսպէս։ Երկրորդ՝ այս ևս զմեզ զարմացոյց, որ զմեծ մասն սոյն մահսարիս ձերոյ զոր առ մեզ էք յղեալ՝ տաճկունք են կնքեալ, որ ոչ լսած էաք այսպիսի բան, և ոչ տեսած, Դուք Հայոց ազգ էք և քրիստոնեայք հաւատով. և ձեր վանքն՝ Հայոց վանք՝ և Առաջնորդն զոր մեք կարդելոց եմք, ձեզ պարտի լինել Առաջնորդ և հոգևոր հովիւ, և վանիցն կառավարիչ։ Տաճկացն ինչ հարկ էր զայս մահսարս կնքել, որ դուք թարգ խոհեմաբար մտածութեան կնքեցուցեալ էք նոցա. ե՛րր է եզած այսպէս։ Դօլվաթլուխանն որովհետև երկրիւդ սէրն է՝ և ձեր իշխողն, նմա էր միայն պատշաճ դրել մեզ վասն այդ բանիդ, որպէս ահա դրեալ է ուրոյն թղթով. և զոր ինչ դրեալ է, ըստ կարգի է և խոհեմութեամբ, որին յոյժ հաւանեցաք՝ և ընդունելի եզեն մեզ ամենայն գրեալք նորին։ Իսկ ձեր մահսարն՝ որովհետև թարգ խոհեմ մտածութեանց էր գրեցեալ՝ և մանաւանդ այն սուտն ևս գոյր ի նմա, անհաճոյ եղև մեզ. զի մեծ ամօթ էր այսպիսի թղթով յղել յայդր զԱռաջնորդս վանորոյ՝ ահա զհոգևոր որդիդ մեր Կարապետ դարձուցաք առ ձեզ այսու թղթով մերով. և պատուիրեմք ձեզ ահա՝ զի դուք բոլոր օրհնեալ ժողովուրդք այդմ սրբոյ վանիցդ վիճակի, թէ ի նախընձանու երկրորդ ընակեալքդ, և թէ ի Շուշի եղեալքդ, համախորհուրդ և միաբան հաւանութեամբ ընտրեսջիք ձեզ Առաջնորդ՝ զով որ ուր դուք կամիցիք. թէ Յօհան վարդապետն իցէ, և թէ այլովք. թէ յայդր թէ աստ, և թէ յայլ ուրեք. որպէս ի վերոյ ևս գրեցաք։ Եւ նորապէս գրեսջիք առ մեզ զհամահաճական մահսար, թէ այս ինչ անուամբ վարդապետ որ է յայդր՝ կամ յայսինչ աեզւոջ, պատշաճ է Առաջնորդութեան սրբոյ վանիցս մերոց՝ և մեզ. զոր և միով սրտիւ և համակամութեամբ խնդրեմք. զի կարդեսցես մեզ Առաջնորդ Այսու ոճիւ դրեսջիք, և ամենեքեան կնքեսջիք. և այլ ևս մի կնքեցուսջիք տաճկաց։ Մանաւանդ՝ և Դօլվաթլուխանին այլ ևս գլխացաւութիւն մի տալիք, զի որպէս ասացաք ի վերոյ՝ խանի դրեալն խոհեմութեամբ էր և ըստ կարգի։ Վասն զի զոր ինչ հարկաւորն է գրելոյ և յուշացն՝ զայն միայն է գրեալ թէ՝ որովհետև Կարապետ վարդապետն վախճանեալ է և այն օճազն անտէր է. զմեկ վարդապետ կարգեա՛ այն տանն տէր, և յզեա, որ շէն պահէ զնա և կառավարէ, որպէս ահա ժողովուրդն

և քեզ գրեցին։ Ահա այս էր խանի գրածն, որոյ զպատասխանին մեք և գրելոց եմք ի յղելն մեր յայդր զԱռաջնորդ երր որ ձեր նոր մահսարն գայցէ առ մեզ որպէս գրեցաք։ Իցէր թէ՝ ձեր գրուածն և խանի թղթոյն նման ըստ կարգի լինէր։ Ապա ուրեմն՝ պէտ ար ցաւեցուսջիք զգլուխն Պօլվաթլու խանին. պէտ դուք ըստ վերոյ ասացելոյ ոճին գրեսջիք մեզ զնոր մահսար մի. և զովք որ կամիք՝ խնդրեսջիք. զոր և փութով առաքեսջիք առ մեզ ընդ դէմն գրարերիդ. զի և մեք կատարեսցուք զխնդիրս ձեր. և զկամեցեալն ձեր՝ Առաջնորդ կարգեսցուք սրբոյ վանիցն ձերոց և ձեզ. և Առաջնորդական կոնդակիս յղեսցուք յայդր, զի սուրբ տունդ զայդ պահեսցէ ի չինուԹեան և հովուեսցէ զձեզ հոգևորապէս։ Ահա գրաբերդ ևս պատմելոց է ձեզ լիապէսն։ Եւ կատարօղդ հոգևոր հրամանացս մերոց՝ ե. զիջիք օրհնեալ յԱստուծոյ և ի մէնջ։ Եւ շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի հանապազ։ Ամէն։ Ի ՌՄԼԱ. ի յօգոստոսի ԺԻ։



Թուղթ առ Մուտթա կաթողիկոսն

Ասորոց, ի պատասխանի աղետալի Թղթոյն իւրոյ։ Զի մինչ զկնի վախճանման կաթողիկոսին իւրեանց ընտրեալ էին զսա ի յօծանելն ի Մէրտին՝ յաթոռն իւրեանց. մի ոմն ախթարմայ սուտ վարդապետ յաղգէ իւրեանց՝ Միխայէլ անուամբ (որ զՀալապ, և զՆինուէ և զայլ բաղում տեղիս ապականեալ էր ախթարմուԹեան աղանդով և զեկեղեցիսն յափշտակեալ.) եւ կեալ էր անդ ի Մէրտին. և զսիրտ բըռնեալոյր տեղւոյն կաշառօք դողացեալ դրծեալ էր սմա դարան մահու։ Իսկ սորա փախուցեալ անտի ի լեռնակողմունս երկրին, ժողովեալ էին ուղղափառ եպիսկոպոսունք ազգին իւրեանց, և օծեալ զսա ի կաթողիկոսուԹիւն Ասորոց։ Ապա չարացեալ ախթարմայ ասորոցն կրկին ես, սկսեալ էին խարբալել և զայլ ուղղափառ եկեղեցիս։ Եւ նոր օծեցեալ կաթողիկոսս այս մինչ դիմեալ էր ի Ցամիթ՝ գտանել անտի զօդնուԹիւն. նորա և զնոյն տեղւոյ փաշայն ի կողմն իւրեանց արկեալ ճնշեալ էին զսա յոյժ. մինչ զի՝ բռնութեամբ փաշային զսուրբ Աստուածն առանց խաչեցարի ասել էին տուեալ ուղղափառ ասորոցն։ Ապա սա զբողոք արկեալ ի Պօլիս առ մերազնեայսն, ի պատրիարքն և յիշխանսն մեր որք անդ, ոչինչ էր օգտեցեալ, Կրկին ես զեպիսկոպոս էր յղեալ անդ առ նոսա, և դրեալ էր աստ ես սրբազանին մերոյ, օգնել ինքեան, բազում աղերսանօք և կսկծմամբ։ Ուստի՝ և սա գրեաց ի պատասխանի Թղթոյն՝ նախ շնորհաւորելով զուԹիւն կաթողիկոսուԹեան, զոր որում նոր էր օծեցեալ և ապա մխիԹարելով, և խոստումն Թէ գրելոց եմ ի մեծն Պօլիս առ մերայինսն օգնել քեզ և աղգիդ քո։

Յիսուսի Քրիստոսի ծառայ Ցեր Ղուկաս կաթողիկոս և ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց առաքելական եկեղեցւոյս Քրիստոսի, նաև՝ լուսակերտի և տիեզերական Աթոռոյս մեծի սրբոյ Էջմիածնի, որ ի Վաղարշապատ։ Որ և մատուցանեմ ահա զՔրիստոսականն սուրբ ողջոյն. Հանդերձ ճըշմարիտ սիրովն հոգեկան և եղբայրական ստոյգ բաղձանօք և յոգնատենչ սրտիւ։


Ցեառնդ Մատթէի սրբազնակատար կաթողիկոսիդ և ծայրադոյն պատրիարքիդ ամենայն ասորոց. սիրեցելոյ և բաղձալուծ եղբօրդ մերոյ ի Քրիստոս՝ արժանապատուոյ և գերյարդելւոյ։ Եւ անղուդական սիրովն ճշմարտագունիւ որ ի Քրիստոս՝ սիրոյդ աղգիս մերոյ և Աստուածաճէջ Աթոռոյ, ըստ բնականի օրինի և աւանդուԹեան և կցորդուԹեան հաւատոյ և սիրոյ երանելեաց կարօտիւ։

Եւ երջանկաց Հարցն և նախնեացն սրբոյ մեր և ձեր։ Եւ վշտացելոյ իսկ այժմ յաղագս նոյնոյ ճշմարիտ հաւատոյ և ուղղափառ դաւանուԹեան յոր հաստատեալ կամք միաբան որովք և ունիմք պարծանս առ Քրիստոս, և հաճեալ եմք ընդ վիշտս և ընդ նեղուԹիւնս՝ որ յաղագս այսոցիկ։ Որում և ծանուցումն լիցի։ Զի սիրածոր Թուղթ եղբայրուԹեան քո առ մեզ ժամանեաց։ Զոր ընԹերցեալ մեր իմացաք զաղէտսն ձեր զմեծագոյնս, զորս կրեք ի չարափառաց՝ յաղագս ճշմարիտ հաւատոյ սրբոյ և ուղղափառ դաւանուԹեան որ առ մարդեղուԹիւնն

քրիստոսին։ Ընդ որս եւս քոյգ յատուկ վըճռակրութիւնն եւ զմեծագոյն նեղութիւնսն՝ զորս վասն այդր կրեալ ես և կրես։ Նա և զայն իսկ, որ ըստ ընտրութեան Հոգւոյն սրբոյ և ըստ անօրէնութեան իսկ նորին՝ ջատագովք ճշմարտութեան և հետևողք ուղղափառութեան Աստուածարեալ և սրբազան եպիսկոպոսք և ուղղափառ վարդապետք աղգիդ ձերոյ ժողովեալ ի մի վայր՝ օծեալ են զքեզ ի կաթողիկոսութիւն և ի հոգևոր հովուապետութիւն ամենայն ուղղադատ ազգիդ աստրոց. առ ի չմնալ անսյցելու եւ կեղեցւոյդ ձերոյ սրբոյ ի չարաչար ժամանակի յայսմիկ՝ յորում թշնամին արդարութեան ի ձեռն իւրոց արբանեկաց շինուցանել չանայ զճշրագ ուղղափառութեան։ Զորոյ զևորհուրդն անօրէնութեան ցրեսցէ Տէր վաղվաղակի. բարձրացուցանելով վերստին զեղջիւրն ուղղափառութեան և միարնադաւան սուրբ հաւատոյ երկուց համաշաւիղ և ճշմարտադատան ազգացս մեր և ձեր։ Եւ զի զերկարապէնն ասացելոցս ի գրսրեր ուխտաւորացս իմացաք լրիւ և ծանեաք զամենայն վիշաս և զնեղութիւնս ձեր. վասն որոյ՝ յոյժ առաւել վշտացաք ի սիրտ և ի հոգի։ և ցաւեցաք վասն ձերւ Ուստի՝ և ղպաղատանս բազմահաւաչս և արտասուագոչս մատուցաք առ բարեգութն Տէր առաջի սրբոյ Տեղւոյս իւրոյ իմման՝ և համայնից Աստուածակիր սրբութեանցն որ ի սմա. զի միջնորգութեամբ սոցին և ամենատես գթութեամբ իւրով և ողորմութեամբ՝ գթասցի ի ձեզ՝ և ոգորմեսցի. և լիցի ձեզ միխթարիչ ի վշտաց այսոր։ Եւ իսփանեսցէ ի ձէնջ զպատերազմ չարին, առնելով զնա յամօթ և կորագլուխ հանդերձ իւրովքն սպրդեցելովք՝ անօրէնութեան մրջակօք, պարգևելով ձեզ զխաղաղութիւն՝ և զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ, հաստատելով զամենեսեանս ի մի հաւատս ճշմարտութեան՝ զոր ունիմք, ի փառս աննուան իւրոյ սրբոյ։ Եւ թէպէտ տրտմութիւն մեծ առ. դիպեցաւ մեզ յաղագս նեղութեանցդ ձերոց որ վասն հաւատոյ սրբոյ՝ որպէս ասացաք. սակայն և ուրախացաք եւս. մինչ կոչեալ է Տէր զքեզ ի վերակացութեան եկեղեցւոյգ ձերոյ սրբոյ։ Չնորհաւորելով զօծումն կաթողիկոսութեան և արժանաժառանգ հավուապետութեան ամենայն ուղղադատան ազգիդ ձերոյ, որպէս ղի՝ լիցիս յատագով ճշմարտութեան անաղօտ պահելով զճրագ ուղղափառութեան ի յեկեղեցիս ձեր։ Ընդ որ յիրաւի իսկ ցնծագեալ մեր և զուարճացեալ՝ հայցեցաք ի նոյն ամենողորմ Տեառնէն պահել ղընտրեցեալդ և զկոչեցեալդ իւր հաստատուն և անշարժ ի դոյն իւրապարգև և յարժանավայելուչ պատիւդ և յաստիճանդ մեծի հովուապետութեանդ։ Զոր և շնորհաւոր արասցէ Տէր, տալով քեզ վայելել խաղաղութեամբ և երկար ամօք. լինելով և օժանդակ քեզ և զօրավիգ ի մարտս հոգևորս՝ ընգգէմ հոգեշինաս թըշնամեաց. և ազատելով յարաժամ ի նոցին խարդաւանացս։ Այլեւ՝ որ խնգրեալ էիր գրել ի մեծն Պօլիս առ պատրիարքն և իշխանսն մեր՝ ղի կատարումն տացեն գրեցելոցն ձերոց և օգնեսցեն ձեզ, հաճեցաք ընդայդ կարի ցաւակցարար։ Եւ ահա՝ մինչ ելանէին աստի դոյն գրարեր ուխտաւորքդ գալ յայգկոյս՝՝, մեք պատրաստեաք զդրբեանս ի վերոյ Պատրիարքին մեծին Պօլսոյ՝ և իշխանացն յաղագս ձերւ Որպէս ղի օգնեսցեն ձեզ. և հոգ տարցեն բանից ձերոց զոր ինչ եւ գրեալ իցէք կամ՝ յայսմհետէ գրիցէք, ի փառս սրբոյ Հաւատոյս մերոյ։ Զորս եւ զկնի սակաւ աւուրց յղելոց եմք ի մեծն Պօլիս։ Այսպէս գիտասցես և լիցիս միամիտ։ Եւ զկնի այսորիկ եւս գրելով զձերդ որպիսութեանդ առ ի գիտել մեզ՝ անպակաս արասցես զգիրս սիրանիշ հանդերձ յատուկ սիրով եղբայրութեան։ Մեք եւս գրելոց եմք առ յարգելի եղբայրութիւն քո զգիրս սիրայայոս՝ երր եւ հարկաւոր իցեմք ի դրել։ Որպէս զի անպակաս լիցի երթևեկն թղթոց մերոց, և տեղեկացուք որպիսութեան միմեանց։ Ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի Թուռջ փրկչին ՌՃՃՐ, և ի մերում Թուռջ ՈՄԼՈ ի յօգոստոսի ԻԵ. ի լուսակառոյց և ի Տիրակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

Ողջոյն տամ սիրով ձշմարտիւ ի Տէր, սիրելեացն մերոց ի Քրիստոս և արժանեաց սիրոյ արդարւս, քոյոց վշտակցաց իսկ, սիրողաց և ջատագովաց ճշմարտութեան. Պշռայ արժանավայել Պատրիարքին սրբոյ Երուսաղէմի։ Նաև Իրրահիմ, Սահիթ, Ապ-

լահաթ, Էլիաղ, Եբրահիմ, և Ապալազիզ արժանապատիւ Եպիսկոպոսացն. և եագուբ հանճարափայլ վարդապետին. և այլ ամենայն շնորհաղարդ եպիսկոպոսաց և վարդապետաց ընդ ձեռամբ և ընդ հրամանաւ քով եղելոց։ Նոյնպէս՝ և սիրով բազմաւ և Շնորհիւ Աստուածաէջ սրբոյ Ցեղւոյս՝ ողջոյն և օրհնութիւն տամ համայն ուղղադաւան Ազգիդ ձերոյ օրհնեցելոյ՝ եկեղեցականաց և աշխարհականաց ամենեցունց՝ քեզ հաւատացեալ բանաւոր հօտիդ Տէրութեան։ Որք ամենեքեան լիցին յանձնեցեալք ի շնորհս և ի գթութիւնս Տեառն Աստուծոյ. և փըրկեցեալք նովաւ յամենից վշտաց հոգեկանաց և մարմնականաց. որով և մխիթարեցեալք իսկ յարաժամ Ամէն։



Թուղթ առ վրացտանու ժողովուրդն, զի զկամաւոր ողորմսւթիւն տացեն ի տարւոջն մի անգամ՝ ծիրանաւոր սուրբ Աստուածածնի Անապատին՝ որ կայ ի հարլուաքար. զի նովաւ լիցի կեցութիւն միաբանից նորին։ Քանզի ի ընէ թեմ՝ չունէր Անապատն այն. եւ ոչ այժմ։


Ցորմէ ժամանեցի Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան՝ և նամակ պահպանութեան, շնորհք Առաքելական, և Աստուածային բազմապատիկ օգնութիւն և նախանամական գթութիւն. ի վերայ սիրելի և հոգևոր որգւոցգ մերոց՝ հարազատ և լուսաճննդնունդ զաւակացդ որդոյ Աթոռոյս. Հայկասեր լուսաւորչակրօն և միաբնադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս, որք զետեղեալ կաք ի Աստուածախնամ մայրաքաղաքդ Թիֆլիզ, և ի համայն շրջակայս դորին՝ նաև՝ ի Գօրի, ի վերին Վրացտուն, ի Կախէթի, ի Լօռի, ի Ղազախ, ի Բամբակաձոր և յայլ շրջակայս զաստապայս և ի գիւղս դոցին։ Ցորս կաւուցեալ Քրիստոսի հիմն սրբոց եկեղեցաց՝ և եկեղեցականաց դասուց. ուղղաշաւիղ Աւաքնորգաց. ճշմարտավէպ վարդապետաց. սրբանուէր քահանայից, ուսումնասէր սարկաւագաց և համօրէն եկեղեցական մանկանց, պերճապատիւ իշխանաց. փառազարդ դօլվաթավորաց, ի-

րաւադատ մելիքներաց, խոհեմաղարդ տանուտեարց, հարազատ և հաւատարիմ երիցփոխաց և գանձապետաց, վայելչագործ արհեստաւորաց. արգարավաստակ հոգագործաց։ Եւ այլ առ հասարակ ժողովրդականաց խմբից, մեծաց և փոքունց. արանց և կանանց. ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից. խնդալ ի տէր յարաժամ Ամէն։

(Շնորհք.)

Եւ ընդ Շնորհազեղուն օրհնութեան նամակիս ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որգւոցգ մերոց՝ և լուսածին զաւակացդ սրբոյ աթոռոյս Էջմիածնի։ Զի որովհետև ի բազում տեղիս աւերեցեալք կան այժմ վանորայք՝ և անապատք՝ և երկնանման եկեղեցիք, որոց սակս ոչ սակաւ տըրտմութիւն զմեզ մաշէ, ուստի՝ մինչ լսեմք զվանից և կամ զանապատի ուրուք շինութիւն, լինի մեզ ուրախութիւն մեծ։ Քանզի՝ և մեք ի նոյն հոգս կամք միշտ. և խընդրեմք յԱստուծոյ անդադար յաղօթս մեր, զի պարգևեսցէ զխաղաղութիւն աշխարհաց, որպէս զի՝ շինութիւն լիցի վերստին աւերեալ վանորէից և կրօնաստանաց. ի փառս անուան իւրոյ, և ի մխիթարութիւն և յուրախութիւն մեզ և օրհնեալ ազգիս մերոյ։ Եւ զի ի սոյն միտս և ի սէր կամք վառեալք, վասնորոյ՝ ի յօգնութիւն փութալ պարտ վարկանիմք այնոցիկ վանորէից և անապատաց, որք նորապէս ստանան շինութիւն։ Որպէս զի՝ բնակչացն նոցին ապրուստ լիցի կեցուցեալ, որովք զհարկաւոր պիտոյս իւրեանց լցուցանելով՝ նստցին ի նոսա, և ազօթեսցեն վասն խաղաղութեան աշխարհի՝ և բարեյաջողութեան օրհնեալ ազգիս մերոյ։ Արդ՝ ի բազմաց կրօնաստանաց մի է՝ Ծիրանաւոր կոչեցեալ սուրբ Աստուածածնի անապատն, որ շնորհօքն Քրիստոսի կառուցեալ կայ ի Հարլուաքարի դաշտին, սակաւ ինչ հեռի ի քազաքէդ։ Որ ի վաղուց հետէ կայր անմարդաբնակ յազագս ոչ դոլոյ շինութեան ի կողմունս նորին։ Իսկ այժմ՝ որովհետև ըստ Աստուածային ողորմութեան՝ քանի մի աւերակ տեղիք շինեցան՝ և ևս շինին, և նոյն սրբոյ Անապատին մերձ ևս՝ գտանի շինութիւն, վանորոյ՝ և Անապատն ես շինացեալ է այժմ յորում բնակին միաբանք, կարգաւորք և այլ Անապատականք.

և ազօթեն առ Աստուած վասն աշխարհի։ Եւ զի յառաջագոյն մինչ շէն է լեալ Անապատն այն, Հոգելոյս և սրբազան Հայրապետն մեր Ցէր Ղազար կաթողիկոսն, և այլք ևս ի մերոց սրբազան կաթողիկոսաց ի Քրիստոս հանգուցեալոց՝ շնորհեալ են սրբոյ Անապատին այնմիկ զկոնդակ, այսու մտօք զի ի տարուընջ միանգամ ի յօրհնեալ երկրեգ յայդմանէ զկամաւոր ողորմութիւնս ժողովեսցեն միարանք նորին՝ և այնու ապրեսցին. որպէս և տեսաք իսկ մեք զկոնդակ Ցետն Ղազարու սրբազան կաթողիկոսին, վասնորոյ և մեք զսոյն օրհնութեան նամակս մեր նուիրեմաօք և դիտամբ շնորհեցաք սրբոյ Անապատին այնմիկ, որպէս զի՝ ըստ առաջնոյ սովորութեան՝ որպէս և լեալ է, մի ոք ի միարանից նորին՝ ի տարուընջ միանգամ այսու օրհնութեան կոնդակաւ մերով ելցէ ի ժողով յօրհնեալ երկիրգ՝ ղրս ի վերոյ յատկացուցաք, և ժողովեսցէ ի մէնջ զկամաւոր ողորմութիւնս. ղրս և տարեալ յանապատն՝ լցուսցեն նոքօք զպէտս իւրեանց. նստցին անգ. և աղօթեսցեն հանապազ առ Ցէր։ Ինելով ի ներքոյ ձեռաց և հրամանաց Առաջնորդին՝ որ ի կողմանէ սրբոյ Աթոռոյս նստի ի յԱստուածախնամ քաղաքոջդ. և նորին գիտութեամբն և հրամանն ելանելով յերկիրգ ի ժողով՝ երր և ժամանակն իցէ ժողովք առնելոյ։ Վասնորոյ և դուք սիրելիք մեր. պարտիք ի սէրն Քրիստոսի, և վասն յուսոյ արքայութեան, զկամաւոր և զլիագոյն ողորմութիւնս շնորհել նոցա ի գալն առ ձեզ այսու օրհնութեան կոնդակաւս մերով։ Արք և կանայք, փարթամք և աղքատք, յորդորելով զմիմեանս, և րարի պատճառ լինելով իրերաց, և առատապէս տալով նոցա զտուրս ողորմութեանն։ Զի նոքօք լցցին պակասութիւն նոցին և սուրբ տունն այն ընտանեցէ ի շինութեան և ի պայծառութեան. ի փառս ի նմա լինելոյն Աստուծոյ՝ և ի պարծանս ազգիս մերոյ։ Եւ գուք ըստ սրոց և ողորմութեանց ձերոց՝ ընկալջիք զհազարապատիկ և զբիւրապատիկ վարձս՝ համայն կենդանեօք և ննջեցելովք ձերովք։ Եւ որքան աղօթք սաղմոսերգութիւնք՝ պաշտօնք և պատարագք մատչեցին ի սուրբ Անապատն յայն, մեծ մասն և բաժին եղիցի ձեզ և ննջեցելոցն ձերոց. աստ՝ և ի հանդերձելումն։ Ամէն։ Ի ՌՈՒԼԱ յօգոս. Ի։



Թուղթ առ իշխանսն Վանայ, վասն հանգուցեալ Պաղտասար վարպետի ընչից, զի հասուսցեն սրբոյ Աթոռոյս. ըստ որում միարան էր սմա։

Թուղթ առ որդի Արքային վրաց Գեորգիին Միրզայն, վասն Միրզային մերոյ մօլլայ Ահմատին, որոյ սակս գիր էր գրեալ նա առ խանն մեր՝ յղել զնա անդ յերկիր իւր՝ տամզն իւրով։ Եւ խանն մուհասիլ էր յղեալ աստ. եւ գրեալ էր յղել զնա։ Զոր եւ չկարելով արգիլել ըստ որում խստութեամբ էր խնդիրն՝ եւ հարկիւ. յղեաց սրբազանն՝ իբրու կէս տամբն։ Այլ գրեաց զխնդիրն՝ շնորհել զնա վերստին սրբոյ Աթոռոյս եւ ինքեան, եւ յետս ղարձուցանել աստ։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ... և այլն։

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածսյնոյ՝ ծանուցուաք լիցի բումդ բարեպաշտութեան, Զի զսիրոյն ճշմարտի զօրինակ՝ ցուցանեն մեզ տառք Աստուածայինք, ըստ որում և ասէ իմաստունն Սողոմոն ի յերգն, Զուրբ բազումք ոչ կարեն շիջուցանել զսէր, և գետք ոչ արգելցեն զնա։ Իսկ զեղանակ և զկերպ ածելոյն ի գործ զսէրն ճշմարիտ, ցուցաք է աւետարանիչն սուրբ Յովհաննէս, յասելն՝ մի րանիւք և լեզուօք սիրեսցուք զմիմեանս՝ այլ արդեամբք և ճշմարտութեամբ։ Եւ այսպիսի ճշմարիտ սիրոյ ունօղք՝ յայնժամ լինին գովելիք իսկապէս՝ յԱստուծոյ և ի մարդկանէ, մինչ հաւատարմապէս կալցին զնոյնս մինչև ցվախճան, թէ առ Աստուած՝ և թէ առ մարդ։ Որպէս վասն սիրոյն Աստուածայնոյ ասի ի յայտնութեանն, յեր հաւատարիմ մինչև ի մահ, և տաց քեզ զպսակն կենացն։ Ի.կ հաւատարմութեան մարդկայնոյ սիրոյն որ առ միմեանս՝ ունիմք ահա օրինակ զԴաւիթ և զՑոնէլեան։ Որք թէ զի՞րդ վառեցեալք

էին սիրով ճշմարտիւ և կապակցեալք ի միմեանս հոգւով՝ հաւատարիմք մնալով ի նոյնն մինչև ցվախճան, ահա ցուցանէ պատմութիւնն նոցին։ Արդ՝ ըստ այն ասացելոցս օրինակաց, զսէր օրհնեցելոյ Արքայորգւոյդ տեսաք յիրաւի առ մեզ. յօրէ յօրէ տեսաք զմիմեանս, և կապակցեցաք հոգւով։ Քանզի յիրաւի՝ ո՛չ բանիւք և լեզուաւ. այլ արդեամբ և ճշմարտութեամբ զսէր օրհնեցելոյ Արքայորգւոյդ տեսաք առ մեզ մինչև ցարդ, անմահն ամենևին ի ներհականաց սիրոյ։ Վասն զի՝ թէ գրով՝ և թէ այլ սիրայայտ նշանօք՝ զայն իսկ ջանացար մինչև ցարդ, զի զնուաստութիւնս մեր ուրախ ցուսցես, և արասցես սրտաշահ յամենայնի։ Եւ մեր լինելով ըստ ամենայնի ուրախ՝ և սրտաշահ զքումմէ բարեպաշտութենէ, լինեաք միշտ շնորհակալ՝ որպէս և արդ եմք, և յամենայն ժամու՝ թէ յաղօթս մեր, թէ ի խօսակցութիւնս, թէ ի ժամ սեղանոյ, որպէս է մեր սովորութիւն, շնորհակալութեամբ մեծաւ ածելով ի յիշումն զսէր և զբարերարութիւնս ձեր, օրհնեաք, և աղօթեաք առ Աստուած վասն բարեյաջողութեան ձերոյ և երկարութեան կենաց։ Եւ թէ ի գիրս մեր, թէ ի րանս՝ և որով կերպիւ և իցէ, զայն իսկ ջանայաք և մեք ըստ մերում ձեռնհասութեան և կարողութեան, զի և դու սրտաշահ լիցիս զմէնէ և ուրախ։ Եւ ըստ այսց ասացելոցս ոճոց, անպակաս էր երթ և եկն սիրանիշ թղթոց մերոց առ իրեարս, և սէրն մեր ջերմագոյն առ միմեանս՝ և միշտ ի վառ, զոր ըստ իմաստնոյն րանի՝ ոչ կարէին շիջուցանել ջուրք անախորժ եղելութեանց բազմաց և կամ լրոց՝ սիրոյ ներհակաց. և գետք գիպուածոց զանազանից՝ որպէս թուիւր մեզ Ցայգ այժմ, թէ զինչ իցէ անցեալ, և կամ որո՞վ պատճառաւ շարժեցեալ իցէ այնքան հաստատութիւն պնդակազմ և ամրակառոյց շինուածոյ սիրոյ քոյին ճշմարտի որ առ մեզ, ո՛չ գիտեմք։ Քանզի՝ ըստ որում զոչ ինչ ունիմք մեք արարեալ՝ կամ ասացեալ՝ և կամ գրեալ՝ որ իցէ ներհակ սիրոյ՝ և վըրդովիչ մտաց քոց, վանորոյ՝ ամենևին օտար և հեռի է ի մտաց մերոց, և ոչ գայ մեզ ի յիշումն ընաւ, թէ զինչ իցեմք արարեալ մեք՝ անախորժ քոյոց կամաց՝ և վրդովիչ սիրոյ. կամ թէ գու զմէնջ զի՞նչ իցես լուեալ և կամ տեսեալ, որ այդպէս դժուարացեալ երևիս զմէնջ, և այնքան պաղեցեալ՝ որ մեզ ոչ գրես զառիթն գժուարանալդդ, և ոչ բանիւ յայտնես՝ ի ձեռն եկողաց, այլ Գօլվաթլուս խանին մերոյ գրես թէ՝ զմօլլայ Ահմատն հանդերձ իւր տամբն յանձնեսցես Գաբրիէլիդ՝ որ բերցէ աստ. զոր և յոյժ հարկիւ թէ ահա այս է ժամանակն, և պարտիս շուտով յղել։ Ցառաջ մինչ եկեալ էաք յայգր՝ թէպէտ կամեցաք տանիլ, այլ սակայն թողաք, և ոչ տարաք. այժմ յղեսցես։ Եւ այս ևս թէ՝ մի գուցէ մտածիցէ մօլլայ Ահմատն թէ՝ գուցէ աստ չշահիցի. զի ես լաւապէս եմ պահելոց՝ քան զեալիֆայն, և այլն։ Արդ՝ սիրեցեալդ իմ ի Քրիստոս, ոչ գիտեմք թէ՝ այս է՞ր է. և զի՞նչ տեսեալ ի մէնջ զայս արարեր։ Մինչ զի յառաջագոյն բաշխելդ զսա որբոյ Աթոռոյս և զհաստատուն թաղղայ տալդ ևս ոչ յիշես. յորում գրեալ ես թէ՝ եթէ զքեզ հաստատապէս սրբոյ Էջմիածնի, զի յորդւոց յորդիս ծառայեսցես դմա։ Այժմ ո՞ր է ապա հաստատութիւն նոյնոյ խոստմանդ, և սորա յորդւոց յորդիս ծառայելն սրբոյ Աթոռոյս, որ գեռ ինքն կենդանի, և խոստմանդ Գ տարին ևս չլրացեալ՝ տանիս աստի։ Եւ կամ զի՞նչ է այն՝ զոր գրես թէ՝ ահա այս է ժամանակն յղելոյ զգա, և պարտիս յղել։ Ցառաջ ո՞րպիսի ժամանակ էր՝ որ շնորհեցեր զսա սրբոյ Աթոռոյս, և այժմ ո՞րպէս, որ առնուս ի մէնջ։ Ուրեմն՝ երևի, զի այս ոչ այլ ինչ է, եթէ ոչ անբախտութիւն մեր. որ յայլում ժամանակի շնորհեցեր զսա սրբոյ Աթոռոյս՝ առ ի շահել, այժմ առնուս ի մէնջ առ ի վերս տալ սրտի մերոյ։ Այլ ոչինչ է յայսմ քեզ մեզ. զի որպէս ասացի, անբախտութիւնն մեր է պատճառ այսմ. և ժամանակ անբախտիս զայսպիսիս ածէ ինձ. որ ի թշնամեաց անդադար ձաղիլս ինձ չբաւականացեալ՝ ի սիրելեաց ևս զվէրս ընդունիմ։ Այլ մի արասցէ Տէր թէ ի յատկագոյն սիրելւոյդ իմմէ վիրաւորեցայց, և կամ ի սիրոյ քումմէ գտայց նուազեալ, թէ և յոյժ առաւել քան զոյն դիպուածք և առիթք վիրաւորութեան վեր երևեցին։ Ջորս և մի ասցէ Տէր տեսանել։ Այլ սակայն՝ այսքան ինչ գոյ, զի թէև


գոյր մեզ առիթ ինչ մեզադրութեան, պիտոյ էր յառուկ սիրելոյդ իմոյ՝ ինձ նախապէս գրել և ծանուցանել լուելեայն, քան թէ այսպէս ծաղր առնել թշնամեաց։ Զի թէ զօգտակարսն մեր ինձ գրելդ վայել էր՝ զոր սրտացաւօրէն գրէիր միշտ՝ առ ի շահել զիս. մինչ զի՝ խրատարար և խորհրդօրէն՝ մանուանգ վշտակցարար՝ ի ընտանեկարաց ևս ըզգուշացուցանէիր, զինչ էր անվայելուչ՝ թէ և զայս ինձ գրէիր։ Զի այն է նշանն ըստայգ սիրելութեան, զի սիրելիքն ասիցեն միմեանց զամենայն ինչ անարգելօրէն։ Որպէս զի՝ թէ և ամօթաբեր ևս իցէ բանն, ի միջի իւրեանց ձեասցէ։ և ոչ յայլս տարածիցի և զամօթ բերցէ։ կամ թէ ինչ պատճառաւ և իցէ, միշէ զսա խնգրել կամէիր։ եթէ ինձ գրէիր թէ՝ հարկիւ յղել պարտիս զդա ատա, զի այլ ոչ կամիմ ձեալ դմա յայդր։ ոչ էր մեզ այնքան պակասութիւն քան զայս՝ որ այնպիսի ոճիւ որպէս ի վերոյ գրեցաք, խանգին մերոյ գրեաւ։ Որ յոյժ պակասութիւն էր մեզ յիրաւի, և սաւոր անկաւմն ի մէջ թըշնամեաց և սիրելեացն։ Եւ թէպէտ պիտոյ էր օրհնեցելոյդ՝ խնայել մեզ, և զպատիւ սըրբոյ կարգիս մերոյ և Աստուածածէջ Աթոռոյս պահել։ և զճշմարտութիւն սիրոյ մերոյ որ առ միմեանս՝ մատծել, այլ այդ ևս ի մերմէ անբախտութենէ է, որ ոչ մատծեցեր զայսոսիկ։ Բայց արդ՝ մեք զպատիւ օրհնեցելոյ Արքայորգւոյգ պահելով՝ (որ արդարև յարգելի է առ մեզ.) ոչինչ ընդդիմութիւնս ցուցաք հրամանիդ. այլ ահա յղեցաք զմօլլայ Ահմատ միրզայն մեր՝ հանդերձ կէս սամրն իւրով։ Զի ձեացեալ ընտանիքն ամենեքեանքն կան ի մահամերձ հիւանդութեան. որոց ապրիլն կամ մեռանիլն՝ ի ձեռին Աստուծոյ է։ Եւ միւս ևս պատճառ, զի ըստ իւրոյ կարողութեանն ունէը զցանկ, զոր ժողովեալ էր ի կալն. և գոլով ընտանեացն ի յայնպիսի ակարութեան և ինքն նոքօք պատազեալ՝ գեռ ոչինչ էր վերառեալ. և կայր այնպէս ամենայն ինչ ի վերոյ երեսաց։ Ուստի՝ թէ առողջ ևս իցէին ընտանիքն, տակաւին ոչ կարէր զամենեսեանս ըերել. զի այն ամենայն վաստակք իւր կորընչէլոց էին, և ողորմելի էր լինելոց։ Այսու պատճառաւ զկէս տանն երեր. և երր ձեացեալ ընտանիքն ողջասցին՝ (թէ ողջանալոց իցեն,) և զվաստակն իւրեանց ժողովեսցեն, ի հարկէ և նոքա գալոց են։ Բայց մեք այժմ ընդ սոյն թզթդյս մերոյ առաքեցաք ի սպասաբարեպաշտութեան քոյ զՀարազատն մեր զաթոռակալ Գալուստ վարդապետն։ Նախ այսր աղագաւ, զի բերանով ևս ծանուսցէ մեծութեան ձերում զազէտ և զցաւ սրտի մերոյ՝ որ յայսմանէ դիպեցաւ, և թէ որքան պակասութիւն եզև մեզ և սրբոյ Աթոռոյս այսպէս յայտնի գրելով քո զայս, և որքան կորանկումն ի մէջ թշնամեաց։ Երկրորդ՝ զի տեզեկասցի ևս, թէ զի՞նչ իցեն վէրք քո զմէնջ. կամ զի՞նչ իցէր պատճառն այսպէս առնելոյդ։ Որ և թէ ունիս յիրաւի վէրս ինչ զմէնջ կամ զնահատութիւն. խնդրեմ՝ զի թարց ծածկելոյ գրեսցես մեզ և ծանուսցես, ածելով ի միտ զսէրն մեր ճշմարիտ։ Իսկ թէ գրել չկամիցիս, ատա գմա բերանով, զի եկեալ ծանուսցէ մեզ։ Զի և մեր գիտացեալ՝ խզեսցուք զպատճառն նահատութեանդ զմէնջ, և հաստատեսցիս վերստին ի նախկին սէրդ ճշմարիտ որ առ մեզ, և յամօթ լիցի թշնամին խազտութեան և սիրոյ։ Եւ երրորդապէս՝ և զայս աղաչեմ զի ի գիտելդ զվէրս մեր. և ի ծանուցանելդ մեզ զպատճառն քոյթ խանգութեան զմէնջ, խնայեսցես ապա ի ցակոշկոճ և ի տրամակիր սիրելիս քո՝ և զօթօզս միշտ վասն կենաց քոց, և զիջեալ ի բարկութենէդ՝ (որ ո՞րպիսի պատճառաւ և եցէ՝ լեալ է ի վերոյ մեր. արատցես ըզմեզ վերստին սրտաշահ՝ և ուրախագործես որպէս առնելովդ զայս՝ ստոր արկեր զմեզ առաջի թշնամեաց. այժմ շնորհելով վերըստին մեզ և սրբոյ Աթոռոյս զնոյն մօլլայ Ահմատ ծառայն քո՝ արատցես զմեզ բարձրագլուխ, խնայելով յայրքանամեայ սէրն մեր, մանաւանդ՝ ի պատիւ Աստուածածէջ Աթոռոյս սրբոյ՝ և ի կարգս մեր։ Որպէս գրեցի ի վերոյ՝ առ ի կատարել զՀրամանդ յղեցաք զնա կէս տամրն, դու ևս զմեզ յամօթ չառնելով, հրամայեսցես դառնալ ի ճանապարհն, և կամ ի Բամբակաձորու, և գալ այսր վերստին, զի ամաչեսցեն թշնամիքդ, և պատիւն մեր մի առ ոտն անկցի։ զոր մինչև ցարդ պահեալ էք, որոց ցՏէր լիցի վարձահատոյց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Թէպէտ պլ Միրզայիս ևս բանն մեր վճարի,

բայց ոչ է այս այն ժամանակն, զի ամե-
նայն ուժեք հաւատասցուք, այն ևս զայս-
պիսեայ մեծի սան խորհուրդ և զրոյց, յորս
փորձեցեալ է դա յայսքան տարի և յա-
մենայնի հաւատարիմ գտանեցեալ։ Ուրեմն
սակս այսց երկուց պատճառաց՝ մի՝ զի յոյժ
հաւատարիմ է մեզ և փորձեցեալ, և դը-
ժուարաւ կարեմք յայսպիսի ժամանակի գտա-
նել զայդպիսի ոմն, և հաւատալ ուժեք. և
միւս ևս՝ զի պատիւն մեր անկցի ստոր ա-
ռաջի Թշնամեաց, շնորհեսցես զնա մեզ վե-
րստին՝ որպէս խնդրեցաք, ի փառս մարդա-
ցելոյն վասն մեր Քրիստոսի Աստուծոյ։ Եւ
զայլ երկարապէսն՝ հարազատդ մեր Գա-
լուստ վարդապետդ ասելոց է։ Եւ լսողիդ
ազաչանաց մերոց՝ լուիցէ միշտ Տէր. յոր
և լիցիս ողջ միշտ, զօրացեալ շնորհիւ նո-
րին և օգնականութեամբ՝ ի յուրախութիւն
մեզ։ Ամէն։ Ի ՈՄԱՆ Թուոջ մերում. ի
յօգոստոսի Ի։

Թուղթ առ Հերակլ արքայն վրաց. վասն
միրզային մերոյ մօլլայ Ահմատին. զոր
որդի սորին Գեօրկին Միրզայն խընդ-
րեալ էր ի խանէն մերմէ՝ յղել անդ
տամբն իւրով, եւ խանն զրեաց սրբա-
զանին, եւ մարդ յղեաց, զոր եւ տա-
րան աստի կէս տամբն։ Խնդիրը, զի
վերստին շնորհեսցեն սրբոյ Ամոռոյս.
որպէս եւ որդւոյն եւս զրեաց. որ է
համարն 597, 598, 599, 600։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ... և այլն։
Եւ ընդ սիրառաք օրհնութեան և ողջ-
ունաարութեան Թղթոյս, ծանուցանեմ լիցի
Աստուածասիրութեան քումմ։ Զի ի ընէ ան-
տի թէ ո՞րքան և ո՛րպիսի է սէր և խնամա-
ծութիւն օրհնեցելոյ Արքայիդ առ Աստուա-
ծաէջ Ամոռս սուրբ՝ և առ սորին գահա-
կալն, յայտնի իսկ է ամենեցուն։ Զորս և
առ մերս նուաստութիւն թէ ո՞րքան ունիս
այժմ՝ յայտնի է Աստուծոյ՝ և մեզ իսկ և
ամենեցուն՝ որք զմեզ գիտեն։ Որոց զփոխա-
րէնն մեք ոչ ունիմք հատուցանել. այլ
խնդրեմք ի մարդասիրէն Աստուծոյ՝ որ վար-
ձաարիչն է բարեաց՝ հատուցանել քեզ ըստ
հոգւոյ և ըստ մարմնոյ զփոխարէնն բազ-
մապատիկ սիրոյ և բարերարութեանց քոց՝
որ առ սուրբ Ամոռս մեր՝ և առ մեզ։ Եւ
զի գոյ միշտ յատուկ խնամածութիւն քո ի
վերայ մեր և սրբոյ Ամոռոյս. և զբարին և
զօգուտն մեր կամս միշտ. վասնորոյ՝ զայս
ինչ ծանուցանել այժմ մեծութեան քումմ
պարտ վարկաք։ Փանզի՝ յայս իսկ է Ա-
ստուածասիրիդ, թէ յորքան ամաց հետէ՝
ծառայն ձեր մօլլայ Ահմատն ծառայութիւն
առնէր սրբոյ Ամոռոյս՝ և հայրապետաց
սորին. որպէս և այժմ մերոյս նուաստու-
թեան։ Որոյ և հաւատարմութիւնն մեզ
և սրբոյ Ամոռոյս՝ փորձեցեալ իսկ էր։
Իսկ յորժամ Աստուածասիրութիւն ձեր ե-
կիք յերկիրս մեր յանցեալ ամսն, Աստու-
ծով զօրացեալ որդին քո և սիրեցեալն ի
մէնջ յատկականաւ սիրով ի Քրիստոս՝ Գեօր-
կին Միրզայն, եթէ ի՞նչ պատճառաւ և ի-
ցէ՝ կամեր տանիլ աստի հանդերձ տամբն
իւրովն որպէս և մեծութիւն քո իսկ գիտէ։
Սակայն՝ հոգելոյս հայրապետն մեր խնդրեաց
ի նմանէ՝ շնորհել սրբոյ Ամոռոյս՝ զի ծա-
ռայեսցէ սմա՝ որպէս և ծառայեալ էր ի
քնէ։ Որոյ սակս և զմերս նուաստութիւն
ի սպառ մեծութեան ձերոյ առաքեաց՝ զնոյն
խնդիր առնել ի ձէնջ. զոր և արարաք իսկ.
և մեծութիւն ձեր ևս՝ հանդերձ Աստուծով
զօրացեալ որդւովդ՝ շնորհեցիք զնա սրբոյ
Ամոռոյս։ Ուստի և զհաստատուն լծակցեալ
ևս ետ նմա՝ զօրացեալն Տերամբ Գեօրկին
Միրզայն. Թէ երթ յայսմհետէ. և յորդ-
ւոց յորդիս ծառայեա Ամոռոյն այնմիկ։
Իսկ այժմ ոչ գիտեմ Թէ սակս ինչ պատ-
ճառի է, զի գրեալ էր օրհնեցեալն այն
յԱստուածոյ զԹուղթ մի առ մեր խանն, Թէ
զմօլլայ Ահմատ հանդերձ իւր տամբն յբ-
զեա առ մեզ և մարդ յղեալ. զի առաքես-
ցուք զնա հանդերձ տամբն։ Իսկ մեր առ
այս ապուշ ճեացեալ՝ չկարացաք դիտել բը-
նաւ, Թէ զինչ իցէ այսր պատճառն. զի էր
ներհակն սիրոյն մեր ճշմարտի և յատկա-
գունի՝ զոր ունիմք ընդ դմա, որպէս և
Աստուածազօր Արքայդ իսկ դիտէ։ Բայց՝ ո-
չինչ ներհակութիւն ցուցեալ հրամանին՝ զոր
գրեալ էր, առաքեցաք ահա մօլլայ Ահմատ
հանդերձ կէս տամբն. զի այլ ընտանիքն
ամենեքեան մահամերձ հիւանդ էին. որք ոչ

քնաւ շարժիլ կարէին ի տեղւոջէ ի աեղի. և բոլոր վար և վաստակք իւր ևս կային ի վերայ երեսաց. զի հիւանդութեամբք ընդանեցան գոլով պաշարեալ՝ չէր կարացեալ գեռ ևս ժողովել ի տուն։ Սակ, այց երկուց պատճառաց՝ կէս տանն մնացին, և զկէսն ահա ինքն առեալ եկն յայդկոյս։ Բայց զի այսու կերպիւ որպէս ասացաք, գրեալ էր խանին մերոյ՝ և տարաւ զնա աստի, վասնորոյ՝ ոչ սակաւ պակասութիւն և ստորանկումն պատուոյ սրբոյ Աթոռոյս և մեզ եղև. և իրրու ուրախացան թշնամիք, և մեք կորագլուխ եղաք առաջի նոցա մեծապէս։ Զի որումՙ ոչ ակնունէաք՝ վստահացեալ ի սէրն մեր հոգևոր և ճշմարիտ, եկն ահա՝ և յանկարծ պատահեաց. որով առաւել վշտացաք ի սիրտ և ի հոգի՝ քան թէ ամենիւք յոգնատեսակ վիրօքն որք յայս երկուս ամս հասանին մեզ ի թշնամեացն։ Վասնորոյ՝ զթուղթ իմն աղերսարկու գրեցաք առ բարեպաշտութիւն նորին. և զԹոռակալն մեր զԳալուստ վարդապետն ևս այնու յղեցաք ահա. և խնդրեցաք, զի խնայելով ի պատիւն սրբոյ Աթոռոյս և կաքգիս մերոյս և չկամելով զստորանկումն մեր առաջի թշնամեացն, և զպակասնումն պատուոյ սրբոյ Աթոռոյս՝ որպէս մինչև ցարդ չէ կամեցեալ. և յիշելով ևս զսէրն ճշմարիտ՝ զոր ունէաք առ միմեանս, շնորհեսցէ վերստին սրբոյ Աթոռոյս և մեզ զմօլլայ Ահմանն. զի ըստ առաջնոյ հրամանին իւրոյ զոր տուեալ էր նմա հաստատնապէս, յորդւոց յորդիս ծառայեսցէ սրբոյ Աթոռոյս։ Զի թէպէտ այլովք ևս հնար է վճարիլ ծառայութեանն այնմիկ զոր նա առնէ. բայց որպէս ասացաք, նա յոյժ փորձեցեալ է՝ և. հաւատարիմ սրբոյ Աթոռոյս և մեզ։ Եւ յայսմ ժամանակի դժուարաւ գտանի այնպիսի ոք՝ որումՙ հաւատալ կարասցուք զխոհուրդս և զբանս այսպիսւոյ մեծի տանն։ Ուստի՝ թո՛ղ զանկանիլն մեր և պատուոյն սրբոյ Աթոռոյս ի սառ՝ առաջի թշնամեաց. ընդ այս ևս է սրբոյ Աթոռոյս և մեզ մեծապէս՝ պակասիլն նորին աստի։ Եւ ըստ որումՙ օրհնեալ Արքայդ ևս ոչ ես կամեցող սատրանկութեան և ընդ այսոսիկ սրբոյ Աթոռոյս և մերՙ որպէս և ի վերոյ գրեցաք. վասնորոյ խընդրեմՙ զի և քոյդ հնամբ քաղցրասցին ի վերայ սրբոյ Աթոռոյ։ և մեր որպէս և է միշտ քաղցր. և հրամայեսցես Աստուածով զօրացեալ որդւոյ քոյ և մերոյ սիրելւոյ՝ շնորհել զնա վերստին սրբոյ Աթոռոյս և մեզ. եւ զարձուցանել աստ նոր և հաստատուն թալզայիւ, զի հաստատնապէս ծառայեսցէ սրբոյ Աթոռոյս և մեր ևս՝ մի իսպառ անկցի առ ոտն և թշնամիք ևս ամաչեսցին և հաստատեսցի առ մեզ ի նոյն սէրն ճշմարիտ՝ որպէս և էրն։ Եւ զայլ երկարապէսն արզ առնելոց է մեծութեան ձերում հարազատդ մեր Գալուստ վարդապետդ։ Խնդրեմՙ լսօղ լինիլ ազէտալի ազաչանացս՝ և առնել այնպէս։ Եւ քաղցրալուրն Ցէր՝ լուսիցէ միշտ քոյոց խնդրուածոց։ Որ և լիցիս ողջ ի նոյն յարաժամ, և պահպանեցեալ շնորհօք նորին հանդերձ թագաժառանգ որդւովդդ և ամենայն ընտանեօքդ։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՈՒԼԱ թուղթ մերում. ի յօգոստոսի Ի՞։ Եւ ի լուսակերտ Աթոռ.։ սուրբ Էջմիածին։




Թուղթ առ Գիլանու Շահբանդարն Ռուսաց. սէր եւ օրհնութիւն։ Ցիշեցուցանելով զսէրն եւ զվղղոց երթեւեկն առաջին սրբազան Հայրապետացն մերոց՝ եւ անդ նստօղ Շահբանդարացն. եւ զնոյնս խնդրելով։ Ու յանձնարարութիւն զործակալացն մերոց, եւ ամենից զմերայնոցն որք անդ։

Ցորմէ ժամանեսցի . . . և այլն։

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ. ծանուցանեմ լիցի քումդ բարեպաշտութեան։ Զի զինամոց քոց և զսիրոյ զորս ունիս առ մերայինսն որք յայդր, լըսեմք զնորհակալութիւնս յոլովս. ընդ որս և մեք շնորհակալիմք յիրաւի, և օրհնութեամբ մեծաւ զսիրելիդ մեր օրհնեմք որ և ի ցեառնէ եզիցիս օրհնեալ և զօրացեալ միշտ։ Արդ՝ յայտնի է ի հարկէ քումդ Աստուածասիրութեան. զի նախ քան զքեզ յայդր նստող Շահբանդարքն ունեցեալ են միշտ զճշմարիտ բարեկամութիւն և զսէր առ նախնի Հայրապետսն մեր երանելի. և նոքա ևս ընդ նոսա են ունեցեալ նոյնպէս զսէր և զբարեկամութիւն. և լեալ է առ

իրեարս գրոց երթևեկութիւն, և բարուքապէս ծանօթութիւն մխանց։ Եւ մեր գիտելով զայսոսիկ, այժմ ի ձեռն սոյն օրհնաձիր նամակիս մերոյ յիշեցուցանելով քեզ զայնս, հայցեմ զնոյն սիրոյ ճշմարտութիւն և զստոյգ բարեկամութիւն առ Աստուածածնէջ Աթոռս մեր սուրբ և առ մեզ ունիլ. և զմերայինգ ամենայն որք յայգր կան՝ ևս առաւել գթով և սիրով խնամել. և զթուղթ սիրանիշ ևս գրել մեզ երբեմն, ի հաստատութիւն սիրոյ ճշմարտի և բարեկամութեան, և ի յընգունիլ ի մէնջ ևս զթուղթ օրհնաձիր, և զօրհնութիւնս մեր և ջնորհս սրբոյ Աթոռոյս ժառանգել։ Քանզի՝ գիտակ իսկ է բարեպաշտութիւն ձեր. թէ զո՞րքան գերազանցութիւն խնամոց և ջյատուկ սէր ունի առ սուրբ աթոռս մեր և առ մեզ՝ և առ համայն ազգս մեր Աստուածազօր և ինքնակալ կայսերուհին մեծ. որում Աստուածն ամենայնի հատուսցէ զփոխարէնն բազմապատիկ խնամոցն որ առ մեզ. օրհնելով զիւրապարգև տէրութիւն և զիշխանութիւն նորին։ Եւ հանդերձ թագաժառանգ որդւովն իւրով և թոռամբքն, և ամենայն ժառանգորդօք կայսերութեանն. պահեսցէ երկար ամօք, և խաղաղական կենօք. ահարկու իշխանութեամբ՝ և հանբաժանալ տէրութեամբ. ի յուրախութիւն համայն երկրպագուացս խաչին սրբոյ։ Ուրեմն՝ և ի քումմէ աստուածասիրութենէդ խնգրեմ, ըստ նոյն խնամոց մեծութեան ոգւորմաշատ մեծի կայսերուհւոյն լինիլ սիրօզ և բարեաց կամեցօզ սրբոյ Աթոռոյս մերոյ՝ և մեզ և խնամածու համայն մերայնոց որք յայդր։ Եւ յատկապէս՝ հարազատ գործակալին սրբոյ Աթոռոյս պարոն Ալէքսին. և այլ գանձապահաց և գործակալաց մերոց որք յայդր՝ խնդրեմ լինիլ ձեռնտու յամենայնի. զորս և ի յատուկ խնամս քո ունիլ. և օժանդակել գործոց նոցին. և զոր ինչ խնդրիցեն ի քէն։ յազագս սրբոյ Աթոռոյս գործոցն և այլ հարկաւորութեանցն, հոգ տանիլ նորին խնամոզօրէն առ ի յընգունիլ զբազմապատիկ վարձս յԱստուածոյ, ջնորհս ի սրբոյ Աթոռոյս Միածնաիջէ, և զօրհնութիւնս ի մէնջ։ Ընդ որ լեր ի ցէր, զօրացեալ շնորհիւ նորին յարաժամ։ Ամէն։ Գրեցաւ յամի փրկութեան մերոյ՝ 1782 ի սեպտ. Ի. ի դաշտս Արարատեան. և առ դրան լուսանկար Աթոռոյս ամենայն Հայոց՝ սրբոյ Էջմիածնի։



Թուղթ ի Հազրօ, ի Հայնի, եւ ի Լճէ որք են ի վիճակն Տիգրանակերտոյ, եւ են թեմ եւ վիճակ սրբոյն Յովհաննիսի վանիցն՝ որ ի Մուշ։ Զորս ստիպէին Յամէնցիք՝ լինիլ թեմ Աթախու վանիցն. այլ սոքա ոչ առնուին յանձն. եւ զբերեալ էին զյատուկ յատուկ մահսար, թէ մեք ի մեր վանիցն ոչ քաժանիմք։ Ուստի գրեցաւ սոցա ի միամտութիւն, թէ դուք որ լեալ էք մինչեւ ցարդ թեմ սրբոյն Յովհաննիսի վանիցն, յայսմհետէ եւս նմա ծառայեսջիք զի այն է վանքն ձեր։

Յորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ ողջունի և օրհնութեան՝ և նամակ պահպանութեան, շնորհք Աստուածային բազմապատիկ օրհնութիւն՝ և նախախնամական գթութիւն. ի վերայ սիրելի և հոգևոր որգւոցգ մերոց, հարազատ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս հայկասեր լուսաւորչակրօն և միաբանադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս, որք զետեղեալ կայք ի յաստուածախնամ Ղասապայագ, այսինքն ի Հազրօ, ի Հայնի և ի Լճէ։ Յորս կառուցեալ Քրիստոսահիմն սրբոց եկեղեցեաց և եկեղեցականաց դասուց, քահանայից, իշխանաց և առ հասարակ ժողովրդոցգ ամենից խնդալ ի ցէր յարաժամ։ Ամէն։

(Շնորհք.)

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտասջիք սիրելի և հոգևոր որգիք մեր, և հարազատ զաւակունք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի երեքին մահսարական թուղթքն ձեր՝ զորս ուրոյն գբեալ էիք ի վերայ մեր՝ հասին առ մեզ, և ընթերցեալ իմացեալ զգրեալսն ձեր։ Զի էին երեք թուղթքն ևս միով մտօք յաղագս թեմ և վիճակ լինելոյդ ձերոյ սրբոյն Յովհաննիսի վանիցն ի ընէ։ Որք գրեալ էիք թէ մեք ի ընէ անտի սուրբ Յովհաննիսի

վանիցն եմք եղեալ թեմ և վիճակ. և ի հարց և ի նախնեաց այսպէս եմք լուեալ և ի սրբոյ Լուսաւորչէն հետէ՝ որ զայս վանք չինեալ է, այսպէս եղեալ մինչեւ ցարգ։ Եւ այժմ Դիարբէքրու Առաջնորդքն կամին զմեզ հանել թեմուքենէ սրբոյն Յովհաննիսի վանիցն։ Այլ մեք ոչ կարեմք զմեր հայրենի վանքն թողուլ. և այլն։ Մինչեւ զպնտուքիւն ձեր ի դմին միաս՝ այսու եւս ցուցանելով թէ՝ որպէս զՀաւատան մեր՝ չէ մեզ հնար փոխելոյ. նոյնպէս եւ զվանքն մեր զոր ի հարց եւ ի նախնեաց մեզ վանք գիտեմք. ոչ եմք փոխելոց։ Եւ մինչ ընթերցաք մեք զայսոսիկ բանս ձեր, յայժ հասանեցաք մեք ատց և դիտմանց ձերոց՝ եւ մանաւանդ պնդութեանց, որք ոչ կամիք զհայրենի տունն ձեր հոգևոր՝ թողուլ ի ձեռաց. և լինիլ որիշ վանից թեմ։ կատարելով յիրաւի զբան իմաստնոյն թէ՝ մի փոխեր զսահմանս յաւիտենականս՝ զոր եդին հարք քո։ Արդ ուրեմն և ես զայս գրեմ հոգևոր որգւոցդ մերոց։ Զի մեք վասն այդր դիտման երբեք ոչ եմք հրամայեալ՝ թէ դուք զսուրբ Յովհաննիսի վանքն թողեալ՝ այլ վանից լինիք թեմ. և ոչ եմք տուեալ վասն այդ բանիդ զթուղթ կամ զկոնդակ ինչ ումեք։ Միայն մեզ այսքան ինչ բան ասացին յառաջ թէ՝ Աթախու վանքին թեմ չկայ, այն երեք զասապայից ժողովուրդքն կամք ունին՝ որ Աթախու վանքին թեմ լինին. և խնդրեցին ևս ի մէնջ զի կոնդակ տացուք, որ Աթախու վանքն ծառայէք։ Իսկ մեք պատասխանեցաք թէ՝ մեք ոչ գիտեմք թէ՝ այն երեք զասապայքն ի բնէ անտի որոյ վանից են ծառայեալ. եթէ այժմ յիրաւի զայգպիսի միաս ունին, թող գրեսցեն մեզ մանսարական թզթով, և զմիաս իւրեանց ծանուսցեն։ Մինչև այն երեք զասապայից ժողովուրդքն ի մէնջ ոչ խնդրեցին լազմակնիք թզթով թէ՝ մեք Աթախու վանքին կամիմք թեմ լինել, մեք ոչ կարեմք հանել զնոսա ի սուրբ Յովաննիսի վանիցն՝ որում այժմ ծառայեն։ Այսպէս եմք պատասխանեալ մեք այնոցիկ՝ որք ասացեալ են մեզ թէ՝ կամք ունին այն երեք զասապայից ժողովուրդքն՝ զի Աթախու վանքին թեմ լիցին, իսկ կարմիր կնքով կոնդակ կամ այլ թուղթ ոչ եմք տուեալ նոցա վասն ձեր՝ որ զձեզ ի սուրբ Յովհաննիսի վանից թեմուքենէն հանեն։ Այժմ որովհետև դուք այդպէս կամիք՝ թէ մեք զմեր հայրենի վանքըն ոչ կարեմք թողուլ ի ձեռաց, ով է կարող հանել զձեզ ի յայդ սուրբ վանիցդ թեմուքենէն։ Որոյ ազագաւ՝ ահա և մեք այսպէս հրամայեմք ձեզ՝ այսու օրհնութեան կոնդակաւս մերով։ Զի որովհետև դուք ի բնէ անտի սուրբ Յովաննիսի վանիցն էք եւ զեալ թեմ և վիճակ. և այժմ ևս ոչ կամիք ի գմանէ բաժանիլ, մեք ևս ոչ կամիմք զբաժանիլն ձեր ի դմանէ։ Այլ ահա պատուիրեմք ձեզ և հրամայեմք, զի որպէս ի հարց և ի նախնեաց հետէ ծառայեալ էք սուրբ Յովհաննիսե վանիցն ի բնէ անտի, յայսմհետէ ևս ծառայեսջիք նմա՝ առանց այլ և այլ մտածութեանց, և զնորին Առաջնորդն՝ զսիրելի և զշնորհածին որդին մեր զՑէր Յովհաննէս խոհեմառատ վարդապետն և զնորընծայ Եպիսկոպոսն ձեզ Առաջնորդ գիտելով՝ հնազանդ լիջիք նմա յամենայնի, և ամենից հոգևոր և անմեզածին հրամանաց նորին լսոզք և կատարոզք լինիջիք։ Եւ զամենայն առաջնորդական և զվանքական հասս և զիրաւունս ձեր ևս նմա հասուսջիք, զի նոքօք զսուրբ վանքն զայն զյաւտուկ տունն հոգևոց ձերոց շէն և պայծառ պահեսցէ ի պարծանս ձեր՝ և ի յօգուտ հոգևոց համայն կենդանեաց և ննջեցելոց ձերոց։ Եւ կատարոզքդ հոգևոր հրամանացս մերոց՝ եզիջիք օրհնելք՝ յԱստուծոյ և ի մէնջ. և Շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ։ Ամէն։ Ի ՌՈՄԼԱ. յօգոստոսի ԻԵ։

Թուղթ առ. Զմիւռնիոյ նուիրակ և Առաջնորդ Փիլիպպոս վարդապետն, ի պատասխանի յԱպրիլի ԻԵ գրեալ Թղթոյն ընդ Խոզեանց Տիրացու Մխիթարին, շնորհակալութիւն վասն ընդ նմա յղեալ ոսկեայ շափռաստին և ոսկեայ ժամացուցին։ Եւ վասն գալոյն ևս բանք, որպէս և ի վերոյ ի համարն 460։ Եւ վասն զանգակացն յառաջագոյն յղեցելոց, և դեռևս ջեցի Մնացականի վախճանելոյն ի Մսրտամ և կրտակի նորին՝ բանք՝ որպէս զի՝ թէ յիրաւի վախճանեալ իցէ, և կտակին աղագաւ

ղրեալ իցեն անդ՝ տալ ինրեան, առնուցու և ընդ իւր բերցէ։

Թուղթ ի Զմիւռնին, առ Արրօյեան Աստուածատուր Ազայն, ի պատառխանի երկուց թղթոցն իւրոց՝ ղոր ընդ Խոզենց Տիրացու Մխիթարին ղրեալ էր։ Շնորհակալութիւն վասն լնծայիցն յղելոց, յիշեցուցանելով և զառաջին գրեալսն։

Թուղթ առ Մեծին Պօլսոյ Պատրիարք Զաքարիա վարդապետն, շնորհաւորութիւն վասն վերստին Պատրիարքանալոյն, եւ շնուհակալութիւն վասն սիրոյն եւ օգտակամութեանն՝ զորս ցուցանէր առ սուրբ աթոռս եւ առ ինքն։ Եւ խընդիր ունիլ միշտ զնայնս, եւ հաստատիլ ի սէրն առաջին, եւ անպակաս առնել զգիրն։ Եւ յանձնարարութիւն եւս վասն նուիրակ Մինաս վարդապետին։

Ծորմէ Քրիստոսական սուրբ և միարար ողջունիւն, և հոգեկան ստոյգ և անխարդախ սիրովն, ճշմարիտ կարօտիւ և ստոյգ բազձանօք, ծանուցումն լեցի սիրելի և յարգելի եղբօրդ մերոյ, ընիկ և վաղեմնական անկեղծ սիրով սիրեցելոյ, և սրբոյ Աթոռոյս Ասաուածածինի՝ շնորհընկալ և օգտաջան որգւոյ, Տեառնդ Զաքարիա Ասաուածաբան վարգապետիդ և արհի եպիսկոպոսիգ, և արժանավայել պատրիարքիդ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ։ Զի ըստ բանի երանելւոյն Պօղոսի, ըստ որում երկայնամիտ է սէր, և քաղցրանայ. ամենայնի տևէ, ամենայնի հաւատայ. ամենևին յուսայ, և ամենայնի համրերէ, վասնորոյ սէրն մեր ընիկ և ճշմարիտ՝ ղոր ի ձեռն հոգեւոր և ստոյգ եղբայրութեանդ ունէաք առ միմեանս, եկաց մնաց ի սրտի մերում ամբողջ նոյնութեամբ մինչև ցայս վայր։ Վասն զի՝ ներհակքն սիրոյ՝ թէպէտ ի բազմաց ամբոխիչ պատճառաց և ի սիրազուրկ անձանց՝ մանաւանդ և ի բերմանց աշխարհի և ժամանակի յառաջացան, այլ զի առօրեայք՝ առ ժամանակեայք և անցաւորք էին այնքիկ՝ մանաւանդ և անախորժք կամացն Աստուծոյ. վասնորոյ փութով անցին և գնացին։ Իսկ սէր՝ զի Աստուածային է, և ոչ երբէք անկանի, յարաժամով միշտ ի սիրօդս և ի ցանկացօդս իւր, վասնորոյ և ի միտս և ի հոգիս մեր կենաց մեաց ամբողջութեամբ՝ որպէս ասացաք։ Եւ զի բնական է սիրոյն ունողաց զմիշտ և զիաուս սիրակցին՝ իւր համարիլ ընդ արտմականսն տըրտմիլ, և ընդ ուրախականն ուրախանալ, վասընորոյ՝ և ինձ սիրողիս զքեզ ի ընէ՝ մեծագոյն վիշտ և ցաւ եղև յիրաւի առ ժամանակեայ գիպուածն այն քեզ դիպեցեալ. այսինքն երթալդ ի Պրուսայ, որ արդարև յոյժ ցաւեցոյց զիս։ Քանզի՝ ըստ երգոյն երգոց՝ մինչ էանց ձմեռն սիրասառոյց, և անձրևք պղտորիչք պարզութեան սիրոյ անցին՝ և գնացեալ մեկնեցան, և էհաս ժամանակ հատանելոյ զաւելորդ և զվնասակար ընձիւղսն առեղութեան, զի նորապէս ընձիւղիցէ տունկն սիրոյն մերոյ բնականի ըզբողբոջ իւր, և երևեսցի ծաղիկն, և տայցէ զհոտ իւր. յանկարծ ի վեր հնչեալ հողմոյ անքարի դիպուածոյն այնմիկ քոյոյ՝ արար զմեզ յետնեալս ի յայնմ յուսոյ, ածելով յիրաւի զմեծ տխրութիւն և զցաւ սրտի մերոյ։ Իսկ այժմ՝ մինչ ըստ ազդմանն Աստուածայինն խնամոց՝ վերստին ի նոյն փառս և ի պատիւս քո կոչելով՝ հաստատեցեալ ես անդրէն յարժանավայելուչդ քեզ ի պատրիարքականդ իշխանութիւն, տեղի ետուն ի մէնջ այնքան տխրութիւնք. և մեծ ուրախութեանց և բերկրութեանց եղաք առդիպեալք. և էհաս վերստին այն ժամանակ, զի տունկ սիրոյն մերոյ բնականի ընձիւղիցէ զբողբոջ իւր, երևեցուսցէ զծաղիկն. և բուրեսցի հոտն անուշութեանն։ Որպէս և ահա արգէն իսկ երևին ի բողբոջից սիրոյ քոյին ծաղկունք բարեհոսիլք, որոց և հոտն անուշութեան բուրէ ի քիմս սրտից մերոց։ Քանզի՝ յօրէ վերստին կոչման սիրոյդ ի գոյն պատիւ, սիրելին մեր և քո իսկ՝ Մինաս աստուածաբան վարդապետն՝ գրէ միշտ յամենայն գիրս իւր զմեծագոյն շնորհակալութիւնս զսիրոյդ որ յամենայնի ցուցեալ ես և ցուցանես զօգտասիրութիւնս առ սուրբ աթոռ ծնօղս քո, և զսէր ճշմարիտ առ մեզ. և զյամենայն կողմանէ ձեռնտուութիւնս իւրեան և գործոյն՝ հանդերձ

մարդասիրութեամբ նոյնպէս և այլք բարեկամք գրեն և ծանուցանեն մեզ զնոյնս: Որովք ոչ սակաւ մխիթարեալ մեր՝ եզաք շնորհակալ և գոհունակ զյարգելի սիրոյդ: Վասնորոյ ի ձեռն այսր սիրածիր թղթոյ, նախ շնորհաւորեմ զկոչիլն սիրոյդ վերստին ի գոյն պատիւ և յիշխանութիւն հոգևոր, ի պատրիարքութիւն օրհնեցելոյ քաղաքիդ: Զոր և շնորհաւոր արասցէ մեր, և տացէ խաղաղութեամբ և երկայն աւուրբք վայելել քեզ զդոյն առնելով ապահով յամենից սրատամաշ կրից, և պահելով միշտ ուրախ և ցնծուն, առ ի զուարճութիւն սիրոյդիս ըզքեզ սիրով ճշմարիտ: Ապա և շնորհակալելով մեծապէս ղեղբայրութենէ քումմէ՝ վասն օգտաջանութեանց քոց ամենից՝ զորս լսեմք միշտ, և հայցելով յԱստուծոյ հաւատացանել զփոխարէնն գոցին ի հոգի քո. ինգրեմ այլ ևս զդոյնս առաւելապէս ունել առ սուրբ աթոռս՝ և առ մեզ և առ նուիրակդ մեր՝ գնելով զանցեալսն ամենայն ի մոռացմանէ: Վասն զի անցին այնք ամենայն՝ որպէս ասացաք ի վերոյ. և ժամանակ է այժմ յատանելոյ զայնս ամենայն ըստ որում են աւելորդք. և ընձիւղել զբողբոջս նոր և ճշմարիտ սիրոյ՝ յարմատոյ նոյն առաջնոյ սիրոյն մերոյ ճշմարտի: Ցայս ջան և ի վարձատրելի վաստակ հաստատելով սիրոյդ: զսիրանիշդ Թուղթ ևս արասցես անպակաս. որ է արծարծիչ և հաստատութիւն իսկ սիրոյ եղբայրականի: Որում ակնագէտ էաք ցարդ՝ ընգունիլ ի սիրոյդ: Եւ այսքան ինչ այժմ գիտացեալ յարգելի եղբօրդ իմոյ՝ լեր ողջ ի Տէր: Գրեցաւ ի սեպտ. ՌՄԼԱ:

Թուղթ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Մի. նաս վարդապետն, ի պատասխանի ոմանց քանից նրկուց թղթոց նորին՝ ի Յուլիսի ԻԷ՝ եւ ի յՕգոստոսի ԺԶ գրուցելոց. վասն վերոյ գրեալ թղթոյդ որ առ Պատրիարքն, եւ այլ եւս ոմանց քանից. խոստանալով յետոյ գրել զլիալիր պատասխանիս նոյն երկու թղթոցն:

Ցորմէ սիրով բազմաւ և կարօտիւ, հոգևոր օրհնութեամբ՝ և զօրացուցիչ Շնորհիւ սրբոյ Հոգւոյն տեզուցս Քրիստոսի, գիտասջիր սիրելիդ իմ. և քրտնաջան որդի սըրբոյ Աթոռոյս՝ Մինաս Աստուածաբան վարդապետ: Զի հասին առ մեզ Ք թուղթք քո. գրեցեալն ի Յուլիսի ԻԷ ի սեպտ. Ժ. և ի յՕգոստոսի ԺԶ դրեալդ՝ այլ ևս ի սեպտ. Ի: Զորս ընթերցեալ մեր իմացաք զամենայն գրեալգ ի նոսա. զհասանիլն գրեանց մերոց և զայլ ամենայն հարկաւորսն: Որոց ամենից զլիապոյն պատասխանիսն զկնի սուզ աւուրց՝ եմք գրելոց: Այժմ համառօտ միայն զայս գրեմ՝ քեզ: Զի որովհետև հարկաւոր էր զի գրեսցուք զգիր սիրոյ և շնորհաւորութեան առ սիրելի եղբայրն մեր Պատրիարք Աստուածաբան վարդապետն. (զոր մինչև ցարդ յաղագս անձեռնհասութեան յետացուցաք.) վասնորոյ՝ այժմ ահա գրեցաք որպէս պատշաճն էր, և յղեցաք առ քեզ ընդ թղթոյս: Զոր մատուսցես ինքեան: Ցորում ծանուցեալ եմք նախ՝ զանքակտելի ձնալն ի սրտի մերում՝ քնիկ սիրոյն մերոյ եղբայրականի, զոր ունէաք առ միմեանս: Ապա շնորհաւորութիւն վերստին կոչելոյն ի յարժանավայելուչն իւր ի պատիւն Պատրիարքութեան օրհնեցելոյ մայրաքաղաքիդ: Ընդ որս և շնորհակալութիւն վասն կատարեալ սիրոյն և օգտաջանութեանցն՝ զորս յօրէ վերստին կոչմանն իւրոյ մինչև ցարդ՝ ցուցանէ միշտ առ սուրբ Աթոռ Մայրս իւր և առ մեզ: զորս դու և այլ բարեկամք քանիցս գրէք շնորհակալութեամբ: Եւ ի վերայ այսոցիկ՝ խնդրեցաք յարտաձայ ի նոյն սէրն ճշմարիտ. և անպակաս առնել զգիրն սիրանիշ: Այսքանիս համառօտ այժմ գրեալ՝ շուտով յղեցաք. ունիմք այլևս զդիտմունս՝ զկնի աւուրց կըրկին զթուղթ սիրանիշ գրել, և ընդ նմին զպատշաճաւոր ինչ սիրանիշ պարգև՝ իբր օրհնութիւն ի շնորհատու ծնողէս իւրմէ ի ձեռս քո առաքել՝ զի մատուսցես ինքեան: Այլ և՝ հմատուցանել էիր զմեծագոյն հրկիզութենէ քաղաքիդ, և զայրեցմանէ Սամաթիոյ սուրբ Գէորգ եկեղեցւոյն որ յոյժ կսկիծ եւս սրտից մերոց. և զամենայն ցաւս մեր գրեթէ մոռացոյց. որք վշտացելով սրտիւ և արտաուղագոչ հեծութեամբ հայցեմք յԱստուծոյ այց առնել քաղաքիդ այգմիկ, և խղճալի անձանցն վըշ-

ասացելոց։ Բայց զի զլիալիրն լանիդ այդմիկ չիմացաք, գրեմ հարկիւ մեծաւ, զի ծա նուսցես մեզ։ Եւ զՀասանիլն առ քեզ սոյն Թղթոյս մերոյ ևս՝ աղդեսցես մեզ շուտով։ Այլև՝ ի Ծուլիսի Իէ գրեցեալ Թղթոյդ գրեալ էիր վասն Գէորգ աղային Թէ՝ նո րին ընտանի օրհնեալ Ամիրային և մեծ մասն խնդրեն աղերսիւ զդա յղել. որք և յի նէն զԹուղթ խնդրեցին վասն այսր յատկա պէս, և ես ետու, և ինքեանք ևս գրեցին քեզ՝ յղել զաղային ընդ Ծովհաննէս վար դապետին։ Որպէս խնգրեալ են, յղեսցես, և այլն։ Առ այս գիտացես, զի քոյգ Թուղ թըն զոր ասես ետու նոցա՝ և յղեցին, ոչ է հասեալ մեզ, և չեմք տեսեալ։ Միայն Թէ՝ ի յԱստուծով ղօրացեալ Մկրտիչ Ամի րային, և ի Հովուեանց Չօպան Ամիրային Բ Թուղթք հասին ի ձեռս մեր ղորս Ծովհան նէս վարդապետն ետ մեզ։ Որք գրեալ էին զնդն խնդրեն վասն տղային՝ ղոր գու գրես մեզ՝ որպէս ասացաք ի վերոյ։ Որք և զայս ևս էին գրեալ Թէ՝ խնդրեմք՝ զի Ծովհան նէս վարդապետին հրամայեսցես ըներել աստ զաղային, զի որպէս առանց ընծայուց հասու ցեալ է յայդր, նոյնպէս առանց իրիք ընծայու՝ նա կարէ ղգա ասա հասուցանել. և այլն։ Եւ մեր կամելով՝ զի այսպիսի փոքր պատճառաւ Ծովհաննէս վարդապետն մի ելցէ աստի՝ և կրեսցէ զծանրութիւն ճանա պարհաց. վասնորոյ կոչեցաք առ մեզ. և ա սացաք Թէ՝ Թէպէտ այսպէս են գրեալ, այլ մեք ոչ կամիմք՝ զի դու յայդ ծերու Թեան ժամանակիդ ի սրբոյ Աթոռոյս տարա գրեսցես, եթէ վասն տղային է գնալոյ, մեք կարեմք ընդ հաւատարիմ գնացողաց հա սուցանել զնա ի Պոլիս։ Դու ՁԱ աստ. և որպէս մինչև ցայժմ շահեցեալ ես, այլ ևս շահիլոց ես ըստ քոյոյ արժանւոյդ։ Եւ զայլս սոյնպեսիս ասացաք, քանզի ոչ կա մեաք զտարագրիլն նորա՝ որպէս ասացաք։ Իսկ նա ոչ կամեցաւ ՁԱալ, այլ խնդրեաց աղերսանօք Թէ՝ աղաչեմ զի հրաման տացես ինձ երթալ. նախ վասն տղային՝ զի անվնաս հասուցից անգ՝ որպէս նոցա խրնդիրքն է. և երկրորդ՝ զի ես ևս ինձ յատուկ րան և հոգալիք ունիմ, որոց վասն գնալս յայժ հարկաւոր է. չերթամ՝ չի լինիլ։ Եւ զայլս այսպիսիս ասելով՝ ոչ կամեցաւ ՁԱալ։ Նաև Թէպէտ ունէաք այժմ զՀաւատարիմ գնացօղ, որ էր Արապկերցի Ծա րուԹիւն վարդապետն. (որ ի սուրբ կարա պետու էր եկեալ աստ. որպէս գրեալ եմք քեզ յառաջ.) զոր այժմ յղեցաք ի նուի րակուԹիւն Անկիւրիոյ, ընդ որում հնար էր յղել զԳէորգ տղայն մինչև ցՊօլիս և պատուիրել, զի այստի ընդ հաւատարիմ մարդոյ յայդր յղեսցէ. բայց զի այնպէս էր խնդիր վերծայիշեալ Ամիրային ի ՏԷր զո րացելոց, և ինքն Ծովհաննէս վարդապետն ևս յօժար էր ի գալ և ի բերել որպէս ասացաք, և մեք ևս չէաք յոյժ միամիտ՝ Թէ տղայն ընդայլոյ ուրուք կարիցէ անվնաս յայդր հասանիլ. վասնորոյ մեք ևս հրաման ետուք Ծովհաննէս վարդապետին ըներել յայգր զտղայն՝ որպէս զի առանց վնասու ըերցէ. և զիւր հոգալիսն ևս հոգասցէ։ Որ և առեալ ընդ իւր զտղայն, ել աստի ի ոեպա. ամսոյս ԻԹ. և եկն յայդկոյս. ո րոց զՀասանիլն ևս գրեսցես։ Իսկ՝ որ յա զագս տրոց ումանց և յիշատակաց խընդ րեալ էիր զԹուղթս օրհնուԹեան. ահա գրեմք, և յետ աւուրց յղելոց եմք։ Նա կայն զԱրծաԹեղէն յիշատակաց կշիռսն ե Թէ գրեալ լինէիր, յոյժ բարւոք առնէիր, զի և մեք կշռովն գրեաք Տուղացն, և լի նէր նոյա միամտուԹիւն։ Զի և յայլ տե ղիս նոյնպէս գրեմք։ Եւ այսքան ինչ այժմ համառօտ գրեալ՝ զնացելոց պատասխանիմն յետոյ եմք գրելոց։ Ողջ լեր ի Տէր։ Գրե ցաւ ի ՌՄՂԱ. ի սեպտ.

Դարձեալ զայս ևս գիտասջիր սիրե լիգ իմ Մինաս Աստուածաբան վարդապետ։ Զի սրբոյ Երուսաղէմի նուիրակ Պետրոս վարդապետն որ զկարին և զկարս նուիրա կէր, ի նուիրակելն զկարս, ետ մեզ անգ ղեր կու հազար և զհինգ հարիւր ղուռուշ գը րամ, և մեք փոլիցայագիր ետուք նմա ի վե րայ քոյ, զի յղեսցէ յայգր առ վէքիլն իւ րեանց, որ ի քէն զայն դրամն առնուցուս Ուրեմն՝ ի գալն առ քեզ նոյն փոլիցայագրին մերոյ, տացես նոցա զյիշեալ ՌՊ ՆԾ ղու ռուշ գրամն՝ և մեզ գրեսցես. այլ և՝ յա ռաջագոյն ևս եմք գրեալ քեզ, որ տպա գիր տիրացու Պօղոսն որ է ի Թիֆլիզ, վեց հարիւր ղուռուշ գրամ հասոյց մեզ. և մեք զապղ ետուք իւրեան, զի յղեսցէ յայգր

որ ի քէն առնուցուն։ Իսկ դու մինչև ցարդ չգրեցեր մեզ թէ՝ էհաս առ քեզ այն դապղն մեր, և դու եառեր զայն վեց հարիւր ղուռուշն, թէ դեռ ևս ոչ. գրեսցես մեզ զայսմանէ՝ զի գիտասցուք։ Քանզի յոյժ երկարեցաւ միջոցն, և ոչ գիտեմք թէ ո՞ւր մնաց այն դապղն մեր, քեզ էհաս, թէ ոչ։ Կրկին ողջ լեր ի Տէր։

Թուղթ ի Բաղդատ առ Ջուղայնցի Խալդարենց Մարգար աղայն ի պատասխանի թղթոյն ղրեցելոյ ի սեպտ. 6. վասն իւր տալեացն, և այլ իրաց։

Թուղթ ի Բասրա առ Մտեփաննոս Աղայն, և առ Բէթղէհէմեան Յովհաննէսն՝ որ էր գործակալ սրբոյ Աթոռոյս. ի պատասխանի իւրեանց թղթոցն, ղրեցելոց ի ՌՄՂԱ, և ի յունիսի ԻԷ, վասն այլ և այլ դիտմանց։

Թուղթ առ Խարբերդու Աբղլմսեհի վանից և Ղուլայ վանից առաջնորդ Աբրահամ վարդապետն՝ որ Բէչրիւթիւր կոչիւր։ Զի զմահսարական թուղթ մի ղրեալ էր աստ փայեկաւ, յորում խնդիր այս էր, յղել զկոնդակ Առաջնորդութեան։ Այլ չէր յայտնի, թէ որ վանից ժողովուրդք էին գըրեալ զայն մահսար. և որ վանից աղաչեալ խնդրէին զկոնդակն առաջնորդութեան յանուն նորա. այլ լմ՝ կոնդակ շնորհեա ի վերայ երկրիս. և զանուն երկրին և կամ զքաղաքին ևս չէին գրեալ։ Ուստի՝ գրեցաւ սմա, զի ինքն որոյ վանից առաջնորդ և իցէ, թէ միոյն և թէ երկուցն, նոյն վանից ժողովրդեանն զնոր մահսար մի գրեցուցեալ ուղարկեսցէ. զի յանուանէ վասն նոյն վանից առաջնորդութեանն ըզկոնդակ գրեալ՝ առ ինքն յղեսցէ։

V Թուղթ առ Արքայորդին վրաց Գևօրկին Միրզայն, ի պատասխանի թղթոյն իւրոյ որ ընդ Գալուստ վարդապետին, և շնորհակալութիւն՝ սակս ընդունելոյն սրբոյ Աթոռոյս վերստին ըզՄիրզայն մեր ժողովոյ Ամմատն, վախուց տալով սմա, զի յազգէ յազգ ծառայեսցէ սրբոյ Տանս՝ մտերմաբար։

Ցորմէ ժամանեսցի թուղթ՝ հանդերձ առատաձիր օրհնութեամբն Հոր Աստուծոյ. խաղաղարար ողջունիւն Միածնի Որդւոյ, և Հշմարիտ սիրոյն Հոգւոյն սրբոյ։ Այլ և՝ զօրացուցիչ շնորհօք և օգնականութեամբ Աստուածածէջ սրբոյ Տեղւոյս, և ամենից Աստուածակիր և հրաշագործ սրբութեանցն՝ որք աստ ի վերայ սիրեցելոյդ իմոյ ի Քրիստոս և զօրացելոյդ մեզ նովիմբ, և սրբոյ Աթոռոյս մերոյ իսկական բարեկամի և օգնասիրի։ Բարեպաշտի և աստուածասիրի, արիաջանի, և բարեյաղթի. իմաստնապերճի և խոհականի, թագաւորի և օրհնաժառանգ շառաւիղի ի բարի յարմատոյ Արքայորդի Գեօրկին Միրզայիգ։ Եւ Աստուածապահ ասն քում, և նովիմբ օրհնեցեալ արքայազուն որգւոցդ՝ և ամենից ընտանեացդ։ Հաւատարիմ խորհրդակցացդ, և հարազատ սիրելեացդ, ՝ինդալ ի Տէր յարաժամ։ Ամէն։

(Շնորհք)։

Եւ ընդ ողջունառաք օրհնութեան սիրածիր նամակիս, ծանուցուաք լինել քումդ Աստուածասիրութեանդ։ Զի էհաս առ մեզ սիրալիր թուղթ բարեպաշտութեան քոյ՝ ի ձեռն հարազատին մերոյ աթոռակալ Գալուստ խոհեմաշատ վարդապետին։ Զոր ընթերցեալ մեր՝ իմացաք զամենայն սրտաշահ և ուրախարար բանսդ՝ որք ի նմա։ Որ յազգս ստուգութեան և ճշմարտութեան սիրոյդ մեծի որ առ մեզ՝ ցուցեալով և վշտանալով ընդ ցաւակրութիւն և ընդ վիշտս մերոյ զոր ծանուցեալ էաք Աստուծով զօրացելոյդ, կատարեալ էիր զինդիր մեր. և շնորհեալ էիր վերստին սրբոյ Աթոռոյս և մեզ զմօլլայ Ահմատ ծառայն քո. որպէս զի՝ եղիցի մշտնջենաւոր ծառայ Աստուածածէջ սրբոյ Աթոռոյս յազգաց յազգս՝ և յորդւոց յորդիս, և ծառայեսցէ սմա։ Եւ ըզդոյն սիրոյդ քո ճշմարտի և յատկականի առաւելանալն առ մեզ և գերազանցիլ քան զանցեալսն՝ ծանուցեալ էիր ի սիրածիր

թղթոյդ, յայտնելով և զկամս սրտի քոյ՝ ոլ ոչ երբէք կամիս՝ զի անբարի ինն դիպուած ինչ և կամ ստորանկուածն պատուոյ առդիպեսցի մեզ և սրբոյ Աթոռոյս. այլ որ ինչ օգուտն է մեր և բարին, այնոցիկ լինիս կամեցօղ և առնօղ՝ որպէս և այժմ արարեր։ Եւ խոստանաս և՝ զդոյն ճշմարիտ սէրդ և զօգաստիրութիւնդ անմոռանալի և անուռացելի պահել. և անայլայլելի ի յանբարի դիպուածոց աշխարհիս։ Որոց ամենից զլիալիրն՝ Տարազատն մեր Գալուստ խոհեմմիտ վարդապետն պատմեաց բերանով, ըստ որում խոսեցեալ էիր ընդ սմա զամենայն լիապէս։ Ընդ որս ամենեսին շնորհակալեալ մեր զցանկալւոյդ մերմէ և զստոյգ սիրելւոյդ օրհնեցաք զքեզ մեծաւ օրհնութեամբ առաջի Աստուածածնէ սրբոյ Ցեղւոյս։ Եւ հայցեցաք ի նոյնոյ ամենախնամ Ցեղունէն, զի զարիւրուն պզքանւոյ սիրոյ գերազանցի՝ հասուսցէ քեզ բազմապատիկ առաւելութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. պահպանելով զքեզ յարաժամ Աստուածածնայմօքն իւրովք, և փրկելով յամենից անբարի դիպուածոց։ Որ և օրհնեսցէ և զօրացուսցէ զքեզ հանդերձ թագազարմ զաւակօքդ բարեզգեօղիւք, և միշտ պահեսցէ ի յաջողութեան և յամենակերպ բարեբաստութեան, յուրախութեան՝ և ի յարազուարճ ցնծութեան, որպէս դու միշտ զմեզ ուրախացուցանես՝ և ևս կամիս և ջանաս իսկ առնել յամենայնի ուրախ և զուարճալիս։ Ցիրաւի՝ ես ոչ ունէի երբէք զերկբայութիւնս զսերոյ քումմէ՝ որպէս և յառաջ եմ գրեալ, և ոչ ևս երկբայելոց եմ երբէք՝ որպէս և Աստուածոյ է յայտնի թէ և այսպիսի անցք անցանիցեն երբեմն ըստ բերման աշխարհիս։ Այլ սակայն այսքան ինչ գոյ՝ զի թշնամիք ծիծաղին ընդ սյդպիսի իրս՝ ըստ որում օտար են ի սիրոյ։ Այլ այժմ թէև ծիծաղեցան այլ մինչ տեսին զպնդակազմ ամրութիւն սիրոյ քոյին որ առ մեզ, որով և ուրախ առնելդ զմեզ վերստին հարան զամօթի. և գիտացին մանաւանդ թէ անշարժապէս գոյ հիմնեցեալ շինուած սիրոյ քոյին որ առ մեզ, անդրդուելի ի պէսպիսեաց դիպուածոց՝ ըստ շինողին զաուն իւր ի վերայ վիմի, որպէս յԱւետարանն սուրբ ասի։ Ուստի՝ և մեք հայցեմք ի ճարտարապետէն բարւոյ՝ ի յամենից հաստչէն, որ զերկինս երկնայնովք և զերկիրս երկրայնովք՝ ամենատած նախախնամութեամբն իւրով պահէ միշտ ի հաստատութեան և ի կայի. զի զիւրահաստատ ցերութիւնդ և զիշխանութիւնդ ձեր պահեսցէ հանապազ ի կայի և ի հաստատութեան, անշարժ և անդրդուելի առնելով ի յամենից արկածից և ի դիպուածոց և զամենայն ընդգիմահարս գրմին՝ փշրելով և խորտակելով, և ևս առաւել պայծառացուցանելով զդոյնդ շքեղազարդ պերճութեամբ ի փառս անուան իւրոյ սրբոյ՝ և ի ցնծութիւն մեզ։ Իսկ առ այն բանս սիրեցելոյդ թէ պատուիրեսցես Մօլլայ Ահմատին զշուրթն իւր մի աղտեզացուցանել, և այլն. առ այդ գիտասցես՝ Զի թէ թէ՝ որպէս և վայել էր՝ պատուիրեցաք, այլ յոյժ լինի երդմնակոծ մեծաւ աղէտիւ. զայս ասելով թէ՝ շատ գոն ինձ թշնամիք. զայդպիսի պարուրանս յօրինեն յինքեանց ի վերայ իմ. և հաստուցանեն յականջս մեծութեան նորին։ Իսկ ես ոչ արարեալ եմ զայգպիսի ինչ. և ոչ առնելոց եմ։ Այս ասացեալք նորին հաւատարմանան մեզ այնու, զի մինչև ցարդ չեմք տեսեալ կամ լուեալ զսյդպիսի ինչ ի սմանէ։ Վասնորոյ՝ խընդրեմ ի սիրեցելոյդ զի մի ամենայն սյդպիսի աստղաց հաւատասցես փուճով. այլ երկայնամտեա երկար միջոցաւ. և եթէ ըստուգեսցի աւացեալն նոցա, յայնժամ ծանո՝ մեզ զանխլաբար։ Քանզի՝ մեզ ևս են տեսլի այնպիսի աղտերի բարբանջմունքն և ոչ կամիմք ընաւ՝ թէ ի սմանէ ելցեն, որպէս և ցարդ չեմք տեսեալ։ Եւ խնդրեմ ևս, զի դոյն ամրագոյն սիրովդ արասցես զմեզ միշտ ուրախ և սքաջաշէ՝ որպէս և այժմ, առնելով անպակաս և զգիրդ սիրանիշ։ Ողջ լեր ի Ցեր, զօրագրեալ ի շնորհս նորին քոյայնովքդ ամենեքումբք։ Ամէն։ Ի ՌՄԼԱ ի սեպտ.

Թուղթ մխիթարութեան ի մեծն Պօլիս, վասն հրկիզութեան յոյժ մեծագունեղի, որ ի հարիւր և ՃՀ և կէս ժամ այրեցեալ էր. որով իրրու երկու և կէս մասն ի չորից մասանց րաղաքին՝ այրեցեալ էր։ Ցորմէ

և տղային մերոյ լեալ էր կարի մեծագոյն վնաս՝ որպէս և միւս ազգացն, անհամեմատ ամենից անցելոց վնասուցն՝ որ լեալ էր հրկիզումեանց։ Եւ Սամաթիոյ սուրբ Գէորգ եկեղեցին. ես այրեցեալ էր։ Վասն որոյ ի սոյն թղթոջս՝ յատուկ մխիթարութիւն ես վասն վասն այնր գրեցաւ։

Թուղթ առ. Պօլսոյ արտարին վիճակաց նուիրակ Գալուստ վարդապետն, ի պատասխանի ի Մայիսի ելն գրեցեալ թղթոյն, որով խնդրեալ էր զօրհնութեան թուղթս առ. տուօղս դանձանակաց. և ուրեք ուրեք ես զդանձանակունս հաստատեալ՝ խնդրեալ էր զթուղթս հաստատութեան։

Թուղթ առ քահանայն, և իշխանսն Կարնոյ՝ զի տացեն գՊողին Մուտուրկու վանիցն։

Թուղթ ի մեծն Պօլիս, առ պարոն Գէորգն և պարոն Աստուածատուրն, ի պատասխանի թղթոյն իւրեանց գրեցելոյ ի յօգոստոսի. վասն շնորհաւորական թուղթ գրելոյ առ Պատրիարքն, որ և գրեցաւ, որ գոյ ի 464 համարն։

Թուղթ առ Բաքուայ ժողովուրդսն, վասն վիճոյն՝ զոր ունէին ընդ Պարոն Ղուկասարին ի յերկար ժամանակս. Թէ ահա պատուիրեցաք սիրելի որդւոյդ մերոյ( ) վարդապետիդ՝ (զոր առաքեցաք ի ժողովել զարդիւնս զանձանակաց մերոց՝ որք զոն յայդ կողմունսդ.) որպէս զի՝ վերահասու լիցի վիճմանցդ ծերոց. եւ գիտասցէ զպատճառն։ Եւ եթէ մինչեւ ցայժմ արարեալ իցէք զհաշտութիւնն՝ որպէս եւ լուեալ եմք, ըարի է, ապա թէ ոչ, գրեսջիք մեզ զորպէսն ծեր դորին գիտութեամբն, եւ զոր ինչ կամիք դուք ծանուսջիք դմա, զի եկեալ պատմեսցէ մեզ. եւ մեք յայնժամ զոր ինչ պատշամ տեսցուք առնելոց եմք։

Ծորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, և նամակ պահպանութեան. Ընորհք Առաքելական, և Աստուածային բազմապատիկ օրհնութիւնն և նախանձախնամական գթութիւն, ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց, հարազատ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս, Հայկասէր Լուսաւորչակրօն և Միաբնադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս, որք կայք ղեռեղեալք ի յԱստուածախնամ քաղաքիդ Բաքու։ Քահանայից, Իշխանաց, Դօլվաճառորաց, Երիցփոխաց և Գանձապետաց. վաճառականաց՝ եկաց և բնակաց. Արուեստաւորաց, Հողագործաց, և առ. հասարակ օրհնեալ ժողովրդոցդ ամենից մեծաց և փոքրոց. խնդալ ի ցէր յարաղուարճ ցնծութեամբ և ուրախութեամբ։ Ամէն։

(Ընորհք.)

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ դիտասջիք սիրելիք մեր՝ և հարազատ որդիք սրբոյ Աթոռոյս էջմիածնի։ Զի մահսարական թուղթն ձեր՝ զոր գրեալ էիք առ. մեզ յանցեալ 1781 թուոջ Փրկչին՝ և ի Մարտի ամսոջն՝ ձեռամբ Ծովհաննէս կաթողիկոսի սպասաւոր Մովսէսին, կարի յոյժ ա. նագան էհաս առ. մեզ, յայսմ ամի ի Ծուխնի ամսոջն հանդերձ միւս թղթովքն որք ընդ նմա։ Զի թէ յաղագս ճանապարհաց խռովութեանցն, և թէ սակս այլ պատճառաց, ձեացեալ էին թուղթքն այնօրիկ ի Գանձասար, և այնքան յետացեալ։ Իսկ օրինակքն նոյն մահսարին ձերոյ և միւս թղթոց զոր գրեալ էիք յանցեալ 1781 թուոջն դարձեալ ի յօգ. Ա, ձեռամբ Թիֆլիզեցի Ծովսէփին քան զՄովսէսի ձեռամբ յղեալն՝ քանի ամսով յառաջ հասին առ. մեզ ձեռամբ նոյն Ծովսէփին, և գիտացաք զգրեալսն ձեր, և զոր ինչ ևս բերանովն ասացեալ էիք նմա, միաւորիոջէ ծանոյց մեզ՝ և իմացաք։ Բայց զի կայաք մեք ի մէջ յորվից զբաղմանց, մանաւանդ յաղագս եկող էլինելոց աստի յայդ կողմունսդ, յայսքան միջոցս յետացուցաք զպատասխանին թըղթոյն ձերոյ, Իսկ այժմ՝ որովհետև զսիրելի որդին մեր և զհարազատ զաւակն սրբոյ Աթոռոյս զՑէր( ) խոհեմազարդ վարդապետն յղեաք յայդկոյս հանդերձ օրհնութեան կոնդակաւ, առ. ի ժողովել զարդիւնս դան-

ձանակացն սրբոյ Աթոռոյս որք գոն յայդ կողմունսդ՝ և ըերել ի սուրբ Աթոռս, վասնորոյ՝ գրեցաք ընդ գմա առ Հոգևոր որ դիւդ մեր զայս օրհնութեանս մերոյ Թուղթ՝ ի պատասխանի Թզթոյն ձերոյ։ Որով զայս գիտասջիք։ Նախապէս՝ ծանուցեալ էիք զհասանիլն առաջին Թզթոյն մերոյ առ ձեզ, և ձեր հարազատ որդիարար առընկալնուլն զայն, և առնելն զմեծամանդէս ուրախութիւնս ըստ օրինի և ըստ պատշաճի, յաղագս ճշմարիտ սիրոյն ձերոյ՝ որ առ սուրբ Աթոռս և առ մեզ։ Ընդ որս և մեր շնորհակալեալ զՀոգևոր որդւոցդ մերոց՝ օրհնեցաք զձեզ օրհնութեամբ բազմաւ զորս Ցէր օրհնեսցէ միշտ, և վարձատրեսցէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Իսկ և՝ ծանուցեալ էիք զբազմամեայ վէճն, որ գոյ ի մէջ ձեր, և որոյ սակս թէ զո՞րքան ցաւս և զվէրս սրտից կրէք, որ և յիրաւի մեզ ևս եզև ցաւ մեծ։ Քանզի ուրախութիւն է մեզ բարի լուրն և համրաւն՝ զոր զժոզովրդոց մերոց լսիցեմք, նոյնպէս և անբարի լուրն տրտմութիւն է մեզ մեծ։ Զի ըստ սրբազան Առաքելոյն Ճակովբայ՝ ուր հեռ է և նախանձ՝ անդ է անկարգութիւն և ամենայն իրք չարք։ Որպէս ահա պագ վէճդ՝ որ գոյ ի մէջ ձեր, ոչ յայլ ուստեքէ յառաջացեալ՝ եթէ ոչ ի նախանձու և ի հակառակութենէն։ Բայց արգ խնդիր ձեր այս էր ի մէնջ թէ զՊարոն Եզիազարէն ի սրբոյ Աթոռոյդ գանձապետէն և յայլ Հոգևոր և մարմնաւոր գործակալութենէ հրաժարեցոյ որ մեզ հանգստութիւն լինի և այլն։ Որք և այսու մըտօք գիր էիք առեալ ի Պարոն Եզիազարէն. որ այլ մի ձեռնամխեսցի ի նոյն յիշեալ գործն, և զօրինակն առ մեզ էիք յղեալ և տեսաք։ Իսկ յետ հասանելոյն առ մեզ այս Ի Թզթոցս ձերոց վերոյիշեցելոց, լուաք յեկողաց թէ՝ հաշտութիւն էք առեալ կատարելապէս և կայք սիրով և խաղաղութեամբ և ուրախացաք։ Սակայն՝ չիմացաք թէ՝ որպիսի կերպիւ էք արարեալ հաշտութիւն. և մեք զինչ գրեսցուք ձեզ։ Վասնորո՝ պատուիրեցաք Հոգևոր որգւոյդ մերոյ () խոհեմաշատ վարդապետիդ, զի ի գալն իւրում առ ձեզ վերահասու լիցի ամենից որպիսութեանց ձերոց, թէ զինչ է պատճառն այդքան վիճմանցդ ձերոց. կամ՝ թէ հաշտութիւն էք արարեալ յիրաւի, թէ գեռ ևս գոյ նոյն վէճն։ Կամ թէ այժմ կամ.ցիք հաշտիլ՝ դորին գիտութեամբ և վերահասութեամբն հաշտեցիք հաստատանապէս, և վերջացուսջիք զամենայն վէճան և հակառակութիւնսն։ Իսկ թէ ոչ կամիցիք հաշտիլ ապա՝ թէ զի՞նչ են ստոյգ կամք հասարակութեանդ ձերոյ՝ ծանուսջիք դմա լսեապէս զի եկեալ պատմեցէք մեզ։ Եւ յետ ծանուցանելոյ ձերոյ զայս ամենայն գմա ստուգութեամբ, ապա՝ նորապէս գրեսջիք առ մեզ զբազմակնիք Թուղթ և նմա ևս յայտնեսջիք զկամս հասարակութեանդ ձե.րոյ. և ձեռամբ վարդապետիդ առ մեզ յղեսջիք. զի և մեք ի Թզթոյ անտի և ի բերանոյ դորին գիտացեալ զմիտս և զգիտումնս ձեր՝ այնպէս արասցուք զի բարձցի ի միջոյ ձերմէ այդ դիւական վէճդ, և եզիցի խաղաղութիւն, և հաստատեսցի սէր զոր և մեք լուեալ ուրախասցուք՝ և օրհնեսցուք զձեզ. և յամօթ լիցի Թշնամին սիրոյ և խաղաղութեան և փառաւորեսցի Աստուածն։ Ահա այս է պատուէր մեր առ ձեզ վասն վիճդդ ձերոյ՝ որպէս և գրեցաք. զորոյ երկարապէսն պատմելոց է ձեզ Հոգևոր որդիդ մեր խոհեմարար () վարդապետդ։ Զոր և գուք լսելով և ըստ գրեցելոյս մերոյ առնելով՝ լիջիք հետևողք սիրոյ և խաղաղութեան։ Եւ կատարօղքդ Հոգևոր հրամանացս մերոց եզիջիք օրհնեալք Աստուծոյ և ի մէնջ. և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յաջմժամ։ Ամէն։ Ի ՌՄԼԱ, ի Հսկա.

V

Թուղթ շնորհաւորական, առ որդի Արքայիին վրաց Գէորգիին Միրզային, վասն յղելոյն նմա կայսերուհւոյն Ռուսաց ըզկաւալեր։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ՝ հանդերձ առատագիղ օրհնութեամբն Հօր Աստուծոյ, զուարճաբար ողջունիւ Միածնի Որգւոյ, և անսպառ սիրովն Հոգւոյն սրբոյ։ Այլ և՝ Արագահաս Օգնականութեամբք Շնորհօք և զօրութեամբ Միածնաէջ սրբոյ Ցեզուայս, և համայնից Աստուածակիր և սքանչելարար սուրբ նշանաց և սուրբ մասանցն՝ որք աստ

Ի վերայ Օրհնաժառանգ և բարեընձիւղ Ոստոյդ օրհնութեան, սիրեցեալդ իմոյ սիրով ճշմարտիւ ի Տէր, և սիրոզիդ յարաժամ օգաից Աստուածաէջ սրբոյ Աթոռոյս, քաջասոհմի և Արաքինազարմի, Արքայազնոյ և Թագաժառանգի, Արիաջանի և Թըշնամավանի, Աստուածասիրի և բարեպաշտութեամբ փայլեցեալոյ, Արքայորդի Գեօրգեան Միրզայիդ: Եւ Աստուածապահ Տան քումդ, և նովիմբ զօրացեալ Արքայազարմ Որդւոցդ՝ և ընտանեացդ համայնից: Հանճարեզ հաւատարիմ խորհրդակցացդ, և մըտերմագոյն սիրելեացդ. ինդալ ի Տէր յարազուարճ ցնծութեամբ: Ամէն:

(Շնորհք).

Եւ ընդ շնորհազեղուն օրհնութեան և ողջունատրութեան սիրածիր նամակիս, ծանուցանեմ լիցի բարեպաշտութեան քումդ: Զի ըստ բանի սրբազան առաքելոյն Պօղոսի՝ ըստ որում ոչ ուստեք է իշխանութիւն եթէ ո՛չ յԱստուծոյ, վասնորոյ՝ և ամենայն պարգեք և բարութիւնք որք յիշխանութեանց յառաջանան, ո՛չ յայլ ուստեքէն, եթէ ո՛չ յԱստուծոյ: Զի որպէս ամենայն իշխանութեանց և պետութեանց տուող կարգաւորիչ և հաստատիչ Աստուած միայն է, և զորս կամի բարձրացուցանել նոքօք, և զորս կամի խոնարհեցուցանել: Այսպէս և զամենայն գործս իւրահաստատ տէրութեանց և իշխանութեանց, սրբ ի յօգուտ և շինութիւն աշխարհի են, ի բարձրութիւն և՝ ի գովութիւն արժանեաց որդւոյ՝ և ի վրէժխընդրութիւն ներհակաց բարւոյ, և ի փառս իւրոյ անմահ թագաւորութեանն, նոյն ինքն Ամենաթագաւորն Աստուած է՝ որ անօրինէ և նախասահմանէ, առաջնորդէ և տայ առնել: Քանզի նա է՝ որ ուզոյն զճանապարհս սրտից նոցա՝ առնել զոր ինքն կամի, ըստ որում՝ և ասէ առ յղեալն Աստուածեզէն հոգւովն իմաստութեան թէ՝ որպէս ուռանիք ջրոց՝ նոյնպէս սիրտ թագաւորի ի ձեռս Աստուծոյ. ընդ որ կոյս կամի հայեցուցանել՝ դարձուցանէ զնա: Արդ՝ նոյն ամենայն բարութեանց տուօղն Աստուած՝ որ ըստ առաքելոցս օրինակաց՝ ի յաւուրց բարձրացուցանելոյ զբարեհոչակեալ ազգն Թագրատունեաց ի պատիւ՝ և յիշխանութիւն թագաւորութեան՝ պահեաց անազօտ և անուազելի զՊայծառափայլ ճրագ օրհնեցելոյ թագաւորութեան նախնեաց ձերոց մըշանջենական փառաց արժանաւորաց՝ յորդւոց յորդիս մինչև ցձեզ. (զոր և մինչև ցկատարած աշխարհի պահեսցէ դերազանց պայծառութեամբ աննուազելի և անթառամելիս) Նոյնինքն և այժմ շարժեալ առ քեզ ի բարիս զսիրտ մեծի և ինքնակալուհւոյ՝ Պայծառագունեզ և Ամենաբարեպաշտուհւոյ կայսերուհւոյն Ռուսաց, տուեալ է նմա մեծարել զքեզ և պատուել գերադոյն պատուով, յատկացուցանել յատուկ նշանաւ իւրոյ գերապայծառութեան. և բարձրացուցանել կրկին ճոխութեամբ զԱրժանավայելդ մեծի պատուոյ և մեծարանաց: Որպէս ահա առաքեալ է վասն Աստուծով զօրացելոյդ զնշան մեծադունի պատուոյ ի յԱստուածապահ Տէրութենէ իւրմէ, պատկեր զկաւալեր յատկացուցանօղ Արքայական յատկադոյն բարձրութեան, և յայտնի գերազանց սիրոյ և խնամոց իւրոց մեծութեան՝ որ առ քեզ: Զոր թէպէտ լսէաք յառաջադոյն և ուրախանայաք, այլ մինչ եկն ի սուրբ Աթոռս և առ մեզ հարազատ ծառայն քո Շաքարօն, պատմեաց մեզ բերանով զստուգութիւն և զորպիսութիւն դոյնոյ Արժանավայելուչ մեծարանաց քումդ բարեպաշտութեանն: Վասնորոյ՝ ցնծութիւն մեծ՝ և զուարճութիւն անբաւ մեզ ամենեցուն եղեալ՝ արար զմեզ ուրախալիս և բերկրալիս՝ և բարեզուարճ յամենայնի ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ: Քանզի՝ ուրախութիւնդ ձեր մեզ ևս է, որպէս և քո իսկ սիրտդ վկայէ: Մանաւանդ փառաւորութիւնդ ձեր և բարձրութիւն պատուոյ՝ խնդութիւն է մեզ և պարծանք մեծ: Ուստի ի ձայն օրհնութեան փառաւորեցաք զտնօրինող և զպատճառն ամենայն բարեաց Աստուած, որ զայդ վասն քոյ անօրինեաց, և շնորհեաց քեզ զյատկադոյնդ զայդ պատիւ ի ձեռն իւրահաստատ և ինքնակալուհի կայսրուհւոյն մեծի, Յորոյ զինամոցն գերազանցութիւն աննուազելի պահեսցէ ի քէն, և զամենափառաւոր Տէրութիւն և զիշխանութիւն նորին օրհնեսցէ օրհնութեամբ մեծաւ, և ևս առաւել բարձրացուսցէ, առնելով միշտ ահարկու և անխոնարհելի ընդ ծագս տիեզերաց: Եւ հանդերձ ծիրանածին

և Թագաժառանգ կայսերազարմ որդւովդ և թոռամբքն պահեսցէ երկար ամաւք և խաղաղական կենաւք, ի բարձրութիւն եկեղեցւոյ սրբոյ և ի պարծանս համայն երկրպագուաց խաչին կենսատուի։ Որ և զքոյդ բարեպաշտութեան զնորոգ և զյատկական պատիւդ բարձրութեան և զնշանդ կայսերաշնորհ զկաւալերդ զեղեցիկ, արասցէ շնորհաւոր և արդիւնաւոր։ Զորս և վայելել տացէ քեզ բարեաւ՝ խաղաղութեամբ և երկարաձիգ ամաւք. և ևս տեսանել պատուոյ և մեծարանաց ճոխութեան և բարձրութեան արասցէ արժանի։ Եւ հանդերձ Աստուածազօր և ամենաբարեպաշտ օրհնեալ Արքայ Հարդ՝ եղբարբք և ամենայն Արքայազուն ընտանեօք ձերովք՝ պահեցէ ի յատուկ խնամս գթութեան և ողորմութեան իւրոյ մեծի, տալով ձեզ զերկարութիւն կենաց, և զբարեյաջողութիւնս բազմապատիկս, հանդերձ խաղաղութեամբ և խնդութեամբ բարձրագոյն իշխանութեամբ և ահարկու տէրութեամբ, զերազանց քաջութեամբ՝ և բաբեգոյն յաղթութեամբ. ի փառս անուան իւրոյ սրբոյ, և ի զուարճութիւն սրտից հաւատացելոց իւրոց։ Ողջ լեր ի Տէր, զօրացեալ Խաչիւն սրբով համայն քոյայնովդ։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԼԱ թուղթ մերում, ի նոյեմբ. և ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ ի Բաքու առ. պ. Եղիազարն ի պատասխանի հնոյց թղթոց իւրոց՝ զորս այլ և այլ ժամանակի ղրեալ էր։ Եւ վասն վիճմանց տեղւոյն զոր ունէին ընդ ինքեան, զարձեալ նոյն միտք զոր զրեաց առ ժողովուրդսն տեղւոյ որ ահա ի վերդ է ի համար 696, 697։

Թուղթ ի Բաքու զարձեալ, առ սպարսն Զորաբարէլն, զոր ժողովուրդքն տեղւոյն բէդխուտայ կարղեալ ինքեանց՝ դրէլին զնմանել զշնորհակալութիւնս։ Որոյ աղաւաղ օրհնութիւն։ Եւ վասն վիճմանց տեղւոյն՝ այլ ևս ըստ նոյն մտացն, որպէս զրեցաւ ի վերդ հասարակ ժողովրդոց տեղւոյն և Եղիազարին։

Թուղթ ի յԱստեղդամ, առ Մասեհեան պարոն Ալէքսանն, եւ առ Սաւալանեան պարոն Առաքելն. նախ միամտութիւն վասն Զանգակացն՝ զոր յառաջագոյն տուեալ էին նոյն Առաքելն եւ զեանջեցի Մնացականն, որ այժմ վախճանեալ է։ Եւ զորպէսն աստ հասանելոյն եւ խարջիցն եւս ծանուցանելով. ապա եւ վասն նոյն հանգուցեալ Մնացականին, որ զմէկ Գալլիացի կին էր առեալ անդ յորմէ եւ ծնեալ էր դուստր մի։ Իսկի վախճանիլն՝ զամենայն ինչսն իւր նոցա էր տուեալ կտակաւ, որոց հոգաբարձուք էին սոյն Ալէքսանս եւ Առաքելս ըստ կտակի նորին. վասնորոյ՝ զրեաց սոցա այժմ, զի յընչից անտի քաժին հանցեն Աթոռոյս, յորդորելով զկինն. որում եւս զրեցաւ զիր վասն այսր, քանզի՝ ի մեր դաւանութիւնս էր եկեալ՝ ի պսակիլն ընդ Մնացականին. եւ այժմ՝ եւս ի նոյնս էր։


Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունի՝ օրհնութեան՝ և շնորհաց հանգերձ առատաձիր ողորմութեամբ և գթութեամբն Աստուծոյ, և հոգեպարար շնորհօք և զօրութեամբք Աստուածածէջ սրբոյ աթեղւոյս և համայնից Աստուածակիր սրբութեանցն՝ որք աստ, ի վերայ հարազատ և ճշմարիտ սիրելեացդ մերոց ի Քրիստոս՝ և ընիկ բարեկամացդ. օգտական և սրտացաւ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Զօրացելոցդ Տէրամբ Ցիսուսիւ, բարեպաշտիցդ և մեծահաւատիցդ. պերճապատուելցդ և խոհականացդ, Պարոն Ալէքսանիդ և Պարոն Առաքելիդ։ Եւ Աստուածապահ տանց ձերոց և բնակութեանց, որդւոց և դստերաց, ընտանետց և ազդականաց, սիրելեաց և բարեկամաց, ընչից և ապրանաց. և ամենայն ընդ օրհնեալ յարկաւ ձերով եղելոցն, խընդալ ի Տէր յարազուարճ ցնծութեամբ և ուրախութեամբ։ Ամէն։

(Շնորհք.)

Եւ ընդ ամենատատ օրհնութեանս Աստուածայնոյ ծանուցանեմ լիցի սիրելեացդ մերոց ի Տէր, և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յառաջագոյն ի կոչիլս մեր ի յայս աստիճան, գրեցաք յայդր

երկարապէս զմերոց անցից և զորպիսութեանց հանդերձ այսմիկ հարկաւորօք որ ինչ յայնժամ գրիլ պատշաճեցան։ Զոր և յղեցաք յայնժամ ի Զմիւռնի առ նուիրակ և առաջնորդ Փիլիպպոս Աստուածիմաստ վարդապետն հասուցանել առ ձեզ. զոր և հասոյց իսկ առ ձեզ։ Իսկ զկնի այնորիկ այլ ոչ եղաք ձեռնհաս ի գրել գոնէ առ ձեզ միայն զմերոց որպիսութեանց և զոր ինչ հարկաւորն էր, քանզի՝ պաշարեցեալ էաք յոգնակերպ զբաղանօք՝ և պէսպէս ցաւովք անձնամաշիւք, որք հանդիպէին մեզ ի յերիս ամս յայսոսիկ ի շրջակայ այլազնէից՝ (որպէս և միշտ պատահի), և ի մերազնէից ևս։ Զորս և դուք լուեալ էք ի հարկէ։ Իսկ այժմ՝ շնորհիւ և ողորմածութեամբն Աստուծոյ անցին ամենայն ամենեքեան. և կամք լաւապէս, ունելով սակայն (թէև և ոչ պէս յառաջ). զցաւսն որք ի շրջակայ եղելոց աստի, որք միշտ են՝ և անվերջանալիք։ Բայց և ի սիրելեացդ իմոց մինչև ցարդ ոչ ընկալայ զթուղթ ինչ որով գիտացեալ զձերոցդ որպիսութեանց՝ ուրախանայի։ Սակայն՝ սիրելի որդին մեր Փիլիպպոս Աստուածիմաստ վարդապետն գրեալ է միշտ զորպիսութեանց և զպարեկեցութեանց ձերոց՝ որովք ուրախացեալ եմք և բերկրեցեալ, և խնգրեալ իսկ Աստուծոյ պահել զձեզ յապրաժամ ի խաղաղութեան, ի յուրախութեան և ի բարեյաջողութեանն։ Որ և յանցեալ ամին յղեալ էր աստ զմեծ Զանգակն՝ զորս դուք սիրելիդ մեր Պարոն Առաքելդ՝ և հանգուցեալ Պարոն Մնացականն՝ հոգացեալ էիք ձերով արդեամբք և ուղարկեալ. ի լինիլ ձեզ սիշատակ հոգևոր ի սուրբ Աթոռոջս։ Որք ամբողջապէս և թարց պնաստուց հասին ի սուրբ Աթոռս յանցեալ տարւոջն ի հոկտեմբերի ելն. յորում աւուր առնէաք զձեռնադրութիւն եպիսկոպոսի։ Ուստի՝ ընդ հասանելն իսկոյն կանել ետուք ի զանգակատանն, և արարեալ զմեծահանդէս օծնախմբութիւնն և ուրախութիւնն՝ համայն միաբանիւք սրբոյ Աթոռոյս զձեզ օրհնեցաք, և զձեզ՝ և զհամայն ննջեցեալսն ձեր՝ սիշեցաք ի փրկարար սուրբ Պաարիարգոջն։ Եւ հայցեցաք Աստուծոյ առաջի սբրոյ իմման տեղւոյս նորին զգթութիւնս և ողորմութիւնս վասն ձեր։ Որ և ըստ իւրոյ ամենատես խնամոցն՝ հեղգէ առ ձեզ ղշնորհս մարդասիրութեան իւրոյ, ընկալցի զհոգևոր սիշատակս ձեր ի հաճոյս իւր։ և սիոխարէն սմին պարգևեսցէ ձեզ զառատ ողորմութիւնս և զբազմապատիկ վարձս, աստ՝ և յանանց կեանսն։ Եւ զհոգի հանգուցեալ Պարոն Մնացականին և ամենայն ննջեցելոց նորին և քոց՝ լուսաւորեսցէ նոյն բարեգութն Տէր, և հանգուսցէ այցելութեամբ ի լոյս երեսաց իւրոց, դասելով և պսակելով ընդ սուրբս և ընդ սիրելիս իւր։ Եւ զքեզ հանդերձ քոյոյնովքդ՝ և նորին յետոյ ամենայնիւք, պահեսցէ ի խնամս և յողորմութիւնս իւր, և փրկեսցէ յամենայն չարէ։ Իսկ արդ՝ և վասն ճանապարհական ծախուց Զանգակացն այսպէս գիտասցես։ Զի ի Զմիւռնոյ մինչև ցմեծն Պօլիս որ ինչ խարճեցեալ է, զայնս նախապէս հոգացեալ է սիրելին մեր և եղբայրն քո Պարոն Յովհաննէսն։ Եւ ի Պօլսոյ մինչև ցՏրապիզոն ի րերելն ծովով խարճեցեալ է ԼԸ ղուռշ, ձեռամբ Պարոն Մասեհին, զոր և առեալ է նա։ Իսկ ի Տրապիզոնու մինչև ցկարին, և անտի մինչև ցկարս, խարճեցեալ է ԻՃՂԱ ղուռշ. ղոր ի կարին հոգացեալ են գործակալք մեր. և գրեալ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն՝ ըստ հարկադրութեան նորին, և յետոյ մեզ ևս ծանուցին։ Իսկ ապա ի կարսայ մինչև ցսուրբ Աթոռս և մինչև ցկախիլն ի տեղին իւր՝ խարճեցեալ եղև կե ղուռշ մերով գիտութեամբ։ Որ ահա լինի ի Տրապիզոնու մինչև ցաստ խարճեցեալն ԳՃԾԶ ղրուշ։ Զոր և գրեցաք այժմ Պարոն Յովհաննիսին, քանզի յառաջ քան զայս ևս թէպէտ գրեալ էաք նմա, այլ գրողն սխալեալ՝ ուրիշ թիւ էր գրեալ դրամոյն, զոր մեք յայնժամ գովով ի մէջ զբազանաց՝ չէաք տեսեալ։ Իսկ այժմ մինչ իմացաք կրկին գրեցաք Պարոն Յովհաննիսին զուղիղն՝ որպէս ահա ի վերոյ գրեցաս, զի գիտասցէ և զայն հոգասցէ. մանաւանդ և միամտի ևս. զի գիտեմ որ յաղագս այնր սխալանացն ևս տարակուսելոց է։ Բայց արդ՝ որպէս ի վերոյ ասացաք, յաղագս մերոյ անձնամաշ զբաղանաց ոչ կարացաք շուտով գրել առ սիրելիդ մեր ըղթուղթ շնորհակալութեան և միամտութեան յաղագս առ մեզ հասանելոյն Զանգակացն,

տպա մինչ իմացաք զմահ լուսահոգի Պարոն Մնացականին, յերեսի՝ մեծ կսկիծ եղև մեզ, ըստ որում՝ ոչ ընկալաւ ի մէնջ ի կենգանութեան իւրում զթուղթ օրհնութեան և միամտութեան վասն Զանգակացն։ Այլ որ վարձատրիչն է ամենից բարեգործաց՝ բարեխնամօղն Տէր փոխանակ պսակ ուրախութեան և միխթարութեան որ ասա լինելոց էր նմա, անգ ի յանդրաւ կեանն ուրախացուսցէ զնա և միխթարեսցէ, վարձատրելով ընդ ճշմարիտ բարեգործացն։ Բայց և զայս ուրնիմ ասել ազնիւ սիրելեացգ իմոց ի կողմանէ լուսահոգւոյն։ Զի գրեալ էին մեզ և իմացաք, որ լուսահոգի Մնացականն զձեզ է կարգեալ հոգաբարձու ընչից իւրոց, զորս և ձեռամբ նօտարի գրեցուցեալ է ի վերայ կնոջն իւրոյ և փոքրիկ դստերն, առ ի Տ. Սանիլ նոցա ձերովդ հոգաբարձութեամբ։ Եւ զի յառաջագոյն թէպէտ ունեցեալ է ըզկտակ վասն սրբոյ Աթոռոյս և այլոց տեղեաց, այլ նորապէս ոչ ունի, վասն որոյ գրեմ սիրելեացգ իմոց, զի յորգորեսջիք զկին լուսահոգւոյն զբարեպաշտուհի և զմեծահաւատ Մարիա Աննա մադամսին, զի զլիալիր իմն բաժին տացէ սրբոյ Աթոռոյս ի յընչից լուսահոգւոյն առ ի յօգուտ հոգւոյ նորին, և ի բարի վարձառուիւն ինքեան ևս յԱստուծոյ։ Ահա մեք ևս գրեցաք առ ինքն զթուղթ օրհնութեան և մխիթարութեան վասն առն իւրոյ ի Տէր հանգուցելոյ. և զյորգորմունս ևս վասն այսր, զի շահեսցէ զսուրբ Աթոռս առատագոյն իմն բաժնիւ, որով և յայտնեսցէ զմեծութիւն սիրոյն իւրոյ՝ զոր ունի առ Աստուածաէջ սուրբ աթոռիս։ Ուրեմն՝ և դուք յորդորեսջիք զնա որպէս գրեցաք, ոլպէս զի՝ օգնութիւն իմն լիցի սրբոյ Աթոռոյս՝ ի նեղ և ի պակասաւոր ժամանակիս յայսմիկ և գուք ևս արժանասջիք վարձուց բարեաց։ Այլև՝ յատկապէս զայս ևս գրեմ սիրելեացգ իմոց, զի սիրելի որդւոյն մերոյ և հարազատ զաւակին սրբոյ Աթոռոյս Յովհաննէս խոհեմամիտ վարդապետին յամենայնի ձեռնտու լինիք և սիրով շահեսջիք և օժանդակեսջիք, զի և գա ուրախ սրտիւ և արիութեամբ զձեզ հովուեսցէ, և հոգևոր պաշտամանն իւրում և գործոյն՝ լիցի արի և ժիր։ Եւ զսիրանիշ և որպիսածանոյց գիր ձեր՝ հանգերձ յատուկ և ճշմարիտ հարազատութեամբ և օգտաջանութեամբ առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ միպակասեցուսջիք։ Որովք ընկալցիք զվարձս յԱստուծոյ, շնորհս ի սրբոյ Աթոռոյս, զօրհնութիւնս ի մէնջ յարաժամ։ Ամէն։ Գրեցաւ ի Ռոմ, ի նոյեմբ ։



Թուղթ վէրլուութեան և գործակալութեան ի Գիլան, Համադանցի սլարոն Ալէքսանին, կարգելով զնա վերստին գործակալ սրբոյ Աթոռոյս որպէս և էր յառաջմէ։

Թուղթ առ մեծին Պօլսոյ նուիրակ Միւռ։ վարդապետն, ի պատասխանի հրոյ թղթոցն իւրոց գրնցելոյ ի յուլիսի ԺԷ. ի յօգոստոս Ժ.Զ. և ի սեպտ. Ա. զանազան դիտմամբք ըստ իւր գրնցելոցն, որպէս ևհա տեսանին ի ներքոյ։

Ցորմէ սիրով իսկականաւ և ճշմարտիւ, կարօտիւ բազմաւ՝ Քրիստոսական ողջունիւ՝ և հոգևոր օրհնութեամբ գիտասջիր սիրելիդ մեր՝ հարազատ և բրանալան որդի սըբոյ Աթոռոյս՝ Մինաս Աստուածաբան վարգապետ։ Զի հասեալ են մեզ ի քէն չորք թուղթք, գրեցեալ ի յունիսի Ե. ի յուլիսի ԻԷ. ի յօդ. Ժ.Զ. և ի սեպ. Ա. որոց առաջնոցն զպատասխանիան սակս անձեռնհասութեան մինչև ցարդ յետացուցեալ այժըմ ամենիցն ի միասին գրեմ ահա՝ զպատասխանի նս։ Լուր ուրեմն։ Գրեալ էիր նախ զհասանիլն յայդր և առ քեզ ամենից թըղթոցն մերոց՝ զորս գրեալ էաք յայդր, և ի Բասրա, և ի Հալէպ և յայլ կողմունս, և զի զհետաւոր տեղեացն յղելդ յիւրաքանչիւր տեղիսն, և զյայդր գրեալն բաժանելդ ցիւրաքանչիւրսն, և զկոնդակն ընթեռնուլ տալդ յեկեղեցիսն, և զայլն ամենայն պարագայիւք իւրեանց։ Ընդ որս ամենեսեան եղաք սրտագիւր և ուրախացաք։ Նոյնպէս և զսիրելի եղբօրն մերոյ Պատրիարք Աստուածաբան վարդապետի զճշմարիտ սէրն որ առ մեզ և զօգտաջանութիւնն որ առ սուրբ Աթոռս, գիտացեալ բերկրեցաք սըր-

տիւ, որում և գրեցաք զգիր սիրոյ ւև շնորհակալութեան յառաջ քան ղայս՝ ի սեպտ. ԻԶ. ղոր ե. յղեցաք առ քեզ տալ ինքեան, ի հարկէ մինչև ցայժմ ևհաս յայդր։ Գրեալ էիր և ղտալդ ցեղբայրն մեր պատրիարքը Աստուածաբան վարդապետն ղԼուղեն մեր՝ զոր գրեալ էաք առ Ցովհաննէս Պատրիարքն։ Եւ նորա ընթեռնուլն ղայն՝ և ճըշմարիտ սիրով ցաւիլն, և խոստանալն ի հոգալ զՔերմանն կարնոյ՝ Ախալցխայու և կարսայ։ Ընդ որս և մեք ուրախացաք, և շնորհակալեցաք յոյժ ղյարգելի եղբօրէն մերմէ, թէպէտ ի Թուղեն զոր գրեցաք առ ինքըն ոչինչ գրեցաք ի կողմանէ նոցին. քանզի անպատշաճ վարկաք, ըստ որում առաջին գիրըն էր մեր սիրաբծարծ, զի լաց ի սիրոյ՝ և ի սէր յորդորելոյ, զայլինչ գրելն անվայել տեսաք։ Բայց՝ ըստ որում ինքն խոստացեալ է սիրով ի հոդալ և հարազատ որդի է սրբոյ Աթոռոյս և սիրելի եղբայր մեր, ի հարկէ զոր ինչ օգո՛ւտ գիտէ ծնողիս իւրոյ սրբոյ և մեզ զայն առնելոց է, իսկ որ գրեալ էիր զորպէսն հրկիզութեանն մեծի, եղև մեզ ցաւ անտանելի և սուգ. քանզի՝ յիրաւի անօրինակ էր, և էր լեալ երբէք պատահիկ ահագին հրկիզութիւն։ Ցեր լեցի մխիթարիչ Ժողովրդեան մերոյ, և մոռացուցանելով զամենայն կրեալ վիշտն, փրկեսցէ յապագայ գիպուածոց։ Արդ՝ ահա գրեցաք վասն այդր զկոնդակ մխիթարութեան ի վերայ օրհնեցելոյ քաղաքիդ և յղեցաք առ քեզ, զոր ընթեռնուլ տացես յեկեղեցին, և ի գիմաց մերոց զոզջոյն և զօրհնութիւնս տալով ամենեցուն՝ մխիթարեսցես։ Գրեցաք և զյատուկ Թուղեն մխիթարութեան առ ոմանս անձիս նշանաւորս՝ առ որս և խընդրեալ էիր. քանեաց ոմանց ևս մեք գրեցաք, զորս բաժանեսցես իւրաքանչիւրացն։ Բայց վասն Արևելցւոցն որ յատկապէս էիր խընդրեալ, մեք զայլմին մտածեալ՝ անպատշաճ վարկաք։ Վասն զի՝ իբրու խորթութիւն և օտարութիւն ինչ լինիւր յայդր՝ որոշելն ի հասարակէն։ Զի ահա զկոնդակն՝ որպէս և է օրէնն, հասարակապէս եմք գրեալ ի վերայ եկաց և բնակաց, Արևելականացդ և Արևմտականաց։ Սակս այսր պատճառի՝ չգրեցաք յատուկ որպէս խնդրեալ էիր։ Իսկ վասն նոցին առեալ նուիրակութեանն և գանձանակին որ գրեալ էիր՝ ի նոյն կոնդակողն ղշնորհակալութիւնս գրել որոշաբար. և ղմահտեսի կարապետի Դաւ. ղուռուշ ևս յիշել, այն ևս չթուեցաւ մեզ բարւոք՝ այլ ևս նոյն մտօքն։ Քանզի՝ չէ՛ սովորութիւն որոշաբար յիշել զառաս նուիրակութեանն ի կոնդակոջ և թէ այժմ լինէր՝ տեղականքն գայթակղէին ի հարկէ։ Իսկ յետոյ՝ ի հարկէ ի կոնդակոջ նոր նուիրակին գրելոց եմք ղշնորհակալութիւնս հասարակաբար վասն նուիրակութեան արդեանցն՝ զորս քեզ են առաքեալ. և այն է օրէնն։ Եւ վասն արդեանց գանձանակին՝ ահա յառաջագոյն եմք գրեալ ղշնորհակալութիւնս։ Նոյնպէս և Մահտեսի կարապետին՝ ահա յառաջ ղշնորհակալութիւնս եմք գրեալ վասն Դաւ. ղուռուշին։ Բայց և գրելոց եմ ևս նմա ինչ՝ յայնմ կողմանէ։ Քանզի՝ ըստ բազձանացն ահա նորապէս շինել եառաք զառուն որ ի մէջ պաւսպիս զչորս կողմամբքն շրջապատի. ևաց ազբիւրն, զի ցուրան վերաժամանեալ՝ էած խափանուիմ. զոր Աստուծով ի գարնանն նորապէս եմք շինեցուցանելոց։ Բայց զեկեղեցեայ և զՀանգակատան շրջապատող քարերն ըստ որում հնացեալ են ի տեղիս տեղիս, կամիմք նորոգել տալ ի գարնանն, որոյ սակս ահա և զբազմութիւնս քարանց տաշեցուցեալ՝ ունիմք ի պատրաստի, և նորոգելոց եմք։ Որոյ զծախան գրելոց եմ ինքեան, եթէ կամիցի տալ ի ընդ աղբերն և առուին այնևս իւրեան լիցի յիշատակ՝ բարի է, թէ ո՛չ, մեք ի մէնջ առնելոց եմք զծախս նոցին։ Ա.ր.ք. Մուրատեան Յակոբ Ամիրային Թէպէտ մխիթարութիւն գրեցաք վասն տան սյրմանն՝ որպէս և գրեալ էիր, այլ վասն միաբանելութեանն մեր վախուցից՝ զոչինչ գրեցաք. մինչև ըստ խոստանդ հոգալ տացես զգաւթարն, և առ մեզ յղեալ՝ զկոնդակն խնդրեսցես, ապա և մեք գրեալ յղեսցուք։ Եւ վասն ոմանց յիշատակաց և գրամեղէն գրոց՝ որ զԴաւթար էիր յղեալ՝ և զօրհնութեան Թուղեն խընդրեալ, ահա գրեալ յղեցաք որով կերպիւ և խնդրեալ էիր, որպէս տեսանելոց ես։ Նոյնպէս և Գալուստ վարդապետի սիահին զոր յղեալ էիր տեսաք, քան զոր յառաջ ինքն ևս էր խնդրեալ զմեզ Դաւթար, և զԹուղեն ինչ խնդրեալ։ Իսկ մեք յերկուց Դաւթա-

րաց անուանց որոց և սեռաւք պատշաճ
ասնոցիկ միայն գրեցաք այժմ զԹուղթս,
իսկ այլոցն՝ այժմ ոչ գրեցաք, յետոյ տես-
ցուք. որոյ զպատճառն ևս ինքեան յայտ-
նեցաք. և իւրեան ևս զորինչ վայելն էր՝
գրեցաք ըստ գրեցելոյգ, զորս և ահա մեկ
պահարան չինեալ՝ յղեցաք ի ձեռք քո
Ցզեա՛ ուրեմն առ ինքն, և ծանո՛ մեզ հան-
դերձ որպիսութեամբն նորին՝ և գործոյն։
Իսկ որ գրես թէ՝ զփոքրաւորն յղեալ էր
ի յոմանս գիւզորայս, որոց զարդիւնան լե-
րեալ ետ ինձ, և ես զնոցին որքանութիւ-
սըն յետոյ գրելոց եմ և զպակղ խնգրելոց,
ի հարկէ երբ գրեսցես, մեք ևս յղելոց
եմք զպակղն։ Այլև՝ ի ներկայումս գիր եկն
ի Ջմիւռնոյ, յորում գրեցեալ կայր վասն
Փիլիպպոս վարդապետին թէ՝ ի սեպտ. Գ
ելանելոց է աստի դէպ ի Թօխաթ։ Ի հար-
կէ նա այժմ ըստ այնմ գրեցելոյ՝ անցեալ
է յայսկոյս՝ կամ թէ ի Թօխաթ է։ Իսկ Ե-
սայի վարդապետն եթէ եկն յայդր, կամ
թէ ե՞րբ գնաց այտի ի վիճակն իւր՝ ծա-
նուսցես մեզ հանդերձ այլ մեզապատշաճ
որպիսութեամբք։ Մեսրօպ վարգապետն ի
վազուց եկեալ էհաս ասա, ի սեպտ.։ Բեր-
թուխեան Պետրոս վարդապետն ևս եկն է.
հաս ի սուրբ Աթոռս ի նոյ. Գ։ Զոր նա-
խապէս եդեալ ընդ Եպիսկոպոսաց՝ յղեցաք
ի գերեզման Հոգելոյս Հայրապետին. ուր
գնացեալ ասաց զՀայր սուրբն, և արձա-
կեցաւ։ Իսկ ապա առ մեզ բերաք. և մա-
տոյց մեզ զԹուղթ յարգելի եղբօրն մերոյ
Պատրիարք Աստուածաբան վարդապետին. և
քո, և օրհնեալ իշխանաց ոմանց, որք յա-
զագս նորուն բանից գրեալ էին մեզ։ Եւ
մեր սիրով բազմաւ զնա ընկալեալ, ի խուց
նստուցաք, և տանիլ ետուք ի դաս. և
ունիմք ըստ ամենայնի ի սէր։ Սակայն գեռ
ևս ոչինչ խօսեցաք վասն իւր բանիցն. զի
դեռ նոր եկն։ Ցորժամ խօսիցիմք. և ո՞ր-
պիսի կերպիւ և կայասցի միաք նորին. գրե-
լոց եմք քեզ։ Իսկ Տրապիզնցի Ծովհաննէս
վարդապետն ընդ Գէորգ տզային ել աստի
և եկն յայդկոյս՝ ի սեպտ. ԻԹ. զորոյ եր-
կարապէսն գրեցաք քեզ յառաջ քան զայս
ի սեպ. ԻԶ։ Այլ վասն Արապկերցի Ցա-
րութիւն վարդապետին զոր ինչ գրեալ էիր
յառաջ և յետոյ՝ զամենայն խնդացաք։ Ցորոյ
կոչմանէ այսպէս իմացիս զի ի միաբանու-
թենէ սրբոյ Կարապետին իւրաքանչեւր քար-
շեալ, ուխտեաց մեզ հաստատանապէս՝ աղեր-
սանօք և արզայիւ, թէ ես սրբոյն Աթոռոյս
եմ միաբան. այլևս բան ինչ ոչ ունիմ ընդ
սուրբ Կարապետի վանիցն։ Որ և հաւա-
ստացոյց ինձ՝ այլևս չգրել զրանս ինչ վեր-
գովարարս ի Մուշ՝ կամ յայն կոչմունսն,
ոչ հայի՛ և ոչ տաճկի։ Ապա և զգործ ևս
խնգրեաց ազերսանօք, և մեք զԱնկիւրիոյ
նուիրակութիւնն տուեալ ինքեան՝ յղեցաք
անդ։ Զկնի քանեաց աւուրց ելանելոյն նո-
րա աստի՝ ապա եկն էհաս Թուղթն քո յե-
տին յորում գրեալ էիր զտրտունջն տեզա-
կանացդ՝ որ զնմանէ։ Այլ սակայն եհաս
նա աստ զամենայն առիթս արտնջանաց դո-
ցին, և զմեզ միամտեցոյց, դու ևս զդոսա
միամտեցո. զի ահա այսպէս եզև բանն նո-
րին՝ զոր գրեցիր։ Իսկ Անկիւրիոյ հին նուի-
րակ Ցովհաննէս վարդապետին ազագաւ ևս
զգրեալսդ յետ և առաջ գիտացաք։ Այսինքն
զչտալն տալեացն. և առ քեզ մնալն թա-
մասուկիցն՝ և խալասին, և ի Թօխաթ
գնալն յԱռաջնորդութիւն։ Ինքն ևս անաի
գիր գրէ մեզ. այլ զաալեացն զոչինչ ասէ
երկար. այլ այսքան միայն թէ՝ զաալիքս
չեմ մոռացեալ, և աանանապատիկ հատու-
ցանելոց եմ։ Այլ գու որքան յայդ կող-
մունդ ես, ամացեն առ քեզ այդ թուղթդ
զի եթէ հասուսցէ առ քեզ զաալիան, գու
ևս տայցես զայդոսիկ ինքեան։ Իսկ եթէ
չտայցէ, ի հարկէ ըերելոց ես ընդ քեզ ի
սուրբ Աթոռս և առ մեզ։ Տեսցուք զի՞նչ
առնէ։ Բայց զայն զճՁ զուռուշ· եթէ ա-
ռեր ի սուզանաչի մահտեսի Տիրացու Ղա-
զարէն գրեա զի դիտացից. ապա թէ ոչ,
ջանա առնուլ, և մեզ գրեա ղորպէսն։ Աաեն-
ւոյ թղթոյն ազագաւ որ գրեալ ես յեզ-
միր՝ զի անտի յղեսցեն, լաւ ես արարեալ.
զոր և մինչ անտի ընկալցիս, յղեսցես աստ։
Քանզի՝ հաղիւ թէ ձեռնարկել կարացաք ի
տիպն և ահա ամացորդն Պարտավճարին
տպիւ Զկնի որոյ՝ և Աաենւոյ տպիլն սկսա-
նելոց է. քանզի կապարիայքն և ամենայն
պարագայքն կան ի պատրաստի, և այլ չէ
յետանալոց Աստուածով։ Երեք հակ իրդ
զորս յղեալ ես ի Կարին՝ հասեալ են անդ.
գրեցաք Հայրապետին յղել ասա. և որպէս

գրեալ ես, ինալոց է այնու կերպիւ մինչև ցգալդ։ Վասն Սչովու զորինչ գրեալ էիր՝ գիտացաք զամէնն, և բարւոք գրես, քանզի և մեք ի նոյն միտս և ի գիամունս եմք միշտ։ Բայց որպէս գրես. եթէ ի յայդր եղեալ Ոչովացւոցն կերպիւ ինչ հարցցես և տեղեկացին՝ թէ այժմ ի՞նչ միաս են, բարւոք առնես։ Որ և արասցես այսպէս։ և մեզ գրեսցես։ Մելքոն աղայի Ծ. ղուռուշն, և դօլրանդչի մանուկի Ի.ղուռուշն առնուլդ ևս գիտացաք։ Նոյնպէս՝ և զտպագիր Պօղոսի Ջճ. ղուռուշ փօլիցային տալդ իմացաք և միամտեցաք։ յորմէ փութրիկ իմն գիր եկեալ էր առ մեզ. զոր ահա առ քեզ յղեցաք, տուր ի տէրն իւր, Ջուղայեցի Տէր-Ծովհաննիսեան տիրացու Ստեփանին ե. Թէ ետուր ինչ, կամ Թէ տայցե՞ս, ծանուսցես մեզ։ Այլև՝ դերձակ Մահտեսի Կարապետան որ Ի. ղուռուշէ տուեալ քեզ՝ որպէս գրեալ էիր, և զգիր խնգրեալ գիտացաք։ Արդ՝ ահա որպէս և քեզ ասացեալ է, այդ գրամոյդ Ի. ղուռուշն իւր ուխտի դարպասն է, և Ի. ղուռուշն՝ Ամաստցի տիրացու Ծակորի տուեալն ինքեան վասն դարպաս տալոյ սրբոյ Աթոռոյս, զոր ինքն յառաջ խարճեալ էր և չէր հասուցեալ յԱթոռս, իսկ այժմ՝ ահա քեզ է հասուցեալ։ Մեք ևս կոչեցաք առ մեզ զնոյն տիրացու Ծակորն՝ որ է ի սուրբ Ծողակաթ և հարցաք վասն սիշեալ Ի. ղուռուշին. ասաց Թէ՝ մինչ ես եկի ի սուրբ Աթոռս, և տեսի՝ զի նա չէր տուեալ սրբոյ Աթոռոյս զայն իմ տուեալ Ի. ղուռուշն. ապա՝ ես զիմ դարպաս ետու լիապէս, և այժմ՝ այդ Ի. ղուռուշն ինձ պարտի հասանիլ։ Մեք ևս ետուք նմա զի զուռուշն. որոյ սակս և ինքն զմիամտուեալն գիր գրեալ առ Մահտեսի Կարապետան՝ ետ մեզ. զոր ահա առ քեզ յղեցաք. տուր ինքեան, զի միամտիցի։ Իսկ վասն իւր ի ղուռուշ դարպասին, ահա մեք գրեցաք ինքեան զԹուղթ շնորհակալութեան և միամտութեան, զոր տացես ինքեան։ Եւ վասն հանգուցեալ Մահտեսի Սիմէոնի ընտանեացն որ գրեալ էիր Թէ՝ եկեալ աստ կամին դաւի առնել, և այլն, յետոյ Թէ ո՛րպէս եղեւ. մեզ ծանուցես։ զԾովհաննէս պատրիարքի առաջնորդ գնալն Ամասիայու և Մարսուանու՝ գիտացաք. այլ որ գրես Թէ՝ ի հարկէ և նա գրելոց է քեզ, մինչև ցայժմ դեռ չեմք տեսեալ մեք ի նմանէ գիր, և ոչ մեք գրեալ։ Ծովակիմ պատրիարքն զշնորհակալութիւնս էր գրեալ վասն առնելոյն մեզ ի գող Սահակէն ղգողացեալ իրսն. զորս և շնորհեալ էր սրբոյ Աթոռոյս։ Բայց Ի ժամացոյցք գոյին ի մէջ նոցա, որոց սակս գրեալ էր Թէ՝ որովհետև և այլոյ ուրուք են, և ոչ մեր, յղեսցես առ մեզ զի տացուք նմա։ Եւ զի քանի աւուրբք յառաջ քան զայս՝ զՋուղայեցի Ոսկիփանոս վարդապետն յղեցաք ի նուիրակութիւն Ուռումելու, վասնորոյ՝ ետուք նմա կնքով, զի բերեալ յանձնեսցէ քեզ։ Որոց ի հասանիլն առ քեզ դու ևս նոյնպէս կնքովն առ քեզ պահեսցես. մինչև մեք գրեսցուք նմա զշնորհակալութիւնս՝ ի պատասխանի Թղթոյն, և յղեսցուք առ քեզ (զոր զկնի աւուրց ինչ գրելոց եմք և յղելոց.) յայնժամ և վասն ժամացուցին զորինչ գրեսցուք քեզ՝ այնպէս ես առնելոց։ Իսկ և՝ սիրելին մեր Մասեհեան պարոն Եսային որ զԱՀ ղուռուշն չէ առեալ, և ասացեալ է շահել այնու զՄիաբանն սրբոյ Աթոռոյս, ահա մեք ևս մինչ ընկալաք զգիրդ, ըստ հոգևոր բաղձանացն իւրոց ԵՒ Ի փարայ սահմանեցաք տալ ամէն ժամարարի, զի վասն իւր՝ և վասն ննջեցելոցն իւրոց քառասունք կատարեսցի, մինչև լրասցի ԿԱ ղուռուշն։ Եւ ղանուանս ծընողացն իւրոց, և իւրն, և եղբարցն՝ գրեալ ի Թղթի, դնել ետուք ի մէջ Խորհրդատետրին, զի յիշեսցեն ժամարարքն ուրում այժմ մեք անձեռնհաս եղաք ի գրել զյատուկ Թուղթ, դու զմինչ ողջոյն և օրհնութիւն տուեալ՝ այսպէս ծանուսցես՝ զի միամրտեսցի, յետոյ մեք ևս գրելոց եմք հանդերձ շնորհակալութեամբ։ Դարձեալ զայս ևս գիտացես, զի յառաջ քան զայս սրբոյ Երուսաղէմի նուիրակ Պետրոս վարդապետն որ էր ի Կարս, ետ մեզ յարդեանց նուիրակութեան Բ.Ռ.Ե.Ճ ղուռուշ, և մեք զապազ ետուք և փօլիցայ արարաք ի վերայ քոյ, զի դու յայդր տացես սրբոյ Երուսաղէմի վէքիլին՝ հասուցանել անդ։ Ի հարկէ մինչև ցայժմ փօլիցայագիրն այն հասեալ է առ քեզ՝ և տուեալ ես։

Դարձեալ և զայս իմա, զի ի Կաղզուան կային ծե տուն հեստեալք՝ հանդերձ միով

խմորեալ քահանայիւ Զորոց զՀամարձակութեանն բազոքեցին մեզ բազմակնիք թղթով յանցեալ ձմռանն ուղղադաւան ժողովուրդքն մեր որք անդ, և տեղւոյ վայսաւն ևս գրեալ էր մեզ. զորս և յզեալ էին առ մեզ ձեռամբ ուխտի բարեկեան քահանայի, որ ևս բերանով գանգատեաց մեզ ղլրութեանց նոցին։ Զորս ի գիտելն մեր՝ գրեցաք ի կարս առ Առաջնորդն՝ և առ Գէորգն, և նոցա ևս զսաստ, զի ուղղեսցին, և թողցեն զաղանդն զայն մոլար, ապա թէ ոչ, մասնեսցուք զանջանաց և տուգանաց՝ առանց խնայելոյ։ Ուստի՝ գնացեալ ի մէջ նոցա առաջնորդ Ցովհաննէս վարդապետին, խրատեալ էր զնոսա դառնալ յուղղութիւնն։ Նոքա ևս ուրով ընկալեալ ըզ խրատ՝ ուղղեցեալք էին. և տուեալ զգիր ուխտի, և պայմանեալ ևս՝ զի զկնի սրբոյ Զաքարիայ եկեսցեն ասա առ մեզ. և կատարեալապէս ուղղեսցին, և դաւանեսցեն զուղիղ դաւանութիւն եկեղեցւոյս մերոյ սրբոյ՝ և դարձցին։ Իսկ ապա ի պայմանագրեալ ժամանակին չըկարացեալք գալ, այժմ ի կէս լրման թղթոյս եկին ի սուրբ Աթոռս ընդ Առաջնորդին. այնու դիտմամբ զոր ասացաք։ Ցեսցուք որպէս առնեն, յորոց և մեք վերստին առնլոց եմք զգիր ուխտի։ Գ.ըցի զի գիտասցես։

Իսկ այժմուս՝ դիր առաք ի Հաշտարխանու նուիրակ և առաջնորդ Ցովսէփ վարդապետէն, ձեռամբ Թիֆլիզեցի իւզբաշի Ցարութիւնի որդի Եսայուն զոր լաւ ճանաչես, որ անտի եկն։ Գրեալ էր Ցովսէփ վարդապետն թէ՝ Սաղիմայ նուիրակ կարապետ վարդապետն ետ մեզ աստ չորս հարիւր թուման, որ է վեց հազար ղուռուշ Օսմանցու դրամ, և է արդիւնք Հաշտարխանու, Պետրբուրգու և Մոսկովու։ Զոր և ես ետուի դոյն գրաբեր Պարոն Եսայուդ, զի յետ հասանելոյն յայդը, զկնի եօթն ամսոց տացէ քեզ, զի և գու գրեսցես ի Պօլիս՝ հասուցանել յարդեանց սրբոյ Աթոռոյդ ի սուրբ Երուսաղէմ։ Իսկ ի գալն աստ Եսայուն, մինչ բերանով ևս [illegible]հարցեալ տեղեկացաք որպիսութեանն իրին, պատշաճ վարկաք գրել քեզ՝ զի տացես յայդր ջվերուհիշեալ գրամն, թէպէտ տակաւին մեզ չէ հասեալ գրամն, զի դեռ մէկ ամիս և կէս է անցեալ ի վաստյէն։ Վասնորոյ՝ գրեմ քեզ ահա, զի յառքեզ եղեալ արդեանցն սրբոյ Աթոռոյս վեց հազար ղուռուշ յանձնեսցես յայդր սուրբ Երուսաղէմի վէքիլին, գիտութեամբ ազնիւ սիրելւոյն մերոյ Մահտեսի Ցարութիւն Ամիրային, և ղապզ առնուցուս։ Եւ գրեսջիք եղբօրն մերոյ Ցովակիմ Պատրիարքին, զի թէ վասն յառաջագոյն փոլիցայ արարեալ Բ.ՌԵՃ ղուռուշին զոր յիշեցաք ի վերոյ, և թէ վասն գոյն յիշեալ վեց հազար ղուռուշիդ, գրեսցէ մեզ զմիամտութիւն՝ թէ առ մեզ էհաս, զոր և յզեսցէ առ քեզ. և գու առ մեզ յղեա։ Մանաւանդ առ նուիրակ կարապետ վարդապետն ես գրեսցէ զգիր միամտութեան, և ընդ գրոյն մերոյ առ մեզ յղեսցէ՝ զի և մեք յղեսցուք առ Ցովսէփ վարդապետն տալ նմա։ Կարապետ վարդապետն վասնայսր ևս գիր էր գրեալ առ Սաղիմայ վէքիլ Տիրացու Սարգիսն. յորում է Ցովսէփ վարդապետի ղապզն՝ զոր առեալ է նմա ի յառնուլն զդրամն։ Զոր և ըստ նորին թախանձանացն առ մեզ էր յղեալ Ցովսէփ վարդապետն՝ հասուցանել յայդր, զոր և ահա առ քեզ յղեցաք։ Ուրեմն՝ եթէ այժմ ևս տիրացու Սարգսին է վէքիլ նմա տացես. ապա թէ այլ ոք է, դարձեալ գիտութեամբ տիրացու Սարգիսն՝ տացես նոր վէքիլին։ Եւ մրուչ ղդրամն հասուցես ինքեանց լրապէս, ապա առնուցուս ղՑովսէփ վարդապետի Ղապզն՝ և յղեսցես առ մեզ։ Այլև թէպէտ ի վերոյ գրեցաք թէ՝ Գալուստ վարդապետին դիր գրեցաք, և զկնդրեալ թուղթն յղեցաք, բայց զի յոյժ պաշարեցեալ էաք բազմակերպ թղթագրութեամբք, վասնորոյ ո՛չ կարացաք այժմ հասուցանել զնորին թուղթն, և ո՛չ ղբոյդ խնդրեալ գանձանակաց թուղթն, այլ զմբխիթարական կոնդակն ղորքանեօք թղթով հասուցեալ էաք, ահա յղեցաք, զի մխիթարութիւն քաղաքիդ մի յետասցի՝ որքան նոր է անցեալ վիշտն. քանզի՝ մխիթարութիւնն ի ժամ սգաւորութեանն վայել է։ Իսկ ըզկնի սկսաւ աւուրց՝ ղբոյդ խնդրեալ գանձանակաց թուղթն՝ և գԳալուստ վարդապետի խնդրեալն ևս՝ Հոգալոց և յղելոց եմք։

Փուսուլայ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն, վասն ոմանց ինչ իրաց՝ որք ցուցանին ի նելսդոյ։

Զայս ևս առանձին ծանիր սիրելիգ իմ՝ Մինաս Աստուածծարան վարդապետ։ Զի ի յունիսի Բ. գրեալ թղթոջգ՝ խնգրեալ էիր զթուղթ օրհնութեան ի վերայ Հալապցի Ծարութիւնին և Աստուածծատուրին՝ որք յայդր։ Ցետոյ մինչ զնոցին մահսարն ևս յղեցեր որ էր պատասխանի մեր Թղթոյն, ընդ որում և յԱռաջնորգէն և ի պարոն Սահփանէն և ի գանձապետ Մինասէն ևս թուղթ, կամեաք և մեք գրել առ նոսա զթուղթ, նոյնպէս և Ծարութիւնին և Աստուածծատուրին՝ որպէս դու էիր խնգրեալ։ Ապա էհաս մեզ թուղթդ որ ի սեպտ. Ա. յորում գրեալ էիր վասն Առաջնորդին թէ՝ կամ գալ աստ՝ դարձեալ ընկալաք և զայն թուղթգ ևս՝ զոր ի սեպտ. ԻԲ. էիր գրեալ։ Ցորում ծանուցեալ էիր զՍսեցոց յայդր գալն, և զինչ խօսիլն վասն Հալապոյ. և դոցա վճիռ տալն թէ՝ եթէ կարիցէք ընդ ձեզ հաշտեցուցանել՝ դուք տիրեսջիք, և այլն։ Զայսոսիկ մինչ գիտացաք, անպատշաճ վարկաք գրել առ վերոյիշեալ անձինսն զթուղթս. և չգրեցաք, մինչև տեսցուք թէ՝ յոր կողմն շրջին, և ապա՝ թէ հարկաւորիցի, յոյնժամ գրեսցուք։ Ուրեմն՝ մինչ ի մի կողմն կայասցի բանն Նոցին, գրեսցես մեզ շուտով ամենիւք պարագայիւքն. զի և մեք յայնժամ ո՞ւմ, և կամ զինչ պատշաճն իցէ գրեսցուք։ Ասնաֆից գլխաւորացն ազագաւ գրեալ էիր յառաջ ի յունիսի Բ, թէ խաւնին յամենայն բանս և ի խորհուրդս, և այլն։ Եթէ այնպէս եկաց մեաց մինչև ցարդ, կամ թէ զիա՞րդ ևղև, ծանուսցես։ Վասն պատրիարքի ընծային որ գրես, ահա որպէս գրեալ եմ քեզ ի սեպտ. Ի.Զ ընդ Թղթոյ Պատրիարքի պժմ ևս այնպէս գիտասցես։ Զի մինչ սա գրեսցէ զպատասխանի Թղթոյն մերոյ՝ և տեսցուք զկերպն, կրկին գրելոց եմ շնորհակալութիւնս, և զպատշաճաւոր ընծայս ինչ քեզ գրելոց եմ, զի հոգացեալ ընծայեսցես ընդ Թղթոյն։ Եթէ շուտով և կեսցէ ի նմանէ Թուղթ՝ այնպէս եմ առնելոց որպէս գրեցի, և առ քեզ յղելոց զԹուղթն. ապա թէ յետասցի, ընդ նոր նուիրակին եմ յղելոց։ Սակս կարնոյ և կարսայ փարմանացն յառաջին Թուղթդ գրեցեր թէ՝ խոստանայ հոգալ, (որպէս և ի հասարակ Թղթոջգ գրեցաք)։ Իսկ ի սեպտ. Ա գրես թէ՝ յառաջ թէպէտ այնպէս, բայց այժմ այսպէս. և այլոց զայս ինչ է ասացեալ. և ես հետաքրքիր եմ ի յիմանալ զիսկն այսր աւուրեանն, և այլն։ Զայդոյրիկ ըստուգութիւնն եթէ իմացա՞ր, կամ այժմ այլևս ասէ՝ զնոյն, և ունի պարզ մտօք զկամս հոգալոյ զՔարժանս՝ թէ ո՛չ, գրեսցես մեզ։ Իսկ կարնոյ քաղաքն՝ այժմ առանց առաջնորդի է. զի որպէս և է սովորութիւն կարնեցւոց, զՂազար վարգապետն ևս մրոտեցին, այնու կեղտիւ դարձեալ՝ որով և զնեռսէսն. և սմինն այլ խըստագոյն։ Զոր և փութացուցեալ էին թէ՝ շուտ յԱթոռն գնալ՝ որ քաղաքս մի կրեսցէ զտուգանս. և նա ևլևալ եկն։ Եւ կայտակաւին այնպէս։ Մեք իւրու թահր արած և գժուաբացած և նոքա լուռ՝ և չքմեղ, որպէս և գրեալ էին մեզ քանի անձինք՝ զինքեանս արդարացուցանելով. զորս անպատասխանի թողաք. վերջապէս թէ ո՞րպէս լինիցի, գրելոց եմ քեզ։ Զայքանս այժմ գրեցի՝ զի գիտացեալ լիցիս. զի իցէ թէ՝ յայդր զայլև այլ ասիցեն։ Մահտեսի Մխիթար Ամիրային ևս ահա գրեցաք զգիր մխիթարութեան վասն այրման տանն՝ որպէս խընդրեալ էիր։ Բայց որ զառաջին գիրն տուեալ ես, և որք ներմանունցն փուսուլայից՝ դեռ չհայտնեալ, վասն չլինելոյն ի միջի այնր՝ որոյ սակս էին. յետոյ թէ երևեցաւ, և խօսեցա՞ր զայնս՝ ընդ որում խօսելոցն էիր և ո՞րպէս էառ քանն զվճիռ և զվճար՝ ծանուսցես։ Իսկ թէ չէ այժմ ի միջի՝ և ուր գիմեն յայտնի իցէ, գրեսցես մեզ. և զփուսուլայն և զայնոսիկ ծածկեալ աներևութացուսցես, չերերելով ինչ ումէք ի յայտ։ Այլև Սաղիմացւոց կամիլն յայգր վէքիլ հաստատել զթաքիրտաղցի Ծարութիւն վարգապետն՝ ըստ որում և ունեցեալ են ցարգ զվէքիլ. և զայն ևս կամիլն՝ զի զնուիրակութիւն հաստատեսցեն յայգր, և պատրիարքին և իշխանացն զայն չկամիլն ըստ որում չէ՛ լեալ ի բնէ, գիտացաք։ Որք թէ այժմ ևս նոյնպէս չկամին, կամ թէ զիա՞րդ, ծանուսցես։ Նոյնպէս իմացաք և զբարեմը-

Փուսուլայ առ Մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն, վասն ոմանց ինչ իրաց՝ որք ցուցանին ի նելսդոյ։

Զայս ևս առանձին ծանիր սիրելիգ իմ՝ Մինաս Աստուածծարան վարդապետ։ Զի ի յունիսի Բ. գրեալ թղթոջգ՝ խնգրեալ էիր զթուղթ օրհնութեան ի վերայ Հալապցի Ծարութիւնին և Աստուածծատուրին՝ որք յայդր։ Ցետոյ մինչ զնոցին մահսարն ևս յղեցեր որ էր պատասխանի մեր Թղթոյն, ընդ որում և յԱռաջնորգէն և ի պարոն Սահփանէն և ի գանձապետ Մինասէն ևս թուղթ, կամեաք և մեք գրել առ նոսա զթուղթ, նոյնպէս և Ծարութիւնին և Աստուածծատուրին՝ որպէս դու էիր խնգրեալ։ Ապա էհաս մեզ թուղթդ որ ի սեպտ. Ա. յորում գրեալ էիր վասն Առաջնորդին թէ՝ կամ գալ աստ՝ դարձեալ ընկալաք և զայն թուղթգ ևս՝ զոր ի սեպտ. ԻԲ. էիր գրեալ։ Ցորում ծանուսցեալ էիր զՍսեցոց յայդր գալն, և զինչ խօսիլն վասն Հալապոյ. և դոցա վճիռ տալն թէ՝ եթէ կարիցէք ընդ ձեզ հաշտեցուցանել՝ դուք տիրեսջիք, և այլն։ Զայսոսիկ մինչ գիտացաք, անպատշաճ վարկաք գրել առ վերոյիշեալ անձինսն զթուղթս. և չգրեցաք, մինչև տեսցուք թէ՝ յոր կողմն շրջին, և ապա՝ թէ հարկաւորիցի, յոյնժամ գրեսցուք։ Ուրեմն՝ մինչ ի մի կողմն կայասցի բանն Նոցին, գրեսցես մեզ շուտով ամենիւք պարագայիւքն. զի և մեք յայնժամ ո՞ւմ, և կամ զինչ պատշաճն իցէ գրեսցուք։ Ասնաֆից գլխաւորացն ազագաւ գրեալ էիր յառաջ ի յունիսի Բ, թէ խաւնին յամենայն բանս և ի խորհուրդս, և այլն։ Եթէ այնպէս եկաց մեաց մինչև ցարդ, կամ թէ զիա՞րդ ևղև, ծանուսցես։ Վասն պատրիարքի ընծային որ գրես, ահա որպէս գրեալ եմ քեզ ի սեպտ. Ի.Զ ընդ Թղթոյ Պատրիարքի պժմ ևս այնպէս գիտասցես։ Զի մինչ սա գրեսցէ զպատասխանի Թղթոյն մերոյ՝ և տեսցուք զկերպն, կրկին գրելոց եմ շնորհակալութիւնս, և զպատշաճաւոր ընծայս ինչ քեզ գրելոց եմ, զի հոգացեալ ընծայեսցես ընդ Թղթոյն։ Եթէ շուտով և կեսցէ ի նմանէ Թուղթ՝ այնպէս եմ առնելոց որպէս գրեցի, և առ քեզ յղելոց զԹուղթն. ապա թէ յետասցի, ընդ նոր նուիրակին եմ յղելոց։ Սակս կարնոյ և կարսայ փարմանացն յառաջին Թուղթդ գրեցեր թէ՝ խոստանայ հոգալ, (որպէս և ի հասարակ Թղթոջգ գրեցաք)։ Իսկ ի սեպտ. Ա գրես թէ՝ յառաջ թէպէտ այնպէս, բայց այժմ այսպէս. և այլոց զայս ինչ է ասացեալ. և ես հետաքրքիր եմ ի յիմանալ զիսկն այսր աւուրեանն, և այլն։ Զայդոյրիկ ըստուգութիւնն եթէ իմացա՞ր, կամ այժմ այլևս ասէ՝ զնոյն, և ունի պարզ մտօք զկամս հոգալոյ զՔարժանս՝ թէ ո՛չ, գրեսցես մեզ։ Իսկ կարնոյ քաղաքն՝ այժմ առանց առաջնորդի է. զի որպէս և է սովորութիւն կարնեցւոց, զՂազար վարգապետն ևս մրոտեցին, այնու կեղտիւ դարձեալ՝ որով և զնեռսէսն. և սմինն այլ խըստագոյն։ Զոր և փութացուցեալ էին թէ՝ շուտ յԱթոռն գնալ՝ որ քաղաքս մի կրեսցէ զտուգանս. և նա ևլևալ եկն։ Եւ կայտակաւին այնպէս։ Մեք իւրու թահր արած և գժուաբացած և նոքա լուռ՝ և չքմեղ, որպէս և գրեալ էին մեզ քանի անձինք՝ զինքեանս արդարացուցանելով. զորս անպատասխանի թողաք. վերջապէս թէ ո՞րպէս լինիցի, գրելոց եմ քեզ։ Զայքանս այժմ գրեցի՝ զի գիտացեալ լիցիս. զի իցէ թէ՝ յայդր զայլև այլ ասիցեն։ Մահտեսի Մխիթար Ամիրային ևս ահա գրեցաք զգիր մխիթարութեան վասն այրման տանն՝ որպէս խընդրեալ էիր։ Բայց որ զառաջին գիրն տուեալ ես, և որք ներմանունցն փուսուլայից՝ դեռ չհայտնեալ, վասն չլինելոյն ի միջի այնր՝ որոյ սակս էին. յետոյ թէ երևեցաւ, և խօսեցա՞ր զայնս՝ ընդ որում խօսելոցն էիր և ո՞րպէս էառ քանն զվճիռ և զվճար՝ ծանուսցես։ Իսկ թէ չէ այժմ ի միջի՝ և ուր գիմեն յայտնի իցէ, գրեսցես մեզ. և զփուսուլայն և զայնոսիկ ծածկեալ աներևութացուսցես, չերերելով ինչ ումէք ի յայտ։ Այլև Սաղիմացւոց կամիլն յայգր վէքիլ հաստատել զթաքիրտաղցի Ծարութիւնն վարգապետն՝ ըստ որում և ունեցեալ են ցարգ զվէքիլ. և զայն ևս կամիլն՝ զի զնուիրակութիւնն հաստատեսցեն յայգր, և պատրիարքին և իշխանացն զայն չկամիլն ըստ որում չէ՛ լեալ ի բնէ, գիտացաք։ Որք թէ այժմ ևս նոյնպէս չկամին, կամ թէ զիա՞րդ, ծանուսցես։ Նոյնպէս իմացաք և զբարեմը-

տօրէն խափանելն Պատրիարքին ղգալն ո-
մանց նոցին միաբանից աստ ի ձեռնադրիլ՝
առանց վկայականի իւրեանց պատրիարքին.
և կամիլն հանդերձ իշխանօքն, ղի Ցարու-
թիւն և Պետրոս վարդապետքն միայն եկես-
ցեն, որոց սակս և գրելն առ Երուսաղէմի
Պատրիարքն՝ ի սալն նոցա ղվկայական: Ե
Թէ այժմ ևս է ինչ ղնոցունց բան, կամ
Թէ նոյն երկուքն գալոց են՝ ծանուսցես: Փի-
սացաք նաև գասնիլն Պատրիարքին ընդ
քեզ միաբան յայսպիսի իրս, սրտիւ և կա-
մօք, և զօգուտն սրբոյ Աթոռոյս ջանալն:
Մանաւանդ՝ հաւանիլն գրեցելոցն մերոց ի
Թղթոցն՝ որ առ Յովհաննէս Պատրիարքն,
վասն արարմանց Յովակիմ Պատրիարքին և
վասն նուիրակի նոցին որ ի Հաշտարխան:
Եւ հաւանիլն ևս վկայականի օրինակին՝ ղոր
տալոց եմք նուիրակաց նոցին. և չհաճիլն
ընդ արարս նորին, և նեղանալն ևս ընդ
յղելն ղՄովսէսն ի Մոսկով. և կամիլն՝ ղի
ելցէ անտի: Այժմ՝ ևս Թէ ի նոյն կամն
և ի միտն է, կամ Թէ յայլ՝ ծանուսցես:
Նոյնպէս՝ և Յովակիմ Պատրիարքն յետ
հասանելոյն առինքն Թղթոյն մերոյ՝ (ղոր
տուեալ ես Տիրացու Սարգսին ի յղել. և
նա ասացեալ է քեզ՝ Թէ յղեցի.) եթէ
գրեաց ինչ յայգր զայնմանէ, ըստ որում՝
սակս վերոյիշեալ երացն էր այն: կամ Թէ
(ըստ որում գրեալ էր չափաղանցաբար առ
Եզիազարն,) եթէ գրեաց եպիսկոպոսօք և
վարգապետօք զԹուղթն ղոր խոստացեալ
էր ի գրել: կամ Թէ յայգր նորայինքն և
և կամ տեղականքգ ունի՞ն զգիտմունս կա-
տարելոյ զայնս՝ ղորս վասն նուիրակի նո-
ցին և Մովսիսին գրեալ եմք: կամ Թէ՝ ի
գիտմանց իւրեանց որ վասն նոցունց՝ (ղորս
ծածկեն,) ե՞կն ինչ ի յայտ և կամ դու
յայտնեցե՞ր ինչ զննգագործութեանցն իւ-
րեանց՝ բերելով յերեսսն, որպէս գրես: կամ
Թէ՝ մահտեսի Ցարութիւն Ամիրայն ասաց
ինչ քեզ ի կոզմանէ Թղթոյն մերոյ՝ ղոր առ
ինքն էաք գրեալ, և կամ՝ գու բացե՞ր ինչ.
և զպատասխանին ե՞տ՝ կամ տալո՞ց է՝ Թէ
ո՛չ: Եւ կամ ի Յովսէփ վարդապետէն և ի
Հաշտարխանու դատարանէն որ գիր է ե-
կեալ առ դոսա, ղի՞նչ յայնման է ելի վերս:
Զայսց ամենից գրեսցես մեզ՝ ղի գիտաս-
ցուք: Եւ յաղագս սոյն յիշեցելոցս ինա-
սուն որ ասես՝ չէ արժան այժմ զՅովսէփ
վարդապետն հանել անտի. Թէպէտ բարւոք
գրես, բայց և մեզ են ինչ միտք՝ որոց որ-
պէսզաբար եղերելոյն հայիմք, Զկնի որոյ՝ Թէ
բերելոց իցեմք զնա՝ և Թէ Թողլոց, քեզ ծա-
նուցանելոց եմք: Առ այժմ այսպէս գիտաս-
ցես: Այլ և Բասրայու Ստեփաննոս Աղայի և
Պարոն Յովհաննիսի առ քեզ գրեալ գերն և առ
Յովհաննէս պատրիարքն գրեցելոյ սաւատն՝
որք էին վասն Ղազարի կայիցն: Նոյնպէս՝ և
քո առ նոսա գրեցելոցգ զօրինակսն ղորս
յղեալ էիր՝ տեսաք, և իմացաք ղոր ինչ ի
նոսա գոյին: Իսկ՝ որ գրեալ էիր գրել առ
նոսա զԹուղթս՝ ըստ քոյգ գրեցելոց մե-
տացն. և զմխիթարուքիւն ևս Ստեփաննոս
Աղային՝ վասն մօրն. Թէպէտ բարւոք էիր
գրեալ. բայց զի գեռ ևս չիմացաք ինչ
զԳրիգոր վարդապետէն, Թէ եղեալ է ար-
գելօք ի Բասրա՝ Թէ ո՛չ. և ակնագէտ իսկ
եմք՝ ի սընդունիլ ի նմանէ զԹուղթս ի մեր-
ձակայ ժամանակի. վասն այն ոչինչ գրե-
ցաք անգ այժմ: Որպէս ղի՝ կամ զշամ-
բաւս ինչ ստոյգ զնմանէ լուիցուք. և կամ
զգիր ընկալցուք որպէս ասացաք, և յայն-
ժամ զորինչ պատշաճն իցէ՝ գրեսցուք. զի
իցէ Թէ՝ նա ևս իցէ գրեալ յայնմ կող-
մանէ զբան ինչ հարկաւոր: Մանաւանդ՝ ա-
ռա քեզ գրեալ են Ստեփաննոս Աղայն և
Յովհաննէսն վասն Զուղայու վանից միա-
բան Յակոբ վարգապետին՝ Թէ գնալոց է
յԱթոռն, և մեք զչինեզէնսն ընդ նմա յղե-
ցաք, և զԹուղթս ևս գրելոց և հատու-
ցանելոց եմք առ նա ի Բաղդատ՝ զի ընդ
ինքեան տարցէ ի սուրբ Աթոռն, և այլն:
Որ ի հարկէ երևելոց է ի մօտակայ աւուր-
քըս. և զնոցին խոստացեալ գրեանսն բե-
րելոց է. իցէ Թէ և ի Գրիգոր վարդապե-
տէն ևս գիր ունիցի, երբ եկեսցէ, և տես-
ցուք, յայնժամ ի հարկէ գրելոց եմք, որ-
պէս ասացաք: Եւ որ գրեալ են քեզ Ստե-
փաննոս Աղայն և Յովհաննէսն Թէ այսու-
հետև Ասլանին ձեռամբն եմք հատուցանե-
լոց քեզ զդրամս, և գու գրեալ եւ սակաւ
յղել՝ բարի ես արարեալ. ե օգտաւոր գիա-
մամբ: Արդ՝ Թէ զայլ ոք հաւատարիմ գըտ-
ցես յայգր՝ որպէս գրես, գրեա՛, զի նո-
րին ձեռամբն հասուսցեն քեզ յայգր: Ապա
Թէ՝ զայլոք ո՛չ գտցես, գրեա՛, զի Ասլա-

նիւն սակաւ սակաւ հասուսցեն քեզ, մին չև յեաղ ալրոք գացեր, և կամ խաչիկն եկեսցէ յայդր։ Եւ վասն Մարգարի աղեաց պակաս ձեացեալ Ի. Թումանից կՋ. փա. րայ պակաս փողին որ ասես թէ՝ Մահաեսի Գալսանն գրեաց Մարգարին. եթէ ի նմա. նէ եկն պատասխանի ինչ, և կամ գու ևս ի Բասրա գրեցե՞ր, և զպատասխանի ինչ առե՞ր ի նոցունց թէ ո՞չ, ծանուսցես մեզ։ Եւ վասն նոր փոլիցայիցգ այսպէս գիտեա, զի ահա Գ՚Ռ. ղուռուշն ղոր առեալ ես յայգր մահաեսի Ազամճանին և Գ՚Ռ ղու. ռուշ ևս՝ ղոր առեալ ես Ակնցի Թէլղի կարապետի որգի Փիլիպպոսին, որք լինին Զ՚Ռ ղուռուշ. հասեալ են ի կարին առ Պարոն Հայրապետան։ Նոյնպէս և ինքն Հայ րապետան ևս որ Է՚Ռ և Ա՚Ճ ղուռուշ փոլի. ցայ է արարեալ ի վերայ քոյ ի ձեռն Գ՚օ. րօյենց՝ և սլղոց, և դու յայգր առեալ ես, հասեալ է առ ինքն. որք եղեն ահա առ Պարոն Հայրապետան հասեալքն բոլոր՝ Ծ՚Ռ և Ա՚Ճ ղուռուշ, համեմատ քոյգ գրե. ցեալդն առ մեզ։ Որոց ամենիցն աղագաւ յա. ռուկ յառուկ ղղապղս էր խնգրեալ ի մէնչ Պարոն Հայրապետան։ Ուստի և մեք ահա գրեցաք վասն նոցին զ՚Ռ ղապղ և յղեցաք առ նա՝ զի հասուսցէ ի ձեռս քոյ՝ առ ի միամտութիւն քեզ։

Թուղթ առ Առաջնորդն և իշխանան Կար. սայ, վասն արձակման Ցէր Դէորդ երի. ցուն բանադրելոյ, որ եկն աստ և արձա. կեցաւ։

Թուղթ Առաջնորդութեան և Հայրութեան անասլատաց, ղոր ետ Գտուց անապատի Առաջնորդ և Հայր Մարկոս վարդապետին, մինչ բոտ խնդրոյ նոցին ձեռնադրեաց Ե. պիսկոպոս և կարդեաց նոցա հայր և Ա. ռաջնորդ։

Թուղթ առ իշխանան Վանայ, ի պատաս. խանի իւրեանց Մահսարին. վասն Գտու. ցու Անապատի Հայր Մարկոս վարդապե. տին. ղոր ըստ խնդրոյ միարանից նորին՝ և սոցին, ձեռնադրեաց Եպիսկոպոս, և արար Հայր և Առաջնորդ նոյն Անապատին։

Թուղթ շնորհակալութեան ի Գօլիս, առ Վանցի Պարոն Ասլանն, ի պատասխանի, շնորհաւորական դրոյն՝ ղոր դրեալ էր ընդ մահսարատար Պետրոս վարդապետին։

Թուղթ այլ ևս շնորհակալութեան ի Գօ. լիս, առ մահտեսի Եղիազար և մահտեսի Վարդերես Ամիրայան, նոյնպէս ի պատաս. խանի թղթոյ։ Եւ զի մահտեսի Վարդե. րեսն յաքսորս էին յղեալ ուստի և դար. ձեալ էր, վասնորոյ մխիթարութիւն ևս ղրեցաւ։

Թուղթ առ Գիլանու. Շահրանդարն Ռու. սաց. սէր և օրհնութիւն։ Ցիշեցուցանե. լով զսէրն և զիղձոց երթևեկն առաջին սրբազան Հայրապետացն մերոց՝ և անդ նստօղ Շահրանդարացն. և զնոյնս խնդրե. լով. և յանձնարարութիւն գործակալացն մերոց, և ամենից ի մերայնոցն որք անդ։

Թուղթ ի յԱմստէրդամ շնորհակալու. թիւն վասն արդեանց իւրեանց հասու. ցելոց յառաջագոյն ցԵսայի վարդապետն, եւ խոստումն եւս՝ զի ի զալ Փիլիպպոս վարդապետին՝ մինչ գիտասցէ թէ՝ զի՞նչ է հասեալ նմա յինքեանց, զրեսցէ եւ յայնժամ զշնորհակալութիւնս վասն այնր։ Եւ զի յառաջ քան զայս յղեաց վերստին զԵսայի վարդապետն ի նուի. րակութիւն եւ յԱռաջնորդութիւն Զմիւռ. նոյ՝ եւ սոցա եւս, զրեաց սոցա այժմ զպատուէր՝ կալ հնազանդ քանից նորին, եւ զարդիւնս իւրեանց առ նա հասու. ցանել։

Ցորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ . . . և այլն։

Նախ ի վերայ Աստուածախնամ և բա.

րեաճոխ երկրիդ Հօլանդիու, և ի դմին ե-
ղեալ Աստուածազօր Ամենաբարեպաշտ և
խաչապսակ Թագաւորին օրհնեցեալդ, և ամե-
նայն Արքայազարմ և Քրիստոսապահ ժա-
ռանգորդաց նոյնահաստատ Տէրութեանն իւ-
րոյ։ Ընդ որս՝ և ամենից հարազատ խորհըր-
դականաց իւրոց և Մտերիմ կուսակալաց, և
համայնից իսկ Զօրապետաց և Զօրագ։ Այլ
և՝ Տիրապահ և Զքնաղակերտ քաղաքիդ Ամս-
տերդամու, և ի դմա եղեալ Ճշմարտասէր
և ուղղադատ քաղաքակալաց և դատաւո-
րաց. և րնաւից իսկ պերճապատիւ և շքե-
ղափառ իշխանաց. և համայն իշխեցելոցն՝
որք ընդ ձեռամբ գոցին։ Եւ ապա՝ ընդ
սիրահաստատ տէրութեան գոցին, զետե-
ղեալ Մերազնէից ամենից, սիրելի և հո-
գևոր որդւոցդ մերոց, հարազատ և լուսա-
ծնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս՝ և Տէ-
րունի ժողովրգոցդ սորին, լուսաւորչակրօն
և միարանադաւան հաւատացելոցդ ի Քրիս-
տոս՝ որք կալք ի գոյն Աստուածանամ
քաղաքդ Ամստերդամ։ Ցորում կառուցեալ
քրիստոսահիմն եկեղեցւոյդ ձերոյ սրբոյ Հոգ-
ւոյ, և համայն սրբանուէր քահանայից՝ և
եկեղեցական պաշտօնէից՝ որք ի դմա։ Այլ
և՝ ամենից բարեպաշտօն իշխանաց, Հան-
ճարեղ վաճառականաց, և բնաւից Աստուա-
ծասէր անձանց, Մեծաց և փոքունց, Արանց
և Կանանց, ծերոց և տղայոց, երիտասար-
դաց և կուսից, խնդալ ի Տէր յարաժամ։
Ամէն։

(Շնորհք).

Եւ ընդ Շնորհապարգև օրհնութեան
և ողջունաարութեան սիրածիր նամակիս մե
րոյ՝ ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր
որդւոցդ մերոց, հարազատ զաւակացդ՝ և
Տէրունի ժողովրգոցդ սրբոյ Աթոռոյս Էջ-
միածնի։ Զի ըստ որում հարկ է ամենայն
առողաց շնորհակալիլ ղտուղացն բարեաց,
վասնորոյ՝ սրբազան Առաքեալն Պօղոս գրէ
ղշնորհակալութիւնս առ Փիլիպպեցիսն յա-
ղագս տրոցն նոցին՝ ասելով, այլ եմ ա-
ռեալ զամենայն, և առաւելեալ եմ, ընկա
լայ՝ և լի՛ եմ, ի ձեռն Եպափրոդիտեայ,
որէ՛ ի ձէնջ հոտ անուշից՝ պատարագ ըն-
դունելի հաճոյ Աստուծոյ։ Եւ զի սյսպէս
շնորհակալութիւն առ տուօղս բարեաց մա-
տուցանել արժան է առողացն. քանզի՛ որ
ո՛չ շնորհակալիցի վասն առեալ բարեացն
ղտուղէն ո՛չ է արժանի կրկին ևս առնլոյ՝
ըստ բնական իրաւանց, վասնորոյ՝ և մեզ
վայել է՛ այժմ՝ (որպէս և միշտ), շնորհա-
կալիլ զհարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս,
զմշտասաղարթ և զպողպատու բանաւոր աըն-
կոցդ սորին, զսիրելեացդ մերոց ի Քրիստոս
որք յամենայն ժամ շահէք զհաւատոյ Մայրս
ձեր զսուրբ Աթոռս՝ առատագոյն տբօքս։
Որպէս յառաջ քան զայս՝ մինչ սիրելի եղ-
բայրն մեր Եսայի Աստուածիմաստ վարդա-
պետն էր ի Զմիւռնի ի գործ նուիրակու-
թեան և առաջնորդութեան, հասուցեալ
էիք նմա՝ թէ նուիրական արգիւնք, թէ գան-
ձանակի արդիւնք, թէ Հոգեբաժին, թէ
Պարոն Աւաքելի տուեալ յատուկ ողորմու-
թիւնն, թէ Հանգուցեալ Ցովհաննէս վարդա-
պետի Հոգեբաժինն և թէ այլ յատուկ
տուրք ոմանց ոմանց ի ձէնջ՝ անձանց բա-
րեպաշտից, որք ամենեքեան էին ի միասին՝
ԱՒԸՃՂԳ ղուռուշ։ Զոր և նա հասոյց առ
մեզ և առ սուրբ Աթոռս Ուսաի՝ և ընկա-
լեալ զայն սիրով մեծաւ և շնորհակալու-
թեամբ յատուցաք անկարօտին Աստուծոյ. և
համայն միաբանիւք սրբոյ Աթոռոյս ըզ-
քեզ օրհնեցաք։ Զորս Տէր օրհնեսցէ միշտ
և զօրացուսցէ, և ընկալցի ղտուրս ձեր սի-
րով և քաղցրութեամբ ի հաճոյս իւր։ Արդ
ուրեմն՝ ասեմք ահա և մեք ըստ սրբոյն
Պօղոսի թէ զհոգևոր ղտուրսն ձեր յիշե-
ցեալ որ է ի ձէնջ հոտ անուշից՝ պատա-
րագ ընդունելի՝ և հաճոյ Աստուծոյ, ի ձեռն
եղբօրն մերոյ սիրելւոյ ընկալաք շնորհակա-
լութեամբ. որով լի՛ եմք և առաւելեալք,
շնորհակալք ղձէնջ՝ և օրհնողք միշտ ղձեզ։
Որք և ասեմք ղբան նորին երանելւոյ թէ՝
առաւօղն ամենայն բարեաց Աստուած լի ա-
րասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում
մեծութեանն, տալով ձիզ զփոխարէնն տրոց
ձերոց բազմապատկապէս ըստ հոգւոյ և
ըստ մարմնոյ։ Եւ լուսաւորեսցէ՛ զհոգիս հա-
մօրէն ննջեցելոց ձերոց. և հանգուսցէ այ-
ցելութեամբ ի լոյս երեսաց իւրոց։ Եւ ըզ-
ձեզ զամենեսեանն պահեսցէ անփորձս և
անսասանս յամենայնի, աճեցուսս հաւա-
տովք, և առաւելեալս ի գործս բարութեան,
ուրախալիս և զուարճալիս, փարթամս և
բարելիս. յառաջադէմս միշտ ի բարութիւնս՝

և բարեյաջողս ըստ ամենայնի։ Եւ ընկալ-
ցի յարաժամ ի խնամս և ի գթութիւնս
իւր հեզլով առ ձեզ առատապէս զշնորհս
մարգասիրութեան իւրոյ։ Իսկ և զորինչ յեա
այնորիկ հասուցեալ էք առ նուիրակ և
առաջնորդ Փիլիպպոս Աստուածիմաս վար-
գապետն ի Զմիւռնի, վասն նոցին ևս յե-
տոյ եմք գրելոց առ ձեզ զշնորհակալու-
թիւնս և զմիաժամութիւնս ի գալ Փիլիպպոս
վարդապետին ի սուրբ Աթոռս։ Ուր և ահա
զկնի սուզ ինչ աւուրց՝ մատնելոց է աստ,
քանզի ի վաղուց է ելեալ ի Զմիւռնիոյ՝ ի
գալ աստ։ Եւ զի նա աւարտեալ էր զգոր-
ծըն՝ և գալոց էր ի սուրբ Աթոռս, վասնորոյ
զսիրելի եղբայրն մեր Եսայի Աստուածաբան
վարդապետ վերստին նուիրակ և առաջ-
նորդ արարեալ օրհնեցելոյ քաղաքին Զմիւռ-
նիոյ և բոլոր վիճակաց նորին և ձեզ՝ ա-
ռաքեցաք անգ յառաջ քան զայս, հանդերձ
օրհնութեան կոնդակաւ և սրբարար Մեռո-
նաւ։ Բայց վասն անձեռնհասութեան մերոյ
որ գոյր մեզ յայնժամ՝ չկարեցեալ մեր գր-
րել առ ձեզ զայս օրհնութեանս մերոյ
թուղթ, այժմ՝ գրեալ յղեցաք առ նա՝ հա-
ռուցանել առ ձեզ։ Նախ առ ի միաժամու-
թիւն ձեզ՝ վասն արդեանցն ձերոյ ղոր հա-
սուցեալ էիք առ նա՝ և առ մեզ հասոյց,
որպէս և գրեցաք ահա ի վերոյ։ Եւ երկ-
բորդ զայս պատուիրեմ ձեզ ահա այսու
օրհնութեան նամակաւս մերով։ Որպէս զի՝
նորոգ նուիրակին և Առաջնորդին ձերոյ Ե-
սայի Աստուածաբան վարգապետին լինելով
ըստ ամենայնի հնազանդ լսողք և առնողք
լիջիք ամենից հոգևոր յանձնածին հրամա-
նաց նորին՝ զորինչ գրեսցէ առ ձեզ։ Եւ ի
յղելն նորին վասն ձեր՝ զհոգեւոր և զաս-
տուածագործ Մեռոնն սուրբ մեծաւ հաւա-
տով և կատարեալ յուսով և սիրով ընկալ
ջիք, և զփառս և զօրհնութիւնս հանդերձ
գոհութեամբ մատուսջիք Աստուծոյ՝ որ ար-
ժանացոյց զձեզ այդպիսւոյ երկնաւիր պար-
գևի իւրոյ։ Եւ զշմարիտ սէր և զհարա-
զատութիւնս ձեր զորս ունիք առ լու-
սատու Մայրս ձեր սուրբ Աթոռս և առ
մեզ՝ հաստատուն և անշարժ ունիցիք,
լինելով առատ ի տուրս ձեր հոգևորս՝ զորս
ապագ հաւատոյ Մօրս ձերոյ և մեզ առ ի
յօգնութիւն բազմադիմի պակասութեանց
մերոց, և ի յընդունիլ ձեզ զվարձս մե-
ծագոյնս յԱստուծոյ, և ի վայելել զհոգե-
ւոր Շնորհս սորին՝ և զօրհնութիւնս մեր։
Որք և այժմ՝ զտուրս ձեր նուիրակական և
առաջնորդական առատապէս ժողովել՝ առ ի
յօգնութիւն լուսատու Ծնողիս ձերոյ սրբոյ
Աթոռոյս ի պակասաւոր ժամանակիս, յզես-
ջիք առ սիրելի եղբայրն մեր՝ և առ Ծայրա-
գոյն նուիրակն և առաջնորդն Զմիւռնիոյ և
ձեր՝ Եսայի Աստուածաբան վարդապետն,
հանդերձ արդեամբք գանձանակին, և այլ
հոգեկան արօք՝ որինչ և ըղձիցի ի սրտից
ձերոց, զի և նա ի սուրբ Աթոռս հասուս-
ցէ։ Զոր ի յընկալնուլն մեր՝ գրեսցուք առ
ձեզ զթուղթ օրհնութեան և շնորհակալու-
թեան՝ առ ի միաժամութիւն ձեզ։ Որք և
ըստ սրոց և ողորմութեանց ձերոց՝ ըն-
կալջիք զհազարապատիկ և զբիւրապատիկ
վարձս յԱստուծոյ՝ աստ և ի հանդերձե-
լումն։ Եւ որքան պաշտօնք՝ պատարագք, ա-
ղօթք, սաղմոսերգութիւնք և շնորհարաշ-
խութիւնք որք ի սուրբ Աթոռոջս կատարի-
ցին՝ յայնցանէ՝ մեծ մասն և բաժին եղիցի
ձեզ՝ և համայն ննջեցելոցն ձերոց։ Ամէն։
Գրեցաւ ի ՌՄԼԱ. ի նոյեմբ.։



*Թուղթ առ Սահակաշէն կոչեցեալ եկե-
ղեցւոյ ժողովուրդսն ի Թիֆլիզ։ Վասն
վիճոյն՝ որ գոյր ի մէջ Աւագ երիցուն
իւրեանց Տէր Յովաչտուրին, եւ հէքիմ
Յովհաննիսի որդի Գրիգորին՝ որ եկե-
ղեցւոյն տէր ձեւանայր։ Թէ որպէս ե-
կին աստ երկաքանչիւրքն ի խնդրել
զպատաստան. եւ ինքն զի՞նչ վճիռ եւ
պատուէր ետ նոցա վասն սիրով կալոյ
ընդ միմեանս։ Եւ իւրեանց եւս պա-
տուէր՝ զի որպէս եւ եղեալ են սկայ-
ւան, յամենայն ամի ի լրանալ տար-
ւոյն՝ զեկեղեցւոյ հաշիւն ի Տէր Յովաչ-
տուրէն առցեն եւ Գրիգորն մի իշխես-
ցէ՝ տիրաբար՝ եկեղեցւոյն եւ եկեղեցա-
կանացն։*

Ցորմէ ժամանեսցի. . . և այլն։

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Ա-
ռաւածայնոյ ծանուցումն լիցի սիրելի և հո-

գևոր որգւոցդ մերոց՝ և Տէրունի ժողովրդոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի գիտէք ահա գուբ ամենեքեանքն, թէ Տէր Խաչատուր Ւաագ քահանայն ձեր՝ ղորքան աշխատութիւնս է կրեալ ի վերայ սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ, թէ զտեղիս յաւելցուցանելով վասն գործին, թէ զշինութիւնս առնելով, և թէ զանօթս և զյիշատակս բազմացուցանելով։ Գիտէք և զայն ևս լաւ. պէս, թէ հանգուցեալ հէքիմ Յովհաննիսի որդիքն և գա՝ ղինչ վէճս ունէին ընդ միմեանս յաղագս սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ։ Զոր ի գիտել գերաղնիւ սիրելւոյն մերոյ Տերամբ Յիսուսիւ ղօրացեալ Արքայորդւոյն, մինչ հրամայեալ է քաղաքիդ քահանայիցն և քէգխուգայիցն՝ զի զիրաւունս արասցեն, և նոյն յիշեալ հէքիմ Յովհաննիսի որդիքն խնդրեալ են Թողուլ մինչև Առաջնորդն եկեսցէ ի քաղաքդ, և նա Թուլատրեալ է, ապա՝ մինն ի նոցունց՝ որ է Պ. Գրիգորն, երեալ եկեալ էր ի սուրբ Աթոռս և առ մեզ՝ ի խնդրել զիրաւունս։ Զոր մինչ գիտացեալ էր Տէր Խաչատուրն՝ եկն և նա ի սուրբ Աթոռս և առ մեզ։ Եւ մեր կոչեալ զերկոսեանն ևս առաջի մեր, ի ներկայութեան Եպիսկոպոսաց հարցաք, և արդարարար զիրաւունս արարաք։ և տեսաք թէ իրաւունքն ի կողմն Տէր Խաչատուրին էր, զի որպէս և գուբ ևս գիտէք, ջանք և դիտումն Պ. Գրիգորին այն էր՝ զի եկեղեցւոյդ այդմիկ տիրապետեսցէ որպէս և իմացաք աստ յինքենէ նաև ի վկայական գրոյն ևս զոր Տէր Խաչատուրն ունէր ընդ իւր։ Ասկ՝ զի սոյն կամացս Գրիգորին և իւր եղբօրն ներհակ գտանիւր Տէր Խաչատուրն, որպէս զի՝ մի տիրապետեսցեն եկեղեցւոյն իբրև մարմնաւոր ինչ ժառանգութեան, ըստ որում ո՛չ հրամայեն կանոնք նախնեացն եւրանելեաց, վասնորոյ՝ անկեալ էր ի մէջ գոյացս խռովութիւն։ Այլ մեք՝ զոր ինչ պարտ էր ասելոյ՝ ասացաք երկաքանչիւրոցն, և խրատեցաք. և հաշտեցուցաք ընդ միմեանս. և պատուիրեցաք, զի սիրով ճշտացեն ընդ իրեարս՝ իբրև հայր և որդի, ո՛չ ևս յիշեսցեն զանցեալս, և նոր ևս առիթ կռուոյ և վիճոյ մի հանցեն ի մէջ իւրեանց։ Եւ թէ միւսանգամ ևս երևիցի նշան ինչ վիճոյ ի մէջ գոյա, ով ոք ի յերկուց այսի պատճառ իցէ լեալ վիճոյն, կրելոց է ի մէնջ զպատիժ ըստ արժանեաց իւրոց, թէ Տէր Խաչատուրն իցէ՝ և թէ Գրիգորն։ Եւ յատկապէս պատուիրեցաք հոգևոր որդւոյդ մերոյ Պ. Գրիգորիդ, զի թէ ինքն՝ և թէ եղբարքն իւր մի այլ ևս դիցեն զայս ի միտս իւրեանց թէ եկեղեցին ի ներքոյ իշխանութեան իւրեանց լինիցի. և կամ իբրև զմարմնաւոր մուլք և ժառանգութիւն գիտացեալ ինքեանց՝ կամիցին տիրել եկեղեցւոյն՝ և կամ իշխել եկեղեցականացն՝ որք ի գմա։ Քանզի՝ գիտումն եկեղեցի շինողաց այն է, զի հոգևոր յիշատակ լիցի ինքեանց, և ո՛չ թէ մարմնաւոր ժառանգութիւն և մուլք։ Եւ զի հոգևոր յիշատակ է, և տուն Աստուծոյ և ազատ ի մարմնաւոր իշխողութեանց, վասնորոյ՝ է ի ներքոյ հոգևոր իշխանութեան Հայրապետին, և ի նմանէ կարգեալ Առաջնորդին։ Ուստի՝ ո՛չ է արժան ումեք՝ աէր ձևանալ եկեղեցւոյ և ասել թէ՝ իմ է այս, և ես պարտիմ սմա տիրել։ Քանզի՝ ոչ հրամայեն կանոնք սուրբք, որպէս Հոգելոյս Հայրապետն մեր ևս գրեալ է յայգր վասն սոյնոյ բանի զԹուղթ կանոնական, և արգելեալ զայգ չար և հոգեվնաս սովորութիւն։ Վասնորոյ՝ պատուիրեցաք գմա, զի թէ ինքն՝ և թէ իւր եղբայրն մի իշխեսցեն այլ ևս աէր ձևանալ այդ եկեղեցւոյդ և կամ իշխել եկեղեցականաց. այլ իբրև զմի ի ժողովրդոց սրբոյ եկեղեցւոյդ լինիցին, և զոր ինչ վասն եկեղեցւոյդ այգմիկ խորհելի առնելի և կամ հոգալի բանք լինիցին, զորս եկեղեցւոյդ քէգխուայքն և երևելի անձինքն հոգալ և առնել կամիցին, դոքա ևս խառն լինիցին ի մէջ նոցա՝ իբրև զմի ի նոցանէ, և ոչ յատկացցեն տիրարար։ Զայս ամենայն որպէս գրեցաք, այսպէս պատուիրեալ եմք Տէր Խաչատուրիդ և Պ. Գրիգորիդ։ Վասնորոյ՝ և ձեզ գրեցաք զի գիտասջիք։ Այլև՝ զայս ևս պատուիրեցաք հոգևոր որդւոյդ մերոյ Տէր Խաչատուր խոհեմամիտ քահանայիդ, զի արի և ժիր լիցի ի հոգևոր պաշտօն Աւագ քահանայութեան իւրոյ. և հաւատարմաբար սպասաւորեսցէ սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ։ Մանաւանդ՝ յամենայն ամի ի լրանալ տարւոյն՝ ասցէ ղՏաշիւն սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ՝ գիտութեամբ Առաջնորդին՝ և քա-

հանապազ եկեղեցւոյդ, և ի ներկայութեան օրհնեալ իշխանաց և քեզխուզպայիցն՝ որք ի դմա, որպէս և դուք ես պայմանեալ էք զինքն այսպէս։ Եւ ով ոք հոգաբարձու իցէ արդեանց եկեղեցւոյդ՝ նմա յանձնե ցեալ լիցին արդիւնքն, և նորին հաշիւն լս ի սարւոջն միանգամ ասացի։ Որպէս զի սոցա թեթեւութիւն լիցի, և եկեղեցւոյդ օգուտ, և ձեզ ևս միամտութիւն։ Եւ զի այս ամենայն դրեալքս մեր՝ են վասն հոգևոր օգտից ձերոց, և սակս հոգևոր պայծառութեան սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ, վասնորոյ՝ պարտիք դուք ամենեքեան ջատագովք լինիլ սոցին՝ ի լինիլ այսպէս. զի մի այլ ևս ծնցի խռովութիւն ի մէջ ձերում, պլ հաստատեսցի սէր, և արմատացի խաղաղութիւն. որովք և Աստուած փառաւորեսցի, և դուք բարեպէս կառավարիջիք, զորս և մեք լուեալ՝ ուրախացուք։ Եւ կատարօղքդ հոգևոր հրամանացս մերոց՝ եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի Քրիստոս և Շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի հանապազ։ Ամէն։ Ի ՌՈՄԱ, ի դեկտ.

Վասն Երնջակու սուրբ Կարապետին մինչ Առաջնորդ կարգեցաւ Գաղեցի Յօհան վարդապետն և յետոյ հրաժարեցաւ, և փոխանակ նորին՝ նոյն վանից միաբան Ստեփաննոս վարդապետն Աստապատցի կարգեցաւ Առաջնորդ, և ընդ իշխանացն անդաւտ եկելոց յղեցաւ անդ, այսքան բանս միջակեալ եղև ի կոնդակն Ստեփաննոս վարդապետին։

Թուղթ առ Հալապու Առաջնորդ Մինաս վարդապետն, սակս հասարակ թղթոյն բաղմակնքոյ՝ զոր հասարակութեամբ գըրեալ էին, և զօրհնութեան թուղթ խրնդրեալ։ Յետ լինելոյն իւրեանց ս. Աթոռոյս վիճակ յառաջ քան զԴ ամս, և որոշելոյն ի Սսոյ։ Որք և յանցեալ ՌՄՂ թուոջն և ի մայիսին՝ կարգեալ էին զդանձանակ յանուն սրբոյ Աթոռոյս։ Առ որս գրեցաւ այժմ շնորհակալութիւն և օրհնութիւն, որպէս և ի վերոյ ի 485 և ի 565 համարսն ասացաւ։ Ուստի՝ ե սմա շնորհակալութիւն դրեցաւ, և պատուէր՝ կալ հարաղատ սրբոյ Աթոռոյս, և զժողովուրդսն ևս ի նոյնս պահել, և հեռի պահել ի հերձուածողաց, և զոլ ջատագով հաւատոյ։ Եւ այլ տո սոյնս պատուէրք։

Թուղթ ի Թիֆլիզ, առ Բ Ջաքարօսն, որք էին Մաքսապետք, շնորհակալութիւն վասն հարաղատութեանցն որ առ սուրբ Աթոռս, և ևս պատուէր՝ յաւելուլ զնոյնս։

Թուղթ շնորհակալութեան վասն հասեալ ողորմութեաւց, այսինքն քառանիից, խոստմանց, և այլ նմանեաց։

Թուղթ շնորհակալութեան, և մխիթարութեան ևս, առ այնպիսիս գրելի, որոց ընտանի որ վախճանեալ իցէ. և նոյն վախճանօղն կտակ ևս իցէ արարեալ սբոյ Աթոռոյս և իւրեանք տուեալ իցեն զայն։ Որ այժմ դրեցաւ ի մեծն Պօլիս, առ Մարկոսն և Ալէքսանն։ Զի հայրն Մարկոսին Մարտիրոս Ամիրային էր վախճանեալ, և Մարկոսն և Ալէքսանն՝ էին ի ներքոյ ձեռաց մահտեսի Յարութիւն ամիրային։

Թուղթ առ իշխանն Կարնոյ, ի պատասխանի երկուց մահսարացն իւրեանց, որք խնդրեալ էին յղել վասն ինքեանց զԱռաջնորդ՝ որ յղեցաւ իսկ։

Թուղթ առ քահանայսն Կարնոյ, ըստ մըտաց վերոյիշեալ թղթոյն իշխանաց, զի սոքա ևս յատուկ մահսար էին դրեալ և խնդրեալ զի զԱռաջնորդ յղեսցէ։

Թուղթ առ Գեանջեցի հանգուցեալ Մնացականի կին Մարիա Աննա մադամային ի յԱմստերդամ, որ էր աղղաւ Փռակսիդ, այլ դարձեալ էր ի մեր դաւանութիւն և ապա պսակեցեալ ընդ Մնացականին, որ

և այժմ ի մեր դաւանութեանս էր, խոստացեալ ևս՝ մինչև ցմահ ի սոյնս մնալ։ Որում գրեցաւ մխիթարութիւն վասն մահուան առն. և օրհնութիւն վասն ի դաւանութեանս մեր դառնալոյն. և յորդորսումն՝ տալ բաժին սրբոյ Աւետեաց երկիր։

Թուղթ յանձնարարութեան վասն նուիրակի ի Մեծն Պօլիս, առ գլխաւոր իշխանապետս և իշխանս՝ ուրոյն, որոց և էրն ի դէպ գրել։

Թուղթ յանձնարարութեան դարձեալ, առ հասարակ իշխանս և նշանաւոր անձինս գրելի՝ վասն նուիրակի։ Թեթև օրինակ։

Թուղթ առ Ագուլեցի Պարոն Գէորգն և Աստուածատուրն ի պատասխանի երից թղթոցն իւրեանց՝ զորս ընդ Պետրոս վարդապետին նոմոսարերի և յետ նորին գրեալ էին, յաղագս այլ և այլ դիտմանց՝ զորս գրեմ ի ներքոյ ի պատասխանոջն իւրեանց։

Թուղթ ի Զմիւռնի, առ Արրօզլի Աստուածատուր և Ամաքել Ադայան, շնորհակալութիւն և օրհնութիւն վասն ոսկեայ սկրհուոյն՝ զոր յղեալ էին վասն հոգւոյ եղբօրն իւրեանց Գալուստ Ադային հանգուցելոյ, և յանձնարարութիւն վասն Եսայի վարդապետին, զոր այժմ յղեաց անդ ի նուիրակութիւն և յԱռաջնորդութիւն։



1783



ՈՒՂԹ Ի ՊԵ-
*տրոպօլէ, առ Պա-
րոն Յովհաննէս Ա-
ղայն Շղիազարեան.
ի պատասխանի թղ-
թոյն՝ զոր գրեալ էր
ընդ Տօքտօր Շակու-
բին, ծանուցանելով
որ ինչ գրեցաւ Քնէազն, եւ այլն, որ
պէս տեսանի ահա ի ներքոյ։*

Յորմէ ժամանեցի. . . եւ այլն։

Եւ ընդ Աստուածային օրհնութեանն՝ ծանուցումն լիցի Ազնիւ սիրելւոյդ իմոյ՝ և հարազատ որդւոյ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի թուղթդ սիրածիր՝ զոր գրեալ էիր ի Մոսկովու ի 1782 թուոջ Փրկչին՝ և ի սեպտ. Է, էհաս առ մեզ ընդ սիրելւոյն մերոյ Տօքտօր Պարոն Յակոբին, և իմացաք զամենայն գրեալդ։ Որոց և զլիաւիրն ի նորին բերանոյ լուաք. այսինքն, զմեծութիւն խնամոց Աստուածասպասակեալ կայսրուհւոյն և պայծառափայլ Մեծի իշխանին որ առ. ազգըս մեր տառապեալ, և առ սուրբ Աթոռս, և առ մեզ։ Որ և հասոյց առ մեզ զաղնիւ պարգևն Մեծի իշխանին, զկանակուռ և զգեղեցիկ Խաչն հանդերձ թղթով նորին։ Զոր շնորհակալութեամբ ընկալաք, և օրհնեցաք զԱստուածապահ սէրուբիէն ինքնակալուհի Կայսրուհւոյն մեծի, և ժառանգորդացն իւրոց օրհնեցելոց, և զյաւուկ հոգածուն ազգի մերոյ զգերապայծառ Քնէազնւոյս։ Զորս ընդ երկայն աւուրս արասցէ Տէր, պահելով միշտ յազթօզս ի վերայ թշնամեաց Խաչին Քրիստոսի, ի պայծառութիւն եկեղեցւոյ սրբոյ։ Արդ զքոյդ ևս ջան և ըզդիտումնս բարիս՝ թէ ի թղթոց հոգևոր որդւոյն մերոյ Յովսէփ արքեպիսկոպոսին. թէ ի քոյգ գրոց՝ և թէ ի գրաբերիդ բերանոյ՝ լաւապէս գիտացաք, որպէս և յառաջ իսկ ընդ ընդ Յովսէփ վարդապետին թղթոց միշտ իմացաք։ Առ որս ոչինչ գոյ մեզ այժմ ասել, բայց թէ խնդրել յԱստուծոյ՝ զի ամենաքաղցր գթութեամբն իւրով գթասցի ի տառապեալսս, և զյաւուկ խնամածուդ մեր ընդ երկայնաւուրս արասցէ, տալով հանդիպիլ կատարումն յուսոյն բարւոյ՝ զոր յուսացեր ի նորին գթութեանց։ Եւ որինչ առ պայծառափայլ իշխանն մեծ ըստ իւր գրեցելոյն համեմատ ձերոցն պատկանէր, գրեալ ահա առաքեցաք ընդ նոյն ըժիշկ պարոն Յակոբ սիրելւոյն մերոյ։ Զորմէ ըստ արժանւոյն շահեալ՝ և զոր ինչ պատշաճն էր՝ խօսեցեալ՝ ուղղութեացաք։ Յորմէ իմանալոց ես ահա զլիովինն։ Գրեցաք նաև առ պայծառափայլ իշխանն թէ՝ զորինչ յաղագաւ մերոց հարկաւորութեանց և օգտից ծանուսցեն մեծութեան ձերում Յովսէփ արքեպիսկոպոսն, և Եղիազարեան Յովհաննէս և Տօքտօր Եակուբն, խնգրեմ լսել քաղցրութեամբ, և այլն։ Ուրեմն մինչ սե-

զեկասջիք ի պարոն Յակոբէդ՝ զոր ինչ և ընարիցէ խոհեմութիւն ձեր արասջիք այնպէս զի Թարց ստրջանալոյ լիցի։ Մնաս. ջիք ուրեմն այդու Հանդերձ յանձնեցեալք ի խնամս Տեառն, յոր և լիցիս ողջ և զօրացեալ միշտ քոյսյնովքդ։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԼԲ, ի յունվարի ԺԷ։

Թուղթ առ Մանիչարենց Աստուածատրևան պարոն Մարգարն եւ Փիլիպպոսն, դարձեալ ի Պետրպօլք, ի պատասխանի իւրեանց թղթոյն, նման վերոյ գրեցեալ թղթոյդ, հանդերձ այլովք որպէս ցուցանի։

Յորմէ ժամանեացի Թուղթ սիրոյ՝ ողջունի օրհնութեան և շնորհաց հանդերձ ամենատատ ոգորմութեամբն Աստուծոյ՝ և շնորհիւ Աստուածածէջ սրբոյ Տեղւոյս, և համայն հրաշագործ սրբութեանցն որք աստ ի վերայ սիրելեացդ մերոց ճշմարտիւ՝ և ստոյգ հաւատարմաց, և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս՝ բարեսիրացդ և բարեպաշտիցդ, պարոն Մարգարիճ և պարոն Փիլիպպոսիդ։ Եւ Աստուածապահ տան ձերում և բնակութեան, որդւոց և դստերաց՝ և համայն ընտանեաց, սիրելեաց և բարեկամաց, ընչից և ազգականաց, և ամենայն ընդ օրհնեալ յարկաւ ձերով եղելոցն, խնդալ ի Տէր միշտ։ Ամէն։

(Շնորհք)։

Եւ ընդ ամենատատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցանեմ լիցի սիրելեացդ ի մոց ի Քրիստոս՝ և օգտասէր որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ի 1782 Թուոջ Փրկչին և յօգոստոսի 23 գրեալ Թուղթըն ձեր առ մեզ ժամանեաց ընդ սիրելւոյն մերոյ Տօքտօռ պարոն Յակոբին։ Եւ իմացաք զոր ինչ գրեալ էիք երկարապէս ի պատասխանի մեր գրեցելոյն առ ձեզ յառաջագոյն և զոր ինչ նորապէս էիք ծանուցեալ, զայնս ևս իմացաք, զորս և որգին մեր Յովսեփ Արքեպիսկոպոսն ևս գրեալ էր։ Որոց և զլիալիրն ի նոյն բժիշկ պարոն Յակոբէն ծանեաք։ Որ և մատոյց մեզ զսիրանիշ պարգեւն Պայծառափայլ Քնէազին, և զգիրն նորին, որովք ո՛չ սակաւ միխիթարութիւն և զգիւրութիւն սրտից գտաք, և օրհնեցաք զԱստուածապահ տէրութիւն ինքնակալուհի մեծի կայսերուհոյն և Աստուածապարգև ժառանգորդացն իւրոց, և զյատուկ խնամածուն մեր զՊայծառափայլ Քնէազին։ Զոր պահեսցէ Տէր երկար ամօք և յամենայնի բարեյաջողութեամբ ըստ սրտից իւրեանց՝ ի պարծանս հաւատացելոց։ Արդ՝ ահա զոր ինչ ի դէպն էր, գրեցաք առ Գերապայծառ մեծ իշխանն՝ հանդերձ շնորհակալութեամբ, որոց ղլիալիրն ի գոյ բժիշկ պարոն Յակոբէդ իմանալոց էք։ Որ և յաղագս սիրոյ ձերոյ և ընդունելութեան զորս բարւոք հետևողութեամբ և օգտակարագոյն դիմամբ ցուցեալ էիք ինքեան՝ կարի շնորհակալ էր զձէնջ՝ որպէս և դուք զինքեանէ։ Ըստ որում և գրեալ էիք մեզ։ Զոր և ըստ արժանւոյն իւրոյ շահեալ մեր, և զոր ինչ պատշաճն էր՝ խօսեցեալ ուղևորեցաք աստի։ Վասնորոյ խնգրեմք յԱստուծոյ՝ զի ըստ ակնկալութեան ձերոյ և յուսոյ՝ առաջնորդեսցէ ի բարութիւնս ըստ իւրոց բարեսէր կամացն։ Այլև՝ որ յաղագս Հոգեյոյ Հայրապետին մերոյ Պարտավճար գրքոյն հարցեալ էիք, ծ տետր տպեցեալ էր ի նմանէ յաւուրս լուսահոգւոյն, և ծ տետրըր ևս մեք տպեցուցաք այժմս, գոյ ևս քանի մի տետրաչափ տակաւին, որ Աստուծով մինչև բարեկենդանն աւարտելոց է, որ մինչ կազմիցի, յղելոց եմք վասն ձեր և տեսանելոց էք։ Իսկ վասն նոր պատմութիւն գրելոյ որ թախանձեալ էիք, զայնմանէ գըրելոց եմ ձեզ յայլուսմ ժամու՝ Հանդերձ լիալիր պատասխանեաւ թղթոյն ձերոյ, քանզի այժմ չունէաք ժամ։ Ըստ որում Հարկաւորեցաւ դրաբերիդ փութով աստի ելանել՝ որպէս պատմելոց է։ Այլ զ86 Հատ գրեանն զորս յղեալ էք ընդ պարոն Յակոբ սիրելւոյդ մերոյ, Թողեալ էր ի Թիֆլիզ։ Իսկ վասն դպրատուն Հաստատելոյ ըստ Եւրոպական լեզուաց, այսպէս գիտասջիք։ Զի մեր լեզուաւս դպրատուն զոր ունիմք ի սուրբ Աթոռոջս՝ Հազիւ պահեմք Հաստատուն, ըստ որում չէ մեզ ձեռնտու որպիսութիւն և կացութիւն երկրիս։ Վասն որոյ՝ առ ժամս կարի է մեզ դժուարին այգ, իսկ ապա թէ զի՞րգ լինիցի, յԱստուած

Թուղթ առ մեծն Պօղոս նուիրակ Մի-
նաս վարդապետն ղի եկեսցէ ի տուրը Ա-
թոռս, ըստ որում ի վաղուց էր աւար
տեալ զգործ, և նոր նուիրակ երթայր
անդ Իսահակ վարդապետն։ Պատուէր յանձ-
նել ի նա զամենայն հոգալիսն, և ինքն
դալ, և այլ պատուէրք, որպէս ահա տես
սանին։

Թուղթ ի Մօղոբ առ Զօրապետն Ռու-
սայ, Պաւլ Սարդէլիչ Պօտէմկինն ի պա-
տասխանի թղթոյ նորին ղոր պրեալ էր
առ սրբազանն, խնդրելով, ղի զորպիսու-
թիւնն երկրիս ծանուսցէ նմա,

Թուղթ առ մեծն Պօղոս նուերակ Մի-
նաս վարդապետն, ի պատասխանի ի հոգ.
ծբ. դրեալ թղթոյն, զանազան դիտմամբք՝
որպէս տեսանի ի ներքոյ։

Թուղթ ի Բասրա՝ ի պատասխանի Մահ
սարի նոցին, որք խնդրեալ էին զՋու-
դայեցի Յակովբ վարդապետն ձեռնադրել
եպիսկոպոս ի միաբանութիւն վանիցն
Ջուղայու։ Զոր և ձեռնադրեալ յղեաց անդ։

Թուղթ առ ժողովուրդսն առ Ջուղայու,
վասն Ամենափրկչի վանիցն իւրեանց յա-
ջորդ Յակոբ վարդապետին, զոր յղեալ էին
ի ձեռնադրիլ եպիսկոպոս։ Այլ ես նոյն մը-
տօք՝ որպէս վերոյդրեալ թուղթն է։ Զոր
և ձեռնադրեալ յետս յղեաց։

Սկիզբն և այլ հարկաւոր բան ժողովա-
բարութեան թղթոց ի վերայ հնդկաց, որ
տուաւ վանիցն Ջուղայու։

Թուղթ ի հաղորդ, պատուէր զի զօ-
տալն և զշատաշրջիկն կարգաւորս մի՛
շատ պահանջն ինքնանս, և նոցա իշ-
խանութիւնն մի՛ լիցի անդ ինքնագը-
լուխ ի գործս քահանայութեան ձեռնամ-
խիլ։ Եւ իւրեանց կարգաւորացն պատուէր
վանն հասի և չհասի, և այլ այսպի-
սեաց աղագաւ պատուէր։

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Ա-
տուածայնոյ՝ ծանուցուածն լիցի սիրելի և հո-
գևոր որդւոցդ մերոց, հարազատ և տէրու-
նի ժողովրդոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի,
Զի ասէ սրբազան Առաքեալն Պօղոս թէ՝
ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ և ըստ
կարգի լինիցի։ Արդ՝ գրեալ էիք յանցեալ
ամին և յամսեանն սեպտ. զԹուղթ իմն բազ
մակնիք առ մեզ. ծանուցանելով զվրդովա-
րար և զսիշելոյ անարժան անցսն որք
անցեալ էին յայդր և զձեզ վրդովեալ,
զորս ի դիտելն մեր՝ ըստմեցաք, սիրաւի,
քանզի որպէս համբաւն բարի ուրախացու-
ցանէ, նոյնպէս և վատն՝ ածէ տրտմութիւն։
Որուհետև մինչև ցարդ անձեռնհաս եզաք ի
գրել զպատասխանի։ Բայց զի հարկաւոր էր
գրել վասն պղպիսեաց իրաց զրան ինչ յայդր,
ըստ որում և յայլուստ ևս լսեմք, յետ-
այնորիկ և զոմանց ինչ անկարգ իրաց՝ որք
ըստ մեծի մասին ի յինքնագլուխ և ի շա-
տաշրջիկ կարգաւորաց յայդր հանդիպելոց
յառաջանան, հարկ եղև մեզ գրել առ հո-
գևոր որդիսդ մեր զայդ՝ օրհնութեանս մե-
րոյ նամակ, և պատուիրել վասն այնպի-
սեաց զոր ինչ պարտն է։ առ ի չլինիլ այլ
ևս ի մէջ ձերում այնպիսեաց անկարգ
բանից, և ամենայն ինչ ձեր պարկեշ-
տութեամբ և ըստ կարգի լինիլ, ըստ սըր-
բազան Առաքելոյն բանի։ Զի որովհետև
դուք Տէրունի ժողովուրդք էք սրբոյ Աթո-
ռոյս, և յատկապէս հարազատ որդիք սո-
րին. վասն որոյ զհոգս բարւոք կառավարու-
թեան ձերոյ առաւել հոգալի է մեզ. մինչ
բաց ի մէնջ այլ ոչ ոք է ձեզ առաջնորդ
և հոգևոր հովիւ և պցելու։ Եւ արդ՝ զայս
գրեմ սիրելեացդ իմոց ի Քրիստոս։ Զի ըստ
որում արգելեցեալ է ի կանոնաց սրբոց՝ զի
կարգաւորք մի՛ լիցին շատաշրջիկք, և մի՛
թողուցուն զիւրաքանչիւր վանս՝ կամ զվի-

ձակս և ղժողովուրգս իւրեանց և տալա-
գիր շրջիցին աստ և անգ. վասնորոյ՝ և
սրբազան Հայրապետքն մեր նախկինք որք
յառաջ քան զմեզ, ի տեսանելն կամ ի լը-
սելն իւրեանց զմեծամեծ անկարգութիւնս՝
որք յայնպիսեաց շատաշրջիկ անձանց յա-
ռաջանան, գրեալ են յամենայն ուրեք գկա
նոնս և զպատուէրս վասն այնպիսեացս, առ
ի չընդունիլ զնոսա, և չտալ ևս զտուրս, և
կամ զհաստարձակութիւնս ինչ ի ձեռնա
մուխ լինիլ ի կարգս և ի խորհուրգս սըր
բոյ եկեղեցւոյ՝ և զանկարգութիւնս ինչ սեր-
մանել։ Քանզի յայտնի է ահա, թէ զի՞որգ
բաղմութիւնք վանական և աշխարհական
կարգաւորաց տարածեցեալք ընդ ամենայն
տեղիս առանց թզթոյ և հրամանի, շրջին
բացարձակ և ինքնագլուխ. կեղեքեն զժո-
ղովուրգս, և ձկտին ի վեր քան զիւրեանց
չափն, խառնին ի գործս օրինաց և եկե-
ղեցւոյ, և առնեն զոր չէ արժան. որովք
և տան զգայթակղութիւնս բազմաց, և բե-
րեն մանաւանգ զմեծ ամօթ և զպակասու
թիւն ազգիս մերոյ՝ առաջի օտար ազանց։
Զորպիսիս զոմանս ահա ի գրոյ ձերմէ և
յայլուստա ևս լսելով մեր զօրհնեցելոյ քա-
ղաքէգ ձերմէ, ցաւեցաք սիրաւի վասն հո-
գևոր որգւոցգ մերոց, զորս և չկամելով
առալ լուսաեան՝ ահա զայս գրեմ ձեզ և
պատուիրեմ։ Զի ի գայն առ ձեզ վանական
կամ աշխարհական կարգաւորաց, եթէ վասն
վանից ուրուք իցեն եկեալ, կամ թէ յա-
զագս վտանկաւորութեանց և դիպուածոց
ինչ՝ կամ այլ հարկաւորութեանց եկեալ
իցեն ի ժողով, որք թէ ունիցին ի մէնջ
զթուղթ վկայութեան կամ ժողովարարու-
թեան, և կամ թէ վանականք են՝ ի յա
ռաջնորգաց իւրեանց զգիր վկայական, զայն-
պիսին ընկալջիք սիրով. և ի փառս Աս-
ուածոյ և յաղագս շինութեան և պայծա-
ռութեան սրբոց վանից և եկեղեցեացն ո
րոց աղագաւ եկեալ իցեն, և կամ ի յօգ-
նութիւն վտանկաւորութեանց և պակաս-
ւորութեանց նոցին՝ որոց սակս ունիցին զգիր
վկայութեան, տալջիք նոցա զկամաւոր ողոր-
մութիւնս՝ և ուղևորեսջիք. զի և գուք
գալջիք ղողորմութիւն ի յԱստուծոյ, ըստ
բանի Ցեառն մերոյ թէ՝ երանի ողորմածաց,
զի նոքա զողորմութիւն գտցեն։ Իսկ եթէ
այնպիսիք իցեն, որք ո՛չ ի մէնջ, և ո՛չ ի
յԱռաջնորգաց իւրեանց ունիցին զգիր ինչ
և զվկայութիւն. գիտասջիք զի ինքնագլուխ
է այնպիսին, և ո՛չ այլ իրիք աղագաւ
շրջի, եթէ ոչ ի յարաձել զորովայնն, և
ի սերմանել զգայթակղութիւնս ի մէջ ժո-
ղովրգոց։ Վասնորոյ՝ մի՛ ընկալջիք զայնպի-
սիսն, և մի տայցէք նոցա զտուրս ինչ. այլ
վարեցէք ի միջոյ ձերմէ ի բաց։ Քանզի ըն-
գունօղքն զայնպիսիսն, և տուօղքն նոցա
զողորմութիւնս, ո՛չ եթէ զվարձս առնեն,
այլ պատճառ լինին ինքնագլուխ և անսանձ
շատաշրջկութեան նոցին. և կցորգին մեղաց
նոցա։ Եւ այսպիսի շրջագայող վանական
կամ աշխարհական կարգաւորք, թէ հրա-
մանաւ և գրով իցեն եկեալ, և թէ ինք-
նագլուխ, մի իշխեսցեն խառնիլ ի բանս և
ի գործս օրինաց և եկեղեցւոյ. և կամ զիշխանու-
թիւն ինչ ածել ի գործ. զորս և գուք մի
թողուցուք համարձակաբար ձեռնամուխ լի-
նիլ ի յեօթնեսին խորհուրգս սրբոյ եկե-
ղեցւոյ, և յափշտակել զգործս ձեր ընիկ
քահանայիցգ. այլ միայն՝ ձերովդ կամօք և
հաւանութեամբ՝ եթէ գուք կամիցիք և
խնդրիցէք, մաաուսցեն զպատարագ, յինչ
օր՝ զոր գուք ցուցանիցէք։ Իսկ թէ հա-
մարձակեսցի այնպիսին՝ իւրովի մատչիլ ի
գործ և ի խորհուրգ օրինաց և եկեղեցւոյ,
մի թողջիք, այլ արգելջիք ի կամացն, զի
ծանիցէ զչափն իւր. և կացցէ ի կանոնի
իւրում, զոր և փութով հանջիք ի միջոյ
ձերմէ որպէս գրեցաք. զի զգայթակղու-
թիւնս ինչ յայդր ի միջի ձերում մի սեր-
մանեսցէ։ Իսկ՝ և ձեզ քահանայիցգ զայս
պատուիրեմ, զի զգաստութեամբ և արթ-
նութեամբ հովուեսջիք զբանաւոր ոչխարսգ
ձեր զՀօտգ Ցեառն, միշտ ի յօրէնս և ի
պատուիրանս Աստուածային տածելով և
պահպանելով՝ ըստ աւանդութեանց և ըստ
օրինի Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ։
Զորս և անխառն պահեսջիք ի խմորոց և
ի յաղանգոց հերձուածողաց. զգուշացու-
ցանելով զգոսա միշտ ի նոցունց. քանզի
զարիւնս գոցին ի ձէնջ պահանջելոց է Աս-
տուած, ըստ որում և ասէ իսկ ի ձեռն
եղեկիէլի մարգարէի։ Նաև՝ օրինաց սրբոյ
եկեղեցւոյ և կանոնաց, հասի և չհասի՝ և
այլ ամենայն այսպիսեաց զգոյշ լինիջիք, և

ամրապէս պահեսջիք զամենայն, և մի՛ վասն
ախտից կամ աչառանաց շեղիցիք դուք և
թիւրիցեք զկանոնս ինչ և զօրէնս. զոր թէ
արասջիք, և լուիցուք մեք, վրէժխնդիր եմք
լինելոց ձեզ։ Քանզի ահա դուք էք ի մէնջ
կարգեցեալք հովիւք և պահպանօղք հօ-
տիդ մերոյ Տէրունւոյ, և նուիրակն մեր
միշտ ո՛չ հանդիպի յայդր պարտիք ապա՝
այնպէս արթնութեամբ և զգուշութեամբ
զհօտդ մեր հովուել, զի մի՛ ինչս ինչ հո-
գևոր առդիպեսցի դոցա, և մի՛ յերկի ոքի
դոցունց կերակուր հոգևոր դասկսյն սա-
տանայի։ Որպէս զի՝ վարձատրեցիք բարե
պէս՝ ի ճշմարիտ հովուապետէն մերմէ Քրիս-
տոսէ, և ընկալջիք ի նմանէ զանթառամ
փառացն ժառանգութիւն ընդ սուրբս իւր՝
յաւուր մեծի դալստեան նորա. ընդունելով
և աստի ի մէնջ զօրհնութիւնս։ Եւ թէ ի-
ցէ ինչ այնպիսի՝ զոր դուք ձեզէն չկարի
ցէք վճարել, մեզ ծանուսջիք զի դիտացուք,
և զորինչ գրեսցուք ձեզ՝ այնպէս առնիցէք։
Եւ կատարողդ հոգևոր հրամանացս մերոց՝
համայն քահանայքդ՝ և Աստուածասէրժո-
ղովուրդդ, եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և
ի մէնջ և Ընտրեալ Աստուածաճէջ սրբոյ Ա-
թոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ. Ամէն։ Ի
ՌՄԼՔ. ի յունուարի։

Թուղթ առ վանցի պ. Ալէքսանն, ի Բաղ-
դատ, ի պատասխանի թղթոյն, վասն վե-
րոյդրեալ կոնդակին, և իլաց։

Թուղթ առ ս. Էջմիածնի պատրիարք Յո-
վակիմ վարդապետն, ի պատասխանի թղթ-
թոց իւրոց և շնորհակալութիւն վասն յղեալ
ընծայիցն։ Եւ վասն իւրեանց նուիրակի
արդեանցն, զոր ի Հաշտարխան տուեալ
էր Յովսէփ վարդապետին, և նա աստ
հասոյց, և սրբազանն դրեաց ի մեծն Պօ-
լիս առ նուիրակ Մինաս վարդապետն,
հասուցանել յԵրուսաղէմ, զոր և այժմ ծա-
նոյց նմա. և խնդրեաց դդիր միամտական,
զիյդեսցէ առ Յովսէփ վարդապետն։ (ՌՄԼԲ,
յունուար).

Թուղթ առ Եղիազար Աղայն։

Եւ ընդ սիրոյ՝ ողջունի և Աստուա-
ծայնոյ օրհնութեանս, ծանուցումն լիցի Ազ-
նուագոյն սիրելւոյդ մերոյ, Տարազատ՝ օգ-
տակեան և սրտացաւ զաւակիդ սրբոյ Աթո-
ռոյս Էջմիածնի։ Զի ի վաղուց հետէ է, որ ի
սիրելւոյդ զսիրաշար և զորպէսածանոց դիր
ինչ ո՛չ ընկալնումք. ի մխիթարութիւն մեզ
որ յիրաւի մի՛շտ կարօտիմք սիրանիշ թըղ-
թոյ ձեղապիսի սիրելեաց ի սփոփանս և ի
մխիթարութիւն մեզ, որ կամքս ի յայն մը-
խիթարութեան վայրի, և ի պէսպէս վիշ-
տոս մաշիմք հանապազ։ Եւ թէպէտ դու
սիրելիդ մեր ո՛չ դրես, բայց՝ սիրելի և հո-
գեծին որդին մեր Յովսէփ Աստուածաբան
վարդապետն ի յամենայն գիրս իւր՝ գրէ
միշտ զշճմարիտ և զկատարեալ սիրոյդ և
զբազմադիմի բարերարութեանդդ որ առ
սուրբ Աթոռ ծնողս քո և առ մեզ. և մա-
նաւանդ առ խղճալի ժողովուրդսն մեր, որք
ի Ղրիմու են դիմեալ յայդր կոյս։ Զորս
ի լսելն մեր ի հոգի և ի մարմին ուրախա-
ցեալ միխիթարիմք ոչ սակաւ։ Եւ բերանալի՛ր
շնորհակալութեամբ օրհնեմք զօրհնեցեալդ
յԱստուծոյ հանդերձ պերճափառ և բարե-
բողբոջ որդւովդդ և բոլոր քոյայնովդդ։
Զորս Տէր Աստուած օրհնելով օրհնեսցէ՛ և
զօրացուսցէ՛, նախանձամեսցէ՛ և պահպանե-
ցէ՛. յաչս ամենաբարեպաշտ ե. Աթոռոս-
խնամ մեծի միշտ քաղցր պահեսցէ հանա-
պազ։ Ամէն։ Այլ և զայս խնդրեմ ի սիրել-
ւոյդ, զի որովհետև խղճալի մերազնեայ ժո-
ղովուրդքն Ղրիմու՝ յուսալով ի յողորմու-
թիւնս և ի խնամս բարեպաշտուհւոյ և
մեծազօրի + դիմեալ և եկեալ են յայդր կոյս-
ի բնակիլ ընդ հովանեաւ խնամոց նորին, առ
ի գտանել զապահովութիւնս. վասնորոյ՝ դու
ազնիւ սիրելիդ մեր ևս օրհնեալ որդւովդդ
պարտիք ի փառս Աստուածոյ և ի սէր սըր-
բոյ հաւատոյս մերոյ, ըստ չափու կարո-
ղութեան ձերոյ յամենայն ժամ բանիւ և
հոգալեացն նոցին հոգացող և մուղայէթ
լինիլ, զի ըստ հաւատոյ մարմինք և ոս-
կերք ձեր են. ցաւակցելով ի վերայ նոցա,
զօգուտն նոցա խորհիլ և առնել։ Եւ որով
հետև գլխաւորքն նոցա եկեալ են յայդր,
առ ի գտանել զողորմութիւնս յամենողոր-

մած և առաւտանամ+որպէս դրեալ էր մեզ Յովսէփ վարդապետն, վասնորոյ դրեցաք առ ազնիւ սիրելին մեր և որդին քո Յովհաննէս Աղայն, զի զհաստատուն և զբարւօք կանոն ին հաստատեալ տացէ վասն նոցա, որով բարւոքապէս կենցաղավարեսցին նորա։ Դու սիրելիդ մեր և այս չնաւասցես այսպէս առնել տալ ի փառս Աստուծոյ։ Ա՛յլ և՝ ի սոյն ներկայումս հաւին ի սուրբ Աթոռս քոյդ յիշատակ Զանկակըն ամբողջ ե. անձնաս, որոց յոյժ հաւանեալ մեր կախել եաւք ի Զանկակատունն, և համայն միաբանիւք սրբոյ Աթոռոյս օրհնեցաք զարժանաւորդ օրհնութեան առաջի Քրիստոսասէր սրբոյ տեզ ւոյս. և յիշեցաք զանուանս ձեր և համայն ննջեցելոցն ձերոց ի սուրբ Պատարագ ւոջն։ Ցէր օրհնեսցէ՛ զքեզ հանդերձ ա. մենայն քոյայնովքդ, զհոգեւոր յիշատակն քո ի փառս և ի հաճոյս իւր ընկալ ցի. պարդևելով փոխարէն նմին, զբազմապատիկ վարձս, քեզ՝ և համայն կենդանեաց և ննջեցելոց քոց, աստ և ի հանդերձելոցն։

Զքզթոյս նախադազափարն յառաջադոյն էաք դրեալ ի նոյն թուական նին որ եդեալ է. և զթուղթ մի ևս ի նոյն ՌՄԻԸ թուոջն, և ի յուլիսի յելն դրեցաք. անդ ևս կրկին յիշելով զսոյն ազերսանս որ վասն Ղռիմցւոցն. որ և առ սէրդ է հասեալ՝ որպէս և Յովսէփ Աստուածիմասա վարդապետ հարազատ որդին մեր դրեալ էր մեզ։ Իսկ յետոյ լուաք թէ՝ սոյն Թզթոյս նախադազափարն ի ձանապարհին անկեալ է ի ձեռս աւազակաց և ընդ այլ բազում Թզթոց կորուսեալ։ Եւ կամեցաք թէպէտ կրկին գրել և յղել. բայց վասն դալստեան վրաց օրհնեալ Արքային ծանր զօրօք յերկիրս մեր, կարի սասակ. պէս խառնակեցան կոզմունքս, և ճանապարհքն փակեցան. և Թզթագրութիւնք մեր իսպառ խափանեցան. և մեք ևս ծանրապէս հիւանդացաք. վասն որոյ չկարացաք դրել և յղել զայս առ ձեզ. զորոց զլխովինն ի Թզթոց Յովսէփ վարդապետ որդեկին մերոյ և ի հասարակ կոնդակէն զոր դրեալ յղեցաք առ նա, իմանալոց ես։ Իսկ այժմոյս ի Յովսէփ վարդապետ որդեկէն մերմէ դիր եկն, որ դրեալ էր մեզ զորպէսն Ղռիմցւոց և զգանիլն նոցա զզորմութիւնս ի յինքնակալ և յԱռատանամ+[19]) և զձեր յատուկ երախտիս և զբարութիւնսն զոր արարեալ էիք նոցա և իւրեանն՝ յամենայն կոզմանէ։ Վասն որոյ առ ի շնորհակալութիւն զսիրելւոյդ՝ և ի յևս յանձնարարութիւն վասն նոցա, ի սէր և ի խնամս ձեր, զվերոյ գրեալ օրինակն կրկին ևս դրեցաք հանդերձ այս նոր յաւելուածովքս։ Որ և շնորհակալ լինելով զամենից երախտեացդ արարեցելոց. և զքեզ հանդերձ քոյայնովքդ օրհնելով. ի խնամս և յողորմութիւն Տեառն յանձնեմ։ Զորս Տէր օրհնեսցէ միշտ և զօրացուսցէ։ Եւ վասն նոյն ժողովրդեանն. որ և նոր նախաձեռնու իսկ, վերստին ևս խնդրեմ՝ ի սիրելւոյդ յամենայն բանս և ի գործս օգնական լինել նոցա. և քեզապատշաճ բանիցն հոդացօղ ի փառս Աստուածոյ. և Յովսէփ վարդապետ որդեկին մերոյ ևս յամենայնի ձեռնտու։ Եւ լե՛ր կրկին ողջ և զօրացեալ ի Տէր քոյայնովքդ ամենեքեան և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ։ Ամէն։ Ի ՌՄԻԹ [1]) Ի.

Առ Ղալիպճեան մահտեսի Սիմոնն, սլարոն Մարտիրոսն և սլարոն Մելքոն որք ի Թօխաթ։

Վասն Ազին Կողբայ։

Առ Պօղոս ճշմարտապատում վարդապետն մեր՝ ի մեծն Պօլիս, զի հրամայիցէ դալ ի սուրբ Աթոռս և բաւական համարել ըղ-բազմամեայ հարազատական տարան սակս սրբոյ Աթոռոյս։

Թուղթ ի վերայ Գեանջայու և Քիլիսա կեան քնակեալ ժողովրդոցն վասն նորուկ

[1]) Այս և մի քանի այլ Թզթեր տեղ են գտեալ ուշ ժամանակի սեագրութիւնների մէջ. ուրովհետև ինչպէս բովանդակութիւնից էլ երեւում է, կորած լինելով, ապագայում կրկին անգամ են ուղարկուած իրանց հասցէներին։

դանձասլահ կարգելոյ սրբոյ Աթոռոյս, ըզՏէր Միքայէլ քահանայն Աստապատցի։

Ի վերայ նոր Շինի սուրբ եկեղեցւոյ վիճակեալ բոլոր ժողովրդոցն. վասն զան ձապետութեան նոյն Տէր Միքայէլին Աստապատեցւոյ,

Ի Թիֆլիզ առ Սաղիմայ Աբրահամ վարդապետ իբր Առաջնորդն Սանահնոյ սիրա խառն մեղադրութիւն։

Առ չիք Գէորգ չէրէցն Կարսայ.

Առ գլխաւոր իշխանսն Կարսայ քաղաքին։

Առ Կամարկացի Միքայէլ Ամիրայն Ալթունեան։

Առ Թումաոեան Վարգան Ամիրայն։

Առ Ցոլհաննէս վարդապետ նուիրակն Գաղատիոյ իմիամուրթիւն։ Վասն հաշուառութեան իւրոյ։

Առ Աբրահամ վարդապետ Առաջնորդն Սանահնոյ վանից իբր մեղադրութիւն։

Ցորմէ սիրով և մեզադրանօք ծանիր Աբրահամ՝ Ծերունի վարդապետ. զի երկոքին Թուղթքն քո ի յունվարի ԺԶ և Իե դրեցեալ, հանդերձ կոնդակաց Ռ սաւառօքն հասին առ մեզ, զոր ինչ դրեալ էիր ի Թուղթդ, ընթերցեալ ծանեաք, որք էին զարմացուցիչք հրեշտակաց և մարդկանց. վասնորոյ մեք ևս կարի զարմացաք վասն դրեցելոյդ և արարմանդ. որք ներհակ միմեանց էին. և դործ խելադարի, յանդգնոյ և չափազանցի։ Զի մինչ աստ էիր, մեք քեզ զի՞նչ պատուիրեցաք, և դու զի՞նչ առնես, զի որքան այդ Թիւր դաստիարակաւդ նստիցիք մեծաւ փառաւորութեամբ և հրճուանօք զկեանս ձեր անցուցանելով զովչի և սաֆայի պարապիցիք։ Արդ՝ ո՞վ ետ քեզ զհրամանս առնել զայդ նոր և չեզեալ անկարդութիւնդ. ի նախնի առաջնորդացն Սանահնոյ վանից ո՞վ է յայդր նստեալ Առաջնորդ անուամբ։ Դու որ դեռ ևս վարդապետ ես, այդպիսի չափազանցութեան հետևիս, յորժամ լինիցիս եպիսկոպոս. (որում և ըզձաձգես իսկ ամենայն ջանիւք և դրե՛ ևս թէ դալոց եմ և այլն). Արդ եթէ ըղձումն քո կատարիցի, յայնժամ զի՞նչ ես առնելոց։ Թոզցուք զայսոսիկ խոհեմ քննողաց. և ի յուշ ածցուք քեզ զհեղ և զանլուր ապօրինաւորութիւնդ, զոր արարեալ ես ընդդէմ անլուծանելի հրամանին Քրիստոսի։ Արդ՝ ո՞վ խելագար, լուեալ ես արդեօք՝ թէ՝ ի մէջ ազգի մերում, և թէ ի յայլ Քրիստոնեայս՝ Առաջնորդ ոք հրաման տայցէ զարամբի կին տալ առն այլումն. Ոչ ապաքէն ընդդէմ է հեղ հրամանին Քրիստոսի և կանոնաց Հարցն սրբոց և Հայրապետաց։ Այս ինչ Թէսկիրայք են զորս դրեալ և կնքեալ ես, դրելով ի նոսա Թէ

« Ցիւսի ծառայ Աբրահամ վարդապետ՝ և Առաջնորդ Սանահնոյ վանիցն, յորմէ սիրոյ ողջունելնծայութեամբ ծանիր Տէր Աբրահամ, ահա դրեմ քեզ, որ գնաս այն Ղօչի գեղի Բարսեղն՝ այն կնոջ հետ պսակել տաս. և Աթոռի համար Ֆ տ առնուս. Թէ աւելի կարես առնուլ լաւ. Թէ չէ, Գ.ղէն պակաս չառնուս. Այլահվերտուն տուր որ բերէ. ո՞վ որ հակառակութիւն անէ. Պարոնի ջուզպան տայ. անպատճառ պսակես։ ահա յառաջ ևս գրեցի քեզ. դէս դէն ձայն. մի՛ ածիլ. մի՛ դիշեր պսակէ

թարկն տուր գնայ։ անճազ՝ մին մուչալկայ առնեո նրանէ. եթէ առաջին մարդն գալու լինի. իւր կինն իւրեան տայ, և այլն։»

Ալդ՝ ո՞վ խելագար դու՝ իւր կինն դու՝ և խրատիչն քո, ոք իբրև զդաստուս պահես, որում դու ծառայ և իոթբաւոր իսկ ես. որ զքեզ բոլորովին յանձնեալ ես նմա. և յաճախ կոզմանց հետևոզ լինիս կամաց և վաշուէր թարուց նորին։ Որպէս և ի բազմաց լսեմք որ և հաւաստի իսկ է։ և դու որպէս զանբան զպախուրդդ տաս ի ձեռս նորա. և անճոռնի ճարտասանութեամբ և սիմարական գրչաւ նորին զմսլլիս, և չը մաածես զգրեալդ թէ՝ զի՞նչ գրես։ Ա.յս զի՞նչ է՝ զոր գրես թէ՝ մուչալկայ առնուս ի նմանէ, եթէ առաջին մարդն գալոց լինի. իւրեան կինն տայցէ յիւրն, այդ է քոյգ Առաջնորդութիւն, որ գալոց կինն առեալ այլում իճարայով և պայմանաւ տաս. զՓիսուսի անլուծանելի հրամանն լուծանես և շնութեան լինիս պատճառ, և զքեզ Փիսուսի ծառայ և Աւետարանի պաշտօնեայ գրես։ և կնքես. ոչ լուար ի Տեառնէ, զոր Առաքեալ զուգեաց, մարդ մի մեկնեսցէ։ Արդ՝ այդու արարմամբ ըստ քոյդ մտաց՝ իրաւի արժանի իսկ ես եպիսկոպոսական պատուոյ և մեծագոյն փառաւորութեան։ Եւ զայլ ապօրինաւորութիւնդ և զանկարդ արարդ և զգեստայիդ չափազանց զօգանջմունն և զհաչմունն ի վերայ քաղաքաց, Առաջնորդաց, և իշխանաց, զորս ունիք ի տեսութիւն և իբրև զկանոնական առ քեզ պահէք։ Զոր ոչ կարէք ուրաստ լինել։ Նաև՝ մեք զքեզ ի վերայ Սանահնոյ վանիցն եմք Առաջնորդ կացուցեալ և ի վերայ Թեմից Նորին. և ոչ թէ զտէրունիսն սրբոյ Աթոռոյս յանձնեալ եմք քեզ. որպէս և հռչակեալ ես։ Մինչև ցայժմ զոր ինչ ներհակութիւն արարեալ ես ընդ դէմ սրբոյ Աթոռոյս յառաջագոյն, զայն մեք մոռացեալ եմք. որպէս և ասացեալ եմք քեզ բերանով մինչ աստ էիր. այժմ նորինորոյ զներհակական բան ինչ մի արասցես ընդդէմ սրբոյ Աթոռոյս. առաջինն քեզ բաւական իսկ է։ Զգոյշ լեր այսուհետև և զչափդ ճանաչեա և մի ի վրէժխնդրութիւն յարուցաներ զմեզ։ Արդ՝ այժմ զայսքանս առ ի զգուշութիւն քեզ դրեցաք սիրաիւառն մեզադրանօք զի ծանիցես զքիւր արարդ, և զգոյշ լինիցիս, Բաւ է։

Առ սուրբ Կարապետի առաջնորդ Աստուածատուր վարդապետն ի պատասխանի Թղթոյ Նորին։

Առ Յովհաննէս Աստուածամերձ ե ճղնակիր վարդապետն Քուէթուրեան որ ի Գարբին. ի պատասխանի ի 1231 ե ի յունիսի զ դրեցեալ Թղթոյն իւրոյ։

Թուղթ ժողովարարի միոյ Տէր Յովհաննէս քահանայիւն։

Առ Ստեփաննոս վարդապետ Առաջնորդ Հաղբակու։

Առ տիրացու պ. Գէորգն ե տիրացու Աստուածապահ բնական և անձնագիր մշտահարազատ զաւակունսն սրբոյ Ա[illegible]թոռոյս։

Կոնդակ առ Ախալցխայի միաբանադաւան ե ուղղափառ մերազնեայ քահանայն և ժողովուրդսն։

Առ Ախիլյան Ազայն և նորին եղբայր պ. Գէորգն մահտեսի Թօմայեան վանեցի, որք ի Կարին ի պատասխանի սիրանիշ Թղթոյնոցին։

ՌՄԼԲ. ապրիլ. առ Ջուղայու աւագէրէց Տէր Մինասն.

Առ վանեցիսն ի պատասխանի քազմակնիք Մահսարին իւրեանց որք վասն վախճանման Ախթամարայ կաթողիկոսին զրեալ էին եւ խնդրեալ առ ի հրաման տալ, զի Կարապետ վարդապետ ոմն լիցի ի տեղի նորա կաթողիկոս։

Եւ ընդ յատուկ սիրոյ և Աստուածապարգև օրհնութեան նամակիս ծանուցուաք լիցի սիրելեացդ մերոյ, լուսածնունդ զաւա-

կացդ և շնորհաժառանգ որգւոցգ Մօրս հաւատոյ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի բազմակնիք և աղաչական մահսարն ձեր էհաս առ մեզ. յորում ղոր ինչ գրեալ էիք սիրով ընթերցեալ իմացաք։ նախապէս զայս ի Քրիստոս փոխելն սիրելւոյ եղբօր մերոյ Տեղեսյս և խզճալի Թոմայ կաթուղիկոսին գըրեալ և ծանուցեալ էիք, զոր լուեալ կարի արամեցաք իրաւի, բայց զի՞նչ կարեմք առնել եթէ ո՛չ զփառս և զգոհութիւնս վերառաքել ի բարձունս և ասել ընդ երջանկին Ծորայ Ցեր եա և Ցեր էառ որոյ առնուն եղիցի օրհնեալ և բարերանեալ, որոյ զՀոգին Ցեր լուսաւորեսցէ. և թագաւորգեալ պահեսցէ. և ընդ երանելի հայրապետան գասեսցէ։ Եւ զամենեսեանգ սուրբ Հոգին Աստուած միխթարեսցէ, և զգլուխս համայն սիրելեաց՝ միաբանից և ժողովրդոց նորին փարատեսցէ։ Երկրորդ զսրբոյ Աթոռոյն Ախթամարայ և միաբանից նորին և բոլոր թեմիացի իշխանաց և ժողովրգոց անտրտունջ և անայցելու ճանչն և ի բոլոր թեմս իւրեանց զպատշաճաւոր կաթուղիկոսացու չգտանելն, և յայգր կարապետ վարդապետի ուրուք հաւանիլն, և բազմակնիք և աղաչական մահսար գրելն նոցա առ մեզ. և ձեր ևս համակամիլն և զնոյն կարապետ վարդապետն յորդորիլն առ ի յանձնառնուլ. և ի յակամայ կամս յօժարեցուցանելն զնա, ծանուցեալ էիք. և մանաւանդ ըստ պահանջման ճշմարտութեան վկայեալ և գրեալ ևս էիք թէ՝ Այս է աղաչանք քոյոց ծառայից, զի սոյն կարապետ վարդապետի օծանելն անհնար է թարց համբուրման գարշապարացդ, և առանց ի սուրբ Աթոռդ գալոյ լինիլ, և ստանալ զաստիճան քահանայապետութեան, և այլն։ և եթէ սորա յանձն չառնման մեծ պատճառն այս էր՝ որ տանջիւր ի միտս, թէ՝ թարց տեսութեան սրբազան վեհին. և յորմէ օծումն չընկալմանն՝ անմարթ է նստիլ անդ և վարիլ. և այս ճշմարիտ այսպէս է։ Եւ պատրաստիմք առ տէրութիւնգ. զի այժմ գթացեալ հրաման շնորհեսցես աստանօր ի սուրբ Աթոռոյն իւրում՝ օծանել զսա. և ապա զնի պատշաճագիւտ ժամանակի աներկբայապէս ըստ ծիսին գալ ի համբոյր Աջոյդ և տէրամբդ օժանգակեալ ընկալնուլ զսարձակութիւն. և վարել զկաթուղիկոսութիւն իւր և զայլ այսպիսիս մեծաւ աղաչանօք գրեալ և խնգրեալ էիք առ ի հրաման տալ օծանել յԱթոռոյն իւրեանց։ Արդ՝ ամենայն գրեցելոցն ձերոցն հասու եղեալ զխնդիրս ձեր ծանեաք. լուարուք առ այգ սիրելիք մեր. զի դուք ամենեքեան լաւապէս գիտէք, որ լուսահոգի Թոմայ կաթուղիկոսն ինքնակամ յօժարութեամբ և հաստատուն և յաւիտենական ուխտիւ և պայմանաւ ձեռագիր է առեալ հոգելոյս Հայրապետին մերոյ Ցեղեսն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին և նզովիւք փակեալ որպէս զի՝ թէ ինքն կենդանութեան իւրում և թէ զկնի մահուանն յաջորդօղն ի տեղի իւր, ձեռացեն ի ներքոյ հրամանի և իշխանութեան սրբոյ Մայր Աթոռոյս Էջմիածնի և ի սմա նստօղ Հայրապետացն. և զերիս գլխաւորագոյն պայմանս է յանձն առեալ զորս ոչ երկարեմք ասել, որովհետև ամենեքեանդ տեղակ և գիտակ իսկ էք. և բազումքդ ի ձէնջ ընդ լայնատարած և բազմակնիք ձեռագիրն կնքեալ և ձեռագրեալ էք զոր ունիմք ահա. և մանաւանդ լուսահոգի Սիմէոն սրբազան կաթուղիկոսն ևս ըստ մըտաց ձեռագրին և պայմանին առ բոլոր թեմիացիսն սրբոյ Աթոռոյն Ախթամարայ զՀաստատուն և զվճռափակ օրհնութեան կոնդակ է գրեալ և ծանուցեալ, որ առ ինքեանս է. և անտի ևս իմանալոց էք վերսին, որոյ զօրինակն ի պատրաստի առ մեզ ունիմք. որոց բանից՝ վճռոց՝ ուխտից՝ և պայմանաց լուծանօղքն՝ ընդդիմակքն և ներհակքն նաև պայմանազանցութեան պատճառքն եթէ գտանիցին այժմ՝ և յապայն, ով ոք և իցեն. գուք ևս լաւապէս գիտէք, որք ի ներքոյ սարսափելի նզովից երկուց Հոգելոյս Հայրապետացն անկանելոց են, և զՀոգևոր և զմարմնաւոր պատիժս ի Աստուածոյ և ի սրբոց նորին, ի սրբոյ Աստուածածինէն և Անյաղթելւոյ սրբոյ Աթոռոյս և ի միջոց ժառանգելոց ըստ պայմանագրութեանց և ըստ վճռոյ ձեռագրին բազմակնքի և ըստ կոնդակի լուսահոգւոյն առ յինքեանս գրեցելոյն։ Արդ մեք ևս առ Հաս ղգուշացեալ ի յանլուծանելի պայմանագրութեանցն Տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին և նորոգ վանճանեալ Թով-

մայ կաթուղիկոսին և հայրական սիրով գը թացեալ ի յաղաչանս սիրելեացդ, ի յան. շքութիւն և յանայցելութիւն սրբոյ Աթո. ռոյն այսմիկ, և ի յանտերունջ մնալն միա. բանից և վիճակաբանակ օրհնեալ իշխանաց և ժողովրդոցն անդր եղելոց, զինգիր ձեր կատարելով ըստ գրեցելոյդ և ըստ աղա. չանաց ձերոց զհրաման ետուք, բարձու. իշ. խանութեամբն սրբոյ Աթոռոյս, օծանել զընարեալն նոցին և ձեր, և զանծանօթ սի. րելին մեր զկարապետ շինարար և բարե. ջան վարդապետն կաթուղիկոս ի Աթոռոյն իւրեանց առ ի հովուել զվիճական նորին և զկնի օծմանն ըստ գրեցելոյ պայմանին ձե. րոյ ի պատշաճաւոր ժամանակի ուղևորել զնա ի սուրբ Աթոռս և առ մեզ առ ի վե. րահաստատել զկաթուղիկոսական իշխանու. թիւնն և զհոգևոր և զորինաւոր փեստյու. թիւն նորին, և հաստատուն կոնդակաւ և խիւսիւ ուղևորիլ ի տեղին իւր։ Բայց՝ այսու պայմանաւ և վճռաւ որ զգուշասցի առ ի կալ հաստատուն ի ներքոյ իշխանու. թեան և հնազանդութեան սրբոյ Աթոռոյս և Հայրապետացն սորին մինչև ի սպառիլ շնչոյն։ Եւ ի վերայ ձեռագրեալ երից պայ. մանացն լուսահոգի Թոմայ կաթուղիկոսին անշեղ և անլուծանելի մնալ որովք զօրհ. նութիւնս և կրկին շնորհս ժառանգեսցէ. և ոչ զներհակն։ Եւ այսպէս դիտացեալ լե. րուք ողջք և օրհնեալք և զօրացեալք ի Ցէր հանդերձ ձերայնովքն ամենիւք, և շը. նորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանն։ Ամէն։ [21])

Առ Բէկթարէկի որդի Սուլխան դիւանն որ ի Թիֆլիզ, վասն հարազատութեան շնոր. հակալութիւն։

Առ Մահսեհեան պարոն Եսային, ի պա. տասխանի 1232 թուին. և ի մարտի 8 գրեցեալ թղթոյն իւրոյ։

Տէր Ղուկասու սրբազան վնհապետին։

Պատճառ գրոյս է, որ ի ՌՄԼՔ թուին, և ի Մայիսի ամսոյ ԺԹ. ես Թիֆլիզեցի Էպինանց Ճոն Խաչու որպի Ցարութիւն վարդապետս բնիկ Միաբան սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Հրամանաւ և օրհնութեան կոն. դակաւ զթառատի և մեծի Հօրն մերո Ղե. րոյգրեցելոյ վեհին, և իմովս ըղձիւ , յո. ժարութեամբ Առաջնորդ կացուցայ Շիրա. կայ սրբոյ Ասաուածածնի վանիցն Պաչեա կոչեցելոյ. և ի յելանելն իմ ի սրբոյ Ա. թոռոյս կամաւ իմով և դիտութեամբ ի սմա կնքող եպիսկոպոսաց և առաջի մեծի վեհ սրբազանին վերոյգրեցելոյ, զայս ներ. քոյ գրեցեալ կանօնս և պայմանս ուխտե. ցի և յանձն առի. նախապէս մինչև ցե. լութիւն շնչոյս մնայցեմ ի հնազանդութեան սրբոյ Աթոռոյս Էջմիածնի և ի սմա նստող Հայրապետացն. մէկ ի բանս, թէ գործս և թէ ի խորհուրդս զպաստամբութեան նը. շան ինչ ամենևին ոչ ցուցանիցեմ. Երկրորդ յամենայն ղօրութենէ իմմէ ջանայցեմ զսուրբ վանքն այն նորոգել և շինացուցանել և օրըստօրէ պայծառացուցանել, զմիաբանս ժողովել և զժամերգութիւն հաստատել, և ինձ յանձնեալ ժողովուրդն որք ի վիճա. ճակի իմում են ի յուղիղ հաւատս և ի կրօնս Հայաստանեայց եկեղեցւոյ մեր պա. հել և անդ մնալ մինչև ցմահն իմ։ Իսկ եթէ վասն դիպուածոյ ինչ, կամ սակս ան. կարութեան իմոյ չկարիցեմ զայն սուրբ վանքն և զժողովուրդն կառավարել և զա. ռաջնորդութիւն առնել, և անդ նստիլ, Թարց հրամանի սրբազանին ընաւ երբէք այլուրեք մի գնայցեմ, այլ վերադառնայ. ցեմ ի սուրբ Աթոռս Էջմիածին առ սեպ. հական ծնօղն իմ։ Երրորդ՝ ի Առաջնորդու. թեան իմում՝ և ի յիմ վիճակոջ, թէ ձեռնադրութիւն ինչ պատահիցի, Թարց վե. րահաստութեան և քննութեան ըստ հաւա. տոյն, ըստ վարուցն, և ըստ դիտութեան՝ ոչ տայցեմ ամենևին զաստիճան ինչ որով պատճառաւ և կամիցի խնդրօղն. և մի դիւ. րահաւան և վաղվաղակամ լինիցիմ ի ձեռ. նադրութիւն ինչ, վասն անձնական ինչ աֆ. տի։ Նաև՝ եթէ յայլոց վիճակաց առիս ե. կեսցէ ի ձեռնադրիլ Թարց հրամանի և գի.

տուլթեան իւրոյ Առաջնորդին. ամենևին ի մոյ աւաքճանէն ցեօթներորդ ո՛չ տայցեմ թէ արժանաւոր իցէ խնգրօղն և թէ անարժան, սլլ վիճակի իմոյ զարժանաւորն և զմիաբնադաւան ուղղակրօնն միայն ձեռնադրիցեմ, (եթէ պատահիցի)։ Արդ՝ զայս վերոյգրեցեալ Գ գլխաւոր կանօն, ուխտս և պայմանս խոստացայ իմովս յօժարութեամբս պահել մինչև ցմահն իմ։ Իսկ եթէ յայսց կանօնացս հեստիցիմ և ապստամբիցիմ, եպիսկոպոսական կարգիս անընդունակ լինիցիմ և պատժապարտ գտանիցիմ առաջի վերոյգրեցեալ մեծի վեհին և փոխանորդաց նորին։ Եւ ի սմա կնքօզ եպիսկոպոսացն. վասն որոյ զայս իմովս կամաւ և յօժարութեամբ գրեցուցի կնքեցուցի ի հաստատութիւն վերոյգրեցեալ պայմանացս։ Ես Ցարութիւն վարդապետս զայսքանս ձեռամբ իմով գրեցի և կնքեցի և ետու մեծի Ցեառնս իմոյ սրբազան վեհին, որ և տեսողացդ հաճոյ լինիցի։

Առ Կարապետ վարդապետ Առաջնորդն, և Ցէյր Ղազար գործակալն մեր որք ի Թիֆլիզ։

Ի վեծն Պօլիս առ Մինաս և Ասահակ վարդապետն նուիրակունսն մեր։

Ցորմէ Հայրական օրհնութեամբ Որդիական ողջունիս և Հոգեկան սիրով ծաներ-ուք սիրելի որդիք մեր՝ Տարազատ և շնորհածին զաւակք սրտոյ Աթոռոյս Մինաս և Ասահակ վարդապետք։ Զի ազնուագոյն սիրելին մեր և ցանկալին Հոգւոյս ի ընէ բարերարն և յաւուրկ խնամատարն և ճշմարիտ բարեկամն սրբոյ Աթոռոյս և դեռ ծաւիրտ այցելուն Աղգին մերոյ Քրիստոսազօր և նոյնպահ օրհնեալ Հերակլէս արքայն ըստ Հոգևոր ըղձից և բազձանացն ղտպագրատունն իւրեանց ձեռամբ Հոդևոր որդւոյն մերոյ պարոն Պօղոսին հաստատեալ աւարտեաց, որոյ զերախայրի և զվաստակս պտուղ մեկ տպագրեալ տեսոր Ասահակ վարդապետ մինչ աստ էիր տեսեր, զոր առ մեզ էին յղեալ. և մեք տեսեալ ուրախացաք ոչ սակաւ և զգիր շնորհաւորութեան եւս գրեցաք կանխաւ։ Իսկ ի ներկայումս օրհնեալ Արքայն սակս թղթատուբեան ի պէտս տպագրատանն զգիր սիրոյ էր գրեալ առ մեզ. որպէս զի ձեռամբ մերով Գ՚ծ Թուման Թուղթ դնիցի յայդր, և գրուին աստ ճաշատեանց պարոն Ստեփանն մեզ տացէ ի կողմանէ Արքային օրհնեցելոյ. զի որովհետև մեր Թուղթ առնուլն անկարելի և անհնարին իմն էր որպէս և գիտէք. և ձեռամբ մերով ի գլուխ ոչ գայր, և մեք վերջապէս զամենն կրելոց էաք, վասնորոյ գրեցաք նմա, զի կամ ինքն յատուկ մարդ յղեսցէ առ ի առնուլ, և կամ նոյն պարոն Պօղոսի Հայրն որ յայդր է, ղթղթոց լսեն և զվասն ճանաչէ և զդինն դիտէ, զպիտոյսն տպարանի մերոյ թէ զանթիմոն և թէ զայլ ինչ, երբեմն ձեռամբ դացին առեալ են և յղեալ, ձեռամբ նորին և կամ այլ համագոյն մարդկանց հրամայեսցէ առնուլ։ Եթէ անհմուտ մարդկանց ձեռամբն առեալ լինիցի, նման թղթոցն մերոց ըստ մեծի մասին անպէտ և անօգուտ լինելոց էր։ Եւ զի՝ օրհնեալ Արքայն ի հազարիցս մեկ բան էր հրամայեալ առ ի հոդալ, մեք ևս ամօթ համարեցաք իսպառ ի բաց ասել զըզհրամանս նորին. բայց՝ որովհետև ըստ գրեցելոյ ձերոյ յայդր դրամ ոչ գոյ մեզ. երուսաղէմայ փոխեցան և ի վերայ մեր պարտք է մնացեալ որպէս և դուբք. վասնորոյ մեծ տարակուսութիւն եղև մեզ։ Այլ զայս դըտաք ղհնարն. որ դուբ յայդր յումէ և իցէ, թէ վերադրաւ է և թէ պարտիւք ջնայցէք զհնար իմն դանել։ Եւ զվերոյդրեալ Գ՚ծ Թուման կէսն որ է Ա՚ծ Թուման յայդր ճարել և տալ օրհնեալ Արքային, միայն օր դնուն։ Զի մեք աստ ի պարոն Ստեփանէն Ա՚ծ առնելոց եմք։ Վասնորոյ՝ մեծաւ հարկիւ գրեմ սիրելի որդւոցդ պարաիք ուստի և իցէ, որով կերպիւ և լինիցի զմեզ հարիւր յիսուն Թուման դանել որ լինիցի 2250 ղուռուշ օսմանցւոյ սաղ դրամ վաթսունոց. և 31 օրվատայով զայդ դրամդ յանձնել օրհնեցելոյ Արքային մարդոյն. և կամ ուր և դրեսցէ. և զայս Թուղթս առնուլ ի նմանէ. և ի վերայ սորին ղաբխյա առնել տալ որպէս և կարգն է. և զայս Թուղթս իբրև ղղապղ առ ձեզ պահել ի վաստուբեան. ուրեմն՝ Թարց այլ և այլ

արգելուիթ պատճառուրեանց և առանց զանցառութեան զայս գրեալս մեր պարտիք կատարել զի մի գուցէ զփոլիցսն յետս դարձուցանիցէք, և կամ յօրէյօր ձգիցէք որ ամօթ և պակասութիւն լինիցի մեզ. այլ ջանացարուք առ ի հոգալ և գրել մեզ որ լիցուք միամիտ։ Այլև՝ մինչ։ ցհասանիլն Թզթոյս եթէ Մինաս վարդապետն ելեալ լինիցի պատ, գուա Իւահակ վարդապետդ պարտիս զայս գրեալս մեր անյապաղ հոգալ և կատարուիմ տալ։ Եւ այսպէս գի տացեալ ողջ լերուք ի Տէր։ Գրի 1232։ Ի Մայիս 22։

Առ պարոն Յօհաննէսն որ ի Բայաղիտ. վասն իւր հայր Բալասանի հոգւոյն քառասնից մէկ լծումանին։

Առ պարոն Սահակ ումն, որ ի Թօփրախ զալայն ի դրունս Աւդուլլարէկլին է։

Առ ժողովուրդսն Գեանջայու, վասն դանձանակադրամին չնորհակտուլիւն։

Առ պրուսացի տիրացու Յովհաննիսի եղբայր մահտեսի Միքտիչն։

Առ Գալուստ բաղմաշխատ վարդապետ նուիրակն՝արտաքինվիճակացն մեծի Պօլսոյ։

Առ Մահտեսի Գրիգոր՝ Թօմա և Անտօն աղայսն որք ի Թօխաթ։

Առ Յովհաննէս վարդապետ, առաջնորդն սուրբ Յովհաննիսի վանիցն որ ի Մուշ։

Առ մահտեսի Սահակ և պարոն Գէորգ իշխանսն Վանայ։

Առ Մելիքսն և իշխանսն Սալմաստու և Հաղբակու։

Առ մաքսապետ պարոն Ստեփանն որ ի Թիֆլիզ։

Եւ ընդ սիրոյ և Անդրանկի օրհնութեանս Աստուածայնոյ, դիտասջիք ազնիւ սիրելիդ մեր և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յառաջագոյն յաղագ գրեալ հասարակ կոնդակին մերմէ զամենայն անցսն սրբոյ Աթոռոյ Ծնողիս քոյ և մերթէ ի կողմանէ մահուան երանեալ հայրապետին մերոյ. և թէ սակս մերոյ ի յաթոռ Հայրապետութեան վիճակելոյն լուեալ և իմացեալ իսկ ես։ Որ և՝ վասն կատարեալ սիրոյդ և հարազատ որդիութեանդ զոր ունիս առ սուրբ Աթոռս Ծնողս քո։ գիտեմ զի միշտ զբարիսն սրբոյ Աթոռոյ խորհիլ և առնել ջանաս. և զղայրէթս սորին և մեր հանապազ քարշեալ յօժարիս առ ի ժառանգել միշտ զչնորհս և զօրհնութիւնս իմանէ և ի մէնջ որպէս լսեմք և իմանամք (և մանաւանդ զհարազատութենէդ հարազատ գործակալն մեր Տէր Ղազար աւագ քահանայն ևս պատմեաց մեզ բերանով). վասնորոյ՝ զայս յատուկ սիրոյ և անդրանիկ օրհնութեան թուղթս արժանի համարեալ ի յուրախութիւն քեզ և ի պահպանութիւն օրհնեալ տան քո գրեալ առաքեցաք որով և ևս տատեսցիս ի սէր և հարազատութիւն սրբոյ Ծնողիս քո և մեր, և զբարին և զօգուտն սորին և մեր միշտ կամիլ և առնել ջանայցես։ Այլ և՝ յատկապէս զայս պատուիրեմ սիրելւոյ որդւոյդ, զի ի նախնեաց հետէ անտի ի քնէ այնպէս է հաստատեցեալ, զի ճորտքն սրբոյ Աթոռոյս զիւրեանց խարճն և մաքսն յատկապէս սրբոյ Աթոռոյս հատուցանեն որպէս և օրէնն է քնական և ի կողմանէ կիւմրուկից և մաքսից զիր ինչ ումեք ո՛չ տան, ո՛չ մաքսապետացն տեղւոյդ և ո՛չ այլոց։ Բայց՝ ադահասիրտ մաքսապետք ոմանք, փոխանակ զբաւրիս առնելոյ սրբոյ Աթոռոյս և ճորտիցն մերոց յատկապէս մուղայէթ և խնամատար լինելոյն, անկարգաբար և ագահապէս զղչխացաւութիւնս տալով Աթոռանոցն մերոց որք յայդր, կամեցեալ են ի կողմանէ մաքսից զիր ինչ պահանջել ի ճորտից մերոց։ Վասնորոյ ի սրբոյ Աթոռոյս զմեզ. դրութիւնս են ընկալեալ և խափանեցեալ ի յանկարդ արարմանց իւրեանց։ Նոյնպէս և հարազատ մաքսապետն վասն պէսպէս բարերարութեանց իւրեանց, միշտ զօրհնութիւնս են ժառանգեալ՝ ի սրբոյ Ծնողէս իւրեանց։ Յաղագս որոյ հայրական սիրով և

մեծաւ հարկիւ ի զգուշութիւն սիրելւոյդ և հարազատի որդւոյդ մերոյ գրեմ, Պարսի՛ս դու ևս ըստ հարազատի որդւոյ միշտ ըզլսարիս և զհարազատ որդիութիւնս առնել սրբոյ Աթոռոյս և յայնպիսի թիւր արարմանց և անկարգութեանց հեռի մնալ։ Որով միշտ զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս ի մէնջ միշտ ժառանգեսցես։ Ողջ լեր։

Առ հին պատրիարք Ցուկտանէս Աստուածապատն վարդապետ նոր առաջնորդն Ամասիոյ վասն մխիթարութեան և սրտադիւրութեան սիրալիր բանիւք։

Առ տիրացու Սարդիս շնորհալի վէրինն սրբոյն Սադիմայ։

Առ Քրիստոսազօր Գիւորկին Միրզայ օրհնակալ արքայորդին վասն Թիֆլիզցի Դաւիթ վարդապետի ուրումն որ խնդրեալ էր առնել զնա եպիսկոպոս։

Ծորմէ ճշմարիտ կարօտիւ, մշտաբաղձ սիրով, քրիստոսական սուրբ Ոգւոյնիւ և Աստուածային օրհնութեամբ և սրբոյ Աստուածածնի Տեղւոյս պահպանողական շընորհիւն, և զօրութեամբ սքանչելահրաշ և Աստուածակիր սրբոց մասանցն որք աստ կան, ծանուցումն լիցի ճշմարիտ սիրեցելւոյ և հոգւոյս ցանկալւոյ և սրբոյ Աթոռոյս օգտակամ՝ և սրտացաւ բարեկամի. Աստուածասիրի և բարեպաշտի, քաջատսմի և թադազարմի, Գեօրկին Միրզայ արքայորդւոյդ Տերամբ օրհնեցելոյ, և ի նոյն զարդացեալոյ։ Զի սիրաւնիշ թուղթն յատկեզ սիրելւոյդ ձեռամբք Դաւիթ խոհեմամիտ վարդապետին. և հաւատարիմ ծառային քո պարոն Ջահարիկն էհաս առ մեզ, զոր ինչ ի նմա գրեալ էիր սիրով ընթերցեալ ծանեաք և սակս ի մտի ունելոյդ զմեզ կարի ուրախացեալ շնորհակալ եղաք և իմացաք զինդիրն աղնուդդ, որ սակս Դաւիթ վարդապետի եպիսկոպոս ձեռնադրելոյն էր։ Նախապէս լուր առ այդ ս՛ աղնիւ. յառաջ քան զայս՝ ի մեծէն Պօլսոյ, ի սուրբ յերուսաղէմայ և ի սուրբ Կարապետու նշանաւոր վարդապետք էին եկեալ վկայական և մահտարական թղթովք առ ի ձեռնադրիլ եպիսկոպոս, որք և աստ երկար միջոցաւ մնացին. մինչ մեք զժամ գտեալ զնոսա ձեռնադրեցաք, Դաւիթ վարդապետն զկնի ե. աւուրց անցելոց ապա եկն։ Եւ ինքն ևս եաես աչօք իւրովք նոր էին ձեռնադրեցեալքն։ Ինչ և իցէ այժմ մնաց Դաւիթ վարդապետն առ մեզ, սպասելով այլում պատշաճաւոր ժամու որպէս և օրէնն է։ Եթէ Տէր կամեսցի, և յաջողեսցէ, վասն քաղցր և պատուական խաթեր բազձալւոյդ զայդ խնդիրդ ևս կատարելոց եմք. միամիտ լեր։ Երկրորդ՝ զգերազանց սէրդ՝ և զճշմարիտ բարեկամութիւնդ որ առ սուրբ Աթոռս և առ մեզ, ի ներկայումս յայտնեալ էիր մեծաւ ջատագովութեամբ. որև զօրհնեալ և զքրիստոսապահ Արքայ Հայրն քո շարժեալ էիր ի գութ և ի սէր սրբոյ Աթոռոյս և մեր և ազգիս մերոյ առ ի բառնալոյ զնախատինս ի մէնջ։ Որև հաստատուն և անդառնալի վճռափակ թղթով հրամայեալ է առ ի բառնալ զկաթուղիկոսական անուն Իսրայէլին յեկեզեցեաց մերոց, որք են ընդ ափրահատատ տէրութեամբ ձերով։ Միայն կոչելով գնա արքեպիսկոպոս և առաջնորդ Հազպատու վանիցն և զայլ անկարդութիւնս և զանբարտաւանական չափազանցութիւնն նորին սանձահարեալ էիք։ Զորս լուեալ մեզ զբոլոր ջատագովական քաջութիւնսն ի խնամոց և ի յատուկ սիրոյ քումմէ յառաջացեալ գիտացաք. և քերանալիր դոհունակութեամբ զմեծութենէ ձերմէ շնորհակալ եղաք, և առ խնամաշատ և ճշմարտասէր Քրիստոսապահ մեծ Արքայն զթուղթ շնորհակալութեան դրեցաք եւ զձեզ ամենեսեան հանդերձ թադաժառանդ և օրհնազարմ՝ ընտանեօք օրհնեցաք։ Զորս Տէր Աստուած օրհնեսցէ և պահպանեսցէ զօրացուսցէ և աճեսցուսցէ և զամենայն թշնամին սրբոյ Խաչին Քրիստոսի ենթ ոտից ձերոց պատնէլով՝ միշտ յազթողս արասցէ ի յապահովութիւն մեզ և յուրախութիւն սրտից մերոց։ Ամէն։

Երրորդ վասն զԴաւիթ վարդապետն եպիսկոպոս առնելոյ, զայս վերստին ծանուցանել հարկաւորիմ Աստուածատուր հանճարով

առ լցեալ աղնուոյդ, զի զպատուական խաթրն աղնուոյդ իմոյ, ընդ բոլոր աշխարհի ո՛չ փոխանակեմ. որպէս և խոստացաք, ըստ խնդրոյդ ըստ ժամանակին զնա եպիսկոպոս եմ ձեռնադրելոց և յղելոց: Բայց որովհետև միջոցն երկարելոց է մինչե ցձեռնադրիլն, նախապէս զայս հարցանեմ առ ի գիտել և միամիտ զի գիտես իսկ, բոլոր Քրիստոնէից կանօնէ, որ զեպիսկոպոսն ի վերայ յատկացեալ վիճակի միոյ և ժողովրդեան ձեռնագրեն, որ ինքն լինիցի իբրև զհոգեւոր փեսայ. և որումէ վիճակեցեալ է, այն լիցի որպէս զհարսն: Որք ըստ օրինին զմիմեանս հոգևորապէս վայելեցեն: Իսկ Դաւիթ վարդապետաւ այս զոր հանդերձեալ եմք ձեռնագրել եպիսկոպոս, որոյ վիճակի վրայ պակեսցուք. որ ի ժողովրդոց ոմանց և ո՛չ ունի զգիր և զմահսար, որ ի ձեռնադրելն ի մէջ եկեզեցւոյ առաջի բազմութեան ընթեռնուցումբ որպէս և կանօն և սովորութիւն է մեր: Արդ՝ այսու զայս կամ՝ ասել աղնուոյդ. եթէ այնու դիտամբ է, որ ըստ ժամանակին լինիցի առաջնորդ սրբոյ վանիցն Հաղբատու և զԻսրայէլն հանիցէք այսի, որպէս և նշանն այժմուս աեսանի, այն յոյժ բաբի լինի և մեծ ուրախութիւն սրտից մերոց: Խնդրեմք ուրեմն ի յարգարագատ սէրութենէ ձերմէ զարդար իրաւունս առնել, զի որպէս ի ժամանակս ձեր և ձերովք թուլատրութեամբն արմատացաւ գա յայդր առ ի խանգարել զկանոնական աւանգութիւնս հարցն առաջնոց: Նոյնպէս և մեծութիւն ձեր, ի ժամանակս ձեր վերատին հանել զդա այսի ազաչեմք. զի մի՛ անկարգութեան դորին լինիցիք պատճառք. այլ եթէ կամիցիք Նանչիք զդա ի յառաջնորդութենէն Հաղբատու և յղեսջիք ի տեղի իւր և կամ առ մեզ, և մեք աստ որպէս զարհի եպիսկոպոս դասագլուխ կարգեալ ի վերոյ յատուկ խալիչային կանգ. նեցուցեալ ի ս. Աթոռոջս որ է քաղաքացի և բնիկ միաբան նոյնոյ վանիցն օրինաւոր կարգաւ ի վերայ Հաղբատու սրբոյ վանիցն և բոլոր վիճակին եպիսկոպոս ձեռնագրեալ և առաջնորդ կարգեալ յղեսցուք. ահա այս է օրինաւոր կարգն, և բարւոք ժամանակն, զոր օրհնեցեալդ մեծի Աբբային և ծանուցաք, և ազաչեցաք այսպէս առնել: Իսկ եթէ այսպէս չկամիցիք առնել վանն սորին զայլ դիտմունս ունիք, զայն և խնդրեմ ծանուցանել: Իսկ եթէ ոչ, այլ միայն խնդրէք եպիսկոպոս առնել, որ եկեալ յայդր Իսրայէլին, կամ քահանայից և այլոց ծառայելով ինքնագլուխ շրջիցի, այն յոյժ խզճահարութիւնէ մեզ. և անարգութիւն առաքելական կարգին. և ստորանկուածն իւրեան. յայնժամ ինքն լինի ոզորմելի. և խզճմտանք մեծահասատ սիրելւոյդ: Որոյ զորպիսութիւնսն ի Շաքարօ հարազատ ծառայէգ իմանալոց ես բերանով, և ինքն Դաւիթ վարդապետան և՛ գրեաց և ծանոյց զօգուտն իւր մեծութեան սիրելւոյդ՝ յորոց և լուսալ զպատասխանին Թզթոյս գրել և ձեռամբ սոյն Շաքարոյին առաքել խընդրեմ: ողջ լեր. ի Տէր զարգացեալդ ի Քրիստոս և զօրացեալդ ի նոյն:

Ի Թզթոյ Եսայի Աստուածաբան վարդապետին դիտին Զմիւռնիոյ գրեցաւ ի պատասխանի խնդրոյ նորին:

Առ Աբրօյեան Աստուածատուր Աղայն ի մխիթարութիւն թախծեալ սրտի նորին: Առ Մեսրոպ Ամուճայ կոչեցեալ ալեդարդ հարազատն սրբոյ Ամոռոյս, որ ի Պօլիս:


Առ Տէր Սահակ քահանայն և երեցփոխան պարոն Պալին Ախալցխայու:

Առ Ախիջան Աղայն վանցի, որ ի Կարին:

Ի Փուտուլայոջ վէքիլ պալոն Հայրապետին զայս գրեցաք ի ՌՈՄԸ ի՛ռւին. ի յապրիլի 4 ընդ Պետրոս վր՛. առաջնորդին:

Զայս և ծանիր սիրելիդ մեր պարոն Հայրապետ. զի վասն այդ Աբրահամ ծերունոյդ Ղարսեցի կոչեցելոյ. զոր ինչ գրեալ էիր իմացաք: Եւ ինքն և քանիցս վայր ի վերոյ յատաջագոյն զթուղթսէ գրեալ առ մեզ: Եւ այժմ և էր գրեալ որոց զպատասխանին անտեզի Համարեցաք գրել իւրեան, Զի ի կաթուղիկոսութենէ


Քիւթուր կոչեցեալոյ մինչև ցայժմ 36 տարի են անցեալ, քանի կաթողիկոսունք են նստեալ, եթէ գա զառնլացուս ունէր. ի սրբոյ Աթոռոյս ընգէ՞ր մինչև ցայսօ՞ր ոչ էառ ի զկնի նորին նստող կաթուղիկոսացն։ Դա որ զմեզ ստուեթան իւրոյ գիտակ և տեղեակ գրէ. մեք յայնժամ դեռ ևս տղայ գոլով զիա՞րդ կարեացուք գիտել եթէ զի՞նչ տուր և առութիւն ունէր յայնժամ ընդ վերս յիշեալ կաթուղիկոսին պրդ այդ։ Մի՛. թէ ես խորհրդակի՞ց էի այդպիսեաց իրացն։ Չի դա ինքնին գլէ ի թուղթս իւր թէ՛ ի Մինաս կաթուղիկոսէն պահանջեալ այսքան առի և այսքան ճեաց. և այլն։ Եթէ ճըշմարիտ է, և գա սանատ ունէր ի ձեռին ի հարկէ սանատն տուեալ է զդրամն առեալ. և զհաշիւն իւր կատարեալ, ուրեմն ստուԹիւն դորին և խաբերայութիւն այնու է յայտ, որ կեղծաւորութեամբ և պատրողական բանիւք ի յետին թզթոջ իւրում գըրէ առ մեզ թէ՝ յիշեա՛, ո՞վ քաղցրադութ Տէրդ իմ. զբանն զոյն որ յուսացուցեր ծառայիս՝ մինչ էիր ի Իզմիր քաղաքու՛մ, ասելով թէ՝ մի հոգար. եթէ Աստուած զիս սուրբ գահոյն արժանացուսցէ, ես հատուցանեմ, որ ահա կատարեցաւ և այլն։ Արդ զայս ասացես դմա թէ ո՞վ յիմար, ես ի Զմիւռնի Առաջնորդ և վարդապետ գոլով, և կաթուղիկոսն ի կենդանութեան, զի՞րդ է հնար մտօք անցուցանել զայդ. և կամ բերանով արտաբերել և սնոտի յոյս տալ ուրեմք։ Եւ այն ևս վասն այդ զօղանջմանցդ որ ո՛չ զծայրն գիտեմ և ոչ զվերջն։ Ուրեմն զյա սիրով զգուշացո առ ի բաց կալ յայդպիսի սնոտի խնդրոց և յունայնաբանութեանց. զի մի ի ծերութեան ժամանակին զանունն իւր աւերելով ի հոգևսր և ի մարմնաւոր որոգայթ ինչ անկանիցի. և զսուրբ Աթոռս և զմեզ ի վրէժխնդրութիւն շարժեսցէ։ Արդ՝ եթէ զառն լի ինչ ունի ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ, թող զսանատն հաննեալ ցո՛յց տացէ ձեզ. և դուք ևս ծանուսջիք մեզ։ Իսկ եթէ ո՛չ, լռեսցի յայդպիսեաց սնոտի խնդրոց և կարծեաց։ Բաւ է. այսպէս ծանուսցես իւրեան. կրկին ողջ լեր ի Տէր։



Առ Հոչայ ումն՝ Հոշի Հոզոյ կոչեցեալ որ ի Ղարս Ս յաւանակ էր տուեալ յանուն սրբոյ Աթոռոյս՝ ոլ. Գէորգին, առ ի յղել առ մեզ։

Առ Ջինոյն որպի Հոշայ Ցարութիւն ևիւր եպրայր Մինասն որք ի Ղարս. վասն Ս յաւանակ չնորհելոյն սրբոյ Աթոռոյս. ձեռ" ոլ. Գէորգին։

Առ մահտեսի Գալուստն և մահտեսի Թուման որ ի մեծն Պօլիս։



Առ Ցակոբ վարդապետ նուիրակն Վանայ. ի պատասխանի երկուց թղթոցն նորին։

Ցորմէ հայրական սիրով և հոգևոր օրհնութեամբ, և սրբոյ Քրիստոսաիջի Տեղւոյս նպաստաւորից շնորհիւն ծանիր սիրելիդ մեր՝ հարազատ և շնորհաճին զաւակ սրբոյ Ա. Թոռոյս Ցակոբ խոհեմատատ և յոգնաշխատ վարդապետ։ Չի ի մարտի Ի. և ի Ապրիլի Բ գրեցեալ երկոքին Թուղթքն քո ի միասին հասին առ մեզ հանդերձ փութասուլայիքն. ի յապրիլի ԻԴ. զոր ինչ ի նոսա գրեալ էիր իմացաք։ Որոց զպատասխանին ի միամտութիւն քեզ հարազատիւդ մերոյ գրեմք ահա։ Նախապէս զորպիսութիւնն և զտաժանելի աշխատակրութիւնն քո և գործոյդ էիր գրեալ, իմացաք։ Որում Տէր լիցի զօրաւիդ և օգնական. ըստ գրեցելոյգ պարտիս ջանալ առ ի շուտով ղերծանիլ ղգործդ և պարզերեսութեամբ գալ առ սուրբ Աթոռ ծնօղս քո առ ի հանգչիլ յաշխատանացդ. և վարձատրիլ ըստ հոգւոյդ և ըստ մարմնոյդ։ Երկրորդ ի կողմանէ ուստայ Տասպարի փոլիցային զՕղուզուշն և՝ շուտով հասուսցես և զփոլիցայագիրն առնուցուս և մեզ գրեսցես ի միամտութիւն։ Երրորդ գրեալ էիր թէ վերըստին գնալոց եմ ի Մահմուտան և ղնացեալ ե գիւղորայն և՝ նուիրակելոց. և ղժողովեալ ոչխարն որք անդ, սուղևորելոց եմ ի սուրբ Աթոռդ, և ղորքանութիւնն գրելոց և այլն։ Բարւոք է, այնպէս արասցես որպէս և գրեալ էիր և ղգործոյդ սի-


րով և արդիւնաւորութեամբ և ժամու միով յառաջ աւարտեցն զանասցես։ Զորրորդ՝ զոր ինչ ի փուսուլայոջդ ի կոզմանէ Բոզտասար վարդապետին դրեալ էիր իմացաք ըստ գրեցելոյդ եմք առնելոց, միամիտ լեր առ այն։ Հինգերորդ՝ զմահուանէ լուսահոգի Թոմայ խզճալի կաթուղիկոսին, և զկնի վախճանի նորին զամենայն անցից և եղելութեանցն՝ պարագայիւք գրեալ և ծանուցեալ էիր, ի մացաք, և զվանեցւոց բազմակնիք մահսարն ևս զոր համահաւանութեամբ կնքեալ և առաքեալ էիք ընկալեալ ծանեաք։ Որոյ ըզպատասխանին ըստ մտաց ձեռագրի Թոմայ կաթուղիկոսին և լուսահոգւոյ ի թեմս նորին գրեալ կոնդակին և վճռական ուխտին ահա գրեալ առաքեցաք. և ըստ գրեցելոյ ազաչանաց նոցին, ըստ որում դու ևս ի թուղթս քո վկայեալ էիր զարժանաւոր գոլն ընտրեցելոյ նոցին կաթողիկոսին և զհարազատութիւն նորին որ առ սուրբ Աթոռս և առ մեզ ծանուցեալ էիր, հրամայեցաք օծանել զնա ի յԱթոռոյն Աղթամարայ. և ի պատշաճ ժամանակի ուղևորել առ մեզ ի վերահաստատութիւն կաթուղիկոսական իշխանութեան նորին. և զայլ այսպիսի պատուէրս գրեցաք. զոր ի յընթեռնուլն դու ևս իմանալոց ես։ Եւ դու սիրելիդ մեր զորպիսածանոյց թուղթդ ի մէնջ անպակաս արարեալ լեր ողջ և օրհնեալ և ղօրացեալ ի Տէր։ Գրի ՌՍԼԲ ի յապրիլի Ի։

Զայս ևս ծանիր, զի յայդր ի Սուլէյման փաշայի խանն ընակեալ Քրիստոսասէր սիրելւոյն մերոյ պարոն Նիկոլային ի մէնջ սիրով ողջոյն և օրհնութիւն տուեալ ասացես. զքոյդ թուղթն սիրով ընկալեալ զդրեալսդ ծանեաք. և թուղթն զոր առ Ազնուագոյն սիրելին մեր Հերակլ օրհնեալ Արքայն վրաց գրեալ էիր, շուտով ձեռամբ Արքայորդի Գեօրկին Միրզայի ծառայ կոնատ Շաքարոյին, որ աստ առ մեզ դտանեցաւ, յղեցաք ամրողջ կնքով. այսպէս դիտացեալ միամիտ անհոդ և ողջ լեր ի Տէր։

Առ Ալիքեան Ողալի եղբայր պ. Գէորգն որ ի Վան. ի պատասխանի թղթոյն նորա։

Ի ՌՄԼՒ թուին ի մայիսի. ի Կարին մեր վէրելոյ Հայրապետի թղթոյն դրեցաք։

Առ Յակոբ վարդապետ Նուիրական Թօխաթու ի պատասխանի մարտի Ա դրեալ թղթոյն նորա։



Առ Գօրգեան մահտեսի Յաչատուրն եւ պարոն Սերոբ եղբարսն իւր որ ի Կարինն։

Եւ ընդ Աստուածային օրհնութեան և սիրոյ նամակիս ծաներուք յատկացեալ սիրելիք մեր և լուսածնունդ զաւակք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, Զի ի յունիսի Գ գրեալ սիրալիր թուղթն ձեր էհաս առ մեզ ձեռամբ Քրիստոսիւ ղօրացեալ եղբօր որդւոյն ձերոյ՝ սիրելւոյ և հոգևորի զաւակին մերոյ մահտեսի Յակորին. և Էնէշայինն ձերոյ և մերս սիրելւոյ մահտեսի Ադամալին և այլն ձերայնոցն։ Զոր ինչ գրեալ էիք իմացաք. և ձերայինքն երջանիկ բախտի պատահելով յաջողմամբն Աստուծոյ հոգւոյն ի յայն երեկոյին եկեալ հասին ի սուրբ Աթոռս, յորում հանդերձեալ էաք ի վաղուեանն զիւղն օծութեան զսրբալոյս Մեռոնն օրհնել. որք և արժանացան տեսանել և վայելել ղԸնորհս և ղօրհնութիւնս Աստուածադործ և սրբաբար Մեռոնին. և ջերմեռանդ հաւատով կատարեցին զուխտն իւրեանց։ Եւ մեք ևս զմահտեսի Յակոբ սիրելին մեր և զայլսն օրհնեցաք և խնդրեցաք ի շնորհաբաշխութեանցն և ի հոգեպարար և յախտափարատ օրհնութեանցն սրբոյ Աթոռոյս, և ի փրկարար նշանաց և մասանցն որ ի սմա, առ ի փարատել ղցաւս և ղհիւանդութիւնս մահտեսի Յակոբ որդեկին մերոյ. և ըստ արժանեացն շահեալ ուղևորեցաք. որոց ի գալն պատմելոց են ձեզ սիրելեացդ զամենայն, հանդերձ որպիսութեամբք մերովք։ Ա՛յլև՛ ղիղձն և զփափաղն սրտից ձերոց ղորս ծանուցեալ էիք, իմացեալ յոյժ ուրախացաք. և խնդրեմք յԱստուծոյ, զի ձեզ ևս արժանացուսցէ առ ի տեսանել զսուրբ Աթոռ շնորհաբուղխ մայրս ձեր և լցուցանել զՀոգետարափ իղձն սրտից ձերոց, զոր տեսեալ զմխիթանս ուրա-

խասցուբ։ Արդ՝ ի շնորհաց և յօրհնութեանցն հոգեաիպ Մեռոնին, ձեզ և՛ զմեծ մասն և զրաժին հաղիցէ սրբագործօղ Հոգին Աստուած. և զամենեսեանդ ի շնորհս և յոգորմութիւնս իւր պահեսցէ, զօրացուսցէ նախախնամեսցէ և պահպանեսցէ և օրհնելով օրհնեսցէ Ամէն։ Գրեցաւ ի վառազ ժամու ի ՌՄԼՔ և ի յունիսի ԻԷ։

Առ Տէր Սարգսի որդի Տիրացու Կիւրեղն որ ի Ղըրխաղաճ։

Առ Պետրոս Ծերունափայլ վարդապետ Առաջնորդն Էտրէնու Ղափանցի կոչեցեալ։

Առ Սիմէօն դպիր ոմն՝ ի շնորհակալութիւն վասն յղեալ գհարմասուտին։

Առ Մելիք Ուսուպի որդի Մելիր պ. Ասպումն ի մխիթարութիւն վասն Մելիք Աթամ հանգուցելոյն (և եղբօրն Մելիր Բէգլարին)։

Առ Յովսէփ վարդապետ սպասաւորն Թոխաթու նուիրակ լուսահոգի Յակոր վարդապետին։

Առ արեելցի պարոն Մինաս որ ի Հալապ։

Առ մահտեսի Գրիգոր, Թումաջան և Մանտօն Ողայսն որք ի Թօխաթ։

Առ մահտեսի Ղամջանի որդի տիրացու Մանուկն որ ի Թօխաթ։

Առ մահտեսի Խտըրն Կեսարացի, որ ի մեծն Պօլիս։

Առ Նաւասարդի որդի Փիլիպպոսն որ ի Խօյ։

Առ Տէր Մարգարն որ ի Խօյ։

Առ պ. Մելիք Աւետիքն որն ի Թիֆլիզ։

Առ Ակնցի Խօջայ Յովհաննէսն որ ի Կարին։

Առ լուսահոգի պարոն Նդիազարի ընտանեաւն մխիթարութիւն։

Առ Մարաղայ քաղաքի ժողովուրդն վասն հաստատելոյ զդանձանակ և զդանձապահ յանուն Աթոռոյս յորում և այլք պատուէրք։

Առ Մաշկերտցի բահանայսն, իշխանսն և ժողովուրդսն, վասն ի միջի իւրեանց նոր դանձանակ հաստատելոյն շնորհակալութիւն և օրհնութիւն։

Կոնգակ ժողովարարութեան վասն Սանահնոյ սրբոյ Աստուածածնի վանիցն։ Ի վերայ Թիֆլիզու և բոլոր շրջակայիցն նորա։

Առ Կարնոյ գանձապետ Մսրլեան պարոն Պետրոսն վասն Ք. տարւոյ 290 դուռուշ գանձանակադրամին առ վէրինն մեր հասուցելոյ շնորհակալութիւն։

Առ Տէր Ղազար գործակալն մեր որ ի Թիֆլիզ։

Առ նոյն Տէր Ղազարն։

Առ Արեելցի մահտեսի Ըռստագէսն որ ի Թօխաթ։

Առ Մարիամ կին ոմն՝ որ ի Թօխաթ։

Առ Կերդասցի պ. Յարութիւնի որդի պ. Գէորգն վասն Ա արծաթեայ սկհուոյն շնորհակալութիւն և օրհնութիւն։

Առ Տէր Գրիգոր և Տէր Աւետիս քահանայսն որ ի Զմիւռնի։

Առ Զուղայեցի տիրացու Ստեփաննոսն Տէր Յովհաննիսեան որ ի Վան։

Առ կոմսունսն Ղուանից վասն շնորհակալութեան դանձանակադրամիցն առ մեզ հասելոց ձեռամբ Յակոբ վարդապետին։

Առ Պետրոս Աստուածարան վարդապետն գէտն Կարնոյ։

Առ գանձասպետ մահտեսի Ցակոբն որ ի Ցամիլթ ս. Սարգսի հկեղեցոյն։

Առ Բայաղիտու Տէր Վահանն, այսինքն Ղալխանն։

Առ Մ'էլիր պարոն Քօլին Տաճեու։

Առ Թօխաթցի Դաւիթ ումն պղնձագործ։

Առ Տէր Ստեփաննոս քահանայ ումն որ ի Ուրուշճուվս։

Առ Գրիգոր վարդապետ նուիրակն Ուռում։

Առ սուրբ Կարապետի Առաջնորդ Աստուածատուր վարդապետն վասն յանձնարարութեան Տիրայուս Անանիայ շնորհապերճ սարկաւագին մերոյ։

Առ Մարգարէ Ողայն Խալդարեան որ ի Բաղտատ։

Առ հանգուցեալ Պարոն Ողամալի եղբայր Պարոն Մկրտիչն և սորին որդի Մարտիրոսն և նոյն Ողամալի Անթառամ և Մարիամ դստերն շնորհակալութիւն վասն 15 ֆըչի խնկոցն։

Ի վերայ Հօրայ, եւ այլ Շրջակայից նոցին վասն օրինազանցութիւն եւ հատուցման ինչ հատնելոյ։

Ցորմէ հայրական սիրով և հոգևոր խրատուք ծաներուք, Հօրայ քաղաքի և գորին շրջակայ գիւղորէից և նահանգաց համայն քահանայք, իշխանք և առհասարակ ժողովուրգք. մեծամեծք և փոքունք։ Զի այգ որպիսի խղճմտանք և որպիսի անզեղջ մոլութիւն է. որ ի վաղուցհետէ անտի բնակորեալ է ի միջի ձերում. որք զանուն Քրիստոսէն ունիք. և զահեզ հրամանն Քրիստոսի և սրբազանից Առաքելոց նորին զկանոնս, և զպատուէրս Հարցն սրբոց և երջանիկ հայրապետացն ո՛չ պահէք. այլ առաս արկանելով զչարութիւնս, զանկարգ և զանօրէն ազգաշազախ ամուսնութիւնս և զպիսպիս օրինազանցութիւնս առնէք զհոգևոր և զմարմնաւոր բարեկամս անխարար առնելով և ընգ նոսին չնանալով. զանմեղն և զմիամիտան գայթակղեցուցանելով խորէք զպատուիրանս Աստուծոյ, և զկանոնս Հարցն սրբոց։ Որք անիծիւք և զնովիւք փակեալք են։ Քանիցս անգամ բողոք և գանգատ են հասեալ առ մեզ ի կողմանէ ձերմէ յաղագս չհաստութեան. և լսելով մեր զայն կարի ղղուեալ և վիրաւորեալ եմք ի ձէնջ թէպէտ, սակայն՝ երկայնամտեալ սպասեաք զի թերևս գարձջիք յուղղութիւն և ի բաց թողուցուք զանկարգութիւնդ և զհոգեկորոյս հեթանոսական սովորութիւնդ։ Իսկ գուք զվատթար և զզգաշազախ չար սովորութիւնն ոչ թողիք ի բաց. այլ օրըստօրէ բազմացուցանել ջանայք. որոց գանգատն և աղաղակն միշտ հնչէին ականջս մեր. ղորս և տաղտկացուցանեն։ Եւ մեք յոգոց հանելով տրտմիմք և զայրացեալ վասն թիւրաշաւիղ և հոգեկորոյս ընթացից ձերոց զհնարս փրկութեան հոգւոց ձերոց խնդրելով յԱստուծոյ, ուղղութեան և զղջման և գարձի ձերոյ սպասեալ ևմամք։ Իսկ գուք ո՛չ ի յԱստուծոյ և յահաւոր դատաստանաց և պատժոց նորին երկնչիք. ոչ ի մարգկանէ ամչիք, ոչ ի յանիծից և ի նզովից երանելի և երջանիկ նախնի Հարցն սրբոց զարհուրիք. որք մեծագոյն նզովիւք փակեալք են և կանոնագրեալք առ ի զչհաստութիւն և օրինազանցութիւն ոչ առնել։ Զի ինքն Քրիստոս Աստուածն մեր ամէնօրհնեալ բերանովն իւրով՝ օրինագրեալ հրամայէ ասելով, զոր Աստուած զուգեաց մարգ մի՛ մեկնեսցէ։ Արդ՝ Քրիստոնէական անուամբ պարծիք և զհրամանս նորին արհամարհեալ խոտէք և ո՛չ կատարէք, ո՛չ Առաջնորգաց հոգևոր խրատուց անսայք, և ի ո՛չ Հայրապետաց սաստից զերկիւղ ինչ կրէք։ Թողցուք զԱռաջին Հայրապետն և զԱռաջնորդսն, զոր զղուեցուցեալ էք և ի ներքոյ անիծից նոցին մնացեալ։ Զնոր և զյետինսն յիշեցուսցուք ձեզ։ Արգ՝ ո՛վ անզգամք ունկնախիցք՝ և լսելափակք. ի չարիս ձեր յամառեցեալ ըստ նզեզջ դիւաց։ (Ո՛չ եթէ առ հասարակութիւնդ է մեղադրութիւն մեր. զի հասա-

րակութիւն անպարսաւ և անմեղադրելի է ըստ վճռոյ Աստուածային գրոց։ Զի բազումքդ ի ձէնջ օրինապահք էք և երկիւղածք յԱստուծոյ) այլ՝ առ այնոսիկ է մեղադրութիւն մեր, որք զպնպիւի չհասութիւնս և զօրինազանցութիւնս գործեն ընդդէմ Աստուածային և Հայրապետագիր օրինաց. որք և ի ներքոյ նզովից նոցին իսկ են։ Զի ի ժամանակս հանգուցեալ Առաջնորդին ձերոյ լուսահոգի Եսայի վարդապետին, ձերովդ օրինազանցութեամբ այնքան զգուեցուցիք զԼուզաչին այն, մինչ զի եկեալ էր առ ոտս Հոգելոյս Հայրապետին Ցեղուն Ոհմէնի սրբազանին. և բողոք բարձեալ զօրինազանցիդ և գանգատեալ. իսկ լուսահոգի սրբազանն առ ձեզ զսաստիկ մեղագրանաց կոնդակ էր գրեալ և ի նմա զօրի նազանցն և զչհասարարն և կամ զանօզնն ընդ նզովիւք փակեալ։ Որք զայն կոնդակն տեսեալ և զչարաչար նզովն լուեալ իսկ էք։ Բայց՝ զկնի ԺՌ ամաց անցելոց. սկսեալ էք զչիջեալ հուրն նորապէս բորբոքել. և ի յառաջին մոլորութիւնսն դառնալ. և վերստին զանգրելի օրինազանցութիւնս և զչհասութիւնս առնել։ Եւ յայտ է թէ ձեացեալ էք ի ներքոյ նզովից լուսահոգի սրբազանին։ Մինչ զի նորապէս կամիք զսիրելին մեր և զհարազատ զաւակն Աթոռոյս, և զարժանավայել Առաջնորդն ձեր զնահակ բարեշուիզ և ուզղակրօն վարդապետն և արժանապատիւ արհի եպիսկոպոսն զգուեցուցանել ձերովդ օրինազանցութեամբ, և անառակ գնացիւք։ Ուր նա և ըստ Եսայեայ խզճալի վարդապետին զգուիցի յուսահատիցի և զգեռահոչակ սուրբ վանսն թողեալ և գնացէք։ (և գուբ և Թարց Առաջնորդի սանձակոտոր զթիւր կամս մարձոյ ձերոյ արարեալ այլազգաբար վարիցիք ըստ առաջին հոգեկորոյս սովորութեան ձերոյ)։ Արգ՝ հայրական սիրով և մեծաւ հարկիւ զայս գրեմ ձեզ ամենեցուն, առ ի զգուշացուցանել, զի եթէ գըտանիցի ի ձեզ այսպիսի օրինազանց և ազգապիղծ, երկկին և կնաթող. որ զառաջին օրինաւոր կինն թողեալ զայլ կին առնուցու, որոշեալ հանէք ի միջոյ ձերմէ. և իր րև զՀեթանոս և անհաւատ համարեսջիք զպնպիսին. և մեզ ծանուսջիք յանուանէ, եւ դուք ամենեքեան զգուշացարուք և երկերուք յԱստուծոյ և թողէք զամենայն չարութիւնսդ զայգոսիկ, զի մի հասցէ ի վերայ ձեր բարկութիւն Աստուծոյ։ Ահա յայս անգամ սիրով գրեցի ձեզ. պարտիք յամենայն զօրութիւնէ ձերմէ ջանալ և զգոյշ լինիլ յպպիսի թիւր և հոգեկորոյս գնացից. և այսուհետև զօրինազանցութիւն ինչ ո՛չ առնել. կալ և մնալ ի պատուիրանս Աստուծոյ. և ի կանոնս հարցն սըրբոց. և զօրհնութիւնս ի յԱստուծոյ և ի սրբոց նորին, ի շնորհացն սրբոյ Աթոռոյս և ի մէնջ ժառանգել և մի զներհակն. և սիրելոյդ մերոյ և Առաջնորդիդ ձերոյ Սահակայ հանճարառատ վարդապետիդ և հոգևոր խրատուց նորին հլու հնազանդ լինել. զի մի զձէնջ բողոքեսցէ առ մեզ. և մեք ըստ արդարութեան պահանջման վըճռեսցուք ձեզ։

Առ Մանուէլ արեան Աստուածատուրի որդի Պարոն Մարգարն եւ նորին եղբայր Մկրտիչն, Փիլիպպոսն եւ Յովհաննէսն. վասն Ազնուականութեան Ազգի նոցին։

Ցորմէ ժամանեսցի...

Եւ ընդ սիրոյ և Աստուածայնոյ օրհնութեան նամակիս՝ ծանուցուածս լիցի սիրելի և հոգևոր որգւոցդ մերոց. սեռիւ և տոհմիւ ազնուացելոց, և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ի նստիլն մեր յԱթոռ Հայրապետութեան ամենից Հայոց Արամեան ազգի, սկսաք վերահասու և հետամուտ լինիլ նախնի պատմութեանց, հնագոյն կոնդակաց, և այլ մատենական վիպասանութեանց թագաւորաց և իշխանաց, ի սուրբ Աթոռոջս գտանեցելոց։ Ի յորս գտանեցաւ անուն ազգի մերոյ Ազնուեաց՝ Մանուէլարեան կոչեցելոյ, որ եղեալ է ի բնիկ Մայրաքաղաքէն Երևանու. ի նախնեաց անտի ազնիւ և երևելի. մինչև ի ժամանակս Շահապասին, որ տարագիր է արարեալ զաշխարհս մեր, և ածեալ ի պարսս, ընդ որս է եղեալ և ազգն այն ազնիւ, Մանուէլարեան կոչեցեալ։ Որպէս և գտանի ազնուական անուն՝ գրոշհոչակ Ազգին այնմիկ ի յիշատակարանս թագաւորացն Վրաց։ Բայց՝ այժմ՝ լուեալ մեր ի գրեցե-

լոյ հոգևոր որգւոյն մերոյ, և արժանաւոր Առաջնորդին ձերոյ Ցովսէփայ Արքեպիսկոպոսին, թէ՝ գո՛ւք էք ի յազգէն յայնմանէ՝ Մանուչարեան կոչեցելոյ՝ ի յԱզնուացն Հայոց, որք այժմ բնակիք ի Սանկթ Պեարբուրկ, Զոր իրրև լուաք, կարի խընդութիւն եղև մեզ։ Վասնորոյ՝ պաշտաճ վարկաք գրել ձեզ զայս գիր օրհնութեան մերոյ՝ իրրև վկայութիւն հաստատութեան Ազնուականութեան ձերոյ՝ ազգին Մանուչարեան, ի գիտութիւն ձեզ և ի յօգուտ ապագայիցն ձերոց օրհնեալ զաւակաց։ Այլ և դուք սիրելի որդիք մեր՝ բնական և մշտահարազատ զաւակունք սրբոյ Աթոռոյս. և բարի շառաւիղք՝ նմանելով բարեգործ և քաջատոհմ նախնեացն ձերոց, ո՛չ դադարիք ի առնելոյ զբարիս սրբոյ ծնողիս ձերոյ և ջանայք և՛ս օր ըստ օրէ զհարազատ որդիութիւնս և զկատարեալ սէրս ցուցանել, որպէս և բանիւք և արդեամբք ցուցեալ էիք, և միշտ ցուցանէք սիրելւոյ որգւոյն մերոյ, հարազատ, բազմաշխատ՝ և Ընորհալի զաւակին սրբոյ Աթոռոյս, և արժանապատիւ Առաջնորդին ձերոյ Ցովսէփայ Արքեպիսկոպոսին, որ բերանալիր գոհունակութեամբ միշտ զընորհակալութիւնս գրէ զձէնջ և զբազմադիմի բարերարութեանց ձերոց ծանուցանէ։ Եւ մեք զայնս առ սուրբ Աթոռս և առ մեզ արարեալ համարելով՝ միշտ ընորհակալ լինիմք զսիրելեացգ։ և օրհնեմք զօրհնեցեալսգ յԱստուծոյ. զորս ՑԷր օրհնեսցէ՝ և զօրացուսցէ, նախախնամեսցէ և պահպանեսցէ. և Ընորհք սրբոյ Աստուածեան Աթոռոյս ի վերայ ձեր հովանի և պահապան եղիցի. և զօրհնութիւնս մեր միշտ ժառանգեսջիք յազգաց յազգս և յորդւոց յորդիս։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՕԻԹ թուին նոյ. ԻԱ. և ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին,

Առ Գալուստ վարդապետ նուիրակն արտարին վիճակացն Պօլսոյ։

Առ Գալատիոյ նուիրակ Ցարութիւն վարդապետն ի պատասխանի երկուց թղթոց իւրոց։

Առ Պարոն Ցովսէփն Նազարբէկեան որ ի Թիֆլիզ։

Առ Քահանայն և իշխանն Ղարսայ վանն Ցէր Մկրտիչ քահանայի ումեմն։

Առ Մէլիք պարոն Արուքն Գիւլիստանու որդին լուսահոգի Մէլիք Ուսուպին։

Առ Մահտեսի Կարապետն Չալիկեան, որ ի Զմիւռնին։

1791



ՊՈՂՈՍ ԿՈՂՈՍԱՑԻ


Ռուսաց երկրի մերայնոցն նուիրակ եւ առաջնորդ Ծովսէփ վարդապետն, ի պատասիանի քանեաց թղթոյն գրեցելոց ի յՆաշու եւ ի Բէն ղէրու հանդերձ մխիթարուլեամբ վասն մահուան եղբօրն, եւ երկրիս եւ մեր որպիսուլեամբք։

Ծորմէ Քրիստոսաձիր սուրբ ողջունիւ և նոյնապատուէր սիրով, հոգևոր օրհնուլեամբ, և զօրացուցիչ չնորհիւ Միածնա էջ սրբոյ տեղւոյս՝ ծանուցուածն լիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերում՝ Հարապատ և աշխատասէր զաւակիդ սրբոյ Ա֊թոռոյս Ծովսէփայ Ասատուածաբան և յոդնահանճար վարդապետիդ։ Զի յանցեալ ամի հոկտեմբերի ամսոյ Թուղթ եմք դրեալ առ քեզ ի պատասխանի վաղագոյն դրեցելոց Թղթոցն քոց, որոց զպատասխանին՝ գեռ չեմք առաքեալ։ Բայց յայսմհետէ ընկալեալ եմք ի քէն ղԹուղթս գրեցեալս ի նոյն 1790 Թուոյ մայիսի 5, յուլիսի 20. սեպտեմբերի 8 և 14. հոկտեմբերի 5. և սոյն 1791 Թուոյս յունվարի 20։ Որք Թէպէտ յիւրաքանչիւր ժամանակի հասին, այլ պատասխանադրուլեիւն նոցա ի մէնջ յամեցաւ ցայս կէտ արտաքոյ կամաց մերոց պատճառաւ անձեռնհասուլեան. նախ՝ ղի ի դառնուլեենէ ժամանակիս քազմուլիւնք խուժանաց յամենայն կողմանց այնպէս խըռնին ղմեօք, մինչև չտալ մեզ բանալ զաչս և երկրորդ նորատեսակ վիշաք և ցաւք յանհիրուլեենէ ալէկոծեալ երկրիս այնքան հեղձուկն ղմեզ, մինչև ո՛չ դատնել մեզ զմիջոց ոդի առնելոյ։ Եւ ի վերայ այսոցիկ, որով֊հետև քանեաց վիճակաց նուիրակուլեան գործն աւարտեցեալ էր վաղապէս, և ո՛չ յայլողելով մեզ ի ժամանակին նուիրակս առաքել, երկարեալ էր միջոցն, հա՛րկ եղև մեզ յայսմ ամի՛ ևս ո՛չ յետաձգել. վասնորոյ հաղիւ հազ առաքեցաք ի նոյն վիճակն զնուիրակս. ըստ որս և զհոգևոր որդին մեր Խսահակ շնորհապերճ վարդապետն յղեցաք ի Զմիւռնիս։ Ապա այսու ամենայնիւ հոգօք զբաղեալ յամեցաք մինչև ցայժմ ի գրուլեենէ առ սերելիդ։ Որ քանիցս իսկ ձեռն արկաք, և ո՛չ յայողեցաւ. որպէս ի մայիսի ԻԲ մինչ ըստ խնդրոյն քո զտէր Սահփանի տղայն յղէաք աստի ի Թիֆլիզ, կամեցաք յայնժամ դրել ի զգարձուածս Թղթոցդ, բայց այլ իրք ծանրացուցիչք վերաժամանեալք կասեցուցին. վասնորոյ զհատուած իմն Թուղթ միայն կարացաք դրել ընդ նմա խոստանալով Թէ զպատասխանիս Թղթոցդ յետոյ դրելոց եմք։ Զկնի այնորիկ ի յուլիսի ամսեան ԺԵ, լուաք զբօթմահուան հարազատի եղբօրն քոյ և սիրելւոյն մերոյ խղճալի պարոն Ռէժանին, որ արդարև դառն տրամուլեիւն եղև մեզ. և հոգևոր որդւոյդ մերում ևս ի հարկէ լինի սուգ և ախորուլեիւն. վասնորոյ՝ ի բաց արկեալ մեր զայլ ամենայն հոգս, այժմ

փոյթ կալաք գրել առ սիրելութիւն քո զայս Թուղթ, առաւելապէս վասն միխիթարելոյ զքեզ ի տրտմութենէդ, ճանզի որպէս ղիտեմք զթուլասրտութիւն քո առ այնպիսի պատահմունս, գուցէ թէ անգր քան զչափն կսկծիցիս և տրտմիցիս. բայց զի՞նչ օգուտ ի չափազանց մորմոքելոյ և տրամելոյ. և մինչ գործ Աստուծոյ է՝ զինչ ունիմք ասել առ այն. ո՛չ ապաքէն և մեք ընդ այն ճանապարհն գնալոց եմք: Այն ևս ի մեր բարեէն է որ, սիրելիքն և պիտանիքն մեր պըսակին, և ճաճելոցն կսկիծ և տխրութիւն ածեն: Ի սուրբ Աթոռոյս ևս Փիլիպպոս և գործակալ Գալուստ վարդապետքն որք իրր ծերք էին և մեզ ձեռնտուք, նորապէս փոխեցան առ Տէր. և ճացաք յոյժ անմխիթար ի կողմանէ մարդոյ, Այլ ո՛ կարէ կալ հակառակ արարչին. կամք նորա եղիցի՝ օրհնեալ: Ուրե՛մն՝ և դու սիրելի և հոգևոր որդիդ մեր մտածելով զանցաւորութիւն աշխարհիս, և զճանապարհորդութիւն ամենեցուն յառաջացս, մի՛ ընդ երկարեսցես զսուգ և զտրտմութիւնդ յորմէ ո՛չ ինչ օգտիս բաց ի սրտամաշութենէ. այլ գո հացիր զԱստուծոյ, և միխիթարեաց ճշմարիտ յուսովն երկնաւորաւ: Եւ որ միխիթարիչն է ամենայնի Հոգին սուրբ Աստուածն՝ միխիթարեսցէ զքեզ և զամենայն յետնացեալսցն լուսահոգի պարոն Բէժանին, փարատեսցէ զտրտմութիւնս ի սրտից ձերոց, և տացէ զուարթութիւնս մեծագոյնս. և որ փոխեացն զնա ի յանցաւոր կենացս՝ արժանացուսցէ երանական կենացն, հանգուցանելով յարքայութեան իւրում՝ կատարելոց ընդ հոգիս արդարոցն: Եկեսցուք այժմ ի գրեալսդ, առնել նոցա զպատասխանիս: Արդ՝ նախապէս ծանուցեալ էիր զգնալդ հանդիսաւորութեամբ ի Փօթիշան և ի Սըչուվայ, և բարեկարգելդ զնոյն տեղեաց և զայլոց մերայինսն. և զՑովսէփ կայսեր զինչ խօսիլն սըչուվացիսն, վասն խնդրոյն մերոյ, և զինչ պատասխանի առնուլն, և որպէս յուսադրելն, և զկնի մեռանիլն. և զքո ի Ռօման քաղաքի կատարելն վասն նորա զկարգ հանգստեանն, և զքարոզ ասելն, (ուրոյ և զօրինակն յզեալ էիր, և տեսեալ հաւանեցաք.) և ղեղբօր նորին Լէօպօլայ յայլորդելն զաթոռ նորա, և զորպիսութիւնս ինչ զպատերազմէն: Զորս զամենայնսն իմացեալ, ընդ ուրախալիսն ուրախացաք, շնորհակալութեամբ օրհնեցաք զքեզ՝ վասն աշխատասիրարար միխիթարելդ և շահելդ ըզմերազնեայսն. և ընդ տրտմելի վախճան բերմիտ կայսերն տրտմեցաք: Ողորմածն Աստուած քաղցրացուսցէ զսիրտ նորոգ կայզորգոջին, ունիլ զնոյն օրինակ խնամս առ մերսն, Իմացաք և զգրեալսգ վասն նուիրակութեան գործոյն: Առ որ որպէս յառաջին թղթոջն գրեալ եմք, այժմ ևս գրեմք չպակասացուցանել զփղթգ յայնմանէ: Ապա յիշեալ էիր զնդիրդ վասն կոնդակաց նուիրակութեան և առաջնորդութեան կողմանեգ. այնր աղագաւ ևս յառաջ գրեցաք սիրելուդդ թէ համրերելի է մինչև յերևիլ նշան կատարածի պատերազմին: Ահա յառաջին գրեելդ հետէ ցարդ զքանիս ևս տեղիս նոր առին, և մինչ պարզումն ոչ է վերջացեալ, զայլս ևս առնուն. և չէ յայտնի թէ ըզմերսն յիւրաքանչիւր տեղիս են թողլոց, թէ յայլուր են բնակեցուցանելոց. երր վճարիցի պարզումն, և հաստատիցի ուր և որպիսարար կալն ժողովրդոց մերոց, յայնժամ և մեք ըստ այնմ եմք առնելոց զհոգսն: Այժմ բարւոք է առ միջոց մի մնալն և նայելն. իսկ ի հոգևոր կառավարութենէ ասա չկարեն ինչ պակասութիւն. զի սիրելի որդիդ մեր ըստ գրեցելոգ առնես գոցա բաւականութիւն: Եւ զթուղթսն զորս խնգրեալ էիր առ բազումս, որովհետև կոնդակքն չըլինին այժմ, այնք ևս չունին յարմարութիւն, մանաւանդ և մեզ ոչ գոյ ձեռնհասութիւն վասն տաժանելի հոգոց մերոց և վրդովմանց ի պատճառս յառնելոյ նորոգ բռնակալի, (զորմէ յետոյ գրեսցուք.): Այլ ըստ չափու ձեռնհասութեան մերոյ գրեցաք զթուղթս առ Սըչուվայու ազնիւ ազաչայ Ցովհաննէսն և որգին, և յատկապէս ևս առ ազնիւ ազաչայ Նիկօլն ըստ նշանակեալ մտացդ. և առ տուօզսն տրոց, ի միամտութիւն նոցա և քեզ. որք են Թ թուղթք Իսկ և իմացեալ քո զյափշտակութիւն սըրբոյն Թոմայի Առաքելոց վանից ցաւելով վասն նորա և երնջակու սուրբ Կարապետի վանից, զարդիւնս ինչ նոցա սիահի արարեալ յզեալ էիր. զի հասուսցուք Առաջնորդացն յօգնութիւն. գիտացես, զի յան-

ցելում ամին Թովմա վարդապետն գիմեալ առ սուրբ Աթոռս, եգիտ ղՀարկաւոր պիտոյս սրբոյ վանիցն. և ապա ի գալ սիրնէղոյն գրեալ եմք նոցա վասն արդեանցն, և դեռ պատասխանի չեմք առեալ. զի նոքա չեն յանգորրու. լսեմք թէ յառաջիկայ աշնանս գալոց են. եթէ գայցեն, զդրամսն տալոց եմք, և թուղթ առնելոց, և քեզ գրելոց եմք: Եւ ըստ խնդրոյն մերոյ՝ որ գրեալ էիր թէ՝ զգանէաուրն և գոզէթ սղեցի, և գրեցի ի Հաշտարխան պարոն Մկրտումին. Ի թուղում սինճաւ քիւրք սղել, ղթուղթին ևս հոգալոց եմ, ծանի՛ր առ այն. զի դու ԹՃՈՒ գալ գոնէաուր, և ԾԼ գալ գոզէթ էիր սղեալ հանգերձ սահմով և հաշուով գնոցն, որ յառաջ էհաս, և զգինն աւսեալ գրեցաք ի դաւթարոջ: Ապա պարոն Մկրտումն ՌՃԾՌ գալ, Գ չաբէք գոզէթ, և մէկ թուղում սինջաֆ էր սղեալ, որ ի մայիսին էհաս. բայց ոչ թուղթ էր գրեալ մեզ, և ոչ զորքանն գնոց է ծանուցեալ: Վասնորոյ այժմ մեք թուղթ գրեցաք նմա, առ ծանուցանել մեզ զգինն սղեցելոյն, զի գրեսցուք ի գաւթարոջ, և ընդ փակէթի թղթոցս սղեցաք ի ձեռն նորա, զի և զայս թուղթքս առ քեզ հասուսցէ: Արդ՝ թէպէտ Ռ. թուղում սինջաւ էր գրեալ, բայց մին է սղեալն, և յիրաւի լաւն է. զմինալու զուղթին ևս զորս խոստացեալ էիր սղել, չգիտեմ ո՞րպէս եղեն: Այլ վասն առ մեզ հասելոցն գըրենէաուրից և գոզէթիցն, և սինջաֆին, չնորհակալութիւն ունիմք զսիրելի որգւոյգ որում Տէր ացէ կարողութիւն և զօրութիւն. յուսամք թէ՝ և զղուխին հոգացեալ և սղացեալ իցես: Նախիջևանցւոց խնգիրն զոր ընկալեալ է պայծառափայլն, և ուրախութեամբ վերագարձուցեալ զեկեալն, ընդ այն ևս ցնծացաք յոյժ. յաջոզեսցէ Աստուած անթերի կատարել զխոստումն. և զինքն աճեցուն ճոխութեամբ և գերագոյն պայծառութեամբ պահեսցէ ի պարագայ ամս, ի խնամածութիւն ազգի մերում: Զեկուցեալ էիր և զոմանց Աստուածայայողոյ յաղթութեանց զօրաց բարեբախտ կայսերուէնոյն առ Շուէթեան և առ Հագարացիս, որ ցնծութիւն եղև ո՛չ սակաւ. Տէրն տերանց ի յաջողութեան պատերազմի զդոսա: Շահամիր աղայի զթուղթն զոր յղեալ էիր, ընկալաք, և զպատասխանին գրեալ եմք: Եւ վասն թագին և վասկասին որ ի Պոլիս իմացեալ ես զվաղագոյն գրեալն մեր. յետոյ ևս գրեցաք. բայց այժմ Մինաս վարդապետն ելեալ ի մեծէն Պոլսոյ՝ ի շրջակայսն է, և չէ՛ ձեռնհաս խօսիլ ընդ Գալստանին՝ այլ ըստ գրեցեալդ ցուցանի թէ մերձ է յաւարտումն. ապա թէ յղիցեն առ մեզ, և մեք անյապաղ յղեցից եմք առ քեզ: Իսկ վասն ոմանց պատկերաց սրբոյ Ցածարին զոր գրեալ էիր զչափն յղել, զի նկարել տացես, բարւոք է մեաք գ, սակայն պակասութիւն ոչ գոյ պատկերաց ի սուրբ տաճարին, զի թէ որմոց, և թէ խաչկալաց երեսաքն ամենայն լի են պատկերօք և ծաղկօք: Իսկ եթէ զայլ իմն դհատաւորութիւն ունիս, զայն ևս ծանուսցես: Եւ սակս իրաց Աւետիք վարդապետին զոր հիշեալ էիր, ղայնցանէ յառաջ գրեալ եմք քեզ. իսկ ասէն ղայս իմանալն. զի որովհետև նա ղգրաւն տուեալ էր Դաւթի ումեմն՝ որ է ի Գիլան, որոյ ժամանակն էր մինչ ի մայիս ամիսն, վասնորոյ ի մտանելն մեր ի սոյն տարի՝ միշտորդս արկեալ թախանձանօք խնդրեաց արձակել զինքն, զի ի ժամանակին հասեալ առնուցու զդրամսն և գայցէ: Եւ մեք յետ բազում աղերս արկանելոյն զինքն ի խնդիրն. ըզդատարկ ուղևորիլն ևս ո՛չ լաւ համարելով տուաք զկոնդակ ի վերայ Շուշու Շամախու և կողմանցն վասն գանձանակացն սրբոյ Աթոռոյս և վերայ Գիլանու. և այնու յուղարկեցաք ի փետրվարին. որ ի պայմանեալ ժամանակին հասցի անդ, և առցէ զդրամն իւր, և զարդիւնսն սրբոյ Աթոռոյս ևս ժողովեալ, դարձցի. և ի գնալն աւանդեցաք զբաւական պատուէրս և խրատս, վասն հաստատեալ կենցաղավարիլոյ: Եւ ի կողմանէ Գիլանու ժողովրդեանն ասացաք, որ եթէ քահանայի պակասութիւն ունիցին. գրեսցէ մեզ, զի ասի զքահանայ առաքեսցուք վասն նոցա. յորմէ տակաւին գիր չեմք առեալ: Իսկ յետին թղթովդ ծանուցեալ էիր զառմանէն փիլու և Իսմայիլու, և զանհնարին աղէտից մերոյնոցն տառապելոց. ընդ որ յոյժ արամեալ կսկծեցաք ոգւով չափ. և որպէս թէ մոռացեալ զայլ ամենայն ցաւս

մեր, ստացաք զայն մեծագոյն ցաւ անձին մերոյ և մաշիչ կենցաղ մերոց։ Ո՛հ ցաւագս. զի պատահեցաք վշտալի ժամանակի, յորում հովիւս ի նեղութեան, և հօտքն ի հարուածս. ուստի՞ է գտանել զմխիթարութիւն. փառք Աստուծոյ՝ զի՞նչ ունիմք առնել. եթէ ոչ դարձեալ ի նմանէ զողորմութիւն հայցել. և ևս նոյն բարձրեալ բարերարն արասցէ ողորմութիւն և այցելութիւն։ Բայց ի վերայ աղիողորմ հեծեծանաց մերոց՝ ո՛չ սակաւ սրատիւրութիւն եղև մեզ այն՝ որ սիրելի որդիդ մեր ըստ կարեաց քոց և ըստ յաջողելոյն դարմանեալ և խնամեալ ես զողորմելին. իցէ թէ ըստ ջանից քոց և ըստ խոստման Պայծառափայլին ի գթաշատ Տիրուհւոյն յատկապէս իմ խնամարկութիւն լինիցի նոցա։ Արդարև այժմ հարկ էր մեզ միխիթարութիւն գրել առ նոսա. սակայն՝ զի գրեալ էիր թէ՝ ի գարնանն ածելոց են զնոսա ի ներս. երկբայեցաք առ ո՞ր լինիլն նոցա և յայսպիսի կացութեան, և կերպ գրելոյ մերոց թերևս անյարմար լինիցէր որպիսութեան նոցա. վասնորոյ թողաք այժմ, զի յուսով եմք յառաջիկայս գիր ընդունիլ ի սիրելւոյդ և գիտել զուրանօր և զորպէսարար կացութենէ նոցա. յայնժամ ըստ այնմ արասցուք զգրութիւն մեր։ Եւ զորպիսութեանց մերոց այսպէս գիտասցես. զի ի վերայ զանազան տաժանմանց մերոց նոր ինչ ևս մրրիկ ղարթաւ ի վերայ կողմանցս. զի Մահմատ խանի որդի ներքինի աղայ Մահմատ Հասան-խանի որդի ներքինի աղայ Մահմատ խանն ի Ասպահանու մինչև ցԹարուէզ աւրեալ, և Թարվիղու քիւրտ բռնակալն փախուցեալ ի Շուշի, այժմ՝ յայնկոյս Խոյու բանակեալ ծանր զօրու իբր Ձ. հազարու, հրաւիրէ առ ինքն ղիշխօզան կողմանցս. յորոց Խոյուն և Ղարատաղուն և Նախչուանուն և այլք գնացեալ են. իսկ տեղւոյս իշխօզն զեղբայրն և զախտունդն յղեաց ընծայիւք և կասկածելով վասն իւր, զարմըտիս երկրիս ժողովէ ի բերդն և ամրանալոյ պատրաստութիւն տեսանէ. որով նոր ևս վրդովի երկիրս և միամհուռ նեղութիւնս՝ միանգամայն և ի տագնապս տարակուսանաց կան, և մեր կիրք արտաքինք և ներքինք՝ առաւել քան զամենեցուն, և անտանելի, ապաստան կամք միայն ի յողորմութիւն Քրիստոսի, պահպանել զսուրբ Աթոռս և զմեզ ի բազմակասկած փոթորիկէ յայսմանէ։ Զայսքան ինչ գիտացեալ այժմ, զսէրդ և զհարազատութիւնդ՝ հանդերձ որպիսածանոյց թզթովդ անպակաս առնելով՝ ոզջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի Թուականիս մերում ՌՄԽ և յօգոստոսի մուտն, ի լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածին։



Թուղթ ի Բաղդատ առ Մարգար աղայն եւ առ պարոն Ալէքսանն եւ Փանոսն, իբր ի պատասխանի մահսարական թըղթոյ հասարակութեան ժողովրդոցն, ոյք խնդրեալ էին յոյժ թախանձանօք վասն սակաւաւորութեան իւրեանց՝ ոչ արգելուլ զամուսնութիւնն այրւոյն ընդ կուսին. այլ ներողութիւն առնել առ այն։

Ցորմէ սիրով և օրհնութեամբ. ծանուցուաձ լիցի յատկապէս սիրելեացդ մերոց. և հարազատ որգւոցդ սրբոյ Աթոռոյս՝ Քրիստոսասիրաց՝ բարեպաշտից և խոհականաց, ազնուական Մարգար Աղայիդ, Պարոն Ալէքսանդրիդ և հարազատ գործակալ պարոն Փանոսիդ։ Զի բազմակնիք թուղթն հասարակութեան օրհնեալ ժողովրդեանդ. հասառ մեզ, և իմացաք զբանսն ձեր. որք լսելով ղգուշացուցական պատուիրագրութիւն մեր ի կոնդակոջն մերում՝ վասն կանոնի ամուսնութեան չառնուլ այրւոյն զկոյս, խրնգրեալ էիք ներել առ այն։ Իսկ և՝ երկոքին սիրելիքդ՝ Մարգար աղայդ և պարոն Փանոսդ՝ կարծելով թէ՝ մեք այլոց դրգմանէ իցեմք գրեալ զայն, խնգրեալ էիք՝ գըրել ձեզ զպատճառն։ Առ որս գիտասջիք. զի ամենևին այլոց յորդորութիւ չէ՝ եղեալ մեզ՝ առ ի գրել զայն բան։ Բայց արդարև ի նախնեաց բարւոք կանոն է՝ կուսին ընդ կուսի, և այրւոյն ընդ այրւոյ լծակցիլ։ Եւ մեք միչ այնու կոնդակաւ առ պակասութիւն միոյ ճիւղին խնամութեան և կնքահայրութեան ներուաձ գրեցաք, փոյթ եղև մեզ այլոց կանոնազանցութենէնց հրաժարեցուցանել. վասն որոյ ի կարգս պատուիրացն՝ զայն ե՛ւս գրեցաք թէ՝ մի՛ լիցի այրւոյն զկոյս առնուլ։ Բայց զի վասն սակա-

ւորութեան ձերոյ և տարակացութեան ի յաղգէ, սովորութիւն է եղեալ ի ձեզ. որոյ աղագաւ գրէք ներել, ցուցանելով թէ ի բառնիլն՝ մեծ ե՛ւս չարիք են յառաջանալոց, վասն որոյ և մեք թուլատրեմք, առ ի չյառաջանալ մեծագոյն յանցանացն։ Իսկ որովհետև նախնեաց հարց սրբոց կանոն է այն, մեզ յանդգնութիւն էր ընդդէմ նոցա կանոնին հրաման գրել. այլ ղիջեալ յաղաչանս ձեր վասն այլոց վտանգից, ահա զառաջին կոնդակն մեր նորապես դրեալ, պակասեցուք ի միջոյն զայն պատուէրն. և ընդ թզթոյս յղեցաք առ ձեզ. որպէս տեսանելոց էք։ Զոր մինչ ընդունիցիք, պահեսջիք առ ձեզ, և զառաջինն հարկիւ գարձուսջի՛ք առ մեզ։ Եւ այսուհետև որք ի մէնջ գայցեն առ ձեզ, նոքա ևս վրէժխնդրութիւն չեն առնելոց։ Եւ այսքան ներողութիւն րաւական է. քան զոր աւելի ո՛չ կարեմք առնել ինչ։ Եւ զայո հասարակին գրել ևս խզճեցաք, այլ միայն ձեզ խորհրդական սիրելեացդ գրեցաք. զի բանն առագաստիւ ձեսցէ, և մի յայլ երկրացսն ևս հրատարակիցի։ Շատ է առատ խոհեմութեան ձերում։ Ողջ լերուք ի Տէր։ Գրեցաւ ի Թուսկանիս մերում ՌՄԽ. և յօգոստոսի ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

Թուղթ առ Հնդստանու նուիրակ Շիրոմ վարդապետն, վասն յերկար ժամանակս թուղթ չգրելոյն նորա աստ, եւ վասն մեր երկիցս գիր գրելոյն առ ինքն. եւ լսելոյն մեր այժմ զլուր վերադարձման նորա։ Եւ վասն Բաղդատու ժողովրդեան խնդրոյն, առնուլ այրւոյն զկոյս. եւ վասն Մարգար աղայի խոստմանն տալ զտուրս վասն ծախուց վերնայարկաց ամարան սեղանատանն։

Շորմէ Քրիստոսաւանդ սուրբ ոզջունիւ, և նոյնապատուէր սիրով, զօրացուցիչ շնորհիւ սրբոյ Իլման տեղւոյս նորին, և հայրականաւ լիագոյն օրհնութեամբ ծանի՛ր սիրելի՛ և հոգևոր որդիդ մեր՝ ծոցածին և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս՝ եփրեմ զգօնամիտ վարդապետ։ Զի ահա գամք եղեն յորս ի քէն Թուղթ ո՛չ ընկալաք, և հաւաստարապէս չիմացաք ինչ զքէն. եթէ ասիցեմք թէ՝ գիր յղես, և ո՛չ հասնի, պարտ էր քեզ քանիցս գիր յղել, յորոց գոնէ մին ևս հասնէր. ապա զարմանք ունի զմեզ առ այս։ Իսկ մեք՝ թող զայն Թուղթն մեր զոր ի ՌՄԼԸ Թուոյ սեպտեմբերի ամսեանն գրեալ էաք, և պարոն Յովհաննէս Բեթզէհէմեան առ ինքն պահեալ էր. կարծելով թէ վերադարձեալ իցես, զի ի ժամանելդ ի Բասրայ, տացէ քեզ. այսմ Թուոջս ի ւարտի Լ. ևս համառօտ Թուղթ մի գրեցաք առ քեզ. զորմէ Բաղդատու պարոն Փանոսն գրեալ է թէ յղեցի ի Բասրայ։ Բայց ի քէն տակաւին Թուղթ ոչ առնելով մնացաք ի խորս տարակուսացս։ Այլ ի Բաղգատու Մարգար Աղային և պարոն Փանոսն այժմ գրեալ են մեզ վասն քո թէ եկեալ իցես ի Սուրաթ, անտի դառնալ ի Բասրայ և յայսկայս. որով համրաւով սակաւիկ անդորրութիւն գտաք մտաց. սակայն ոչ իսպառ աղատեալ ի մտաանջութենէ։ Եւ զի այնպէս էին գրեալ նոքա, և մեք յուսամք յԱստուած զի մինչև ցարդ ելեալ իցես ի ցամաքս։ Եւ առ Հարկին պահանջելոյ հրկին ևս զայս Թուղթ գրեցաք առ սիրելի և հոգևոր որդիդ մեր ի վերայ առաջնոցն Թղթոց, վասն այսց պատճառաց. Նախ՝ զի առ բազդատցին որ կոնդակ էաք դրեալ ներողութեան վասն խնամութեան և կընքահայրութեան վեց ճիւղին հասանելոյ, ի նոյն կոնդակոյն յայլ կանոնազանցութեանց հրաժարեցուցանելով, գրեալ էաք և այրեայն ընդ կուսի ոչ լծակցիլ։ Բայց այս ի նոսա ի վաղուց սովորութիւն գոլով, յոյժ խրտնեալ են ի յարգելական պատուիրանէն մերմէ. վասնորոյ կրկին մտահար էին գրեալ և յատուկ փայեկաւ յղեալ, խնդրելով նեբել այնմ, ըստ որում սակաւաւորք են և տարակաց յազգէն։ Եւ մեք ոչ պատշաճ տեսաք զայլ հրամանագիր գրել. այլ զառաջին կոնգակն մեր նոր գրեցաք, հանելով միայն զայն արգելական պատուէրն ի միջոյ. և ընդ նմա համառօտ Թուղթ մի ևս իբր ի պատասխանի մտահարին գրեցաք ի վերայ Մարգար աղային, պարոն Ալէքսանին և պարոն Փանոսին թէ՝ զայն նախնեաց կանոն է

զոր մեք գրեալ էաք. այժմ մինչ ղվտանգս առաջագրէք և խնդրէք ներել, ահա նե բեմք. բայց զյատուկ հրամայական թուղթ ինչ գրել՝ ընդդէմ նախնեաց յանգգնութիւն էր, միայն զառաջին կոնդակն մեր (որպէս գրեալ) զայն արգելական բանն մեր հանաք ի միջոյն. և այսչափս բաւական է. ի գալ այս կոնդակիս զառաջինն գարձուցիք առ մեզ Վանորոյ և քեզ հոգևոր որգւոյդ գրեմ, զի ի գալդ ի Բաղդատ՝ զայն առաջին կնդակն մեր եթէ գեռ չիջեն դարձուցեալ, գու առեալ բերցես։ Եւ ի լինելդ անգ մի՛ ինչ արգելական բանս խոսիցիս առ խնդիրն հաստարակութեան. զի ո՛ գիտէ թէ զինչ ծնանիցի։ Այսքան առ այս։ Երկրորդական զամառան սեղանատունն մինչ ի լուսահոգի Հայրապետի նորոգելն՝ զոր հանգերձ սրահիւն և հոյակապ գրութեամբ ի հիմանց նոր շինեցուցաք ի յիշատակ Մարգար աղային, և ի վերայ նորա զվերնայարկսշինեցուցաք, զորքան ծախուցն ծանուցուք թէ՛ թող զանյայտ խարճան, յայտ նագոյն է ՃԾ թուման. բայց զորքան տալն ի կամս քո է։ Որուամ նա այմմ պատասխանի էր գրեալ սիրով յանձն առնելով թէ՛ ի գալ նուիրակին՝ որքան կարիցեմ, տացից նմա որ բերցէ. և զայլ ևս բաղում ծառայելոյ ուխտ ունիմ։ Եւ մեք այժմ շնորհակալութիւն գրեցաք, և շնորհաւորութիւն նորածին դստերն, և զայլ ինչ ի պատասխանի բանիցն իւրոց գրեցեալ։ Ապա և քեզ գրեմ զայս, զի իմացեալ ի գալդ ի Բաղդատ՝ յիշեացես զիւսուսումն և զոր ինչ ասացէ, առեալ բերիցես։ Այլ և որպէս յառաջին թղթոյն և՛ս եմք գրեալ, ի Բասրայու կամ ի Բաղդատու յատուկ փայեկաւ գրեաւ զելանելդ ի ծովէն մեզ ծանուցես ի յապահովութիւն մտաց մերոց։ Եւ զորպիսութեանց սրբոյ Աթոռոյս և մեր և զկացութենէ երկրիս գիտասցես զի սուրբ Աթոռս ի յիւրամայելուչ պայծառութեան կայ, և մեք հանդերձ երկրաւս իբր կերպիւ իւիք ի բարեկողմանս, բայց կասկածելի յապագայ վտանգից։ Քանզի Մահմատ Հասանխանի որգի ներքինի Ազայ Մահմատխանն զօրացեալ յոյժ և տիրեալ յԱսպահանու մինչև յայսկողմունս ամենայն տեղեաց այժմ իբր ութսուն հազար զօրօք եկեալ մերձ ի Թավրէզ զբռնակալն տեղւոյն փախուցեալ է, և ինքն բնակեալ է, հրաւիրելով առ ինքն զիշխօղսն կողմանցս. յորոց մերձակայքն գնացին, և Գեանջայու և այլ տեղեաց իշխօղքն ևս մարգիկ յղեցին ընծայիւք. և մեր երկրիս իշխօղն ևս զեզբայրն և զախուռնգն յղեաց, ըստ որոց մեզ ևս հարկաւորի մարգ և ընծայ յղել։ Ասեն թէ՝ գնալոց է ի վերայ Շուշւոյ Երրահիմ խանին. և թէ յառաջ խազայցէ այս կողմն, դժուարին է լինելոց աւեր երկրացս։ Աստուած բարի վախճան արասցէ 22)։ Դարձեալ ի նախ տպագրեալ թղթոջն մերում ազդ արարաք սիրելի որդւոյդ ըզմահուանէ յատկեղ սիրելւոյն մերոյ Հոգելոյս Մկրտիչ վարդապետին. թէ զիա՞րդ փոխեցաւ յաստեաց, առ տարաբախտութեանն մերոյ, և եթող մեզ զտրամութիւն մեծ։ Ցետոյ ևս խղճալի Խաչատուր վարդապետն և Նորապէս ես Փիլիպպոս և գործակալ Գալուստ վարդապետքն վախճանեցան, որոց զՀոգիսն Տէր լուսաւորեսցէ. և զքեզ մխիթարեալ ողջ պահեսցէ։ Իսկ զԽսահակ վարդապետն ևս ի մայիսի ամսեանն առաքեցաք ի Զմիւռնիս։ Այժմ գրեթէ իսպառ զուրկ կամք ի խորհրդական մարդոց և անմխիթար յամենայնի։ Ուրեմն պարտիս ըստ յաջողելոյն Աստուծոյ արագել ի գալդ առ ի հանգչիլ քեզ ի վաստակոցդ ի ծոց շնորհածին Մօրս քոյ և ի մխիթարութիւն մեզ յանմխիթարութենէս մերում։ Զինչ ևս զայլինչ երկարիցիս. բարեաւ գայցես, և զամենայն ինչ բերան առ բերան խօսեսցուք և լուիցուք։ ՚ղջ լեր և Տէր։ Առ քեզ եզելոցն Հարազատից սիրելի և հոգևորորգւոց մերոց՝ ողջոյն և օրհնութիւն։ Գրեցաւ ի ՌՄՀ թուոջս և ի յօգոստոսի ԻԶ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ առ Զմիւռնիոյ նուիրակ առաջնորդ Իսահակ վարդապետն, ի պատասխանի ի նոյեմբերի ԻԱ. գրեալ Թղթոյն զանիցն. եւ ծանուցումն զորպիսութենանց երկրիս. եւ զեղբօր նորին՝ պարտաւճար լինելոյն սրբոյ Աթոռոյս։

Ծորմէ Հայրական օրհնութեամբ՝ Որգիական ողջունիւ և Հոգեկան սիրով ծա

նի՛ր սիրելի և հոգևոր որդի մեր և ծո-
ցածին հարազատ որդի սրբոյ Աթոռոյս՝
Իսահակ Աստուածաւան վարդապետ։ Զի
յառաջ քան զայս ի գեկտ. Թուղթ գրե-
ցաք առ քեզ ի փոխադարձ ամենայն Թըղ-
թոցն քոց նախագրեցելոց, և ի պատասխա-
նի յայգուստ ի Հոկտեմբերի Դ. և ի ԻԱ
գրեալ Թղթոցդ բանիցն. ծանուցանելով և
զոր ինչ մինչև ցայնժամ էին որպիսութիւնք
երկրիս և մեր։ Ապա ի Նոյեմբերի ԻԱ.
գրեալ Թուղթգ էհաս առ մեզ ի նոր սար-
ւոյս յունուարի ելն. և ծանեաք զոր ինչ
ի նմա էին բանք։ Նախ՝ գրեալ էիր զելա-
նելն այսր Գալուստս վարդապետին ի գալ։
Որոյ զժամանելն ի կարին՝ քանի աւուրբք
յառաջ լուեալ, այժմ և լուաք թէ և ան-
ա՛ ուղևորեցեալ է յայսկոյս։ Եթէ թէ յա-
ռաջիկայ աւուրբս հասցէ Աստուծով ի սուրբ
Աթոռս։ Երկրորդ՝ ծանուցեալ էիր զգրելգ
զԹուղթս յԱմասեորգամ առ Ցովհաննէս
պետն և առ միւս խռովեալսն՝ վասն հաշ-
տութեանն. բարւոք ես արարեալ։ Ցացէ՛
Ցէր արդիւնանալ գրուածոցդ. և կայանալ
խաղաղութեան ի մէջ նոցա։ Բայց որ զար-
մացումն էիր ցուցեալ առ Թուղթ չգրելն
մեր ընդ քեզ առ նոսա, և ընդ այն՝ իբր
բնաւ բան ինչ ե՛ւս չէիցեմք ասացեալ քեզ
յայնմ կողմանէ, մոռացեալ ես, և իզուր
ատրակուսեալ։ Քանզի ասացի քեզ թէ՝ այ-
ժըմ ո՛չ գրեմ՛ առ նոսա Թուղթս վասն
խռովութեանցն ի մէջի եղելոց. և գիտեմ
լսել զհաւաստի ինչ զորպիսութեանց նոցա.
յայնժամ գրելոց եմ զկոնդակ ի վերայ հաւ-
կաւորութեան և զայլ Թուղթս թէ հարկա-
ւորիցէն՝ առ ոմանս, և յղելոց եմ ի ձեռս
քո, և այլն։ Սակայն յաւուրսն յայնոսիկ ի
բազմազան զբաղմունս գոլով, չե՛ս հաստա-
տեալ ի մտի զասացեալսն մեր։ Իսկ մեք յի-
րաւի խորհէաք թէ մինչ գայցէ Գալուստ
վարդապետն, լինայիս իմանալեմք զանցիցն
որ ի մէջ նոցա, և ըստ այնմ գրիցեմք առ
նոսա զԹուղթսն մեր։ Բայց այժմ լսայն գի-
տութիւն մեր նահանջեցաւ։ Քանզի գրես թէ՝
գրեցի և հարկեցի նոցա՝ յեա հաշտելոյ և
գրել զԹուղթ մեղայական առ քեզ, և այլն.
իսկ մեք բնաւ առ նոսա ո՛չ ունիմք գրեալ
զմեղագրութիւն կամ զայլ ինչ սակս եղե-
լութեանցն, այլ Գալուստ վարդապետն է
գրեալ յինքենէ զոր ինչ կամեցեալ էր։ Ա-
կայն՝ մինչ դու հարկ ես արարեալ նոցա
մեղայ գրել ցուցանելով իբր թէ մեք բար-
կացեալ իցեմք նոցա, ապա հարկաւորիմք
գիտել միւսւն զԹուղթ առնուցումք ի քէն,
վասն այնր։ Ուրեմն՝ եթէ նոքա Թուղթս գը-
րիցեն առ մեզ, շուտով յղեսցես, և թէ
ոչ, զառ քեզ գրեալսն ծանուսցես մեզ. զի
մեք յայնժամ գրեսցուք առ նոսա զԹուղթս,
որպէս և ի դէպն իցէ։ Խոստացեալ էիր
զօրինակն առ նոսա գրեցելոցն յղել մեզ,
եթէ համառօտիւ գրեալ յղեցէիր՝ բար-
ւոք էր։ Երրորդ՝ ծանուցեալ էիր ըզ-
Թրակացի Ցարութիւն վարդապետի գալն
յայդր ի գործ սրբոյ Երուսաղէմի. և սի-
րով վարիլն ձեր առ միմեանս. ընդ որ սըր-
տադիւր եղաք. բարի է. և կատարեալ բա-
րի լինիցի, եթէ միւսւն ցյանդ խաղաղասի-
րաբար գնայցէք՝ յերկուց և՛ս կողմանց։
Չորրորդ՝ գրեալ էիր զձեռնադրելգ զՄկր-
տիչն՝ աբեղայ, և զԲազգասարն՝ սարկաւագ
Հանդերձ Սահակ աղաչիւն զոր և՛ս համա-
րեալ ես զիտանի գոլ։ Հաճեցաք և մեք։
Շնորհաւոր եղիցին աստիճանք իւրեանց.
զորս և զօրացուսցէ՝ Հոգին սուրբ Աստ-
ւած արի և հաստատուն լինիլ ի պաշտօնս
սուրբ աստիճանաց իւրեանց. և քեզ հարա-
զատօրէն սպասաւորութեամբ սրտագիւ-
տիւք լինիլ։ Եւ սրբոյ Աթոռոյս և՛ս պիտոյա-
նալ։ Հինգերորդ՝ գրեալ էիր զտյսմակցու-
թիւն վասն մահուան գործակալ Գալուստ
վարդապետին՝ և մխիթարութիւն։ Ցիրաւի՝
ոչ սակաւ ցաւ է պակասիլն այնպիսեաց պի-
տանի արանց ի տանէ, սակայն ա՞հ ու-
նիմք ասել առ կամեցողութիւն Ցեառն, ե-
թէ ո՛չ՝ փառատրութեամբ գոհանալ ընդ-
որս հանգուսցէ՝ զնա ի լոյս երեսաց իւ-
րոց. և զնացեալ հարազատ որգիդ սըր-
բոյ Աթոռոյս ո՛ղջ և անփորձ պահեսցէ ի
մխիթարութիւն մեզ։ Իսկ զորպիսութեանց
կողմանցս և սրբոյ Աթոռոյս՝ առաջին
Թղթովն գրեցաք քեզ որքան ինչ գոյր յայն-
ժամ ազգ առնելի, ընդ որս և զյառնելն
Իբրահիմ խանին հանդերձ լեզուի Ուման խա-
նիւն ի վերայ Նախչուանու և պաշարելն
զբերդն. և զմեր խանի գնալն յօգնութիւն
Նախչուանու խանին. և այլն։ Այժմ զայս
իմա. զի մինչ Թշնամիքն այնոքիկ ի նե՛զ

արկեալ զամրոցն մերձ էին առնուլ, խանն մեր աստուստ և խօյու խանն անդուստ ի մի վայր եկեալ և միաբանեալ հասին ի նախչուան, և ՔեալբալՃի խանն ևս ելեալ ի բերդէն և եկեալ ի մէջ սոցա, յաւուր շաբաթու տանի սրբոյն Յակոբոյ Հայրապետին, ի յարձակիլ գնգից թշնամեացն ի վերայ սոցա, և սոքա պատերազմեցան ընդնոսա, և ի յաղոզելոյ վերին տեսչութեան կոտորեցին ի նոցունց զքանի հարիւր անձինս. և ՃՁացեալքն երկիւղափակ եղեալ ի մեսում աւուրն խոյս ետուն անտի և գարձան ի Շուշի։ Եւ սոքա ևս գարձան յիւրաքանչիւր տեղիս։ Յայսմանէ եզելութենէ Ղարատաղու խանն ևս ապստամբեցաւ յիւրմէն. և ստուար գունգ մի լեզկեաց եկեալ ի Վրաց երկիրն վասն աւարի՝ նոքա ևս անգ էին պարտեցեալ ի տեղականացն և զաստիկ հարուածս կրեալ։ Ի լեկանիլ թշնամեացն այսպէս՝ ապահովութիւն եղև երկրիս, վաճառոյ՝ փառք և գոհութիւն Աստուծոյ զի յայսնուագ ևս զերծաք ի վտանգէ։ Այլ Ուման խանն գեռ ի Շուշի մնալով և զհնարս վրիժառուութեան խորհելով, կասկածանք մեր ոչ սպառի զՂազար Մահմատ խանէն երբեմն համբաւեցին հիւանդացեալ գոլ մերձ ի մահ. բայց այժմ ասեն թէ առողջացեալ է, և ըստ ժամադրութեան գալոց է։ Յեսցուք թէ յառաջիկայ գարնանս ընդ ինանիցի մեզ։ Ողորմածն Աստուած զբարիսն յաջողեսցէ, և զչարսն խափանեսցէ։ Փիտասջիր և զայս. զի հարազատ եղբայրն քո և սիրելին մեր պարոն տիրացու Ստեփաննոսն զդրամս էր յղեալ ի տեղս՝ հասանիլ առ քեզ, վասն հատուցանելոյ զեօթանասունն թուման զոր պարտիւր սրբոյ Աթոռոյս։ Եւ ոչ գոլովքո աստ, աւանգն հասեալ էր առ Ցօհան վարդապետն, և նա ընդ եզբօր որդւոյն քո Աստուածատուրին եկեալ առ մեզ խօսեցան վասն հատուցանելոյ զպարտսն։ Եւ մեք որպէս միւսոց ընկերացն շնորհեալ էաք ըզասասնորդսն իւրաքանչիւրոցն պարտուց, ըստ այնմ և նմա շնորհեցաք զեօթն թուման. ի յեօթանասունն թումանէն. և ըզկարգ թումանն ընկալաք. որ էր ՃՕ. եալտըզ ոսկի. Զ. Զ. զուռուշով. Ը պաճախլու ոսկի, զուռուշ և կիսով. և Ե. հատ զուռուշ։ Զորս և ի յընկալնուլ մեր՝ շնորհակալութեամբ աւացաք զՀոգւոյն վասն ննջեցելոց ձերոց, և զպահպանեայն ի վերայ Աստուածատուրին, եւ զթամասուկն ետուք ինքեանց, դարձուցանել առ պարոն տիրացու Ստեփաննոսն, որոմ և գրեցաք զթուղթ շնորհակալութեան և միամտութեան։ Եւ քեզ սիրելւոյ որդւոյդ գրեմք, զի և գու միամիտ լիցիս յայնմ կողմանէ։ Խոստացեալ եմք առ Զալիկեան մահտեսի Կարապետն թուղթ գրել. բայց տակաւին Գալուստ վարդապետն ոչ էհաս ի սուրբ Աթոռս որ ի հարկէ ուրի ի նմանէ զպատասխանի թղթոյն մերոյ ընդ քեզ գրեցելոյ։ Սրբէ գայցէ նա, և ընկալցուք զթուղթն նորա, յայնժամ գրելոց եմք. այժմ ևս սիրով ողջոյն և օրհնութիւն տամք։ Եւ գու զորպէսզաճանոյց գիրդ չպակասեցուցանելով՝ ողջ լեր ի Ցէր։ Գրեցաւ ի ՌՄԽԱ թուոջս և ի փետրվարի. ի սուրբ Աթոռս Էջմիածնի։

Գերաղնիւ սիրելւոյն մերոյ Քրիստոսասէր և բարեպաշտօն Աստուածատուր Աղայի շնամատօտ թուղթն ևս զոր վասն եզմանն այտի Գալուստ վարդապետին գրեալ էր, ընկալաք. բայց նեղ էր ժամս, և չգոյր ինչ հարկաւոր, ոչ գրեցաք զպատասխանի. այժմ սիրով ողջոյն և օրհնութիւն տամք նմա և որգւոցն իւրոց Ցերամբ զօրացելոց՝ պարոն Մարգար և Մատթէոս և այլ աղազատէից։ Ցետ գալոյ Գալուստ վարգապետին, գրելոց եմք զպատասխանի թղթոյն։ Այսպէս գիտելով, լիցի միամիտ և յանձնեցեալ ամենայն իւրայնովքն ի խնամս Ցեառն Աստուծոյ։

Թուղթ առ Մեծին Պօլսոյ և շրջակայիցն նուիրակ Մինաս վարդապետն ի պատասխանի Բ. թղթոց նորա՝ ի ՌՄԽ թուոյ ի սեպտ. Ծ, և ի նոյեմբ. Ի. գրելոց։

Թուղթ ի մեծն Պօլիս առ մահտեսի պերճապատիւ Ցարութիւն ամիրայն ի պատասխանի յանծնարարական թղթոյն վասն ոմանց. եւ պատմութիւն փառակեցի Սահակ պետի արար-

վանցն եւ ծանուցումն ընանաղրելոյն զնա, եւ զայլ ինչ ըստ այնմ:

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանի՛ր յատկեղ սիրելիդ իմ, և օգտարար որդի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի Թուղթ ք՝ ի յունիսի ընդ գրեցեալ ընդ յարդելի եղբօր մերոյ Պատրիարգ Աստուածարան վալդապետի և մեր հոգևոր որդւոցն՝ Յովհաննէս և Պօղոս և Անդրէաս խոհեմազարդ վարդապետացն էհաս առ մեզ որով ծանուցեալ մեր զողջունել քումմէ և զամրողջութենէ ճշմարիտ սիրոյդ՝ ուրախ եղաք, և խնդրեցաք յԱստուծոյ պահպանել զընտիր սիրելիդ ընդ թևօք խնամոց իւրոց ի խաղաղութեան՝ և ի բարեյաջողութեան։ Գիտացաք և զգրեալ գ վասն յիշեալ վարդապետացն, և վասն մահեսի կաթողիկոսին և սիրացու Թէոդորոսին. և վասն Յարութեան և Գրիգոր տզոյն, Յորոց կողմանէ իմաս ջիր. զի մահեսի կաթողիկոսն և սիրացու Թէոդորոսն ամաօրեայ ժամանակաւ յառաջ եկին. զորս և մեք սիրով ընկալաք։ Մահեսի կաթողիկոսն կատարեաց զուխտն իւր և վերադարձաւ ի յունիսի ԻԸ. ընդ որում և մեք զսիրոյդ դիր գրեցաք առ օրհնելդ։ Եւ սիրացու Թէոդորոսն որ խնդրեաց ինձ ի սուրբ Աթոռոջս, կարդեցաք ի Թիւս Մխաքանիցն, և եառաք նմա զսենեակ ամենայն պիտոյիւքն, և ունիմք ի յատուկ խնամս։ Իսկ վարդապետքն և աղայքն յետոյ եկին. և մեք զվարդապետան իբրև զհոգևոր որդիս եղբօրն մերոյ և մեր՝ մեծաւ սիրով ընկալաք, ըստ խնդրոյն ձերոյ և որքան ձեռնհասութիւն մեր էր, շահեցաք, և ձեռնադրեցաք եպիսկոպոս, և փառաւորապէս վերադարձուցաք։ Եւ ի աղայոցն՝ զԳրիգորն յանձնեցաք սիրացու Թէոդորոսին, առ ինքն ունել և կրթել յուսումն դրոց, և զՅարութիւն եառաք ժամօրհնողին, ընդ բարւոք ակնարկութեամբ ունիմք պահպանել. տացէ Ցէր՝ զի զհամառօտ վարս և գիտութիւն ստացեալ պիտանիք լինիցին։ Եւ որովհետև հոգևոր որդիքն մեր յիշեալ նորընծայ շնորհապերճ եպիսկոպոսունքն վերադառնային վայելուչ համարեալ զայս սիրանիշ և որպէսայսմ Թուղթ դրեցաք նոսա առ յատկեղ սիրելիդ։ Եւ զայլ որպիսութիւնս սրբոյ Աթոռոյս և մեր ի նոցունց իմանալոց ես։ Ողջ լեր ի Ցէր. և շնորհք Միածնաէջ սրբոյ Ցեղույս եղիցի՛ ընդ քեզ և ընդ քոյսինսն ամենեսեանսն։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԽ թուականիս, և ի սեպտ. ԺԱ. ի սուրբ Էջմիածին։

Իսկապէս սիրելիդ և մաերիմ բարեկամդ իմ՝ Ազնուամիտ և իմաստնախոհ Մահեսի Ցարութիւն Ամիրայ՝ գիտասջիր այսու Թղթով զցաւս սրտի իմոյ, զոր յամրարշաւէ միջէ մինչև ցարդ կրեալ, ո՛չ այլ ևս կարելով տանիլ, ղդատն ի ձեզ արկանեմ։ Այս ասացեալ ամբարշտաբար է փառակից խռովասէր և աղմկայոյզ Սահակ ո՛չ վարդապետան, որ ի ժամանակի հոդեոյս Հայրապետին ի վիճակն Թօխաթու նուիրակ գնացեալ ո՛չ եթող տեղի՝ յորում ո՛չ էհան ղկռիւ և շփոթ ընդ վայր, և ի Թոխաթ քաղաքն և՝ նոյնպէս խռովութիւն յարուցեալ. և առ յարգելի եղբայրն մեր Պատրիարք վարդապետան զանարդանաց բանս դրեալ, Թերի եթող զդործն և փախուցեալ դարձաւ ի սուրբ Աթոռս։ Ապա կոչիլս մեր յայս աստիճան ընդ կռուամոլ բարուցն յանկարծ ընդ վայր կռիւ մի հանեալ ընդ միաբանիցն մեաց տեղեկանացդ՝ նորին և նորապիսութեանց զրաբանութիւնքն էին։ Այլ զանցառնելով մեր յայնժամ զամենայն ամբարշտութեամբքն, ի սէր, և ի խաղաղութիւն համոզել կամելով, յոտից մինչև գլխոյն զարդարեցաք պատուական հանդերձիւք, և կարգեցաք ժամօրհնող, և սեղանակից արարաք, պատուելով քան զարժանն ի վեր և որքան մեք շահել կամեցաք, զի ամաչեսցի ի մեծարանաց մերոց, նա ո՛չ դադարեցաւ ի կուոյ և ի լրբութենէ, մինչ ընդ կինւոյ ևս հաղորդութիւն ունի։ Բայց մեք ներեցաք ամենևին։ Այլ որպէս իմաստուն ասէ թէ՝ փախուցեալ երթայ ամբարիշտն առանց ուրուք հալածելոյ, ինքնին կասկածելով յարարմանց իւրոց խնդրեաց արձակել զինքն ի սրբոյ Աթոռոյս, և մեք սիրով արձակեցաք։ Գնաց ի կարին և ի Հասանզալայ և ի քանի ամիս կացեալ, իբրև եառ թէ ո՛չ կարէ տեղաւորիլ յայն տեղիսն, քանիցս Թուղթ դրեաց մեզ, խնդրել զինքն, բայց մեք դիտելով զփոփոխական միտն և ղամենի բարսն, ոչինչ դրեցաք և ո՛չ խնդրե-

ցաք։ Ապա ինքնին իւրակամ եկն։ Եւ մեք ո՛չ ինչ սիշելով զանցելոցն՝ վերստին սիրով ընկալաք իսուրբ Աթոռս։ Քանի ամիսք անցեալ ի վերայ, Խայազիացիքն և Խոյեցիք եկեալ վասն սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանիցն իւրեանց զառաջնորդ խնդրեցին։ և մեք նոցա և իւր ՖաճուԹեամբն առաջնորդ կարգեալ զինքն փառաւորապէս առաքեցաք։ Իսկ նա գնացեալ ո՛չ ըստ առաջնոց առաջնորդացն պարկեշտօրէն վարեցաւ, այլ ճոխարար նորաձևուԹեամբ երաց զինքն և զվանքն յաչս բռնաւորաց սեղեացն։ Երբեմն և զվազնջուց ծածկեալ պահեաս ինչ գրաեալ ի յատակս սրբոյ եկեղեցւոյ վանիցն, ո՛չ զգուշանալով զի մի ի վեր ելցէ ձայնն հռչակեցաւ առ ամենեսին Թէ՝ ի Թադէոս առաքելոյ վանն գ..նձ են գտեալ։ Եւ ըստօրէ յաճախեալ յանճռուի գնացան, ի Խայազիա քանիցս ի մէջ բազմուԹեան, և յաւելի եկեղեցւոյն յիմարական մեծաբանուԹեամբ զանարգանաց բանս էր խօսեցեալ առ փաշայն սեղւոյն. զոր լուեալ փաշայնէս ոխացեալ յոյժ, ապա ի հանել նորա զկուիս մի ընդ Իւչքիլիսայի Առաջնորդին զայն պատճառ առնելով, էարկ ի վերայ նորա ի քէսյ տուգանս. յորոց զծ. ի նմանէ էառ ի կաւից վանացն, և զծ. ի ժողովրդենէն Խայլիոյ։ Եւ մինչ յայնմ ներուԹեան կային ժողովուրդքն, գրեցին մեզ Թէ՝ տար զսա աստի. զի յետոյ էս քան զայս մեծ վնաս եմք կրելոց։ Մեք էս ըստ խնդրոյ նոցա գրեալ հազիւ զերծուցաք զնա աստի և բերաք ի սուրբ Աթոռս. զի Թէ Ճայլերն յառաջնորդուԹեաւ, Մակուայ և Խոյայ իշխաղքն էս զնոյնպիսիս անցուցանելոց էին ընդ նմա, վասն համբաւոյ գանձեցեալ պահեստից. իսկ ի գալն իւր, խնդրեաց զինչսն իւր էս բերել տալ անտի. և մեք զիւր սպասաւոր Ծովհաննէս աբեղայն, և զԲարսեղ վարդապետն յղեցաք, և գրեցաք քահանայից և իշխանաց, զի ի միասին առեալ զիրսն, զվանացն որոշեսցեն, և զիւրական կայսն անպակաս յղեսցեն։ Եւ նոքա այնպէս էին արարեալ, և յղեալ զկայս նորա, Թէ քսուր, Թէ հանգերձ, Թէ գիրք և Թէ զոսկիսն իւր կնքեալ ծրարաւն. զորս և ամրողջ հասուցին առ ինքն սիշեալ վարդապետաքն՝ որք երկոքին էս կան այսօր։ Ճայնմ միջոցի ասաց Թէ՝ կամակ ունիմ՝ ուր զուռուշ սրբոյ Աթոռոյս և եՃ զուռուշ սրբոյ Երուսաղէմի տացից ի կենդանութեանս. ասացաք Թէ Ճասցէ առ քեզ, էի՛ցէ Թէ յետոյ պակասութիւն կրիցես. և այլն. այլ նա պնդեաց Թէ՝ կամիմ տալ, և մեք առաք օրհնութեամբ, և կամէաք զեՃ զուռուշ փօլիցայիւ հասուցանել ի սուրբ Երուսաղէմ, և ի Պատրիարգէն սեղւոյն միամտութեան Թուղթ բերել տալ։ Ապա յօր մի էս շջրեալ զմիասն՝ հրաման խնդրեաց ելանելոյ ի սրբոյ Աթոռոյս, և զտուեալ գրաման էս յետս խնդրեաց ասելով Թէ խարջիս պակաս է։ Եւ Թէպէտ բազում ինչ ուներ, սակայն առ ի կրտրել զձայնն գարձուցաք առ ինքն զգրաման անպակաս և արձակեցաք, գիտելով զվատԹարուԹիւն բարուցն՝ որ ո՛չ է գագարելոց ի խռովուԹենէ և ի գլխացաւուԹիւն ատլոյ մեզ. և նա ամենայն ընչիւքն եղեալ գնաց ի սուրբ Երուսաղէմ. և սեղականքն ընկալեալ են ի միաբանուԹիւն։ Ասէն և զայս ասացուք Թէ՝ յայտնի է ձեզ եԹէ ո՞րպէս վարիմք մեք ընդ սուրբ Երուսաղէմ և ընդ նորայինսն, որ մինչև ցայժմ Աստուծով ի մէնջ ո՛չ ինչ գործեցեալ ընդդէմ նոցա, բաց ի սիրոյ և պատւոյ և յօգտակումուԹենէ. զԹէ և նոցա չվայելէ պահել զպատիւ սրբոյ Աթոռոյս և մեր, ո՞չ ապաքէն յանցեալ տարիսն գուք օրհնեալգ գրեալ եմք ոչ ընդունիլ և պահել. և անտի էս եԹէ գայցեն ի սուրբ Աթոռդ, գուք մի ընդունիցիք. և այլն։ Ապա զի՞նչ հարկ տիպեաց զնոսա ընդունել զչարալեզու խռովարկուն զայն։ Մեզ չէ յայտնի դիտաւորուԹիւն նոցա. ձեր խոհականուԹիւն ծանիցէ։ Ցանցեալսն էս նոյն չիք Սահակն գրեալ էր Մինաս վարդապետին Թէ՝ ի Խայազիա քանի մի քսուր ունիմ Ծովհաննէս աբեղայն առ իմ, խնդրեմ գրել հոգևոր Տէրին՝ որ հրաման արասցէ աբեղայն բերել առիս. և Թէ ի վերայ ոմանց առնելիք ունիմ, սանաքն յղեալ եմ առ Թէոդորոս վարդապետն որ ժողովէ, հոգևոր Տէրն արգելս չտացէ։ Մինաս վարդապետն էս մեզ գրեալ էր։ Մեք տեղեկացաք որ այն քանի մի քսուր ասացեալքն մահրամայք են լեալ, զորս ի յորոշել զիրս

վանացն, նորին Միսրան Գէորգ վարդապետն և այլքն որոշեալ են յանուն վանիցն, և յետոյ ի վէքիլ լինին մասրաֆ է արարեալ. և Յով-հաննէս ազեղայն ի սուրբ Աթոռոյն գոլով ոչ կամի գնալ յայլուր։ Ապա գրեցաք Մինասվար գապետին թէ քսուր ասացեալքն այն ինչ են, ե. մասարաֆ են եղեալ. և առնլեացն մեք արգելիչ չեմք լինելոց. և այլն, Այլ, ևս այսպէս։ Այժմ մոլեգին և անխիղճ խելագարն այն՝ չարաչար րանագրանաց Թուղթ է գըրեալ ի վերայ Բայազիտոյ երևելի անձանցըն և զբպարտութեամբ զրաղում ինչ պահանջէ ի նոցունց, Որք զրանագրանաց Թուղթն նորա յղեալ էին առ մեզ, և գրեալ թէ՝ այս քաղաքս զայնքան ընաս կրեաց ի նմանէ. և մեք քո հրամանաւ զնոր ինչան առ ինքն յղեցաք սիահուվ, զինչ են յանցանք մեր առ նա, որ զմեզ այսպէս չարաչար անիծանէ. մեք զնա առաջնորդ րերաք՝ որ զսուրբ վանքն մեր ի շինուԹեան պահէ և այսօր գուռն փակեալ կայ՝ որպ ամայուԹեան պատճառն նա իսկ եղև։ Դեռ ևս ինքն զմեզ բանագրէ և խայտառակէ զբաբանուԹեամբ, առ այս իրաւունս առնել խնգրեմք։ Այսպէս գրեալ մեզ բայազիտցիքն։ Եւ մեք ահա զչքին աչնորիկ բանագրանաց օրինակն, և Մինաս վարգապետի առ մեզ վան խնգրոց նորին գրեալ բանից օրինակն յղեցաք առ սիրելի եղբայրն մեր Պատրիարգ վարդապետն. տեսէք Թէ առ Մինաս վարդապետն գրուածովն զի՞նչ ուսնիլ ցուցանէ, և բանադրանաց ԹղԹովն զի՞նչ պահանջէ ի բայազտցւոց. այնու բաւականապէս կարէք իմանալ զստուԹիւնս նենգաւորին այնորիկ. զի Թէ ի Բայազիտ ոսկի և մատանիք և ջաւահիր ունի, ընդ-է՞ր չէ գրեալ առ Մինաս վարդապետն. և Թէ չունի, զի՞նչ պահանջէ ի բայազիտցւոց։ Այլ և՝ ինքն որ ի միաբանուԹիւն սրբոյ Աթոռոյս է ձեռնադրեցեալ եպիսկոպոս, և այժմ ապստամբեալ է, իւր վկայականաւն լուծեալ է յեպիսկոպոսուԹենէն և պարտաւոր է. մեք զնոց արարաք զայնու։ Ապա ո՞րքան յանգգնուԹիւն է այս՝ որ նա ի զուր բարրանօք բանագրէ զմարդիկ միոյ քաղաքի որք էբրու դրացիք են սրբոյ Աթոռոյս։ Եթէ այսօր զայն արար, ի վաղիւն կարելի է քան զայն ևս մեծ ինչ գործել։ Ի մետասան ամս որ մեք նորա խէռուԹեան և դժնդակուԹեանցն տարաք, վէմք ոչ կարէին տանիլ։ Եթէ բարեպաշտուԹիւն և խղճմտանք լինիւր ի նմա, տեսանելով դներոդուԹիւն մեր՝ յօր մի զղջանայր յարարմանց։ Այլ զի կատարեալ անզգամ է, որչափ ներեցաք մեք, նա յաւել զլրուԹիւն իւր մինչև այսօր։ Իսկ արդ՝ ԹէպԷտ բազմից ի պատժոց ապրեցաւ, բայց իրաւունքն ոչ եառն նմա Թոյլ կեալ. վասնորոյ և այժմ զայս անտանելի լրբուԹիւնս գործեաց և զմեզ ի վրէժխնդրուԹիւն յարոյց։ Զի Թէ այլ ևս Թոյլատրէաք, լինիւր անբաւ համբերուԹիւն և ծնաներ զմոլուԹիւն։ Ուստի՝ առ հարկին պահանջելոյ իրաւամբ և արդարուԹեամբ ահա բանագրեցաք զնա ըստ արժանւոյն իւրոյ և լուծաք ի կարգէն. և զԹուղԹն բանադրանաց յղեցաք ի ձեռն Մինաս վարգապետին, յղել առ սիրելի եղբայրն մեր Պատրիարգն սրբոյ Երուսաղէմի. և նմա ևս սիրով գրեցաք, զի ի լուր հասարակին ընԹեռնուլ տացէ զգիրն բանադրանաց անիծելոյն յԱստուածոյ, և ոչ ընկալցին զնա կարգաւոր։ Եւ զայս պատմուԹիւնս գրեցաք յայդր առ ցանկալի եղբայրն մեր պատրիարգ վարգապետն և առ գերապնիւ սիրելիդ. որ ԹէպԷտ գլխացաւուԹիւն է յարգելեացդ, բայց եԹէ առ ձեզ չգրիցէի, ապա ո՞ւմ՝ ծանուցանէի զկենամաշ ցաւս իմ։ Արդ՝ տեսէք ամենայն արդարուԹեամբ յԱստուածակոյ, կոդմանէ. եԹէ զանիրաւուԹիւն ինչ նկատիցէք առ մեզ, ցուցջի՛ք մեզ, և մեք յանձն առնլոց եմք, զոր ինչ առաջագրիցէք մեզ իսկ Թէ զդժնգակն զայն գտանիցէք պատժապարտ և արժանի անիծից, խնդրեմ զի և դուք գրիցէք առ Պատրիարգն սրբոյ Երուսաղէմի՝ որ զբանադրանս մեր ընԹեռնուլ տացէ, և արտաքսեսցեն ի սրբոյ եկեղեցւոյ, մինչև զղջացեալ դիմեսցէ ի սուրբ Աթոռս և մեզայ գոչեսցէ, և ԹողուԹիւն գտցէ. և գարձեալ ո՞ւր կամիցի, գնասցէ. զի մինչ ոչ գտցէ աստ, ոչ է ընգունելոց զարձակումն հոգևոր կապանացն։ Եւ զայլ երկարապէսն Թէ կամիցիս, ի Պատրիարգ վարդապետի ԹղԹոյն և ի գրաբեր վարդապետացն իմացիս։ Ողջ լեր և օրհնեալ ի Տէր։ Գրեցաւ ի ՈՄՒ Թուոջս, և ի սեպտեմբերի ԺԱ։

Թուղթ Հանադրանաց առ փառակեցի Սահակ հվարդապետն, որ ի վերայայլոց առաջնոց յանցանացն՝ այժմ եւս ւՅրուսաղէմայ զուր ընարրանօը րանադրեալ էր զիշխանսն Հայազտոյ քաղաքին։ Ցետ ընանադրանացս, եկեալ զղջմամբ արձակեցաւ. եւ Թուղթն ընանադրանացս սլատառեալ եղեւ։


Ցորմէ ժամանեցայ՛ գիր անիծից և բանագրանաց, գառնութեան և բարկութեան նզովից և հոգևոր կապանաց, հանգերձ ընդ միջհատ սրովն Աստուածային, և ներհակակործան վըիժառու զօրութեամբ Քրիստոսահիմն անպարտելի սրբոյ Աթոռոյս ի վեբայ բազմապատիկ յանցաւորիդ և անխուղայ անզգամիդ, ժանտաժուռ նենգաւորիդ, և ամբարտաւան ապստամբիդ, փառակեցի չարաճճիկ՝ խռովարար և աղմկայոյզ ո՛չ Ւսահակ, այլ սահակ կարգազեղծ ոչ եպիսկոպոսիդ։ Որով և ծանիր զանբարշտութիւնս քո ո՛վ ծնողուբաց որդիդ կորստեան և արբանեակդ սատանայի։ Զի զոր ասէ ծիրանազգեաց Մարգարէն վասն անօրինին թէ՝ էի՛ք երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նորա, և թէ՝ բանք բերանոյ նորա անօրէնութիւն և նենգութիւն են, և որ (գետ) թէ՝ ո՛չ կամեաւ նա իմանալ զբարի, դարձեալ թէ՝ եկաց նա յամենայն ճանապարհ որ ո՛չ է բարի, և իչարէ նա ո՛չ ձանձրացաւ, այսոքիկ երևեցան ստուգապէս ի յանդուգն լիրգդ և յաներկիւղ չարագործդ, և ո՛չ թէ ի սուղ ժամանակի, այլ ի բազում ամս։ Քանզի դու անպիտանդ յամենայնի՝ մինչ ի հոգելոյս Հայրապետէն առաքեցար ի նուիրակութիւն վիճակին Թօխաթու, ըստ խոռութեան ամենի անձինդ վըդովեցուցիր ըզբազում քաղաքս աղմկաւ և շփոթիւ. որովք և ոչ սակաւ գլխացաւութիւնս և վերս հասուցիր երանելի Հայրապետին։ Եւ ի Թոխաթ քաղաքին ևս զնոյնպիսիս գործեալ, Թերակատար գործով վերադարձար ի սուրբ Աթոռս, անպատուութիւն ածելով փառաւոր անուան սորին։ Ցետ վախճանման լուսահոգւոյն ևս Թէ զի՛նչ գործեցեր, և զի՛նչ ինչ գրեցեր ստութեամբք, գիտես գու, և բազումք ևս գիտեն. վասնորոյ ո՛չ է պիտոյ երկարիլ աստէն։ Այլ մեք զանց առնելով յայնժամ ղանբարշտութեամբք քովք, և ի սէր և ի խաղաղութիւն համոզելով զարդարեցաք ղչիքդ պատուական հանդերձիւք յոտից մինչև գլուխ. և կարգեցաք ի ժամօրհնողութեանդ. և սեղանակից մեզ արարաք պատուելով քան զարժանգ ի վեր։ Իսկ որքան մեք շահել կամեցաք ղապերախտդ, դու յաւելեր զչարիսգ և զլրբութիւնսգ. զի ընդ մեզ հաց ուտելով, յաճախէիր առնել մեզ խաբէութիւն և իմէնջ մարդասիրութիւն և քաղցրութիւն վայելել՝ ապաշնորհաբար ի կուռոյ և ի վիճոյ և ի ժանտութենանց ո՛չ դադարէիր։ Եւ թէպէտ ներէաք մեք ամենայն, սակայն որպէս իմաստունն գրէ թէ՝ փախուցեալերթայ ամբարիշան առանց ուրուք հալածելոյ, դու ինքնին կանկածելով վասն չարեաց քոց, խնդրեցեր արձակել զքեզ ի սրբոյ Աթոռոյս. որ խնդիր՝ թէպէտ և անպատեհ էր, բայց մեք կատարեցաք, թարց բարկութեան արձակելով զքեզ։ Ելեալ քո գնացեր ի կարին և ի Հասանզալայ, և աեսեալ թէ ո՛չ կարես ղեաեղիլ յայն տեղիսն, քանիցս գրեցեր մեզ խնդրել ղքեզ։ Եւ ո՛չ ընկալեալ ի մէնջ զպատասխանի, դու ինքնակամ դարձար ի սուրբ Աթոռս։ Եւ մեք դարձեալ սիրով ընկալաք, ո՛չ ինչ յիշելով զտնցելոցն։ Ապա ի խնդրել Բայազիտցւոց և Խոյեցւոց զառաջնորդ վասն սրբոյն Թադէոսի առաքելոյ վանիցն իւրեանց, կամակցութեամբ ձերով զքեզ առաջնորդ կարգեալ խիլայիւ և փառաւորութեամբ առաքեցաք. համարելով թէ Թերևս զմոլեգնութիւնդ թողեալ կարիցես կառավարել ըզսուրբ վանքն զայն և զվիճակն։ Բայց դու յիմար թշուառականդ ի գնալն քո կարծելով թէ նախանցեալ Առաջնորդքն յանկարուեցնէ կամ յաղբատութենէ իցեն անշուք հանդերձիւք և ցածուն կերպիւ կենցաղավարեալք, և զքեզ կարող և խոհեմ վարկանելով մեծամտեալ սնոտի փառամոլութեամբ ցուցեր զշուքս և զպաճուճանս, և այնոքիւք անխոհեմաբար նորաձևութեամբգ բացեր զքեզ և զսուրբ տունն զպն յաչս բռնաւորաց և իշխողացն։ Եւ ի վերայ այնր զանդուռն բերանդ բացեալզինչ խօսիլդ ո՛չ իմանալով իբրև զաներկիւղ յուժեալ անարգեցեր ևս զմովսէան Բայազտոյ մնասաբեր ցոփաբանութեամբդ ի յատեան եկեղեցւոյն

և ի մէջ բազմութեանց։ Զոր լուեալ նո-
րա և ոխակալեալ, ապա ի չարուցանելդ
զխռովութիւն ընդ Իւէքիլիսսի Առաջնոր-
դին՝ վասն հրաւիրելոյդ գնա ի պատրիարդ
առնել, և դարձեալ տրդելոյդ, զայն պատ-
ճառ առեալ՝ էարկ ի վերայ վանդախօս
անմարդ զԻ քսակ տուգանս. յորոց զԾ քը-
սակն ի քէն էառ. ի կալից խղճալի վանացն,
և զԾ. ի ժողովրդենէն Բայազոյ։ Ցեսեալ
նոցա թէ զայն միաս կրեցին ի պատճառս
յիմարական արարմանց քոց, և նկատեալ
զի եթէ միայեաս, և էս քան զայն ծանրա-
դոյնս են կրելոց, խնդիր արարին ի մէնջ՝
հանել զքեզ ի վիճակէ անտի։ Վասնորոյ և
մեք սիրով դրեալ դարձուցաք զքեզ ի տուրբ
Աթոռս։ Եւ դու յառաջ քան զդալդ զեր-
կուս կինքեալ փոքր արկեղս յղեցեր ընդ
Ծովհաննէս տրեզային քո ի տուրբ Աթոռս.
և ի դալդ՝ խնդրեցեր զմիացեալ կայան քո
էս բերել տալ։ Եւ մեք զԾովհաննէս ասե-
զայն քո և զԲարսեղ վարդապետն ի միասին
յղեցաք Բայազոյ քահանայից և իշխանացն
վերահասու լինիլ իրացն. ղվանիցն որոշել,
և զքոյն յղել։ Որք ըստ դրեցելոյն մե-
րում արարին, և յիշեալ վարդապետքն զա-
մենայն կայսն քո՝ թէ քսուր, թէ դիրք, և
թէ զոսկին քո կինքեալ ծրարաւն ամրող-
ջապէս բերեալ քեզ եառուն։ Ցայնմ միջոցի՝
դու ինքնայօժար կամաւդ հոդերաժին և-
տուր սրբոյ Աթոռոյս և սրբոյ Երուսաղէ-
մի. զոր մինչ ո՛չ կամեաք մեք առնուլ, դու
ստարանդ կեղծաւոր սիրմամբ եառուր, ա-
սելով թէ՝ ուխտեալ եմ ի կենդանութեանս
տալ։ Իսկ յետոյ զբազում՝ անհամութիւնս
և տեղութիւնս ցուցանելով ըստ խռովա-
ծին բարուցդ. ի վերայ այնոցիկ դարձեալ
հրաման խնդրեցեր ելանելոյ ի սրբոյ Ա-
թոռոյս, և զտուեալ դրամդ և յետս
խնդրեցեր, ասելով թէ պակասաւոր եմ, եւ
մեք տեսանելով զյողդողդամտութիւն չնչոյդ,
զարծաթն քո առ քեզ դարձուցաք, որ ընդ
քեզ ի կորուստ լիցի, և խաղաղութեամբ
արձակեցաք, զի զառաղտկալի մոլեգնութիւնն
քո մի՛ տեսցուք և մի՛ վիրաւորեսցուք։ Ա-
պա ի սրբոյ Երուսաղէմ պատի դրեալ էիր
Պօղոսէ նուիրակ Մինաս վարդապետին թէ ի
Բայազիտ ի վերայ ոմանց առնելիք ունիմ.
զամսաման յղեալ եմ առ Թէոդորոս վար-
դապետն, ժողովել զտալիսն. դրեա՛ հո-
գևոր տէրին, զի եթէ պարտապանքն զին-
քըն պատճառ իցեն, հրամայեսցէ տալ, եւ
թէ՝ ի Բայազիտ առ Ծովհաննէս աբեղայն,
իմ քանի մի քսուր ունիմ, հրամայեսցէ նը-
մա բերել առիս։ Զորս և Մինաս վարդա-
պետն դրեալ էր մեզ։ Եւ մեք տեղեկացաք
որ քսուր ասացեալքդ քանի մահրամազք
են եղեալ. զորս ի յորոշիլ իրաց վանիցն՝
Գէորգ վարդապետն առեալ է յանուն վա-
նացն, ասելով թէ ես եմ՝ տուեալ. և Ծով-
հաննէս աբեղայն ի տուրբ Աթոռոջս դոլով
ո՛չ կամի ելանել յայլուր, այսպէս դրեցաք
Մինաս վարդապետին, և վասն առնելեացդ
էս թէ՝ մեք ամենևին արգելիչ չեմք լինե-
լոց։ Զորմէ և յետոյ լուաք եթէ Թէոդո-
րոս վարդապետն ժողովէ, և պարտապանք
ասն առանց ընդդիմութեան։ Բայց դու ամենա-
դժնդակդ որ միշտ բարկութեան բոցովք ցո-
լացեալ, իբրև զանսաստ ալիս ծովու փըր-
փըրես և ամենևին անքաժին ի հանճարոյ
և յիմաստութենէ, ո՛չ գիտես թէ որո՛յ հոդ-
ւոյ ես, և չդիտես իսկ խորհիլ զպիտանիսն
ինչ, յետ այնպէս դրելոդ առ Մինաս վար-
դապետն, դառեալ յայդր գԽօյեցի քեղանը-
ման գինեմոլ չէրէցն ընդ նոսա խօսեցեալ,
և որպէս թէ զօգուտ ինչ խորհելով և
հաստատելով, դրեալ էիր ի ձեռն նոցա ըզ-
չարաչար բանագրան։ առ Բայազիտոյ իշ-
խանսն՝ վայելուչ յիմար մատդ և վայրա-
զօղանջ բերանոյդ արձանացուցանելով ի նը-
մա զանհատատալի սուտս, և զուր բարրա-
նօք պահանջելով ի նոցանէ զանդին դոհարս
և զմատանիս, և զարծաթ և զոսկի յոյժ,
եւ նոքա զԹուղթն առ քեզ դառնալի բա-
նագրանցդ յղեալ էին ի ձեռս մեր. և
բազմակնիք թղթով զիրաւունս խնդրեալ,
դրելով թէ՝ մեք զնա առաջնորդ բերաք որ
զտուրբ վանքն մեր ի շինուածեան պահիցէ,
և զմեզ բարւոք կառավարեսցէ. իսկ նա
անճոռնի վարուքն զմեզ այնքան ընդատեաց, և
տուրբ տանն Լա յուեցան պատճառ ե-
ղև, որոյ դուն ահա փակեալ կայ, Եւ մեք
զո հրամանաւն զնոր կայսն սիահիով առ
ինքն յղեցաք. ապա զի՞նչ են յանցանք մեր
առ նա, որ իզուր անիծանէ զմեզ, և զինչ
եմք շահեցեալ ի նմանէ՝ որ ի մէնջ տուե-
ցեամբք զայնքան ինչ պահանջէ. առ այս

ղիրաւունս առնել խնդրեմք, և այլն։ Զորս ընթերցեալ՝ զարմացաք ի վերայ անմտութեան քո, որ որչափ ծերանաս, փոխանակ զգօնանալոյ խելագարիս։ Արդ՝ ո՛ անպիտան Աստուծոյ և մարդկան, դու ո՛վ ես, և զինչ երախայ ունիս առ խղճալի ազգ մեր, և կամ յո՞ր բարի համբաւ ես վաստհեցեալ, որ ժպրհիս համարձակ բանադրել զանպարտսըն։ Ահա վարք և շնորհք քո այսպիսիք են զորս փոքր ի շատէ գրեցաք։ Բաւական չէ՞ին մինչև ցայժմ արարեալ ամբարշտութիւնք դու որ ի մարանութիւն սրբոյ Աթոռոյս ես ձեռնադրեցեալ եպիսկոպոս, և այժմ ապստամբեալ ես, ահա քո վկայականաւն իսկ լուծեալ ես յեպիսկոպոսութենէդ. մնք զանց առնել կամիմք զայնու։ Ապա ո՞րչափ յանդգնութիւն է կարգընկեց ապաշնուհիդ որ ի զուր բարրանօք բանադրես զմարդիկ միոյ քաղաքի որք իբրու դըրացիք են սրբոյ Աթոռոյս և մերով հրամանաւ են զքո ինչն առ քեզ հասուցեալ։ Ցայսքան ամս որ մնք քո խեղուքեան և դժնէութեան տարաք, վէմք ո՛չ կտրէին տանիլ։ Եթէ բարեպաշտութիւն և խղճմտանք լինիւր ի քեզ, տեսանելով զնեղութիւն մեր պատկառէիր և զղջանայիր, ըստ այնմ թէ երկիւղածն ի սիրոյն առաւել պատկառի քան ի պատուհասէն։ Այլ զի կատարեալ անզգամ ես, որչափ ներեցաք քեզ, դու յաւելեր զկատաղութիւնդ մինչև ցայսօր։ Եւ զի զլռութիւն սեպհականեալ ես քեզ յերկրորդ բնութիւն, ի չարեաց ո՛չ դադարիս, զի ըստ բանին Երեմիայի՝ եթէ փոխիցէ Եթովպացի զմորթ իւր, նոյնպէս և դու զչարութիւնս քոյ։ Իսկ արդ՝ թէպէտ և բազմից ի պատժոց ապրեցար, այլ իրաւունքն ո՛չ եաւն քեզ թոյլ կեալ, վասն որոյ այժմ զայս անտանելի լրբութիւնս դարձեցեր և զմեզ ի վրէժխնդրութիւն յարուցեր հնացելոյդ աւուրքն չարութեանն, զի ահա եկին հասին մեզ քո ըստ Դանիէլեան բանին. և թէ այլևս ներէաք, լինիւր անբան համբերութիւնն՝ ծնանէր զմոլութիւն։ Ուստի՝ հարկեցեալ յԱստուածային իրաւանց ահա արդար դատաստանաւ պատժեցաք զպատժապարտդ, բարձու իշխանութեամբ հայրապետութեան մերոյ՝ և սրբոյ Աթոռոյս՝ բանադրեալ կապեցաք զքեզ հոգևոր կապանօք ի յերկինս և յերկրի և մերկացուցաք յամենայն սուրբ աստիճանաց և կարգացդ և սրով սրբոյ հոգւոյն հատաք յանդամոց սրբոյ եկեղեցւոյ զհոտեալ անդամդ, առ ի և յայլս չփոխել ապականութեան քո։ Ուրեմն՝ նզովեալ և անիծեալ ես դու յԱստուածոյ և յամենայն սրբոց նորա, և ի մէնջ. և չունիս իշխանութիւն մտանել յեկեղեցի Աստուծոյ, և խառնիլ ի հօտս Քրիստոսի։ Աղօթք քո այսուհետև ոչ լիցին ընդունելի Աստուծոյ, և թէ յանդգնիցիս ձեռնամուխ լինիլ ի խորհրդակատարութիւնս, եղիցին ի դատապարտութիւն քեզ, և հետևողաց և ընդունողաց քոց։ Այս անէծք և կապանք մըննալոց են ի վերայ չքոյդ, մինչև զղջացեալ բոլորով սրտիւ դիմեսցես ի սուրբ Աթոռս և մեղայ ասացեալ, ի բաց լիցիս ի չարեաց քոց։ Ապա եթէ յամառեալ ձնասցես անզեղջ, ձնասցեն և այսոքիկ ի վերայ քո, և ի դերեզման իջցեն ընդ քեզ։ Եւ այնմ ե՛ւս դու լիցիս պարտական ի յաւիտեան։ Դրեցաւ ի Թուականիս մերում ՌՄԽ, և ի սեպտեմբերի. ի յերկնահանգէտ Աթոռս սուրբ Էջմիածին։

Դարձեալ գիտասջի՛ր ո՛վ լի ամենայն նենգութեամբ և հակառակութեամբ, որդի սատանայի՝ թշնամի արդարութեան. զի յետ դրեցմանն բանադրանացս անիծելոյդ՝ էհաս ատ. մեզ Թուղթն ունայնաբան շաղակրատիդ և ընթերցաք։ Ցիրաւի՝ մարդ չար ի չար դանձուց սրտի իւրոյ բղխէ զչարիս. որպէս ասաց Քրիստոս. և ո՛չ է հնար աղտոտին տեղւոջ չուր քաղցր առնել ըստ բանի առաքելոյն Յակոբայ։ Եւ թէպէտ բազումս էիր զգայեալ ի մեծերից չարութեան սրտի քո, բայց մնք առաջնոյ և վերջնոյ բարբանջմանցդ միայն պատասխանատրեցուք։ Արդ՝ նախապէս դրեալ ես, թէ ես ասացի սրբազան առաքելոյն Թադէոսի դամբարանի վկայարան եկեղեցւոյն աթոռ, և դու զայրացեալ յինէն. արարեր զնա աթոռ։ Առ որ իմա. զի ո՛չ դու կոչեցեր զնա աթոռ, այլ չե՛ւ ևս ծանուցեալ քո զնա, մնք դիտէաք զնա աթոռ և նախապատիւ համայն վանօրէից։ վանորոյ և ըստ շաւղի նախնեաց սրբազանից Հայրապետացն՝ ըստ մեր՝ չափու հոգածու լինէաք չինու-

թեան և պայծառութեան նորա։ Բայց մինչ գու անարժանդ առաջնորդ կոչեցար, ամենայնիւ յամենայնի ընտիր և խանգարիչ եղեր նմա, որպէս յայտնի է. և այժմ վայրապելովդ ընդ ամպս՝ կամիս զինեան քո ի վերայ մեր գնել։ Արդ՝ եթէ մեք իցեմք լեալ նմա ընտանեաց, զգաստասան ականատես կրեսցուք։ Իսկ եթէ դու ես պատճառ ընտրութեան և անշքութեան նորա, որ ի կայից ժամանն մի ի սնոտի փառամոլութիւնն քո վատնեցեր, և ժամանն մի առաքանս եռուր վանն կուրացդ և խռովութեանդ ե. ժամանն մի լաս ագահեալ յափշտակեցեր, քակտեցեր հոտեալ մարմնովդ և պականեալ հոգւովդ։ Թողում զայն՝ որ եթէ ընտիր չիքըզ յառաջնորդութեան, Բայազիտ քաղաքն իւր նահանգովն բաժանելոց էր ի ժառանգութենէ այն սուրբ վանցին։ Եւ վերջապէս գրեալ ես վանն ծանակելի թղթոյդ թէ՝ գօշակի տակ չի դնես. կենդանի եմ և ես։ Ահա ո՛չ թէ զմի կամ զերկու բանս ի շաղակրատելոցդ կամեցայ յայտնել, այլ զրոլորին իսկ զօրինակն առեալ յղեցի յայդր և յայլուր. զի բազումք տեսեալ ի թուղթդ պղտոր քո ի ծանիցեն զծագ փշաբեր, և գիտասցեն թէ՝ իրաւամբ եմք եգեալ զատպարն առ. աքմին անկոյդ գառնութեան հատանել և ի բաց ընկենուլ ի գրախտէ սրբոյ եկեղեցւոյ. զոր և արդարադատն Աստուած կտրեսցէ՝ և այրեսցէ ի հուր բարկութեան ըստ արժանւոյդ։



Թուղթ առ Ծովակիմ պատրիարգն սրբոյ Երուսաղէմի. ի պատասխանի Թղթոյն գրեցելոյ ի ՌՄԼԸ թուոյ ապրիլի ԻԹ, ծանուցումն ինչ զորպիսութեանց մերոց, եւ վասն արտնանց Բ նուիրակաց իւրեանց։ Եւ ապա վասն փառակեցի Սահակ եպիսկոպոսին անդ զընացելոյ. որոյ եւ քանաղրանքն ի ձեռըս սորա յղեցաւ։

Քրիստոսի Տեառն մերոյ և փրկչի կենսաձիր և սքանչելափառ սուրբ գերեզմանին, և երկնաւոր Աստուածաբարձ Գողգոթային սրբոյ, և այլոց Քրիստոսակոխ երջանիկ սրբոց տեղեացն անօրինականաց՝ մատուցանեմ ջերմեռանդն սիրով և փափագանօք զերկրպագութիւնս։ Նաև գեր եղեալ սրբազանից Առաքելոցն Յակորեանց՝ միոյ հրաշագործ սուրբ գլխագրին և միւսոյ շնորհաբաշխ սուրբ գերեզմանին առ ընծայեմ ըզհամբոյրս շրթամբք հոգւոյ՝ ըղձալեօք շընչէյ։ (Կարօտելով խնկաւորեալ բարեխօսութեան նոցա առ Տէր, ի նպաստ մեղապարտ և ակար անձին իմոյ։)

Յիսուսի Քրիստոսի Ծառայ՝ Տէր Ղուկաս՝ որոյ և շնորհիւն կաթուղիկոս և Ծայրագոյն Պատրիարգ ամենայն Հայոց՝ Առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, և լուսանկար մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի։ Որ ահա նախապէս և ապա սիրելի և ցանկալի եղբօրդ մերոյ՝ շնորհընկալ և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս, Տեառնդ Ծովակիմայ Աստուածաբան վարդապետի և արհիապատակ եպիսկոպոսի՝ և վսեմամիտ պատրիարգի հրաշանաւն սրոյ քաղաքիդ Երուսաղէմի, Քրիստոսաձիր սուրբ ողջունիւ և նոյնապատուէր ճշմարիտ սիրով առնեմ ծանուցումն։ Զի սիրանիշ թուղթ քո ի ՌՄԼԸ թուոյ ապրիլի Ի. գրեցեալ, էհաս առ մեզ, ի նոյն տարւոյ օգոստոս ամսեանն։ Եւ թէպէտ վաղապէս ղհամառօտ գիր մի գրեալ ունիմք առ քեզ ի պատճառս Ծովհաննէս անուամբ ուրուճն (որում տակաւին չընկալաք ղպատասխանի.) այլ յայնմհետէ ոչ ևս ի դէպ եկն գրել ղթուղթ առ սիրելութիւնդ, նախ՝ վասն հարկաւոր պատճառ չպատահելոյ, և երկրորդ՝ սակս առաւելութեան զբաղմանց և ցաւոց մերոց։ զի Թող զմշտակաց կիրսն մեր, նորանոր պնասք և ցաւք ևս ոչ պակասին ի մէնջ վասն անհիրութեան երկրացս, և իշխողացն զմիմեանս անկանելոյ։ Իսկ քոյն ևս յետացաւ ահա, և մեք կարօտիմք իմանալ զորպիսութենանց ձերոց և սուրբ վայրացդ։ Իսկ այժմ հարկաւորեցաք գրել զայս թուղթ ի պատճառս Փառակեցի դժնեայ և ժանտարոյ ոչ Խահակ կարգնկեց չիք եպիսկոպոսին՝ եկելոյ յայդր։ Եւ նախ զայս ասեմք զի յայտնի է՝ թէ սիրելի եղբօրդ՝ և թէ միաբանից տեղւոյդ, եթէ մեք յառաջնորդութենէ մեզմէ անտի Զմիւռնոյ մինչև ցայսօր որպէս սիրով և օգտակարութեամբ վա-

րիմք առ սուրբ Աթոռդ և առ ձեզ և զիարդ ունիմք զպատիւ ձեր ի յարդիւ։ Ապա ձեզ ևս չհարկաւորի՞ պահել զպատիւ սրբոյ Աթոռոյս և մեր, մինչ Առաքեալն դրէ, ի պատիւ ղիմեամբք ելանել և ջրիստոս ասէ, որպէս կամիք զի արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նոցա։ Երդ՝ մինչ մեք զԿիրակոս վարդապետն այնպէս արձակեցաք աստի որպէս դիտես, ըստ որում չունէր ի քէն հաճութիւն առ ինդիրն իւր, ապա դուք զչարալեզու խռովասէրդ զայդ ընդէ՞ր ընկալայք ի մէջ ձեր։ Եւ երկրորդ՝ ասեմք թէ՝ թերևս վասն մարդասիրութեան ոչ ի րաց արարիք. ղի՞նչ վնաս էր ձեզ անդամ մի ազդ առնելն մեզ վասն դալոյն դորա յայդր։ Որ յիրաւի ոչ էաք զրեալց թէ՝ մի պահէք, սակայն սրատդիւր լինէաք նշանաւն հաւատարմութեան ձերոյ առ սէրն և պատիւն սրբոյ Աթոռոյս և մեր։ Զայս ոչ ի ձէնջ առնել, և մեզ հոդ չէր առ պն։ Բայց մինչ ընկալայք, հարկ էր ձեզ դունէ՝ զամենի լրբութիւնս անձնաժպիրհ ամրարտաւանիդ սանձել, զի մի ևս ծուխ անզգամութեանց դորա ի վեր ելանիցէր, և զմեզ աշխատ առնիցէր։ Այլ ահա ի վերայ առաջնոց ամբարշտութեանցն դործելոց՝ զորովք զանց էաք արարեալ, թողլով ի վրէժխնդրութիւն Ցեառն, այժմ ևս պատի դրեալ է զթուղթ մի չարաչար բանադրանաց առ Բայազետոյ քաղաքի իշխանն պահանջելով ի նոցունց զրպարտու. թեամբ և սուտութեամբ զբազում ինչս։ Եւ նոքա զքնորալից թուղթն կատաղի մոլեդ. նելոյդ այդորիկ յղեալ էին առ մեղ, և խնդրեալ էին դատ առնել եւ մեր ներողութեան չափն յցեալ, ահա ըստ պահանջման իրաւանցն բանադրեցաք զանդադար չարդ զայդ և լուծաք ի սուրբ կարգացն. և իբրև զխոտան և անպիտան ընկեցաք արտաքս ի սրբոյ եկեղեցւոյ. և զբանադրանաց թուղթն որ առ դոյն արժանիդ անիծից, ընդ այսմ դրոյ յղեցաք. յորմէ բաւականապէս իմանալոց էք զժանութիւնս անիծելոյդ այդորիկ և իրաւացուցանելոց էք զդատաստան մեր։ Գրեցաք և առ յարդելի եղբայրն մեր Կոստանդնուպօլսոյ Պատրիարգ Զաքարիա Աստուածծիմաստ վարդապետն և առ ազնուամիտ օրհնեալ իշխանսն զարարմունս չքոյդ այդորիկ, և դիտեմք զի և նոքա իրաւասիրաբար արժանի համարեցին զդատել մեր զպատժապարտ զայդ։ Վասնորոյ և ի ցանկալի եղբօրեդ խնդրի, մի դուցէ զայլ իմն խորհիլ և առնել կամիլ, անարգութի՛ն ածելով պատուոյ սրբոյ Աթոռոյս, և սառնութիւն առ բերելով ջերմ և մաքուր սիրոյ մերոյ. այլ թարց զանցառութեան ընթեռնուլ տալ զբանս մեր ի լուր հասարակութեան սրբազունդ Միաբանիցդ, և արտաքսել զչիքդ զայդ յեկեղեցւոյ սրբոյ, և ոչ համարիլ կարգաւոր։ Գիտելով ևս, զի եթէ չդայցէ ի սուրբ Աթոռս, կամ զծերութիւն, կամ զհիւանդութիւն, և կամ զայլ ինչ պատճառելով, ոչ է ընդունելոց զաբձակուճն ի բանադրանացն, որպէս և ի նոյն թղթոջ իւրում ևս նշանակեցեալ դոյ։ Եւ ի վերայ այսր մի բնաւ կարծիք լինիցի ձեզ թէ՝ մեք կամմք ածել զդա ի սուրբ Աթոռս զի աստ պահիցեմք, ոչ. քանզի բաւանակապէս յագեալ եմք ի խելագարութենէ և յանձոռնութենէ դորին. այլ միայն զի յայտնի լիցի արդարութիւն և ամբարիշտ այդ զղջացեալ ծանիցէ զչափ կշռոյ իւրոյ, և զյանցանսն իւր, և ուխտեսցէ լռեցուցանել զչեղուն իւր, ի չարութենէ և զչրթունս իւր ի չխօսելոյ զննգութիւն. ապա դարձեալ ո՛ւր և կամիցի, գնասցէ։ Այսքան առ այս բաւ է։ Իսկ և Թէոդորոս խոհեմամիտ վարդապետն ի Բայազիտ զքանի հազար ղուռուշս էր առեալ տեղւոյ դործակալին մերոյ. և զնոյնս կարնոյ դործակալն մեր վճարեալ էր անդ, հասանիլ անտի փօլիցայիւ ի մեծն Պօլիս և ի սուրբ Աթոռդ։ Եւ Թիֆլիզու և կողմանց նուիրակն ձեր Ցարութիւն վարդապետն յարդէն ցգործելոյն յառաջ քան զայս միով հնչեալ ծրարաւ զոսկիս էր յղեալ առ մեզ, ի կամս մեր թողլով զփօլիցայ առնելն, կամ զպահելն։ Բա՞ց մեք վասն ոմանց կարծեաց բարւոք վարկաք զպահելն, զի լսեմք թէ զգործն ի կատար մերձեցուցեալ՝ յառաջիկայս դալոց է. ի դալն տալոց եմք ինքեան ամբողջ հնչուիլն, որ որպէս օգտաւոր գիտիցէ, այնպէս հասուսցէ ի սուրբ տունդ։ Զայսցանէ քանի աւուրբք յառաջ ի Պօլիս տիրացու Սարդսին գրեցաք, ծանուցեալ ձեզ։ Եւ այժմ ևս մինչ այս

Թուղթ գրէաք, պատշաճ համարեցաք և մեր ղեկուցանելն սիրելի եղբայրութեանդ: Ուր և՝ անպակաս ձեալով ի ճշմարիտ հարստատութենէ առ սուրբ Աթոռս, և յեղբայրական սիրոյդ որ առ մեզ, ողջ լեր ի Տէր: Գրեցաւ ի Թուականիս Մերում ՌՍՂ և ի սեպտեմբերի. ի լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածնին:

Սիրով բազմաւ և հոգևոր օրհնութեամբ ողջոյն տամ քնաւից սիրախումբ և հարազատ Միաբանից պայծառավայելուչ սրբոյ Աթոռոյդ, շնորհազարգ եպիսկոպոսաց, խոհեմափայլ վարդապետաց, պարկեշտակրօն աբեղայից, ուսումնասէր սարկաւագաց, և համայն համեստակենցաղ աստիճանաւորաց և առաքինազարդ վանականաց. յանձնելով զամենեսեան ի բարեգթութիւնս Հանրախնամ Արարչին. ձեսլ յարաժամ խաղաղութեամբ և բարեզուարճութեամբ:

Վերստին գիասջի՛ր և զայս սիրելի եղբայրս, զի յետ գրեցման թղթոյս քանի աւուրք անցեալ ի վերայ, ի յիշեալ էիք Սահակէն թուղթ առաք գրեալ առ մեզ ըստ իւր ժանտութեան և վայրագօզանչուութեան. ղորոյ օրինակն ահա յղեցաք. զոր տեսջիք և ծանիջիք ի գրուածոցն զներքինսն գորա և զարտաքինսն. քանզի այր ի նա՛ակէ իրմէ ճանաչի ըստ իմաստնոյն: Վասն որոյ աստէն ոչ ևս երկայնեմ զայնմանէ:

Թուղթ առ Մշու սրբոյ Կարապետի վանաց առաջնորդ Աստուածատուր վարդապետին ըստ նուիրակ Գրիգոր վարդապետին և Յովհաննէս վարդապետին, յանձնարարութիւն:

Թուղթ ի Վան առ Ախիջան աղային ի պատասխանի թղթոյն ըստ նուիրակ Աստուածատուր վարդապետին զրնցելոյ՝ եւ փուսուլային՝ որ վասն մահուան Աղթամարայ Մարկոս պետին, եւ վասն ի տեղի նորին կացուցանելոյ ղոչ:

Ընդ նուիրակ Աստուածատուր վարդապետին գրեալ Թուղթգ՝ հանգերձ փուսուլայիւն հասին առ մեզ. և սիրով ընկալաք զԱստուածատուր վարդապետն. որ թէպէտ ո՛չ է իսպառ ազատ ի հիւանդութենէն, բայց ինչ և իցէ՝ ողջութեամբ ժամանեաց ի սուրբ Աթոռս, և զայդիւնսն ևս հասոյց. զոր ի հաճոյս իւր ընկալեալ Աստուած, շէն և պայծառ պահեսցէ զսրհնեալ ժողովուրդս սրբոյ, և զյատակեզ սիրելիդ անփորձ և խաղաղ կացուսցէ: Եւ վասն նորոգ նուիրակ Մարտիրոս վարդապետին ևս որ զյանձնարարութիւն էիք գրեալ, ձեռնտու և աստիճանական լինելոյ. և ինքն ևս զգոհացողական բանս էր գրեսլ զձէնջ, շնորհակալ եզաք զմտերիմ սիրելութեդ. զորս Տէր զօրացուսցէ՝ և վարձատրեսցէ՝: Վերստին ևս գրեմ, զի նա ի սէր և ի հարազատութիւն ձեր է յանձին. և յամենայն կողմանէ մուղայէթ լինիլ պարտիք, շնորհակալու կացուցանելով զմեզ զօգտաջանութենէ ձերմէ: Իսկ փուսուլային ղեկուցեալ էիր զվախճանմանէ հոգևոր որդւոյն մերոյ խղճալի Մարկոսի կաթուղիկոսին, որ մեզ տրտմութիւն եղև, բայց զի գործ արարչին է, զինչ ունիմք ասել, կամք նորա եղիցի՝ օրհնեալ, որ և լուսաւորեսցէ զհոգի հանգուցելոյն, և արժանացուսցէ արքայութեան, ընդ սուրբսըս և սիրելիս իւր. և զձեզ մխիթարեսցէ և ողջ պահեսցէ: Ծանուցեալ էիր ապա զաղթամարսւոյ թեմականաց առ քեզ դիմելն առ ի խորհրդակցութիւն ընտրութեան կաթուղիկոսի, և զքո հրաժարիլն, իբր վասն ո՛չ դոլոյ արժանաւորի, և ի գերևս ելանելոյն առաջնոյ աշխատակրութեանդ, և ևս վասն նոցին ամենաբար ընդ ախորժակս իւրեանց գնալոյն: Եւ իբրու թողեալ էիր ի կամս մեր ապաստան: Արդ սիրելիդ իմ. մեզ հարկ է ո՛չ խոյս տալ ի հոգացողութենէ և յաշխատասիրութենէ առ ազգ մեր սակայն այն թեմացիքն որպէս թէ զինքեանս որոշեսլ համարին ի մէջ: Եւ առ այդ բան՝ որպէս և խոհական սիրելիդ լա՛ւ գիտես, մեզ ո՛չ վայել է հարկապիր լինիլ նոցա թէ՝ պարտիք առնել, ընդդէմ նախնեացն մերոց. և ո՛չ բնաւ մատամբ ցուցանել զոք աստի կամ յայլուստ թէ՝ ղսա. կամ զնա արարէք: Այլ յետ ընտրելոյն իւրեանց զմի ոմն, և խնդրելոյն ի մէնջ հրամայն, ըստ ժամանակիս որպիսութեան, ներել հազիւ պատկանի մեզ: Սակս Մարկոս կաթուղիկոսին

ևս որ այնքան փոյթ յանձին կալաք, պատճառն այն էր՝ որ նա մեր օրհնածին որդի էր և ի սուրբ Աթոռոջս ընկալեալ զձեռնագրութիւն եպիսկոպոսութեան. բայց վասն այսոցդ՝ ղորս ի միջոյ իւրեանց ընտրել կամիցին, մեզ չէ փոյթ, զի եթէ մեզ և քեզ անսացող լինիցին ողորմիլք այնոքիկ, մեք ունիմք տալ նոցա զխորհուրդս պատշաճագոյն և օգտակար. այլ գիտեմք ղի ո՛չ անսան մեզ, իսկ որովհետև յաղեխ և եկեղեցւոյ մերմէ՛ են, և ո՛չ պարտին ձեալ առոանց հոգևոր պցելուի, և այն հռչակաւոր սուրբ վանքն ևս ո՛չ է ձեալոց թարց հոգաբարձուի, արժան է և մեզ խորհիլ զնոյն։ Ապա մինչ գան առ սիրելիդ վասն խորհրդակցութեան, ընդէր խոյս տաս, զի ահա յայսմ ժամանակի դու օրհնեալդ ես յայդր երևելի իշխան և խորհրդական անձն. եթէ առ քեզ չգային, այլ ևս առ ո երթիցեն։ Ուրեմն՝ պա՛րտիս տեղիք ցուցանել եկողացն. և ըստ խոհեմութեանդ զբարին առաջնոր դել. եթէ ընդունակք լինիցին օգտաւոր խորհրդոյ և բանի, բարեգոյն է. և թէ ո՛չ, որպէս և իցէ զմինն ընտրելոց են ի պետութիւն իւրեանց։ Այլ աղնուամիտ սիրելիդ՝ որքան կարես Աստուածապարգև իմաստութեամբդ ջանասցես ըստ բարեկողմն հետևեցուցանել զնոսա, և զօրպիսաբար կայացուքն իրին գրեսցե՛ս մեզ։ Որ և ի սէրդ և ի հաւատարմութիւնդ անհնազ ճաւլով, ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի Թուականիս Մեր. ՌՄՒԽ, և ի նոյեմբերի մուտն. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Սիրով մեծաւ և հոգևոր օրհնութեամբ ողջոյն տամ հարազատի եղբօրն քոյ և սիրելւոյն մերոյ Քրիստոսասէր և ի նոյն զօրացեալ պարոն Գէորգին, և այլ ամենայն քոյսիսոցն. յանձնելով զամենեսեանն ի խնամս Աստուծոյ։

Թուղթ ի յԱխալցխայ առ Եփրիկեանց Հաճի Պապային, ի պատասխանի ի հոկտեմբեր ամսոջն ի Գարնոյ գրեցեալ Թղթոյն ընդ պարան Հայրապետին, վասն տալոյ զղրամս մովսէսին և այլոց՝ սակս ախտարմայացեալ Սահակ չերիցուն աստ յղեցմանն։

Թուղթ ի յԱխալցխայ առ մերայինն ուղղափառ ժողովուրդն ի պատասխանի Թղթոյն նոցա կանխաւ գրեցելոյ վասն մոլորեցման Սահակ չերիցուն. որ կապանօք ածեալ եղեւ ի սուրբ Աթոռս եւ պատժեցաւ ըստ արժանոյն։ Ուստի խղճալի ժողովրդեան այսոցիկ զաջալերուելին եւ յորդորումն պինդ՝ մնալ ի յուղղափառ դաւանութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս։

Վաղագոյն գրեալ Թուղթն ձեր մինչ էհաս առ մեզ քանի ամսովք յառաջ քան զայս, և իմացաք զազնուալի գրուածսն ձեր՝ որք ծանուցեալ էիք զհետիչն ի յուղղափառ սուրբ հաւատոյ և ի կրօնից սրբոյ եկեղեցւոյ մերոյ՝ մոլորութեան և նզովեալ Սահակ չերիցուն՝ որգւոյն կորստեան. և զջանացողութիւն նորա յափշտակել սուրբ զեկեղեցիդ ձեր, և զնեղելն և ՚ի նասել զըձեզ, և զայլ չարութիւնսն, մեծապէս արտեցաք և ցաւեցաք ի սիրտ և ի հոգի։ Եւ թէպէտ ձեզ ո՛չ շուտով պատասխանի արարաք վասն պատճառաց ինչ, սակայն անյապաղ փութով գրեցաք առ աղնիւ սիրելին մեր Քրիստոսասէր Հաճի Բաբային, ստիպաւ հոգ տանիլ վասն ձեր։ Եւ նա ղօրացեալ Աստուծով բազում ջանիւ գունգործելով՝ զհերձուածող չէքեցն զայն հրամանաւ Տէվլէթլի փաշային յղեալ էր ի սուրբ Աթոռս, Որոյ աղաչաւ և մեք երկիցս շնորհակալութեան Թուղթս գրեցաք առ իրաւաբար մեծապատիւ փաշային. և այժմ պատասխանի ընկալաք ի նմանէ, և յայլոց ևս իմացաք որ զմեծ խնամս ունի ի վերայ ձեր, և սուրբ եկեղեցիդ ի ձեռս ձեր է, և քահանայք եկեալ ի սուրբ եկեղեցւոջգ ձերում՝ կատարեն զժամերգութիւնս և զայլ հոգեւոր պաշտամունս։ Եւ կայք ի միխթարութեան հոգևորապէս։ Այսքիւք բարի համբաւովք ո՛չ սակաւ եղև մեզ դիւրութիւն սրտի. ուստի և գոհացաք զԱստուածոյ որ յաջողեաց հերքել զգայլն ապականարար ի հօտէ բանաւոր գառանցդ, և պահպանեաց

զձեզ ի վնասակարութենէ անհաւատարիմ ապստամբին։ Եւ ի դէպ վարկաք այժմ զայս սիրոյ և օրհնութեան Թուղթ գրել առ ձեզ։ Արդ՝ հոգեւո՛ր որդիք մեր, հրամայէ Աստուածային սուրբ գիրն Թէ՝ լե՛ր հաւատարիմ մինչև ի մահ, զի առցես զպսակն կենաց։ Իսկ որ ո՛չ պահիցէ զհաւատարմութիւն իւր, ընդունիցի զպատիժս։ Որպէս անհաստատն ի միտս՝ ապստամբ ժանտ չէրէցն այն որ անհաւատարիմ գտանեցաւ սրբոյ եկեղեցւոյս մերոյ ուղղափառ դաւանութեան և կրօնից, մատնեցաւ դատաստանի և պատժոց՝ լուծաւ ի կարգէն և զրկեցաւ ի շնորհաց սրբոյ Հոգւոյն, ասա խայտառակեալ, և ի հանգերձելումն ընդ կեզծաւորսն գտանելոց։ Ապա՛ ուրեմն՝ մի՛ ոք ի ձէնջ գայթակղեցի առ նա՝ զի նա ո՛չ թէ ղրարին ընտրելով՝ հեռացաւ ի սուրբ եկեղեցւոյ մերմէ, այլ ցանկանալով հեշտութեան լոյծ կենաց՝ ախտաւորեցաւ, որ և թէպէտ գիտէր զուղղութիւն դաւանութեան և կրօնից սրբոյ եկեղեցւոյ մերոյ, սակայն ո՛րս եղև սատանայի, ըստ որում՝ կելլակուր նորա ընտիրքն։ Այլ գուք օրհնեալքդ Յաստուծոյ՝ հարազատ որդիքդ սրբոյ Աթոռոյս և սիրելիքդ մեր՝ զհաւատարմութիւն ձեր անխախտ պահելով ի լուսաւորչաւանդ սուրբ և ի միարանագաւան և յուղղափառ հաւատս սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեաց հաստատուն և անշեղ կացէք, հեռի և անխառն ձեալով ի չար և ի հոգեվնաս աղանդոյն ախտարմայից. և մի՛ քնաւ ունկնդիր լինիցիք մոլար իրաւուց նոցին. այլ զգուշասջիք ի նոցանէ իրրև ի թունաւոր կենդանեաց։ Նոյնպէս և զամենայն եկեղեցականս աւանդութիւնս՝ զկարգս և զսահմանս զորս ունի սուրբ եկեղեցիս Հայաստանեաց՝ հաստատուն պահեսջիք ի ձեզ. որպէս զի ժառանգեսջիք զօրհնութիւնս սրբոյ Լուսաւորչին մերոյ և ամենից սրբազան Հայրապետացն մերոց նախնեաց, և վարձատրիցիք յԱստուծոյ ասա և ի հանգերձելումն։ Այլ և՝ եթէ դեռ ո՛չ ունիք զերեցփոխ զպատշաճաւոր ոք ի ձէնջ մի՝ բանութեամբ երեցփոխ կարգեսջիք որ ամենայն իրաց սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ և հոգեկան արդեանց ձերոց մուղ ըստ եթէ լիցի. և բարւոք հոգատարութեամբ պայծառ և ճոխ պահեսցէ սուրբ եկեղեցիդ ձեր ի հոգևորապէս մխիթարութիւն ձեզ։ Որք և ղորդիական սէր և ջհարազատութիւն ձեր որ առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ աննուազ ունելով և ղորպիսածանոյց գիլ ձեր ո՛չ պակասեցուցանելով ի մէնջ լիջիք օրհնեալք ի Տէր, և պահպանեցեալք ողորմութեամբ նորին. և Շնորհք Քրիստոսասէջ սրբոյ Տեզւոյս եղիցի՝ ընդ ձեզ հանապազ։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՄՒԽ թվականս և ի դեկտեմբերի ի լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածին։

Թուղթ ի Զմիւռին առ (ազնուական) Աստուածատուր աղային, ի պատասխանի Թղթոյն զրեցելոյ ի հոկտեմբերի Գ, ծանուցանելով եւ զառաջին Թղթոյ հասանիլն որ էր վասն մեղրեցի Պապղուլենց հանգուցեալ Յովհաննիսի ժառանգութեան։

Ընկալաք զերկուս Թուղթս քո, որոց առաջինն էր ի խնդրոյ հարազատ սիրելւոյն մերոյ և քո Տերամբ զօրացեալ, պարոն Աստուածատուրին Պալթայեան՝ սակս մեղրեցի Պապղուլենց հանգուցեալ պարոն Յովհաննիսի ժառանգութեան, զի տեղեկանայցեմք եթէ ի հայրենի երկրին նոցա գուցէ՞ մերձաւոր ազգային նոցա, և այլն։ Ուստի՝ և մեք գրեցաք նոյնոյ վիճակի Առաջնորդ Յովակիմ վարդապետին, հարց ու փորձ առնուլ, և զաստուգութիւն գրել, ըստ խնդրոյն ձերոյ։ Գեռ պատասխանի չեմք առեալ, երբ առնուցումք, որպէս և իցէ, գրելոց եմք սիրելւոյդ, և եթէ վկայական Թուղթն քո որ է հոկտ. Գ. գրեցեալ, էհաս առ մեզ ի նոյեմբ. ԻԳ. հանդերձ Թղթով սիրելի և հոգևոր որդւոյն մերոյ և նորոգ նուիրակին և Առաջնորդին ձերոյ Իսահակ Աստուածիմաստ վարգապետին, որովք իմացաք զանվտանգ ժամանելն նորա ի Տիրախնամ Մայրաքաղաքդ, և զընգունիլն ամենեցունգ զնա մեծաւ սիրով և յարգանօք, և զսկզբնաւորելն նորա ընդգործն նուիրակութեան. և զհաւատարիմ սիրելւոյդ առաւել մարդասիրութիւն և զասպնջականութիւն և զշահեցողութիւն զորս ցուցեալ ես նմա, և զօժանդակու-

թիւնգ ի գործն. որպէս և նա ինքն ևս յոլով շնորհակալութեամբ գրեալ և ծանուցեալ էր. Վասնորոյ մեք ևս կարի յոյժ շնորհակալ եղաք ղընաիր սիրելւոյդ և օրհնեցաք բազմաւ սրհնութեաւր. զոր Աստուած սրհնեսցէ և զօրացուսցէ. ըստ հրաղատական արարմանցդ վարձատրեսցէ բարեպէս, և ի խնամս իւր պահեսցէ միշտ, հանդերձ ամենայն քոյայնովքդ: Գրեալ էիր և զպատրաստեցմանէ գործաւարտ Գալուստ վարդապետին առ ի վերադառնալ. և ըստ այնմ համարիմք թէ մինչև ցարդ վաղապէս ուղևորեալ իցէ, որում Ցէր յաջողեսցէ խաղաղութեամբ հասանիլ ի տուրր Աթոռս: Ծանուցեալ էիր և զբարեբաղձոյ որդւոցն քոց և մերոց Յակոբ և Պետրոս աղաղաւէից ղվերադառնալն ի Մալրդամու և զամբողջապէս ժամանելն յայգր, ընդ որ յոյժ ուրախացաք. Ցէր պահեսցէ զինքեանս և յառաջադէմս արասցէ շնորհօք և խոհեմութեամբ գնալ ի զօրութենէ ի զօրութիւն: Այժմ վերստին ևս գրեմ աղնուդդ վասն նուիրակ և Առաջնորդ Իսահակ Աստուածարան վարդապետին, ղի որպէս սկսեալ ես և յանձն առնուս և ևս շահեցող և միխիթարիչ և ձեռնտու լինիլ, նոյնպէս և կատարեսցես ըստ յանձնառութեանդ ի յօգուտ սրբոյ Աթոռոյս և ի սէր մեր, որով սրտադիւր եղեալ միտ շնորհակալ լինելոց եմք ղսիրելւոյգ: Եւ զորպիսութեանց մերոց և կողմանցս թէ կամիցիս գիտել, ողորմութեամբ Ցեռն պահպանեցեալ եմք հանդերձ սուրբ Աթոռովս: Այլ նարդենիս ի Կովկասու աւերագործ սեագունդ գումարն Էջմիածնայ դարձեալ շարժեցան յայսկոյս և ձեռնկալութեամբ Արցախու իշխողին եկեալ են ի Նախջուան և պաշարեալ զքերդն. և երկրիս մերոյ իշխողն ևս զօրաժողով եղեալ դիմեաց յայնկոյս իբր յօգնութիւն հասանիլ Նախջուանու պաշարեցեալ իշխողին. և գեռ ոչինչ վճարեցաւ: Այսմ երկրի ևս միաստուց կասկածանք գոյ, ուստի ոչ սակաւ ապգնապս տարակուսանաց ունիմք: Աստուած զվախճանն առ բարին տարցէ: Ցեռնտպարգև զաւակաց քոց՝ և Հոգևոր որդւոց մերոց քաջատոհմից և խոհեմազարդից՝ պարոն Մարգար և պարոն Մատթէոս, Յակոբ և Պետրոս Աղաղատէից՝ այլ ամենայն ձեռնայնոցն մեծաւ սիրով և օրհնութեամբ ողջոյն տամք: Որովք հանդերձ ողջ լեր ի Ցէր. և պահպանեցեալ ողորմութեամբ Նորին յարաժամ. Ամէն: Գրեցաւ յամի Փրկչին 1791, և ի դեկտեմբերի. ի տուրբ Աթոռս Էջմիածնին:

Նաև՝ վաղեմածանօթ հարազատ սիրելեացն. մերոց՝ և բարեմիտ որգւոցն սրբոյ Աթոռոյս Քրիստոսիւ զօրացելոց՝ բարեպաշտից և խոհականաց՝ Վիրապեան պարոն Երեմիային, և Շահվէքիլեան պարոն Գէորգին՝ սիրով ողջոյն և օրհնութիւն տամք, յանձնելով ի խնամս և ի բարեգթութիւնս Արարչին հանապազ:



Թուղթ առ Հերակլ արքայն վրաց ի պատասխանի յամբոյս ղեկտեմբերի ԺԹ, գրեալ Թղթոյն շնորհակալութիւն սակս հոգացողութեան եւ զօգտաւոր խորհուրդս տալոյն պահպանութեան ի կասկածանաց գալոց Էջմիածնայ, մինչ ընդ Նախչուանու քերդն պաշարեալ էին:

Շնորհք...

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի բարեպաշտութեան ձերում: Զի ընկալաք զսրատաշահական և ըստփոփարար թուղթ յարգութեան ձերոյ, և իմացաք զիմաստալից բանս և զգովելի խորհուրդ գերիմաստ տէրութեանդ, և զկամարար բարեջանութիւնդ առ սուրբ Աթոռս և առ աղօթաւորքս: Եւ յաղագս պղպիսի ցաւակցաբար հոգսակրութեանդ վասն մեր, յոյժ շնորհակալ եղաք զբարեպաշտ և ըզմարգասէր մեծէ +. և առաւել ևս եգաք զմեզ պատահական յարաժամ ազօթելոյ վասն հասարակաօգուտ կենաց և յաջողութեան ձերոյ: Զոր ամենակալ Ցէնն օրհնելով օրհնեսցէ՛ և ընդ երկայն աւուրս առատսցէ, խաղաղ կենօք և խրոխտ իշխանութեամբ. և ճոխացեալ բնաւ բարերաստութեամբ ի յօգուտ հասարակաց և մանաւանդ ի միխիթարութիւն մեզ: Արդ՝ այժմ ի վերնախնամ տեսչութենէն՝ որպէս և իցէ՛ թըղնամքն այնքիկ դարձ արարին ի նախչուանու, և մեք ի կասկածանացն զոր ունէաք, զերծաք ներկայապէս զկնի ևս Աստուծոյ եմք ապաստան. Իսկ խորհրդական բան մե-

ծուԹեանդ զոր գրեալ էիր. ոչ սակաւ յաւադրուԹիւն է մեզ առ. յապա՛յն, եԹէ և ևս այնպիսի նեզուԹիւն ինչ պատահելոց ի. ցէ զոր մի արասցէ Ցէր։ Այլ նարդենիս պայպէս էանց, զորոյ ընդ երկար պատմուԹիւն յայլոց լաւագոյս ևս իմացեալ ես, եւ զի ԹզԹաբերն վերադառնայր, զայ"քան ինչ գրեցաք մեծուԹեանդ գիտել զորպիսուԹեանց մերոց։ Որ և զՀմարիա սերդ եղեալ խնամագ որ առ. սուրբ Աթոռս և առ. մեզ աննուազելի՝ ունելով՝ ոգի ներ ի Ցէր, պահպանեցեալ միշտ կենսատու Խաչիւն սրբով. հանդերձ Թագաւորմ որգւովքդ, և ամենիւք իսկ քոյայնովքդ ի պարծանս և ի հըր. ճուանս մեր. Ամէն։ Գրեցաւ յամի Փրկչին 1791, և ի դեկտեմբերի ԻԱ, ի յԱնապատս մեր որ յԵրևան քաղաքի։

Թուղթ ի հնդիկս առ արցախեցի Բաղրատեան պարոն Մովսէսն, իբր սըրտադիւրութիւն վասն զժդմնութեան՝ որով եւ գրեալ էր զտլտունջ ինչ առումն. եւ յորդորումն ի սէր եւ ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս։

Ճորմէ ժամանեսցէ... Ընորհք...

Գոլով մեր յարաժամ մաշեցեալ սըրտիւ, (ըստ որում մեք հանապազ ի պէս պէս վիշս) այլն իսկ յառեալ հայիմք յաւէտ, զի գացուք յուսահեք զմխիթարուԹիւնս վշացելոյ սրտի մերոյ։ Եւ զի նըւազեալ են ի բազում ուրեք միխիթարիչք մեր, և առաւելեալք խոցոտիչք վասն ըստմուԹեան մեզոց մերոց, վասնորոյ ի ամառաւածախնամ երկրէ այսի՝ մանաւանդ ի քեզապիսուԹենէդ ևոհական անձանց՝ յաուկ հարազատաց սրբոյ Աթոռոյս և սիրելեաց մերոց՝ ակնադէտ էաք ընդունիլ զԹուղԹ, այլ ներհակն պատահեաց ակընկալուԹեան մերոյ՝ առ ի քէն. և փոխանակ սփոփարար լրոյ՝ զարտմական և զկծեցուցիչ լուրս լուաք ի զսիրելի. էդդ, որ ցաւ ի վերայ ցաւոց եզև մեզ։ Քանզի՝ Թող զչ դրելդ առ մեզ զդիրն ինչ ցայնքան ժամանակս, և ոչ իսկ դոնէ ըզհամառօտ պատասխանի ԹղԹոյն մերոյ, մինչքաջ գիտակդ ես դպրուԹեան, և ոչ այնքան ինչ աշխատելի էր քեզ, դրեալ էիր առ հաւատարիմ սիրելին մեր և լուսարարն սըրտոյ առաքելիս՝ Գրիգոր Աստուածխմաստ վարդապետն, զբանս գժգմնականս զմէնջ, և զգաբովանս զնուիրակէն զոր և նա զեկոյց մեզ. որպէս ԹԷ՝ մեք յանգէպս իցեմք արարեալ զգրուԹիւն մեր որ առ քեզ, ըզսիրացուս բառն առագրելով աննուան սիրելեդդ. և նուիրակն ոչ է բարեհաճայացեալ յաչս քո, և այլն։ Առ որս ծանիր սիրելիդ մեր. զի մեք զյեսուէն իսկ ի մերազնեայց ոչ կամիմք գժուարեցուցանել, այլ մանաւանդ շահել. ապա զի՞ արդ զքեզ խոցել կամեաք յորմէ զբարեշնորհուԹիւն ևս ընկալեալ էաք։ Քաւ լիցի մեզ զայնպիսի ամարգուԹիւն և զմաաւ անցուցանել, Այլ զի սովորուԹիւն է եղեալ յազգի մերում զգիտական դպրուԹեան՝ սիրացուս կոչել, յորմէ կոչմանէ և ի Բիւզանդիայ և յայլ մայրաքաղաքս գտանեցեալ հռչակաւոր դպիրք ոչ խորշին քան ԹԷ սխորժին, ուստի բարւոք Թուեցաւ մեզ և գիտական սիրելիդ այնու յանակացուցանել, ոչ բնաւ կարծելով ԹԷ՝ ամբոխիցի սիրա քո նովաւ. բայց դիւանն մերոյ ներհակն է ազդեցեալ սիմացս քոյ։ Եւ նուիրակն մեր ԹԷ որպէս է վարեցեալ յայդր՝ որ անհաճոյ է երևեցեալ քեզ, զայն լաւապէս ոչ իմացաք. զի Գրիգոր վարգապետն զպարզ բան ոչ ասաց մեզ. և ի քէն գիր չունիմք, և յայլոց ևս զայնպիսի գրուԹիւն չեմք առեալ սակաւին, զի հասու լինիցաք ԹեւուԹեանց նորա, Սակայն՝ եԹէ անվայելչաբար իցէ լեալ գրուԹիւն մեր, և ԹԷ նուիրակն ևս պակաս գտանեցեալ իցէ ի սրաշահ առնելոյ, այգոքիւք և եԹէ չէր պարտ քեզ միանգամայն հրաժարիլ ի սիրոյ. այլ երկայնամիտ լինելով ըստ կատարելուԹեանդ անգամ մի ազգ առնել մեզ զկիրս սրտի քոյ, և մեք որչափ կարն մեր զօրէր, հոգւոյաք բուժել զվէրսդ։ Բայց սիրելիդ իմ, Թուի ԹԷ՝ այգ վիրաւորուԹիւն ոչ այնքան առ ի մէնջ, որքան ի վազեմեան անցիցն է, և նորապէս արծարծեցեալ, Արդ՝ եԹէ սէր ծածկէ զբազմուԹիւն մեզոց ըստ սրբոյն Յակոբոսի, չէն զարմանք ԹԷ հակառակն նորին՝ առելուԹիւն, զբարին՝ չար համարիցի։ Իսկ եԹէ իբրև զմի ոք ի հասարա-

կից լինիցէիս, չէր այնքան ինչ ՚ող քեզ, այլ զի ունիս առ ընկալեալ զվերին իմաստութիւնն՝ որ սուրբ է խաղաղարար, հեղ՝ դիւրահաւան, լի ողորմութեամբ, և այլն, ըստ նոյնոյ սրբոյ Առաքելոյն, որով և այլոց ևս կարողանաս առաջնորդել, համարիմք թէ ինքնին իսկ խեթկեցիս ի խղճէ մտաց քոց. որ ըստ այդմ շնորհունակութեան՝ և զներհակսն յօժարեալ ես պահել ի սրտի, յիւրկարաձղութիւն րազում ամաց, որ անաւղի է, և ոչ ընաւ վայել է քոյդ իմաստութեան. ըստ որում վախճանեալ են նոքա, և զնոյն անշուշտ վճիռ մեզ ևս վճռել առաջիկայ։ Բայց արդարև՝ թէ յառաջնմէ տեղեկացեալ էաք զսրտաճմայութեանէ ոգւոմէ, վազուրեամ փութայաք ի սփոփել, ըստ որում և հարկ պաշտամանն մերոյ սահիպէ առ նոյն. այլ չունելով մեր զայնմանէ տեղեկութիւն, և ոչ յասկապէս հոգս ինչ առնելով, ուստի՝ կարծեալ ես զմէնջ իբր զառելութիւն ինչ ունիլ, և առաւել ես գժուարեալ ես։ Զոր նարդենիս ի լսել մեր յիրաւի վշտացաք յոյժ։ Վասնորոյ և հարկաւորեցաք զայս սիրոյ ի օրհնութեան Թուղթ գրել առ իսկապէս սիրելիդ։ Քանզի ի բազմից պատմել մեզ Գրիգոր Աստուածխմաստ վարդապետին զկատարեալ բարեպաշտութենէ քումմէ և զազնուական բարուց և զպարկեշտ վարուց քոց, մեծապէս հրճուեալ ի սիրտ և ի հոգի, գոհունակութեամբ օրհնաբանեալ իսկ եմք զարժանիդ օրհնութեան. և որպէս սրատգիտին Աստուծոյ յայտնի է, քաց ի սիրոյ և օրհնութենէ՝ զայլ ինչ ատելութեան նըշանս չունիմք զմտաւ ածեալ առ քեզ։ Որ և ըստ ճշմարտութեան իրին յուսամ թէ անսայեցես բանից՝ ողջախոհ մտօք իմանալով, և ոչ այլ ընդ այլոյ։ Ապաքէն սիրոյն Քրիստոսի խնգրի ի բարեպաշտութենէ քումմէ՝ մի փոքրումբք ինչ առթիւք զգրտութիւն ածել ի ջերմեռանդ սէր և ի հարազատութիւն քո որ առ ուղղափառ սուրբ եկեղեցիս Հայաստանեայց, և առ սուրբ Աթոռս, այլ որպէս վայելուչն է կատարելութեան քում ըստ հասակիդ և ըստ գիտութեանդ՝ ընտրեսցես զարժանն առնելոյ. բացամերժեսցես զամբոխումն ի մտաց քոց, և հանդարտեսցիս յամենայնի, խնդրելով ղկատարելութիւն՝ զասպնջականն սրբոյ Հոգւոյն. և որպէս մինչև ցայժմ, նոյնպէս և յայսմհետէ կացցես ճաստեաց ջերմեռանդ ի սէր սրբոյ եկեղեցւոյս մերոյ ուղղափառի, աննուազ ունելով և զհաւատարմութիւնդ առ լուսածին մայրս քո սուրբ Աթոռս և առ հոգևոր հայրութիւնս մեր։ Եւ ամենաբարեր Փրկիչն Տեառն մեր Յիսուս Քրիստոս ապաքինեսցէ վէրս սրտի սիրելւոյդ. շնորհելով զկատարեալ առողջութիւն հոգւոյ և մարմնոյ. և փոխանակ մաւորական կրիցդ արժանութեան պարգևեսցէ զկեանս քո՝ և ուռճացուսցէ ամենայն բարեաց արգասաւորութեամբ, մանաւանդ և ի հանդերձելոյնն երանական կեանացն արժանաւորեսցէ։ Իսկ արդ՝ ազնուամիտ սիրելիդ մեր, որպէս մեք այժմ՝ փոյթ յանձին կալաք այսու օրհնաձիր թղթով ծանուցեալ զպարզութիւն մտաց մերոց որ առ քեզ, և ոչ այսչափ միայն. այլև հոգամք ընդ հանդերձելոյ նուիրակին զառաւելն քան զայս ցուցանել ի միամտութիւն քեզ ամենեւին, նոյնպէս և դու օրհնեալդ Աստուծոյ պարտիս անյապաղ սիրանիշ և հարազատական թղթով քո զմեզ միամիտ ցկացուցանել ի քոյդ կողմանէ. որով յոյժ սրատիւր եղեալ մեծապէս շնորհակալ լինելոց եմք զբարեմտութենէ քումմէ։ Ո՛ղջ լ[illegible] ի Տէր, յանձնեցեալ ի խնամս նորին. Եւ շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ հանապազ։ Ամէն։ Գրեցաւ յամի փրկչին 1791. և ի դեկտեմբերի. ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածնին։

Թուղթ առ Հնդկաստանու նուիրակ Եփրեմ վարդապետն, իբր պատասխանի թղթոյ նորա ի Կալկաթու գրեցելոյ։



ԻՐՀԱՐՈՒԹԻՒՆ

Թիւնեւ փոփոխականութիւն Առաջնորդական կոնդակին Թիֆլիզու զոր ետ սրբազանն Մաւրտիրոս վարդապետին՝ վերստին առաքելով զնա Առաջնորդ եւ նուիրակ Թիֆլիզու. մինչ Պետրոս վարդապետն ի սլատճառս հիւանդութեան խնդրէր դառնալ անտի ի սուրբ Աթոռս։

Թուղթ առ Բայազտոյ եւ Խօյայ Քահանայն եւ իշխանն, ի սլատճառսխանի մահսարացն նոցին, ծանուցումն թէ՝ վասն սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանացն ամայանալոյն թուղթս առաք ի խանէն մերմէ առ Խօյայ խանն եւ առ կինն, եւ մեք եւս թուղթս զրեցաք նոցա, այցելութիւն առնել սրբոյ վանացըն, եւ նոքա ըստ խնդրոյն մերոյ հրամանագիրս էին տուեալ. եւ մեզ սլատասխանիս էին զրեալ. վասնորոյ ահա զԱռաջնորդ Գէորգ վարդասլետն վերադարձուցաք, զի տեսցէ զխանն՝ եւ զնաստցէ ի սուրբ վանքն։

Ցորմէ ժամանեցէք...

Ցառաջ քան զայս՝ ընդ Առաջնորդին ձերոյ եւ հոգևոր որդւոյն մերոյ Գէորգ վարդապետին զրեալ բազմ կնիք թուղթըն ձեր հասին առ մեզ, և իմացաք զխնդիր ձեր որ վասն այցելութեան սրբազան Առաքելոյն Թադէոսի հրաշազարդ վանացն։ Ապա ի գնալն մեր յերևան քազաք զԳէորգ վարդապետան և ընդ մեզ առաքաք, և խնգիր արարաք ի խանէն մերմէ, և նա գրեաց առ Գօլվաթլու խանն Խօյայ յատկապէս խնամատար և հոգածու լինիլ շինութեան սրբոյ վանացն, և սատեպ բռնաւորացն որք յափշտակեալ էին զհող և ջուր սրբոյ Ցան այնորիկ։ Մեք եւս թուղթս դրեցաք ընդ խանի թզթոցն առ խանն Խօյայ և առ Բեկուէն որ է քոյր խանին մերոյ և յղեցաք ձեռամբ Թօքի բաշի փեսալի բէկին։ Եւ նոքա հաճեցեալ ընդ գրուածս խանին մերոյ և մեր՝ կատարեալ էին զխնդիրսն մեր, որպէս և ի պատասխանագրութիւնս իւրեանց որ առ մեզ՝ ծանուցեալ էին։ Քանզի՝ Գօլվաթլու խանն Խօյայ. զվանից խնամածութիւնն յանձնեալ էր Բէկուէին, և ընդ պատասխանեաց թզթոցն մերոց գրեալ էր զերկուս թալզայս, մինն ի վերայ Գէորգ վարդապետին առ ի համարձակութեամբ գնալ նստիլ ի վանքն և տիրել ամենայն ժառանգութեանց սրբոյ վանիցն և ի շինութեան պահել. և զմինն ի վերայ մերձակայ գեղջ բնակչացն այլազգեաց զի մի յափշտակեսցեն զհող և ջուր սրբոյ վանացն. և մի զայլ ինչ ինաս գործեսցեն։ Եւ մեք ահա զայն թալզայն եառաք Գէորգ խոհեմամիտ վարդապետին և դարձեալ թուղթըս գրեցաք առ յարգելի խանն Խօյու և առ Բէկուէն շնորհակալութիւն և յանձնարարութիւն վասն սրբոյ վանացն ե. Առաջնորդին. և վերադարձուցաք, որ եկեալ ի Բայազիտ և ի Խօյ՝ տեսանիցէ զԳօլվաթլու խանն և զԲէկուէն և ապա դնասցէ ի սուրբ վանքն և չանասցէ շինացուցանել և ի բա-

բեկարգութեան պահել։ Ճաշողեսցե Աստուած, զի շինասցի և գոցէ զիւր ղառաջին պայծառութիւն, ի հոգևորապէս մխի թարութիւն ձեզ՝ և ի յուրախութիւն մեղ, եւ արգ ինչ դառնայր սիրելի որդին մեր և Առաջնորդն ձեր Գէորգ հեզարարոյ վարդապետն, գրեցաք ընդ նմա առ ձեզ զայս թուղթ որպիսայայս, զի իմացեալ զոր ինչ մեք բսա մեր։ ձեռնհասութեան արարաք, դուք և ես բսա ձեր կարեացն թէ արդեամբք՝ թէ խորհրդով, և թէ այլ ամենայն հաւատարմական գործովք ձեռնտու և օգնական լինիք ի շինութիւն և ի պայծառազարդութիւն սրբոյ տանն հոգւոյ ձերոյ, որոյ զշնորհսն միշտ ժառանգիցէք։ Որք և եղիջիք ողջք և օրհնեալք ի Տէր. և շնորհք սրբոյ իմման աեզւոյո Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ ձերայինսն ամենեսեանսն. Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԽԱ թուոջս և ի յԱպրիլի. ի լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածնի։

Թուղթ առ ռուստաց երկրի նուիրակ եւ Առաջնորդ Ծովսէփ վարդապետն ի հաւատոյ պատասխանի թղթոյն ի Մոսկովու ի 1791 թուին Փրկչի, օգոստոսի 18 գրոցելոյ. եւ ազդարարութիւն մահուան Վարդան վարդապետին ի յԱմիդ. եւ արծակիլոյ սպասաւորի նորին Աբրահամ վարդապետին ի Հաշտարխան ի տեսութիւն ծնողացն,

Ճանցելումՙ ամին՝ թող զ՚ի մայիսի ԻԲ. ընդ Տէր Ստեփանի որգւոյն գրեալ համառօտ թուղթն, գրեցաք ի յօգոստոսի մուտն երկարօրէն թուղթ մի ի միխիթարութիւն ի կողմանէ հոգելոյս եղբօրն քո, և ի պատասխանի քանեաց թղթոցն քոց. զոր և հանդերձ ինն թղթովք՝ ղորս խնգրեալ էիր առ Սէովայու աղնիւ աղաչայ Ծովհաննէս Քիրենց և առ որդիսն, և առ այլս յայլուր, յղեցաք ի Հաշտարխան առ գործակալ պարոն Մկրտումն, գրելով և նմա, զի հասուսցէ առ սիրելիգ։ Իսկ յայսմ ամի ի մարտի ԻԹ ընկալաք զթուղթ քո յանցելոյ ամի օգոստոսի 18 ի Մոսկովու գրեցեալ, և ծանեաք զոր ինչ ծանուցեալ էիր։ Բայց ընդ սակաւ մի բերկրութեան որ վասն ուրախալի պատմութեանց ինչ Տէրութեան կալիցդ, սաստաք զառաւել տրտմութիւն և զցաւ սրտի ընդ գառնագէտ տարաժամ մահն միայնակ որգւոյն Աղնիւ Ծովհաննէս Աղային, և վասն վախճանի կենաց Քրիստեանց Աղնիւ Աղաչայ Ծովհաննիսին։ Որպէս խնգրեալ էիր հարկաւոր գիտացաք գրել ղմխիթարութիւնս առ ազնիւ Ծովհաննէս աղային, և ազնուհի ամուսնին, և առ հանգուցեալ Աղաչայ Ծովհաննէսի որդիսն, և առ երկուս ոմանս վասն նուիրացն, որս և ձեռնարկեցաք իսկ ի գրել, բայց վասն յոգնապատիկ զբաղանաց, այն թուղթք ո՛չ հասին ընդ այնմ թղթոյ ուղևորիլ, մինչ կարաւան ելանէր դէպ ի Թիֆլիզ, և թղթաթաբերս հարկաւորիւր ընդ նոսա ուղևորիլ։ Վասնորոյ զայս համառօտ թուղթ այժմ հասուցաք կարաւանին։ Իսկ զայն թղթոց մնացեալսն, և զքոյդ թղթոյ լիաւր պատասխանին յառաջիկայ աւուրքս գրեալ յղեսցուք։ Այլ արդ այսու թղթով զայս իմա. զի որպէս կանխաւ գրեալ ուձնիմք քեզ, զՎարդան վարդապետն առաքեալ եղաք ի նուիրակութիւն Տիգրանակերտու։ Բայց խղճալին զշրջակաց թեմսն և զՏիգրանակերտու մեծ եկեղեցւոյ զգործ նուիրակութեան կատարեալ, և ի փոքր եկեղեցին ևս ձեռնարկեալ, ապա օրհասին մահու վերաժամանելով վախճանեալ էր բարի մահուամբ, որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ. և զգլուխ սիրելւոյդ ողջ պահեսցէ։ Իսկ լուսահոգին ի հիւանդութեան կոչեցեալ էր զիշխանսն քաղաքին և զգանձապահսն մեր, և կտակեալ էր նոցա՝ յետ մահուան իւրոյ զսակաւ թերին գործոյն յանձնել օրհնաձիր որգւոյն իւրոյ Աբրահամ վարդապետին, և յետ վճարմանն՝ ուղևորել առ սուրբ Աթոռս, և գրել մեզ, զի քանի եզանակաւ շահեսցուք, և հրաման տացուք գալ ի Հաշտարխան ի տեսութիւն ծնողացն և դառնալ ի սուրբ Աթոռս ի միաբանութիւն սմին։ Եւ օրհնեալ իշխանքն յանձն առեալ զամենայն կտակն՝ յետ մահուանն զամենայն կայսն պահպանեալ էին՝ ի զննութենէ պլազգեացն, և զթերին գործոյն՝ Աբրահամ վարդապետին վճարեցուցեալ էին, և ապա ամենայն արդեամբքն և կայիւքն ուղևորեալ էին առ սուրբ Աթոռս. և զա-

ՄՆԱՑԱՆ կատարն լուսահոգւոյն վկայութեամբ գրեալ էին մեզ եւ որպէս կատարն էր, այնպէս արարաք, շահելով ղԱրրահամ շնորհունակ վարգապետն՝ որքան արժանն էր, եւ հրաման ևս ետուր հանգիւ՛ն՝ բաշխպօրթիւ, զի եկեալ ի Հաշտարխան տեսանիցէ զՅնօղն եւ ղընտանին եւ դառնայցէ ըստ ժամադրութեան։ Ընդ նմին ի դէպ համարեցաք եւ զայս թ ուղթ առ սիրելիդ գրել, նախ՝ զի գիտասցես զորպէսն իրացն դորին, եւ երկրորդ՝ զի եթէ ի Հաշտարխան պահիցես, սիրով եւ խնամարկութեամբ շահես. ցես, եւ խազաղութեամբ վերադարձուսցես առ սուրբ Աթոռս Աւսքան առ այս շատ լիցի։ Զայլ որպէսն սրբոյ Աթոռոյս եւ մեր՝ եւ զկասկածակրութիւն ի շարժմանէ լեզուացդ, եւ զայլ ևս որ ինչ հարկաւորի ցի, միւս թղթովն ազդ արասցուք։ Ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի ՌՍԽԱ թուոջս, ի յԱպրիլի ԻԲ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ դարձեալ առ Յովսէփ վարդապետն ի լիագոյն ալատասխանի թղթոյն նորա յամի Փրկչին 1791, յօգոստոսի 18 զրեցելոյ վասն իրաց եւ իրակութեանց ոմանց։

ՅԱմսոյս Ապրիլի ԻԲ, եւ օգոստոսի մուտն թուղթ մի գրեալ առ քեզ ընդ Հանգուցեալ Վարգան վարդապետի սպասաւոր Աբրահամ ուշիմամիտ վարդապետին յիշեցաք ի նմին զյանցեալ տարւոյ մայիսի ԻԲ, եւ օգ. մուտն թուղթս գրելն մեր առ քեզ, եւ ծանուցաք զհասանիլն առ մեզ թղթոյն քո ի նոյն օգոստոսի ԻՀ գրեցելոյ ի Մոսկովու։ Եւ ի նեղ էր ժամանակն, միայն վասն թզուարերին գրեցաք ինչ։ Այլ զլիագոյն պատասխանիս գրուածոցդ եւ զայլ ինչ խոստացաք յետ աւուրց գրել. զորս ահա գրեմք։ Արդ՝ ծանուցեալ էիր զգնալգ ի Պէտերպօլգ եւ հանդիպիլդ գառնաղէտ սգոյ Աղնիւ աղայ Յովհաննէսին եւ իւրայնոցն վասն տարաժամ մահուան միայնակ որգւոյն իւրեանց Աղայ Յարութիւնին. որ արգարեւ մեզ ևս եղեւ մեծ կսկիծ։ Վասնորոյ ըստ խնդրոյդ ահա զթուղթս մխիթարութեան գրեցաք առ աղնիւ Աղայ Յովհաննէսն եւ առ կենակիցն յատուկ յատուկ զորս Աստուած մը խիթարեսցէ։ Եւ վասն գանէտուրին եւ գըզէթին եւ ննջածք քրքոջն գրեալ էիր թէ վաղ եմ առաքեալ։ Ցիրաւի վաղապէս հասեալ են, որպէս առաջինն թղթովն ազդարարեալ եմք քեզ շնորհակալութեամբ սակայն մնջածն մեզ թուլութեամբ էր. չիմացաք թէ՝ պարոն Մկրտումն վասն էր զերկուս չէր յղեալ։ Իսկ միանալու դուխտոցն աղագաւ որ գրես թէ ոչ գտանին այժմ, ապա՝ զինչ եմք առնելոց. յանդուգն առօղքն որք ի վաղուց սովորեալ են առնուլ, այլ ևս պահանջին։ Ուրեմն՝ վերստին գրեմք սիրելւոյդ՝ զի հարկաւորապէս փոյթ կալեալ՝ թէ ի մօտուստ եւ թէ ի հեռուստ առ ձեռն բերեալ յղեսցես, որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք։ Գրեալ էիր զցաւակրութեանցդ ի Պետրպօլգ եւ զվերստին առողջանալւոյդ։ Տրամութիւն էր մեզ հիւանդանալդ. իսկ ընդ Աստուծով առողջութիւն գտանելդ ուրախացաք։ Պահեսցէ Տէր առողջ եւ անփորձ յամենայն վտանգից զսիրելիդ ի զօրութեան եւ ի կարողութեան առ իւրաշաճոյ առաջադրեալ իրս քո։ Ծանուցեալ էիր զեբրոպացւոց տէրութեանց ոմանց յառնելն ի վերայ Աստուածազօր տէրութեանց ռուստաց, եւ նկուն լինիլն. ապա զհաշտութիւն խօսիլն ընդ մէջ մեծի կայսերուհւոյն եւ այլազգեացն, եւ վանելն զօրաց դոցա զզօրութիւն եպարքոսին եւ տիրելն մեծի բանակին նոցա, եւ զգերութիւնսն, եւ զայլն։ Ապա առ ի խնդրոյ եւրոպացւոցն՝ զհաճիլն հզօր թագուհւոյն ի հաշտութիւն, եւ առ այն զպայմանս առաջադրելն, եւ զպայծառափայլն յղելն առ ի խօսիլ վասն հաստատութեան այնոցիկ, եւ այլն։ Զորս իմացեալ մեր՝ թէպէտ եւ ընդ նեղսակրութիւնս մերայնոցն ցաւիմք, բայց վասն յամենայնի յաղթող երևելոյն դոցա ի պարծանս սրբոյ խաչին Քրիստոսի ուրախ եղաք, եւ Տայցեմք միշտ ի հզօրեղութեան պահել զգաւազան կայսերութեան դոցա ընդդէմ հակառակորդացն։ Թէպէտ սիրելիդ չէիր գրեալ զկատարմանէ ինչ հաշտութեան, սակայն աստ հանդիպեցաք ի հագարացւոց երկրէն՝ թէ մերայինք, ե. թէ այլազգիք՝ ասեն թէ՝ հաշտութիւն եղև. բայց զդաշանցն հաւաստի ինչ ոչ խօսիլն, և մեք

յերկբայս ՃԱմք մինչև ի քէն դրով իմաց-
ցուք զկատարեալ սպասաւորութիւն իրացն։
Նաև զպայծառափայլէն զբօթալի լուր ինձ
հնչեն բազմիցս. զոր համարիմք թէ հագա-
րացիքն առ նախանձու և ի քաջալերու-
թիւն ազգի իւրեանց իցեն յօրինեալ սաու-
թեամբ։ Ոայց և տարակուսիմք յոյժ. վասն
որոյ դրեմք սիրելւոդք, զի զնորին որ-
պէսն ծանուսցես մեզ ի միամտութիւն։ Ա-
ցէք Աստուած՝ զի սուտ լինիցի հռչակ նեն-
գաւորացն. և անդորրութիւն ընծայեսցի
մտաց մերոց։ Գիտացաք և ղՀանդերձիլդ
գնալ ի նոր Նախիջևան. և անտի ի Լեշշ.
և զսիրելի որդին քո և մեր ղԳրիգոր շնոր-
հունակ վարդապետն ի Նախիջևանու յղել
ի հաշտարխան վասն նուիրակական գործոյն
սրբոյ Աթոռոյս, և առ ղպատրաստի եղեալ
արդիւնսն յանձնել նմա՝ հասուցանել ի
սուրբ Աթոռս։ Բարւոք ես խորհեալ, և
շնորհակալ եմք։ Թէպէտ յայլ և յայլ
հոգս կաս, բայց որպէս և յառաջ դրեալ
եմք, առ այն գործ ևս ղփոյթգ մի պակա-
սեցուսցես. քանզի վասն գառնութեանց յե-
տին ժամանակիս նուազեալ են մուտք սըր-
բոյ Աթոռոյս և ելքն առաւելեալք յոյժ։
ԵՒւսաի՝ սակս խարչելեաց ոչ սակաւ տագ-
նապ դոյ մեզ։ Ուրեմն՝ ըստ հարազատու-
թեանդ ջանալ պարտիս յարգեանց այսե
օգնութիւն հասուցանել մեզ։ Փառնսիոյ
թագաւորութեան շփոթուածք, և փափին իշ-
խանութեան նշկահիլն ևս յայտնի եղևն
մեզ։ Իսկ նոքա թէ առժամանակ մի խոո-
վին, յետոյ խաղաղանալ կարեն, բայց
Հայաստան աշխարհիս և ազգի մերում՝ ԱՆ-
տուծոյ խաղաղութիւն ծագեսցի։ Գրեալ
էիր և ղողորմած կայսերուէնոյ ցաւակցիլն
Ազնիւ Ցովհաննէս աղային առ մահն որդ-
ւոյն, և շնորհելն զընդարձակ դերեզմա-
նատեղի՝ ազգին մերոյ. և հրամայելն նմա
զեկեղեցի շինել, և այլն։ Որով ստացաք
զդիւրութիւն սրտի. զոր և յիշեցաք ի
թղթոջ ազնիւ աղայ Ցովհաննէսին։ Եւ զի
ընդ ազնուհի կենակցին տուեալ էին սրբոյ
Աթոռոյս զԱՃ պաճտելու ոսկիս, առ այն
շնորհակալութիւն գրեցաք ի Թուղթս եր-
կաքանչիւրցն և։ Նաև առ Ջուղայեցի Ծե-
րունի Ցովհաննէս վարդապետն վասն Ծ.
Թուման Հոդեբաժնի և յիշատակացն, և
առ Աննայ Իւանովէն վասն Ծ. Թուման Հո-
դեբաժնի առնն, գրեցաք զթուղթս միամը-
տութեան։ Սչովայու Քփրենց ազաչայ Ցով-
հաննէսի վախճանիլն ևս տրտմութիւն եղև
մեզ, մանաւանդ առ այն՝ զի տակաւին ոչ
էր հասեալ նմա թուղթն մեր, զոր յան-
ցելում ամին գրեալ եմք։ Ապա այժմ որդ-
ւոցն միխիթարութիւն գրեցաք, Ցէր Ստեփա-
նի զորդին յանցեալ Թուոյ մայիսի Ծ.
յղեցաք աստի. որոյ վասն թէպէտ Ծ.
Թուման էիր գրեալ տալ, այլ ԾԱ. Թու-
ման ետուք Ցօհաննջանի տղայոցն, որովհե-
տև միւն ի նոցունց առեալ զտղայն հա-
սցյ ի Թիֆլիզ առ Ցէր Ղազարն. և գար-
ձաւ։ Ոայց այժմ լուաք թէ գեռ ևս աը-
ղային ի Թիֆլիզ է, և չեն ուղարկեալ։ Վաս-
նորոյ քանի աւուրքք յառաջ ընդ Աբրահամ
վարդապետին գրեցաք Ցէր Ղազարին հար-
կիւ, զի շուտով ուղևորեսցէ զտղայն, և
Աբրահամ վարդապետին ևս ասացաք, զի
թերևս ընդ ինքեան տարցէ ի հաշտարխան։
Նոյնպէս և վասն գրքոյն ևս զոր վազ ու-
րեմն եմք յղեալ, գրեցաք Ցէր Ղազարին,
զի թէ գեռ չիցէ յուղարկեալ, փոյթ ընդ
փոյթ յղեսցէ։ Գիտասջիր և զայս. զի քա-
նի ամօք յառաջ Պարոն Եսայուն վասն
ԱՃԾԱ թուման եռդեանին զավզ էաք աու-
եալ, բայց ի դրամոցն ՃԱցեալ դոյր ի
վերայ իւրն. որոյ աղագաւ թամասուկ էր
տուեալ մեզ։ ԵՒւթասուն թուման ևս Վար-
դան վարդապետին տալոյ մնացեալ ի դրա-
մոց նորին, և թամասուկ տուեալ նմա որ
մինչ գնայր ի նուիրակի Ամդայ, զայն թա-
մասուկն ետ մեզ առնուլ զդրամն ի պա-
րոն Եսայէն։ Այժմ որպէս և իցէր՝ ըզ-
հաշիւն տեսաք. ՃԱց Ի. թուման տալոյ,
և վասն այնր թամասուկ ետ։ Ինակ զորպէ-
սութեանց կողմանցս և երկրիս այսպէս ի-
մա. յանցեալն դրեցաք քեզ զդալն Աղայ
Մահմատ խանին ի Թարուէզ. և կոչելն առ
ինքն զեշխօղան երկրացս. յորոց շատքն դնա-
ցին, և մերն և այլք հեռաւորք ըղընծայս
յղեցին, և պատակութիւն ցուցին, բաց ի
Շուշւոյ Իբրահիմ խանէն։ Եւ Աղայ Մահ-
մատ խանն զմեր խանի եղբայրն և զա-
խունան որք գնացեալ էին առ ինքն՝ խո-
լայիւք դարձոյց, և զպարգևս և ոսկեամս
յղեաց սմա. և զայլոց ծրկրաց իշխանաև ևս

պարգևատրեալ գարձոյց, այլ պատանդս էառ ի նոցունց. և յաշնանն գարձ արար ի Թէհրան, ժամագիր լինելով նոցա, ի գարնանս կրկին գալ յայսկոյս։ Իսկ յետ դարձման նորա, Իբրահիմ խանն զկովկասային վիրագն քանեօք հազարօք ածեալ առ ինքն, հանդերձ իւր զօրօքն ի միասին յետ զակարծ յարեան ի վերայ Նախչուանու, աւերեցին զքաղաքն և պաշարեցին զբերդն մինչև ի ԹՋ. աւուրս։ Իշխողն տեղւոյն, Թէպէտ յոյժ նեղեալ, բայց ընդդիմակացեալ՝ ոչ ետ զբերդն, մինչև տեղւոյս և Խոյայ իշխողքն միաբանեալ զօրօք իւրեանց գնացին հասին յօգնութիւն նմա, և յաւուր ածի սրբոյն Յակովբայ Հայրապետին. մատուցեալ ընդ Թշնամեացն ի յատուկ խնամոյն Աստուծոյ վանեցին զզօրութիւն լեզկեացն, կոտորելով ի նոցունց զքանի հարիւրս. այլքն ընդ Իբրահիմ խանի զօրացն խուսեալ դարձան ի Շուշի։ Կատաղի լեզկիքն ձմերեալ անդէն յայնմ երկրի, այժմս յայս լսեմք թէ ժողովին ի մի վայր, յարձակիլ յայս կոյս և յայլուր. յաստպաստակութիւն, և կամ դառնալ ի տեղիս իւրեանց։ Ինչ և իցէ՝ յորչափ և գազանքն այնք յորջացեալ գոն անգէն, այս կողմանցս ապահովութիւն ոչ գոյ, և մեր կասկածն՝ առաւել։ Ամենազօրն Աստուած ցրեսցէ ըզզօրութիւն նոցին և զընդաստակար խորհուրգսն. և անդորրութիւն շնորհեսցէ բազմավշտակիր երկրացս և խղճալի մերայնոցն, և մանաւանգ սրբոյ Աթոռոյս։ Եւ դու սիրելիդ Տասատուն կալով ի սէրդ և ի մաերմութիւնդ, և զորպէսզանգոյց գիրդ անպակաս առնելով, ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի Թուականիս մերում ՌՄԽԱ, և յԱպրիլի 17, ի սուրբ Էջմիածին։

Թուղթ առ. Պրուսայու Առաջնորդ Պօղոս նորընծայ եպիսկոպոսն, ի պատասխանի թղթոյն զոր ի վերադառնալն ի սրբոյ Աթոռոյս և ի ժամանելն ի վիճակն իւր, անտի դրեալ էր, սէր և հաւատարմութիւն յուցանելով։

Թուղթ ի մեծն Պօլիս առ Պատրիարգին վէրին Ճովհաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոց նորա ի Կարնոյ և ի Պօլսոյ գրեցելոց։

Թուղթ առ մեծին Պօլսոյ և շրջակայ թեմիցն նուիրակ Մինաս վարդապետն ի պատասխանի թղթոց ի դեկտեմբերի ԺԷ, ի յունուարի Գ, և ի փետրվարի Ա. գրեցելոց վասն դանաղան իրաց։

Թուղթ օրհնութեան առ Զմիւռնոյ Տիւզընէղճեան, ի շնորհաւորութիւն նորակերտ տպարանին յարքունուստ նորոգ նոմոսիւք շինեցելոյ եւ հաստատեցելոյ։


Ցորմէ ժամանեցաք Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, հանդերձ պատգամաւորական շնորհիւ սրբոյ Տեղւոյս իմման Մինածնի բանին, և հրաշալի զօրութեամբ կենսատիպ խաչի նորին և կողմամբ Գեղարդեանն աքանչելագործի, և արդիւնարար օրհնութեամբ շնորհաբաշխ Աջոյ սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ և համայնից իսկ Աստուածակիր սրբութեանց և նշանագործ նշանացն սրբոց որք ասացանօր, ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ և հաբաւաս ղաւակացդ սրբոյ Աթոռոյս ի Տէրունի վիճակդ մեր ի բարեճոխ մայրաքաղաքդ Զմիւռնի ի հրաշակառոյց հոյակապ նորապերճ Տպարանիդ եղելոց Քրիստոսասիրաց և բարեպաշտից՝ հանճարեղաց և վայելչագործից Գեղարուեստ և ձեռնահմուտ վարպետացդ Տիւլպէնճեանց, և բոլոր գործակցաց ձերոց և ընտից իսկ ձերայնոցն՝ ընտանեաց և ազգայնոց, բարեկամաց և սիրելեաց, խնդալ ի Տէր ի յոյն ընտից մշտազուարթ բերկրութեամբ։

(Շնորհք.)

Եւ ընդ ամենառատ օրհնութեանն Աստուածայնոյ՝ գիտասջիք սիրելիք մեր ի Տէր՝ և լուսածնունդ որդիք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Քանզի ըստ բանի իմաստնոյն Սողոմոնի թէ՝ որպէս ջուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է, նոյնպէս և աւետիք բարեաց յերկրէ հեռաստանէ, այժմ մեզ ապացելոցս և ապագնապելոցս ի դառնաղէտ

գուժից արամականաց ի բաղում ուսանեալ հնչելոց ղձախորգութեանց և զառապանաց մերայնոց, և մեր ևս անպակասելի նեղութիւնբ, և կարօտելոցս մխիթարութեան և սփոփանաց, արդարև՝ խորժելի եղև՝ և քաղցրագոյն յոյժ՝ ուրախարար համբաւն աւետեաց բարեպէս յայտուածոյ ձերդ օգտակար իրաց ի մշանջենաւոր սահմանագրութիւն անվանգ։ Վասն զի գրեալ էին մեզ սիրելի և հոգևոր որդիքդ մեր՝ ղօրացեալքն Քրիստոսիւ՝ ազնուամիտ Տիրացու Պարոն Սահփաննոսն Խաչատուրեան և Բարեջան Խօջայ Յովհաննէս Գովլաթեան, թէ ղիւրգ ի վերնախնամ տեսչութենէն ի ձեռն պատշաճահայց միջնորգաց շարժեցեալ է սիրտ մեծազօր Արքային ի խնամածութիւն առ բազմավշտակիր ապագործագ, որ իւրովք արքունական ազգողագոյն հրովարտակօք հրամայեալ է կառուցանել ի քաղքդ ընդարձակ ապարան, և ձեզ անվհեր համարձակութեամբ գործել ի նմա զարուեստ ձեր. և թէ որպէս ինքեանք պարոն տիրացու Սահփաննոսն և Խօջայ Յովհաննէսն կացուցեալք են լինիլ ի վերայ ապարանին, մինն Տամղաճի, և միւսն կարգագրիչ գործոյն և վերակացու գործատուրացն՝ և թէ ղիւրգ յօդումբ Տեառն գըլխաւորեցեալ է մեծակառոյց և գեղեցկաշէն գործարանգ անկասկած յուսիքէ առուեստագործէք առատ շահեկանութեամբ։ Ա յսոքիւք ախորժալուր համբաւովք բարեյաջողութեան ձերոյ՝ և ընդ ճոխանալ օրհնեցելոյ Մայրաքաղաքիդ այդպիսեաւ հռչակաւոր գործարանաւ, ուրախացաք յոյժ, և գոհացաք զՏեառնէն Տերաց զԱստուածոյ Ամենակալէ՝ որ ըստ իմաստնոյն բանի՝ որպէս ղսահման ջրոյ՝ ունի ի ձեռս իւր զսիրտ թագաւորի, և ընդ որ կոյս կամի հայեցուցանել, գարձուցանէ զնա. ըստ որում և այժմ զսիրտ բարեպաշտ մեծի Արքային քաղքդ րութեամբ հայեցուցեալ է առ ձեզ ի կատարել զբազմամեայ փափագուն ձեր։ Որոյ աղագաւ և խնգրեցաք և խնգրեմք պարգևել նմա կեանք երկարագոյն, և խնամոցն առաւելութիւն առ ազգ հզօրալի։ Եւ զձեզ զսիրելի և հոգևոր որդիսգ մեր՝ զՏպագործ վարպետս և զամենայն գործակիցգ ձեր՝ հանգերձ նորակերտ ապարանաւդ և որք աշխատեցան ի սկիզբն և ի կատարումն շինման դորին օրհնեցաք օրհնութեամբ բազմաւ։ Վասնորոյ և զայս սիրոյ և օրհնութեան նամակ գրեցաք առ ձեզ ի շնորհաւորութիւն նորապերճ գործարանիդ ձերոյ և ի յուրախակցութիւն ձեզ։ Ապաքէն ամենապատրաստագործութեան ձերոյ, ի շնորհաւոր արուեստագործութեան ձերոյ, շնորհաւոր արասցէ ձեզ, և պահեսցէ հաստատուն և անխափան յամայր ամս ժամանակաց ի վայելս ձեր և յետագային ձերոց։ Եւ զի դմա համագումարեալ չքնազարուեստ վարպետագ համային գործակցօք հանդերձ օրհնեսցէ և զօրացուսցէ, փրկեսցէ յամենայն վտանգից, և ունիցի յարաժամ ի խնամս իւր, պահելով միշտ ի բարեկարգութեան։ Ճաշակեսցէ զբանս և զգործս ձեր առ ի բարին, շահեկանս և աճեցուն առնելով զարդիւնս վաստակոց ձերոց. և տալով ձեզ խաղաղութեամբ վայելել զնոյնս։ Ամենաւանդ՝ գրիչքան գործավարդ օրհնեցելոյ Տպարանիդ զՁամղաճի Պարոն Սահփաննոսն և զՔէՖէթխուեայ Խօջայ Յովհաննէս պահպանեսցէ հանրանական Աջովն իւրով յամենայն ձախորդութեանց, յայղձալս ի գործս իւրեանց՝ յառաջադէմս և քաղցունս յաչս ամենայն մեծամեծաց և իշխողաց, և զարդարուն խոհեմութեամբ գործարանիդ և գործուներիցդ։ Արդ պատուիրեմք սիրելեացդ մերոց, զի ի բարեպաշտութեան ձերում առ Աստուած՝ անխափանելի կացչիք, միանգամայն և զիոյթ գործոց բարեաց ունիցիք. և ըստ սրբազան Առաքելոյն պատուիրանի՝ զնոյն խորհելով՝ զնոյն սէր յանձին ունելով համաշունչք իցէք և միախորհուրդք, և միաբանութիւն և զՀաղորդութիւն Հոգւոյն՝ յօդիւ խաղաղութեան ի ձեզ հաստատուն պահեսջիք. առ ի բարեպէս կենցաղավարիլ, և Աստուածահաճոյք գտանիլ, և միշտ կացուցանել ըզմեզ խնդամիտս համբաւուք բարի ընթացից ձերոց։ Օրք և ի յորդիական սիրոյ և հարազատութենէ ձերմէ որ առ սուրբ Աթոռս և առմեզ, աննուաղ ճաչալով լիջիք յանձնեցեալք ի խնամս Տեառն և շնորհք Քրիստոսասաչէ Գահիս սրբոյ՝ եղիցի ի վերայ ձեր ամենեցուն՝ և նորակազմ գործարանիդ ձերոյ. Ամէն։ Գրեցաւ ի Թուականիս մերում

ԹՄԽԱ. և ի յունիսի ԻԲ. ի յերկնահանգեստ Աթոռս սուրբ Էջմիածին։



Թուղթ ի Զմիւռին առ Պարոն Ստեփաննոս Յաչատուրեան ի պատասխանի Թղթոյն զրեցելոյ ընդ Գալուստ վարդապետին, շնորհատուրութիւն նորակերտ տպարանին Տիւլպանտճոց՝ որում եւ ինքն արքունի հրովարտակաւ տաւղածի էր կարգեցեալ. եւ շնորհակալութիւն վասն քահանայացն ի նոր գործարանէն յղեցելոյ. եւ վասն նուիրակ եւ Առաջնորդ Սահակ վարդապետին յանձնարարութիւն համառօտ։

Երկրորդ՝ Թուղթ քո գրեցեալ յանցեալոյ ամի Հոկտեմբերի 23՝ ի ձեռն գործակից Գալուստ շնորհուն վարդապետին էհաս առ մեզ յայսմ տարւոջ յամսեանն մարտի, զոր ընթերցեալ իմացաք զԱստուածպարգեւ յայղուութիւն ձեր՝ որ ընդ խօսայ Ճովհաննէսին Թովմաեան փոյթ կալեալ առ անդորրութիւն և օգուտ մերոյն խղճալի Տիւլպէնթճոցն տեղւոյդ գտեալ էք զինամս ի բարեփիլատակ մեծազօր Արքային ի ձեռն զարհանէ էմինի Իւսուֆ աղային և ընկալեալ զայղուագոյն հրովարտակ՝ կատուցեալ էք յայգր գըն դարձակ և հրաշակերտ տպարան անկասկած համարձակութեամբ արուեստագործել ի դմա օրհնեալ էնտաֆիդդ առատ շահեկանութեամբ. միանգամայն և գու բարեջան սիրելիդ մեր՝ հրամանագրութեամբ թագաւորական նոմոսացն կարգեցեալ ես յորդուց յորդի ի ժառանգութիւն՝ դրոշմահար պդմ տպարանի, և Տերամբ օրհնեալ Խօջայ Ճովհաննէսն ևս՝ կարգագրիչ և վերակացու գործարանիդ՝ քէթխուտայական պատուով։ Ուստի՝ ուրախացաք մեծաւ ուրախութեամբ ի Տէր, նախ՝ զի լցաւ բաղմամժամանակեայ փափագումն մերային խղճալի Տիւլպէնթճոց տեղւոյդ, որք զերծեալք ի յոգնատեսակ նեղութեանց և ի վնասուց՝ այսուհետև դիւրութեամբ են վարելոց զգործս իւրեանց, և ընդունելոց զառատ արգիւնս վաստակոց։ Երկրորդ զի Տէրունի վիճակդ մեր ճոխացաւ այդպիսի հռչակաւոր գործարանաւ։ Եւ երրորդ՝ զի հարազատ սիրելիդ մեր պերճացայք վայելչագեպ պատուով իշխանաւորութեան։ Առ այսոսիկ ուրեմն գոհանամք ղՏնորհանամ ողորմութենէ Ամենակալին՝ որ քաղցրացոյց զսիրտ հզօր ինքնակալին՝ կատարել զնդիրն ձեր։ Եւ վասն նորին իսկ բարեյիշատակ մեծի Արքային խնգրեմք զերկարութիւն կենաց և զյաջողուածս բարեաց, որոյ խնամքն առաւել տեսանի առ ազգ մեր խղճալի։ Եւ զձեզ զիսկապէս սիրելիդ մեր օրհնեմք օրհնութեամբ Աստուածայնով, զի ամենայն իրք ձեր յաջողեսցին առ ի բարին, և գնասջիք ի զօրութենէ ի զօրութիւն, զի հանապազ ղուարճալի համրաւով քո՝ ընծայեսցի բերկրութիւն և միխթարութիւն բազմահոգ սրտի մերոյ։ Ցըղեալ էիր յանուն մեր ի նորակերտ տպարանէ պատի իրր նախախնամ պատուոյ զվեց թաշկինակս, զոր և մեք սիրով ընկալեալ շնորհակալ եղաք զսիրելոյդ։ Զոր օրհնեսցէ շէն և պայծառ պահեսցէ. յամենայն վտանգից փրկեսցէ. և ի խնամս իւր ունիցի միշտ հանդերձ քոյոյնովքդ ամենեքեամբք. Ընծորհաւոր արասցէ զգործարանդ և զպատիւդ նորընկալեալ, ի յամայր ամս տալով քեզ վայելել զդոյն, և զարդարեալ ամենայն բարեշնորհութեամբք, յառաջադէմ և պերճաշուք պահեսցէ։ Արդ՝ ահա գրեցաք զկոնդակ օրհնութեան և շնորհաւորութեան ի վերայ ամենայն վարպետաց գործարանիդ և գործակցաց նոցին, և զայս Թուղթ ևս առ հոգևոր և սիրելի որդիդ մեր գրելով ի յուրախակցութիւն, պատուիրեմք, զի ի բարեպաշտութեանդ առ Աստուած՝ հաստատուն կացցես՝ և ի ջերմեռանդ սիրոյդ և ի հաւատարմութենէդ որ առ սուրբ Աթոռս և առ մեզ, մի նուազիցիս. և զձգնմարտութիւն նոցին որ առ նորոգ նուիրակ և Առաջնորդն ձեր՝ Իսահակ վարդապետան երեւեցուսցես, և երբեմն հարազատական գրով միխթարել զմեզ մի կասիցիս։ Որովք միշտ ընկալցիս զօրհնութիւն յԱստուծոյ և ի մէնջ, և վայելեսցես ընշնորհս Քրիստոսասէջ սրբոյ տեղւոյս։ Ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի Թուականիս մերում ԹՄԽԱ, և յունիսի ԻԲ. ի բարձրագահ Աթոռս սուրբ Էջմիածին։

Ողջոյն և օրհնութիւն տամ հարազատ եղբարցդ քոց և սիրելեաց իմոց Քրիստոսիս զօրացելոց և բարեպաշտից Պարոն Ծով Հանէսին և մահտեսի Ոսկանին, և ծաղկափթիթ որդւոյն քո՝ բարեշառաւիղ Խաչատուրին, և ընտիւք իսկ քոյսնոցն, յանձնելով զամենեսեանս ի խնամս և ի պահպանութիւն ամենազօր Աջոյն Տեառն Աստուծոյ։

Թուղթ ի Զմիւռնի առ Պարոն Առարելն Սաւալանեան ի պատասխանի թղթոյն, և ի շնորհակալութիւն վասն յղեալ ընծային, նաև վասն կտակաւ աւանդեալ ՌՒ. դուստոյ վեցամեայ շահուն տուեցելոյ։

Թուղթ ի Զմիւռնի առ Աստուածատուր աղայն Աբրոյեան, ի պատասխանի թղթոյ նորա յանցելոյ ամի դեկտեմբերի 5 գրեցելոյ։

Թուղթ առ Զմիւռնոյ նուիրակ առաջնորդ Իսահակ վարդապետն, ի պատասխանի Բ. թղթոց նորա ի յունուարի ԻԹ. և ի մարտի Զ. գրեցելոց. հանդերձ այլովք ինչ բանիւք և որպիսութեամբք կողմանցս։

Թուղթ ի Կարին առ հանգուցեալ Ղալայճիօղլեան տէր Մկրտչի ծուխ ժողովուրդն. ի պատասխանի քազմակնիք թղթոյն նոցա որք խնդրեալ էին վասն որդւոյ նորին Մնացականին՝ ձեռնադրել ի քահանայ, առ ի հովուել զինքեանս։

Ծորմէ սիրով և օրհնութեամբ ծանուցումն լիցի սիրելի և հոգեւոր որդւոցդ մերոց՝ և հարազատ զաւակացդ սրբոյ Ա. Թոռոյս՝ ի Կարին եղելոց հանդուցեալ Տէր Մկրտչի ծուխ ժողովրդոցդ։ Զի բազմակնիք թուղթ ձեր էհաս առ մեզ, և իմացաք զոր գրեալ էիք թէ յետ վախճանման քահանային ձերոյ Տէր Մկրտչին՝ առաջնորդ Տօնական վարդապետն զծնեալսդ նորին ըստ ծիսի տեղւոյդ տուեալ է որդւոյն նորա Մնացականին, որ ի դէպ ժամու ձեռնադրեացի քահանայ և հովուեսցէ ղձեղ, և մինչև ցայժմ այլ քահանայ փոխանակ նորա հովուէ ղձեզ. և այժմ իբր յարբունս հասակի հասեալ նորա, խնդրեք քահանայանալ նմա առ ի հովուել զձեզ։ Եւ զի յանցեալ ամին համայն քահանայք և իշխանք քաղաքիդ վասն բազմանալոյն քահանայից տեղւոյդ և յաճախելոյն կարդուեթեանց բողոք բարձեալ առ մեզ՝ խնդրեալ էին՝ արգելուլ յայդր ի ԹԵ. ամս զձեռնադրութիւն քահանայից, որոյ աղաչեալ և մեք կանոն դրեցաք այնպէս լինիլ, այժմ յիշելով ձեր զայն՝ դրեալ էիք թէ՝ սորա քահանայութեան պայմանն երկու ամօք յառաջ քան զկանոնադրութիւն է եղեալ հաճութեամբ քահանայից և իշխանաց, և սա քահանայի. որդի գոլով փոխանակ հօրն պարտի քահանայանալ և վասն այն ի յաշխարհական աբհեստից և դործոց խափանեցեալ է սպասելով քահանայութեան, և ոչ է իբրև զայլս աւելի, և այլն։ Իսկ զի արգելեալ է պահ ձեռնադրութիւն, վասնորոյ յղեալ էիք գալ այսր, իբր զի աստանօր յուրեք ձեռնադրիլ հրամայիցեմք։ Արդ՝ Մնացականն ոչ եկն աստ, այլ ի Բայազիտ մնացեալ էր, անտի զմահսարն ձեր յղեալ առ մեզ. և ի մահսարի ձերում ոչ գոյր վկայութիւն ի քահանայից և իշխանաց քաղաքիդ։ Իսկ կանոնն մեր այսպէս է թէ՝ մինչև ի ԹԵ առի ոչ ևս այլ ոք քահանայ ձեռնադրեսցի ի քաղաքիդ. զի յաւելորդութենէն յառաջանայ բաղում անկարդութիւն. և զդուռնն ժողովրդեան և անպատուութիւն քահանայական կարդին։ Ուրեմն որք պղիրքն են, մի ձկտեսցին անձնընծայօրէն լինիլ ի քահանայս. և ժողովուրդքն ևս մի լիցին պատճառ անհարկ ձեռնադրութեան աւելորդ քահանայից և այլն։ Եւ զայս կանոն ըստ պատշաճաւոր խնդրոյ քահանայից և իշխանացն եմք դրեալ, որպէս և դիտէք։ Իսկ վասն Մնացականին որ դրեք թէ՝ Ի. ամօք յառաջ քան զկանոնադրութիւն է պայմանեցեալ քահանայ լինիլ սորա ի տեղի հօրն՝ և քահանայք և իշխանքն հաճեցեալ են ընդ այն. և այլն. ապաքէն զայդոսիկ ընդ քահանայից և իշխանացն տեղ-

ւայդ խօսեալքիք, և զայս թուղթ մեր ևս ցուցջիք նոցա. որք եթէ գիտեն թէ հարկաւոր և ըստ կարգի է քահանայ լինիլ Մնացականին, և մեզք կամ վնաս ինչ ոչ ծնանիցի, միաբանութեամբ ասասցեն նուի. րակին սրբոյ Աթոռոյս Նիկողայոս եպիսկոպոսին, առ. ի ձեռնադրել։ Բայց թէ ան. կարգ իցէ և անհաճոյ նոցա, ինասցէ մինչև ի լրանալ կանոնեալ ժամանակին. և վէ. քիլ քահանայն որ հովուէ ղծուխագ հօրն նորին, ի քահանայական արդեանցն զչափ ւոր բաժին առցէ, և զպլլոն տացէ որգւոյ նորա Մնացականին, ի յապրուստ իւր և իւրայնոցն։ Այսքան առ այս բաւ է։ Գրե ցաւ ի ՌՄԽԱ թուոջս և ի յունի։ ի Ի, ի սուրբ Աթոռս էջմիածին։

Թուղթ ի Գրուսայ առ տեղոյն Առաջ. նորդ Գօլոս վարդապետն ի պատասխանի երկրորդ թղթոյն, յիշումն առաջին ես թղթոյն. և շնորհակալութիւն վասն ըն ծայիցն. և վասն առ Թօխաթցի մահտե. սի Նիկողայոսն հասանելի աւանդին հարկ, ղի հասուսցէ։

Թուղթ առ Զմիւռնայու նուիրակ և առաջ. նորդ Իսահակ վարդապետն ի պատասխա. նի Դ. թղթոց նորա ի վետրվար ԻԷ. յապ. րիլի է. և ի Ի. և ի մայիսի է. ղրեցելոց վասն զանազան իրաց և իրակութեանցն։

Թուղթ առ Գէօրկին Միրզայ ասլքայոր. ղին Վրաց, վասն Հաղպատայ անուա. նեալ առաջնորդ Դաւիթ վարդապետին։

Ցորմէ ճշմարիտ սիրով և կարօտիւ, ղիրկէաւանգ սուրբ ողջունիւ և հոգևոր օրհնութեամբ, և պահպանողական շնորհիւ Միածնաէջ սրբոյ Ցեղուոյ՝ ծանուցանեմ լի. ցի գերազնիւ սիրելագդ իմոյ՝ և հաւատա. րիմ բարեկամիդ սրբոյ Գահիդ Աստուա. ծութեան, Քրիստոսասէր և նուիրմբ զօրա. ցեալ պերճապատիւ և շքեղաշուք Գիօրգին Միրզայ Արքայորգւոյդ։ Զի յայտ իսկ է վսեմական մտացդ յորմէհետէ հաստատե. ցեալ կամք ընդ յարգութեանդ ի վերայ հիման ճշմարիտ սիրոյ, ըստ կարի մերում և յայտնելոյ ժամանակին՝ և ըստ պահան. ճողութեան իրին ջանացեալ եմք ղրանս աղնուութեանդ արդիւնացուցանել. ի յար. գի ունելով ղպատիւդ։ Առ այս և եր. բեմն որ յաղագս Հաղպատու միաբան կոչե. ցեալ Գաւիթ վարդապետին գրեցեր մեզ, եպիսկոպոս ձեռնադրել զնա, թէպէտ և պատասխանի արարաք թէ՝ ոչ ունի ղվիճակ, և ղվանք յորոյ վերայ ձեռնագրիցեմք, սա. կայն մինչ ստիպաւ խնդրեցեր, և մեք վասն քաղցր խաթեր քո՝ ձեռնադրեցաք, ճեռոյ ևս մինչ ժողովուրդքն և բարեպաշտութիւն ձեր խնդրեցիք Առաջնորդ առնել Հաղպա. տայ, և առաջնորդ ևս արարաք։ Իսկ թէ գրով և թէ բերանով, պատուիրեցաք Հա. մեստութեամբ և խաղաղութեամբ վարիլ, և զվանաց շինութիւն ջանալ, և այլն։ Այլ նա ոչինչ արար ուղղութիւն որ Աստուծոյ և մարդկան հաճելի լինիցէր, և՝ի յառնել լէզկեացն, ղվանքն դատարկեալ եկն՝ի քա. ղաք, և ոչ ևս դարձաւ։ Բաղում ամայա. ցեալք շինացան վերստին, իսկ նա՝ի վա. նինցն ղայլոց շինեալ փայտակերան ևս քակեալ երեր յայդր յորջ հաստատել ին. քեան և ղվանքն ամայի թողուլ։ Եւ վասն անկարգութեանց նորա թէ քանի՞ թուղթ ամբաստանութեան, և որքան դանգատք են հասեալ առ մեզ թէ՝ի մերոնէից, և թէ՝ի ձերայնոց ևս, աստէն անդէպ է երկարել։ Այլ յերկայնամիտ լինիլն մեր առաւելու զան. զգամութիւն, մինչ զի լկտի աբեղայի իւր ուսեալ ի նմանէ, ի Գօրի յատենի եկեղեցւոյն զսուրբ Աթոռս և զմեզ՝ի բերան է առեալ ա. նարդանօք, և զժողովուրդն նախատեալ նզովիւք, և զայլ աղճատանս առարկեալ, և զաղմուկ շփոթի արկեալ՝ի մէջ նոցա։ Որոց բողոքն մինչ էհաս առ մեզ, հարկ եղաւ զի յառաջնորդ կոչեցելոյն պահանջեցուք զը. հաշիւս արդեանցն առեցելոց յանուն սրբոյ վանացն. որ մինչև ցայժմ ոչ շինութիւն է արարեալ անդ ոչ նստեալ. և ոչ՝ի պէտս նորա զիր ինչ խարջեալ, և զառաւելու. թիւն արդեանց խնդրէ։ Ուստի՝ ահա թուղթ գրեցաք՝ի յօրհնեալ քաղաքդ առ Հաղ. պատու թեմ քահանայս և ժողովուրդն, և խնդրեցաք զքանիս՝ի նոցանէ գալ՝ի սուրբ Աթոռս, և զԳաւիթ սևագլուխն և զլիրբ աբեղայն իւր ընկեցաք յեկեղեցւոյ լուծա. նելով՝ի կարգաց իւրեանց. զի և նորա

գայցեն ասա, և ընդ Հախպատու թեմացն ի միասին պահանջեսցուք ի Դաւիթ սեազլխէն ղհաշիւս արդեանց վանիցն, և հոգս իմ արասցուք վասն շինուածեան սրբոյ Ցանն այնմիկ։ Վասնորոյ և զայս թուղթ գրեցաք առ պատուականութիւն ձեր, ղի ուղղապէս գիտացեալ ղիրս ղայսոսիկ, ջատագով լինիցիք օգտաւոր կամացդուածեան մերում, որ է վասն շինուածեան վանիցն այնմիկ, և ի խաղաղութիւն ժողովրդեանն։ Եւ եթէ անզգամ սևագլուխքն այնոքիկ անկանիցին ի դրունս ձեր, առ ի յամառիլ ի լրբութիւն իւրեանց, մի՛ ընգունեցիք, և մի՛ աշխատ լինիցիք գրել մեզ բանս ի խնգրոյ անիծապարտիցն այնոցիկ. և զպատիւ սիրոյ մերոյ մի փոխանակիցէք ընդ նոսա։ Այլ որպէս իրաւունքն պահանջէ, ե. բարեկամութեան ձերում որ առ մեզ՝ վայելէ՛, այնպէս արասջիք, ի բաց մերժելով ի ձէնջ ղխոտեալսն մեր՝ զանարժանն ընդունելութեան։ Եւ յանխարդախ սէրդ աննուազ ճաշակով ո՛ղջ լեր ի Տէր։ Դրեցաւ յամի Փրկչին 1792. և ի յուլիսի. ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածնին։

Թուղթ առ Հերակլ արքայն վրաց, վասն Հախպատու առաջնորդ Դաւիթ հվարդապետին եւ հիք աղեղային նորա եւ այլն։

Ցորմէ սիրով մեծաւ և կարօտիւ սրբականաւ և սրբոյ իմման տեղւոյս Քրիստոսի հոգեպարար շնորհիւն մատուսցի ողջոյն սիրելւոյդ իմոյ հոգւոյս ցանկալւոյ՝ և իսկապէս բարեկամիդ և բարերարիդ սրբոյ Գահին մերոյ, Աստուածասէր և նովիմբ զօրացեալ՝ իմաստնապերճ և հռչակահամբաւ բազմադրուատ մեծի Արքայիդ Հերակլայ։ Որում և գիտութիւն լիկի։ Զի թէպէտ ի սուզ ժամանակի՝ քանիցս եղև գլխացաւութիւն հասուցանել պատուականութեանդ, զոր յիրաւի ոչ սակաւ ամօթ վաստկանիմք, նակայն՝ հարկն պահանջէ, և առաստութիւն սիրոյդ և խնամոցդ վստահացուցանէ, առ որ ներողամիտ լինիլդ խնդրի։ Եւ այժմ զոր ունիմք աղդ առնել մեծութեանդ՝ այսչափ։ Քանզի Դաւիթ սևագլուխն զոր յառաջագոյն եպիսկոպոս ձեռնագրեցաք, և յետոյ ըստ հրամանի ձերոյ և ըստ խնդրոյ ժողովրդեանն առաջնորդ կարգեցաք սրբոյ վանիցն Հախպատու, և մեր պատուէրն նմա այս էր, զոր և հարկ պաշտամանն իսկ պահանջէր, զի պարկեշտութեամբ և խոհեմութեամբ և խաղաղութեամբ վարիցի, և մանաւանդ զսուրբ վանքն զայն շէն և պայծառ պահեսցէ ի փառս Աստուծոյ և ի պատիւ Տէրութեան ձերոյ և ի պարծանս խղճալի մերայնոց, և ի հրճուանս մեր։ Այլ նա ոչ ինչ կամեցաւ բարեպէս վարիլ. և մինչ լէզկեաց յարուցաւն եղև, զվանքն դատարկեալ եկն յայդր, և ոչ ևս հոգաց դառնալ։ Բազում ամայացեալք շինացան խնամօք Տեառն և Տիրաբար հոգացողութեամբ Աստուածազօր Արքայիդ Հերակլայ։ Բայց նա ոչ միայն ոչ փոյթ արար դառնալ ի սուրբ վանսն և շինացուցանել, այլ զյառաջմէ յայլոց շինեցուցեալ կերաուածան ևս քակեալ եբեր յայդր մշանջենապէս ընակութիւն հաստատել ինքեան։ Որոյ անվայելուչ վարեցմանց աղագաւ քանիցս արտունչ է հասեալ առ մեզ, ոչ միայն ի մերայնոց, այլ ի ձերայնոց ոմանց ևս։ Եւ այժմ անցեալ նորա քան զչափ իւր՝ յանգգնեալ է սրբոյ Աթոռոյս և մեզ հակառակիլ մինչ զի չնչին աթեզային իւր ի Գօրի համարձակութեամբ այնքան բարբանջեալ է, որ գեզականքն շփոթեալ են մեծաւ գայթակղութեամբ, և զբողոքն առ մեզ հասեալ։ Եւ զի թարմատար սևագլուխքն այնոքիկ չունին ինչ օգտութիւն առ սուրբ վանքն, և զանձինս իւրեանց միայն արածեն, և խռովութիւն ևս յարուցանեն, վանորոյ ահա գրեցաք առ Հախպատու թեմականն թէ՝ կարգազեղծ Դաւիթն և չնչին աթեզային իւր լուծեալք են ի կարգաց իւրեանց. և խնգրեցաք զի քան՛ի քահանայք և իշխանք գտցեն ի սուրբ Աթոռս որ նոքօք հանդերձ ի յառաջնորդ կոչեցեալ Դաւիթն առցուք զհաշիւն տյսքան ամաց արաւադրութեանց սրբոց վանացն՝ որ չէ՛ ինչ խարջեալ ի պէտս այն սուրբ Ցանն. և ապա զկատարեալ իմն հոգս տեսցուք վասն շինութեան և բարեկարգութեան նորին. ըստ որում և Տէրութիւն ձեր բանս ինչ հրամայեալ էր հաւատարիմ ծառային ձերում և սիրելւոյն մերում

Ա յտամուր բէկին՝ ասել մեզ, և նա զեկոյց։ Ուստի խնդրեմք ՚ի բարեպաշտ և վեհասիրտ օրհնեալ Արքայիդ Հերակլայ դի Թարց ընդունելոյ զայլ և այլ սուտիապատիր պատճառանս ախտաւորացն այնոցիկ՝ հրամայեցես կատարուիլ լինիլ բանսեմօրէն գրեցելոց մերոց՝ որ է առ յօգուտ և շինուածիւն հաշակաւոր հրաշակառոյց սրբոյ վանացն Հախպատու. որոյ աղագաւ և յար գուխեանգ մեծ վարձք լիցի յԱստուծոյ, և պատիւ փառապերճ անուան ձերոյ. ողջ լեր ՚ի Տէր և պահպանեցեալ զօրուխեամբ ամենայնիւ սրբոյ խաչի նորին ՚ի պայծառութիւն եկեղեցւոյ և ՚ի լուրկրանս յոգնավիշտ սրտի մերոյ. Ամէն։ Գրեցաւ յամի Փրկչին 1792 և ՚ի յուլիսի. ՚ի Ք արձրագահ Աթոռս ամենայն Հայոց ՚ի սուրբ Էջմիածին։

Թուղթ առ Հնդստանու նուիրակ Եփրեմ վարդապետն ի պատասխանի ի ՌՄՂ թուոյ նոյեմբերի ԻԸ. դրեալ թղթոյն. որոյ երրորդ օրինակն ես էհաս, որ էր դրեալ ի նոյն թուոյ դեկտեմբերի Ի.

Թուղթ առ Ջուղայու առաջնորդ Ցակոբ վարդապետն որ այժմ վախուցեալ էր ի Բասրայ. մխիթարութիւն և սփոփանք։

Թուղթ ի մեծն Պօլիս Տրջանենց մահասի Կարապետ Աղայն վասն իրաց լինչ, մանաւանդ վասն Երջանկու սուրբ Կարապետի վանայ դրամոյն որ անդ առ ումն էր։

Թուղթ առ Հաշտարխանու և կողմանցն Առաջնորդ և նուիրակ Յովսէփ վարդապետն, յանձնարարութիւն վասն սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ վարդապետին։

Թուղթ առ մեծին Պօլսոյ և շրջակայիցն նուիրակ Մինաս վարդապետն ի պատասխանի թղթոյն նորա ի մայիսի ԻԹ. դրեցելոյ և ի յունիսի ԻԱ. յղեցելոյ։

Թուղթ ի յերկիրն ռուսաց առ մարայնոցն նուիրակ և Առաջնորդ Յովսէփ վարդապետն

խորհրդոյ հաշտութեան, և պայծառափայլին հանդուցելոյ ի կենդանութեան հրամանի հանելն վասն մեայնոցն ի զանազան քաղաքացն առեցելոց՝ ժողովեալ տանիլ յայնկոյս Տուրուպերան. առ ի նոր քաղաք շինել անդէն և յետոյ՝ մեծի կայսերուհւոյն առաքելն զպայծառ գլուխ Աղէքսանդր Անդրեիչ Երզբօրօկին վասն ի գլուխ տանելոյ զհաշտութիւն. և նորա յարգմամբ ընգունիլն զքեզ, և զօգաւոր խնդիրս քո ի գիր հանել առաքելն առ ողորմած կայսերուհին. և թէ նոր շինելի քաղաքն յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին է անուանելոց. և այլն։ Զայսոսիկ ամենայն իմացեալ ընդ ներկայական նեղսակրութիւն մերայնոցն տրտմեալ ցաւեցաք. բայց յուսով ապագայ անդորրութեան և բարօրութեան, որպէս նշանակեալ էիր, ուրախ լինիմք. տացէ Աստուած բան ակնկալութեան քո և մեր յայտնի եղիլ խաչելեացն։ Եւ զոր խնդրեալ էիր առ յիշեալ պայծառ գրաւքն թուղթ գրել, բարւոք է, բայց ըստ ցուցանելոյգ թերևս ցարդ ուղևորեալ իցէք դէպ ի Պետրպօլք և տակաւին չեն վճարեցեալ առաջագրութիւնքն. բարեաւ մինչ կատարեցին, յայն ժամ պատկանագոյն լինի շնորհակալին և յանձնարարութիւնն։ Ի կողմանէ մարտին գրեալ էիր թէ՝ ղբաղում պահանջմունս առնեն, զորս թէ հագարացիքն յանձն չառնուցուն, պարզուին նորոգիլոց է։ Բայց յայս կողմունք՝ հոչակի թէ՝ հաշտութիւն եղեալ է, և զներքին իրաց ոչ ոք է տեղեակ ասել ինչ, ճշմամբ դարձեալ ի քոյգ ազգեցմանէ իմանալ զստոյգն։ Գրեալ ես և այս որպէս թէ՝ հարկաւոր էր մեզ առ նոր կայսրն Նամսայի՝ երկրորդ Լէօպօլն շնորհակալութիւն գրել՝ և խնդիր վասն Սչովայու. ո՞չ ապաքէն յառաջնում առ Ցովսէփ կայսրն գրեցաք խնդիր և աղերս, ըստ որում և առ դեսպանն, և առ աղնիւ աղայ Ցովհաննէսն և առ քեզ ևս գրեցաք վասն ա՛նմ բանի. բայց ոչ ինչ արդիւնացաւ փոյթն մեր և պարզ բան ինչ ևս ոչ իմացաք։ Այժմ ևս ունիմք զնոյն յօժարութիւն գրելոյ. սակայն և նոցին հաշտութիւն զգոցունց կախեալ գոլով՝ ոչ է կատարեալ- մինչ կատարիցի. տեսցուք թէ որպէս յաջողիցի առնել։ Այլ առ ՓՓրենց աղնիւ աղաչայ Ցովհաննէսն և որդիսն հասարակապէս՝ և առ աւագ որդի Նիկօլն յատկապէս ևս յառաջագոյն թուղթս եմք գրեալ. և զկնի ևս որ ըմհն հանգուցեալ աղաչայ Ցովհաննէսին գրեալ էիր, առ որդիսն մխիթարութիւն գրեցաք։ Իսկ կոնդակ առ հասարակութիւնն յետոյ լինելոց է. ղի յարդեանս ըստ ցուցանելոյդ չունի այնքան ինչ հարկաւորութիւն. մինչ դու հասատարիմ սիրելիդ մեր մելիք գոլով ինքնին իսկ շահեցող և մխիթարիչ ես նոցա։ Գիտացաք և զառաքելդ զԳրիգոր խոհեմամիտ վարդապետ որգեակն քո և մեր ի հաշտարան և ի կողմունս վասն գործոյ նուիրակութեան. և զյանձնելդ նմա զարդիւնս ինչ, ըստ այլ արդեանց ուղևորել առ սուրբ Աթոռս, որ նա ինքն ևս ասա առ մերն զԹուղթ գրեալ՝ ծանուցեալ էր զգալն իւր ուշ, և զորպէսութեանց ինչ գործոյն. և խոստացեալ էր ըստ պատուիրմանդ հասատարմաւ հղել մեզ զայս արդիւնս. որոյ վասն շնորհակալ եմք. և երբ հասցէ, միամտութեամբ գրելոց սիրելոյդ։ Զարձեալ՝ միւս հատուածովն Թղթոյ ծանուցեալ էիր զՍչովայու աղաչայ Գրիգորի գալն առ քեզ և զինչ խօսիլն. վասն Թղթագրութեան որ զմինչ Թօհմաթ է արարեալ. գեռ ևս ըզԹուղթն մեր չէին ընկալեալ. այլ յուսամ Թէ յետոյ ընկալեալ իցեն և արտագիւր եղեալ։ Բայց վասն առ կայսրն բան գրելոյ ի վերդ պատասխանի եղև։ Եւ յաղագս ոմանց տեղեաց որ ասացեալ է իբրև յառաջն լինիլ Թեմ սուրբ Օգսէնտի վանացն. յիրաւի և մեք յառաջմէ դիտեմք Թէ գայն խնդիր ունին նոքա։ Այլ հայեցուբ կատարածի իրացն, յայնժամ ըստ բերման ժամանակին հոգս իմ տեսցուբ։ Իսկ առ վարեցեալ ժողովուրդն խղճալիս յայսմ միջոցի Թուղթ չգրելոյ աղագաւ որ գրես, յառաջագոյն գրեցեր մինչ յիւրաքանչիւր տեղիս էին գեռ ևս. մեք նկատելով Թէ տակաւին ոչ երևի նշան հաստատուն կերպի կացութեան նոցա, գրեցաք քեզ Թէ՝ տեսցուբ զիարդ լինիցի վախճանաբար։ Նարեկնի Թէպէտ և գրես Թէ ժողովեալք են ի Գուբաստար, ե այլն, սակայն դեռ անկատար են իրքն քաղաքաշինութեան և այլ լինելութեանց։ Բարեաւ մինչ կատարիցին

պնոքիկ, և ծանուսցես մեզ զորպիսութիւն հաստատուն կացութեան նոցա. յայնժամ ՚ի հարկ է դրեսցուք։ Այլ և վասն աղայ Մահմատխանի յառաջշարժութեան որ ցուակեցեալ էիր մեզ, և զորպէսն ծանուցանել խնդրեալ. առաջին թղթովն մերով գրեալ եմք քեզ զգալն նորա մինչև ՚ի Թարվէզ և վերադառնալն, և զայլ անցն կողմանցս։ Այժմ լսեմք ՚ի բազմաց թէ՝ նա զՇիրազ ևս առեալ է, և զրաղում հազար առնէս վարեալ անաի ՚ի Թէհրան, և զայլ զարհուրելի արարողութիւնս. այլ դեռ յայս կողս շարժելոյ համբաւ չկայ. Աստուած ՚ի բուրին եղերեսցէ զամենայն ինչ. այլ առնելով խղճալի ազգի մերոյ և սրբոյ Աթոռոյս։ Կովկասային Վիրադն ևս որ եկեալ էր յօգնութիւն Արցախու իշխողին, ոչ ինչ դաեալ ըստ ախորժակին՝ դարձ արար ՚ի աեղի իւր յամեանն մայիսի. յարդեան, արաքուստ թշնամեաց ապահով է երկիրս և մեք, թէ և ՚ի ներքնոցն ոչ լինի անդորրութիւն. դոհութիւն Ամենախնամին Աստուծոյ, յապայն ևս նմա յանձն եղիցուք։ Գիտասջիր և զայս զի սրբոյ Երուսաղէմի պարիարդ Ցովակիմ վարդապետն քանի ամաք յառաջ զՆարբեցի Կարապետ եպիսկոպոսն յղեալ էր ՚ի մեծն Պօլիս գալ յերկիրդ յայդ ՚ի նուիրակութիւն, և մեզ գրեալ էր վասն նորա բաշխօրէն և կոնդակ՝ և ՚ի վերայ քո յանձնարարական Թուղթ յղել։ Իսկ մեք կարապետ վարդապետի անուամբ յղեցաք զԹուղթսն։ Այլ զի պարզումն մեծ սկսաւ, ոչ ևս կաբելով նմա դալ յայդկոյս, վերադարձեալ էր ՚ի Սպահմ։ Այժմ զայլ ոճ կարապետ վարդապետ և ոչ եպիսկոպոս յղեալ ՚ի Պօլիս, նոր ևս խնդրեալ էր ՚ի մեզ զայն յիշեալ Թուղթսն կրկին դրել և յղել։ Իսկ մեք զկոնդակ ոչ գրեցաք. զառաջինն բաւական համարելով, այլ միայն զբաշխօրէն, և ՚ի վերայ քո զը յանձնարարական Թուղթ դրեալ յղեցաք յամառոյս ծՋ. և դրեցաք նոցին վէքիլ աիրացու Ներգսին. զգուշացուցանել զԿարապետ վարդապետն համեստութեամբ և սիրով վարիլ առ քեզ, և խազազութեամբ կալ առ ժողովուրդսն. (թէև Ցովակիմ պարիարդն ՚ի Թղթի իւրում զբազում գովութիւնս էր սաորոգեալ զնմանէ։) Ապա և

քեզ սիրեցելոյդ գրեմ, զի մինչ եկեսցէ նա յայդր և առ քեզ, ըստ գրուածոցն ՚ի յանձնարարական Թղթին մերում սիրով ընկալցիս, և որպէս առաջինն եկելոցն անտի յայդր՝ պատիւ ցուցանել սացես ՚ի սէր սրբոց Ցնօրինական տեղեացն Քրիստոսի Ցերուսաղէմ մերոյ. զի եթէ բան և աստութիւն ինչ վիճական իցէ ի նոսա առ մեզ, հատցի, և յայնմ մասին ևս բարեհամբաւիցիս։ Այսչափ առ այս շատ լիցի վսեմախոհ մատցդ, Այլև յառաջագոյն որ ի Քովշանու զգանձարանագրամն սրբոյն Թովմայի Առաքելոյ վանացն և զքանիս ևս զնոսատումս և զՀոգեաժինս յանուն նորա ի յոմանց առեալ էիր, և զքանիս խոսատումս ևս յանուն Երնջակու սրբոյ Կարապետի վանացն ընկալեալ էիր, և զսիահին առ մեզ յղեալ, որոց չամ էր ծԴ Թուման, առ. ԹՃԴն. զի հասուցանիցեմք նոյն վանորէիցն. ահա հասուցեալ առ առաջնորդն նոցին առ. Թովմաս և Կարապետ վարդապետան, ի նոցունց շշնորհակալութեան Թուղթս առեալ առ տուողսն դրոցն. ընդգրոյս եղաք, որք են Թուով ինն. զորս հասուցես առ նոսա ի միամտութիւն։ Եւ ի սիրոյ և ի հարազատութենէ աննուազ ձեալով և զորպէսայայ գիրդ չպակասեցուցանելով՝ ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ յամի Փրկչին 1792 և ի սեպտեմբերի Ե. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ ի սուրբն Սպղիմ առ լուսարար Պետրոս վարդապետն, ի պատասխանի Թղթոյն, և ի շնորհակալութիւն վասն յղեալ ժամուցին. և սլատմութիւն փօլի ցային ի կողմանէ արդեանց նուիրակին իւրեանց Ցարութիւն վարդապետին։

Թուղթ առ Հնրակ Արքայն վրաց, ի պատասխանի Թղթոյն ընդ Հանսլատայ առաջնորդ Դաւիթ պետին եւ Մղիւան ըէկ Թէիմուրազ էշիկաղասուն գրնցնլոյ՝ վասն նևրնլոյ Դաւթին եւ արծակնլոյ։

Ցորմէ մեծաւ սիրով և կարօտիւ մատուսցի Աստուածապարգև օրհնութիւն, և ողջոյն խազաղական՝ հանդերձ հոգեաած

շնորհիւ սրբոյ իմոյն աեղւոյս Քրիստոսի և հաւատոյն սքանչելագործ սրբուհեանցն որք աստ կան, բարձրապատիւ ճշմարտօրէն սիրելւոյ իմոյ՝ Հոգւոյս ցանկալւոյ՝ և հաւատառոյն բարեկամի և խնամածուի սրբոյ Աթոռոյս Քրիստուսասէր և խաչապատակ, իմաստնախոհ և վսեմափառ Մեծի Արքային Հերակլեայ: Որում և գիտութիւն լինի: Զի Թուղթ Մեծութեանդ ձեռամբ Դիւանրէկ Էշիկաղլաւշի Թէիմուրազին էհաս առ մեզ, զար սիրով ընկալեալ իմացաք զգրեալդ վասն Հախպաստայ առաջնորդ Դաւիթ վարգապետին, ներվել յանցանացն և արձակել զնա ի հոգևոր կապանացն, և այլն: Առ որ թէպէտ յոյժ էր սրտնեղութիւն մեր և վիրաւորութիւն, սակայն յաղագս միջնորդական բանի գերյարգութեանդ, զիջաք ի բարկութենէ: Այլ ի մէջ գրուածոցդ յիշատակեցեալ էր վասն իրաց եղեւեցն, որպէս թէ՝ մեք սրատմեալ ձեմբ եղեալ սակս ոչ արձակմանն նոցին: Բայց զինչ փոյթ է մեզ այնպիսի անարգ հնթանոսաց աղագաւ հոգալ: Միայն թէ որովհետև մեծամեծքն օսմանցւոց գրէին մեզ և սիրպէին, մեք ևս ի շահել զնոքաւր նոցա. թուղթս գրէաք մեծութեանդ և այն ոչ թէ զսյլ իմն կամս ցուցանելով ընդդէմ ձեզ. այլ զկամս ձեր հարցանելով, զի ըստ այնմ՝ պատասխանատարի ձեմբ նոցա, որպէս և արարաք: Եւ յայսնոր անցեալ աւուրքս Զօպան աղային կինն իսկ ինքնին եկեալ էր հանգերձ թղթովք և մարգկամբք Վանայ և Բայազետոյ փաշայիցն, որք մեծաւ հարկիւ խնգրէին վերստին գրել ձեզ վասն արձակման եղեւեցն: Բայց մեք զի աեղեկացեալ էաք կամաց աերութեանդ, ոչ յանձնառաք կրկին գրել ինչ. այլ պատասխանի արարեալ՝ ունայն յետ դարձուցաք: Ապա հաւատաեալ ծանիջիք թէ առայն մեք ընաւ ոչ ունիմք սրտաճայրութիւն ի ձենջ. այլ որպէս կամիք վասն նոցա և մեք զսյն բարի գիտեմք: Իսկ վասն Դաւիթ վարգապետին այսպէս իմացջիք, որ սորա յանցանք և գայթակղութիւնքն յայդր բազումք են, և մեր կրեալ զլեռացուութիւն ի կողմանէ գորա ոչ սակաւ: Ուրեմն՝ պարտիւր ընդ երկար կշռամբիլ և խրատիլ առ ի զգաստանալ: Վասնորոյ կամեցաք ձեալ նմա աստ յերկուս կամ յերիս ամիսս խոստանալով ստուգութեամբ, ի պատմոց աղաս պահել. զի երբեմն երբեմն յանգիմանելով խրատեցեալ բանիւ, որ թերևս վարժեցեալ ուղղիցէր զբարւն ի բարին. և ապա գառնայցէր. այլ ոչ եղև. ինալ նորա աստ. զորոյ զիարգն ինքեանք պատմեցին: Ապա կոչեցեալ մեր զնա յաստան ի ժողով բազմութեան եպիսկոպոսաց. ասացաք յանգիման զպարտաւորութիւնսն իւր: Ցետ այնորիկ վասն՝ քաղցրագոյն խաթեր և պատուոյ անուան մեծութեանդ ոչ պատժեցաք զնա և ոչ խայտառակեցաք. այլ Աղորմեացի ասացեալ արձակեցաք ի բանադրանացն, և շնորհեցաք դարձեալ զվեղար և զփիլոն. և հաստատեցաք յառաջնորդութիւն Բայց եթէ այնպէս զանց արարեալ զնովաւ գարձուցանէաք, թերևս իբրև զառաջինն, կամ՝ առաւել ևս քան զառաջինն ընդ խոտորնակ շաւիղս իւր ընթանայցէր, և զչինութենէ սրբոյ վանին անփոյթ եղեալ ի քաղաքդ և ի գիւղորայսն անվայելչապար ձեալով ընդն գայթակղութեան և զգլեացաւութեանն նորոգեցէր: Այլ մեք զգա եպիսկոպոս և առաջնորդ եմք արարեալ որ միաբանիւքն ի վանքն նստցի և շինութիւն առնիցէ. որոյ և արդեանց բնիսինն ևս ցանկանալ չունիմք: Ուրեմն՝ առ ի տալնմա դնզ ապաշխարութեան և խոյթ զգաստութեան՝ լըռեցուցաք յեպիսկոպոսութենէն՝ պայմանաւ ժամանակի երկուց ամաց, զի զգուշացեալ յանմնայն ցոփգնացից, զգայթակղեալսն հաստատեցէ, և առ ամենեսեան վիճակեալսն իւր զխոհական և զխաղաղ վարս ստանայցէ, և մանաւանդ միաբանիւքն երթեալ ի սուրբ վանքն նստցի: Եւ Աստուածծասէր օրհնեալ Արքայդ որ յօդողութեամբ Ցեառն զիշնամին աէրութենդ կորագլուխ արարեալ, զբազումս յամայացելոց երկրացդ շինացուցեր, Հաղպատայ ցրուեցեալ գիւղականացն և հրամայեցեալ ժողովիլ ի նոյն գիւղն իւրեանց, ի հաստատութիւն շինութեան սրբոյ վանացն. և նա ճոխացուցեալ զսուրբ Ցունն զայն և բարեկարգեալ զմիաբանսն, և միթարեալ զժողովուրդսն, և մինչ զայսոսիկ գովելի վարս յանձին ցուցեալ բարեհամբաւեցի, ի լրման երկուց ամացն գայեք ի սուրբ Աթոռս ընդունիլ գար-

ձեալ զպատիւ եպիսկոպոսութեան իւրոյ։ Ցայնժամ եթէ մեծք ևս ըստ Արարչին կամաց յայս կեանս չէցեմք, յաջորդն մեր ըստ վկայելոյ եպիսկոպոսացն հատու եզե-լոց, անարգել կատարելոց է զրան պայման-նի մերոյ։ Զայս յիրաւի ապահովութիւն համարելով մեծի Արքայիդ Հերակլեայ և մեզ պսպէս արարաք, և ահա արձակման և առաջնորդական կոնդակաւ ուղևորեցաք ըզ-Հոգևոր որդին մեր Առաջնորդ Դաւիթ վար գապետն ընդ Թէիմուրազ բէկին ի միասին ըստ հրամանի Մեծութեանդ։ Եւ գրեցաք զայսոսիկ ճշմարտութեամբ, առ ի գիտել և քաղցրութեամբ հաճել, և զսէրդ և ըզ-խնամդ անպակաս անել առ սուրբ Աթոռս և առ մեզ։ Ո՛ղջ լեր ի Տէր և պայծառա-պերճ արքայական փառօքդ յերկարաձիգ ժա-մանակս ի միխիթարութիւն բազմահոգ սրտի մերոյ. Ամէն։ Գրեցաւ յամի փրկչին 1792 և ի հոկտեմբերի... ի սուրբ Աթոռս էջ-միածին։

Կոնդակ Առաջնորդութեան ի վերայ Մշու սուրբ Յովհաննէսի վանացն և վի-ճակի թեմիցն ի պատասխանի մանսա-րաց նոցա վան նորոգ Առաջնորդ Ս-տուածատուր վարդապետին, և վան ե-պիսկոպոսութեան խոստումն թէ յառա-ջիկայ ամի աշնանն կամ ի միւս ամի գարնանն գայցէ, ձեռնագրեսցուք։

Կոնդակ ի վերայ Իգմիրու, շնորհա-կալութիւն վան ընդ Գալուստ վարդա-պետ գործավճար նուիրակ և առաջնոր-դին եկեալ հասեալ արդեանցն, և մխի-թարութիւն վան ժանտամահին յայսմ ամի եղելոց անդր։

Թուղթ ի Զմիւռնիա, առ նուիրակ եւ Առաջնորդ Իսահակ վարդապետն ի պատասխանի յօգոստոսի Զ. եւ ի ԻԱ. եւ ի սեպտեմբերի Ը. գրեալ Թղթոցն՝ վան զանազան քանից։

Ծորմէ սիրով և օգնութեամբ բազմաւ, Քրիստոսաձիր ողջունիւ, և սրբոյս Իչման-տեղւոյս Նորին ղօրացուցիչ շնորհիւն գի-տասջիր սիրելի և հոգևոր որդի մեր՝ և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակ Աստուածաբան վարդապետ։ Զի յամենս քանիս յազագս ոչ ժամանելոյն առ մեզ Թղթոյդ՝ ի տարակուսանս մտանելով մեր, ապա ի հոկտեմբերի վերջին աւուրան ըն-կալաք ղերիս Թուղթն քո զգրեցեալն յօգոստոսի Զ. և ի ԻԱ. և ի սեպտեմբերի Ի։ Մինչ էաք յերևան՝ հրաւիրեցեալ ի խանէն վան հարսանեաց քեռն նշանեցելոյ ի կնութիւն նախչուանու խանին, և ըն-թերցեալ ծանեաք զբարձումն ժանտախտին յօրհնեալ երկրէդ և զանվտանգ ղերծանիլն ձեր, և ապահով եղաք ի սաստկութենէ տարակուսանացն զոր կրէաք. և գոհացաք զԱստուծոյ. և կամեցաք թէպէտ շուտով դարձուցանել զպատասխանիս, սակայն զքո-նիս աւուրս յերևան անցուցեալ զբաղ-նօք, և ի դառնալն մեր ևս խանն եկեալ աստ, և այլ բազում հոգօք պաշարեցեալ՝ հազիւ այժմ ձեռնհաս գտաք հոգալ զինգրեալ Թուղթն Գալուստ վարդապետին և քո. և այսու պատասխանի առնել գրեցելոյդ քոյ։ Երդ յառաջին Թզթոյդ գրեալ էիր զհասա-նին առ քեզ Թզթոյն մերոյ ի յունիսի Ծ. գրեցելոյ, հանգերձ այլ Թզթովքն որք առ այլս, որոց աղագաւ միամտեցաք։ Եւ վան մնացեալ Թզթոցն ևս որ խնգրեալ էիր, ահա յղեցաք. զորս հասուսցես առ որս հասանելիք են։ Ծանուցեալ էիր և զրարե-պէս վարիլն ձեր ընդ Պատրիարգ վարգա-պետին և զերթ և եկն Թզթոց անպակաս առնելն, և այլն. յոյժ բարւոք է, քեզ պատ-ուովութիւն, և մեզ ևս հանգիստ մտաց։ Իսկ հին Ղափու օղլանւոյն ազագաւ որ բան գրեալ ես նմա, զինչ հոգաց, և Թալպիան այն որպէս եզև, ծանուսցե՛ս մեզ։ Եւ ընդ երկուց փաշալու արանցն ևս որ մարդասի-րութեամբ էք վարեցեալ, այն ևս լաւ է։ Սակս փառակեցի չԱհակին և սալմասաեցի չէիք Մանուէլին որ գրեալ էիր թէ աստ ոչ երևեցան, զփառակեցւոյնլուսաք թէ ի Թօխաթ իցէ հասեալ, բայց ոչ ստուգեցաք, և ոչ Մանուէլն ևս անյայտ, այլ ե՛րբ և թէ գայցէ ի վիճակդ, մի ընկալցիս, և հնա-րեսցես զԹուղթն մեր եթէ իցեն առ նա, առնուլ ի ձեռացն։ Մարտիրոսին որ եճ.

ղուրուշ էիր տուեալ, և ղտէր Գրիգորի ԲՃԼԲ. ղուրուշ և ծԼ փարայ առնլիսն հատուցեալ. և ի նոցունց ղավզս առեալ, և յղեալ առ մեղ, ընկալաք և շնորհակալ եմք ԱՀա եօթն.հարիւր երեսուն և երկու ղուրուշի և ծԵ փարայի ղավզ գրեալ, յղեցաք ընդ թղթոյս ի միամտութիւն քեզ: Զիք վարգան աբեղայի և կեռակատուց անի. ծելոյ արարան և աբժանագէպ պատահմունան ե զքո ղգուշալի գրուածն առ Պատրիարգ վարգապետան և առ Կեսարու Առաջնորգն նոցա՝ ղորս ծանուցեալ էիր, գիտացաք. ղայնպիսիսն Աստուած զգաստացուցցէ կամ րարձցէ ի միջոյ. և ղոր ինչ արարեալ ես, բարւոք ես արարեալ: Իմացաք և ըզհաճելի լինիլն ի գիրիտ յղեալ քահանայիգն Այսքան առ առաջին թուղթգ: Իսկ յերկրորդ թղթոջդ նախապէս գրեալ էիր ղԱլէքսանի առ քեզ գրուածն յղելդ առ մեղ. զոր ընթերցաք և ծանեաք զորպէսն նոցա. և գու ես ղոր ինչ գրեալ էիր ղԳովհաննէս աբեղայէն, և ղորս ի խորհրդոց ազնիւ սիրելոյն մերոյ Աստուածատուր ազային ի նուաճել զնա, գիտացաք: Բայց և մեք ընդ երկար մտայոյզ եղեալ զայս ընտրեցաք առնել՝ զոր և արարաք: Քանզի ահա թուղթ մի առ աբեղայն, թուղթ մի առ Բալատաճն, և թուղթ մի ևս առ Ալէքսանն գրեալ և կնիքքն ոչ փակեալ յղեցաք ի ձեռս քո. զորս տեսցես. և ապա փակեցես. և թէ հարկաւոր համարիցիս, գու ևս թուղթս գլուսցես թէ՝ առաջնոց թըղթոցն իմոց պատասխանի չարարիք. այժմ Հոգևոր Տէրն է գրեալ, զորս և ահա յղեցի, եթէ բարեպաշտաբար անապցէք հրամանաց նորա և մեզ ևս պատասխանի գրիցէք, բարի է. և թէ ոչ, գուք գիտասջիք: Այսպէս լիցի գրելդ յոյժ համառօտ. բայց թէ պատշաճ չտեսցես, ղու մի գրիցես. այլ զմերսն յղեսցես ի ձեռս պարոն Բարղամինն: Եւ առանց տագնապի և սրտնեղութեան գիտեսցես պատասխանեացն. եթէ գրիցեն, բարի է. և թէ ոչ, յայնժամ ևս տեսցուք. որ ինչ լինիցի, ինքեանք պարտականք և մեք անպարտ: Երկրորդ գրեալ էիր ըզԳաղիացւոց անկարգութիւնն և յապօրինաւորութիւնս կոչծանիլն. ղորս և յառաջ ի հիւսիսոյ իմացեալ էաք: Ցիրաւի՝ յետին ժամանակ է՝ յորում քակտին ի հաւատոց, հայեցեալք յայսս մոլորութեան և ի վարդապետութիւնս գիւտց. յորոց աղատ պահեսցէ Քրիստոս Աստուած զսակաւոր ազգս մեր: Այլ թէ զինչ լսէք և իմանայք զկատարածէ իրաց նոցին, դարձեալ գրեսցես մեղ: Երրորդ ծանուցեալ էիր զՄանիսայու և Աղհիսարու հրկիզութիւնն, և մխիթարական կոնդակս էիր խնգրեալ վասն նոցա. ըստ որս և զմին ի վերայ Զմբռնիոյ յազգս ժանտամահին: Եւ ցուցեալ էիր զոմանս հոգևոր խրատս ևս գրել ի նոսա: Եւ մեք որպէս խնգիրգ էր, այնպէս գրեալ ահա յղեցաք: Չորրորգ՝ վասն Աստուածատուր ազնիւ աղայի խնգրուին որ ի կողմանէ Մեղրեցի Պապղուկնց Հանգուցեալ Ցովհաննիսի ժառանգութեան, գրեալ էիր ի Ցովակիմ պեսէն Ցաթևու պատասխանի առնուլ և գրել: Առ որ ծանի՛ր. զի յանցելումն ամին մինչ օրհնեալ Աստուածատուր աղայի գիրն էհաս ստ մեզ վասն այնմ խնդրոյ, մեք ևս անյապաղ ի նոյեմբերի ծԱ. Թուղթ գրեցաք Ցովակիմ վարգապետին, զի հարց ու փորձ արարեալ, պատասխանի գրեսցէ մեզ: Մնացեալ մինչ ի յունիս ամին և տեսեալ թէ՝ գիր ոչ առաք, թուղթ մի ևս յայնժամ գրեցաք: Այնմ ևս պատասխանի չեղև: Ապա մինչ Թուղթգ էհաս առ մեղ, ի նոյեմբերի ծԱ. երրորդ անգամ գրեցաք նմա մեղադրութեամբ հանդերձ. և հարկ արարաք՝ ոչ ևս յետացուցանելով պատասխանի գրել մեզ. և սպասեմք այնմ. երբ և գիր առցուք ի նմանէ վասն այնմ, գրելոց եմք սիրելոյն մերոյ ազնիւ Աղային և քեզ: Այսու ճըշմարիտ գրութեամբ ծանիցես թէ՝ մեղագրութիւն բանական Ցովակիմ վարգապետին է, և ոչ մեզ: Եւ զայն ի Մեղրի հասանելի գիրն Գրիգորին ևս ղոր յիշեալ էիր, ընդ մեր թղթոյն յղեցաք ի ձեռս Ցովակիմ վարդապետին, հասուցանել առ աէրն: Այսքան ևս առ երկրորդ թուղթգ: Իսկ յերրորդ թղթոջդ ծանուցեալ էիր զի յուլիսի ծՒ. գրեալ թղթոյն մերոյ հասանիլն առքեզ, որոյ վասն ևս միամտեցաք: Գրեալ էիր ևս թէ Թօխաթու վէքիլ մահտեսի Ցաքութիւնին ըստ խնդրոյն ԳՃ. զուռուշի իրս յղեցի, և գրեցի զգինն ԳՃ. զուռուշ.


հասուցանել պարոն Հայրապետին յայգր։ Ըստ նա գեռ ևս բան չէ գրեալ. երբ հասուսցէ և գրիցի, գղվազն յղելոց եմք։ Այլ զվաղագն փոլիցայ արարեալն քո Ղաֆի ղուռուշն ի կողմունէ Յովհաննէս վարգապետին հասուցեալ էր ի Կարին պարոն Հայրապետին և մեզ ազդ արարեալ, և մեք զնորին զավզն ի յօգոստոսի Ե. գրեալ յղեցաք առ նա, հասուցանել Յովհաննէս վարդապետին յանցեալն գիր առաք ի մահտեսի Յարութիւնէն որ գրեալ էր թէ զավզն էհաս ինձ. և յղելոց եմ առ Յովհաննէս վարդապետն։ Որոյ սակս և գուժիմ լիցիս։ Եւ վասն Յովհաննէս վարգապետի նորագէս քեզ հասուցեալ էմ. ղուռուշին որ հարցեալ էիր առ ով հասուցանել ի Թօխաթ, մինչ մահտեսի Յարութիւն պնդէս յամր է. առ այն ասեմք թէ՝ թէպէտև համր է, սակայն ղի գործակալ է գտանեցեալ, որպէս զի մի խրտնիցի, զայգ 700 ղուռուշն ևս նմա հասուցես, հասուցանել պարոն Հայրապետին և մինչ գրիցին նոքա մեզ, յայնժամ յղելոց եմք ղզավզն։ Իսկ վասն ապագայ փոլիցայից զորս ի Թօխաթ հասուցանելոց էցես, որպէս ցուցեալ էիր, թէ պարոն Հայրապետի օրթահ թումանն, և թէ Իփակեան պարոն Յօհաննն անկասկածելիք երևին, և թէ այլ հաւատարիմ ոք իցէ, նոցա հասուսցես. զգուշանալն ոչ երբէք թողլով ի ձեռաց։ Ծանեաք և զպատճառսըն անագանելոյդ յելանել ի ձեմսն, որպէս գրեալ էիր։ Եւ սակս Գալուստ վարգապետի բերեալ արգեանցն ևս որ խըզգրեալ էիր, առ հասարակութիւն շնորհակալութիւն լինիլ, ահա յերիս կոնդակսն ընդ միխթարութեանն շնորհակալութիւն ևս գրեցաք։ Եւ Իզմիրու կոնդակն իրրու ի վերայ թեմին ևս է. ուրեմն՝ եթէ հարկաւոր համարիցիս, ի թեմսն ևս ընթերնուլ տացես զնոյն բաց ի Մանիսայու և յԱղհիսարու, առ որս որիշ որիշ կոնդակք գոն։ Ծանուցեալ էիր և զՊալաթազատէ պարոն Յարութիւնին Ռճծ ղուռուշ տալն ի կողմանէ Հանգուցեալ եզբօրն Հոգեբարժին։ Վասնորոյ ահա կրկին ևս Թուղթ գրեցաք առ նա։ Եւ դի վերոյիշեալ մեղրեցւոց բանին աղագաւ Աստուածատուր ա-

ղային ի խնդրոյ նորին եղբօրն էր գրեալ մեզ, վասնորոյ այժմ ի Թղթոյն նորին զայնմանէ ևս յիշեցաք Թէ՝ յորմէհետէ այն խնդիր եղև ի մէնջ, երից գրեալ եմք Յովակիմ վարդապետին, և այլոց։ Գրեալ էիր ևս Թէ՝ ունիմ և այլոց ոմանց առնուլ զառւրս. որոց աղագաւ յետոյ խնդրելոց եմ զԹուղթս. զայն ևս երբ խնդրիցես, գրելոց և յղելոց եմք։ Այսքան ևս առ երրորդ Թուղթդ։ Այսուհետև գրեմք զորպիսութեանց երկրիս և սրբոյ Աթոռոյս. որ ոգորմութեամբն Աստուծոյ Հանգստութիւն էր երկրիս և կողմանցս յայսմ ամիսայն Իայաղիտ վրգովեալ կայր և ոչ սակաւ նեղութիւն և վնաս եղև մերայնոցն, ի պատճառս Թօփրախղայու բէկի գլուխ ամբառնալոյն ընդդէմ մովպետին. բայց յետոյ խոստմամբ ի ձեռն բերեալ եղև։ Եւ սուրբ Աթոռս ի պայծառութեան իւրում կայ. և մեք հարկաւոր շինութեանց հոգ տանելով զխախտեալ ամարանոցն որ ի վերայ ձմռան սեղանատանն կայր, ամենայն զգուշութեամբ վեր առեալ, զսեղանատան խախտեալ սեղիւն և զլուսամուտսն հանդերձ արտաքին երեսք որմոյն նորոգեցաք, փարատեալ զմթութիւն ի միջոյն. և ի վերայ նորա զքանի վերնայարկս շինել եւտուք երեսքն դէպ ի Ղաղարապատն հաւասար հանդիպակաց շինուածոցն։ Եւ զամարան սեղանատան վերնայարկսն ևս կամարակապ ծածկել եւտուք. և զնիւթս պատրաստեցաք զայլ հարկաւոր շինելիսն ևս շինել, եթէ յաջողեսցէ Ցէր։ Իսկ աղայ Մահմատ խանն զՇիրազ էառ. և ի Թեհրան դարձաւ և այժմ ասեն ոմանք Թէ վերստին ԼուԹվալի խանն զՇիրազ յետս առեալ իցէ. բայց ոչ հաւաստի։ Այլ Իբրահիմ խանն ևս ընծայ յղեալ Աղայ Մահմատ խանին՝ իբր Թէ ի հեռուստ հնազանդութիւն եցոյց. և Խոյու խանն կրկին գընաց առ նա, և Սարդար անուամբ վերադարձաւ. և համբաւի Թէ՝ յայս կողմն շարժելոյ կամս ունի Աղայ Մահմատ խանն. որու զնախչուանու Ջաֆարղուլի խանի սրգին ռաղամաւ իւրով յղեալ է ի Յօրգըվար, տիրել այնմ նահանգի. վասնորոյ Քեալպալին և մերն մտայոյզ եղեալ քրմէնէն. և չգիտեմք Թէ զիարդ է լինելոց

վախճանն. զոր Աստուած ի բարին եղերեսցէ։ Դաձեալ գիտասջիր և դայս. զի ի ծախս սրբոյ Աթոռոյս հարկաւորապէս քանի տեսակ չուխայք, և խառայք, և սաթըզու թէլլի և թէլսիզ աթլաս են պիտոյ, մանաւանդ վասն այլասեռից տալոյ։ Որոց կը տարիցդ զօրինակեն, այսինքն՝ ղմօստուոսյն ահա ի թղթի եդեալ և ղիւրաքանչիւրոց որքանն ևս գրեալ, յղեցաք ընդ գրոյս. զորս քաջ հոգունակութեամբ ի ձեռն հաւատարիմ մարդկան առեալ յղեսցես։ Եւ զձշմարիտ սերդ և զմտերմութիւնդ հանդերձ որպէսզածանոյց թղթովդ անպակաս առնելով՝ ողջ լեր ի Տէր և յանձնեցեալ ի պահպանութիւն նորին. դրեցաւ ի ՌՄԽԱ թուոջս և ի դեկտ. ԻԳ ի լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածին։

Սիրով մեծաւ և օրհնութեամբ Աստուածայնով, և հոգեղուարճ շնորհիւ սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի՝ ողջոյն և օրհնութիւն տամ դերաղնիւ սիրելւոյն մերոյ հաւատարիմ և օգտաջան որդւոյն սրբոյ Աթոռոյս՝ բարեպաշտօն ազնուատոհմ և պերճապատիւ Աստուածատուր Աղային և Տերամբ օրհնեցեալ շքեղազարդ Որդւոցն։ Այժմ չգոյր հարկաւորութիւն ինչ յատուկ դիր գրելոյ, այլ նայիմք Ծովակիմ վարդապետի պատասխանւոյն, մինչ ընկալցուք, յայնժամ հանդերձ նովաւ դրելոց եմք։ Լիցի ամենայն իւրայնովքն ողջ ի Տէր և յանձնեցեալ ի խնամս նորին։

Ըաւարտման գրուածոյս՝ զայս ևս դրեմք սիրելւոյդ. զի կարնեցի Տէր Մարտիրոսն որ առ Գալուստ վարդապետիւն եմուտ ի կարգս քահանայից եկեղեցւոյ քաղքիդ, յորոյ վերայ ւս թէ որքան խառնուածութիւն եղև, Թերևս դիտես. վասնորոյ ազնիւն մեր Աստուածատուր աղայն յայնժամ դրեր թէ՝ որպէս սահմանն է նորա. մուտ քահանայից, զարդիւնս ինչ ընծայելոց է սուրբ Աթոռոյդ։ Քանզի սովորութիւն է որ յարտաքուստ եկեալ քահանայ ոք մինչ մտանէ ի կարգ քահանայից եկեղեցւոյ քաղքիդ, կետիկ Աբեղասի անուամբ տուրս ինչ ասէ սրբոյ Աթոռոյս. որպէս Տէր Եւետիս քահանայն որ այժմ աւագերեց է, ի մեր ժամանակին վիճակաւորեցաւ եկեղեցւոյդ, և թէ ղինչ ետ, յինքենէ հարց։ Այլ Գալուստ վարդապետն ի յիշեալ եկամուտ աէր Մարտիրոսէն ոչինչ է առեալ՝ կամ վասն խոժուեցմանն, և կամ թէ յայլ ինչ միտս։ Վասնորոյ գրեմ սիրելի որդւոդդ, զի յիշեսցես համառօտիւ ազնուագոյն սիրելւոյն մերում Աստուածատուր Աղային. և ասասցես աէր Մարտիրոսին՝ որ նախ տեղեկացի զտէր Ներսիքէն, և ապա ըստ կարողութեան յժարութեամբ տացէ զտալին իւր. և զորպէսն մեզ դրեսցես։ Այլ և՝ նոյն աէր Մարտիրոսի հայր հանդուցեալ աէր Սարդիսն ի կենդանութեան 70 ղուռուշ դրամ փոխ է առեալ ի սրբոյ Աթոռոյս միաբան Կարրեցի վարժապետ Ստեփաննոս վարդապետէն. և յետ մահուան տէր Սարգսին որդին նորա և եղբայրն այդ աէր Մարտիրոսին՝ Ծովհաննէս եկեալ է ի սուրբ Աթոռս յաւուրս Հոգելոյս Հայրապետին. և ի պահանջել Ստեփաննոս վարդապետին ըղպարտն ի նմանէ, նա ղհին սանատն փոխեալ է, և նոր սանատ տուեալ. որ յետ մահուան հանգուցեալ Ստեփաննոս վարդապետին ինացեալ էր՝ առ մեզ, որոյ դրամն սրբոյ Աթոռոյս պարտի հասանիլ։ Ահա զնոյն սանատն յղեցաք առ քեզ, յորում և գրեալ է Ծովհաննէսն թէ՝ եթէ ես չկարիցեմ հատուցանել, այս իմ հայրենի պարտքս է, մեր յետաձգեցքն տալացու լինին։ Ուրեմն պարտիս ցուցանել աէր Մարտիրոսին և զ70 ղուռուշ հայրենի պարտն պահանջել, զոր մինչ հանդերձ վերոգրեալ տալեօքն հատուսցէ, զօրհնութեան թուղթ ևս գրեսցաք առ ինքն, որ առաւել ևս հասատութիւն լիցի մտացն։



Թուղթ ի Թիֆլիզ ի վերայ Սահակաշէն եկեղեցւոյ ժողովրդեանն վասն աւագ երիցութեան Տէր Դաւթին և տեղի Տէր Խաչատուրին որ ծանր ցաւով ընդ երկար ժամանակս անկեալ կայր ի մահիճս։

Թուղթ առ Պօլսոյ և շրջակայիցն նուիրակ Մինաս վարդապետն ի պատասխանի Թղթոյն ղրեցեալոյ ի Թէքիրտաղու ի ՌՄԽԱ Թուոջն և ի հոկտեմբերի ԻԵ.





ԹՈՒՂԹ

Թուղթ առ նոյն Սարգիս վարդապետն ի պատասխանի յուլիսի ի ԺԹ գրեալ թղթոյն, մխիթարութիւն վասն եղբարցն, եւ միամտութիւն վասն ի հնդիւս անաքելի թղթոյն նոցա թէ յղելոց եմք։

Ծագոստոսի ամսոյ սկզբանն գրեցաք առ քեզ զպատասխանի առաջնոյ թղթոյն քոյ։ Եւ ի գրոյ և ի լրոյ իմացեալ էաք թէ զԳրիգոր անուն ոմն չարաբարոյ և անարժան՝ ձեռնադրեալ ես ծայրագոյն վարգապետ և առաջնորդ կարգեալ Շամշատինու մնացորդ ժողովրդեանն, առ այն և բանս գրեցաք քեզ։ Իսկ յետոյ ընկալաք ղյուլիսի ի ԺԹ. գրեալ Թուղթգ, հանդերձ թղթովքն Տօլվաթլու խանին, և պևր Ճապատիս Մէլիք Մէժլումին և ի թղթոյ քո գիտացեալ զմարտն մերայնոցդ ընդ Թշնամեացն և զպարտիլն, որոյ ազագաւ յոյժ տրտմեալ ցաւեցաք։ Եւ զերկուց խըղճալի եղբարցդ զմիոյ անկանիլն ի պատերազմին, և զմիւսոյ ըմբռնիլն թէպէտ մեզ չէիր գրեալ, այլ առ այլս գրուածովդ իմացեալ, ընդ այն և ս կսկծեցաք։ Ո՞հ անտերունչ հօտին մերոյ տառապելոյ, որ գիշատի ի գազանաց և նուաղի և ցրուի։ Այլ զինչ ունիմք առնել, բայց միայն հայցել յԱստուծոյ զողորմութիւն և այցելութիւն և մխիթարութիւն։ Որ և անճառելի բարեգթութեամբն իւրով զսպանելոց հաւատացելոց զհոգիս լուսաւորեսցէ։ Եւ ձեզ ցորգաց ամենեցուն մխիթարութիւն և զանգորրութիւն պարգեւեսցէ։ Մանաւանդ և զսիրելի որդիդ մեր մխիթարեսցէ, և փոխանակ սգոյդ և տխրութեանդ զառաւելապատիկ ուրախութիւն տալով յայլոց փորձութեանց զերծս արասցէ։ Նաև գու և պարոն Մէլիք Մէժլումն որք թուղթս էիք գրեալ առ աղնուամեծար Շահամիր Ազան, և խնդրեալ էիք ի մէնջ յղել, գիտասջիք զի յառաջիկայ աւուրքս հաւատարիմ մարգոց ձեռօք յղելոց եմք։ Առ այն միամիտ լիջիք։ Ահա թէ Տօլվաթլու խանին, և թէ սիրելւոյն մերոյ աղնուական պարոն Մէլիքին գրեցաք զպատասխանիս երկաքանչիւր թղթոցն, և զայս թուղթ ևս առ սիրելի որդիդ մեր գրել պատշաճ համարեցաք ի միամտութիւն քեզ և ի սփոփանս սրտի։ Որ և ի յորդիական սիրոյ և ի հաւատարմութենէ անպակաս ճաւոյ ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԽԲ թուոջ և ի յօգոստոսի ԹԷ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ օրհնութեան ի նոր նախիջևան առ Տէր Առաքելի հանգուցելոյ որդի Նահապետն ի չնորհակալութիւն վաղն յղեալ տրոցն ընդ ուխտաւորացն անտի եկելոց։

Թուղթ ի յՈւրուսջուղ առ դասնձապետ պ. Անոյշն ընդ նուիրակին, վասն նորին յանձնարարութիւն, և վասն ի պատրաստի եղեալ գանձանակագրամին պատուէր տալ

նմա, մինչ ըստ [illegible]ընդրոյն ղկոնգակն շնորհակալութեան գրեցար։

Թուղթ ի Զմիւռնիա բաղար առ Վիրապենոյ պ. Սարգիոն, վասն տալոյն գնուէրս յանուն ս. Գեղարդեանն։

Թուղթ ի յիղմիր առ մահտեսի Առաքելի հանդուցելոյ կին հեղինէ պառաւն վասն ոմանց ինչ իրացն՝ զորս քանի ամօք յառաջ յղեալ էր։

Թուղթ առ թագուհին Վրաց Դարեջան ի պատասխանի թղթոյն որ վասն Ծսաւ Դիւանի ղբօրդ տիրացու Ռստակէսին։

Ծորմէ ժամանեսցէ Թուղթ հոգևորական օրհնութեան և սիրոյ՝ և Քրիստոսաձիր ողջունի, հանգերձ պահպանողական շնորհիւ սրբոյ իշման տեղւոյս նորին, ի վերայ հոգևոր գտերդ մերոյ սիրեցելոյ ի Քրիստոս՝ և ստոյգ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս, բարեպաշտուհւոյ և մեծահաւատի, պերճապատուի և շքեղափառի՝ զգաստամիտ և գերարգոյ Դարէջան Թագուհւոյդ Վրաց և Կախից, Աստուածապահ տանդ և նոյնապարգև Զաւակացդ Թագաղարմից, և ամենեցուն իսկ Ձերոյնացն, ուրախ լինիլ ի Տէր յաւէրժական բերկրանօք... Ամէն։

Եւ ընդ առատածաւալ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի բարեպաշտութեան ձերում, Զի ժամանեաց առ մեզ Թուղթն ղոր ընդ Բէկթաբէկեան հանգուցեալ Սուլխան Դիւանի որգի Ռօստոմին գրեալ էիք։ Որով նախապէս գիտացեալ մեր զխաղաղակեցութենէ ձերմէ՝ և ղհաստատութենէ ճշմարիտ բարեկամութեանդ որ առ մեզ, ուրախ եղաք և գոհացաք զԱստուածոյ, խնդրելով յնմանէ միշտ խազազ և բարեզուարճ պահել զձեզ հանգերձ ամենայն ձերոյսովք ի հրճուանս մեր։ Եւ ապա զի գրեալ էիք վասն յիշեցեալ տիրացու Ռոս. տումին հրաժարեցելոյ յաշխարհէ և բազձացելոյ կրօնից վանականութեան, ընդունիլ ի սուրբ Աթոռս և խնամարկել, ահա ըստ գրեցման յարգելւոյդ և ըստ [illegible]հոգեառնէ փափագանաց նորին ընկալաք հայրական սիրով [illegible] և յանձնեցաք մեր յեպիսկոպոսաց մերոց՝ ունիլ առ իւր և մեզով վարժել յուսումն գրոց, և դաստիարակել, և մեր խնամածութիւնն ևս լինելոց է ի վերայ։ Էջ թէ Աստուծով ընտելասցի ծառութեան օգոյ տեղւոյս և անվտանգ կեցցէ, և հմտացեալ ի կրօնս եկեղեցականութեան, զգաստութեամբ և արիութեամբ յառաջեսցէ ի գիտութիւնս և ի շնորհս։ Եւ քանզի պատկանէր պատասխանի առնել գրուածոցդ. զայս օրհնաձիր Թուղթ գրեցաք առ բարեպաշտութիւն ձեր, առաքելով առ ձեզ ղօրհնութիւնս հոգևորս, և ծանուցանելով զայս առ ի միամտութիւն։ Որ և ի ստոյգ բարեկամութենէ և ի սիրոյ անպակաս ճաւալով՝ ողջ լեր ի Տէր և յանձնեցեալ ի պահպանութիւն ամենազօր ձեռին նորա Ամէն։ Գրեցաւ ի Փրկչին 1793 և ի հոկտ. ամսոյ. ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

Թուղթ առ Գօրու ժողովուրդն վասն վճոյ Տէր Ղազարին և Տէր Գրիգորին. ուրոյ աղագաւ է եպիսկոպոսք սրբոյ Աթոռոյս՝ հանդերձ Հաղբատայ Առաջնորդ Դաւիթ վարդապետիւն զԹուղթ մի գրեցին կարգադրութեան նոցա և այլ քահանայից տեղւոյն։

Թուղթ առ պ. Երեմիայն Վիրապեան յիզմիր, վասն հանգուցեալ Իսահակ վարդապետին, և վասն նորոգ առաջնորդ Դանիէլ վարդապետին։

Թուղթ առ Տէր Գալուստն յիզմիր վասն հաշուագրելոյ զիրսն հանգուցեալ Իսահակ վարդապետին և զգաւառն օրինակելոյ։

Թուղթ ի մեծն Պօլիս առ մահտեսի Գաբրապետն Բարայեան, մխիթարութիւն վասն մահուան կնոջն, և ծանուցումն վասն Թովմաս վարդապետի թղթոյն զմկրտչի կնոջէն որ յԱգուլիս։

Թուղթ ի Պօլիս առ պ. Եսային Մասե-

հետ ի պատասխանի Թղթոյն ի յուլիսի 3 գրեցելոյ։

Թուղթ առ Հնդուտանայ նուիրակ Ելիւրեմ վարդապետն որ եկեալ էր ի Բասրա. ի պատասխանի Թղթոյն նորա անդուստ գրեցելոյ։

Թուղթ առ Աստուածատուր Աղայն ի Զմիւռին, վասն մնդրեցի Պապղուլենց Մուրատի ըաժնին ի կայից անդ հանզուցեալ Ցովհաննէսին, որ միմեանց պապու եղբօր թոռունք էին։

Վաղագոյն որ գրեալ էիր վասն մեղրեցի Պապղուլենց յայգր վախճանեալ Ցովհաննէսի ժառանգութեան, ի գրեցեմք Ցաթեւու առաջնորդ Ցովակիմ վարդապետին՝ տեղեկանալ թէ իցէն մերձաւոր ազգականք նոյն Ցովհաննէսին ի Մեղրի, և այլն. մեք և յայնժամ առանց յապաղելոյ՝ գրեցաք Ցովակիմ վարդապետին. զոր և սերեցելոյդ աղդ արարաք։ Քանի ամիսք անցեալ ի վերայ, մինչ ոչ ընկալաք ի Ցովակիմ վարդապետէն զպատասխանի Թղթոյն մերոյ, վասն դրդմանց երկրին և կամ յաղագս իւրն անգործունէութեան. կրկին գրեցաք նմա վասն այնմ բանին։ Զորմէ և ծանուցաք սիրելւոյդ ի յունիսի ԺՒ։ Ապա մինչ այլևս երկարաձգեցաւ միջոցն, և Հոգևոր որդին մեր Նուիրակ և Առաջնորդ Իսահակ Աստուածիմաստ վարդապետն ևս դրեալ էր մեզ վասն այնմ բանիլ, երրորդ անգամ ևս գրեցաք Ցովակիմ վարդապետին։ Ապա հազիւ թէ պատասխանի ինչ դրեաց մեզ, ի մեղրեցւոցն ևս մի յղելով և խոստանալով զկատարել իմն վկայական Թուղթ յետոյ յղելոյ։ Եւ մեք զայն Թուղթսըն յառաջ քան զայս՝ յուղարկեցաք առ Իսահակ շնորհունակ վարդապետն, որոց ի հասանիլն՝ գիտելոց էք զմիտսն։ Իսկ այժմ մեղրեցի Պապղուլենց Մուրատ անուն ծերունի այրն որ է յայգր վախճանեալ Ցովհաննէսին պապու եղբօր Թոռն, առեալ զԹուղթ վկայութեան ի մեղրեցւոց և յայլոց՝ և ի Ցովակիմ վարդապետէն՝ եկն ի ոուբր Աթոռս, իբր թէ գայցէր յայգր՝ խնդրել զրաժին ի դոյից հանգուցեալ Ցովհաննէսին։ Ւայց վասն ծերութեան և չքաւորութեան յետս եկաց ի գալոյ. մեք ևս ոչ ստիպեցաք առ ի գալ։ Ապա զվէքիլլամայ Թուղթ մի դրեցևալ նա յանուն սիրելոյդ՝ և կնքեցուցեալ գործակալաց սրբոյ Աթոռոյս՝ եա մեզ՝ հանդերձ վկայականաւն, և թախանձանց յղել առ քեզ։ Եւ մեք ըստ աղերսալի հայցուածոյ նորա՝ խարճէք մի առեալ ինքեան՝ ուղևորեցաք առ ազնիւ սիրելիգ, և գրեմք, որ ի փառս Աստուծոյ և վասն օգտի Հոգւոյդ քո և ծնողացդ, Հոգ տարեալ խնդրոյ խղճալի առն այնորիկ՝ որ ինչ բաժին անկցի նմա ի կայից հանգուցեալ Ցովհաննէսին, առցես և յանձնեսցես Իսահակ զգօնամիտ վարդապետին, և դրեսցես նմին Մուրատին և մեզ, ի մեք հաստուսցուք նմա։ Դարձեալ խաչատուր արեղայն՝ զոր յղեալ էիք, էհաս ի սուրբ Աթոռս, և զԹուղթն բարեպաշտութեան քո մատոյց մեզ. զոր ընթերցեալ՝ և իմացեալ զինդիրդ, սիրով ընկալաք զնա և կարդեցաք ի կարդս Միաբանից սրբոյ Աթոռոյս՝ տալով նմա զվայելուչ սենեակ բոլոր հանգամանօքն, և ի յատուկ խնամս ունիմք։ Տացէ Աստուած՝ ի անշեղ գտանիցի ի հաւատարմութեան, և բաւէ։ Ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԽՒ Թուոջս և ի փետրուարի ԻՒ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Ողջոյն և օրհնութիւն տամ Աստուածապարգև զաւակաց քոց և Հոգևոր որդւոցն իմոց սիրեցելոց, Պարոն Մարդար, պարոն Մահթէոս, Պարոն Պետրոս և Ցակոբ Աղազատէիցն, և ամենեցուն իսկ ձեռնոցն. զորս և յանձնեմք ի խնամս Տեառն։

Թուղթ առ Իզմիրու առաջնորդ Իսահակ վարդապետն ծանուցումն հատնելոյ Ք. Թղթոց նորին. եւ վասն մեղրեցի Պապղուլենց Մուրատի զալոյն աստ եւ յաղագս ժառանգութեան իւր պապի եղբօր Թոռն հանգուցեալ Ցովհաննէսին՝ վէքիլլամայ գրելոյն. զԱստուածատուր աղայն՝ վէքիլ կարգելով յիւրն կողմանէ, եւայլն։

Ցորմէ սիրով և օրհնութեամբ. և

քրիստոսական աղջուհւ ծանիր սիրելի և հոգևոր որգի մեր՝ և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Խահակ Ամտուածաբան վարդապետ։ Զի թող զլսազմութիւն թղթոցըն յանցելոյ ամի դեկտեմբերի ԻԹ. յղեցեալոյ՝ որք Թերևս ցարդ հասեալք իցեն առ քեզ. յետ այնորիկ ի նոր Թուոյս յունվարի Ի. և համառօտ Թուղթ մի դրեցաք առ քեզ, վասն ոմանց իրաց. և Ցաթևևու հանճարեղ առաջնորդ Ցովակիմ վարդապետն որ երրորդ Թղթովն մերով ստիպեցեալ հաղիւ ուրեմն մի Թուղթ էր առեալ ի մեղրեցւոցն և իւրն գրով առ մեզ յղեալ, զայնս ևս ընդ մեր Թղթոյն յղեցաք առ քեզ. ղի այնու սակաւ ինչ յուսաւորիցէիք, ըստ որում խոստացեալ էին մեղրեցիքն յայնմ Թղթի իւրեանց Թէ յետ աւուրց ղկատարեալ վկայական եմք գրելոց. և այլն։ Ապա ընկալաք ղի հոկտեմբերի Լ. գրեալ Թուղթն քո, հանդերձ Թղթով դաւանութեան հաւատոյ նորադարձ Խաչատուր աբեղայինն։ Զկնի աւուրց ինչ անցանելոյ ի վերայ եկն էհաս և ինքն Խաչատուր աբեղայն, բերելով ղի հոկտեմբերի ԺԱ. գրեալ Թուղթն քո՝ որ վասն իւրնաև ղԹուղթ մի ևս յԱմտուածծատուր աղայէն։ Ի գալն սորա, եկն և մեղրեցի Պապղուլենց Մուրատ անուն ծերունի այրն ունելով զբազմակնիք վկայական Թուղթս ի մեղրեցւոցն և յայլոց և ի Ցովակիմ վարդապետ առաջնորդէն իւրեանց։ Այժմ Թէպէտ կամաք ամենայն գրեցելոցդ պատասխանին լիապէս գրել, սակայն ղի սկսաւ տարեգլուխն պարսից առաջիկայ, որոյ ցաւոց հոգւոքն պաշարեցեալ կամք, ըստ որում ի մեծի պահոց յառաջին երկուշաբաթի աւուրն իսկ գնալոց եմք յԵրևան, վասնորոյ Մուրատի բանին գրել հարկաւորեցաք։ Արդ՝ այս Մուրատս որ ըստ իւր բերեալ վկայական Թղթոցն և ըստ իւր ասիցն՝ է. որդի Ցովհաննէսի որդւոյ Հայրապետի որդւոյ Պապղուլեանն, գոլով ի յիզմիր հանդուցեալ Պապղուլենց Ցովհաննէսին պապու եղբօր Թոռն, վասն ստանալոյ զբաժին իւր ի ժառանգութենէ նորին, խորհեալ էր գալ յիզմիր, բայց մինչ եկն ի սուրբ Աթոռոս, նկատելով առ ծերութիւն իւր և առ չքաւորութիւն, կասեցաւ ի խորհրդոց իւրոյ և ոչ ևս կամեցաւ գալ, մեք ևս ոչ ստիպեցաք։ Այլ ղվէքիլլամայ Թուղթ մի գրեալ եմ՝ յիւր կողմանէ զազնիւ սիրելին մեր զԱմտուածծատուր աղայն վէքիլ և ընտիար կարգելով, և կնքեաց ինքն և գործակալ եպիսկոպոսացն սրբոյ Աթոռոյս ևս կնքեցոյց, և ետ մեզ, և թախանձեաց յղել առ Ամտուածծատուր աղայն։ Թուղթ մի ևս իւր եղբօր որդի Գրիգորն գրեցեալ ի պատասխանի նորին Թղթոյն՝ ետ մեզ։ Եւ մեք ըստ հայցուածոյ իւրոյ զկարճի մի տուեալ գարձուցաք զինքն ի տուն իւր։ Եւ ահա Թուղթ գրեցաք առ գերազնիւ սիրելին մեր տէրամբ օրհնեցեալ Ամտուածծատուր աղայն, ղի ի փառս Ամտուածոյ վէքիլութիւն առնելով հաշտալի Մուրատին այնմիկ, զոր ինչ բաժին՝ անկանիցի ի դոյից հանգուցեալ Ցովհաննէսին, առցէ և յանձնեսցէ քեզ, նաև գրեսցէ նոյն Մուրատին և մեզ, գի մեք հասուցուք նմա. և այլն։ Որք և զնոյն յիշեալ վէքիլլամային Մուրատին և զվկայականն ի միասին ընդ Թղթոյն մերոյ պահարանեալ յղեցաք առ քեզ. վասընորոյ և գրեմ սիրելւոյդ՝ զի զայդ պահարանաւ Թուղթսն հասուսցես առ Ամտուածծատուր աղայն՝ և դու ևս յորդորօզ լիցիս՝ որ գթալով ի ծերութիւն և յաղքատութիւն հաշտալի Մուրատ առնն ջանասցէ առ ձեռն բերեալ զբաժին նորա ի կայից հանգուցեալ Ցովհաննէսին, և յանձնել քեզ, և գրեսջիք մեզ զորպէսն։ Իսկ զառ Գրիգորն գրեալ Թուղթն Մուրատին՝ բաց եդաք ի մէջ Թղթոյս. զոր ընթերցեալ իմասցիս, և ապա քակեալ հասուսցես նմա։ Այսքան ինչ բաւ լիցի առ ժամս. զպլ գրեւլիսն յետոյ գրեսցուք։ Եւ զորպէսութիւն հանդամանաց ընդունելութեան Խաչատուր աբեղայի Թղթոյն իմասցիս, մինչև յետոյ քեզ ղլիապէսն գրեսցուք։ Այլև Մուրատն յիւրեանց կողմերէն Գ. կտոր Թուղթ էր բերեալ ընդ իւրն որ յայգր հասուցանիցէր առ որս և հասանելիք են։ Եւ մինչ ինքն դարձաւ, զայնս ևս ետ մեզ. զորս ահա ընդ Թղթոյս յղեցաք. և դու յղեսջիր, ուր և հասանիլ պարտին։ Ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի Ռմկլա Թուղոյս և ի փետրվարի ելն. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Կոնդակ չնորհակալութեան ի վերայ բա-
ղիշու չորից եկեղեցեաց ժողովրդոցն վասն
նուիրակութեան նոցա և այլ արդեանցն
հասելոց ձեռամբ նուիրակ Գրիգոր և Յով-
հաննէս վարդապետացն։ Ցորում և աղդա-
րարութիւն թէ կամիրտօլու վանից առաջ
նորդ զառամեալ Զարարիա վարդապետին
լուեցուցար ի պատարագելոյ և ի ձեռնադ-
րութիւնս առնելոյ։

*Թուղթ ուղ Հերակլ Արքայն վրաց ընդ
Դանիէլ վարդապետին որ ըստ խնդրոյ
նորա ի սրբազանէն՝ տանէր ի ջրոյ
աղբեր սրբոյն Ցակոբայ։*

Ցորմէ . . .

Եւ ընդ սիրոյ և ողջունի օրհնառաք թղթոյս՝ ծանուցումն լիցի Աստուածասիրութեան ձերում։ Զի Թուղթն տաճկերէն դրեցեալ ի ձեռն հաւատարիմ ծառային ձերոյ և հոդևոր որդւոյն մերոյ Միրզայ Աբրահամին էհաս առ մեզ. և ազդ արարեալ զուրախարար համրաւ ողջունի ձերոյ՝ և զսիրոյդ և խնամոցդ առաստութիւն որ առ մեզ, բերկրեցոյց բաւականապէս զսիրտ մեր։ Խնդրեմք յամենարարեր Երկնաւոր Աբքայէն արքայից, յաւելուլ զբաղում աւուրս յաւուրս իւրակացոյց ընաիր և բազմադով մեծիդ Աբքայիդ Հերակլայ, ի խաղաղութիւն կեցութեան հասարակաց, և ի յաճախապէս միխիթարութիւն մեզ, որք ի ժամանակի յայսմիկ դերապանծ անուամբ Ցէրուսաղեմացդ և եթ ունիմք զդիւրութիւն սըրտի և զուարթութիւն երեսաց։ Հրամայեալ էիր դարձեալ յղել ի բժշկարար ջրոյ հրաշաբուղխ Աղբեր սրբոյն Ցակոբայ սքանչելադործ Հայրապետին իբր տան լարաչափ, ի ձեռն պատուական մարդոյ. իբր թէ նախապէս փոքր ամանօք յղեալքն մեր ամբողջապէս չէն հասեալ յայդր։ Վասնորոյ և մեր փոյթ կալեալ երկու մեծամեծ պղնձեայ ամանօք բերել եառաք ի ջրոյ անտի աւելի քան զտասն լիտր. և յանձնեալ հոդեծին որդւոյ մերոյ սիրեցելոյ Գանիէլ Արհի Եպիսկոպոսին, առաքեցաք ի սպաս մեծազօր մեծի Աբքայիդ Հերակլայ. յուսալով թէ յաջողութեամբ Ցեառն ամբողջապէս հասուցանիցէ ի յօրհնեալ երկրիդ և առ պատուականութիւն ձեր։ Արդ որպէս գըրեալ էիր և կատարեցաք, խնդրեմ նոյնպէս մեծաւ հնուատով ջերմեռանդ սիրով և հաստատուն յուսով ընդունիլ։ Եւ ակնուսիմ, թէ որպէս և կամիք, եղիցի ձեզ։ Որ և մարդասէր Փրկիչն մեր Քրիստոս՝ արժանաւոր մաղթանօք և նուիրական հայցուածովք սրբոյն Ցակոբայ առաքելապատիւ Հայրապետին զայդ ջուր օրհնութեան՝ արասցէ ի բժշկութիւն ախտից և ցաւոց և վանդեց երկրիդ և բնակչացդ, ազատելով յամենայն չար պատահարաց։ Պարգեւեցէ՛ օդոց քաղցրութիւն, անձրևաց շահեկանութիւն, անդաստանաց զառատ պտղաբերութիւն, վանելով սպառսպուռ զամենայն որդունս և ուտիչս վնասակարս, ի լիութիւն և ի բարեճոխութիւն օրհնեալ երկրիդ և երկրականացդ, ի յանդորրութիւն սրտի հասարակխնամ տէրութեանդ, և ի մեր ևս ուրախութիւն, ի փառս և ի դովեստ ամենազօր ղօրութեան և ողորմութեան իւրոյ։ Ողջ լեր ի Ցէր. պահպանեալ բարձր ձեռամբ և հզօր բազկաւ նորին, հանդերձ ամենեքեան որք ձեր են. Ամէն։ Գրեցաւ ի Թուռջ Փրկչին 1793 և ի մարտի ի լուսանկար Գահս սուրբ Էջմիածնին։

Թուղթ ի Ռուսէթ առ նուիրակ եւ առաջնորդ Ցովսէփ վարդապետն, ի պատասխանի թղթոց նորա ի 1792 թուղջ Փրկչին. ի յուլիսի 6 ի նոյեմբ. 20 եւ ի դեկտ. 7 գրեցելոց։

Ցորմէ սիրով ճշմարիտ և օրհնութեամբ բազմաւ, Քրիստոսաձիր ողջունիւ, և դերազօր շնորհիւ սրբոյ Իլման տեղւոյս նորին՝ ծանիր սիրելի և հոդևոր որդի մեր՝ հարազատ և աշխատասէր զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Ցովսէփ Աստուածաբան վարդապետ։ Զի յանցելում՝ ամին թող ղ՝ յապրիլի 17 գրեալ Թուղթն մեր առ քեզ, գոր ընդ աղնիւ Աղայ Ցովհաննէսի և կենակցի միխիթարական Թղթոցն և այլոց յուղարկեալ էաք որք ի Հարկէ հասեալք են, ի սեպս. 2. ևս դրեալ եմք առ քեզ զԹուղթ, և հանդերձ այլ Թղթովք յղեալ որք և

գուցէ ցարգ հասեալք իցեն առ քեզ։ Ցեա յզելոյ մեր զայնս մինչև ցայժմ հասին առ մեզ թուղթք քո գրեցեալք ի յուլիսի 6. ի նոյ. 20 և ի գեկա. 7. որոց վերջնոյ ժամանելն եղև յամսոյս ծԴ. և իմացաք զամենայն գրեալսդ։ Ցառաջնում թղթոյդ որ ի Գրիգորուպօլու, ծանուցեալ էիր ըղվաղագոյն գրեալ թղթոյն մերոց հասանիլն առ քեզ. և ի պատճառս տկարութեան և ղբաղմանցդ՝ համառօտիւ ազդեալ էիր զմեծին Պօլսոյ շփոթիցն ի վերայ ընդհանրականին, և զայլ ինչ իրաց, թողլով զլիագոյնսն յետոյ գրել։ Ապա երկրորդ թղթովդ գրեալ էիր զաշխատիլդ ի շինուածիւն նորոյ քաղաքին Գրիգորուպօլու, զորոյ հիմնարկութեան հանգէսն և զայլ պարագայից թէութիւնսն երկարապէս ի նորատիպ տեառրակէն ծանեաք, և ուրախ եղաք գոհանալով զԱստուծոյ հանրածաւալ խնամոցն։ Այլ վի ընդ ուրախական համրաւսդն գրեալ էիր զդառնագէտ դիպմունս վախճանման խղճալի Փիլիպպոս սարկաւագին, և յոգնաթախիծ արտմութեան սրտի քոյ մեք ևս արտմեալ ցաւեցաք։ Իսյց զի՞նչ գոյ ասել առ կամիլն և առնելն Արարչին. կամք նորա եղիցի օրհնեալ. որ և լուսաւորեսցէ զհոգի հանգուցեալոյն, և զքեզ երկնաձիր մխիթարութեամն մխիթարեսցէ և ոլջ պահեսցէ։ Ծանեաք և զգնալդ ի նախիջևան՝ յօծանել զսուրբ վանքն գեղեցկաշէն, և զհանգերձիլդ գնալ Պետրպօլ, և զայլ իրսն. առ որս ասեմք եղիցի յաջողութիւն և շահեկանութիւն առնելեացդ գործոց։ Իսկ որ զթուղթըս գրել խնդրես ի կողմունգ առ մեսն և առ խնամածու իշխօղս նոցին, յիրաւի և մեք հարկաւոր գիտեմք զգրելն որպէս և յառաջ լսեմք նշանակեալ. սակայն՝ մինչպատեռազմին ոչ լինի վերջաւորութիւն, և ամենայն իրքն որպէս թէ ի կախ կան, տակաւին այժմ ոչ գոյ մեզ առնել զգիպաւոր ոճս ինչ բանագրութեան առ նոսա։ Այլ մինչ Աստուծով ի բարեկոզմն եղերեացին րանք գոցին, որով և բարձցի տարակոյս կեղծարծութեանց, յայնմ պատշաճեալ ժամանակի գրելոց եմք զամենայն հարկաւոր գրելիս առ որս և պահանք են։ Զհանգարացուցն պայմանդրժութիւն առ հզօր աէրութիւն բարերաստ թագուհւոյն, և զՓռանսզացն ազգի կատաղութիւն և զպատուերեան նոցին խանգարումն, և զմիւս թագաւորաց և մանաւանդ ամենափառաւոր կայսերուհւոյն ի վթէժխնդրութիւն յառնել՝ զորս երկարապէս գրեալ էիր, գիտացաք, և շնորհակալ եղաք զսիրեցելոյ որդւոյդ յաղագս անձնձիր իրազեկ առնելոյդ զմեզ պյգպիսեաց գիտելեաց։ Ծանուցեալ էիր լիապէս ևս զՊօլսոյն տեսչի խոչընդոտութիւնն առ յզեցուածն անգ գրեանցն նորատպից, և վերջապէս իրրև զպարտեցեալ հեաւիլն խոհեմ խորհրդականաց, և բարւոք վերջաւորիլն իրին. զորս թէպէտ ինքն և կամ այլք բնաւ չեն գրեալ մեզ, սակայն ի նորումս յեկողաց ոմանց ուխտաւորաց ղՀամեմատս քոյդ գրութեանցն լուաք։ Եւ զի՞նչ ասեմք, ահա թէ յինքնէ և թէ մանաւանդ չարախոհ անձանց գրգեցեալ՝ յայնպիսի յանշահ հետևմանց ոչ հրաժարի. թէպէտ և չօգտի ինչ. ապաքէն ցեր տացէ զգաստութիւն։ Իսկ այլով կցորգաւ թուղթըս որ գրեալ էիր զոզորմած կայսերուհւոյն ձրիաբար շնորհելն Գրիգորուպօլու զ'ԻՓ Թուման առ ի շինիլ այնու եկեղեցեաց և Առաջնորդարանի, ասաց և խնուիթից, և այլ շինելեաց հարկաւորաց. ուրախութիւն մեծ եղև մեզ և ամենեցուն։ Ասաւածերկար կեանս պարգևեսցէ առատաբաշխ մեծութեան նորին, և հաստատութիւն շնորհեսցէ ձեռնարկութեանցն։ Ի հնդկաց եկեալ թուղթն ևս զոր յղեալ էիր, ընկալաք, բայց ընդ կորուստ աէր Սահփանի յղեալ փօլիցային ոչ սակաւ ցաւեցաք։ Այլ զեփրեմ պետէն որ գրեալ էիր թէ ընդ հակառակս իցէ վարեցեալ ընդ քահանային, գրեթէ՝ նորա ոչ զաջոյն և ոչ զձախոյն չունիմք լաւ իմն տեղեկութիւն։ Որ ի յերիս ամս Ռ գիր է գրեալ մեզ, և այն ոչ հարուստա ծանուցմամբք։ Ի հերունհետէ գրեն մեզ ի Բաղգատու և ի Բասրայու թէ գայ և գայ. այլ գալոյն նշան ոչ կայ գեռ ևս։ Ցղեալ էիր ի նոր տպարանէդ եղելոց գրեացն Ծ հատ վիպասանութիւն, Ծ հատ աղօթամատոյց, Ծ հատ տետրակ՝ Դուռն ողորմութեան. և Ծ հատ օրացոյց սոյնոյ տարւոյս. որք հասին առ մեզ ի Թիֆլիզու։ և բաժանեցաք համայն կարգաւորաց սրբոյ Աթոռոյս յիւրաքանչիւր տեսակացն զմեն

մի. լիցիս միամիտ։ Բայց սակս օրացուցին զայս ինչ ունիմք ասել սիրելւոյդ, զի մինչ հոգելոյս Հայրապետն մեր յօրինեաց և ապագրեաց աստ զնոր ածանցոյցն, Պօլսեցիք ղօրացոյցս իւրեանց համեմատեալ նմա, նշանակէին ի գրան օրացուցին թէ՝ ըստ օրինակի ի սուրբ Էջմիածին ապեցեալ ածանցուցին, զոր յետոյ խափանեցին, և այլն։ Այլ այժմ ի ձեր ապագրեալ օրացոյցն գնի թէ հրամանաւ սրբոյ Էջմիածնի այս անուն հայրապետին։ Ի տարեկան անցակատն օրացոյցն զի՞նչ հարկ է գնիլ այս. յորմէ և ոմանք թէ զի՞նչ խօսիցին, զայն ևս կարես իմանալ։ Ուրեմն՝ գրեմ սիրելւոյդ՝ որ զգուշացուցեալ զապագրիչն, ոչ ևս դնել զայն թէ հրամանաւ և այլն։ Բայց զայն և ևթ, թէ ըստ օրինակի ի սուրբ Էջմիածին ապագրեցեալ ածանցուցին, և րաւ է։ Եւ ևս, քան զայս ի նորատիպ գրանցդ՝ հարկաւորագոյն է սրբոյ Ցանն՝ ժամագիրքն. զի հինքն սպառեալ են, և զնորս ի ապագրելոց աշխարհականացն Պօլսոյ ոչ ախորժիմք ընդել տալ. այլ գրեմք հոգևոր որդւոյգ զի ի քո ապեցուցելոցն՝ Ծ, կամ գոնէ Լ. հատանյապաղ յղեսցես ի պէտս դպրատանս աղայոցն և այլոց ընթեռնելոյ։ Երրորդ թղթովդ գրեալ էիր զգալ հասանիլն առ քեզ Լմայ անապատի ժողովարար ներսէս վարդապետի ուրումն՝ որպէս և իցէ հնարիւք, և զքո արգելուլն ի գործոյ, և խնգրեալ էիր կոնդակ յղել վասն նորա, և այլն։ Առ որ ծանիր. զի յորմէհետէ մեք կոչեցեալ եմք յայս կոչումն, երից և չորից այն անապատացն կոնդակս եմք առեալ, երբեմն երկուքն ի միասին, և երբեմն յաւուկ յաւուկ, զորն ընդհանրական, և զորն մասնաւորապէս։ Եւ ծերունի Ճակոր վարդապետն յանցեալ ամին վասն զաւտամական անկարուԹեանն հրաժարեալ ի վանահայրուԹենէն, համակամուԹեամբ միաբանից և վանայ իշխանացն զիւր չքաղ Միքայէլ վարդապետն ընտրեալ փոխանակ իւր, մանսրօք յղեալ էին առ մեզ, և խնգրեալ հաստատել հայր նոյն Լմայ Անապատին, և դարձեալ ղժողովրգեան կոնդակս շնորհել զոր և մեք անԹերի կատարեցաք, սակայն ըստ կարգի և չափաւոր իրօք ոչ բաւականացեալ ղանխլաբար յանչափն ձգտին, զորմէ և յամենևին չեն ինչ ազգեալ ։մեզ՝ ոչ գրով և ոչ բանիւ։ Ուստի չէր արժան արդ ողորմիլն սակայն՝ գրեԹէ վասն քոյգ բանի զիջեալ առ նոսա ի գուԹ՝ ահա ղժողովրգեան կոնդակ մի գրեալ ի վերայ Հաշտարարհանուս, նախիջևանու, Ղւլարու և Մօզաօքու, յղեցաք ընդ ԹղԹոյս առ քեզ, զոր ածցես ժողովարարին այնմիկ, որով շուտ վճարեալ զգործն՝ վերադարձցի։ Գամք այսուհետև խօսիլ յաղագս հոգևոր որգւոյն քո և մերոյ՝ Գրիգոր վարդապետին, և վասն արդեանց և իրաց ի քէն և ի նմանէ յղեցելոց։ Արդ գրեալ էիր Թէ՝ զբարի համբաւս լսեմ զնմանէ առ արգիւնաւորուԹիւն գործոյն, և առ սիրով վարեցուիս ընդ ժողովրդեանն, և Թէ պատուիրեալ եմ նմա գրել զորպէսուԹեանց իւրոց յայգր, և այլն։ Ճիրաւի և մեք սրտադիւր եմք համբաւով նորին, և երբեմն գրէ մերոյնոցն զորպէսուԹեանց իւրոց և գործոյն։ Ճառաջագոյն որ սիրելիդ գրեալ էիր Թէ զՃովհաննէս աղայի և այլոց զառւրսն յանձնեցի նմա, և զնախչուանուն ևս ընդ նմա յղելոց եմ, որ ի հաշտարարհանու հատուսցէ ի սուրբ Աթոռդ, ինքն ևս գրեալ էիր Թէ՝ բանիւ վարդապետիս ի նախչուանու ։գործակալ պարոն Մկրտչէն ստացեալ եմ եՃՄ հատ բաճխլու ոսկիս, և ծ. ևս յինքենէ վասն հանգուցեալ որգւոյն մեկն ԳՈՒՃ դնվ. որ այսպէս յղեալս սրբոյ Աթոռդդ ինձ ևս է. այլ օգտակար համարիմ որ մեկն Դո. գրենով հաշուեալ բարեԹ տայք ի վերայ իմ. այնպէս հատուցից, և այլն։ Իսկ մեք զհատարիմ՝ որք չՃանաչելով զայս կողմունքս՝ ուրեմ բարեԹ ասյաք, գրեցաք նմա, զոսկիսն յղել, որ Թէ ինձ ևս ինչ ևս իցէ սրբոյ Ցանն, սակայն շուտով հատցէ ի յօգնուԹիւն պակասուԹեանց ի կողմանէ խարՃեցաց։ Գեռ պատասխանի չեղև. և գրեաՃ ևս ոչ էհաս, Պարոն Մկրտումն ևս որ յառաջագոյն բանիւ քով ի հաշտարխանու դողէԹ և Ա. Թուրում ինձաՓ էր յղեալ, Թարց ԹղԹոյ, գրեցաք նմա զգինան նշանակել, զոր և քեզ ծանուցեալ եմք կանխաւ, այնմ ևս ոսկւսին ղպատասխանի չառաք։ Այլ յանցելում ամին ի փետրուարի 27, Գրիգոր վարդապետն մի մնդուկով գոնէաւոր և գողէթ և աթլազ էր

յղեալ մեզ Հանգերձ սիայով չափուցն և գնոցն, ընդ որս էին և Պետրպօլքոս Ջուղայեցի՝ ծերունի Ցովհաննէս վարդապետի նուիրեալ իմաշշ դիպակ շուրջառն, և փոր ուրարն. և վակասն. և Ր Թուղուամ սնջաֆ յինքենէ ընծայ վասն մեր. և Ե. Հատ ընդհանրական գիրք յանուն սպասուց մերոց։ Ա օգմայ Թուղթ և Զ. հօխայ ղմուռ ի Տէր Ողորմեսջիք ընծայեալն մեզ։ Եւ վասն յիշեալ ճոթիցն գրեալ էր որպէս թէ ի քէն իցէ յանձնեցեալ ինքեան յղել աստ. բայց գու ի Թուղթս քո յանուանէ ոչ էիր յիշեալ զայսցանէ։ Ոչ իմանամք թէ որպիսի ինչ է այս։ Սիրելիգ մեր, լաւ գիտես որ այսքան ժամանակ մեք այսի երբէք աթլաս չեմք խնգրեալ. զի յԻղմիրու և կամ ի կարնոյ լաւն և էժանն գնեմք մեզ, իսկ այսոքիկ ցածագոյնքն են և ծանրագինք, և աւելորդ իսկ։ Ընդլասքն Ր. ցեզք են. զի ցեղն Վէնէտիկոյ գրէ ի սիահւոլն, որ իրր թէ լաւն է, բայց գին դնէ տեղւոյդ Ա. գաղին Բ Ռեճ. գն, ոմանց կտորիցն ևս Բ Ռ գն. որք թանկ են յոյժ։ Զմիւս ցեղն՝ սուրմայի փռանկի աթլազ կոչէ, որ իրրև թաւթայ է, և գին գնէ Ա. գազին Ռեճ գն. որ ոչ արժէ։ Իցէր թէ՝ գոնէ արատաւորք ևս չլինէին. այլ՝ թէ աթլասքն և թէ գըռզէթքն ըստ մեծի մասին լաքեալիք են և բծաւորք՝ անպիտանացեալք. զորս համարիմք թէ յասպատակաւորաց իցեն առեցեալք և կամ ի Քացուածոց խանութէից. որք վասն լաքիալի գոլոյն՝ այլազգեաց ոչ արին, և մեզ ևս չվայելեն։ Եթէ ընդէ՞ր իցէ արդեօք յղեալ զայնոսիկ, չգիտեմք. գոնէ ճանապարհի ծախուցն ևս պարտ էր խնայել։ Ի սիահին՝ ոմանց չափուցն և գնոցն ևս սխալմունք գոյին. զորս գրեալ գարձուցաք առ ինքն, որ հասու լիցի։ Իսկ կտորքն թէպէտ վասն երկարութեան ճանապարհին դարձուցանել ոչ լինի, սակայն՝ աստ ևս մեզ ի պիտանութիւն ոչ հարկաւորի։ Ապաքէն սիրելւոյդ զգուշացուցանել արժան է՝ Գրիգոր վարդապետին, և այլոց ևս, որ միւսանգամ ղայնպիսի անշահ երքս թարց մեր խնդրեն ոչ յղեսցեն։ Որպէս ահա մեք ևս զգուշութիւն գրեցաք նմա։ Եւ յերկարել մի դժուար ինչ թուիցի սիրելի որգւոյդ. քանզի ի հարկէ գու ևս չկամիս զինեան սրբոյ գահիս. այլ առ օգուտն վաստակիս, ապա այսպիսի իրք որ ի վաճառականաց խարդախութենէ լինին միշտ, առ այս զգոյշ լինիլ պարտ է, զի մի ընդ վայր ինասիցիմք։ Մանաւանդ ի ներկայս այս կտորք չէին ինչ հարկաւորք սրբոյ Տանս. զի չափաւորապէս գոն։ Ա.յլ յոյժ հարկաւոր են այժմ մինալու զութիքն զոր ի վազուց գրեալ եմք սիրելւոյդ, և գու խոստացար հոգալ, բայց տակաւին յղեցեր. եթէ կարելի է առ ձեռն բերլն, հոգ տարեալ յղեսցես։ Զորպիսութեանց սրբոյ Գահիս և մեր Թողում յետոյ գրել, մինչ երկարեցաւ Թուղթս։ Ողջ լեր ի Տէր, Ջալով անուազ ի սիրոյդ։ Ողջունեալքն ի քէն եպիսկոպոսքն սրբոյ Գահիս՝ սիրով ողջունեն զքեզ։ Եւ մեք օրհնութեամբ ողջոյն տամք մաերիմ սպասաւորաց քոց՝ խոհեմամիտ վարդապետաց և այլոց աստիճանաւորաց, նաև համայնից առ քեզ գտանեցելոց, որք հանգերձ քեւ լիցին յանձնեցեալք ի խնամս Ցեառնն։ ի ՌՄԽՐ Թուռլա, և յապրիլի ԻԸ։

Թուղթ առ Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետեան ի պատասխանի Բ. Թղթոց նորա յանցելոյ ամի դեկտեմբերի ԻՒ. և ի սոյն տարւոյս մարտի Գ. գրեցելոց։

Թուղթ առ Զմիւռնիայու նուիրակ եւ առաջնորդ Իսահակ վարդապետն, ի պատասխանի Բ. Թղթոց նորա յանցելոյ ամի հոկտեմբ. ԺԱ. եւ ի Լ. գրեցելոց։

Ի հոկտեմբ. ԺԱ. և ի Լ, գրեալ Թուղթքն քո մինչ հասին առ մեզ յամսեանն փետր. յորում միջոցի և եկեալ էր աստ մեղեցի Պապղուլենց Մուրատ անուն այրն ծերունի, մեք յայնժամ զանազան հոգւոք զբաղեալ չկարելով երկարօրէն պատասխանիս գրել Թղթոյն քոց, զհամառօտ Թուղթ մի գրեցաք առ քեզ ի փետրուարի ելն, և զԹուղթ մի ևս առ սիրելին մեր Ամուաճատուր աղայն, և հանգերձ յիշեալ Մուրատի բերեալ վկայականաւն, և իւր վեքիլլամայիւն (որով զԱստուածատուր ա-

զայն վէբիլ սրար նա յիւրն կողմանէ,) յղեցաք առ քեզ, խոստանալով՝ զլիալիր պատասխանիս Թղթոյդ՝ յետոյ գրել։ Բայց մինչև ցայժմ պէսպէս հոգք և հարկաւոր Թղթագրութիւնք առ այլեայլ տեղիս ծանրացեալք ի վերայ մեր՝ չէթողացուցին քա. նալ զաչս. միայն Թէ յապրիլի ԺԱ մինչ մեր Մարտիրոսի աներձագ Յակոբն դառնայր ի սրբոյ Աթոռոյս յայդր, ղՀամառօտ Թուղթ մի ընդ նմա գրեցաք առ քեզ։ Նարդենիս և Թէպէտ չէաք ազատ ի խուժա. նաց հոգոց, մանաւանգ մինչ մեր մերձաբնակ այլազգիքն զմեծ առուն մեր իրրու յափշտակեալ էին ի մէնջ և աւերեալ. այնր սակս գնացաք յերևան գեգերեալ ի քանիս աւուրս. սակայն և հարկաւոր գիտացեալ՝ պատառելով զմէջ այնոցիկ զբաղմանց, հոգացաք զայս Թուղթ գրել առ քեզ ի միամտութիւն։ Արդ՝ յետին Թուղթդ որ ի հոկտեմբերի Լ. էր գրեցեալ ի Բայընգուրու, յառաջ էհաս մեզ քան զընդ Խաչատուր վարդապետին ի Զմիւռնոյ դրեալդ, և. ապա Խաչատուր վարդապետն եկն բերելով զյանձնարարական Թուղթն քո և Ասուածատուր աղային։ Վասն որոյ և մեք սիրով ընկալաք զնա, որպէս և յայն ժամ Ասուածատուր աղային գրեցաք, յորմէ և գու Թերևս իմացեալ իցես. իսկ զառ քեզ Թուղթն մեր համառօտեալ, նշանակեցաք Թէ՝ յետոյ զրելոց եմք։ Այժմ այսպէս գիտեա՛. զի յետ ընդունելոյն մեր զնա սիրով և օրհնութեամբ, եռուք նմա զխուց պատրաստ գոշամայիքն և ամենայն անօթիւքն և այլովքն որ ինչ պիտոյ էին նմա, և ի դասն ևս ընդ մէջ վարդապետաց կանգնեցուցաք պատուով, և մերայնոցն ևս պատուիրեցաք շահել և մխիթարել։ Եւ ինքն իբր քաջզրուցեալ ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս ի բարեկենդանի աւուրցն մինչև ի մեծի պահոց չորրորդ շաբաթն արի և ժիր կայր, իսկ յայնմ հետէ վաղեմի ցաւն զոր ունէր՝ շարժեալ, սկարացաւ, և հազիւ կարէր ցանցառակի ի ժամ՝ և ի տեղան գնալ։ Եւ զի խղճալի Թէոդորոս սարկաւագն ևս ի բնիկ ցաւէն իւրմէ մաշեցեալ վախճանեցաւ, նա ևս յայնմանէ երկուցեալ միաբորդս յղեաց առ մեզ Թէ՝ դեռ ամառն չէ հասեալ, այսքան տագնապիմ ծանրութեամբ օդոյս՝ և ցաւ արծաթեալ է. ապա ամարային եղանակին իսպառ ոչ կարեմ տանիլ. խնգրեմ հրաման արաս. ցէ գնալ ի Վանայ կողմանց վանորայն։ Լուեալ մեր զայս՝ կոչեցաք զինքն առ մեզ, հարցաք զբէնին և զդիտաւորութիւն. և նա զոր այլովք ասացեալ էր, ինքեամբ ևս ա. սաց, գնալ ի Վանայ կողմունն, իբր Թէ՝ ջրփոխեալ առողջասցի և դարձեալ գայցէ ի սուրբ Աթոռս, Եւ մեք ըստ Թախանձանացն հրաման եառաք խազազութեամբ գնալ. բայց արտաքոյ ոմանց ասացեալ էր Թէ՝ գառնալոց եմ ի Զմիւռին. զոր յետոյ իմացաք։ Եւ յառաջ քան զուղևորիլն Թէպէտ և չժամանեաց պատարագ մատուցանել, բայց հազորգեցաւ Խակ ի գալն իւր պատ Լե. ղուռուշ ի գարին ի պարոն Հայրապետէն էր առեալ, և ծՋ. ղուռուշ ի Բայաղիտ աիրացու Գէորգէն, ի դառնալն՝ գրեցաք նոցա ոչ ևս պահանջել զառեալսն, տեսցուք Թէ կատարածն ուր եղերիցի, (այսպէս ուղևորեցեալ գնաց) և մեք ևս Լ. ղուռուշ եառաք ճանապարհական խարճի. (Թող ղԾ ղուռուշն զոր յառաջ էաք առեալ վասն հիւանդութեանն) Այսպէս ուղևորեցեալ գնաց։ Եւ մեք պարոն Հայրապետին գրեցաք ևս, զի զգրեանսն նորին զորս պատ յղեալ էիր, եթէ առ ինքն իցէ, հասուսցէ նմա, Բայց չէ ևս հասեալ Թղթոյն մերոյ առ պարոն Հայրապետն, նա զգրեանսն Խաչատուր վարդապետին հանդերձ մեր գիւղի եկեղեցւոյն աղագաւ քո յղեալ շուրջառօքն՝ ձեռամբ քոյգ քեռորդի Սահմանոսին յղեալ էր, և նա հասոյց ի սուրբ Աթոռս մինչ մեք յերևան էաք վասն առուի վիճդյն։ Ապա յետ յղելոց եմք զգրեանսն առ պարոն Հայրապետն, հասուցանել Խաչատուր վարդապետին՝ ուր և լինիցի։ Այսքան վնաս նորա բանք։ Եկեսցուք ի պատասխանիս գրուածոցդ վասն քո և գործոյդ. և արդեանց։ Գրեալ էիր զելանելդ ի Թեմսն ի Բայրնդր, և անգ արծարծիլն ի քեզ սանճրին, և դարձեալ փարատիլն և զկոնդակն ընթեռնուլ տալդ, և այլն։ Զորս իմացեալ ընդ արծարծիլն ցաւոյն սրտմեցաք, և ընդ շուտով առողջանալդ ուրախացաք։ Ցէր պահեսցէ զսիրելի որգիդ յամենայն վտանգից և ցաւոց, և գործոյդ յաջողութիւն տացէ։ Ծանուցեալ էիր ևս զընծայս պատրաստելդ

վան Գրիգորին և յանձնելգ Աստուածա-
տուր աղային, ա. ի յղել Բարւոք է թէ-
պէտ, բայց ի յաճախելոյն անպր քան ղու-
ւորութիւն, զգայշ լինիլն ևս արժան է:
Գրեալ էիր ղՏէր Աւետիսն Թողուլդ վէքիլ
ի Զմիւռին որ խորհրգակցութեամբ Աստուա-
ծատուր աղային վարիցի, և այլն. զայգ
ևս լաւ ևս արարեալ: Եւ ի կողմանէ ար-
դեանցդ որ գրեալ էիր թէ Մարտիրոսին
զայնքան ինչ և աեր Գրիգորին զայնքան
ինչ եաու, ընոցա զավզն յատաջ գրեալ եմք,
բայց զոր գրես թէ Գ՚. ղուռուշ եմ հա-
սուցեալ Թօխաթու վէքիլ մահտեսի Ցարու
Թիւնին, զեռ նա մեզ բան չէ գրեալ: Այլ
մեք յատաջագոյն նմա գրեալ եմք, որպէս
և ի գեկտեմբերի Ծ՚. ծանուցաք քեզ.
այնմ ևս գեռ պատասխանի չեմք առեալ
ի նմանէ. և զգիւղի եկեղեցւոյ շուրջառն
ևս հասուցաք նոցա, և զգինան որ է Բ՚ՃԽՊ
ղուռուշ և Ի՚. փարայ, առաք ինոցունց, ի կող-
մանէ արդեանց քոց հաշուեալ ի վերայ մեր:
Բայց վան այսր զավզ գրելն անգէպ վարկաք.
զի թերևս ի մահտեսի Ցարութիւնէն Գ՚
ղուռշն ևս հասցի. և կամ որ յատաջ ըզ-
ճոթեղէնս եմք խնգրեալ ի քէն՝ յղեսցես,
յայնժամ այնոցիկ և այսր աղագաւ զավզ
գրեսցուք: Այժմ այսու գրուածով ևս
կարես միամիտ լինիլ թէ Բ՚ՃԽՊ ղուռուշ և
Ի՚ փարայն մեզ է հասեալ: Գրեալ էիր ևս
թէ՝ Եճ՚ ղուռուշ եաու Տէր Աւետիքին և
սանատ առի. և խարէն իմ լինէն առնե-
լով ի կողմն սրբոյ Աթոռոյգ գարձուցի՝
փոխանակ պարտուցս, զորոյ զՀաշիւն յե-
տոյ պարզ գրելոց եմ, և այլն: Ընդ և
գրիցես, յայնժամ իմանալոց եմք: Եւ յի-
շատակի արգիւնք ի Զմիւռնոյ քաղաքէն որ
գրեալ էր իբր Ըճ՚ ղուռուշ, զայն ևս ծա-
նեաք: Ծանուցեալ էիր և զոմանց իբր
նշանաւոր ննջեցելոց կատակց և հոգեբաժ-
նից և յիշատակաց խոստման պատմութիւնս.
խոստանալով թէ՝ երբ գարձայց ի քաղա-
քըն և վերջաւորեսցին բանքն, յայնժամ
ազգ առնելոց եմ զորքանն և զորպէսն ե
Թուղթս եմ խնգրելոցս: Առոր գրեմք թէ՝
յորժամ գրիցես գու, յայնժամ և մեք
ըստ ձեռնհասութեան հոգալոց և յղե-
լոց եմք զԹուղթսն: Իսկ ա. Սալալանեան
պարոն Առաքելն և ա. Փալանճիօղլի մա-
տեսի Գրիգորն որ զմի Թուղթ էիր խընդ-
րեալ վասն Բ՚ճ ղուռուշ հոգերաժնից ման-
ուճացի հանգուցեալ Մատթէոսի կնոջն և
դստերն, ահա գրեալ յղեցաք: Վախուց
ասնց ի հոկտեմբերէն ի հոկտեմբեր յղե-
ցաք արդիւնքն և եղեալ խարճն, նաև Ղրըն-
ղու մահտեսի Պաշրթի Ի՚ ղուռուշ ասն
քիրայ բերելն ևս զոր գրեալ էիր, իմա-
ցաք, և շնորհակալ եմք վասն աշխատելոյգ
ղայսոսիկ ի գրելն երկարօրէն. Տէր ասցէ
կարողութիւն և զօրութիւն: Եւ ղլխա-
գոյնն ևս զոր յետոյ գրեսցես որպէս խոս-
տանաս, իմանալոց եմք: Ալսքանս իբրու
պատասխանիք գրեցելոյգ: Ալսուհետև իմա
զվիճոյն մերմէ վասն առուրն, որոյ զաղա-
գաւ ի վերոյ նշանեցաք, յետոյ գրեսցուք:
Քանզի Մօլլագուրսուն գեղջ առուն խան-
գարեցեալ գոլով և բնակիչքն սակաւա-
ւորք լինելով, թէ ի ծածուկ և թէ յայտ-
նի թոյլատուութեամբ գործակալացն տեղւոյս
ի շահարկէն ջուր են տարեալ և չափա-
ւոր ցանք արարեալ: Ցետոյ Զէյնալ բէկն
որ յատաջ սանգուխտար էր, և այժմ քէ-
շիկճիպաշի է, մինչ զայն գիւղի մուլքն էառ
և գինկ ևս շինեաց ի վերոյ ջրոյն մերոյ,
բազմացոյց ղլունակիչն, մինչև ցքսան տուն.
և սկսան ղցանքն յաւելուլ օրըստօրէ, և
զամէնն գրեթէ չալթուկ. վասնորոյ և ի
բազում տեղեաց առուոյն մերոյ պատառեալ
ջուր ասնէին, մինչև յանցեալ տարին պա-
կասեցուցին զջուրն ի յանդաստանաց գեղջս
մերոյ. որով և քանի հող չալթուկի և
բամբակի չորացան: Ապա այսմ ամի ևս
մինչ սկսան չալթուկ ցանել յաճախակի-
քանիցս գործակալք մեր կամեցան արգելուլ,
բայց ոչ անսացինն նոքա: Վասնորոյ եր-
կիցս անգամ գործակալ Ցակոբ վարգա-
պետն և զՄիրզայն առաքեցաք առ խանն և
Թուղթս գրեցաք թէ՝ հրամայ գրել Մօլ-
լագուրսունցիք զիւրեանց առուն հանեն և
ի գետէն ջուր բերեն, և ձեռն բարձցեն ի
յառոյն մերմէ. և խանն թէպէտ ընկալաւ
զբան մեր, և երկիցս մարգ յղեաց տեսա-
նել զՄօլլագուրսունայ առուն թէ կարելի
է հանել, սակայն եկօղքն տեսեալ և գար-
ձեալ՝ ի թելագրութենէ Զէյնալին և այ-
լոց՝ ասացին թէ անկարելի է: Ապա խանն
զՄօլլագուրսունայ քանի ցանքն չալթուս

կն իբր աւերել ետ, և մեզ գրեաց թէ՝ եթէ հնար իցէ առուոյն նոցա հանելոյ, հազար թումանով ես հանել կատմ. բայց հնար չկայ. ուրեմն՝ թող ի մի տեզուղէ յառուոյն ձերոյ ջուր տանին որպէս յառաջն, ւ. չափաւոր ցանք առնելով կէսկինմիշ լիցին, և այլն, նկատեալ մեր թէ՝ այսպիսեաւ ի վտանգարն գնալ բանն, և առուն մեր ելանէ ի ձեռաց մերոց, ելեալ մեք ինքնին գնացաք և հասու եղաք մեր առուոյն որ աւերեցեալ էր. և Մօլլագուրսունայ առուոյն որ հանելն չէր ինչ դժուարին. ապա գնացաք ի տեսութիւն խանին յառաւօտուն. ախունան և այլ բազմութիւն գոլով անդէն, ոչ բացաք զբանն մեր. իսկ ի դառնալն մեր յԱննապատն, զնաղիր հաճի Ջաֆարն յղեալ էր թէ Խալիֆայի քէֆն լաւ չտեսի, ինչ ցաւունի, ասասցէ, ի հոգատացութ։ Այլ մեք գիտելով զանշահութիւն նորա, և մանաւանգ թէ ի սադրելոյ Ջէյնալին էր եկեալ, համառօտիւ բացաք զբանն, և ասացաք թէ քանի մի խօսք ունիմք խօսիլ ընդ խանին, և այլն։ Եւ մինչ խորհէաք թէ արդեօք որով կերպիւ հասկացուցաք զբան մեր՝ խանին, տեսաք թէ յանկարծ ինքն եկն առ մեզ յԱննապատն ի նոյն աւուրն զկնի ճաշուն, և յետ ըմպելեաց և զբաղում մեծարական բանս խօսելոյ առ միմեանս, էհան արտաքոյ զամենայն նստօղն և զծառայսն. և առանձին տիպեաց թէ ինչ ասելիք ունիս, ասա, զի կատարեսցուք։ Իսկ զի ի վաղիւն գնալոց էր ի Գառնի և ի Ճարուր՝ մեծարիլ յերկուց ոմանց, պատասխանեցաք թէ՝ երթ բարեաւ զխրախճանսդ կատարեա և դարձիր. յայնժամ ասացուք. այլ նա առաւել ևս սիրեաց, ասելով թէ՝ տարակուսութիւն է ինալոց ի սրտի իմում, և տրամութեամբ եմ գնալոց, եթէ չասիցեւ, Վանորոյ և մեք օժանդակութեամբ շնորհաց սրբոյ Իմման տեղւոյս՝ մեղմով պատմեցաք զյանդուգն ագահութիւն Մօլլադուրսունցւոց, և զանիրաւաբար զրկանն. և զհաշձալի գիւղականս մերոց նեղին և վնասիլն և զբաղքն, միանգամայն և զիւր դրան մարդկանց խարգախագործութիւնն. և զշահարխին մեր յինիլն՝ անմասն այլոց. և թէ՝ ոչ զանիրաւ ինչ, այլ զիրաւացի դատաստան խնգրեմք, եթէ հատցես զայս վէճ բարի է. և թէ ոչ, թարց այն ջրոյն անդանօր բնակութիւն ոչ լինի, հարկ է ցըրուիլ մեզ և սլլն։ Ի խօսիլ բանիցս այսոցիկ, Ջէյնալն անճարացեալ եմուտ ի ներքս, և զանաց իբր զիրաւացի ինչ խօսիլ ընգգէմ բանից մերոց թէ՝ այն առուն ընդ իմ գիւղն անցանի, և միշտ բաժին ունիմք յայնմանէ. մեր առոյն հնար չգոյ հանելոյ. և այլն։ Վանորոյ մեք հանաք զթուղթն հոգելոյս Ցակոբ կաթուղիկոսին զառեալն ի հօրէ խանին, յորում գրեալ գոյ թէ՝ գեաի կէսն Իւէքիլիսայինն է ըստ թագաւորաց հրամանագրութեան. դարձեալ հանաք և զթուղթն որ յաւուրս լուսահոգի Ղազար կաթողիկոսին առեցեալ ի շահէն թէ՝ մօլլադուրսունցիք բաղչայի ջուր ևս չառնուցուն ի շահարխէն. զոր և Իւրամանու ասխունան և Մէլիք Ցակոբջանն և այլք կընքեալ են։ Զորս իբրև ետես խանն, խանդաղաղեալ ի վերայ թղթոյ հօրն իւրոյ որ ծաղկեցեալ ևս է, էհարց ցՋէյնալն թէ՝ գու ևս թուղթ ունի՞ս, հան. նա զանպիտանս խօսեցաւ։ Իսկ խանն՝ արդար գտեալ զամենայն բանս մեր ըստ թղթոցն, վերջապէս ասաց թէ՝ մօտաբար մարգ կուղարկեմ տեսանել զառուն Մօլլագուրսունայ, եթէ կարելի է հանիլն, կատմ, և թէ ոչ, Ջէյնալն իմ ծառայն է, որիշ մի գեղ կը տամ նմա, և զՄօլլադուրսուն կաւերեմ. անհոգ լեր խալիֆայ։ Մինչև ի մի և կէս ժամ ձգեցան այս խօսակցութիւնքս, և ապա ելեալ գնաց խանն. և ըստ խնդրոյն մերոյ՝ զՄօլլայ Ալու որդի Մահմատ բէկն՝ և զմի ոմն ևս յախտնաէն յղեաց՝ ի գնալ զառուն Մօլլագուրսունայ. և նոքա տեսեալ դարձան և ծանուցին ճշմարտութեամբ թէ՝ դիւրին է հանելն, Վանորոյ թալզայ գրեաց ի վերայ բնակչաց այսմ նահանգիս, և ղսիշեալ Մահմատ բէկն վերակացու կարգեաց, որ եկեալ ի յերիս աւուրս ոչ միայն զՄօլլագուրսունայ առուն, այլ և ըզմերձակայ առուսն ևս հանել տուեալ գարձաւ առ խանն։ Ապա ի հաստատութիւն եղելութեան զկարկաւոր և պահելի թալզայ մի առաք ի խանէն վասն առոյն թէ մեր է, և յիշեալ Մահմատ բէկն խիլայեցաք, և խանն ևս զմեզ և զգործակալսն մեր խիլայեաց. վերջապէս չորրորդ անգամ գնա-

ցեալ ի աեստութիւնն, (ղի անգամ մի ևս ի հացկերոյթ էր կոչեցեալ) շնորհակալ եղաք, դարձաք ի սուրբ Աթոռս։ Այսու ամենայնիւ գիտասջի՛ր.ղի առուն այն եզև մեզ ի նոր գիւտս. և ի յայս վէճ խանն միայն էր որ առ մեզ հայէր, և ոչ ոք։ Վանտորոյ գոհութիւն և փառք Ամենողորմ՝ բարերարին Աստուծոյ՝ որ քաղցրացոյց զսիրտ իշխողին, և ոչ անտես արարեալ զշնխատութիւն հոգելոյս նախնեացն մերոց և մեր, յառաջեցոյց ըստ արդարութեան իւրում այսպիսի զարմանալի կերպիւ։ Գրեցաք երկարապես, ղի ուրախասցիս։ Ազա՛ Մահմատ խանին աղագաւ զոր ինչ վաղագոյն ասէին և գրեցաք քեզ, ոչ եզև այնպէս, այլ ի զօրութեան իւրում՝ կայր. այժմ՝ ևս համարաւ եկն թէ յիւրոցն սպանեցեալ է, և երբեմն հնչի թէ կենդանի է։ Զոր ինչ և սաուգիցեմք զնմանէ, յետոյ գրեսցուք։ Երկիրս կերպիւ ինչ ի հանդարտութեան կայ. և երբքն յայսմ՝ ամի լաւ է, եթէ Աստուած բաշխեսցէ։ Եւ դու ղորպէսածանոյց գիրդ անպակաս առնելով ի մէնջ, ողջ լեր ի Ցէր։ Գրեցաւ ի ՌԽԽ թուոջս և ի մայիսի ԻԵ. ի սուրբ Էջմիածին,

Գարձեալ՝ յետ գրեցման թղթոյս մինչ յաւուրս ինչ ինաց առ մեզ, յորս վասն նորանոր իրաց ի վերայ ժամանելոյ՝ չկարացաք յուղարկել, լուաք զարամական լուր եղմօրորդւոյն քո խղճալի Աստուածատուրի ամուսնոյն վախճանման. որ ոչ սակաւ արամութիւն եղև մեզ, գիտելով զի և դու սիրելիդ ևս ի նժգեհութեանգ մնծապէս արամեցոյց ես։ Այլ զի գործ Աստուծոյ է՝ որ ի ձեռին ունի զշունչ ամենայն կենդանեաց, զի՞նչ կարօղ եմք ասել առ այն, կամք նորա եղիցի օրհնեալ. որ և լուսաւորեսցէ զհոգի հանգուցելոյն, և զձեզ ողջ պահեսցէ և վխիթարեսցէ. և յայլ արամեցուցիչ գեպմանց փրկեսցէ։ Գրեմ՝ սիրելդիդ մի՛ աւելորդաբար արամիլ և ցաւիլ. նկատելով առ թէուեթիւն անցաւոր աշխարհիս՝ որ միշտ այսպէս է։ Այլ գոհացիր զԱստուծոյ և սփոփեաց, և նորին ողորմութեան յանձնեա՛ զնացեալն, զի նա կարօղ է և ևս խնամել զնոսա և առաջադրել զկերպ բարւոք կենցաղավարութեանն։ Կրկին ողջ լեր։ Աւարտեցաւ և յղեցաւ ի Ծունիսի Դ։

Սիրով և օրհնութեամբ բազմաւ ողջոյն տամք ազնիւ սիրելւոյ մերոյ և հաւատարիմ որգւոյն սրբոյ Աթոռոյս Քրիստոսատէր և բարեպաշտ Աստուածատուր Աղային, և ազնուական որգւոցն Ցերամբ ղօրացելոց, և սրբանուէր քահանայից և իշխանաց Ցեղւդուր և իցեն. յանձնելով զամենեսեան ի խնամս Արարչին։

Թուղթ առ Պօլսոյ գործավճար նուիրակ Մինաս վարդապետն, ի պատասխանի ՌՃ թղթոց նորա ի մարտի ԻՒ, և ի յԱպրիլի ԻՀ.գրեցելոց։

Թուղթ առ ի Շուլաւեր զետեղեցեալ եւ Թաղէոս վարդապետին վիճակեալ ժողովուրդն, ի պատասխանի զազմակնիք թղթոյն նոցա ընդ նոյն Թաղէոս վարդապետին գրեցելոյ։

Ցորմէ ժամանեսցէ Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, հանդերձ պատպանողական շնորհիւ Միածնակէզ սրբոյ Ցեղւոյս, ի վերայ սիրելի և հոգևոր որգւոցդ մերոց՝ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս՝ զետեղելոցդ ի Շուլաւէր, և վիճակելոցդ Թագէոսի շնորհունակ վարդապետին սրբանուէր քահանայիցդ, բարեպաշտ Մելիք Գիւլնազարիդ, և միւս Քեաթխուդայից, և համայն ժողովրդեանդ առհասարակ՝ մեծաց և փոքունց, արանց և կանանց, ի Ցէր խնդալ։ (Շնորհք)։

Եւ ընդ ամենառատ օրհնութեանն Աստուածայնոյ՝ ծանուցուաք լիցի սիրելի և հոգևոր որգւոցդ մերոց՝ և հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի բազմակնիք Թուղթ հասարակութեան Քահանայիցդ և ժողովրդեանդ Ձեռամբ Առաջնորդին Ձերոյ Թագէոս խոհեմամիտ վարդապետին էհաս առ մեզ, և իմացաք զդրեալս Ձեր, որք խոստովանելով զՁեզ հարազատ որդիս և սէրունի ժողովուրդ սրբոյ Աթոռոյս, և համարելով թէ անտես իցէք եղեալ ի մէնջ վասն անկարդ եղելութեանցն անցելոց, խնդրեալ էիք ընդունուաք և զհայրական խնամարկութիւն։ Առ որ գիտասջիք.

զի յիրաւի ի բնէ իսկ հարազատ որդիք սրբոյ ընդհանրական Աթոռոյս, և մինչ մաեալ էք ի աչերունի թեմդ սրբոյ Գահիս աչերունի ժողովուրդ էք սմա, և մեք ոչ բնաւ կամիք մերժել զձեզ ի շնորհաց սըրբոյ Աթոռոյս և ի հայրախնամ գթոյ և սիրոյ մերմէ, սակայն դուք ի մերձիլն ձեր առ մեզ, և ի մտանելն ընդ հովանեաւ սըրբոյ գահիս և ևս զհեռաւորութիւն ցուցիք, երևելով ի ձեզ անկարգութեան իրիք՝ ճանզի Թադէոս վարդապետ առաջնորդն ձեր ի վիճակի մերում դոլով թողեալ շնորհատու Մայր Աթոռս ձեր և զմեզ ընդդէմ կանոնի սրբոյ եկեղեցւոյ՝ գնացեալ յայլմէ վիճակաւորէ առնելով զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան, յայնպիսէ օարութիւն երևեցոյց առ մեզ. և ձեր հաճելով ընդ այն այսքան ատրիս, դուք ևս իրրու խորդ երևեցայք՝ Վասնորոյ և մեք սրտաճայ եզեալ ի ձէնջ կերպիւ իւիք բարձի Թոզի արարաք, Թէև ներոզաբար երկայնամտեալ զդառնութիւն ինչ ոչ ի գործ արկաք՝ Ապա յանցելում ամին անդան ուրեմն դիմեաց առ սուրբ Աթոռս Թադէոս վարդապետն, բայց յաղագս բազմամեայ խորհարարոյութեան և հեռի ճանապարհին ոչ ընկալեալ մեր զնա իսկ և իսկ դարձուցաք յետս, առ ի խրատ և յառաւել ևս զգաստութիւն ինքեանս՝ Իսկ այժմ մինչ կրկին եկն զղջմամբ և հնազանդութեամբ առընկալաք զնա հայրական սիրով և խնամով իբրև զհարազատ զաւակ սրբոյ Աթոռոյ և սիրելի որդի մեր, հաճութեամբ հաստատեցաք զնա օրինաւոր եպիսկոպոս, և հաստատեցաք յառաջնորդութիւն օրհնեալ ժողովրդեանդ և խիլայազարդեցաք փառաւորութեամբ. և այսպէս սիրով և խաղաղութեամբ վերադարձուցաք զայս օրհնաձիր նամակ ևս դրելով առ ձեզ. որոյ ի ժամանելն՝ հանգիցէ ի վերայ ձեր օրհնութիւն Աստուածային և շնորհք սրբոյ Իջմանանեզուայն նորին. զնեղութիւնս և զվշտակրութիւնս ձեր յապաշխարանս համարեսցէ Ցէր և զփոխարէնն պարգևեսցէ զառաւելապատիկ մխիթարութիւն հանդստութեամբ կենաց և յաջողատածովք գործոց՝ մանաւանդ աճեցուսցէ հաւատով և զարդարեսցէ բարեգործութեամբ. ազատս կացուսցէ ի վտանգից, և պահեսցէ ընդ թևօք խնամոց և գթութեանց իւրոց հանապազ։ Արդ պատուիրեմք սիրելի որդւոցդ մերոց, զի այսուհետև ի բաց մերկացեալ զբարս խորդութեան և օարութեան կացջիք ձեռասլիք ի կատարեալ սէր և ի հարազատութեան սրբոյ Աթոռոյս Մօրս ձերոյ լուսածնի, և զթադէոս շնորհատու վարդապետդ և զարհի եպիսկոպոսդ՝ սիրելի և հաճեցեալ որդի մեր գիտելով, առաւել քան զառաջինն սիրով և պատուով ընկալջիք. և որդիական խնամարհութեամբ հնազանդ և հպատակ դմա. և ամենից բարւոք և օգտաւոր հրամանացն ունկնդիր լինիջիք և հանգուսջիք զսիրտ դորա, զի խնդութեամբ հովուեսցէ զձեզ հոգևորապէս։ Եւ զհասս և զիրաւունս ձեր հաստատսջիք դմա, որպէս միշտ ցայժմ արարեալ էք և գիտէք, Իսկ և զայս գիտասջիք սիրելի և հոգևոր որդիք մեր. զի ըստ որում ի թեմս սրբոյ Աթոռոյս կալք բնակեալք, լինիլ սմա իբրև զսեպհական ժողովուրդ որպէս և դրեալ էիք, հարկէ ձեզ զհոգևոր պատուս ինչ մատուցանել սրբոյ գահիս, և արժանաւորապէս ժառանգել զշնորհս սորին։ Վասնորոյ աստանօր խօսեցաք ընդ Առաջնորդին ձերոյ Թադէոս խոհեմաշատ վարդապետին, և զձեզ դրեմք, զի ըստ ամէ ըստ գոյի և կարողութեան ձերում զարդիւնս ինչ Թէ յերկաթեղինաց, Թէ ի փայտեղինաց, և Թէ յայլ իրաց որք ի սրտից ձերոց բղխիցին ժողովեալ յղիցէք ի սուրբ Աթոռս, և մեք շնորհակալութեամբ զօրհնութեան Թուղթ գրեսցուք առ ձեզ ի յուրախութիւն հոգևորապէս։ Եւ զայլ երկարապէսն ի յԱռաջնորդէն ձերմէ և սիրելի որդւոյդ մերմէ ի Թադէոս խոհեմաշատ վարդապետէդ իմանալոց էք։ Որք և լինիջիք օրհնեալք ի Ցէր, և յանձնեցեալք ի պահպանութիւն նորին. Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԽՒ Թուականի և ի հոկտեմբերի. առ գրան բարձրագահ մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի։

Թուղթ յիզմիր առ Մարգար աղայն Երոյեան, առ մահտեսի Կարապետն Չելեկեան, առ պարոն Երեմիայն Վիրապեան

և առ մահտեսի Յովհաննէսն Մալտիրոսեան, վասն իրաց ի Քրիստոս հանդուցեալ Իսահակայ վարդապետին։


Կոնդակ ի վերայ Դիրջանու, րնդ նորին Առաջնորդ Աբրահամ վարդապետին. որ յաղթամարայ էր առեալ զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան, և ապօրինաբար կայր անդ ի վիճակին սրբոյ Աթոռոյս, բայց այժմ դիմեաց ի սուրբ աթոռս՝ ցուցանելով զհպատակութիւն։ Եւ սրբազանն հաստատեաց զեպիսկոպոսութիւն նորա. տալով և զպատուէրս, հրաժարիլոյ յոմանց անկարդ արարմանց։

Կոնդակ ի վերայ Երնջակու սուրբ Կարապետի վանից և թեմից ի պատասխանի բազմակնիր թղթոյն նոցա, և առ ի վկայութիւն եպիսկոպոսութեան Առաջնորդին նոցա՝ Կարապետ ծերունազարդ վարդապետին։

Թուղթ ի հաղդատ առ պ. Միքայէլն Տէր Մինասեան, րնդ հառայու և Հնդկաց թղթոցն քանեաց։

Թուղթ առ Պօլսեցի ջաւահիրճի Մերոր Ամիրայն ի պատասխանի թղթոյն ի Կարնոյ դրեցելոյ։

Թուղթ ի Կարին առ Հաճիրաբայն, մխիթարութիւն վասն ձախորդութեանցն, և համոզումն ի սրտնեղութենէն և յորդոր ի սէր։



5



Ուղի բանադրանաց ի Ղազախու Կողբ գիւղն ատ Վէրան քովխէն եւ որդին իւր Եարալին. եւ ատ Բօզինի եղբայր Յովհաննէսն, որոց միջի չարաչար չըհաս ամուսնութիւն էր եղեալ։

Յորմէ ժամանեցաք թուղթ անիծից և բանադրանաց, գառնութեան և հոգևոր կապանաց, ի վերայ յանդուգն յանցաւոր էիք Վէրան քովխիդ, և անառակ պոռնկեալ որդւոյն քո Եարալի կոչեցելոյ, և չարասէր էիք Յովհաննէս էնամուսն ձերոյ, և էիք երիցուն որ թագնաբար զսևապսակու. թիւն չհասիգ արարեալ էն Գիտասջիք ով որդիք կորստեան. զի դուք մինչ հայք էք և հաւատացեալք Քրիստոսի, պարտիք Հայաստանեայցս սրբոյ եկեզեցւոյ աւանգութեանց և օրինաց, և սրբազան Հայրապետացն կանոնաց հնազանդիլ և յօրինազանցութենէ և յանկարգութեանց զգուշանալ։ Ապա զի՛նչ անառակութիւն և կանոնաքակութիւն է՝ զոր լսեմք զգարշելութացդ. որ էիք Վէրան քովխիդ բեռորդին առեալ գոլով ի կնութիւն զդուստրն Ջազինենց Բօզուն, զնորին միւս դուստրն ևս աճեալ ես ի կնութիւն որդւոյն քո վաշտուէր Եարալի անզգամին և Բօզու եղբայր էիք Յովհաննէսն ևս կամակցեալ է ձեզ ո՛վ դատապարտելիք, մինչ էիմացո՛ք որ այդ չարաչար չէիս Ե. ո՞չ ապաքէն ձեր Առաջնորդ Դաւիթ վարդապետն զգուշացուցեալ է զձեզ սաստիւ թէ ապօրինաւոր է, մի առնէք. ընդէ՞ր ո՛չ ունկնդիր լինէիք նմա և զգուշանայիք. քան թէ յամառեալ ի չար կամս ձեր արհամարհեցիք զօրէնս և զկանոնս, և գիտելով իսկ թէ անառակութիւն է, գազատագոզի սևապսակ առնել եաուք, որ էիք քահանայն ևս ո՛չ ի յայտ գայ։ Արդ ո. րովհետև գուք անհնազանդ դատաեցայք սահմանաց սրբոյ եկեզեցւոյ և կանոնաց սրբազանից Հայրապետացն, և գայթակղուեցան պատճառ երևեցայք բազմաց, վասն որոյ և մեզ հարկէ ըստ պահանջման իրաւանց և արդարութեան դատապարտել զձեզ և հերքել ի շնորհաց սրբոյ եկեզեցւոյ։ Արդ՝ բարձու իշխանութեամբ մերով Հայրապետականաւ ի ձեռն այսր թղթոյ բանագրեցաք զէիք Վէրանդ և զպոռնկեալ որդին քո լկտի Եարալին, և զգործունեայն չարութեանց զէիք Յովհաննէսն և զևապսակ առնօզ կարգազեղծ էերէցն։ Եւ մերժեցաք ի սուրբ եկեզեցւոյ, և կապեցաք հոգևոր կապանօք ի յերկինս և ի յերկրի։ Նզովեալ և անիծեալ էք դուք, և չունիք արժանաւորութիւն ի սուրբ եկեզեցի մտանել և խառնիլ ի հօտս Քրիստոսի. և որք կցորդին ընդ չարագործ պատժապարտիցդ, նոքա ևս մանակից են լինելոց ձերումդ պատժոց։ Այս բանք անիծից և կապանաց ճնասցեն ի վերայ անզգամ օրինազանցիցդ մինչև զղջացեալ ձեռն բարձիցէք ի յանառակ գործոյդ և երես ի քարշ գայցէք ի սուրբ Աթոռս։ Բայց եթէ յամառեալ մնայցէք, ոչ էք զերծանելոց ի

պատուհասից բարկութեան։ Գրեցաւ ի ՌՄԽԹ. Թուղթս և ի փետր. ի սարսափելի Աթոռս սուրբ Էջմիածին։

Թուղթ ի Կարին առ Գօրգեան մահտեսի Յաչատուրն եւ մահտեսի Սերոբն· ի պատասխանի թղթոյն նոցա, եւ պատուէր թուղթ առնուլ անտի եւ յղել վասն տպագրութեան։

Եւ ընդ սիրոյ... և այլն։

Եւ արդ՝ զայս բան ևս հարկաւորեցաք գրել սիրելեացդ՝ զի մինչ ձեռնարկելոց էաք ի տպագրութիւն Մաշտոցին, խորհէաք մեծ թղթով տպագրել, և ի վերայ ունեցելոյն մերոյ՝ քանի րեռն ևս ի Պօլսոյ խնգրեցաք, որոյ աղագաւ և գրեցաք յայդր պարոն Հայրապետին՝ որ մուզայէթ լինիցիք ի Տրապիզոնու րերել տալ։ Բայց մինչ ձեռնարկաք տպագրել այն մեծ թղթովն, փորձեցաք որ՝ այնու շատ հասս է լինելոց գիրքն, և գործածողացն անախորժելի. վասն որոյ այժմ գրեցաք ի Պօլիս՝ որ թէ առեալ են շատ կամ քիչ, ընգունելի է, և թէ չիցեն առեալ, րնաւ ոչ ատցեն։ Զի այն հասս թուղթն այժմ այս գործածունեութեանս ոչ է պիտոյ։ Այլ փոքր տեսակ թուղթ է պիտոյ, յորմէ քանի էօզմայ առ մեզ գտանիւր և Յերևան ևս որոնեալ՝ Աւետիսի և այլոց մօտ երկու էօզմայից չափ թուղթ գտաք և առաք, որ մեր ուղած թուղթն էր. և ասացին թէ Յարզրում քանի տեղ կայ, Շահարպուլանտրանենց մօտն, Ղօնտաղճիօղլենց մօտն, և Ղուկաս աղայի մօտն. յորմէ և ինքեանք առեալ են, եօզմայն Զ· ղուռուշ ծ փարայով։ Վասնորոյ ահա պարոն Հայրապետին գրեցաք, և ձեզ սիրելեացգ գրեմք հարկիւ, զի այն յիշեալ մարդկանց հետ խօսիք, և ի նոյն սպիտակ և րարակ լաւ թղթոյն քսան էօզմայ առջի՛ք՝ և թէ այլ որքան գտանիցի, և որչափ գնով տայցեն, մեզ գրեալ ծանուսջիք. և զքսան էօզմայն ղոր առնուցուք, հաւատարիմ քիրաճոց յանձնեսջիք. և պատուիրեսջիք, որ ի ջրոյ զգուշանալով ամրողջ ի սուրբ Աթոռս և առ մեզ հասուցէ, որոյ աղագաւ յոյժ շնորհակալ լինելոց եմք զիսկապէս սիրելեացդ։ Եւ թէ այլ պիտոյասցի յայն Թղթոյն, դարձեալ գրելոց եմք ձեզ առնուլ և յղել։ Զայսքանս գիտելով այժմ, և ի ճշմարիտ սիրոյ և ի բարեկամութենէ անպակաս ծնալով. ողջ լերուք ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԽԹ թուղթս և ի մարտի. ի Յանտպատս մեր որ Յերևան քաղաքի։

Թուղթ առ Հնդստանու նուիրակ Եփրեմ վարդապետն, որ ելեալ ի Բասրա, և այժմ ուր լինելն անյայտ մեզ։

Թուղթ ի Գաղատիա առ իշխանն ընգ նուիրակ Գէորգ վարդապետին, վասն նորա յանձնարարութիւն, և ի պատասխանի վաղապէս դրեալ թղթոյն նորա։

Թուղթ ի Թօխաթ առ մահտեսի Նիկողայոսն մահտեսի Սարգսեան յաղագս ծմռան սեղանատանն մերոյ վերին եւ մեծ մասին նորոգութեան, եթէ հաճի՞ցի՞ ստանալ ի յիշատակ իւր։

Եւ ընգ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտասջիր ստոյգ սիրելիգ մեր՝ և բարեխորհ որգի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ի ՌՄԽԸ թուղթս մերում յօգ. ի Գ. գրեալ թուղթն քո էհաս առ մեզ ի նոյն տարւոյ հոկտ. ԻԹ, և իմացաք զփոքրիկ ամանաթին առ քեզ հասանիլն, և միամտեցաք։ Բայց ոչ յայղողեցաւ մեզ շուտով առնել ղգարձն Թղթոյդ որք ունէաք և ղՏարկաւոր գրելիս առ քեզ։ Քանզի ըստ որում բազմիցս բանիւ և գրով խնդրեցեր շինեցուցանել ղերևելի շինուած ինչ ի սուրբ Աթոռոջս ի յիշատակ քո, մեք ևս այնպէս շինելի ինչ ոչ գտեալ որ ի հիմանց շինեսցի։ Տեսաք որ ձմռան սեղանատան վերին և մեծ մասն խախտեցեալ էր ընգ որմոյն և ընգ ոմանց թաղիցն, և ընգ պատուհանաց լուսամտից, և յաղագս փոքր և անյարմար գոլոյ լուսամտիցն, այնքան մուրճն էր մէջն, մինչ զի ի ճաշու ժամուն ճրագաւ լինէր Տաց ուտելն Միաբանից։ Եւ թէպէտ ի ներքին

կողմանէ Դ. կամար կցորդեցաք ի յիշատակ կեսարացի մահտեսի Յովհաննէս Ֆամրային, և զնոցին լուսամուտն յարմարապէս շինեցուցաք, սակայն պնոքիւք ոչ բաւականացան տեղիք հին վեց կամարացն ևս լուսաւորիլ։ Ապա առ.հարկին պահանջելոյ ի ԻՍՆԱ թուին զվերին հին խախտեալ ամբարանոցն որ ի վերայ նորա կայր, իսպառ քակել եռուք և վերացուցաք. ապա և զառաստաղ սեղանատանն րացեալ ի վերուստ՝ նկատեցաք, և նախ զի կաթուղիկոսարանի վերայի Թաղն խախտեալ էր, զայն քակեցաք և ի նորոյ շինել եռուք, նոյնպէս և զլուսամուտսըն քակեցաք, և ընդարձակեալ նորապէս Թազ տալ եռուք. և զհարաւային որմանն արտաքին երեսն տաշեալ քարամրք բարձրացուցաք ծագէ ի ծագ. ընդ որս և զդուռն կամարակապ և Թաղով, ընդ որ ի Ղազարապատէն մտանի ի ներքին պարիսպ սրբոյ Աթոռոյս։ Եւ ի նոյն որմն ի վերայ միջին լուսամտին եդաք զմարմարիոնեայ արձանն մի փակեալ ի մէջ քանդակադործ քարանց հանդէպ Ղազարապատի դրանն ընդ որ մտանողքն ամենեքեան տեսանեն զայն արձանն։ Իսկ վասն ապահով մնալոյ սեղանատանն ի կողմանէ անձրևոյ, շինել եռուք ի վերայ նորա և կողման շինուածոցն Գ. մեծ օդայ և Գ. փոքր օդայ. երեսքն դէպ ի մէջն Ղազարապատին։ Արդ՝ այս ամենայն շինուածոց վերայ Ռ.Ի զուռուշէն աւելի խարճ գնաց Թող զկերլիհն։ Այլ սիրելիդ մեր Ռ. զուռուշ ես խոստացեալ. և մեք հաճելոց եմք վասն քաղցր խաթեր քո։ Ապա այս շինուածոց հարկաւորութիւնն և վայելչութիւնն ի դրարերէս և յայլ եկողաց և դարձողաց իմացեալ, եթէ բոլորով սրտիւ յօժարիցիս տալ զիուտացեալդ քո զԱՒ զուռուշն, դրեսցես մեզ, ղի և մեք զօրինակ յիշատակարանին քո և քոյնոցն որպէս դրեցուցեալ եմք ի մէջ փոքր ամբարանոցին, նոյնպէս և ի սոյն յիշեալ արձանին փորագրել տացուք. իսկ Թէ չկամիցիս, բռնադատութիւն ոչ դոյ. ըստ կամաց սիրելւոյդ լիցի. և մեք պլոց խընդրողաց արասցուք յիշատակ։ Բայց ղի նախապէս սիրելիդ ես խնդրեալ, վասնորոյ յառաջ քեզ ազդ արարաք. և պարտիս շուտով դրել զպատասխանի Թղթոյս։ Որ և ի սիրոյ և ի հաւատարմութենէ աննուազ ճաչակով, ողջ լեր ի Ցէր և յանձնեցեալ ի խնամս նորին, հանդերձ ամենայն քոյոցնովքդ, և շնորհք սրբոյ Գահիս եղիցի ընդ ձեզ միշտ. Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԽԳ. Թուոջս Մրուժ և ի Մայիսի ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ ի Թօխաթ առ Թումաջանն և Անտօնն վասն Եսայի վարդապետի րոյր Ե. Լմարին սաստել անիրաւ ոսոխի նորին, որ վնաս հասուցանէր խղճալւոյն. իսկ նախապէս վասն Ուրուչջուղցի մահտեսի Ցարութիւնի որդի պ. Գասպարին՝ որ գործակալ կարգեցաւ ի տեղի հօրն, յանձնարարութիւն։

Թուղթ ի Հաշտարխան առ Գրիգոր վարդապետն սպասաւոր Յովսէփ արք եպիսկոպոսին։

Թուղթ ի Նոր Նախիջևան առ սրբոյ Գահիս գանձապետ պ. Մկրտիչն մահտեսի Պետրոսեան, շնորհակալութիւն վասն յղդեալ արդեանցն։

Թուղթ առ Մշեցիսն ի պատասխանի Թղթոյ նոցա յաղագս առաջնորդութեան Անտօն վարդապետին ի վերայ սուրբ Աղբիւրկայ վանիցն և Թեմից նորին։

Թուղթ յՀետրէնէ առ Ռամեցի մահտեսի պարոն Գէորգն, ի պատասխանի Թղթոյն զրեցելոյ ընդ ուխտաւոր տիրացու Պետրոսին, վասն Միրասի քանին։

...Կողմունքս ամենայն ի նեղութեանց ապահով չեն, և Թուխ Թէ նոքա ևս սպասեն որ յուխտաւորաց գալոյ ժամանակին դայցեն։ Իսկ մեզ ևս յայսմ միջոցի բնաւ հանգստութիւն ոչ դոյր վասն վրդովմանն երկրիս, զի կամ սայի յղէաք, և կամ այլով կերպիւն բերել տայաք զնոսա, Քանզի աղա Մահմատ խանն շահ կոչեցեալ ըզ Սուլէյմանն խան ոմն յիւրոցն Սարտար առնուամբ յղեալ է դէպ ի Թաւրէզ, զորմէ համբաւքն Թէ գալոց է ի վերայ երկրիս և վրաց արքայն ևս զբաղում զօրս է պատրաստեալ և հռչակ ելանէր ի նմանէ

թէ՝ և նա յառնելոց է ի վերայ իշխողին երկրիս. ըստ որում սա ի նմանէ երես է դարձուցեալ, և միւսոյն ևս ոչ կատարելապէս հնազանդութիւն ցուցանէ։ Վասն որոյ և սա յերկուց կոզմանցն ևս կասկածելով, սկսաւ պատրաստութիւն տեսանել ամրանալոյ ի բերդն, և զերկրիս քանակիչն ևս ժողովել ստ. իւր, և զմեզ ևս հրաւիրեաց՝ երևելապէս ի խորհրդակցութիւն, և անեղեալ՝ իրր առ ի պահել անդանօր։ Եւ մինչ անդ յերևան էաք, ի շահ կոչեցելոյն և ի սարդարէն մարդն եկն թըղթովքն նոցա, և միամտութեան բանս խոսեցաւ թէ ի նոցունց գալ և աւերել ոչ դոյ այժմ։ Եւ սա զմարդ և զընծայ յղեաց Սարտարին։ Եւ առ վրաց Արքայն ևս երկիցս մարդ յղեաց, և Թուղթ գրեաց խոստանալով այսուհետև զհարկն տալ, և երկրացիքն մանսար գրեցին ըստ նոյն մտացն Մեք ևս զվարդապետ մի յղեցաք և Թուղթ գրեցաք զիջանել ի բարկութենէն, և ոչ յառնել ի վերայ երկրիս։ Եւ յետ ի ա ւուր ձեալոյ մեր անդ, գարձաք ի սուրբ Աթոռս։ Զկատարած իրացն Աստուած առ բարին տարցէ։ Արդ՝ այսպէս վրդովեալ և նեղեալ դոլով անձեռնհաս էաք կրկին գրել կամ մարդ յղել ի յԱդուլիս վասն կատարման խնդրոյն ձերոյ։ Բայց ակն ունիմք որ յառաջիկայ աւուրքս, այն վարիս Թուման կամ որդին, որ Տէր կարապետին գայցեն։ Եւ թէ այլ ևս յամեսցեն, հոդս առնելոց եմք, անտարակոյս լեր։ Միայն թէ Աստուած խաղաղութիւն շնորհեսցէ երկրացս։ Այլև ըստ բարեպաշտութեանդ և ստոյգ սիրոյդ՝ որ յղեալ էիր գծ մսրի զերմահպուպ ոսկի իբր աջահամբոյր, ընկալաք սիրով, և շնորհակաք եմք զբաբեպաշտ սիրելոյդ։ Զոր ընկալցի Տէր ի հաճոյս իւր, և զիոխարէնն բազմապատկապէս հատուսցէ ձեզ. օրհնելով և զիոխարէնն բազմապատկապէս հատուսցէ ձեզ. օրհնելով և զօրացուցանելով զձեզ, և զամենայն բանս և զդործս ձեր առ ի բարին յաջողելով։ Եւ զհոգիս ննջեցելոց ձերոց լուսաւորեսցէ։ Եւ զայլ ամենայն որպիսութիւնս մեր և սրբոյ Աթոռոյս և երկրիս ի դրաբեր ուշիմամիտ սիրացու Պետրոսէդ իմացեալ՝ ողջ լերուք ի Տէր և յանձնեցեալք ի խնամս մարդասիրուն Թեան նորին. Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԽԳ թուականին և ի յունիսի ԻԳ. ի լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածնին։

Սիրով ողջոյն և օրհնութիւն տամք հաւատարմին ձերոյ և հոգևոր որդւոյն մերոյ Տէրմէք զօրացեալ Խօջայ Գալուստին, և այլ ձերայնոցն ամենեցուն յանձնելով ի բարեգթութիւնս Տեառն Աստուծոյ։

Թուղթ ի մեծն Պօլիս առ մահտեսի Նիկողայոս աղայն Եղիազալեան ի պատասխանի երից թղթոց նորա ի սոյն տարւոյս փետր. ԻԷ. և ի մարտի Ը. և ի ԻԹ. գրեցելոց։

Թուղթ առ Ջուղայեցի մահտեսի Գալստանն ի մեծն Պօլիս ի պատասխանի թըղթոյն նորա զոր գրեալ էր յաղագս ի Բասրայու առ ինքն հասեալ փօլիցային, ի Սարգիս Քալանթարի որդի Վարգանէն՝ յարղեանց նուիրակին։

Թուղթ ի մեծն Պօլիս առ մահտեսի Եսայի ոմն վասն տրոցն յղելոց ընդ ուխտաւոր Խօջայ Գաբրիէլին։

Թուղթ առ Թօխաթու ս. Մինաս եկեղեցւոյ գանձապետն մեր մահտեսի Յովակիմն շնորհակալութիւն վասն հաւատարմութեան։

Թուղթ առ մեծին Պօլսոյ Պատրիարգ Զաքարիա վարդապետն ի պատասխանի թղթոյն զոր գրեալ էր ընդ վէքիլին իւրոյ՝ Պետրոս վարդապետին, ձեռնադրել զնա եպիսկոպոս։

Ցորմէ ճշմարիտ սիրով և կարօտիւ եղբայրականաւ, և Միածնաէջ սրբոյ տեղւոյս հոդեղուարճ շնորհիւն հանդիպեսցի սուրբ և միարար ողջոյնն Քրիստոսաձիր՝ սիրելի եղբօրդ իմոյ յարդելւոյ՝ հաւատարիմ բազմաշխատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Տեառնդ Զաքարիայ վսեմամիտ արքեպիսկոպոսի և վայելչապատիւ Պատրիարքի բազմաժողով մեծի Մայրաքաղաքիդ Կոստանդնու-

պօլսոյ։ Որում՝ և գիտութիւն լիցի։ Զի թուղթ յարգութեան քո ի մայիսի ամսոյ ԻԹ գրեցեալն էհաս առ մեզ ի սկիզբն յունիսի ձեռամբ Հոգևոր որգւոյն քո և մերոյ՝ հաւատարիմ՝ վէքիլ Պետրոս համեստարարոյ վարգապետին։ Որով նախապէս իմացեալ ղողջունէ պատուական անձինդ, և զանհարգահ սիրոյդ հաւատարութենէ ստացաք ղառատ մխիթարութիւն ի վերայ նեղսակրութեանց մերոց՝ և ուրախ եղաք ուրախութեամբ մեծաւ ի Տէր։ Եւ երկրորդ ծանեաք զինգիրն րարի որ յաղագս Պետրոս ղգաստամիտ վարդապետին՝ ձեռնադրել զնա յեպիսկոպոս ըստ արժանաւորութեան։ Ուստի՝ հայրական սիրով առ ընկալաք զնա ի գութ և խնամս իրրև զորգի սիրելի, առ մնևևին անզանազան գիտելով զքոյս ի մերոց։ Եւ թէպէտ ի քանիս աւուրս անձեռնհաս գտանեցաք յաղագս սաստիկ վըգովման և շփոթութեան երկրիս և վասն նորահերպ գառնութեանց ի վերայ մեր հասելոց, սակայն ի փոքր մի հանգարտիլ մրրկացն, ի յերկրորդում կիւրակէին ղկնի Վարգավառին յաջողմամբ շնորհարաշխ ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ ձեռնագրեցաք զնա եպիսկոպոս, և յաւուրս ինչ ևս պահեալ ըստ յօժարութեան իւրոյ, ապա այժմ սիրով և խաղաղութեամբ ուղևորեցաք հաւատարիմ ուղեկցօք ի Բայազիտ, անտի անվտանգ ժամանել Աստուծով յայսդր։ Որում շնորհաւոր եղիցի սուրբ Աստիճանն իւր և բարեաւ վայելեսցէ ի սուրբ և յարատև վարս՝ ի հաճոյս բարեսէր կամաց Տեառն։ Եւ նոյն ամենազօրն Տէր յաւելցէ՝ զաւուրս յաւուրս պատուականի եղբօրդ՝ յաւելուլ և ևս զբաղում որդիս ի փառս շնորհաց, ի պէս սպասաւորութեան սրբոյ եկեղեցւոյ ի բարի յիշատակս յարգութեանդ, ե. ի հոգևոր մխիթարութիւն ազգիս մերոյ խղճալւոյ։ Իսկ ի յունիսի ԻԹ. որ թուղթ գրեցաք առ յարգութիւնդ իբր ի փոխագարձ առաջնոյ թղթոյդ և կարի նեղեալ և անհանգիստ գոլով վասն սաստիկ վըգովմանցն՝ չկարացաք ամենայն գրուածոցն զպատասխանի առնել խոստանալով զի յետոյ գրիցեմք, այժմ ահա ի ժամ ջանալս մեր փոյթ կալաք գրել, և հետևարար ունիմք ծանուցանել նաև ղաղէտից երկրիս և վշտալի կրից մերոց։ Եւ նախ՝ զի վասն Ուռումէլու նուիրակ Գրիգոր վարգապետին և Իզմիրու առաջնորդ Գաւնիէլ վարգապետին սիրով խոստացեալ էիր օգնական և օժանդակ լինիլ նոցա յամենայն հարկաւորութիւնս գործոց իւրեանց։ Եւ Գրիգոր վարգապետն գրեալ էր մեզ թէ որպէս մեծաւ սիրով և խնամով ընկալեալ էիր զինքն և շահեալ ըստ ամենայնի և յուսադրութեամբ ուղևորեալ ի վիճակն. առ այնոսիկ լիապէս շնորհակալ եմք զբարերշնորհ նզբօրէդ՝ որում ընդ ամենայն լաւութեանցդ և օգտարարութեանցդ ամենաբարերարն Աստուած լիցի փոխահատոյց առաւելապէս։

Եւ յաղագս Ախալցխայու Ֆէրմանին զոր առաքեալ էիր, գոհունակ եմք. բայց տակաւին մեր ցաւոքն պաշարեալ, չունիմք ձեռնհասութիւն, այլ խորհիմք ղի դէպ ի յաշունն պատեհ վարդապետիւ միով առաքիցեմք՝ որպէս և յառաջ գրեալ եմք։ Զսուրբ կարապետի վանի իրացն աղագաւ հոգացողութենդ և ևս որ գրեալ էիր, զՅաղկոր հանճարուն ակ վարգապետն առաքելդ յառաջնորդութիւն և զՑովհաննէս վարգապետն վէքիլ նմա և զպարտուց հատուցումն այնպէս անօրինելդ. և զատահական յաքսորս վարելդ՝ և դարձեալ արտահանելդ, զամենն իմացեալ յոյժ բարւոք վարկաք, և սրտադիւր եղաք։ Տացէ՝ Տէր զի անփոփոխ կացցեն կարգագրութիւնքն. և սրբոյ տանն հաստատութիւն և պայծառութիւն լիցի։ Եւ ի մէնջ առ Յակոբ վարդապետն որչափ կարելի է շահելն և մխիթարելն՝ ոչ եմք խնայելոց, որպէս և ի գալոյն հետէ ի կարին և ի սուրբ վանքն մինչև ցայժմ երթևեկութիւն թղթոց. և սէր ցուցանելն մեր այնպէս է։ Եւ ևս զգոյնոյ տեղութեան դեսպանի ի հիւսիս գնալն և զհիւսիսայնոյն դեսպանի յայդր գալն և խաղաղութիւն լինիլն ընդ մէջ երկուցն տէրութեանց իմացեալ գոհացաք զԱստուծոյ, և հայցեմք կայուն լինիլ խաղաղութեան ի շինութիւն աշխարհաց և յանդորրութիւն բազմավշտակիր աղղի մերոյ։ Ծանեաք ևս ի թղթոյդ և ի նուիրակ վարդապետէն զարապկերցի մահտեսի Գաբրիէլի յամառիլն ի յանիրաւ վէճն

իւր, և զպատժիլն ի դատողութենէ ձերմէ իրաւամբ. և ապա զղջալն և զերծանիլն ի պատժոյն, և լռեալ գոլն այժմ ի յանկարգ խօսիցն, որոյ աղագաւ ևս յայժ շնորհակալ եմք զցաւակից եղբայրութենէ քումմէ։ Դարձեալ վասն հիւանդանոցին շինութեան ի յայցելութիւն անտերունչ հիւանդաց և աղքատաց որ ծանուցեալ էիր. ուրախութիւն մեծ եղև մեզ ըստ որում կարի իւն հաճելի է Աստուծոյ և մշտենջենաւոր առիթ յիշատակի յարգելոյդ, ընշան բարեկարգութեան օրհնեալ ազգի մերոյ, Իսկ ընդ ուրախալի համրաւոյն նորոգման եկեղեցեաց, որ զԱրուսեայս եկեղեցւոյ տյտմական անցն ի դժնեայ սրիկայիցն ծանուցեալ էիր, յոյժ տրտմեցաք և ցաւեցաք։ Այլ դի մեծամեծք տեղւոյն և քաղքիդ քաղցրութեամբ լուեն ձեզ, և որպէս պետրոս վարդապետն պատմեաց՝ կամեցեալ են վրէժխնդրութիւն առնել յանդգնելոցն յուսամք որ Աստուծով կրկին շինեսցի եկեղեցին այն ի միխթարութիւն մերայնոցն որք անդ, և ակն ունիմք անյապաղ լսել զլուր շինութեան։ Եկեսցուք այսուհետև ի պատմութիւնս վշտալի անցից երկրիս և դառն կրից մերոց։ Զոր ինչ միւնչև ի յունիսի ԺԹ. անցքն էին, յայնժամ գրեցաք ի կարճոյ, զգալն սարտարին ի թարուէզ, և ղվրացւոյն ևս սպառնալն առ սուսա. և վրդովիլն երկրիս, և սոցա կրկին մարդ և թուղթ առաքելն առ վրացին, և այլն։ Իսկ ապա վրացին յանդիմանեալ էր զնոսա վասըն դատարկ դնալոյն ոչ հաւատալով խոստմանցն վասն բազմից ստելոյն սոցա ըզպայմանս իւրեանց. և ասացեալ էր. դուք զտալիսն ձեր տուք, և ես թշնամեացն ձերոց պատասխանի տաց։ Սոքա ևս զդրամս ինչ յղեցին, և խոստացան զայլն ևս յետոյ տալ և խնդրեցին առաքել զմի ոք սիրոցն քանի հարիւրովք յԵրևան ի լուր թշնամեացն։ Բայց յաւուրսն յայնոսիկ սարտարն յատաջ եկն ի նախչուան՝ հանդերձ խօ,եայ իշխողաւն և յորդորմամբ նորին իսկ։ Զոր լուեալ սոցա առաւել ևս վրդովեցին զերկիրս, զՇարուրայ և զԳառնուոյ բնակիչսն վարելով ի գլուխ Սեաւ ջրոյն մերձ ի ճանապարհն Ղարսայ, և զբազումս ի բերդն տանելով. և զամենայն առ պատրաստ գտանեցեալ ցորեանս և յարդս ի ներքս ժողովելով, ևայլն։ Ցայնժամ սարդարն մարդ յղեաց առ խանն Երևանու և կրկին պատանդս խնդրեաց՝ զեղբայրն և զայլս ոմանս։ Եւ սա տակաւին ոչ պատասխանեալ նմա, զքանի մարդիկ յղեաց մի զկնի միոյ առ վրացին թէ՝ կամ մեղ օգնութիւն արա և զօրս յղեա, և մեք ըզխոստացեալսն մեր տացուք, կամ զմի պատասխանի տուր, և այլն։ Իսկ նա զմի ոմն էր յղեալ թղթովք թէ՝ նա իմ խորհրդեամբն է եկեալ անդ. և ես ոչ ունիմ պատերազմիլ ընդ նմա. ալ դուք ղհարկն իմ լրիւ տուք, ես զնա բանիւ դարձուցից. և որչափ ևս յետոյ գրեցին սոքա և մարդ յղեցին, նա զիւր առնլիքն յառաջադրեաց։ Բայց սոքա կարծելով թէ մի գուցէ տայցեմք զամենայն, և այլ ևս ոչ օգնիցէ, հատին զյոյս իւրեանց ի վրացւոյն. և կաւաւորեցան զպատանդս յղել առ սարտարն՝ հանդերձ ընծայիւք և այլ տրովք, յուղարկել առ շահն. և յայնպիսի յուսահատ կացութեան իւրեանց սկսան պահանջմունս առնել յոմանց ղորոց կարծէին, և մանաւանդ առ ի մէնջ ղորչափ ինչ կամեցան. թող զի մարտ ամսոյն միւնչև ցայն կէս առեալսն։ Եւ որչափ ջանացաք թէ ողոքանօք, թէ ընդդիմական խօսիւք պակասեցուցանել ինչ ի խնդրելեացն, չեզև հնար, և միւնչ տեսաք թէ ոչ գոլութիւն պարտէր յաոչնչանալ և քօղն ամօթոյ իւրեանց իսպառ վերանալ, ըստ մեծի մասին ի մէնջ՝ և ըստ փոքու մասին իւր ի չարշըքէն մերմէ և յԵրևանու վաճառականացն փոխ առեալ լրացուցաք ցաւօք և հեծութեամբ։ Զորս ժողովեալ խելացի խանն մեր՝ զմին՝ յեղբարց իւրոց և զքանիս ևս ի նշանաւոր անձանց երկրիս ընդ Շեխիալամին յղեաց առ սարտարն ի Նախչուան. որ զպատանդսն յղեսցէ առ շահն, և ինքն դարձցի ի թարվէզ։ Եւ նա թէպէտ դարձեալ է, սակայն և ես զնիւթ խռովութեան պատրաստելով ասացեալ է թէ՝ շահի զառաջին հրամանն որ եՃ. մարդ խնդրեաց ի ձէնջ, պարտիք լրիւ կատարել, և զնորին յանուանէ խընդրեալ անձինսն պարտիք տալ ի պատանդս, և զայլս ևս ըստ այսմ պահանջմունս։ Ի վերայ այսոցիկ և մեծ կասկած գոյ վասն

շահին յայսկոյս դիմեղ՝ եթէ գլուխն բացցի ի շփոթից այնմ կողմանն. զոր մի յաջողեսցէ Տէր։ Եւ վրացին ևս միշտ զոտն ի գետին հարկանէ զխուժադուժ գումարս զօրաց ցուցանելով և զՀարկս պահանջելով։ Վասն որոյ կամք ըստ ամենայնի սարակուսեալ և նեղեալ ի ցաւս և ի հեծութիւնս անցելոցն, և ի կասկածանս ապագայ վտանգից և որպէս թէ լքեալ սրտիւ և ձեռօք, չառնլով ևս զգագարուճ ի կեղեքչաց։ Ուսաի՝ որ երկու ամաք յառաջ հոգւոյսք զնոր նուիրակ առաքել ի յօրհնեալ Մայրաքաղաքդ, այժմ տարի մի անցանի ի վերայ դարձման գործակճար նուիրակին, և գեռ ոչ յայտնի մեզ զնորն առաքել, նոյնպէս յետանան և այլ վիճակացն նուիրակք։ Ցուսամք թէ գագար ինչ առցեն փոթորիկքս՝ և կարասցուք գէպ ի յաշունն զնուիրակն տեղւոյդ առաքել, որ այն ևս ոչ սակաւ հոգ է սրտի մերում։ Բայց այժմ զայսցանէ անցից մերոց և հանապազորդ կրիցն իսկ՝ և զկասկածանաց ապառնի գառնութեանց հարկաւոր վարկաք համառօտիւ իմ ծանուցանել յարգութեանդ և օրհնեալ իշխանացն ի միասին հասարակական թղթով. զի և գոցա անգամ մի իմացեալ զայսպիսի կիրս մեր՝ ցաւակցարար հոգայցէք վասն սրբոյ Աթոռոյս և մերս տարաբախտութեան, և զբարիոք խորհուրդ իմ իբրև զդեղ վերաց վշտացս մերոց մատուցանիցէք մեզ ի միխիթարութիւն և յուսաւորութիւն։ Եւ զպլ որպիսութիւնս սրբոյ Աթոռոյս և մեր, և զՀարուստան հայկիրճ գրեցելոցս՝ ի խոհական գրաբերդ ունիս իմանալ։ Ողջ լեր ի Տէր փառազուարճ կենօք և յաջողութեամբ ի հրճուանս մեր։ Գրեցաւ ի ՌՄԽԳ թուոջս և ի յօգոստոսի Գ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ ի Զմիւռնիա առ պ. Առաքելն Սաւալանեան, չնորհակալութիւն վասն խոստացեալ հոգերարձին։

Թուղթ առ Ապրոյեան Առաքել աղային յԻզմիր, ի սլատասխանի Թղթոյն։

Թուղթ ի Շուշի առ վախճանեալ Մէլիք Շահնազարի որդի Մէլիք Ջումշուտն, մխիթարութիւն վասն մահուան հօրն, և չնորհաւորութիւն յաջորդելոյն իւրոյ զիշխանութիւն նորին, և յանձնարարութիւն վասն մերայնոց անդ պահելոց։

Թուղթ առ մեծին Պօլսոյ Պատրիարգն վասն պ. Մկրտչի կնոջն որ ոչ եկն յԱգուլեաց։

Թուղթ առ Կիւլապօղլի Ճակոր ամիրայն յանձնարարութիւն վասն նուիրակին նորոյ։

Թուղթ առ մահտեսի Վարդերես ամիրայն ըստ վերնոյդ։

Թուղթ առ Խանումօղլի Ճակոր ամիրայն ըստ վերնոյդ։

Թուղթ առ. Սախազատէ Գրիգոր ամիրայն ըստ վերնոյն։

Թուղթ առ Կեսարացի Փախիզատէ մահտեսի Սարդիս ամիրայն ըստ վերնոյն։

Թուղթ առ մահտեսի Կարապետ Հարայեան ըստ վերնոյն։

Թուղթ առ Թիֆլիզու Մելիք Աւետիքն ի պատասխանի թղթոյն նորա որ ընդ ալաւնի թղթոյն, վասն Երեւանցւոց Հարկին տալոյ։

Ծորմէ սիրով և օրհնութեամբ և. Քրիս տոսաւան.գ ողջունի, և նոյնաէջ սրբոյ տեղւոյս հոգեպարար շնորհիւն գիտութիւն լինի գերազնիւ սիրելւոյգ մերոյ՝ և հաւատարիմ որգւոյգ սրբոյ Աթոռոյս՝ բարեպաշտ և ազնուական և պերճապատիւ Մէլիք Աւետիք Աղայիգ։ Ձի յօգ. ՇՆ գրեցեալ թուղթ քո ԷՀաս առ մեզ ի սեպտ. 6։ Եւ ծանեաք զգրեալդ, որ սրտացաւօրէն զեկուցեալ էիր մեզ զմիտս Քրիստոսազօր Մեծի Արքային, ազգ առնել իշխողին երկրիս առ ի վճարել զՀարկն, և թէ ոչ անսայցէ, զգուշացուցանել զմերայինսն և զվաճառորայս, և այլն։ Արդ՝ սիրելիգ մեր՝ դուք լաւապէս լսեք և իմանայք զստահակութիւն

սորա, որ թէ իւրոցն ոմանց հաւատարմաց ոչ լսէ, մեզ ո՞րպէս անսայ, մինչ ամենևքեան պէտս համարին թէ՝ զձեր օգուտն միայն ջանամք և ոչ իւրեանց։ Եւ կամ զի՞նչ հնար է մեզ ամրացուցանել զմերսն, մինչ ահա ի ձեռս նոցա է թագուլն և վրեժն, պահելն և չարչարելն։ Ուրեմն յայնժամ յայնպիսի յամառութեան նոցա ոչինչ էր օգուտ խօսիլ ընդ նոսա և բան ինչ առաջագրել։ Այլ մինչ Սուլէյման սարգարն ընդ Խօյու խանին կրկին դիմեցին ի վերայ երկրին, որով անհնարին ազէաք հասին բնակչացն, և յետոյ օրհնեալ Արքային գյուսագրութեան թուղթ գրեաց առ խանն, յայնժամ խոնարհեցաւ սա ի յամառութենէն. և մեք մինչ Յերևան էաք գնացեալ ի տեսութիւն նորա խօսեցաք զբանն օգտաւորս վերսահն հնազանդիլ մեծի Արքային և ծառայել ըստ վարեգման հօրն իւրոյ և շինութեան պահել զերկիրս. և սա հաւանութիւն եցոյց, և խոստացաւ ծառայել և տալ զհարկն. վերջապէս զՓեալրալի բէկն յղեաց յայդր ի սպաս մեծութեան նորին. թզթովք իւր և հասարակին. ընդ որում մեք և սս գրեցաք զթուղթ տաճկերէն։ Ապա գարձեալ մեր Յերևանու ի սուրբ Աթոռս, մինչ Միրզայ Աբրահամ ի Խօյու դարձեալ եկն աստ և էանց Յերևան գալ յայդր, գրեցաք առ օրհնեալ Արքայն զյիշեալ բանքն երկարապէս, հանգերձ մեր և նեզութեամբքն և վնասուք։ Ես զայս թուղթ համառօտ առ ազնիւ սիրելիդ գրել պարտ վարկաք ի պատասխանի թզթոյն քո. որով խնդրի ի խոհական սիրելւոյդ, զի և դու յաջորգող լինիս Քրիստոսազօր մեծի Արքային զի ընկալցի զբանս Փեալրալի բէկին որ եկեալ կայ այժմ ի սպաս և երկայնամիտ լինելով խազազութիւն առնել կամիցի ընդ սոսա. և գերազանց հանճարով իւրով դիւրաւ ի ձեռն բերցէ, զի յօժարամիտ խոստման իւրեանց հնազանդեալ ծառայեսցեն, և ըզհարկն վճարեսցեն միջոց առ միջոց յղելով, որով թեր և սս հանգստութիւն լիցի բազմաշնասակիր երկրիս, և մի իսպառ յաւերութիւն հասցէ։ Որդ ազագաւ և մեք շնորհակալութեամբ օրհնօղ լինիմք Ցէրութեան նորին, և ձեզ ամենեցուն առ նովաւ եղելոց։ Ողջ լեր ի Ցէր։ Գրեցաւ ի ՌՄԽԳ թուռնս և ի հոկտ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ ի Պօլիս առ Պատրիարքն վասն Կարնոյ գործակալին մերոյ Հայրապետի բանին. միոչ աներձաձն պարոն Թարճիմանեան Պօղոս գնացեալն ի մեծն Պօլիս դաւայ առնէր ընդ նմա ի գուր պահանջմունս առնելով։

Թուղթ ի Վան առ Ախիջան ադայն յիշումն յառաջ գրեալ թղթոյն մերոյ և յանձնարարութիւն վասն նոր նուիրակ Աբրահամ վարդապետին։

Թուղթ ի Կարին առ Հաճի Բարայն ընդ Պօլսոյ և Թօխաթու նուիրակացն շնորհակալութիւն վասն ի Կարնոյ դարձեալ նուիրակ Նիկողայոս վարդապետին, և բան վասն Հասանպալայու առաջնորդ Ալէքսան վարդապետին, որ ի վանից հրաժարեալ անդ շրջմլջէր։

Թուղթ առ վրաց Արքայի Թոռն Դաւիթ Միրզայն։

Ճորմէ սիրով և օրհնութեամբ, և Քրիստոսաձիր սուրբ ողջունիւ ծանուցումն լիցի ազնիւ սիրելւոդ մերոյ և սառգ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս Քրիստոսիս զօրացեալ բարեծնունդ քաջամարտիկ և շքեղազարգ Գաւիթ Միրզայիդ։ Զի թուղթ քո էհաս առ մեզ ձեռամբ Ցէր Պետրոս համեստակեաց քահանային ձերոյ։ Զոր սիրով և յարգմամբ ընկալաք, և տեղեկացեալ զողջունէ պատուական անձիդ ուրախ եղաք, և խնգրեմք միշտ ի բարօրութեան և յաջողութեան լինիլ ձեզ։ Գրեալ էիր՝ զկնգակ ժողովրդեան տալ նմա ի վերայ մերազնեայց, եթէ թէ ուխտ է գնալոց ի սուրբ Երուսաղէմ, և այլն։ Այլ զիտես արգեօք զորպիսութիւն ժողովրդոց մերոց՝ որք ի յետին գառնութեան կան։ Երբեմն երբեմն ըստ գրոյ բարձրապատիւ Հօր քո և գերազնիւ սիրելւոյն մերոյ՝ երկուց քահանայից Թուղթ առաք, ժողովուրդքն մեր այնքան նեղեալ և զայրացեալ էին, մինչև

ի յատենին իսկ աղաղակեալ ոմանց թէ՝ մեք զգլուխս մեր կարե՞մք պահել, որ պլոց և օգնել կարասցուք. յետոյ թէ զինչ արուեստս են գրեալ մեզ ոչ է արժան աստ երկարելն։ Ապա յանցեալսն և նոցն գեղարգոյ սիրելին մեր կրկին և քահանայ մի եր յղեալ աստ կոնդակ առնուլ, և մեք գիտելով զչկարելի գոլն, պատասխանի արարաք։ Այժմ սիրելիդ ես գրեալ վասն սո րա։ Թէպէտ մեք զքաղցրիկ խաթրն քո ոչ փոխանակեմք ընդ աշխարհի, սակայն թոզ զգնացողի ոչ օգտիլն, մեք և ես անպատիւ եմք լինելոց ի մէջ ժողովրդեան մերոյ։ Մի՛ թէ ստոյգ բարեկամդ մեր կամիք զմեր անպատուութիւնն։ Քանզի մերայինքն ամենայն ի յաղքատութենէ և ի գառնութենէ ժամանակիս ննղեալ գոլով գրեթէ յերես են ելեալ։ որոց աւելորդ հրաման հրամայելն պէտս ըերէ, քան թէ օգուտ։ Վասն որոյ զՑեր Պետրոս քահանայդ յետ սիրով և պատուով ընգունելոյն մերոյ ի սէր յարգութեան ձերոյ վայելուչ խիլայիւք և խարճիով ուղևորեցաք։ Եւ զայս թուղթ գրեցաք առ աղնիւ բարեկամդ մեր Խնդրելով, զի գիտացեալ զցաւս մեր և ժողովրդեան մերոյ առ չկարելութեան դժուարագոյն իրին անմեղագիր լինելով թողութիւն արասցես. և զսէրգ անուշաղ պահելով ողջ լեր Ցերամբ։

Գրեցաւ յամի Փրկչին 1794, և ի նոյեմբ. 23. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ առ Իսայեան ազգն ի Խօյ, ի պատասխանի երկուց թղթոցն ընդ Սողոմոն և Եփրեմ վարդապետացն վասն նոցին իրաց և այլ բանից։

Թուղթ ի յԱվիտ առ ս. Պիլակոս եկեղեցւոյ դպնձապետն մեր մահտեսի Մարտիրոսն ընդ նոր նուիրակին յանձնարարութիւն վասն նորին։

Թուղթ ի Հնդիկս ի յալաքն Կալկաթա՝ առ պարոն Աստուածատուրն Մուրադխանեան. վասն հասուցանելոյն զկտակ եղբօրն և վասն առաջնոյն նուիրակին. և յանձնարարութեան վասն նոր նուիրակին։

Դարձեալ ի Կալկաթա առ աղայ Էլիազն Մինասեան, շնորհակալութիւն վասն յիշատակացն։

Ի Կալկաթա առ աղայ Մինասի դուստր և աղայ Խօջամալի Սաֆարեան կենակից Գատարինէ խաթունն աղնուհի, վասն յիշատակացն։

Ի Մադրաս առ աղայ Յովաննէսն աղայ Շահամիրեան վասն տրոցն և վասն յիշատակին։



ՀԱՐՉԵԼ Ի *Մատրաս առ Հռիփսիմէ Տիկինն հանգուցեալ Յակոբջանի՝ որդւոյ աղայ Շահամիրի. շնորհաւորութիւն վասն հարսանեացս որդւոյն՝ աղայ Նազարին եւ նորին որդեծնութեան. եւ շնորհակալութիւն վասն տուեալ յիշատակացն. եւ այլն։*

(Սկիզբն ի Ցովսէփ Մարութեանի կնոջ թղթոյն)

Եւ երկիւղազարդ Հռիփսիմէ ազնուհի Տիկնոջդ, եւ քարեկարգ տան ծերում եւ ամենայն ազգայնոց եւ քարեկամաց քոց ի Տէր խնդալ։

Եւ ընդ շնորհազեղուն օրհնութեանն նամակիս՝ գիտասջիր հոգեւոր դուստր մեր եւ հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, Զի ասէ իմաստնալիցն յԱստուծոյ Սողոմոն թէ՝ որպէս ջուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է, նոյնպէս աւետիք բարեաց յերկրէ հեռաստանէ։ Եւ յիրաւի՝ ճշմարտութիւն այսմ բանի՝ այժմ անսխալ առ մեզ երեւեցաւ։ Քանզի կարօտեալ մեր յերկար ժամանակի լսելոյ զօրհնեցեալոցդ զլուր զուարճալի, շնորհիւ Տեառն եկեալ հասեալ է սուրբ աթոռս գործաւարտ նուիրակն ձեր Եփրեմ Աստուածիմաստ վարդապետն՝ ազդ արար մեզ զաւետիս հարսանեացդ ազնուածին որդւոյ քո Տէրամբ զօրացեալ շքեղազարդ Աղայ Նազարին եւ զպարգեւեն նմա Աստուծոյ զբարի ժառանգ եւ զանուանելն ձեր զնա յանուն հաւոյն իւրոյ Ցակորջանի։ Եւ արդ՝ որպէս ջուրն ցուրտ գայ ի յախորժ ծարաւելոյն, նոյնպէս եւ այս համբաւ բարի ախորժելի եղեւ մեզ, որով զուարճացեալ գոհացաք զԱստուծոյ եւ ասեմք թէ՝ նոյն ինքն բարեխնամօղն՝ շնորհաւոր արասցէ զհարսանիս եւ զորդեծնութիւն որգւոյն քո, օրհնեսցէ զրարեծնունդ Մանուկն եւ զծնօղսն այնու օրհնութեամբ որով օրհնեաց զԱբրահամ եւ զԱռաւայ. զԻսահակ եւ զՌեբեկա, զՑովսէփ եւ զԱսանէթ եւ զայլս, եւ բարգաւաճեսցուսցէ բազում որդւովք եւ դստերօք յազգ մեծ, զարդարելով եւս առաքինական գործովք։ Իսկ եւ զգաստամիտ հոգեւոր դուստրդ մեր որ ընդ կատարեալ բարեպաշտութեանդ առ Աստուած եւ ըստ ջերմեռանդ սիրոյդ եւ ըղձիցըդ առ սուրբ Գահս եւ առ հայրութիւնն մեր, ի վերայ բազմապատիկ մեծարանացդ եւ շահեցողութեանցդ արարելոց առ նուիրակն, եւս ընծայեալ էիր Աստուածակերտ սրբոյ Տաճառիս զյիշատակս վայելուչս, այսինքն՝ մի արծաթեայ սազաւարտ վասն հանգուցեալ ծնողացդ, զերկու հրեշտակատեսիլ պատկերս սուրբ Աստուածածնի նըրբանկարս ի վերայ ապակեղինաց, զերկու սպիտակ լամփսս ժամաշափիկս, զերկուս ուրարս ի կարմիր ծաղկեայ մախմուրէ, և զմի կանաչագոյն և ոսկեթել սխնագործ սքօղ սկհոյ, անուամբ մերով յատկացեալ, ընկալաք սիրով և մատուցաք ի յարկս փառաց սրբութեան Տեառն, և շնորհակալութեամբ օրհնեցաք զքեզ. յիշելով յաղօթս և ի պարգևս հանդերձ հոգելոյս ծնօղդ և համայն քոյսնովքդ։ Արդ՝ հաճեսցի Տէր ընդ կամաւոր նուէրս քո. և զիոխանակն

առաւելութեամբ հատուցէ ի հոգիս հանգուցեալ ծնողացդ և սլ ննջեցելոցդ, և քեզ, Զննջեցեալդ արժանացուցէ երանական փառաց արքայութեան, և զքեզ ամենայն կենդանեօքդ ընկալցի միշտ ի խնամս իւր՝ օրհնեսցէ և պահպանեսցէ, փրկելոյ յամենայն վտանգից. և զարդարեսցէ ամենատես բարեգործութեամբք, եւ արդ՝ ահա առաքեցաք ձեզ նորոգ նուիրակ զՀոգեբեր որդեակն մեր ձեռնադրեալն զնորհապերճ վարդապետան և զարհի եպիսկոպոսն, զոր մեծաւ սիրով ի յարգանս ընկալեալ, և մխիթարեսցես. անուազ ճեալով ի սիրոյդ և ի հարազատութեանդ առ սուրբ Աթոռս և առ հոգևոր հայրութիւնս մեր, որով առաւել ևս լիցիս ժառանգորդ վարձուց բարեաց ի Տեառնէ, և շնորհաց սրբոյ Իջմանն տեզուոյս Նորին, օրհնութեան սրբոյ Լուսաւորչին և մեր. Ամէն։ Գրեցաւ յԱմի Փրկչին 1795 և ի յունիսի ԻԲ. ի յերկ. նաքանատակ Գահս սուրբ Էջմիածնին։

Սիրով հայրականաւ ողջոյն և օրհ. նութիւն տամք. բարեզարմ գտաբերաց քոց համեստափայլից՝ Աննա և Կատարինէ տիկ. նանցն և մաերիմ փեսային ձերոյ՝ Ցերամբ զօրացեալ Պարոն Սէթին Սամեան, և այլ ամենայն աղգայնոց և բարեկամաց քոց. որք հանդերձ քեւ լիցին յանձնեցեալք ի խնամս Աստուծոյ Ամէն։

Դարձեալ ի Մատրաս առ աղայ Նազարն Յակորջանեան, թուռն աղայ Ջահամիրին, շնորհաւորութիւն վասն որդեծնութեան, և շնորհակալութիւն ապակեղէն ջահին։

Թուղթ ի Բասրա առ պ. Յարութիւն Սահակեան, շնորհակալութիւն վասն եկեալ նուիրակին և յանձնարարութիւն վասն նոր առաքեցելոյն։

Թուղթ յԱստրագամ առ պարոն Ալէքսանն, յիշումն նախադրեալ թղթոյն մերոյ և անցից իւրեանց և կրկին խոստումն թղթոյն որ վասն Նարեկացն գրելոց է առ սա։

Թուղթ ի Դաքա առ յոյն պարոն Պօտոսն, շնորհակալութիւն վասն նուիրացն, և քան վասն տալեացն զոր սլարտ էր Վարդիհերու առաջնորդ Մանուէլ վարդապետին և նա զսանատն տուեալ էր նուիրակին մերոյ պահանջել այնու ի սմանէ դրամսն։

Թուղթ ի Կեսարիա ի վանսն Թօմարղայու առ Բարսեղ վարդապետ ոմն ընդ հօրն իւրոյ մահտեսի Աստուածատուրին։

Թուղթ առ Բալուայ իշխանսն դմահուանէ նուիրակ Օհան վարդապետին։

Թուղթ ի Ղարահիսար առ Հիւսիսօղլի մահտեսի Գրիգոր աղայն յանձնարարութիւն վասն նոր նուիրակ Գրիգոր վարդապետին։

Թուղթ առ Ջուշեցի պ. Մարդար, շնորհակալութիւն վասն յղեալ քառասնից և հաստատութիւն դանձապահութեան անդ ի Ղազանչեցւոց եկեղեցւոյն։

Թուղթ ի մեծն Պօլիս առ Պատրիարգի եղբօրորդի Տէր Պօղոսն ի պատասխանի Թղթոյն զոր ընդ Թագւոր և Մուրատ Ամիրայից նուիրեալ զգեստուցն գրեալ էր։

Թուղթ ի ս. Երուսաղէմ առ մահտեսի Յարութիւն Ամիրայի դուստր մահտեսի Նազլուն օրհնութիւն վասն յղեալ ժամոցին։

Ի ս. Երուսաղէմ առ Մատթէոս վարդապետն շնորհակալութիւն վասն յղեալ աջահամբուրին։

Թուղթ առ Գեանջայու Սարգիս ինքնընծայ կաթողիկոսն ի պատասխանի Թղթոյն զոր գրեալ էր վասն անդանօր երեւեցեալ հրացն սրբոյ Աթոռոյս աւարեցելոցն ի Թիֆլիզու։

Ցորմէ սիրով ծանիր հոգևոր որդիդ մեր Սարգիս կաթողիկոս բարեճաճ քաղաքիդ Գեանջայու։ Զի Թուղթ քո ի հոկտ. ԻԲ. գրեցեալ անագան էհաս առ մեզ ի նոյ. ԻԱ. և իմացաք զգրեալսդ։ Եւ զի

վերջն բանիցդ գրեալ էիր թէ՝ ղՀայրենի սէր և ղգուշն մեր որ առ. քեզ ունէաք, փոխարկեալ իցեմք, առ. այն իմա. զի նոյն է սէրն մեր՝ որով ուղղապէս զբարին քո կամիմք, բայց գու զՀետ ունայնութեան աշխարհի գնալով, այնպիսի նորաձև իմաբան արարեր՝ որ չթողաց մեզ տեղի խօսել կամ ընդ քեզ խօսելոյ, կամ այլոց պատասխանելոյ։ Ուրեմն՝ խոհեմութեամբ մատծեա թէ՝ արդեօք դու՞ զքո բանգ խարդախեցեր, եթէ մեք ինասական ինչ իցեմք քեզ։ Այլ զայսմանէ երկարելոց ոչ է ժամանակ. թողցուք զայս, և զայնմանէ խոսեցուք որ գրեալ էիր թէ ի Թիֆլիսու յաւարի գնացեալ ամանաթիցն մերոց՝ Հոգելոյս Ղազար կաթուղիկոսի թագն և վակասն և շուրջառն և այլ ինչ իրք անկեալ են ի ձեռս րարձրապատիւ Ջաւատեանին. և նա անքակելի պահէ վասն րարեկամութեան առ. սուրբ Աթոռս, զի գարձուսցէ այր. զոր և սիրելին մեր տանուտէր Պարոն Աւետիքն ևս էր գրեալ։ Վասնորոյ շնորհակալ եղաք զմեծաշուք և ազնուարարոյ խանէն. որում՝ ցէր տացէ երկար կեանք, և ճոխապանծ իշխանութեամբ պահեսցէ։ Եւ արդ՝ կամէաք ըստ գրեցելոյ ձերոյ զվարդապետ մի յուղարկել, բայց զի ճանապարհքն վանգաւորեալ են յաւազակաց՝ որք զերթևեկս կողոպտեն, վասն այն ոչ եղև առաքսմն վարդապետի։ Այլ գրեցաք զԹուղթըս առ Գօլվաթլու խանն և առ ազնիւ սիրելին մեր Պարոն Մէլիք Մէժլումն և առ Պարոն Աւետիքն և զայս Թուղթ ևս առ քեզ գրեմք. զի երեքեանդ ի միասին առանձնարար տեսանիցէք զԹագն և զայլ իրան եթէ ամրողջ իցեն, և ի տեղդ վաճառականք և ճանաչողք գտանին քարի և մարգարտի, և Հարցէք յԱստուածակոյս կողմանէ զոր ինչ գին ասիցեն, մեզ գրեսջիք։ Եւ մեք տեսանիցեմք եթէ ըստ արժողութեան իցէ գնահատութիւնն յայնժամ մէկ վարդապետ յղեսցուք, որ վերահասու լիցի։ Ըսպ որպէս և լուեալ էք, յայսմ ամի բազմապատիկ ինասք Հասին սրբոյ Աթոռոյս, և մեր յուսալի իրքն այգ աւանդքըն էին որք աւարեցան յիրաւի առ պատրաստ դրամ չունիմք, այլ զի սրբազանից Հայրապետաց յիշատակք են և մեծարգոյ խանն զպատիւ ս. Աթոռոյդ պահելով կամեցեալ է գարձուցանել, մեք ևս յօժարիմք առնուլ. թէ և պարտուք, միայն թէ ըստ արժողութեան իցէ գինն։ Որոյ աղագաւ և համարելով թէ՝ խնամառատ խանն իրը առանց գնոց ձրիապէս պարգևս ընծայէ այսմ՝ մեծանուն Գահի, մեծապէս շնորհակալ լինելոց եմք դարձեալ զնմանէ. և յիշատակութիւն նորա յերկարաձիգ ժամանակի ասա ի բերանս աղօթաւորաց օրհնութեամբ արծարծեալ լինի։ Եւ դուք ըստ գրեցելոցս խոսեսջիք առ նա՝ որչափ կար ձեր զօրէ։ Ողջ լերուք։

Գրեցաւ ի ՌՈՒԽԴ Թուոջս և ի դեկա. ծե. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ ի Ղարս առ մահտեսի Գէորկն, շնորհակալութիւն առ ս. Աթոռս, ըստ որում և զաւանդս ինչ մեր ընկալեալ ի յԱռաջնորդէն ի պահեստի ունէր։

Թուղթ ի մեծն Պօլիս առ վարժապետ մահտեսի Յովհաննէս Մնանեան, մխիթարուելիւն վասն յաքսոր գնալոյն և այլն։

Թուղթ առ Մասեհեան պ. Նսայինն, թօհ. մամ վասն թուղթ չգրելոյն։

Թուղթ ի Կարին առ ի Մատէնու եկեալ Կարապետն և Անտօնն որք էին գործակալք սարէսկէրի Սառաֆ Փիլիպպոս Ամիրային. շնորհաւորութիւն գալստեան նոյա և պատասխանի խնդրոյն յաղագս Փիլիպպոս Ամիրայի ազատել երիցակնոջն ի ձեռաց այլազգեաց։

Թուղթ ի Բաղդատ առ աղայ Պետրոսն Ստեփաննոսեան հնորհաւորութիւն գալստեանն անդ եւ զործակալութեան Ինկլիզացւոց։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ գիտութիւն լիցի բարեպաշտութեան քումդ, Զի ի վերայ բազմաեռակ նեղութեանց եւ վշտալի կրից մերոց՝ ունելով եւ զկարօտութիւն առ հեռաւնակ մերազնեայսդ, ցանկամբ միշտ տեղեկանալ ղրարեկեցութենէ ձերմէ։ Ապա հոգևոր որդին մեր և նուիրեալն կողմանցդ Յակոբ Համեստարարոյ վարդապետն՝ որ ի գրել առ մեզ ղթուղթս ի յաստուածախնամ մայրաքաղաքէդ ծանուցեալ էր զգալ սիրելոյդ օրհնեալ տամբքով յայդր, և զկարգիլդ գործակալ Ինկլեզաց ի քաղաքի յայգմիկ ի տեղի առ. Քրիստոս փոխեցեալ Ազգ Մարգարին, և ե. զայլ յաջողութիւնսդ հռչակաւոր տէրութեան Անգլիացւոց. և յաջողեսցէ Աստուած զամենայն բանս և զգործս քո ի բարին. միշտ յառաջդէմ և փառազուարճ պահեսցէ զսիրելիդ, որոյ ախորժալուր համբաւովքն և մեք ուրախ լիցուք։ Դարձեալ՝ ի թղթոյ նուիրակին ծանեաք և զմեծապատիւ ընդունելութիւնդ և զբարեյաւութիւնդ ցուցեալ առ նա. զոր շնորհակալութեան բանիւք զեկուցեալ էր մեզ. ուստի և մեք շնորհակալ եղաք զսիրելւոյդ օրհնաբանութեամբ հանդերձ։ Զոր ցէր օրհնեսցէ և զօրացուսցէ. և ըստ բարեշնորհութեանցդ ցուցելոց՝ առաւելապէս փոխատուոյց լիցի քեզ և քոյոցդ։ Արդ՝ ի գառնագէս ժամանակի յայսմիկ թէպէտ և կամք յիրաւի պատեցեալ հազարաւոր վշտիւք և ինասօք յ'անողոք՝ և յ'անագորոյն ննջեաց, որք և կասեցուցանեն զմեզ ի բազմաց հարկաւոր առնելեաց մերոց, սակայն ոչ զանց առնելով պատկան համարեցաք զայս սիրանիշ նամակ օրհնաձիր գրել առ բարեմիտ սիրելիդ։ Որով և խնդրի, զի զսէրդ և զհաստատմունքդ հաստատուն և աճեցուն կալցիս առ տուրբ Աթոռս և առ մեզ, և մերոյնոցն ի հանգիպիլն յայդր՝ ասպնջական և ձեռնտու լիցիս՝ ի քեզ անկելոց իրացն կամակար հոգածու լինելով. և երբեմն սիրանիշ գրովդ մխիթարել զնեղատրութիւնս մի պակասիցիս, որովք հանապազ ժառանգեսցես զհոգեպարար շնորհս սրբոյ Գահիս և զօրհնութիւնս մեր։ Ողջ լեր ի ցէր և յանձնեցեալ ի խնամս նուրին, հանդերձ քոյոցնովքդ. Ամէն։ Գրեցաւ յամի ցեառն 1796 և ի սեպտ. ԻԲ. ի տուրբ Էջմիածին։

Թուղթ ի մեծն Պօլիս առ Ղարտաշեան Թաղէոսն յանձնարարութիւն վասն յուռումելի գնացօղ նուիրակին։

Առ Բաղիշու Ամրտօլայ վանիցն առաջնորդ Գրիգոր վարդապետն ի պատասխանի Թղթոյն և մեղմով յանդիմանութիւն վասն զանկատս դրելոյն զբաղաքացւոցն և պատուէր օրինաւորապէս վարիլ առ իւրաքանչիւրսն։

Թուղթ քանադրանաց ի Բաղէշ առ Գոմոց վանից ինքնագլուխ զառաջնորդ լկտի Յովհաննէս սեւագլուխն, վասն յանդգնաբար նստելոյն անդ քոնութեամբ այլազգւոյ ուրումն, եւ զքազում մնաս եւ զայլմակղութիւնս հասուցանելոյն ժողովրդեանն՝ որք մահսարական թղթով քողոքեալ էին զամբարշտութեանց նորա, եւս եւ վասն փակելոյ զեկեղեցին ընդդէմ նուիրակին եւ ժողովրդեանն։

Յորմէ ժամանեցաք Թուղթ անիծից և բանադրանաց իրաւացի բարկութեան և Հոգեւոր կապանաց, հանդերձ արժանահաս վրէժխնդրութեամբն Աստուծոյ և ներհակաւան զօրութեամբ անվանելի սրբոյ Գահիս Քրիստոսեան. ի վերայ վաշխուէր անառակ որդւոյդ կորսեան և զաւակիդ Քանանուա՝ ամբարտաւան լիրբ և անզգամ յՅովհաննէս կարգաղեղծ սևակրիգ յորջացելոյդ ի Բաղէշ ի Գոմոց վանս և չարահամրաւեցելոյդ ի չարաչար վարուց քոց։ Որով և ծանիր ով անագորոյն անիծեալ։ Զի իւրաքանչիւր առաջնորդ վանից և ժողովրդեան վիճակի իրիք, պարտի ըստ նախասահմանութեան սրբոյ Հոգւոյն ի գլխոյ ազգին կարգիլ, և ընտրութեամբ ժողովրդեանն հրաւիրիլ։ Այլ դու խաբեայդ որ ի Գոմոց վանսդ ինքնին առաջնորդ ես անուանեալ զքեզ դորին վիճակի, մի՛ք բնաւ ոչ եմք տեղեակ առաջնորդութեան քո, և ժողովուրդն վանիցդ ևս ոչ են հրաւիրեալ և չունին ամենևին հաւանութիւն ինչ առ քեզ։ Ապա որով կարգաւ և ի՞նչ իրաւամբ գու զքեզ առաջնորդ կոչես։ Եթէ արժանի էիր գու Հոգևոր հովուութեան, պարտ էիր գիտել և մտածել զհրամանն Ցերունի թէ՝ այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցէ զՀայր ձեր որ յերկինս է. և առաքեալն նորին սուրբն Պետրոս ասէ Ողջոյնեցէք որ ի ձեզ հօտ է Աստուծոյ՝ վերակացու լինիլ՝ մի զօշաքաղութեամբ և մի իբրև տիրելով վիճակացն, այլ լինիլ օրինակ հօտին։ Բայց գու ամբարիշտ և անամօթդ փոխանակ ղուղղութիւն և զբարեձևութիւն ցուցանելոյ և սիրելոյ և հաստատելոյ զժողովուրդն ի բարիս, չարագործութեան օրինակ լինիս և գայթակղեցուցիչ խղճալի ժողովրդեանն՝ որք ի գուն յուսահատութեան հասեալ՝ զանօրէնութեանց քոց։ Զի՞նչ աշխատանս ունիս ի վերայ օրհնեալ ժողովրդեանն, և քանի՞ միաբանս պահես ի վանսն և ո՛վ ծանեաւ զժամերգութիւնս և զաքնութիւնս քո՝ որ այդքան խրոխտաս ի վերայ գոցաք այլ թէ՝ իբրև զանհաւատ աւազակ ոմանք, սեխեխազ բունեալ ի վանսն զգարշելի հոտս զազրութեանց բուրես ի բարկութիւն Աստուծոյ և ի գայթակղութիւն ամենեցուն։ Եւ դու այդպէս աղմասեր սո՛ղր գոլով՝ զայլս ևս խոտորեցուցանես անիրաւ կաշառօք զօրէնս եկեղեցւոյ խախտելով, և ընդդէմ կանոնաց սրբոց Հայրապետացն վարելով զչհաս ամուսնութիւնս առնել տալով, զազգային ընդ ազգայնոյ, զկոյս ընդ պսրուղ և վասն պսակաց զՀասղթն բազմապատիկ առնելով իբրև զխոստ հարկահան։ Եւ ի կողմանէ ննջեցելոց ևս զծանր ծանր տուրս պահանջելով անաստուածարար, ի բաղում աւուրս անթաղ թողեալ զնոսա և զայլս անկարգութիւնս. զորս դու գիտես արբանեակդ սատանայ։ Եւ այսօքիւք ոչ բաւական եցաք կասաղելով ընդդէմ ժողովրդեանն յարուցանես զայլազգիս ի վերայ սուրբ եկեղեցւոյն և կողոպտել տաս։ Եթէ քրիստոնեայ ես և յազգէ հայոց, ո՞րպէս

յանդգնիս զայսոսիկ չարիս դործել. իսկ թէ ուրացեալ ես գՀաւաքս և զաղդ, այլ ինչ կերպարանաւ կոչիս աւաջնորդ զպլդ քանասար և քարկոծելի։ Ապա ուրեմ՝ դու ոչ թէ Հովիւ և պցեղու ժողովրդեան ես, այլ պաշտօնեայ որովայնի քո՝ և վասն զքեզ մնուցանելոյ շրջիս յայդր, ըստ Գաւթեան բանին թէ՝ սովեսցին որպէս շունք և շըրջեսցին զքաղաքաւ, և թէ ոչ յագեսցին արանջեսցեն։ Ահա այս է շնորհ ապաշնորհիդ և ժանտութիւն դժնդակիդ, որ ամենեւին անպիտան ես այդ վանից և ժողովըրդեան, և այնքան խրոխտաս ի վերայ դոցա, որպէս թէ դրամով ես դնեալ և կամ սրով ես փրկեալ։ Ի վերայ այսքան չարու թեանց քոց՝ յանդգնեալ ես ևս այնչափ, մինչ զի ի յընդունիլ և ի մեծարել սիրով օրհնեալ ժողովրդեանն զնուիրակն մեր՝ և ի խնդրելն զսրբալոյս մեռան, դու անձնաժպիրհ ամբարտաւանդ փակես զեկեղեցին ընդդէմ նոցա. և նոքա յանճարակս դնացեալ յայլում եկեղեցւոջ ընկալուն զմեռոնն սուրբ։ Արդ՝ ով էնչին ծակամուտ խլուրդ որ զայդքան լկտութիւնսդ դործես անդդամութեամբ. այժմ ի դլուխ հասին չարիք քո՝ և եկին ժամանեցին իրաւունքն Աստուծոյ ի դատել զպատժապարտս։ Վասն որոյ ահա դատաստանաւ Աստուածային իրաւանց՝ ըստ վկայութեան բազմութեան տեղականացդ բարձու իշխանութեամբ մերով հայրապետական բանադրեցաք զարժանիդ անիծից և նղովեալ արտաքսեցաք յեկեղեցւոյ որպէս զախտացեալ հոտեալ և ապականարար դարշելի. և լուծեալ յամենայն աստիճանաց եկեղեցականութեան՝ կապեցաք զքեզ հոդեւոր կապանօք ի յերկինս և ի յերկրի։ Անիծեալ ես դու ի յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ, և չունիս համար. ձակութիւն այսուհետև ի սուրբ եկեղեցի մտանել և պաշտօն ինչ կատարել՝ զի մեր. կացեալ ես դու իշնորհաց իբրև ղանդիտուն։ Եւ ի քահանայից և ի ժողովրդոց ևս չիշխեսցեն կցորդել պատուհասակոծիդ՝ զի ովոք հաղորդեսցի քեզ բանիւ և դործով, նա կցորդ է և բանադրանաց քոց։ Այս բանադրանք և կապանք ճեսցեն ի վերայ քո, մինչև ծանիցես զչափ չնչին անձինդ, և ղջացեալ դիմեսցես առ այսր՝ խնդրել զարձակուճ։ Իսկ եթէ չամառեսցես ընդ երկար. զմարմնաւոր պատիժն ևս չայնժամ տեսանելոց ես։ Զի որպէս և իցէ, զչափ չքոտի անձինդ ծանուցանելոյ եմք Թշուառականիդ։ Գրեցաւ ի ՌՄԽԶ Թուոջս և ի Ճունիսի ի բարձրադահ Աթոռս սուրբ Էջմիածին։

Ի յերկիրն Մշու առ. Խորենացի Տէր Յովհաննէսն Թադուհիւն յանցանացն։

Ի մեծն Պօլիս առ չարազդի մահտեսի Մինաս Ամիրայն. վասն սէր ցուցանելոյն առ նուիրակն և ուխտելոյն զալ ի սուրբ Աթոռս յերկրպագութիւն։

Ի Պօլիս առ Պալըվանցի մահտեսի Յակոբ ամիրայն, շնորհտուորութիւն սառաֆլարքՀիութեանն։

Ի յՈւրուսջուղ առ գանձապետն մեր մահտեսի Գրիգորն Անուչեան վասն հոգերաժնի հանգուցեալ մահտեսի Մարթայի կնոջ ուրումն։

Թուղթ առ Գիօրկին Միրզայ Արքայորդին Վրաց, ի պատասխանի Թղթոյն զոր գրեալ էր յաղագս սատակման ազդայ Մահմատ խանին։

Ընկալաք զսիրանիշ և զուրախարար Թուղթ պատուականութեան ձերոյ զոր առաքեալ էիք ձերամբ ուԹրուԹ բէկին և Մէլիք Ջաքարօին։ որով նախապէս դիտացեալ զողջունէ և զխաղաղութենէ ձերմէ դոՀացաք զԱստուծոյ խնամառատ պահպանութենէն։ Եւ ապա զոր գրեալ էիր զսահմանէ մարդոյն անօրէնութեան և որդւոյն կորստեան՝ անադորոյն և աշխարհաւեր աղայ ՄոՀմատ խանին. զբարձումն նորին և մեք ձեզ շնորհաւորելով՝ դոՀանամք և օրհնեմք զամենակարող անուն Աստուածպետական բարերարութենէն, և զարդար դատաստանն նորա, որ Թէպէտ և հայրապար խրատեաց զմեզ զանազան վշտիւք և չնասուք ի ձեռն դժնեայ բռնաւորին, որ-

պէս և երրեմն զազգն Իսրայէլի ի ձեռն Փարաւոնի, բայց ի յիշել մեր զնա ի ատս կանալ նեղութեանցն, և յանյոյս լինիլ ի մարդկային օգնականութենէ՝ այն որ գիտէ զառաւել զարմանալին յայնժամ ներգործել յորժամ սպառին առ ի մէնջ բարիքն, յանկնունելի ժամու չարամահ սատակեցոյց զԺանան քան զՓարաւոն, և զմահացուցիչ խորհուրդս նորին արգել ի ձէնջ և ի մէնջ, և ապահովութիւն շնորհեաց ամենայն անձանց վշտացելոց ուստի երկրպագութիւն և փառաբանութիւն մատուսցի նմա յամենայն բերանոց առ սքանչելի և խորախորհուրդ գործս իւր, և աչք ամենեցուն Քրիստոսակիր հաստատեցելոց ի լոյս եղիցի։ Եւ նա ինքն Քրիստոս Փրկիչն մեր խաղաղութիւն շնորհեսցէ աշխարհի և մանաւանգ խղճալի երկրացս բազմապատիկ վշտացելոց։ Եւ զբաղձալիսդ մեր ընդ երկայն աւուրս և փառազուարճս պահելով յաղթօզ զօրութեամբ սրբոյ խաչին, զՁերուբէիմնգ ձեր հաստատուն և անդրդուելի առցէ ի խնդութիւն մեր։ Ցաղագս սիրելւոյն մերոյ Ցովսէփայ Արքեպիսկոպոսի յայգր գտանելոյն մխիթարիչ և յուսադիր լինելոյ ժողովրդեանն, և այժմ դարձ առնելոյն ի գուռն Օգոստափառ կայսերն յուսով սատնալոյ զօգտութիւնս, զոր գրեալ էիր, ի թղթոյն իւրմէ ևս իմացաք. յայլողեսցէ՛ Ձեր զՀաճոյսն իւր և զօգուտն ձեր և մեր յառաջանալ, ի փառս մեծի անուան իւրում սրբոյ, եւ զայլ ամենայն որպիսութիւնս մեր և երկրիս ի խոհական գրաբերացդ ունիս իմանալ։ Ողջ լեր Ցերամբ ի Տրճուանս մեր՝ հանդերձ քոյոյնովք ամենեքումբք։ Ամէն։ Գրեցաւ յամ Ցեառն 1797 և ի յունիսի 30. ի սուրբ Ա֊թոռս Էջմիածին։

ՅԱդրանա առ Բենիամեի մահտեսի Ստեփաննոս Ամիրայն և իւրոն, շնորհակալութիւն վասն յուղարկեալ ժամուցացն։

Առ Բաղիշու Ե խորան եկեղեցւոյ ժողովուրդն ի սլատասխանի մանսարին իւրեանց, որր խնդրեալ էին՝ զի զառաջին մանսարն զոր գրեցին ամբաստանութեամբ զչիք Ցովհաննէս չառաջնորդէն իւրեանց (զոր և բանադրեցար) շյայտնիցեմր նմա զայն մանսարն, զի մի՛ ի նորին տղայէն վնասս կրեսցեն։

Ի Կարին առ մահտեսի Ասլան աղայն և առ մահտեսի Սերօբն և առ մեր գործակալ պ. Հայրապետն, յանձնարարութիւն վասն տիրացու Ղազարին Եղիազարեան, որ ի քանիս ամս ի Խոյ առ Իսաջան աղայն գոլով, այժմ գնացեալ էր ի Կարին ի տուն իւր։

Թուղթ ի Բաղէշ առ Հինգխորան եկեղեցւոյ ժողովուրդն վասն իւրեանց առաջնորդ Ցովհաննէս վարդապետին. զորմէ քանիցս հասարակութեամբ զանկատս էին գրեալ. եւ սրբազանն ընդ քանիս արարեալ գնա եղեր աստ. եւ յետ խրատելոյն՝ արծակեաց ի կապանացն, եւ խիլայեաց. իսկ ողորմելին զկնի քազում աւուրց ի ծանրութենէ օդոյն տեղւոյս հիւանդացեալ վախճանեցաւ. եւ մինչ սպասաւորն դառնայր, այս թուղթ ընդ նմա գրեցաւ։

Ծանուցանեմ լիցի սիրելեացդ մերոց Բաղիշու Հինգխորան եկեղեցւոյ քահանայիցդ և իշխանացդ։ Զի Ցովհաննէս վարգապետն զոր վասն անկարգութեանցն գործելոց ընդ քանիս էաք արարեալ, ի յօգոստոսի ամսեանն եկն ի սուրբ Ա֊թոռս։ Եւ ի քանի աւուրս ձեացեալ ի հիւրանոցին, ապա բերեալ առաջի մեր՝ յանդիմանեալ խրատեցաք, և յուզարկեցաք ի գործարան հացագործացն ըստ սովորութեան. և քանի աւուրք անցեալ ի վերայ, մինչ գէպ եղև մեզ գնալ Երևան, նախ հանեալ զնա զՑովհաննէս վարդապետն բերաք առ մեզ, և ասացաք ղողորմեացին, և պատուեցաք զթուղթն բանադրանաց, և եռուք զնոր վեղար և զփիլոն, և յուսադրեցաք թէ երկու կամ երեք ամիս ձեռնիր աստ ի մէջ միաբան եղբարց. և զմոռացեալ կրօնաւորութեան կարգդ կրկին ապաւորեա. յետոյ յուզարկեսցուք զքեզ խաղաղութեամբ. և ի սուրբ եկեղեցւոջն ի դասու վարդապե-

տացն կանդնեցուցաք. ապա գնացաք յՆրւեան. և անդ կացեալ իբր չերեքտասան աւուրս դարձաք ի սուրբ Աթոռս. և նա առողջութեամբ կայր, որև յեկեղեցւոջն ղմիոյ աւուր կարգն ևս կատարեալ էր հանդերձ միւս աւուրց պարագայիքն: Բայց ի ծանրութեան էր օգային երկրիս. մտանեանդ զի յայսմ աշնան երկրացիքս ըստ ամենի մասին հիւանդացան. և սուրբ Աթոռոյս Միարանքն ի մեծաց մինչև ցփոքունս ոչ ոք ձեաց առանց հիւանդութեան. ընդ նոսին Ցովհաննէս վարդապետն և իւր սպասաւոր Եղիա տղայն ևս հիւանդացան. և մինչ ի ծե. աւուրս երկարեալ, իրրև լուաք եթէ ծանրանայ հիւանդութիւնն զհինդ և զվեց վարդապետս առաքեցաք, յորդորել վանս խոստովանելոյ և սրբութիւն առնելոյ: Այլ ի քանիս աւուրս որչափ և յորդորեցին վարդապետքն, ոչ անսաց ողորմելին, և ոչ յօժարեցաւ, այլ եկաց այնպէս յամառեալ: Եւ ի յոյժ ծանրանալ հիւանդութեան՝ յուզարկեցաք ի դեօղն, զի լաւագոյն սպասաւորեցեալ ի հիւանդապահաց իցէ թէ առողջասցի. բայց ողորմելին օր քան զօր հիւծեալ՝ վախճանեցաւ առանց հաղորդութեան: Այլ մեք չկամելով իսպառ անշնորհ լինիլ, աշխարհաթաղի կանոնաւ թաղել ետուք զնա. որում ամենաողորմն Աստուած Իւր անհուն ողորմութեամբն ողորմեսցի: Եւ զմեզ ողջ պահեսցէ: Իսկ յետ մեռանելոյ նորա՝ դուռն կացարանի նորին զոր իւր սպասաւորն փակեալ՝ և ղրանալին առ ինքըն ունէր. և հիւրընկալ վարդապետն կնքեալ էր. հրամայեցաք գործակալաց մերոց ընդ սպասաւորի նորին նզիային ի միասին բանալ զդուռն և զննել զինչս նորա, և սիահի առնել: Նոքա իտես անելն՝ զդրամ ոչ էին գտեալ, բաց ի ութ ղուռուշէն. յայնժամ Եղիա տղայն ասացեալ էր թէ յանցեալ աւուր՝ հինգ զօլաթայ սինէն փոխ էառ, վասնորոյ հինգ զօլթային հանեալ անտի՝ իւրն տալ ետուք և զհատացեալ քանի զօլաթայն ի թաղմանն խարճ էր եղեալ, իսկ զվեճ իրս նորա, թէ հանդերձ, և թէ այլ ինչ, սիահի արարեալ բերին առ մեզ. ահա սիահւոյ օրինակ ընդ թերդ թոյն եգաք զոր տեսանիցէք. և զիրան ետուք տղային, որպէս ինքն պատմէրոց է ձեզ. զայլ ինչ ոչ ընկալաք ի նմանէ ի կենդանութեան կամ ի մահուանն, միայն թէ իւր վերայի կիսամաշ փիլոնն, և կամ մատակ ձին և այրն ձիոյն: Եւ մինչ սպասաւոր Եղիա տղայն դառնայր ի յերկիրդ իւր և առ ձեզ, զայս թուղթս դրեցաք ընդ նմա առ սիրելիսդ. զի տեղեկասջիք ստուգապէս զանցից և զվախճանմանէ Ցովհաննէս վարդապետին և զորպիսութիւն ընդ նմա գտանեցեալ իրացն: Որք և լինջիք յանձնեցեալք ի խնամս Ցէր, և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի միշտ. Ամէն: Գրեցաւ ի ՌՄԽԶ թուոջս և ի հոկտեմբեր. ի ԻԳ. ի սուրբ Էջմածին:

Թուղթ բանադրանաց առ Արապկերցի Ղուկաս սեպուհն, յաղագս տարապարտուց բանադրելոյն նորա անդ դմահտեսի Նաղարէթի իշխանաւորն տեղւոյն:

Ի Կարին առ մահտեսի Ասլանն յանձնարարութիւն վասն գործակալ պ. Հայրապետին և գործակից պ. Գասպարին:

Ի Մատէն առ Փիլիպպոս Ամիրայն, յանձնարարութիւն վասն պ. Հայրապետ գործակալին մերոյ և վասն Ազգնու առաջնորդ Սահակ վարդապետին:

Ի Խոյ առ Վանցի Ցակոր Ազայն վասն նոր նուիրակին մերոյ և Բարգուղիմէոս Առաքելոյ վանից Առաջնորդ Խաչատուր վարդապետին:

Ի Թօխաթ առ Անտօն աղայն շնորհակալութիւն վասն հոգևբաժնի կնոջն և յանձնարարութիւն վասն նոր նուիրակին:

Ի Թօխաթ առ Թումաջան աղայն ըստ վերնոյն:

Թուղթ ի Թաւրէզ, առ պարոն Դաւիթն, Մէլիք Մարտիրոսն, եւ տիրացու Աւետիքն, վասն Տաթեւու Մինաս վարդապետի տարեալ Աջոյն եւ ժողովեալ արդեանցն, որ յետ մեռանելոյ Մինաս վարդապետին յիշեալ իրքն առ ասուս կային ասանդ, եւ տոքա սրբազանի հրամանին նայելով, չտային Տաթեւու Միաբանից. վասնորոյ սրբազանն հրամայէ՝ խնդրողացն տալ, ծանուցանելով թե զՍիմէօն վարդապետն վէքիլ եմք կարգեալ սրբոյ վանիցն։

Տաթեւու սրբոյ վանիցն միաբան Մինաս վարդապետն որ զսուրբ Աջն բերեալ ի կոստանդ և զարդիւնս ինչ ժողովեալ, յետոյ ինքն վախճանեալ էր, և սուրբ Աջն և արդիւնքն առ ձեզ մնացեալ՝ և ի Հանդիպիլն յայդր Ցովակիմ և Ցովհաննէս վարդապետացն մերոց՝ զայնս կնքեալ էին՝ և պատուիրեալ ձեզ՝ չտալ Տաթեւացւոցն առանց մեր հրամանին, որովհետև առանց գլխաւորի էին. իբր զի մի ի ձեռս անհաւատարիմ մարդկան անկցի, զայն առ մեզ ևս գրեալ էին վարդապետքն, վասնորոյ՝ մեք ևս յԱպրիլի ԻԹ. ին թուղթ դրեալ առ ձեզ՝ պատուիրեցաք որ զայն սուրբ Աջն և զարդիւնսն յանձնիցէք Ցովհաննէս վարդապետին մերոյ բերել ի ւուրբ Աթոռս, Իսկ այն թուղթն մեր դեռ չհասեալ առ ձեզ, ի Տաթեւու միաբանիցն Սարգիս վարդապետն եկեալ է առ ձեզ, և խնդրեալ. բայց դուք վասն պատուիրման յիշեալ վարդապետացն մերոց՝ ոչ էք տուեալ. ապա մինչև ցայժմ որ թուղթն մեր ևս հասեալ լինի առ ձեզ, յայտ է թէ առաւել ևս պնդութեամբ պահէք զաւանդսն։ Այլ սակայն՝ այժմ Տաթեւու սրբոյ վանից միաբանն և թեմից ժողովուրդն մահսարական թուղթ էին դրեբեալ մեզ, և զառաջնորդ խնդրեալ, և զի մինչև ի յԱռաջնորդ դառնիլն և դնալն երկար ժամանակ ձգելոց է, վասնորոյ խընդրեալ էին զՍիմէօն վարդապետն վէքիլ կարգել։ Զոր և մեք մերով կոնդակաւ վէքիլ կարգեցաք, որ առ ժամանակ մի զսուրբ վանքն պահպանեսցէ և զժողովուրդն կառավարեսցէ։ Եւ զի այսքան ժամանակ անդուլ և անտերունջ են եղեալ խղճալի միաբանն և երկիրն ամայացեալ, և սաստիկ սղութիւն տիրեալ, վասնորոյ յոյժ ողորմելի կացութեամբ կան՝ պ կասեալ յամենայն պիտոյից, որք և բազում թախանձանօք խնդրեալ էին ի մեզ, դրել առ ձեզ զի զայդ աւանդսն՝ իւրեանց հասուցանիցէք, առ ի հոգալ զհարկաւոր պիտոյս վանիցն և իւրեանց յայսմ միջոցի։ Մեք ևս ի խնդրոյ նոցին ստիպեցեալ զայս թուղթ գրեցաք առ սիրելիսդ՝ ե տուաք Սարգիս վարդապետին, ոլոյ ի դալն յայդր և ի բերելն զայս թուղթ մեր առ ձեզ, զչն սուրբ Աջն և զժողովեցեալ դրամսն և զայլ որ ինչ իցէ յանուն սրբոյ վանիցն Տաթեւու, հէնապով և իհիրով յանձնեսջիք դմա՝ տանիլ մարդկապէս հասուցանել առ սրբոյ վանիցն վէքիլ և կառավարիչ Սիմէօն վարդապետին, և թուղթ ևս գրեսջիք զորինչ յանձնեալ իցէք դրաբերիս. զի նա իմասցի, և ընկալեալ ի պէտս սրբոյ վանացն և միաբանին արասցէ ի բարեսուզ ժամանակիս։ Եւ դուք ըստ հաւատարմութեան ձերում եղիջիք վարձաարեալք և օրհնեալք յԱստուծոյ, և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի միշտ. Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԽԷ թուականիս և ի Մայիսի ԻԹ. ի սուրբ Էջմիածին։

Թուղթ մխիթարութեան ի Սուրաթ առ Յովհաննէս (Յակոբեան Գէրաթեանց) առաջի դասերն Վալիտայ և Թիրվանտայ, վասն մահուան հօրն իւրեանց յիշեցելոյ որ բարեբար և երախտաւորն էր ս. Ա-թոռոյս։

Ի Զմիւռնիա առ Կեօրտէղցի պ. Գէորգն Յարութիւնեան ի պատասխանի թղթոյն, որ վասն Փարաքարցի Ցէր Նիկողայոս և րիցու ընտանեացն, և բան վասն խաղաղութեան և խռովութեան որ ի մէջ իւրեանց, և շնորհակալութիւն վասն Մարտիրոս վարդապետին։

Ի մեծն Պօլիս առ մահտեսի Յովհաննէսն Մնանեան, շնորհակալութիւն վասն յղեալ լուսագնին։

Ի Զմիւռնիա առ Սաւալանեան պ. Յովհաննիսի որդի պ. Եսային, շնորհակալութիւն վասն յուղարկեալ ընծային։

Առ պ. Յարութիւն Պալթայեան ի Զմիւռնիա, սէր և օրհնութիւն, և յորդորումն վասն բարձման խռովութեանն։

Առ Ցէր Յակոբն ի Վան, վասն հանգուցեալ նուիրակ Աբրահամ վարդապետի իրացն, և արդեանց ղաւթարին, թէ ուր իցէ։

Կոնդակ շնորհակալութեան առ էսնաֆս որք նորապէս գանձանակ հաստատեալ իցեն, ի մեծն Պօլիս ի Ղալաթիա առ Ղուրդուչուն մաղազայի Ռէնջպէրսն։

— առ Ղալաթիոյ Թուխունճի և փարաբանայ էսնաֆսն։
— առ հարսանեաց Սչճւոց էսնաֆն։
— առ չուկայի դերձակ էսնաֆսն ի բոլոր խանին եղեալսն։
— Ղալաթիոյ գինեվաճառաց, Միչոյաց և Խահվէճւոց էսնաֆսն։
— առ Ոսկերճաց էսնաֆն։
— առ Ղումղափուի Աստուածածնի եկեղեցւոյ քահանայսն։

Կոնդակ ի Պօլիս առ վէղիրի սառաֆ մահտեսի Յակոբ ամիրայն եղբայրն Փիլիպպոս ամիրային Ալվիարեան, շնորհակալութիւն վասն յիշատակական տրոցն և յանձնարարութիւն վասն նոր Պատրիարգ Դանիէլ վարդապետին։

Կոնդակ ի Կարին առ Սալան Ձայնեալ մահտեսի Մարտիրոսն ի պատասխանի թղթոյն և շնորհակալութիւն որ ի կողմանէ հանգուցեալ նուիրակին սակաւ ինչ էր տուեալ դատաւորին։


Թուղթ առ Կարնոյ քահանայսն եւ իշխանսն ի պատասխանի երկուց մահասարական թղթոց նոցա՝ որ վասն Յովհաննէս եւ Մինասա, եւ Ալէքսան վարդապետացն։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցուաք լիցի Աստուածասիրութեան ձերում, Զի կրկին մահսերք ձեր յերկաքանչիւր ժամանակս հասին առ մեզ՝ հանդերձ յատկապէս գրեալ թղթովքն արժանավայել առաջնորդին ձերոյ և սիրելի որդւոյն մերոյ Յակոբոս զգօնամիտ վարդապետին։ Առաջնով մահսերիւն ազգարարեալ էիք զՅովհաննէս և Մինաս վարդապետացն աքսորելոց հնարիւ իւիք դառնալն յաքսորանաց ի Մուշ. և զգրելն ձեր առ սեզւոյ փաշային՝ յղել ի սուրբ Աթոռս. և ի մէնջ խնգրեալ էիք, զի և մեք գրեսցուք։ Այլ մեք զձեր գրելն բաւական վարկանելով, և յուսալով թէ ոչ կարիցեր զանց առնել նա զբանիւ խնդրոյ հասարակութեան ձերոյ, զմեր գրելն յայնժամ աւելորդ վարկեալ յամեցաք, սպասելով ելից իրին. զի թէ ոչ անսայցէ փաշային գրութեան ձերում, ապա գրիցեմք զոր ինչ պարան էր։ Եւ զի քանն այնպէս անկատար էր, զձեր թղթոյ պատասխանին ևս թողեալ յապա՝ միայն առաջնորդ վարդապետին զթուղթ մի գրեցաք, ծանուցանելով զդիտաւորն մեր. և ձեզ ևս զողջոյն և օրհնութիւն ետուք ի թղթոջ յայնմիկ։ Եւ մինչ առաքեցաք զայն գիր, քանի աւուրք անցեալ ի վերայ, եկին Յովհաննէս և Մինաս վարդապետքն ի Մշոյ,

ոչ բռնի վարեցմամբ այլոց, այլ որպէս յօժարութեամբ կամաց իւրեանց. ունելով միայն զԹուղթ մի ի Մուրատ փաշայէն առ մեզ վասն այսր գալոյն ինքեանց: Զորս և մեք ընկալեալ գնեմք եռուք զերկոսինն ի խցի միում, կալ ընդ հասարակութեան միաբանից սրբոյ Աթոռոյս՝ ի ժամ և ի սեղան գնալով, և ի տեղւոջ իւրեանց զգաստութեամբ ձևալով. Իսկ լուեալ ձեր զգալն սոցա աստանօր, երկրորդ մահսարաւ գրեալ էք թէ յուղարկեսցես ի Սևանու անապարն: Այդ՝ ոչ է արհամարհելի ինդիրն ձեր որքան առ տեղւոյդ խորհրգականութիւն և առ լսելն ձեր թէ Սևան յոյժ պահական տեղի է եղեալ աքսորելոցս: Սակայն հեռաւոր գոլով ձեր յերկրէ աստի, ոչ իմանայք զներկայական որպիսութիւնս կրօնաստանին այնորիկ, և զընակչացն ի նմին: Այլ մեք մերձ գոլով և քաջ տեղեակ կացու թեան նոցա, որք այժմոյս ոչ են կարող արգելեալ ունիլ զքանի՞ս աքսորեալս ի միասին, երկարապէս գրեցաք Յակոբոս վարդապետին, յորմէ և գուք իմանալոց էք. աստանօր կրկնաբանելն աւելորդ համարեցաք: Յաղագս այ՛ր ուրեմն զոսոս աստէն ի պարսպի սրբոյ Աթոռոյս ունիլն բարւոք վարկանիմք. որք ոչ կարեն փախչիլ յայլուրեք. և ինաս ինչ ևս չգօրեն գործել առ սուրբ կարապետի վանն, կամ առ այլ ոք. զի վտարանդեալ և ուրացեալ և ծեր մարդիկ են, և ի գրութիւնս ևս անվարժ. և սրբոյ Աթոռոյս սաստն յայտնի: Իսկ թէ փախուլ պատահեսցի աստի, յայնժամ մեք հոգևորապէս և դուք յարբունեստ մարմնաւորապէս պատժեսցուք: Եւ զի՞րգ մտաբերեն փախչիլ որ չեն զերծանելոց ի հոգևոր և ի մարմնաւոր պատժոց: Գրեալ էք թէ վասն Կոստանդնուպօլսեցւոց խաթերն յղիցեմք զսոսա ի Սևան: Սիրելիք մեր՝ յիրաւի Պօլսեցւոց խաթերն ազնիւ և յարգելի է առ մեզ, և ձերն ևս. ըստ որում նոցին բարեկամութիւնն և ձեր հաւատարմութիւնն պիտոյանայ սրբոյ Աթոռոյս և մեզ, և ոչ թէ պյսոցիկ սևագրելեաց ունիմք ակնկալութիւն ինչ. այլ որպէս և ձեր խոհականութիւնն վկայէ գիտեմք զի նոցա ևս հաճոյ Թուի մեր զսոսին ասա պահելն զգուշութեամբ, քան թէ ի վտանգաւոր վայր յուղարկելն. յոր չեմք լնաւին վստահ: Քանզի երբեմն ղկնի հանգուցեալ Ցովհան վարդապետի վախճանմանն մինչ բաղում խարդախութիւնք անցին ի վանս սուրբ Կարապետին, և Արապկերցի Ցարութիւն վարդապետն գիմեաց ի սուրբ Աթոռս, յարգելի եղբայրն մեր Պատրիարք վարդապետն և վեմախոհ օրհնեալ իշխանապետքն անգամ մի գրեցին առ մեզ՝ հանել զնա յԱթոռոյս. մեք մինչ պատասխանի գրեցաք առ նոսա թէ սա ոչ կարէ աստի ինաս ինչ գործել առ սուրբ կարապետի վանն. նոքա ես միամտեալ ձեռն քարշեցին: Եւ մեք զՑարութիւն վարդապետն հրաժարեցուցեալ ի ինասակար բանից որպէս և իցէր, կառավարեցաք մինչև ցվախճան կենացն: Այժմ ևս սոքա մինչ անկեալք են ընդ հովանեաւ Աստուածածնոյ Ցաճարիս, կամիմք պահել աստ՝ որ ոչ այլոց զզուեցուցիչ լիցին, և ոչ թէ ինքեանք ի տառապանս մատնեցեալ յուսահատութեամբ կորիցեն. այլ զի ծերացեալ կարգաւորք են, կրօնաւորութեամբ իւրեանց կենցաղավարեալ, ի մեռանիլն քրիստոնէապար թաղեսցին: Իսկ որ զօրինակ Թղթոյ Փիլիպպոս ամիրային կնքելով, ցուցեալ էիք իբր թէ աստուստ ի սրբոյ Աթոռոյս հանելոց և վարելոց իցեն զսոսա: Գիտասջիք առ այն. զի եթէ յարբունեստ վարիչք գայցեն աստ, մեք թագաւորական հրամանին չունիմք ընդդիմակ երևիլ. ի հարկէ տալ պարտիմք ո՛ւր և հրամայեալն իցէ, տարցին: Սակայն՝ մեք անպարտ լիցուք առաջի Աստուածոյ և մարգկան. և թէ յետոյ զղջանայցէք ընդ պատճառ գտանիլն ձեր կոլոտեան սոցա, զմեզ՝ անկցորգ գիտասջիք այնմիկ անվայելուչ լինելութեան: Շատ է խոհեմութեան ձերում՝ ունչ լերուք ի ՏԷր: Գրեցաւ ի ԻՄԻԽԷ Թուոջս և ի փեար. ի սուրբ Էջմիածին:


Թուղթ առ. Բաղիշու ժողովուրդն, որք գանգատ էին ղրեալ գչորից Առաջնորդացըն ևս թէ ղհասոյթս իւրեանց աւելորդ առնուն, իբր քառապատիկ քան ըղնախնեացս սահմանեալն, և խնդրեալ էին

կոնդակաւ արգելուլ զայնպիսի անկարդ պահանջմունս։



Թուղթ ի Թիֆլիզ առ Արղուելեանց պ. Եսային եւ առ որդիսն՝ վասն Խոյեցի Դմպլի Սաֆար Ալի Խուրքին որ ի յարուցման անդ ներքինի ընտաւորին՝ ըմ րոնեցեալ էր նա ի պատերազմին. եւ այժմ Ջաֆարղուլի խանն խնդրէր ի սրբազանէն ընդել տալ զնա եւ դարձուցանել։

Թէպէտ ի յերկար ժամանակս ոչ է հանդիպեալ պատճառ իմն գրելոյ զԹուղթ յատկապէս առ սիրելութիւն ձեր, սակայն զտոհմականութենէ և զբարեպաշտութենէ ձերմէ լսելով բազմից բարի յիշատակութեամբ օրհնարանեալ եմք զարժանիսդ օրհնութեան։ Իսկ այժմ հարկաւորեցաք զայս օրհնաձիր Թուղթ գրել առ ձեզ վասն այսր պատճառի։ Քանզի յանցեալ աարիսն ի յարձակիլն Աղայ Մահմատ խանին ի վերայ երկրիդ և ի դառնալն՝ սյլազգի ումն Խոյեցի և ցեղիւ Դմպլի անուամբն Սաֆար Ալի ըմբռնեցեալ է ի զօրաց վրաց կամ ի ձէնջ, և այժմ իբրու ի ձեռս ձեր կայ։ Դորին ազագաւ նարդենիս Ջաֆարղուլի խան սարդարն գրեալ էր մեզ Թէ Սաֆար Ալի ումն ի մերոց մարդկանց ըմբռնեցեալ կայ ի Վրաստուն՝ ի ձեռս պարոն Եսայու և որդւոցն Գաւթին և Մ՚իքայէլին. ապա մեր խաթեռն համար հարկիւ պարտիս ազատել և յուղարկել առ մեզ, և այլն։ Արդ՝ այս Ջաֆարղուլի խանս յառաջմէ ծանօթ դուլով մեզ՝ ինչ և իցէ՝ այժմ ևս որ սարդար է. և խօսքն անցանի ի կողմանէս ի վերայ բազմաց մեծաց և փոքերց, և մեզ զայս բան գրեալ էր և յատուկ մարդով յուզարկեալ, զանց առնել ոչ լինէր։ Վասնորոյ ահա զայս Թուղթ գրեալ առ ձեզ ձեռամբ այդ երկուց գրարերացդ առաքեցաք, զի վասն օգտի և սիրոյ սրբոյ Աթոռոյս՝ և վասն խաթեռ մերոյ զյիշեալ տաճկին որ առ ձեզ է, արձակեսջիք գալ՝ զի յուղարկեսցուք առ Ջաֆարղուլի խան Սարդարն, և զօձիս մեր Թափեսցուք ի նմանէ։ Եւ Թէ ի կողմանէ ծախուց տաճկի զիրս պահանջիցէք, մեք եմք վճարելոց. քանզի՝ մինչ բռնաւորն ծանեաւ զձեզ և գրեաց մեզ՝ հոգն արկաւ ի պարանոց մեր, և ծանրութիւն ի վերայ սրբոյ Աթոռոյս է։ Իսկ յոգնապատիկ վնասակրութիւնքն սրբոյ Տանս՝ և նեղութիւնքն մեր յայտնի են ձեզ։ Արդ՝ ի հասանիլ Թղթոյս առ ձեզ՝ եթէ առաքիցէք զյլազգին զայն ընդ Թղթարերացդ իբր բաշխելով սրբոյ Աթոռոյս և մեզ, և զպատասխանի Թղթոյս գրեցէք զչափաւոր ծախսն ձեր նշանակելով, շնորհակալութեամբ օրհնելոց եմք ձեզ։ Կամ Թէ մի՛գ ի ձէնջ առեալ զնա բերցէք ի սուրբ Աթոռս, մեծաւ սիրով ընդունելոց եմք զբերօղն՝ և ըստ արժանւոյն շահելոց, և օրհնութեամբ խիլայիւք դարձուցանելոց։ Այլ մինչ զայդ պյլազգիդ բաշխիցէք մեզ, համարեսջիք զմեծ իմն բարերարութիւն առնել սրբոյ Գահիս. և ի բարերարելն ձեր առ Մայրս սուրբ հաւատոյ առաւել քան զխոստմունս մարմնական, ակնկալջիք աստուածային երկնառատ հոգեւոր պարգեւացն։ Եւ նախ ինքն ամենակարօղն Տէր լցուսցէ զամենայն պէտս և զկարիս ձեր ըստ իւրում մեծութեան՝ օրհնելով զձեզ անանցական օրհնութեամբ. և զօրացուցանելով ի փորձութեանց փրկելով, և ի խնամս իւր պահելով և զամենայն բանս և զգործս ձեր առ ի բարին յաջողելով։ Զպատասխանի Թղթոյս անյապաղ դրեալ կամեսջիք և լերուք ողջ ի Քրիստոս, և շնորհք սրբոյ Էջմիածնի տեղւոյ՝ նորին եղիցի ընդ ձեզ և ընդ ձերային։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՍԽԵ Թուոջս և ի փետր. ի ս. Աթոռս Էջմիածին։



ի վերայ Կեսարացի Նշանին մահտեսի Մարտիրոսին, վասն հոգեբաժնի հօրն և եղբօրն, քեռն ե կնոջն։

ի Թարվէս առ Տէր Յովսէփի եղբարսն և որդիսն, վասն ս. Աթոռոյս այգւոյ արղեանցն և այլն։

Առ Մատէնու Փիլիպպոս ամիրայն շնորհակալութիւն վասն գործակատար նուիրակաց մերոց։

Ի Թօխաթ առ Գեատիկօղլի մահտեսի Յովհաննէսն, բան վասն աւանդից և առնելեաց հանդ. Ներսէս վարդապետին. և այլն։


Թուղթ ի Թիֆլիզ առ մէլիք Դաւրչինն ընդ Ալէքսան վարդապետին որ զսուրբ Յակոբայ Աչն տանէր անդ ի բժշկութիւն ժանտախտից։

Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ ողջունի և օրհնութեան, հանդերձ մեծազօր շնորհիւ Միածնաէջ որբոյ Տեղւոյս, ի վերայ աղնուականի սիրելւոյ մերոյ և լուսածը. նունէ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ իշխանազ նեայ շքեզապանծ Մէլիք Դարչին աղայիդ. և ամենայն ընտանեաց և ազգականաց և բարեկամաց քոց, ի Տէր խնդալ։

Գիտութիւն լիցի աղնուականութեան քումմ, Զի յամի Թուականութեան մերոյ ՌՄԽԴ. յորում փոխեցեալ էր ի կենաց աստի գերազնիւ սիրելին մեր իմաստնախոհ և բարեհամբաւ Մէլիք Աւետիք Աղայն որոյ զՀոգին Տէր լուսաւորեսցէ, և ընդ նախնեաց բարեպաշտ իշխանացն դասակարդեսցէ, այն ինչ լսելի եղև դառնացուցիչ բօթ մահուան նորա, ի հետեւեալ աւուրսն ժանտաժուտ զօրապետն պարսից դժնդակ զօրօքն եկեալ բանակեցան յանդիման բերդին, և մեզ հարկ եղև դնալ առ նոսա ի պահպանութիւն շինութեան սրբոյ Գահիս։ Եւ յետ բազում աւուրց կալոյ մեր առ դժնիկսն անհնարին նեղսակրութեամբ, մինչ դարձաք ի սուրբ Աթոռս, իսկ և իսպ գրել ետուք զթուղթ մի առ սիրելիդ ի մխիթարութիւն յաղագս վախճանի հօր քոյ բարեպաշտի, և ի շնորհաւորութիւն քոյդ յաջորդաբար մելիքութեան, և զթուղթ մի առ մրիշքեարբաշի Պարոն Յովսէփն և Պարոն Արսէնիոսն։ Այլ մինչ առաքելոց էաք, դոյժ առման քաղաքիդ հնչեաց յականջս մեր, և զկնի աւուրց ինչ ողոքմելի Մարտիրոս վարդապետն ևս դոյաթափեալ և դերեալ մերկ էհաս այսր, ե առ վշտակրութեանցն յեղակարծ մեռաւ իսկ։ Որք ե. ղեն անմոռանալի ցաւք սրտից մերոց, և առիթ մշտնջենաւոր տխրութեան մեզ և ազգի մերոյ։ Զի որք ի բազմութիւնս ա. մաց ժողովեցեալք էին ի մանկանց, կերա. կուրք եղեն շանց գազանակտնաց։ Փա՛ռք Աստուծոյ։ Եւ զի թշնամութիւն արձանա. ցաւ ընդ մէջ պարսից և վրաց. և ճանա. պարհքն փակեցան, և ամենայն իրք մեր կասկածելի եղեն. վասն որոյ այն թուղթք մնացին մինչև. ցայժմ եգեալք առ մեզ։ Իսկ որոց այսքան ժամանակ յուղարկիլն ոչ եղև ի դէպ. ապա զվաղադրեալսն նոր առաքելն կարի ևս տարագէպ։ Այլ այժմ մինչ Քրիստոսասէր նորապերճ Արքայն օրհ. նեալ երկրացդ վասն բժշկութեանցաւոցն ճա. րակելոց խնդրեալ էր զսուրբ Գեղարդն, և մեք զայն չունելով առ պատրաստ զսրբոյն Յակոբայ սքանչելագործ Հայրապետի զԱչն առաքեցաք ձեռամբ ժամօրհնօղ Ալէքսիա. նոս արքեպիսկոպոսին՝ հանդերձ օրհնութեան և մխիթարութեան կոնդակաւ, պատկան վարկաք ղայս թուղթ ևս առ սիրելութիւն քո դրել ի սուղ յայսմ ժամու։ Որով ղայս ունիմ ասել թէ՝ մինչ ջերմեռանդ սիրով և կատարեալ հաւատով ընկալջիք զսուրբ Աչդ շնորհաբաշխ, և աներկմիտ յուսով պաղատանս մատուցանիցէք, ակնունիմք զի բարերար Փրկիչն մեր Քրիստոս մաղթանօք սրբոյն Յակոբայ բժշկեսցէ զՀարուածս երկրիդ, և զառողջութիւն պարգևեսցէ։ Զալ ամենայն որպիսութիւնս սրբոյ Աթոռոյս և զնեզութիւնս մեր ի հաւատարիմ դրաբեթեդ ունիք իմանալ։ Ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԽԷ թուոջս և յապրիլի ԻԱ. ի սուրբ Էջմիածին։

ՅՂդրանա առ մահտեսի Գէորգն մխիթարութիւն վասն իւրեանց նեղութեան և այլ ինչ բանք։

Առ Գօրգեան մահտեսի Սերօբն, վասն առնելեաց հանդուցեալ Յակոբ վարդապետին և այլն։



Թուղթ առ Շուլավէրու Մէլիք Սարգիսն ի յարգելումն խորհրդոյն՝ որ յետ եղ. բօրն իւրոյ Վանական վարդապետին վախճանման, կամէր զոմն եղբօրորդի

իւր ձեռնադրել տալ ի տեղակալ նմին։ Իսկ ժողովուրդն բազմականիք թղթով խնդրեալ էին ի սրբազանէն թէ՝ մեք ի վիճակի սրբոյ Աթոռոյդ քնակեալ գոլով, դուք հովուեսջիք զմեզ. մեք ոչ կամիմք զյատուկ առաջնորդ ունիլ։

Նարդենիս քահանայք ։ և քեռախուռտայքն տեղւոյդ և ժողովուրդն իսկ միաբանութեամբ մահսէր էին դրեալ առ մեզ թէ՝ մինչ Վանական վարդապետն վախճանեալ է , մեք ի թեմի սրբոյ Աթոռոյդ քնակեալ գոլով՝ այլ ևս զորշակի առաջնորդ ունիլ ոչ կամիմք, այլ խնդրեմք սրբոյ Աթոռոյդ վիճակ լինիլ և ի ձէնջ հովուիլ որպէս համային աէրունի ժողովուրդքն ձեր, Մեք ևս զայս միաբանական խորհուրդ և խնդիր գոցա իրաւացի գաւեցաք և հաւանեցաք։ Զի թէպէտ լուսահոգի Վանական վարդապետն ի յերկրէն ձերմէ ընդ ձեզ եկեալ գոլով և առ սուրբ Աթոռս և առ մեզ յարելով, թոյլ արեցաք ղձեզ նմա հովուել, սակայն յետ վախճանման նորին պաշաճողութիւն ինչ ոչ գոյ թէ այլ ևս ոմն սևագլուխ ի գեղջ միւմ յատկապէս առաջնորդ լիցի. զի այդ երկիր սրբոյ Աթոռոյս աէրունի լինիլ։ Եւ զի բազմութիւն ժողովրդեանն ևս այսպէս խնգրեալ էին, և մեք հաճեցաք՝ որ ըստ կանոնաց է Թիֆլիզու քաղաքին ցրուեալք կան՝ և դեռ առաջնորդ չեմք յղեալ. վասնորոյ այժմ զձեր Խաչատուր քահանայն կարգեցաք ի մէջ ձեր գործակալ սրբոյ Աթոռոյս որ ի կողմանէ մերմէ վերակացու եղեալ հոգևորապէս կառավարեսցէ զձեզ առ ժամանակ մի՝ մինչ ցառաքելն մեր զեպիսկոպոս ի Թիֆլիզ, և յայնժամ նմա յանձնարասցուք զօրհնեալ ժողովուրգդ։ Իսկ լսեմք թէ սիրելիդ կամեցեալ ես, զմին յեղբօրորգւոցդ ձեռնադրել տալ՝ ի հովուեթիւն ժողովրդեանգ, այդ ի կանոնաց արտաքոյ է և անպատեհ գործ. զի ի մէջ միոյ վիճակի ինչ հարկ է քանի առաջնորդ լինիլ. և կրօնաւորին ի վանս բնակիլ պարտ է ըստ կանոնաց. և ոչ ի տունս աշխարհականաց նստիլ և յառնել, որ արատաւոր է ի բարեձևութենէ։ Վասն որոյ գրեմք սիրելւոյդ, զի զայդ անօգուտ խորհուրդդ ի բաց հանեցես ի մտաց քոց։ Ապա թէ չանասցես ղհակառակն գործել ընդդէմ կանոնաց և ընդդէմ մեր և ժողովրդեանդ, գիտասցես զի ընդ քաղցրութիւն սիրոյն մերոյ գառնութիւն խառնես, և ոչ է բարի լինելոց՝ այլ յետս կաց յայդմանէ ընդունայն խորհրգենէ։ Եւ յետ շողոյն անցելոյ և ժանտախտի կասկածանացն բառնալոյ ողորմութեամբն Աստուծոյ՝ ըստ խոստմանդ գայցես ի սուրբ Աթոռս, յայնժամ զամենայն ինչ երկարապէս խօսեսցուք, և զորինչ Աստուած տնօրինեացէ, այնպէս արասցուք։ Բաւ լիցի խոհեմութեան սիրելւոյդ, ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԽԷ թուոջս և ի Յուլիսի ԻԶ ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ առ Աբրօյեան Առաքել աղայն ի Զմիւռնիա, ի պատասխանի թղթոյն՝ որ վասն վիրաւորութեան իւրեանց ի միմեանց, յորդորումն ի սէր և ի խաղաղութիւն։

Ի Կարին առ Վանցի Ալխիչան աղայն։

Առ Լիմօնճիզատէ մահտեսի Յովհաննէս ամիրային։

Յուռուսջուղ առ զանձապետ Գրիգորն Անուչեան ի պատասխանի թղթոյն։

ՅԱդրանա առ ս. Աթոռոյս զանձապետ հանգ. մահտեսի Պետրոսի որդիսն Ղազար և Բարայեկ ամիրայսն, շնորհակալութիւն վասն Ուռումելու նուիրակ Դանիէլ վարդապետին։

Ի Ղարս առ Գրիգոր ումն Ալամօղլի Յովհաննիսի դուստր Մարիամի բաժին տանն զոր այն Մարիամն տուեալ էր ս. Աթոռոյս։

Առ Զէլիկեան մահտեսի Գարապետն Սիմիր, որ զիւր առողջութիւնն, զմարտիրոս վարդապետի գնալն և զժողովրգեան խաղաղանալն գրեալ էր։

Կոնդակ շնորհակալութեան վասն զանձանակի ի վերայ Դիւլպէնտճեանցն Գ. Գօլսոյ։

Առ Մատթէոս աղայն ի Կարին, շնորհա կալութիւն յաղագս պարտուցն Թումանին և այլն։

Ի Ղարս առ մահտեսի Խաչատուրն և պ. Յովսէփին և Կարապետն Դիլանեանց յանձնարարութիւն վասն նոր նուիրակին։

Կոնդակ ի վերայ Խասգեղու վասն արդեանց գանձանակին ի ՌՄԽԶ թուէն մինչև ց'ՌՄԽՇ։

Ի վերայ Օրթաղիւղին Պօլսոյ ի նոյն միտս։

Պօլսոյ չորս եկեղեցեաց և Իւսկիւտարու Բ. եկեղեցեաց, ի նոյն միտս։

Առ Պալաթու, Օրթագեղի, Խասգեղի, Ղումղափուի, Ղալաթիոյ, Սամաթիոյ, Իւսկիւտարու ս. Կարապետ և ս. Խաչ, ի նոյն միտս։

Ի Թիֆլիզ առ Սարդիս աղայի որդի Գէորգն մխիթարութիւն վասն մահուան հօրեղբօր որգւոյն իւրոյ մահտեսի Յակոբջան աղային և այլն։

Ի Կապանայ Մատէնն առ վազիր Իւսուֆ փաշային սառաֆ Փիլիպպոս Ամիրայն և այլն։

Առ Մշու ս. Կարապետի վանաց առաջնորդ Յակոբոս վարդապետն մխիթարութիւն վասն մահուան Զաքարիայի պատրիարգին Պօլսոյ և բան վասն գոմշոցն զորս գրեալ էր յղել և գեռ ոչ յղեաց, պատուէր զի շուտ յղեսցէ։

Ի մեծն Պօլիս առ մահտեսի Նիկողայոս ամիրայն մահտեսի Եղիազարեան և այլն։

Ի Պօլիս յՕրթագիւղ առ Պէկենց Յովհաննէս ամիրայն և յանձնարարութիւն վասն նոր պատրիարգ Դանիէլ վարդապետին։

Ի Կարին առ Հաճիբապայն շնորհաւորութիւն, գալստեանն և յաջողութեանն, մինչ նոր ի Հալէպու եկեալ էր։

Առ բենկանցի մահտեսի Ստեփան և մահտեսի Խաչատուր ամիրայսն և այլն։

Առ Արլնոյ վանից առաջնորդ Յահակ վարդապետն շնորհակալութիւն վասն տրոցն։





ուղթ ի կարին առ փաշային Մասրաք Ցակորն, ի պատասխանի թղթոյն շնորհաւորութիւն զալոյն անդ. եւ ծանուցումն զկողմանցս։

Եւ ընդ Աստուածային օրհնութեանն՝ ծանուցումն լիցի բարեպաշտութեան քումդ։ Զի Թուղթն սիրելւոյդ եհաս առ մեզ. որով ծանուցեալ ղողջունէ նախածանօթ բարեկամիդ, և զգալստենէդ ընդ բարձրաշուք Ռդեշխին ի յօրհնեալ Քաղաքդ, ուրախացաք։ Գիւացեալ էս զսիրոյդ առատութիւն առ. սուրբ Գահս և առ մեզ. այն ըի մեզ վայել էր նախ շնորհաւորել զկրկին ղալդ, բայց ի ծանրութենէ յոգնազրազ հոգոց և խուժանացն կուաեալոց ի վերայ, և այլ ցաւոց անձեռնհաս գտանելով մեր, դու սիրելիդ փութացար մատչիլ ի գրութիւն և մխիթարել զմեզ բարեկամական հանգամանօք, շնորհակալ եղաք զբարեշնորհ սիրելւոյդ օրհնութեամբ։ Վասն որոյ և ի բազմախուռն ղբաղելեաց ժամ որոշեալ, ահա զայս Թուղթ օրհնութեան գրեցաք առ խոհական սիրելիդ ի շնորհաւորութիւն գալստեանգ, և ի բացայայտութիւն շնորհակալութեան մերոյ զքէն։ Ապաքէն ասեմք գալուստ աղնուաբարոյ սիրելւոյդ ի բարին եզիցին, և Ցէր ուղղեսցէ զամենայն բանս և զգործս քո յարդիւնաւորն. օրհնեսցէ և զօրացուսցէ. և ի խնամս իւր ունիցի. և յաչս մեծահամբաւ բդեշխին քաղցր պահեսցէ միշտ։ Եւ արդ՝ քանզի առաջադրեալ էիր, ի պատահիլն հոգալի իրաց սրբոյ Աթոռոյս ի քաղաքիդ՝ ազգ առնել սիրելւոյգ, յիրաւի գիտեմք զի ոչ խնայես զբարերարելն, վասն որոյ երբ դէպ լիցի, սիրոյ վստահութեամբ գրելոց եմք։ Այլ այժմ հասարակապէս վասն ամենայն մերայնոց յերթևեկութեան հանդիպելոց յոյգր, և գործակալացն մերոց բանիցն որք քեզ անկանիցին, խնդրեմ միրաբար հոգատարութիւն առնել, որոց աղագաւ կրկին գոհունակ լիցուք մեք։ և Աստուած վարձահատոյց լիցի իւր ամենաբաւ օգնութեամբն։ Իսկ զկողմնակացս կացութեանցն չկայ ինչ արժանի գիտելոյ. այլ ամենայն բանք սոցա խառնակ և անհաստատ։ Զի արքայ ձայնեցելոյ որդին և զօրապետն եկեալ ի Թավրէզ գեռ լուռ կան և վասն մեծին ասեն թէ յայնկողմն շփոթութիւն ունի։ Եւ այսց գաւառաց իշխողք էս իբր ապստամբեն։ և թէ զինչ իցէ յառաջանալոց, ոչ նկատիւ։ Միայն թէ նեզուեթամբ և վշտիւք տառապի ամենայն ոք. որոց այցելութիւն ի յԱստուածոյ եղիցի, Զայսքան ինչ իմացեալ, ողջ լեր Ցերամբ՝ անպակաս ծնալով ի սիրոյ և ի բարեկամութենէ։ Գրեցաւ ի ՌՄԽԸ. և ի Ցուլիսի ի սուրբ Էջմիածին։

Ցաղրիանուալօլիս առ Վարդապարեան մահտեսի Ցոհաննիսի որդի Վարդան աղայն շնորհակալութիւն վասն յղեալ նուիրացն։

Յուրուսջուղ առ դանձապետն մեր մահտեսի Գրիգորն Ենուշեան։

Աւ Կեսարիոյ առաջնորդ Ստեփաննոս վարդապետն շնորհակալութիւն վասն յուղարկելոյն զկտակն հանգ. առաջնորդ Մատթէոս վարդապետին, հանդերձ յինրեանց ևս աջահամրուրիւ. ե վասն Զաքարիա պատրիարգին վախճանման և Դանիէլ վարդապետին կացուցման ի պատրիարգ [23]). ե վասն Պաշպազիրկեան մահտեսի Յովհաննէս ամիրայի փորձուելեանցն ի յանդուգն այլազգեացն Կեսարիոյ։

Ի մեծն Պօլիս առ Ցէր Բաղգասար քահանայն. զոր նուիրակ Գալուստ վարդապետն Ջապի էր կարգեալ Վախուֆ տանցն ս. Աթոռոյս, յետ նախորդ Ջապի Պաղատասարի մեռանելոյն։

յիշնիմիդ առ Արևելցի Նաւասարդեան մահտեսի Յօհաննէսէն որ ի մեծ հիւանդութեան իւրում ուխտեալ գոլով տալ զնուէրս յանուն ս. Աթոռոյս, ապա յառողջանալն տուեալ էր Գալուստ վարդապետին հանդերձ իւր հանգուցեալ Թոռին եկեղեցական Ճապկովն։

Թուղթ առ Գիօրկի արքային վրաց, ի պատասխանի Թղթոյն զրեցելոյ ընդ Դանճասարու Յովհաննէս կաթուղիկոսի եղբայր Սարգիս եպիսկոպոսին. զոր յղեալ էր աստ՝ առ սրբազանն՝ կարգել առաջնորդ Հաղբատայ վանացն. ոյր սակս եւ նորին թեմից երեւելիքն եւս ժահսէր էին գրեալ. եւ սրբազանն ծեռագիր առեալ վասն զգուշանալոյ յան կարգուլեանց, ապա ետ զկոնդակ առաջնորդութեան։

Ցորմէ սիրով և կարօտիւ և Քրիստոսական ողջունիւ, և սրբոյ Էջմանածդւոյս նորին շնորհիւ ծանուցումն լիցի բարձրապատիւ սիրելւոյդ մերոյ՝ և խնամաշատ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս՝ Քրիստոսասէր և նովիմբ զօրացեալ՝ առատահանճար և գերփառունակ Գիօրկի արքայիդ վրաց, Զի Թուղթն մեծութեան Ձերոյ՝ ձեռամբ Սարգիս եպիսկոպոսին էհաս առ մեզ. զոր ընթերցեալ՝ յաղագս ողջութեանդ և բարեկեցութեանդ ուրախ եղաք. և զամենայն բանն ևս վերծանեցաք։ Նշանակեալ էիր թէ այս սուրբ Տաճար Աստուածային ոչ միայն ի մէնջ, այլ ի ձէնջ ևս յարգելի է, և խնամեցեալ։ Ցիրաւի՝ ամենայն հաւատացելոց Քրիստոնէից ցանկալի և սիրելի է, և ի նախնեաց Ձերոց ևս խնամարկեցեալ, բայց մինչ Տաճարն սիրի և պատուեցեալ լինի, արժանէ զի և հոգաբարձու պաշտօնեայն ևս ոչ անպատիւ լինիցի։ Զնախանցեալ Հայրապետացն սրբոյ Աթոռոյս զտաժանելի կիրսն Թողումք. մեք ի մերս տանելինիմեայ ժամանակի հոգաբարձութեան քանիցս անգամ տեսաք շրջապատեցեալ ի գաժան թշնամեաց, հայեցաք և ոչ ոք գտաւ օգնական կամ ի թիկունս հասանօղ. այլ միայն Աստուծոյ ողորմութեամբն և տառապեալ ազգիս մերոյ գառն քրտամբքն պահպանեցաւ սուրբ Տունս։ Ո՞ւր էր թէ և այժմեան տարակուսանացս որ ի կասկածանաց մերձեալ թշնամեաց՝ մէկ գիւրիչ գտանիւր. կամ թէ ծանրաբեռն պարտուցն ուրեք ուրեք եղելոց մէկ օգնական երևիւր։ Իսկ յայսպիսի նեղութիւնս մեր ի մեծութենէ ձերմէ յուսամբ գոնէ բանիւ մխիթարիլ, ահա զայդպիսի բանս գրեք մեզ։ Եւ սակայն վասն սիրոյն զոր Քրիստոսիւ հաստատուն ունիմք առ միմեանս, այն բանք ևս հաճելիք են մեզ. զի ըստ իմաստնոյն՝ լաւ են վերք բարեկամի, քան զկամակոր համբոյրս թշնամւոյ։ Զայս գիտելով մեք վասն ողջութեան և յաջողութեան ձերոյ աղօթաւոր եմք. և որքան կարեմք պատուել զՑերութիւնդ ձեր, զայն ոչ խնայեմք, Որպէս այժմ ի յուղարկելդ զՄարգիս եպիսկոպոսն նամակաւ ձերով, ի պատիւ մեծութեանդ սիրով ընկալաք։ Ցառաջագոյն բանագրութիւնքն մեր էին վասն ոչ մատանելոյ խարդախութեան ի կարգադրութիւնս աղգի մերոյ։ Բայց այժմ որ գրեալ էիք զանուն կաթուղիկոսութեան և զկարմիր կնիքն խափանել, և եպիսկոպոսական պատուով առաջնորդ լինիլ Հաղբատայ սրբոյ վանից. որոյ աղագաւ և թեմականքն ևս մահսէր էին գրեալ. և ինքն ևս աստ պայմանագիր ետ մեզ. վասնորոյ և մեք հաճեալ զկոնդակ առաջնորդութեան տուաք և ըստ ամենայնի շահեալ ուրախութեամբ

դարձուցաք. որպէս և ինքն ունի պատմել ի հանդիսի մեծանձնութեան ձերոյ: Իսկ արդ՝ որպէս մեք կատարեցաք զկրաման ձեր. արժանէ՝ զի և մեծութիւն ձեր անսայցէք մերումս կարևոր խնդրոյ. և այս ոչ թէ նոր իմն խնդիր է, այլ ըստ ձեր գրեցելոյն: Քանզի յարգութիւն ձեր խնդրեցիք գտուրը Գեղարդն ի փարատումն ժանտախտին. և մեք առաքեցաք՝ որ Աստուծով փութանակի փարատեցաւ ժանտամահն, և ոմոք փափագունէր համբուրելոյ, համբուրեաց, այս ութ ամիս եղև որ յայդր կայ, և հարիւրաւոր ուխտաւորք հանգիպին աստ և ոչ գտանեն. այդ Յովհաննէս եպիսկոպոսն ևս որ ի բաղում իրս պիտանի է մեզ, այդպէս ապագործ անկեալ կայ. և բնաւ հարկաւորութիւն չունի յայդր ձնալն. խնդրեմք ի բարեպաշտութենէ Քրիստոսի արքային, զի ըզսուրբ Գեղարդդ Յովհաննէս վարդապետիդ ընդմիոյ ձեր հաւատարիմ ծառայի գարձուսցես առ սուրբ Աթոռս զգուշութեամբ բերել հասուցանել՝ որոյ ազագաւ յոյժ շնորհակալ լինելոց եմք զԱստուածսիրութենէ քումմէ: Նորք որպիսութեան կողմանց՝ Խոյայ և երկրիս յայտնի են իմաստութեան ձերում: Իսկ զմեր նեղսալի կացութիւն ևս հոգևոր որգիդ մեր Սարգիս շնորհունակ եպիսկոպոսդ ծանուսցէ: Ողջ լեր փառաղուարճ կենօք ի հրճուանս մեր: Գրեցաւ յամի Ցեառն 1799 և յօգոստոսի:

Ի յամիդ առ սուրբ Կիրակոս եկեղեցւոյ դանձապետ ս. Աթոռոյս մահտեսի Մարտիրոսն մխիթարութիւն վասն մահուան եղբօրն և եղբորորդւոյն և՛յլն:

Ի Բենկան առ մահտեսի Ստեփան ամիրայի որդի մահտեսի Երեմիայն ի պատասխանի թղթոյն վասն արապկերցի բանաղրեալ Ղուկաս վարդապ. արձակմանն:

Ի Գապնայ Մատէնն առ մահտեսի Ղուկասն, ի պատասխանի թղթոյն որով ծանուցեալ էր թէ գնացեալ յԱրապկեր հասու եղար անցիցն Ղուկաս վարդապետին, որ անպարտ էր և այլն:

Թուղթ ի Վան առ Ցարութիւն աղայն մահտեսի Թօմայեան, ի պատասխանի Բ թղթոց նորա. որոց մինն ընդ աշխի մահտեսի Վարդանին, եւ միւսն փայլկաւ էր յղեալ հանդերձ փաշայի թըղթովն:

Առաջին թուղթն քո ի յուլիսի գրեցեալ էհաս առ մեզ ձեռամբ աշխի մահտեսի Վարգանին, և վասն հոգատանելոյն ձեր ի յղել զաշխին ի պէտս մեր՝ շնորհակալ եղաք զսիրելոյդ: Եւ զայլ որպիսութիւն աշխատոյն յետոյ գրեսցուք: Իսկ զոմանս որ զձեր ցաւալի պատահմանցն նշանակեալ էիր, ընդ այնս և մեք արամեալ ցաւեցաք: Ապա յամսոյս գրեցեալ թուղթքըն ձեր հանդերձ Իղէթլի փաշայի թըղթովն հասին ի իններորգ օրն ամսոյս. և ծանեաք զոր ինչ գրեալ էիք զվանցուցն, ի Պօլիս եղելոց ամբաստանելն զձէնջ առաջի պատրիարքին և իշխանացն, և զոմանս ի ձեր կողմնացուցն ի քիւրէկն տալն, (թէ ե. յետոյ ազատեցեալք են.) և այլն. որոյ սղագաւ և խնդրեալ էիք, զի թուղթ գրիցեմք առ Պատրիարքն և իշխանսն ի վկայութիւն անպարտութեան ձերոյ. և պերճապատիւ փաշայ էֆէնտիին խնամատար գոլոյն և ոչ ըլնաստգործ: Եւ մեք հաճեցեալ մինչ ձեռնարկեցաք գրել զրանս ինչ՝ ի Թայազտոյ նորապերճ Մահմուտ փաշայ էֆէնտիէն թուղթ եկն առ մեզ բնաւին ընդգէմ այգմ խնդրոյ. այլ և ի մեծէն Պօլսոյ ի վանցուց միւս կողմնակացն թուղթ մի տաճկերէն և թուղթ մի հայերէն գրեալ յայգր առ ոմանս՝ ի Զամուշզատէ Հիւսէյին տալէն յղեցեալք ժամանեցին առ մեզ, զորս ընթերցեալ՝ առ ինքն գարձուցաք: Որովք և կարի տարակուսութիւն եղև մեզ: Եւ ամենևին անմարթ էր մեզ մտանել ընդ մէջ երկուց հզօրաց, և արծարծել զխռովութիւնս: Նաև երկուց պատուէրի փաշայից գրուածքն ևս այսպիսի կամս ցուցանեն. որպէս թէ մեք մեծազօր թագաւորին արզ գրիցեմք. սակայն ոչ է սովորութիւն մեզ՝ որ մեք արզ գրեմք. այլ որինչ բանք լինին մեզ, Պատրիարգի և իշխանաց ձեռօքն արզ լինին, որպէս և ի Ֆէրմանէն մերմէ յայտնի է: Իսկ Պատրիարքին և իշխանաց գրելն ևս յայնժամ

պատշաճի, որ բանին քաջ տեղեակ իցեմք, կամ թէ մահսարաւ դիտացեալ լիցիմք։ Բայց տեղւոյդ ամենայն բանքն մեզ չեն յայտնի. միայն սրբոյ Աթոռոյս և մեզ պատկանեալ բանսն դիտեմք որ մեզ հակառակութիւն ինչ չէ եղեալ ի ձէնջ, և նուիրակին մերոյ և սրբոյ Աթոռոյս ամենևին մեկ վնաս չեն հանդիպեալ ոչ ի Դօլվէթլի փաշայէն և ոչ ի ձէնջ։ Ըստ որում և նուիրակն միշտ շնորհակալութիւն գրէ, և ոչ զարտունջ երբէք։ Այլ քաղաքիդ բնակչաց և կողմանցդ վանորէից և այլ իրաց որպիսութեանցն լաւին կամ վատին քաջ տեղեկութիւն չունիմք։ Եւ ի մեծն Պօլիս ևս թէ զի՞նչ են խօսեցեալ, և զի՞նչ ամբաստանութիւն արարեալ, չդիտեմք. միայն ձեր դրեալն է զոր նոր իմացաք։ Եւ թէպէտ կարելի էր ի մերս կողմանն բանից ղջատագովութիւնսն գրել պատրիարք վարդապետին և իշխանացն, բայց զի երկու Դօլվէթլի փաշայքն իրերաց ներհակ խնդիրս էին առաջադրեալ մեզ, անհնարին եղեւ մեզ գրել ինչ՝ զի թէ զմիոյն կամն դրէաք, միւսն վիրաւորիւր. և զինչ խոհեմութիւն էր մեզ ի մէջ երկուց իշխողաց մտանել, և թշնամի յարուցանել ընդդէմ սրբոյ Տանս. մանաւանդ զի այդպէս ումուրներուն մէջ չեմք խառնեցեալ, և զամենայն մեծամեծս ջանամք ի բարեկամու. թեան ունել առ սուրբ Աթոռս։ Քանզի յայտ է ամենեցուն որ մեր վարդապետքն յիւրաքանչիւր տեղիս շրջին. որպէս և յօրհնեալ երկրիդ և առաւել ևս ի Բայազիտոյ անպակաս է երթևեկութիւն մերայնոց. և բաղում բանք և դործք մեր անդ վճարին. վասն սրոյ անմարթ էր մեզ հակառակաբար վարիլ ընդ իշխողի տեղւոյն նոյնպէս և ընդ տեղւոյդ իշխողին։ Ուստի՝ յերկոցունց ընդդէմ իրերաց խնդրոցն ևս հրաժարեցաք։ Եւ ահա Իղէթլի փաշայի թղթոյն ևս ըստ այսմ պատասխանի դրեցաք, որ խաթրաձաց չլինիցի ի մէնջ։ Արդ՝ յիրաւի՝ յոյժ ապդնապաշ տարակուսեալ ոչ զօրեմք առ ելս իրաց վիճդդ. միայն խնդրեմք Աստուծոյ՝ զի նա ինքն իւր առաջնակարող զօրութեամբն զայդ խռովութիւն ի բաց բարձեալ ի ձէնջ, զխաղաղութիւն հաստատեսցէ ի ձեզ։ Զայսքան ինչ դիտացեալ առ ժամս, ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԽԸ. Թուոջս և յօդոստոսի ի սուրբ Էջմիածին։

Թուղթ առ պարոն Մկրտումն Գալոստեան ի Հաշտարխան, յաղագս անդանօր մեռեալ Ալիասկեար տաճկին. որոյ վարիսք էին յԵրեւան եղեալ Մահմատ Հիւսէին բէկն եւ այլք. որք զՀաճի Սատիտօղլի մօլլայ հաճի Բաբային վէքիլ էին կարգեալ իւրեանց, եւ բազմանիք վաքիլլամային յուղարկէին անդ տիրել կայից մեռելոյն։

Ցայդր ի Հաշտարխան հռչակաւոր քաղքիդ Ալիասկար անուն Ղզլրաշ ոմն մեռեալ է. որոյ ազդականք և վարիսք են այսր Երևան քաղաքի Մահմատհիւսէին բէկ կոչեցեալ ոմն և այլք ևս։ Որք այժմ յՀաճի Սատիտօղլի մօլլայ Հաճի Բարային վէքիլ կարգեալ ինքեանց, և վկայութեամբք Երևանու դատաւորին և այլոց ընտերցողաց և մեծամեծաց վէքիլլամայ սահմանեալ և տուեալ ի ձեռս դորա յուղարկեցին յայդր՝ աիբել ետացեալ կայից վերոգրեալ մեռելոյն. և միչ յուղարկէին զդա, ի մէնջ ևս խնդրեցին մերով դրութեամբ վկայել ստուգութեան բանից վէքիլլամային։ Ուստի՝ և մեք զայս Թուղթ դրեմք առ սիրելութիւն քո. զի յիշեալ Հաճի Սատիա օղլի մօլլայ Հաճի Բարայն որ վէքիլ է կարդեցեալ Մահմատ Հիւսէին բէկ կոչեցելոյն և այլոց ազդակցաց նորին, յորժամ դայցէ յայդր՝ ներկայանալ առաջի իրաւասէր Դատաւորաց և քննող իշխանաց օրհնեցելոյ Ազգիդ Ռուսաց, դու ազնուախոհ սիրելիդ մեր ընդ այլոց ևս ոմանց մերայնոց բարեպաշտ իշխանաց այսու մերովս Թղթով վկայութիւն արասջիք վէքիլութեան յիշեցելոյ մօլլայ Հաճի Բաբային Սատիսեան, ըստ ի ձեռին ունեցեալ բազմակնիք վէքիլլամային, որ յիրաւի դա վէքիլ է կարդեցեալ ի Մահմատ Հիւսէին բէկէն, և յայլոց յազդակցաց նորին, որք են վարիսք ի տեղդ մեռեալ Ալիասկեարին։ Այսպէս դիտացեալ՝ ողջ լեր ի Տէր, և յանձնեցեալ ի խնամս նորին, հանդերձ քոյայնովքն ամենեքեան։ Ամէն։ Գրեցաւ յամի Տեառն 1799. և ի սեպտ. 10. ի լուսանկար Աթոռս ս. Էջմիածնին։

Թուղթ առ Գեւորկի արքայն վրաց, վասն մեր Ճորտ հանգուցեալ Դաւթի տանն,

Ճորմէ սիրով և օրհնութեամբ և սուրբ ողջունիւ Ծանուցուածն լիցի մեծաքաղաքիկ և բարձրապատիւ սիրելւոյդ մերոյ և խնամաշատ բարեկամիդ սրբոյ Գահին՝ Քրիստոսասէր՝ փառազարդ և մեծազօր Գեւորկի Արքայիդ վրաց։ Զի ղոր ինչ կարևոր գրելին էր, քան զայս յառաջ գրեցաք ընդ Սարգիս եպիսկոպոսին նորապէս առաջնորդ կարգեցելոյն Հաղբատայ վանացս, Իսկ այժմ զայս ունիմք յայտնի առնել. նախ՝ որ ամսովք յառաջ Գ. Թուղթս էիր յղեալ ի վերայ հանգուցեալ Շահամիրի որգւոյն և Թուրին և փեսային ի Մատրաս. զի յուզարկիցեմք, յաւուրս ինչ սպասեալ մեր թէ ընդ պարսից կողմն ճանապարհ լիցի, իբրև օրստօրէ խառնակեալ վտանգաւորեցան կողմանքս, ապա ի յուղարկելն մեր զԹուղթս ի Կոստանդնուպոլիս, զայն երեք Թուղթսն ևս ընդ այնոսիկ առաքեցաք, զի հաւատարմաց ձեռօք ի վերայ Բազգատաս յուզարկեսցեն, Երկրորդ՝ սրբոյ Աթոռոյս Ճորտ Դաւիթն որ վախճանեալ է անժառանգ, և տունն նորա որ սրբոյ Աթոռոյս պարտի ժառանգութիւն լինիլ ըստ սահմանի երկրիդ, և անկեալ է ընդ ձեռամբ այլոյ ուրուք, զոր ի ծանուցանելն սիրելի որգւոյն մերոյ Յովհաննէս եպիսկոպոսին առ մեծութիւն ձեր, հրամայեալ էք յապահովիլն գլխոյ ձերոյ ի խուժանաց՝ գարձուցանել զտունն զայն ի ժառանգութիւն սրբոյ Աթոռոյս, գրեալ էր մեզ նոյն Յովհաննէս եպիսկոպոսն, վասնորոյ շնորհակալ եմք զառաքանամ մեծութենէ ձերմէ։ Արդարև՝ որպէս ասէ երջանիկն Արքայից Դաւիթ, պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ։ Եւ արդ՝ մինչ սահման և օրէն է երկրիդ՝ որ Ճորտ ուրուք եթէ անժառանգ վախճանեսցի, մնացեալ կայք նորա՝ տեառն իւրում հասանին. ապաքէն յիշեալ Դաւիթն ևս անժառանգ մեռանելով, նորին տունն սրբոյ Աթոռոյս է, և ոչ արժան զի սահման և կանոն երկրիդ առ այլս հաստատուն լիցի, և ի մերս մասին խախտեսցի, Վասնորոյ խնդրեմք ի մեծութենէ բարեպաշտ Գիւորկի Արքայիդ, զի որպէս իրաւասիրաբար խոստացեալ ես Յովհաննէս վարդապետին, ըզնոյն բարի խոստումնդ ճշմարտապէս կատարեսցես Թարց զանցառութեան զայն տուն Ճորտին սրբոյ Աթոռոյս գարձուցանելով յօտարաց առ սորին ժառանգութիւն։ Որով զարդարութիւն և զիրաւունս գործեալ փայլեցուսցես զքաղաւորութիւնդ ի հաճոյս ամենարդար թագաւորին Աստուծոյ. և երկրորգ զմեզ առաւել ևս շնորհակալու կացուսցես զմեծութենէդ. ոյր սակս և հանապազ աղօթաւոր եմք, Իսկ զնեղութիւնս մեր և զայլ որպիսութիւնն Թողումք ի Յովհաննէս եպիսկոպոսէդ իմանալ, եթէ կամիցիս։ Ողջ լեր ի մխիթարութիւն վըշտաւորութեանս մերում, Ամէն։ Գրեցաւ յամի Տեառն 1799. ե. ի սեպտ. 17. ի սուրբ Էջմիածին։

Թուղթ մխիթարութեան ի Հայազիտ առ Ազուլեցի Թումանեանց հանգուցեալ Պետրոս աղայի եղբօրորդիսն և իւր որդիսն վասն մահուան նորին, և խրատ առ ինքեանս։

Առ վաղիրին Սառաֆ Փիլիպպոս ամիրայն, վասն արապկերցի Ղուկաս վարդապետին ի բանադրանաց արձակման և յանձնարարութիւն յաղագս նոր նուիրակին Ամղայ,

Առ Փիլիպպոս ամիրայի որդի պ. Ալիխարն ի նոյն միտս։

Ցայս վայր հասեալ գրութեանցս ի դիմաց Տեառն ՂՈՒԿԱՄՈՒ սրբազան կաթուղիկոսին, այժմ ի՞ վերոյ նշանակեալ Թուոյ դեկա. իը, փոխեցաւ յաստեացս նա ինքն մեծավաստակ հայրապետն. որոյ դիւցին Ջեր լուսաւորեսցէ: Ապա այսուհետեւ ի դետեւեալ Թուղթսդ որ ինչ եւ դեպ լիցին գրել, ի Միաբանից սրբոյ Աթոռոյս դրեսցին:



Մի ամենայնից սրբոյ Գայիս Թուղթ առ Շիրեմ Արհի եպիսկոպոսն նուիրակն Հիւսիսոյ կողմանց, ըստ հասարակականի Թղթոյն, ծանուցումն զմահուանէ Տէր Ղուկասու սրբազան կաթուղիկոսին. եւ մխիթարութիւն. եւ ազդարարութիւն զորպիսութենէ մահսերազրութեան ի Կ. Պոլիս վասն նորոգ կաթուղիկոսի։

Աստուածապարգեւ առատաձեռն շնորհօք զարդարեալ եւ բարեհամբաւեալ ազնուաբարոյ եւ վսեմահոգի եղբօր մերոյ Մեծապատուի՝ Յեսուեանդ Եփրեմի հոգեզգօն վարդապետի եւ սրբափայլ Արհի եպիսկոպոսի բաղմաւ սիրով եւ կարօտիւ ողջոյն մատուսցի։

Գիտասցէ յարդութիւն Ձեր։ Զի ըստ որում մարդկայինս հոգածին ընութիւն են. թարկեալ գոյ Աստուածային անլուծանելի վճռոյն գառնալ անդրէն ի հող, և ամենեցուն եկելոց յաշխարհ կայ ՚ի՞ւայ միանգամ մեռանիլ և անցաւորաւս դիմել առ. մշանջենաւորութիւն հանդերձելոցն։ Սմին իրի և Վեհափառ Հայրապետն մեր Տէր Ղուկաս սրբազան Կաթուղիկոսն լրացուցեալ ջամանակ կենաց իւրոց կատարեաց զանվրէպ հրամանն ստեղծողին ամենեցունց։ Քանզի յետ առաջնոյ ծանր հիւանդութեան որում ինքնին իսկ վերահասու և գարմանատար էր, թէպէտ և յուղևորութեան քում առողջացաւ իբրու և տևեաց մինչև ցնոյեմբեր ամի 1799, բայց յայնմամ դարձեալ, սաստկացաւ. հիւանդութիւնն մինչ ոչ ևս օգնել դեղոց և սպասաւորութեան բժշկաց. զի կամք եղեն վերին արքային կոչել զնա յաստեացս։ Եւ իրրև ինքն ևս զգաց զճանապարհորդութիւն իւր, պատրաստեցաւ խոստովանութեամբ և Թոշակաւ փրկարար սուրբ հաղորդութեան. և ի դեկա. Ի՚. փոխեցաւ առ. Քրիստոս։ Որ յիրաւի հանդեաւ ինքն ի ցաւալի կրից աղցաւոր կենցաղոյս. այլ զմեզ թողեալ որբս և անտերունչս մանեաց ամենի կոհակաց յանդուգն ալեաց ծովածուփ աշխարհիս ի մըրրկալից ժամանակիս։ Ճորում թէ ո՞րպիսի ջանիւ և աշխատութեամբ տանէր զանձան նեղութեանց և հոգոց, և ո՞րքան խոհեմութեամբ և արիութեամբ պահպանէր զսուրբ Աթոռս և զմիաբանութիւնս ի շըրջապատելոց դաժանաց, քաչ դիտէ սրբութիւն քո։ Ապա զի՞րդ էիցեմք ողբալի՝ որք զրկեցաք յայնպիսի քաջընտիր հովուապետէ։ Սակայն՝ զի Աստուծոյ է գործ, զի՞նչ ունիմք ասել. կամք նորա եղիցի օրհնեալ՝ որև լուսաւորեսցէ զհոգի սրբազան հայրապետին մերոյ, և ընդ երջանիկ հայրապետացն սրբոց գասեսցէ. և դլուխ գերապատուելի եղբօրդ մերոյ ողջ պահեսցէ և հոգւովին սրբով մխիթարեալ ընդ երկայն աւուրս արասցէ։ Ըսպ արդ՝ մինչ ընութիւնս հնարաւորեալ է յաջորդութեամբ իբր ըստ անմահիցն մշտնջենաւորաբար ունիլ զգործ և զիշխանութիւն, և այս ի վերնախնամն տեսչութենէ։ Եւ նարգենիս ղկնի անցանելոյ յաստեացս երջանիկ հայրապետին մերոյ պարտ էր մեզ ջանալ ի խնդիր յաջորդ կաթուղիկոսի, վասնորոյ բոլոր միաբանք սրբոյ Աթոռոյս և երեսելի անձինք մերազնէից երկրիս երկիցս գումարեալք ի սուրբ եկեղեցին խօսեցաք և յիշեցաք զամենայն երե-

ւեալի եպիսկոպոսունս ազգիս մերոյ, և վերջապէս կայացուցաք զբանն նախ ի վերայ Պատրիարքին Կոստանդնուպօլսոյ՝ Դանիէլ Արհի եպիսկոպոսին, երկրորդ ի վերայ երկրիդ վերատեսուչ Յովսէփ Արքեպիսկոպոսին, և երրորդ ի վերայ կեսարիոյ Առաջնորդ Սեբաստացոյն Արքեպիսկոպոսին. որպէս զի զայսոսիկ ի մահսարին գրեալ առաջադրիցեմք ազգին՝ կացուցանել, ի յերից զորն և կամիցին։ Բայց զմասն ածելով ղբազում ինչ, զարհուրեալ ի մեծագոյն վտանգից յաղագս շրջագայութեանցն Յովսէփայ արքեպիսկոպոսին ընդ ղօրաց այգմ Ցերուեթեան ի կողմանս կալուածոյն ագարացւոց և ի կողմանս աշխարհիս Պարսից, և ոխանալոյ նոցա առ նա, չկարացաք գրել զանուն նորա ի մահսարին. ըստ նմին և Սեբաստացոյն արքեպիսկոպոսին անուն ևս ոչ գրեցաւ։ Այլ ընդ Պատրիարգ վարգապետին անուան երկրորդապէս զբոյդ անուն գրեցաք, թէպէտ խորհէաք ևս թէ՝ մինչ վտահանայցեն ազգն յայգմ երկրէ զոք խնդրել, թերևս նախ զՅովսէփ արքեպիսկոպոսն խնգրիցեն, և ապա զքեզ։ Այլ բանք և պարագայք բանից յոլով՝ որք չեն երկարելի. ինչ և իցէ, զայն առաջին մահսէր այնպէս գրեալ, ընդ Դաւիթ արհի եպիսկոպոսին յղեցաք ի Յունվարի 16։

Յետ մեռանել աւուրց յոլովարկելոյ մեր զայն մահսար, ի Թիֆլիզու ՅԷր Առաքել Աւագ քահանայն և Մխիթարեան վարդապետ Յովսէփին Թղթովք Գիւրկի արքային վրաց և արքայորդւոյն, և մահսերիս քաղաքի մերազնեայցն եկին ի սուրբ Աթոռս. որք գրելովք ջատագովութիւնս զարժանապատուութենէ Յովսէփ Արքեպիսկոպոսին, առաջագրեալ էին մեզ զնա ընտրել կաթուղիկոս։ Մեք պատասխանեցաք եկողացն ղբանս ժողովոյն թէ՝ ընտրեալ եմք զնա հաւանութեամբ. բայց վասն վտանգին ոչ իշխեցաք գրել զանունն նորա ի մահսարին. զի մի մեք լիցուք պատճառք վնասուցն կասկածելեաց ազգին և սրբոյ Աթոռոյս՝ և իւրն ազնուականն անձինն։ Վերջապէս եկեալ ի միջին ճանապարհ, զերկրորդ մահսար գրեցաք ի վերայ առաջնոյն, և ընդ Դանիէլ Պատրիարգին զՅովսէփ Արքեպիսկոպոսն հաւասարապէս առաջագրեցաք ազգին՝ յերկուց զորն և կամիցին՝ կացուցանել։ Եւ սուրբ հանգակաւ հասուցաք զայն ի կարին Մահսերազաւորին մերում, առնել և զայն ի կոստանդնուպօլիս, և զբանն ժողովոյն ևս ծանուցեալ եմք նոցա, Իսկ յիշեալ պատգամաւորքն Թիֆլիզու՝ առաջի արկին մեզ և զայս խնդիր իբրու բանիւ Արքային Թէ՝ առ Յովսէփ արքեպիսկոպոսն ևս մի հրաւիրանաց Թուղթ գրեցէք, առնիմք ի ձեռս Արքային որ նա յուղարկէ և դիւր լինի ի ձէնջ։ Մեք ևս որպէս ճշմարտութիւնն պահանջէր, առանց ինչ թագուցանելոյ գրեցաք. Թէ՝ մեք հաւանութեամբ ընտրեալ եմք զարգութիւն քո, բայց վասն զարհուրելի պատճառացն խղճեցաք գրել յառաջնում մահսարին. բայց երկրորդ մահսարիւ գրեցաք։ Եւ զայս հրաւիրանաց Թուղթ գրեալ ցուցանեմք գերարգութեանդ զբարեյօժարութիւն մեր առ քեզ. որ եթէ ի վտանգից պատճառացն ոչ կասկածիցիս, որք կարեն պատահիլ ազգին և սրբոյ Ցոհաննու աւետական անձին քումմ, մինչ ազգն ևս հրաւիրեսցէ, հրամայես գաս, ամենայն յարգութեամբ ընդունելոց եմք. իսկ եթէ երկիցես և ոչ կամիցիս գալ, ոչ լինիմք քեզ մեղադիր, Զայն ևս այնպէս գրեալ առաքեսցէ առ Արքայն՝ որ ըստ ջերմեռանդ փութոյ անձին բարեջանութեան առաքեսցէ առ Յովսէփ Գերապատուելի Արքեպիսկոպոսն։ Եւ արդ պարտ էր մեզ բազում աւուրբք յառաջ գրել առ օրհնեալ ժողովուրդդ և առ ձեզ զայս ազդարարութիւն և մխիթարութիւն, Բայց յիշեալ հոգսալից զբաղմունքն և այլ խուժանք զանազան ցաւոց կուաեալ ի վերայ, ոչ թողին մեզ զաչս բանալ մինչև ցարդ։ Այժմ հաղիւ հազ միջոց ինչ գտեալ կարացաք գրել զթուղթ մի օրհնութեան և մխիթարութեան առ Աստուածասէր ժողովուրդս մերազնեայս օրհնեալ կայսերական երկրիդ՝ և զթուղթ մի ևս առ Ցերամբ ղօրացեալ Աղա Մկրտումն Գալսեանն. և զայս գիր ևս առ վսեմախոհ բազձալի եղբայրդ մեր գրեալ, այնքիւք հանգերձ առաքեցաք առ պատուականութիւն քո. զի Մկրտում աղայի զթուղթն ացես նմա, ղհասարակական թուղթն ընթեռնուլ առեալ ի սուրբ եկեղեցիան Քաղաքիդ Հաշտարխանու ապա յուզարկեսջիք յայլ տեղիան, և եթէ պատեհ

վարկանիցիք, զօրինակն առեալ առաքեսջիք ի Շրջակայսն։ Եւ Մեծապատիւ եղբայրդ մեր զայսոսիկ այսպէս իմացեալ՝ սիրանիշ գրովդ մխիթարիչ լիցիս վշտակիր միսնուէթեանս. և զորպիսութեանց գործոյդ, և թէ հայրապատիւ յարգելին մեր Յովսէփ սրբազան արքեպիսկոպոսն ի Պետրպօլըս եկեալ իցէ յայդր, և ձեռնարկութեանդ սկզբնաւորութիւն ղիմեր եղև, ծանուցանել զի խնդրի առ ի միամտութիւն ցաւալեացս, որք գոլով անտերունչ և յոգնատարժան ի զանազան կիրս՝ կարօտիմք այցելութեան Աստուծոյ և սփոփանաց հարազատամիտ որդւոց սրբոյ Գահիս։ ՈՂՋ լեր Ցերամբ, ի հրճուանս որբացեալ միաբանից սրբոյ Աթոռոյս՝ ստորակնքողաց, և այլոց ամենեցուն որք ընդ ձեզ։ (Կնիք)

Գրեցաւ յամի Տեառն 1800, և ի փետրվարի. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ի միաբանից սրբոյ Աթոռոյս թուղթ առ Ամղայ սուրբ Կիրակոս եկեղեցւոյ դանձապետ մահտեսի Մարտիրոսն, որ ընդ հողելոյս կաթուղիկոսի գրեալ առ սա թղթոյն, և շնորհակալութեան կոնդակին որ վասն գանձանակադրամիցն, յղեցաւ ի ձեռս սորա։

ի Միաբանից սրբոյ Աթոռոյս թուղթ առ վէզիրի սառաջ Փիլիպպոս Ամիրային, ծանուցումն զմահուանէ Տէր Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, եւ թէ յառաջ քան զվախճանն թուղթս էր գրեալ քեզ եւ առ որդին քո եւ առ այլս ի պատասխանի թղթոցն ձերոց յաղագս արծակման արաբկերցի Ղուկաս վարդապետին։ Զորս մինչ ոչ ժամանեաց ինքն յուղարկել՝ մեք ահա ուղարկեցաք։ Եւ զան վասն ինքնակամ ելանելոյն աստի յիշեալ Ղուկաս իբր վարդապետին։

ի լուսանկար սրբոյ Գահիս Էջմիածնի պաշտօնէից՝ Գործակալ Եպիսկոպոսաց մեծաւ սիրով և. կարօտիւ Քրիստոսապարգեւ ողջոյն և հոգևորական օրհնութիւն, և երկնաձիր մխիթարութիւն ժամանեսցէ Աստուածասէր և բարեպաշտ սիրելւոյդ մերոյ՝ հաւատարիմ և օգտաբար որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ մեծահամբաւ դերապատուելի և աղնուամեծար օրհնեալ Փիլիպպոս Ամիրայիդ. և բարեհոգիկ շքեղաշուք որգւոց քոց և բնաւից ընտանեացդ և ազգայնոց և բարեկամացդ, մխիթարիլ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս։

Գիտութիւն լիցի բարեպաշտութեան քումմ, Զի յայտնագոյն գոլով ճշմարտութեան բանի իմաստնոյն Սողոմոնի թէ՝ մի մուտ է ամենեցուն յաշխարհս, և միեղ հասարակաց, որք միանգամ մտանեն յաշխարհս ծննդեամբ, նոյնք և ելանեն յաշխարհէ մահուամբ։ Ըստ այսմ Աստուածագիր անփոփոխ սահմանի՝ բազմավաստակ Հայրապետն մեր ՏԻՐ ՂՈՒԿԱՍ սրբազան կաթուղիկոսն լցեալ ջ֊ամանակ կենաց իւրոց, հաղորդութեամբ մարմնոյ և արեան Տեառն՝ փոխեցաւ յաստեացս բարի մահուամբ ի ՌՄԽԸ թուին և ի դեկտ. ԻԸ։ Որ թէպէտ ինքն հանգեաւ ի ցաւոց վշտալի կենցաղոյս, այլ զմեզ եթող որբս և ախուրս և սառակուսեալս յամենայնի ի բազմավրդով ժամանակիս։ Այլ մինչ կամքն Աստուծոյ այնպէս հաճեցաւ, մեք ևս ոչինչ կարելով առնել, միայն գոհութիւն և փառս վերառաքեմք ամենակալ Տէրութեան Նորին, որ և անհուն ողորմութեամբ իւրով լուսաւորեսցէ զհոգի Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին և ընդ սրբոց Հայրապետացն գասակցեալ պսակեսցէ. և զպատուականադոյն սիրելիգ մեր ողջ պահեսցէ և միխթարեսցէ հանդերձ քոյլնովքն ամենեքումբքն։ Իսկ ըստ որում չէ հնար անդամոց առանց գլխոյ կեալ, և հարկ էր մեզ ի խնդիր լինիլ յաջորդ կաթուղիկոսի առ ի լինիլ դլուխ և դարմանիչ հասարակութեան մերոյ և օրհնեալ ազգիս Հայոց, և կառավարիչ սրբոյ Աթոռոյս, ուստի՝ յետ վախճանման սրբազան Հայրապետին ղմահսեր գրեցաք ի Կոստանդնուպոլիս վասն նորոգ կաթուղիկոսի։ Եւ Հայցեմք յԱստուծոյ, որ ըստ իւր բարեսէր կամացն զբարի Հովուապետ մի շնորհեսցէ. Ամէն։

Եւ արդ՝ կարևւոր դասեցաք զայս օրհնաձիր թուղթ գրել առ Աստուածասիրու-

թիւն քո յաղագս պսոր պատճառիւ Զի յօգոստոսի Ը. գրեալ թուղթն գերաղնիւ սիրելւոյդ հանդերձ թղթովքն ցերամբ ղօ. րացեալ որդւոյն քո Ալփիար աղաչաւէին, և Միքայէլ և Փիլիպպոս վարդապետացն առաջնորդաց Ակնայ՝ և Ղուկայի վանից, և մահտեսի Սահփան ամիրայի որդի մահտեսի Երեմիային և Կապնայ Մատենու երեցփո. խան մահտեսի Ղուկասին և պլոց ևս՝ ձե. ռամբ արապկերցի Ղուկաս վարդապետին ի հոկտ. ԺԴ, Հասին առ սրբազան Հայրա. պետն։ Եւ ըստ որում խնդիր էիք գրեալ արձակել զնա ի բանադրանացն, սրբազան Հայրապետն վասն յարգի խաթեր ձերոյ առանց պատժելոյ՝ ներողութեամբ արձա. կեաց զնա, և Հայրախնամ սիրով ընկա. լաւ, և ըստ խնդրոյն նորա կարգեաց ևս ի կարգս միաբանութեան մերոյ։ Եւ փոյթ ունէր անյապաղ դրելոյ զպատասխանիս թղթոցն ձերոց առ ի միամտութիւն ձեզ, սակայն զի Դիարբաքիրու նուիրակն գար. ձեալ էր առ Սուրբ Աթոռս, և նուիրա. կութեան ժամանակն ևս վաղապէս լրացեալ և անցեալ գոլով՝ հարկ էր նոր նուիրակ առաքել, վասն այն և սրբազան Հայրա. պետն պատշաճ եաես զպատասխանիսն թղթոց ձերոց ընդ նոր նուիրակին գրել՝ հան. դերձ յանձնարարութեամբ վասն նորա։ Որ և յետ բազում հոգոց և պէսպէս զբաղ մանց, ի նոյեմբերի սկսեալ մինչև ցգեկտ. գրեցուցեալ ի կատարումն հատոյց զպա. տասխանիսն ձեր, և զյանձնարարական գրուածսն ի սակս նուիրակի, և զկոնդակս գանձանակաց Ամգայ եկեղեցացն և գան. ձապետացն։ Զորս և կնքեալ իւրովն կնքով, պատրաստեաց։ Բայց մինչ խորհէր զոմն ի յեպիսկոպոսաց նուիրակ յատկացուցանել և ուղևորել, ծանրացաւ հիւանդութիւնն և ի վերայ ժամանեաց օրհասն մահու, որպէս ի վերոյ ծանուցաքն։ Այնուհետև թէպէտ ար. գելաւ առաքումն նուիրակի, որ յաջորդ կա. թուղիկոսին է գործ. այլ պարտ համարե. ցաք մեզ զառ պատրաստ եղեալ զթուղթն օրհնութեան հոգելոյս սրբազան Հայրապե. տին յուղարկել առ ձեզ. նախ զի արժա. նասջիք վերջին օրհնութեան նորա, և երկ րորդ՝ զի առեալ զպատասխանիս առ նա գրեալ բանիցն ձերոց, անատրակոյս լինիքն ճաղագս այսորիկ՝ ահա զմիշատակեալ թուղթն լուսահոգի սրբազան Հայրապետին որք առ քեզ և առ Ալփիար աղային և առ այլս, զամենայն ի միում պահարանի ժողո. վեալ և կնքեալ հանգերձ այսու մխիթա. րական թղթովս մերով առաքեցաք՝ հասա. նիլ ի ձեռս պատուականի սիրելւոյդ, զի ղքոյդ թուղթն ընկալեալ, ղայլոցն հա. սուսցես իւրաքանչիւր տեարցն առ որս գրեցեալք են և ըստ բարեջան աշխատա. կրութեանդ վարձատրեսցիս յԱստուծոյ,

Իսկ ղՂուկաս վարդապետէն թէ աե. ղեկանալ կամիցի յարգութիւն ձեր, ճշմար. տութեամբ այսպէս ծանիցես. զի լուսահո. գի սրբազան կաթուղիկոսն յորժամ ընկա. լաւ զնա ի միաբանութիւն, ի պարսպի սըր. բոյ Աթոռոյս Գ. կամ Ե. դասարկ խուցք կային. վասն որոյ ներեաց նմա ի միում խցի նստիլ։ Այլ բազումք ի միաբանից սըր. բոյ Աթոռոյս Բ. Բ. և Գ. Գ. ընակին յիւ. րաքանչիւր խուցս, Բայց գեռ կենդանի դո. ղով սրբազանին, Դանիէլ Պատրիարքի սպա. սաւորն վարգապետ մի, և Էնկիւրիոյ նուի. րակն, և սուրբ Երուսաղէմայ վարդապետ մի եպիսկոպոսացու ի միասին եկին. որոց խուցք էին պիտոյ. և յետ վախճանման սրբազան Հայրապետին՝ մինչ զփոքրաւորսն հանեալք ի ներսէն՝ եպիսկոպոսք, վարգ. պետք և սարկաւագունք ուրեն անձինք, զնոսա ևս տեղաւորելոց էաք, ասացաք Ղուկաս վարդապետին թէ՝ մեկ մարդ ևս գու առ ի մօտդ, խստութեամբ պատաս. խանի եաս թէ՝ ես միայնակ կու նստեմ, ա. սացաք թէ՝ եղբայր՝ ամէն մեկ խցում եր. կու և երեք մարդիկ են նստեալ. մեկ մի ևս գու առ, ձմեռն է, դուրս մարդ չի կարել մնալ. որչափ յորդորեցաք՝ ունկնդիր չեղև. այլ վերջապէս պատասխանեաց թէ ես աստ չեմ մնար. և առ գործակալն ևս թէ որ. չափ վայրաբանէր իւր բերանոյն վայելուչ, զոյնս ոչ վայելէ մեզ ի թղթիս արձանա. գրութեանդ։ Ապա իբրև զձի ամենի խզեալ զսամեաս՝ ինքնագլուխ եղ արտաքս ի սըր. բոյ Աթոռոյս՝ և վազեաց յայգկոյս թէ. պէտ սուրբ Էջմիածին զոյնպիսի լրբութիւն նորա ոչ տանէր, և կարէաք զբարկացա. լիս նորա խորտակել, առ ի խելք դնել ի խելառէ գլուխ նորա, սակայն վասն

պատուոյ և անուան գերամեծար սիրելւոյդ, չկամեցաք ըստ իւր արարմանցն վարիլ։ Որ վայրենի է, զի՞րդ լինի ընատանի, զի դժնդակ գազանն ոչ խաղնի յերամս. և եթով պարին ոչ փոխէ զսևուեթիւնն. նոյնպէս և վատթարեալն ոչ փոխի ի լաւ անդր։ Նա մինչև ցայն հատակ իւր թափառական շրջադայեալ է՝ ունայն ի կրօնից իբրև ամպ անջրդի հոզմակոծեալ և տատանեալ, այժմ ինչ հնար է որ կրօնաւորութեամբ և խոնարհութեամբ միաբանութիւն արասցէ և դադարեսցի ի միում սեղւոջ, Բայց այժմ ննջգաւոր սրտիւ ստայօդ լեզուաւ առանց խղճմտանաց ասելոց է, թէ էջմիածնի միաբանքն զիս չպահեցին, որ սուտ է։ Այլ ճշմարիտ պատմութիւնն այս է՝ զոր գրեցաք իրաւախոհ յարգելւոյդ։ Եւ յառաջագոյն թուղթ էր գրեալ, և միով պահարանաւ փակեալ և առեալ ի ներսն. զայն ևս ընդ թղթոյս յղեցաք։ Իսկ ի վերջոյ երկար բանից՝ խնգրեմք յաղնուամեծար սիրելւոյդ, զմեծագոյն սէրդ և զհաւատարիմ բարեկամութիւնդ հաստատուն պահել առ սուրբ Աթոռս և առ մեզ. և միաբանից նուիրակաց և գործակալաց խնամատար լինել։ Այր սակս հանապազ շնորհակալ եմք զբարեպաշտութենէ քումմէ, որ և կացցես ողջ ի Տէր և պահպանեցեալ ողորմութեամբ նորին ի միխիթարութիւն մեզ աղօթաւորաց վանս կենաց և բարեյաջողութեան ձերոյ. Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԽԹ թուոջս և ի մարտի Գ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Թուղթ առ Յարութիւն աղայն ի Վան. յիշումն վախճանի հոգելոյս Հայրապետին, և շնորհակալութիւն վասն տրտմակցութեան իւրեանց ընդ մեզ, և միխիթարելոյն զնուիրակն։ Եւ կրկին ես յանձնարարութիւն վասն նորա։

Ի Կեսարիա առ մահտեսի Խրտըրըն վասն յղեալ ալահամրուրին։

Թուղթ ի Կարին առ Վանցի Ալխիջան աղայն, միխիթարութիւն վասն փորձութեանն մեծի զոր անցուցեալ էին ընդ նա ենկիչարիքն Վանայ՝ յեղակարծ յառնելով ի վերայ տան նորա և զամենայն կայսն յափշտակելով, և զկինն առաքուր սպանանելով, և զտուն հրձիգ առնելով. ուստի՝ ղիմեալ նորա ի Կարին առ սարասկէրն, դատ առնել խնդրէը։

Թուղթ ի Թիֆլիզ առ մայեօր պարոն Կարապետն, (որ է անդ ընդ նորեկ ղեսպանին ռուստաց,) սէր եւ օրհնութիւն եւ վաւն Ծովհաննէս վարդապետին մերոյ շնորհակալութիւն, եւ յանձնարարութիւն։

Ի լուսանկար սրբոյ Գահիս Էջմիածնի պաշտօնէից գործակալ Եպիսկոպոսաց՝ մեծաւ սիրով և բաղձանօք ժամանեցաք Քրիստոսասաւանդ ողջոյն և հոգևոր օրհնութիւն, պատուականի սիրելւոյդ մերում և օգտակարն որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Անտուծով. զօրացեալ բարեպաշտօն և մեծահաւատ՝ աղեռնուաքարոյ և իմաստնախոհ Մայօր Կարապետ Աղպիդ, և համայն ընդ քեզ եղելոց սիրելեաց և բարեկամաց, ի Տէր խնգալ։

(Շնորհք.)

Եւ ընդ օրհնաձիր ողջունատրութեան նամակիս՝ գիտասջիր իսկապէս սիրելի մեր՝ և հարազատ որդի Մ՛օրս հաւատոյ սրբոյ Էջմիածնի։ Քանզի՝ որպէս բոյս է բարուց բնութեան մարդոյս՝ ի լսելն զուրախարար համբաւ ինչ զբարեկամէն, ուրախ լինիլ, նոյնպէս ի լրոյ խաղաղութեամբ գալսեան քո ընդ մեծաշուք պետ Իւանիչ պայծառագունեղ իշխանին ի քաղաքդ և մօտակայ լինելոյ սրբոյ Աթոռոյս՝ մեծ ինն բերկրութիւն ընծայեցաւ սրբազան Հայրապետին մերոյ Ցեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, և միաբանից ամենեցուն։ Եւ կամք եղեն նմա գրել զթուղթ օրհնութեան առ բարեպաշտութիւն ձեր ի շնորհաւորութիւն գալստեան ձերոյ. բայց վասն մահարեր հիւանդութեան ոչ կարողացեալ ղյաւուկ թուղթ գրել, միայն ղողջոյն գրեաց ի թղթոջ եղբօրն մերոյ Ծովհաննէս արհի եպիսկոպոսին, խոստանալով՝ զի թէ յարիցէ ի հիւանդութենէ յայնժամ գրեսցէ։ Եւ սակայն կամք վերին հրամանին փո-

խեաց զնա յաստեաց, և էած մեզ զարա-
մուքիւն որբութեան, փո՛ռք և գոհութիւն
մեծի անուան նորա, որև հանգուսցէ զնա
յերանական կեանսն, և զարգոյ սիրելիդ
ողջ պահեսցէ և մխիթարեսցէ։ Ցետ այնո-
րիկ մինչ դեպ եղև մեզ գրել զթուղթ առ
վերոյիշեալ բարձրապատիւ և շքեղապանծ
իշխանն, արդարև պարտ էր մեզ, որպէս և
յօժար էաք գրել և առ բարեպաշտութիւն
քո զթուղթ օրհնութեան, բայց քանիցս
լուեալ էաք թէ դարձ արարեալ իցես այ-
սմ վասն պյուց կարևոր գործոց, կասեցաք
ի դիմանէն մերմէ։ Իսկ այժմ ցանկալի եղ-
բայրն մեր Ցովհաննէս արքեպիսկոպոսն վե-
րըսաին շնորհակալութեամբ գրեալ էր մեզ
զբարեշնորհութեանց քոց զոր ցուցանես առ-
ինքն և զճշմարիտ սիրոյդ և զօգտակամու-
թեանցդ առ սուրբ Գահս և առ մեզ. որոյ
աղագաւ և մեք շնորհակալ եղաք զաղնուա-
միտ սիրելւոյդ։ և գիտացեալ ղմեզն քո
յայգրանօր՝ յիրաւի սորջացաք յաղագս ոչ
կանխաւ դրելոյն մեր առ քեզ զգիր սիրոյ։
Այլ նարդենիս ահա զայս օրհնաձիր թուղթ
գրեցաք բարեպաշտութեան քումմ առ մաս-
նաւորելոյ զքեզ ի շնորհաց սրբոյ Ա֊
ռաքելոյն՝ և յօրհնութեանց բազմախումբ միա-
բանութեանն։ Զոր Ցէր օրհնեսցէ և զօրա-
ցուսցէ. փրկեսցէ յամենայն վտանգից հոգ-
ւոյ և մարմնոյ, և պահեսցէ ի խնամս իւր.
և զամենայն բանս և զգործս քո ի բարին
յաջողեսցէ։ Արդ՝ խնդրի յԱստուածսիրու-
թենէ քումմէ զանխարդախ սէրդ որգիական
առ լուսածին Մայրս քո սուրբ Ա֊
ռաքելոն՝ անուսուզ և աճեցուն կալցիս, և զՀաս-
տատիմ բարեկամութիւնդ որ առ մեզ հաս
տատուն պահեսցես։ և այդու զհոգեկից
եղբայրս մեր Ցովհաննէս արժանապատիւ ե-
պիսկոպոսդ ի մեծագոյն սէր ունիցիս, և ի
պանդխտութեան մխիթարիչ լիցիս՝ որպէս
և ես իսկ, որոց բարեգործութեանցդ ա-
խորժալուր հաւքաւով յաւէտ շնորհակալ
լինելով պարտական դիցուք զմեզ օրհնելոյ
զարժանագով սիրելիդ և աղօթելոյ վասն
ամենայն իրաց քոց յաջողութեան և առող-
ջութեան։ Ողջ լեր ի Ցէր։ Գրեցաւ յամ-
Փրկչին 1800, և ի մարտի. ի սուրբ Ա֊
ռաքելոն Էջմիածին։

Առ Ղղլարու տէր Մինաս քահանայն ի
սատաոխանի թղթոյն առ հանդուցեալ
սրբազան կաթուղիկոսն և ի շնորհակա-
լութիւն վասն ուջահամրուրական տրոցն
յանուն նորա յուղարկեցելոց։

Թուղթ ի գործակալաց սրբոյ Ա֊
ռաքելոյս առ ի Բասրայ եղեալ հաւատարիմն
սրբոյ Ա֊ռաքելոյս՝ Պարոն Ստեփաննոսն,
ծանուցումն զմահուանէ սրբազան կա-
թուղիկոսին մերոյ Ցեառն Ղուկասու,
եւ զանք ինչ ի սատաոխանի թղթոյն
իւրոյ առ սրբազան Հայրապետն, որոյ
եւ երկրորդ օրինակն՝ յետ վախճանին
ի ձեռս մեր էհաս. եւ սատուէրք զԲաս-
րայու եւ Հնդկաստանու վերոյ գրեալ
կոնդակն միաբանիցս անդ ընթերնուլ,
եւ յղել ի յայնկոյս ծովուն։ Եւ այլ
զանք։

Ի լուսանկար սրբոյ Գահիս Էջմիածնի
Պաշտօնէից՝ Գործակալ եպիսկոպոսաց ֆրիս-
առուսաւանդ ողջոյն և օրհնութիւն հան-
գերձ երկնաձիր մխիթարութեամբ, և սրբոյ
Իջմանաեղուցս Տորին պաշպանողական շնոր-
հիւ և զօրութեամբն. ժամանեսցէ բարե-
պաշտօն ընտիր սիրելւոյդ մերում և հաւա-
տարիմ որդւոյդ սրբոյ Ա֊ռաքելոյս՝ յԱստուա-
ծոյ օրհնեալ և նովիմբ զօրացեալ մեծահա-
ւասա և բարեհամբաւս, իմաստնախոհ և աղ-
նուամիտ Պարոն Սահփաննոս Աղայիգ Ցէր
Ցովհաննիսեան։ Որում և գիտութիւն լիցի։
Զի յայսանգոյն գոլով ճշմարտութեան բա-
նի իմաստնոյն Սողոմոնի թէ՝ «մի մուտ է
ամենեցուն յաշխարհս, և մի ելւ (Ցես՝ ի
ներքոյ յերեսն Շխթ)... շնորհեսցէ. Ամէն։

Եւ արգ՝ Տարկ գիտեաք ի վերայ մեր
փութանակի գրել առ կողմանդդ օրհնեալ
ժողովուրգան և առ նուիրակ Ցակոբ Գեր-
զգօն Արհի եպիսկոպոսն և առ հաւատա-
րիմ սիրելիգ մեր զթուղթս մխիթարութեան
սակայն՝ յետ վախճանման լուսահոգի սըր-
բազանին՝ այնքան զբաղմունք մեծամեծ հո-
գոց շփոթեալ վրդովեցին զմեզ, մինչև իրրու
թափիլ ի յուշոյ. քանզի յանգլխութեան
մերում բաղում վնասք կարէին ժամանել
սրբոյ Ցանս, որոց գիմակայեալ օգնու-

թեամբն Աստուծոյ՝ ի բաց արարաք եւ այժմ սակաւ մի ոգի առեալ՝ թէև անագան, գրեցաք ահա զկոնդակ մի ի բոլոր քահանայակարդ Միաբանից ի վերայ Բասրայու քաղաքիդ և Հնդկաստանու մերազնէից Աստուածասէր օրհնեալ ժողովրդոց. և զԹուղթ մի առ ցանկալի եղբայրն մեր նուիրակ Ճակոր շնորհապերճ արհի եպիսկոպոսն, եւ զայս Թուղթ ևս առ սիրելիդ մեր և բազմադով բարեկամդ սրբոյ Աթոռոյս. որով զայս ծանուցանեմք: Զի Թուղթն քո յամի Փրկչին 1799, յօգոստոսի 22: Գրեցեալ առաջին օրինակն ի նոյն Թուոյ հոկտեմբեր ամսեանն էհաս առ սրբազան Հայրապետան մինչ դեռ ողջ էր, և ոչ էր կրկին հիւանդացեալ. ընթերցաւ. և իմացաւ զամենայն օգտակար բարելաւութիւնդ, և շնորհակալութեամբ օրհնեաց զքեզ յոյժ յոյժ և մինչ կամէր զպատասխանին գրել առ քեզ լիագոյն շնորհակալութեամբ, հիւանդացաւ. և օր քան զօր ծանրացեալ, վախճանեցաւ, որպէս ի վերոյ ծանուցաք: Որ հանդիցէ՝ ի լոյս Ցեառն յարքայութեան երկնից, և զօրացուցիչ օրհնութիւն նորա ընդ քեզ և ընդ որդիսն քո յարատևեսցէ: Ապ-ս նոյն յիշեալ Թղթոյ քո երկրորդ օրինակն որ յաւելուածով այլ ևս բանից ի 1799. հոկա. տուեալ էիր Ջուզայու սրբոյ վանացն Միաբանից սիրելի եղբարց մերոց Ճարութիւն և Գէորգ խոհեմամիտ վարդապետացն, բերեալ հասուցին առ մեզ ի 1800 Թուոյս փետրուարի 17: Ընդ նմին և Թուղթ մի ի նուիրակ Ճակոբ Աստուածահմատ վարդապետէն ի Կալկաթայու դրեցեալ յամի Ցեառն 1798, և ի դեկա. 15. երկրորդ օրինակն, զոր Բաղդատու դանձապահն մեր մահտեսի Կիւրեղն էր յղեալ: Ընկալաք սիրով և ծանեաք զամենայն գրեալսդ: Եւ նախ վասն ողջութեանդ և բարի համբաւոցդ մխիթարեալ փառս մատուցաք Աստուծոյ: Այլ յաղագս նեղութեանց ձերոց զորս կրեալ էք ի գալն Բաղդատու Դեղէխի երկրորդին ի կողմանդ ի պատերազմ. և յաղագս պակասութեան վաճառացն տեղւոյդ և տխրութեան մերազնէիդ մեք ևս արտեցաք: Եւ ղինչ ասասցուք. բերմունք աշխարհիս հանապազ միապէս ոչ լինին, այլ երբեմն ուրախութիւն, երբեմն տրտմութիւն, երբեմն յաջողութիւն, և երբեմն ձախորդութիւն. և ի վերայ իւրաքանչիւրն պատահման դոհանալ պարտիմք զԱստուծոյ. և նա կարող է զդժուարինն դիւրել, և զտրտմականն փոխել յուրախականս ի փառս բարերարութեան իւրոյ. որև անճառ ողորմութեամբն իւրով շնորհեսցէ քեզ յաճախել սիրելւոյդ մերում՝ և համայն մերայնոցդ զբարի յաջողութիւնս և զշահեկանութիւն վաճառացդ: Գրեալ էիր զխղճալի Պարոն Ճովհաննէս Բեթղէհէմի դոյաթափելն, և զդառն դիպուածսն, և զելանելն այտի ի Բազդատ առ Դեղէխն, այն ևս մեծ տըրտմութիւն եղև մեզ: Աստուած այցելութիւն հասցէ նմա: Իսկ որ զնուիրակի յղեալ մեզ անտուկով անօթսն և զգեստսն առ ումեմն այլազգւոյ ի գրաւութիւն էր եդեալ փոխանակ 3200 ղուռուշի. և սիրելիդ ազատեալ ես, հատուցանելով զպարտս նորա. և զսակաւ ինչս Պարոն Ճովհաննիսին վաճառեալ ես 650 ղուռուշի. և զեկեղեցականն իրսն առ քեզ ունիս 1650 ղուռուշի որք աւելի արժեն քան զ3000 ղուռուշ, ըստ գրեցելոյդ: Այլև զփօլիցայսն որ ձեռամբ Անդրէաս Չելէպեայն հասուցեալ ես Պօլսոյ նուիրակ Գալուստ արհի Եպիսկոպոսին, և նա դրեալ էր սրբազան Հայրապետին զառինքն հասանիլն. և զիւր ոչսիդ տալն. որք և առ քեզ են հասեալ, այսցիկ մեծամեծ աշխատակրութեանց և լաւութեանց քոց աղագաւ որպէս լուսահոգի սրբազան Կաթուղիկոսն կարի յոյժ շնորհակալ էր զքաջընտիր հաւատարիմ սիրելւոյդ. նոյնպէս և մեք շնորհակալ եմք զքէն որ յիրաւի յայսմ միջոցի դու օրհնեալդ Աստուածակոյս կողմանէ յայդմ քաղաքի մեծ բարերար գտանեցար սրբոյ Աթոռոյս: Եւ քանզի հոգելոյս սրբազանն կամէր շնորհակալութեան և օրհնութեան բանս դրել առ քեզ, և ոչ ժամանեաց վասն օրհասին մահու կանխելոյ, և երկրորդ օրինակն Թղթոյդ ի ձեռս մեր էհաս, ահա մեք ձօնեմք առ քեզ զշնորհակալութիւնս, լիալիր օրհնութեամբ, զոր Ցէր օրհնեսցէ և ղօրացուսցէ, փրկեսցէ յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. պահեսցէ ընդ թևօք խնամոց իւրոց ի խաղաղութեան և ի բարեկարդութեան, տալով զյաջողմունս բանից


և գործոց քոց և զարգարուն պահելով զքեղ բազմաեռակ առաքինութեամբ։ Գրեալ էիր թէ բարեաւ նուիրակն գայցէ յանձնեցից հաճի Աւալղատիրին. յայժ րարւոք լինի. և ըստ նուիրակի թղթոյն՝ յուսամք թէ յառաջիկայ ժամանակս երևեցի յայգր։ Ուրեմն ըստ խոստմանդ յանձնեոցես սիշեալ տաճկին. որ և քեղ րարեկամ է և սրբոյ Աթոռոյս ծանօթ։ Անյիշելի չերիցու, և ընչաժողով կոյս անուանելոյ ղրանսն որ գրեալ էիր, հոգ եղև մեզ վասն օրհնեալ մերայնոցդ կողոպտեցմանն և ղղուեցմանն. զինչ ասասցուք, բարերարն Աստուած զգաստացուսցէ զպնպիսիսն կամ բարձցէ, առ ի չյաւելուլ զգայթակղութիւնս։ Մաթօ անուն փրկեցեալ կնոջ առն ազգաւ որ գրեալ էիր, յանցելումս ամին այր մի եկն ի Թիֆլիղու և գիմեաց առ քեզ վասն կնոջն, համարիմք թէ՝ նա էր, զոր խնդրես. և այժմ գրեսցուք ի Թիֆլիղ, տեղեկանալ։ Եւ յաղագս .Դանիէլ արհի եպիսկոպոսի պատրիարգութեան ղոր գրեալ էիր, հոգելոյս սրբազան Հայրապետն յայժ հաճեցեալ լինդ մահսարի Պօլսեցւոցն հաստատութեան կոնդակ գրեաց, և զվայելուչ խիլայս յղեաց, Այժմ մեք ևս կաթուղիկոս եմք խնգրեալ զնա, զբանն առ. ինքն և առ պատուելի իշխանսն եմք արկեալ. զովոք և նոքա յղեսցեն ըստ խնդրոյն մերում, նա է արժանապատիւ կաթուղիկոս. իսկ թէ ոք ինքնակամ անձնընծայ լիցի, ոչ է ընդունելի. բարւոք ի միտ առ։ Վասն Ցարութիւն և Գէորգ հանճարեղունակ վարդապետացն՝ որ գրեալ էիր, խղճալիքն կարի յամելով ի ճանապարհին, և յետ վախճանման սրբազանին հասանելով աստ, յայժ տարակուսեցան. բայց մեք մեծաւ սիրով և յարկանօք առընկալեալ ի պատուի ունիմք. և ինքեանք յօժարութեամբ կալով սպասեն յայնորդ կաթուղիկոսի ի կատարումն խնգրոց իւրեանց։ Մաղարացւոց ծրարն ի նուիրակէն աղայ Մովսէսի կնքովն էհաս ձեռամբ սիշեալ վարդապետացն։ Եւ վասն նուիրակի առ քեզ յղեալ արկեղացն զոր գրեալ էիր, իմացաք. շնորհակալ եմք վասն տալոյդ զմաքսն, և պահպանելոյգ, յԱստուծոյ վարձատրեսցիս, և սուրբ Լուսաւորչի օրհնութիւն և սրբոյ Աթոռոյս շնորհքն ընդ քեզ եղիցի։ Արգ՝ եթէ զայս թուղթ քո, և թէ զկոնդակն կողմանցդ և թէ զնուիրակի թուղթն Ր. գրեցաք, զառաջինն ի վերայ Ջուղայու յղեցաք. և զերկրորդն ի վերայ մեծին Պօլսոյ։ Խնդրեմք զտեղւոյդ կոնդակն յայդր ընթեռնուլ տալ, և զօրինակ հանել. և յուղարկել ի Հնդիկս ուր և գտանին մերազնեայք. և զնուիրակի թուղթն ևս առնա հասուցանել ուր և իցէ։ Եւ ցեր վարձահատոյց լինի քեզ ըստ աշխատանացգ։ Ողջ լեր ի ցեր. Ամէն։ Գրեցաւ ի թուոջ Փրկչին 1800 և ի մարտի ԻԳ. ի սուրբ Էջմիածին։

Թուղթ առ Գիօրկի արքայն Վրաց ի պատասխանի թղթոց նորա առ Մինաս եպիսկոպոսն յատկապէս, եւ առ Միաբանքն հասարակապէս վասն խնդրոց ոմանց։

Մեծասէր և աստուածեղեալ բարեկամի սրբոյ Աթոռոյս, պաշտօնէից սուրբ, Քրիստոսիւ զօրացեալ և բարձր և փառաղարգ Խաչապսակ մեծի Արքայից Գիօրկեայ բաղում սիրով և կարօտիւ ողջոյն մատուցանեմք։

Սիրանշան թուղթքն Մեծութեան Ձերոյ առ Մինաս եպիսկոպոսս յատկապէս, և առ բազմութիւն Միաբան եղբարցս հասակապէս, ի ձեռն հաւատարիմ ծառային ձերոյ և սիրելւոյն մերոյ Մելիք Շաքարօային հասին առ մեզ. ղորս յարգանօք ընկալեալ ծանեաք ղոր ինչ էին ի նոսա բանք։ Ցաղագս թղթոցն մերոց ի սպաս բարձրութեանգ ժամանելոյն, և ցՕվսէփայ սրբազան արքեպիսկոպոսի գիրն առ նա առաքելոյն, որ ծանուցեալ էիք և հրամայեալ նոր ինչ տարաձայնութեան չլինել ի մէջ մերում, գիտացեք Մեծութիւն ձեր, որ յետ միանգամ արկանելոյ մեր ղբանն առ օրհնեալ աղգն մեր բարեփառ Ժողովուրդն Կոստանդնուպօլսոյ, մեք ոչ ևս ունիմք ինչ առնել. այլ զնոցա հոգացողութենէն կախեալ կայ կատարումն բանին. որք զիարգ և կարևոր գտանեսցեն, և զով ոք կացուսցեն, մեզ ընդունելի և հաճելի է լինելոց. ըստ որում հաստատութիւն սրբոյ Աթոռոյս

նոցին հոգատարութեամբ և արդեամբն է։ Եւ թարց նոցա համահաւանութեան ոչ ոք հաստատի կաթուղիկոս սրբոյ Ա֊թոռոյս։ Եւ վասն սուրբ Գեղարդին գրեալ էիք ի նոր կիւրակէին դարձուցանել. չնորհակալ եմք. Տէր տացէ զկեանս երկայնս, և զանվրէպ կատարումն խոստմանդ։ Նաև վասն տէր Գէորգ քահանային որ հրամայեալ էիք, ըստ պատուիրանին սիրոյ սիրով ընկալաք, և մինչ գնաց յԵրևան ընդ Մէլիք Շաքարոյին, գեռ ևս ոչ դարձաւ այսր. զի անդ կայ. այլ յորժամ գայցէ, և ևս մարդասիրութեամբ ընդունելոց և մխիթարելոց եմք։ Բայց վասն Սահմանոս ազային զոր հրամայեալ էիք յուղարկել, նա ոչ է ի մեր մէջ միաբանութեան. քանզի ի սուրբ Երուսաղէմ վարդապետ մի եկեալ վասն եպիսկոպոսութեան սպասէ նորոգ կաթուղիկոսի գալստեանն, տղայն մտեալ է յօժարութեամբ ի սպասաւորութիւն նմա, գնալ ընդ նմին ի սուրբ Երուսաղէմ, զորմէ լիապէս ի Մէլիք Շաքարոյէն ունիք իմանալ։ Նոյնպէս և զՄասատոյ գեղջն մերոյ զանցսըն, և զխղճալի բնակչացն զվնասն և ըղկասկածանն յանձնարարեալ եմք Մէլիք Շաքարոյին և եղբօր մերում Յովհաննէս Արքեպիսկոպոսին յայտնի առնել ձերում մեծութեան, և խնդրեմք ի փառս Աստուծոյ խնամսածել դեղջն այնմիկ ժառանգութեան սրբոյ Ա֊թոռոյս, զի մի յաւեր և յանշէն դարձի ի շրջանակ դրացեացն։ Իսկ և ի կատարումն խնդրոյ հրամանի ձերոյ մեծութեան՝ զերկուս բառարանս հասարակ և յատուկ, ծրարեալ և կնքեալ յանձնեցաք հաւատարմին ձերում Մէլիք Շաքարոյին բերել հասուցանել ի սպաս, զորս բարեաւ վայելեսցես։ Եւ զառատութիւն խնամոցդ աննուազ առնելով ի սրբոյ Գահէս և ի մէնջ, ողջ լեր հարուստ ժամանակօք ի մխիթարութիւն մերոյս Միաբանութեան, և մանաւանդ իմ Մինասայ ծերունի եպիսկոպոսիս սրբոյ Գահիս Էջմիածնի, և գործակցաց իմոց ստորակնքողաց։ Ցամ Փրկչին 1800. և ի մարտի ամսոյ 29։



Թուղթ ի տեղապահ Մինաս Արքեպիսկոպոսէ առ Գիօրկի Արքայն վրաց ի պատասխանի թղթոյն նորա որոշաբար առ ինքն եւ առ Լուսարար Գրիգոր Արքեպիսկոպոսն զրեցելոյ ի մայիսի 22. եւ եւս վերադարձման սուրբ Գեղարդին ըստ մտաց թղթոյն առ հասարակութիւն միաբանից, որով թուղթ խնդրէր զինքն անսպարտ ցուցանել թէ ոչ էր յաւիշտակելոց զսուրբ Գեղարդն. այլ մեք ոչ երկայնամտեալ դարձուցաք։ Եւ զի մէլիք Շաքարոյիւն վասն Յովսէփ արքեպիսկոպոսին կրկին ապսպարեալ էր զնա խնդրել. առ այն պատասխանի թէ զանն ի կամաց ազգին է կախեալ։

Յաստուածպետական բարերարութենէն պատուեցեալ և պսակազարգեալ օգոստափառ և բարձրաշուք մեծազօր Արքայիդ Վրաց և Կախից, սիրով մեծաւ և կարօտիւ ողջոյն նուիրեմք խոնարհական գիմօք, զել կարութիւն կենաց ի Տեառնէ Հայցելովք։

Ի Մեծութենէ ձերմէ շնորհեալ նամակն յատկապէս առիս և առ Լուսարար Գրիգոր Արհիեպիսկոպոսն ձեռամբ սիրելեացըն մերոց Մէլիք Շաքարօյին և Տէր Մովսէս շնորհունակ Քահանային ժամանեցաք։ Լուսարար վարդապետ եղբօրն մերոյ յաստեացս առ Տէր փոխեցեալ գոլով, (յորոյ կողմանէ պատուական գլուխդ ողջ կացցէ,) ես ընկալայ զգիրդ յարգանօք, և ծանեայ ղհրամայեալսդ։ Յաղագս սուրբ Գեղարդի գարձուցանելոյն և Յովհաննէս վարդապետի գալոյն զիարդ և իրաւացի անցքն էին, և պատճառքն, գրեցաք առհասարակ միաբանութեամբ բաղմակնիք թղթով, որ ոչ առ Մեծութեան Ձերում գոյր այլաղան կարծիք. և ոչ թէ ի մեզ գոյր նշմար խոտոր խորհրդոյ. այլ յաղագս յերկարաձգութեան միջոցին, և ուխտաւորացն սաստիկ թախանձանօք ստիպելոյ, և մանաւանդ ի պարսկական զօրուն յառաջ խաղալդ ի կոզմանէք՝ երկուցեալ մեր թէ մի գուցէ ի յաւար մատնեսցի, աճապարեալ փութացաք գարձուցանել։ Եւ Տէրութիւն ձեր ողորմածաբար խնայելով ի խղճութիւնս մեր՝ զպահարան սուրբ Գեղարդին, և զնշացորդ իրն Յովհաննէս վարդապետին առաքեալ էիր, մեծաւ շնորհակալութեամբ առ ընկալաք, և գոհունակ եմք զառատ խը-

նմոց Մեծաղօր Արքայիդ։ Ցաւելցէ Տէր զաւուրս յաւուրս ձեր, և երկնաձիր պարգեօք իւրովք ճոխացուսցէ և առաւել ևս բարձր և փառապերճս արասցէ ընդ թևօք Աստուածածայինն խնամոց պահպանելով՝ Հանգերձ Արքայազուն որգւովդ և համայն ազնուամեծար ընտանեօքդ։ Իսկ ի կողմանէ Ցովսէփայ սրբազան Արքեպիսկոպոսին՝ որ զբանս էիր յանձն արարեալ Մէլիք Ճաքարոյին ասել մեզ, ասաց, և իմացաք։ Յայտնի է Տեառն մերում Արքայի, որ յառաջագոյն մինչ զմիրիշքեար պաշին Ցովսէփ Աղայն զՏէր Առաքել Աւագ քահանայն յղեցիք առ մեզ, մեք զերկրորդ մահսար գրեցաք ի Կոստանդնուպոլիս վասն Ցովսէփայ Արքեպիսկոպոսին, և առ ինքն ևս թուղթ գրեցաք, թէ յորժամ ազգն Հաճեցեալ հրաւիրեսցէ զքեզ և դու ոչ կասկածեսցիս ի վնասուց հրամայեսցես գալ, ի մէնջ ոչ գոյ քեզ ընդդիմութիւն։


Թուղթ ի կեսարիա առ Պաշպազիլեան մահտեսի Ցովհաննէս Ամիրայն ի պատասխանի թղթոյն ընդ ուխտաւորացն, շնորհակալութիւն վասն ցաւակցութեան եւ նուիրակին, եւ ժամուց յղելոյն. եւ ծանուցումն զորպիսութեանց կողմանցս։

... Ալ ի համբաւոց կողմանցս որ յուսաւորեալ էիք, առ այն այսպէս գիտասջիք. զի դուն՝ մեծ բացեալ եղև Հանդիսաղրութեան հիւսիսայնոց՝ որք մտին և ուրեցին քաղաքաց և գաւառաց ոմանց. ի զրաւիլ կենաց Հանդիսադրին զրաւ եղև և Հանգիսին. զի նորոգ պսակաւորն լքեալ զամենայն գարձոյց զգունդսն։ Եւ որ առ ի մէնջն անձնընծայութեամբ կցորգեալ էր ի նոսա, որքան յումեքս էր գտանիլն ընդ նոսա, այնքան և առիթ կասկածանաց և վտանգից մեզ և մերայնոց։ Բայց բարերարին Աստուծոյ որ միայն գիտէ զապագայն, արկեալ ի սիրտ մեր ընտրել զօգտակարն տակաւին ոչ յոյս դնելով. ի մերձալսն, կանխեցաք ի ձեռն վարդապետաց զընծայս առաքել առ քաջաբախտ բռնաւորն, և զոմանս կարևոր ֆերմանս խնդրել, և նա քաղցրութեամբ ընկալեալ զաղերսն մեր և ըստ խնդրոյն մերոյ գրելով զֆերմանսն առեալ էր վարդապետացն և շքեղ խիլաիւք դարձուցեալ։ Ցայսպիսի անօրէնութեանցն Աստուածապետականին յուսամբ և ևս պահպանել զուարբ Գահս և զմեզ յայլոց ևս վտանգից։ Իսկ նեղութիւնք և կասկածք ամենեցուն անպակաս, և սղութիւն հացի և ամենայն պիտոյից յոյժ սաստկացեալ։ Արդ որպէս գրեալ էիք, իրաւի և մեք պարտականութիւն գիտէաք մեզ ըստ կարելութեան շահել և մխիթարել զցանկալի որդիսն մեր զօրհնեալ ուխտաւորսն, որք և արժանիք էին մեծի սիրոյ և շահեցողութեան, սակայն դեռ երեք աւուրք եղեալ գալոյ դոցա ի սուրբ գահս, և երկիցս միայն տեսեալ, շահի եղբայր մեծ զօրապետն եմուտ յերկիրս (որ ի միւս տարին ևս եկեալ էր.) և մեծամեծքն երեւանու գնացեալ ընդ առաջ, զմեզ սփոփաւ խնդրեալ էին, և հորդ էր։ Վասն որոյ թողեալ զնոսա ի սուրբ Ամոռոջն գործակալաց պատասան, եկաք յԵրևան քաղաքս, չգիտելով. Թէ որով դիտաւորութեամբ է գալ սորա, և զինչ անցք անցանելոց իցեն ընդ ողորմելի երկրականքս և ընդ մեզ։ Եւ արդ՝ յայսպիսի կերս գոլով մեր՝ գիտեմք եթէ՝ սոքա ոչ գանգատեսցեն զմէնջ իցէ զի և խոհական սիրելիդ ներողամիտ լիցիս։ Ցաղագս ախորժաճաշակ սուճուխին և ապխտին ևս վերստին շնորհակալ եմք։ Ի շինութեան և ի լեութեան պահեսցէ Տէր զօրհնեալ տուն քոյ։ Ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԽԶ, և ի Մայիսի Գ. յերեւան քաղաքի։

Երկրորդ թուղթ ի գործակալաց սուրբ Ամոռոյս առ ի Բասրայ եղեալ Ջուղայեցի Ստեփաննոս աղայն Տէր Ցովհաննիսեան, ի պատասխանի թղթոյն յապրիլի 23։ Գրեցելոյ երկրորդ օրինակին, անորոշաբար առ նորոգ կաթուղիկոսն, կամ ևս տեղականն. յաղագս Հնդկաց նուիրակ Ցակոբ վարդապետի քանիցն, եւ ոմանց ինչ խնդրոց։

...Եւ վասն վերոյիշեալ Ցարութիւն

և Գէորգ վարդապետացն որ գրեալ էին շուտով աւարտել ղրկանն սոցա. սոքա՝ յետ վախճանման լուսահոգի սրբազանին ժամա. նեցին ասա. և սիրով ընկալեալ եղեն ի մէնջ, և ունելով զինդիր եպիսկոպոսական աս. տիճանի, սպասեն գալստեան յաջորդ կա. թուղիկոսի։ Եւ մեք յետ մահսարագրու. թեանցն ի Պօլիս և յոլով աշխատու. թեանց՝ ի Մայիսի ԻԴ. կերպիւ իւիք իմա. ցաք եթէ նախապատուարար խնդրեցեալն մեր Գանիէլ սրբազան Պատրիարքն Կոստանդնու. պօլսոյ ընարեցեալ է ի կաթուղիկոսութիւն համահաւանութեամբ ազգին. վասն որոյ սպասեմք զայլ ևս գիր ստանալոյ ի մեծէն Պօլսոյ, և ակնդէտ ժամք գալստեան նորա, զոր Տէր խաղաղութեամբ յաջողեսցէ։ Եւ մինչ բարեաւ եկեսցէ, յայնժամ կատարին խնդիրք Ճարութիւն և Գէորգ վարդապե. տացս այսոցիկ։ Նարդենիս պատուով կան ի սէր մեր։ Քանի թուղթս էիր յղեալ ի Թիֆլիզ հասուցանել. յառաջիկայ աւուրքս յղեսցուք, անհոգ լիցիս։ Եւկ զթուղթն զոր գրեալ էիր առ Տէր Ճակոր քահանայն Սամուէլեան ի Վան, ահա յուղարկեցաք ի Բայազիդ մերով թղթով՝ հասուցանել առ նա. վասն այն ևս անտարակոյս լիցիս։ Եւ զի առաջին օրինակքն վերոյիշեալ թղթոցն մերոց, որք ի Պարսից ճանապարհէն գար. ձան յետս և յղեցաք ի Բայազիդ, զի ի վերայ Վանայ յղեսցեն. բայց Բայազոյ և Վանայ միջոցն ևս յոյժ խառնակեալ գոլով լուաք այժմ, որ այն թուղթքն դեռ ի Բայազիտ են, վասն որոյ գրեցաք անգ որ զրկադա. ռու փակէթն հանեալ ի Վանայ թղթոց պահարանէն յանձնեսցեն սոյն գրաբեր Բաղդատու փայեկին հասուցանել անդ առ աղայ Ղուկան Ալէքսանեան, և պարոն Մինասեան. զի և նոքա զիւրեանց թուղթն հանեալ, զառ քեզ հա. սանելի փակէթն յուղարկեսցեն յայդր։ Եւ զՋուղայեցի վարդապետաց փակէթն որ է առ իւրեանց վանից վաքիլ Պարոն Գէ. որգն, եգաք ընդ թղթոյս ի միում պահա. րանի, և յերեան պահարանին ի ձեռս քո և նորա հասանիլ գրեցաք։ Խնդրեալ էիր զկողմանցս որպիսութիւն գրել. ի Թիֆլի. զու լուր ինչ ոչ գոյ։ Այլ ի Պարսից կող. մանէ շահզատայն և Սուլէյման սարդարն եկեալ են ի Թարվէզ, որք և ֆարմանս էին գրեալ ի վերայ միաբանից յուսադրու. թիւն ի կողմանէ վախճանման սրբազան հայրապետին. և ծանուցեալ էին թէ հրա. մանաւ շահին եկեալ եմք, գնալ ի Շէքի, ի Շիրվան, ի Կիւրճիստան և ի Գաղստան նիզամ տալ, և այլն։ Եւ վասն շահին համբաւեն թէ յայն կողմն պատերազմ ու. նի։ Բայց այս աւուր աստուածութեանն վաղու. ետն աստուածանցն ոչ նմանին։ Զայսքան ինչ ի սուզ ժամանակիս շատ համարեալ վասն փայեկին աճապարելոյ։ լեր ողջ ի Տէր, և յանձնեցեալ ի խնամս նորա. Ամէն։ Գրեցաւ ի Թուղս 1800 ե ի Ճունիսի մէկ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։



Թուղթ առ Թիֆլիզու իշխանսն, յա. ղագս առ Ճովսէփ Կաթուղիկոսն զրեալ թղթոյն մերոյ՝ առաքել, եւ զորպիսու. թենէ նորա զրել մեզ ի վիճատու. թիւն։

Ի լուսանկար սրբոյ Գահիս Էջմիածնի պաշտօնէից՝ յոգնավիշտ գործակալ եպիսկո. պոսաց սիրով և կարօտիւ ողջոյն և օրհնու. թիւն պատուական սիրելեացդ մերոց՝ և հարազատ որգւոցդ սրբոյ Աթոռոյս՝ աղ. նուամեծար և բարեպաշտ իշխանացդ օրհ. նեցելոյ քաղաքիդ Թիֆլիզու. Մէլիք Դար. չին Աղայի, Միրիշքեարպաշի Ճովսէփ Ա. ղայի և Պարոն Աղայի Փիլիպոսեանց. Պարոն Եսայեայ, և կնեազ Պարոն Սօլօմոնի, և այլ երևելի անձանց։ Որոց լիցի ի Տէր խնդալ։

Երկարեցաւ ժամանակն՝ յորում ի սի. րելեացդ գիր ոչ էհաս առ մեզ. և զոր վայելուչն էր բարեկամութեան և մերձաւո. րութեան ձերում յետ այնքան տառապա. նացն և ընդհատուցն ժամանելոյ ի վերայ մեր, գոնէ դուզնաքեայ բանիւք նպաստ միխիթա. րութեան մատուցանել վշտաւորացս, անտի ևս ի բաց կացեալ երևեցայք, որպէս և այլք բազումք. իբրու թէ՝ յայնպիսի ա. ւուրս նեղութեանց չիցէ ինչ փոյթ ումեք, այլ աստ գտանելոց և եթէ, ընչէ և պա. տահեսցի, ընչէ և կրիցեն։ Այլ մեք չհա. շուեալ զայսոսիկ գիտելս մեր, ըստ մերում

պարտականութեան յիշեմք զձեզ, և աղօթեմք միաբանութեամբ վասն բարօրութեան և յաջողութեան ձերոյ և համայն օրհնեալ ազգի մերոյ։ Ծանեցուցեալ մեր ղգոյժ յարուցման լեռնականացն կատաղեաց առ օրհնեալ երկիրդ և քաղաքդ, տրտմեցաք և մատաք ի վարանս յոյժ յոյժ։ Այլ յետ առնուրց լսելով զխորտակումն ճակատուն նոցա ի Քրիստոսազօր քաջաղէն պատերազմողաց Տեղւոյդ, և զընդկրունկն դարձաւորութիւն ամօթալի. և զձերդ ապահովանալ ի դըժն դակութենէ նոցա, զանդորրութիւն մտաց դտեալ գոհացաք զՏեառնէ ամենակալէ, որ երբեմն երբեմն ղարհուրեցուցանէ զսիրելիս իւր ի խրատ արդարութեան, այլ ոչ իսպառ բարկացեալ՝ վերստին գթայ ողորմութեամբ։ Որ և ըստ արարչական բարեգթութեանն յայցելեալ ձեզ և մեզ, փրկեցէք և պահպանեսցէ ի ձերոց և ի մերոց թշնամեաց։ Իսկ արդ հարկաւորապէս զայս ունիմք ասել ձեզ՝ եթէ մեք յորժամ ընկալաք զգիր մահսարատար սիրելի եղբօր մերոյ Դաւիթ Արհի եպիսկոպոսին, որով ագգարարեալ էր զհամահաճութիւն ազգին առ հայրապետութիւն Ցէր Ծովսէփայ սըրբազան կաթուղիկոսին, և ի նմանէ յինքեանէ և այս թուղթք հասին առ մեզ, մեք և այս ըստ նախնի նշանակութեան գրուածոցն մերոց գրեցաք առ մեծութիւն նորին ի հոկտ. ԺՆ. և ի ԺԶ. զթուղթս օրինաւոր հպատակութեան և հրաւիրանաց, կրկնելով զաղաչանս առ ի շուտով գալ, և ոչ այս յամենալ։ Զի անհնարին թվասք երևին առ սուրբ Ցունս վասն անտերունչ մնալոյն ընդ երկար։ Ծորմիհետէ ուղևորեալ եմք ընդ թուղթսն մեր, երկու ամիսք են, ոչ պատասխանիս առաք, և ոչ թէ ղյառաջաշարժութեան նորին մեծութեան ղաւետիսն լուաք։ Ոյր սակս ոչ սակաւ տարակոյսք ընծայի մտաց մերոց։ Ապա զի և յիշեալ Դաւիթ Աստուածիմաստ վարդապետն ի նոյ. ԻԹ. եմուտ ի Ամթոռս, բերեալ զկրօնական արքունականս, ահա վերստին թուղթ գրեցաք առ բարձրագահութիւնն սրբազան Հայրապետին մերոյ՝ ծանուցանելով զգալ հասանիլ նոմոսացն արքունեաց ի կանուն իւր։ Եւ ընդ այսր թղթոյ կատուկ սուրհանգակաւ յղեցաք ի ձեռս աղնիւ սիրելացդ. զի զայն թուղթ առաքեսջիք ի սպաս նորին բարձր սրբազնութեան. և սովիմբ թղթովս գիտացեալ բարեպաշտ սիրելացդ զանտանելի հոգս մեր յանգըլխութենէ սրբոյ Ամթոռոյս, զորինչ նկատէք, ստուգութեամբ գրեսջիք մեզ։ Այսինքն՝ եթէ՝ ի քաղաքդ հասեալ իցէ, կամ թէ ի ճանապարհորդութեան լինիցի գալ, աւետարանեսջիք մեզ զշնորհաւոր գալստենէն, զի ուրախասցուք, և որք գալոցն են ընդառաջ ելցեն։ Եւ թէ ուրեք նստեալ անփոյթ իցէ ի շուտով գալն, զայն ևս անխարդախ ծանուսջիք, զի գիտասցուք։ Խընդրեմք զի զպատասխանի թղթոյս այսպագղ դարձուցանիցէք ընդ սուրհանդակիդ մերում։ Որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք զաստուածասէր սիրելացդ բազմաւ օրհնութեամբ։ Ողջ լերուք ի Ցէր, և շնորհք սըրբոյ Իշխան տեղւոյս Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդգ ձերայինսն ամենեսեան։

Գրեցաւ յամի Ցեառն 1800, և ի գեկտ. 14. ի սուրբ Էջմիածին։

ԲՆԱԳՐԻ ՎԵՐՋԸ

ՄԵԱՆ ԵՐԵՔԱՐԴ

ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ա.

Օգնեա ամենաստոր իրորդութիւն եւ մի Աստուածութիւն:

Յաղագս կաթողիկոսութեան Տեառն Ղուկասու կարևորագոյն եւ դաշնադրութեան հայոց ընդ Լատուսաց եւ կաթուղիկոսացն Սսոյ, որք անտուան ի Տէրէն ժամանակս:

ԳԼՈՒԽ Ա.



Էպէտ նախնի մատենագիրք ազգիս մերոյ ընդ գարս գարս ժամանակաց՝ որքան և յետոմուտ լինել մարթացան՝ գծագրեցին ամենայն մասամբք զանցս պատմութեան Հայաստան աշխարհիս մերոյ, զոր աւելորդ է մեզ երկրորդել: Սակայն ի բառնիլ Ռուբինեանց վերջին թագաւորութեան մերոյ Սիլիկիոյ՝ նուազեցան և պատմիչք հայոց, զի ի վախճան չորեքտասաներորդ գարու ցեօթն և տասներորդ դարն՝ հազիւ գտան ուրեք ոմանք, որք զի մասնաւոր տեղեաց անցս գէթ կարացին հասու լինիլ և գրել, որպիսիք էին՝ Առաքել վարդապետ, Զաքարիայ սարկաւագ և Թովմայ Մեծոփեցի, և այլք, ապա ի վերջոյ հայր Միքայէլ Չամչեան, որ ոչ կարաց հասու լինել ամենայն անցից Հայաստանի, այլ էր ուրեք երբեք որ անտեղեակ մնաց, որպէս զանցից աշխարհին Աղուանից, Գուգարաց, Ուտեացւոց և Տայոց. յորս անկանին գաւառքն Հայոց՝ Գանձակ, Տաւուշ (որ է Էջմիածին) երկիրն Գագայ (Ղազախայ) Սոմխէթ, Զորափոր, Ծորոփոր երկիրն Լոքայ (1) Տաշիր, Լօռի և Ջաւախէթ, զորոց ոչ ինչ յիշատակի ի պատմութիւնս նորա: Քանզի լսեմք յաւանդութենէ ծերոց և յայտնի է յաւերակաց այնր տեղեաց գիւղօրէից և աւանաց, զի ի խուռն բազմութենէ անդր եզիլոյ Հայոց բազումք վարեալ են ի Պարսկաստան ընդ թագաւորութեամբ Լանկ Թամուրի, և շատք ևս ի ժամանակս նատր շահի, ապա ի նոցանէ ցրուեալ մասունք թափառականացն փախուցեալոց ի մացառս անտառաց և ի ծերպս վիմաց գերի անկեալ են ի ձեռս Կովկասային Ղեկաց, ոմանք սլոռվք նոցա վերջացեալք, և ոմանք վաճառեալք ի նոցանէ ի հեռաւոր աշխարհս Հագարացւոց և Արաբացւոց՝ դարձուցեալ են ի կրօնս նոցա, այսպէս և առաւել քան զայսպիսի օրինակաւ աւերակ դարձուցեալ զաշխարհս զայնոսիկ, զանապատս և զվանորայս, որպէս յաւուրս մեր տակաւին կայ ին աւերակքն՝ վանօրէից, անապատաց, քաղաքաց, գիւղօրէից և աւանաց, զորս հետզհետէ շինեցին և շինին, որպէս հանդերձեալ եմք սկիզբն առնել պատմելոյ, յա-

(1) Այսպիսի անուն ոչ յիշատակի յաշխարհագիրս, այլ միայն ի կոնդակագիրս նահապետ կաթուղիկոսի և այլոց յետնոց որ գաւառ ի վանս Սանահնոյ գրեալ առ Թեմականս նոյն վանից, որ շինելոց է ի մէջ Ցաշրոյ և Կղարջքայ (այսինքն Գումիշխեթի) որ այժմ աւերակ է:

ւանդուԹենէ հին աւուրց, ի յիշատակագրուԹենէ յականատես ծերոց և ի նամակագրուԹենէ ոմանց։ Սղնպէս զպատմուԹեամբ կիլիկիոյ հարևանցի անցեալ, բաղում ինչ Թողու առանց յիշատակուԹեան, որպիսիք են գործք՝ ամենայն կաթուղիկոսաց կիլիկիոյ՝ յետ բառնալոյ անտի ԹագաւորուԹեան Ռուբինեանց՝ զորս մեք ևս չկարացաք ի ձեռս բերել, բայց ոմանք ի վերջին կաթուղիկոսաց, զորոց սկիզբն արասցուք գրել ըստ մարԹելոյն։

Արդ՝ ի վախճանս աւուրս Լևոնի վեցերորդի ի Թուին Հայոց ՊԻԹ. և յամի Տեառն 1374, յարեաւ ՍուլԹան Բաբիլոնի Եգիպտական և այլ խառնիճաղանճ անԹիւ ղօրօք ի վերայ Հայոց ի Կիլիկիա, այնքան բաղմուԹիւն աշխարհականաց և եկեղեցականաց, որք դաղԹեալք ի Հայաստանէ ապաստանէին ընդ փոքր ԹագաւորուԹեամբ Ռուբինեանց ի Կիլիկիա, սասանեալք ի հեղեղաց յահէ Արաբացւոց ցիրուցան եղեն ի հեռաւոր աշխարհս մեծին Հայոց և փոքու ըստ գրելոյ Հայր Միքայէլի Ջամչեան, ուստի եկեալն էին. նաև անցին ի Վրաստան և յԱղուանս, որք ապա զոհ եղեն ոմանք անօրէն և դառն սրոյն ԼանկԹամուրի, և այլք վարեցան ի Պարսկաստան, քնակուԹիւն կալեալ ի Ղանդահար դարձուցան ի կրօնս նոցա, և են անդ մինչև ցայսօր, որք այժմ տակաւին անուանին Աղուանք կամ աղուանցիք, զոր Հայր Միքայէլ Ջամչեան ի կարծիս Թողու ղսաուգուԹիւն իրին. Թէպէտ չերևի ի միջի ստոյգ պատմուԹիւն, սակայն վկայեն րուվանդակ աղգք Աղուանից, որք չերևին ի միջի քրիստոնեայ. և աւանդուԹիւն այնր աշխարհի մինչև ցայսօր ունի Հաստատուն քան ի բերանս ամենեցուն, իքանելով այն ի Հարց ցորդիս, Թէ նախնիք մեր դոլով քրիստոնեայ ընդ ժամանակս բառնակալ արքայից Պարսից, վարեալ ի Պօլիս, դարձուցեալ են ի կրօնս նոցա, և այժմ մեծ մասն քնակչաց աշխարհին Աղուանից պարսիկ են կրօնիւք և ասեն լինիլ ազգակցուԹիւն Ղանդահարայ Աղուան պարսից. վկայ է և գիր նոցա, զոր արար սուրբն Մեսրովբ վասն նոցա, որոց բաղումք գտանին այժմ յաշխարհս Աղուանից և Արցախայ, ի քաղաքն Շուշի և ի կաթուղիկոսարանս նոցա ի վանս Գանձասարայ, բայց ոչ գոյ այժմ անդ Աղուան քրիստոնեայ և ոչ վերծանող գրոց նոցա. մանաւանդ Թէ ոչ Ճաց գիրք պատմուԹեան հայոց անդ, և ոչ պատմիչ ոք ի գրեալ ծանուցանէր ապագային, որպէս աւանդէ պատմուԹիւն (Թէ ԼանկԹամուր որչափ մտեհասն եգիտ յաշխարհէն հայոց և. պարսից տարաւ ի Սմրղանդ, և զամենայն քնակիչս վարեաց ի պարսս և զոմանս ի սուր մաշեաց). Թէպէտ ոչ գոյ անդ յիշատակուԹիւն մտանելոյ յաշխարհն Աղուանից, սակայն Արցախ և Վրաստան սահմանից գոլով Աղուանից ի հարկէ անդէն անդ ևս արշաւէր, մանաւանդ գրէ պատմիչն Թէ տիրեաց համօրէն արևելեան կողմանց Ասիոյ, ի և Աղուանք է արևելեան կողմն Ասիոյ, յարևմուտս կոյս կասպիական ծովու և սահմանակից աշխարհին Վրկանայ. Թողում զայս ի կամս ընԹերցողաց և ես դառնամ ի պատմուԹիւնս Հայաստանի։ Այսու օրինակաւ անղարդացան վանօրայք, գերի վարեցան բաղում կրօնաւորք, ևայլք աղարտեալք ծպտեալք ի լերինս և ի ծերպս վիմաց, Թառաչէին. անշքացան եկեղեցիք ի փառաց իւրեանց, զի ոտք անօրինաց կոխեցին զսրբուԹիւն նորա, եղեն վանօրայք մեր իպարախ անբան հօտից անասնոց և դարանակալ Թշնամիք մեր ի նոսա որջացեալք ղմանկունս նորա որսային, ոչ ոք այնուհետև քնակէր ի նոսա ի կրօնաւորաց, բայց եԹէ յոմանս երևելի վանօրայս և յաԹոռ կաթուղիկոսարանաց, և այն հաղիւ ուրեք և ի նոցանէ են որք ապա նորոգեցան, և բաղումք մանաւանդ Թէ անԹուելիք են, որք մինչև ցայսօր կան Ճան ի նոյն աւերուԹեան, յորոց ոմանք քոլորովին կանգուն կան, ոմանց աւերեալ է յարկ և գմբէԹ և ոմանք խոպան քակեալ, Ճան միայն նշմարելի տեղիք։ Սոյն օրինակ ամայացաւ երկիր Հայաստանի ի քնակչաց և քաղաքք և աւանք և գիւղօրայք եղեն անմարդացեալ էր վերստին շինեցան և է որ տակաւին Ճան ի նոյն աւերուԹեան։ Իսկ սպառեալ, հատեալ Թագուցեալ Ճացեալ ազգս հայոց ի բերանոյ սրոյ պարսից, և ի գերուԹենէ նոցա, գի՞նչ արդեօք ոչ կրեցին ի յետին ժամանակս, որք ոչ կարէին մտանել ի քա-

ղաքս և ի բնակութիւնս իւրեանց, քանզի հասեալ էր ձայնն ի վերայ նոցա թէ շինեսցեն քաղաք և մի բնակեսցին ի նմա. և զվաստակ, նուցա օաարք կերիցեն։ Այնքան օաարացան ի քաղաքաց և յընչից իւրեանց, մինչև յամռան և ձմռան ի հիւղս և ի ծերպս վիմաց անցուցանէին զաւուրս իւրեանց ի լերինս և ի քարանձաւս, և անդ ևս չունէին դագար և հանգիստ, քանզի ի միոյ կողմանէ բռնակալք և ասպատակք պարսից, և ի միւս կողմանէ դարանակալ ղեկ Կովկասու՝ ճռաքաղ առնէին զմոլորեալս անապատի, որպէս ի 1719 ամի իբրև տարափ անձրևոյ թափեցան յաշխարհս Հայոց լեռնական ղեկք Կովկասու (լեկզիկք) և արարին կոտորած մեծ, և զբազումս գերեցին ի Հայոց. և ի տեղիս տեղիս, որք յամուր վայրս, ի քարանձաւս, յայրս և ի մացառս ամրացեալ էին բազումք ի Հայոց, ղորս կարացին ընդ բռնութ ածեալ գերեցին, և յանմատչելի յամրոցս հուր հարին, և ծխով հնոցի զրկեցին զնոսա ի կենաց, ի թիւս որոց բազում հայազգիք ժողովեալք ի գաւառն Տաշրուց, սղնախ մեծ արարին ի յամուրս և ընդարմանկ աչի անդ քարափամիջի Ազէկի ասացեալ ի տեզուջ, մի և կէս ժամաւ չափ հեռի յՕձուն գեղջէ, և իբրև անհնարին եղև ղեկաց ի ձեռս բերել զնոսա, ի մերձակայս նորա, ուր կուտեալ էր բազում փեթակ մեղուաց, ղոր առեալ լուցին հրովև արկին ի ներքս պարին, և զայլս վառեցին յատակըս նորա լի մեղուօք մինչև ծխով նորա

ղեցան բազումք, և այլք ուշաթափեալք անկան մեղուք կատաղեալ և զայրացեալ ի ծխոյ անտի, իբրև նետ թափանցէին ղալաք խայթոցաց իւրեանց ի մարմինս նոցա, որք իբրև զփոկ ուռուցեալ մրմնջուն սրտիգ բաղմացուցանէին. և ի ծախել և ի սպառել հնոյն աստիճանս եդեալ՝ ելին անարգել զեկք ի մէջ նոցա, զուշաթափեալսն և զխեղդեալս ի ծխոյ առհասարակ սրով կտրատեցին, ղի մի յետ աւուրց ինչ կեն դանասցին. և յորս երևէր նշան կենդանութեան ի վայրկ իջուցեալ և զամենայն ստացուածս նոցա, ղոր անդ ժողովեալ էին, առեալ ընդ նոսա դերեցին, և մինչև ցայսօր ոսկերք մեռելոց կան մնան վկայ աւերման այնր աշխարհի ի յայրի անդ, որ

ասի Սղնախի այր.[2]) սոյնպէս և արարին և ամրականացն Գաւուրչինոյ Գագայ դաշտի առեալ զամենայն գերիս վաճառեցին Սարակինացւոց [1]) և արաբացւոց։

Իսկ Հայ բնակիչք փոքուն Հայոց առեալ քան զմեծին տառապէին յերեսաց ապստամբաց և յեղուզակաց Սարակինացւոց. քանզի դրի ի պատմութիւնս Յովհաննէս արքեպիսկոպոսի Սեբաստացւոյ, թէ ի թուին Հայոց ՌԾ. երևեցան եղուզակք Զալալիք կոչեցեալ, ասէ էր մի ի գլխաւորաց նոցա Զարահազըճի կոչեցեալն (թուի Ղարա), այր ժանտ և գազանաբարոյ. սա էր ի կապադովկիոյ՝ դպիր՝ այն է Սուխթայ (Սուֆթայ?) և գնացեալ յՈւրհայ եկաց ժամանակս ինչ առ գահէրէց ոմն դինի իւրեանց՝ ուսման աղագաւ, և ապա զինուորեցաւ իշխանի միոյ, և յառաջադէմ լեալ ի բազում պատերազմունս յաղթող հանդիսացաւ, վասն որոյ և ինքնագլուխ եղեալ ապստամբեցաւ յարքայէ, և ժողովեալ ղօրս բազումս իւրև երեսուն և վեց հազարս և սկսաւ այնու ասպատակ սփռել ի բազում տեղիս, և տիրել քաղաքաց և դաւառաց և նուաճեալ հնազանդեցոյց յինքեան զՈւրհայ ղՋօռում, զԱմասիայ, ղՄարզևան, զԹօխաթ, զԿեսարիայ և եկեալ պաշարեցաց զԸնբասարիայ և պատերազմեալ էառ զքաղաքն, և աւար հարեալ կողոպտեաց զեկեղեցիս և ղապարանս և ապա հրձիկ արարեալ, սյրեաց զմեծ մասն քաղաքիս և աւեր դաձոյց, և ինքն աշխարհաւեր ապստամբ դաժան գազանն փութով ընկալաւ զպատիժս իւր յԱստուծոյ և սատակեցաւ և բարձաւ էարն ի միջոյ։ Ցեսա այսորիկ յիշէ զսուվն և զտառապանսն, որք ի սոցանէ յառաջացան, մինչև գրէթէ սքանչելի ղօրութեամբն Քրիստոսի տոկացին քրիստոնեայք ի ձեռս այլազգեացն, ի ձեռս որոց կային հանապաղօր իբրև ղոչխար ի սպանդարանի լքեալ և ուծեալ ի կենաց, ապա յայտնի ի վեր երևէր միս տեսակն ապստամբաց էվվենա կոչեցեալ, և այլ միսն Տէլի կոչեցեալ, որք ի սահմանս փոքունց Հայոց ի Կիլիկիայ, և ի կողմանս բարձր Հայոց և Վասպ

[1]) Սարակինոցիք ասին Օսմանցիք որպէս յիշատակի ի պատմութեան Յովհաննէս կաթողիկոսի։

1840

պուրականի ղբաղուամ չարիս գործէին, ոչ զանգիտեալ յարքայէ Օսմանեանց խլէին զորս ինչ հաճոյ տեսանէին ի ձեռաց Հայոց, զերիվար, զհանդերձ, զկին և զորդի, բայց ի չարաչար տառապանաց և նեղութեանց, զոր տային նոցա, վասն լցուցա նելոյ զանյագ կոկորդս ագահութեան իւրեանց, յաղագս որոյ պարտս ի վերայ պարտուց դիզէին Հայք զոր առնէին յայլ ազգաց, և գերդաստանեօք բոլոր ամն ծառայէին տան նոցա, յետ այսորիկ դառն էր և ողբալոյ արժանի, զոր արար չարաչար աղէտալի կոտորածս և գերութիւնս ի մեծն Հայաստան թագաւորն Օսմանցւոց Սուլթան Ահմետ. յամի Տեառն 1723 զորովք Հարեւանցի անցանէ Հայր Միքայէլ Ջամչեան յիւրում պատմութեան։

Ցաւուրս սորա ոչ պակաս տառապանս և նեղութիւնս կրեցին բնակիչք մեծին Հայոց և վրաստանցիք, մինչև ի սպառիլ ընչից և գրամոց՝ ի պատճառս ծանր հարկապահանջութեան պարսից, յափշտակէին փոխանակ գրամոց զտղայս և զաղջկունս նոցա և զազգն և թագաւորն վրաց այնքան նեղ արկին մինչև ամ ըստ ամէ հարկս հարկանել նոցա զտղայս [1]) և զաղջկունսն Աւաղ աղէտիս թէ որքան աւերութիւնս, գերութիւնս, հալածանս, յափշտակութիւնս և կոտորածս արարին պարսիկք և հագարացիք յաշխարհիս Հայոց, որով ցիրուցան եղեն Հայք ի սեփհական աշխարհէ իւրեանց, անանկացան ի փարթամութենէ, նուաղեցան աղգաւ, և իսպառ անչքացաւ Հայաստան ի ճարտարաց և ի վաճառականաց, յուսմանէ և ի դիտութենէ, և աւաղելին ամենեցուն ի պերճաշուք նախարարաց էս միայն մնացին երևելի անուամբ ի մէջ աղգիս ի կողմանս մեծին Հայոց, երեք տոհմականք ի նախարարաց Հայոց, որոց պարսիկք ի ժամանակս նատր շահի որոշեալ անուանս եդին, առաջին Քալանթար, որ է ազգապետ կամ իշխանապետ, երկրորդ Մէլիք, որ է իշխան, երրորդն մելքաշ, որ է հարիւրապետ և ստորին իշխան, սոքօք տեսանէին զդատս ազգին, յայնժամ ի ձեռս սոցա ստանային զհարկս յազգէն Հայոց, որք յաւուրս մեր կրեն նոքա զայն պատուանունութիւն, և համարին ի թիւս աղնուականաց վրաց և ռուսաց, բայց ի կողմանս Կիլիկիոյ ի փոքր Հայս, և ի բարձր Հայք, ի բաժնին Օսմանեան չինաց երբեք տոհմականութիւն նախարարաց Հայոց և ոչ պատուանունութիւն նոցա, միայն ի վերջին ժամանակս ի Կոստանդնուպոլիս եղեալ իշխանք Հայոց Ամիրայ [2]) անուամբ յորջորջեցան ի մէջ ազգի իւրեանց։ Եւ երկիրն Կիլիկիոյ գրէթէ դատարկացեալ էր ի հայ բնակչաց, բաց ի սակաւս տեղեաց, սակայն կաթուղիկոսունք Կիլիկիոյ այնուհետև ոչ էս կարացին կալ ձեալ յանդորրու յաթոռ իւրեանց, այլ երբեմն, տատանեալ շրջէին տեղեաց ի տեղ, ի քաղաքէ ի քաղաք, երբ դատանէին սակաւ ինչ հանգստութիւն յաթոռն դառնային, բայց ոչ կարէին երկար ձալ անդ ի սակ տառապանացն, զոր կրէին յապստամբ բռնակալացն վասն դրամոյ, այլ թողեալ զաթոռն ի ձեռս ոմանց վարդապետաց, ինքեանք անտի, այնքան սաստկացաւ անդ բռնակալութիւն՝ մինչև բազմանալ ինքնագլուխ իշխանաց, ապա իւրաքանչիւր ոք զմիմեանս յաղթահարէին, զգաւառս միմեանց և զհպատակս սպատակէին ամենայն ոք տիրել և իշխել ջանայր աթոռոյն Սսոյ, ձաց պահպանութիւն գոյից աթոռոյն ի ձեռս ամուսնաւոր քահանայից, և ի ժամանակս Տէր Ցովհաննէս կաթուղիկոսի Տէր Ադամեան Հագնցւոյ, յամի 1730, անցաւ ի ձեռս Ցուսիկ քահանայի Սսեցւոյ կառավարութիւն և պահպանութիւն գոյից աթոռոյն որ նա ինքն կոչեցաւ Աջապահ տէր Ցուսիկ, որպէս յայտնի է ի տապանագրէ նորա, զոր ես անդ ի Սիս ընթերցայ, օրինակ զայս (այս է տապան տէր Ցուսիկ աջապահ քահանային, որ և հանգեաւ ի թուին ՌՃՂԷ յամսեանն յվր։) Ի վախճանիլ Ցովհաննէս կաթուղիկոսի ընտրեցին վիճակայինք

[1]) Աաեն թէ ամ ըստ ամէ 15 աղջիկ և 15 աղայ ընտիր գեղեցկութեամբ յատուկ հասակի հարկէին վիրք պարսից և Օսմանցւոց վասն յանդորրու պահելոյ զերկիր իւրեանց։

[2]) Արաբացւոց է բառս ամիրայ, որ նշանակէ հարուստս, ճոխ և աւատ, կամ աէր և իշխան բազմաց. զոյն ժամս կոչէին Ամիրապետի հնուամն զմիահեծան իշխողն տաճկաց, որք նըստէին ի Բաբիլոն և Եգիպտոս։

ի տեղի նորա ղորդի յիշեալ Յուսիկ քահանային ղ՚Ղուկաս վարգապետ. յամի 1734. յորմէ սկիզբն կալան Մսեցիք մինչև ցայսօր կացուցանել ինքեանց կաթուղիկոս յազգէ և ի տոհմէ նոյն աջապահ Յուսիկ քահանայի, իբրև մարմնաւոր ժառանգութիւն, և կոչին կաթուղիկոսունքն Սսոյ աջապահեանք, որպէս թէ զաջ Լուսաւորչի պահեալ իցեն, սոյն օրինակ ժառանգական էր կաթուղիկոսութիւն Աղուանից ի Գանձասար ի վերջին ժամանակս, որ նսեմին յազգէ Ջալալեանց, ղորմէ խօսելոց եմք յիւրում տեղւոջ, բայց զժամանակն փոխադրելոյ Ա. Թոռդն Սսոյ՝ ի սուրբ Սոփիայ վանից ի վանս սուրբ Աստուածածնայ՝ ոչ կարացի որոշել՝ քանզի որպէս յիշատակի ի հինգերորդ ժողովն Սսոյ՝ յաւուրս Կոստանդին կաթուղիկոսի կեսարացւոյ, զոր արարին ի վանս սրբոյն Սոփիայ, որ այժմ աւերակ է, միայն որմունք արևելեան կուսէ աւագ խորանին կացեալ է, զոր մեք աչօք տեսաք, միայն թէ ե՞րբ աւերեալ է և ե՞րբ փոխեալ են անտի զաթոռն ի վանս սուրբ Աստուածածնայ չկարացաք տեղեկանալ, միայն նորոգութիւն Աստուածածնայ վանից երևի յարձանագրութենէ նորա զոր գրեալ է ի վերի սեմս դրան օրինակ ղայս. (կարողութեամբն Աստուծոյ ես Ղուկաս կաթուղիկոս ամենայն Հայոց որդի աջապահ տէր Յուսիկ քահանայի վերստին նորոգեցի զսուրբ Աթոռս ի հիմանէ գմբեթաձև կամարակապ բազում փութիականօք և սիրով յիշատակ ինձ և համօրէն ննջեցելոցս, օգնականութեամբ... [1]) մցոց բոլոր թեմի և վիճակի Թուին Հայոց ՌՃՁԳ. ամին:) զբննութիւն ժամանակի փոխադրութեան, Թողութիւն ընթերցասիրաց, մեք սկիզբն արասցուք պատմել զանցս Հայաստան աշխարհի մեծի և փոքու, և աթոռոյն Սսոյ: Յիշատակին ի պատմութիւնս Յովհաննէս եպիսկոպոսի Սեբաստացւոյ առեալ ի Յարութիւն վարգապետէ Երզնկացւոյ, ինչ ինչ հարուածք, գերութիւնք և նահատակութիւնք ոմանց ի փոքր Հայս, զորովք զանց արարաք պատմել դարձեալ ըստ դրելոյ Աղուանից Եսայի Կաթուղիկոսի Հասանջալալեանց՝ ժամանակակից և ականատես վկայի, յայսկոյս ա. րևմտեան բնակիչք ղեկք Կովկասու մինչև ի ՌՃԿԱ. թիւն Հայոց, և յամի Տեառն 1712 էին ընդ իշխանութեամբ Թագաւորութեան Պարսից, որք ի սկարանալ տէրութեան նոցա, ապստամբեալ յետս կացին ի նմանէ: Սոյն օրինակ Ալի Սուլթան անուն ոմն իշխեցող նահանգացն՝ Ղախու, Ճարաւ և Զաքաթալայի, ընդ վղեալ ի պարսից, և իշխեցող սահմանակից իւր ապստամբեցուցեալ, միաբանեալ ի միասին՝ ասպատակեցին զբոլոր երկիրն Գուգարաց, Ուտէացւոց և Արցախու, նախ զգաւառս Շաքւոյ, Ինիսքլու, Բասանջաղ, Մուսպարաք, Զարդաթալու և զգիւղօրայս Քանդակու, ղորս գերեցին և աւար առին, ապա կրթեալք ի չարիս ամ ըստ ամէ, և օր քան զօր հաստատեալով զապստամբութիւն իւրեանց անդադար յաշխատեալ զինչս և զմարդիկ գերի վարէին յայսկոյս և յայնկոյս Կուր գետոյ յերկրէն Շաքուայ, Ղապաղու, և Ղասանու մինչև ի Շամախի, և ի նահանգացն Գանձակայ լեռնատեղեօք և դաշտավայրօք Գանձակասանու, Քուրաքբասանու, Ոսկանապատաձորոյ ընդ գիւղօրէից Պարտայու և Շամքօրայ, զամենեցուն միահուռ զաւար առին զինչս և զբաղումս գերեցին, ամայի արարին զաշխարհս ի մարդկանէ, և ձնացեալքն ծակամուտ փախստեայ ի քարանձաւս և ի լերինս Արցախու զերծանէին, իսկ ղգերեալսն նոքա վաճառէին Արաբացւոց, այսպէս շարունակ գործէին իբրև զամս ասն, Թէև հրամանաւ Պարսից արքային ջանացան ոստիկանք պարսից արգելել զապստակ նոցա, սակայն յաղթեցան ի նոցանէ քան յաղթեցին, որք էին Հասան Ալի խան Շաւխալու, Օղուրլու խանն Գանձակայ և Քիւչուկ խանն Շաքուայ: Ապա այնուհետև վսասհացեալ ի զօրութիւնս իւրեանց գրոհ եառն բուռն զօրութեամբ ի Վրաստուն, Թէպէտ քանիցս անգամ ընդդիմացան Վիրք բազում արիւնհեղութեամբ յերկուց կողմանց, ընդ որս էր և Իմամ Ղուլի խանն Սղնախ քաղաքին կախեթու, որ երիցս ի գիմի հարաւ ի նոցանէ, և ետ աւար զկայ և կարասիս իւր, այսպէս կաղ ի կաղ վազելով աւերեցին զՎրաստուն մինչև թագաւորք վրաց և կաթուղիկոսունք

[1]) Ոչինչ նշանակութիւն երեւեցաւ ի կնճռաւոր մցոց բառէս:

նոցա ի բաց թողեալ զարքայանիստ քաղաքն Թէլաւ և կաթուղիկոսարան իւրեանց ի յամուր լերինս Թուշայ դադարէին. բացադրէ պատճառս ապստամբութեան կովկասական կաթուղիկոս Հասան-Ջալալեանց այսպէս ասէ, ի Շիրվան Ղևպալու դաւառի կայր ոմն իշխեցող Մէլիք Մհամատ, որ կապալաւ առեալ էր զդաւառն ի Խանէն Շամախւոյ, որով լցեալ էր անչափ հարստութեամբ, եղեն որդիք սորա երեք. Փէյքար, Իբրահիմ և Ղասում, և բնակիչք դաւառին Ղապալու, էին դաղթական հայք վերկրէն Արցախու. ուր էր ի միջի նոցա Բարսեղ ոմն քահանայ ի սերընդոց Մէլիքաց բնիկ երկրին Խաչենուոյ այր ճոխ և երևելի, մինչ տեսանէր զկեղեքուն յիշեալ Մէլիք Մհամատի առ հայաղգիս, ընդդէմ նորա յարուցանէր զհայս և զայլազգիս և ընդ հաւանական գրութեան նոցա երթայր ինքն յԱսպահան ի դուռն արքային. առեալ հրովարտակաւ իշխանութիւն Մէլիքութեան Ղարալու գաւառի դառնայր ի գիւղն իւր ի Սօկիւթլի, զոր ի նորոյ շինեալ էին. բայց հղօր լինելով ոսոխն իւր՝ ոչ կարաց վարել զիշխանութիւն, սակայն յետ մահուան Մէլիք Մհամատայ կորուսին զիշխանութիւն և Փէյքար անդրանիկն անձամբ գնացեալ յԱսպահան նորոգեաց զիշխանութիւն իւր, բայց սակաւ մնոցի ի Հիւսէին խանէ Շամախու ըմբռնեալ մահացաւ, և ինչք և կանայք նոցա գրաւեցան և երկու եղբարքն Իբրահիմ և Ղասում փախստեայ գնացին առ Ալի Սուլթանն ճարու և Ջաքաթալայի, և անտի ի ձեռն նորա անցին յայնկոյս Կովկասու առ մեծամեծ աղգացն լեկղաց. բացադլուխ և բոկոտն շրջելովն՝ ամօթապարտ արարեալ զնոսա, իբրև վրէժխնդիր նախատանաց կրօնի իւրեանց։ Խրախուսելով նոքա զմիմեանս բարդեցան կուտեցան և ի մի վայր ժողովեցան հազարաւորք և բիւրաւորք ապստամբեալ ի պարսից՝ աւերեալ անմարդարնակ արարին զվերոյիշեալ զերկիրս ամենայն։ Ոմն ի գլխաւորաց նոցա Սուրխայ անուն ի թուին Հայոց ՌՃԿԸ 1719. անցեալ ընդ Գուգարս ի վրաստուն ընդ սահմանօք Տփխիսաւ, ասպատակեաց զդաւառս Օծխնէթի և Դմանեաց, և յամի 1720 ի թուին Հայոց ՌՃԿԹ. միաւորեալ ի միասին հինգ գլխաւորքն Ղեկաց, որք յիշեալ Սուրխայն, Շամխայնչ Խանին, Հտճի Գաւուէթն և Այի սուլտանն, ամենայն զօրութեամբն իւրեանց դիմեցին ի քաղաքն Շամախի, ուր մարտ եդեալ պատերազմեցան, ոչ կարացին առնուլ, դարձան ի տեղիս իւրեանց, և ի գալ միւս ամին վերստին յիշեալ լեռնականքն ի միասին առաւել քան զառաջինն մեծ ամբոխիւ, պատերազմեալ զաւուրս երկոտասան առին զքաղաքն Շամախի յՕգոստոս ամսոյն ի սուրբ Աստուածածնայ պահոց չորեքշաբաթի օրն, և սուր ի վերայ եդեալ կոտորեցին անխնայ զպարսեգին շաֆիս և զոմանս ի հայոց, կալան զՀիւսէին խան, և եռուն ի ձիոս Իրահիմայ, որ սպան վոխանակ եղբօր իւրոյ Փէյքարայ, և ղհարստութիւն քաղաքին մերկացուցին, որ ի 115 ամաց հետէ շահաստան վաճառական էր եղեալ, ժողովեալ զկապուտ կողպուտ և զգերին անցուցին ի տեղիս իւրեանց, և իբրև որսորդք կիրթք ոչ դադարէին ի տեղիս իւրեանց ձեալ, ի գալ միւս ամին 1722 և հայոց ՌՃՀԱ. ելանէին բազմութեամբ ի Մարտ ամսոյ անցեալ ի Շամախի ընդ դուռն երկաթի, բնակեցան հանդէպ լայնատարած դաշտին Մողնու, ի տեղին ուր խառնէին Երասխ և Կուր գետքն, և անդէն զառ ի վեր Բարկուշատու՝ իբրև տարափ անձրևոյ թափեցան յերկիրն Արցախու, ի նահանգն Տեղակայ, Վարանդու և Խաչենոյ, ուր լիք էին հայազգք քրիստոնէիւք և պարսիկ մահմեդականօք, զորս առհասարակ գերեցին, զանասունս և զստացուածս նոցա առին, խառնեալ զբանականս ընդ անբան անասնոց զառ ի վայր Գրգուական գետով անցուցանէին ասէ պատմիչն Եսայի կաթուղիկոս, զոր մեք աչօք իսկ տեսաք ի կատար լերինն փախըստեայ նստեալ, որ ի վերայ է սրջոյ Աթոռոյն Գանձասարայ, այս եղև ասէ ի Ապրիլ յաւուր աշխարհամատեան կիւրակէի, զի յաւուր աւադ շաբաթու սկիզբն արարին ի Տեղակայ, և այսօր աւարտեցին զաւերումն երից նահանգաց. յիշէ սա զՔաղիր անուն հայ Մէլիք Վարանդու, որ ընծայասարելով լազկացն, առ սակաւուք խնայեալ են զերկիր նորա, զարմանալիս

գրէ նա թէ ասպատակ սփռեալ նոցա ընդ լերինս և ընդ գաշտս նախ ոտնձն և զամենայն շինուածս գիւզօրէից այրեցին, ապա իջուցին ի գլխոց լերանց զիւխախուցեալսն, հանին ի ծակուց վիմաց և յանտառաց և ի մացառոտ մայրից գբաղումս ի քնակչին երկրին. և անցուցին (Թսրթաո) Գգովական կամրջով, որ ասի Ղառի քօրփի, և անցուցեալ ընդ Կուր գետ ի սահմանս իւրեանց՝ դարձան ի վերայ Գանձակայ չէև ևս հասեալ սոցա անդր, ոմանք ի մեծամեծաց Գանձակայ փութացան ի Տփխիս քաղաք, ուր նստէր յայնժամ Վախտանկ վրաց արքայն, ինգրելով օգնութիւն ի նմանէ, մինչ ղեկքն զաւուրս երկոտասան պատերազմէին ընդ քաղաքացիս Գանձակայ՝ եհաս յօգնութիւն քաղաքին քառասուն հազարաւ Վախտանկ արքայն վրաց. ի հասանելն արքային ի Շամքօր, ղեկքն անդէն չուեալ անցին ընդ Կուր գետն, և Վախտանկ եկեալ բնակեցաւ ի հարաւակոյս քաղաքին ի Զօլակ անուանեալ գաշտին, մնալով ընդ ամսաչափ ժամանակ, պահանջեաց ղգրաճն, ղոր խոստացեալ էին նմա Գանձակեցիքն, իբրև ոչ կամեցան հատուցանել՝ պատճառելով թէ Սուննի Մահմետականք եղեն առ ի գալստեան Ղեկաց զի կրօնիւք մի են նոքա ընդ նոսա: Վասն որոյ զչարեալ Վախտանկ ասպատակ սփռեաց զգօրս իւր առաջնորդութեամբ Ջաւատ խանին Գանձակայ ի Շէմշէտինու սկսեալ մինչև ի գետն Թարթաո և ի գիւղն Գիւլստան՝ բաց ի մարդոց առին զամենայն ինչ, զարծաթ, զոսկի և զանասունս, ի հայոց և ի մահմետականաց, զբոլորն ածին ի բանակս իւրեանց առ Վախտանկ, ոչ միայն զարդարուն եկեղեցի հայոց անգ, զոր ոչ կողոպտեցին զօրքն վրաց, բաց ի քաղաքէն Գանձակայ: Զհնգուածս ի ղեկաց նոքա ճառաքաղեցին, զասանորդ աւարին սովորութիւն էր ասլ թագաւորին, վասնորոյ միայն ի յոչխարաց ԻէՒ և յարջառաց ԹՒ. տասանորդ բաժին գտաւ արքային, այսպէս աւերեալ դարձան ի Տփխիս. այնուհետև ասէ նասլի պատմիչ ամենայն մարդիկ զհաճոյս իւրեանց պատրաստեցան առնել, և ես տեսի ասէ զի ոչ գոյ նշան խաղաղութեան, ընդ Վախտանկայ գնացի ի Տփխիս ի ԻԸ Մայիսի մտաք ի քաղաքն: Ցետ ամալոյ ամիսս չորս, վերըստին դառնայ Հայ և Վրացի զօրօք Վախտանկ ի Գանձակ յամսեանն Սեպտեմբերի համաձայն հրովարտակի պարսից արքային, յորում շնորհէր նմա զիշխանութիւն ամենայն Աղուանից և Ատրպատականի, նստել ի Գանձակ և պահպանել զաշխարհն, ստանայր Վախտանկ գիր դաշնակցութեան ի նմին ժամանակի և ի կայսերէն Ռուսաց ի մեծէն Պետրոսէ կալ պատրաստի ի Գանձակ, զի և ինքն գտանելոց էր անդ ի պայմանեալ ժամն: Ծողովեալ էին հայք Արցախու յայնժամ զօրս երկոտասան հազարս ի ձեռս Մէլիքայ, և յանձնեալ ի ձեռս չորից քաջ երիտասարդ հրամանատարաց, որք հարիւրապետք կոչէին, որոց անունքն են՝ Աւան, Ղուան, Շահ՝ի և Սարուխան վասն զդէմ ունելոյ հինից ղեկաց. լուեալ զայս Վախտանկայ առնու ընդ իւր զեպայի կաթուղիկոս, որ ղայս մեզ պատմէ հասեալ ի կոտորեալ կամուրջ Ղաղախու, որ Սընգապիւարի ասեն, անգէն ուղղևորէ յառաջագոյն գնալ համոզել զազգն իւր, ածել առ ինքն զերկոտասան հազարն ամենայն զօրապետօք իւրեանց զի առաւել զօրաւոր լիցի և ահարկու ի վերայ ամենայն թշնամեաց, սա թէպէտ կատարեաց զհրաման Վախտանկայ էած զամենեսեան ի Գանձակ սպառազինեալ, վասնորոյ Վախտանկ լուեալ թէ թշնամացեալ են ընդ նմա խանքն Ղազախու, Լօրչալուի, Կախեթու, Գանձակայ, և երեւանայ և զդառնալ զօրաց Ռուսաց ի Գարբանգ, առեալ ղզօրս իւր դարձաւ ի Տփխիս՝ պատերազմելով ընդ Ղազախու խանին, այսպէս զօրքն հայոց ընդ կաթուղիկոսին գարձան ի տեղիս իւրեանց: Իսկ մեծն Պարսոս, որ առաքեալ էր ընկերութիւնս Ռուս վաճառականաց ի Շամախի, առին և գերեցին զայն ղեկքն, որք ահիշեցան ի վերն, վասն այն բողոք կալաւ առ Հիւսէին շահ Պարսից, յորմէ չընկալաւ ինչ, խնդրեր շահն ի նմանէ ձեռն օգնականութեան ընդդէմ ղեկաց, ուստի եւ մեծն Պետրոս անձամբ քառասուն հինգ հազար զօրօք, ընդ ծովն Կասպից եհաս ի դուռն Ալանաց, որ ասի Գամրղափի Գարբանգ, անձնատուր եղև նմա իշխող տեղւոյն, ախրեաց քաղաքին Գարբանգայ, շատ համարեաց անարիւն

յաղթութիւն վասն անառիկ տեղւոյն, և ոչ ժամանեալ ի Գանձակ ձմեռն եհաս և նաբէն վտանգեալ, դարձաւ ի Մոսկով, և ապա 1725 ամի վերջին շահ Թամրազ պարսից որդի Հիւսէին շահին, հակառակ Մահմուա Միւրվէյիզեան խանին, որ յաղթահարեր զՊարսկաստան եթող ի Ռուս զգաւառս Գիլանու, Գարրանգայ, և Մազանգարանու, որով հաստատեցաւ ի թագաւորութիւն հօր իւրոյ։ Արդ աերութիւն պարսից, որ յայնժամ վերդովեալ էր և մահմետականք Վրաստանի և Աղուանից ոխային ընդ վախտանկ արքայն Վրաց, գրեցին զնմանէ առ Թահմազ շահ, թէ միարանեալ է նա ընդ իւր ղհայս և ղվիրս, կոչէ օգնութիւն և զՌուս, զերես դարձուցեալ ի Պարսից, առ այն հրովարտակ առնէ շահն, կարգէ մարզպան Վրաստանի զՄահմատ Ղուլի խան կախէթու, այն է որ նստեր ի Սղնախ քաղաք, և իշխէր Սամուղաց, և հրամայէ խանից Երևանայ, Գանձակայ, Ղազախայ և Բօրչալուայ, օգնել Մահմատ Ղուլի խանին առաքել ինքեան զգլուխն Վախտանկայ, որք ի մի վայր ժողովեալ պարսիկք դիմեցին ի վերայ Վախտանկայ, և Վախտանկ վրացի և հայ զօրօք յսկսանէ դեկտեմբեր ամսոյ, մարտ եղեալ պատերազմեցաւ ընդ նոսա, հազիւ թէ մինչ ի տօն Զատկին յաղթեաց պարսից, և արար փախստական զնոսա և նա ինքն Մահմատ Ղուլի խանն մինչ փախըստեայ անկաւ ի լեռնաբնակս ղեկաց, խնդրեալ ի նոցանէ օգնութիւն, խոստացաւ նոցա զամենայն ինչ և զառատաձեռն Ցփխիսու և զգերիս, յաւել և ի վերայ մարգարեաւ նոցա տալ երեք թումանն, այն ինչ ուրախ եղեալ ժողովեցան լեկղիք ընդ գլխաւորութեամբ Ալի Սուլթանի, Եամիի(?) և այլոց, մինչ ցրուեալ էին զօրք Վախտանկայ, տոքա յանկարծ անկան ի վերայ քաղաքին Ցփխիսու, ի գիմագրել զբանի աւուրս ոմանք ի մեծամեծաց վրաց՝ յետս չոքան ի Վախտանկայ որք էին Գէօրգի Երէսթաւն Ղարաղալխանու, Ղափլանեցիք և այլք, եւս Վախտանկ զմիաձայնութիւն վտանգին, խոյս ետ ի քաղաքէն, հրաման արար գլխաւորաց քաղաքին ելանել ընդ առաջ ղեկաց՝ հրաւիրել ի քաղաքն, թեպետ մի ընդ ընդել աւերեսցեն զքաղաքն և գերեսցեն. և ինքն ամրացաւ ի լեառն Թիւլէթ, հրեշտակս առաքեալ առ Ռուս հասուցանել ի Թիֆլուն զղօրս օգնական, սակայն ոչ ժամանեցին նոքա, իսկ Մահմատ Ղուլի խանն մտեալ ի քաղաքն Ցփխիս, ամբոխիւ լեզկաց, թէպէտ խանն արգել զասպատակս քաղաքին, սակայն ոչ կարաց բոլորովին զսպել զնոսա, կողոպտեցին ուր և հասան աւարի առին զեկեղեցիս, գերեցին զմանկահասակ և զերիտասարդ աղջկունս և զտղայս, հառ ի քաղաքացւոց զԽՈ Թումանս և ետ ղեկաց զոր խոստացեալ էր, ապա արձակեաց զնոսա ի տեղիս իւրեանց, ինքն կալեալ զիշխանութիւն քաղաքին և երկրին։ Ի ժամանակիս այսմիկ զօրացեալ էր նագր Ղուլի խանն, որ օգնեաց Թագաւորելոյ վերջին Շահ Թամրազայ ընդդէմ Աղուանից, որ ապա եղև նադր շահ. սա յաղթահարելով զօամանցիս և զբռնակալ խանս պարսից, տիրեաց համօրէն Հայաստանի և Վրաստանի, գուցէ թէ մեռեալ էր յայնժամ Վախտանկ կալեալ զՑփխիս քաղաք որդի նորա Շահնաւազ, առ որ եկն Սաֆիանոս ասնուն Հայ Սիւնեցի՝ խնդրել զոմն իշխան կառավարիչ ինքեանց, զորմէ գրէ Հայր Մինաքսէլ Զամչեան, պատմութիւն Հայոց Հատոր Գ. երես 785։ Բայց Թագաւոր անուն ոչ գտանեմք ի վերայ Շահնաւազայ, և ոչ թէ Մուրազայ Հերակլ արքայի Վրաց, քանզի յետ Վախտանկայ որ զօրացաւ նաեր շահ և Թագաւորեաց ի վերայ Պարսից 1736 ամի և սպանաւ ի 1744 ամի Շահնաւազ և Թամրազ միայն մարզպանութեամբ աիրէին Վրաստանի ընդ ձեռամբ նաեր շահի, որպէս աւանդեն մեզ հինաւուրց բանք թէ զբաղումս ի մելիքաց Հայոց Արցախու կուրացոյց նաեր շահ, և ոմանք փախստական անկաեալ ի Ցփխիս, միջնորդութեամբ իշխանին վրաց, բազում ընծայիւք ազատեցան ի կուրութենէ յաւուրս սորա։ Բայց յետ մահուան նաեր շահի խռովեալ Պարսկաստան այր ընդ եղբօր ոգորէին իւրաքանչիւրոց աշխարհաց մարզպանք և գաւառակալք, ինքնագլուխ միապետէին, որք որչորչէին խան, սուլթան, ըէկ, աղայ, ի Հայ աղգէ ևս գտանէին մանաւանդ իշխողք քալանթար, մելիք և իւղբաշի անուամբ։

Տիրապետեաց յայնժամ ի Վրաստան հերակլ որդի Թամրազայ, եւ պատերազմ ընդ Ղեկս, յաղթեաց նոցա, տիրեաց Քարթլոյ եւ Կախեթու, նուաճեաց ընդ իւրով իշխանութեամբ ղիշխեցօզս Բօրչալուի, Ղազախայ, Երեւանայ, Գանձակայ, Ընդակայ եւ Սիւնեաց, եւ թագ կապեալ թագաւորեաց ի վերայ Վրաց, եւ մասին Հայոց ցԱխուրեան գետ։ Յայսմ ժամանակի իրրեւ գառնայր Հերակլ ի Տփխիս, վերստին ապստամբեին տիրողքն՝ Երեւանայ, Շիրակայ եւ Փամրակաձորոյ։ Յաւուրս յայսոսիկ կայսերական ճոխութեամբ պայծառանային Սահմանակիցք Հայաստանի եկեսեցիներնէ եկեղեցիք կայսերուհին Ռուսաց. եւ Սուլթան Համիտ արքայն Օսմանեանց, եւ ի Պարսկաստան յազթահարեր ներքինի Մահմատ խան, որ գի Մահամատ Հիւսէին խանի Մաղանդարանայ. ի սոյն աւուրս վերստին զօրաժողով լեալ Հերակլ արքայ Վրաց ի վերայ Հիւսէին Ալի խանին Երեւանայ, ոչ կարացեալ զդէմ ունիլ նորա Հիւսէին Ալի խան, ամրացաւ ի բերդն, և Հերակլ աստատակ սփռեալ զզօրս իւր մերկացոյց զերկիրն ի մարդկանէ. զբաղում տուեալ Հայոց ամենայն գերդաստանեօք և ընչիւք էառ յԱյրարատ գաւառէ ի Վրաստան և բնակեցոյց զոմանս ի Հաւլաբար արուարձան Տփխիս քաղաքի, և զայլս ի գիւղօրայս, Հարկատու արար ընդ Հիւսէյին Ալի խան Երեւանայ, զիշխեցօզսն Շիրակայ, Փամբակաձորոյ և Տաւուշայ, եմուա ընդ լծով նորա իշխեցողն Սիւնեաց և դարձաւ ի Տփխիս։

Իսկ ի սահմանս Կիլիկիոյ ի ժամանակիս յայսմիկ բազմացեալ էր խռովութիւն ի մէջ գաւառակալաց, որք նստէին հրամանաւ Բդեշխին կեսարիոյ, ընդ հպատակութեամբ Օսմանեան պետութեան, որոց մի էր և Լիւան օղլի, որ սակս զինքենէ լինիլ յազգէ Լևոն թագաւորի Հայոց, զկնի ժամանակաց դարձեալ հաւն իւր ի մահմետականութիւն, որ էր ընդդէմ պատմութեան Հայոց, մանաւանդ թէ սուտ բոլորովին։ Սա իշխեր սահմանացն Սսոյ, Վահկայ, Լամրոնի և Անարզափայ ցՀանգիտ։ Յաւուրս սորա այր ոմն անառհմանական Ցիւսուփ անուն Խղան օղլի կոչեցեալ (որ է դաւուլչի օղլի՝ կամ անանկացեալ) առնու իւր կին ի սահմանացն կեսարիոյ ի Դաւալիոյ գաւառէ, որ այժմ ասի աւերակ, զայրի կին իշխողի Դաւալիոյ գաւառակի ճոխ ընչիւք և խելացի, որով զօրացեալ Ցիւսուփ Խղան օղլի, առնու իշխանութիւն հիւսիսակողման լեռնավայրացն Տորոսի, ուր է և գիւղաքաղաքն Հայոց Հաջին, և օր ըստ օրէ զօրացեալ բռնացաւ և ի վերայ միւս կողման իշխեցողաց Տորոսի, զոմանս սպանեալ և զոմանս հալածեալ տիրէ բոլոր լեռնականացն, հիւսիսոյ և արևմտեան կողմանց Տորոսի, ընդ նոսա հալածեալ զԼիւան օղլի, իշխէ քաղաքին և սահմանացն Սսոյ։ Ինակութիւն կալեալ ինքեան մերձ ի Թարձր բերդ ի Բէլանքօյ ասացեալ տեղւոջ, և ընդ վզեալ ապստամբի ի հպատակութենէ Օսմանեանց, և փոխէ զանուն իւր Ղուզան օղլի՝ և զլեառն Տորոս յանուն իւր անուանէ Ղուզան տաղի։

Յաւուրս յայսոսիկ Սիմէօն կաթուղիկոսն Էջմիածնայ հոգայր զազգօգուս գործոց. շինեաց յԷջմիածին գործարան թղթի և տպարան, փոխեաց զհին ձօնացոյցն զարարեալն ի Թարգմանչաց, արար շարականս և զաղօթս ի ձօնս կայսերաց Ռուսաց, որ ասի Մօլեբնի, որով կատարեն զհանգէս աւուրց ձօնից թագաւորաց ռուսաց և ժառանգաց նոցա, և միանգամ գուն գործեր վասն նորոգութեան կործանեալ թագաւորութեան հայոց, ոչ ժամանեալ այնմ, փոխեցաւ առ Աստուած յամի տեառն 1780 ի 20 յունիսի կացեալ յաթոռ հայրապետութեան ամս 17։ Սա, որպէս աւանդէ պատմիչն, առանց խորհրդոյ իշխանապետ հայոց Կ. Պոլսոյ օծաւ կաթուղիկոս Էջմիածին, սոյնպէս և յետ մահուան սորա ընտրութեամբ միաբանից Էջմիածնի, առանց հաւանութեան բնակչաց հայոց Կ. Պոլսոյ օծաւ ի տեղի նորա կաթուղիկոս ամենայն հայոց Տէր Ղուկաս կարնեցի 1780 2 օգոստոսի։ Ասէն սովորութիւն եղև կաթուղիկոսաց Էջմիածնի առանց հարցանելոյ զիշխանապետս հայոց Կ. Պոլսոյ նստիլ յաթոռ կաթողիկոսութեան, յորմէ յառաջացան անվայելուչ խռովութիւնք և երկպառակութիւնք ի մէջ ազգիս, և հակառակ միմանց յառաջ եկին գործք վնասակարք ազգին և աթոռոյն Էջմիածնի, զորմէ ասասցուք ի տեղւոջ իւրում ըստ

պատշաճին։ Արգ իրրև եհաս լուր օծման Տէր Ղուկասու ի Կ. Պոլիս՝ անկաւ աղմուկ և խռովութիւն ի Թագաւորեալ քաղաքն, ոմանք հաճեցան ընդունիլ զնա. և ոմանք ընդ Զաքարիայ պատրիարգին ոչ կամէին, քանզի ասէր պատրիարգն Զաքարիայ թէ ինձ պարտէր լինիլ կաթուղիկոս և ոչ նորա, ես գոլով առաջին քան զնա հասակաւ, պատուով և աստիճանաւ ինձ առաւել պատշաճ այն իշխանութիւն, վասն այն կողմնականք եղեալ վիճէին, բայց յետ ոչ բաղում ատուրց՝ ամենեքեան ընկալան զնա կաթուղիկոս ամենայն Հայոց։ Արգ մինչ վրդովեալ էր Թագաւորութիւնն Պարսից, և զաշխարհս Հայոց աւերէին օր ըստ օրէ երբեմն լկկիլք, և երբեմն գաւառական իշխեցողք պարսից՝ ելուզակելով զմիմեանց գաւառս կողոպտէին, յափշտակէին զինչս և զանասունս Հայոց, գերի վարէին զկանայս և զորգիս, զցասս սրոյ մեծացուցանէին մեծամեծաց Հայոց. ղայսոսիկ լսեր ի Ռուսաստան Յովսէփ արք եպիսկոպոսն Երկայնաբազուկ Արզութեանց, յայտներ զնեղութիւնս ազգիս մերոյ եկատերինէ կայսերուհւոյն, յորմէ առնոյր բանս նորոգելոյ զկործանեալ Թագաւորութիւնս Հայոց միջնորգութեամբ մեծ կոմսին Գրիգոր Պոտեմկինի, զորմէ ծանուցանէ ե. րանելի կաթուղիկոսին Սիմէոնի ըստ կարգադրութեանց իւրեանց Հաղորդել զինդիր աղգին իւրեանց կայսերուհւոյն Ռուսաց։ Ի յայլորգել խնգրոյն գրել սահմանեցին ի մէջ երկուց աղգացն ղգաշն վասն կանգնելոյ զԹագաւորութիւնս Հայոց, և գրեալ յերկուց կողմանց առաքեցին առ միմեանս ի 1789 ամի օրինակ ղայս։ [25])

Ցօդուած II) Նախքան զամենայն հաստատել զսէր և զմիաբանութիւնն ի մէջ երկուց աղգացս՝ ըստ այնմ «Թուէք ամենեքին եղբարք էք». որք ի մէջ իւրեանց չունիցին ամենևին խտրութիւն օրինաց ոչ Ռուսաց առ Հաւատս և յեկեղեցիս մեր, և ոչ մեր առ նոսա. զի ի Քրիստոս ոչ այլ ինչ է. Թէ ոչ Հաւատ սիրով յայլորգեալ» (Գաղատացւոց 7 գլուխ 6 համար) այլ համարել զմիմեանս մեզ և նոքունց Հաւատոյ և եկեղեցւոյ ծնունդ հիմնեալ ի վերայ Փրկչական բանի Թէ «այսու ծանիցեն զձեզ Թէ իմ աշակերտ էք, Թէ զմիմեանս սիրիցէք»։ Վասն որոյ և համարձակեալ և մուտ առնել յեկեղեցիս իւրեանց, որպէս զի մի ինասցէ նիւթ խռովութեան վասն զի միապէս գաւանեմք զպաշտելի սուրբ երրորդութիւն և մարգեղութիւն բանին Աստուծոյ՝ Աստուած և մարդ կատարեալ, և վասն մեր չարչարեալ, զոր ի Հաւատամքի պաշտի և ի նոցանէ և ի մէնջ որ հինն քրիստոնէական աղգաց են ի վերայ կարծեցեալ դատողութեան մարդկան։

Բ) Չհնստեալս յիւրաքանչիւր աղգաց չընկալնուլ ի հազորգութիւն իւր զպղատրիչս և զխռովաբաբս սիրոյ և խաղաղութեան։

Գ) Ի Հաւատս գալ ոմանց տաճկաց և հեթանոսաց, որ աղգի կրօն կամիցին ըմբռնել նա նովաւ մկրտել, Թարց գայթակղութեան արգելման լիցին ըստ Հաճոյից նոցա որպէս մի և նոյն քրիստոնէական օրինաց պաշտօնէիւ։

Դ) Կապակցութիւն երկուց Թագաւորութեանց մեծ դաշամբ յաւիտենականաւ։

Ե) Լինիցին ի Հայաստան չափաւոր ղօրք ռուսաց երանալաւ միով յաղգին պահպանութիւն և երկիւղի այլ Թագաւորաց՝ Պարսից և Օսմանցւոց և ի ժառանգաց Թագաւորութեան մինն դնիցի ի դրունս կայսեր։

Զ) Հպատակութիւն մեր այնպէս եղիցի որպէս լինիւր երբեմն Ցունաց և Պարսից տալով ի յարքունիս հարկացն և ի հանքաց ոսկւոյ և արծաթոյ. և ի ժամանակի պատերազմի յօգնութիւն միմեանց հասանեն որքան և հարկն պահանջեսցէ։

Է) Մինչ ամենազորման և օգոստափառ կայսերուհին կամի օգնութիւն առնել տարաբախտ աշխարհի մերոյ և կործանեալ Թագն նորոգել, ընտրութիւն Թագաւորին մերոյ կախեալ լինիցի ի կամաց նորա միայն, եթէ յաղգէ մերմէ և եթէ դրան իւրոյ հաւատարմաց։

Ը) Որ ոք Թագաւոր կացուսցի լինիցի Հայոց օրինօք և ի Վաղարշապատ Թագաւորական քաղաքն, ի սուրբ Էջմիածին օծնիցի որպէս նախնիք Թագաւորքն մեր։

Թ) ԶԹագաւորական քաղաքն պատրաստեալ ի Վաղարշապատ կամ յԱնի Թագաւորական քաղաքն կամ յայլ պատշաճաւոր տեղի յԱյրարատ դաւառի։

ժ) Սահմանեալ կաւալերն [1]) (օրան ննջան) լինել ասպան նոյի. և լենտն երեք դոյն կարմիր, կանաչ և կապոյտ ըստ գունոյն աղեղան որ զկնի ջրհեղեղին տուաւ Աստուած նոյի ի նշան հաշտութեանն։

ժԱ) Եթէ հաստատեցի և այլ կաւալեր լինի ցի յանուն սուրբ Լուսաւորչին օրան պատկեր նորա և լենտն որպէս Համոյ լինիցի։

ժԲ) Հաստատեցի և առաջին նշան մեր դաստառակի Քրիստոսի, զոր և առաքեաց առ Աբգար Թագաւորն մեր. տացի այն յաղթանակողացն միայն կարմիր լենտիւ։

ժԳ) Ճարմարեցի կնիք թագաւորական ըստ սովորութեան առաջնոց Թագաւորացն մերոց Արշակունեաց արծիւն միագլխի, որ նախքան զքրիստոնէութիւնն, դառն ի մամանակի քրիստոնէութեան և երկու առիւծն ի փոքր Հայաստան և նոքօք զարդարեսցին հանդերձք թագաւորաց մերոց դրօշակքն և դրամքն։

ժԴ) Ճաղգէ առաջնոյ նախարարացն մերոց և իշխանաց յայտնեցի ոք որքան Հայրենիք ունեցեալ իցէ որ վկայութեամբ հաստատեսցէ վերադարձուցեալ եղիցի առ նա և պատիւ նախագահութեան աղգին պահպանեցի։

ժԵ) Ի նորոգել իշխանութեան մերոյ մի լինիցին ծառայք իշխանաց (ստրուկք) որք կարիցեն զմի մի վաճառել ի նոցանէ, այլ լինիցին այնպէս որպէս յառաջ եղեալ են ի ժամանակս Թագաւորաց մերոց և Օսմանցւոց և Պարսից, որք թագաւորին միայն են ծառայք, և երբ թագաւորն կամիցի ուրուք իշխանի շնորհ ինչ առնել զգիւղ ինչ, բնակչաւն շնորհեսցէ նմա, բայց շնորհընկալ իշխանն կարող է գգիւղն ընդ բնակչաց ի միասին ծախել, և ոչ թէ բնակիչն, այլ գիւղն ընդ մլքոյն այսինքն ընդ հողոյն և ջրոյն, զոր գործեն մարդիկք. Ծոյնք յոր ժամ՝ տիրեցին մեզ զկնի անկման Թագաւորութեան Արշակունեաց՝ կամեցան զմեզ սեփական ծառայ իշխանաց իւրեանց առնել. ուստի ազգ մեր ոչ համեցաւ առ նոսա, այլ մտին ընդ իշխանութեամբ Բաղդատու Խալիֆային զի ազատ մնասցեն։

ժԶ) Ճաղգս վաճառականութեան սահմանեցի օրէնք ի մէջ երկուց թագաւորացս և յատկացուսցի մաքս իւրաքանչիւր վաճառելի իրաց և տացի մեզ նաւահանգիստ ի կասպիսական ծովուն։

ժԷ) Փախուցեալ զինուորաց և հպատակաց սահմանել օրէնք, և վան որպիսապար ընդունելոյ և ուսաց իշխանս, զազնիւս և զպատուաւոր անձինս ազգի մերում։

ժԸ) Ընարութիւն հայրապետին մերոյ լինիցի յառաջարկութեամբ թագաւորին մերոյ, որպէս յայնմ ընտրի ի բոլոր աղգէն [1])։ Որովհետե. Պայծառափայլ Գրիգոր Ալէքսանդրիչ Պոտեմկինն է յատուկ խնամակալ ազգի մերում, որ ըստ հաճութեան ամենողորմած կայսերուհոյն է կառավարիչ գործոյս այսմիկ. և ազգի մերում յատուկ խնամակալ և բարերար, զոր ինչ նա տնօրինեսցէ, զի շնորհ ողորմութեան մարդասէր կայսերուհոյն, նորին միջնորդութեամբ յառաջանայ որպէս յաթոռոյ Աստուածութեան ի հրեշտակաց առ մարդիկ։

Զայս գրեցաւ ի կողմանէ հայոց և ի ձեռն Յովսէփ Ալբ եպիսկոպոսի մասուցաւ կայսերուհոյն. յիշատակի ի մերում անծանօթ նամակի, թէ Գրիգոր Ալէքսանդրիչ Պոտեմկինն չանայր ըստ ամենայնի ի դլուխ տանիլ զայս գործ, և յորդորէր միշտ զկայսերուհին զինքն կացուցանել թագաւոր ի վերայ Հայոց յաղագս որոյ հրամանաւ կայսերուհոյն ի կողմանէ Ռուսաց գրեցաւ առ այս դաշնագիր համաձայն գրութեանց գաշանց Հայոց օրինակ զայս։

Ծօգուսած ԻԱ) Նախարարութիւն Հայաստանեայց լիցի հրովարտակաւ՝ ի տանէ Հայոց ըստ օրինացն Հայաստանեայց։

ԻԲ) Նախարարն Հայոց լիցի ի բուն ազգէն և ի ժառանգութենէ Հայոց և դաւանութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ։

Գ) Ի զօրաց կայսերութեան ուսաց

[1]) Կաւալեր կամ՝ օրան է անուն աւանդական թագաւորական նշանի, ի լեզու Ռուսաց, որով պահին թագաւորք զզօրականս ի յաղթանակի։

[1]) Թուի թէ ի սմանէ առեալ է զկանոնն, զոր վան ընտրութեան կաթուղիկոսի գրեալ է ի Բարձրագոյն կարգագրութեան, որ վան յուսաւորութեան Հայոց եկեղեցւոյ կայսրն Ռուսաց ի 11 մարտի 1836 ամի։

2000 ձիաւորք, 2000 հետևակք և 2000 ռմբաձիգք (թնդանօթաձիգ) ըստ կարգի պետօք թօփխանայիւք, ճէպխանիւք և կերակրովք, և այլ ամենայն հարկաւոր գործովք և պիտոյիւք, քան զամ ժամանակօք կայսերական ծախիւք կալով ետասցեն յերեսս երկրին Հայաստանեայք վասն պահպանութեան երկրին և ազգին Հայոց,

Գ. Ամենայն ամրոցք և պատրաստութիւնք զինուց լինիցին ի ներքոյ հրամանի սպարապետին ռուսաց, մինչև ելանել նոցա ի Հայաստան աշխարհէն։

Ե) Ի տանէն Հայոց հատուցումն լինի կայսերութեան վասն ծախուց 6000 զինուորաց և պետաց ռուսաց իւրաքանչիւր տարւոյ 60000 թումանի յորոց 30000 լիցի ոսկի և արծաթ իսկ մնացեալ 30000 հաց, միս և գինի։

Զ) Վերոյիշեալ 6000 զօրքն ռուսաց անգրէն գառնան առ կայսերութիւն իւրեանց պսպիսի կերպիւ. 2000 զօրքն յետ տասն ամաց, 2000 հնգետասաներորդ տարին և 2000 քսաներորդ տարին. և իւրաքանչիւր ի վերոյ յիշեալ ժամանակաց ելանողքն լիցին չափաւորութեամբ իւրաքանչիւր պաշտօնի զինուորաց, և նմանապէս պակասեցի ի տանէն Հայոց հատուցումն վասն ծախուց նոցին իւրաքանչիւր ելանողաց 2000 զօրաց 20000 թումանի տարեկան։

Է) Ի լրանալ քսան ամի վերոյիշեալ հատուցումն ի տանէն Հայոց մնծի կայսերութեան, եթէ զրոլորն ոչ լինիցի տրուեալ, որ ինչ լինի մնացեալն, այն պարտք լիցի անժխտելի ի վերայ տան Հայոց։ Զի հատուցէ գանձարանի կայսեր տասնևվեց տարի ժամանակաւ իւրաքանչիւր տարւոյն այն պարտք ի տան րաժնէն մէկն առանց շահի։

Ը) Ի տանէն Հայոց իւրաքանչիւր տարւոյ մի անգամ ընծայեցուցեալ լինի կայսեր Ռուսաց և ի նշան հնազանդութեան քսան մզալ զուտ ոսկի, երեք ձի, և վեց խոյ։

Թ) Ցունն Հայոց ծանիցէ զկայսերութիւն Ռուսաց զիւր ազատիչ ի գերութենէ կալով մնասցէ բարեկամ ընդ բարեկամս, և թշնամի ընդ թշնամիս կայսեր և մնծ կայսրըն սիրեսցէ զբարեկամս և առեսցէ ընդ թշնամիս Հայոց,

Ժ) Եթէ հրամանի ի կայսերութեան ելանէ ընդունել իսանէն Հայոց զզինուորս տունն Հայոց պարտական լիցի տալ մինչև 6000 զօրս և միւնոյն կերպիւ ստանալ ծախս նոցա ի կայսերութենէ, որպէս կայսերութիւն ի Հայոց զիարդ ի վերն ի հինգերորդ պայմանին գրեալ է։

ԺԱ) Ամենայն որ թէ կարգաւոր և թէ զինուոր որ ընդ հաւանութեամբ կայսեր է պարտաւոր լիցի ի մէջ աշխարհի և ազգին Հայոց, սոյնպէս զկարգաւորս և զզինուորս, որ յազգէն Հայոց լիցի պատուելի ի մէջ ազգին Ռուսաց որպէս զազգըս իւրեանց,

ԺԲ) Զկերպ Աստուածպաշտութեան Ռուսաց պատուեսցեն Հայք և Հայք պաշտեսցեն զամենայն ըստ սովորութեան իւրեանց յեկեղեցւոջ. և զնոյն պատուեսցեն Ռուսք։

ԺԳ) Ընդարձակապէս մտցեն և ելցեն ամենայն արհեստաւորք և վաճառականք յաշխարհէ ռուսաց, որ և իցէ ամենայն ձեռագործք աշխարհին Հայոց հատուցանելով զհարկն, զմաքսն և ըստ սովորութեան և կերպի կառավարութեան ազգին Հայոց նմանապէս և Հայք մտցեն և ելցեն աներկիւղ և անկասկած յաշխարհն ռուսաց, և ինչևիցէ ձեռագործք հատուցանելով զհարկն, զմաքսն և ըստ սովորութեան և կերպի կառավարութեան ազգին ռուսաց։

ԺԴ) Քրէական մեզապարտք, փախըստականք եթէ ի ռուսաց աշխարհն Հայոց և ի Հայոց յաշխարհն ռուսաց ընկալնուն պահպանութիւն միայն կենաց. բայց գրկեալքն ի պատուոյ և զոր ինչ պաշտօնէ իցէ, կամ փախստական եթէ լինիցի պարտաւոր ոսկւոյ և արծաթոյ, և եթէ Հայոց, պարտ է նմա դառնալ ըստ օրինաց աշխարհին, յորում գտանիցի անձն նորա, և փախստականն իցէ եկեղեցական պարտ իցէ գարձուցանել զնա առ առաջնորդն իւր։

ԺԵ) Ցունն Հայոց կառավարեսցէ զազգ իւր և զաշխարհն ըստ օրինի Հայոց և զոր ինչ աւելին յայնմանէ դիպուածք և կառավարեսցին ի հաստատութեան նոյնոյ օրինաց։

ԺԶ) կայսերութիւն ռուսաց ծանիցէ

զաուն Հայոց իբրև զթազաւոր Հայաստանեայց, և որոց զգեստքն մեծ, բերան Հայոց, որ նստիցի ի Պետերբուրգ։

ԺԼ) Որովհետև երկրակցութիւնք և ազգաբնակութիւնք Հայոց, Ազուանից և Վրաց, ի հնոյ ժամանակէ իբրև զմի են, որ և այժմոյս սիրելի են միմեանց, վասնորոյ ի հարկաւոր ժամանակի տալով Հայոց 6000 զօրս ռուսաց, ունիցին և ազատութիւն օգնական լինելոյ Ազուանից և Վրաց որքան կարող լինիցին։

ԺԼ) Վասն հատուցման լինելոյ զտարեկան ծախուց 6000 զօրաց կայսեր գրաւ լիցի չորան ի տասն մասնէ բոլոր եկամտից Հայաստան աշխարհին, այսպէս տասնէն զչորս մասն Հայրապետին Հայոց վասն ծախուց կրօնաւորաց, տնանկաց, ազքատաց և նորոգութեան վանօրէից և այլոց պիտոյից. իսկ մասն գանձարանին ընդհանուր տանն Հայոց։

ԺԹ) Հատուցմունք որ ի վերայ պարտին լինիլ ի չորս եղանակս տարւոյն այսինքն նախ՝ ի մարտի 20-րդ, Յունիսի 20-րդ, Սեպտեմբերի 20-րգ և չորրորդ Դեկտեմբերի 20։

Ի) Եթէ հանգիպեսցի ինչ սխալանք, յանգիմանութիւնք կամ զանազանութիւնք ի մէջ երկուց ազգաց տէրութեանց Ռուսաց և Հայոց, առ որս խռովութիւնք բոլորովիմբ արգելեալ է և վրէժխնդրութիւնք փակեալ, պարա լիցի երկուց կողմանց զգանգատս և զպատասխանիս իւրեանց ընծայել առ ի սպաս ամենայն փառաց արժանի կայսերն Հռոմայ այսինքն Գերմանիոյ. և ի վերայ որոց ի նմանէ լեալ վճիռն լիցի երկուց կողմանց արդարութեան. արդ եթէ հաճոյ Թուեսցի կամաց Հայրապետին և իշխանաց և տանուտէրանց Հայոց յայսմանէ տպեսցի 200 հատ յամի տեառն 1779։ *Թարգմանեաց դաշանց քանս ի դաշանց մատենէ Ռուսաց 1786 ամի ի Պետերբուրգ Ներսիսեան Շամխորեան Նոր Ջուղայեցի։*

Արդ՝ յաւուրս Ղուկասու Կաթուղիկոսի իբրև 1780 ամի Տեառն յիշեն զայսմանէ ի նամակս իւրեանց առ Ղուկաս Կաթուղիկոսն իշխանքն Հայոց Հնդկաստանի Յովհաննէս աղայ Գերաքեանց ի Սուրաթ քաղաքէ, և Շահամիր Սուլթանուեան ի Մագրաս քաղաքէ, փութացուցանելով զնա հոգալանել զնորոգութենէ թագաւորութեանն Հայոց, զորմէ և ծանուցանել նոցա. բայց թէ յո՞ր հիման վերայ գրեցան գաշնագիրքն, և որպիսի եղանակաւ խափանեցաւ գործն ոչ կարացի տեղեկանալ, սակայն որպէս և իցէ մեզ անհասասա այս գործ գովելի մինչև ցայսօր և զազգն Հայոց անտերունչ տառապեալ ի վերայ երկրի, արգարև եթէ ոչ Ցէր շինէ զտուն ի նանիր վաստակին շինողքս նորա։

Յաղագս մասնաւոր ժողովոց Հայոց եւ դաշնաղրութեան վրաց ընդ Ռուսաց, եւ յաղթութեան արքային վրաց զպարսիկս եւ վասն տառապանաց ի Կիլիկիայ ընակելոց Հայոց եւ այլ իրաց։

ԳԼՈՒԽ Բ.

Ի սմին ժամանակի փորձ (Փոքրն?) Հայաստան Թողեալ զաթոռն Սսոյ, Պատահէին Կաթուղիկոսին Էջմիածնայ, և ըստ Թուոյ վանօրէից նստէին ի նոսա Եպիսկոպոսունք առանձին Թեմիւ և վիճակաւ, և ի տեղիս տեղիս ի ձեռն մեծամեծաց տաճկաց զմիմեանս յաղթահարէին. և յափշտակէին զվիճակս միմեանց, վասն այնորիկ գրէ Թէ խանգարեալ էր կարգ վանօրէից, և որպէս աւանդի ի պատմութիւնս Սեբաստիոյ, Յակովբ եպիսկոպոս Արմաանցի առաջնորդ սուրբ Նշան վանից Սերաստիոյ, Հոգ կալաւ բարեկարգելոյ զվանօրայս Սեբաստիոյ. յորում էին հինգ վանք, և առաջնորդք նոցա հինգ եպիսկոպոսունք, ամենայն ուրեք գրէ Թէ այսպէս էին, որքան նստէին օգնականութեամբ այլազգ իշխանաց, զպարտս գիղէին ի վերայ վանից, յորմէ պահանջէին այլազգիք, և ի հրաժարիլ պարտատերց զգրաւս և զեկեղեցին սեպհականէին այլազգիք, վասնորոյ ճարահատեալ խզճալի ժողովուրդն վճարէր և թափէր զվանս և զանօթս, այսու եղանակաւ զրազում եկեղեցիս իւրացուցանէին տաճիկք, որպէս արարին վասն խռովութեան ժողովրդականաց Սեբաստիոյ եկեղեցին յանուն Լուսաւորչայ ինքեանց մզկիթ, որ է մինչև ցայսօր ի ձեռս նոցա։ Վասն առաջս առնելոյ սոյն օրինակ անկարգութեանց, կարգեաց Յակոբ եպիսկոպոս

քանևչորս իշխանս ի միում եկեղեցւոջ, և սասնևերկու ի միւսում, և եօթն ծերունիս ընդ նմին արար ժողով ի վանս Անապատու, յորս էին 26 քահանայք, 7 ծերունիք, 36 իշխանք. եդին կանոնս տասնևմեկ. օրինակ ղայս՝

Ա) Նախ՝ զՋի ի քաղաքին և զլոյր վանօրէիցս մեկ առաջնորդ լիցի. բաց յառաջնորդէն՝ այլ ընտանի եպիսկոպոս։ Մի լիցի, եթէ ոք ի կենդանութեան դիտին կամիցի երկրորդել և բաժանել զառաջնորդութիւնս կամ եպիսկոպոսութիւն, այնպիսին յերից սուրբ ժողովոյն անիծեալ նզովեալ լիցի։

Բ) Ցորժամ վախճանեսցի առաջնորդն, նոյն ժամայն հանցեն զննջեցեալն և փակեալ կնքեսցեն զառաջնորդարանն երկու ծերունիքն եկեղեցւոյ, և ոչ բացցի մինչև դայցէ նոր դէտն Աղերաթեա, և եկեալ կնքող իշխանքն բացցեն զառաջնորդարանն, և յանձնեսցեն տումարաւ ընդ նմա զառաջնորդին, [1])

Գ) Ի մէջ հրեշտակապետի և Անապատի Ռէիղ լիցի դիտութեամբն առաջնորդին, և ամ յամէ առցէ զՀաշիւն ի նոցանէ, և ուր կամիցի դէտն նմա տացէ զռէիղութիւն, և բաց ի յառաջնորդէն այլ ոք ձեռնամուխ մի լիցի, եթէ ոք յանդգնի բռնիւ է։

Դ) Առաջնորդն ամ յամէ սրբոց վանօրէից Հաշիւն տացէ իշխանացն։

Ե) Աթոռոյն անօթքն տումարիւ լուսարարի մօտն եղիցի և ոչ այլոց։

Ի մէջ վանացս աթոռակալ լիցի, և եթէ պատահեսցի մօտ այլազգաց երթալ, նա երթիցէ և ոչ այլ ոք։

Է) Քարող աստղ վարդապետք յերկու եկեղեցիս խրատ ասասցեն, Ծննդեան, յառաջաւորաց և պահոց։

Ը) Առանց դիտութեան առաջնորդին միաբանք երթիցեն ի քաղաք և մի ննջեսցեն անդ։

Թ) Ի միաբանից եթէ ոք դնալ կամի երթիցէ [2])։

Ժ) Միաբանք ի միասին ճաշեսցեն զկերակուր, և ցիրևցան նուէ։

ԺԱ) Միաբանք մի երթիցեն ի սենեակս ուխտաւորաց առանց կոչման։

Զայսոսիկ միաբան հաւանութեամբ գրեալ կնքեցին ստորագրութեամբ իւրեանց ի մեկն ապրիլի ՌՄԼ թուին Հայոց։

Ծաւուրս այսոսիկ Անեցի հայազգի դաղթեալքն ի Ղրիմ, որ 1779 ամին վերաբնակեցան Ազուա դաւառ առաջնորդութեամբ Պետրոս վարդապետի ուրուն, շինեցին զքաղաքն նոր Նախիջևան [1]) առեալ զպարտս յարքունի դանձարանէ ի շինութիւն քաղաքին, և ընդ այն ժամանակս խոբհեցաւ արքայն Վրաց Հերակլ, արկանել զինքն ընդ հովանաւորութեամբ հզօր տէրութեան Ռուսաց։ Վասնորոյ խորհրդակցեալ ընդ նախարարս և իշխանս իւր գրեալ ծանոյց զմիաս իւր կայսերուհւոյն Ռուսաց Եկատերինէ երկրորդի, իրրև ընթերցաւ կայսերուհին Ռուսաց կամեցաւ օգնութիւն մատուցանել Վրաց ոչ սոսկապէս այլ հաստատուն դաշամբ սիրոյ այսու ետ զանակաւ, որպէս զի արքայն Վրաց ի կողմանէ իւրմէ և փոխանորդաց իւրոց յանձն առնուցու յանձնել Հանդիսօրէն զդլխաւոր իշխանութիւնս Քարթլայ և Կախեթ հովանաւորութեան իւրուհւոյ կայսերական մեծութեան, և վեհադոյն փոխանորդաց նորին, և հաւաստի կերպիւ նշանակեսցէ զկապակցութիւն իւր, նկատմամբ կայսերութեան Ռուսաց, զի որպիսին կարիցէ սերուհին հանդիսօրէն նշանակել զիւրն առատ ողորմութեամբ հովանաւորութիւն, առ ի սեպհականել հզօր բազկաւ իւրով զարքայն Վրաց և զժողովուրդս նորա, պատուելով մեծադոյն պարգևօք և զպայծառադոյն իշխանս նորա։ Եւ կարդեցին յերկոքին կողմանց զերևելի նախարարս ի հաստատել զդաշն ի միջի, ի կողմանէ իւրմէ կայսերուհին զլիակատար յանձնարարական

---

[1]) Այս կանոն մինչև ցայսօր պահի ի վանս սուրբ Նշանի Սեբաստիոյ։

[2]) Զայս կանոն ելոյծ ասէ պատմիչն, կաթուղիկոսն եփրեմ թէ երբ չէ յայտնի ինձ։

[1]) Հայր Միքայէլ Չամչեան վարդապետ ի վախճան վեցերորդ գրոց դնէ շինեալ զայս քաղաք ՌՂ է սկիզբն հինգհարիւրմեակին 25 Մայ. 1781 ամի։ Իսկ Մինաս վարդապետ Թաժիկեան ի շրջագրութեան Պոնտոսի դնէ շինեալ 1780 մեք եղաք ըստ Չամչեանին որ է ժամանակակից շինութեան։

զօրութեան, պայծառափայլ կնեազ Գրիգոր Պոտեմկինի փոխարքային նոր Ռուսիոյ, զի և նա վասն տարակայութեան իւրոյ ընտրեսցէ յինքենէ զոմն և կամիցի լիակատար յանձնարարական զօրութեամբ իմն, որ և ըստ այնմ ընտրեաց նա զկուսլերը Պաւել Պոտեմկին Ղենեռալ Պօրուչիկին սենեկապետ կայսերուհոյն։ Իսկ արքայն Հերակլ Թեմրազովիչ ընտրեաց յիւր կողմանէ զՂենեռալ զօրապետ ահեակ զօրաց, կնեազ Գարսեվան ճաւճավազովն, տալով նոցա զլիակատար յանձնարարական զօրութիւնս, սոքա առեալ յերկոցունց կողմանց զլիակատար զօրութիւն հաստատելոյ զդաշն սիրոյ ընդ մէջ երկուց թագաւորաց, ելեալ եկին առ Մահման ի սահմանագլուխ իւրեանց ի բերդն Գեօրգի անուանեալ, որ մերձ է Խանում Իսկէլէին, զոր յիշատակէ ի շրջագրութեան Մէ ծովու Հայր Մինաս վարդապետ Բժշկեան, անդ ընթերցան զգիրս միմեանց, յորս պարունակէ յանձնարարական լիակատար զօրութիւն դնելոյ և հաստատելոյ զդաշն սիրոյ։ (Պատմութիւն Պոնտոսի։)

—

Պատերազմ Մահմատ շահի ընդ Գուգարացիս և գործք նորա և պատերազմ Հերակլայ ընդ Գանձակեցիս և առնուլն զդուռն Ալանաց ի Ռուսաց։

—

Իբրև գերեալ աւերեաց զքաղաքն Տփղխիս Մահմատ շահ պարսից դարձաւ ի Գանձակ քաղաք հնազանդեալ ընդ իւրով իշխանութեամբ զամենայն երկիրն Արցախայ մերձ ի Մողանչօլ, ասպատակ սփռեալ զզօրս իւր յաշխարհն Գուգարաց և Աղուանից, հուր հարեալ այրին զգիւղզօրայս և բնակիչք աշխարհին գոլով ամրացեալք ի լեռս նուխի և Շամախի. յեա պաշարելոյ զնոսա յաւուրս բազում ընկասեցան ի նոցանէ քան թէ ընկասեցին, զի բազում զօրաց իւրեանց կորուսին և վշտացեալ դարձան ի Մողանչօլ, տեսեալ շահին Մահմատայ զանյաջող դիպուած զօրաց իւրոց զպյրացեալ սաստիկ կատաղութեամբ հրաման ետ պրկել ի գետնի զվեց հարիւր ցաւագար և ծերացեալ գերիս, զորս ի գերեաց Տփղխիս քաղաքի որոշեալ էր ի լաւագունից զըտկարս և զծերս, տայ անդ զնոսա սմբակակոխ առնել ձիոց և ջորոց մինչև ոգեսպառ կատարեցան ի Քրիստոս, ոչ շատացեալ այնու գազանն արեանարբու հրամայել շինել կրազանգ ուղղագիծ զորմն միակողմանի, և ի նմա զծակս յիսուներկու մարոյ Ձիաստանի, այնքան նեղագոյն, յորում հազիւ միայն անցցէ գլուխ մի մարդոյ. անցուցեալ ի նմա զգլուխս յիսուներկու հայազդի մելիքաց զորս կալեալ ի գաւառաց՝ Արցախայ, եդեալ էր կապանօք ի բանտի. յետ փախստեան Իբրահիմ խանի նոցա, որոց համախոհութեամբ համարէր փախուստն Իբրահիմ խանի, ի պարանոց կապեալ եռապատկեալ ճոպան աւրացուցեալ հանգոցիւք յամէհի ջորիս, տայ հարկանել զջորիս, մինչև զատեալ լինին գլուխք նոցա, հասին ընդ երանելի իշխանացն մերոց, որք վասն ի Քրիստոս հաւատոցն կատարեցան։ Ցետ այսորիկ հասանէ առ նա լուր ապստամբութեան բնակչաց Շիրազայ և Լութվալի խանի նոցա, որ ելեալ մարտ ամոյ, աճապարէ ի Թէհրան զդէմ ունիլ ապստամբացս։ Ի մեկնիլ Մահմատ շահի Աղուանստանէ, Իբրահիմ խան Արցախայ, որ փախեալ էր ի Տաղստան, դաշնակեալ ի վերայ Վրաց արքային Հերակլեայ վարձեալ զերկոտասան հազար Կովկասային զօրս՝ միաւորեալ ընդ զօրաց վրաց ի 1796 ամ գայ ի վերայ Ջաւատ խանին Գանձակայ՝ քսան հազար զօրօք երեք ամիս պայման եդեալ Կովկասային զօրաց. վարձ այս Կովկասեան զօրաց իւրաքանչիւր անձին էր եօթն կամ տասն զատակ և մէկ լիար դմակ ոչխարի. իսկ Ջաւատ խան ոչ կարաց նոցա զդէմ ունիլ, ամրացաւ ի բերդն ընդ հայ մելիք Մէջլումի. իսկոյն պաշարեցաւ բերդն ստէպ ստէպ սաստկանայր պատերազմն, հարուածս սաստիկ հասուցանէին բերգականացն, որոց հրամանատար էր մելիք Մէջլում որ ի վերայ ըրջաց վէրս ընկալեալ ի զօրաց Հերակլայ մեռանի, տարեալ ընդ իւր աւազեղին զչարագործութիւն իւր որ պատճառ եղև աւերման Տփղխիս քաղաքի և հեղման այնքան անպարտ արեան և գերութեան քրիստոնէից. յետ յիսնօրեայ պաշարման բերդին նուաճեալ ըստ ամենայնի Ջաւատ խան ի հաշտութիւն խօսեցաւ

պարտաւորեցաւ տալ զվարձս վարձեալ զօրականաց Ղեկաց Գովկասու և զքանի հարիւր գերիս Ցփխիսեցի, զոր ունէին Զաւսայ խանն, մելիք Մէջլում և ոմանք երեւելիք, էառ պատանդս և զմեծ մասն ընակ չաց երկրին Դանձակայ վարեաց ի վրաստուն, անցին ի տեղիս իւրեանց արքայն Հերակլ ի Վրաստան և Իբրահիմ խան ի Դազստուն, լուր այս պաշարման եհաս առ Մահմատ արքայ Պարսից. իսկզն հրաման հանէ խանից Երևանայ և Նախիջևանայ փութալ հասանել յօդնութիւն պաշարելոց Դանձակայ, մինչ այս մինչ այն անագան ուրեմն զօրաժողով եղեալ երթան ի դաշտն Մուշկիանրար և ցմերձ ի Ղարատաղ, լսեն ղդառնալ պաշարողաց դառնան ի տեղիս իւրեանց։

ԾԱՆՕԹ. Զայս տետրակ գտի ի դրական ծրարս՝ Ց. Ներսէս ս. պատրիարքի Կ. Պոլսոյ զկնի մահուան նորին, որ թուի թէ ի հաւաքածոյից Ց. Կարապետ Շահնազարեանց վաթսպետի էր ոտացեալ, զի գտի զսա ընդ կոնդակաց Ներսէս Ե. կաթուղիկոսի (առ Շահնազարեանց) ի մի ծրար պարսւրեալ։

Բողհ. քհ. Մկրտչեան

Բ.

Ի ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՌ ՋԱՔԱՐԻԱ ՊԱՏՐԻԱՐՔԱ Կ. ՊՕԼՍՈՅ. (ՁԿԱՀ ՏԻՏՂՈՍԻՆ)։

Ի օգոստոսի ԻԳ. գրեցեալն առ մեզ ժամանեաց ի սեպտեմբերի ԻԹ, հանդերձ թղթովք բարեպաշտ և ազնուամիտ իշխանապետաց տեղւոյդ և այլոց բազմակնիք մահսէրօքն Զմիւռնացւոց։

Ընթերցեալ մեր զթուղթն ձեր՝ տեզեկացաք զաճմանէ տարաձայնութեանն նոցին՝ և զԴանիէլ վարդապետի դալոյն այդր և զվիճողացն դարձեալ իւամ հասուցանելոյն զԱպրոյեան Մարգարն ի դուռն Արքունի և ի փոխանորդէ Ազբայի հրաման լինելն ձեզ բերել տալ զնոսա և դատ առնել, և զձեր հրաւիրելոյն զնոսա այդր և իրաւամբ դատ առնելոյն և հաշտեցուցանելոյն և զայլ ամենայն անդիցն յերկուց ոմանց մինչև ցայժմ անցելոց։

Եւ թէպէտ ցաւ է մեզ և վիշտ ի վերայ վշտաց այնքան երկայն ժամանակեայ բազմաշփոթ և յոդնաշխատ խռովութիւնն նոցա փոքու ւսատաձառաւ, և Առաջնորդին զարհամարհութիւն կրելով տարագրելն և ծանրալուր համբաւոցն առ ամենեսեան հրդեհակելն, սակայն ղի նազելի եղբայրդ ընդ բարեխորհուրդ օրհնեալ յիշխանապետացն՝ իրաւասիրաբար քննութիւն առնելով իրաց նոցա զաղմկալիր վէճն հատեալ էք, զերծուցանելով յայլ և այլ մեծամեծ վնասուց, և վերջապէս հաշտութիւն արկեալ ի մէջ խռովելոցն, այնու դիւրութիւն եղև սրտի մերում և շնորհակալ եղաք զձէնջ...», Իսկ որ զմիւռնացիսն ասացեալ են ոչ ևս ընդունել զվարդապետն յԱռաջնորդութիւն և զայլ ոք են խնդրեալ, որպէս և մեզ գրեալ էին հասարակական մահսէրիւն, (թէպէտ և ոմանք արտաքոյ են ի միաբանութենէ նոցա) և վսեմամիտ եղբայրդ մեր պատասխանեալ ես նոցա իբր առ ի մէնջ հոգացողութիւն լինել այնմ խնդրոյ, զոր օրհնեալ իշխանապետքն ևս ի թղթի իւրեանց նշանակեալ էին, առ այս բաւականապէս խորհեալ մեր ի կայս կացուցաք զմիտս, որ եթէ զմիւռնացւոց երկու կողմունքն մինչև ցայժմ համաձայնեալք իցեն ի հաճութիւն ընդունելութեան Դանիէլ վարդապետին, և միաբանութեամբ խնդրեալ և տարեալ իցեն, բարի է և կարելի լինիցի գործոյն խաղաղութեամբ վճարել, բայց թէ մինչև ցայժմ չէիցին միաբանեալ ե. խնդրեալ, այնուհետև գնալն ոչ է ձեռնտու, զի թէև ընդունութեամբ առաքիցի արտաքոյ կամակցութեան ընդունողացն, ոչ ևս վճարի կատարեալ խաղաղութիւն և սէր առ միմեանս, այլ մանաւանդ և վնաս չարագոյ որոյ զկնի սարջանալն ոչինչ օգուտ բերէ։

Սմին իրի ըսա որում և ժամանակ էր ի Յուռումելի նուիրակ առաքելոյ ա

զՀոգևոր որպին մեր Մարտիրոս Հեզաբարոյ վարդապետն առաքեցաք անուամբ Ուռհա-մելու նուիրակութեան, և գրեմք ապնուա-խոհ եզբօրդ, զի ի հասանել սորա այդր, եթէ Դանիէլ վարդապետն գնացեալ իցէ ի Զմռնիա, զսա միամտութեամբ յուղար-կեսջիք ի վիճակն իւր Յուռհամելի, այլ թէ Դանիէլ վարդապետն դեռ յայդր իցէ, զսա յուղարկեսջիք ի Զմռնիա... և զԴանիէլ վարդապետն յուղարկեսջիք Յուռհամելի, զի զայս թեթև դործ կատարեալ ի սուզ ժա-մանակի, այնպէս դարձցի ի սուրբ Աթոռն [1]),

որպէս և իւրն դրեալ եմք։ Իսկ եթէ ո՞ դիտէ, չՀաճախցի գնալ ի նուիրակութիւն Յուռհամելոյ, յայնժամ սիրով ուզևորես-ջիք գալ ի սուրբ Աթոռս, մեր սիրելի որ-դի է, և սրբոյ Աթոռոյս դործն պակաս չէ յիւրաքանչիւր ժամանակի, որպէս և իցէ չՀեղոց եմք և սրտադիւր առնելոց...։

Ի ՌՄԽԵ Թուոջս ի նոյեմբերի ԻԱ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

[1]) Առ Դանիէլ վարդապետն գրէ սոյն մր-սաք և դինի բաղում իրատուց յարէ. ,,ևս թէ-,,պէտ յՈռհամելի գնալդ Հանգիպիցի . . . . ի ,,վերայ Սըչօվայու ևս մի փոքրիկ կոնդակ գրե-,,լոց եմք և զթուղթ մի առ պարոն Ֆօնթ Նի-,,կոլ աղաչեալ, քանզի նիկոլն խօսեցեալ է ընդ ,,Գրիգոր վարդապետին, իբր ինդրելոց է ի կայ-,,սերէն դհրաման վասն այնր գրեմք քեզ՝ ի ,,գնալդ ազդ առնել սմա, գի ընծայ ինչ եւս ,,ուղիցեմք նմա, որ պատուարեսցի զբանն ի ,,դլուխ տանել. և գայլ թուղթն տուեալ ,,եմք Մարտիրոս վարդապետին, զայնոսիկ ևս ի ,,նմանէ առցես“

Սոյն Մարտիրոս Արհին եկաց յԱռաջնոր-դութեան Իզմիրու, և իբրեւ հակառակորդ Դա-նիէլի՝ բազմօք զինեցաւ ընդդէմ նորա. եղեւ Ցեզապահ Էփրեմ կաթուղիկոսի, եւ ընտրեցաւ ի կաթուղիկոսութիւն զոյդ ընդ Ցովհաննու կարբեցւոյ։ (Ծ մնօթ. կարապետ վ.ի Շահնա-զարեանց)։

Գ.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Մինաս վարդապետ, Աթոռակալ Ամենապայծառ և նախամեծար, Վեհազարդ և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։

Յորմէ ժամանեալ հասցէ գիր սիրոյ և ողջունի, հանդերձ Աստուածային բազմա-պատիկ օրհնութեամբն, և նախախնամական դթութեամբն, առ իսկապէս սիրելիդ մեր, և անմիջոց բարեկամդ Մօրս լուսոյ սուրբ Էջմիածնի. Պերճապատիւ և փառազարդ՝ Աղնուամեծար և իշխանազուն Պարոն Մօլ-րէթխուցէս Քայի Խոյրով բէկին, և Քրիս-տոսիւ զօրացեալ որդւոց և ընտանեաց քոց, սիրելեաց և բարեկամաց, Հանդերձ ամե-նեքումբ խնդալ ի Տէր յամենայն ժամ, Ամէն։ Եւ ընդ սիրալրական և ողջունաբեր նամա-կիս՝ Արզ ու մալում լինի սիրելի մեծանձ նութեան քումդ, զի զբարեհամբաւ անուն սիրելոյդ մերոյ և ղՀաւատարիմ բարե-կամութիւնդ զոր ունիս առ սուրբ Աթոռս Լուսաւորչի, և որպէս ցուցեալ ես առ սի-րելի և մեծարգոյ եղբայրն մեր Մեսրոպ վարդապետն, եկեալ նա պատմեաց առաջի Վեհին, և մեր իսկ ամենեցուն. ուստի խանդաղատեալ ցնծացաւ սիրտ մեր ի վե-րայ բարեհամբաւ անուան սիրելոյդ մերոյ. և որպէս լուեալք էաք զբարեհամբաւ ա-նուն լուսահոդի նախնեացն քոց և այժմ զքոյն դերազանցեալ դտաւ քան զամենե-ցուն. վաստուոյ յոդեբերկրեալ զուարճա-ցեալ եմք ի վերայ բարեհամբաւ անուան մեծապատիւ սիրելութեան քումդ, և խընդ-րեմք յամենախնամ Արարչէն, զի անփորձ և անսասան պահեսցէ զսրբոյնիդ մեր յամենայն պատահարաց երևելեաց և աներևութից, ի պարծանս մեր, ամէն։ Եւ արդ՝ սիրելիդ մեր ի Տէր, զի քո հրամանուց խաթեր. սակս քահա-նայիցն ամենեցուն միմնորդ անկեալ մեր ա-ռաջի Վեհին, հաշտեցուցաք զսիրտ Վեհին ի վերայ ամենեցունց, որ և ներումն արար ամենայն յանցանաց նոցա, և թոդութիւն շնորհեաց ամենեցունց, և ուրախութեամբ յետս դարձոյց զամենեսեանսն։ Եւ զտէր Խա-չատուրն աւադերեց կարգեաց, և զամենայն

գործս սրբոյ Աթոռոյս ի նա յանձնեաց, և ի քո հաւատարմութիւնդ ապաստան արար, նոյն գունակ և մեք խնգրեմք, զի որպէս գրեալն է ի վերնէն առ սիրելիդ մեր, յա՛ մնայն քանից օգնական լեցիս գմա, և զքո հրամանաւդ շուքն ի գմանէ անպակաս առնիցես, և ի վերայ մլքի և այգեաց և դուքանի արդեանցն քո հրամանաւդ մարի. ֆաթով հաւատարիմ մարդ կարգես, և զինամս քո ի վերայ պահիցես: Դարձեալ զի որպէս խնդիրք է վերնին, զԽօջայ Բէհրուտի յիշատակի մոմն որպէս հաստատեալ ես, ի վերայ բաղանեաց անուամբն գրեալ տայցես, Եւ դարձեալ զի սակս աէր Սարգսի ծխին որպէս հրամայեալն էիր, զհրամանս յօժարութեամբ սրտի կատարեցաք, և վերստին հրամանաւդ վերնին զծուխն նմա հաստատեցաք. և խալաթեցաք զնա, և յետս դարձուցաք: Եւ դարձեալ զի ըստ ձեռնտուութեան ժամանակին փոքր ինչ ընծայ քեզ առաքեցաք, և զի թէպէտ ոչ էր արժանի սիրելոյդ. այլ իբրև զլոմային համարեսցի առաջի սիրելոյդ մերոյ: Տէրն աէլանց հովանի և պահապան լիցի ի վերայ քո և քոյոցն ամենեցուն. ամէն:

Գրեցաւ ի Թուին ՌՃԼԹ. Ցուլիսի Բ. ի դրն սուրբ Էջմիածնի:

Գ.

Էջ

Արքայազնոյ արքայիդ, քրիստոսասպասակ եւ Աստուածազօր թագաւորիդ Հերակլեայ սրոյ եւ քրիստոսահիչի Աթոռոյս հաւատարիմ եւ սրտացաւ բարեկամիդ, եւ սորին որդեացելոց եւ սգապատից յոլոր միաբանիցս ամուր սպարապիդ եւ հովանաւորաս սպանապահիդ, յոյժ սիրով եւ կարօտիւ տրտմակոծ սրտիւ եւ յուզեալ դիմօք ողջոյն եւ օրհնութիւն, հանդերձ սրբոյ Հմման տնդուոյս շնորհիւն եւ Աստուածային օրհնութեամբ ողջ լիր ի Տէր:

Ա պա յայս լիցի գերագահ և արժանավայել Արքայիդ քրիստոսասիրի, Զի վասըն սրբազանի Հայրապետիս մերոյ ի քրիստոս հանգուցելոյ գլուխ պատուականութեանդ լիցի ողջ և նորին կենդանի աղօթքն և օրհնութիւնն ի վերայ Տէրութեանդ եղիցի. և փոխանակ նորին կենաց պակասելոցն, Տէր զկեանս քո յաւելցէ և ի խոր խազազութեան պահեսցէ զքեզ փրկելով յամենից թշնամեաց և ի վտանգից երևելեաց և աներևութից, բարձր գլուխ առնելով զքեզ միշտ ի վերայ ընդդէմ յարուցելոցն քոց: Զի ի Մարտի Ի՘Ա, յաւուր աւագ ուրբաթուն զատկի ի Տէր փոխեցաւ և զմեզ եթող ողորմելիս և որբս յայսպիսի վտանգաւորեցեալ ժամանակի: Վասնորոյ՝ տէա քանի միաբանք կամք յերևան վասն նորա ի մէջ ծփման և ալէկոծութեան, ոչ գիտելով ըզինչ ընել իրացն գտանել. և յօրէն յայնմանէ մինչև ցայսօր զժամ մի հանգիստ ոչ եմք ունեցեալ. և ապագայն Աստուած եմք յանձին. իսկ այժմ որովհետև Հարազատ պաշտօնեայն քո Գիւբէկն աստ պատահեցաւ ի գալն առ Տէրութիւնդ, կարճառօտ զայսքանս հազիւ կարացաք ծանուցանել Տէրութեանդ, զի գիտասցես և մեզ որբացելոցս ողորմելով իբր սգակից լինիցիս և մխիթարիչ. և զսէրդ Տիրական՝ և զինամդ արքայական՝ և զհարազատութիւնդ բարեկամական զորս ունէիր և ունիս միշտ առ սուրբ Աթոռս և առ միաբանս սորին, ևս քան զևս յաւելցես, զի և մեք լիցուք միշտ պարտական աղօթելոյ վասն կենացդ երկարութեան, և վասն գործոցդ յաչողութեան, և վասն մշտայաղթ լինելոյդ ներհակացն քոց: Իսկ զնացեալ որպիսութիւնն մեր, և սրբոյ Աթոռոյս, և վասն բանադրեցելոյն. և այլոց ամենից պարագայիցն տեղեայս՝ Հարազատն քո Գիւբէկն բերանով պատմեսցէ Տէրութեանդ. զի սրբազանն ի հիւանդութեան ժամուն, յորժամ մեք առ

սացաք թէ ում որ բանադրեալ ես և րարկացեալ ես օրհնեա. օրհնեաց և արձակեաց. իսկ վասն Զաքարիային ասաց թէ՝ յորժամ գայ սուրբ Աթոռս արձակեսջիք. այս է լուսահոգւոյն կտակն զոր մեք գրեցաք հրամանոցդ։ Արդ՝ եթէ ի հիւանդութեան և կամ ի ծերութեան ոչ կարէ գալ. և կամ թէ հրամանդդ սահպանեցես թէ՝ աստ արձակիցեք կամք հրամանոցդ է, մեզ ազդ առնես. մեք ղքո ազիզ խաթրն ընդ աշխարհիս ոչ փոխեմք. այս է ստոյգն զոր գրեցաք Տէրութեանդ։ Ա՛յլ և զայս գիասացէ Տէրութիւնդ. զի գիտես իսկ զորպիսութիւն ժամանակիս, յորում մանաւանդ տուն մի ոչ կարէ կառավարիլ առանց տանուտեառն օր մի. որքան և այս սուրբ Աթոռս որ հասարակաց տուն է, և միշտ գլխոյ և կառավարչի կարօտի. և առաւել յայսմ ժամանակի. վասնորոյ ի մի եկեալ բոլոր միաբանք սրբոյ Աթոռոյս, և առաջնորդք և իշխանք, և ամենայն ժողովուրդք երկրիս, Աստուծոյ կամեցողութեամբն և հոգւոյն սրբոյ աղաչմամբն զսրբոյ Աթոռոյս ընակեան և հարազատ միաբանն և բազմաշխատ գաւակն ղՏէր Սիմէօն Աստուածատրան վարդապետն և զԱրևի եպիսկոպոսն ընտրեցաք մեզ՝ սրբոյ Աթոռոյ, և բոլոր աղգիս մերոյ հովիւ և հայրապետ և Ծայրագոյն Պատրիարք որ արժանի իսկ է։ Վասնորոյ և խնդրեմք ի քրիստոսասէր Արքայէդ, զի և դու համակամեալ ընդ մեզ, զսէրդ և զքաղքենկամական խնամդ ունիցիս միշտ ընդ սա. և ընդ սուրբ Աթոռս, որպէս ունեցեալ ես մինչև ցայժմ ի ժամանակս առաջին լուսահոգի Հայրապետացն մերոց։ Ուղղեր ի Տէր ի փառս խաչին քրիստոսի, ի պարծանս և ի մխիթարութիւն մեզ և որքացեալ միաբանից սրբոյ Աթոռոյս Էջմիածնի. Ամէն։

Գրեցաւ ի ՈՄԾԲ. Թուին Ապրիլ ամսոյ Դ. Ի Անապատն Զորագիւղի։

Լուսարար եպիսկոպոս. Ժամօրհնող եպիսկոպոս, Աթոռակալ եպիսկոպոս, Ծարուխիան եպիսկոպոս, Գէորգ եպիսկոպոս, Թադէոս եպիսկոպոս, Անդրէաս եպիսկոպոս, Մատթէոս վարդապետ Ստամբօլցի, Մովսէս վարդապետ Ակնցի, Մելքիսէթ վարդապետ, Ղազար վարդապետ Առաջնորդ Յերևանայ անապատին, Յովսէփ վարդապետ, Պետրոս վարդապետ, Մելիք Սարգիսջան, Թիֆլիսցի Աղալոյ։

Ե.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՑ ՏԷՐ Սիմէօն կաթուղիկոս ամենայն Հայոց. և Ծայրագոյն Պատրիարք Առաքելականի և Միաբնագաւանի Եկեղեցւոյս Քրիստոսի... Եւ յԱյնմդրդ սրբոց Առաքելոցն Թագէոսի և Բարդուղիմէոսի։ Եւ սոցին վիճանորգի սրբոյն Գրիգորի Հօր մերոյ Լուսաւորչի և բազմախաւ։ Նաև Հայրապետ մեծի Աթոռոյս Հայ կաղնեաց սրբոյ ԷՋՄԻԱԾՆԻ որ ի Վաղարշապատ Մայրաքաղքի։

Ծորմէ ժամանեսցի Թուղթ սիրոյ՝ ողջունի՝ և օրհնութեան. և նամակ պահպանութեան. խաղաղութեան և խնդութեան։ Հանդերձ բազմապատիկ օրհնութեամբն Հօր Աստուծոյ, նախախնամական գթութեամբն միածնի Որգւոյ. և Ամենամեծ ողորմութեամբն Հոգւոյն սրբոյ. նաև դիւահալած զօրութեամբ նշանին Քրիստոսեան. համասփիւռ Շնորհօքն Առաքելական. յոգնազան Պարգևօքն սրբոյ Տեղւոյս՝ Միածնի Էջմեան։ Եւ Առաքահեզ ձրիւք՝ Քրիստոսաշօշափ Աջոյն Լուսաւորչական և այլոց սրբոց նշխարաց Շնորհաբաշխութեամբն որք աստ կան. ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ և Լուսածնունգ զաւակացդ սրբոյ Աթոռոյս մերոյ Քրիստոսահիչի. Ընաւից Հայկասէր՝ Լուսաւորչական և Միաբնադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս, որք կայք բնակեալք ի յԱստուածախնամ և ի Կայսերապերճ Մայրաքաղաքդ Կոստանդնուպոլիս։ Եւ յայլ ամենայն շրջակայս գուրին։ Ծորս կառուցեալ և հաստատեալ Քրիստոսահիմն սրբոց եկե-

ղեցեաց՝ և եկեղեցականաց դասուց։ Մեղսաքաւիչ քահանայից, սրբապաշտօն սարկաւագաց. պերճապատիւ և իմաստնառատ իշխանաց. և սառաֆիներաց. բարեճոխ և փառազարդ գօղվաթաւորաց և մեծատանց Հարազատ և հաւատարիմ գանձապետաց և եկեղեցպանաց. Արևելական և Արևմտական իմաստնախոհ վաճառականաց. բարեպաշտօն մահտեսեաց. հանճարեղ արուեստաւորաց. վայելչագործ արուեստաւորաց և օրհնեալ բարեպաշտօն հացագործ վարպետացդ։ Եւ այլ առ հասարակ միահամուռ ամենայն ժողովրդականաց. ծերոց և տղայոց. երիտասարդաց և կուսից. և ամենայն չափու և հասակի՝ ի Քրիստոս Աստուած հաւատացելոցդ։ Ամէն։

Շնորհք՝ և երկնաւոր խազազութիւն ի յինքնագոյ և ի սկզբնապատճառ յէն Աստուծոյ Հօրէ։ Գթութիւն և ողորմութիւն. ի նորին էակից և նոյնազօր Որդւոյն Միածնէ։ Սէր և քաղցրութիւն ի նոցին փառակից և ի համագոյ սրբոյ Հոգւոյն կենարարէ, իջցէ և հանգիցէ ի վերայ ձեր, եկեսցէ և բնակեսցի առ ձեզ, իբրև զյորձանս գետոց, և որպէս զվտակս ագբերաց, յորդահոս բղխմամբ. և առատապէս ծաւալմամբ։ Ընդորոյ հովանաւորութեամբն զօրասջիք և պահպանեսջիք. յարևմիշտ։ Ամէն։

Այլ և օրհնեսցէ և պահպանեսցէ զձեզ Ցէր Աստուած մեր՝ և զարգարեալ պայծառացուսցէ զամենեսեան։դ Հոգւով և մարմնով, տամբք և տեղեօք, որդովք և դստերօք, զարմօք և զաւակօք, ազգօք և ընտանեօք, ընչիւք և ապրանօք, կենդանեօք և ննջեցելովք, շահօք և վաճառօք, պտղեստանօք և բուրաստանօք։ Ամէն։

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան Թըզթոյս ծանուցում լիցի սիրելեացդ մերոց, հարազատ և հոգեծին որդւոցդ սրբոյ և Քրիստոսակերտի Աթոռոյս Էջմիածնի. Զի բազմակնիք Թուղթն օրհնեցելոյ հասարակութեանդ զոր գրեալ էիք ի յունուարի Ժ. էհաս առ մեզ ի փետրվարի Ե. որով գիտացաք զնորանոր եղելութիւնն և զանցսն որք ելեալք էին ի ձեզ. զինքնակամ յօժարութեամբ հրաժարիլն ի գործոյն եղբօր մերոյ Գրիգոր վարդապետին, որով ցուցեալ է մեծ խելօքութիւն և զծայրագոյն խոհեմութիւն. երանի էր թէ և այլոց պատահիցիւր այդպէս դիւրաբար զերծ. և թաքչիլ ի յանկիւն մի, ի յայս ըքաբեր ժամանակիս։ Այլև գիտացաք և ձեր ամենեցուն համամիտ յօժարութեամբ, միակամ և միախորհուրդ սրտիւ զընտրութիւն սիրեցեալ որդւոյն մերոյ և շնորհասուն զաւակին սրբոյ Աթոռոյս և ծայրագոյն նուիրակին օրհնեցելոյ քաղաքիդ Զաքարիա հանճարաշատ համեստափայլ Վարդապետին ի լինել ձեզ դէտ հովիւ՝ և կառավարիչ հոգևորապէս։ Զնոյն և խնդրելն ձեր ի մէնջ բազմօք թախանձանօք, զի և մեր համահաւանել ընտրողութեան ձերոյ կամակցիցիմք ձեզ և կատարելով զխնդիր հասարակութեան օրհնեցելոյ մերազնէիցդ, զսիրելի և ղհարազատ որդիդ սրբոյ Աթոռոյս զԶաքարիա Արք եպիսկոպոսդ հաստատիցեմք ձեզ հոգևոր դէտ և հովիւ մերով Հայրապետական հրամանաւ։ Զայսոսիկ զամենայն իմացաք ի բազմակնիք թղթոյն ձերմէ, որոց և հաւանեալ՝ ահա կամակցեցաք և մեք և կատարեցաք զխնդիր միասիրտ և միախորհուրդ բազմութեանդ. զի թէպէտ դա յամենայնի հարկաւոր և պիտանի էր մեզ և սրբոյ Աթոռոյս, ոչ միայն ի յարտաքս և յայդ գործ, այլ և ի մէջ սրբոյ Աթոռոյս իսկ. և յամենայնի նեցուք և օգնական միանութեանս մերոյ. որպէս և կարէք իսկ ննջեցեալ ձեռնադատել ձեզ խոհեմութեամբ. սակայն հարկեցեալ ի հարկեցուցիչ յիրաւանց և մանաւանդ ի թախանձական խնդրանաց հարազատից սիրելեացդ իմոց, ոչ կարացի բաց ասել։ Վասն զի՝ հաւաստեաւ հաւատացաք, զի այգքան բազմութեանդ միաբանութեամբ միախորհուրդ և միասիրտ ընտրողութիւնն ոչ է առանց Աստուծոյ որպէս թէ՝ ինքնին ներկայացեալ տնօրինի և կատարէ զխնդիր և զկամս յիւրանուն և միասիրտ ժողովելոց ըստ անսուտ բանին իւրոյ թէ՝ ուր իցեն երկու և երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա։ Վասնորոյ՝ ահա ըստ խնդրոյ և ազերսանաց աղնիւ սիրելեացդ մերոց, հաւատարիմ և շնորհածին զաւակացդ սրբոյ Աթոռոյս։ Ձյսու օրհնութեան և պատուիրական նամակաւս, մերով Հայրապետական և Ծայրագոյն Պատրիարգական հրամանաւ,

սրբոյ և մեծի և հանրաիշխոյի Աթոռոյս Էջմիածնի բարձու իշխանութեամբն. զյաւտուկ սիրելի որգեակդ իմ, զՀարազատ և զՀոգեծին զաւակդ սրբոյ Աթոռոյս. զծայրագոյն նուիրակդ ձեր զՑէր Զաքարիա Հանճարաւիալ և համեստակենցաղ Վարդապետդ և Արք եպիսկոպոսդ կարգեցաք և հաստատեցաք Պատրիարք. այսինքն Արք եպիսկոպոս, հոգաբարձու, դէտ և հոգևոր կառավարիչ Ցիրահնամ և Արքայանիստ քաղաքիդ Կոստանդնուպոլսոյ և բոլոր երկրիդ: Որուհ ահա զգործ և զպաշտօնն կանոնաւորեալ յատկացուցանեմ, և պատուիրեմ, զի ի նոյնս կացցէ անշեղաբար: Նախ՝ զի զբոլոր աղգդ Հայոց զբրտանց և զսարսռելի չարչարանաց որգիսգ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. և զշնորհածին և զհաստատոյ զաւակսդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի. որք կայք ի բոլոր եւկիրդ յայդ ընդ իշխանութեամբ տիրահաստատ թագաւորութեան գոցին. զամենեսեանդ կառավարեսցէ հոգևորապես և հովուեսցէ ըստ հրամանին Քրիստոսի հովուապետին և ըստ աւանդութեան սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց: Երկրորդապէս՝ զի զամենեսեանդ զգուշացուսցէ և յորգորեսցէ հեռի կալ և ի բաց փախչիլ ի յոչխարամորթ գայլոց և ի մէնջ հեստեալ ապականչացն կրօնի և ուղիղ գաւանութեանս սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց, և զայնպիսին ի բաց ի բաց հալածելով՝ հանցէ ի հօտից իւրոց: Իսկ զմերաղնէից՝ զուզղագնացսն և զկանոնապահսն սիրեսցէ. շահեսցէ և յորգորեսցէ ի նոյնն ՚ձալ. զբարեպաշտութեան և զօրինազանցն սաստեսցէ՝ խրատեսցէ և յուզղութիւն ածիցէ զինքն օրինակ բարի տալով ամենեցուն: Երրորդապէս՝ ի պատահելն այնպիսւոյ գործոց ու իրագործութեանց՝ որք առ հասարակութիւն ազգիս, կամ առ եկեղեցիս, առ հաւատս և յայլս այսպիսիս վերաբերին. ինքնին միայն և կամ ոմանց աննշանից խօսիւք և ղրդեցմամբն մի ձեռնամիջի քնաւին, այլ խորհրդակցութեամբ հաւատարիմ և խորհրգական իշխանաց և գլխաւորացն խորհրդակցեալ անօրինեսցէ, թէ զօգտակաւորն և թէ զվնասարերն: Զորրորդապէս՝ հասարակապէս ընդ յամենեսեան սիրով խաղաղութեամբ և քաղցրութեամբ վարեսցի առանց աչառութեան և կողմնապահութեան. բայց զՀարկ հասարակին պահելով և զպատիւ արժանաւորացն տալ պարտի: Իսկ զբանսարկուսն, զքսուսն, զխռովարարսն, զվայրաբերանսն, զծակամուտսն և զայլս այսպիսիս, որք սովորք են ծակէ ի ծակ մտանել, և արատաւորել զանուն հասարակին. զեղբարց, զդևլխաւորաց և պատուաւորաց, և զչիոմեմունս յարուցանել, զայնպիսին ոչ միայն ոչ պարտի սիրել և խօսակից առնել ինքեան, այլ և ատել մեծապէս և խոտել, և դատել և խորհրդակցութեամբ գլխաւորաց եթէ խրատելով ոչ կարիցէ զգուշացուցանել: Հինգերորդ՝ ի յարտաքին վիճակն զայնպիսի անձինս կարգիցէ Առաջնորդ, որք փորձեալք իցեն ի հաւատս և ի կրօնս ըստ Հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ, և ի վարս պարկեշտս, զի լաւ է արգէն որ ըստ հաւատոյն ուղիղ իցէ և ըստ վարուցն պարկեշտ, քան զիմաստունն անապարձ որ ըստ հաւատոյն թերի իցէ և ըստ վարուցն անպարկեշտ: Վեցերորդ՝ և վերջին կանոն և պատուէր մեր այս լիցի դմա, զի զինքն յամենայնի հետևօղ, ստորագրեցեալ և հրամանակատար գիտացցէ Էջմիածնանիստ կաթուղիկոսին և յամենայնի հնազանդ, և կատարօղ անմեղածին, Աթոռաշահ և զգաւգուտ հրամանաց նորին առանց այլ և այլ պատճառադրութեանց և աննենգ մաօք: Նաև զնուիրակունն սրբոյ Աթոռոյս՝ թէ ի քաղաքդ և թէ յարտաքին վիճակսն ի յարգի պահեսցէ. զժողովուրդսն յորդորեսցէ ի սէր, ի հնազանդութիւն, ի հարազատութիւն և յառատ տուրս սրբոյ Աթոռոյս և յայլս այսպիսիս. նոյնպէս և Աթոռոյս հարկաւոր գործոց և հոգալեաց որք յայդր պատահին, ըստ ամենայնի հոգ տարեալ հոգասցէ. թէ ինքնին և թէ խորհրդակցութեամբ գլխաւոր իշխանացն: Եւ միանգամայն՝ ի քաղաքդ յայդ նստօղ պատրիարգն սյնպէս պարտի գիտել զինքն, որպէս թէ՝ իցէ փոխանորդ, Աթոռակալ և յատուկ գործակալ Էջմիածնանիստ կաթուղիկոսաց. զորս վանսայսորիկ նստուցանեն ի յարքայանիստ քաղաքդ, զի հոգասցէ զհոգալին սրբոյ Աթոռոյս՝ վանորէից և ամենայն եկեղեցեաց և ազգիս հայոց, որք գոն

ընդ իշխանութեամբ դոցին։ Եւ արդ սիրե-
լիք իմ, ղայսոսիկ կանոնք՝ ղորս գրեցաք
ոչ եթէ վասն մեր Զաքարիայ վարդապետին
միայն գրեցաք՝ ղորմէ եմք ամենևին անկար-
ծիք և միամիտ, այլ վասն ապագային մա-
նաւանգ. զի գիտասջիք ամենեքեանքն թէ
յայդր նստօղ պատրիարգի գործ և պաշտօնքն
սոքա են։ Այժմ գրեսցուք և փոքր ինչ
րանիւք վասն ձերոյդ օրհնեալ հաստատակու-
թեանգ զգործ և ղպաշտօն. զի գիտասջիք
թէ՝ և գուք որպէս պարտիք վարիլ առ
Զաքարիայ վարդապետ սիրելիդ մեր ղոր
համաձիրտ միաբանութեամբ ընտրեցիք յայդ
գործ։ Արդ սիրելիք իմ, նախապէս զայս ա
սեմ ձեզ։ Այդ Զաքարիայ վարդապետդ, ե-
թէ նոր իցէր մտեալ ի քաղաքդ, և դուք
եթէ ոչ իցէիք լաւապէս տեղեկացեալ դո
րին բարուցն և ամենայն որպիսութեանն
կարէիք պատճառել յետոյ թէ՝ մեք ոչ
գիտէաք զսորին որպիսութիւնն, և այլն։
Ահա է ամ լինի, որ գա ի մէջ ձերում
կայ, և գուք վկայեալ էք՝ ի բազմակնիք
թուղթս ձեր թէ՝ զԶաքարիա սրբափայլ
վարդապետն ի բաղում գործս ընտիր գըտ
եալն ընտրեցաք, և այլն։ Եւ կրկրորդ, զի
եթէ մեք էաք հրաւիրեալ զձեզ թէ՝ զդա
ընտրեցէք, կարէիք և նոյնպէս պատճառել
յետոյ թէ՝ մեք ոչ կամէաք, գու արարեր և
եզեր պատճառ. ահա գիտէք ամենեքեանքն
զի մեք անպարտ եմք առ յայդ. և ինքն և
ոչ կամելով քանիցս հրաժարեալ է և դուք
մեծաւ սպիսմամբ արկեալ էք զդա ենթ
այդմ լծոյ երաշխաւոր լինելով յամենայնի,
որպէս և վկայէք և յգիրս ձեր. և
մանաւանդ՝ քան զամենայն մեծագոյն, գրեալ
վկայէք ի բազմակնիք թուղթս ձեր թէ՝
յանձնելով վճարումն այսմ գործոյ ի բարե-
հաճ կամս Աստուծոյ. ի խորհուրդ մտաք
ձեր ողորմիայիւ. և որովհետև անօրինողին
Աստուծոյ յանձնեցաւ, եկն ի միտս ամենե
ցուն ընտրել զսա, և այլն։ Ահա հա
ւաստի երևեցաւ թէ՝ դորին ընտրութիւնն՝
ձերոյ հաստատակութեանդ փորձիւ գիտելով
և հաւանելովն. և աղօթիւք ի բարեհաճ
կամս Աստուծոյ անօրինողին յանձնելով, և
ապա յԱստուծոյ ի միտս ձեր ամենեցունցդ
ազդելովն է եղեալ։ Առաւօր կամիմ
յայտնապէս ասել սիրելեացդ իմոց ամենե-
ցունց զայս, զի եթէ յետոյ ի չարախնդա-
ցից և ի մեղկաբամից ոմանց որոց սովորու-
թիւն է, ոչ ինչ պատճառաւ քրմանջիւն և
շշունչ իմն ելցէ վասն դորա, և գուք հա-
ստատակութիւնգ թոյլ տուեալ ոչ ջատա-
գովիցէք գմա, և այնպիսեացն ոչ լինիցիք
միաբանութեամբ վրէժխնդիր, գիտէք թէ
որքան և քանի կերպիւ մեղանչէքդ, Մեք
զկարճառօտն գրեսցուք, զայլ ևացեալսն
թողլով խոհեմութեան ձերոյ, նախ՝ ա-
նուան դորին արատաւորութեան պատճառ
լինիք՝ որ այսքան ժամանակ եկաց ի քա-
զաքդ յայդ միամիտ ի գործս իւր՝ պահելով
զինքն ըստ չափուն առանց արատոյ, որոյ
արատաւորիլն առ սուրբ Աթոռս և առ
մեզ վերաբերի մանաւանդ, թէպէտ և առ
ձեզ ևս։ Երկրորդ՝ ստէք զհամաձայն
ընտրողութիւն ձեր և զխոստումն։ Եր-
րորդ՝ մեղանչէք ընդ դէմ կամաց և պղդ-
մանն Աստուծոյ անօրինողին ըստ գրե-
ցելումն ձերոյ։ Վասնորոյ գրեմ ամե-
նեցունց սիրով և օրհնութեամբ, և պա-
տուիրեմ հարկիւ, զի որպէս ամենեքեանդ
միաբանութեամբ և միասիրտ խորհրդով և
ինքնակամ յօժարութեամբ և մանաւանդ
պղդմամբն Աստուծոյ. մեծաւ սիրով և
հանդիսաւորութեամբ ընտրեցիք զդա յայդ
գործ. և ի մէնջ ևս խնդրեցիք հաւանիլ
ընտրողութեան ձերոյ և զդա ձեզ շնորհել,
և մեք ի սէր և ի պատիւ ձեր նպելով
կատարեցաք զխնդիրս ձեր, նոյնպէս պար-
տիք և դուք ուրեմն ի դոյն ուխտ և ի
միաբանութիւն ձեր հաստատուն և անշեղ
մնալ, և որպէս սիրով և փառօք ընտրեցիք
և մեծարեցիք, նոյնպէս ի դոյն սէր, ի
փառս և ի մեծարանս պահել պարտիք՝ և
յամենայնի մխիթարիչ, օգնական և աստլըն-
կական լինիլ գմա. և ամենայնիւ հպատակ
և հնազանդ լինիլ ամենայն անմեղածին
հրամանաց դորին. քանզի՝ ոչ միայն զհա-
տարակ Առաջնորդական և Պատրիարգական՝
սէր և զհնազանդութիւն պահանջեմ ի ձէնջ
վասն դորա, այլ որպէս յատուկ սիրելւոյ,
փոխանորդի և գործակալի մերոյ և սրբոյ
Աթոռոյս խնդրեմ ի ձէնջ, որոյ սիրոզք և
հնազանդքն որպէս մեզ և սրբոյ Աթոռոյս
են սիրոզք և հնազանդք և օրհնութեան
արժանիք, նոյնպէս և աստղք և ներհակքն

դորին մեզ և սրբոյ Աթոռոյս են առօղք և ներհակք և արժանիք պատժոց։ Վասն այսորիկ ասեմ սիրելեացդ իմոց միանդամայն, սիրելեացն դորին պարտիք լինիլ սիրելի, ու առելեացն դորին առօղ, որոյ և աներանելով զբարեմիտ սէր և ջնդաղանդութիւն ձեր, խնդութեամբ կատարեցէք և ինքն զգործ իւր և մի յոգոց հանելով ըստ Առաքելոյն բանի որ ոչ է օգուտ ձեզ։ Այլ և պատուիրեմ ամենեցունցդ. քահանայից և ժողովրդոցդ, զի մի ոք ներհակ և հակառակ երևիցի դմա, ի յանդիմանել իւրում ողջամիտ վարդապետութեամբն իւրով զատկական, ի յուղղելն զներձուածօղսն, և ի կշտամբելն զանհնազանդսն օրինացն Աստուծոյ. զի այնպիսին ներհակ Քրիստոսի է, և հակառակ մերոց հրամանաց, և իշխանութեանս պետականի, որ և ոչ է մեաւոց այնպիսին առանց պատժոց։ Քանզի՝ ունի դա այսուհետև հրաման և իշխանութիւն ի Հոգւոյն Աստուծոյ և ի Հայրապետական իշխանութենէս մերմէ կատարել զգործ և զպաշտօն և զիշխանութիւն հոգևոր Առաջնորդութեան ի յամենայն Թեմս և ի վիճակս իւր. յորս զկապելիսն կապել, և զարձակելիսն արձակել, զպատժելիսն պատժել, և զպատուելիսն յարդել։ Եւ մանաւանդ ըստ Առաքելոյն բանի, զթիւրեալսն յօրինացն Աստուծոյ՝ սատակել՝ յանդիմանել, և դարձեալ մխիթարել և սփոփել՝ մինչ վերադարձցին ի շաւիղս ուղղութեան և ճշմարտութեան։ Եւ չունի ոք ամենևին զհրաման և զիշխանութիւն՝ առանց դորին դիտութեան և հրամանին՝ ձեռնամուխ լինիլ ի գործս հոգեւորս օրինաց և եկեղեցւոյ, և այլ իրաւունքաց կանոնաւորացս։ Քանզի՝ եկեղեցի ձեր հանդերձ եօթն խորհրդովն իւրով դմա յանձնեցաւ յԱստուծոյ և ի մէնջ։ Վասնորոյ ամենայն եկեղեցական արարողութիւնք և կարգք, նաև հաւատոյ և օրինաց բանք, պարտին հրամանաւ և գիտութեամբ դորին կատարիլ։ Քանզի՝ անօրինմամբն Հոգւոյն սրբոյ, շնորհօք սրբոյ և շնորհատուի Աթոռոյս, և մեով Հայրապետական իշխանութեամբն փեսայացաւ՝ դա՝ սրբոյ Եկեղեցւոյ Կոստանդնուպօլսոյ Աստուածապահ քաղաքիդ և ընդ հովանեաւ դորին եղելոցն։ Վասնորոյ՝ ահա ի զարդ նորապսակ փեսայութեան դորին, ի նշան շնորհաց և օրհնութեան սրբոյ Աթոռոյս, ի պատիւ և ի մեծարանս հարազատից սիրելեացդ իմոց, առաքեցաք դմա զփիլոն մի պատուական և զմատանի մի ազնիւ, զորս բարեաւ վայելելով մնացէք բերկրասիրա և ուրախ ձեօք հանդերձ. ընդ նմին և դուք ամենեքեան լիջիք օրհնեալք յԱստուծոյ, ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ և ի մէնջ միշտ։ Ողջ լերուք ամենեքեան ի Տէր և ի Շնորհս նորին հանապազ։ Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԻԳ թուին ապրիլ ամսոյ Ե. առ դրան Լուսակաւոյց և Տիրակերտ մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնին։

Հայր մեր որ յերկինս ես սուրբ եղիցի։ [1])

---

[1]) Այս վերջին կոնգակի իսկականը հրատարակութեան համար ստացանք Բերայի աւագերէց արժանաշնորհ Տ. Յովհաննէս ս. քահ. Մկրեանից. զոր իւր շքեղ գիրութեամբ գերագանցում է մեր տեսած կոնգակներից. 155×47 սանտիմէտր դիրք ունենալով, վերին 60 սանտիմէտրը ամբողջապէս նկար է ոսկով և գեղեցիկ գոյներով.—մէջ տեղը Սիմէոն կաթողիկոսի մեծագիր և ոսկեճաճանչ կարմիր կնիքը գեղեցիկ պսակի մէջ ամփոփուած. վերեւից ,,Է'' Հայր Աստուծոյ նշանը, որի տակ ամպերի միջից Սիածին Որդին ոսկէ ուռը ձեռքին իջնելով շողքր ձգել է վարշապատի քաղաքամիջում կնիքի վարի մասում շինուած են ս. Էջմիածնի տաճարը և ս. կոյսերի երեք վանքերը, ձախ կողմը ս. Գրիգորը զգեստաւորուած հրեշտակի ապաստանութեամբ և Տրդատն էլ արքայական թագը դլխին և ծիրանագեստ՝ ծնկաչոգ նորա առաջ, այնուհետեւ սկսւում է Սիմէոն կաթողիկոսի տիտղոսը փառաւորգ նկարներով և կնդակի վերին ու ձախ կողմերը գեղեցիկ ծաղկանկարներ:

Իսկապէս արժէր այս գեղարուեստական գործը նոյնութեամբ հրատարակել դրքոյ մէջ, սակայն Ն. Բ. տպչի գործատանները այնպիսի առասպելական գներ պահանջեցին, որ շատապայ միայն կոնդակը տպագրել այստեղ, այս համառօտ նկարագրով:

Գիտա ս. ք. Ղազնանց

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Մի անգամ ընդ միշտ նշանակում ենք, որ Ազգիս Հայրապետների կամ Մայր Աթոռի կողմից արքայական ան անգամներին, ինչպէս նաև նշանաւոր անձանց ուղղած գրութիւնների մէջ երբ հարկ էր լինում յիշել նոցա անունները, այգաթղ գրւում էր մի խաչ կամ մի փոքրիկ գաւարկ տեղ էր թողնւում, իսկ իսկական անունն ու պիտղոսը գրւում էր գրութեան ճակատին, որպէս յարգանքի մի առանձին ձև, ինչպէս արել ենք մենք միայն այստեղ գրութեան այդ հին ձևի մասին գաղափար տալու։ Այդ ձևը պահպանւում է և այժմ Հայկական Ազգի Կաթուղիկոսներին ուղղած գրութեանց մէջ։

2. Ապրանքն միւրի քաշեն. միւրի նշանակում է արքունիք, միրի քաշել — յարքունիս գրաւել։

3. Այս կոնդակի օրինակը մենք ստացել ենք Գերապն. պ. Կ. Եղեանից. մեր ստացածը պատճէնն էր, որի միւս երեսին գրուած էր այս ծանօթութիւնը. «ՌՄԻԹ թուին, գրէ Ղուկաս կաթուղիկոսն ղմահ Սիմէօն կաթուղիկոսին ե. ղնատիլն իւրն»։

4. Երևանի խանը և նորա աներ Սուլէյման քուրդը մէկ կողմից, վրաց արքայ Հերակլը միւս կողմից գեռ անցեալ տարի Սիմէօն կաթուղիկոսի կենդանութեան օրօք մեծամեծ չարիք Հասցրին ս. Էջմիածնին և շրջակայքի հայ բնակիչներին, որոնց ցաւերին գրեթէ զոհ գնաց Սիմէոն քաջարթուն Հայրապետը. այս տարի ևս Ղուկասի ընտրութեան առաջին տարին շարունակուեցաւ նոցա պատերազմները և Հերակլը 12,000 զօրքով գալով Երևանի վրայ՝ ասերեց բոլոր գիւղերը, 30 եկեղեցի կողոպտեց ու կրակի մատնեց և շատերին գերի տարաւ Թիֆլիզ։ Այս պատերազմի մասին է ողբում նորընտիր Ղուկաս կաթուղիկոսը և ասում թէ տակաւին չեղաւ հնար հաշտութեան և «Մնացեալքն երկրիս ևս իսպառ աւերեցան և աղքատացան»։

5. Նարծեմ ձէ նոր Ջուղայի Ամենափրկչի ըանքը ամէն վանքերից աւելի է նեթարկուել վերջին դարերում՝ կողոպտուելուն և աւերածութեան։ Մեր «Պիւռան» ի Գ. գրքի Ա. մասի ՃԲ–Դ. էջերում առաջ ենք բերել մի անյայտ պատմիչից ամբողջ հատուած, ուր սոսկալի գոյներով է նկարագրուած 1779 թուին Ասպահանի Ալի Մուրատ խանի այդ վանքին հասցրած չարիքներն ու աւերումը։ Պակաս չարիքներ չհասցրեց և Սադեխ խանի որդի Ալինաղի խանը, որ երեք ամիս շարունակ տանջեց Ասպահանի հայերին, յափշտակելով նոցանից շատ տղաներ և աղջիկներ, Բացի գոյանից վանքը աւերուել է 1722 թ., այնուհետև նատր շահից, 1771 թուին դարձեալ Ալիմուրատ խանից, և այլն և այլն։

6. Մաղթու կամ Մախթա՝ նշանակում է հարկ։

7. Մսեր Մսերեանցը իւր «Պատմ. Կաթ. Էջմ.» գրքում մեղադրում է Ղուկաս Կաթուղիկոսին, թէ նա ցրուեց Սիմէոն կաթուղիկոսի ձեռնարկած բոլոր հաստատութիւնները ի թիւս որոց և թղթի գործարանը. սա մի անիրաւացի մեղադրութիւն է։ Այստեղից երևում է, որ Ղուկաս Հայրապետը գաւառներից անգամ՝ նիւթեղէն էր խնդրում — հին շորեր և այլն — գործարանին նիւթ մատակարարելու. յայտնի է նաև, որ մի առ ժամանակ Ղուկասի օրով գոյութիւն ունեցաւ թղթի գործարանը և մի աւանդութիւն ևս կայ, որ մինչև անգամ այդ գործարանի թղթից քանի մի նուագ ուղարկել է նա Տփխիս՝ Վրաց Հերակլ արքային։ Այս մասին կտեսնենք և մեր յառաջաբանում։

8. Աղթամայ կամ Ախտամայ կոչում էին անցեալ գաբերում մեր ս. Հայոց կրօնը թողնող և Հռովմէական կամ

պապական եկեղեցին դիմոզ Հայերին։ Տես «Դիւան Հ. Պ. Գ. ծանօթ. 10 և 23։

9. «Հիւսիսայինն» անուանում էին ռուսիայ կայսրութիւնը։

10. Տես. ծան. 2։

11. Դօստ Թիֆլիզի բարբառում գործ է դրւում «բարեկամ» մտքով. դօստութիւն կառնէ — նշանակում է բարեկամութիւն կանէ. այդ բառը նոյն մտքով գործ են ածում և վրացիք։

12. Բագրատունի անուանում է վրաց արքայական տունը, որ Բագրատունեաց ցեղից սերուած էր Համարում։ Էջմիածինը կարիք ժամանակ մշտ օգնութեան ձեռք էր մեկնում վրաց արքային թէ ուտեստի պաշարով և թէ դրամով, ինչպէս նաև Հեթակլը իւր կողմից երբեմն Մայր Աթոռը պաշտպանում էր աւերիչների դէմ՝ իրեն վերապահելով նորա օգուտները։ Երևանի և այլ խաները աշխատում էին Էջմիածնի «ծուխը կտրել», որպէս ղի «Բագրատունին» գալով «ուժտուս» չլինի նորան, ինչպէս որ եղել էր անցեալ տարին։

13. Նշանաւոր մարդ է եղել իւր ժամանակին Վանքի Տէր Ղազարը. բացի այն ծառայութիւններից, որ մատուցել է նա Մայր Աթոռին, և որոնց մասին քաղմաթիւ յիշատակութիւններ կան մեր «Դիւան»-նեբում, նա հիմքից նորոգել է և քաղմաթիւ նկարներով զարդարել Թիֆլիզի Վանքի եկեղեցին. ինքը Տէր Ղազարն էլ թաղուած է Վանքի հարաւային ղրան առջև փոքրիկ գաւթում. մի գողտրիկ ոտանաւոր նորա տապանաքարի վերայ և ղրան ճակատի մանրամասն արձանագրութիւնը պատմում էր մեզ յետնորդների, այդ քազմաշխատ քահանայի քրանաքան աշխատութեանց արդիւնքները, սակայն ցաւ է ասել, այլևս չկան դոքա, Վանքի վերջին նորոգութեան ժամանակ (1897—8) ջախջախուեցան այդ յուշարձանները և ջնջուեցաւ Տէր Ղազարի յիշատակը Վանքի եկեղեցուց։

14. Տուտէորդու մասին այստեղ գրած աւելի քան կէս էջը միայն ներողութիւն ներով պէտք է բացատրել, այնքան մթին է նորա իմաստը։ Այսքանը պարզ է, որ խնդիրը Գանձասարու Իսրայէլ կաթուղիկոսին է վերաբերում, որը իւր թեմի սահմանները ընդարձակել է ուզում «մինչև ցրուն իսկ բևեռն». Տուտեայ որդու նստարանը Սանահինն է — Գուդարաց աշխարհը. կերևի թէ Իսրայէլը կեղծ փաստաթուղթ պատրաստելով՝ այդ երկիրն ևս միացնել է ձգնել իւր թեմին ռուս պետութեան ձեռնտուութեամբ, որի համար և Ղուկան զդուշացնում է Ճովսէփ ռուսաստանեայց արքեպիսկոպոսին։

15. Սահակաշէն եկեղեցին յիշում է մինչև դարուս կէսը։ Այսօր չկայ այդ եկեղեցին Թիֆլիզում, ինչպէս նաև «Թեկենամ» և «Սասախլուի» եկեղեցիները։ Սահակաշէն եկեղեցին դտնում էր «Նորաշէն» եկեղեցու մօտ փոքրիկ հրապարակի վրայ. այդ եկեղեցին քանդուելու վրայ էր և Եմմոլովի առաջարկութեամբ իսպառ փակուեցաւ, որից յետոյ անուշագրութեան մատնուած ինքն իրան քանդուեց. այժմ նորա տեղը ոչ ոք սիրտ չէ անում տուն կառուցանել։ «Թեկենամ»-ի եկեղեցին գըտնում էր Մուխրանեան փողոցի մի նեղ պողոտայում, որ դարձեալ մեր եկեղեցական իշխանութեան անփութութեան շնորհիւ իւրացրեց մի Հայ քահանայ և տեղը իր համար տուն շինեց։ Իսկ «Սասախլուի» եկեղեցին իմ ծննդեան թաղի եկեղեցին լինելով յաճախ մանուկ ժամանակ խաղացել եմ նորա բակում, գա դտնւում է Օրբելեան փողոցում Վանքի եկեղեցուց ոչ հեռու. այն ևս անցաւ մի վրացի քահանայի ձեռքը և այժմ այնտեղ նորա կացարանն է եկեղեցու փոխանակ։ Մ՛ետ քանի վերայ են եղել մեր հոգևոր իշխանաւորները։

16. Այս կոնդակի մէջ խնդիր կայ որոշել ս. Ճովհան Օձնեցու նշանաւոր վանքին պատկանեալ թեմը, որի քեօթուկն ու քոլոր կալուածագրերը կորել էին վանքի աւերուելու պատճառով։ Այդ վանքը գըտնւում է Լօռում, իսկ Լօռու հայ վանքերն ու գիւղերը յաճախ աւերւում էին Թուրքերից և լեզգի հրոսակներից։ 1830 թ. դեկտ 12-ին № 9317 գրութեամբ քաղաքական նահանգապետ Պետրոս Զավէլեյսկին այսպէս է գրում Թիֆլիսի Հայոց Ճովհաննէս արքեպիսկոպոսին՝ Լօռուայ Ղօշլուջեցի 40 տանց մասին, որոնք նեղւում էին տաճիկ Բայթալ օղլուց.

«Ըստ թղթոյ Սրբազնութեան Ձերոյ՝ որ առիս ի 24-էն անցեալ Նոյեմբերի, յորում եգեալ էր խնդրագիր երկուց քահանայից և միոյ երէցփոխանի վեքիլից 40 ամաց Հայոց բնակելոց ի գաւառին Լօռւոյ ի գիւղն Ղալ լուջայ որք բողոքեն զթուրք Բայթալ Օղլուոյն վասն մուծանելոյ նորա զանասունս իւր յեկեղեցին, և վասն ծակելոյ ղաբարինս որմոց նորա, ես հրամայեցի Բամրակու գլխաւոր վերակացուին Հոգ ասնիլ առ ժամային, որպէս զի թուրք Բայթալ Օղլին չունիցի ղ.յարաբերութիւն ինչ ի գեղջն յիշեալ և վասն գնացից նորա և նեղելոյ զՔրիստոնեայս առնել քննութիւն և ղրանն առաքել ի Դաստարան վասն դատելոյ ըզյանցաւորն ըստ օրինացն։ Ի միասին ընդ այսմ հրամայեցաւ և Ոսթիկանին Գաղթականաց Մայեօր Անտովին չթողուլ մուսանգամ լինել այսպիսի բռնութիւն ընդ Գաղթականաց, յամենայն կարողութենէ ջանացեալ բառնալ զամենայն զրկանս և զնեղութիւնս նոքա՝ զորս ասն աստի բուն բնակիչքն ի մահմետականաց, որպէս և յովսէ որք ի գաղթականաց կարեն առնել։»

Նման աւերումներին ենթարկուել է քաղքից և Ծովկ. Օձնեցու հռչակաւոր վանքը և գիւղը, որ կարծէք թէ Լօռու մելիքների կալուածն է եղած։ Ղուկաս կաթուղիկոսի ցանկութեամբ այդ վանքը նորոգել և բարեկարգել ցանկալով Լօռու Մելիքեան ազգից Սիմէոն արքեպիսկոպոսը, յիշեալ կոնդակով յանձնեց Թիֆլիզի կաթոլիկոսական արքեպիսկոպոսին հրաւիրել Սանահնի, Հաղբատի ու Հաղարծնի առաջնորդներին և միասին որոնելով հին թղթերն ու հարցուփորձ անելով գիտակ անձանց՝ որոշել իւրաքանչիւրի կալուածոց սահմանները. այդ որոշումը եղել է 1782 թուի յունուար 21-ի մի թղթով, որի մասին մանրամասն տեղեկութիւններ գտնում ենք 1805 թ. հոկտ. 14-ին ծայրագոյն կառավարիչ ի տանն վրաց յովհաննէս արքեպիսկոպոսից Հայոց, Ս. Ծովհան. Օձնեցի վանքի և նորա հռոմայրի կոչուած անապատի համայնքներին ուղղած թղթում, որն առաջ ենք բերում այսուհետ.—

«Սրբոյ լուսանկար Ամենայն Էջմիածնի ամարան, նաև Հրամատ աւ Տեառն Դանիէլի Սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց Առաջնորդ Թիֆլիզու վիճակի՝ և բարեհաճութեամբ նորին Կայսերականի մեծութեան ամենայն ռուսաց Ալէքսանդր Առաջնորդի, Ծայրագոյն կառավարիչ ի տանն վրաց, Տէր Յովհաննէս Արք եպիսկոպոս։

Ծորմէ ժամանեցեք թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան ի վերայ սիրելացդ մերոց և լուսածնունդ հարազատ զաւակացդ՝ սրբոյ Էջմիածնի լուսաւորչակրօն հաւատացելոցդ ի Քրիստոս, վիճակեցելոց սրբոյն Յովհաննու Օձնեցւոյն երջանկափառ Հայրապետի մերոյ հրաշազարդ վանից՝ և Հռոմայրի կոչեցեալ սրբոյ Աննապատի նորին, որք ընակեալք կայք ի Թէմս գորին սրբոնուէր քահանայից, բարեպաշտօն իշխանաց, պատուելի տանուտէրաց, և համայն օրհնեալ ժողովրդոց մեծաց և փոքունց, խընդալ ի Տէր մեծազուարճ ցնծութեամբ։ Շնորհք՝ սէր՝ ողորմութիւն և խաղաղութիւն Ամենասրբոյ Երրորդութեան, հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ իջեալ հանգիցէ և բնակեսցի ընդ ձեզ և լցուցէ զձեզ ամենայն բարութեամբ Ամէն։

Եւ ընդ ողջունի և օրհնութեան՝ գիտութիւն լիցի սիրելացդ մերոց, զի թէպէս լուսահոգի Սիմէոն Ճգնակիր Արք եպիսկոպոսն քաղցր աշխատութեամբ ջանաց պայծառացուցանել զսուրբ վանքդ և անապատդ ձեր որպէս եղեալ են յառաջնոյն, այլ անյաջող և անհանգիստ պղտեալ ժամանակի վիշաք և նեղութիւնքն ոչ յաջողեցին նմա, յետոյ և մինչ հովանի հզօր Կայսերութեան ամենայն ռուսաց տարածեցաւ ի վերայ կողմանս այսոցիկ՝ և ամենայն նախկին վայրութիւնքն, և նեղութիւնք ժամանակին փոխեցաւ ի լաւութիւն և ի հանգստութիւն, և օրըստօրէ աւրէ սիրելի և շինարար խաղաղութիւն. յաղագս տարաբախտութեան մերոյ էհաս վանքան կենաց սրբազան Հայրապետին Ցետոյ ոչ անագան վանքանեցաւ և յիշեալ բարեջան Սիմէոն Առաջնորդն, և յայնմհետէ մինչև ցայսօր ժամանակի, թշնամին բարեաց սատանայ յարոյց զայս մրրիկ, որով սրբազան կաթուղիկոսն ամենայն հպատակս ի տանջանս մատնեալ, յետ բազում չարչարանաց մատնեցաւ ի գերութիւն. և ամենայն բարեաց

անօրէնութիւնք լռեալ խափանեցան, և այնպէս մնաց, և սուրբ վանքն ձեր անայցելի, և անաւերուն, Իսկ այժմ մինչ սիեզերահրամանն Կայսրն ամենայն ողջասաց բարեհաճեցաւ մեծահրաման ուկգրիւ իւրով կացուցանել զմեր նուաստութիւն ծայրագոյն կառավարիչ ի Տանն Վրաց, մեք ես պնինչ ի մտի ունէաք ընդ բազում հոգալեաց ձեր վանիցն ևս հոգ տանիլ ըստ պարտաւորութեան մերում։ Ցեսաք զգիր մի որ յամի Տեառն 1782, յունվար 21, հրամանաւ Տեառն Ղուկասու սրբազան կաթուզիկոսին, և Գորգին Արքայորգւոյն, Թիֆլիզու Առաջնորդ կարապետ եպիսկոպոսն, և բոլոր Աւագ քահանայք և իշխանք քննութեամբ և վկայութեամբ ծերուն արանց զնախնի թէմս և վիճակս Ուձնա վանից յատկացուցեալ են վերստին, յորում ժամանակի ձերդ Օձնայ վանից Առաջնորդ Սիմէոն Սրբասէր վարդապետն է եղեալ և Սանահնու վանից Աբրահամ վարդապետն. և ըստ որում յառաջնոց և հաստատեալ կոնդակք, և այլ հարկաւոր գրութիւնք կորուսեալ են յապատակութենէ լեզուաց և բարբարոսաց, յազգս որոյ յօրինեալ են նորոգ գիր, յորում արձանացուցեալ են զվիճակս նոյն վանից Օձնայ յատուկ յատուկ յանուանէ, որք են Հակվի, Ամօճ, Օձուն, Արավի, Մըզարգ, Իգահատ, Քարինճ, Մարց, Բութարկ, Քօլակիրան, Արտաքան (?), Վարդարլուր, Կաեվան, Կուրթան, Ջկրաշէն, Զինիաքարակ, Աչքօհան, Լէճան, Կօղէս, Եզիտանք, Գարմանաթազ, Ազէկի, և Ծաթեր, Ի գիւղ և կնքեալ են Թիֆլիզու Առաջնորդ կարապետ Եպիսկոպոսն, և ամենայն Աւագ քահանայք և քանի իշխանք, որս յաւիտեան կան փառացն արժանաւոր Հերակլ Արքայն, և Գորգին Արքայ որդին, վերահասու եղեալ այնմ, հաստատեալ են. և ինքեանք զայն գիր կնքովք իւրեանց սմին երի, զի մի յայսմ անդորր և բարի ժամանակի մինչ իսպառ անայցելու մնացեալ սուրբ վանքն այն՝ աւելի ևս աւերեսցի, լաւ համարեալ. և Առաջնորդ կարգեցաք, զսիրելին մեր և զբնիկ մարդն նոյն սուրբ վանից զԾաբուելիւն խոհեմուսկ վարդապետն և այսու օրհնութեան թղթով մերով առաքեցաք յայդր, զի եկեալ հովուեսցէ ուզղափառ վարդապետութեամբ զժողովուրդս թէմի իւրոյ, ուր ուրեք և գտանիցին ի յիշեալ գիւղօրայսն, և ջերմեռանդ սիրով զշնաւանս յանձն առցէ, և ամենայն սրբութեամբ փոյթ կալցի յաղագս պահպանութեան, և վերանորոգութեան սրբոյ վանիցն։ Վասնորոյ ուրեմն գրեմ սիրելեացդ մերոց, զի գալն սորա առ ձեզ ընկալջիք զսա արժանաւոր պատուով և օրինաւոր յարգանօք, ընկալեալ զդա որպէս Առաջնորդ և հովիւ հոգևոր ձեր, հնազանդ հպատակ լինիք ամենայն բարի հրամանաց դորին, և զորինչ վանքական և Առաջնորդական հասն և իրաւունք եղիցի, եթէ պագի և եթէ Աթոռահաս, եթէ գանձանակադրամ, եթէ խոսամունք, եթէ քառասնից, եթէ հոգեբաժին, և եթէ այլ ինչ և իցէ արդիւնք զամենայն լիալիր հասուսջիք անթերի Առաջնորդիդ ձերում Ցարութիւն վարդապետիդ, և յամենայն բարի օգտաւոր յառաջադրութիւնս դորին նպաստ և ձեռնտու լինիք, որպէս զի յաջողութեամբն Աստուծոյ, և օժանդակութեամբ ձեր եղիցի Թերևս շինութիւն և նորոգութիւն սրբոյ վանիցդ ձերոյ, որոյ շնորհիւն ևս Տէր Աստուած օգնական և զօրաւիգ եղիցի ձեզ ամենեցուն, փրկեսցէ զձեզ, և ազատեսցէ յամենայն փորձանաց չարաց, և պահպանեսցէ ի խնամս իւր անվտանգ և անսասան։ Ընկալցի զամենայն զնուէրս և զաւուրս ձեր, ի հաճոյս բարերար կամաց իւրոց, և ըզփոխանակն հատուսցէ բազմապատկարար աստ և ի հանդերձելումն։ Այլև զՀոգիս համօրէն նախնեաց ձերոց ննջեցելոց, հանգուսցէ ընդ կամարարս սուրբ Աստուածութեան իւրոյ, և արժանի արասցէ երկնից արքայութեան Ամէն։

Գրեցաւ յամի Տն. 1805 ի յայտագոյն կաուսվարիչ և ի հոկտ. 14, ի տաճարի վիրաց Քողնաւանի քաղաքս Թիֆլիզ ձեռն Սիմէոն Արք Եպիսկոպոսի Վայոց։

Յայնմ ժամանակի ես տեսանելով իմ, և զայս սաւադս ի դուրս գրեցի, անթերի և անաւելուած, սրբոյ նշանի միաբան Տէր Աստուածատուր։

Սիմէոն Արքեպիսկոպոսից յետոյ մինչև 1805 թ. վանքը մնացել էր անտերունչ. այդ միջոցին վանահայր է նշանակւում նոյն

վանքի միաբան և յիշեալ Սիմէոնի ձեռնասուն աշակերտ Ցարուեթիւն վարդապետը։ Մեր ձեռքին է սորա և միաբանութեան ստորագրութիւնը կրող մի հաւատարմագիր, որով վանքի արտաքին գործերի կառավարիչ են նշանակում Սիմէոն արհու եղբօրորդի Լօռու Մէլիքեան Ազնիւ Գրիգոր քնիկ իշխանազնէին նոյն Աննապատի, որ ապա եղաւ տեր Գրիգոր քահանայ Թիֆլիզի ս. Նորաշէն եկեղեցւոյ։ — Ահա և այդ վաւերագիրը։

«Մեք ներքոյ ստորագրողքս՝ որք եմք պաշտօնեայ և աւելածու Հրաշակառոյց և սքանչելագործ Աննապատին Սրբոյն Յովհաննու Օձնեցւոյ բազմերախտ Հայրապետին մերոյ և երկրորդ լուսաւորչին Ազգիս Հայոց։ Զայս գիր փոխանորդական մերով ստորագրութեամբ հաստատեալ՝ ետուք քեզ մեր Հոգէծին Հանգուցեալ ծնողի և բազմավաստակ Առաջնորդի յիշեալ սրբոյ ուխտին Տեառն Սիմէօնի ճգնազգեաց Արհւոյ եղբօր որդի Լօռու Մէլիքեան Ազնիւ Գրիգոր քնիկ իշխանազնէիդ նոյն Աննապատի։ Քանզի ըստ որում ըստ բանի ծայրածաւալ իմաստնոյն Սիրաքայ զերախտիս բարերարին ճանաչել արժան է և ոչ մոռանալ։ Ոյր սակս և մեր զգալով մշտապէս զքրտնաջան երախտիս Հոգելոյս ծնողին մերոյ Տեառն Սիմէօնի թէ որքան ճգնութիւն եցոյց Սրբոյ Աննապատիս և մերումս միաբանութեան, և մանաւանդ նարգեան։ Յիշեալ իշխանազնէիդ Հոգեվառ մտերմութիւնն առ մեզ տեսանելով, կոչեցաք զքեզ առ սյս Հոգևոր. րական պաշտօն։ Նախ՝ զի ունիցիս լիակատար իշխանութիւնս կառավարչական առ ի տնօրինել զարտաքին պաշտօնս պատկանեալս առ Աննապատ մեր. այսինքն ընկալուլ զառնելեան և հատուցանել զտալիսն, ունիլ և իշխանութիւն ի վերայ գեօղից և ագարակաց և հպատակ ծառայից Աննապատին։ Երկրորդ տամք զայս փոխանորդութիւն ի դիմաց մերոց, առ ի շահ և օգուտ մեր մատչել առ ամենայն պատկանեալ տեղիս, առաջի Հոգևոր և մարմնաւոր մեծաւորաց և ի յառգիպելն մեզապատկան ինչ խնգիր յայտնել նոցա և ստանալ ըստ արժանւոյն բաւականութիւն վասն Աննապատի և միաբանութեան նորին։ Ունիս այլևս պարտաւորութիւն յիւլ.աքանչիւրում պատշաճեալ ժամանակի գալ ի յակնարկութիւն Սրբոյ Աննապատիս. և վերահասու լինիլ համայն որպիսութեանց և կացութեանց միաբանութեան մերում, Իսկ թէ զՀոգաբարձու որ և կամ հայր՝ ժամանակաւ հարկաւոր լինի ի սոյն Աննապատիս կացուցանել, զայն ևս պարտ ես ընտրութեամբ մերս ժողովոյն և ծանուցմամբ կայսերապսակ Ծայրագոյն կառավարչին համայն Հոգևորականաց ի Տանս Վրաց Տեառն Ցօհաննու բարձր Սրբազան Մէհրապօլիտին տնօրինել. և նովաւ նպաստ և օգնական գտանել մեզ յամենայն գործս մեր. որև մեք ըստ փոխարինին զտրիտուրն ոչ զայլ ինչ ունիմք նուիրել յիշեալ իշխանազնեայ սիրելւոյդ մերում Ազնիւ Գրիգոր Լօռու Մէլիքեանիդ, եթէ ոչ միմիայն ազօթամատոյց լինիլն մեր առ Ամենաբարձրեալն Աստուած՝ որ բարեխօսութեամբ սրբոյն Ցօհաննու Օձնեցւոյն, նա ինքն միայն լիցի վարձահատոյց ըստ մեծի հաւատարմութեանդ՝ զորս միչ ցարդ ունեցեալ ես առ սուրբ Աննապատս և այսուհետև ևս՝ ունելոց ես գերազանցօրէն. և շնորհք գերազօր սրբոյ Աննապատիս լիցի մշտապէս հովանի ի վերայ Ազնիւ սիրելւոյդ և ի վերայ համայն Ազնուածին ընտանեաց քոց։ Լիակատար ետուք քեզ փոխանորդութիւն համայն առնելեաց և տալեաց սակայն եթէ մերձ առ մեզ պէտս առնելիք իցեն որ զքեզ աշխատեցուցանել ոչ կամեսցուք, մեք ընկալցուք ի պէտս սրբոյ Աննապատին։

Վերոյ գրեալ փոխանորդական գիրն ինձ Հոգելոյս Տեառն Սիմէօն Արհւոյ ձեռնասուն աշակերտիս եւ վանահօր սրբոյ անապատին Օձնեցւոյն Ցարութիւն վարդապետիս ըստ ամենայնի հաճոյ եւ ընդունելի է։

Վերոգրեցեալն ընդունելի է ինձ Օհան վարդապետիս եւ քնիկ միաբանիս որբոյ անապատին Օհանու Օձնեցւոյ։»

Այնուհետև յիշւում է նոյն վանքի վանահայր Ցօհան վարդապետը, որի մի հետաքրքիր գրութիւնը դնում ենք այստեղ վանքի նիւթական կացքի վերաբերեալ. —

«Յամի տեառն, 1818. յունուարի 28 յաւուր ի Թիֆլիզ.

Ես ներքոյ սաորագրօղ, հիահրաշ վա-

նից սրբոյն Յօհաննու Օձնեցւոյ, ընիկ միաբան, և հանգուցեալ Առաջնորդի նորին, տեառն Սիմէոնի ճգնազգեաց Արհի եպիսկոպոսի ձեռնասուն աշակերտ Յօհան վարդապետս, առաջի Աստուծոյ ճշմարտութեամբ վկայելով տամ քեզ վերոյ հանգուցեալ սրբազանի հարազատ եղբօր որդւոյ Աղնիւ պարոն Գրիգոր Լօռումկլիքովիդ զայս Թուղթ. քանզի՝ ի վերոյ գրեալ Թուղթ բարձր սըրբազնութիւն նորին՝ ներսէս Սրբազան Արք Եպիսկոպոսն և Ծայրագոյն կառավարիչն ամենայն Հայոց Հոգևորականաց Վրաստա. նու և այլոց, հրամայեաց ինձ տալ ղՀաշիւ վանից մերոց՝ զոր կայր ի տան Աղնիւ Ա. ղայ Փիլիպոսեանին առ որ և բարձր Սրբազնութեանն առեալ զիմս նուաստութիւն և գնալով ի տուն առ Աղնիւ Եսայի Աղայն. ընդ որ եղև վերահասու Հաշուի վանից մերոց. բայց ի ներ Հաշուադրոցն գտանեցաւ զմի Թուղթ, յորում ձեռամբ Հանգուցեալ Աղային գրեալ կայր ոչ փոքր դումար դրամց ի վերայ Պարոն Գրիգորիդ և նախապէս գրեալ էր Թէ, յորժամ Միրզայ Ռօսթոմ՝ հրամանաւ Ալքայորդւոյն Գաւթի եկն ի վանս Հանել զբաժին վանն նորա, ի ժամուն յայնմիկ տասն Թուման արծաթ դրամ եՀաս իւր քեզ պարոն Գրիգորդ, որ է ստուգիւ ղուր և անտեղի գրութիւն, քանզի՝ յայնժամ՝ յայտնիչ և յառաջքերօղ ամենայն գոյից այնր տան ես եմ լեալ, զի ընաւ աչօք չեմ տեսեալ այնքան դրամ և ուր ինայ քեզ Հասանելն, որոյ ղկնի նաև գրեալ էր Թէ տասն և վեց Թուման տաւար և ոչխար է վաճառի Գրիգորն և դրամն առ նա է, որ է բնաւին սուտ և արտաքոյ համայն խղճմտանաց. և այլ ևս սոյնպիսի բանք, և Թէպետ յայնժամ, յիրաւի միասին կառավարեաք ղտունն, սակայն՝ զամենայն առս և ծախս ձեռամբ իմով եմ արարեալ, և համախոհութեամբ դարձեալ ի վերայ այնր տան մսխեալ, որպէս և յառաջ քան ղայս ի Թուի Փրկչին, 1802, և սեպ. 24. յելուզիչ ձեր ի տանէ անտի, և գալդ ատմբ ի Թիֆլիզ, իմ բոլոր քեզ Հասուցեալ դրամոց ղՀաշիւն ողջութեամբ եառեր ինձ, և ինաց պարտապան քեզ վանքն. երեք Թուման և չորս Հազար գեան Թիֆլիզու դրամ, վասն որոյ ի Թուին 1802 և սեպտ. 24. ետուքեզ վկայութիւն մի ստորագրութեամբ իմով և Թէ ո՞ր արեղայ է որ գրել է առեալ Աղայ Փիլիպոսեանին ես գնա ոչ գիտեմ։ Ուստի և վասն անկասկած ինալոյն ձեր վասն այնորիկ, երկրորդապէս տամ յիշեալ պարոն Գրիգորիդ զայս ճշմարիտ վկայութիւն. որ ոչ միայն պարտական ինչ ես վանից, այլև քեզ Հասանել պարտ է ճըշմարտութեամբ երեք Թուման և չորս Հազար գեան, որպէս և նախնի Թղթոյն իմոյ ևս յայտնեալ ունիմ, և բաց յայսմանէ զբաղում ինաս և զաշխատանս կրեալ ունիս դու։ *Քահանայ վարդապետ:*

Բանիւ և խնդրանօք Յօհան վարդապետիս գրեցի զայս վկայականս, խնարհ Տէր Դաւիթ Տէր Գաւթեանս Մօղնու.»

Այսքանն է մեր ունեցած տեղեկութիւնը այդ վանքի դրութեան մասին 1780 Թուից մինչև գարուս սկզբները։ Ներկայումս վանքը աննախանձելի վիճակի մէջ է,

17) *Նոմոս* յունարէն բառ է և նշանակում է օրէնք։ Արքունական նոմոս՝ արքունական օրէնք, հրամանագիր կը նշանակէ։

18. Արբաբ նշանակում է ծանրութիւն, հարկ։

19. «+ *Կայ երուհեան*» պէտք է հասկանալ Ուռհոյ Եկատերինէ մեծ թագուհին։

20. Մուչալկա — *չկարողացանք գըտնել. նշ. ստորագրութիւն (?)*։

21. Ինչպէս սոի, այնպէս էլ Աղթամարի Աթոռների կաթուղիկոսական յաջորդութեանց մասին շատ քիչ և պակասաւոր տեղեկութիւններ ունինք. մի անանուն գաւազանագիր Աղթամարի կաթուղիկոսների թիւը Յովհաննէս Ջ. Պատմաբան կաթուղիկոսից սկսելով և հաշուելով 113 հոգի, հասցնում է մինչև Յօհաննէս Շատախցին, որ համարւում է վախճանուած 1886 Թուին։ Մենք առաջ ենք բերում այստեղ Աղթամարի կաթուղիկոսների յաջորդութեանց մի այլ ցուցակ, որ կազմել է Հանդ. Վ. Վ. Փիրղալեմեանցը, քաղելով այլ և այլ յիշատակարաններից, արձանագրութիւններից, կոնդակներից և նամակներից և որ մասամբ ինքներս լրացրինք ուղղելով նաև

քանի մի թուանշաններ, ըստ մեր ունեցած գրաւոր տեղեկութեանց։ Այդ ցուցակն սկսւում է Գաւիթ Թոռնկեցիից, Աբգլմսեհ Արծրունու որդուց, ըստ շարունակողին Թովմայ Արծրունու, դա ևս թերի է և պէտք է լրացնուի հետզհետէ ի լոյս եկող նորանոր տեղեկութիւններով։

Գաւիթ Ա. Թոռնկեան. 1113 թ.
Սահփաննոս Ա. 1276 թ.
Զաքարիա Ա. հիշատակւում է 1335 թ.
Ներսէս Ա. հիշ. 1313 թ.
Գաւիթ Բ. 1336 թ.
Սահփաննոս Բ. ?
Ներսէս Բ. + 1369 թ.
Զաքարիա Բ. Նահատակ. + 1393 թ.
Գաւիթ Գ. եղբ. Զաքարիայի 1400—1441 թ. (հիշատ. Անշնչ. Գր. Էջմ. № 6).
Զաքարիա Գ. Նստաւ 1439 թ. և + 1466.
Սահփաննոս Գ. Նստաւ 1466 թ. + 1490.
Զաքարիա Դ. յաջորդեալ Սահփաննոսի Գ.
Ատոմ. հիշատակի 1496 - 1506 թ.
Սահփաննոս Դ. յաջորդեալ Ատոմայ.
Գրիգորիս Ա. Փոքր կամ Խմաստասէր. հիշատակի 1533—1574. ըստ ոմանց 1533—1607, որ անհաւատալի է.
Գրիգորիս Բ. յաջորդեալ Գրիգորիսի Ա.
Սահփաննոս Ե. ժամանակակից Մովսէս կաթուղիկոսին Էջմիածնի։
Մարտիրոս Փշրուկ. ժամանակակից Յակովբ կաթ. Հուղայեցու.
Թովմայ Ա. ժամանակակից Նիւղադար կաթ. Հռոմկլայեցու.
Աւետիս. ձեռնադրուած 1696 թ. Նահապետ կաթուղիկոսից, իբրև հակաթ. կաթող Թովմայի։
Գրիգոր Ա. ձեռն. Թովմայ Ա. ից իբրև իրան յաջորդ։
Սահակ.
Յովհաննէս Ա. կեծուկեանց, ժամանակակից Աղէքս. կաթ. Քուղայեցու.
Հայրապետ յաջորդեալ Յովհաննիսի Ա.
Նիկողայոս ,, Հայրապետի.
Բաղդասար Բաղիշեցի + 1743.
Յակոբ + 1758. յաջ. Բաղդ.
Գրիդոր Բ. յաջ. Յակոբայ. հիշի յամին 1763.
Թովմայ Բ. հիշատակի յամին 1765. + 1783.
Կարապետ Ա. Վանցի. ձեռն. 1783.
Մարկոս.
Թէոդորոս, յաջորդ Մարկոսի. հիշ. 1794 թ.
Միքայէլ. յաջ. Թէոդորոսի. + 1810.
Կարապետ Բ. Մոկացի ? + 1813.
Խաչատուր Ա. Վանցի.
Կարապետ Գ. յաջորդ Խաչատրայ. ?. + 1823.
Յարութիւն մշեցի կաքաւ մականուանեալ.
Յովհաննէս Բ. (Շատախցի) Մոկացի 1832.
Խաչատուր Բ. Շատախցի + 1851.
Գաբրիէլ Շիրօյեան, դէտ Վանայ իբր կաթուղիկոս, 1852 — 3.
Փոքր Խաչատուր վարդապետ տեղապահ. 1854 — 6.
Յակոբ արքեպիսկոպոս Աթոռակալ 10 ամիս.
Խաչատուր վարդապետ Փշավանցի, մականն. Պատուած նաղարայ, տեղապահ կաթուղիկոսութեան.
Պետրոս, Պիւլպիւլ կոչեցեալ. 1858—1864.
Խաչատուր Գ. վերջին կաթուղիկոս Աղթամարայ. 1864 — 1896.

Սոցա մասին ընդարձակ տեղեկութիւններ կհաղորդենք մենք ուրիշ առիթով։

22. Աղայ Մահմադ խանի թիֆլիզն աւերելու վերաբերութեամբ մի ընդարձակ յօդուած տպեցինք 1896 թ. «Լումայ» ի Ա. դրքում, գրուած ժամանակակից և ականատես մի բանասէրի ձեռքով, ուր ընդարձակօրէն նկարագրուած են այդ աւերման սարսափները։

23. Կ. Պօլսի Զաքարիա կաղղուանցի պատրիարքը, որ յայտնի եղաւ մանաւանդ Սիմէոն կաթողիկոսի նորոգած տօնացոյցի գործածութիւնն արգելելով, վախճանուեցաւ 1799 թ. մարտ 11, 25 տարի վարելով իր իշխանութիւնը և թաղուեցաւ Պուրուչէշմէի ս. Նշան եկեղեցում։ Նորա թաղմանը Եէլադայից եկել էր Գանիել եպիսկոպո-

ը, որ դամբանական խօսեցաւ նորա վերայ. Ժողովուրդը համակրելով նորան, ժողով ա. րին մարտի 14 ին և նորան պատրիարք ընտրելով մահսէր գրեցին և ուղարկեցին Բիւշխի գուռը։ Մարտի 17 ին Իսրայէլին ս. կարապետի Ցարութիւն վարդապետի, Մարղուանու առաջնորդ Գէորգ վարդապետի և Զափու օղլանի Յակոբի հետ տարան փա. շայի դուռը և խիլայն հագցնելով՝ րերին նստեցրին պատրիարքական աթոռը։

24. Օձունի մօտ Սղնախի այրը այժմ կարծեմ կոչւում է Սեպի այր այգեսակ այրեր շատ կան Գուգարաց աշխարհում և գոքա լոկ ապաստանարաններ էէին հայ ժողովրդի և իշխանների. այսօր Հաղբատի, Սանահնի և առհասարակ Լօռուայ ձորերում հաշւում են մի քանի տասնեակ այդպիսի այրեր, յատուկ յատուկ անուններով, ո. րոնք բոլորն էլ զանազան դարերում ծա. ռայել են իրրև պահեստի տեղեր հայ գրչագրերի և հարստութեանց. գոցանից մի երկուսից այժմ էլ մեծ հոդմի ժամանակ մագաղաթի կտորներ են դուրս ցայտում։ 1899 թ. մարտ ամսին մենք մի փոքր հնա. գիտական ուղևորութիւն կատարելով կա. րողացանք այգ այրերից մէկը զննել, մօտ 60 արշին բարձրութիւնից պարանով կախե. լով մի մարդ, որի շնորհիւ հանեցինք այդ. տեղից տասերէն մագաղաթեայ և թղթէ գրչագրերի բազմաթիւ մանր կտորտանք, ամբողջ թերթեր, և նոյն իսկ գրքի մի ամբողջ տետր, անկիզբն և անվերջ, որոն. ցից մի մասը խոնաւութիւնից և այլ հան. գամանքներից միանգամայն քարացած դրու. թեան մէջ, մասամբ էլ անընթեռնլի։ Այս իրողութիւնը համոզեց մեզ, որ դեռ շատ դանձեր կան թագնուած այդ այրերի մէջ, որոնցից մի քանիսը տակաւին կուսական գրութեան մէջ։

25. Այստեղ տպուած պայմանագիրնե. րից առաջինը, որ առաջարկուած է հայերի կողմից, մասնաւոր տարբերութիւններով տպուած է «Ծիլն Աւարայրի» և «Արձա. գանքն թերթերում, իսկ երկրորդը, հայե. րին առաջարկուածը, հրատարակում ենք այստեղ առաջին անգամ. չգիտենք կմ՛ ար. գեօք դորա բնագիրը «Դաշանց մատենում», որից թարգմանուած է հայերէն։



ՅԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՑ ԲՆԱԳՐԻՆ ԵՒ ՅԱՒԵԼ·

Արդար թագ. 733.
Արդլմսեհի վանք Խարբերդու 439.
Արրահամ 129, 190, 343.
— կաթ. 101, 116.
— ղարսեցի 506.
— միրզա 607.
— վարդ. առաջ. Դեբրջանու 625.
— — — Պանահնու 180.
— — Բէշքիւթիւր 439.
— — Հաշտարխանի 565.
— ա. քահ. 149, 380, 392—7.
— — Թիֆլիզեցի 285.
Ագուլիս, եաց առուն, եցիք 167,201, 633, 640.
Ադրանա 657,670.
Ադրիանուպոլիս 197.
Ազովու երկիր 154.
Ազուա 740.
Աթախու վանք 317,430.
Ալանաց դուռն կամ Դամրզափի Դարրանդ 726,746.
Ալէքսան 593,647.
— Արքեպ., ս. Յակորայ Ալ ատող 669,670.
— Համադանցի 454,476,526,528.
— Մատեհէան 450.
— վանցի 487.
— վ. Հասանզալայու 642.
Ալէքսանդր Պաւլովիչ 44.
Ալէքսի դործ. ս. Աթոռոյ 429.
— Փէօդրօվիչ Իվանով, պօլկովնիկ, Մօզ· աօքու կամէնդատ 68,69,252.
Ալիասկար ղզլբաշ 682.
Ալիրէկ Մանազկերտցի 341—3.
Ալիրէկլու դ. 272.
Ալի Մուրատ խան 140.
— սուլթան ճարու 722—727.
Ալլահվերդի 492.
Ալփիար, որդի Փիլիպպոս ամրայի 684,691, 692.
Ալօ 342.
Ախթամարայ կաթ. 494,495,552.
Ախթարմայք 55, 296, 329, 335, 346,380, 381,413.
Ախիչան աղայ վանցի 494,506,509,551, 642,672,693.
Ախլցխայ 89,120,230,455,494,554,636.
Ահմադ մօլլայ 420,424—6,440.
— սուլթանի որդի 74,75.
Աղարար Գեդրոնցի 373.
Աղալզ Թիֆլիսցի 750.
Աղամալ 510,513.
Աղամջան 293,464.
Աղայ Փիթոյեանց 706.
Աղէկի քարայր 717.
Աղէքսանդր Ընդրէիչ Բէդրօվկի, դրաֆ 585.
— կաթ. 12,112,192.
— մհ. 328.
Ազհիսար 594,595.
Աղուանից աուն, կաթ. 65,379,512,713, 715,716,721,726,737,741,742.
Ամասիայ 459,718.
Ամրակում եպիսկ. վրաց 42.
Ամենափրկչի վանք Ջուղայու 483.
Ամիդ 570,679,689.
Ամլիկ 293.
Ամսաէրդամ 31,450,468, 469, 476,531, 647.
Անդրատ 729.
Աննանիա 205,244.513.
— վ 410.
Անարզափ 729.
Անդրէաս եպս. 750.
— Զէլէպի 698.
— վ. 535.
Անեցիք 740.
Անթառամ 513.
Անկիւրիա 438,458.
Անկլիացիք 651.
Աննա Իվանով. 570.

Անոյշ գնձապտ յՈւրուսջուղ 600.
Անաան 501.
— աղբայ ի Թօխաթ 660.
— կաթ. վրաց 13,37.
Անտանիէ եպս Ռսց. Հաշտարխանու 245.
Ապարանցիք 393,394.
Ապլահաթ եպս. ասորի 416.
Ապտլազիզ եպս. ասորի 417.
Առանայ սերունդք 150.
Առաքել 470.
— աղաչ Աբրօղլի, յեան 478,639,672.
— Սաւալանեան 450,451,577,617,639.
— ոց վանք Տիգրանակերտու 87.
— վ. պատմագիր 713.
— ք. 687,703.
Ասլան աղաչ 195,466,468,658,660,664
Ասորոց կաթ. 413.
Ասպահան 525,529,723.
Աստապատցիք 204.
ս. Աստուածածնի վանք ի Սիս 721.
Աստուածապահ 31,97,408,443,494.
— Ագուլեցի 478.
Աստուածատուր 222,252,621,622,648.
— Արրօյեան 223, 293, 453, 478, 506, 577,614.615.
— աղաչ 328,534,556.593—8,603—7
— Հալապցի 463.
— Մանուչարեան 516.
— Մուրատխանեան 644.
— Պալթաչեան 556.
— վ. 286,404—7.
— — Աղաւնի 276.
— — ս. Կրպտի առաջն. 494,513.551, 591.
Ատրանա 327,328.
Ատրպատական 726.
Արաբացիք 714,715,722.
Արապկեր 679.
Արարատ,,եան տուն 233,262,300,313, 314.
Արդուին 222.
Արևելականք 455.
Արևելեան երկիր, տուն 19,60.
Արևմտականք 455.
— եան տուն 19.
Արղրում 629.
Արկուտի 381—3.
Արշակունի թագաւորք 733.
Արսէն Խօջայ, գնձ. Ածծ. եկ. Օրթագեղու 339.
Արսէնիոս 669.
Արցախ 62,140,557,587, 715,716, 722, 723,726 —9,741,742.
Արփուչ՚այ գետ 224.
Աւան Հարիւրապետ 726.
Աւդուլլարէկ 501.
Աւետիս վ. Հաղարծնու 387,388.
Աւետիք 151,266,267,617,661.
— վ. 524.
— ք. 597.
Աւետ Տէր Մարգարեան 190.
Աւթանդիլ 57.
Ափխազաց երկիր 43,398.
Աֆանգի Մուստաբիս Իրրահիմ 11,224,348.
Բարայեկ ամերայ Պետր. յԱգրանա 672.
Բարիլոնի սուլթան, եգիպտական 715,720.
Բագրատունի 117.
Բալի 90.
— երեցփ. Ախլքայու 176.
Բալու 648.
Բաղգասար 344,532.
— վ. 509.
— ք. կ. Պօլսոյ 677.
Բաղգատ 160, 191, 327, 439, 484, 487, 526—9,610,626,683,705.
— ու րգեշխ 697,698.
— — խալֆայ 734.
Բաղէշ 607,657,666.
Բաղիր մելիք Վարանգու 724.
Բամբկուձոր.ակաձոր 15,417,424.
Բայազիտ 2,64,65,74,225,342,401,537, 538,542—4,547—50,563,564,578, 596,635,681,705.
— ու փաշայ 224,342,589.
Բայընդուր 615,616.
Բաշիաչուխ 43,85.
Բասանջաղ 722.
Բասրա 95,160,190, 191, 220, 318,322, 327,439,454,466,467,483,528,529, 603,610,626,634,696,697.
Բարկուշատ 724.
Բարսեղ Ղօչի գիւղացի 492.
— վ. 543.
— ք. յազգէն մելիքաց Խաչենու 723.
Բարձրբերդ 730.
Բարձր Հայք 718.

Բաքու 149,151,266,379,401,443.444, 449.
Բերիա 329.
Բէկում 564.
Բէնգէր 519.
Բէջան, նոյն Բէժան Արղութեանց 33.36, 183,520.
Բիւզանդիայ 560.
Բիւրականցիք 393,394.
Բյրամանու ախուռնա 620.
Բոռչալու 15,726,729.
Բուլանըխու մհալ 342.
Բուշեռ 160,190.
Բօզէն Չաղինենցի եղբ. Յովհ. 627,628.
Բօշայ Յարութիւն Ջինոյի որդի 508.
Բօշի Բօզօյ 508.
Բօրաղան 45.
Գաբրիէլ 40,379,422.
— արքեպ. Պեարպօլքու 317.
Գագայ երկիր (Ղազախ) 714,718.
Գալլիացի կին 450.
Գալուստ աղայ 478.
— վ., Արքեպիսկոպոս, նուիրակ 29, 80, 97,106,149,163,195—7,243,292. 381, 518, 521, 530—4, 557, 591, 595,597,677,698.
— ք. 602.
Գալստան 326, 467, 427, 428, 439, 443, 456,501,524,634.
Գաղատիայ 97,243,292.
Գաղղիացիք 593.
Գայլանեանք, վանք 7,101,116.
Գանձաբասան 722.
Գանձակ 714,722,725—9,741,744.
Գանձասար 285,379,401,721,724.
Գառնի 637.
Գասպար 183,632,660.
Գարգարացիք 150.
Գարսէվան Էշիկաղասի 43.
— Ճավճավաղով 741.
Գաւարչինոյ ամրականք 718.
Գեանջայ 17,129,292,373,490,501,530.
Գեօրի 335,401.
Գեօրգի ըերդ 741.
Գեօրկի գործ. Մօղօքու 68,132,149.
— Էրէսթաւ ղարաղալխանու 727.
Գեօրկին արքայորդի վրաց 126,160,161, 206, 209,210, 240, 241,344,345, 389, 398,402, 403, 409,420, 425, 426, 439, 440, 446,447, 503, 509, 579, 656, 677, 679, 683, 684,687, 700--2.
Գէորգ 97,220,408,443, 457, 461, 501, 508,553,670,705.
— Ագուլեցի. 478.
— Արևելցի 31.
— եպս. 750.
— երէց 464.
— Թօմայեան վանեցի 494.
— Կարսեցի չերէց 11,346,349,491.
— Յարութիւնեան կերդասցի 512,663.
— Ռամեցի 634.
— վ. 539,563,564,697,699,705.
— — Ուռուսէլու 513.
— ք. 701.
Գէորգեան Չարաղցի 338.
Գիլան 63,151,454,524,727.
— ու Շահբանգար Ռուսաց 428,468.
Գիւրէկ 748.
Գիւլտան Գ. 725.
Գոմոց վանք Բաղէշու 653.
Գուգարք 713,722,741.
Գրիգոր 40,57,71,264—6,340,501,594, 606,617,618,
— Ալէքս. Պօաէմկին 263, 290, 731, 734,741.
— Աղայ Հիւսիսօգլի ի Ղարահիսար648.
— Աղաչայ 586.
— Ամրայ Սախայօղլի, ղաաէ 340,640.
— Անուշեան Ուրուսջուղ 656,672,676.
— Արքեպս. լուսարար. 702.
— Դէֆուգաթ. 72—4, 155 - 8, 183, 185,188,190,255.
ս.— Լուսաւորիչ 7, 51,65,171,282,291, 365,383,431,555,721,733,738.
— — — չի քաղաք, Գրիգորուպօլ 585, 609,610.
— Խալդարենց 270.
— Հէքիմ Յովհ. որդի 472—4.
— վ. 560,561,569,586,607,613.
— — առջն. Ամրաօլայ Վանից 652.
— — — Շամշատինու 599.
— — նուիրակ Հնդկաց 191,325,327, 466.
— — — Ուռուսէլու 636.
— Փալանճիօղլի 618.

— ք. 593,603.
Դօրի 15,417,580,582,602.
Դօրօյենք 467.
Դաղստան 706,743.
Դանիէլ 183,216.
— Արհեպս. 607.
— վ. 9, 11, 33, 37.39, 126, 127,130, 273—6,287,288,743,744.
— — Իղմիրու 636.
— — Ուռումելու 672.
— — պատր. 664,674,676,687, 692, 699,705.
Դարբանա 401,727.
Դարէջան թագուհի վրաց. 81,402,601.
Դաւալիոյ գաւառակ 730.
Դաւիթ 661,683,684.
— Ուրղուեթանց 667.
— արքեպ. 687,707,708.
— Դիլանցի 524.
— Մխրզայ թոռն վրաց արքայի 642.
— Պղնձագործ Թօխաթցի 513.
— վ. Թիֆլիղցի 503 - 6.
— — Հաղպատայ 579-82,588,591,602
— ք. 90,598.
Դդումական կամուրջ 725.
Դերջան 625.
Դիարբէքիր 431,691.
Դիլանեանք ի Ղարս 673.
Դմանիք 723.
Դուբասար 586.
Դրդուական գեա 724.
Դօվլաթլու, Տէվլէթրի, խան, փաշայ 225, 412, 413, 422, 554, 564, 599, 600, 649,681.
Եադուբ եպս ասորի 417.
Եակուր ածքաօռ. աես Ցակ. աղբտ.
Եակօր Խարֆօլօմէիչ, Հշարխն. Դումրևռնաթ 248.
Եաշ 519,569.
Եարալի Կողբեցի 627,628.
Եգիպատս 720.
Եթար, քոյր Եսայի վ. 632.
Եթովպացի 693.
Եկատարինէ կայսրուհի 44,247,309,316, 729,731,740.
Եկատերինսլաւ ք. 154,267.
Եղիազար 468.
— աղայ 132,149,183,270,303,306—8,311,380,443,445,449,488.
— Շամիրեան Նոր Ջուղայեցի 737.
Եղիա աղայ 659.
Եղիայ ք. Ախլցխացի 172.
Եսայի 266,271,570,701.
— Արղուեթեանց ի Թիֆլիղ 667.
— բէկ 381.
— Իւղբաշի Ցարութիւնեան Թիֆլ. 461.
— կաթ. Հասան-Ջալալեանց Աղուանից պատմիչ 721—5.
— Մասեհեան 460,497,602,650.
— Ծովհ. Սաւալանեան ի Զմիւռն. 663.
— վ. 31, 192,204,237,329,404,472, 478,515.
— — Բայազիդու առջն. 74.
— — Զմիւռնիոյ 506.
Եսաւ Դիւանի 601.
Եսմի 727.
Երասխ գ. 724.
Երեմիայ ամիրայ Սաեփ. ի Բենկան 679,691.
— Վիրապեան յիշմիր 602—24.
Երևան 516,564,592,616,633,637—41, 658, 703, 726, 728, 729,743.
Երնջակ. ա. ս. Կաբապեա Երնջ.
Երուսաղէմ 95,150, 189, 221, 231—8, 269, 299, 300—3, 371, 460, 504, 532, 538, 543, 672, 692, 701.
Եւրոպական լեզուք 482.
Եփրեմ Ամիրայ 281.
— — Խանումի օղլի 352.
— Արքեպս Հիւսիսոյ կողմանց 685.
— կաթ. 746.
— վ. 273 - 6,280,287,288.
— վ. Հնդստանու ն. 527,562,583,603.
Զարահազլճի 718.
Զաքարիա 722.
Զաքարիա պատր. կ. Պոլսոյ 20,94,99,100, 110,121, 142, 226, 228, 242, 292, 321, 372, 433, 549, 634,674, 677, 731, 743, 752, 753,755.
— սրկ. պատմագիր 713.
— ք. վրացի 344.
Զմիւռին 4,25,31,47,95, 142, 272, 278, 293,328, 433, 451, 452, 470, 507, 512, 520, 530, 548, 556, 591,594, 617,663,743.
Զօհրաբ 3-5.
Զօրարաբէլ 449.

Զօրի 183.
Էլիազ աղայ Մինասեան 644.
— եպիսկ. ասորի 417.
Էմինի Իւսուֆ աղայ 575.
Էնէշաա 510.
Էնկիւրա 692.
Էջմիածին 2,5 – 8, 17, 19, 32, 44, 46, 49, 124, 127, 199, 231, 234, 321, 422, 498, 611, 692—4, 706, 730, 732, 754
Էտրէնէ 632.
Էփեզիմէ վ. վրաց 92, 178.
Ըռստագէս Արևելցի ի Թօխաթ 512.
Թագուոր ամիրայ 648.
Թադէոս առ. դամբարան 74.
— — վանք 216, 401, 537, 542, 563, 564.
— եպիսկ. 750.
— Ղարաշեան յՈւռումէլի 652.
— վ. Շուլավէրու 622—4.
Թամրաղ շահ որդի Հիւսէին շահին 727, 728.
Թարթառ 725.
Թարճիմանի օրդայ 219, 661.
Թարվէղ 62, 65, 140, 151, 240, 288, 525, 530, 570, 587, 632, 637, 638, 676, 706.
Թեհրան 571, 596, 742.
Թէիմուրազ Էշիկաղասի Մդիւանբէկ 588—91.
Թէլաւ 15, 723.
Թէոդորոս 535, 538, 543, 556, 615.
Թէքիրտաղ 598.
Թիրվանտայ Կերաքեանց 663.
Թիւրէթ լեառն 722.
Թիֆլիս 15, 17, 32. 40 56, 57, 67, 85, 124, 129, 131, 142, 148, 149, 163, 167, 172, 197, 198, 244, 271, 276, 336, 344, 346, 376, 378, 380, 381, 385, 392, 396, 399, 400, 417, 438, 476, 482, 492, 550, 570, 610, 649, 688 699, 705, 706.
Թովմայ Մեծոփեցի 713.
Թորդոմ 4, 5.
Թուման 508, 633.
— զափանցի 84.
Թումայան 632.
— աղայ ի Թօխաթ 660.
Թուշայ լերինք 723.
Թուռլայ 585.
Թօխաթ, -ցիք 204. 237, 457, 458, 490, 501, 536, 541, 592—5, 617, 632, 718.
Թօմայ առ. վանք 522, 588.
— կաթ. 495—7.
Թօմաս 347, 501.
— վ. 167, 523.
Թօմարղայու վանք ի Կեսարիա 648.
Թօփրախղալայ 501, 596.
Իբրահիմ 723, 724.
— եպս. ասորի 417.
— խան Շուշուայ 532, 533, 570, 571, 596, 742, 743.
— փաշա 12.
Իզէթլի փաշայ 680, 681.
Իզմիր 591, 613, 746.
Իզնիմիտ 196.
Իմամ Ղուլի խան Սղնախ ք. կախէթու 722.
Իմէրէթ 43, 85, 400.
Ինխսէլ 722.
Ինկլիզ 324, 326, 651.
Ինօքէնդի արքեպս. Պսկովսկու 317.
Իսահակ վ. 267, 288, 499, 501, 530, 556, 557, 579, 625.
— — Զմիւռնոյ 530, 531, 591, 592, 604, 605, 614.
Իսաղ փաշայ Բայազաոյ 223, 224, 342.
Իսաչան աղայ ի Խոյ 644, 658.
Իսմայիլ քաղաք 205, 524.
Իսրայէլ 150, 290.
— կաթ. 17, 32, 39, 124, 202, 392, 504—6.
Իւանէ Միրզաբարբաշի 378.
Իւէքիլիսայ 537, 543, 620.
Իւսկիւտար 673.
Իւսուֆ փաշայ 674.
Լալիթարս 385.
Լամբրոն 729.
Լամբրոնացի 271.
Լանկ Թամուր 714, 716.
Լ/ևոն Զ. 715, 729.
Լ/ևոն Միրզայ արքայորդի վրաց 77, 78, 81, 82, 160, 161, 195.
Լէղկիք 557, 558, 571, 717.
Լէվէնտ 718.
Լէօպօլ 521.
Լիբանան 231, 296.
Լիմ անապատ 321, 611.
Լիւան օղլի 729, 730.
Լճէ 430.

Լուիվալի խան 596,742.
Լօռի,-ու երդ. 209,393,394,417,714.
Խալիլ փաշայ 12,113.
Խանումի Իսկէլէ 741.
Խանումի օղլի 280.
ս. Խաչ եկ. Իւսկիւտարու 339,351.
Խաչատուր 6,40.
— աբեղայ, վ. 530,605.
— ամիւսչ բենկանցի 674.
— Գօրգեան ի Կարին 629.
— վ. Բարդ. առաք. վ. առաջ. 660.
— — Զմիւռնայ 615,616.
— ք. 346—9,671,746.
— — Սահակաշէն եկ. Թիֆլ. 472—4,592.
Խաչէն Նահանգ 724.
Խաչիկ 98,196,221,288,306,307,467.
— աղայ 220.
— Պօղոսեան Զուղայեցի 85, 163, 191, 252,269.
Խասգիւղ 351,369,673.
Խորվիրապայ վանք 381,383.
Խսմին 724.
Խտըր կեսարացի 511,693.
Խոյ 62,65,140,511,513,525,533,537, 542,544,563, 564, 571,596, 641, 658,679.
Խօջայ Գաբրիէլ 634.
— Գալուստ 634.
— Բեհբուտ 747.
— Ծովհաննէս, Ակնցի ի Կարին 511.
— — Պովլաթեան 573,575.
— Պետրոս 6.
Խօջամալ աղայ Սաֆարեանի կին և աղայ Մինասի դուստր Կատարինէ Խաթուն 644.
Ծառուկ 183.
Ծիրանաւոր ս. Աստ. անապատ Հաւլարայու 417,418.
Ծորոփոր երկիր Լոքայ 714.
Կալկաթա 191,562,644,697.
Կալուղ 314.
Կախէթ 15,341,342,417, 726, 729, 740.
Կախք 601,702.
Կաղղվան 346,347,460.
Կասպիական,-ից ծով 716,726.
Կարապետ 6,96,111,407,456,459.
— աղայ Ցրճանենց Ադուլեցի 242,338, 583.
— արքեպիսկ. 36—9,128.
Կարապետ արքեպ. Կարբեցի 587.
— Բարայեան 602,640.
ս. — եկ. Իւսկիւտարու 351.
— Կաթ. 276.
— Կարնեցի 276.
— Մայիօր ի Թիֆլ. 694.
— Զալիկեան ի 518,534,624,672.
— պօօշիկ 183
ս. — վանք Ելնջակու 409,475,522,583, 625.
ս. — — Մշու 286, 636, 665, 666, 674.
ս. — — վրաց ի Կախէթ 92,177.
— վարդ. 68, 152, 174, 192—5, 209, 233—5,411,461,588.
— — Աղթամարայ 509.
— — առաջն. Թիֆլիզու 204—6,336, 377, 378, 386, 393—7,400,499.
— — — Տիգրանակերտու 87, 191, 192,317.
— — նուիր ս. Երուս. 293,299, 302, 372.
— — Շահնաղարեանց 744,746,
— — Սասնցի, Ծամշայաձոր. 85,196.
Կարին 5,6,11,22,31,58,60,65, 95, 111, 118,136—9,144,218,221,228.230, 231,269,288, 293, 349, 438, 443, 452,455, 458, 464, 467, 476, 494, 531, 536,542, 550, 553, 577, 613, 658,688.
Կարնոյ մաքսապետ 136.
— փաչկ 11.
Կարս 2,64,65,136, 138, 219, 220, 224, 230,349,407, 438, 452, 455, 460, 461,464,467,491.
Կեսարիա 677,718,729,730.
Կեսարու առջն. 593.
Կէյվա 381.
Կիլիկիա 715,718,720,729,738.
Կիլիկեցիք 330.
Կիրակոս 6,111.
ս. — եկ. Յամիդ 644.
Կիւրեղ դնձպետ. Բաղդատու 697.
Կիւրճիստան 706.
Կիւմիւշխանէ 167,168.
Կիւրեղ Ց.Սարգսի որդի 'ի Ղրխաղաճ 511.
Կղարջք 714.
Կողբ 490,627.
Կոստանդին կաթ. կեսարացի 721.

— Պաւլովիչ 44.
կ. Պոլիս 4—6,9,16,19,24,31,32,58,59, 84,111,114,115,137,139,142,151, 163,167,181,191—6,217,221,230, 234, 237, 242, 278, 285, 286, 300, 319—23, 328, 338, 340, 349, 350, 353, 369, 414, 416, 433, 442, 443, 452,476, 477, 490, 503, 524, 550, 587, 609—11, 629, 665, 681, 683, 688,690, 699, 700, 703, 705, 715, 720,730,731,750.
— սկ դեսպան 269,288.
Կովկաս 557,571,717,742.
— ային վիրագ 587.
Կուր գ. 722,724,725.
Կաուց անապատ 321,467.
Կօփ գ. 342.
Հագարացիք 523,567,568,584,714.
Հազրօ 430.
Հալապ, Հալէպ 85,327,329.343,454,674.
Հախպատ-ուէեմ 17,39,164,205—8, 387, 393,504,505,580,582, 589,683.
Հազարծին 210,387,388.
Հաղբակ 501.
Հաճի Աւալղաեր 699.
Հաճիքաբաշ 6,111,218,626,642,674.
— Եւրիկեանց 553,554.
— Հաճի Սահիօղլի 682.
Հաճի Դաւութ 724.
Համբարձում 52,340.
Հայաստան աշխարհ 569, 713, 716, 719, 721,729,732,737,753.
Հայնի 420.
Հայք, Հայոց ազգ. տուն 52,411,733—6.
Հայրապետ վէքիլ Կարնոյ 6,11,112,191, 293,349,467, 510, 616, 630, 658, 660.
Հանգիա 729.
Հաշտարխան 45,98, 131, 132, 233, 234, 245,252,273, 274, 293, 294, 401, 461,567—70,612,682,688.
— ու գաւառան 465.
Հաջին գիւղաքաղաք 730.
Հասան Ալի խան Ճամախու 722.
Հասանղալա 536,542.
Հաւլարար պուտարձան Տփխիսի 729.
Հեղինէ, կին Ռաաքելի Յիզմիր 601.
Հերակլ արքայ 7,33,77,81,149,160,180, 240,271,381, 387, 398, 402, 425, 499,509,558,581—3,588—91,607 742,743.
— որդի Թամրազայ 729,741.
Հինգխորան եկ. Բաղէշու 657.658.
Հիւլպ 85.
Հիւսէին Ալի խան Երևանայ 727.
Հիւսէին աղայ Ջամուշզագէ 680.
— խան Ճամախու 723,724.
Հնդիկք Հնդսան, Հնդկասան 232, 320, 322,483,559,610, 626, 644, 696, 697,700.
Հոնք 150.
Հոխիսխմեանք 7.
Հօլանդիա 469.
Ձորափոր 714.
Ղազախ 15,387,388,417,627,729.
— ու կամուրջ, կամ Սընգս քիւարի 726.
Ղազանչեցիք, ւոց եկ. 204,648.
Ղազար 344,458,466.
— ամիրայ 350,672.
— եղիազարեան 658.
— կաթ. 12,112,419,649.
— Շօռօթեցի 318,320—7.
— վ. առաջ. Կարնոյ 240,464.
— — — Երևանայ.
— ք. 33,36,209,253,602.
— — Թիֆլ. վանքի եկ. 129,130,205, 206,386,499,502,512,570.
Ղազարոսպատ 596,631.
Ղալաթա 339,351,663,673.
Ղախ նահ. 722.
Ղանդահար 715.
Ղապալու երկիր 722,723.
Ղառի քօրփի կամուրջ 725.
Ղասանու երկիր 722.
Ղասում 723.
Ղաոի գիւղ 350.
Ղարայ Այվազ օղլի Պօղոս 137.
Ղարատաղ 526, 532.
Ղարս 230,518,637.
Ղափլանեցիք 728.
Ղափու օղլանի 592.
Ղեկք կովկ. 714,717,722,724,729-2,743.
Ղզլար 45,211,212,216, 289, 293,294, 612.
Ղուզան սաղի 730.
Ղուզան օղլի 730.

Դուլայ վանք 439.
Ղուլի խան 722.
Ղուկաս Ալէքսանեան 705.
— աղայ 629,679,691.
— Արքեպս Զմիւռնեայ 4,16,21,23.
— կաթ. 5 7,13 – 17, 24, 31, 44, 99, 107, 115, 120, 131—3, 160, 163, 177,192, 214, 271, 414, 498, 548, 684,685,689, 690, 694, 696, 713, 730,731,737.
— — Սուրբ Ալապահեան 721.
— վ. Արապկիրցի 660, 679, 684, 689, 691,692.
Ղումղափու 338—41,351,663,673.
Ղրիմ, ցիք 56,67,149,263,488—90,740.
Ղրուան Հարիւրապետ 726.
Ղօնաաղճիօղլենք 629.
Ճար 722.
Մագիստրաթ 253.
Մագրաս 683,738.
Մաղանդարան 727,729.
Մախսուդ փաշայ,286,404,407.
Մակու 534.
Մահմատխան 525.529,533,570,596,621, 632,656,667,729.
— Հասան խան 525,529,587.
— Հիւսէին բէկ 682,729.
— Ղուլի խան 727,728.
Մահմատ շահ 741,743.
Մահմուտ Միւրվէյիզեան խան 727.
Մահմուտ փաշայ Բայազտոյ 680.
Մահմուտան 508.
Մաղարացիք 699.
Մանիսա 404,594,595.
Մանկասար 132,149.
Մանուէլ Մալմասեցի 592.
— վ. Հազարծինու 387,388.
— — Վարդիվէրու առջն. 648.
— սիրացու 352.
Մանուչար 289.
— Խան աղգի աղնուականութիւն516,517.
Մաշկերա 512.
Մասապրա 9,701.
Մասքութք 150.
Մաւեն. 650,667.
— Կաթողիկոս 674,679,691.
Մաւթա կաթ. Ասորւոց 413.414.
Մաւթէոս աղայ 534,557,673.
— վ. 648,677.
— — Մաամբօղլի 750
Մարաղայ 512.
Մարդար 149,183,266,409,467,557.
— Աղայ Արրայեան 624,743.
— — Խալդարենց 191,327,439,513.
— Ամիրայ սառաֆլար քեահիասի 328.
— Ասուածածարեան Մանիչարենց Ջուղայեցի 132.244,289,291,325,326, 481,516,527 9,534.
— Շուշեցի 448.
— Ք. 216,267.
Մարղևան 718.
Մարիա Աննա մագտամա, կին Գեանջեցի Մնացականի453,476.
Մարիամ 513.
— Ծովհ. Ալամօղլի ի Վարս 672.
— Փէդրոնիա 44.
Մարկոս 40.
— կաթ. 552.
— պետ Աղթամարայ 551.
— վ. կուռց անապատի 467.
— ք. 409,410.
Մարսուան 459.
Մարտիրոս 183,338,490,615,664,679.
— ամիրայ Սախայ օղլի 340,476.
— վ. 404,663,745,746.
— — առջն. Թիֆլ. 563,669.
— ք. 222,597,598.
Մաքսիմէ կաթ. Ափխազաց. 53,94,176,177,
Մելիք Աթամ 511.
— Ապով Գիւլիսաանու 511,518.
— Աւետիք 376,380,669.
— Բէգլար 511.
— Գասպար 292.
— Գիւլնազար 622.
— Գարչին ի Թիֆլիզ 706.
— Մարտիրոս 661.
— Մէժլում 599,600,649,742,743.
— Մկրտում Թաղօյենց 40.
— Մհամատ 723.
— Յակոբջան 620.
— Շահնազար 639.
— Շաքարօ 656,700—3.
— Ուսուպ 511, 518.
— Ջումշուդ 639.
— Սարգիս ի Շուլաւէր 670.
— Սարգիսջան 750.

Մելիք Սահփան 411.
— քօլին Տաթևու 513.
Մելքիսեթ վ. 750.
Մելքոն 459,490.
Մեղրի 594,603.
ս. Մեսրովը 715.
— Ամուճայ ի Պօլիս 506.
— վ. Ուռումէլու նուիրակ 98,457,746.
Սերկեան 183.
Մէրտին 413.
Մխիսյէլ գնձ. Գանձասարու 379.401.
— սուտ վարդ. 413.
Մինաս աղայ Եղիազարեան 303,306,307, 380.
— Արևելցի Ոսկանեան ի Հալապ 329, 332,333,511.
— Արքեպս. 700.
— կաթ. 12,112.
— մհ. 338,401.
— վ. Հալապու 475.
— — նուիրակ Պօլսոյ 29,59,60.85,94, 99,106,107,115,121,136 – 8, 142, 150,151,163, 191, 192, 196, 197, 205,221,223, 228, 233, 236, 237, 243, 268, 269, 278, 280, 283 – 7, 292,299,300, 318, 325, 333, 339, 340,349,352, 362, 368, 369, 404, 408, 437 – 8, 454, 463, 783, 487, 499,501, 524, 531, 538 – 40, 543, 571,583,598,614,622,664,701.
— — Տաթևու 661.
— ք. Ղզլարու 696.
— — Ջուղայու 494.
Միրաս 632.
Միրզայ Արրահամ 641.
— Միսայէլ 203.
— Սէֆի 373 – 5.
Միրիջան ամիրայ 280,464.
— Խանում օղլի 351.
Միքայէլ ամիրայ 137,340.
— — Ալթունեան կամարկացի 491.
— Արղութեանց 667.
— վ. 611.
— — Ակնայ 691.
— Զամչեան 713.
— Տէր Մինասեանց 626,705.
— ք. Ասատպատցի 491.
Մխիթար Խոզեանց 432,433.
Մկրտիչ 321,610.
— աբեղայ. 532.
— ամիրայ 437.
— — Շնորհք 340.
— — Պետրոս ամիրայի որդի 350.
— գանձապետ 183.
— դատաւոր մադիտարաթի 258.
— Մանուչարեան 516.
— չերէց 411.
— Պրուսացի 501.
— Պօլիտցի 84.
— վ. 267.
— — առաջն. Ջուղայու 343.
— — տեղապահ 384.
— ք. Ղարայճիօղլեան ի Կարին 577.
— դէֆութեաթ և դատ. Մադիտարաթի 159
— Թաղէոսենց Թիֆլիղեցի 141.
— Գալստեան ի Հաշտարխան 523,565, 568,612,682,688.
Մնացականն Գեանջեցի 432,450 – 3,578.
Մողանու դաշտ 724.
Մոսկով 45,132,233, 252, 261, 264 – 7. 273,285,303. 311, 314, 317, 372, 380,461,465,565,567,727.
Մովսէս 151,379,465.
— վրդ. 159,268.
— Բարաղամեան Արցախեցի 559.
— Երուսաղէմայ 279.
— Ուրացող 280.
— պետ. 235,271,280.
— սպասաւոր Ծովհ. կաթ. 444.
— վ. Ակնցի 750.
— ք. 702.
Մուսպարաք 722.
Մուշ, Մշեցի 458,632,664.
Մուշկիտնբար դաշտ 744.
Մուտուրկու վանք 443.
Մուրաղայ 728.
Մուրատ ամիրայ 648.
— Պապղուլենց Մեղրեցի 605,606,614.
— փաշայ 665.
Մսրտամ 432,557.
Մցխիթայու աթոռ 13։
Մօղտօք 45, 68, 69, 132, 148, 149, 185, 264,266 – 8,293,294,483,612։
Մօլարէթխուշէս Քայիխոսրով բէկ 715։
Մօլլա Ալու որդի Մահմատբէկ 620։
Մօլլադուրսուն գ.618 – 20։

Մօղանչօղ 741։
Մօղնու ս. Գէորգ 381.382։
Ցակոբ 183,481,615։
— աղաղատէ 557,604։
— աղայ վանցի ի Խոյ 660։
— ամասացի 459։
— ամիրայ Խանուժօղլի 640։
— — Աւիւարեան 664։
— — Կիւլապօղլի 640։
— — Մուրադեան 242, 340, 352, 456։
ս. — սնապատ Մծբնայ Հայրապետի 381, 383,533,571,607,608։
— Արքեպիսկոպոս 696,697։
— եպ. Արմտանցի առաջ. ս. Նշանսւ 738.
— կաթ. 12,112,192,194,620։
— Հասանմանսուրցի 150,267։
— մասրաճի կարնոյ փաշայի 675։
— պատր. 144։
— վ. 401,611,651,665,674։
— — Արապկերցի 286։
— — Թօխաթու ն. 510,511։
— — Կիւմիւշխանայու 168,169,172։
— — Հնդկաց ն. 704։
— — Զուղայու 343,466,483,583։
— — Վանայ ն. 508,663։
— աօքաօր ինկլիզ 172,173,289—91, 479—82։
— ք. Սամուէլեան ի Վան 705։
Ցակորյան աղայ 673։
— Ցովհաննիսեան Նանուսեցի 197—201։
— Ըահամիրեանի կին Հռիփսիմէ 645,646։
Ցամիձ,-ձեցիք 413,430։
Ցարութիւն 183,205,221,244,323 324. 567,595։
— աղայ Էմմիաղեան ի Բասրայ 190,269, 318—20,325,327։
— — Թօմայեան ի Վան 680,693։
— ամիրայ 24,25,96,97,110,133,143, 242,292,369,462,465,534,536,648
— եպիսկոպոս 750։
— Հալապցի 463։
— Սահակեան ի Բասրա 647։
— վ. 465,499,518,550,588,697,705։
— — Արապկերցի 405—7,438,457,666
— — Երզնկացու պատմ. 721։
— — Թիֆլիզեցի Էպինանց ճոն Խսայու որդի 498։
— — Թրակացի 532։
— — Սօրսրու ս. Գէորգ. վ. առջն. 381։
Ցիւսուփ Խըան օղլի 729,730։
Ցովակիմ աղայ Նղիազարեան 303,306—8, 380։
— պաար. Նրուս. 163, 216, 217,460, 462,465,547,548,587։
— վ. 341,556,594—7,603,661,662։
— — Տաթեւու առաջն. 605։
Ցովաննէս Դայի 6։
Ցովհան կրօնաւոր վրաց 92,94։
Ցովհաննէս 220,221,338,340,452.453, 466,577,598։
— աբեղայ 543,593։
— աղայ 131,132,149,252,270,288—90,307,380,567.569,611։
— — Շահամիրեան ի Մադրաս 644։
— աղաչայ Քփրենց կեսարացի Սըչովայու 522,565,566,570,584—6։
— ամիրայ 137,280,281,631։
— — Խանուժօղլի 352։
— — Խաս գիւղի գանձ. 339։
— — լիմօնճիղատէ 672։
— — Պաշպաղիրկեան 677,703։
— — Պէկենց ՅՕրթագիւղ 674։
— Աննանեան վարժ. ի կ. Պոլիս 650,663։
— Արքեպ. 694,695,701,702։
— — Սեբաստացւոյ պատմ. 718,721։
— Բեւդեհէմեան 160,190,318,327,439, 528,698։
— Բժիշկ 164—7։
— Գեաուիկօղլի ի Թօխաթ 669։
— Եղիազարեան, Աղաղարեան 291,479։
— կաթ. Աղուանից Գանձասարու 285, 378,379,401,677։
— — պատմ. 718։
— — Տէր Ագամեան Հագուցի 720։
— Կապիտան Աբրահամեան 157,183,244։
— Մանուչարեան 516։
— Մարտիրոսեան 625։
— Պալթաղատէ,-եան 595,663։ 340,341։
— Նանուսեցի 199,200։
— Պրուսացի 511։
— Պապղուլինց Մեղրեցի 556,594,605, 606։
Ցովհաննէս վ. 12,191,431,437,461,470,

501, 535, 572, 595, 659, 660—4, 679,694.
— վ. Ամասիոյ առաջն. 503։
— — Բաղէշու առջ. 658։
— — Գաղատիոյ » 2?6,491։
— — Գոմոց վանից առջն. 653։
— — Երուս. 292.
— — Թիֆլ. 15,152,
— — Կարսայ առջն. 346—8.
— — Համատանցի Պրուսայու առաջն. 84,94,242,292,
— — Մուշ 31։
— — պատար. Կ. Պոլսոյ 228,226.227, 321,353.455,459,465,466։
— — Ջուղայեցի 569,613,
— — Վրաց 178,180
— — Տրապիզոնցի 457,
— — Փութուրեան 494.
— ք. 253։
— — Ախթարմայ 347։
— — Խորենացի ի Մուշ 656։
— — Պետրպօլքու 266,
Յովսէփ աղայ Միրշքեարպաշի 444, 669, 700—3,706,
— արքեպս. Նուիր. ուսուցց եղկրի 45,52, 56, 67—74, 132, 148, 155. 160, 183—8,215,231—5,244—57, 261—3,271,272,285—7,291,300—3, 306.310—14, 317, 341,369—72, 378—80,461, 462, 465, 466, 481, 487—90, 507,509, 565, 567, 583, 608,632,657,687—9,731,734։
— Գուրգինբէկի որդի Թիֆլ. 288.
— կաթ. 706,707,
— Մարութեան 645.
— Նաղարբէկենց Թիֆլ. 878,518.
— վ. 750.
— ք. ի Թարվէս. 668.
Յուսիկ ք. Սսեցի Ալջապահ. 720,721.
ս. Յովհան Օձնեցու վանք. 205—7,240, 282.
— վ. Գաղեցի 475.
Յովհաննէս Շամախեցի 57.
Յովհաննէս Նաւասարդեան 57.
— Պոլիացի 84.
ս. Յովհաննիսի վանք 2.
— Մշու ս. Կար. 31,381,404,408, 430—2, 438, 458,501,504.
Յօհաննջան Ցակ. Գէրաքեանց ի Մուրաթ 663, 737.
Յօնան վ. 406,409—11.
Յօշական, ցիք 2,102,116,
Յօրդվար 596.
Նաղար Թօխաթցի Աղամալի որդի 293.
— Ցակոբջանեան, Թոռն աղայ Շահամիրի 647.
Նաղարբէթ իշխան Արապկերցի 660.
Նախիջևան, ցիք 204,409,411, 523, 525, 532, 533, 557—9, 571, 584, 592, 609,612,637,638,743.
Նահապետ կաթ. 714.
— Ցէր Առաքելեան 600.
Նամսայի կայսր Լէօպօլ Ր. 585.
Նաստրշահ 714,719,728.
Ներսէս աղայ, 132,142,252.
— վ. Նուիրակ 11,112,464,611,669.
Նիկիտա Իվանիչ Պանին, վէզիր կայսեր Ռուսաց 263.
Նիկողայոս 57,579.
— աղայ, ամիրայ, Եղիազարեան 634,674,
— Մարգսեան ի Թօխաթ 630.
— եպս. 579.
— վ. Կարնոյ 642.
— ք. Փարաքարցի 663.
Նիկօլ աղաչայ Սըչովայու Փոնթ 522,745.
Նիկօլայ 509.
Նշան Մարախրոսեան կեսարացի 668.
Նոր Նախիջևան, ցիք 45,56,67,71,72,153, 155,158,183,244,253, 258, 265—8,288,294,569,600,632.
Նոր Շէն 491.
Նուխի 401,741.
Նուրիջան 216.
Նսնուսեցիք 347.
Նօման աղայ 11,12.
Շահամիր աղայ 524,600 683։
— Սուլթանեան 737։
Շահապաս 516։
Շահարպուլանարանենք 629։
Շահնի Հարիւրապետ 726։
Շամախի, եցի 276,379,401,524,722—6, 741։
Շամխայ 724,
Շամշատին 599,714,725։
Շամքօռ 722,725։
Շարուր 637։

Ճաքարօ 389 –91,476,506։
— Ճամախեցի 56։
Ճէխխալամ 638։
Ճէքի, շաքի 706,722.
Ճիրաղ 63,318,587,596,742.
Ճիրակ 729։
Ճիրկայ ս. Ած. վ. Ղփչաղ կոչեցեալ 498։
Ճիրվան, Ճրուան 401,705,723։
ս. Ճղակաթ 459։
Ճուխթք 523։
Ճուլաւէր 622։
Ճուշի բերգ, խան 62,63,204,401,409—12,524,525,533,571,639,715։
Ճրուան 401։
Ոսկան 221,577։
— վ. 167։
Ուխրուխ բէկ 656։
Ուժան խան լէզկի 532։
Ուռուվէլի 142,150,401,744,745։
Ոսկանապատաճար 722.
Ուսէացիք 713,722։
Ուրհայ 718.
Ուրուշլուղ 632։
Զարղաթալ 722։
Զէրքէղ 45։
Զըլաըր 230։
Զօլակ գաշա 725։
Զօպան աղայ 589։
— ամիրայ Հովուեանց 437.
Զօռում 718։
Պալաթու ս. Հրեշտ. եկ. 351,673։
Պալի երեցփ. Ախալցխայու 506։
Պաղատասար վ. 420։
Պաշրթիղրնղու 618։
Պարապ 722։
Պարսից, կասաան 705,714,715,722,727-33
Պաւլ Պետրովիչ քնեաղ 44։
— Սերգեիչ Պօտէմկին 483։
Պետր Ալէքսանդրովիչ Ռումանցով, գրաֆ. ղօրապետ ամենայն ռուսաց 259,260։
— Իվանիչ 694։
Պետրբուրխ, քօրք, պօլք 45,131,132,244,252, 265, 270, 273, 285, 288, 315, 461, 479, 481, 517, 568, 585, 609, 613,689,737։
Պետրոս 111,385,386:
— աղաղատէ 557։
— աղայ Թումանեանց Ագուլեցի ի Բա. Յաղխա 684։
— մեծ կայսր ռուսաց 726։
— Մարլեան 512։
— վ. 24,30,58—66.85,94.97,99,120, 125, 134—8, 141, 142, 191, 192, 196, 197, 216, 218, 221, 226—8, 236, 237, 242, 243, 269, 285,292, 318, 328, 338, 353, 361, 369,457, 465,478,512,563,588,635,740,750։
— վ. Էարչնու առջն. Ղափ. կոչեցեալ 511։
— — Իշնիմիաու առջն. 197։
— — նուէր. Երուս. 438,460։
— ք. վանքի 67,267,642,643։
— — Պետրոսեան 159։
Պլատոն Արքեպիսկ. Ռուսաց 314,317։
Պշատ, պատր. Երուս. Ասորի 416.
Պրուսա 84,94,95,242,292,579,637։
Պօղոս 499։
— ամիրայ Հովուեանց 328.
— եպիսկ. Պրուսայու 571,579։
— Թարճիմանեան ի Կարին 642։
— Սաղաթիէլեան 244։
— վ. 138,490։
— տիրացու 438։
— տպագիր 459.
— ք. եղբօրորդի Պատր. կ. Պոլսոյ 648։
Պօտոս Յոյն ի Պաքա 647։
Զալալիք 718։
Զապի Պաղատասար 677։
Զաւախէթ, ցիք 393,394,714։
Զաւատ խան 649.
— Գանձակայ 725,742.
Զաքարղուլի խան Նախն. 596 667.
Զկրաչէն եկ. Թիֆլ. 41,197,198.
Զուղայ 140,697.
— Նոր 63.
Ռեթէոս վ. առաջն. Թիֆլ. 41։
Ռէ 150.
Ռուբինեանց Թագ. Կիլիկիոյ 713,715։
Ռուսաց երկիր, աղգ. Կայսրուհի, սինօթ. 56,57,67,70, 131, 155, 159, 160, 183,231, 238, 252, 264, 265, 317, 342,446,448,682,726—8,735—8, 740։
Ռուսէթ 342,608.
Ռոմանք 521.
Սալմասա 501։
Սահակ 501։

— Արիդենենց 164.
— ամիրայ Պալաթու գնձ. 340։
— գող, գեաուայ 216, 218, 221, 252, 341,460
— իշխան Վանայ, 501։
— չերքէց 554։
— պեա, եպս Փառակեցի 534,536,541, 547,548,592,
— վ. 267,287,292,515,575։
— — Աղղնու առջն. 660,674,
— ք. 176,506.
— — Գեօրեցի 398—402։
Սահակաշէն եկ. Թիֆլ. 163, 164, 168, 472,598։
Սահիթ եպս ասորի 416։
Սաղիմ, ացիք 268,269,369,372,464։
Սամաթիայի ս. Գէորգ եկ. 351,436,443, 673։
Սամուէլ արքեպս Ռօսաովու 317։
Սամուղ 727։
Սանահին, թեմ, եցիք, վանք 205—18,393, 492,493,512,714։
Սառաֆան 45։
Սարակինացիք 718։
Սարգիս 267։
— ագդար Գեանջեցի 341։
— աղայի որդի Գէորգ ի Թիֆլ. 673.
— ամիրայ Փախիղատէ 640։
— եկ. ի ՅԱմիթ 513։
— եպս. Հաղբատայ 677—9,683։
— կաթ. Գեանջայու 648։
— Սքանչելագործի վանք ռուսաց 314։
— վ. 599,601,602։
— Վիրապենց ի Զմիւռն, 601։
— վէքիլ ս. Նրուս. 352,462,465, 503, 551։
Սարուխան Հարիւրապետ 726։
Սաֆար Ալի Թմպլի Խօյեցի 667։
Սեաւջուր 637։
Սերաստիայ 718,738,739։
Սերօր 381,626,629,658։
— Գօրգեան 670։
Սև ծով 741.
Սևան 665։
Սէֆ Սամեանի գտտերք Աննա և կատարինէ 647։
Սիմէօն 90,205,314,459։
— Խստացի 243,244։
— Գրիգ. Գուրիով, կամէնգատ Ն. Նախիջևանու 71,187։
— Դպիր 511։
— կաթ. 5,7,15,20,24,31,43, 47, 53, 56,69, 72, 107, 115, 120, 131—3, 153.154,157, 160, 163, 177, 184, 199,245,249, 261, 313, 314, 357, 398,496,515,730,731,749։
— Ղտլիպճեան 490։
— Պրուսացի 84։
— վ. 211,241,253,268,661,662։
— — Գեանջեցի 206։
— — Ղրղեցի 240։
— ք. 40,41։
Սիս,. եցիք 329,344,461, 476, 720, 721, 729,730,738։
Սիւնեաց իշխեցող 729։
Սղնախ 722,727.
Սղնախի պյր 718։
Սմրղանգ 716
Սոլոմոն Թիֆլիղեցի կնեազ 141,706։
Սոմխէթ 714։
Սուլէյման սարդար 641,705։
— փաշայի խան 509,632։
Սուլթան Համիտ օսմանեանց 729։
Սուլթան Սելիմ 340։
Սուլխան Գիւան Բէկթաբէկի որդի ի Թիֆլիզ. 497. 601։
Սուլուխան 137,138։
Սուխթայ 718։
Սուրաթ 528։
Սուրխայ 723,724։
ս. Սուիրայ վանք ի Սիս 721։
Սչովա 459,521,532,585։
Սպահան 63,151,276։
Ստամբօլ 112,406։
Ստեփան 385,461,616։
— ամիրայ Բենկանցի 674։
— Արևելցի 343։
— Թարգման 252։
— Ճաղատենց 500։
— Նաքսապեա 501։
— Սահակեան 325։
— վ. 167.
— — Ասատպատցի. 475.
— — Կեսարիոյ. 677,687.
— — Հաղբակու 494.
— — Ջուղայեցի 401,460.

— ք. Ալբրուսճուղ 513,570.
Սահիանէ Ջաղատեանց 382,383.
Սահիաննոս աղա Էմինիազեան 318,320,322 — 4,327,439,466,701.
— ամիրայ Տարապխանայի 350.
— — Թենկանցի 657.
— Խաչատուրեան 573,575.
— Մանուչարեան 380.
— Սիւնեցի 728.
— Տէր Յովհաննիսեան Ջուղայեցի 191, 459,613,696,704.
— Տէր Յովհաննիսեան ի Վան 512.
— ք. 271,520,610.
Սոլոմոն արքեպիսկոպոս Ափխազաց 43,85.
Սօկիւթլի գ. 723.
Սօֆինէթ 723.
Վալիաս Գերաքեանց 663.
— խան 141.
Վախանագ վրաց արքայ 725—8.
Վահան ք. Բայազիտու, այսինքն Ղալեան 513.
Վաղարշապատ 414,732.
Վաճիկ 729.
Վան 420,509,589,611,616,680,705.
Վանական վ. եղբ. Մելիք Սարգսի ի Շուլաւէր 670,671.
Վասիլ Ալէքս. Զերթկով. գումբերնաթ. ն. նիջ. 153,154,184.
— Միխ. Դօրգօլուկ. ենարալ Անշէֆ Մոսկովու 311,312.
Վարանգ Նհնգ. 724.
Վարգան 183,220.
— աղայ Յովհ. Վարգաղարեանց յԱգրիանուպօլիս 676.
— ամիրայ Թումասեան 491.
— վ. 567,570,593.
— — յԱմիգ. 565,566.
Վարգերես 468.
— ամիրայ 640.
Վենետիկ 613.
Վէրան քովխա 627,628.
Վրաստուն,-տան 15,41,149,667,715,716, 722,723,727—9,740,743.
Վրաց երկիր, զօրք, պետ, տուն, վրացի,15, 27,28,32,62,64,102,123,401,417, 533,601,639, 702, 719, 726, 737, 738.
Վրկանայ աշխ. 716.
Տաթև, Տաթևացիք 661.
Տաղտան 342,742.
Տաճիկ 412.
Տայք 614.
Տաշիր 714,717.
Տեղակայ Նհնգ. 724.
Տէլի 718.
Տաւուշ 714,729.
Տիգրանակերտ 86,430,566.
Տիւլպէնտճեան Ջմիւռնայ 572,575.
Տորոս 730.
Տուտեայ որդի 150.
Տրապիզօն 98,452,629.
Տփխիս 284,725,726,729,741,743.
Տօնական վ. 577.
Փամբակաձոր 729.
Փանահ 140.
Փանոս 526,528.
Փէյքար 723,724.
Փիլիպպոս 149,266.
— ամիրայ ի Մաահէն, 660,668,674.
— — Սառաֆ 650,666,684,689,690.
— Աստուածատուր Մանիչարենց Ջուղայեցի 132,244,289,481,515.
— Թերղի Կարապետի որդի Ակնցի 467.
— Ստեփանարդեան ի Խոյ 511.
— սրկ. 609.
— վ. 223,278,293,328,521.
— — Ջմիւռնեայ առջն. 286,287,293, 404,432,451,457,471.
— — Ղուլայի վանից 691.
Փոքր Հայք 718,721,733,738.
Փօթիշան 521.
Քալանթարի որդի Վարգան 634.
Քանգակ 722.
Քարափի եկ. 385.
Քարթլ 740.
Քաֆանակեանց Դաւիթ և Մկրտում 56,57.
Քեալարայ գ. 221.
Քեալրալի խան 533.596,641.
Քիլ 524.
Քիլիսակեան 490.
Քիսեզ 15.
Քիւչուկ խան Ճաքուայ 722.
Քովշան 588.
Քուրաքրասան 722.
ս. Օգսենտի վանք 586.
Օգրոպակերտ 172.
Օհան վ. 648.

Օձուն 717.
Օղուրլու խան Գանձակայ 722.
Օսմանցւաց երկիր, պատ. 231, 461, 719, 720,729,730,732,733.
Օստանցիք 718.
Օրթագեղու ս. Աստ. եկ. 137,351,673.
Օտյատօղլի 111.
Օրանկսիզ 476.
Օտանսիոյ թագ. 569.



Հրատարակութիւնները

Ի. Ճարուխեանց. Հայոց գիրը. 1893	1 50
Իշխ Կ. Բնհրուգեանց. Ծուխ. 1893	— 15
Ռանգաբէ. Էմմէ. վէպ. Թարգ. Ճ. Լալայեանի 1893.	— 25
Ալբեր Ա. Ֆօ. Քուրքի լեռուն. Թարգմ. 1894.	— 25
Ճազարբէգեանց Ճ. Հայոց լեզու ա. ա. 1894.	— 30
Խրիմեան Հայրիկ. Ծամանակ. 1895	— 15
Սպիրի. Ա. Յծատած Մօնթ. Թարգ. Ի. Ճար. 1895.	— 15
Բակ. Կիլիկիա. 1896	— 15
Պետալօցցի. Լինհարդ եւ Գերտրուդ 1897.	1 50
Մելք. եպ. Մուրատեան, Պետրոս Շանշեանց, պատկ. 1897	— 50
Թ. Ա. Խոհարարուհի. 1897	— 40
Լուսոյ. գրական հանդէս 1896. ա. ե բ. գիրք.	4 —
Լուսոյ. ,, ,, 1897 ա. ե. բ. գիրք	4 —
Լուսոյ. ,, ,, 1898 ա. ե. բ. գիրք	4 —
Լուսոյ. ,, ,, 1899 ա. ե. բ. գիրք	4 —
Ճ. Պարոնեան. Ծիծաղ. պատկերով, 1899	1 25
Ճ. Պարոնեան. Արեւելեան առասպելաբոյժ. կատակերգ. 1899	— 50
Պ. Գուրեան. Արտաշէս Ա. Թատր. 1899	— 30

Մամուլի տակ

Կարգ Աստուածպաշտութեան Գ. ապ. պատկերներով

Պատի օրացոյց 1900 ամի. ՌՒԲ ա.

Գրիգոր Աստուածաբանի Նամակները

Խորովիկ Թարգմանիչ.

9(47.925)
Դ-52

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՐՔԱՑ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ի· գրքի համար, որ կը պարունակէ յազմաթիւ պատմական ժամանակագրութիւններ վերջին դարերի վերաբերեալ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 3 ՈՒՐԲԻ

Ցայտնելով Հայրենի գրականութեամբ հետաքրքրուողներին, որ իմ նիւթական միջոցները ամենևին չեն ներում այս կարևոր ժողովածուի տպագրութեան ծախքերը հոգալ՝ հրաւիրում եմ նոցա և բարերար ազգայիններին յանձն առնել Ե. Հատորի տպագրութեան հոգսը կամ գէթ բաժանորգագրութեամբ օգնել նորա հրատարակութեան:

Դիմել՝ Տփղիս Գիւտ ա. քահանայ Աղանեանցին

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1900 թ. կ'հրատարակուի երկու գիրք· Առաջին գիրքը յունուարի 1-ին, իսկ երկրորդը յուլիսի 1-ին կանոնաւորապէս·

«ԼՈՒՄԱՅ» հանդիսի բաժանորգագինն է տարեկան 3 ռ., իւրաքանչիւր գիրքն առանձին արժէ 2 ռուբլի·

«ԼՈՒՄԱՅ» հանդիսի սեպհական 4 տարիների բոլոր գրքերը միասին՝ 8 գիրք ճանապարհի ծախքով արժեն 12 ռուբլի·

Հասցէն՝ Тифлисъ, Ред. „ЛУМА“ или протоіерею Гюту Аганьянцъ.

Адресъ: Archiprêtre Gût Aghaniantz.